Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

РУССКИЙ РАССКАЗ XX ВЕКА

Антология /Составитель Владимир Сорокин/

Перевел на армянский язык
Нерсес Атабекян

Հրատարակվել է «Թարգմանության ինստիտուտ»
ինքնավար ոչառեւտրային կազմակերպության
աջակցությամբ, Ռուսաստան:

RUSSIAN STORY OF THE TWENTIETH CENTURY

Anthology /Compiled by Vladimir Sorokin/

Translation into Armenian by Nerses Atabekyan

Vogi-Nairi

XX ԴԱՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

Անթոլոգիա (Կազմող՝ Վլադիմիր Սորոկին)

Թարգմանիչ՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆ

Ստեփանակերտ 2019

ՀՏԴ 821.161.1-32
ԳՄԴ 84(2Ռուս)-44
Ք 911

«Գեղարm» հանդեսի մատենաշար

Ք 911 XX դարի ռուսական պատմվածք: Անթոլոգիա/
Կազմ.՝ Վլադիմիր Սորոկին: Թարգմ. ռուսերենից՝
Ներսես Աթաբեկյան.-Ստեփանակերտ,
«Ոգի-Նաիրի» հրատ., 2019, 528 էջ:

Ռուս գրականությունը XX դարում մարմին առավ. հայտնվեց մարդկային մարմինը, որ մինչ այդ բացակայում էր որպես այդպիսին: Մեծ գրականության հետ մարմնավոր առնչության հենց այդ սուր ու խուսափուկ զգացումն է փորձել պահպանել Վլադիմիր Սորոկինը՝ կազմելով այս ժողովածուն:

ISBN 978-9939-1-0889-6

ՀՏԴ 821.161.1-32
ԳՄԴ 84(2Ռուս)-44

© Владимир Сорокин
© Игорь Захаров
© «Ոգի-Նաիրի» (թարգմանության համար), 2019

ՆԵՐԱԾԱԿԱՆ

XX դարում ռուս գրականությունը մարմնավորվեց: Իջնելով գաղափարներով, ինչպես ամպրոպաբեր ամպով ծանրացած ռուսական մտահայեցական երկնքից՝ մարմին առավ: Ռուս գրականությունը մարդկային մարմին ստացավ: Զգալով իր քաշն ու չափերը՝ սկսեց քայլել, բուրել, ուտել, խմել, զուգավորվել, բավարարել իր պահանջները:

Մինչեւ XX դարը ռուս գրականությունը, որպես այդպիսին, մարմին չուներ: 19-րդ դարի մեր արձակի կերպարների բացարձակ մեծամասնությունը քայլող գաղափարներ էին՝ զուրկ մկաններից, ոսկորներից ու արյունից, յուրատեսակ շալվարավոր ու փեշավոր մետաֆիզիկական ամպեր: Նրանք ճառագում ու ծփում էին, ձգվում-հասնում հորիզոնին ու սեղմվելով՝ դառնում էին կետ, իրենցով ծածկում քաղաքներ ու դաշտեր: Նրանց կիսաթափանցիկ մարմինների միջով լավ էր երեւում հայրենական վիատ բնապատկերը:

Գաղափարների գերիտացման պատճառով ռուսական վեպում մարմնի համար տեղ չէր մնում: Մարմինը պահ էր մտնում գոգոլյան մթին անկյուններում, քնում տուրգենեւյան խրճանոցներում, թաքնվում Դոստոեւսկու ներքնահարկերում ու Օստրովսկու սնդուկներում: Նրան չէին սիրում, քշում էին ցախավելով, ինչպես չարքաճտի: Մարմնի վրա ֆշշացնում էին, ոտքերը գետին տալիս՝ պահանջելով, որ հեռանա, աչքից կորչի, իր տեսքով չվիրավորի գաղափարների ազնվազարմ աշխարհը: Լավագույն դեպքում ջանում էին չտեսնելու տալ: Տատյանա Լարինայի թեւատակերը նույնիսկ հուլիսյան կեսօրին չէին կարող քրտնահոտ լինել: Ռուդինը չէր կարող կերկոխ լինել կարկանդակներից ու լուծողական խմել: Թշվառ Լիզան չէր կարող շոգեհարվել բաղնիքում՝ քրքջալով ու դայակի վրա ջուր ցփնելով: Մերկ Ռոգոժինը երբեք չէր պառկում մերկ Նաստասյա Ֆիլիպովնայի վրա՝ մռնչոցով ու տնքոցով սեռական գործողություն կատարելով: Անանա Կարենինան գոյաբանորեն անկարող էր պայթեցնել Վռոնսկու վզի պզուկը: Կապտաչյա Ալյոշա Կարամազովը երբեք վանքի զուգարան չէր գնում:

Նոր դարը, որը սկսվեց կոլեկտիվ երջանկություն տենչացող զանգվածների ապստամբությամբ, Մարմինն առանց ձեւականությունների մղեց ռուս գրականության տարածք: Ցնորական-թափանցիկ կերպարներն

ակնթարթորեն թանձրացան, կմախք առան ու պատվեցին մկանային հյուսվածքով: Նրանք ասես վերստին ծնվեցին՝ դադարելով ոգի լինելուց: Նորածին Մարմինը ներխուժեց կատվախոտ, գրքեր ու կանթեղի ծեթ բուրող տուրգենեւա-տոլստոյական դաստակերտները, Դոստոեւսկու կիսախավար հյուրասենյակները, իրար անցավ Չեխովի մռայլ բնապատկերում: Մարմինը վրան քաշեց պատմողական հյուսվածքը, ինչպես երեխան սեղանի սփռոցն է քաշում: Իր անդամներով կոպտորեն ընդարձակեց նահապետական գրական տարածությունը, ինչպես այն ընդլայնում են շպիցռուտեններով պատժվող զինվորի՝ արյան մեջ ճփճփացող մեջքը Լեւ Տոլստոյի «Պարահանդեսից հետո» պատմվածքում, Կարտոֆիլային Էլֆի գլուխը, Զախար Վորոբյովի հարբած աչքերը, Զինովեւա-Հաննիբալի հերոսուհիների ագահ ու նուրբ լեզուները, կարմիր հեծելազորայինի դողացող աջ թաթը, Բելլա Իսահակովնա Կոխի խոսող հեշտոցը, Սավելիի մետաքսով փաթաթված ու համբուրախեղդ ոտքը:

Ողջ մարմնականը, արտասովորը, ռուսաբար տառապագին-անարտահայտելին, որ տասնիններորդ դարում ուռճացել ու կուտակվել էր ցարական գրաքննության կողմից ու մտավորականության մշակութա-ուտոպիական ջանքերով ծգված թաղանթի մեջ, պայթեց ու դուրս հորդեց միլիոնավոր մարդկային ճակատագրեր խժռած «մեծ էքսպերիմենտի» դարում: 1885 թվականին պովոլժյան գյուղում տեսած հրեական ջարդը Գորկին նկարագրեց միայն տասնվեց տարի անց, արդեն պրոլետարական հեղափոխության, համակենտրոնացման ճամբարների ու միջուկային ռումբի դարում: Արտյոմ Վեսյոլիի գլխից ձեռք քաշած պարզամիտ ու կենսախինդ նավաստիները XIX դարում էլ կային, բայց գրական կամրջակով ռուսական արձակի ափ իջան արդեն քսաներորդ դարում: Նույնպես եւ Զոշչենկոյի, Բուլգակովի ու Խարմսի երկոտանի անասունները:

Ռուսաստանում իրենց հաղթանակից հետո բոլշեւիկները՝ միլիոնավոր մարմինների վրա բացարձակ իշխանության այդ թմրագարները, սկսեցին վերահսկել նաեւ գրականության աշխարհը՝ առաջնորդվելով պրոլետարական էթիկայով ու Լենինի հրեշավոր «Կուսակցական կազմակերպություն եւ կուսակցական գրականություն» հոդվածով: Սկսվեց դարի սկզբին ծնված գրական Մարմնի ակտիվ վարժեցումը՝ նրանից սոցիալիզմի շինարար կերտելու համար: Ավաղ, «կոմունիստական վերադաստիարակության» բռնի փորձը հանգեցրեց միայն Մարմնի ռոբոտացմանը, կենսականորեն կարեւոր ազատության սանդղակների, կենդանի անմիջականության եւ այն անկանխատեսելիության կորստին, որն այնպես անհրաժեշտ

է լիարժեք գրական գործընթացի համար: Սոցռեալիզմի հերոսները, որ գազանաբար աշխույժ էին քսանական թվականներին, հիսունականներին քարացան արդյունաբերական ու կոլտնտեսային վեպերի ծանր օդում՝ դառնալով բետոնե կոթողներ՝ սովետական դարաշրջանի հուշարձանները: Այդ կոթողները բարեհաջող փլվեցին ՍՍՀՄ կործանումից հետո:

Սոցռեալիզմի գրականությունն իր ժամանակից կարճ ապրեց:

Հազարավոր սովետական գրողներ անէացան իրենց բետոնե հերոսների հետ գիրկընդխառն՝ մտասեւեռ մարզկոմի քարտուղարների, քաջարի կարմիր հրամանատարների, համառ երկրաբանների, զվարթ պողպատագործների ու հոգատար բուժքույրերի: Գրականության մեջ վերապրեցին միայն նրանք, ովքեր հոգատար էին իրենց կերպարների հանդեպ՝ չսահմանափակելով նրանց մարմնական ազատությունը. Բուլգակովը, Պլատոնովը, Զոշչենկոն, Խարմսը, Ճալամովը, Ճուկշինը: Սոցռեալիզմի դասականներ Գորկին ու Շոլոխովը ռուս գրականության պատմության մեջ մնացին իրենց վաղ շրջանի ստեղծագործություններով:

Ռուս գրականության մարմինը երկար ժամանակ ուշքի էր գալիս կոմունիստական խստաշունչ ծնամրրիկներից ու սառնամանիքներից հետո: Մոռացված-ընկած էր մոլախոտով պատած ռուսական դաշտում՝ շրջապատված սովետական գրողների դիակներով: Նրան վերցրին անդերգրաունդի գրողները: Օթեւան տվին ու փայփայեցին որբուկին: Յուրի Համլետեւի շիզոֆրենիկ եզերքներում մարմինը սովորում էր ազատ ու անկանխատեսելի մտածել, Վենեդիկտ Երոֆեեւի ու Եվգենի Պոպովի տեքստերում՝ խմել, ուտել ու պարել: Լյուդմիլա Պետրուշեւսկայայից՝ տոհմիկ հիշողություն: Անդրեյ Բիտովը Մարմնին հեգնանք էր սովորեցնում, Անդրեյ Սինյավսկին՝ ինքնահեգնանք, Էդուարդ Լիմոնովն ու Վիկտոր Երոֆեեւը՝ ուրիշ մարմիններն ու ինքն իրեն խոր, սրտագին ու անձնվեր սիրելու ունակություն, Սոլժենիցինը՝ Աստծո վախ:

Դարի վերջին Մարմինը վերջնականապես կենդանություն առավ ու շտկեց մեջքը պոստմոդեռնիստների տեքստերում: Նրանց զարմանահրաշ աշխարհները, ծիածաններով ծփացող մետատեքստային երազի ու քվազիցիտատային իրականության անվերջանալի տարածությունները նրան լիակատար ու վերջնական ազատություն էին տալիս: Պոստմոդեռնը հարմարավետ ու նորաձեւ հագուստ կարեց ռուս գրականության Մարմնի համար, որով ամոթ չէ հայտնվել ժամանակակից հասարակության մեջ:

Կայսրություններ կործանվեցին, պատերազմներ ու հեղափոխությունները

ներ անցան, անէացան միլիոնավոր նահատակված մարմիններ: Ահեղ դարը շատ բան փոխեց ռուս գրականության մեջ: Փոխեց անդառնալի: Բայց գլխավորը՝ նրան հնարավորություն տվեց մարմնավոր զգալու իրեն: Զգալու իր մկանները: Ձեռք տալու սպիներին: Դիպչելու սեփական դեմքին: Ականջ դնելու սրտի զարկերին: Մեր մեծ գրականության մարմնավոր առնչության այդ սուր ու խուսափուկ զգացումն էլ փորձել եմ պահպանել՝ կազմելով այս ժողովածուն:

XX դարն ավարտվել է:

Բոլոր առումներով՝ բնավ թույլ չէր: Բայց հնարավոր է, որ եկող դարն ավելի ուժեղ լինի: Ու սարսափելի:

Հնարավոր է, որ նոր դարում մենք՝ ընթերցողներն ու գրողները, հոգնենք ոչ միայն գրական մարմնականությունից, այլեւ ընդհանրապես մարմնականությունից: Այն կարող է չափազանց շատ լինել: Նրանից, ինչպես խեղդուկ օդից, կարող է սրտխառնոց սկսվել: Ու նորից մաքուր գաղափարներ ցանկանանք, բարձր հղացումներ, կիսաթափանցիկ հերոսներ, որոնց տարտամ կերպարանքների միջով երեւում է այնքա՛ն ծանոթ բնապատկերը՝ չհերկած դաշտով, կեչու նոսր անտառակով, ծռակող բաղնիքով ու միայնակ ամպրոպաբեր ամպով՝ անտառի կապտավուն ծվենի վրա: Ու կարոտենք նոր ուտոպիաներին:

Եվ ամեն ինչ կրկին կվերադառնա ի շրջանս յուր:

Վլադիմիր ՍՈՐՈԿԻՆ

Լեւ ՏՈԼՍՏՈՅ

ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՑ ՀԵՏՈ

- Այ ասում եք, թե մարդն անկարող է իրեն հասկանալ՝ ինչն է լավ, ինչը՝ վատ, թե ամեն ինչի մեղավորը միջավայրն է, միջավայրն ուտում է մարդուն: Իսկ իմ կարծիքով՝ դիպվածն է որոշում ամեն ինչ: Ահա մի դեպք իմ կյանքից:

Այսպես խոսեց բոլորից հարգված Իվան Վասիլեւիչը մեր զրույցից հետո այն մասին, որ ինքնակատարելագործման համար նախեւառաջ պետք է փոխել մարդկանց կեցության պայմանները: Ըստ էության, ոչ ոք չէր պնդում, թե մարդն անկարող է հասկանալ՝ ինչն է լավ, ինչը՝ վատ, բայց Իվան Վասիլեւիչի սովորությունն էր՝ պատասխանել սեփական, խոսակցության ընթացքում ծնվող մտքերին եւ ըստ առիթի՝ պատմել իր կյանքից: Հաճախ պատմությամբ տարվելով՝ լրիվ մոռանում էր առիթը, մանավանդ, որ շատ անկեղծ ու ճշմարտացի էր պատմում:

Այս անգամ՝ նույնպես:

- Ես իմ մասին կասեմ: Ողջ կյանքս հենց այսպես դասավորվեց ոչ թե միջավայրի, այլ բոլորովին ուրիշ պատճառով:

- Ի՞նչ պատճառով,- հարցրինք մենք:

- Երկար պատմություն է: Հասկանալու համար շատ բան պիտի պատմեմ:

- Դուք էլ պատմեք:

Իվան Վասիլեւիչը մտքի մեջ ընկավ, օրորեց գլուխը:

- Այո՛,- ասաց նա:- Ողջ կյանքս փոխվեց մի գիշերվանից, ավելի ճիշտ՝ առավոտից:

- Ինչո՞ւ, ի՞նչ պատահեց:

- Պատահեց այն, որ թունդ սիրահարված էի: Հաճախ էի սիրահարվում, բայց այս մեկը ամենաուժեղ սերն էր: Անցած պատմություն է, նա արդեն ամուսնացած աղջիկներ ունի: Բ.-ն էր... այո՛, Վարենկա Բ.-ն,- Իվան Վասիլեւիչն ազգանունը տվեց:- Հիսուն տարեկանում էլ հմայիչ գեղեցկուհի է: Բայց ջահել ժամանակ, տասնութ տարեկան, սքանչելի էր. բարձրահասակ, վայելչակազմ, գեղանի, վեհատես, այո՛, հենց վեհատես: Մեջքը միշտ արտակարգ շիտակ էր պահում, ասես այլ կերպ չէր կարող, գլուխը մի քիչ

հետ գցած, եւ գեղեցկության ու բարձր հասակի հետ, չնայած նիհարությանը, նույնիսկ ոսկրոտ լինելուն, դա նրան վեհաշուք տեսք էր տալիս, ինչը գուցե եւ վանող լիներ, եթե չլինեին մշտական ուրախ ժպիտը, շրթունքները, սքանչելի շողշողուն աչքերը ու նրա ողջ գրավիչ, ջահել էությունը:

- Ո՞նց է նկարագրում Իվան Վասիլեւիչը:

- Ինչպես էլ նկարագրես, անհնար է այնպես պատկերել, որ բոլորը հասկանան՝ ինչպիսին էր: Բայց խնդիրը դա չէ. ինչ ցանկանում եմ պատմել, տեղի է ունեցել քառասունական թվականներին: Ես այդ ժամանակ գավառական համալսարանի ուսանող էի:Չգիտեմ՝ լավ է, թե վատ, բայց այդ ժամանակ մեր համալսարանում չկար ոչ մի խմբակ, ոչ մի տեսություն, պարզապես ջահել էինք եւ ապրում էինք այնպես, ինչպես հատուկ է երիտասարդներին՝ սովորում ու զվարճանում էինք: Ես շատ ուրախ ու աշխույժ երիտասարդ էի, նաեւ՝ հարուստ: Մի կրակոտ վարգածի ունեի, օրիորդների հետ սահնակով սղղում էի բլուրներից (չմուշկները դեռ տարածված չէին), քեֆ էի անում ընկերներիս հետ (այն ժամանակ շամպայնից բացի ուրիշ բան չէինք խմում. փող չէր լինում՝ ընդհանրապես չէինք խմում, ոչ թե հիմիկվա պես՝ օղի): Իսկ իմ ամենամեծ վայելքը երեկույթներն ու պարահանդեսներն էին: Լավ էի պարում ու անճոռնի չէի:

- Համեստություն մի արեք,- ընդհատեց կանանցից մեկը:- Մեզ ախր ծանոթ է ձեր դագերոտիպը: Ի՞նչ անճոռնի, գեղեցիկ տղամարդ եք եղել:

- Գեղեցիկը՝ գեղեցիկ, բայց խնդիրն այդ չէ: Խնդիրն այն է, որ նրա հանդեպ սիրո ամենաուժգին պահին՝ Բարեկենդանի վերջին օրը պարահանդեսի էի նահանգական պարագլխի տանը, որ մի բարեհոգի ծերուկ էր, մեծահարուստ, հյուրընկալ սենեկապետ: Մեզ դիմավորեց նրա՝ իր պես բարեհամբույր կինը՝ թավշյա գորշակարմիր զգեստով, ադամանդե ճակատազարդով եւ բաց ծեր, թմբլիկ, ճերմակ ուսերով ու կրծքով, ինչպես Ելիզավետա Պետրովնայի դիմանկարներում: Հրաշալի պարահանդես էր. սքանչելի, վերնասրահներով դահլիճ, երաժիշտները՝ մի կալվածատիրոջ այն ժամանակ հայտնի ճորտերը, հրաշալի բուֆետ ու շամպայնի ծփացող ծով: Չնայած շամպայնի սիրահար էի, բայց չէի խմում, որովհետեւ առանց գինու էլ հարբած էի սիրուց, փոխարենը՝ ուժասպառ լինելու չափ պարեցի՝ եւ՛ կադրիլ, եւ՛ վալս, եւ՛ պոլկա, բնականաբար, որքան հնարավոր էր՝ Վարենկայի հետ: Նա կարմրագոտի ճերմակ զգեստով էր, նիհար, սուր արմունկներին չհասնող ճերմակ լայքայե ձեռնոցներով ու սպիտակ կերպասե ոտնամաններով: Մազուրկան ինձնից խլեցին. նողկալի ինժեներ Անիսիմովը, մինչ օրս չեմ կարողանում ներել, ներս մտնելուն պես հրավիրել էր

նրան, իսկ ես վարսավիրանոց էի մտել, հետո գնացել ծեռնոցների հետեւից եւ ուշացա: Այնպես որ, մազուրկան նրա հետ չպարեցի, այլ մի գերմանուհու, ում առաջներում մի քիչ սիրահետել էի: Բայց վախենամ, որ այդ երեկո այնքան էլ հարգալից չէի, նրան չէի նայում, տեսնում էի միայն վարդագույն գոտիով ճերմակազգեստ կերպարանքը, նրա շողացող, վարդագունած, փոսիկներով դեմքը ու քնքուշ, սիրելի աչքերը: Միայն ես չէ, բոլորն էին նայում նրան, հիանում էին եւ՛ տղամարդիկ, եւ՛ կանայք, չնայած ստվերում էր թողել բոլորին: Անհնար էր նրանով չհիանալ:

Այսպես ասած՝ օրենքով մազուրկա չպարեցի, բայց իրականում շարունակ նրա հետ էի պարում: Առանց քաշվելու, սրահը կտրելով՝ գալիս էր ուղիղ իմ կողմը, ես հրավերի չսպասելով՝ վեր էի թռչում, նա պարզում էր ձեռքը եւ ժպիտով շնորհակալություն հայտնում ըմբռնման համար: Իսկ երբ երկուսով էինք մոտենում, եւ նա առաջնությունը տալիս էր ուրիշին, ձեռքս բռնելով՝ սեղմում էր բարակ մատներով եւ ժպտում՝ ի նշան ափսոսանքի ու սփոփման: Վալսի երկար պտույտներին արագ շնչելով ժպտում ու ասում էր «Encore»[1]: Եվ էլի ու էլի էի պտտվում՝ մարմինս չզգալով:

- Ինչպե՞ս չէիք զգում, կարծում եմ՝ լավ էլ զգում էիք, երբ գրկում էիք նրա մեջքը, ոչ միայն ձերը, նրա մարմինն էլ էիք զգում,- ասաց հյուրերից մեկը:

Իվան Վասիլեւիչը հանկարծ կարմրեց ու զայրանալով՝ համարյա գոռաց.

- Այդ եք, ա՛յդ, հիմիկվա երիտասարդությունը: Մարմնից բացի, ոչինչ չեք տեսնում: Մեր ժամանակ այդպես չէր: Որքան ուժգին էի սիրում, այնքան անմարմին էր դառնում նա ինձ համար: Հիմա դուք ոտքեր եք տեսնում, կոճեր ու էլի ինչ-որ բաներ: Դուք մերկացնում եք սիրած կանանց, իսկ ինձ համար, ինչպես ասում էր Alphonse Karr-ը[2], լավ գրող էր, իմ սիրո առարկայի հագին միշտ բրոնզե հանդերձանք էր: Մենք ոչ թե մերկացնում, այլ ջանում էինք ծածկել մերկությունը, Նոյի բարի որդու պես: Բայց դուք չեք հասկանա...

- Մի՛ լսեք նրան: Իսկ հետո՞,- ասաց մեզնից մեկը:

- Այո՛: Եվ ուրեմն, ավելի շատ նրա հետ էի պարում ու չնկատեցի՝ ինչպես անցավ ժամանակը: Երաժիշտներն արդեն հուսահատ հոգնությամբ, որ, գիտեք, ինչպես է լինում պարահանդեսի վերջում,կրկնում էին մազուրկայի շարունակ նույն մեղեդին, հայրիկ-մայրիկները վեր էին կենում թղթախաղի սեղանների մոտից՝ սպասելով ընթրիքին, սպասավորները, ինչ-որ

1. Էլի՛ (Ֆր.):
2. Ալֆոնս Կար (Ֆր.):

բան տանել-բերելով, ավելի հաճախ էին ներսուդուրս անում: Ժամը երեքն էր: Պետք էր օգտվել վերջին րոպեներից: Ես նորից հրավիրեցի նրան, եւ արդեն հարյուրերորդ անգամ պտտվեցինք սրահի երկարությամբ:

- Ընթրիքից հետո կադրիլն իմն է, չէ՞,- հարցրի՝ նրան իր տեղն ուղեկցելով:

- Բնականաբար, եթե ինձ չտանեն,- ժպտալով ասաց նա:

- Չեմ թողնի,- ասացի ես:

- Տվեք հովհարս,- ասաց նա:

- Կկարոտեմ,- ասացի՝ էժանագին սպիտակ հովհարը մատուցելով:

- Ահա՛, որ չափսոսաք,- ասաց նա, մի փետուր պոկեց հովհարից ու տվեց ինձ:

Ես վերցրի փետուրը եւ միայն հայացքով կարող էի արտահայտել իմ ողջ հիացմունքն ու երախտագիտությունը: Ոչ միայն ուրախ ու գոհ էի, ես երջանիկ էի, երանության մեջ, ես բարի էի, ես ես չէի, այլ ինչ-որ աներկրային արարած, որը չգիտեր ինչ է չարությունը եւ ընդունակ էր միայն բարու: Փետուրը պահեցի ձեռնոցիս մեջ եւ կանգնել-մնացել ու չէի կարողանում հեռանալ նրանից:

- Նայե՛ք, հայրիկիս խնդրում են, որ պարի,- ասաց նա՝ մատնացույց անելով բարձրահասակ բարեկազմ հորը՝ արծաթե ուսադիրներով գնդապետին, որ տանտիրուհու եւ այլ տիկնանց հետ կանգնած էր դռների մեջ:

- Վա՛ռենկա, եկեք այստեղ,- լսեցինք աղամանդյա ճակատազարդով ու եղիսաբեթյան ուսերով տանտիրուհու բարձր ձայնը:

Վարենկան մոտեցավ դռանը, ես հետեւեցի նրան:

- Machere[3], համոզեք ձեր հորը, որ մի պտույտ անի ձեզ հետ: Շատ եմ խնդրում, Պյո՛տր Վլադիսլավիչ,- գնդապետին դիմեց տանտիրուհին:

Վարենկայի հայրը շատ գեղեցիկ, բարեկազմ, բարձրահասակ ու թարմ ծերուկ էր: Դեմքը թունդ վարդագույն էր, alaNicolasl[4] ոլորած բեղերով, սպիտակ, բեղերին հասնող այտամորուսներով ու առաջ սանրած քունքամազերով, եւ դստեր նույն ուրախ ժպիտն էր շողացող աչքերում ու շրթունքներին: Հրաշալի կազմվածք ուներ. լայն, սակավաթիվ շքանշաններով զարդարված, զինվորականի ցցուն կուրծք, ուժեղ ուսեր ու երկար բարեկազմ ոտքեր: Նիկոլաեյան վարժվածքի հին ու փորձված զորապետի տիպ էր:

Երբ մոտեցանք դռանը, գնդապետը դեռ դիմադրում էր՝ ասելով, որ հետ

3. Թանկագինս (ֆր.):
4. Նիկոլայ I-ի ոճով (ֆր.):

է սովորել պարելուց, բայց համենայնդեպս, ձեռքը ձախ պարզելով, ուսագոտուց հանեց սուսերը, տվեց պատրաստակամ մի երիտասարդի ու թավշակաշվե ձեռնոցը աջ ձեռքին քաշելով,- «ամեն ինչ օրենքով պիտի լինի»՝ ժպտալով ասաց նա,- բռնեց դստեր ձեռքն ու կանգնեց քառորդ կիսադարձով՝ սպասելով երաժշտությանը:

Մազուրկայի սկսվելուն պես նա ոտքը աշխուժով խփեց հատակին, մյուսը բարձրացրեց, եւ բարձրահասակ, ծանր մարմինը մեկ մեղմ ու սահուն, մեկ աղմկոտ ու արագ, կրունկները գետնին ու մեկմեկու զարկելով՝ պտտվեց դահլիճի պարագծով: Վարենկան գեղանի լողում էր նրա շուրջը՝ անկատ ու ժամանակին կարճելով կամ երկարացնելով փոքրիկ ճերմակ ատլասե տոտիկների պարաքայլերը: Ողջ դահլիճը հետեւում էր զույգի յուրաքանչյուր շարժմանը: Իսկ ես ոչ միայն հիանում, այլեւ սքանչացած խանդաղատանքով էի հետեւում նրանց: Հատկապես հուզում էին Վարենկայի հոր՝ փողքաժապավենով ծգված երկարաճիտ կոշիկները. հորթակաշվե լավորակ սապոգներ էին, բայց ոչ նորածեւ, ոչ սուրքիթ, այլ հնաոճ, քառակուսի կոշկաքթերով եւ առանց կրունկների: Ըստ երեւույթին, գումարտակային կոշկակարն էր կարել: «Սիրելի դստեր բարեվայելուչ հագուստ-կապուստի համար է, որ նորածեւ սապոգներ չի առնում, տնայնագործ է հագնում»,- մտածում էի ես, եւ սապոգների այդ քառակուսի քթերը առանձնակի խանդաղատանքով էին լցնում սիրտս: Երեւում էր, որ ժամանակին հրաշալի պարող է եղել, բայց հիմա ծանրաշարժ էր, ու ոտքերը բավարար չափով ճկուն չէին այն բոլոր գեղեցիկ եւ արագ պարաքայլերի համար, որ փորձում էր անել: Բայց համենայնդեպս հմտորեն երկու շրջան անցավ: Իսկ երբ ոտքերն արագ բացելով՝ կրկին իրար զարկեց, ապա, չնայած մի քիչ ծանր, իջավ մի ծնկին, իսկ դուստրը, ժպտալով ու շտկելով փեշը, սահուն պտտվեց նրա շուրջը, բոլորը բարձր ծափահարեցին: Որոշակի ջանքով վեր կենալով՝ նա քնքշորեն ու սիրով բռնեց դստեր ականջներն ու ճակատը համբուրելով՝ ուղեկցեց ինձ մոտ, մտածելով, որ ես եմ պարում նրա հետ: Ասացի, որ նրա պարազույգը ես չեմ:

- Մեկ է, հիմա էլ դուք պտտվեք նրա հետ,- ասաց նա ու մեղմ ժպտալով՝ սուսերը հագցրեց ուսագոտու մեջ:

Ինչպես շշից թափված կաթիլից հետո շիթ առ շիթ հորդում է ողջ պարունակությունը, այդպես էլ Վարենկայի սերը հոգուս սիրելու ողջ ունակությունն էր արձակել: Ես այդ ժամանակ ողջ աշխարհն էի գրկել իմ սիրով: Ե՛վ ճակատազարդով ու եղիսաբեթյան կրծքով տանտիրուհուն էի սիրում, եւ՛ նրա ամուսնուն, եւ՛ նրա հյուրերին, եւ՛ նրա սպասավորներին, եւ՛ նույ-

նիսկ ինձնից նեղացած ինժեներ Անիսիմովին: Իսկ Վարենկայի՝ տնայնագործ սապոգներով ու դստեր պես փաղաքուշ ժպիտով հոր հանդեպ մի ցնծագին-քնքուշ զգացում ունեի:

Մազուրկան ավարտվեց, տանտերերը հյուրերին հրավիրեցին ընթրիքի, սակայն գնդապետ Բ.-ն հրաժարվեց՝ ասելով, որ հաջորդ օրը վաղ պիտի արթնանա, ու հրաժեշտ տվեց տանտերերին: Ես այն է վախենալու էի, թե Վարենկային էլ կտանեն, բայց նա մնաց մոր մոտ:

Ընթրիքից հետո նրա հետ պարում էի խոստացված կադրիլը եւ չնայած կարծես անսահման երջանիկ էի, երջանկությունս շատանում ու շատանում էր: Մենք ոչինչ չէինք խոսում սիրո մասին: Ես նրան ու նույնիսկ ինձ չէի հարցնում՝ սիրո՞ւմ է ինձ: Ինձ բավական էր, որ ես եմ սիրում նրան: Ու վախենում էի միայն, որ որեւէ բան չխաթարի երջանկությունս:

Երբ տուն հասա, հանվեցի ու մտածեցի քնելու մասին, հասկացա, որ դա միանգամայն անհնարին է: Ձեռքիս նրա հովհարի փետուրիկն էր ու մի ամբողջ ձեռնոց, որ տվել էր ինձ, երբ կառք էր նստում, որ մեկնի, եւ նախ մորն օգնեցի կառք բարձրանա, ապա՝ նրան: Ես նայում էի այդ իրերին եւ բաց աչքերով տեսնում նրան այն պահին, երբ իմ առաջ կանգնած, ծանրութեթեւ անելով ունակություններս՝ ընտրում է երկու պարազույգերից, ու լսում նրա սիրելի ձայնը, երբ ասում է. «Հպարտությո՞ւն: Այո՞» եւ ուրախուրախ ինձ է պարզում ձեռքը կամ երբ ընթրիքին ումպ է անում շամպայնի գավաթից ու հոնքատակից նայում ինձ շոյող աչքերով: Բայց ամենից ավելի տեսնում եմ նրան հոր հետ պարելիս, երբ սահուն պտտվում է շուրջը եւ իր ու նրա համար հպարտությամբ ու ցնծությամբ լեցուն զննում հետեւող հանդիսատեսներին: Եվ ակամա միավորում եմ նրանց մեկ, քնքուշ, խանդաղատալից զգացումի մեջ:

Ես այն ժամանակ այժմ հանգուցյալ եղբորս հետ էի ապրում: Եղբայրս ընդհանրապես չէր սիրում բարձրաշխարհիկ հասարակությունն ու պարահանդեսների չէր գնում, իսկ այդ ժամանակ պատրաստվում էր թեկնածուական քննության ու շատ կանոնավոր կյանք էր վարում: Քնած էր: Ես նայեցի եղբորս՝ բարձի մեջ թաղված ու բրդյա խավոտ ծածկոցով մինչեւ կեսը ծածկված գլխին, ու սիրաբար խղճացի նրան, որ չգիտի ու չի կիսում իմ երջանկությունը: Մեր ճորտ սպասավոր Պետրուշան դիմավորեց ինձ՝ մոմը ձեռքին, եւ ուզում էր օգնի, որ հանվեմ, բայց ես նրան արձակեցի: Նրա տեսքը՝ քնատ դեմքով ու խճճված մազերով, ինձ հուզիչ թվաց: Ցանալով չաղմկել՝ ոտքերիս ծայրերին անցա իմ սենյակը ու նստեցի մահճակալիս: Ո՛չ, չափազանց երջանիկ էի, չէի կարող քնել: Ու նաեւ շոգում էի ջեռուց-

ված սենյակներում եւ համազգեստս չհանելով՝ անծայն դուրս եկա նախասենյակ, հագա շինելս, բացեցի դրսի դուռն ու ելա փողոց:

Պարահանդեսից դուրս էի եկել ժամը հինգին, մինչ կհասնեի տուն, ու տանը նստելն էլ հաշված, անցել էր եւս երկու ժամ, այնպես որ, երբ դուրս եկա, արդեն լույսը բացվել էր: Իսկական բարեկենդանի եղանակ էր. մառախուղ, ջրիկ ձյունը հալվում էր ճանապարհներին, ու բոլոր տանիքներից կաթկթում էր: Բ.-երն այն ժամանակ քաղաքի ծայրին էին ապրում, մեծ դաշտի կողքին, որի մի ծայրին զբոսավայր էր, իսկ մյուս ծայրին՝ օրիորդաց ինստիտուտը: Ես կտրեցի-անցա մեր ամայի նրբանցքն ու դուրս եկա մեծ փողոց, ուր սկսեցին անցորդներ ու վառելափայտ բարձած բեռնասայլեր հանդիպել. վառելափայտի ծայրերը կախվել ու քսվում էին սալարկին: Ե՛վ փայլուն աղեղների տակ թաց գլուխները համաչափ ճոճող ձիերը, եւ՛ կտավե թիկնոցներով ծածկված սայլապանները, որ հսկա սապոգներով ցեխ էին հունցում սայլերի կողքով, եւ՛ փողոցի տները, որ մշուշի մեջ շատ բարձր էին թվում,- ամեն, ամեն ինչ սիրելի ու կարեւոր էր թվում:

Երբ հասա դաշտ, որտեղ նրանց տունն էր, ծայրին, զբոսավայրի ուղղությամբ ինչ-որ մեծ, սեւ բան տեսա եւ այնտեղից թմբուկի ու ֆլեյտայի ձայներ լսեցի: Հոգիս անդադար երգում էր, ու ժամանակ առ ժամանակ լսվում էր մազուրկայի մեղեդին: Բայց հիմա լսածս մի ուրիշ, կոպիտ, վատ երաժշտություն էր:

«Տեսնես ի՞նչ է»,- մտածեցի ես ու դաշտի կենտրոնը հատող տրորված սլկուն արահետով գնացի ձայների ուղղությամբ: Մի հարյուր քայլ անելով՝ մշուշից անդին բազմաթիվ սեւ մարդիկ տեսա: Ըստ երեւույթին, զինվորներ էին: «Հաստատ վարժանքներ են»,- մտածեցի ես եւ ինչ-որ բան տանող, կեղտակուր կիսամուշտակով ու գոգնոցով դարբնի ետեւից մոտեցա նրանց: Սեւ համազգեստով զինվորները երկու շարքով, հրացանները գետնին հենած,անշարժ կանգնել էին իրար դիմաց: Նրանց ետեւում թմբկահարներն ու ֆլեյտահարն էին եւ անվերջ կրկնում էին նույն տհաճ, ծղրտան մեղեդին:

- Ի՞նչ են անում,- հարցրի կողքիս կանգնած դարբնին:

- Թաթարին են պատժում փախուստի համար,- շարքերի հեռավոր ծայրին նայելով՝ ջղայն ասաց դարբինը:

Ես էլ նայեցի այդ կողմն ու շարքերի արանքում մոտեցող մի սարսափելի բան տեսա: Մոտեցողը մինչեւ գոտին մերկ մարդ էր՝ ուղեկցող զինվորների հրացաններին կապված: Կողքից շինելով ու սպայական գլխարկով մի բարձրահասակ զինվորական էր քայլում. ծանոթ թվաց: Ողջ մարմնով

ցնցվելով, հալ ընկած ձյան մեջ ոտքերը չփչփացնելով՝ պատժապարտը, երկու կողմից վրան թափվող հարվածների տակ, մոտենում էր ինձ. մեկ հետ էր ընկնում՝ ու հրացանները բռնած ենթասպաները նրան առաջ էին մղում, մեկ՝ առաջ, ու ենթասպաները, պահելով, որ չընկնի, հետ էին քաշում նրան: Ու կրնկակոխ, հաստատուն, զսպանակվող քայլքով գնում էր բարձրահասակ զինվորականը: Վարենկայի հայրն էր՝ վարդագույն դեմքով եւ ճերմակ բեղերով ու այտամորուսներով:

Ամեն հարվածի հետ պատժապարտը, ասես զարմանալով, տառապանքից կնճռոտված դեմքը դարձնում էր այն կողմը, որտեղից գալիս էր հարվածը եւ ճերմակ ատամները մերկացնելով կրկնում նույն բառերը: Միայն երբ արդեն շատ մոտ էր, լսեցի՝ ինչ է ասում: Չէր ասում, հեծկլտում էր. «Եղբայրնե՛ր, խղճացե՛ք: Եղբայրնե՛ր, խղճացե՛ք»: Բայց եղբայրները չէին խղճում, ու երբ երթը լրիվ հավասարվեց ինձ, տեսա, թե իմ դիմաց կանգնած զինվորն ինչպես վճռական քայլ արեց առաջ ու սուլոցով թափահարելով մահակը՝ ուժգին շխկացրեց թաթարի մեջքին: Թաթարը ցնցվեց, առաջ ընկավ, բայց ենթասպաները պահեցին նրան, եւ նույնպիսի մի հարված էլ իջավ մյուս կողմից, ու նորից այս կողմից, ու նորից՝ մյուս: Գնդապետը մոտ էր քայլում ու մերթ ոտքերի տակ, մերթ պատժվողին նայելով՝ ներս էր քաշում օդը՝ թշերն ուռցնելով, ու դանդաղ դուրս թողնում փքած շրթունքներից: Երբ երթն անցավ իմ կողքով, շարքերի միջով հպանցիկ տեսա պատժվողի մեջքը: Ինչ-որ խայտաբղետ բան էր, թաց, կարմիր, անբնական, այնպես, որ չհավատացի, թե մարդու մարմին է:

- Տե՛ր Աստված,- կողքիս հառաչեց դարբինը:

Երթը հեռանում էր, հարվածներն առաջվա պես երկու կողմից իջնում էին սոթ տվող, կռկված մարդու վրա, եւ նույն կերպ խփում էին թմբուկները ու սուլում էր ֆլեյտան, եւ նույն հաստատուն քայլքով պատժվողի կողքով գնում էր գնդապետի բարձր, բարեկազմ կերպարանքը: Հանկարծ գնդապետը կանգ առավ, արագ մոտեցավ զինվորներից մեկին:

- Ես քեզ վրիպե՛լ ցույց կտամ,- լսվեց նրա ցասկոտ ձայնը:- Էլի՞ կվրիպես: Էլի՞:

Ու տեսա թավշակաշվե ձեռնոցի մեջ պրկված թաթն ինչպես է խփում վախեցած կարճահասակ, վտիտ զինվորի դեմքին, նրա համար, որ մահակը բավականաչափ ուժեղ չէր իջեցրել թաթարի կարմիր մեջքին:

- Թարմ շպիցռուտեննե՛ր[5] բերեք,- գոռաց նա՝ շուրջը նայելով, ու տե-

5. Դալար ճիպոտ:

սավ ինձ: Զեւացնելով, թե չի ճանաչում, ահեղ ու չար խոժոռվելով, արագ շրջվեց: Այնպես ամոթ էր, որ չգիտեի հայացքս ուր փախցնեմ, ասես բռնվել էի ամենախայտառակ արարքի վրա, կախեցի գլուխս ու շտապեցի տուն: Ամբողջ ճանապարհին ականջներիս մեջ մեկ թմբուկն էր զարկում ու սուլում էր ֆլեյտան, մեկ լսվում էր. «Եղբարյրնե՛ր, խղճացե՛ք», մեկ՝ գնդապետի ինքնավստահ, ցասկոտ ձայնը. «Էլի՞ կվրիպես: Էլի՞»: Եվ ամբողջ ժամանակ սրտիս ծանրացած էր համարյա շոշափելի, սրտխառնուքի հասցնող տխրությունը, այնպիսին, որ մի քանի անգամ կանգ առա, ու թվում էր՝ հիմա հետ կտամ այն սարսափը, որ իմ մեջ էր մտել այդ մղձավանջի հետ: Չեմ հիշում՝ ինչպես հասա տուն ու պառկեցի: Բայց աչք կպցնելուն պես նորից լսեցի ու տեսա այդ ամենը ու վեր թռա:

«Երեւի նա մի այնպիսի բան գիտի, որ ինձ անհայտ է,- մտածում էի գնդապետի մասին:- Եթե իմանայի նրա իմացածը, կհասկանայի եւ այն, ինչ տեսա, ու դա ինձ չէր տանջի»: Բայց որքան էլ մտածում էի, չէի կարողանում հասկանալ գնդապետի գիտեցածը, ու միայն երեկոյան կողմ քնեցի, այն էլ ընկերոջս մոտ գնալուց ու նրա հետ հարբելուց հետո:

Եվ ի՞նչ, մտածում եք՝ այն ժամանակ որոշեցի, որ տեսածս վա՞տ բան էր: Բոլորովի՛ն: «Եթե դա այդպիսի վստահությամբ էր արվում եւ անհրաժեշտ էր համարվում բոլորի կողմից, ուրեմն նրանք գիտեն մի բան, որ ես չգիտեմ»,- մտածում էի ես ու փորձում իմանալ չիմացածս: Բայց որքան էլ ջանացի, նույնիսկ հետո չկարողացա իմանալ: Իսկ չիմացած՝ չէի կարող անցնել զինվորական ծառայության, ինչն առաջ ուզում էի, եւ ոչ միայն զինվորական չդարձա, ընդհանրապես ոչ մի տեղ չծառայեցի ու ոչնչի պիտանի չեղա:

- Դե, գիտենք ինչպես ոչ մի տեղ պիտանի չեք եղել,- ասաց մեզնից մեկը:- Ավելի լավ է ասեք՝ քանի՛ հոգի ոչնչի պիտանի չէին լինի, եթե չլինեիք դուք:

- Դա ընդհանրապես հիմարություն է,- անկեղծ սրտնեղությամբ ասաց Իվան Վասիլեւիչը:

- Իսկ սե՞րը,- հարցրինք մենք:

- Սե՞րը: Սերն այդ օրվանից սկսեց ցամաքել: Երբ Վարենկան, ինչպես հաճախ էր պատահում, ժպիտը դեմքին մտքերի մեջ էր ընկնում, անմիջապես հիշում էի գնդապետին հրապարակում, եւ մի տեսակ անհարմար ու տհաճ էր դառնում, ու սկսեցի հազվադեպ հանդիպել նրա հետ: Ու սերն այդպես էլ վերջացավ: Ահա թե ինչեր են պատահում եւ ինչից է փոխվում ու ճամփա փոխում մարդուս ողջ կյանքը: Իսկ դուք ասում եք...,- ավարտեց նա:

Իվան ԲՈՒՆԻՆ

ԶԱԽԱՐ ՎՈՐՈԲՅՈՎ

Վերջերս Օսինովի Դվորների Զախար Վորոբյովը մեռավ:

Ծիկավուն-խարտյաշ էր, մորուքով ու սովորական մարդկանցից այնքան բարձրահասակ, խոշոր, որ մատով էին ցույց տալիս: Ինքն էլ իրեն մյուսներից տարբեր էր զգում, ինչպես մեծերը՝ երեխաների մեջ, որոնց հետ, սակայն, ստիպված են իրենց հավասարի պես պահել: Ողջ կյանքում,- քառասուն տարեկան էր,- մի զգացում չէր լքում նրան՝ մենակության աղոտ զգացողությունը. ասում են՝ հին ժամանակներում շատերն են նրա պես եղել, բայց անհետանում է այդ տեսակը: «Իմ նման մեկն էլ կա,- մեկ-մեկ ասում էր նա,- բայց հեռու է, Զադոնսկի կողմերը»:

Համենայնդեպս, միշտ փառահեղ տրամադրություն ուներ: Բացառիկ առողջություն: Հրաշալի կազմվածք: Նույնիսկ գեղեցիկ կիամարվեր, եթե չլինեին դարչնագույն արեւայրուքը, թեթեւակի դուրս պրծած ստորին կոպերն ու մշտապես արցունքոտ,ապակիացած խոշոր երկնագույն աչքերը՝ կոպերի տակ: Մորուքը փափուկ էր, թավ, մի քիչ ալիքավոր, այնպես որ, հա՛ ուզում էիր ձեռք տալ: Հսկայի քնքշությամբ ու զարմանքով հաճախ ժպտում ու հետ էր գցում գլուխը՝ թեթեւակի բացելով կարմիր, շոգ երախը, ցուցադրելով սքանչելի ջահել ատամները: Ու հաճելի՝ տափաստանաբնակի տարեկանի հոտ էր գալիս նրանից՝ խառնված լավ պայտած սապոգների կպրահոտին, դաբաղած կիսամուշտակի թթվահամին ու քթախոտի դաղձաբույրին. չէր ծխում, քթախոտ էր քաշում:

Ընդհանրապես հնի սիրահար էր: Միշտ լվացած, անմշակ քաթանից շապիկի օձիքը կոճկովի չէր, այլ կապվում էր կարմիր ժապավենով: Գոտկից պղնձե սանր ու պղնձե փորիչ էր կախած: Մինչեւ երեսունհինգ տարեկան տրեխ էր հագնում: Բայց որդիները մեծացան, տնտեսությունը ոտի կանգնեց, ու Զախարը սկսեց սապոգ հագնել: Ամառ-ձմեռ գդակն ու կիսամուշտակը չէր հանում: Եվ իրենից հետո էլ կիսամուշտակը նոփ-նոր էր, կրծքին գեղեցիկ դարձակարած կապտականաչ չափռաստներն ու գույնզգույն սաֆյանի մանր վրակարերը դեռ չէին խունացել: Դարձաձալերի եւ ջրաշան մորթուց օձիքի դարչնագույն բոլորքը դեռ փշփշոտ ու կոշտ էր:

Սաքրություն ու կարգուկանոն էր սիրում Զախարը, ամենայն նորն ու ամուրն էր սիրում:

Շատ անսպասելի մեռավ:

Օգոստոսի սկիզբն էր: Հենց նոր մի ահագին շրջան էր արել: Օսինովի Դվորներից հասել էր Կրասնայա Պալնա՝ հարեւանի հետ դատին: Պալնայից էլ տասնվեց վերստ կտրել էր մինչեւ քաղաք. աղջիկ-պարոնին պիտի տեսներ, ումից հող էր վարձակալում: Քաղաքից երկաթուղով հասավ Շիպովո գյուղ ու Ժիլոյեով քայլեց դեպի Օսինովի Դվորներ. էլի տասը վերստ: Բայց դա չէր նրան տապալողը:

- Ի՜նչ մի մեծ բան է,- զարմացած ու վեհատես-խստաշունչ կասեր նա իր թավշյա բասով:- Քառասուն վե՜րստ:

Ու բարեհոգի կավելացներ.

- Ի՜նչ բանի ես, ջահե՛լ: Հազար էդքան կանցնեմ:

Փրկչի առաջին տոնն էր: «Արժեր տոնին մի քիչ խմել»,- Շիլովում, ամեն տարվա պես նորոգվող կավճաթաթախ կայարանով անցնելիս կատակով ասաց ծանոթին՝ Պետրիշչեւի սայլապանին: «Բա ինչի՞ չես խմում: Համ էլ ինձ կհյուրասիրեիր»,- պատասխանեց կառապանը: «Փող չունեմ, եղածչեղածը ծախսել եմ, առանց էդ էլ ապրանքատար վագոնով տեղ հասա»,- ասաց Զախարը, չնայած փող ուներ: Կառապանն աչքով արեց ընկերոջը՝ ուրյադնիկ Գոլիցինին: Շիպովցի գեղջուկ, հարբեցող Ալյոշկան էլ պոչ եղավ: Ու չորսով դուրս եկան կայարանից: Զախարն ու Ալյոշկան ոտքով էին, կառապանը նստեց զույգ ձիլծած սայլակը. Պետրիշչեւի ետեւից էր եկել, բայց նա այդպես էլ չժամանեց. իսկ ուրյադնիկը թեթեւ կառքով էր: Եվ Ալյոշկան անմիջապես խոսք բացեց՝ Զախարը մի ժամում մի քառորդ լիտրանոց կխմի՞:

- Բա ուտե՞լը,- հարցրեց Զախարը, որ աղուրներով կտրատված ճամփով մեծաքայլ գնում էր ուրյադնիկի բարձրամեջք մատակի կողքով ու մեկ առեղն էր տեղը գցում, մեկ շտկում ծռված լծասարքը:

- Սրտիդ ուզածը կարաս պահանջես, հիսուն կոպեկի,- ասաց կառապանը, որ կարճամիտ ու մռայլ մարդ էր:

- Բայց որ կրվեցիր,- ավելացրեց Ալյոշկան, որ ջարդած քթով քրքրված գեղջուկ էր,- որ կրվեցիր, եռակին ես տալու:

- Թող ձեր ասածը լինի,- ներողամիտ համաձայնեց Զախարը՝ մտածելով, թե ինչ ուտելիք ուզի:

Բոլորովին չէր հոգնել Պալնայի ուղեւորությունից, որտեղ գործը հրաշալի ավարտվեց՝ հաշտությամբ, ուժասպառ չէր երկու օր քաղաքային տո-

թին տառապելուց, հակառակը՝ ոգեւորություն էր զգում, ուժը հորդում էր: Ողջ էությամբ ուզում էր արտակարգ մի բան անել: Բայց ի՞նչ: Ի՜նչ մեծ բան է մի քառորդ խմելը, նորություն չի... Եվ ի՞նչ հետաքրքիր սայլապանին զարմացնելն ու հիմար վիճակի մեջ դնելը...բայց համենայնդեպս հաճույքով գրազ եկավ: Եվ անցնելով ուտելուն ու խմելուն՝ նախ սկսեց ուտելիքը վայելել,- շատ սոված էր, ամեն պատառը համով էր,- հետո՝ դատի մասին իր պատմությունը:

Շոգ օր էր: Սակայն գյուղի շուրջը, դեզերով պատված դեղին դաշտերի արձակության մեջ արդեն աշնանամուտի պես մի բան կար, թեթեւ, վճիտ: Խիտ փոշի էր նստած Ճիպովի գյուղամիջում: Հրապարակը գյուղից բաժանում էին պահեստները, հացի խանութը, գինու կրպակը, փոստի բաժանմունքը, վաճառական Յակովլեւի երկնագույն տունը՝ կից պարտեզով, ու նրա երկու փայտաշեն կրպակներն՝ անկյունում: Սեւ կրպակի մոտ սանդղաշար սոճենու տաշած գերաններ էին: Գերաններին նստած՝ Զախարը ուտում, խմում, պատմում ու նայում էր հրապարակին, արեւի տակ փայլող ռելսերին, կուզիկ ուղանցի ուղեփակոցին ու ռելսերից անդին դեղին դաշտերին: Այլոշկան նստել կողքին ու ծամում էր իր զամբ ալյուրի հացը: Ուրյադնիկը խուզած բեղերով, նարնջագույն ուսադիրներով, մաշված շինելով ծանծրալի, փոշեկոլոլ մարդ էր. ուրյադնիկն ու սայլապանը ծխում էին, մեկն իր կառքում, մյուսը՝ սայլակի մեջ: Ձիերը ննջում էին, համբերատար սպասում, թե երբ կհրամայեն շարժվել: Իսկ Զախարը պատմում էր:

- Գործն ինչով վերջացա՞վ,- ասում էր նա:- Ոչ մի բանով: Հաշտվեցինք: Ես դատարանների երեսը, սատանի ծոցը կորչեն դրանք, իմ օրում տեսած չկայի, ոչ մեկի հետ չեմ դատվել: Օղորմած հերս էր ասում՝ գործ չունես կռվշտոցի հետ: Իսկ էստեղ դատարկ բան էր: Կնանիք կռվել էին, մենք էլ ախմախի պես մեջ ընկանք...

Արդեն երեք շիշ խմել էր՝ փայտե ջրամանով, որ Յակովլեւի բակից Ալյոշկան էր գտել. իր գործը թեթեւ էր անում, ինքն իր վրա այնքան վստահ, որ նույնիսկ չէր նկատում՝ ինչ է անում: Սայլապանը, ուրյադնիկն ու Ալյոշկան ամբողջ ուժով հանգիստ էին ծեւանում, չնայած հոգու խորքում յուրաքանչյուրը ջերմորեն աղոթում էր Աստծուն, որ Զախարն ուշագնաց տապալվի գետնին: Իսկ նա ընդամենը կիսամուշտակն արձակեց, ճակատից մի քիչ հետ քաշեց գդակը ու կարմրել էր: Երեք հատ տառեխ կերավ, կանաչ սոխի մի հսկա կապ ու հինգ ֆրանսիական հացիկ, այնպես հաճույքով ու համով կերավ, որ նույնիսկ հակառակորդներն էին հիացել: Եվ եռանդով ու մի քիչ ծաղրաբար պատմում էր.

- Զարմանք բան են էդ դատարանները: Ստածում էի՝ չգնամ: Մեկ էլ լսեմ՝ բողոք են տվել: Դե, տվել են՝ տվել են, ես էլ չեմ գնա: Բայց էստեղ հանկարծ Պալնա է գալիս ղեկավարությունը, ատենակալը հետեւիցս մարդ է ղրկում: Ա՛յ անտակը գնաս: Ճար չկա: Հաց կապեցին, ու գնացի: Ծոգը էն խոսքը չի, փոշին աչք է ուտում, ոտը գետին դնել չի լինում: Բայց, մեկ է, տեղ հասա: Ծատ էի վռազում, ներկայացա...

Պարպվող շիշը թեւատակին՝ սեւացած ջրամանի մեջ քամեց պայծառ հեղուկը, լցրեց պռնկեպռունկ ու բեղերը շտկելով՝ խոնավ շրթունքներով կպավ սուր ու թանձր բուրող պռնկին. դանդաղ էր քաշում, հաճույքով, ինչպես աղբյուրի սառցասառը ջուրը շոգ օրով, խմեց մինչեւ տակը, կռնչաց ու ջրամանը շրջելով՝ թափ տվեց վերջին կաթիլները: Հետո շիշը զգույշ դրեց կողքին: Սայլապանը խոժոռ հայացքը չէր կտրում նրանից. ուրյադնիկը, որ ժամացույցի սլաքը թաքուն արդեն մի ամբողջ քառորդ ժամ առաջ էր տվել, տագնապած հայացքներ էր փոխանակում Ալյոշկայի հետ: Իսկ Զախարը, շիշը ցած դնելով, երկու-երեք կանաչ սոխ վերցրեց, ջարդեց, լցրեց մեծ, փայտե աղամանը, թաթախեց խոշոր գորշավուն աղի մեջ ու խփշտեց ախորժալի, հյութեղ խրթխրթոցով: Արյունով ու արցունքով լցված աչքերը սարսափելի էին: Բայց նա ժպտում էր, կրծքային բասը հնչեղ էր, փաղաքուշ, հաճելիորեն ծաղրական:

- Ներկայանում եմ, ուրեմս,- պատմում էր՝ ծամելով ու փքելով ռունգերը:- Տեսնեմ՝ փողոցում լիքը ժողովուրդ, ուռենու տակ, հովին ատենակալն է նստել, մայիս ամսվա պենջակով, մորուքը՝ շեկ, դեմը՝ սեղանին մի գլուխ գրքեր ու թղթեր, կողքին,- Զախարը ձեռքը ձախ պարզեց,- ուրյադնիկն ինչ-որ բան է գրում կարմիր ութանկյուն մատիտով: Կանչում են գեղջուկ Սեմյոն Գալկինին, օբուխովցի: «Սեմյոն Գալկին» - «Ես եմ» - «Էստեղ արի»: Մոտենում է, սկսում են հարցաքննել: Իսկ նա ուրյադնիկին չի էլ նայում, գրպանից մի տանձ հանեց, կանգնել, ուտում է: Ուրյադնիկը հրամայում է. «Գցի՛ր տանձը»: Ականջ չի դնում, իր գործին է...

- Մոթին պիտի հասցնեին էդ տանձով,- ասաց սայլապանը:

- Ճիշտ է,- հաստատեց Զախարը՝ վերջին՝ յոթերորդ բուլկին կիսելով:- Կանգնել ու խժռում է: Ատենակալը՝ ուրյադնիկին: «Ահա,- ասում է,- պարո՞ն ուրյադնիկ, սա հենց էն գեղջուկ Սեմյոն Գալկինն է, որ երբ անցած անգամ վերգիր անելու էի գնացել, հրաժարվեց վերգրած ցուցակով քառասունութ ռուբլի ութ գրիվեն վճարել, իսկ երբ փորձեցի նրա փայտն ու ամբարը գրանցեմ, հենց էս Գալկինն, ասում է, ընկերների՝ Իվան ու Բոգդան եղբայրների հետ, նստոտեցին տան մոտի գերաններին ու չթողեցին վեր-

գիրն ավարտեմ: Իսկ երբ նրա տուն մտա, ասես խոսքի հետ կնոջը հարցրեց՝ մեր կշեռքն ո՞ւր է, հենց իմ ներկայությամբ ասվեց, ու ես էդ իմ վրա առա, իսկ էդ ժամանակ Բոգդանը մոտեցավ լուսամուտին, գերանդին ուսին մոտեցավ, երբ որ հնձելու բան չուներ, ամեն ինչ վաղուց հնձած էր: Ու քանի որ մենակ էի, ստիպված հեռացա: Այ բարեհաճեք հարցնել նրա կնոջը՝ Կատերինային ու մորը՝ Ֆյոկլային, ու նրանց ցուցմունքներն արձանագրության մեջ մտցրեք: Ու եկեղեցու երեց Ֆեդոտ Լեվոնովի ցուցմունքներն էլ գրանցեք: Նաեւ էն, որ տանուտեր Գերասիմ Սավելեւն անհետացել էր էդ օրը ու իմ պահանջով չներկայացավ, իսկ երբ որ Գալկինի տնից ձիս նստած գնում էի Միտրի Օվչիննիկովի մոտ ու անցնում էի նրա խրճիթի կողքով, շունը քսի տվեց վրաս, իսկ ինքը պահվել էր դարպասի հետեւը, ինչը լավ տեսա, ու շվացնում էր, փառք Աստծո, այնպես եղավ, որ շունն ինձ չկծեց, չնայած կատաղածի պես ուղիղ կրծքիս էր նետվում, ու էդ էլ Միտրիի շնորհիվ, որ մտրակը ձեռին դուրս թռավ ու ինձ պաշտպանեց...»:

Զախարը, իր ներդաշնակ պատուհմով տարված, ճշգրիտ արտաբերեց վերջին բառերը: Առանց շունչ առնելու, հնչեղ ու հաստատուն փոխանցելով ատենակալի հայտարարությունը՝ արդեն ուզում էր շարունակել, բայց Ալյոշկան չհամբերեց ու գոռաց.

- Հետո՞ կպատմես: Խմի՛: Ուրյա՛դնիկ, ժամացույցին նայի:

- Կնայենք, կնայենք,- պատասխանեց ուրյադնիկն ու աչքով արեց Ալյոշկային:

Բայց Զախարը դա չնկատեց:

- Ի՞նչ ես իրար անցել, կճա՛տ սատանա,- բարեհոգի կանչեց նա:- Թող վերջացնեմ: Ես իմ ժամանակը գիտեմ, կխմեմ, մի վախենա:

Ոտքերը հաստատուն էին պայտած կրունկների վրա. Զախարը հպարտությամբ էր ցուցադրում սապոգները ու ժամանակ առ ժամանակ առանց կարիքի ծգում էր ճիտքերը, դեմքը կարմիր էր, բայց չհարբած: Ընդգծված խոր գլուխ տալով դատարկ սայլը նստած գեղջուկին, որ կողքից անցնելիս ուշադիր զննեց նրան, Զախարը աղմուկով շնչեց, երկու ձեռքով բռնեց տաքացած կիսամուշտակի լանջափեշերը, օձիքը հետ մղեց ու շարունակեց՝ վայելելով երեւակայությունը պատած պատկերի պայծառությունն ու իր մտքի խաղը:

- «Կատերինա Գալկի՛նա,- բարձր, ողջ կրծքով կանչում էր նա՝ անվանական պատկերելով բոլորին:- Հարցաքննությա՛ն: Մո՛տ արի»: Մոտենում է: «Լսեցի՞ր՝ ինչ ասաց պարոն ատենակալը»: «Լսեցի»: Բայց լաց է լինում, կակազում, ոչինչ կարգին պատմել չի կարող: «Ձի՞շտ է, որ ամուսինդ պա-

որոն ատենակալի ներկայությամբ կշեռքն է հիշատակել»:- «Ես, ասում է, էդ ամենից տեղյակ չեմ: Մարդս ուզում էր բան կշռի»: - «Ուրեմն դրանից հրաժարվո՞ւմ ես»: - «Էդ գործերից տեղյակ չեմ: Ամեն ինչի գլուխը Ֆեդկան է: Նրան հարցրեք՝ համ հարցը կլուծվի, համ գլխացավից հեռու...»: Հիմա էլ պառավին են կանչում: Ֆյոկլային: Պառավն էլ՝ չորացած, կատաղած, պատասխանում է՝ ոնց որ տրաքի: «Ունեցվածքը, ասում է, իմն է, տղիս տեղը վճարող չեմ, հանգուցյալ ամուսնուս բոլոր իրավունքներն իմն են, ու տղես էլ ոչինչ չունի, զուտ փոխանը»: «Բայց տղան ո՞ւմն է»: - «Իմն է»: - «Դե որ քոնն է, էլ խոսելու բան չկա, հարկը չտալու համար ունեցվածքով եք պատասխանատու: Գնա՛, ձենդ չլսեմ, իսկ հանդուգն պատասխանի համար երկու օր խուց կդնեմ, զուտ հացուջրով...»: Տեղը դրեց, ուրեմս, պառավին: Հարցնում է՝ ո՞ւր է մոմավաճառ Ֆեդոտ Լեվոնովը: Նրա աղջիկն է մոտենում՝ Վինադորկան: - «Հայրդ ո՞ւր է»: - «Սենյակում, ճաշից հետո հանգստանում է»: - «Վազի, կանչի դատի: Ասա՝ ղեկավարությունն է պահանջում...»: Իսկ նա դիմացի բակում է կենում:

- Մոտիկ է, ուրեմն,- ընդհատեց ուրյադնիկը եւ արագ նայեց Ալյոշկային ու սայլապանին:- Էդպե՛ս... Դե, ապացուցի՛, ապացուցի խմելդ: Դու, ախպե՛ր, ոնց որ խոսելու վարպետ ես:

Մտքին եկածն ասում էր, միայն թե շեղեր Զախարի ուշադրությունը: Ժամացույցը ծնկների արանքում թաքցնելով՝ սլաքն էլի մի տասը րոպե առաջ տվեց: Ու Զախարը գովեստից շողացող դեմքով, ավելի աղմուկով քթով ներս քաշեց օդը, թափ տվեց գլուխը՝ թիակներից քաշելով կիսամուշտակի թավ ու տաքացած մորթին, եւ ավելի արտահայտիչ շարունակեց.

- Ճիշտ է: Լսի, ուրեմն, մի խանգարի, թե չէ կջղայնանամ... Նայեմ՝ ցածրիկ սենյակից մի գետնին կպած բիձա դուրս եկավ... Ճամփան կտրելով՝ գնաց դեպի խրճիթը. առանց գլխարկի, նոր, վարդագույն վրաթող շապիկով, շոգից օձիքն էլ է արձակել: Իսկ խրճիթից դուրս է գալիս նոր տաք անթեւնոց հագած, կանաչ գոտիկը ձգած, գդակը՝ ձեռին: Մոտենում է: Մազերը խիտ են, սպիտակ, ոչխարի պոզերի պես երկճյուղ սանրած: Ուրադնիկին, ատենակալին ձեռքով է բարեւում: (Երեւում է՝ հարուստ բիձա է): Ինչ-որ բան քչփչաց նրանց հետ, Սենկային է ցույց տալիս: Հետո հանեց կաշվե մեծ քսակը, ցուրտը տարած ձեռներով սկսեց երեքանոցները հաշվել... Հետո Վինադորկային կանչեց: Կարգադրեց ինքնաեռը դնի, ուրյադնիկին ու ատենակալին թեյի է կանչում. «Եկեք որսատեղս տեսեք, մեղուներս տեսեք ու թե ինչ ման-չման եմ առել: Ձիս էլ կտեսնեք: Լավ ձի է, սպիտակ, լրիվ խալավոր»: Ծիծաղում է, երեսը կնճռոտում, կարմիր բերա-

նում ատամների փտած արմատները ցույց տալիս... «Անպայման պիտի նայեք, ասում է, ձիերի օրենքն է պահանջում: Կարող է եւ գին կտրենք, էն ինչի մասին խոսում էինք...»: Ու նորից է ծիծաղում, ֆշշացնում օձի պես: Գնաց դեպի խրճիթը, փոշի է ծեծում սապոգներով, ձեւ է թափում...

- Ձեւը՝ ձեւ,- նորից ընդհատեց ուրյադնիկը՝ ժամացույցը հանելով,- բայց հինգ րոպե բան է մնացել: Հիմա մի շնչում պիտի խմես:

Զախարի դեմքը միանգամից այլակերպվեց:

- Ո՛նց,- խստաձայն գոռաց նա:- Փչո՛ւմ ես: Արդեն մի ժամ անցա՞վ:

- Անցել է, ախպե՛րս, անցել է,- միացան սայլապանն ու Ալյոշկան:- Խմի վերջացրու, խմի՛:

Զախարը շունչ առավ դարբնոցի փուքսի պես ու փակեց աչքերը:

- Սպասե՛ք,- ասաց:- ճիշտ չի: Խաբեցիք ինձ: Կես ժամ էլ տվեք: Գլխավորը, որ հալից ընկել եմ: Ծո՛գ է: Օգոստոս: Սատանան ձեր հետ, ավելի լավ է մի շիշ դնեմ: Դուք էլ ժամանակս ավելացրեք... Գոնե էդ դատը պատմեմ-վերջացնեմ,- մռայլված խնդրեց նա:

- Ըհը՛: Մեղա՞ եկար,- քմծիծաղով գոչեց սայլապանը:- Հիմա դատդ կտեսնենք:

Զախարը նրան հառեց արյունոտ, ծանր հայացքը: Հետո, առանց մի խոսքի, բռնեց շշի կոկորդը, մինչեւ տակը քամեց՝ պռնկեպռունկ լցնելով ջրամանը, ու խմեց մինչեւ վերջին կաթիլը: Եվ, շունչը դժվար հետ բերելով, կոպիտ ասաց.

- Հը՞: Կերա՞ք... Հիմա կապացուցեմ,- հարբած մարդու համառությամբ ավելացրեց նա:- Հիմա կտեսնես՝ խմացրի՞ր ինձ, թե՞ քու փորի բանը չի...

Ու հանկարծ նորից զվարթացան սարսափելի աչքերը, դեմքը նորից մեծալուրջ ու բարեհոգի դարձավ:

- Այ հիմա չեք կարա չլսեք,- ողջ կրծքով կանչեց նա ու շարունակեց, բայց արդեն ոչ առաջվա նման լավ ու սահուն:- Դրանից հետո հեքիմին են կանչում՝ Վասիլ Իվանովին: Սա լրիվ լղար է, գորշ անթեւնոցով, մազերը՝ կանեփի թել, ու սեպի նման պուճուր մորուք ունի: Երեսն էլ բիծուց է վերան կնճռոտ՝ արեւից, թե խորամանկությունից... սատանան գիտի դրան: Ստացվում է, որ պառավին սա է դեղել: Ինչ-որ դեղ է տվել ու պատվիրել է, որ փոքր բաժակով խմի, սա էլ բռնել ու մեծ բաժակներով հուպ է տվել... Կանչում են, ուրեմն: «Անո՛ւնդ»: «Մինչեւ հիմա Վասիլի են ասել»: - «Քեզ ո՞վ է բուժելու իրավունք տվել, սրիկա՛»: Բայց հաստատ գլխանց արդեն պայմանավորված էին. Վասկան վայ թե դրանց բուռը բան էր դրել: Բայց ժողովրդի մոտ, պարզ է, ձեւ պիտի անեն, պիտի գոռան: Հարցրեց, հարցրեց

ու նորից ո՞նց է գոռում վրան. «Չքվի՛ աչքիցս, կորի կաղամախուտը»: Սա իբր թե վախեցավ. փափախը քաշեց գլուխն ու քը՛ստ, քը՛ստ, քը՛ստ, ուղիղ անտառ... Էսպես, ուրեմն, գործը սվաղեցին: Ուրյադնիկը նայեց հայելու մեջ, ուղղեց թուրը, դասավորեց իրա թղթերը... «Դե, ասում է, չգնա՞նք բիծու մոտ: Ծատ եմ ուզում, որ ձին մի քիչ էլ հանգստանա»: - «Ժամը քանի՞սն է»: Ուրյադնիկը հանեց նոր, արծաթե ժամացույցը, նայեց. «Մեկից երեսունութ աշխատած»: - «Լա՛վ, գնացինք, արժի, որ դրա որսատեղը նայենք, բիծան շատ էր գովում»: Վեր կացան, գնացին թեյ խմելու: Իսկ գեղացիք մնացին, ագռավների նման թառեցին խրճիթի մոտի կտրած ծառերի կոճղերին, աղմուկ արեցին: Մի քանիսն ասում են՝ առուտուրը պիտի արգելեն, մնացածը, թե՝ չի կարելի նեղացնել ղեկավարությանը: Մի լղար գեղացի ամենից բարձրն է գոռում, կպել է մի բիծու: Գեղացին գոռում է, թե կյանք չի մեր կյանքը, օտար երկրներում ավելի լավ է, ղրղըզը որ ղրղըզ է, էլի հարմար է ապրում, առնվազն հսկա տափաստաններ ունի... Բիծան էլ իրան է ճղում՝ մեր մոտ ավելի լավ է...

Նրան թվում էր՝ կարող է անվերջ խոսել, եւ՝ ավելի ու ավելի հետաքրքիր, ավելի լավ, բայց լսելով նրան, համոզվելով, որ կորած գործ է, որ Զախարը կերավ-խմեց իրենց հաշվին ու հիմա էլ անդադար անհեթեթություններ է պատմում, սայլապանն ու ուրյադնիկը, նրան կես խոսքի թողած, քշեցին ձիերն ու գնացին: Այլոշկան մի քիչ էլ նստեց կողքին, գլխով արեց ասածներին, չորս կոպեկ խնդրեց թութունի համար ու գնաց կայարան: Իսկ Զախարը, եւ խմածի չափից կատարելապես դժգոհ, եւ զրուցակիցներից, մնաց մենակ: Թառանչեց, օրորեց գլուխը՝ կիսամուշտակի օձիքից ազատվելով, եւ նախկինից առավել ուժի ու անորոշ ցանկությունների հորդում զգալով՝ վեր կացավ, մտավ խմիչքի կրպակը, մի շիշ առավ ու նրբանցքով դուրս եկավ գյուղից, քայլեց փոշոտ ճանապարհով, արձակ դաշտով, դեղին արտերով ու անծայրածիր երկնքի տակ: Արեւն իջել էր, բայց դեռ վառում էր: Զախարի կիսամուշտակը պսպղում էր: Նրանից աջ՝ ոսկեվուն չորացած խոզանի վրա էր ընկել նրա մեծ ստվերը, գլխի շուրջը՝ լուսապսակ: Տաքացած գդակը ծոծրակին մղելով, ձեռքերը կիսամուշտակի տակ մեջքին դրած՝ Զախարը հաստատուն քայլում էր հողին նստած փոշու միջով, արծվի պես անթարթ մերթ արեւին էր նայում, մերթ հնձից հետո լայնարձակ փռված տափաստանի արձակությանը, որ ավազե անապատի հեռուն էր հիշեցնում, դրանց վրա ցրված անհաշիվ բարդոցներին էր նայում, որ հեռվում ասես թրթուրներ լինեին, եւ հորիզոնների, դեզերի գլխին՝ նրա արյունով լցված, արցունքոտ աչքերի առաջ անհամար շրջաններ էին

պտտվում՝ մորեգույն, մանուշակագույն, վառ կանաչ: «Բայց, համենայնդեպս, հարբած եմ»,- մտածեց նա՝ զգալով, թե ինչպես է մարում եւ արյունը գլուխը խփում սիրտը: Բայց դա բոլորովին չէր խանգարում հուսալ, որ այ հիմա էլի մի արտասովոր բան կկատարվի: Նա կանգ էր առնում, խմում ու փակում աչքերը: Ախ, ի՜նչ լավ է: Ինչ լա՜վ է ապրելը, բայց անպայման մի զարմանալի բան պիտի անես: Նայեց երկինք, ու հոգին, եւ՛ ծիծաղելի, եւ՛ միամիտ, լեցուն էր սխրանքի ծարավով: Ինքը արտակարգ մարդ է, դա հաստատ գիտեր, բայց արտակարգ ի՞նչ է արել կյանքում, ինչո՞վ է արտահայտել իր ուժը: Ոչնչո՜վ, ոչնչո՜վ: Մի անգամ մի պառավի ձեռքերի վրա տարել է հինգ վերստ... Բայց դրա մասին խոսելն էլ ծիծաղելի է. կարող էր այդպիսի տասնյակ պառավների հասցնել ուր ուզես:

Հարբած ու տեսարաններ տենչացող երեւակայությունը գործ էր պահանջում: Նա ավելի ու ավելի մեծաքայլ էր գնում առաջ՝ հաստատ որոշելով, որ արեւին թույլ չի տալու իրենից առաջ ընկնի, եւ ավելի շուտ կհասնի Ժիլով, քան նա մայր կմտնի, ու մտածո՜ւմ էր, մտածո՜ւմ... Ծիշն արդեն վերջանալու վրա էր: Ու զգաց, որ մի քիչ էլ պիտի խմի՝ կաղ քաղքենու մոտ, որ մեծ ճանապրհի եզրին՝ Ժիլովի գինու խանութում է նստում: Արեւն իջնում էր, արեւելքից նրան փոխարինելու էր բարձրանում լիալուսինը, որ ասես գունատ ամպիկ լիներ երկնակամարի համաչափ, չոր կապույտի վրա: Ցրտող օդում ինչ-որ տեղից անորսալի, իրիկնային բուրավետ ծուխ էր զգացվում. արդեն կարմրին էին տալիս նարնջագույն շողերը՝ ձախից շեղակի հատելով հնձած, քիստոտ արտերը, կարմրին էր տալիս Զախարի սապոգների տակից բարձրացող փոշին. ամեն մի դեզ, ամեն սոխուկ ու խոտի ցողուն ստվեր ուներ: «Չէ՛, հանաք ես անում, ինձ չես անցնի»,- մտածեց Զախարը՝ արեւին նայելով, սրբեց ճակատի քրտինքն ու հիշեց, թե մի անգամ տոնավաճառում, քաղաքից եկածների հետ գրազ գալով, ինչպես առջեւի ոտներից բռնած բարձրացրեց ծանրաքարշ որձ ձիուն, թուջածույլ հաղորդակը հիշեց, որ անցած ամառ կալվածատեր Խոմուտովի կալատեղում քաշեց-հանեց խրձանոցից, ու մուրացկան պառավին հիշեց, որին գրկած տանում էր՝ ուշադրություն չդարձնելով նրա վախին ու հոգուն թողություն տալու աղերսանքներին: Կանգ առավ Զախարը, չռեց ոտքերը, որոնցից երկու ստվերասյուն ընկավ խոզանի վրա, կիսամուշտակի խոր գրպանից հանեց շիշը, միջով նայեց արեւին եւ ուրախ քմծիծաղեց՝ տեսնելով, որ եւ՛ շիշը, եւ՛ միջի օղին վարդագունեցին: Գլուխը հետ գցած՝ օղին լցրեց լայն բացած բերանը՝ շրթունքները շշին չդիպցնելով, եւ արդեն ուզում էր շիշը շպրտել երկնքի խորքերի ամենաբարձր, ամենածխագույն

ամպիկից էլ վեր, բայց, միտք անելով, զսպեց իրեն. առանց այն էլ շատ էր ուժ վատնել. շիշը խցկեց գրպանն ու քայլ արեց՝ հաճույքով հիշելով պառավին:

«Ա՛խ, ի՛նչ հրաշք պառավ էր»,- մտածում էր նա՝ մերթ արեւին, մերթ հեռավոր դեզերից այն կողմ մոխրագույնին տվող խրճիթներին նայելով: Վերջերս էր, անցնում էր հարոս թողած դաշտով: Նայեց՝ չորացած աթարի կույտին մի ուզվոր պառավ է ընկած ու տնքում է: Զախարը լավ խմած էր, եւ ինչպես միշտ հարբած հոգին ագահաբար սխրանք էր որոնում, մեկ է՝ բարի, թե չար... նույնիսկ ավելի շուտ բարի, քան չար: «Տատի՛,- կանչեց նա՝ արագ մոտենալով պառավին:- Էդ մեռնում ե՞ս: Էդ ո՞վ է արել: Էդ ո՞ւմ ճամփան ես կտրել»: Պառավը,- շորերը լրիվ քրքրված էին, գունատ դեմքին՝ չորացած արյուն, աչքերը՝ փակ,- շարժվեց ու տնքաց: «Ինչի՞ չես խոսում,- ահեղ գոչեց Զախարը:- Որ հարց եմ տալիս, պիտի՝ պատասխանես: Էդպես էլ պառկելու ե՞ս: Ու որ է էստեղով անասուններն են քշելու, ախր ոչխարը ոտի տակ կտա, կչարչարի... Վե՛ր կաց էս վայրկյանիս...»: Պառավը նայեց հսկա, ահարկու մարդուն ու ծղրտաց. «Վա՛յ, հե՛րըս, ձեռ չտաս: Առանց էն էլ ցուլը վրովս անցավ: Խղճա անբախտիս, խղճա՛»: - «Չեմ կարա ես քեզ խղճամ,- ավելի ահարկու գոռաց Զախարը՝ անսպասելի խղճահարություն ու քնքշանք զգալով պառավի հանդեպ:- Վե՛ր կաց՝ ասում եմ»: Պառավը մի քիչ բարձրացավ տեղից, անմիջապես էլ ընկավ ու ավելի բարձր ծղրտաց: Այդ ժամանակ, խղճահարությունից իրեն կորցրած, Զախարը գիրկն առավ պառավին ու համարյա վազքով սլացավ գյուղ: Պառավը, երկու ձեռքով նրա եզան վիզը գրկած, նրանից փչող օդու հոտից խեղդվելով, ցնցվում էր վազքից, իսկ Զախարը, վախենալով, որ հիմա լաց կլինի, արագ-արագ քրթմնջում էր, ջանալով հնարավորինս մեղմել ձայնի թավությունը. «Ի՞նչ է, գժվեցի՞ր: Ինչի՞ց ես վախենում: Սուս արա, ասում եմ, սո՛ւս, ոչ մի բանի մասին մի մտածի»: - «Ուժ չունեմ, հերը՛ս,- պատասխանում էր պառավը:- Որտեղից ինձ բախտ, մեն-մենակ եմ աշխարհում, ոչ կուշտ կերած կամ, ոչ անուշ խմած...»: - «Սո՛ւս արա՝ ասում եմ,- խոսում էր Զախարը:- Ամեն մեկն իրա ճամփան ունի: Ամեն մեկն՝ իրա դարդը: Ուժ արա,- բուռն ուրախության անսպասելի հորդում զգալով՝ դաշտով մեկ գոռաց նա:- Դարման կեր, բայց պինդ մնա: Հիմա քեզ ձեռաց տները կհասցնեմ: Իսկ էդ բուղի համար քեզ թակելը քիչ է: Ի՞նչ ես թրեւ գալիս, դեսուդեն ընկնում: Ո՞ւր էիր նախիրը խցկվում: Կնանիքանց հետ պիտի լինես: Նրանց հետ լեզու թրջես: Իսկ բուղան, ախպե՛րս, ներել չունի»: - «Ա՛խ, սպասի,- տնքաց պառավը՝ արդեն արցունքների միջից ծիծաղելով:- Հո-

գիս բերանս բերիր...»: Ու Զախարն ավելի ահեղ գոռաց. «Տատի՛, սո՛ւս: Թե չէ կգցեմ էն առուն, ոսկորներդ չեն հավաքի»: Ու բերանը բացելով՝ քրքջաց, օրորելով պառավին ու ձեւացնելով, թե ուզում է նրան ողջ թափով գլորել բլրալանջից...

Մեջքը թաց էր, երեսը կապտել էր արյան հորդումից ու քրտինքից, սիրտը կռաններով գլուխն էր խփում, երբ հպարտ նայելով պղտոր մորեգույն գնդին, որ դեռ չէր հասցրել հորիզոնին դիպչել, արագ մտավ ժիլե: Մեռյալ լռություն էր: Ոչ մի տեղ՝ ոչ մի շունչ: Իրիկնային երկնքի գունատ կապտություն՝ ամենայնի վրա: Լեռնագոգի եզրին սեւին տվող անտառակ: Վրան՝ արդեն շողացող կլոր լուսինը: Երեք հսկա հայելադեմ լճակ, իսկ դրանց արանքում՝ աթարի երկու հսկա բարդոց՝ դուրս ցցված հաստ բներով ու բարակ ճյուղերով: Այուս կողմում երկշարք խրճիթներն էին: Եվ այնպես հստակ էին երեւում գիշերվա այդ կարճ միջնաժամին եւ՛ գորշ տանիքների ուրվագծերը, եւ՛ խոտհարքի կանաչը, եւ՛ լճակներ պողպատը: Մեկը, ձախից, մի քիչ վարդագույնին էր տալիս, մյուսները՝ երկու հայելային անդունդ, որոնց մեջ անդրադառնում էր լուսինն ամեն մի ճյուղ, ամեն ոստ:

- Թո՛ւ, անտակը գնաք դուք,- կանգնելով՝ աղմուկով շունչ առավ Զախարը:- Բոլորը սատկել ե՞ն:

Ուզում էր այնպես մռնչալ, որ խրճիթներում պահ մտած այդ ամբողջ մժղունք ժողովուրդը սարսափած դուրս թափվեր արոտները: «Բայց, չէ՛, չէ՛, լրիվ խելքս թռցրել եմ, հարբած եմ... Անվայել բաներ եմ մտածում, անվայե՛լ... Ծուտ տուն հասնեմ... Տո՛ւն...»:

Ու հանկարծ այնպիսի ծանր, այնպիսի մահացու, չարության հետ խառն տխրություն զգաց, որ նույնիսկ աչքերը փակեց: Դեմքը երկաթագույն դառավ, բաժանվեց խարտյաշ մորուքից, ականջներն արյան հորդումից փքվեցին: Հենց աչքերը փակվեցին, անմիջապես նրա առաջ, խավարի մեջ հազարավոր վառ կանաչ ու շառագույն շրջանակներ ցատկոտեցին, ու սիրտը մարեց, դադարեց, եւ ամբողջ մարմինը փափուկ ինչ-որ անդունդ ընկավ: Ախ, տո՛ւն հասնեի, ու՝ խրձանոց, ու՝ դեզի մեջ: Բայց, մի քիչ կանգնելով, Զախարը բացեց աչքերն ու դեպի ձախ՝ Օսինվի Դվոր շրջվելու փոխարեն, համառորեն, ամբարտակը կտրելով, գնաց դեպի մեծ ճանապարհը՝ խմիչքի խանութ:

Ա՜խ, ինչ տխրություն էր այդ ամայի, անվերջ ճանապահին, նրանից անդին գունատ հարթավայրերում, այդ լռակյաց տափաստանային երեկոյան: Բայց Զախարը ողջ ուժով դիմադրում էր տխրությանը, անվերջ խոսում էր, ավելի ագահ խմում, որ կոտրի տխրությունն ու պատժի այդ շիկագանգուր,

անշարժ ճերմակած աչքերով կաղ քաղքցուն, որ ստոր ցնծությամբ իրար անցավ, երբ Զախարը գրազ առաջարկեց՝ ինքը՝ Զախարը, էլի երկու շիշ կխմի՞, թե՞ ոչ: Կավճաներկ պատերով խանութը օտարոտի ճերմակին էր տալիս արեւելյան երկնակամարի խունացած կապույտի դիմաց, որի վրա ավելի ու ավելի հստակ ու լուսատու էր դառնում լուսնի շրջանակը: Խանութի առաջ սեղանիկ ու նստարան էր դրված: Քաղքենին, մաշված շապիկով ու մաշվելուց կարմրած հորթակաշվե սապոգներով, ցցվել էր սեղանի մոտ՝ հենված մի ոտքին ու մյուսի քիթը գետնին քսելով, առաջ բերեց ջրամանն ու կապիկի պես, արտակարգ ճարպկությամբ ու արագությամբ արեւաճաղկի սերմ էր չրթում՝ ճերմակ աչքերը Զախարից չկտրելով: Իսկ Զախարը, կուրծքը փքած, ատամները սեղմած, հսկա թաթերով, ասես երկաթյա չանչերով սեղանի եզրից բռնած, լիզելով չորացած շրթունքները, ամեն բառը բուռն շնչով ընդհատելով, վատ հասկանալով՝ ինչ է ասում, ամեն վայրկյան ինչ-որ խորխորատ ընկնելով՝ շտապո՛ւմ, շտապո՛ւմ էր, որ պատմի-վերջացնի, թե ինչպես պառավին...

Ու հանկարծ, ողջ մարմնով թափ առնելով, արագ վեր կացավ, քացով հեռու շպրտեց սեղանը՝ զնգացող շշով ու զեհավոր բաժակով հանդերձ, ու խռպոտ ասաց.

- Լսի՛: Դո՛ւ:

Ու քաղքենին, որն արդեն բացում էր բերանը, որ գոռա Զախարի վրա անկարգության համար, նրա կապտաճերմակ երեսին նայելով՝ պապանձվեց: Իսկ Զախարը, վերջին ուժերը հավաքած, թույլ չտալով, որ սիրտը ասելուց առաջ պայթի, ավարտեց.

- Էստե՛ղ լսի: Մեռնում եմ: Վե՛րջ: Չեմ ուզում փորձանքի քաշեմ: Դո՛ւրս կգամ: Դո՛ւրս կգամ:

Ու հաստատուն քայլերով ելավ մեծ ճանապարհի մեջտեղը: Եվ, հասնելով կեսին, ծալեց ծնկները ու ցլի նման ծանր փլվեց մեջքին՝ ձեռքերը տարածելով:

Սարսափելի էր այդ լուսնալույս օգոստոսյան գիշերը: Բոլոր կողմերից կնանիք ու երեխաները անձայն դեպի պանդոկն էին վազում, զուսպ ու տագնապած խոսակցելով՝ շտապում էին տղամարդիկ: Լուսնի լույսը թափանցիկ ծխի պես կանգնել էր չոր խոզանների վրա: Իսկ մեծ ճանապահի մեջտեղը ճերմակին էր տալիս ահռելի, սարսափելի մի բան. մեկը մոմլաթով ծածկել էր մեռած մարմինը: Ու բոբիկ կանայք, արագ ու անաղմուկ մոտենալով, խաչ էին անում ու պղնձադրամներ դնում գլխատակին:

Լիդիա ԶԻՆՈՎԵՎԱ-ՀԱՆՆԻԲԱԼ

ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԱՅԼԱՆԴԱԿՆԵՐ

1-ը դեկտեմբերի

Այսօր շատ վաղ արթնացա: Մահճակալիս մոտ, սեղանիկին վառվում էր մոմը: Վերան ծնկի եկած՝ դեմքը թաղել էր ներքնակիս մեջ ու լաց էր լինում: Հարցրի՝ ինչո՞ւ:

- Այս աշխարհում ամեն ինչ սխալ է: Գեղեցկությունն էլ: Դու ծերանալու ես:

Դեմքը արցունքոտ էր, եւ ամեն կողմից արցունք էր կաթում՝ աչքերից, քթից, շրթունքների անկյունի խոր ակոսներից, որ նրա բերանը ողբերգական են դարձնում:

Ես ասացի.

- Այո՛:

3-ը դեկտեմբերի

Նա ապշելու դերասանուհի է: Ինչպիսիք չեն եղել, չկան ու չեն լինելու:

Երեկ, երբ վերադառնում էինք թատրոնից, հարցրի.

- Վե՛րա, դու երջանի՞կ ես:

Նա պատասխանի փոխարեն ինձ նստեցրեց անկողնու վրա ու սկսեց արձակել զգեստս: Հետո.

- Լոգարանը պատրաստ է: Գնանք: Քո սիրած քսուքն եմ լցրել:

- Վե՛րա, այդքան հիացմունք, այդպիսի պաշտամունք քո հանդեպ... Դու երջանկություն պարգեւեցիր նրանց բոլորին: Իսկ ինքդ երջանի՞կ ես:

- Ես վարժվել եմ: Գնա՛: Գնա՛: Ցուրը սառչում է: Գնա՛:

- Ես է՞լ եմ սովորական դառնալու:

- Չէ՛, քեզ սովորել չեմ կարող:

Նա համբուրում էր իմ աչքերը, շրթունքները, կուրծքը ու շոյում էր մարմինս:

Այո՛, ես հրաշալի մարմին ունեմ: Ուրեմն դա է իմ երջանկությունը: Որովհետեւ ես գեղեցկությունն եմ:

Պետք չէ վարժվել: Ես չեմ վարժվի իմ գեղեցկությանը:

6-ը դեկտեմբերի

Վերան հասակիս լայնության մետաքսե ու բրդյա գործվածքներ է պատվիրել: Երեքական արշին կտրում է ամեն մեկից: Գցում է ուսերիս ու մի կողիս երկայնքով՝ մինչեւ ծունկս:

Իմ պարեգոտներն են:

Կրում եմ մերկ մարմնիս վրա: Դա ինձ դուր է գալիս. դրանցով այնպես բարձրահասակ ու ճկուն եմ, ու թեթեւ, ասես մերկ լինեմ: Բոբիկ ոտքերիս սանդալներ են:

Երբ օտար մարդիկ են գալիս, Վերան մեջքս պատող, ազատ գործվածք է գցում վրաս, ամրացնում ուսերիս, ու ձեռքերիս վրայով սահելով՝ այդ պարեգոտները երկու կողմից կախվում է մինչեւ գետին:

15-ը դեկտեմբերի

Առավոտյան գնացել էր դերձակուհու մոտ: Ես մնացի փետուր գանգրացնելու: Հետո դրանք շաղ տվի շուրջս ու կրծքով ընկա բարձին: Սիրում եմ իմ տակ զգալ կրծքերս. այնքան հարմար, փոքրիկ ու պինդ են:

Իմ սենյակում աթոռ ու սեղան չկա: Վերան ասում է՝ վայրենիներն են նստում: Միայն պառկելն է գեղեցիկ ու մարմնին արժանի: Նա պատերի երկայնքով գորգեր է փռել ներքնակներին, բարձեր գցել դրանց վրա...

Պառկել էի՝ արմունկներս առաջ, գլուխս արմունկներիս հենած: Այդպես լավ է հիշվում: Դեռ վերջերս նրանց հետ էի ապրում: Տատիկս զգայական ու անսիրտ էր: Վերան այդպես ասաց...

Վերան տարօրինակ է: Բայց ես ամեն ինչում կհնազանդվեի նրան: Հնազանդվում եմ...

Այո՛, առավոտյան արմունկներիս հենված՝ հիշեցի այն գիշերը, իմ հարսանիքից մի քանի օր առաջ: Տատիկն ասաց, որ մորս ամուսինը ո՛չ նրա ամուսինն էր, ո՛չ իմ հայրը: Տատիկս կարծում է, որ հարկ է հարսանիքից առաջ իմանամ այդ մասին, եւ... ուզում էր գնահատեմ իր հնարամտությունը: Ախր, չնայած դրան, փեսացու էր գտել իմ համար: Ու դրա հետ մեկտեղ վախենում էր, որ այդ հայտնությունը կցնցի ինձ: Ճիշտն ասած, տպավորությունն ինձ ուրախացրեց: Միայն թե նա ստիպված էր հանդարտվել ու... հիասթափվել: Ես չզարմացա: Չէ՞ որ ոչինչ չփոխվեց,- ոչ իմ մեջ, ոչ իմ շուրջը,- նրանից, որ տեղեկացա վաղուց կատարված ու բոլորին հայտնի փաստի մասին: Այն ժամանակ նույնիսկ չփորձեցի որեւէ բան մտածել ու գուշակել: Ձանձրալի՛ է: Միայն փորձում էի հիշել մայրիկին: Ոչ թե հիշել, այլ պատկերացնել, որովհետեւ մայրիկս ծննդաբերության ժամանակ էր մա-

հացել, ու տատիկս որդեգրել էր ինձ: Բայց չկարողացա. մայրիկի փոխարեն պատկերացնում էի ջահել տատիկիս, իսկ նրա հանդեպ անտարբեր էի:

Հիմա, այ այս առավոտ, ավելի շատ էի մտածում, քան այն գիշեր: Ու չէի հասկանում՝ այդ անկարողն ինչո՞ւ էր ամուսնացել մորս հետ, ինչո՞ւ էր վարպետորեն անառակացնում նրան (տատիկն այդպես էր ասում), ինչ-որ ռեստորանում հանդիպման տանում ուրիշի հետ, իսկ հետո, երբ հղի էր, ուղարկեց տատիկի մոտ եւ իր անկարողության պատճառաբանությամբ բաժանվեց նրանից:

Նույնիսկ Վերան չգիտի: Կարծում է՝ կա՛մ չարությունից, որ կյանքն անհասանելի է, կա՛մ անմեղ աղջկա միջոցով բուժվելու հիմար հույսով, կամ էլ՝ հեշտանքի միակ ու վերջին հնարավորության: Համենայնդեպս, շուտով ձանձրացա այդ անբանական մարդու մասին մտածելուց: «Նողկալի բարձրաշխարհիկ պատմություն»՝ ասում է Վերան:

Վերան ատում է բարձր հասարակությունն ու ատում է տղամարդկանց: Վերան հրաշք է: Ինչպե՞ս մեր օթյակը մտավ հարսանիքիս նախորդ երեկոյան:

Տատիկը նոր էր դուրս եկել: Երկուսով կանգնած էինք, երբ պոռթկուն ներս խուժեց՝ բարձրահասակ, թագուհու զգեստի վրա գցած թիկնոցով ու թագը գլխին մոռացած:

Ինչ-որ արագ բառեր ասաց նրան: Նա դողաց ողջ մարմնով ու թողեց արմունկս: Վերան պինդ բռնեց ձեռքս ու տարավ:

Տանում էր կիսամութ, փոշոտ տարածություններով, ինչ-որ տարօրինակ մեքենաների ու շինվածքների արանքով, բարձունքներով ու ցնծություններով, ու երերուն սանդուղքով հասցրեց իր զգեցարան: Ու փակեց դուռը՝ կոպիտ վռնդելով երկրպագուի սիրահարված աչքերով ինչ-որ կանանց:

Նրա բառերը չեմ հիշում: Ասես կրակի մեջ լինեի: Համբուրում էր ձեռքերս, եւ իմացա, որ միայն ինձ է տեսել այդ երեկո, ինձ համար է խաղացել, ինձ է սիրել, եւ դա այնպիսի՛ խելագարություն էր:

Ինձ էր նայում իր... անվերապահ աչքերով,- դրանք հիշվեցին ողջ գիշեր ծգված զգայախաբությունից առաջ,- ու հրամայեց հաջորդ առավոտ գալ իր մոտ:

Ու բաց թողեց:

Իսկ դրսում, սանդուղքի տակ սպասում էր նա ու ինձ հետ տարավ. այնպես երերուն եւ՛ գունատ, եւ՛ անբարբառ:

Ինձ համա՞ր այդպես խուժեց օթյակ, թե՞ նրա՝ իմ փեսացուի եւ իր նախկին սիրեկանի:

Բայց ինքն էր նրան վռնդել: Եվ ինչպե՞ս մի րոպեում կարողացա մտածել այդ ամենը: Այն ժամանակ, այն երեկոյան չէի մտածել: Ու երբեք չէի մտածել:

Վե՛րան: Նա բոլորովին բարի չի: Նա... թե՞ պարզապես կույր է, լուսնոտ ու ոչ մեկին չի տեսնում: Միայն ինձ երբեմն թվում է՝ ինչ-որ բան իր միջով, նույնիսկ ոչ իրեն: Եվ այդ ժամանակ վատ եմ զգում:

Ինչո՞ւ իմ հարսանիքի օրվա այդ առավոտյան եկա ժամադրության, նրա հետ, այ այստեղ: Այս սենյակը, որ առաջ նրա ննջարանն էր...

Նա ինձ ընդունեց անկողնում պառկած, հիվանդ, ողջ գիշեր խելագրության ու լացի մեջ: Սենյակում, ոչ բեմի վրա, ձայնը տհաճ էր, խոսքը՝ խուլ,անկանոն, տգեղ:

- Դու պետք է լքես նրանց: Դու իրենցը չես: Կսովորեցնեմ, որ դու քեզ վարժվես: Քեզ սքանչելի կդարձնեմ, որովհետեւ ես սքանչելի եմ: Դու ինձ հետ աստվածուհի կլինես...

Նա կոշտ սեղմում էր ձեռքս, ու չգիտեի՝ սքանչելի՞ է նրա տառապած, արցունքոտ ու չար կրակով վառվող դեմքը:

Ինչ-որ մեկը թակեց դուռը: Վերան կոպիտ վռնդեց դռան մոտից:

Թիկնոցի տակ նրա մարմնի գծերը կարծր էին: Գիտեի, որ խիստ է լինելու: Բայց անվերապահ էին կապտածիրան խաղողի պես մթնդած աչքերը: Ավելի լավ, առավել բառերով չեմ նկարագրի նրա աչքերը:

Առավոտյան՝ արմունկներիս հենված... (երբ ծգված պառկում եմ, գլուխս՝ արմունկներիս, առանց մտքերի էլ ամեն ինչ պարզ ու հստակ գիտեմ), առավոտյան գիտեի՝ երբեք չեմ զղջալու, որ մերժել եմ փեսացուիս, հագել էի ամենահին գլխարկն ու մուշտակը (հասկանում էի՝ Վերայի մոտ ամեն ինչ լրիվ ուրիշ է լինելու) եւ տատիկին ասացի, որ ընդմիշտ հեռանում եմ: Տատիկս սկզբում բղավում էր դեռահասության, որդեգրման համար հին տոհմի կնոջ հանդեպ երախտագիտության մասին... հետո հանկարծ, կատարյալ մոլեգնության մեջ, վեր պարզեց ձեռքերն ու անիծեց՝ զրկելով իր մայրությունից ու ժառանգությունից: Տատիկս հպարտ էր...

Ու նորից փորձեցի պատկերացնել մորս, այսինքն այս առավոտ էի փորձում, բայց պատկերանում էր Վերան:

Ու վերջապես նա վերադարձավ դերձակուհու մոտից:

Ես լսում էի նրա անհամբեր զանգը, հովանոցի ընկնելը, շտապող ու ոչ այնքան հաստատուն, մի տեսակ երերուն ու կրքոտ ոտնաձայնը...

Ծուտով խուժեց սենյակ: Գլուխս հետ գցելով՝ շրթունքներով փակչեց իմ շրթունքներին, այնպես, որ գլուխս կամացուկ ու անուշ պտտվեց:

- Վե՛րա, նա քեզ այսպե՞ս էր համբուրում: Դա քեզ դո՞ւր էր գալիս: Վե՛-
րա, ինչպե՞ս են համբուրում տղամարդիկ:
- Չգիտեմ: Չեմ հիշում: Ամեն ինչ մոռացել եմ:
- Ու ոչ մեկի համար չե՞ս ափսոսում:
- Իսկ դո՞ւ: Դու ամեն ինչ կորցրիր ինձ համար:
- Չէ՛, քեզ հետ լավ եմ զգում:
Ու մինչ նա, երախտապարտ, գրկում էր ինձ՝ իմ տեղը նստելով եւ ինձ առնելով ծնկներին.
- Վե՛րա, ինչո՞ւ մայրս մահացավ առանց հորս անունը տալու:
- Որովհետեւ շա՛տ բարձր էր:
- Տատիկն էլ էր այդպես ասում:
- Ուրեմն տատիկը ճիշտ էր: Քո մեջ արքայական արյուն է հոսում:
Ինձ թվում էր՝ Վերան դերասանուհի է դառնում այդպես խոսելով: Բայց իրավունք ունի. նա այնքա՛ն մեծ դերասանուհի է:
- Վե՛րա, իսկ ինձ երբեմն թվում է՝ հայրս ձիավար կամ ձիապան է եղել, դրա համար էլ մայրս չէր ասում...
Վերան թողեց ինձ ու զայրույթից լաց եղավ: Բայց իմ փաղաքշանքը հանգստացնում էր նրան:
- Վե՛րա, ինչո՞ւ ինձ սիրեցիր: Ինչո՞ւ վերցրիր... Ես տաղանդ չունե՞մ:
- Տաղանդ... Չէ՛:
- Ուրեմն ինչու՞ ես բեմ հանում:
- Այնպե՛ս: Ասում են՝ մարդը պիտի աշխատի:
Հետո հանկարծ, ոգեւորված եւ այն ձայնով, որից նրանք բոլորն այնտեղ ցնցվում ու լարվում են ամեն նյարդով.
- Չէ՛, այն չասացի: Պետք չի, որ աշխատես, որովհետեւ դու իսկապես սքանչելի ես: Ու քանի որ սքանչելի ես, չեմ կարող քեզ չտալ մարդկանց: Նրանք նայում են: Տեսնում են գեղեցկությունը: Կյանքում ոչինչ չկա: Բռնկվեց կայծը ու մարեց: Միայն ցավ ու դառնություն, եւ անհնար է հասկանալ՝ ինչի՞ համար: Ու ձանձրույթ: Ու ձանձրույթ: Բայց գեղեցկությո՛ւնը: Ասա, իմ սե՛ր, որտեղի՞ց, ի՞նչ է գեղեցկությունը:
Ու նորից պատում էր ինձ համբույրներով, մազերս, շուրթերս ու ատամներս... Արձակեց պարեգոտի ծալքերն ուսերիս պահող մետաղազարդերը եւ համբուրում էր ուսերս ու կուրծքս, ու նեղ մեջքս, որը սիրում եմ զգալ ճկուն ու ցնցվող՝ փաղաքշանքների տակ... ու կանգ առնել չէր կարողանում Վերան: Համբուրում ու հեկեկում էր, ճչում էր այն ճիչը, որից քարանում են նրանք այնտեղ՝ օթյակներում ու սրահում, որպես մեկ խոցված

մարմին, որպես մեկ մոլեգին հոգի:

Ճչո՛ւմ էր.

- Ես քեզ պետք է տամ մարդկանց: Մեծահոգությո՛ւն: Մեծահոգությո՛ւն: Ահա թե ինչն է գազանին դարձնում մարդ:

16-ը դեկտեմբերի

Ամբողջ գիշեր անհանգիստ էի: Իսկ առավոտից անհանգստացնում են Վերայի այդ բառերն ու ձայնը:

Քանի դեռ նա քնած էր, աղոթում էի Տիրուհուն: Դա ինձ հանգստացնում էր: Աղոթում էի, որ Վերայի այդ ձայնից որեւէ փորձանք չպատահի:

19-ը դեկտեմբերի

Այս երեկո ներկայացում չկա: Մեզ մոտ, ներքեւում, հրամայված է հյուրեր չընդունել: Վերան հաճախ է այդպես անում, որ ազատ երեկոն երկուսով անցկացնենք:

«Լիրը՝ անապատում»-ն է կարդում:

Նրա սենյակն այնպե՛ս նման չէ անապատի:

Միայն դիմակները, որ տագնապալի առկայծում են էկրանի պաստառին... Դա նրանից է, որ դրանց ետեւում բուխարու մեջ անհանգիստ կրակներ են առկայծում:

Դիմակները նրա ընկերն է պատրաստել, մե՛ծ նկարիչ է: Բայց հիմա Վերան հեռացել է նրանից:

Ինձ թվում է՝ Վերան նկարիչներին չի սիրում: Ու նույնիսկ երբ մոտ էր նրանց հետ, երբեք թույլ չի տվել իրեն նկարեն:

Անհասկանալի էին դավաճան սիրուն ուղղված Լիրի աղաղակները, անհասկանալի էր նրա խելահեղ, տարերային դեմքն այնտեղ, ուր հատակը ծայրեծայր բռնող գորգի վրա հետուառաջ էր նետվում Վերան՝ իր միանձնուհի մոր փաղաքուշ կահույքով շրջապատված:

Ե՛վ անձրեւի շիթերը, եւ՛ անապատի քամին՝ երբ ամեն ինչ քարացել էր տեղում, եւ չոր ճթճթում էին բուխարու կապույտ ու կարմիր կրակները, եւ երկու հնավանդ յուղի լամպերը...

Բոլոր դիմակները հանկարծ կենդանություն առան այդ կապույտ ու կարմիր լեզվակներից: Ճչացին: Բերանները բաց՝ անեծք ու քրքիջ աղաղակեցին:

Հետո հանկարծ ամեն ինչ լռեց:

Ծեր Լիրը, բզկտված հագուստով ու խելագար աչքերով, քարացավ տե-

ղում: Լուռ էին բոլոր դիմակները: Եվ անձրեւն ու քամին: Սկսվել էին բուխարու կրակները: Դա շատ երկար տեւեց: Ինձ թվաց՝ անտանելի երկար:

Եվ ինձ դիմակների այդ լռությունն ամենասարսափելին ու ամենանորն էր թվում երբեւէ լսածներից:

Ես ճչացի.

- Վե՛րա, Վե՛րա, վերադարձի՛ր: Դա չի կարելի անել սենյակում, այսքան մոտիկ:

20-ը դեկտեմբերի

Չեմ հասկանում, թե մարդն ինչու պիտի աշխատի: Այդ դեպքում գազանն ավելի երջանիկ է: Ես աշխատել չեմ սիրում: Ինչո՞ւ ինձ խաբեմ: Բայց եթե պետք է աշխատել, իհարկե անտրտունջ կինազանդվեմ: Այդպես կինազանդվեմ եւ՛ ցավին, եւ՛ մահին:

21-ը դեկտեմբերի

Երազում տեսա Տիրուհուն:

Վերային էր նման, միայն ավելի խաղաղ, մարմնեղ ու բարձրահասակ:

Աստվածուհու պես:

Նույնպիսի խունացած, սեւ մազեր, բայց կանաչ քողի տակ: Աչքերը՝ կապտածիրան խաղող: Եվ շուրթերը հասուն, խոնավ, շատ խիստ, ինչպես Վերայի շուրթերը, բայց լրիվ անթրթիռ եւ այն թեթեւ կորությամբ, որն այնպե՛ս հուզում է ինձ ու Վերայի բերանը դարձնում ողբերգական (շրթունքների անկյունների ակոսների հետ):

Նա շատ բարձրահասակ էր ու երկար կանաչ զգեստով, բայց հագուստի տակից համենայնդեպս տեսա թաթերի ծայրերը:

Եվ ընկավ հողին: Կարծեմ խոտ էր, հողը արմտիք ու խոտ էր բուրում:

Ու համբուրում էի ճերմակ ոտքերն այդ դյութիչ, կատարյալ գեղեցկության, այնպես, որ սիրտս, պաշտելով ու աղոթելով, կանգ առավ կրծքիս տակ:

Ու ես մեռա:

Այդ ժամանակ հանդարտ, ծորուն մի անուշություն դանդաղ հոսեց իմ երակներով... ու ես խոնջանքով արթնացա:

22-ը դեկտեմբերի

Չեմ քնել: Առավոտյան տեսա նրա ոտքերը: Վերայի ոտքերն իմից սքանչելի են: Սքանչելի են նույնիսկ իր աստվածային ուսերից: Նա քնած

էր: Ծնկի եկա մահճակալի մոտ: Համբուրում էի ոտքերն աղոթելու պես:

Սիրտս մարում էր:

Վերան արթնացավ: Նայեց ինձ՝ առանց իր տաք մարմարը հետ քաշելու:

Հանկարծ, ինչպես տաք հողմապտույտի մեջ, ինձ կորցրի...

Մա՛յր, աստվածուհի՛, ընկերուհի՛...

Նա ամեն ինչ գիտի: Եվ ամեն ինչ հրաշք իմն է դառնում:

Այդպե՞ս է:

Ուրեմն դա ի՞մ գեղեցկությունն է:

Դեռ լաց եմ լինում: Գրում ու լալիս եմ:

Ամբողջ օրը կրծքով ընկած էի բարձին:

Վերան ամբողջ օրը չկար: Նրան պատվում են ինչ-որ տեղ: Ինչ-որ տեղ են տարել: Հանկարծ սարսափեցի:

Ինչ տարօրինակ է իմ ճակատագիրը: Ես հավատում եմ ճակատագրին:

Մի պատկեր հիշեցի՝ ինչ-որ իտալական նկարի կրկնօրինակ, կարծեմ՝ սբ. Ագաթայի: Երկաթե ունելիով պոկում են պտուկները, ու երկու չարչարողները վայրի հետաքրքրությամբ նայում են աչքերի մեջ: Իսկ Ագաթայի աչքերը երանելի՛ են, երանելի՛, երանելի՛:

Տատիկի մոտ հաճախ էի աղոթում նրան, բայց չվերցրի: Ստածում էի՝ Վերայի մոտ ամեն ինչ ուրիշ է:

Հիմա կարոտում եմ: Նա կսփոփեր:

Սարսափում եմ: Դրա համար էլ ահա նստեցի գրելու: Վերան է սովորեցրել այդպես անել, երբ տանը չէ:

Երբ գա, կհանեմ նրա կոշիկները, կպառկեմ հատակին եւ, խոնջ այնպես, կսկսեմ համբուրել նրա ոտքերը:

Այս գրառումները ցույց չեմ տա... Ահա եւ նրա զանգը...

26-ը դեկտեմբերի

Պետք է գրել երեկվա օրը: Չափազանց տարօրինակ էր Վերային տեսնել այդպիսին: Չէ՞ որ Վերան միշտ չի դերասանուհի եղել: Երեւի դրանից է:

Նա երեխա եւ ամուսին է ունեցել: Ամուսնացել է տասնվեց տարեկանում, որովհետեւ այնպես էր խղճում մորը՝ մենաստան մտնելիս: Վերան մորը պաշտելու պես էր սիրում: Եվ ամուսինն էլ լավն էր: Երբ պսակադրությունից երկու տարի անց մահացավ, Վերան լալիս էր. կինն էր լալիս: Հավատարմությունը կուռքին երկու տարի տեւեց:

Երկու ամսական աղջիկն էր մնացել ու նա էլ շուտով մահացավ:

Մի ծեր դերասանուհի, նա, որ միանգամայն կամակորույս Վերային թատրոն հրապուրեց (մոլուցք ու դիմակ դրեց մոր խելակորույս, անսփոփ վշտին. ինձ այդպես ասաց Վերան) մի քանի օր առաջ ինձ ասաց.

- Այ կտեսնեք՝ ինչ կլինի քսանհինգին. կհամոզվեք, որ մեր մեծն Վերան բարի մայր է: Եթե տեսնեի՛ք ինչպես էր հալվել, երբ մահացավ նրա կրծքի երեխան: Ի՞նչ է կրծքի երեխան: Իմ կարծիքով՝ մսի կտոր: Բայց Վերան խմում էր գերեզմանատան ջրհորից, որ հաղորդակցվի որդերին:

Սարսափելի չէր լսել որդերի մասին: Ինչո՞ւ ջուր չխմես... այդպիսին, երբ մահ ես ուզում...

Եկավ քսանհինգը: Բայց ոչ աննկատ: Ազատ բոպեներին հոգնելու չափ աշխատում էինք Վերայի հետ: Նա հագուստ էր կարում տիկնիկների համար, բոլոր զգեստները, որ կրում էր ու տենչում էր... Ես գլխանոցներ ու սանրվածքներ էի հորինում:

Երբ տիկնիկները պատրաստ էին, ցուցադրեցինք մեծ սրահում, որտեղ երեկոյան վառեցինք տոնածառի լույսերը: Ու երկուսս էլ առավոտից ասես հեքիաթի մեջ լինեինք: Քիչ էինք ուտում, անհամբեր էինք եւ ժպտում էինք սպասողական ու գիտուն:

Վերան ասաց.

- Ես չեմ սիրում տղաներին, այսինքն ես սիրում եմ աղջիկներին: Եվ կուզեի, որ միայն նրանք գային իրենց տիկնիկների ետեւից: Բայց գիտե՞ս, համենայնդեպս ձգտում եմ արդար լինել: Դա ինձ համար այնքան դժվար է եւ այնքան կարեւոր: Ես թույլ կտամ, որ իրենց եղբայրներին էլ բերեն: Մենք նրանց ծիուկներ ու թմբուկներ կտանք: Իսկ գիտե՞ս, եթե այն ժամանակ ոչ թե աղջիկ, այլ տղա ունենայի, չգիտեմ՝ կսիրեի՞ նրան այդպես, թե՝ ոչ: Ասենք, չեմ էլ հասկանում՝ ինչու էի նրան այդպես սիրում: Ես, ընդհանրապես, բարի մայր չեմ: Ու նրանից հետո երբեք երեխա չեմ ցանկացել... Բայց այն ժամանակ խելագարությո՛ւն էր: Ծրջում էի ամբողջովին պայծառացած, ժպտում էի ինձ: Ամուսինս հարցնում էր. «Ինչո՞ւ ես ժպտում»: Բայց գիտեր. «Իհարկե նրան ես ժպտում: Քեզ հետ հրաշք է կատարվել, Վե՛րոչկա: Բոլորն ասում էին՝ նրա հետ երջանիկ չես լինի: Նա ո՛չ կին է, ո՛չ մայր...»:

Տոնածառի հանդեսին, վառվող մեղրամոմի մեղմ ճարճատյունի (Վերան միայն մեղրամոմ է սիրում) ու բարձր ծիծաղի, ձայների, շարժումների մեջ ինձ ապշեցրեց հյուրերի հետ եկած եւ բակից ու փողոցից կանչած երեխաների աչքերի զմայլանքը, եւ բեղ-մորուքի բացակայությունը տղա-

մարդկանց երեսներին: Ես սովորել էի դերասաններին, բայց դա ծիծաղելի էր մեր մեծ սրահի բազմամարդության մեջ:

Իմ դիտարկումը ծիծաղեցրեց Վերային: Նա շողշողում էր, մեղմ էր, քայլվածքը՝ բարի, փաղաքուշ, կանչում էր երեխաներին, շոյում գլուխները, համբուրում շրթունքները:

Նրա տոնն էր: Եվ այդպես ասես շոգ ալիքներ էին գլորվում մեծ սենյակում՝ ծնունդյան տոների խեժ բուրելով:

27-ը դեկտեմբերի

Վերային նվեր են բերել՝ Լիզող Հովազ: Փոքրիկ արձանիկ է: Ընկերն էր բերել՝ նկարիչ Սաբուրովը:

Ես այդ պահին տանը չէի եղել: Ծնունդյան վկայականի համար գնացել էի տատիկիս մոտ: Տատիկն, իհարկե, չէր կարող ինձ զրկել իմ անունից: Չէ՞ որ ես անուն չունեմ, ու դա ինձ դուր է գալիս:

Տատիկը լալիս էր: Ուրեմն սիրո՛ւմ է: Մեղքս եկավ: Նույնիսկ հետ էր կանչում: Բայց... նա չի կարող իմանալ իմ երջանկությունը:

Նրանցից ո՞րն այնպես սիրել գիտեր, որ իմ ամենը սքանչելի ու մաքուր դառնա:

Վերան այսօր ինչ-որ բանից վշտացած էր:

Բայց խելահեղ սիրում էր ինձ:

Մի տեսակ սարսափելի է:

Տե՛ր Աստված: Ի՜նչ ահավոր օրեր են: Ասես ոսկեվուն մշուշ լինի աչքերիս:

Ինձ թվում է՝ տեսնում են իմ մշուշը: Ե՛վ նրանք, որ գալիս են, եւ՛ փորձերի ժամանակ: Եվ երեկ, երեկույթին, երբ Վերան այնպե՛ս փառահեղ էր:

Բայց ապշեցուցիչ, տարօրինակ է իմ կյանքը: Եվ ինձ լավ եմ զգում:

28-ը դեկտեմբերի

Վերան ինձ կերտում է: Ինձ թվում է՝ գեղեցկանում եմ նրանից, որ նա ինձ տեսնում է: Դա ինձ այնպես հանգիստ, վստահ ու թեթեւ է դարձնում:

Վերան ասաց.

- Դու բարեհաճ տեսք ունես:

Հայացքս ինչո՞ւ պիտի չար լինի: Ես բոլոր մարդկանց բարին եմ կամենում, ինչպես որ կամենում եմ ինձ:

Մի անգամ Վերան հարցրեց.

- Իսկ եթե ուզես մի բան, որ վնասում է ուրիշների՞ն:

Երկար ժամանակ չգիտեի՝ ինչ պատասխանեմ. մարդիկ ինձ դեռ քիչ էին չարիք պատճառել: Ու կարծես՝ ես էլ նրանց: Հետո ասացի.

- Իսկ գուցե այդ դեպքում կսկսեմ չցանկանա՞լ:

- Այդպես ինքնիրե՞ն:

- Հա՛: Ինչ կա որ:

Նա երկար հետուառաջ էր անում սենյակում, հետո հարցրեց, եւ աչքերը վառվում էին համառ ու անհրապույր.

- Իսկ եթե ուզես մի բան, որ քե՞զ է վնասում:

- Կարծում եմ՝ այդ ժամանակ էլ նույնը:

- Չի՞ ուզվի:

- Այո՛:

- Իսկ եթե համենայնդե՞պս:

- Ուրեմն այդ դեպքում, առավել հանուն բերկրանքի, քան աղետաբեր փորձության: Այդպես չի՞:

Պատասխանի փոխարեն համբուրեց ձեռքս:

- Դու իմաստուն ես:

Գուցե հենց դա՞ է իմաստնությունը: Չգիտեմ, բայց ինձ ամեն ինչ այնքան պարզ է թվում:

30-ը դեկտեմբերի

Տանյան, պարզվում է, հյուրասենյակում է եղել, երբ բերել են Լիզող Հովազը: Եվ այսօր սահադաշտում,- ձեռք ձեռքի սահում էինք ապշեցուցիչ հարթ սառույցի վրա,- ասաց.

- Գիտե՞ք, Սաբուրովն այն ժամանակ խնդրում էր, որ նկարի ձեզ:

Չգիտեի:

Տանյան, ձեռքս թողնելով եւ անսպասելի կտրուկ աղեղ գծելով մի չմուշկի վրա, ասաց.

- Ես ձեզ շատ եմ նախանձում: Նա հռչակավոր է:

Եվ մի պտույտ էլ անելով.

- Դա շատ ձեռնտու է դերասանուհուն... Բայց Վերան, իհարկե, մերժեց... Գիտե՞ք, ինձ երբեմն թվում է, որ ձեզ բնավ շահավետ չէ այդ մտերմությունը Վերայի հետ:

Տանյան նախանձում է: Բայց չէ՞ որ բոլոր մարդիկ են նախանձում: Բացարձակապես անիմաստ է ինձ հակառակը համոզելը:

Թե՞ իսկապես շահավետ չէ Վերայի հետ մտերմությունը:

Բայց ի՞նչ է շահը:

Իմ ինչի՞ն է պետք դիմանկարը կամ ուրիշ մի բան: Չէ՞ որ երջանիկ եմ:

31-ը դեկտեմբերի: Վաղ առավոտյան

Երեկ երեկոյան մեզ մոտ բոլորը խոսում էին Լիզող Հովազի մասին: Կարծես գաղտնիքը մարմնի ու լեզվի ծգված գծերի մեջ է: Լեզվի մեջ ինչ-որ վերնոտություն կա: Ու ողջը՝ մի անտանելի ջղածիգ շիտակություն:

Ինչ-որ մեկն ասաց, որ դա սուր է ազդում:

Ծատերը կշտամբում էին Վերային, որ չի ընդունել արծանիկը:

Վերան չէր արդարանում: Հանելուկային, չար ժպտում էր:

1-ը հունվարի

Նոր տարին երկուսով դիմավորեցինք: Ծաղիկներ: Գինի: Գուշակում էինք մոմ թափելով: Մոմը սարսափելի հստակ ու գեղեցիկ սառավ:

Վերային՝ դամբանաթումբ ու խաչ՝ վրան խաչված մարմնով: Ցավից ծռմռված մարմին՝ մկանների օձաձեւ լարումով: Այո՛, սարսափելի էր:

Իմ մոմը միակտոր էր ու հարթ: Երեսին՝ բազմաթիվ նրբին, թափանցիկ ու պայթող վարդ-ցայտքերով: Վարդերի այգի էր, առատ, ցնծուն, կենտրոնում՝ կնոջ կերպարանք: Մարմնին կարծես թափանցիկ ու քնքուշ հպվող ծալքեր լինեին: Նա վեր էր պարզել ձեռքերն ու այնպես խոնարհվել, որ վազք էր զգացվում:

Մենք մեկնաբանում էինք մեկմեկու ճակատագրերը:

Վերան ասում էր.

- Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, դու թագուհի ես: Իհարկե, հայրդ քեզ արքայական արյուն է տվել: Արքաներն այդպես անցնում են կյանքով, ինչպես պարտեզով են անցնում: Արքաները խռովություն չեն բարձրացնում: Նրանք խռովության կարիք չունեն: Դրա համար էլ հնազանդ են թվում: Նրանք չեն տեսնում, որովհետեւ տեսնելիք չկա: Չէ՞ որ ամեն ինչ նրանցն է: Դրա համար էլ նրանք բոլորին գոհ են թվում: Նրանք նույնիսկ դատողություններ չեն անում, որովհետեւ մարդիկ դատում են, քանի դեռ չեն ապրում: Իսկ երբ հորդում է կյանքը, լռում ու խմում են: Արքաների կյանքը միշտ է: Դու կանցնես կյանքով, ինչպես վարդերի պարտեզով, եւ կսիրես փշերի ծակելն ու թերթիկների տոթ գրգանքը:

Մի՞թե դա ճիշտ է:

Ու հանկարծ Վերան հեկեկաց,- կարծես՝ իր համար էլ անսպասելի,- եւ ավարտեց անհասկանալի բառերով.

- Եվ դա է իմ խաչելությունը, որ դու քայլում ես վարդերի պարտեզով: Դրանց մեջ են բոլոր տառապանքները, բոլոր ուրախությունները, բոլոր երանությունները, ու դու պատկանում ես կյանքին... Իսկ ես կանչում եմ

քեզ՝ կա՛նգ առ: Այ տեսնում ես՝ մարմինս կեռվել է: Դա նրանից է, որ բոլոր ջղերով պիտի ճչամ՝ կա՛նգ առ: Խաչված ստրկուհին ըմբոստանում է:

Ու Վերան ծիծաղեց արցունքների միջից:

Այդպես տխուր ու սարսափելի ավարտվեց մեր տոնը:

Արդեն անկողնում, ուր տարավ ինձ՝ վախեցածիս, դողացողիս, արձակեց մազերս ու սկսեց շոյել իր զգայուն, կրքոտ մատների արագ շարժումներով:

Նրա մատները փխրուն են զգայվում, երբ համբուրում եմ, ու դա ինձ անուշ դուր է գալիս:

Նա համբուրում էր ինձ՝ ասես աղոթելով աչքերով՝ դարձյալ կապտածիրան, համարյա սեւ խաղողի պես:

Երկար աղոթեց:

Վերան աղոթել չգիտի: Դա շատ տխուր է: Ինձ այնպես սփոփում է աղոթքը:

Երկար լաց էի լինում, մենակ, արթնանալուց հետո, երբ Վերան վերջապես քնել էր: Սարսափում էի: Եթե այդ դամբանաթումբը գերեզման է գուշակում նրան, ե՞ս ինչ եմ անելու: Ես չեմ կարող մնալ, երբ նա չլինի: Ես չեմ կարող, ես չեմ կարող, ես չեմ կարող վարժվել առանց նրա:

Իսկ գուցե դամբանաթումբը գերեզման չի՞ նշանակում: Ինչո՞ւ եմ այսքան սնահավատ: Դա սարսափելի է:

Եթե Վերան մահանա, ես էլ, իհարկե, կմեռնեմ: Կսպանեմ ինձ, ինչ արած:

Այդպես տհաճ ավարտվեց Նոր տարվա մուտքը:

7-ը հունվարի

Երեկ թատրոնի զգեցարանում մի փոքրիկ մարդ տեսա՝ մեծ, կլոր, ճաղատացող գանգով ու մանկական, ուրախ, թռչկոտող, մանրիկ աչքերով: Զարմացա՝ լսելով նրա անունը, որ այդպիսին է այդ խոշոր նկարիչը:

Ասենք, նա տհաճ է ինձ, հատկապես մանկական աչքերի պատճառով:

Ես այսօր ահավոր ուրախ եմ: Նոր դեր եմ սովորում, բավական երկար: Գուցե համենայնդեպս տաղանդ ունեմ:

Տարօրինակ է, որ Վերան չի սիրում ինձ խորհուրդ տալ դեր պատրաստելիս: Նա ընդհանրապես չի հավատում ու վերջերս ասաց.

- Արքաները դիմակի կարիք չունեն: Դիմակը հանգստություն է քեզնից, ելք է քեզնից:

Բայց իմ բերկրանքն ուրիշ էր: Չէ՞ որ շատ եմ սիրում թատրոնը: Չգի-

տես ինչու՝ ինձ հուզում է ծանոթությունը նկարիչների հետ: Բայց Վերան ծիծաղելիորեն ինձ հեռու է պահում նրանցից:

11-ը հունվարի

Վերան տարօրինակ է դարձել այն պահից, երբ լալիս ու ճչում էր.

- Ես քեզ պիտի տամ մարդկա՞նց:

Երկար ու լուռ նայում է ինձ իր սարսափելի, կատարելապես անողոք աչքերով: Հաճախ տարօրինակ հարցեր է տալիս, որոնց այնքան դժվար է պատասխանել: Կարծում եմ՝ նրա համար է դժվար, որ եթե պարզ պատասխանես, հիմարություն կթվա:

Հաճախ, ինձնից որեւէ անհասկանալի բան չլսելով, սոթ տալով ու խղճալի փախչում է իր սենյակն ու այնտեղ սարսափելի ձայնով արտասանում իր ամենասարսափելի դերերը: Այնպե՛ս տհաճորեն մոտիկ:

Եվ գիշերներս էլ մենակ են. Վերան այլեւս իմ անկողնում չի քնում: Կարծում եմ՝ որովհետեւ հաճախ լաց է լինում գիշերները:

Ինչ հրաշալի ողբերգական է դիմակի տակ, բայց երբ այն մերկ է իմ առաջ ու... երբ ինձ ուժով են տանում այնտեղ... չգիտեմ՝ լա՞վ եմ զգում: Ու մի տեսակ կորցնում եմ ինձ:

Ասենք, ինքս էլ լացկան եմ եւ լալիս եմ հաճախ ու հեշտ:

13-ը հունվարի

Իմ սենյակում, ողջ պատուհանով մեկ մի կամելիա է կանգնած: Կամելիայի մի ամբողջ ծառ՝ փայտե տակառիկում:

Ես կրքոտ սիրում եմ կամելիաները: Տերեւները մո՛ւգ-մո՛ւգ են, փայլուն, կոշտ: Ծաղիկները՝ վճիտ, հյութեղ, բաց ու մարմնավոր: Բայց հոտ չունեն: Հենց դա էլ ինձ դուր է գալիս:

Ըստ էության, ես կամելիա եմ սիրում, ո՛չ վարդ: Այդ Վերան է իր վարդերը վերագրել ինձ: Նրա մասին չէ՞ նաեւ իմ վարդենու պարտեզը:

Թե՞ իմ այն մեղրամոմե թփերը պարզապես քամելիաներ էին:

Այսօր եկավ Սաբուրովը՝ առանց Վերայի: Կամելիա էր խնդրում: Տվեցի: Երբ Վերան վերադարձավ, ու ասացի նրան, հանկարծ գունատվեց, դեմքն աղճատվեց, ու սկսեց խփել: Այլանդակություն է: Ափերով խփում էր այտերիս ու գլխիս, ուժեղ էր խփում, մոլեգին, ճակատին ուռել էր երակն ու կատաղի բերանը՝ ծռվել: Նողկում ու խղճում էի նրան:

Հետո գիշերվա կեսը նստած էր հատակին՝ տարօրինակ դիրքով ու ծիծաղելի՝ թափանցիկ շապիկով. ծնկները գրկած ու գլուխը կախ, ամբողջո-

վին կծիկ, ու հանկարծ անհասկանալիորեն ասաց.

- Մեկ է, խոստացել եմ... Դու նրանցն էլ կլինես:

Ես լալիս էի:

Նա ներողություն չխնդրեց:

Մի՞թե չի վախենում, որ կհեռանամ: Տարօրինա՛կ է: Ինձ երբեմն թվում է՝ նա մենության է կոչում:

Բայց մի՞թե կգնամ:

Թող ծեծի:

Չէ՞ որ սիրում եմ նրան:

14-ը հունվարի

Հաճախ եմ հիշում անցյալը: Բայց՝ առանց կարոտի: Բոլոր պահերն էլ լավն են, նույնիսկ տհաճը: Անցնելուց հետո, իհարկե:

Նրանց հետ վատ չէր: Ախր ես կարոտել էլ չգիտեմ: Նրանք ինձ սիրում ու երես էին տալիս: Տատիկը հոգում էր, որ ուսուցիչներն ինձնից պարահանդեսային հարսնացու կրթեն: Ինձ շրջապատողները բավական գեղեցիկ էին, այսինքն՝ չէին, այլ թվում էին: Ես դա գիտեի, ու հատկապես դուր էր գալիս, որ թվում են, ու դա միանգամայն լրջորեն էի ընդունում:

Բայցեւայնպես նրանք չէին կարողանում թվալ նույնիսկ կեսը նրա, որ Վերան է:

Իհարկե, Վերան սքանչելի է, ու պետք չէ վարժվել դրան:

Ինձ թվում է՝ նա ամենաշատը երկու բանից է վախենում՝ սովորույթից ու դավաճանությունից: Հաճախ նայում է, ու վախ կա աչքերում. չե՞մ վարժվել արդյոք կամ չե՞մ դավաճանում:

Բայց ես նրան չեմ վարժվի: Եվ դա պատճառ ունի. Վերան հռչակ ունի, բայց չէ՞ որ Վերան էլ կմահանա: Ամեն ինչ, վեհն անգամ անհաստատուն է:

Վատնում է, վատնում է իր ուժեղ, խոշոր, գայթուն մարմինը վախի ու խանդավառության միջեւ, ու կկտրվի, չէ՞, մի օր լարը:

Ես հաճախ եմ մտածում դրա մասին, այսինքն այսպես եմ պատկերացնում. Վերան՝ մեռած, բացարձակ անշարժ, սեղանին, դագաղի մեջ... ու ես էլ արդեն, իհարկե, չեմ կարող ապրել: Բայց ինձ նաեւ դուր է գալիս, խոցող դուր է գալիս այդպես պատկերացնել նրանց, ում սիրում եմ (առաջ՝ տատիկիս, հետո փեսացուիս էի այդպես պատկերացնում, նույնիսկ իմ սիրած կենդանիներին. մեր Իսկրա կատվին՝ հրացայտ բծերով՝ սեւագորշ մորթու վրա):

17-ը հունվարի

Ինչ հաճելի է, որ Վերայի սենյակում այդքան մեծ հայելիներ են: Վերան գեղեցիկ է, չնայած մարմինը մի քիչ մաշվել է. փորի ու կրծքի գծերը մի քիչ կակղել են... Բայց ինձ դուր է գալիս: Խոցո՛ղ:

Մենք միասին... բայց խենթ է Վերան... խենթանում է՝ մեզ միասին նայելով խորունկ հայելիների մեջ, եւ առավոտյան ճչում էր.

- Թող կանգ առնի ամեն ինչ: Կա՛նգ առնի, հասկանո՞ւմ ես: Ոչ մի քայլ հետ, ոչ մի քայլ առաջ: Ես ձայն եմ տալիս կյանքին՝ կա՛նգ առ այստեղ:

Նա ծիծաղելի ու փառահեղ է:

18-ը հունվարի

Ես կիսատղա, կեսաղջիկ երեխա եմ՝ ձեւ առնող կորություններով ու դեռ մանկությունից մոռացված՝ ոտքերի ու ձեռքերի ձգված, նիհարիկ գծերով: Վերան չի հոգնում դա կրկնելուց:

Վերան ծիծաղելի ու փառահեղ է:

2-ը փետրվարի

Վերջապես իմացա՝ ինչու էր այն ժամանակ, երկու ամիս առաջ, այդպես լալիս ու ճչում. «Ես քեզ պիտի տամ մարդկանց»: Արդեն այն ժամանակ էր ներքուստ որոշել...

Երեկ եկան այն երեքը: Վերան առաջ էլ նրանց հրավիրել էր թատրոնի զգեցարան: Ի դեպ, նրանցից մեկը Լիզող Հովազը նվիրողն է, ում Վերան առաջ ամեն ինչ մերժում էր:

Երեկ նրանք ասացին, որ նկարիչների «Երեսուներեք» ընկերության ներկայացուցիչներն են:

Զգեցարանում մոտիկից ծանոթանալ չկրողացա: Միշտ հապճեպ ու երբեք՝ առանց ժպիտների խոսակցություն:

Ու մագնիսի պես ձգեցին. բայց Վերան հայացքով հետ մղեց ինձ:

Երեւի թույլ եմ ու հնազանդ: Կամ գուցե դա թուլություն չէ՞: Նրա հայացքը կարող է ինձ միաժամանակ տառապանք ու խնդություն բերել:

Ինձ դուր է գալիս հնազանդությունը: Ամենահեշտն է: Սանավանդ՝ Վերայի հանդեպ:

Այո՛, իհարկե, դա սարսափելի զոհողություն է նրա համար: Բայց նա զոհաբերություններ սիրում է: Փնտրում է: Նրա դիմակը իրենից զոհ է պահանջում: Ինքն է այդպես ասել:

Մի խոսքով, Վերան երեկ համաձայնել էր: Եվ այսօր ասաց ինձ: Այդ

երեսուներեքը մեծ արվեստանոց ունեն, իհարկե՝ մասնավորներից բացի, որովհետեւ նրանց մեջ խոշոր եւ արդեն հայտնի նկարիչներ կան: Նրանք այնտեղ նկարելու են ինձ: Հենց Վերան էլ ինձ կտանի այնտեղ:

Բայց ուրիշ ոչինչ չասաց: Ասենք, ես չհարցրի էլ: Լսում էի անձայն, ինչպես ջուրը: Մի անգամ Վերան ինձ այսպես բացատրեց.

- Ինձ թվում է՝ դու առվակ ես եւ անձայն հոսում ես մամուռի վրայով, այնպես կոկ ու փայլուն, ինչպես մալաքիտը արեւի տակ: Երեխա ժամանակից մի այդպիսի անձայն, պայծառ առվակ եմ հիշում...

Հիմա ես Վերային եմ տալիս իմ ողջ ազատությունը: Եվ ավելի լավ եմ զգում դրանից:

Եվ նա այնպես հրաշալի է ու ամեն ինչ գիտի:

7-ը փետրվարի

Խե՜ղճ Վերա, բոլոր աղետները միանգամից թափվել են վրան: Հապաղում է: Չի համարձակվում: Իհարկե, ով այդպես սիրում է, նրա համար դժվար է տալ նույնիսկ մասնիկն իր սիրելիի: Ու հանկարծ՝ էլի մի փորձանք:

Երեկ նա էր եկել՝ իմ նախկին փեսացուն ու նրա նախկին սիրեկանը: Իսկ այսօր իմացանք, որ ինքնասպան է եղել: Վերան ցնցված է եւ ասում է, որ նրա մահն իր խղճին է:

Իսկ նա եկել էր կրկին Վերայի սերը խնդրելու, թե... Գոնե խղճալուց... Ու լալիս էր: Վերային ասում էր, որ ուզում էր մոռացում գտնել իմ մեջ... որ Վերան ճակատագրական կին է ու ես նույնպես, բայց՝ հակաճակատագրական: Ինչ-որ անգութ բան կա իմ մեջ, ինչպես եւ նրա, բայց հակառակը:

Ես ամեն ինչ լսեցի, որովհետեւ Վերան մոռացել էր իմ մասին: Նրա ձայնը խուլ էր, համարյա շշնջոց. «Ո՛չ, ո՛չ, ո՛չ...»:

Ինչ սարսափելի է կարողանում կրկնել Վերան նույն բառը: Հենց այդ բառն է արտաբերում առավել սարսափելի եւ անողոք:

Իսկ նա ահավոր անկեղծ ու անօգնական էր երեկ: Ասենք, առաջ էլ միշտ այդպիսին էր: Հենց դրա համար էի սիրում նրան: Եվ նրա հետ ինձ բարի, ուժեղ ու մեծ էի զգում:

Այնպես լավիկն էր, կլորադեմ ու վարդագույն է: Բայց իրեն ուղղված իմ յուրաքանչյուր հայացքից կոպերը սկսում էին թրթռալ չափազանց պայծառ աչքերի վրա, թիթեռների պես:

Բայց երեկ մի քիչ ժպտում էի՝ Վերայի ննջարանից լսելով նրա անկապ ծիծաղելի բառերը:

Նա միշտ էլ մի քիչ ինքնակորույս էր: Երեւէ հենց դրա համար էլ տատի-

կին հաջողվել էր գրավել նրան: Չէ՞ որ միշտ էլ հետաքրքրել եմ նրանց բոլորին, բայց ո՞վ կհամարձակվեր ամուսնանալ այդպիսի առեղծվածային ծագումով աղջկա հետ:

Նա խիզախ էր, իսկական, համարյա ինչպես Վերան, չնայած նրա պես խելացի չէր եւ անտաղանդ էր:

Բայց այն ժամանակ ինձ թվում էր, որ եկել է կնոջ կյանքը ճաշակելու իմ ժամանակը:

Իսկ հիմա սրանից բացի այլ կյանք չեմ փնտրում: Վերան ինձ ավելին է տվել, քան հույս ունեի, եւ անհամբեր սպասում եմ ապագային...

10-ը փետրվարի

Երրորդ օրը Վերան ասաց.

- Ես սիրում եմ քո մարմինը, որովհետեւ սքանչելի է: Բայց քո հոգին չգիտեմ: Չգիտեմ՝ հոգի կա՞: Եվ ինձ պետք էլ չի, որովհետեւ մարմինդ սքանչելի է:

Բայց ամեն ինչ փոխվում է, ու դու կծերանաս: Սկզբում դեմքդ կծերանա: Մարմինդ ավելի երկար կապրի: Ծեր դեմքը ծաղրանք կդառնա ջահել մարմնի համար: Հետո՝ թորշոմած մարմինը ծաղրը կլինի ջահել մարմնի: Հետո թառամած մարմինը՝ թունավորող ցանկությունների:

Դա արդեն մայր մտած արեւի մեռյալ լույսի պես է, որ բարձր ամպերից արտացոլվում է ջրի մեջ... անզոր, խաբուսիկ:

Չսպանե՞մ քեզ, որ ընդմիշտ իմը լինես:

Ու Վերան սարսափելի էր դառնում:

Դա ինձ դուր չի գալիս:

Բայց այդ բառերից հասկացա, որ օրը որոշել է:

Նա այլեւս չէր կարող ձգել. գալիս էր պահքը: Իսկ պասին ինձ մեծ ուրախություն էր սպասում: Վերան մեր թատերախմբով մեկնելու էր Փարիզ: Ես կտեսնեմ Փարիզը: Փարիզից կմեկնենք Ամերիկա: Վերայի փառքը համաշխարհային է դառնում:

Իսկ ես կտեսնեմ աշխարհը: Դա այնպիսի խնդություն է, այնքան շռայլ:

17-ը փետրվարի

Եվ ահա օրը եկավ ու նույնիսկ արդեն անցել է՝ ընդհատելով տառապալի օրերի շարքը:

Վերան չդրժեց իր խոսքը: Բայց երեկվա օրը զոհաբերության օր էր նրա համար, ու նաեւ երջանկության օր, ու նաեւ հույսի մեծ օր (այդ ամենն

արդեն այս գիշեր ասաց, երբ խրախճանք էինք անում), որովհետեւ, ճշմարի՛տ, արվեստին էր ծառայել իմ խեղճ գեղեցկությունը:

Ինչպե՞ս էի սեթեւեթում երեկ երեկոյան տանը: Երկար կանգնել էի հայելու առաջ ու հարմարեցնում էի մի գույնը մյուսին: Գիտունիկ քմայքներով ծալքեր էի անում: Վերան սկզբում նայում էր, հետո, անսպասելի զայրանալով, դուրս եկավ:

- Դու հիմար ես ու չես հասկանում, որ այդ ամենը պետք չէ,- ասաց:

Սրտում մի բան կար, թե ինչ՝ չէր ասում...

Հիմա գիտե՞մ: Եվ ի՞նչ: Անցավ, եւ արդեն սարսափելի չի:

Բայց ամեն ինչ՝ հերթով: Այսօր երկար գրառում է լինելու:

Այսօր մազերս մի տեսակ խենթ էին խոպոպվում ու դրա հետ մեկտեղ՝ հեշտ ու փարթամ: Ճակատս բարձր էր թվում, ու մաշկը՝ փայլատ, նուրբ: Եվ այնպես թեթեւ ու նուրբ էր ճակատս դիպուկ, վառ, բաց մոխրագույն աչքերիս խոշոր ծվածիրների վրա:

Իսկ բերանս՝ փափուկ ու փքուն, ժպտացող ու խիստ: Եվ վառ էր քնքուշ շուրթերիս գույնը, եւ գույնը փայլատ այտերիս՝ մարմրող ածուխների ալաբաստրից առկայծող կրակ:

Որքան ցնծուն ու քնքուշ էր իջնում ուսերիս գիծը: Ու երերուն կրծքերս անշարժ էին երկու փափուկ ալիքի պես: Ու վիզս կորանում էր հնազանդ ու կանգուն, քնքուշ եւ ուժեղ:

Մարմինս բարձր ու ճոճուն էր ծառս եղած, արտակոր հորձանքի նման:

Այո՛, ջրի ոգի եմ, ջրի ոգի՛...

Այ վազեցի նրա տետրը վերցնելու: Իմ մասին կգրեմ: Չէ՞ որ ինքն էր երեկ երեկոյան կարդում՝ նրանց հյուրընկալված առաջին առավոտից հետո:

«Նրա մազերը՝ վարդագույն ու պերճ մոխիր՝ զոհարանին»:

«Քնքուշ ճակատը՝ թեթեւ կամար՝ գորշ աչքերի անծավների վրա: Ահավոր պայծառ ջրեր: Եվ ծանր ու վառ է դիպուկ հայացքը»:

«Փքուն ու փափուկ է պտուղը նրա շուրթերի, բայց անողոք է փաղաքուշ ժպիտը: Ու պայթած նռան կարմիր հյութի պես վազեց արյունը նուրբ մաշկի տակով»:

«Մահը եւ կյանքը՝ նրա խոնավ շուրթերի վարդագույն պտղի հարբած հյութի մեջ: Սրբազան ավարտն իմ խենթ սիրո»:

«Մարող ածուխների ալաբաստրի անտես տոթի նման արյունն էր շնչում այտերի նրբին թերթիկների միջով»:

«Ցնծագին, արդեն գրգանքով, կորվում են կորերը նրա ուսերի»:

«Հանդարտ կորացել ու կանգուն է ցողունը նրա պարանոցի»:

«Ոսկե խաղողի ողկույզների պես ու նրանց վրա ընկած գունատ ալ վարդի երկու թերթի պես են նրա մատղաշ կրծքերը, սիրով առլեցուն բարձրացած՝ ասես ձգվելով դեպի արեւը»:

«Նրա մարմինը, գունատ, արեւով խոցված թեյավարդի սիրտ, եւ փխրուն, եւ ուժեղ, ծառս եղած, արտակոր հորձանքի նման...»:

Այստեղ ընդհատում եմ...

Նույնիսկ հոգնեցի՝ հիանալով գանգուրներս ու զգեստիս ծալքերը հարդարելուց:

Իսկ ոտքե՞րս: Իհարկե, շատ նիհարիկ են, բայց դա նրանից է, որ ոսկորներս բարակ են:

Վերան այնպես էր խնամում ոտքերիս թաթերն ու մատները, որ կենդանություն են առել, ազատ են ու նուրբ:

Երբեք չէի դադարի հիանալ ինձնով, որովհետեւ երեկ համարձակ էի: Ասաց, չէ՞, Վերան առավոտյան, դեռ անկողնում (այդ գիշեր միասին էինք քնել, այսինքն ես քնել էի, նա չէր քնել ու լաց չէր լինում) իր ձայնով ասաց.

- Այսօր այնպիսին չես, ինչպիսին էիր. այնպիսին ես, ով անընդհատ ջանում է ուրիշ դառնալ, տխրում է չարածի համար, ու փոխվում է, ու չի կարող ոչ մի որպե հանգիստ առնել, եւ այդպես էլ չի վերադառնա, կշարունակի գնա՛լ, գնա՛լ:

Քո մարմնի յուրաքանչյուր մասնիկ զգում է անվերջ այդ ընթացքը: Ինչ տհաճ, անգետ ու անհույս է զարկում սիտրդ՝ տո՛ւկ, տո՛ւկ, տո՛ւկ: Եվ արյան պտույտ է շուրջը կատաղի աճապարանքով...

Այսօր դու խաղաղ կլինես, կանգ առած, առանց անկշտության, հավերժական, հավերժական՝ կտավի վրա: Չի վառվի, չի հորդի արյունդ, վայրկյաններ չի հաշվի այլեւս... Կլինի մի ակնթարթ: Մի ակնթարթը կանջատվի մյուսներից ու լրիվ քարացած կլինի, կլինի լեցուն, քոնը, հավիտենական: Հենց դա էլ արվեստն է:

Երսուներեք զույգ ուշադիր, տեսնող աչքերի մեջ դու կարտացոլվես գեղեցկության երեսուներեք հավերժական, անփոփոխելի, լեցուն ակնթարթներով...

Հետո Վերան վեր թռավ ու երկար, լուռումունջ երկար հետուառաջ էր անում սենյակում՝ հանկարծ հաստատուն ու համաչափ ողբերգական դարձած քայլերով, համարյա սարսափելի ու լրջատեսք՝ իր երկար թափանցիկ գիշերաշապիկով:

Հետո կանգ առավ պատուհանի մոտ ու խորացող փողոցին դիմելով՝ ասաց.

- Դա մեծ բան է: Դա, գիտե՞ք, շատ մեծ է, որ հավատանք երջանկությանը, որ նույնիսկ ե՛ս, ե՛ս, ե՛ս, հավատամ ու մոռանամ, որ ամեն ինչ փոխվում է:

Թող որ նա ծերանալու է. նա երեսուներեք անգամ հավերժ կլինի ջահելության երեսուներեք հավերժական ակնթարթներում: Այո՛, այո՛, դա շատ մեծ է, հանուն որի ողջ աշխարհում, բոլոր ժամանակներում արժե որ ապրեն բոլոր մարդիկ:

Իհարկե, դեռ երբեք Վերան այդպես չէր ծուլվել իր դիմակի հետ, որ յուրաքանչյուր բառը համոզիչ լիներ, ինչպես բեմի վրա:

Ու ես հավատացի:

Դրա համար էլ, անշուշտ, կրկնապատիկ հնազանդվեցի, երբ Վերան առավոտյան ժամը տասնմեկին մոտ (ութից արդեն հագնվում էի), մոլեգնության աստիճանի հուզված, ներս վազեց սենյակ, բռնեց ուսերս, պոկեց հայելուց, վրաս գցեց երկար քղամիդը, փաթաթեց ինձ դրա մեջ, տրորելով, ինչպես խմոր են հունցում, հետո սանդուղքով ցած իջեցրեց: Խցկեց կառքն ու տարավ:

Ու տարավ նրանց մոտ, երեսուներեք գեղանկարիչների: Նրանց արվեստանոցը:

Այնտեղ ոչինչ չհասցրի տեսնել ու չգիտեմ՝ քանի հոգի էին իրականում:

Ինչ-որ մեկը տանում էր: Վերան հրում էր ետեւից: Ինչ-որ մեկը հանեց քղամիդը, հետո՝ շալը, արձակեց ուսերիս մետաղազարդերը:

Ես՝ նրա՞նց: Սիրտս հետ էր մղվում:

Երեք րոպեից ավելի չեմ հիշում:

Գլխիվայր՝ ուղիղ հորձանուտը... Պարեգոտն ընկավ: Խճճվեց ոտքերիս արանքում, երբ նետվեցի: Ցայտեցին արցունքներս: Դեմքս միանգամից թրջվեց: Ինչ-որ մեկը մաքրեց:

Բարձր էի կանգնած: Մեկ ցուրտ էր, մեկ վառվում էի:

Բայց, երբ վառվում էի, հանկարծ տեսա մարմինս: Եվ որ գունատ է ու փայլատ (ոչ վարդագույն, ինչը սովորական է շիկահերների համար, այլ փայլատ՝ խունացած թեյավարդի երանգով), տեսա, որ կարմրել է, այսինքն վարդագունել ամոթալի ու այլանդակ:

Այդ ժամանակ ցասումն ու հպարտությունը հանկարծ կաշկանդեցին ինձ: Ձգվեցի, եւ անդամներս անմիջապես լցվեցին կյանքով, դարձան պիրկ ու լեցուն, սիրտս համաչափ խփեց, շրթունքներիս թեթեւ ու հպարտ ժպիտ իջավ, ու հաղթական վառվեցին գորշ աչքերս:

Ես դա գիտեի՛: Գիտեի՛: Տեսնո՛ւմ էի: Ու ոչ ոքի չէի տեսնում, ու ժամա-

նակը չէի տեսնում, միայն ինձ՝ համրացած, կանգ առած, հաղթական:

Պետք է որ հոգնած լինեի, որովհետեւ ձայներ լսեցի:

Դիպավ ինչ-որ մեկը: Նորից հրեցին, հագցրին, տարան դեպի կրակը, նստեցրին կրակի մոտ, ու շուրջս բազմաթիվ դեմքեր էին ժպտում երկչոտ ու երախտապարտ, շփոթված ու երջանիկ...

Ցա՛նը:

Ի՞նչ է կատարվում Վերայի հետ: Նա երանության մեջ է: Նա սիրում է ինձ, ինչպես երբեք: Նա ողջ սենյակս լցրել է ծաղիկներով: Նա ասում է, որ իր սիրտն ասես մեծ թռչուն լինի՝ թռիչքի զենիթում, որ ինքը հիմա ուրիշ կերպ կխաղա, որովհետեւ ամեն-ամեն ինչ բացվեց իրեն՝ բոլոր հոգիները, ողջ երանությունը, վսեմ ջղաձգումները:

Եվ շամպայն էր խմացնում ինձ: Խրախճանք էր, սիրեկանների խրախճանք:

Սիրեկանների՞: Ինձ սիրեկան պետք չի: Երբե՛ք: Երբե՛ք: Ես երեկ սրբացել եմ: Ես երեկ երդվեցի Վերային, ու նա, նույնիսկ նա չհամարձակվեց համբուրել իմ կուրծքը...

Ինչո՞ւ նրանք մեզ ցույց չտվին նկարը: Վախենում էին, որ չե՞մ հասկանա, ողջ սխրանքը, ողջ նշանակությունը չե՞մ հասկանա: Հիմարնե՛ր: Սիրելինե՛ր:

Բայց մեկ է, այսօր կտեսնեմ... Իսկ հիմա ավարտեմ գրելը: Չէ՞ որ շուտով պիտի պատրաստվեմ:

Ամբողջ գիշեր չկարողացա քնել: Նույնիսկ վախենում էի, որ կտգեղանամ: Բայց՝ ոչ: Այսօր նույնիսկ ավելի լավն եմ, ավելի սքանչելի:

Ես զոհ ու աստվածուհի եմ: Մի անգամ այդպես ասաց Վերան այն առաջին երեկոյի մասին, երբ ինձ տարավ օթյակից:

Ի՞նչ է անում: Սա տենդ է: Ես իմը չեմ արդեն: Երբ արթնանա, կասեմ.

- Վե՛րա, այս ի՞նչ արեցիր:

Բայց եթե բարձր եմ այսքան, ես դրան էի գնում: Հոսում էի՝ կասեր Վերան:

10-ը մարտի

Երեք շաբաթից ավելի անցավ:

Ինչպե՞ս կատարվեց:

Պետք է գրեմ-վերջացնեմ: Չգիտես ինչու՝ թվում է, որ պետք է:

Վերան չգնաց Փարիզ ու Ամերիկա: Խզեց բոլոր պայմանագրերը:

Ասենք, նա իսկապես հիվանդ է: Համարյա խելագար:

Հա, ուրեմն, դա ինչպես կատարվեց:

Կգրեմ, որովհետեւ դա նրա կամքն էր, երբ խելակորույս չէր դեռ. այս օրագիրը, օրագրի այս պատառիկները: Ու մենք կարդում էինք մեկմեկու: Չէ՞ որ նա էլ էր գրում:

Առաջին օրվանից հետո եւս երեք օր նրա հետ գնացի արվեստանոց: Ու կանգնում էի:

Չորրորդ օրը նրանք վերջապես մեզ ցույց տվեցին, ու ես տեսա:

Ե՞ս եմ: Սա ե՞ս եմ: Սա ե՞ս եմ: Ում ես եւ նա սիրո՞ւմ էինք:

Սա՞: Սա՞: Սա՞:

Արվեստանոցում մի կտավից մյուսն էի վազում:

Բոլոր կողմերից, ուր նստած էին նկարողներն իմ շուրջը, ինձ էի տեսնում: Բայց մի՞թե ինձ չգիտեի ետեւից: Կողքից: Երեք քառորդով: Մեկ քառորդով: Եվ ուղիղ դեմառդեմ... նույնպե՞ս չգիտեի:

Սրանք ուրիշ են:

Ո՛չ մերը:

Նրա՛նցը: Նրա՛նցը: Նրա՛նցը:

Պարզապես նրանցը: Ո՛չ մեր գեղեցկությունը, ո՛չ Վերայինը:

Երեսուներեք այլանդակ: Երեսուներեք այլանդակ:

Ու բոլորը ես եմ: Ու բոլորը ես չեմ:

Ու ես ճչացի ու հայհոյեցի... ծիավարի պես, ախոռապանի նման:

Մոտեցա Վերային: Նրա աչքերում էլ հուսահատության ինչ-որ կապույտ փայլ էր վառվում... (ինչ աներեւակայելի՜ են նրա աչքերը). եւ ինձ մի անգամ էլ տեսա:

Իսկական, միակ ինձ, արդեն կորսված այնտեղ, ինձ իրականացրած կտավների վրա:

Վերան, իր մուշտակի օձիքի կապտավուն մորթու պես գունատ, ինձ դեպի դուռն էր տանում, լուռումունջ:

Եվ տանն էլ էինք լռում:

Եվ արդեն այդ երեկո նա չգնաց թատրոն:

Ես անձայն լալիս էի՝ կամացուկ համբուրելով անկենդան մատներով նրա ձեռքը: Նրա խոշոր, բաց աչքերում խաղողի մուգ ծիրանագույն չկար այլեւս:

Աչքերը մարած ջահերի պես էին, փայլատ-սեւ:

Նրա հետ հայելու մոտով անցնելիս (հաջորդ օրերից մեկն էր) տեսա, որ ամբողջովին սեւ է, փայլատ-սեւ. շքեղ մազերն՝ անփայլ, ու հոնքերն էլ՝ ուղիղ եւ ուժեղ, եւ աչքերը, որտեղ արդեն չէի կարող արտացոլվել՝ խունա-

ցած-անթափանց: Եվ նրա կողքին տարօրինակ թվացի ինձ, անհարիր, անտանելի պայծառ, ճկուն ու կենսախինդ՝ կայծկլտացող մոխրագույն մազերիս յուրաքանչյուր գանգուրով ու փայլով արտասվող մոխրագույն աչքերիս:

Դա սարսափելի էր:

Իսկ Վերան նկատեց, կանգ առավ ու հանկարծ ժպտաց հայելու իմ արտացոլմանը:

Ես հեկեկում էի՝ նրա ծնկները գրկած:

Բայց հաջորդ առավոտ աննկատ փախա նրանից ու գնացի նրանց մոտ:

Նրանցից մի քանիսն այնտեղ էին:

Նրանք նկարում էին ինձ:

Ես մենակ ու մերկ կանգնած էի նրանց առաջ: Չէ՞ որ նրանցն էի, նրանցը՝ այնտեղ, կտավի վրա:

Ու նորից նայեցի:

Ու գտա, որ ես ու Վերան շատ խիստ ենք եղել նախօրեին, ու որ ես ճչում ու հայհոյում էի... պոռնիկի նման:

Եվ նորից գնացի: Նայեցի նորից հազար անգամ: Եվ արբենում էի իմ սփոփանքով, իմ սփոփանքով:

Երեսուներեք այլանդակները ճշմարիտ էին: Նրանք ճշմարտությունն էին: Նրանք կյանքն էին: Կյանքի սրածայր բեկորներ՝ սուր, ամբողջական ակնթարթներով: Կանայք այդպես են: Նրանք սիրեկաններ ունեն:

Այդ երեսուներեքից (քանի՞սը, չեմ հիշում) յուրաքանչյուրը նկարել էր իր սիրուհուն: Հրաշալի՜ է: Իսկ ես նրանց մոտ վարժվել էի ինձ:

Երեսուներեք սիրուհի՜: Երեսուներեք սիրուհի՜:

Ու բոլորը ես եմ, ու բոլորը ես չեմ:

Երկար զննում էի այլանդակներին. կանգնելուց առաջ, կանգնելուց հետո:

Կանգնել էի, որ զննեմ: Դա այնպես թունոտ էր: Ինձ թվում էր՝ սովորում եմ կյանքը՝ կտոր-կտոր, առանձին կտորներով: Բեկորներով, բայց ամեն բեկորում նրա ողջ կորվածքն ու ողջ ուժն է:

Եվ այլանդակները սկսեցին տարբերակվել: Օրեցօր՝ ավելի հստակ: Կեսը դարձան սիրուհի ու կեսը՝ Տիրուհի:

Երեսուներեքից յուրաքանչյուրը իր սիրուհին կամ Տիրուհին էր ստեղծել:

Ու զվարճալի էր սիրուհիներին Տիրուհիներից տարբերելը: Բայց ամեն օր նրանք նորից խառնվում էին, իսկ երբ հեռանում ու տանը, արմունկնե-

րիս պառկած փորձում էի հիշել ամեն մի ինձ, իմ յուրաքանչյուր բեկորն այնտեղ, տառապագին խառնվում էին դիմակները, ու ես ծիծաղում էի հիմարիկի պես, վեր էի թռչում ու բարձր շշնջում.

- Երեսուներեք սիրուհի: Երեսուներեք Տիրուհի: Երեսուներեք սիրուհի: Երեսուներեք Տիրուհի: Ու բոլորը ե՛ս եմ: Ու բոլորը ե՛ս եմ:

Գնում էի Վերայի մոտ, ծնկներս գրկած՝ երկար նստում հատակին եւ ասում էի նրան.

- Այնտեղ ոչ մեկը ես չեմ, որովհետեւ լրիվ քո մեջ եմ ես: Եվ ուրիշ ոչ մի տեղ չկամ:

Ու մի տեսակ անհարմարավետ էի զգում: Փնտրում էի ինձ, ինքնակորույս, չէի գտնում: Ավելի էի սեղմվում Վերային: Գրկում էի նրա արդեն չճկվող վիզը: Նայում, սուզվում էի աչքերի մեջ: Փնտրում էի: Եվ անսովոր ցավոտ ու օտար էր կրծքիս տակ: Վերայի աչքերն արդեն չէին անդրադարձնում ինձ:

Չե՛ն անդրադարձնում:

Ես լալիս էի: Հետո՝ չարանում: Ատելությամբ էի նայում Վերային: Եվ, չար ուրախությամբ, ներքեւ էի վազում մեր բարձունքից, անվերջանալի սանդուղքով, փողոց, որտեղ ամեն ինչ առկայծում ու կոտորակվում էր, գնում էի այնտեղ, նրանց մոտ...

***

Նրանց մոտ ես ինձ դուր էի գալիս: Խնդրեցին առանձին հանդիպեմ «Երեսուներեքի» հիմնադիրներից մեկի հետ:

Դա այն ճաղատացող խոշոր գլխով ու ցատկոտող մանկական աչքերովն էր: Փարիզում է ապրում ու հետո գնալու է Ամերիկա՝ ցուցադրվելու:

Ես պայմանավորվում եմ նրա հետ իր աշակերտներից մեկի՝ իմ սիրեկանի միջոցով: Ու կարծում եմ, որ մի քիչ ավելի ուշ կհամաձայնեմ:

Ես կտեսնեմ Փարիզն ու Ամերիկան ու նույնքան կհարստանամ կյանքով:

Սիրելի՛, խե՛ղճ Վերա: Նա ինչ-որ մոռացության մեջ է ապրում ու շարժվում: Ինքն իր համար կարդում է դերերը՝ կիսաձայն, անարտահայտիչ, անհասկանալի քրթմնջոցով: Ու դեմքը հողագույն է... Չգիտի, որ դուրս եմ գալիս: Չի տեսնում ինձ:

Իսկ գուցե տեսնո՞ւմ է: Եվ արդեն միեւնույն է նրա համար:

Նստում եմ, բռնում եմ ձեռքը: Համբուրում եմ մեռյալի փխրուն, դժվար ծալվող մատները: Համբուրո՛ւմ եմ...

Բայց նա նույնիսկ չի ժպտում: Եվ նրա աչքերում ես արդեն չկամ:

Չեն անդրադարձնում:

Խե՜ղճ Վերա: Երեկ ասաց.

- Իհարկե, դու իրավացի ես:

Եվ այնպես կամացուկ, անծանոթ, ժպտաց:

Հետո այնպես դանդաղ ու անհասկանալի ավելացրեց, հատ-հատ շարելով բառերը, եւ ինձ թվաց՝ ամեն բառից հետո մեռնելո՛վ, մեռնելո՛վ.

- Ես այդպես ցանկացա:

Ուրեմն սարսափելի ձայնով ասված նրա այն բառերից հետո, որ ինձ պիտի տա նրանց, Տիրուհուն աղոթելս իզո՞ւր էր:

***

Վերան ասում է, որ տեղից չի շարժվի, որ լավ է զգում: Որ իր համար այդպես շատ լավ է կյանքն ավարտելը: Կմեկնե՞մ, թե՞ կմնամ: Միեւնույն է: Ես նրա մեջ եմ: Այն հավերժական ակնթարթը՝ նրա մեջ:

Բայց հեզ է ասում այդ ամենը, ասում է առանց աղաղակի, որից նրանք բոլորն այնտեղ, թատրոնում ինքնակորույս խենթանում են: Եվ այդ հեզությունը տհաճ է ինձ: Անսովոր:

Ճիշտ է, ուզում էի ամբողջը գրել, բայց չեմ կարող. խղճում եմ Վերային, ու ոչինչ չեմ հասկանում:

Ի՞նչ անեմ:

Հրաժարվե՞մ նրանից:

Բայց չէ՞ որ դա խելագարություն է: Այսինքն՝ Վերայի հուսահատությունն է խելագարություն:

Ապրիլ

Վերան թունավորվեց:

Ի՞նչ անեմ: Ինչպե՞ս սպանեմ ինձ: Թե՞ չսպանեմ:

Գուցե դրան է՞լ կվարժվեմ:

Վերան վախենում էր սովորույթից ու դավաճանությունից:

Բայց ահա, երբ այսպես ժամերով նստում եմ նրա մոտ, ինձ հետ ինչ-որ բան է կատարվում: Ասես նրա մտքերը, որայլեւս չի մտածում, փոխանցվում են ինձ, եւ այնպես ամբողջական, լեցուն, առանց վեճի:

Մտածում էի. «Մի՞թե իմ այս տաք, փխրուն շնչառությունը, որով խմում եմ կյանքն ու որն, ահա, կընդհատվի եւ անմեղ է լրիվ, եւ անկամ ու անկայուն, մի՞թե սովորույթ չէ արդեն ամեն ներշնչումը եւ արտաշնչումն ամեն՝ դավաճանություն»:

Ես էլ կծերանամ:

Վերան արդեն ծերացել է տառապանքի այս երկու շաբաթներին:

***

Մարդիկ անընդհատ կրկնում են, որ Վերան միշտ էլ խելագար է եղել: Նրանք հիմա այցելում են մեզ ու կարգադրություններ անում: Պարզվեց՝ ինչ-որ ազգականներ կան:

Նրանք թաղում են...

Ես պիտի գնամ:

Ասենք, ես էլ մտածում եմ՝ նույնիսկ, ամենը, որ իսկական է... եւ չի վարժվում, եւ չի պահանջում...

***

Վերան ողբերգական էր: Այսինքն ապրում էր ողբերգականի տարերքում: Մի անգամ այդպես էր գրել իր մասին: (Ա՛խ, չտեսա՛ երբ վառեց իր գրառումները):

Կգրեմ, ինչպես այն ժամանակ արտագրել եմ նրանից, որովհետեւ այն ժամանակ շատ դիպուկ թվաց:

«Յուրաքանչյուր տարերքում կարող են ապրել միայն այն արարածները, որոնք ընտելացած են այն շնչառելու եւ մարմնավորելու իրենց մեջ: Ես էլ եմ այդպես մտածում:

Այդպես եւ ողբերգականը»:

Վերան նաեւ գրել էր.

«Ով կարող է իր միջով շնչառել ողբերգությունը, փրկված է, նրա հերոսն ու սանձողը»:

Ահա նորից գրեցի նրա բառերն, ու հիմա իմն են ուզում ասվել: Ես դրանք գրում եմ արցունքների միջից:

Կյանքը փխրուն ու երփներանգ է, ինչպես Վերայի այն առվակը, ինչպես նրանց փաղաքշանքները, ինչպես իմ հեշտանքը. կյանքն իսկական է, ու Վերան այն չէր ուզում ընդունել:

Ֆյոդոր ՍՈԼՈԳՈՒԲ

ԱՄԲՈԽԻ ՄԵՋ

I

Հնամենի ու փառապանծ Սստիսլավ քաղաքը հիմնադրման յոթհարյուրամյակն էր տոնում:

Հարուստ քաղաք է, արդյունաբերության ու առեւտրի քաղաք: Բուն քաղաքում ու արվարձաններում բազմաթիվ ֆաբրիկաներ ու գործարաններ էին կառուցվել, որոնցից մի քանիսը հռչակված էին Ռուսաստանով մեկ: Բնակչությունն արագ աճում էր, հատկապես վերջին տարիներին, ու հասել էր ազդեցիկ թվերի: Մեծաքանակ զորք էր կանգնած քաղաքում: Շատ էին բանվորները, առեւտրականները, պաշտոնյաները, ուսանողներն ու գրականության մարդիկ:

Քաղաքապետարանը որոշեց փառահեղ տոնել քաղաքի հիմնարկման օրը: Հրավիրեցին իշխանություններին, կանչվեցին Փարիզն ու Լոնդոնը, նաեւ Չուխլոման ու Մեդինը եւ էլի որոշ քաղաքներ, բայց շատ խիստ ընտրությամբ:

- Գիտե՞ք, որ ամեն պատահած չխցկվի,- բացատրեց քաղաքագլուխը՝ վաճառականական ծագումով ու եվրոպական կրթությամբ մի երիտասարդ, որ հայտնի էր վարվեցողության նրբին բարեկրթությամբ:

Հետո հանկարծ հիշեցին, որ պետք էր Մոսկվան ու Վիեննան էլ, չէ՞, հրավիրել: Եվ այդ երկու քաղաքին էլ հրավերք արեցին, բայց երբ տոնին արդեն ընդամենը երկու շաբաթ էր մնացել:

Գրողներն ու երիտասարդները քաղաքագլխին կշտամբում էին նման անհարկի մոռացկոտության համար: Գլուխը շփոթված արդարանում էր.

- Գործերով ընկա: Լրիվ խելքս կորցրել եմ: Այնքան շատ գո՛րծ կա. չեք պատկերացնի: Տանն էլ հազվադեպ եմ գիշերում. հանձնաժողով հանձնաժողովի հետեւից:

Մոսկվան չնեղացավ. մերոնք են, լեզու կգտնենք. ու շտապեց պատվիրակություն ուղարկել՝ շնորհավորական ուղերձով: Իսկ ուրախ Վիեննան շնորհավորական բացիկով սահմանափակվեց: Բացիկը գեղարվեստորեն ձեւավորված էր. ցիլինդրը գլխին տկլոր երեխան նստել է տակառին՝ բարձրացրած ձեռքին՝ գարեջրի գավաթ: Գարեջուրը շռայլ փրփրում է,

տղան՝ ուրախ ու խորամանկ ժպտում: Կլորադեմ ու կարմրաթուշ տղա էր, ու քաղաքային վարչության անդամները գտան, որ նրա ժպիտը միանգամայն վայել է հանդիսությանը՝ ուրախ է, բարեգերմանական: Եվ նկարն ամբողջությամբ շատ ազդեցիկ դիտվեց: Միայն ոճի հարցում այնքան էլ միասնական չէին. ոմանք «մոդեռն» էին ասում, ոմանք՝ «ռոկոկո»:

Անսալարկ, փոշոտ, կեղտոտ ու խավար քաղաքում, քաղաքում, ուր շատ էին փողոցային զզվելի տղեկներն ու դպրոցները՝ քիչ, քաղաքում, ուր աղքատ կանայք, պատահում էր, հենց փողոցում էին ծնունդաբերում, քաղաքում, ուր քանդում էին պատմական ամրոցի պատերը, որ աղյուս հանեն նոր տներ կառուցելու համար, քաղաքում, ուր գիշերները մարդաշատ փողոցներում խուլիգաններն էին մոլեգնում, իսկ արվարձաններում անարգել կողոպտվում էին բնակիչների կացարանները՝ քնահար գիշերապահների ճչանակների բարձր ձայների տակ, այդ կիսավայրի քաղաքում ժամանած հյուրերի եւ իշխանությունների համար հանդիսություններ ու խնջույքներ էին կազմակերպվում, որ ոչ մեկին պետք չէին, եւ այդ փուչ ու տխմար ձեռնարկի համար ծախսվում էին դպրոցին ու հիվանդանոցին չհերիքող փողերը:

Իսկ հասարակ ժողովրդի համար,- չի կարելի, չէ՞, առանց նրա,- զվարճանքներ էին լինելու քաղաքամերձ դաշտում, տարածքում, որը, չգիտես ինչու, Օպալիխա էր կոչվում: Բալագաններ էին կառուցվում. մեկը ժողովրդական դրամայի համար, մյուսը՝ հեքիաթային տեսարանների, երրորդը՝ կրկեսի, ամերիկյան բլուրներ էին սարքում, ճոճանակներ, սյուներ՝ մրցանակի ետեւից մագլցելու համար: Ծաղրածու պապին նոր մորուք առան, մալանչ-մորուք, եւ այն քաղաքին ավելի թանկ նստեց, քան մետաքսյան. շա՛տ գեղարվեստական էր սարքած:

Նվերներ պատրաստեցին ժողովրդի համար: Նախատեսում էին յուրաքանչյուրին մեկական գավաթ՝ քաղաքի զինանշանով, եւ Մստիսլավլի պատկերով թաշկինակ՝ մեջը քաղցրաբլիթներ ու ընկույզներ: Նախապես էին պատրաստել, դրա համար էլ մինչեւ տոնի օրը քաղցրաբլիթները քարացան, իսկ ընկույզները որդնեցին:

Ժողովրդական տոնի օրվանից մեկ շաբաթ առաջ Օպալիխայում սեղաններ շարեցին, նաեւ՝ երկու գարեջրի բուֆետ ու երկու բեմահարթակ. վճարովին՝ հասարակության, իսկ մյուսը հարգարժան հրավիրյալների համար:

Բուֆետների արանքում նեղ անցումներ թողեցին, որ նվերների համար հերթով ու մեկական մոտենան սեղաններին: Այդպես էր մտածել քա-

ղաքագլուխը, որ ամեն ինչ առավելագույնս կարգուկանոնով լինի: Խելացի ու լրջմիտ երիտասարդ էր:

Տոնի նախօրեին նվերները բերեցին, շարեցին մարագում ու դուռը կողպեցին:

Ձվարճանքների ու նվերների մասին լսելով՝ ժողովուրդը մեծ բազմություններով բոլոր կողմերից դիմում էր դեպի հնամենի ու փառապանծ Սստիսլավլ քաղաք՝ հեռվից խաչակնքելով նրա բազում եկեղեցիների ոսկյա գմբեթներին: Ասում էին՝ նվերը նվեր, բայց Օպալիխայում օղու շատրվաններ են խփելու ու կարելի է լինելու խմել ինչքան սիրտդ ուզի:

- Կուզես՝ մեջը խեղդվի:

Շատերը հեռվից էին գալիս: Ու՝ կանխապես: Արդեն տոնի նախօրեին քաղաքի փողոցներում բազմաթիվ հեռավոր եկվորներ էին թրեւում: Առավելապես՝ գեղջուկներ, շատ էին նաեւ ֆաբրիկաների բանվորները: Հարեւան քաղաքների բնակիչներ էլ կային: Գալիս էին ոտքով, կառքով էլ էին գալիս:

Եվ ահա արդեն մի քանի օր շարունակվում էր տոնակատարությունը քաղաքում: Տների վրա դրոշներ էին փողփողում, խոտահյուս ծաղկաշղթաներ էին կախված: Պատարագներ էին մատուցում: Ձիավորական շքերթ կազմակերպվեց: Հետո՝ հրշեջ խմբի ստուգատես: Վաճառահրապարակում շուկա էր բացվել՝ ուրախ ու աղմկոտ:

Շատ էին ճանաչված այցելուները՝ հայրենական եւ օտարերկրյա, մանր ու մեծ պաշտոնական անձինք, ու շատ էին զբոսաշրջիկները: Տեղի բնակիչները խումբ-խումբ թափվում էին փողոց ու աչքները չռում եկվոր հյուրերին: Նշանավոր օտարերկրացիներն առանձնակի ուշադրության առարկա էին, ընդ որում՝ ոչ այնքան բարյացակամ: Ցանում էին նաեւ եկամուտ ստանալ. բնակարանները, սնունդը, ապրանքները՝ ամեն ինչ թանկացավ:

Վրա հասավ ժողովրդական տոնի նախօրեն: Քաղաքը, ինչպես այդ բոլոր օրերին, հուրհրում էր տոնական լույսերով: Քաղաքային թատրոնում հանդիսավոր ներկայացում էր նախատեսված, հետո՝ մեծ պարահանդես՝ նահանգապետի տանը: Իսկ ամբոխը լցվեց Օպալիխա: Վերահսկողություն չկար: Նախատեսված էր, որ նվերները բաժանելու են առավոտվա ժամը տասից, ու քաղաքային ղեկավարությունը համոզված էր, որ վաղ առավոտից շուտ ոչ ոք Օպալիխա չի գնա: Բայց առավոտից առաջ գիշեր կար, իսկ դրանից առաջ՝ երեկո: Ու երեկոյից արդեն ամբոխը սկսեց հավաքվել Օպալիխայում, այնպես որ, կեսգիշերվա կողմ ժողովրդական զբո-

սանքների հրապարակը քաղաքամերձ դաշտից բաժանող մարագների առաջ արդեն նեղվածք էր, աղմկոտ ու տագնապալի:

Ասում էին՝ մի քանի հարյուր հազար մարդ է հավաքվել: Նույնիսկ կես միլիոն:

II

Նիկոլսկի հրապարակում, հենց դարափի եզրին Ուդոեւների տնակն էր: Դարափի գլխին այգի էր, եւ այնտեղից քաղաքի ներքեւի հատվածների հրաշալի տեսարան էր բացվում: Դեպի Զարեչյե եւ Առեւտրական շարքեր ու շրջակայքները:

Բարձունքից ամեն ինչ զուլալվում եւ փոքրիկ, գեղեցիկ ու զուգված էր թվում: Ծանծաղ, կեղտոտ Սաֆատ գետն այդտեղից գունափոխվող նեղ ժապավեն էր: Տներն ու վաճառաշարքերը խաղալիք էին թվում, կառքերն ու մարդիկ շարժվում էին համաչափ, հանդարտ, անաղմուկ ու աննպատակ, փոշին թեթեւ էր բարձրանում, հազիվ տեսանելի, ու ծանր բեռնասայլերի ծանր դղրդոցը վերեւ էր հասնում որպես ստորերկրյա համարյա անլսելի երաժշտություն:

Ուդոեւների տան դիմաց, հրապարակի մյուս եզրին գանձատունն էր՝ օքրայով ներկած, ձանձրալի երկհարկ շինություն: Այնտեղ էր ծառայում ընտանիքի գլուխը՝ պետական խորհրդական Մատվեյ Ֆյոդորովիչ Ուդոեւը:

Ուդոեւների տան ցանկապատը սովորական եւ ամուր էր, այգում՝ անուշիկ ու հարմարավետ տաղավար, բուրում էր եղրեւանին, պտղատու ծառերն ու հատապտղի թփերը ուրախ ու համով բաներ էին խոստանում. տնարար ու հիմնավոր էր տեղավորվել տարեց ու հարգարժան պաշտոնյայի ընտանիքը:

Ուդոեւի երեխաները՝ տասնհինգամյա գիմնազիստ Լյոշան ու երկու քույրերը՝ Նադյան ու Կատյան, քսանամյա ու տասնութամյա օրիորդներ, նույնպես պատրաստվում էին գնալ Օպալիխա, տոնակատարության: Դրա համար էր ուրախ ու խնդագին հուզմունքի մեջ էին:

Լյոշան ճերմակամորթ, ծիծաղը դեմքին ու ջանասեր տղա էր: Առանձնահատուկ ու վառ ոչնչով աչքի չէր ընկնում. գիմնազիայի դասատուները հաճախ էին նրան շփոթում դասընկերոջ՝ նույնպիսի ճերմակադեմ ու համեստ գիմնազիստի հետ: Օրիորդները նույնպես՝ հեզ, ծիծաղկոտ ու բարի: Ավագը՝ Նադյան, ավելի աշխույժ էր, անդադրում ու երբեմն նույնիսկ չարաճճի: Կրտսերը՝ Կատյան, սուսիկ-փուսիկ էր, սիրում էր աղոթել, հատկա-

պես եկեղեցում, ու շատ հեշտ էր ծիծաղը փոխում արցունքների ու լացը՝ ծիծաղի, նրան հեշտ էր եւ՛ նեղացնել, եւ՛ սփոփել, ծիծաղեցնելն էլ դժվար չէր:

Ե՛վ տղան, եւ՛ օրիորդները շատ էին ուզում մեկական գավաթ ստանալ: Ծնողներից նախապես էին Օպալիխա գնալու թույլտվություն վերցրել:

Նրանց դժկամությամբ թողեցին Օպալիխա: Մայրը փնթփնթում էր: Հայրը՝ լռում: Նրա համար մեկ էր: Չնայած՝ նրան էլ դուր չէր գալիս:

Մատվեյ Ֆյոդորովիչ Ուդուեը լռակյաց, բարձրահասակ, ծաղկատար ու անտարբեր մարդ էր: Օղի էր խմում, բայց՝ չափավոր, ու համարյա երբեք չէր վիճում տնեցիների հետ: Ընտանեկան կյանքը նրա կողքով էր անցնում: Ինչպես եւ ողջ կյանքը...

Անցնում էր կողքով՝ սահող ու արեւի շողերով ծակծկված երկնքում հալվող ամպերի նման: Ինչպես անխոնջ քայլող պանդուխտը՝ իրեն անհետաքրքիր շինությունների կողքով... Ինչպես հեռավոր մի երկրից փչող քամին... Կողքով, կողքով, շարունակ կողքով...

III

Լյոշան ու քույրերը դարպասի մոտ կանգնած նայում էին անցորդներին: Աղմկոտ ու մարդաշատ էր: Տոնական հագած մարդիկ էին անցնում, ու երեւում էր, որ օտար են: Առավելապես մի ուղղությամբ էին գնում՝ Օպալիխա: Ամբոխի գվվոցը խուլ տագնապ էր արթնացնում երեխաների մեջ:

Մոտեցան հարեւան Շուտկիններները՝ ավագը, փոքր տղան ու երկու աղջիկները: Մի քանի անկարեւոր խոսք փոխանակեցին՝ հաճախ հանդիպող ու իրար սովոր մարդկանց պես:

- Գնալո՞ւ եք,- հարցրեց ավագ Շուտկինը:

- Գնալու ենք, առավոտյան,- պատասխանեց Լյոշան: Նադյան ու Կատյան ժպտացին՝ ուրախ ու մի քիչ շփոթված: Հետո գնացին տուն:

- Ուզում են մեզանից շուտ գնան,- գլխի ընկավ Նադյան:

- Գնում են, թող գնան,- ասաց Կատյան ու տխրեց:

Շուտկինների տունը Ուդուեների կալվածատան կողքին էր: Առանձնանում էր փնթի ու խարխուլ տեսքով:

Երիտասարդ Շուտկիններն իսկական թոկից փախած ու դատարկապորտներ էին: Երբեմն Ուդուեների երեխաներին էլ էին չարաճճիությունների մղում, նույնիսկ՝ բավական լուրջ:

Շուտկինները թուխ էին, սեւամազ, գնչուների պես: Ավագ եղբայրը գրագիր էր հաշտարար դատավորի մոտ: Վարպետորեն բալալայկա էր

նվագում: Ելենա ու Նատալյա քույրերը սիրում էին երգել ու պարել: Ու մեծ ոգեւորությամբ: Կրտսեր եղբայրը՝ Կոստյան, թունդ կռվարար էր: Քաղաքային ուսումնարանում էր սովորում: Մեկ անգամ չէ, որ սպառնացել էին վռնդել այնտեղից: Դեռ մի կերպ դիմանում էր:

Ուդուեւները վերադարձան տուն: Տրամադրությունը ծանր ու տագնապալի էր: Տեղում նստել չէին կարողանում:

Արդեն որոշել էին, որ վաղ առավոտյան են գնալու: Բայց վաղ երեկոյից սկսեցին պատրաստվել: Ու որքան խոնարհվում էր հոգնած արեւը, այնքան երեխաների անհանգստությունն ու անհամբերությունն աճում էր: Անընդհատ վազում էին դարպասի մոտ, որ նայեն, լսեն, խոսեն հարեւանների, անցորդների հետ:

Ամենից անհանգիստը Նադյան էր: Շատ էր վախենում, որ կուշանան: Եղբորն ու քրոջը սրտնեղած ասում էր.

- Քնով եք անցնելու, մնաք, հաստա՛տ, զգում եմ:- Ու նյարդայնացած կոտրտում էր փխրուն մատները, ինչը նրա դեպքում միշտ ուժգին հուզմունքի նշան էր:

Կատյան ի պատասխան հանդարտ ժպտում ու վստահ ասում էր.

- Բան չկա, չենք ուշանա:

- Պետք է քնել,- ծույլ-ծույլ ասաց Լյոշան:

Ու հանկարծ քնկոտություն վրա տվեց, ու մտածեց, որ առավոտ վաղ վեր կենալը տհաճ ու անիմաստ է, ու չուզեց գնալ: Նադյան միանգամից ու տաք առարկեց.

- Է՛լ ինչ կուզես: Քնե՛լ: Ոչ մի քնել: Ես էսօր ընդհանրապես չեմ քնելու:

- Չես էլ ընթրելո՞ւ,- ծաղրանքով հարցրեց Լյոշան:

Ու հանկած նրանց բոլորին թվաց, որ մի տեսակ դիտմամբ ուշացնում են ընթրիքը, ու սկսեցին անհանգստանալ: Անընդհատ ժամացույցին էին նայում: Կպչում էին հորը.

- Էս ի՞նչ է, էսօր, ոնց որ դիտմամբ, մեր ժամացույցը հետ է ընկնում: Վաղուց ընթրիքի ժամանակն է: Էսպես վաղը քնով էլ կընկնենք, եթե կեսգիշերն անց էլ ընթրիք չեն տալիս:

Հայրը խոժոռվելով ասում էր.

- Լա՛վ, ի՞նչ եք ուզում ինձանից: Մեկ՝ սա, մեկ՝ մյուսը:

Ու նայում էր երեխաներին չտեսնող հայացքով, ասես հենց նոր էր նկատել, որ երեքն են: Անտարբեր հանում էր ժամացույցն ու ցույց տալիս: Դեռ շատ վաղ էր:

Իսկ այդ ընթացքում տարբեր կողմերից Ուդուեւների տուն լուրեր էին

հասնում, որ Օպալիխայում արդեն շատանում են, խմբերով են գալիս, եւ արդեն ամբոխ է հավաքվել, մի ամբողջ ճամբար՝ գիշերակացով, ու վայ թե վրաններ էլ են խփել: Ու երեխաներն արդեն սկսել էին կռահել, որ ուշացած է լինելու առավոտյան Օպալիխա գնալը: Եվ դրանից Ուդոեւների տանը տրամադրությունն անասելի տագնապալի էր դառնում:

Անցնում էին Ուդոեւների տան կողքով: Ավելի ու ավելի շատ ժողովուրդ էր անցնում: Ամբոխի մեջ վատ հագնվածներ էլ կային: Շատ էին տղեկները: Աղմկոտ էր, ուրախ ու տոնական:

IV

Մի քանի հոգի կանգ առան Ուդոեւների դարպասի մոտ: Աշխույժ խոսակցություն էր լսվում, վեճ, ծիծաղ:

Լյոշան ու քույրերը նորից դուրս վազեցին դարպասից:

Մի քանի տղամարդ ու կին էին խմբվել: Նրանց հետ քաղաքի բնակիչներից էլ կային: Բարձրաձայն էին խոսում, անբարյացակամ, ասես կռվելիս լինեին:

Մի տարիքոտ աշխույժ քաղքենուհի, որ սրված ու խորամանկ դեմք ուներ, տոնական զուգվածությունից պայծառացած եւ օսլայելուց խշխշացող չթե շոր էր հագել ու յուղոտ, բայց սանրած մազերին վարդագույն գլխաշոր կապել, բարձրահասակ, ծանրաբարո գեղջուկին ասում էր.

- Իջեւանատանը կմնայիք, էլի՛:

Տարեց գեղջուկը պատասխանում էր անշտապ ու խոհուն՝ ասես ճշգրիտ բառեր փնտրելով նշանակալի ու խորիմաստ մտքի համար.

- Շատ են կլպում ձեր դռնապանները: Կլպում են, լսի՛: Դրանց հետ ոչ մի ձեւ լեզու չես գտնի: Ուրախացե՛լ են: Սրբություն չունեն մարդիկ: Ո՛րս են ճարել, լսի՛: Անխիղճ են կլպում: Միանգամից են ուզում հարստանան:

Ձերմակադեմ ու ոսկեգլուխ, անվերջ ժպիտը փամփլիկ շրթունքներին ու հեզ, վճիտ, կապույտ աչքերով բարեհոգի պատանին ասաց.

- Բարի մարդիկ էլ կան, որ ձրի են տեղ տալիս:

Բոլորը քմծիծաղով նայեցին նրան: Խոսեցին.

- Կան, բայց էստեղ չեն:

- Էդտեսակ մարդ որ գտնես, մեզ էլ ասա:

Չգիտես ինչու չար էին ծիծաղում, չնայած, ըստ երեւույթին, չարախնդալու պատճառ չկար: Տղան ժպտում էր, անմեղ աչքերով նայում շուրջն ու հավատացնում.

- Իսկ ինձ տեղավորեցին: Ճիշտ եմ ասում: Մի կին ներս թողեց:

- Շա՛տ փափուկն ես,- ասաց կամրաշեկ ու ծուռմռտիկ գեղջուկը:

Մոտեցան Շուտկին քույրերը՝ Ելենան ու Նատալյան. ամեն ինչով այնքան նման էին իրար, որ նույնիսկ տարօրինակ էր տեսնել, որ մեկը շեկ է, մյուսը՝ սեւահեր, ու նրանց եղբայրը: Լսում ու խորամանկ ժպտում էին, եւ չգիտես ինչու թվում էր, որ այսօր նրանց ժպիտները զզվելի, իսկ իրենք անմաքուր են:

Ուդոեւ քույրերին աչքով անելով՝ ավագ Շուտկինն ասաց.

- Վաղը շուտ ե՞ք վեր կենալու:

- Հա՛,- արագ ասաց Լյոշան,- շուտ կգարթնենք, մինչեւ լույսը բացվելը, բոլորից շուտ կհասնենք:

Եվ հանկարծ հիշեց, որ ոչ մի կերպ հնարավոր չէ բոլորից շուտ հասնել, ու վշտացավ:

- Կգարթնեք, բա չէ՞: Ձեզանից ի՞նչ զարթնող,- ասաց Շուտկինը: Քույրերը լկտի ու խորամանկ ծիծաղեցին: Եվ անհասկանալի էր՝ ինչու եւ ինչի վրա են ծիծաղում: Ավագ Շուտկինն ասաց.

- Ի՞նչ շուտ գնալ: Անցած տարի առավոտյան ժամերգությանը վանք գնալու պես, հա՞:

- Ա՛յ թե ծիծաղ էր,- քրքջալով ծղրտաց Ելենան: Ու երեւում էր, որ եւ՛ նրա, եւ՛ շեկ քրոջ համար մեկ էր, թե ինչի վրա ծիծաղեն, եւ բոլորովին տարօրինակ ու անվայել չէր թվում իրենց իսկ ծաղրելը: Շուտկինը պատմեց.

- Անցած տարվա բան է: Շուտ պառկեցինք քնելու, առանց լույս վառելու: Քուններս առանք, վեր կացանք: Էդ ժամանակ ժամացույց չունեինք, գրավի տակ էր էն պարզ պատճառով, որ էդ ժամանակ մեր ծախսերը եկամուտներին անցել էին, ու արտաքին տասներկու տոկոսանոց փոխառության տոմսերի կարիք էր առաջացել: Մի խոսքով, գնացինք: Գնացինք, գնացինք ու հասանք տեղ: Նայենք՝ դռները դեռ փակեն: Ստածեցինք՝ շուտ ենք եկել: Նստեցինք սուրբ մենաստանի դարպասի մոտի նստարանին: Պահակը մոտեցավ, բավական բնական զարմանքով հարցնում է՝ ի՞նչ եք էստեղ նստոտել, թե՞ տանը մնալուց ձանձրացել եք: Մենք էլ խիստ անկաշկանդ ասում ենք՝ ժամերգության ենք եկել, ասում ենք, ձեր միաբաներն, ասում ենք, քնով են անցել էսօր: Իսկ նա մեզ՝ հա՛, ինչ էլ ժամանակին եք եկել, ժամը տասնմեկը նոր խփեց, ասում է: Ի՞նչ է, ասում է, սպասելու ե՞ք: Ավելի լավ կլիներ տուն գնայիք: Մենք էլ ընդունեցինք խելամիտ խորհուրդն ու տուն գնացինք: Ա՛յ թե ծիծաղ էր:

Եվ Շուտկիններն ու Ուդոեւները ծիծաղեցին:

Այդ ժամանակ վազելով մոտեցավ շնչակտուր ու քրտնմխած կրտսեր

Շուտկինը՝ Կոստյան: Ցնծագին գոռաց.

- Վազեցի Օպալիխա, հետ եկա:

- Եվ ի՞նչ: Ո՞նց էր,- հարցրեցին եւ՛ յուրայինները, եւ՛ Ուդուեւները:

- Ինչքան աչքդ կտրի՝ գեղացի է լցվել: Ամբողջ դաշտը հեղեղել են:

- Ա՛յ քեզ խելառներ,- դառը ծիծաղեց Լյոշան:- Ախր ժամը տասից են բաժանելու, դրանք իրիկվանից են հավաքվում:

Ավագ Շուտկինը ծիծաղեց, աչքով արեց քույրերին:

- Ձեզ ով ասաց,- գոչեց նա:- Սկիզբը ժամը երկուսին է, որ օտարերկրացի հյուրերը հասցնեն տեսնել: Նրանք շուտ քնելու սովոր չեն: Եվ ուշ են զարթնում:

- Չէ՛, սուտ է, սկիզբը տասին է,- տաք-տաք առարկեց Լյոշան:

- Չէ՛, երկուսի՛ն, երկուսի՛ն,- միահամուռ բացականչեցին բոլոր Շուտկինները: Նրանց լկտի ծիծաղից ու հայացքներ փոխանակելուց անմիջապես երեւում էր, որ ստում են:

- Հիմա հաստատ կիմանամ,- ասաց Լյոշան: Վազեց քաղաքային վարչության քարտուղարի տուն. տունը հեռու չէր: Վերադարձավ ցնծալով: Հեռվից կանչեց.

- Տասի՛ն:

Շուտկինները ծիծաղեցին ու այլեւս չվիճեցին:

- Էդ դիտմամբ էիք հորինել,- ասաց Լյոշան,- որ ավելի շուտ գնաք, առանց մեզ: Ի՞նչն եք:

Նրանց մոտով ոգեշնչված վազում էր գիմնազիստ Պախոմովը՝ բարակմարակ ու շարժուն մի տղա: Փութով բարեւեց Ուդուեւներին: Շուտկիններին անբարյացակամ էին նայում նրան:

- Հը, գալիս ե՞ք,- հարցրեց նա եւ պատասխանի չսպասելով՝ ասաց:- Մենք՝ իրիկվանից: Շատերն են իրիկունը գնում:

Շտապ հրաժեշտ տվեց: Նայեց Շուտկիններին, որ գլուխ տա, բայց միտքը փոխեց ու վազեց: Շուտկինները չար նայեցին նրա հետեւից: Ծիծաղեցին: Ուդուեւների համար տհաճորեն տարօրինակ թվաց նրանց ծիծաղը. ինչո՞ւ են ծիծաղում:

- Մաքրահավի՛ս տես,- քամահրանքով ասաց Կոստյան: Ելենան չար ու բարձր ավելացրեց.

- Պարծենկոտի մե՛կը: Դրա բա՛նը չի: Սուտ է ասում:

Երեկոն այնպես խաղաղ ու հրաշալի էր, որ Շուտկինների անտեղի կոպիտ բառերը առանձնապես անհարիր էին հնչում:

Արեւը հենց նոր էր մայր մտել: Ամպերն անդրադարձնում էին նրա շա-

ռագույն-մեռյալ շողերի հրաժեշտի հուրհրատումը:

Այնպես սքանչելի, այնպես խաղաղ էր երեկոն... Իսկ մեռած Օձի այրող թույնը դեռ տարածվում էր երկրի վրա:

V

Ուդուեւները վերադարձան տուն: Ծանր ու անտանելի էր, ու չգիտեին՝ ինչով զբաղվեն: Ամեն դատարկ բանից վեճեր ու վիճաբանություններ էին բռնկվում: Անընդհատ վեր էին թռչում, դեսուդեն ընկնում:

Լյոշան էլ հանկարծ տագնապեց Նադյայի պես:

- Վերջին էլ չենք հասնի,- նեղսրտած գոչեց նա:

Ինչպես հաճախ է լինում, այդ աննշան բառերը վճռեցին ամեն ինչ: Նադյան ասաց.

- Ուրեմն ավելի լավ է՝ իրիկվանից:

Բոլորը համաձայնեցին, ու հանկարծ ուրախություն պատեց նրանց:

Լրիվ կարմրատակած Լյոշան գոռում էր

- Իհարկե, եթե պիտի գնանք, ուրեմն՝ հենց հիմա:

Երեքով վազեցին հոր մոտ՝ թույլտվություն խնդրելու:

- Մտքներս փոխել ենք, իրիկունն ենք գնալու,- նրա առաջ պտույտ տալով՝ գոչում էր Նադյան:

Հայրը խոժոռված լռում էր:

- Մի գիշեր էլ չենք քնի, մեծ բան չի,- ասում էր Լյոշան՝ փորձելով համոզել հորը:

Բայց հայրը շարունակում էր լռել, ու դեմքն առաջվա պես անշարժ-խոժոռ էր:

Երեխաները հանգիստ թողեցին նրան: Վազեցին մոր մոտ: Մայրը դժգոհեց:

- Հայրիկը թո՛ւյլ է տվել,- գոռում էր Լյոշան: Իսկ քույրերը ծիծաղում եւ ուրախ, զնգուն ճտվտում էին: Ուրախ ծղրտոցով վազվզում էին երեքը տնով, այգով մեկ: Շտապեցնում էին ընթրիքը:

Հիշեցին Շուտկիններին: Չգիտես ինչու, տհաճ էր հիշել նրանց մասին: Լյոշան քույրերին ասաց.

- Միայն թե Շուտկիններին՝ ոչ մի խոսք:

Քույրերը համաձայնեցին:

- Ինքնին հասկանալի է,- ասաց Նադյան,- թող կորչեն:

Կատյան մռայլվեց ու ծոր տվեց.

- Այնպես զզվելի՛ն են:

Եվ անմիջապես ուրախ ծիծաղեցին:

Ընթրիքին երեխաները հապշտապ էին ուտում, եւ՛ ախորժակ չկար, եւ՛ նեղվում էին, որ մեծերն այնպես են դանդաղում, ասես առանձնակի ոչինչ չկար:

Երբ արդեն ընթրիքն ավարտում էին, հայրը հանկարծ հայացքը հառեց երեխաներին ու երկար նայում էր նրանց, այնքան երկար, որ սկվեցին նրա մռայլ-անտարբեր հայացքի տակ: Ու վերջապես ասաց.

- Մե՛ծ հաճույք է հարբածների հետ հրմշտվելը:

Նադյան արագ կարմրեց ու սկսեց հավաստիացնել.

- Ոչ մի հարբած էլ չկա: Ոչ մի տեղ հարբած չկա: Նույնիսկ տարօրինակ է, բայց այսօր մեր տան մոտ ամբողջ օրը ոչ մի հարբած մարդ չենք տեսել: Նույնիսկ զարմանալի է:

Կատյան ուրախ ծիծաղեց ու ասաց.

- Միայն նվերների մասին են մտածում ու խմել չեն ուզում: Ժամանակ չունեն:

Վերջապես ընթրիքն ավարտվեց: Վազեցին հագնվելու: Աղջիկներն ուզում էին տոնական զարդարվել, բայց մայրը վճռական ընդդիմացավ.

- Ո՞ւր: Ինչի՞ համար: Գեղջուկների մեջ հրմշտվելո՞ւ:

Եվ նրա հանկարծակի տագնապած ողջ տեսքից ու գորշ, անարտահայտիչ դեմքից երեւում էր, որ ոչ մի դեպքում թույլ չի տա փչացնեն տոնական զգեստը:

Օրիորդները ստիպված սովորական շորեր հագան:

Վերջապես դուրս եկան տնից: Կտրուկ վայրէջքով վազեցին դեպի գետը: Եվ հանկարծ, տեղ հասնելուն պես, տեսան Ծուտկիններին:

Ստիպված էին միասին գնալ: Տհաճ էր:

Տհաճ էր նաեւ Ծուտկինների համար: Ոչ մեկը մյուսից շուտ տեղ չի հասնի: Պարծենալու, ձեռ առնելու հնարավորությունը կորսված էր:

Ծուտկիններն Ուդուեւներին ծաղրելու տարբեր ձեւեր էին մտմտում: Ճանապարհին մի քանի անգամ քիչ մնաց կռվեին:

Երեկոն ցերեկվա նման էր՝ աշխույժ ու աղմկոտ:

Քաղաքի վրա խաղաղ առկայծում էին աստղերը, ինչպես միշտ այնքան հեռու, այնքան աննկատելի՝ ցրված հայացքի համար, եւ այնքան մոտ, երբ ուղիղ նայում ես նրանց երկնագույն կետերին:

Թափանցիկ գունատ երկինքը արագ մթնում էր, եւ ուրախալի էր նայել այնտեղ անընդհատ կատարվող գաղտնածեսին, որ բացում էր գիշերվա հեռավոր աշխարհները:

Մենաստանում զանգահարություն սկսվեց. իրիկնային ժամասությունն ավարտվում էր: Պայծառ ու թախծոտ հնչյունները դանդաղ տարածվում էին գետնի երեսին: Դրանք լսելիս ուզում էիր երգել եւ լալ, եւ գնալ ինչ-որ տեղ:

Երկինքն էլ ականջ դնում, ուշադիր լսում էր պղնձյա պայծառ եղերերգը. նուրբ գորովագին երկինքը: Հալվելով՝ ամպիկներն էլ էին լսում պղնձե խլածայն հեկեկոցը. խաղաղ, թեթեւ ամպիկները:

Եվ օդը քնքշացած-տաք էր շատրվանում, ասես բազում խնդագին շնչառումներից: Երեխաներին էլ էր հպվում բարձր երկնքի ու խաղաղ հալվող ամպիկների գորովալից քնքշությունը: Ու հանկարծ ողջ շրջակայքը, եւ՛ զանգերի լացը, եւ՛ երկինքը, եւ՛ մարդիկ, մի պահ մարեցին, եւ ամեն ինչ դարձավ մեղեդի:

Ամեն ինչ մեղեդի դարձավ մի պահ, բայց պահն էլ մարեց-անցավ, եւ շուրջը նորից իրեր էին ու խաբկանքներ իրական աշխարհի:

Երեխաները քաղաքից շտապում էին Օպալիխայի հովիտը:

Իսկ քաղաքում մարդաշատ ու աղմկոտ էր եւ կարծես՝ ուրախ: Տների վրա փողփողում էին դրոշները: Փողոցներում տոնական լույսեր էին վառվում, ու դրանից տեղ-տեղ ճարպի զզվելի հոտ էր գալիս:

Բազմություններ էին անցնում փողոցներով, վարընթաց նրբանցքներով, Սաֆատ գետի առափնյակով: Ամբոխի մեջ թրեւում ու ծիծաղում էին երեխաները: Եվ ամեն ինչ ուրախ ու զնգուն էր, ինչպես հեքիաթում, եւ ինչպես չի լինում կյանքում՝ սովորական ու գորշ: Եվ դրանից, ընդհանուր գվվոցով ամբողջովին պարուրված, մարդկային խոսքը առավել զնգուն ու անսպասելիորեն իրականանալի էր թվում:

Կառքեր էին անցնում՝ պատվավոր հյուրերով, եւ ժպտում էին ամբոխին ծանր ու մեծ պարոնների ու տիկնանց սիրալիր դեմքերը:

Կառքերից կամացուկ, անհասկանալի օտար խոսք ու թեթեւ ծիծաղ էր լսվում:

Թշնամի աչքերով էին նայում անցնող հարուստ պարոններին Ծուտկինները: Եվ նրանց մեջ չար ու հիմար մտքեր էին ծնվում:

Ու երբ արդեն դուրս էին գալիս քաղաքից, ավագ Ծուտկինը, ատամներն ապուշ բացելով, ասաց.

- Ուժե՛ղ կլիներ հիմա քաղաքը կրակ տայինք: Մե՛ծ հաճույք կլիներ՝ զեկուցեմ ձեզ:

Նրա քույրերն ու Կոստյան քրքջացին: Կատյան թոթվեց ուսերը, տագնապած գոչեց.

- Ի՞նչ եք ասում, ինչպե՞ս կարելի է: Ինչ սարսափելի բաներ եք ասում:

- Բայց ի՞նչ իրարանցում կլիներ,- թռչկոտելով ու ծղրտալով՝ ցնծում էր Կոստյան:

- Բայց դուք էլ կվառվեիք,- զարմանքով ասաց Նադյան,- ի՞նչ ունեք ուրախանալու:

- Ա՛յ քեզ բան,- առարկեց Նատալյան,- մե՞նք վառվելու ինչ ունենք: Հեչ էլ ափսոս չի:

Նադյան նայեց նրան: Տոնական ծխացող ճրագների թույլ առկայծումների մեջ Կոստյայի պեպենոտ դեմքն ու կարմրաշեկ մազերն ասես կրակով էին բռնվել, ու նրանից, որ ռունգերը թրթռում էին, թվում էր դեմքի վրայով կրակ է վազում:

VI

Տենդագին-ցնծուն հուզմունքից մղված՝ արագ վազեցին-հասան Օպալիխա:

Հեռվից արդեն լսվում էր մարդկային բազմության աղոտ ու ահեղ գվվոցը: Խուլ ու անուշ վախ էր բերում: Նրանք վազում էին գիշերային քամու պոռթկումների հետ խտացող խավարում: Նրանց հետ, մերթ առաջ անցնելով, մերթ հետ մնալով, շտապում էին մարդիկ: Մեծեր ու փոքրեր: Տղամարդիկ, կանայք, երեխաներ ու ծերեր: Առավելապես՝ երիտասարդներ: Եվ բոլորը նույնքան հուզված էին, ձայներն ընդհատուն էին հնչում, եւ ծիծաղը բարձրանում ու հանկարծ մարում էր:

Ճամփադարձից միանգամից բացվեց Օպալիխայի ողջ հովիտը՝ մթին, վախենալու-աղմկոտ, տագնապալի:

Տեղ-տեղ խարույկներ էին երեւում Օպալիխայի ծայրերին, ու դաշտը դրանից ավելի մթին էր թվում:

Հեռվում էլ էին կրակներ երեւում: Բայց եւ տեսնում էին, որ իրար հետեւից ծխալով մարում են ծխապատ-աղմկոտ դաշտի հեռվում: Ըստ երեւույթին ամբոխը տրորում էր խարույկները, կոպիտ սապոգներով դրանց հանկարծահաս, հրեղեն-ձգտող հոգիներն էր տրորում:

Եվ ավելի խուլ, ավելի անուշ վախ էր պատում Ուդոեւներին, թրթռում էր նրանց դողդողուն թիկունքներին: Բայց իրենց սիրտ էին տալիս:

Ծուտկիններին ուրախացնում էր, որ հրմշտոց է լինելու, անկարգություն, իրարանցում, ու հետո արդեն կկարողանան երկար պատմել տարբեր միջադեպերի հետաքրքիր ու նշանակալի մանրամասները:

Ավագ Ծուտկինը նայում էր աղմկոտ մթին դաշտին, հիմար քմծիծա-

ղում, հետո ուրախ-ուրախ ասաց.

- Հաստատ թույլիկներից մեկնումեկին ոտի տակ կտան: Այ կտեսնեք:

Սակայն Ուդեւոները չէին համարձակվում հավատալ դժբախտության ու մահվան մերձությանը: Այդ դաշտը՝ ամկոտ բազմությամբ, ու մա՛հ: Չի՛ կարող պատահել:

- Հաստատ առանց դրա չի լինի, մեկնումեկին կտրորեն,- տարօրինակ-անձանոթ ձայնով ասաց Շուտկին քույրերից մեկը:

Եվ ինչ-որ մեկը կոպիտ ու անուրախ-մթին ծիծաղեց խավարի մեջ:

- Երեւի,- անտարբեր ասաց Կատյան:

Մի պահ ձանձրույթ իջավ բոլորի վրա: Նրանից, որ մութ էր: Խարույկ-ների ակնթարթային ու անստույգ առկայծումներից: Եվ սկսեցին նայել ու ականջ դնել, եւ գնացին առաջ, ինչ-որ տեղ:

Խարույկներից լուսավորված դեմքերից,- առավելապես երիտասարդ,- անհոգ ձայներից ու ծիծաղից թվում էր, թե բոլորը շատ ուրախ են:

Ողջ դաշտում կանգնած, նստած, պտտվող աղմկոտ բազմություններ էին:

Ավելի ու ավելի ներքաշվելով այդ պղտոր բազմազանության մեջ՝ Ուդո-եւները կրկին վարակվեցին սովոր կացարաններն ու պատերը թողած մարդկանց ուրախությամբ ու զվարթությամբ:

Շատ ուրախ էր: Չափազանց ուրախ:

Շուտկիններն ինչ-որ տեղ կորան եւ այլեւս չհանդիպեցին: Փոխարենը՝ Ուդեւներն ուրիշ ծանոթների էին տեսնում: Շատերին տեսան: Ուրախ բառեր էին փոխանակում: Իրար գտնում ու կորցնում էին ամբոխի մեջ:

Առաջ էին գնում, գուցե եւ՝ կողք, ու դաշտն անվերջանալի էր թվում: Եվ այնքան հետաքրքրիր էր, որ անընդհատ նոր դեմքեր էին հանդիպում:

- Հա՛, շատ ուրախ է էստեղ: Չես էլ նկատի՝ գիշերն ինչպես անցավ,- ասում էր Նադյան՝ նյարդային հորանջելով ու կծկելով նիհարիկ ուսերը:

Երկար քայլեցին, կանգ էին առնում, նորից գնում, մոլորվում էին խա-րույկների արանքում, ականջ դնում օտար խոսակցություններին, իրենք էին խոսքի բռնվում լրիվ օտար մարդկանց հետ:

Սկզբում թվում էր՝ ինչ-որ նպատակի են գնում, որն ավելի ու ավելի մոտ էր, եւ ամեն ինչ որոշ էր ու կապակցված, չնայած եւ սուզվում էր բազմա-մարդության անուշ վախի մեջ:

Հետո հանկարծ ամեն ինչ կցկտուր դարձավ, կորցրեց կապը, եւ անի-մաստ ու տարօրինակ տպավորությունների ինչ-որ փերթեր էին պտտվում շուրջը...

VII

Ամեն ինչ կցկտուր ու անկապ դարձավ, եւ թվում էր իրերը՝ անհեթեթ ու անպիտան, ոչնչից են ծնվում: Հիմար ու թշնամի խավարից հայտնվում էր անսպասելի անհեթեթը:

Դաշտի կենտրոնում ժամանակին ինչ-որ բանի համար առու էին փորել: Խանդակը հիմա էլ կար՝ անպիտան, անվտանգ, հախուռն աճած, մթան մեջ սեւին տվող խոտերով, եւ չգիտես ինչու՝ սարսափելի ու տարօրինակ-կարեւոր էր թվում:

Երեխաները մոտեցան եզրին: Երկու հեռագրավարներ ոտքերը խանդակի մեջ կախած նստել ու զրուցում էին: Հիշում էին ծանոթ օրիորդներին եւ, չգիտես ինչու, մեծ հաճույքով անվայել բառեր օգտագործում:

Ուդուեւները քայլեցին առվի եզրով: Տեսան վրան գցած կամուրջը՝ փայտաշեն, ծուռումուռ բազրիքներով: Անցան կամուրջը: Բազրիքներն անհաստատուն, անհուսալի էին թվում:

Լյոշան վախվորած ասաց.

- Հրեն-գցեն էստեղ, ոտդ կջարդես...

- Մենք էլ կհեռանանք էստեղից,- ասաց Նադյան:

Խավարի մեջ ձայնն անվստահ ու երկչոտ էր հնչում: Տարօրինակ էր, որ հնարավոր չէր տեսնել ինչպես են շարժվում խոսող շրթունքները:

Ու նորից քայլեցին առաջ, խուլ գվվացող բազմության միջով, խարույկների լույսով լուսավորված շրջաններից անցնելով դեպի ակնակիր խավարը, ու նորից դաշտը անվերջ էր թվում:

- Ուր ես գնում, Է՛,- մի հարբած գջլոտ համոզում էր մյուսին:- Ախր կտրորեն ոջիլի նման:

- Թող տրորեն,- պատասխանում էր ընկերը,- գիտես կյա՞նքս եմ ափսոսում: Կտրորեն, վրես լացող չի լինի:

Մի ջրհոր տեսան: Կիսափտած տախտակներով ծածկած: Չգիտես ինչու՝ զարմացան:

Մի խմած գեղջուկ, գզգզված երկարուկ գլուխը ճոճելով, նայում էր ջրհորի մեջ ու ծոր տալիս.

- Ա՛-ախ:

Փախչում էր ջրհորից՝ ճչալով.

- Սալա՛նյա:

Ու նորից հարբած մարդու մանրիկ, գլորվող քայլերով վերադառնում էր խարխուլ շինվածքի մոտ:

Նայեցին: Ծիծաղեցին: Անցան: Դեռ երկար լսում էին նրա հարբած աղաղակները:

- Հետս դանակ եմ բերել,- խռպոտասաց մի լողլող ու լղար գջլոտ:

Ընկերը, որ նույնպիսի գջլոտ ու համարյա նույնքան երկար էր, քաղցր տենորով արձագանքեց.

- Ես էլ:

- Համենայնդեպս,- նորից լսվեց առաջինի խռպոտ ձայնը:

Ու լսվեց ինչպես է խնդմնդում մյուսը:

Անհաստատուն խավարի մեջ, խարույկների ջղային-թրթռուն լույսերում, շնչելով թաց փայտի քաղցրավուն ծուխը, գնում էին ինչ-որ տեղ, Լյոշան առջեւից, ետեւից՝ քույրերը:

Զեւացնում էին, թե սարսափելի չէ: Դաշտը նորից անվերջ էր թվում, նորից շփոթում էին խարույկները, իսկ ոտքերի հոգնածությունից ենթադրում էին, որ արդեն վաղուց են քայլում:

- Անընդհատ նույն պտույտն ենք տալիս,- ասաց Լյոշան: Եվ այդ բառերով արտահայտվեց ընդհանուր միտքը: Կատյան տխրեց, իսկ Նադյան շինծու ուրախությամբ ասաց.

- Ոչինչ, կհասնենք ուր պետք է:

Հանկարծ Լյոշան ընկավ: Ոտքերը վեր էին ցցվել, գլուխը չէր երեւում: Քույրերը նետվեցին նրա կողմը: Օգնեցին, որ դուրս գա. պարզվեց՝ ոտով-գլխով ինչ-որ անսպասելի փոս էր ընկել:

- Գնանք էստեղից, էստեղ վտանգավոր է,- ասաց Նադյան: Բայց հետո էլ սայթաքում ու սայթաքում էին խորդուբորդ գետնի վրա:

VIII

- Պարոնների սիրտն էլ է էն կողմ ուզում,- Ուդոեւների կողքին խոսեց նողկալի ձայնը:

Չէր երեւում, թե ով է խոսում եւ ով է ծիծաղում՝ չար բառերի համակրանքով:

Ու երեխաները հասկացան, որ ամբոխն այստեղ իսպառ թշնամական է, օտար, անհասկանալի ու անհասկացող: Իսկ այնտեղ, ուր վառվում էին խարույկները, գիմնազիստի ու քույրերի վրա խոժոռված դեմքեր էին երեւում:

Այդ թշնամական հայացքները շփոթեցնում էին երեխաներին: Անհասկանալի էր՝ ինչի՞ համար է թշնամանքը: Որտեղի՞ց հայտնվեց:

Ինչ-որ օտար մարդիկ մռայլ, անբարեհամբույր նայում էին կողքից անցնող երեխաներին:

Երբեմն լկտի կատակներ էին լսվում: Ու քանի որ դա ահռելի ամբոխի մեջ էր ու ոչ մեկի մտքով չէր անցնում պաշտպանել նրանց, սարսափն էր պատում երեխաներին:

Մի հարբած արհեստավոր վեր կացավ կրակի մոտից, մոտեցավ երեխաներին:

- Սամզե՛լ,- կանչեց նա:- Պատիվ ունեմ շնորհավորելու հանդիպման համար: Շատ հաճելի է: Ու ամեն տեսակ հաճույք կարանք պատճառենք ձեզ: Ուզում ենք պաչվենք:

Նա ճոճվեց: Հանեց գլխարկը: Գրկեց Կատյային: Համբուրեց ուղիղ շրթունքները: Դղրդացող քրքիջ պայթեց ամբոխի մեջ: Կատյան լաց եղավ:

Լյոշան ինչ-որ բան գոռաց, նետվեց հարբածի վրա ու հրեց նրան:

Հարբածը կատաղի գոռոաց.

- Ի՞նչ իրավունքով: Բրթո՛ւմ է: Բա որ ուզում եմ պաչե՞մ: Ի՞նչ վատ բան կա դրա մեջ:

Քույրերը կախվեցին Լյոշայի ձեռքերից: Արագ քաշեցին դեպի մութը: Շատ վախեցած էին: Վիրավորանքը վառում էր:

Ուզում էին հեռանալ այդ խավար ու անմաքուր տեղից: Բայց ճանապարհը չէին գտնում: Խարույկների լույսերը նորից շփոթեցնում էին, խավարն ավելի էին խավարում եւ ամեն ինչ դարձնում անհաստատուն ու ճոճվված:

Շուտով խարույկները սկսեցին մարել: Ու անծերպ մութ էր օդում: Ու սեւ գիշերը սեղմվեց խուլ գվվացող դաշտին, ծանրացավ նրա աղմուկների ու ձայների վրա: Նրանից, որ չէին քնել ու ամբոխի մեջ էին եղել, այդ գիշերը նշանակալի, միակ ու վերջին էր թվում:

IX

Վաղուց չէին այդտեղ, եւ արդեն զզվելի էր, զազրելի, սարսափելի: Խավարի մեջ անիմաստ, անհեթեթ, ուստի եւ նողկալի ինչ-որ կյանք էր եռում: Անտանիք մարդիկ, իրենց կացարաններից հեռու, հարբել էին ակնակույր գիշերվա վայրի օդով:

Նրանք զզվելի օղի ու ծանր գարեջուր էին բերել եւ ամբողջ գիշեր խմում ու գոռում էին խռպոտ-հարբած ձայներով: Գարշահոտ կերակուր էին ուտում: Անվայել երգեր էին երգում: Անամոթ պարում էին: Քրքջում: Մեկ այստեղ, մեկ այնտեղ քաշկռտուք էր լսվում: Զազրելի ծղրտում էր հարմոնիկը:

Ամենուր գարշահոտ էր, եւ ամեն ինչ զզվելի էր, մթին ու սարսափելի:

Եվ ամենուր հարբած ու խռպոտ ձայներ էին հնչում: Տեղ-տեղ՝ գրկախառնված տղամարդիկ ու կանայք: Մի թփի տակ երկու զույգ ոտք էր ցցվել, ու թփի տակից լսվում էր բավարարվող կրքի ընդհատուն, զզվելի ծղրտոցը:

Սակավաթիվ ազատ տեղերում հավաքվել էին շուրջանակի: Ներսում ինչ-որ բան էր կատարվում:

Մի տեղ պարում էին ինչ-որ գարշելի տղեկներ: Այուս շրջանի մեջ կատաղի պար էր բռնել մի անքիթ կնիկ եւ անամոթ թափահարում էր կեղտոտ ու ճղճղված փեշը: Հետո սկսեց երգել անտանելի, նողկալի ձայնով: Երգի բառերը նույնքան անամոթ էին, որքան նրա սարսափելի դեմքը, որքան նրա զարհուրելի պարը:

- Ինչի՛դ է պետք դանակը,- ինչ-որ մեկին խստաձայն հարցնում էր քաղաքապահ ոստիկանը:

- Բանվոր մարդ եմ,- լսվեց լկտի ձայնը,- գործիքը պատահական վերցրել եմ հետս: Կարամ ծակեմ էլ:

Քրքիջ լսվեց:

Եվ ահա այդ նողկալի ամբոխի միջով, անժամանակ արթնացած կյանքի մեջ նետված՝ անցնում էին երեխաներն ու կորչում բազմության մեջ: Դաշտը անվերջ էր թվում, որովհետեւ պտտվում էին ոչ մեծ տարածության մեջ:

Անցնելն ավելի ու ավելի դժվար էր դառնում. ավելի ու ավելի էր սեղմվում շրջակայքը:

Թվում էր՝ շուրջը անընդհատ հառնում ու հառնում են հայտնի չէ որտեղից հայտնված մարդիկ:

Ու հանկարծ ամբոխն Ուդոեւների շուրջը շարժվեց: Ավելի սեղմեցին: Եվ անմիջապես թվաց գետնի վրա տարածվում ու դեպի դեմքերն է սողում ծանր տոթը:

Մթին երկնքից խավար ու տարօրինակ պաղություն էր ծորում: Ուզում էին վեր նայել, անհատակ երկնքին, սառը աստղերին:

Լյոշան հենվեց Նադյայի ուսին: Վայրկենական նիրհը պատեց նրան...

...Թռչո՛ւմ է կապուտակ երկնքում, թեթեւ, ազատ թռչունի պես...

Մեկը հրեց: Լյոշան արթնացավ: Քնատ ձայնով ասաց.

- Քիչ էր մնում քնեի: Նույնիսկ ինչ-որ երազ տեսա:

- Մի քնի,- մտահոգ ասաց Նադյան,- ախր իրար կկորցնենք ամբոխի մեջ:

- Իսկ ես կքնեի,- կամացուկ ու խղճալի ասաց Կատյան:

- Իսկապես, հանկարծ չկորցնենք իրար,- ասաց Նադյան: Ջանում էր առույգ երեւալ: Վստահ ասաց.

- Լյոշային արանքում կպահենք:
- Լա՛վ, Է՛,- ծույլ ասաց Լյոշան:
Գունատ ու զարմանալիորեն ծանծրացած էր:
Բայց քույրերը նրան իրենց արանքը գցեցին: Զվարճալի էր, որ նրան պահպանում են հրմշտոցից: Մինչեւ որ ամբոխը չխախտեց կարգը՝ դեսուդեն մղելով նրանց:
- Հասանք, իսկը բաժանելու ժամն է,- լսվեց մի զարմանալի ուրախ ու անտարբեր ձայն: Եվ ինչ-որ մեկը պատասխանեց.
- Համբերի՛, բաժանելուն կարգված պարոններն առավոտը կբարեհաճեն:

X

Նեղվածք ու խեղդուկ էր, ուզվում էր դուրս գալ ամբոխից, ազատվել, շնչել ողջ կրծքով:
Բայց դուրս գալ չէին կարող: Խճճվել էին մթին ու անդեմ ամբոխի մեջ, ինչպես մակույկն է խճճվում եղեգնուտում:
Արդեն անհնար էր գտնել ճանապարհը, սեփական կամքով դառնալ այս կամ այն կողմ: Ստիպված էին քարշ գալ ամբոխի հետ. եւ ծանր ու դանդաղ էին ամբոխի շարժումները:
Ուղեւորները դանդաղ ինչ-որ տեղ էին շարժվում: Ստածում էին, թե առաջ են գնում, որովհետեւ բոլորն էին գնում այնտեղ: Բայց հետո հանկարծ ամբոխը հետ էր քաշվում ծանր ու դանդաղ: Կամ դանդաղ մի կողմ էր հոսում: Եվ այդ ժամանակ արդեն լրիվ անհասկանալի դարձավ, թե ուր պիտի գնան, որտեղ է նպատակը եւ ուր է ելքը:
Մոտիկ, մի քիչ կողքի, մթին պատեր տեսան: Չգիտես ինչու՝ ուզեցին հասնել դրանց: Ինչ-որ ծանոթ, տնական բան էր զգացվում այդ պատերի մեջ:
Իրար ոչինչ չասացին, բայց սկսեցին խցկվել դեպի այդ մթին պատերը:
Ու շուտով հայտնվեցին ժողովրդական թատրոններից մեկի մոտ:
Թվում էր՝ պատի տակ մի ծանոթ բան կա, որ կպաշտպանի, տաքուկ մի բան, դրա համար էլ սարսափելի չէր:
Պատի մթին գլուխը բարձրանում, ծածկում էր երկնքի կեսը, ու տարերային-անեզր ամբոխի զարհուրելի տպավորությունը դրանից չքվում էր:
Երեխաները պատին սեղմված կանգնել էին: Երկչոտ նայում էին մարդկանց՝ շուրջը ալիք տվող գորշ, աղոտ կերպարանքներին: Եվ շոգ էր սեղմվող բազմության շնչառությունից:

Իսկ երկնքից պոռթկումներով թափանցում էր պաղությունը, ու թվում էր՝ երկրային խեղդուկ օդը պայքարում է երկնային պաղության հետ:

- Լավ կլիներ տուն գնայինք,- խղճալի ասաց Կատյան:- Մեկ է, մոտ չեն թողի:

- Ոչինչ, կսպասենք,- պատասխանեց Լյոշան՝ ջանալով աշխույժ եւ ուրախ թվալ:

Այդ պահին ամբոխի միջով ծանր շարժում անցավ, ասես ինչ-որ մեկը խցկվում էր դեպի պատը, ուղիղ երեխաների վրա: Նրանց սեղմեցին պատին, եւ իսպառ խեղդուկ ու անշնչելի դարձավ:

Հետո ամբոխը ուժով կիսվեց, ու թվաց պատը դողում ու տատանվում է, եւ ամբոխից ասես դուրս լողացին երկու շատ գունատ ուսանող:

Մի աղջկա էին տանում ձեռքերի վրա, եւ նա անկենդան էր թվում: Գունատ ձեռքերը կախվել էին մեռյալի պես: Եվ ամուր սեղմված շրթունքներով ու փակ աչքերով դեմքին աղոտ կապտություն էր նստել:

Ամբոխի մեջ դժգոհ քրթմնջոց լսվեց.

- Թույլիկ է, բայց խցկվում է:

- Ծնողներն ուր են նայում, թողել են սրա նմանին:

Ամբոխի մոլորված խոսքի մեջ ինչ-որ անկարելի բանի արդարացման ցանկություն էր լսվում, ու թվում էր՝ այդ մարդիկ մի պահ հասկացել են, որ չպիտի այստեղ լինեն ու ճզմեն իրար:

XI

Նորից կոպիտ ու ծանր շարժվեց ամբոխը: Մարմինը ցավագին արձագանքում էր բիրտ հրմշտոցին: Կոշտ սապոգները տրորում էին թեթեւ հագած մանկական ոտքերը:

Պատի տակ էլ անհնար էր կանգնել: Սեղմեցին, հետ մղեցին: Ճզմեցին պիրկ օդակով: Նորից սարսափելի էր խեղդուկ բազմության մեջ:

Երեխաների գլուխները ջանքով էին բարձրանում վեր. բերանն ագահ որսում էր երկնային պաղության փոխնիփոխ շիթերը, իսկ կուրծքը խեղդվում էր խուլ ու անհասկանալի հրմշտոցի մեջ:

Անհասկանալի էր՝ շարժվո՞ւմ են, թե՞ կանգնած են: Եվ՝ շա՞տ ժամանակ է անցել:

Տարածության տառապագին ծարավը չարչարում էր երեխաներին:

Նաեւ ծարա՛վը:

Վաղուց ու դանդաղ մոտենում էր: Ու հանկարծ արտահայտվեց խղճալի բառերով.

- Ջուր եմ ուզում,- ասաց Լյոշան:

Ասաց ու զգաց, որ շրթունքները վաղուց չոր են,եւ բերանը կծկվել ու դառնացել է չորությունից:

- Ես էլ,- ասաց Կատյան՝ դժվարությամբ շարժելով ճաքճքած ու անգույն շրթունքները:

Նադյան լուռ էր: Բայց գունատված ու միանգամից սմքած դեմքից ու չոր կրակով վառվող աչքերից երեւում էր, որ ծարավը նրան էլ է տանջում:

Խմե՛լ: Գոնե մի կում ջուր: Ջո՛ւր, սո՛ւրբ, սիրելի՛, սա՛ռը, թա՛րմ:

Բայց ոչ մի տեղ ջուր չկար:

Ու հեռավոր երկնքի պաղությունն էլ ակնթարթային էր դառնում, աղոտ, անստույգ. մի պահ հայտնվում ագահ բացված բերաններում ու չքանում էր:

Նադյան զկռտաց: Ցնցվեց: Նորից զկռտաց, ու նորից, ու նորից:

Անտանելի՛ է: Այնպես տառապալի է զկռտոցը նեղվածքի ու խեղդուկի մեջ:

Լյոշան վախեցած նայեց Նադյային: Ինչ գունա՛տ է:

- Տե՛ր Աստված,- զկռտալով ասաց Նադյան:- Ի՞նչ տառապանք է: Թե ինչի՞ եկանք...

Կատյան կամացուկ լաց եղավ: Մանրիկ արցունքներն արագ վազում են իրար ետեւից, եւ անհնար էր զսպել, եւ անհնար էր մաքրել. այնպես են սեղմում՝ ձեռքդ չես բարձրացնի:

- Ի՞նչ եք բրթբրթում,- մոտակայքում ծվաց բարալիկ ձայնը:- Ախր կխեղդեք:

Խռպոտ, հարբած բասը չար պատասխանեց.

- Ի՞նչ: Ես՝ քե՞զ: Դուրը չի գալի՞ս: Ուրեմն դու ինձ խեղդի: Էստեղ բոլորը հավասար են, գրողը քեզ տանի:

- Վա՛յ, վա՛յ, սեղմո՛ւմ են,- նորից ծղրտաց նույն բարալիկ ձայնը:

- Մի ղժժա, փսլնքո՛տ,- խռխռում էր կատաղի բասը:- Կամ տուն կհասնես, կամ քաշ տալով կտանեն: Մեկ է, փոր-փսորդ թափելու են, ա՛յ թուլա:

Մի կարճ ակնթարթից բարալիկ ու սուր ճչոց լսվեց՝ անբառ, խղճալի ու խղճուկ: Եվ ի պատասխան՝ մոլեգին ճռնչոց.

- Մի՛ ղժժա:

Հետո ճզմված թույլ աղաղակ:

Մեկը գոռաց.

- Երեխա ճզմեցի՞ն: Ոսկորները խշրտում են: Երկնայի՞ն տիրուհի:

Ձայնը մոտիկ էր լսվում, բայց ամբոխը ծածկում էր բղավողին:

Իսկ հետո թվաց՝ ինչ-որ տեղ հեռվում է ճչում: Հե՞տ էին մղել, թե՞ ինքն էր խեղդվելով սողացել հեռու:

Ամբոխն այնպես էր սեղմել երեխաներին, որ անհնար էր շնչել: Խռպոտ շշուկով էին խոսում իրար հետ: Անհնար էր շրջվել: Դժվար էին նայում իրար:

Ու սարսափելի էր նայել ադամամութի աղոտ աղջամուղջի մեջ կապարե վախով մթագնած սիրելի դեմքերին:

Նադյան շարունակում էր գկռտալ, Կատյայի գկռտոցն էլ բռնեց:

Ծուրջբոլորը, այդքան սարսափելի եւ այդքան անհեթեթ սեղմված ողջ ամբոխի մեջ մի տառապագին եւ չգիտակցված լինելուց՝ առավել տառապագին ցանկություն էր զգացվում՝ ազատվել այդ սարսափելի մամլակից:

Բայց ելք չկար, եւ կատաղությունը եռում էր այդ ընդարձակ դաշտում, այդ լայնարձակ երկնքի տակ սեփական անհեթեթ կամքով ճզմվող անմիտ ամբոխի մեջ

Մարդիկ գազանացել ու գազանային չարությամբ էին նայում երեխաներին:

Խռպոտ, զարհուրելի խոսքեր էին լսվում: Ինչ-որ մեկը մոտակայքում անտարբեր ու զարմանալիորեն հանգիստ ասաց, որ արդեն մահացու ճզմվածներ կան:

- Էնպես են հուպ տվել, որ հանգուցյալն էդպես կանգնած էլ մնացել է,- մոտիկից լսվեց տրտնջացող շշուկը,- լրիվ կապտած, էնպես վախենալո՛ւ է, ու գլուխը ճոճվում է:

- Լսո՞ւմ ես, Նա՛դյա,- շշուկով հարցրեց Կատյան:- Այ, ասում են, մեռել է կանգնած, ճզմվա՛ծ:

- Վայ թե սուտ են,- շշնջաց Նադյան,- երեւի ուշքն է գնացել:

- Իսկ գուցե ճի՞շտ է,- ասաց Լյոշան: Ու սարսափ կար նրա խռպոտ ձայնի մեջ:

- Չի կարող պատահել,- վիճում էր Նադյան,- մեռածը կընկներ:

- Ո՞ւր ընկներ,- պատասխանեց Լյոշան: Նադյան լռեց: Ցկռտոցը նորից սկսել էր տանջել նրան:

Մի ալեհեր, գզգզված պառավ, ձեռքերը գլխավերեւում թափահարելով, ասես լողալով, դուրս պրծավ ամբոխից՝ ուղիղ Ուդոեւների վրա: Խելակորույս աղաղակելով՝ առաջ մղվեց նրանց կողքով, եւ այնպես նեղվածք ու ծանր էր, որ թվաց՝ մեխի պես իրենց միջով է անցնում:

Նրա խելակորույս աղաղակները, նրա տառապագին հայտնությունը ադամամութի աղոտ ու պղտոր մեգի մեջ՝ ծանր քնի ուրվականի պես էին:

Եվ այդ պահից արդեն շնչահեղձ լինող երեխաների գիտակցության մեջ ամեն ինչ տենդ էր ու զառանցանք:

XII

Վերջապես, տառապալից ու սարսափելի գիշերից հետո, սկսեց արագ լուսանալ:

Հապճեպ, ցնծուն, մանկան պես ուրախ շառագունեց, խնդաց վարդագույն ամպիկների արշալույսը: Միգապատ հեռվում կայծեր բռնկվեցին: Ու մինչ հողը մթին ու խստաշունչ էր, երկինքն արդեն ամբողջովին ցնծություն էր շնչում հավերժական հաղթության համաշխարհային խնդությամբ: Ու մարդիկ... Մարդիկ՝ ի՞նչ: Մարդիկ դեռ պարզապես մարդիկ են...

Խավար, մեղսավոր, հողով ծանրացած երկրի եւ կրկին պայծառացած երանելի երկնքի արանքում տարածվել էր բազում բազմաց շնչից արձակվող թանձր շոգին:

Գիշերվա պաղությունը, հյուսվելով երկնային ոսկե երազներին, վառվում էր թեթեւ ամպերի մեջ, արշալույսի շողերում:

Իսկ ամբոխը, այնպես զարմանալի, այնպես անսպասելի պայծառացած վերից թափվող արշալույսի ծիծաղով, այդ ահռելի երկրային ամբոխը ամբողջովին ներծծված էր չարությամբ ու վախով:

Ծանր շարժվում էր՝ մղվելով առաջ. քաղաքից նոր եկածները առջեւում կանգնածներին բութ ու չար հրում էին դեպի նվերներով մարագները:

Արշալույսի անմեռ ոսկու ներքո խեղճուկրակ գավաթների անագն էր ծգում մարդկանց դեպի շփոթն ու նեղվածքը:

Տենդի ու զառանցանքի մեջ մտքերը դանդաղ խռնվում էին երեխաների գիտակցության մեջ, շնչահեղձ մթին գիտակցության, եւ ամեն միտք վախ ու տխրություն էր: Անխնա վրա էր հասնում կործանումը: Սեփական՝ն կործանումը: Կործանումը սիրելիների՛: Եվ ո՞րն է ավելի ցավագին:

Ասես երբեմն արթնանալով՝ սկսում էին ճչալ եւ բողոքել, եւ աղերսել:

Նրանց խռպոտ ձայները թույլ թռչում էին վեր,- թեւը ջարդած վիրավոր թռչնի պես,- ու խղճուկ ընկնում, սուզվում էին բութ ամբոխի խուլ գվվոցի մեջ:

Խոժոռ մարդկանց աղոտ ու դժնի հայացքներն էին նրանց պատասխանը:

Տխրությունը սեղմում էր շունչը, չար, աղետավոր բառեր էր շշնջում:

Եվ արդեն հեռանալու հույս չկար: Մարդիկ չար էին: Ե՛վ չար, եւ՛ թույլ: Չէին կարող փրկել, չէին կարող փրկվել:

Ամենուր աղաչանք էր հնչում, աղաղակներ, տնքոցներ. իզուր էր աղաչանքը:

Եվ ո՞ւմ աղաչես այստեղ, այս ամբոխի մեջ:

Արդեն ասես մարդ էլ չէին. խեղդվող երեխաներին թվում էր՝ կատաղի դեւեր են մոլեգին նայում եւ անձայն քրքջում են մարդկանց պատռվող, քայքայվող դիմակների տակից:

Ու դիվական դանդաղ երկարում էր դիմակահանդեսը: Ու թվում էր վերջ չի լինի նրան, վերջ չի լինի այդ սատանայական կաթսայի եռմանը:

XIII

Սրընթաց բարձրացավ արեւը, ցնծագին բորբոքված, չար Վիշապ:

Ամբոխն ալեկոծվեց:

Այնպես հստակվեց շուրջն ամեն ինչ: Ասես անտեսանելի ձեռքով քաշված՝ թափվեցին հնամաշ դիմակները:

Դիվական չարությունն էր եռում շուրջբոլորը, տենդի մեջ ու զառանցանքում: Ամենուր կատաղի, սատանայական մռութներ էին: Սեւ բերանները՝ աղոտ դեմքերին, կոպիտ բառեր էին վիժում: Լյոշան տնքաց: Մի շիկամազ չարք, չոր աչքերը շողացնելով, մռնչաց նրա վրա.

- Ընկել ես էստեղ, ուրեմն համբերի: Մենք քեզ չենք կանչել: Ուշքդ տեղը բեր, շաքարած սրիկա՛: Աղիքներդ կթափենք:

Վայրագ Օձը վայրենացնում էր մարդկանց:

Թվում էր՝ արեւը մահացու բարձունքի է հասել, եւ հանկարծ կանգնեց բարձր ու անողոք:

Եվ այնպես շոգ ու խեղդուկ դարձավ, եւ ծարավն այնպես էր տանջում բոլորին:

Ինչ-որ մեկը հեկեկում էր:

Մեկը խնդրում էր խղճալի.

- Գոնե երկինքը մի պուտ ջուր տար:

Կատյան զկռտում էր:

Երբեմն տարօրինակ ու սարսափելի ծանոթ դեմքեր էին հայտնվում: Ինչպես բոլոր դեմքերն այդ գազանացած ամբոխի մեջ, նրանք էլ քարացած էին զարհուրելի փոխակերպման մեջ:

Նրանց նայելն ավելի սարսափելի էր, քան անծանոթներին, որովհետեւ ծանոթ դեմքի գազանանալն ավելի ցավոտ էր զգացվում:

Լյոշան զգաց, որ մեկը սեղմում է ուսերը: Ծանր ճզմում էր Հողին: Խավար, կոպիտ հողին:

Ինչ-որ մեկը փորձում էր բարձրանալ վրան:

Մի քանի տառապալի րոպե: Հետո թեթեւացման կարճ ակնթարթ: Հետո վրան բարձրացածի սապոգն իջավ Լյոշայի գլխին: Լյոշան լսեց Նադյայի խուլ ճիչը:

Մթին ու ծանր մեկը վրայով առաջ անցավ, ուսերի ու գլուխների վրայով, ու տարօրինակ ճոճվում էր օդում:

Լյոշան բարձրացրեց գլուխը, որ օդ առնի բարձր երկնքից: Բայց տոթ էր բարձունքում:

Երկինքը շողում էր վառ, հանդիսավոր, անհասանելի բարձր, արեւմտյան կեսին փետրավոր ամպերի քնքուշ շաղ եկած սադափներով:

Հանդիսավոր լույսի ծովը ծփում էր հենց նոր բարձրացած արեւից: Եվ արեւը նոր էր, վառ, վեհատեսիլ ու կատաղի-անտարբեր: Ընդմիշտ անտարբեր: Եվ նրա ողջ շքեղությունը շողում էր տենդի ու զառանցանքի գվվոցի վրա:

Ինչ-որ մեկը ծանր քայլում էր Լյոշայի ոտքեր վրա:

Կատյան ծանր ու տառապալի զկռտում էր:

- Վե՛րջ տուր,- խռպոտ գոչեց Լյոշան:

Կատյան ծիծաղեց: Ծիծաղն ու զկռտոցը միասին ծանր ու խղճուկ էին: Եվ արդեն դաշտի ողջ արձակության վրայով ճիչերի, տնքոցների, ծղրտոցների ծանր, անընդմեջ գվվոց էր անցնում:

Եվ այդ ժամանակ վրա հասան փոխադարձ անմիտ չարության րոպեները: Մարդիկ խփում էին իրար, որքան թույլ էր տալիս նեղվածքը: Քացահարում էին իրար: Կծում էին: Բռնում մեկմեկու կոկորդը, խեղդում: Ավելի թույլերին քաշում էին գետնին ու կանգնում վրան: Ճիչերն ու տնքոցները, աղերսանքը, անեծքները, ամենը, որ լսում էր Լյոշան, կրկնում էր անկենդան, խեղդված ձայնով, ու երկու տիկնիկների պես նրա ետեւից նույնը թոթովում էին քույրերը:

XIV

Աղերսանքներն ու տնքոցները, ասես նիրհի մեջ, հանկարծ հանդարտվեցին:

Կեսժամանոց կարճ ու զարմանալի լռություն էր՝ տենդի, անսահման հոգնության, անբառ ու ահարկու զառանցանքի:

Զառանցանքի գվվոցը ծավալվում էր ամբոխի վրայով, անբառ գվվոցը, այնպես ճզմված, այնքան սարսափելի:

Եվ արդեն զառանցանքն արդեն ամենուր էր, ու զառանցական ծխի մի-

ջով երեքի սրտում էլ մարմրում էր կործանման ահարկու գիտակցումը:

Երկու քույրերը ծանր զկռտում էին:

- Աստծու հրեշտա՛կ,- մոտիկ ծղրտաց ինչ-որ մեկը:

Ամբոխի մեջ կիսաճզմված մարդկանց առավոտի նիրհը երբեմն ընդհատվում էր հուսահատության վայրի աղաղակներով:

Ու կրկին լռություն էր տիրում, ու սարսափելի գվվոցն անցնում էր ամբոխի վրայով՝ չբարձրանալով դեպի ցնծուն տարածքները, բարձունքներն անշարժ չար Օձի:

Ինչ-որ մեկը տառապագին զկռտում էր: Թվում էր՝ մեռնում է տառապանքով:

Լյոշան ականջ դրեց ու հասկացավ, որ Նադյան է զկռտում:

Լյոշան դժվարությամբ նրա կողմը դարձրեց գլուխը:

Նադյայի կապտած շրթունքները բացվում ու փակվում էին տարօրինակ մեխանիկական շարժումով: Աչքերը չէին նայում, դեմքը աղոտ մեռելագույն էր:

XV

Անդորրի հոգեմաշ ժամանակն անցավ: Եվ հանկարծ անմիտ գվվոցի ու աղաղակների մրրիկը ոռնաց խուճապահար ամբոխի վրա: Վայրի բղավոցները մտրակում էին օդը:

Չարությունից ծամածռված դեմքերից երեւում էր, որ դաշտում արդեն մարդիկ չեն: Դեւերը նետել էին իրենց անցավոր դիմակներ ու անտանելի ցնծում էին:

Ամբոխի մեջ մի քանի հոգի այդ րոպեներին հանկարծ խելագարվեցին: Ոռնում ու հեծեծում էին եւ ինչ-որ անհեթեթ ու ահարկու բան աղաղակում:

Մարդկանց ոտքերի տակից հաճախ նախամահու վայրի ճիչեր էին պոկվում. այնտեղ, գետնին, ընկածներն էին, տապալվածները, որ արդեն չէին կարող բարձրանալ:

Եվ այդ աղաղակները ցնցեցին հոգին այն սակավների, որ դեռ մարդ էին մնացել մարդանման դեւերի այդ ամբոխի մեջ:

Կողք կողքի կանգնած էին քրջոտ խուլիգանն ու նրա ընկերուհին՝ անառակ ու հարբած: Նրանք նայում իրար ու չար խոսքեր էին նետում: Խուլիգանը տարօրինակ ցնցում էր ուսը:

Մոլեգին չարության ջանքով ազատեց ձեռքը: Ձեռքին շողաց դանակը: Արեգակի վառ շողերի մեջ այնպես սուր ծիծաղեց սրընթաց պողպատը:

Դանակը խրվեց անառակի մարմնի մեջ: Ծղրտաց.

- Անիծվե՛ս դու:

Խեղդվեց սեփական ծղրտոցից: Մեռավ:

Խուլիգանը ոռնաց: Կռացավ նրա վրա: Կրծում էր կարմիր, տռուզ թուշը:

- Մեզ լրիվ ճզմեցին, հիմա կմեռնենք,- խռպոտ ասաց Կատյան:

Լյոշան աչքի անկյունով նայեց նրան, անմիտ ծիծաղեց եւ բարձր ու հստակ ասաց.

- Նաղյային ճզմել են: Սա՛ռն է:

Եվ այտերով հոսեցին խոշոր արցունքները, իսկ գունատ շրթունքներն անմիտ ժպտում էին:

Կատյան լուռ էր: Դեմքը սկսեց կապտել, իսկ աչքերը մարեցին:

Լյոշան խեղդվում էր:

Ոտքերն ինչ-որ փափուկ բանի առան: Գետնից սուր գարշահոտ էր բարձրանում: Ինչ-որ բան խռխռոցով շուռումուռ էր գալիս ներքեւում:

- Գարշահոտում է,- Լյոշայի թիկունքում ասաց զարմանալիորեն անտարբեր ձայնը:- Տրորեցին կնկան, փորը թափել են:

Կատյայի դեմքը տարօրինակ կապտագույն էր դառել, անկենդան սմքել էր: Լյոշան հանկարծ ցուրտ զգաց:

XVI

- Ժամը վեցն է,- ասաց ինչ-որ մեկը:

Ձայնից զգացվում էր, որ ուժեղ, հանգիստ մարդ է խոսում, ում համար սարսափելի չէ ամբոխի մեջ:

- Դեռ չորս ժամ ունենք ապրելու,- պատասխանեց երկչոտ, խեղդվող ձայնը:

- Ինչի՞ ենք սպասում,- խլածայն գռմռաց մեկը:

- Բոլորս էլ կմեռնենք,- հանգիստ ու կամացուկ պատասխանեց մի կանացի կրծքային ձայն:

Մեկը հուսահատ, խզվող, կիսամանկական ճիչ արձակեց.

- Եղբայրնե՛ր, դեռ էդքան ժամանակ խեղդվելո՞ւ ենք:

Բորբոքված գվվոցը վախեցած թռչունների աղմկոտ, սեւաթեւ երամի պես դեսուդեն նետվեց դաշտում: Թպրտաց, վնգվնգաց, ցնցվեց: Իսկ նրան ընդառաջ նետվեց ամբոխը:

- Ժամանակն է, եղբայրնե՛ր,- գոռաց ինչ-որ մեկի ծղրտան ձայնը:- Ուշքներդ վրա պահեք, էդ սատանեքը լրիվ կսրբեն:

- Ծարժվի՛, շարժվի՛,- գվվում էր շուրջը:

Անկանգ ու ծանր արդեն ողջ ամբոխն էր շարժվում:

Իսկ Լյոշային ակնդետ նայում էին քույրերի խոնարհված դեմքերը՝ նրա ուսերին ծանրացած ու պաղ:

Սիրելիների ցրիվ մազերը խտղտացնում էին Լյոշայի գունատ այտերը: Ոտքերը չէին գնում: Ամբոխը տանում էր երեքին՝ եւ Լյոշային, եւ քույրերին:

- Բաժանո՛ւմ են,- գոռաց ինչ-որ մեկը:

Երեւում էր, ու թվաց՝ ոչ հեռվում, ինչպես են օդ թռչում ինչ-որ խայտաբղետ կապոցներ:

- Գնացի՛նք,- մռայլ խռպաց չարչարված, նիհար գեղջուկը:

- Ի՞նչ եք կանգնել, գնացե՛ք,- խելագար հրում էին հետեւիններն առջեւիններին:

- Մերոնց չեն թողում, առաջ են խցկվում անիծվածները, մերը կանգնե՛լն է,- կատաղի գոռում էր մեկը:

Ու բոլոր կողմերից մոլեգին աղաղակներ էին լսվում.

- Ախպերնե՛ր, հուպ տու, անցի:

- Ի՞նչ ես նայում դրան, կոկորդից բռնի, գցի ոտիդ տակ:

- Հո՛ւպ տու, ի՞նչ ես նայում:

- Չեն տալիս, կվերցնենք:

- Վա՛յ, վա՛յ, ճզմեցին:

- Տե՛ր Աստված, աղիքներս դուրս են գալիս:

- Աղիքներդ բկիդ կանգնեն, սրիկայի՛ մեկը:

- Սորթի էդ աստրախանցի լրբին:

- Ծուտ արեք, շարժվեք,- առջեւում մռնչում էր գազազած ձայնը:

XVII

Ծուրջը ամենուր կատաղի սպառնալիք էր, հուսահատ դեմքեր:

Ծանր հոսք: Ու շարունակ նույն չարությունը...

Դանակը հատում էր շորը: Ու մարմինը:

Մղկտաց: Մեռավ: Կաղկանձեց: Մեռավ:

Սարսափելի՛ է:

Անկենդան նայում են սիրելիների կապտած դեմքերը:

Ինչ-որ մեկը քրքջում է: Ինչի՞ վրա...

Վերջը մոտ է: Ահա եւ մարագների պատերը...

Հաղթանդամ տղայի վեր պարզած ձեռքում ոսկե արեւալույսի մեջ

աղոտ փայլում է գավաթը: Եվ ձեռքը տարօրինակ ու անբնական է պարզված է դեպի երկինք՝ կենդանի ձողի պես:

Մեկը խփելու պես թափ տվեց գլուխը: Թոցրեց գավաթը. լարվածությունից կապտած ձեռքն այնքան թույլ էր պահել:

Գավաթը դանդաղ էր ընկնում, ծանր, աղեղ գծելով: Սահեց ինչ-որ մեկի մեջքի վրայով:

Հաղթանդամ տղան այլանդակ հայհոյեց:

Կարմրատակած էր, քրտնած, ու լարումից չռված աչքերի սպիտակուցները սովորականից խոշոր էին թվում:

Մեծ դժվարությամբ կռացավ գավաթի հետեւից: Երեւում էր՝ ինչպես են շարժվում արմունկները:

Հանկարծ նա խոնարհվեց, խուլ ճչաց:

Ինչ-որ մեկն ընկավ կորացած մեջքին: Ընկավ ու մռնչաց: Թպրտալով առաջ սողաց տապալվածի վրայով: Էլի մեկը ետեւից փորով ընկավ այդ երկուսի վրա: Երեքով ընկան: Խուլ ճիչեր լսվեցին: Վերեւինը փորձում էր վեր կենալ ու շատ բարձրահասակ էր թվում: Ամբոխը փակվեց տապալվածների վրա, եւ ամբոխի ծանր նստվածքից կարելի էր նկատել, թե ինչպես են հողին հավասարվել երկու ճզմվածները:

Ամրակազմ մի գեղջուկ, կապտակարմիր դեմքով, ուսերն ու արմունկները շարժելով, ազատեց աջ ձեռքն ու պարզեց առաջ: Նրան էլ ճզմեցին: Ձեռքը տարօրինակ ցնցվում էր օտար ուսի վրա, կարմրած՝ կարմիր գլխաշորի կողքին:

Կարմիր գլխաշորով կինը շրջվեց, ատամները խրեց ամրակազմ գեղջուկի ձեռքի մեջ: Նրա չարությունն անհասկանալի էր:

Գեղջուկն ահավոր գոռոցով հետ քաշեց ձեռքը: Կատաղությամբ գործի դրեց արմունկները: Թվում էր՝ ընդարձակվում է:

Նրան վեր մղեցին: Ընկավ ինչ-որ գլուխների վար, ու նրա տակ գվվացին չար ձայները: Ծնկեց ինչ-որ մեկի ուսերին: Նորից ընկավ:

Ընկնելով, բարձրանալով, նորից ընկնելով, չորեքթաթ անելով՝ շարժվում էր առաջ, ու նրա տակ ամբոխը հոծ, խորդուբորդ սալահատակ էր, ծանր շարժվող սառցադաշտ:

Եվ արդեն շատերն էին արմունկներով վեր հրմշտվում:

Ուսերի ու գլուխների վրայով դեպի բուֆետների տանիքները վազող մի քանի մարդ երեւացին:

Եվ արդեն շատերն էին տանիքներին բարձրացել:

XVIII

Երկու կին կպան իրար: Լուռումունջ, մռայլ: Մեկը մատները խոթել էր մյուսի բերանը ու պատռում էր: Արյուն երեւաց: Հուսահատ ծղրտոց լսվեց:

Դանակներով էին կռվում, որ ճանապարհ բացեն, ու ոտքի տակ էին տալիս սպանվածներին: Երբեմն սպանողն ընկնում էր սպանվածի վրա, ու երկուսով տրորվում էին կատաղի դեւերի բազում ոտքերի տակ:

Շատերն ընկնում էին խանդակը: Նրանց վրա ուրիշներն էին թափվում: Շուտով խանդակը լցվեց ծանր աղաղակող, տառապագին մեռնող մարդկանցով: Ու դեւերը ծանր սապոգներ հագած ոտքերով տրորում էին նրանց:

Լյոշայի դիմացի կարմրաշեկ տղան վաղուց էր դեպի վեր խցկվում՝ եռանդուն բանեցնելով ձեռքերը, հենվելով հարեւանների ուսերին: Ինչ-որ անհասկանալի բան էր գոռում ու խռպոտ ծիծաղում:

Սկզբում անհասկանալի էր՝ ինչու է ծիծաղում, ինչ է ուզում եւ ինչ է կատարվում նրա հետ: Հանկարծ սկսեց արագ բարձրանալ ու մի կարճ միջոց փակեց ամենը, որ կար Լյոշայի դիմաց:

Նրա անհեթեթ աղաղակները հատող ու սուլող մտրակների պես իջնում էին ամբոխի վրա, ու տարօրինակ էր լսել վարընթաց, ասես երկնքից հասնող, նողկալի ձայնը: Սակայն բառերը հստակվեցին:

Եվ սրբապիղծ, աստվածանարգ, գարշելի հայհոյանք էին նրա բառերը:

Հետո հանկարծ փլվեց ցած ու կրունկով խփեց Լյոշայի ճակատին:

Բայց անմիջապես էլ սկսեց վեր կենալ: Չորեքթաթ արեց: Կառչեց կիսաճզմված աղջկա շեկ հյուսքից: Կանգնեց ինչ-որ մեկի ուսերին:

Կարմրտակած էր, կարմրամազ, քրքջում էր, անհաստատուն գնում առաջ՝ ուսերին ու գլուխներին կույր իջեցնելով ծանր սապոգները:

Դիվակերպ՝ դանդաղ անցավ սեղմված, ծանր մռնչացող ամբոխի վրայով ու չքացավ հեռվում:

Ու նորից Լյոշային նորից թվաց, որ սարսափելի տենդի ու սրտխառնուքի միջով, աչքերում շառագույն մշուշ, մի ահռելի, երկնահաս ու ավելի գլխով մարդ թե դեւ կամ կամ մարդադեւ է քայլում շնչահեղձ ամբոխի գլուխների վրայով ու նրանց վրա ահավոր աստվածանարգություն թափում:

Առջեւում ամբոխը սեղմվեց փայտե քողտիկների արանքում բացված նեղ անցումներում: Այնտեղից աղաղակներ, ծղրտոցներ, տնքոցներ էին լսվում: Չգիտես ինչու՝ վեր թռչող շապկի ու հագուստի ծվեններ էին առկայծում:

Ինչ-որ մեկի շեկ գլուխը մի քանի անգամ խփվեց մարագի սուր անկյանը, խոնարհվեց, պոռթկուն նետվեց առաջ ու հանկարծ անհետացավ:

Թվաց՝ մարագների արանքը ավելի ու ավելի է լցվում բարձրահասակ մարդկանցով: Տարօրինակ էր բալագանի տանիքին հավասար գլուխ տեսնելը: Քայլում էին տապալվածների մարմինների վրայով:

Մարագների ետեւից լսվում էր հաղթողների ցնծագին ոռնոցը: Ինչ-որ խայտաբղետ փերթեր էին գունգունում, ինչ-որ բան էր դեսուդեն նետվում օդով:

Եվ ահա Լյոշային ու քույրերին հրեցին մարագների արանքի անցումներից մեկը:

Այնտեղ անտանելի նեղվածք էր. Լյոշային թվաց՝ բոլոր ոսկորները ջարդվել են: Եվ քույրերի կոտրված մարմինները սարսափելի ծանրացել էին ուսերին:

Բայց նեղ անցումն ավարտվեց:

Մարագի ետեւում ընդարձակ էր, լուսավոր, ուրախ:

«Հիմա կմեռնեմ»,- մտածեց Լյոշան ու երջանիկ ծիծաղեց:

Մի ակնթարթ ինչ-որ կարմիր, ցնծուն դեմք տեսավ ու՝ կապոցը գլխավերեւում թափահարող մարդուն:

Եվ ընկավ:

Քույրերը թափվեցին վրան: Կիսով ծածկեցին ճմլված մարմիններով:

Լյոշան դեռ լսեց՝ ինչպես են վազում իր վրայով՝ ոտքերով մեջքը թմբկահարելով: Ողջ մարմինն արձագանքում էր դիվական ոտքերի կատաղի հարվածներին:

Ինչ-որ մեկի կրունկն իջավ ծոծրակին:

Սրտխառնոցի ակնթարթային զգացում:

Մա՛հ:

Լեոնիդ ԱՆԴՐԵԵՎ

ՆԵՐՔՆԱՀԱՐԿՈՒՄ

I

Ծատ էր խմում. կորցրեց աշխատանքն ու ծանոթներին ու հաստատվեց ներքնահարկում՝ գողերի ու պոռնիկների հետ, ծախսելով վերջին ունեցածը:

Մարմինը հիվանդ, անարյուն էր, աշխատելուց մաշված, տառապանքից ու օղուց կերված, եւ արդեն մահը հսկում էր նրան, ինչպես գիշատիչ գորշ թռչուն, կույր՝ արեւի լույսի տակ ու տեսանող՝ մթին գիշերներին: Ցերեկը թաքնվում էր մթին անկյուններում, իսկ գիշերն անծայն նստում նրա սնարին ու երկար էր նստում, մինչեւ լուսաբաց, հանգիստ, համբերատար, համառ: Երբ օրվա առաջին շողերի հետ վերմակի տակից հանում էր հալածված գազանի աչքերով գունատ դեմքը, փոքրիկ սենյակն արդեն դատարկ էր լինում, բայց նա չէր հավատում այդ խաբուսիկ դատարկությանը, որին հավատում են ուրիշները: Կասկածոտ զննում էր անկյունները, հանկարծակի-խորամանկ հայացք գցում հետ, ապա, արմունկներին հենված, երկար նայում դիմացը՝ հեռացող գիշերվա հալվող խավարին: Եվ այդ ժամանակ տեսնում էր այն, ինչը երբեք չեն տեսնում ուրիշները՝ հսկայական գորշ, տձեւ ու սարսափելի մարմնի երերումը: Մարմինը թափանցիկ էր, բռնում էր ողջ շրջական, եւ իրերը նրա մեջ ասես ապակե պատից այն կողմ լինեին: Բայց հիմա նրանից չէր վախենում, եւ սառը հետք թողնելով՝ մարմինը հեռանում էր մինչեւ հաջորդ գիշեր:

Կարճ ժամանակով ինքնամոռացման մեջ էր ընկնում, ու երազներ էին գալիս նրան՝ սարսափելի եւ արտասովոր: Սպիտակ սենյակ էր տեսնում՝ սպիտակ հատակով ու պատերով, լուսավորված սպիտակ վառ լույսով, ու սեւ օձը, որ ծիծաղ հիշեցնող թեթեւ շրշյունով դուրս էր սողում դռան տակից: Սուր, տափակ գլուխը հատակին սեղմած ու գալարվելով՝ օձն արագ դուրս էր սողում, կորչում ինչ-որ տեղ, ապա դռան տակի բացվածքում կրկին հայտնվում էր նրա ճզմված սեւ քիթը, ու սեւ ժապավենի պես ձգվում էր մարմինը, եւ՝ նորից ու նորից: Մի անգամ երազում ինչ-որ ուրախ բան տեսավ ու ծիծաղեց, բայց ձայնը տարօրինակ էր, խեղդված հեծկլտոցի նման, ու սարսափելի էր լսել. ինչ-որ տեղ, անճանաչ խորքերում ծիծա-

ղում թե լալիս է հոգին, իսկ մարմինն անշարժ է, մեռյալի մարմնի պես:

Աստիճանաբար սկսում էին գիտակցության մեջ թափանցել ծնվող օրվա հնչյունները. անցորդների խուլ խոսակցությունը, դռների հեռավոր ճռռոցը, պատուհանագոգերից ծյուն քերող դռնապանի ցախավելի խզխզոցը. արթնացող մեծ քաղաքի ողջ տարորոշ աղմուկը: Եվ այդ ժամանակ նրա համար վրա էր հասնում ամենասարսափելին՝ անողոք պայծառ գիտակցումը, որ նոր օր է եկել, ու շուտով պիտի վեր կենա, որպեսզի պայքարի կյանքի համար՝ առանց հաղթության հույսի:

Պետք է ապրել:

Նա մեջքը դարձնում էր լույսին, գլխին գցում ծածկոցը, որ չնչին շող անգամ չթափանցի աչքերի մեջ, սեղմվում, փոքրիկ կծիկ էր դառնում՝ ոտքերը կզակի տակ ծալած, եւ այդպես պառկում էր՝ վախենալով շարժվել ու պարզել ոտքերը: Հագուստների մի ամբողջ բլուր էր ծանրանում վրան՝ նկուղի ցրտից պաշտպանելով, բայց դրանց ծանրությունը չէր զգում, ումարմինն էլ սառն էր: Եվ կյանքի մասին վկայող ամեն հնչյունից իրեն հսկայական ու բաց էր թվում, կծկվում էր ավելի ու ավելի ու տնքում՝ ոչ ձայնիվ ու ոչ մտքով, քանի որ հիմա վախենում էր սեփական ձայնից ու մտքերից: Աղոթում էր ինչ-որ մեկին, որ օրը չգա, եւ ինքը միշտ կարողանա պառկել քրջերի կույտի տակ, անշարժ ու անմիտք, ու լարում էր ողջ կամքը, որ հետ մղի վրահաս օրն ու համոզի իրեն, թե գիշերը դեռ տեւում է: Եվ աշխարհում ամենից ավելի ուզում էր՝ մեկնումեկը թիկունքից ռեւոլվերը դնի ծոծրակին, այնտեղ, ուր փոսիկ է զգացվում, ու կրակի:

Իսկ օրը ծավալվում էր՝ լայնարձակ, անկասելի, տիրական կյանքի կոչող, եւ ողջ աշխարհը սկսում էր շարժվել, խոսել, աշխատել ու մտածել: Ներքնահարկում առաջինը տիրուհին էր արթնանում՝ պառավ Մատրյոնան, որը քսաներկուամյա սիրեկան ուներ, ու սկսում էր հետուառաջ անել խոհանոցում, շխկացնել դույլերն ու ինչ-որ բան բզբզել ուղիղ Խիժնյակովի դռան մոտ: Կենվորը զգում էր նրա մոտենալն ու քարանում էր՝ որոշելով չարձագանքել, եթե ձայն տա: Բայց Մատրյոնան լռում էր ու ինչ-որ տեղ գնում, ապա, երկու ժամից, արթնանում էին մյուս երկու կենվորները՝ ման եկող աղջիկ Դունյաշան ու պառավի սիրեկան Աբրամ Պետրովիչը: Չնայած տարիքին՝ այդպես հարգալից էին նրան դիմում բոլորը, որովհետեւ համարձակ ու հմուտ գող էր եւ էլի ինչ-որ բան, ինչը ենթադրում էին, բայց չէին համարձակվում ասել: Խիժնյակովը ամենից շատ նրանց արթնանալուց էր սարսափում, քանի որ իրավունք ունեին իր վրա, կարող էին ներս մտնել, նստել մահճակալին, ձեռք տալ նրան եւ կոչել մտքերի ու զրույցնե-

րի: Մի անգամ, հարբած, եղել էր Դունյաշայի հետ ու խոստացել էր, որ կամուսնանա, եւ չնայած աղջիկը ծիծաղում ու թփթփացնում էր ուսին, բայց անկեղծորեն նրան իրեն սիրահարված էր համարում ու հովանավորում էր. ինքն էլ՝ հիմար, կեղտոտ, գեշ հոտով ու հաճախ գիշերը ոստիկանական բաժանմունքում էր լուսացնում: Իսկ Աբրամ Պետրովիչի հետ այս չորեքշաբթի էր հարբում, համբուրում ու հավերժ բարեկամության երդումներ տալիս:

Երբ դռան մոտ լսվեց Աբրամ Պետրովիչի թարմ ու բարձր ձայնը եւ արագ քայլերը, Խիժնյակովը վախից ու սպասումից քարացավ, չդիմանալով՝ բարձր տնքաց, ու դրանից ավելի վախեցավ: Նրա առջեւով վառ պատկերով անցավ իր ողջ հարբեցողությունը՝ ինչպես էին նստել ինչ-որ մութ, միայն մեկ լամպով լուսավորված պանդոկում, մութ, չգիտես ինչու՝ շշուկով խոսող մարդկանց մեջ, ու նույնպես շշնջում էին: Աբրամ Պետրովիչը, գունատ ու գրգռված, բողոքում էր գողի ծանր կյանքից, չգիտես ինչու՝ մերկացնում էր ձեռքն ու տալիս, որ շոշափի սխալ կպած ոսկորները, իսկ Խիժնյակովը համբուրում էր նրան ու ասում.

- Ես սիրում եմ գողերին: Նրանք քաջ են,- եւ առաջարկում էր բրուդերշաֆտ խմել, չնայած վաղուց արդեն իրար «դու» էին ասում:

- Իսկ ես քեզ սիրում եմ, որովհետեւ կրթված ես ու հասկանում ես մեզ,- պատասխանում էր Աբրամ Պետրովիչը:- Տես, ձեռս, ըհը՛, տես:

Ու նորից աչքի առաջ պարզվում էր սպիտակ ձեռքը, որ խղճալի էր թվում իր սպիտակության պատճառով, եւ ինչ-որ բանի անսպասելի ընկալումով, որ հիմա չէր հիշում ու չէր հասկանում, համբուրում էր այդ ձեռքը, եւ Աբրամ Պետրովիչը հպարտ գոչում էր.

- Ճիշտ է, եղբա՛յր: Կմեռնենք, բայց չենք հանձնվի:

Իսկ հետո կեղտոտ, պտտվող ինչ-որ բան, ոռնոց, սուլոց ու ցատկոտող լույսեր: Եվ այն ժամանակ ուրախ էր այդ ամենը, իսկ հիմա, երբ անկյուններում պահ էր մտել մահը, ու բոլոր կողմերից օրն էր գրոհում՝ ապրելու եւ գործելու եւ ինչ-որ բանի համար պայքարելու, ինչ-որ բան խնդրելու պարտադրանքով, տառապանք էր զուտ եւ անպատմելի սարսափ:

- Պարո՞նս, քնած ե՞ս,- դռան ետեւից հեգնոտ հարցրեց Աբրամ Պետրովիչը եւ պատասխան չստանալով՝ ավելացրեց:- Լա՛վ, քնի, սատանան քեզ հետ:

Աբրամ Պետրովիչի մոտ շատ ծանոթներ են գալիս, եւ ամբողջ օրը դուռը ծղրտում է, ու թավ ձայներ են լսվում: Եվ ամեն թխկոցից Խիժնյակովին թվում էր՝ իր մոտ ու իր հետեւից են եկել, եւ ավելի խոր էր թաքնվում ու եր-

կար ականջ դնում, մինչեւ հասկանա՝ ում ձայնն է: Սպասում էր, տառապանքով, ողջ մարմնով ցնցվելով սպասում, չնայած ողջ աշխարհում չկար մեկը, որ կգար նրա մոտ ու նրա հետեւից:

Ժամանակին կին էր ունեցել, վաղուց, ու մահացել էր: Ավելի հեռու անցյալում եղբայրներ ու քույրեր էր ունեցել, իսկ դրանից էլ այն կողմ՝ աղոտ ու գեղեցիկ մի բան, որ նա մայր էր կոչում: Ու բոլորը մահացել էին, իսկ գուցե եւ մեկնումեկը ողջ էր, բայց այնպես է կորել անծայրածիր աշխարհում, ասես մեռած լինի: Եվ ինքն էլ շուտով կմեռնի. հաստատ գիտի: Երբ այսօր վեր կենա անկողնուց, ոտքերը ծալվող ու դողդոջուն կլինեն, ձեռքերն անստույգ, տարօրինակ շարժումներ կանեն, եւ դա մահն է: Բայց մինչեւ նրա գալը պետք է ապրել, եւ դա այնպիսի դաժան խնդիր է փող, առողջություն, կամք չունեցող մարդու համար, որ Խիժնյակովին հուսահատությունն է պատում: Նա վրայից նետում է ծածկոցն ու տարածության մեջ այնպիսի երկար հառաչանք արձակում, ասես հազարավոր տառապող սրտերով է անցնելու, դրանից է, որ այդպես թանձր է, պռնկեպռունկ լեցուն անտանելի տանջանքով:

- Բաց արա, սատանա՛,- դռան ետեւից ճչում է Դունյաշան ու բռունցքով թակում դուռը:- Թե չէ դուռը կջարդեմ:

Ցնցվելով ու օրորվելով՝ Խիժնյակովը մոտեցավ դռանը, բացեց եւ արագ, համարյա ընկնելով՝ նորից պառկեց մահճակալին: Դունյաշան, արդեն մազերը գանգրացրած ու քսված, նստեց կողքին՝ նրան սեղմելով դեպի պատը, ոտքը գցեց ոտքին ու փքված ասաց.

- Իսկ ես քեզ նորություն եմ բերել: Կատյան երեկ հոգին Աստծուն տվեց:

- Ի՞նչ Կատյա,- հարցրեց Խիժնյակովը: Լեզուն էլ ծանր ու անվստահ էր շարժվում, ասես ուրիշինը լիներ:

- Տես, Է՛, մոռացել է,- ծիծաղեց Դունյաշան:- Կատյան, որ մեր մոտ էր ապրում: Ո՞նց ես մոռացել, ախր մի շաբաթ առաջ գնաց էստեղից:

- Մահացե՞լ է:

- Հա՛, մեռել է, ոնց որ բոլորն են մեռնում:

Դունյաշան թքոտեց կարճլիկ մատը ու մաքրեց նոսր թարթիչներից դիմափոշին:

- Ինչի՞ց:

- Նրանից, ինչից բոլորն են մեռնում: Ի՞նչ իմանամ՝ ինչից: Երեկ սրճարանում ասեցին: Մեռել է, ասեցին, Կատյան:

- Իսկ դու նրան սիրո՞ւմ էիր:

- Իհարկե, սիրում էի: Ի՞նչ ես հարցնում:

Դունյաշայի հիմար աչքերը բութ անտարբերությամբ նայում էին Խիժնյակովին, ու հաստ ոտքը ճոճվում էր: Նա չգիտեր՝ էլ ինչի մասին խոսի, ու ջանում էր այնպես նայել պառկածին, որ ցույց տա նրան իր սերը, եւ դրա համար թեթեւակի կկոցեց աչքը ու կախեց հաստ շրթունքների անկյունը:

Օրը սկսվեց:

II

Այդ օրը՝ շաբաթ, այնպիսի սառնամանիք էր, որ գիմնազիստները դասի չէին գնացել ու ծիարշավները տեղափոխվել էին ուրիշ օր, քանի որ ծիերին մրսացնելու վտանգ կար: Երբ Նատալյա Վլադիմիրովնան դուրս եկավ ծննդատնից, առաջին պահին ուրախ էր, որ չնայած երեկո է, բայց առափնյակում մարդ չկա, ու ոչ ոք չի տեսնի իրեն՝ վեց օրական երեխան գրկին: Թվում էր՝ հենց շեմն անցնի, հարայհրոցով ու սուլոցով իրեն մի ամբողջ բազմություն է դիմավորելու, որի մեջ հայրն էլ կլինի՝ փսլինքոտ, կաթվածահար ու կարծես լրիվ անաչք, եւ ծանոթ ուսանողները, սպաներն ու օրիորդները: Եվ նրանք մատնացույց են անելու իրեն ու գոռալու են՝ այ էս աղջիկը, որ գիմնազիայի վեց դասարան է ավարտել, ծանոթ ուսանողներ ուներ՝ խելացի ու ազնվազարմ, կարմրում էր մի անշնորհք բառից, ու վեց օր առաջ երեխա բերեց ծննդարանում՝ իր նման ընկած կանանց հետ:

Բայց առափնյակն ամայի էր: Ազատ սուրում էր սառցաքամին, ծյան գորշ ամպ բարձրացնում, որ սառնամանիքի մանրած կսկծացնող փոշի էր դառնում եւ պատում ճանապարհին հանդիպած կենդանի ու մեռյալ ամեն ինչ: Քամին թեթեւ սուլոցով գալարվում էր ցանկապատի մետաղյա սյունիկների շուրջը, եւ դրանք պսպղում էին հղկվածի պես, եւ այնպես սառն ու մենավոր էին թվում, որ կարելի էր խղճալ: Եվ նույնքան սառը, մարդկանցից ու կյանքից խզված էր թվում իրեն աղջիկը: Հագին կարճլիկ կոֆտա էր, այն նույն կոֆտան, որով սովորաբար չմուշկ էր քշում, ու որը հապճեպ վրան էր քաշել, երբ, արդեն նախածննդյան ցավերով բռնված, դուրս էր գալիս տնից: Ու երբ քամին, ահա, պարուրեց նրան, ոտքերին փաթաթեց բարակ շորը, ու գլուխը պաղ առավ, սարսափած մտածեց, որ հիմա կսառչի, եւ ամբոխի վախը չքացավ, եւ աշխարհը փռվեց սառցե անապատի պես, ուր ո՛չ մարդ կա, ո՛չ լույս, ո՛չ ջերմություն: Երկու տաք արցունք լճացան աչքերում ու սառան: Գլուխը կախելով՝ սրբեց դրանք տծեւ փաթեթով, որով զբաղված էին ձեռքերը, եւ արագացրեց քայլը: Հիմա ոչ իրեն էր սիրում, ոչ երեխային, ու երկուսի կյանքն էլ իզուր էր թվում, բայց նրան հա-

մառորեն առաջ էին հրում բառերը, որոնք ասես գլխում էլ չէին, այլ գնում էին առջեւից ու կանչում.

«Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը:

Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը»:

Այդ բառերն էր կրկնել վեց օր՝ անկողնում պառկած ու երեխային կերակրելիս: Դրանք նշանակում էին, որ պետք է գնալ Նեմչինովի փողոց, որտեղ նրա կաթնաքույրն էր ապրում, մարմնավաճառ, որովհետեւ միայն նրա մոտ կարելի է օթեւան գտնել իր ու երեխայի համար: Մի տարի առաջ, երբ ամեն ինչ դեռ լավ էր, եւ ինքը շարունակ ծիծաղում ու երգում էր, հիվանդացած Կատյային էլ այցելեց, փող տվեց նրան, ու հիմա Կատյան միակ մարդն էր, որից չէր ամաչում:

«Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը:

Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը»:

Գնում էր, ու քամին չար գալարվում էր շուրջը, ու երբ բարձրացավ կամրջի վրա, գիշատիչ նետվեց կրծքին ու երկաթե ճանկերը խրեց սառած դեմքի մեջ: Հետո պարտված՝ աղմուկով ընկավ կամրջից, պտտվեց գետի ծյունածածկ ու հարթ երեսին եւ նորից սլացավ վեր՝ ճանապարհը ծածկելով թպրտացող պաղ թեւերով: Նատալյա Վլադիմիրովնան կանգ առավ եւ ուժասպառ հենվեց բազրիքին: Հեռու ներքեւից նրան էր նայում սեւ, փայլատ աչքը՝ չսառած ջրի բիծ, եւ նրա հայացքն առեղծվածային ու սարսափելի էր: Իսկ առջեւում հնչում ու համառորեն կանչում էին բառերը.

«Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը:

Նեմչինովի փողոց, անկյունից երկրորդ տունը»:

Խիժնյակովը, արդեն հագնված, նորից պառկել էր մահճակալին ու մինչեւ աչքերը քաշել վերարկուն՝ իրերից վերջինը, որ մնացել էր: Փոքրիկ սենյակում ցուրտ էր, եւ անկյուններում սառույց էր կապել, բայց նա շնչում էր գառնենու օծիքի մեջ, եւ դրանից տաք ու հարմարավետ էր: Ամբողջ օրը իրեն խաբել էր, թե վաղը կգնա աշխատանք փնտրելու եւ ինչ-որ բան խնդրելու մարդկանցից, բայց դեռ երջանիկ էր ու չէր մտածում դրա մասին, միայն ցնցվում ու կծկվում էր պատից այն կողմ լսվող բարձր ձայնից կամ փակվող դռան շխկոցից: Այդպես երկար ու խաղաղ պառկած էր, երբ մուտքի դռան անհաստատուն, երկչոտ, փութկոտ ու սուր թակոց լսվեց, ասես թաթի հակառակ երեսով թակեին: Նրա սենյակը ամենամոտն էր դռանը, եւ գլուխը շրջելով, լարվելով՝ հստակ լսում էր՝ ինչ է կատարվում դռան մոտ: Մոտեցավ Մատրյոնան, դուռը բացվեց ու փակվեց ներս մտածի ետեւից, ու վրա հասավ երանելի լռությունը:

- Ո՞ւմ եք ուզում,- խռպոտ հնչեց Մատրյոնայի անբարյացակամ հարցը: Եվ անծանոթ ձայնը՝ կամացուկ ու բեկվող, մոլորված պատասխանեց.

- Կատյա Նեչաեւային: Կատյա Նեչաեւան այստե՞ղ է ապրում:

- Ապրում էր: Իսկ նա ձեր ինչի՞ն է պետք:

- Շատ է պետք: Տանը չէ՞,- ձայնի մեջ վախ հնչեց:

- Մեռել է Կատյան: Մեռել է, ասում եմ: Հիվանդանոցում:

Նորից երկար լռություն, այնքան երկար, որ Խիժնյակովը զգաց՝ ինչպես է ցավում վիզը, որ չէր համարձակվում պտտել, քանի մարդիկ խոսում էին: Ու հետո անծանոթ ձայնը կամացուկ, անտարբեր ասաց.

- Մնաք բարով:

Բայց, ըստ երեւույթին, չհեռացավ, որովհետեւ հաջորդ պահին Մատրյոնան հարցրեց.

- Այդ ինչ է ձեր ձեռքին, Կատյայի՞ն եք բերել:

Ծնկների թխկոցով ինչ-որ բան ընկավ հատակին, եւ անծանոթ ձայնը արագ, զսպված հեկեկոցից խեղդվելով՝ ասաց.

- Վերցրե՛ք: Վերցրե՛ք: Աստծո՛ւ սիրուն: Վերցրե՛ք: Իսկ ես... գնամ:

Հետո նորից երկար լռություն ու զգույշ լաց՝ ընդհատուն ու անհույս: Սահացու հոգնություն ու սեւ, անվերջ հուսահատություն կար այդ լացի մեջ: Ասես մեկի հոգնաբեկ ձեռքը ուժահատ սահում էր պիրկ ձգված լարի վրայով, եւ դա թանկարժեք գործիքի վերջին լարն էր, ու երբ կտրվի, ընդմիշտ կմարի քնքուշ ու թախծոտ ձայնը:

- Ախր համարյա խեղդել եք նրան,- կոպիտ ու զայրացած գոչեց Մատրյոնան:- Սրա՛նց տես, ու դեռ երեխա են բերում: Բա էսպես կարելի՛ է: Ո՞վ է էսպես երեխա բարուրում: Եկեք իմ հետեւից: Լա՛վ, լա՛վ, գնանք, ասում եմ: Բա էդպես կարելի՞ է:

Դռան մոտ լռություն տիրեց: Խիժնյակովը մի քիչ էլ ականջ դրեց ու պառկեց՝ ուրախացած, որ իր մոտ ու իր հետեւից չէին եկել, ու չփորձելով մտածել, թե այդ ամենի մեջ ինչն էր իրեն անհասկանալի: Արդեն զգում էր գիշերվա մոտենալը եւ ուզում էր, որ մեկնումեկը ուժեղացնի լամպի լույսը: Խաղաղությունը հեռանում էր, եւ նա ատամները սեղմած ջանում էր պահել միտքը՝ անցյալում կեղտ էր, անկում ու ահ, եւ նույն ահը ապագայում է: Նա արդեն քիչ-քիչ սկսել էր սեղմվել, թաքցնել ոտքերն ու ձեռքերը, երբ մտավ Դունյաշան՝ արդեն դուրս գալու համար կարմիր բլուզ հագած ու թեթեւակի հարբած: Թափով նստեց մահճակալին ու ծափ զարկեց կարճլիկ թեւերով.

- Ա՜խ, տեր Աստված,- օրորեց գլուխն ու ծիծաղեց:- Մի պստիկ երեխա

են բերել: Էնքան պուճուր է, բայց գոռում է պրիստավի պես: Աստված վկա, պրիստավի պես:

Նա երանությամբ հայհոյեց ու սեթեւեթանքով կտտացրեց Խիժնյակովի քթին:

- Գնանք նայենք: Էն Աստված, բա ի՞նչ: Կնայեք ու վերջ: Սատրյոնան ուզում է լողացնի, ինքնաեռն արդեն դրել է: Աբրամ Պետրովիչը սապոգով փչում է. խնդալի՛ք: Երեխան էլ գոռում է՝ ուա՛, ուա՛...

Դունյաշան երեսն այնպես ծռմռեց, ինչպիսին, իր կարծիքով, երեխայի դեմքն էր, ու նորից ծղրտաց.

- Ուա՛: Ուա՛: Իսկը պրիստավ: Էն Աստված: Գնա՛նք: Չես ուզո՞ւմ, սատանան քեզ հետ: Սատկի էստեղ, սառա՛ծ խնձոր:

Ու շորորալով դուրս եկավ: Իսկ կես ժամից, թույլ ոտքերի վրա օրորվելով ու շեմափայտից կառչելով՝ Խիժնյակովն անվճռական բացեց խոհանոցի դուռը:

- Փակի՛, ցրտո՛ւմ է,- գոռաց Աբրամ Պետրովիչը:

Խիժնյակովն իր ետեւից արագ փակեց դուռն ու մեղավոր շուրջը նայեց, բայց ոչ ոք վրան ուշադրություն չդարձրեց, ու նա հանգստացավ: Խոհանոցը շոգել էր թեժացած վառարանից, ինքնաեռից ու մարդկանցից, ու գոլորշին թանձր քուլաներով բարձրանում ու սողում էր սառը պատերով: Սատրյոնան, զայրացկոտ ու խիստ, տաշտակի մեջ լողացնում էր երեխային եւ ծռմռված ձեռքով գլխին ջուր լցնելով՝ կրկնում.

- Աղո՛ւ: Աղո՛ւ: Մաքո՛ւր կլինենք, սիպտա՛կ կլինենք:

Նրանի՞ց, որ խոհանոցը լուսավոր ու պայծառ էր, թե՞, որ ջուրն էր տաք ու փաղաքուշ՝ երեխան լացը կտրել էր ու կնճռում էր կարմիր փոքրիկ դեմքը, ասես ուզում էր փռշտա: Դունյաշան Սատրյոնայի ուսի վրայից նայեց տաշտակի մեջ եւ, պահը որսալով,երեք մատով արագ ջուր թռցրեց երեխայի վրա:

- Հեռո՛ւ,- ահեղ գոռաց պառավը:- Ո՞ւր ես խցկվում: Առանց քեզ էլ գիտենք ինչ անենք, մենք էլ ենք երեխա բերել:

- Մի խանգարի: Ճիշտ է ասում,- հաստատեց Աբրամ Պետրովիչը:- Երեխան նուրբ բան է, վարվելու ձեւ պիտի իմանաս:

Նա նստել էր սեղանին ու ներողամիտ հաճույքով նայում էր պստիկ վարդագույն մարմնին: Երեխան շարժեց մատիկները, եւ Դունյաշան կատաղի ցնծությամբ օրորեց գլուխն ու քրքջաց.

- Իսկը պրիստա՛վ, Էն Աստված:

- Իսկ դու տաշտակում պրիստավ տեսե՞լ ես,- հարցրեց Աբրամ Պետրովիչը:

Բոլորը ծիծաղեցին, Խիժնյակովն էլ ժպտաց, բայց անմիջապես էլ դեմքից վախեցած պոկեց ժպիտն ու նայեց մորը: Նա հոգնած ընկել էր նստարանին, գլուխը հետ գցած, եւ աչքերը, որ հսկայական էին դարձել հիվանդությունից ու տառապանքներից, խաղաղ լույս էին արձակում, իսկ գունատ շրթունքներին հաճում էր մոր հպարտ ժպիտը: Եվ նրան տեսնելով՝ Խիժնյակովը ծիծաղեց միայնակ, ուշացած ծիծաղով.

- Հի՛-հի՛-հի՛:

Եվ նույնքան հպարտ նայեց շուրջը: Մատրյոնան երեխային հանեց տաշտակից ու փաթաթեց սավանով: Երեխան զնգուն լացեց, բայց շուտով լռեց, եւ Մատրյոնան սավանը բացելով, ամաչկոտ ժպտաց ու ասաց.

- Ի՞նչ մարմին ունի, զուտ թավիշ:

- Թող ձեռ տամ,- խնդրեց Դունյաշան:

- Է՛լ ինչ կուզես:

Դունյաշան հանկարծ դողաց ողջ մարմնով ու, ոտքերը գետին խփելով, անհագությունից շնչահեղձ լինելով, իրեն պատած ցանկությունից խելագարված, բարձր ճչաց, ինչը նախկինում ոչ ոք չէր լսել.

- Տո՛ւր... Տո՛ւր... Տո՛ւր...

- Տվե՛ք,- վախեցած խնդրեց Նատալյա Վլադիմիրովնան: Նույնքան անսպասելի հանդարտվելով ու ժպիտի անցնելով՝ Դունյաշան երկու մատով զգույշ դիպավ երեխայի ուսին, իսկ նրա ետեւից, աչքերը ներողամիտ կկոցելով, այդ վարդագունած ուսին դիպավ նաեւ Աբրամ Պետրովիչը:

- Հաստա՛տ: Երեխան նուրբ բան է,- արդարանալով՝ ասաց նա:

Ամենավերջում Խիժնյակովը փորձեց: Մատները մի պահ ինչ-որ կենդանի, փափկամազ, թավշանման հպում զգացին, եւ այնքան նուրբ ու մեղմ, որ մատներն ասես օտար ու նույնքան նուրբ դարձան: Եվ այդպես, վզերը ձգած, տարօրինակ երջանկության ժպիտով պայծառացած՝ կանգնել էին նրանք՝ գողը, պոռնիկն ու միայնակ, կործանված մարդը, եւ այդ փոքրիկ կյանքը, թույլ, ինչպես հեռու կրակը տափաստանում, կանչում էր նրանց ինչ-որ տեղ, ինչ-որ բան էր խոստանում՝ գեղեցիկ, լուսավոր ու անմահ: Ու հպարտ նայում էր նրանց երջանիկ մայրը, իսկ վերը, ցածր առաստաղից հառնում էր շենքի ծանր, քարեղեն, վիթխարի զանգվածը, ու նրա բարձր առաստաղներով սենյակներում շրջում էին հարուստ, ձանձրացող մարդիկ:

Եկավ գիշերը: Եկավ բոլոր գիշերների պես սեւ, չար ու մթին տարածվեց հեռավոր ձյունապատ դաշտերի վրա, ու սարսափից քարացան ծառերի միայնակ ճյուղերը, նրանք, որ առաջինն են ողջունում ծագող արեւին:

Մարդիկ պայքարում էին նրա դեմ ճրագների թույլ լույսերով, բայց ուժեղ ու չար՝ գիշերն օղակեց միայնակ լույսերը հուսահատության շրջանով ու խավարով լցրեց մարդկային սրտերը: Ու շատ սրտերում թույլ առկայծող կայծերը մարեց:

Խիժնյակովը չէր քնել: Փոքրիկ կծիկ դարձած՝ ցրտից ու գիշերից պահվել էր քրջերի փափուկ կույտի տակ ու լաց էր լինում՝ առանց ջանքի, առանց ցավի ու ջղաձգման, նրանց պես, ում սիրտը մաքուր է, ինչպես երեխաներինը: Խղճում էր իրեն՝ կծիկ դարձածին, ու նրան թվում էր՝ բոլոր մարդկանց ու ողջ մարդկային կյանքն է խղճում, եւ այդ զգացումի մեջ խորհրդավոր ու խոր խնդություն կար: Նա տեսնում էր երեխային, որ ծնվել էր, ու թվում էր՝ ինքն է ծնվել նոր կյանքի համար, եւ ապրելու է երկար, ու կյանքը հրաշալի է լինելու: Նա սիրում ու խղճում էր այդ նոր կյանքը, ու դա այնպես բերկրալի էր, որ ծիծաղեց, թափ տվեց քրջերի կույտն ու հարցրեց.

- Ինչի՞ համար եմ լալիս:

Ու չգտավ, ու պատասխանեց.

- Այնպե՛ս:

Եվ այնպիսի խոր իմաստ կար այդ կարճ բառի մեջ, որ տաք արցունքների նոր ալիքներով ալեկոծվեց ջախջախված կուրծքը մարդու, որի կյանքն այնպես տխուր ու մենակ էր:

Իսկ սնարին արդեն նստում էր անաղմուկ գիշատիչ մահը, որ սպասի՝ հանգիստ, համբերատար, համառ:

Ալեքսանդր ԿՈՒՊՐԻՆ

ԾՈՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ

I

Ծովը նավահանգստում կեղտոտ-կանաչավուն էր, իսկ հորիզոնին նրա մեջ խրված հեռավոր ավազաշերտը մանուշակագույն էր թվում: Ծովապատնեշից նեխած ձկան ու ձյութած ճոպանների հոտ էր գալիս: Երեկոյան ժամը վեցն էր:

Տախտակամածին երեք անգամ հնչեց զանգը: Շոգենավի շչակը խռխռաց, ասես հարբուխի պատճառով ոչ մի կերպ չէր կարողանում դուրս մղել իր իսկական ձայնը: Վերջապես կարողացավ հազալով մաքրել կոկորդն ու մռնչաց այնպիսի կրծքային, հզոր ձայնով, որ հսկա նավի ողջ պարունակությունը դողաց իր մթին խորքերում:

Անվերջանալի երկար էր մռնչում: Կանայք տախտակամածին, ափերով ականջները սեղմած, ծիծաղում էին, կկոցում աչքերն ու կախում գլուխները: Խոսողները բղավում էին, բայց թվում էր՝ ընդամենը շրթունքներն են շարժում ու ժպտում: Եվ երբ շչակը դադարեց, բոլորը հանկարծ այնպիսի թեթեւություն ու գրգռված ուրախություն զգացին, ինչպես լինում է միայն շոգենավի մեկնելու վերջին վայրկյաններին:

- Դե, մնաք բարով, ընկե՛ր Ելենա,- ասաց Վասյուտինսկին:- Հիմա կհավաքեն կամրջակը: Գնամ:

- Գնաք բարով, թանկագի՛նս,- ասաց Տրավինան՝ ձեռքը նրան պարզելով:- Շնորհակալ եմ ամեն, ամեն ինչի համար: Մեր խմբակում ուղղակի հոգեպես վերածնվում ես:

- Ես էլ ձեզ եմ շնորհակալ, սիրելի՛ս: Ցարմացրիք մեզ: Գիտե՞ք, մենք մեծ տեսաբաններ ենք, գիրք կրծողներ, իսկ դուք ասես կենաց ջուր ցողեցիք մեզ վրա:

Նա սովորության համաձայն ուժգին թափահարեց կնոջ ձեռքը՝ պոմպի նման ցավոտ սեղմելով մատները, որոնցից մեկը նշանի մատանի էր կրում:

- Իսկ ճոճքից, համենայնդեպս, մի վախեցեք,- ասաց նա:- Թարխանկուտի մոտ իսկապես մի քիչ թափ կտա, բայց նախօրոք պառկեք, ու ամեն ինչ լավ կլինի: Ամուսնուն ու տիրակալին՝ ողջույններ: Ասեք, որ անհամբեր սպասում ենք իր գրքույկին: Եթե այստեղ չհաջողվի, կտպենք արտասահ-

մանում... Վայ թե կարոտել եք,- հարցրեց նա՝ կնոջ ձեռքը չթողնելով ու մտերմավար փաղաքուշ խորամանկությամբ նայելով աչքերի մեջ:

Ելենան ժպտաց:

- Այո՛: Մի քիչ կա:

- Այդպե՛ս: Ախր տեսնում եմ: Կատա՞կ բան է, տասը օր չեք տեսել: Դե, մնաք բարով, թանկագի՛ն բարեկամ: Բոլոր ծանոթ յալթացիներին ողջույն-ներ: Հրաշալի մարդ եք, Աստված վկա: Մնաք բարով: Ամենայն բարիք:

Նա ափին ու կանգնեց ուղիղ այն տեղի դիմաց, ուր կանգնած էր Ելենան՝ հենված նավեզրի հաճարափայտե բազրիքին: Քամին փքում էր նրա մոխրագույն թիկնոցը, եւ ինքն էլ, բարձր հասակով եւ արտակարգ նիհարությամբ, սուրուլիկ մորուքով ու սեւ լայնեզր գլխարկի տակից ցրիվ եկած երկար, ճերմակող մազերով, ինչ-որ մարտական ու զավեշտալի-բարեհոգի բան ուներ արտաքինի մեջ, որ հիշեցնում էր յոթանասունական թվական-ների արմատականների նորածեւությամբ հագնված Դոն Կիխոտին:

Ու երբ Ելենան, վերեւից ներքեւ նայելով նրան, մտածեց այդ մի քիչ ծի-ծաղելի մարդու անսահման բարության ու հոգու մանկական մաքրության, տաժանակրության երկար տարիների, գործի մեջ նրա պողպատե անսա-սանության, առ մոտալուտ ազատագրումը աներեր հավատի, երիտասար-դության վրա նրա ահռելի ազդեցության մասին, այդ զավեշտականության մեջ մի անգին, գորովալի ու հրաշալի բան զգաց: Վասյուտինսկին նրա եւ ամուսնու առաջին ղեկավարն էր հեղափոխական ասպարեզում: Եվ հիմա, վերեւից նրան ժպտալով ու գլխով անելով, Ելենան ափսոսում էր, որ հրա-ժեշտին չհամբուրեց նրա ձեռքն ու ուսուցիչ չկոչեց: Ինչպե՛ս կշփոթվեր խեղճը:

Ծոգեշարժիչ վերհանի սլաքը վերջին անգամ բարձրացավ՝ հսկակար-թի պես ծայրին կրելովճոճվող շղթաներն ու ճամպրուկների եւ սնդուկների պտտվող բեռը:

- Ամեն ինչ պատրաստ է,- կանչեցին ներքեւից:

- Քաշիր կամրջակը- պատասխանեցին վերեւի խցիկից ու սուլեցին:

Կապույտ բլուզներով բեռնակիրները կամրջակի երկու ծայրերն առան ուսերին ու մի կողմ տարան: Ինչ-որ բան եռաց ու քլթքլթաց շոգենավի տակ:

Ծովապատնեշի վրայով կեղտակուր երեսով, քրքրված շորով մի աղջ-նակ էր անցնում՝ ծաղիկներով զամբյուղը բռնած, ու մուրացկանի ձայնով առաջարկում ճանապարհողներին.

- Պա՛-ա՛-րո՛ն, ծա՛-ա՛-ա՛-ղի՛կ առեք:

Վասյուտինսկին կիսաթառամած մանուշակների մի փոքրիկ փունջ

ընտրեց ու նավակողի վրայով նետեց վեր. փուչը դիպավ հարգարժան ալեհեր պարոնի գլխարկին, ու նա անսպասելիությունից ներողություն խնդրեց: Ելենան վերցրեց ծաղիկներն ու ժպիտով նայելով Վասյուտինսկուն՝ տարավ շրթունքներին:

Իսկ շոգենավը, ենթարկվելով սուլոցներին ու հրամաններին, ստորին կողային անցքերից ջրաշիթեր թքելով, արդեն բավական հեռացել էր նավամատույցից: Իր ահռելի ուժը գիտակցող ու նրանից վախեցող խոշոր, խելացի կենդանու պես զգույշ, կողքանց հեռանում էր ափից՝ դուրս գալով ազատ տարածություն: Ելենան դեռ երկար տեսնում էր Վասյուտինսկուն, որը մի գլուխ բարձր էր հարեւաններից ու գլխավերեւում համաչափ բարձրացնում-իջեցնում էր իր ավազակային լայնեզր գլխարկը: Ելենան պատասխանում էր թաշկինակը թափահարելով: Բայց նավահանգստի մարդիկ կամաց-կամաց ծուլվում էին համատարած մուգ զանգվածի մեջ, որի վրա խայտաբղետ թիթեռների պես թաշկինակներ, գլխարկներ ու հովանոցներ էին ծածանվում:

Յալթայում զատկի ամենաեռուն շրջանն էր, դրա համար էլ շոգենավի վրա անսովոր շատ մարդ կար: Ողջ նավախելը, բոլոր անցուղիները նավակողերի եւ ուղեւորախցիկների արանքում, բոլոր նստարաններն ու փաթանիվները, բոլոր միջանցքներն ու ճամփորդասրահների բոլոր բազմոցները ծանրացած ու խրկված էր մարդկանցով, հակերով, ճամպրուկներով, վերնազգեստներով: Միալար ու տաղտկալի ճչում էին կրծքի երեխաները, հրմշտոցն ավելացնում էին շոգենավի սպասավորները՝ առանց որեւէ կարիքի անցումներով հետ ու առաջ վազելով, կանայք, ինչպես միշտ հանրային վայրերում, շատախոսելով ցցվում էին հատկապես այնտեղ, ուր առանձնակի էր եռում իրարանցումը. փակում էին շարժումն ու ոչ մեկին ճանապարհ չէին տալիս համառորեն: Դժվար էր պատկերացնել, թե ինչպես է տեղավորվելու այդ ամբողջ զանգվածը: Բայց կամաց-կամաց ամեն ինչ հանդարտվեց, խաղաղվեց, կարգի եկավ, ու երբ շոգենավը դուրս գալով նավահանգստի կենտրոն ու զգուշավորության պարտադրանք չունենալով՝ թափ առավ՝ տախտակամածն արդեն ավելի թեթեւ էր:

II

Տրավինան կանգնել էր նավախելին ու հետ էր նայում՝ հեռացող քաղաքին, որը սպիտակ ամֆիթատրոնի պես բարձրանում էր լեռնալանջով ու պսակվում նուրբ սյունաշարով կիսակլոր տաղավարով: Հստակ երեւում էր այն տեղը, ուր ծովի խաղաղ, խորունկ կապույտը փոխվում է նավահանգս-

տի նոսր, կեղտոտ կանաչին: Հեռավոր ափին տերեւազուրկ անտառի պես հառնել էին նավերի ծխնելույզները, կայմերն ու առագաստափայտերը: Ծովը ծփում էր: Ներքեւում, պտուտակի տակ, ջուրը եռում էր, փրփրում կաթնաճերմակ թմբիկներով, ու շոգենավի ետեւից, փոքր-ինչ պտույտ տալով, դեպի համաչափ լայնատարած կապույտի հեռուն էր ձգվումեղ, կանաչ հարթ ուղյակը՝ կտրտված մարմարի նման փրփրաճերմակ զարմանահրաշ շիթերով: Ճերմակ ճայերը, թեւերը մերթընդմերթ ու ծանր թափահարելով, շոգենավից ափ էին թռչում:

Դեռ չէր ճոճում, բայց Ելենան, որ քաղաքում չէր հասցրել ճաշել ու շոգենավում ճաշելու մտադրություն ուներ, հանկարծ զգաց, որ ախորժակ չունի: Իջավ ներքեւ, խցիկների բաժանմունքների խորքը ու սպասուհուց մահճակ խնդրեց: Բայց պարզվեց, որ բոլոր տեղերը զբաղված են: Իր ու դիմացինի համար ամոթից կարմրելով՝ դրամապանակից մի ռուբլանոց հանեց ու քաշվելով պարզեց սպասուհուն: Նա հրաժարվեց:

- Մեծ հաճույքով, օրիո՛րդ, բայց, Աստվա՛ծ վկա, ոչ մի տեղ չկա: Նույնիսկ իմ տեղն եմ զիջել մի տիկնոջ: Այ, Սեւաստոպոլում ավելի ազատ կլինի:

Ելենան նորից բարձրացավ տախտակամած: Շոգենավին ընդառաջ փչող ուժեղ քամին շորը ծեփում էր ոտքերին եւ ստիպում էր կռանալ ու ձեռքով պահել գլխարկի եզրը:

Ծեր, փոքրամարմին, կարմրաքիթ բոցմանը թվատախտակով ու սլաքով ինչ-որ պղնձե գլանաձեւ սարք էր հարմարեցնում աջ նավակողին: Ձախ ձեռքին սպիտակ, ամուր լարի՝ կանոնավոր պարույրներով կծիկն էր, որն ավարտվում էր կողերին երկու թեւ ունեցող պղնձե ծանրաչափով:

Սարքը պինդ ամրացնելով նավեզրին՝ բոցմանը կախեց ծանրաչափը, արագ պտտեց աջ ձեռքով, այնպես, որ այն լարի ծայրի հետ հոծ շրջանակ կազմեց, ու հետ նետեց, հեռու, այնտեղ, ուր պտուտակի տակից ձգվում էր կանաչ-ճերմակ ուղյակը: Եվ թե ծանրաչափն ինչպես էր սուլոցով երկար աղեղ գծում, արագության մեջ, որով հետո բոցմանի ձախ ձեռքից հետ էին վազում օղակները, ու գլխավորը՝ գործնական անփութությունից, որով նա այդ ամենն անում էր, Ելենան առանձնահատուկ ծովային պճնամոլություն զգաց: Արտակարգ սրատես էր այդ մանրուքներում:

Հետո, երբ աչքից կորչելով՝ ծանրաչափը շոգենավի ետեւում բլթաց ջրի մեջ, բոցմանը ձեռքին մնացած կեռիկավոր ազատ ծայրը դրեց գործիքի հետնապատի մեջ:

- Սա ի՞նչ է,- հարցրեց Տրավինան:

- Արագաչա՛փ,- զայրացկոտ պատասխանեց բոցմանը: Սակայն շրջվե-

լով ու տեսնելով կնոջ հաճելի մանկական դեմքը՝ ավելի մեղմ ավելացրեց.

- Արագաչափ է, օրիո՛րդ: Ուրեմն, ծերը պտտվում է ջրի մեջ, որովհետեւ թեւերով է, ուրեմն, չափիչն էլ է պտտվում: Իսկ էստեղ, ուրեմն, ատամիկներն ու սլաքն են: Նայում ենք սլաքին, ուրեմն, ու իմանում ենք՝ քանի հանգույց անցանք: Որ տեսնենք այ էս չերեւացող ափից էգուց առավոտ երեւացած ափը ինչքան է: Հենց էդ էլ արագաչափն է, օրիո՛րդ:

Ելենան արդեն երկու տարի ամուսնացած էր, բայց նրան հաճախ էին օրիորդ ասում, ինչը երբեմն դուր էր գալիս նրան, երբեմն վշտացնում էր: Նա իսկապես նման էր տասնութամյա աղջկա՝ բարակ, ճկուն, փոքրիկ կրծքով ու նեղ ազդրերով, սպիտակ, մի քիչ դեղնավուն անհարթ կովկասյան կտորից հասարակ զգեստով, սեւ թավշյա ժապավենով հասարակ անգլիական ծղոտե գլխարկով:

Նավապետի օգնականը, որ թիկնեղ, հաստ ոտքերով, ոսկեգույն կոճակներով սպիտակ կարճ կիտելով թխահեր երիտասարդ էր, տոմսերն էր ստուգում: Ելենան դեռ շոգենավ բարձրանալիս էր նկատել նրան: Օգնականը կանգնած էր տախտակամածին, կամրջակի այս կողմից, իսկ մյուս կողմից կանգնած էր նավի փոքրավորը՝ ծովագնացության դասընթացների սան՝ բարալիկ, ճարպիկ, բարեկազմ, նավաստու բաճկոնակով ջահել, կապիկի պես շարժուն մի տղա: Երկուսն էլ հայացքով ուղեկցում էին բարձրացող կանանց ու նրանց թիկունքում ուրախ ծամածռություններ անում իրար՝ թափ տալով գլուխները, հոնքերը շարժելով նրանց կողմն ու աչքով անելով: Ելենան դա դեռ հեռվից էր նկատել: Նա զզվանքի դողով ատում էր այդպիսի արեւելյան գեղեցիկ դեմքերը, ինչպիսին նավապետի օգնականինն էր, որն ըստ երեւույթին հույն էր՝ հաստ, համարյա չփակվող, մի տեսակ մերկացած շրթունքներով, սափրելուց կապտած ու հարուստ բուսականությամբ ծնոտով, բարակ բեղիկների օղակով, վառված սուրճի հատիկների պես սեւադարչնագույն աչքերով, որոնք, ի դեպ, միշտ մշուշոտ էին, ասես սիրո կրքի մեջ, ու բազմանշանակ-անմիտ: Բայց նաեւ իր համար նվաստացուցիչ էր համարում նման դեպքերում հայացքը խոնարհած անցնել անծանոթ տղամարդկանց մոտով՝ ձեւացնելով, թե ոչինչ չի նկատում: Դրա համար էլ, երբ կամրջակից ոտք դրեց տախտակամածին, ու ճանապարհը փակեցին մի կողմից այդ ծովայինը, մյուս կողմից մի տարեց, հաստամարմին կին, երկու ձեռքին երկու տոպրակ, որը բարձրանալուց շնչակտուր՝ հրմշտվում ու ոտնեոտ էր անում տեղում, Ելենան անտարբեր նայեց հաղթական սեւահերին եւ ասաց, ինչպես դանդաղաշարժ սպասավորին են ասում.

- Բարի եղեք մի կողմ քաշվել:

Ու հաճույքով նկատեց, թե իր վստահ քամահրական տոնից խաղացկուն կտրիճությունն ինչպես մի ակնթարթում չքացավ նրա դեմքից, եւ նա ինչպես հապճեպ, առանց կոտրատվելու հետ թռավ:

Հիմա էլ ահա մոտեցավ բազրիքին հենված Ելենային ու վերադարձնելով տոմսը՝ դիտմամբ,- կինը դա միանգամից հասկացավ,- մատների տաք, խտղտացնող մաշկով դիպավ նրա ափին ու պահեց ձեռքը, գուցե քառորդ վայրկյան ավելի, քան անհրաժեշտ էր: Եվ աչքերը նրա նշանի մատանուց դեմքին գցելով ու շողոմ ժպտալով՝ իր պատկերացմամբ բարձրաշխարհիկ հարգանքով հարցրեց

- Կներեք: Դուք, կարծեմ, ձեր ամուսնու հե՞տ եք:

- Ոչ, մենակ եմ,- պատասխանեց Ելենան ու շրջվեց դեպի բազրիքը՝ նայելով ծովին:

Բայց այդ պահին գլուխը թեթեւ պտտվեց, որովհետեւ տախտակամածը ոտքերի տակ զարմանալիորեն անհաստատուն թվաց, իսկ իր մարմինը՝ զարմանալի թեթեւ: Նստեց նստարանի եզրին:

Քաղաքը թույլ ճերմակին էր տալիս ոսկեփոշու շողարձակման մեջ, եւ հիմա արդեն անհնար էր պատկերացնել, որ սարի վրա է: Դեպի ձախ հարթ ձգվում ու ծովում անհետանում էր ցածրադիր, մի քիչ վարդագույն ափը:

III

Նավապետի օգնականը մի քանի անգամ անցավ նրա մոտով, նախ մենակ, հետո ընկերոջ՝ նույնպես ծովայինի հետ, որ կիտելին ոսկե կոճակներ ուներ: Ու չնայած Ելենան չէր նայում նրան, ամեն անգամ ինչ-որ կողային զգացողությամբ տեսնում էր, թե ինչպես է նա ոլորում բեղերն ու երկար նայում իրեն սեւ աչքերի հալվող ոչխարային հայացքով: Նույնիսկ մի անգամ նրա բառերը լսեց, որ ասվել էին ըստ երեւույթին լսեցնելու հաշվարկով.

- Սատանա՜ն տանի: Ա՜յ սա կին է: Ա՜յ սա հասկանում եմ:

- Հա՛, զիլկ ինէ,- ասաց մյուսը:

Ելենան վեր կացավ, որ տեղը փոխի ու նստի դիմացը, բայց ոտքերը վատ էին ենթարկվում, ու հանկարծ կողքի տարան նրան, դեպի պարուսինով փաթաթած պահեստային կողմնացույցը: Մի կերպ հասավ ու կառչեց կողմնացույցից: Միայն այստեղ նկատեց, որ իսկական, զգալի ճոճք է սկսվել: Դժվարությամբ հասավ դիմացի նավակողին ու ընկավ նստարանին:

Մթնում էր: Կայմի ամենաձայրին միայնակ դեղին էլեկտրական լույս վառվեց, եւ անմիջապես ողջ շոգենավի վրա վառվեցին լամպերը: Ապակե

խցիկը Առաջին կարգի սալոնի վրայի ապակե խցիկում ու ծխարանում տաք ու հարմարավետ հուրհրացին լույսերը: Տախտակամածին անմիջապես ցուրտ զգացվեց: Ելենայի նստած կողմից ուժեղ քամի էր փչում, մանրիկ աղի ցայտքերը հասնում էին դեմքին ու դիպչում շրթունքներին, բայց վեր կենալ չէր ուզում:

Կրծքի տակ ու փորում ինչ-որ նողկալի խուտուտի տառապագին, տեւական, ծգվող զգացում էր սկսվում, եւ դրանից պաղում էր ճակատն ու ջրիկ, թշշացող թուք էր կուտակվում բերանում:Տախտակամածը առջեւի եզրը դանդաղ-դանդաղ բարձրանում էր վեր, մի վայրկյան կանգ էր առնում՝ երերացող հավասարակշռություն պահելով, ու ցնցվելով՝ հանկարծ սկսում էր իջնել, ավելի ու ավելի արագ, եւ ահա, ասես ջրին խփվելով, նորից գնում էր վեր: Թվում էր՝ շնչում է մեկ ուռչելով, մեկ սմքելով, եւ այդ շարժումներից կախված՝ զգում էր՝ ինչպես է ծանրանում մարմինն ու ծեփվում նստարանին, ապա դառնում անսովոր, զզվելի թեթեւ ու անկայուն: Եվ իրար հաջորդող այդ փոփոխություններն ամենացավոտն էին այն ամենից, որ Ելենային վիճակվել էր կյանքում:

Քաղաքն ու ափը վաղուց անհետացել էին տեսադաշտից: Աչքը ազատ, առանց խոչընդոտների ընդգրկում էր երկինքն ու ծովը ամփոփող շրջանաձեւ գիծը: Հեռվում անհավասար բլրակներով սպիտակ ու փրփրուն ալիքներ էին վազում, իսկ ներքեւում՝ շոգենավի կողքին, ջուրը հետուառաջ էր ճոճվում երկար, սահուն փոսերով ու թռչելով վեր՝ դառնում էր սպիտակ, փրփրուն խեցիներ:

- Պարդո՛ն, մադա՛մ,- գլխավերեւում լսեց Ելենան:

Նայեց ու տեսավ նույն թխադեմ նավապետի օգնականին: Նայում էր իր մեղուշ, հալվող, կուլ գնացող աչքերով եւ ասաց.

- Կներեք, բայց խորհուրդ տամ: Ներքեւ մի նայեք, ավելի վատ կլինի, դրանից գլխապտույտ է սկսվում: Ավելի լավ է նայեք որեւէ անշարժ կետի: Օրինակ, աստղի: Իսկ ավելի լավ է՝ պառկեք:

- Շնորհակալ եմ, ինձ ոչինչ պետք չէ,- շրջվելով՝ ասաց Ելենան:

Բայց նավապետի օգնականը չէր հեռանում ու շարունակեց շողոմ, փափկասուն ձայնով, որի մեջ լսվում էր շոգենավային գայթակղողի սովորական հնչերանգը.

- Կներեք, իհարկե, որ այսպես մոտեցա ձեզ, պատիվ չունենալով... Բայց արտակարգ ծանոթ եք թվում: Թույլ տվեք հարցնել՝ նախորդ ուղերթին մեզ հետ չե՞ք եղել մինչեւ Օդեսա: Ը՛-ը՛-ը՛... կարելի՞ է նստել:

- Շնորհակալ եմ,- տեղից վեր կենալով ու նրան չնայելով՝ ասաց Ելե-

նան:- Դուք շատ հոգատար եք, բայց զգուշացնում եմ, եթե թեկուզ մեկ անգամ էլ փորձեք ինձ առաջարկել ձեր խորհուրդները կամ ծառայությունները, Սեւաստոպոլ հասնելուն պես հեռագիր կտամ Վասիլի Էդուարդովիչին, որ ձեզ անհապաղ վռնդեն Նավագնացության եւ առեւտրի ռուսական ընկերությունից: Լսեցի՞ք:

Նա տվեց լեզվին եկած առաջին իսկ անուն-հայրանունը: Դա հին, զվարճալի միջոց էր, «հնարք», որով նրա ընկերներից մեկը ժամանակին փրկվել էր լրտեսի հետապնդումից: Հիմա Ելենան համարյա բնազդով օգտագործեց, ու դա ապշեցուցիչ ազդեցություն ունեցավ հույնի կուսական մտքի վրա: Նա հապճեպ վեր թռավ նստարանից, բարձրացրեց սպիտակ գլխարկը, եւ նույնիսկ սալոնի վերին ապակիներից ընկնող թույլ լույսի տակ Ելենան տեսավ, թե ինչպես արագ ու թանձր կարմրեց:

- Աստծո՛ւ սիրուն... Սխալ չհասկանաք... Ազնիվ խոսք... Դուք, ի՞նչ է, մտածեցիք... Ինչպե՛ս...

Բայց այդ պահին տախտակամածը, որ սկսել էր սահել ներքեւ, հանկարծ կտրուկ կողքի ճոճվեց, դեպի ձախ, ու Ելենան երեւի ընկներ, եթե ծովայինը ժամանակին ճարպկորեն ու նրբավար չգրկեր նրա մեջքը: Այդ գրկախառնության մեջ միտումնավոր ոչինչ չկար, ու Ելենան ավելի մեղմ ասաց.

- Շնորհակալ եմ, բայց հանգիստ թողեք ինձ: Վատ եմ զգում...

Ծովայինը ձեռքը տարավ հովարին, զինվորավարի ասաց «Լսո՛ւմ եմ» ու արագ հեռացավ:

Ելենան ոտքերը քաշեց տակը, արմունկները հենեց կողային բազրիքին ու, գլուխն արմունկների արանքում, փակեց աչքերը: Ծովայինը հանկարծ ոչ թե վտանգավոր, այլ ծիծաղելի ու խղճուկ վախկոտ թվաց: Ինչ-որ հիմար քառյակներ հիշեց շոգենավի նավապետի մասին, որ եղբայրն էր երգում՝ ուսանող Արկադին, «խելագար ուսանողը», ինչպես նրան կոչում էին տանը: Այնտեղ ինչ-որ բան էր ասվում շոգենավով Օդեսա լողացող տիկնոջ, անսպասելի փոթորկի ու ծովային հիվանդության մասին:

Բայց կապիտանը շատ սիրալիր էր
Եվ իր խցիկը ինձ հրավիրեց,
Խորհուրդ տվեց, որ անկողին մտնեմ,
Խորհուրդ տվեց, որ կորսետս հանեմ...
Ծուք ու փայլ այնքան, իմմեր էլեգան...

Ելենան հիշեց նաեւ մեղեդին ու հիմար բառերն առոգանությամբ ար-

տասանող Արկադիի երկար, լուրջ դեմքը: Ուրիշ դեպքում կծիծաղեր այդ հիշողության վրա, բայց հիմա նրա համար ամեն ինչ մեկ էր, աշխարհում ամեն ինչ այնպես տաղտկալի էր, անհետաքրքիր ու հույլ: Իրեն փորձելու համար դիտմամբ մտածեց Վասյուտինսկու ու նրա խմբակի, ամուսնու, նրա համար ռեմինգտոնով արած հաճելի աշխատանքի մասին, փորձեց պատկերացնել նրա հետ հանդիպման վաղուց սպասված ուրախությունը, որն այնպես վառ ու դյութիչ էր թվում ափին. բայց՝ ոչ, ամեն ինչ մի տեսակ գորշ, հեռու, անտարբեր էր ստացվում ու ոչինչ չէր հուշում սրտին: Ողջ մարմնում ու գիտակցության մեջ միայն կիսաուշաթափության ծգվող, զայրացնող, թույլ վիճակն էր մնացել: Մաշկը ոտից գլուխ պատվել էր կպչուն սառը քրտինքով: Խոնավ, թմրած մատներն այնպես էին կակղել ու թուլացել, որ անհնար էր բռունցք անել: Թվում էր՝ ուր որ է վրա կհասնի կատարյալ ուշագնացությունն ու ինքնամոռացումը: Նա սպասում ու վախենում էր դրանից:

Բայց հանկարծ աչքի առաջ աղոտացավ ու կանաչեց, գրգռիչ խտղտոցը հասավ կոկորդին, սիրտը անուժ թրթռաց ներքեւում՝ փորի մեջ: Ելենան հազիվ հասցրեց վեր թռչել ու կախվել բազրիքի վրայով:

IV

Մի պահ կարծես թեթեւացավ:

- Լավ կլիներ քայլեիք, տիկի՛ն,- կարեկցաբար ասաց ծերուկը, որի գլխարկին էին դիպել Վասյուտինսկու ծաղիկները:

Հարեւան նստարանին էր ու տեսել էր, թե ինչպես վատացավ Ելենան:

- Քայլեք մաքուր օդին ու ջանացեք որքան կարող եք ուշ-ուշ ու խոր շնչել: Օգնում է:

Բայց Ելենան միայն բացասաբար օրորեց գլուխն ու նորից արմունկին գցելով՝ փակեց աչքերը:

Դժվարությամբ կարողացավ քնել: Երեւի երկու ժամի չափ քնել էր եւ արթնացավ փրփրուն ջրի անսպասելի ճողփյունից. ջուրը նավակողից բարձրանալով՝ ողողել էր մազերն ու վիզը: Խոր գիշեր էր՝ մթին, ամպամած, անլուսին ու քամոտ: Սանր շեղ անձրեւ էր մաղում: Ցախտակամածն ամայի էր, միայն անցումներում, խցիկների պատերի տակ, ուր ցայտքերը չէին հասնում, պառկած էին քնած մարդիկ:

Ձախ նավակողից այն կողմ, գիշերվա անսահման սեւության մեջ, ասես աշխարհի ծայրին, հանկարծ հայտնվեց փարոսի վառ, ճերմակ, լուսավոր կետը. մի վայրկյան մնալով՝ ակնթարթորեն հանգավ, ու մի քանի

վայրկյանից նորից բռնկվեց, համաչափ դադարներով վառվում ու մարում էր: Հանկարծ մի աղոտ, քնքուշ զգացում դիպավ Ելենայի սրտին:

«Ահա,- մտածեց նա,- միայնության մեջ, ամայի հրվանդանում, գիշերվա ու փոթորկի մեջ ինչ-որ տեղ նստել է մի մարդ եւ ուշադիր հետեւում է լույսի այս բռնկումներին եւ գուցե այ հիմա, երբ ես մտածում եմ նրա մասին, նա երազում է այն սիրտը, որն այս պահին, բազում վերստեր այն կողմ, անտեսանելի շոգենավի վրա երախտագիտությամբ իր մասին է մտածում»:

Հիշեց, թե ինչպես անցած ձմեռ իրեն ու ամուսնուն Տումա կայարանից տանում էր ռյազանցի մի ինքնահավան տղեկ: Գիշեր ու բուք էր: Կես ժամ էլ չանցած տղան կորցրեց ճանապարհը, ու նրանք երեքով պտտվում էին ձնաթմբերով ծածկված, առուներով կտրտված ինչ-որ վայրի դաշտում ու շարունակ վերադառնում հենց նոր խոպանում թողած իրենց հետքերին: Ծուրջը, ուր աչքդ կտրեր, նույն աղոտ, մեռյալ, ճերմակին տվող պղտորությունն էր, որի մեջ միալար խառնվում էին ձյունն ու երկինքը: Երբ ձին ընկնում էր առուն, ստիպված երեքով իջնում էին սահնակից ու անցնում գոտկահար ձյան միջով: Ելենայի ոտքերը սառել էին եւ արդեն համարյա ոչինչ չէին զգում:

Մի անխոս ու անելանելի հուսահատություն էր պատել նրան: Ամուսինը լռում էր՝ վախենալով, որ իր տագնապով կվարակի կնոջը: Նստիքին բազմած տղան արդեն չէր թափահարում պարանե երասանը ու ձայն չէր տալիս ձիուն: Ձին գնում էր խոնարհ քայլով՝ գլուխը ցած կախած:

Ու հանկարծ տղան ցնծագին ճչաց.

- Նշա՛նը:

Ելենան սկզբում ոչինչ չհասկացավ, քանի որ առաջին անգամն էր այդպիսի գյուղական խուլ վայրերում: Բայց երբ տեսավ ձյուներից ցցված սոճու մեծ ճյուղը ու էլի մի ճյուղ, որ գիշերվա գորշ պղտորության միջով աղոտ սեւին էր տալիս հեռվում, ու երբ իմացավ, որ բուքին գեղջուկներն այդպես են ճանապարհ ցույց տալիս, մի տաք, երախտապարտ գորովանք զգաց: Մեկը, ում երեւի երբեք կյանքում չի տեսնի ու չի լսի, ցերեկը քայլել է այս ճանապարհով եւ հոգածությամբ աջ ու ձախ խրել այդ վաղնջական փարոսները: Թող որ այդ ժամանակ ընդհանրապես չի էլ մտածել մոլորված ճամփորդների մասին, ինչպես որ հիմա երեւի փարոսի պահակը չի մտածում շոգենավի տախտակամածին նստած ու հեռավոր ճերմակ լույսի բռնկումներին նայող կնոջ երախտագիտության մասին, բայց ինչ լավ է մտքում միացնել երկու հոգիները, որոնցից մեկը հոգատար, քնքուշ ու ան-

շահախնդիր հետք է թողել իր հետեւից, իսկ մյուսն ընդունում է այդ ընծան անսահման սիրով ու խոնարհումով:

Եվ նա ցնծությամբ մտածեց սերունդներին թողնված վեհ խոսքերի, խորունկ մտքերի, անմահ գրքերի մասին. «Միթե դրանք նույն ուղենշանները չեն մարդկության առեղծվածային ճանապարհին»:

Ծանոթ կարմրաքիթ բոցմանը, վանդականախշ, մոմլաթե դեղին վերարկուով, գլխին քաշած կնգուղով, փոքրիկ լապտերիկը ձեռքին, տախտակամածով շտապ վազեց արագաչափի կողմը ու կռացավ վրան՝ լուսավորելով թվատախտակը: Վերադարձին ճանաչեց Ելենային ու կանգ առավ նրա մոտ:

- Չե՞ք քնել, օրիո՛րդ: Ճոճե՞լ է: Այստեղ միշտ այդպես է: Թարխանկուտն է: Ամենազզվելի տեղը:

- Ինչո՞ւ:

- Ոնց ասեմ: Այստեղ այնքան աղետ է եղել: Մի կողմից հրվանդանն է, մյուս կողմից ջուրը եռ է գալիս, ինչպես կաթսայում: Միայն մի նեղլիկ անցում է մնում: Պիտի ձեւ գտնես: Այ հենց էստեղ, որ անցնում ենք, հենց էստեղ «Վլադիմիրը» ջրի տակ անցավ, երբ «Կոլումբիան» խփեց նրա կողին: Էդպես էլ սկեց: Ու չգտան... Էստեղ մի չորսհարյուր սաժենանոց փոս է...

Վերեւում, նավապետի կամրջակին սուլեցին: Բոցմանը այն է վազելու էր վեր, բայց կանգ առավ ու արագ ավելացրեց.

- Ա՛խ, տեսնում եմ, օրիո՛րդ, սիրտդ խառնում է: Վատ է: Իսկ դուք, գիտե՞ք, լիմոն ծամեք: Թե չէ կթուլանաք: Հա՝:

Ելենան վեր կացավ ու քայլեց տախտակամածով՝ ջանալով ձեռքերն անընդհատ նավակողերին ու դռների բռնակներին պահել: Այդպես հասավ երրորդ կարգի տախտակամած: Այստեղ անցումներում ամենուրեք, սանդղագլխի դռնակը ծածկող բրեզենտի վրա, արկղերին ու հակերին, համարյա իրար գլխի թափված, կիտված՝ պառկել էին տղամարդիկ, կանայք, երեխաներ:

Երբեմն լամպերի լույսն ընկնում էր նրանց վրա, եւ անառողջ քնից ու ծովային հիվանդության տառապանքներից հետո դեմքերը մեռյալ գունատ-կապտավուն էին թվում:

Գնաց առաջ: Նավաքթի մոտ, ձիակապարանով երկու մասի բաժանված ազատ տարածության մեջ փոքրիկ, սիրուն ձիուկներ էին կանգնած՝ խնամված մաշկով եւ խուզած պոչերով ու բաշերով: Ե՛վ խղճալի, եւ՛ հուզիչ էր տեսնել, թե խեղճ խելացի կենդանիներն ինչպես են մարմինները մերթ առջեւի, մերթ ետեւի ոտքերին գցում՝ դիմադրելով ճոճքին, ինչպես են

սրում ականջներն ու տարակուսած աչքերը շլում հետ՝ մոլեգնող ծովին նայելով:

Հետո Ելենան երկաթե ուղղաձիգ սանդուղքով իջավ ներքեւ՝ երկրորդ կարգ: Այնտեղ բոլոր տեղերը զբաղված էին. նույնիսկ ճաշասրահում, պատերի երկարությամբ դրված բազմոցներին, հագուստներով պառկած էին գունատ, տնքացող մարդիկ:

Ծովային հիվանդությունը հավասարեցրել էր բոլորին ու ստիպել էր մոռանալ ամենայն պատշաճություն: Եվ հաճախ ցած սահած կոշիկով ու շալվարի տակից դուրս պրծած կեղտոտ սպիտակեղենով հրեա առեւտրամիջնորդի ոտքը համարյա դիպչում էր գեղեցիկ, զուգված կնոջ դեմքին:

Սակայն բոլոր կողմերից փակ սրահի խեղդուկ օդում մարդկանց, մարդկային քնատ շնչի, հետ տված ուտելիքի այնպիսի զզվելի հոտ էր կանգնած, որ Ելենան անմիջապես բարձրացավ վեր՝ մի կերպ զսպելով սրտխառնոցի նոպան:

Ճոճքն ավելի էր ուժեղացել: Ամեն անգամ, երբ նավի քիթը, բարձրանալով ալիքի վրա ու մի պահ այնտեղ մնալով, հանկարծ վճռական, աճող արագությամբ թաղվում էր ջրի մեջ, Ելենան լսում էր՝ նավակողերն ինչպես են թնդոցով թաղվում ծովի մեջ եւ ինչպես էին շուրջը ֆշշում զայրացած ալիքները:

Ու կրկին կանաչ նողկալի պղտորություն լողաց աչքերի առաջ: Ճակատը պաղեց, եւ ուշաթափության նողկալի զգացումը պատեց ողջ մարմինն ու ողջ էությունը: Նա կռացավ բազրիքի վրա՝ մտածելով, որ նախորդ անգամվա պես կթեթեւանա, բայց միայն խավար, ծանր տարածություն տեսավ ներքեւում, վրան՝ սպիտակ ալիքներ, որ մերթ հայտնվում, մերթ հալվում էին:

Վիճակն այնքան տառապալից էր, որ ակամա մտածեց՝ եթե հենց այս պահիս հենց այս տեղում մեռնելու հնար լիներ, կհամաձայներ անտարբեր հոգնությամբ, միայն թե վերջանար դանդաղ ու նողկալի մահանալու այդ զգացողությունը: Բայց անձամբ վերջացնելու կարողություն չուներ, որովհետեւ ոչ կամք կար, ոչ ցանկություն:

V

Մոտեցավ նույն նավապետի օգնականը: Այս անգամ հարգալիր կանգ առավ բավական հեռու՝ հավասարակշռությունը պահելու համար ոտքերը լայն բացած ու մարմնի շարժումները համապատասխանեցնելով ճոճքին:

- Աստծո՛ւ սիրուն, մի զայրացեք, ասածներս սխալ չհասկանաք,- հար-

գալից, բայց հասարակ ասաց նա:- Ինձ համար այնպես ծանր ու ցավալի է, որ քիչ առաջ վատ իմաստ տվեցիք... Ասենք, գուցե եւ ինքս եմ մեղավոր, չեմ վիճում, բայց, իրոք, չեմ կարող նայել՝ ինչպես եք տանջվում: Աստծու սիրուն, մի հրաժարվեք իմ ծառայություններից: Մինչեւ առավոտ հերթափոխի եմ: Իմ խցիկը լրիվ ազատ է մնում: Մի խորշեք, խնդրում եմ: Այնտեղ մաքուր սպիտակեղեն կա... ամենը, ինչ պետք է: Սպասուհուն կուղարկեմ... Թույլ տվեք օգնեմ ձեզ:

Ելենան չպատասխանեց, բայց հարմարավետ, հանգիստ անկողնու վրա ազատ մեկնվելու ու թեկուզ կես ժամ միայնակ, անշարժ պառկելու հնարավորության միտքը անսահման հաճելի ու նույնիսկ ուրախալի թվաց: Հիմա արդեն ոչ մի առարկություն չէր գտնում նավապետի օգնականի խարդախ արտաքինի ու նրա առաջարկի հանդեպ:

- Խնդրում եմ, տվեք ձեր ձեռքը, ես կուղեկցեմ ձեզ,- մեղմ փաղաքշանքով ասաց նավապետի օգնականը:- Սպասուհուն կուղարկեմ, բանալին ձեզ մոտ կլինի, կարող եք հանվել, եթե ուզում եք:

Այդ հույնը հաճելի ձայն ուներ, որն արտակարգ անկեղծ ու հարգալից էր հնչում, որեւէ կասկած չհարուցող, հենց այնպիսին, որով կարողանում են կանանց ստել փորձառու կնամոլներն ու հեշտասերները, որոնք իրենց կյանքում բազում թեթեւ, ուրախ րոպեական կապեր են ունեցել: Բացի այդ, Ելենայի կամքը կատարելապես մարել էր, հալվել ծովային հիվանդության սարսափելի պոռթկումներից:

- Ա՜խ, եթե իմանայիք ինչ ծանր է ինձ համար,- դժվարությամբ ասաց նա՝ համարյա չշարժելով սառը, մեռյալ շրթունքները:

- Գնա՛նք, գնա՛նք,- հուզիչ, եղբայրաբար ասաց ծովայինը եւ օգնեց, որ նա վեր կենա նստարանից:

Ելենան չէր դիմադրում:

Նավապետի օգնականի խցիկը շատ փոքր էր, այնտեղ դժվարությամբ տեղավորվել էին մահճակալն ու փոքրիկ գրասեղանը, որոնց արանքը մի կերպ կարելի էր ծալովի գորգակտոր աթոռակ խցկել: Բայց ամեն ինչ պճնամոլաբար մաքուր էր, նոր ու նույնիսկ սեթեւեթ: Վագրի մորթի հիշեցնող թավշյա ծածկոցը կիսով բաց էր մահճակալի վրա, իսկ մաքուր, առանց մի ծալքի սպիտակեղենը աչք էր շոյում հաճելի ճերմակությամբ:

Բյուրեղապակյա թասակով էլեկտրական լամպը մեղմ լույս էր գցում կանաչ լուսամփոփի տակից: Հայելու կողքին, կարմրափայտ ծալովի լվացարանի վրա հովտաշուշաններով ու մանուշակներով սրվակ էր դրված:

- Ահա՛, խնդրե՛մ, Աստծո՛ւ սիրուն,- ասաց նավապետի օգնականը՝ Ելե-

նային նայելուց խուսափելով:- Ձեզ զգացեք ինչպես տանը, այստեղ կգտնեք հարդարվելուն անհրաժեշտ ամեն ինչ: Իմ տունը ձեր տունն է: Մեր ծովային պարտականությունն է՝ ծառայել գեղեցիկ սեռին:

Նա այնպիսի տեսքով ծիծաղեց, որ պետք է ցույց տար, թե վերջին բառերն ընդամենը անմեղ, բարեկամական կատակ են, սրտաբաց ջահելի անփույթ ու նույնիսկ կոպտավուն կատակ:

- Եվ այսպես, մի վախեցեք խնդրեմ,- ասաց նա ու դուրս եկավ:

Միայն մի անգամ, մի ակնթարթ, դռան շեմին շրջվելով՝ նայեց Ելենային, ու նույնիսկ ոչ աչքերին, այլ վերը, որտեղից շքեղ ալիքով սկսվում էին բարակ, ոսկեգույն մազերը:

Ինչ-որ բնազդային վախ, ողջամիտ զգուշության մի մնացորդ հանկարծ անհանգստացրեց Ելենային, բայց այդ նույն պահին նավախցի հատակը առանձնակի թափով բարձրացավ եւ ասես ցատկեց մի կողմ, եւ անմիջապես նույն կանաչ պղտորությունն անցավ կնոջ աչքերի առջեւով, ու կրծքի տակ ծանր տնքաց ուշաթափություն գուժող զգացումը: Մոռանալով վայրկենական նախազգացումը՝ Ելենան նստեց մահճակալին ու կառչեց թիկնակից:

Երբ մի քիչ թողեց, նա ծածկոցը փռեց մահճակալին, արձակեց կոֆտայի կոճակները, կրծկալի ու ներքեւի փափուկ կորսետի քմահաճ կեռիկները, որ սեղմում էին փորը: Հետո հաճույքով պառկեց մեջքին՝ գլուխը խոր թաղելով բարձի մեջ ու հանգիստ պարզելով հոգնած ոտքերը:

Միանգամից երջանիկ թեթեւություն զգաց:

«Կհանգստանամ ու նոր կհանվեմ»,- հաճույքով մտածեց նա:

Փակեց աչքերը: Խոնարհված կոպերի տակից լապտերի լույսը հաճելի վարդագույնով շոյում էր աչքերը: Հիմա շոգենավի ճոճքն արդեն այնքան տառապալի չէր: Զգում էր, որ էլի մի քիչ, ու ճոճքը կհանգստացնի իրեն եւ կփակի աչքերը թեթեւ, թարմացնող քնով: Միայն պետք էր չշարժվել: Բայց հանկարծ դուռը թակեցին: Ելենան հիշեց, որ դուռը չի կողպել, ու շփոթվեց: Բայց դա կարող էր սպասուհին լինել: Մահճակալին վրա գալով՝ ձայն տվեց.

- Մտե՛ք:

Մտավ նավապետի օգնականը, ու վրահաս սարսափի հստակ զգացողությունը ցնցեց Ելենային: Ծովայինի գլուխը խոնարհված էր, նա չէր նայում կնոջը, բայց ռունգերը թրթռում էին, ու կինը նույնիսկ լսեց, թե ինչ կարճ ու խորն է շնչում:

- Ներողություն եմ խնդրում, մատյանն այստեղ եմ թողել,- խուլ ասաց նա:

Թիկունքով Ելենային դարձած ու կռացած՝ սկսեց փնտրել սեղանի

վրա: Կնոջ մտքում առկայծեց՝ պետք է վեր կենալ ու անմիջապես դուրս գալ նավախցից, բայց նավապետի օգնականը, ասես կռահելով ու կանխելով նրա մտադրությունը, հանկարծ ճապուկ, զուտ գազանային շարժումով, մի ցատկով հասավ դռան մոտ ու կողպեց բանալու երկու պտույտով:

- Ի՞նչ եք անում,- ճչաց Ելենան եւ անօգնական, երեխայի պես իրար զարկեց ափերը:

Ծովայինը փափուկ, բայց արտակարգ ուժեղ շարժումով նրան նստեցրեց մահճակալին ու նստեց կողքին: Դողացող ձեռքերով առջեւից բռնեց կնոջ կոֆտան ու սկսեց արձակել: Ձեռքերը տաք էին, եւ ինչ-որ նյարդային, կրքով բռնված ուժ էր հորդում նրանցից: Ծանր ու նույնիսկ խռպոտով էր շնչում, իսկ կարմրած դեմքին քթարմատից վեր փքվել էին օձաձեւ ձգված երկու երակները:

- Թանկագի՞նս...,- կցկտուր խոսում էր նա, ու ձայնի մեջ տառապալի, կույր, նվաղկոտ կիրք էր լսվում:- Թանկագի՞նս... Ես ուզում եմ ձեզ օգնել... սպասուհու փոխարեն... Ո՛չ: Ո՛չ... Վատ բան մի մտածեք... Ի՞նչ կուրծք... Ի՞նչ մարմին...

Նա կնոջ մերկ կրծքին դրեց տաք, բորբոքված գլուխն ու, ասես մոռացության մեջ, մրմնջում էր.

- Պետք է լրիվ արձակել, ավելի լավ կլինի: Ու մի մտածեք, որ ես... Մի րոպե... Միայն մի րոպե... Չէ՞ որ ոչ ոք չի իմանա... Դուք երանություն կզգաք... Ձեզ հաճելի կլինի... Ոչ ոք երբեք չի իմանա... Նախապաշարմունքնե՞ր են...

Ելենան հրում էր նրան, ձեռքերով նրա կրծքին, գլխին հենված՝ զզվանքով կրկնում էր.

- Թողեք ինձ, սողո՛ւն... Անասո՛ւն... Սրիկա՛... Ինձ ոչ ոք չի համարձակվել այդպես դիպչել:

Սարսափար կատաղությամբ սկսեց բղավել առանց բառերի, սուր ճչոցով, բայց նա հաստ, բաց ու թաց շրթունքներով սեղմեց կնոջ բերանը: Ելենան թպրտում էր, կծում նրա շրթունքները, ու երբ հաջողվում էր մի պահ հեռացնել նրա դեմքը, ճչում ու թքում էր: Ու հանկարծ նորից ուշաթափության ծանր, նողկալի, նախամահու զգացողությունը թուլացրեց նրան: Ձեռքերն ու ոտքերը թմրեցին, ինչպես եւ ողջ մարմինը:

- Տե՛ր Աստված, այս ինչ արեցիք,- կամացուկ ասաց նա:- Ձեր արածը սպանությունից վատ էր: Աստվա՛ծ իմ: Աստվա՛ծ իմ:

Այդ պահին դուռը թակեցին: Ծովայինը, ֆսսալով, բացեց, ու խցիկ մտավ այն նույն ծիծաղկոտ, ճարպիկ կապիկի նման փոքրավորը, որին Ելենան ցերեկը տեսել էր կամրջակի մոտ:

- Աստվա՛ծ իմ: Աստվա՛ծ իմ: Աստվա՛ծ իմ,- ձեռքերով դեմքը փակելով՝ տնքաց կինը:

VI

Բացվեց առավոտը: Երբ մարդկանց ու հակերը իջեցնում էին Եվպատորիայում, Ելենան առավոտվա մառախուղի թեթեւ խոնավությունից արթնացավ վերին տախտակամածին: Ծովը հանգիստ էր ու փաղաքուշ: Մշուշի միջով վարդագունում էր արեւը: Առջեւում դեղնին էր տալիս ափի հեռավոր համահարթ գիծը:

Միայն հիմա, երբ վերադառնում էր քնից մշուշված գիտակցությունը, ողջ խորությամբ մտովի ընդգրկեց նախորդ գիշերվա ողջ սարսափն ու խայտառակությունը: Հիշեց նավապետի օգնականին, հետո փոքրավորին, հետո նորից նավապետի օգնականին: Հիշեց, թե հագեցած մարդու ինչպիսի կոպիտ, ստոր, անթաքույց զզվանքով էր իրեն իր խցիկից հանում այդ գեղեցկատես հույնը: Եվ այդ հիշողությունն ամենաձանրն էր:

Շոգենավը երեք ժամ կանգնեց Սեւաստոպոլում, մինչ վերհան կռունկների երկար, հնազանդ կնճիթները հակեր, տակառներ, երկաթե չորսուներ, կապեր, ինչ-որ մարմարե տախտակներ ու պարկեր էին իջեցնում ու բարձում: Մշուշը ցրվել էր: Հիասքանչ կլոր, դեղին ափերով եզրագծված ծովածոցն անշարժ էր: Ճարպիկ սեւ ու սպիտակ շարժիչ անավակները թեթեւ ակոսում էին նրա ջրերը: Արագ անցնում էին ռազմական նավատորմի սպիտակ նավակները, նավախելին՝ շեղ խաչավոր Անդրեեյան դրոշակներ: Բաց վզերով նավաստիները մի մարդու պես հետ էին ընկնում՝ թիերը ջրից դուրս քաշելով:

Ելենան ափ իջավ, եւ ինքն էլ չիմանալով՝ ինչու, էլեկտրական տրամվայով պտտվեց քաղաքում: Բլրաշատ, քարե, ճերմակ քաղաքը ամայի էր թվում, մեռնող, ու կարելի էր մտածել, որ այնտեղ ոչ ոք չի ապրում, բացի ծովային սպաներից, նավաստիներից ու զինվորներից. քաղաքն ասես նվաճված լիներ:

Ելենան մի քիչ նստեց քաղաքային այգում՝ անտարբեր նայելով սիգամարգներին, արմավենիներին ու խուզած թփերին, անտարբեր լսելով ռոտոնդայից հնչող երաժշտությունը: Հետո շոգենավ վերադարձավ:

Ցերեկվա ժամը մեկին շոգենավը մեկնեց: Միայն այդ ժամանակ, ընդհանուր նախաճաշից հետո, Ելենան կամացուկ, ասես գաղտագողի, իջավ սրահ: Մի նվաստացուցիչ զգացում իր կամքին հակառակ ստիպում էր խուսափել մարդկանցից ու մենակ լինել: Եվ նախաճաշից հետո տախտա-

կամած բարձրանալու համար ստիպված էր ահռելի ջանք գործադրել իր վրա: Մինչեւ Յալթա նստած էր նավակողի մոտ՝ դեմքը բազրիքին հենած:

Ցածրիկ, ավազե դեղին ափը աստիճանաբար սկսեց բարձրանալ, ու նրա ետեւից խայտաբղետ կանաչին էին տալիս նոսրացիր թփերը: Ուղեւորներից մեկը նստել էր Ելենայի կողքին եւ ըստ ուղեցույցի, դիտմամբ բարձր, որ բոլորը լսեն, պատմում էր շոգենավին ընդառաջ եկող վայրերի մասին: Ելենան անհաղորդ, նախօրեի մղձավանջային սարսափից ճզմված, իրեն ոտքից գլուխ ասես գարշահոտ կեղտի մեջ զգալով, ձանձրույթով նայում էր, թե ինչպես են իր առջեւ պտտվում Ղրիմի թերակղզու հրաշալի տեսարանները: Լողաց-անցավ Ֆիոլենտ հրվանդանը՝ կարմիր, ուղղաբերձ ժայռերով, որ, ասես, ուր որ է թափվելու էին ծովը: Ժամանակին այստեղ արյունարբու աստվածուհու տաճարն էր եղել. նրան մարդկային զոհեր էին մատուցվում, ու գերյալների մարմինները ցած էին նետում դարափից: Անցավ Բալակլավան՝ լեռան գլխին ավերված ճենովական աշտարակի հազիվ նշնարելի ուրվագծերով, փռչոտ Այա հրվանդանը, գանգրահեր Լասպին, ասես սկուտեղի վրա կանգնած բյուզանդական եկեղեցով, լեռը պսակող Բայադերյան դարպասներով Ֆորոսը: Իսկ հետո այգիների ու պուրակների թանձր կանաչի մեջ, ճերմակ ճանապարհի զիգզագների արանքում ձգվեցին ճերմակ ամառանոցներ, հարուստ առանձնատներ, տափակ տանիքներով լեռնային թաթարական գյուղակներ: Ծովը մեղմ հպվում էր շոգենավին, ջրում խաղում էին դելֆինները: Թունդ, թարմ, աշխույժ ծովային օդ էր բուրում: Բայց ոչինչ չէր ուրախացնում Ելենային: Այնպիսի զգացում էր, ասես ոչ թե մարդիկ, այլ ինչ-որ գերագույն, ամենազոր, չար ու հեգնոտ արարած հանկարծ վերցրել ու կեղտոտել էր նրա մարմինը, պղծել մտքերը, փշրել էր հպարտությունն ու ընդմիշտ զրկել նրան կյանքի հանդարտ, դյուրահավատ ուրախությունից: Ինքն էլ չգիտեր՝ ինչ անի, եւ դրա մասին նույնքան հույլ ու անտարբեր էր մտածում, որքան նայում էր ափին, երկնքին, ծովին: Հիմա հասարակությունը խմբվել էր ձախ նավակողին: Մի անգամ Ելենան ամբոխի մեջ հպանցիկ տեսավ նավապետի օգնականին: Նա արագ փախցրեց հայացքը, երկչոտ շրջվեց ու թաքնվեց խցիկի ետեւը: Բայց ոչ միայն նրա արագ հայացքում, այլ նույնիսկ ճերմակ կիտելի տակ մեջքի ջղածիգ թրթռոցի մեջ Ելենան խոր զզվանք զգաց իր հանդեպ: Եվ անմիջապես իրեն ընդմիշտ, մինչեւ կյանքի վերջը նրա հետ կապված ու կատարելապես նրան հավասար զգաց:

Անցան Ալուպկան՝ նրա լայնարձակ կանաչավուն, մավրիտանական ոճի պալատով ու շքեղ զբոսայգով, ամբողջովին կանաչ, գանգրահեր Միս-

խորը, ճերմակ, ասես շաքարից քանդակած Դյուլբերն ու «Ծիծեռնակի բույնը»՝ աշտարակավոր կարմիր այլակերպ շինությունը, որ ծեփվել էր ծովն ընկնող ուղղաբերձ ժայռի ամենածայրին:

Մոտենում էին Յալթային: Հիմա ամբողջ տախտակամածը լցված էր ուղեբեռով: Շարժվելն անհնար էր: Նախրային մղումով բռնված, որ միշտ մարդկանց պատում է շոգենավերի վրա, երկաթուղիներում ու կայարաններում նստեցումից եւ իջնելուց առաջ, ուղեւորները փութկոտ ու անբարյացակամ էին դարձել իրար հանդեպ: Ելենային անընդհատ հրում էին, կանգնում ոտքերին ու փեշին: Նա չէր շրջվում: Հիմա էլ ամուսնուց էր սարսափում: Չէր պատկերացնում՝ ինչպես են հանդիպելու, ինչ է ասելու նրան: Վճռականությունը կիերիքի՞, որ պատմի ամեն ինչ: Իսկ նա՞ ինչ կանի: Կների՞: Կբարկանա՞: Կխղճա՞, թե՞ կվանի իրեն, որպես շարքային ստախոսի ու անառակի:

Ամեն անգամ պատկերացնելով այդ պահը, երբ կհամարձակվի վերջապես նրա առաջ բացել իր խեղճ, ապականված հոգին, գունատվում, փակում էր աչքերն ու խոր շնչում:

Օրեանդայի խիտ այգին, մարմարե պալատի ազնվազարմ ավերակները, Լիվադիայի կարմիր պալատը, խաղողի այգիների համաչափ շարքերը լեռնալանջերին, եւ ահա, վերջապես, լեռների պայտի կենտրոնում՝ Յալթայի ուրախ, խայտաբղետ ամֆիթատրոնը, տաճարի ոսկե գմբեթները, նուրբ, գեղուղեշ, մթին նոճիները, որ սեւ, նեղմեջք իլիկներ էին հիշեցնում, սալարկած առափնյան ու վրան՝ ասես խաղալիս մարդիկ, ծիերը ու կառքերը:

Դանդաղ ու զգույշ պտտվելով տեղում՝ շոգենավը կողքանց լողաց դեպի նավամատույց: Մարդկանց զանգվածն անմիջապես, ոչխարի հոտի կոպիտ նմանակումով, իրար ոտնատակ տալով, հրմշտելով ու սեղմելով, շոգենավից կամրջակներով նետվեց ափ: Ելենան խորին զզվանք էր զգում այդ բոլոր կարմիր տղամարդկային ծոծրակների, մոլորված, չար, դիմափոշով հապճեպ պատած կանացի դեմքերի, քրտնած ափերի, սպառնալի ծալված արմունկների հանդեպ: Թվում էր՝ այդ անտեղի գազազած մարդկանցից յուրաքանչյուրի մեջ նստած է նույն այն անասունը, որ երեկ ճզմեց իրեն:

Միայն երբ ուղեւորներն իջան ու տախտակամածն ազատվեց, մոտեցավ նավակողին եւ անմիջապես տեսավ ամուսնուն: Ու հանկարծ նրա ամեն ինչը՝ եւ լայն գոտիով պրկված կապույտ մետաքսյա շեղօձիք վերնաշապիկը, եւ թողովի շալվարը, եւ թաղիքե սպիտակ լայնեզր գլխարկը, որն այն ժամանակ համատարած կրում էին բոլոր սոցիալ-դեմոկրատները, կարճ հասակը, կլորիկ փորիկը, ոսկե ակնոցը, կկոցած աչքերը, արեւի

շողերից լարված ծամածռությունը բերանի շուրջ,- այդ ամենը հանկարծ անսահման ծանոթ թվաց Ելենային եւ միեւնույն ժամանակ, չգիտես ինչու, թշնամական ու տհաճ: Հանկարծ ափսոսաց, որ չի հեռագրել Սեւաստոպոլից, թե ընդմիշտ հեռանում է. այնպես հեշտ կլիներ գրել, առանց պատճառները բացատրելու:

Բայց ամուսինն արդեն հեռվից տեսել էր նրան եւ թափահարում էր գլխարկն ու բարձր պահած գավազանը:

VII

Ուշ գիշերը Ելենան վեր կացավ ամուսնու մահճակալից գիշերասեղանիկով բաժանված անկողնուց, առանց լույսը վառելու նստեց նրա ոտքերի տակ ու թեթեւ դիպավ նրան: Ամուսինն անմիջապես վրա նստեց ու վախեցած շշնջաց.

- Ինչ է պատահել, Յո՛լոչկա: Ի՞նչ է:

Ծփոթված ու խիստ անհանգստացած էր կնոջ լարված լռությունից, ու չնայած Ելենան դա բացատրել էր ծովային հիվանդության գլխացավով, նրա խոսքերի տակ ինչ-որ ցավ կամ գաղտնիք էր զգում: Ցերեկը հարցուփորձով չէր նեղել՝ մտածելով, որ ժամանակն ինքը ցույց կտա ու կբացատրի: Բայց հիմա, երբ դեռ քնից չէր անցել կյանքի ճղճիմ իմաստնությանը, հոգու ամենամթին խորքերում անվրեպ զգաց, որ հիմա մի կոպիտ, սարսափելի, կյանքում երբեք չկրկնվող բան է պատահելու:

Երկու պատուհանները կրնկաբաց էին: Անուշ, խտղտացնելով բուրում էին գլիցինիաները: Քաղաքային այգում նվագում էր լարային նվագախումբը, եւ հնչյունները հիասքանչ ու տխուր էին թվում:

- Սերգե՛յ, լսիր ինձ,- ասաց Ելենան:- Ո՛չ, ո՛չ, լույսը մի վառիր,- արագ ավելացրեց նա՝ լսելով, թե ամուսինն ինչպես շխկշխկացրեց լուցկու տուփը:- Այսպես ավելի լավ կլինի... առանց լույսի... Ինչ ասելու եմ, արտասովոր ու անասելի ծանր է լինելու քեզ համար, բայց այլ կերպ չեմ կարող, եւ պետք է փորձեմ քեզ... Ների՛ր:

Ելենան մթության մեջ մի կերպ էր տեսնում նրա սպիտակ վերնաշապիկը: Ամուսինը շոշափելով գտավ բաժակն, ու կինը լսեց՝ ինչպես ապակուն խփվելով զնգաց ապակին: Լսեց նաեւ՝ ինչպես է մեծ կումերով աղմկոտ խմում ջուրը:

- Խոսի՛ր, Յո՛լոչկա,- ասաց շշուկով:

- Լսի՛ր: Ասա ինձ՝ ինչ կանեիր կամ կասեիր, եթե գայի քեզ մոտ ու ասեի. «Սիրելի Սերգե՛յ, ահա ես, քո կինը, որը ոչ մեկին չի սիրել, բացի քեզնից,

ոչ մեկին չի սիրի, բացի քեզնից, եւ ես այսօր դավաճանել եմ քեզ: Հասկացի՛ր ինձ, դավաճանել եմ իսկապես, մինչեւ այն վերջին սահմանը, որ հնարավոր է տղամարդու ու կնոջ միջեւ»: Չէ՛, մի՛ շտապիր պատասխանել: Թաքուն, գողտուկ չեմ դավաճանել, այլ չուզելով, հանգամանքների պարտադրանքով... Պատկերացրու... հիստերիկ խառնվածքի քմահաճույք, արտակարգ, անզսպելի տռփանք, վերջապես, բռնություն հարբած մարդու կողմից... որեւէ հետեւակային սպայի... Սիրելի Սերգե՛յ, ոչ մի վերապահություն ու պատճառ մի բեր, այլ ուղիղ պատասխանիր: Ու հիշիր, որ այդ անելով, ոչ մի վայրկյան չեմ դադարել սիրել քեզ ամենից ավելի, որ թանկ է ինձ համար:

Ամուսինը լուռ էր, մի քիչ իրար եկավ անկողնու վրա, ուզում էր սեղմել կնոջ ձեռքը, բայց նա հետ քաշեց:

- Յո՛լոչկա, վախեցրիր ինձ, չգիտեմ ինչ ասեմ, հաստատ չգիտեմ: Եթե սիրեիր ուրիշին, չէ՞ որ կասեիր ինձ, չէիր խաբի, կգայիր ինձ մոտ ու կասեիր. «Սերգե՛յ: Մենք ազատ ու ազնիվ մարդիկ ենք, ես այլեւս քեզ չեմ սիրում, ուրիշին եմ սիրում, ների՛ր ինձ ու՝ բաժանվենք»: Ու ես հրաժեշտին կհամբուրեի ձեռքդ ու կասեի. «Շնորհակալ եմ ամենի համար, որ տվել ես, օրհնում եմ անունը քո, միայն թույլ տուր պահպանեմ քո բարեկամությունը»:

- Ո՛չ: Ո՛չ... այն չէ... բոլորովին այն չէ: Ոչ թե սիրել եմ ուրիշին, այլ կոպիտ դավաճանել եմ քեզ: Դավաճանել եմ, որովհետեւ չէի կարող չդավաճանել, որովհետեւ մեղավոր չէի:

- Բայց նա քեզ դո՞ւր էր գալիս: Վայելել սիրո քացրությո՞ւնը:

- Ա՛խ, ո՛չ, ո՛չ: Սերգե՛յ, շարունակ զզվանք, խոր, աներեւակայելի զզվանք: Դե, ասա, եթե ինձ բռնաբարած լինեին...

Ամուսինը զգույշ գրկեց նրան. կինն այս անգամ չդիմադրեց: Ամուսինն ասաց.

- Սիրելի Յո՛լոչկա, ինչո՞ւ ես մտածում դրա մասին: Դա նույնն է, թե հարցնեիր՝ կդադարե՞մ քեզ սիրել, եթե հանկարծ ծաղկախտն այլանդակի դեմքդ կամ գնացքը կտրի ոտքդ: Նույնն էլ սա: Եթե մի սրիկա բռնաբարել է քեզ,- տե՛ր Աստված, անկարելի բան կա՞ մեր այսօրվա կյանքում,- կգրկեի քեզ, գլուխդ կդնեի կրծքիս ու կասեի. «Սիրելի՛ս, վիրավորված, խեղճ երեխա, ահա խղճում եմ քեզ որպես ամուսին, որպես եղբայր, որպես միակ ընկեր ու սրբում քո սրտից ամոթն իմ համբույրով»:

Նրանք երկար ժամանակ լուռ էին, հետո Սերգեյն ասաց.

- Պատմիր ինձ ամեն ինչ:

Ու Ելենան այսպես սկսեց.

- Պատկերացրու, որ... Բայց հիշիր, Սերգե՛յ, որ զուտ պատկերացնում ես... Որ գիշերը շոգենավի վրա անտանելի ծովային հիվանդությամբ եմ բռնվել...

Եվ նա մանրամասն, ոչ մի մանրուք բաց չթողնելով, պատմեց այն ամենը, որ իր հետ կատարվել էր նախորդ գիշեր: Նույնիսկ այն ցնցող ու հիմա անսահման տառապանք պատճառող զգացողության մասին պատմեց, որ պատել էր ջահել փոքրավորի ներկայությամբ: Բայց անընդհատ կրկնում էր. «Զուտ պատկերացնում ես, լսո՞ւմ ես: Չմտածես, որ այս ամենը եղել է, զուտ պատկերացնում ես: Ես վատթարագույնն եմ հորինում, ինչին ունակ է իմ երեւակայությունը»:

Ու երբ նա լռեց, ամուսինը կամացուկ ու համարյա հանդիսավոր ասաց.

- Այդպե՞ս է եղել: Եղե՞լ է: Բայց քեզ ոչ դատելու իրավունք ունեմ, ոչ ներելու: Դու դրա համար մեղավոր ես նույնքան, որքան վատ, անհեթեթ երազի համար: Տո՛ւր ձեռքդ:

Ու համբուրելով կնոջ ձեռքը՝ համարյա անլսելի հարցրեց.

- Այդպե՞ս է եղել, Յո՛լոչկա:

- Այո՛, սիրելի՛ս: Ես այնպես դժբախտ եմ, այնպե՛ս դժբախտ: Ճնորհակալ եմ, որ սփոփեցիր ինձ, չկոտրեցիր սիրտս: Չգիտեմ՝ այդ մեկ րոպեի համար ինչպես եմ երախտահատույց լինելու ողջ կյանքում:

Եվ դառն ու ուրախ արտասվելով՝ սեղմվեց նրա կրծքին, հեկեկալով ու ցնցելով մերկ ուսերն ու ձեռքերը ու թրջելով նրա շապիկը: Տղամարդը զգույշ, դանդաղ, քնքուշ շոյում էր նրա մազերը:

- Պառկիր, սիրելի՛ս, քնիր, հանգստացիր: Վաղը առույգ կարթնանաս, եւ ամեն ինչ անցած երազ կթվա:

Ելենան պառկեց: Անցավ քառորդ ժամ: Մեղմ, թուլություն բերելով բուրում էր գլիցինիան, հեռվում հեքիաթային-սքանչելի հնչում էր նվագախումբը, այր ու կին չէին կարողանում քնել ու պառկել էին աչքերը փակ՝ ջանալով չշարժվել, չշնչել, չհազալ, եւ յուրաքանչյուրը հասկանում էր, որ մյուսը քնած չէ:

Բայց հանկարծ տղամարդը վեր թռավ ու վախեցած կանչեց.

- Յո՛լոչկա: Իսկ երեխա՞ն: Իսկ եթե հանկարծ երեխա՞ լինի:

Ելենան հապաղեց ու անձայն հարցրեց.

- Դու կատեի՞ր նրան:

- Ես նրան չեմ ատի: Բոլոր երեխաները սքանչելի են, քեզ հարյուր անգամ ասել եմ դրա մասին ու հավատում եմ,- ոչ միայն բառերով, այլ ողջ հոգով,- որ սիրո մեջ տարբերություն չկա քո կամ ուրիշի երեխայի հանդեպ:

Միշտ ասել եմ, որ մայրական զգացումը բացառիկ է. համարյա հանցավոր է, երբ կինը, ցանկանալով սովորական տենդից փրկել իր երեխային, պատրաստ է ուրախությամբ զոհաբերել հարյուրավոր, իրեն անծանոթ երեխաների, որ այդպիսի կինն ահավոր է, չնայած կարող է հրաշալի կամ, ինչպես ասում են, «սուրբ» մայր լինել: Այս դեպքում քեզնից ծնված երեխան իմ երեխան կլիներ, բայց, Յո՛լոչկա... Այդ մարդը հավանաբար իր կյանքում հազարավոր այդպիսի արկածներ է ունեցել: Նա, անկասկած, ծանոթ է բոլոր ամոթալի հիվանդություններին... Ի՞նչ իմանաս... Գուցե նա իր արյան մեջ ժառանգական հարբեցողություն է կրում... սիֆիլիս... Հենց դրա մեջ է ողջ սարսափը, Յո՛լոչկա:

Կինը հոգնած ձայնով պատասխանեց.

- Լա՛վ, ինչ կուզես՝ կանեմ:

Ու նորից լռություն տիրեց ու տեւեց սարսափելի երկար:

Հետո ամուսինը երկչոտ ասաց.

- Չեմ ուզում ստել, քեզ պետք է խոստովանեմ՝ միայն մի հանգամանք է տանջում ինձ, որ բերկրանքը, մարմնական բերկրանքը ճանաչեցիր ոչ թե ինձ հետ, այ ինչ-որ խարդախի: Ա՛խ, ինչու դա պատահեց: Եթե օրիորդի հետ ամուսնացած չլինեի, ինձ համար մեկ կլիներ, բայց սա՛, սա՛... սիրելի՛ս,- ձայնը աղերսական դարձավ ու դողաց,- բայց չէ որ, գուցե, այդ ամենը չի՞ եղել: Դու ուզում էիր փորձե՞լ ինձ:

Ելենան ջղային ու բարձր ծիծաղեց:

- Մի՞թե լրջորեն մտածում ես, որ կարող էի քեզ դավաճանել: Իհարկե, ընդամենը փորձում էի քեզ: Լա՛վ, բավական է: Դու բռնեցիր քննությունը, հիմա կարող ես հանգիստ քնել ու թող ես էլ քնեմ:

- Ուրեմն ճի՞շտ է: Ճի՞շտ է: Սիրելի՛ս, պաշտելի՛ս, սքանչելի՛ Յոլոչկա: Ա՛խ, որքան ուրախ եմ: Հա՛-հա՛, իսկ ես՝ հիմարս, համարյա հավատացի քեզ: Ոչինչ չի՞ եղել, Յո՛լոչկա:

- Ոչի՛նչ,- բավական չոր պատասխանեց կինը:

Ամուսինը մի քիչ շուռումուռ եկավ ու քնեց:

Բայց առավոտյան ինչ-որ խշշոց արթնացրեց նրան: Սենյակում լույս էր: Անքուն գիշերից հետո գունատ Ելենան, նիհարած, աչքերի շուրջը՝ կապույտ ստվերներ, շրթունքները չոր ու ճաքճքած, համարյա լրիվ հագնված, շտապ ավարտում էր հարդարանքը:

- Ո՞ւր ես գնում, թանկագի՛նս,- տագնապած հարցրեց ամուսինը:

- Հիմա կգամ,- պատասխանեց կինը,- գլուխս սկսեց ցավել: Մի քիչ ման գամ, իսկ կքնեմ նախաճաշից հետո:

Ամուսինը հիշեց նախորդ օրն ու ձեռքերը նրան պարզելով՝ ասաց.

- Ինչպե՞ս վախեցրիր ինձ, սիրելի՛ս, իմ չա՛ր կին: Եթե իմանայիր՝ սիրտս ինչ եղավ: Չէ՞ որ այդ մղձավանջը ողջ կյանքում կմնար մեր միջեւ: Ոչ դու, ոչ ես երբեք չէինք կարողանա մոռանալ: Ճիշտ է, չէ՞: Այդ ամենը՝ նավապետի օգնականը, փոքրավորը, ծովային հիվանդությունը, այդ ամենը քո հորինածն են, չէ՞:

Կինը պատասխանեց հանգիստ, ինքն էլ զարմանալով, թե նախօրեի իր ճշմարտախոսությամբ հպարտ՝ ինչպես կարող է ստել այդպես բնական ու հեշտ:

- Իհարկե, հորինած են: Պարզապես մի տիկին նավախցում այդպիսի դեպք էր պատմում, որ իսկապես մի անգամ պատահել էր շոգենավի վրա: Նրա պատմությունը հուզեց ինձ, եւ ինձ այնպես իրական պատկերացրի այդ կնոջ վիճակում եւ այնպես սարսափեցի մտքից, որ կատեիր ինձ, եթե նրա տեղը ես լինեի, որ լրիվ ինձ կորցրի... Բայց, փառք Աստծո, արդեն ամեն ինչ անցավ:

- Իհարկե, անցել է,- ուրախ ու լրիվ խաղաղված՝ ասաց ամուսինը:- Տե՛ր Աստված: Եվ, վերջապես, եթե պատահած էլ լիներ, միթե դու ավելի վատը կդառնայիր կամ կստորանայիր իմ աչքում: Դատարկ բան է...

Ելենան դուրս եկավ: Եվ նա նորից քնեց: Ու քնեց մինչեւ ժամը տասը: Ժամը տասնմեկին արդեն սկսեց անհանգստանալ, որ կինը չկա, իսկ կեսօրին ինչ-որ հյուրանոցի սպասավոր տղան, որ պաշտոնագլխարկ էր կրում ու բազմաթիվ ոսկեգույն կոճակներով սեղմիրան բաճկոնակ, նրան մի կարճ նամակ բերեց Ելենայից.

«Ժամը իննի շոգենավով կրկին մեկնեցի Օդեսա: Քեզնից չեմ ուզում թաքցնել, որ մեկնում եմ Վասյուտինսկու մոտ, եւ, իհարկե, կհասկանաս՝ ինչ եմ անելու իմ մնացած ողջ կյանքում: Դու միակ մարդն ես, ում սիրել եմ, եւ վերջինը, քանի որ ինձ համար տղամարդու սեր այլեւս գոյություն չունի: Դու ամենաողջախոհն ու ազնիվն ես բոլոր մարդկանցից, որոնց հանդիպել եմ: Բայց դու էլ, պարզվեց, բոլորի նման մանր, կասկածամիտ սեփականատեր ես սիրո մեջ, կասկածամիտ ու ստորացուցիչ խանդոտ: Մենք, անկասկած, վաղ թե ուշ կհանդիպենք այն գործի մեջ, որն իմ կյանքի միակ իմաստն է լինելու: Խնդրում եմ, հանուն մեր նախկին սիրո՝ ոչ մի հարցուփորձ, բացատրություն, հանդիմանանք կամ մտերմության փորձ: Գիտես, որ ես իմ որոշումները չեմ փոխում:

Իհարկե, շոգենավի ողջ պատմությունը համակ հորինվածք էր:

Ելենա»:

Ալեքսեյ ՏՈԼՍՏՈՅ

ՊՅՈՏՐԻ ՕՐԸ

Խավար ու ցածրանիստ սենյակում խռմփոց էր լսվում՝ թանձր, ծանր, սուլոցով, խլթխլթոցով:

Ծխախոտի, գինու ու թեժացած վառարանի խանձահոտ էր գալիս:

Խռմփոցը հանկարծ սկսեց խլանալ, դարձավ ավելի խռպոտ ու կտրվեց, խռմփացողը չփչփացրեց շրթունքները, քրթմնջաց, ու սկսվեց հազը՝ ծխահամ, գինեշունչ: Հազեց-պրծավ, թքեց: Ու մարդը վրա նստեց ճռռացող մահճակալին:

Նոր-նոր ծագող առավոտվա լույսի մեջ, երկարուկ ու նեղ, մանր խաչակապերով պատուհանի միջով կարելի էր տեսնել թասակավորի ուռած, խոշոր դեմքը, մուգ, յուղոտ, ամուր մազափնջերն ու կրծքաբաց շապիկը:

Անկողնում նստածը քրտնած կուրծքը տրորելով՝ հորանջեց, պրպտեց, գտավ, ոտքերը խցկեց կոշիկների մեջ ու գլուխը դարձրեց հախճաղյուսե, առաջ մղված հսկա վառարանի կողմը: Վառարանին կից մահճակի վրա քնի մեջ քորվելով շուռումուռ էր գալիս մի սերթուկավոր, խոշոր սապոգներով զինվոր: Անկողնուն անշտապ վրա նստածը թավածայն կանչեց.

- Սի՛շկա:

Զինվորին ասես հողմքը քշեր մահճակից: Դեռ կոպերն իրարից չանջատած՝ արդեն կանգնած էր մահճակալի առաջ: Քիչ էր մնում օրորվեր, բայց քիթը վեր քաշելով ձգվեց, ցցեց կուրծքն ու սեղմեց շրթունքները:

- Երկա՞ր պիտի մռութիդ նայեմ, շա՛ն որդի,- նույն անշտապ բասով ասաց նստածը: Միշկան լրիվ շրջադարձ արեց ու շարային քայլով ոտքերը վեր-վեր անելով՝ դուրս եկավ: Եվ անմիջապես դռան ետեւում, որից մի պահ ծերպ արեց մոմերի դեղին լույսը, մի քանի ձայն սկսեցին քչփչալ:

Նստածը ոտքերին քաշեց շալվարը, բրդե, քրտնահոտ գուլպաները, տնքալով վեր կացավ, փորին կոճկեց կարմիր բրդից հյուսածո ժիլետը, ձեռքերը խցկեց դարչնագույն բայկայե բաճկոնի թեւքերի մեջ, թասակը շպրտեց մահճակալին, մատներով հարդարեց մազերը եւ ծուռթաթ ու ծանր քայլքով մոտեցավ դռանը:

Հարեւան սենյակում, որ ավելի բարձր ու ընդարձակ էր, առաստաղը կապած էր կաղնու գերաններով, պատերը՝ թարմ կաղնեփայտով երես-

պատած, ոչ մեծ ու ծանր սեղան էր կենտրոնում, որի վրա թղթեր, քարտեզների գալարներ, գործիքներ, երկաթի, թուջի, պղնձի ձուլակտորներ, տեղ-տեղ էլ թութուն էր թափված,անկյուններում երեւում էին գլոբուսն ու հեռադիտակը, իսկ գրքերը թափթփված էին ամենուր՝ պատուհանագոգերին, աթոռների վրա ու հատակին:Պյոտր ցարի այդ աշխատասենյակում, որտեղ վառ բոցկլտում էր հախճաղյուսե վառարանը, կանգնած էին յոթ հոգի: Մի քանիսը թեւատակերը սեղմող զինվորական կանաչ սերթուկներով էին, մյուսները՝ թավշյա կամզոլներով: Եվ սերթուկները, եւ կամզոլները փնթի էին, գինու բծերով պատված, տեղ-տեղ փքված ու պարկանման: Հսկայական կեղծամները գզգզված էին, գդակի պես հագած, ծուռտիկ, սեւ փռչերի տակից ցցվել էին սեփական մազերը՝ կարմրավուն, շեկ, սլավոնական: Խոնավ առավոտի ու հալված մոմերի լույսի տակ պալատականների դեմքերը կանաչավուն էին թվում՝ ուռած, կտրուկ կնճիռներով, որ անքուն գիշերների եւ օղու հետքն էին:

Դուռը բացվեց, մտավ Պյոտրը, ու յոթ կեղծամ խոր խոնարհվեցին նրա առաջ: Գլխով անելով՝ նստեց աթոռին, կտրուկ մի կողմ հրեց թղթերը՝ ձեռքի համար տեղ ազատելով, մատներով թմբկահարեց սեղանի երեսին, ու սեւ, ասես խելահեղությամբ բռնված աչքերը սեւեռվեցին ներկաների վրա:

Այդպիսին էր նրա նայելու ձեւը: Հայացքը ծակելով սուզվում, թափանցում, տեսնում էր ամենախորքը, կարող էր հեգնոտ լինել, ծաղրական, զայրացած: Աստված չտա կանգնես ցասկոտ հայացքի դեմ: Ասում են, կուրֆյուրստուհի Եվգենյան ուշաթափվել է, երբ Պյոտրը Բեռլինում, ընթրիքին բարձր, ի լուր ամենքի չփչփացնելով սագի խճողակը, արագ ու անսպասելի նայել է նրա բիբերին: Բայց դեռ ոչ ոք երբեք չի տեսել այդ հայացքը հանգիստ ու հանդարտ՝ հոգու հատակը բացող հայացքը: Եվ նրա աչքերը լավ հիշող Մոսկվայի ժողովուրդն ասում էր, որ Պյոտրը մարդ չի, նեռ է:

Սպասյակ Միշկան, ազնվական Սուկինի որդին, սկուտեղի վրա օղի, վարունգ ու հաց բերեց: Պյոտրը կոշտուկոպիտ մատներով բռնեց բաժակը, դանդաղ խմեց օղին, ափով սրբեց շրթունքներն ու սկսեց վարունգ կրծել:

Դա նրա նախաճաշն էր: Ճակատի կնճիռները բացվեցին, ու գեղեցիկ, բայց ծամածռությունը զսպելու մշտական ճիգից այլանդակված բերանը քմծիծաղ տվեց: Պյոտրը քթով ուժգին ներս քաշեց օդն ու սկսեց կանուպեր լցնել սեւացած ծխամորճը: Սպասյակը մատուցեց պատրույգը: Պյոտրը ծխափողը խռխռացնելով ասաց.

- Գնա արթնացրու, բաց թող,- ու տվեց պահարանների բանալին, որ-

տեղ գիշերը փակում էին մյուս երեք սպասյակներին: Այդ պահարանները վերջերս էին սարքել, երբ պարզվեց, որ չնայած սպառնալիքներին ու ծեծին, սպասյակները ձեղնապատուհանով փախչում են «վերեւի աղջիկների»՝ ֆրեյլինների մոտ:

Հետո ցարը կկոցեց աչքերը, կնճռոտեց ճակատն ու ասաց.

- Պայծառափայլ իշխան Մենշիկովը երեկվա տուրուդմփոցից ու Իվաշկա Խմելնիցկու հոգեհացից հետո վայ թե ավելի է հիմարացել: Արի՛, արի՛: Տեսնենք ինչ ստեր ես խոսում հարբեցողությունից հետո:

Սեղանից վերցնելով թվերով ծածկված թղթի թերթը՝ նա թանձր ծուխ փչեց պայծառափայլի երկարուկ, վախից ծամածռված դեմքին: Բայց ժպիտը խաբում էր: Քրտինքի խոշոր կաթիլներ հայտնվեցին Պյոտրի բարձր, զայրույթից կարմրած ճակատին: Չէին շնչում: Տե՛ր Աստված, անփորձանք արա:

- Քառասուն ռուբլու բորակ, վեց ալթին ու երկու փող: Ո՞ւր է բորակը,- հարցրեց Պյոտրը:- Վարսակ՝ ալթին ու չորս փողով, տասներկու հազարիչափ: Ո՞ւր է վարսակը: Փողը՝ ահա՛, վարսա՞կն ուր է:

- Պսկովում, բոյարական կալվածքում, տոպրակներում է մինչեւ օրս,- մրմնջաց պայծառափայլը:

- Ստո՛ւմ ես:

Աստված չանի մեկնումեկը իրար գա: Պյոտրի գլուխը հակվեց ուսին: Բերանը, այտը, նույնիսկ աչքը ծռվեցին: Իշխանը, խնամված դեմքը պաշտպանելով, անզգուշորեն փորձեց մեջքով դառնալ նրան, գոնե ուսով, բայց չհասցրեց. ցարական հսկա բռունցքը, սեղանից պոկվելով, իջավ բերանին, ջնջխեց շրթունքները, ու պայծառափայլի մեղուշ աչքերից ցայտած արցունքները խառնվեցին արյան հետ: Դողում էր ու չէր սրբվում: Ու բոլորի սիրտը թեթեւացավ: Տոլստոյը նույնիսկ ոսկրոտ մատների արանքում պտտեց ծխատուփը: Շախովսկոյը շրթունքներով ինչ-որ ձայն արձակեց: Ամպրոպը հեշտ անցավ: Այդպես սկսվեց առավոտը, սովորական, առօրյա պիտերբուրխյան օրը:

Իսկ գործ շատ կար: Պետք էր փակել իշխան Մենշիկովի խարդախ հաշիվները, գրել Մոսկվա՝ նորին մեծություն իշխան-կեսար Ռոմոդանովսկուն, որ Օրյոլից, Տուլայից ու Գալիչից Պիտերբուրխ քշի հյուսներին ու փայտահատներին, «քանզի փետրվարին եկած բոլոր մարդիկ մեռել են, ու նախ եւ առաջ ջահելներին, որ փորացավից ու ոտքերի ցավից չխոսեն ու չմեռնեն իզուր տեղը», եւ գրել է պետք նաեւ Նավադաշտ, «որ այս շաբաթ

անձամբ կլինեմ նավաշինարանում», նաեւ գրել Վարշավա՝ Դոլգորուկուն, ու Ռեվել՝ վաճառական Յակով Դիլին, որ թույլ գարեջուր ուղարկի՝ երեք դյուժին ու մի կապ սխտոր ու խոզաճարպ: Գործերը, նամակները, հրամանները, ժողովակարգը ավարտելով՝ պետք է գնալ նոր նավաշինարան, որտեղ կառուցվում է երկտախտակամած գծանավը, լինել թնդանոթի գործարանում ու ճոպանայինում, ճանապարհին մտնել կոշկակար Մատեուսի մոտ, կնքել աղջկան, մի գավաթ պղպեղօղի խմել՝ գազարի կարկանդակով, արծաթե ռուբլանոց դնել ծնունդյան-սանամոր բարձի տակ, մահացու ծեծել աղի ուղեկալի գող քարտուղարին, շրջել առափնյաների ու կղզիների կառույցներով, ժամը տասներկուսին՝ ճաշ, եւ քուն՝ մինչեւ երեքը. հանգստանալով՝ գնալ Գաղտնի գրասենյակ, որտեղ Տոլստոյը, Պյոտր Անդրեեւիչը, Ուշակովն ու Պիսարեւը տանջաքննությամբ թագավորական խոսքն ու գործն են կատարում: Իսկ երեկոյան՝ հավաքույթ ցարական հրամանով: «Բոլորը լինեն, ազատ ցատկոտեն երաժշտության տակ, խմեն ու թութուն ծխեն, իսկ ով չեկավ՝ ահեղ է ցասումը ցարական»:

Գործ շատ կար:

Խոնավ քամին թանձր մշուշ էր քշում ծովից, աղմկում էր Վասիլեյան ճահիճների նոսրացած եղեւնուտը, կորանում էին քաղաքում դեռ տեղ-տեղ ցցված բարձր սոճիները, քամին նեխած ծղոտ էր քշում խրճիթներից ու վանդակաշարերից, վնվնգում էր սառը ծխնելույզների մեջ, շրխկում էին դռները. այն ժամանակ դատարկ տները շատ էին, որովհետեւ ժողովուրդը կոտորվում էր ժանտախտից, մառախուղներից ու սովից: Ծանր, անուրախ էր կյանքը Պիտերբուրխում:

Փքված գետը խփվում էր գերանակապ առափնյաներին. ճոճվում, ճռնչում էին ուղղաձիգ կողերով բարկասները, ծյունն ու շեղահար անձրեւը լիճ էին կապում հրապարակներում ու փողոցներում, որտեղ անցնելու համար լայնակի գերաններ, տախտակներ, կոճղեր էին գցել:

Նախորդ հինգշաբթի վառված Երրորդության հրապարակի իջեւանատան սեւ ավերակատեղի վրա չորս կախաղան էր ցցվել, ու քամին մշուշի մեջ ճոճում էր կախաղան հանված չորս գողերին՝ ի վախ ու սարսափ հետոյի համար: Գետի ափերին, Նեւսկի պողոտայի երկայնքով, որ երկու կողմից արդեն եզերված էր վտիտ տնկիներով, թխկում էին կացինները, իրար ետեւից ծգվում էին ավազ կրող ձեռնասայլակները, կիր, գլաքար, աղյուս տեղափոխող սայլերը: Ցեխի, դեղին մշուշի, ճահճատիղմի մեջ խրվող հիմնասյուների վրա ամեն օր նոր ամբարներ, երկար բարաքներ, հոսպիտալներ, վերաբնակ բոյարների մասնավոր տներ էին հայտնվում:

Կամաց-կամաց քչանում էին ցեխով ծեփած, ուռենու ճյուղերից ու կավից սարքած խղճուկ խրճիթները, որտեղ դեռ վերջերս Գոլովինը, Օստերմանը, Ճաֆիրովն էին կենում: Միայն ճարպիկ պայծառափայլն էր վաղուց արդեն բարձրացրել կիրկայի աշտարակի պես իր փայտաշեն ապարանքը ու տեղ էր փնտրում քարաշեն պալատի համար:

Ռուսաստանի բոլոր ծայրերից, բոլոր լեզուներով բազմահազար ժողովուրդ էր օրուգիշեր բանում քաղաքի շինարարության վրա: Ֆրիեդեղը քշում-տանում էր նրանց աշխատանքը, հրդեհն՝ ամայացնում, սովն ու ժանտախտը հնձում էին մարդկանց, ու ճահճուտ ճամփաներով, անտառային կածաններով նորից ձգվում էին քարտաշների, փայտահատների, տակառագործների, կաշեգործների խմբերը: Ոմանց շղթայի էին զարկում, որ չփախչեն, ոմանց մահացու ծեծում էին վերստասյուների մոտ, պաշտոնատան առաջ. գթություն չգիտեին կատվի պես սափրած, անդրծովյան կանաչ կաֆտաններով ուղեկցորդ-դրագունները:

Ցարի քաղաքն էր կառուցվում աշխարհի ծայրին, ճահիճներում, օտարի սահմանին: Ո՞ւմ էր հարկավոր, ի՞նչ նոր տառապանքի համար պիտի քրտինք եւ արյուն թափի ու կոտորվի հազարներով՝ ժողովուրդը չգիտեր: Բայց հարկից, բահրայից, ճանապարհային ու զինվորական պարհակներից տնքում էր երկիրը: Իսկ եթե մեկնումեկն էլ ծպտուն էր հանում սրտին ծանրացածից, թե «Մեր գեղացիքից սել են պահանջում, առանց էն էլ հարկ ու տուրքից լրիվ քանդվել-քայքայվել ենք, հիմա էլ չորահաց են ուզում, թագավորն իրա երկիրը քանդեց ու ամայացրեց, ու թող իմ չորահացը թագավորի կոկորդին մնա»,- այդ անզգույշներին, ձեռուտը շղթայակապ, տանում էին Գաղտնի գրասենյակ կամ Պրեոբրաժենսկիյ Պրիկազ, ու երջանկություն էր, եթե պարզապես գլուխն էին կտրում. ոմանց քրքրում էին կեռերով կա երկաթե ցցով միջաթափանց ծակում, կամ էլ ողջ-ողջ ապխտում էին: Սարսափելի մահապատիժները սպառնում էին ցանկացածին, ով թեկուզ թաքուն, թեկուզ մեն-մենակ կամ հարբած կմտածեր՝ բարի՞ն է գործում, արդյոք, ցարը, եւ անպտուղ չե՞ն այս բոլոր չարչարանքները, դառնագույն տառապանքների չե՞ն բերի բազում հարյուրավոր տարիներ:

Բայց մտածելը, նույնիսկ որեւէ բան զգալը, բացի հնազանդությունից, արգելված էր: Պյոտր ցարն այդպես էր, ամայուտներում ու ճահիճներում նստած, զուտ իր սարսափելի կամքով ամրացնում իր պետությունը, վերաշինում երկիրը: Եպիսկոպոս թե բոյար, հարկապարտ գեղջուկ, աշկերտ կամ անտոհմ թափառական՝ բառ անգամ չէր կարող ասել ընդդեմ այդ

կամքի. կլսի որեւէ սուր ականջ, կվազի պաշտոնատուն ու կգոռա «խոսք եւ գործ»: Ամենուր կոմիսարներ էին շրջում, հարկահաններ, մատնիչներ, ճանապարհներով դղրդոցով թռչում էին շղթայակիր կալանավորների սայլերը. երկնչումով ու սարսափով էր բռնված ողջ երկիրը:

Դատարկվում էին քաղաքներն ու գյուղերը, ժողովուրդը փախչում էր Դոն, Վոլգայի ափերը, Բրյանսկի, Մուրոմի, Պերմի անտառները: Մեկին դրագուններն էին որսում, մյուսին ավազակներն էին մահակներով ջնջխում ճանապարհներին, երրորդին հոշոտում էին գայլերը, չորրորդին ջարդում արջերը: Դաշտերը մոլախոտով էին պատվում, վայրենանում, տնազուրկ էր դառնում գյուղացին, կողոպտում էին վոյեվոդներն ու կոմիսարները:

Ռուսաստանն ի՞նչ ցարին, տիրոջը, որ բռնված էր դառնությամբ ու խանդով՝ ինչպե՞ս թե, իր տունն ու անասունը, իր բատրակներն ու ողջ տնտեսությունը վատն ու հիմա՞րն են հարեւանից: Ցասումից ու անհամբերությունից ծամածռված դեմքով սլանում էր պարոն տերը Հոլանդիայից Մոսկվա՝ հնավանդ, ծույլ, ուղղափառ քաղաքը՝ մեղմ զանգահարությամբ, փլեկ ցանկապատերով, դարպասատակին կանգնած բռնչենիներով ու աղջիկներով, չինացի, հնդիկ, պարսիկ վաճառականներով՝ Կրեմլի պարիսպների տակ, կովերով ու քրջոտ տերտերներով՝ հրապարակներում, իմաստուն բոյարներով, ստրելեցյան ինքնագլխությամբ:

Դառնացած վրա էր թռչում. ինձ էս ի՞նչ բաժին ընկավ, հապա բրանդենբուգյան կուրֆյուրստի, հոլանդական շտատհալտերի ունեցածը տեսեք: Անմիջապես, նույն իսկ օրը ամեն ինչ շրջել գլխիվայր, նորից ծեւել, խուզել մորուքները, բոլորին հոլանդական կաֆտան հագցնել, կխելքովանան, ուրիշ կերպ կսկսեն մտածել:

Իսկ դույզն-ինչ դիմադրության դեպքում, դեռ ծպտուն անգամ չհանած, թե՝ հոլանդացի չենք մենք, ռուսներ ենք, թե եւ խազարական, եւ պոլովեցյան, եւ թաթարական լուծ ենք տեսել, մի անգամ չէ, որ մեր արյամբ ու կյանքով նորից շենացրել ենք հայրենի հողը, գթասիրտ եղիր, չենք կարող հոլանդացի լինել, ցասումով էր բռնվում ցարական հոգին, ու թռչում էին ստրելեցների գլուխները:

Ցերեկ թե գիշեր՝ վառվող խեժի լույսի տակ, ցեխի մեջ թափած գերաններին գլուխ էին կտրում: Անծամբ պայծառափայլը, որ այն ժամանակ Ալեքսաշկա էր, ճարպկորեն, մարդուն գետին չգցելով, հընթացս թրով թռցնում էր գլուխն ու պարծենում էր: Այդ օրերին հաճախ էին թունդ օղի խմում՝ սուլթանական պղպեղով սեւանալու չափ թրմած: Ցարն ինքը ձիուց

իջավ Լուբյանկայի դարպասների մոտ, հետ մղեց դահճին, մազերից բռնած՝ գերանին կռացրեց ստրելեցյան հարյուրապետին եւ այնպիսի ուժով խփեց վզին, որ կացինը զնգալով մինչեւ կեսը խրվեց փայտի մեջ: Մայր հայհոյեց ցարը, թռավ ձիու վրա, սլացավ Կրեմլ:

Քնել չէին կարողանում այն գիշերներին: Խմում էին, հոլանդական ծխամորճ ծխում: Մի կալվածատիրոջ՝ Լապտեւի հետեւը խոթեցին մոմը, վառեցին, ու շատ ծիծաղում էին:

Կաշվերես կիսամուշտակով, եղջրենու՝ ականջներին քաշած թասակով, կոկորդը հյուսածո վզնոցով փաթաթած՝ Պյոտրը նստեց երկանիվ կառքը, բռնեց սանձը ու կողքին սեղմված զինվորին դեն հրելով՝ դուրս եկավ բակից:

Հանդարտ մուգ դարչնագույն ձին, որ սովոր էր ցանկացած վատ եղանակի, անշտապ չփչփացնում էր սմբակները. արագ գնալն անհնար էր, կառքն ուժգին ցնցվում էր գերանակապ, արդեն տրորված ճանապարհին, ընկնում ցեխափոսերը:

Դեմքին փչող ուժեղ քամին քշում էր անվերջանալի, ծվեն-ծվեն ամպերը: Արեւը ցածր էր ու մեկ պահվում էր ամպերի տակ, մեկ դուրս լողում՝ շառագույն, աղոտ, հյուսիսային, եւ ամենուր՝ գետնի երեսին ու ամպերի արանքում, քուլա-քուլա բարձրանում էր դեղնավուն, անթափանց մշուշը:

Ա՛յ քեզ եղանակ: Լա՛վ եղանակ է, խոսք չկա: Ծովային, ծակող միջանցքամի: Հաճույքից ռունգերը փքելով՝ Պյոտրը ներս էր քաշում աղահամ, խոնավ քամին, որն ինչ-որ տեղ, ծովային հեռվում քշում էր ապրանքներով բարձված առեւտրական նավերը, բազմաթիվ թնդանոթներով ռազմանավերը, բոլոր ծակուծուկերից քշում ռուսական նեխած շունչը:

Ու թող որ ցարի կացինը պատուհան էր բացում բուն ժողովրդական ոսկորների ու մսի մեջ, թող որ մեծ միջանցահողմից կործանվում էին խոնարհ գեղջուկները, որոնք չգիտեին անգամ, թե ում եւ ինչի է պետք իրենց կյանքը, թող որ վերից վար ճաքել է ողջ հնավանդությունը, մեկ է, պատուհանը բացված է, ու թարմ քամին խուժել է խարխուլ ապարանքները, տաք վառարանների վրայից քշել քնահար մարդկանց, որ իրար անցել, շարժվում են դեպի ռուսական ընդարձակված սահմանները՝ ընդհանուր, պետական գործն անելու:

Բայց համենայնդեպս այն չստացվեց, ինչ ցանկանում էր հպարտ Պյոտրը. Ռուսաստանը, շքեղաշուք եւ ուժեղ, չբազմեց մեծ տերությունների խնջույքին: Արյունոտ, սարսափից ու հուսահատությունից խելագար-

ված՝ խղճուկ ու անհավասար կանգնեց նոր ազգականների առաջ, ստրուկի պես կանգնեց: Եվ ինչքան էլ ահեղ որոտային ռուսական հրանոթները, ստրուկ ու նվաստացած էր ողջ աշխարհի առաջ մեծ, Վիսլայից մինչեւ Չինական պատը ձգված երկիրը:

Երրորդության հրապարակով անցնում էին սեմյոնովականները՝ պղնձյա սաղավարտներ դրած, թրջված կաֆտաններով: Ձիավորները աշխուժով ցեխ էին հունցում ու մի մարդու պես պատվի առան հրացաններով՝ աչքերը տիրակալին չռելով: Իրենց գործերով շտապող աստիճանավորները, կրպակների ու տնակների երկայնքով գծած կամրջակներով անցնելիս, գլխարկները հանում ու խոր խոնարհվում էին, ու քամին քրքրում էր նրանց կեղծամների խոպոպները: Հասարակ ժողովուրդը, կապաներով ու ոչխարենու քուրքերով, ոմանք ընդհանրապես բոբիկ, չոքում էին ուղիղ ջրափոսերի մեջ, չնայած հրաման կար. «Տերունական գործով գնալիս ծնկի չգալ տիրակալի առաջ, այլ հանել գլխարկը եւ կանգնել այնտեղ, ուր կանգնած ես, պատշաճ տեսքով, մինչեւ տիրակալը բարեհաճի անցնել»:

Միայն մի հաստլիկ հացթուխ, շերտավոր շալվարով, մաքուր գոգնոցով հանանվերցի, հացի կրպակի դռանը կանգնած, որի փեղկերին ինչ-որ ծիծաղելի մեծաքիթ ծերուկներ էին նկարված, ուրախ խնդմնդաց ու ծխամորճը թափահարելով՝ կանչեց.

- Գուտ մորգեն, հե՛ր Պիտեր:

Ու Պյոտրը, նրան դարձնելով կարմրատակած, կլոր դեմքը, խռպոտ պատասխանեց.

- Գուտ մորգեն, հե՛ր Սյուլլեր:

Առափնյակին, տախտակների ու կրով լի տակառների կույտերի արանքում, հավաքվել էին բանվորները: Այդ կողմն էր վազում վրայով մեծ սապոգներ հագած, խսիրով փաթաթված, կարկանդակների տեփուրը ձեռքին մի տղեկ: Իսկ մյուս ափից առագաստ պարզած լողում էր ոստիկանական թիանավակը, թեքվում էր, քիթը թաղում ալիքների մեջ, ու հայհոյանք էր տեղում ոստիկանապետը: Այդ ամենն ակնհայտ անկարգություն էր հուշում:

Իսկ անկարգությունը հետեւյալն էր. կրաշաղախով տակառը սարսափով շրջապատած ժողովրդի կենտրոնում, տակառի վրա կանգնած էր մի նիհար, կորամեջք, անգդակ տղամարդ: Թաղկած մազերը փունջ-փունջ թափվել էին ուսերին, կորաքիթ, չարչարված դեմքը սեւ էր, խորունկ կնճիռներով, աչքերը փոս էին ընկել ու վառվում էին չար կրակով, նեղ մորուքը թպրտում էր մերկ կրծքին, քրծենու գոտիկով պրկված կիսամուշ-

տակի անցքերից երեւում էին շան կողերի պես՝ ծգված մաշկով կողերը: Պարզելով հնածիսական նշանով ձեռքը՝ սուր, տհաճ ձայնով գոռում էր.

- Ուղղափառնե՛ր, նշաններ են բերել երեք նավով: Ու մարդ խարանելու նշաններ են, ու թագավորն ինքն է դրանց հետեւից գնացել, ու բերել են Կոտլին կղզի, բայց ոչ մեկին ցույց չեն տալիս, ու պահակներ են դրել, ու զինվորները հսկում են օրուգիշեր:

- Ճիշտ է... ճիշտ է,- քրթմնջաց ամբոխը:- Մենք էլ ենք լսել... Խարանները բերել են... Էս քանի օրը սրա նման մեկն էլ նույնն էր գոռում:

Թիկունքից երկու բեղավոր սերժանտ սկսեցին հրմշտել, քշել ժողովրդին: Մի քանիսը հետ քաշվեցին, մյուսները ոչխարի հոտի պես ավելի սեղմվեցին դեպի տակառը... Իսկ քրքրված մարդը մատները չռած՝ գոռում էր.

- Այ էստեղ, բթի ու միջնամատի արանքն է ցարը նշան անելու, ու պաշտելու են նրան: Լսե՛ք, քրիստոնյանե՛ր, լսե՛ք... Մոսկվայում արդեն բոլորին ստիպել են, որ միս ուտեն բարեկենդանին ու մեծ պասին: Ու երեք սարկավագի էլ Սոլովկի են ուղարկել, որ միաբաններին միս ուտել սովորացնեն: Ու ամբողջ ժողովրդին, կնիկ թե տղամարդ, թագավորը պիտի խարանի, ու կալվածատերերի ու գյուղացիների ունեցած հացն էլ վեր են գրելու, ու ամեն մեկին թողելու են մի բուռ, ու մնացած վերգրած հացը խարանվածներին են տալու, ով էլ որ կնիք չունեցավ, հաց չի ստանալու: Վախեցեք էդ կնիքներից, ուղղափառնե՛ր: Փախե՛ք, թաքնվե՛ք: Վերջին ժամանակներն են հասել... Նեռն է եկել: Նե՛ռը...

Խաչ անելով ու թքելով՝ հետ էին քաշվում գեղջուկները: Մի քանիսը փախան: Կնանիք սկսեցին ողբ անել... Ոտքեցին խսիրով փաթաթված տղեկին, շուռ տվին կարկանդակներով տեփուրը: Քսան զինվոր մահակներով հասցնում էին մեջքերին ու գլուխներին: Քրքրվածն իջավ տակառի վրայից ու գլուխը կախ հեռացավ: Նրա առաջ հետ էին քաշվում, եւ նա անհետացավ դարսակի ետեւում:

Երբ Պյոտրը, լայնաթափ անցնելով ջրափոսերը, մոտեցավ դեպքի վայրին, զինվորներն արդեն ցրել էին բանվորներին, ու միայն ոստիկանապետ Իվաշինն էր մազերից քարշ տալիս վյատսկցի ինչ-որ վտիտ գեղջուկի, վերջինին, որ ձեռքի տակ էր ընկել: Վյատսկցին, ձեռքերը տարածած ու կռացած, հնազանդ գլուխը դարձնում էր այն կողմ, ուր քարշ էր տալիս ղեկավարությունը, իսկ Իվաշինը սարսափած աչքը շլում էր մոտեցող ցարի կողմը. գործը լուրջ էր՝ խռովություն, եւ նրա՝ ոստիկանապետի թերացումը:

«Կորա՜ծ եմ, կորա՜ծ, տեղում կսպանի»,- արագ մտածում էր նա՝ պտտելով խոնարհ գլուխը:

- Ի՞նչ: Ո՞վ: Ինչո՞ւ,- հատու հարցրեց Պյոտրը: Այտը թրթռում էր: Մեջքից բռնելով վյատսկյան գեղջուկի կիսամուշտակը, շրջեց, խելագար աչքերին մոտեցրեց նրա նիհար, փոս ընկած այտերով, անխուսափելի մահվան հնազանդված դեմքը: Մոտեցրեց, կառչեց հայացքով, ասես խմեր նրա ողջ անպաճույճ գեղջկական ճշմարտությունը:

- Տեր Հիսո՛ւս,- կապտած շրթունքներով մրմնջաց վյատսկցին: Բայց Պյոտրն արդեն դեն էր շպրտել նրան ու դիմեց Իվաշինին.

- Բարեհաճեք զեկուցել աշխատանքի խանգարվելու պատճառը, պարո՛ն օբեր-պոլիցմեյստեր:

Իվաշինի սափրած, չեչոտ դեմքին մոխրագույն փառ նստեց: Մինչեւ վերջին ջիղը ծգվելով՝ զեկուցեց.

- Վաճառողը կարկանդակներ էր բերել, ժողովուրդը սկսեց խլխլել, կռվշտոց ու անկարգություն սկսվեց, քիչ էր մնում ճզմեին տղային,կարկանդակները լրիվ ոտի տակ տվին:

Խաբե՛ց, խաբե՛ց Իվաշինը, եւ ինքն էլ հետո շատ էր զարմանում, թե ինչ ճարպիկ դուրս պրծավ զզվելի պատմությունից. ցարի աչքերին ազնիվ նայելով խաբելն ավելի հաջող էր ստացվում: Պյոտրը հանգիստ հարցրեց.

- Ինչո՞վ էին կարկանդակները:

- Սնկով, ծերդ մեծություն:

Իվաշինն արագ պպզեց ու ցեխից քաշելով՝ ցարին տվեց կարկանդակը: Պյոտրը կիսեց, հոտ քաշեց ու դեն նետեց:

- Իսկ սա, ծերդ մեծություն,- Իվաշինը սապոգով հասցրեց վյատսկյան գեղջուկի ոտքերին,- էդ բոլոր գողերի մեծն է, խառնակիչ ու գող:

- Բիրո՛վ դրան, բիրո՛վ:- Պյոտրը շրջվեց ու ծուռթաթ, բայց արագ առափնյայի երկայնքով գնաց դեպի աշխատատեղերը: Իվաշինը, եռանկյուն գլխարկն ու սուսերը բռնած, վարգով հետեւում էր նրան:

Ճահճուտ ափի երկայնքով, որին խփվում ու հետ էին քաշվում սառցասեւ ալիքները, վխտում էին երեք հարյուրին մոտ մարդկային կերպարանքներ. օրյոլցիներն ու տուլացիները՝ թաղիքե տաք շորերով էին, կիրգիզները՝ կիբիտկաների պես սրագագաթ, մորթե ականջակալներով գլխարկներով, եղջրակաշի կոֆտաներ հագած պոմորները, շան մորթուց մուշտակներով սիբիրցիները ու այլեւայլ քոչվոր ժողովուրդ, որը փալասներով փաթաթված, որը պարզապես վրան խսիր գցած:

- Հե՛տ նայի... Նայի՛... Նայի՛...,- շշնջացող ձայներ տարածվեցին ափով մեկ: Ձեռքերն ու թիկունքները չխնայելով, տասնապետերի եւ ցարի սուր

հայացքից քշվող այդ բոլոր տանջահար, լնդախտից կերված, մկնատամով ու ցանով պատված այդ մարդիկ, մեծ քաղաքի այդ բոլոր կառուցողները «աշխույժ եւ ուրախ», ինչպես գրված էր աշխատանքների կանոնակարգում, հիմնասյուներ էին խփում, վազքով գերան քաշում, դդրդոցով թափում գերանները, սղոցում, գլորում. հիսուն հոգի, մինչեւ գոտկատեղը ջրի մեջ կանգնած, փայտասալ էին հղկում: Թաց փայտի, ծյութի ու ծխի կծու հոտ էր գալիս խարկվող հիմնասյուներից:

Այդ բոլոր մարդիկ ասես հողի ոգիներ լինեին՝ կանչված չգոյությունից, որ անտրտունջ եւ առանց հոգնության պատեր, ամրություններ, պալատներ կանգնեցնեն, սանձեն գետերի հոսքը, քամի որսան առագաստների մեջ, պայքարեն կրակի դեմ:

Մեկ բառը, հոնքերի մեկ շարժումը բավական էր Նեւայի ափը մեկ սաժեն բարձրացնելու համար, գրանիտով կաշկանդելու, բրոնզե օղակներ հագցնելու, այ այնտեղ, երեք գջլած եղեւնիներից աջ, ահռելի շինություն բարձրացնելու համար՝ ջրանցքներով, կամարներով, թնդանոթներով ու դարպասներով եւ բարձր ցցունքով, որի ոսկու վրա կբոցկլտա հյուսիսային արեւը:

Եղունգը կրծելով՝ Պյոտրը հոնքատակից նայեց այն տեղին, որտեղ հառնելու էր ծովակալության շենքը: Այնտեղ, ցածր ափին, երկարուկ բարաքներ էին՝ ծյութով, կանեփաթելով, թուջի ծուլակտորներով, շուրջը փայտամածներ էին կառուցվում, ծգվում էր ձեռնասայլակների շղթան՝ ջրանցքներից դուրս թափվող կանաչավուն հողի բլրակներով, եւ դեռ ինչքան ցասում ու անհամբերություն էր պետք, որպեսզի ճահիճներից ու մուժից հառներ դյութական քաղաքը:

Իսկ այստեղ ինչ-որ կարկանդակներ են խանգարում:

Շինհրապարակի վերջում Պյոտրը շրջվեց դեպի կամրջակները, որոնց տախտակների արանքից նրա քայլերի ծանրության տակ ճպճպաց ջուրը: Այստեղ հանեց ժամացույցը, սեւ եղունգով բացեց կափարիչը. ուղիղ տասնմեկի կեսն էր, եւ քայլեց դեպի ճոճվող ու ճռռոցով հիմնասյուներին խփվող միակայմ նավը:

Բամբակած կարճ բաճկոնով ու դրա տակից ծալ-ծալ իջնող լայնափողք դարչնագույն շալվարով, ընդգծված այտոսկրերով նավաստին ուրախ նայեց Պյոտր Ալեքսեեւիչին, գրպանը խցկեց ճենապակե ծխամորճն ու ձեռքերի արագ շարժումով բարձրացրեց առագաստը: Մինչ այդ անգոր ճոճվող նավն անմիջապես ասես լարեց մկանները, կողքի հակվեց, կայմը ճռնչոցով կռացավ ուժեղ քամու տակ: Պյոտրը ձեռքը քաշեց կամրջակի

բազրիքից, տեղը դրեց ղեկը, ու նավը սահեց, թռավ ալիքի կատարին ու լողաց Նեւայով:

Պյոտրը ատամների արանքից նետեց.

- Վատ քամի չի, հը՞, Ստեփան:

Նավաստին լայն ժպտաց ու քամու տակ աչքերը կկոցելով՝ թքեց:

- Լուսաբացին նորդ էր, լույսը բացվեց՝ դառավ նորդ-վեստ:

- Փչո՛ւմ ես, նորդ-վեստ-վեստ:

Այս խոսքի վրա Ստեպանը քմծիծաղեց, օրորեց գլուխը, բայց չպատասխանեց. չնայած Պյոտր Ալեքսեեւիչի հետ հին ծովագնաց-ընկերներ էին, համենայնդեպս վիճել պետք չէր:

Կառուցվող ծովակալության մոտ, որտեղ արդեն մի սաժեն բարձրացել էր ամուր գերաններով կապված, խեժ բուրող առափնյակը, Պյոտրը ցած թռավ նավակից եւ սովորականի պես շտապելով ու ձեռքերը թափահարելով՝ քայլեց դեպի կանեփաթելի պահեստները:

Նավաստիները, աստիճանավորները, բանվորներն ու զինվորները հեռվից լսեցին ցարի ծուռթաթ ու ծանր ոտնաձայնը եւ խոնարհվեցին, կռացան թղթերի ու գրքերի վրա, յուրաքանչյուրն իր գործին անցավ:

Աղոտ,պղպջակ հիշեցնող արեւը կես օր կախված էր եղեւնու ցանցառ անտառակի վրա ու գլորվեց ներքեւ: Սուգ կարմիր լույսը բռնեց ողջ երկինքը. ածուխների պես հուրհրում էին արճճե ամպերի եզրերը, որ հազարավոր վերստերի վրա ծածկել էին արեւամուտը, այնտեղից սեւակարմիր մշուշի քուլաներ էին բարձրանում, շառագույն, մռայլ հոսում էր Նեւան, հրապարակի ջրափոսերը, աղուրները, տնակների փայլարե լուսամուտներն ու սոճիների բները անդրադարձնում էին այդ հուրհրատումը, եւ աշխատատեղերում այսուայնտեղ կայծեր սփռող խարույկները խուն ու գունատ էին թվում:

Բայց ահա լուսավառ ասեղի պես շողարձակեց թնդանոթը բերդապատնեշի վրա, թնդաց ու հեռվում արձագանքեց զարկը, ճարճատեցին թմբուկները, ու բանողների երկար շարքերը ձգվեցին բարաքների կողմը:

Բարձր տանիքներով, գերանակապ երկար ու ցածրանիստ շինությունների առաջ, զինվորների պահպանության տակ, գոլորշի էին արձակում կաթսաները, մոտեցող ամբոխի մեջ, չնայած խիստ հրամանին, պտտվում էին թունդ մեղրաջուր ծախողները, գողերը, չարչիները, գլխից ձեռ քաշած մարդիկ, առաջարկում էին ոսկրահատիկ գցել, զառ խաղալ, թութուն ծխել, հաշմվածներն ու թափառականները ողորմություն էին խնդրում, տարատեսակ ամբոխ էր հրմշտվում՝ պատրաստ կողոպտելու, ճանկելու, տաքա-

նալու: Իհարկե, տալիս էին վզակոթներին, վռնդում, բայց բոլորի հետեւից չես հասնի, դուրս պրծնողներ էլ էին լինում:

Երկրորդ Վասիլեյան բարաքում, ինչպես ամենուր, հոգնած ու մրսած բանողները շրջապատել էին կաթսան, եւ ամեն մեկն իր թասն էր դեմ անում բեղավոր ենթասպային, որն անընդհատ կրկնում էր.

- Կամաց, տղե՛րք, հանգի՛ստ:

Իր բաժինը ստացածը քարշ էր գալիս բարաք, նստում թարեքին եւ ուտում էր, լուռումունջ. ուտելիքի վրա լեզու շարժել չի կարելի՝ տերունական է: Հացն իրենց փողով էին առնում, ասում էին՝ ցարական հացին ձիու թրիք են խառնում:

Պարաշաների գլխին երկու ծայրից վառվող մարխերը մի կերպ էին լուսավորում եռաշար ձգվող թարեքները, ծակ-ծակ, անհոգկել պատերն ու առաստաղի տակ կեղեւաթել պարաններից կախկխված բազմատեսակ լաթու պատառը: Փորները լցնելով, տնքալով ու խաչ անելով՝ ժողովուրդը սողում էր թարեքների տակ, վրաները գցում քուրքերը, խսիրները, փալաս-փուլուսն ու քնում մինչեւ լուսաբացի թմբկազարկ: Դռների մոտ ամբողջ գիշեր հետուառաջ էր անում սաղավարտակիր, ուսափոկը գցած, մեծ ալեբարդով զինվորը, հազում էր, որ վախենան, ու ժամանակ առ ժամանակ նոր մարխ էր վառում: Խստագույնս պատվիրված էր՝ երես չտալ, առավել՝ որ պարապ լեզվին տվող չլինի:

Բայց առանց մեղքի չես ապրի, ու զինվորին կարելի է մի կոպեկ տալ, որ չլսի, ինչ պետք չի լսել, ու բարաք էր մտնում վատ մարդը՝ Սոնտատոնը, որ ռուս էլ չէր, բարձրանում էր ուղիղ առաստաղի տակ ու թաշկինակի վրա բացելով իր ողջ տնտեսությունը՝ գինու սրվակը, հատիկ խորանարդները, թութունն ու զառերը, սկսում էր եղունգով խզզացնել՝ խը՛զ, խը՛զ, խը՛զ, իբր՝ էստեղ եմ, սպասում եմ:

Ամեն գիշեր նրա մոտ էին հավաքվում Սեմյոն Զայացը, Միտրոֆանը՝ նույնպես Զայաց, Պոչատ Սեմյոնը, Չերկասցի Անտոնը, շշուկով զրույց էին անում, զառ գցում, զնգացնում կոպեկներն ու զգույշ, որ շատ աղմուկ չլինի, խարդախելու համար հասցնում Սոնտատոնի ականջատակին: Ժամանակ էին անցկացնում:

Ու որ բռնեին ու ծեծեին էլ, մեկ չի՞. տերունական գործի վրա դեռ ոչ մեկը երեք տարուց ավելի չի ձգել:

Այդպես էր եւ այսօր: Հավաքվեց ընկերախումբը, մոմի կրճոնքը վառեցին, հանեցին ոսկրահատիկները, սկսեցին խաղալ: Զինվորը հետուառաջ էր անում մարխի տակ, ձանձրույթից հորանջում: Հանկարծ լսեց՝ ինչ-որ

տեղ ներքեւում, թարեքների վրա շշնջում են.

- Հա՛յր Վառլաամ, բա մեր վրա ո՞նց է կնիք դնելու:

- Բութ մատի ու միջնամատի արանքը, ասում են, հաստագլո՛ւխ:

- Հա՛յր Վառլաամ, էդ ճի՞շտ է:

- Ճիշտ է,- պատասխանեց ցերեկվա աղաղակող ձայնը,- էդ խարաններ-ը երկաթից են, կշիկացնեն ու կդնեն, ու վրաները խաչ է, մենակ թե մերը չի, քրիստոնյայի չի:

- Տե՛ր Աստված, ի՞նչ անենք: Բա որ չթողե՞մ:

- Մինչեւ էդ դեղաթույն կտան, թութուն կքաշես, դիմակներով պար կբռնեն շուրջդ, տակառներում կթռչկոտեն, ու տկլոր կնանիք ցույց կտան:

- Ճիշտ է, ճիշտ է, տղե՛րք, անցած բարեկենդանին իմ աչքով եմ տեսել՝ տակառ էին քշում, կնանիք էլ հետները:

- Բա ի՞նչ եմ ասում:

Զինվորը, լսելով, որ Մոնտատոնի խմբի ձայները չեն ու շատ վատ խոսակցություն է գնում, մոտեցավ, իջեցրեց ալեբարդն ու թարեքի տակ նայելով՝ ասաց.

- Հե՛յ, ո՞վ է էդտեղ մրթմրթում, սատանե՛ք: Քնա՞ծ չեք:

Ձայներն անմիջապես լռեցին, ինչ-որ մեկն իրեն քաշեց բոբիկ ոտքերը:

Զինվորը մի քիչ էլ կանգնեց, քթախոտ քաշեց ու ավելացրեց.

- Սրիկանե՛ր, մյուսներին էլ չեք թողում քնեն: Չգիտե՞ք մեր թագավորի խիստ հրամանը՝ բանվորական կացարաններում չխոսել, մենակ, եթե ուտելիք կամ ասեղ, կամ աղ եք ուզում: Հիմա շատ խիստ է:

Ու հենց պատրաստվում էր երկրորդ պտղունցը քաշել բեղերի տակ, զույգ քթանցքը, աղաղակող ձայնը տարածվեց շինությունով մեկ.

- Սո՛ւտ ես: Մեր թագավորին գերմանացոնց մոտ փոխե՛լ են,էս մեկը թագավորը չի՛, իմ աչքով եմ տեսել՝ երես չունի, ու երեսն էլ մարդու չի, գլուխը դողացնում է, աչքերը շուռումուռ ածում, ու հողը չի պահում նրան, իջնո՛ւմ է: Վա՛յ, վա՛յ, ռուսաց ողջ հողին: Խաբե՛լ են մեզ, ուղղափառնե՛ր...

Բայց այստեղ զինվորը, քթախոտի փողակն ու ալեբարդը գցելով՝ գոռաց «հասե՛ք» ու թարեքներից ներքեւ սողացող վախեցած ժողովրդին հրմշտելով՝ վազեց դեպի ելքը: Աղմուկ բարձրացավ: Մի կին ծղրտաց խսիրի տակ, մյուսը մարխին մոտ թռչելով՝ ծղրտաց: «Խփե՛ք դրան»,- գոռում էին մի քանիսը: «Ախր ո՞ւմ խփենք», «Տրորո՛ւմ են, տե՛ր Աստված»: Մոնտատոնը, իր ունեցվածքը թողած, օձի պես սողաց դեպի ելքը, նրան բռնեցին, պոճոկեցին մազերի կեսը:

Ու վերջապես ներս թափվեց պահակախումբը՝ ջահերով ու մերկաց-

ռած սրերով: Լռություն տիրեց: Հաղթահասակ, բութ դեմքով սպան, նայեց գզգզված մազերով, բաց բերաններով գեղջուկներին, աչքերին քաշեց եռանկյուն գլխարկը եւ պահակախմբի կողմը կիսաշրջվելով՝ հստակ ու կտրուկ հրամայեց.

- Բռնե՛ք բոլորին: Գաղտնի գրասենյա՛կ:

Գաղտնի գրասենյակը բարձր պարսպով պատած բավական մեծ տարածք էր զբաղեցնում: Գլխավոր շենքը աղյուսից էր, իսկ կցաշենքերը՝ բանտերը, խցերը, կազեմատները, գերանակապ էին, ու անընդհատ նորերն էին ավելանում, քանի որ տեղը չէր հերիքում բոլոր կողմերից բերվող պետական հանցագործներին:

Գլխավոր շենքում, որ ցածրանիստ, կարմիր, կղմինդրածածկ հաստ պատերով ու ոչ մեծ, գետնից բարձր ճաղապատ պատուհաններով շինություն էր, տեղավորված էին՝ ուղիղ դիմացը՝ ցածր առաստաղով, պատերի երկայնքով շարված կաղնե նստարաններով մի սենյակ՝ պահակախմբի հսկողության տակ սպասողների համար, աջից՝ դպիրների սենյակը, ձախից՝ Գաղտնի գրասենյակի պետի աշխատասենյակը, եւ այնտեղից կոփածո երկաթե դուռը տանում էր զնդանը՝ միջանցքներով ու խցերով կամարակապ շինություն: Հետնաբակում, պիտանի ու ոչ այնքան, տարբեր գործիքներ էին թափված, խսիրներ, ցցերի տրցակներ, ժանգոտած ոտնաշղթաներ, կաշվի կտորներ, դագաղներ, ու դրված էր «ճաղերը»՝ խոշտանգման ամենասարսափելի գործիքը, որ հազվադեպ էր օգտագործվում:

Բոլոր սենյակները սվաղածեւ ձեռքերի ու մարմինների դիպչելուց արդեն կեղտոտված էին: Բոլոր շինություններում հատակը քարած էր ու կեղտակուր, կաղնեփայտե ամուր սեղաններ ու նստարաններ էին դրված:

Խստաշունչ տեղ էր, միայն պետի աշխատասենյակում օրուգիշեր վառվում էր բուխարին, քանի որ Տոլստոյը մրսկան էր եւ հարցաքննելիս հաճախ աթոռը մոտեցնում էր կրակին ու փակում աչքերը՝ լսելով, թե ինչպես է խրճվում մեղադրյալը, ու դպիրն ինչպես է ճռճռացնում սագափետուրը:

Ժամը ութին շխկաց դրսի դուռը, եւ մեջընդմեջ նստած կալանավորների ու զինվորների սենյակ մտավ Պյոտրը, աչքերը կկոցած՝ նայեց այն կողմ, ուր գոլորշու խիտ քուլաների մեջ լողում էր ճարպամոմի կտորի լույսը՝ աղոտ լույս գցելով թղթին կռացած դպիրի ճաղատն ու սարսափահար վեր թռած շղթայվածներին, մատները քթանցքներին տարավ, աղմուկով խնչեց, սրբեց քիթը կիսամուշտակի փեշով ու կռանալով՝ մտավ նախագահի աշխատասենյակ:

- Լավ, լավ, նստիր,- քրթմնջաց ցարը Տոլստոյի կողմն ու նստելով բու-

խարու առաջ՝ կրակին պարզեց կարմիր, ուռած երակներով ձեռքերն ու սապոգների հսկա ներբանները:- Փուչ ժողովուրդ են, պարզ բանը չեն կարողանում, փայտամած կապելն ի՞նչ է, հիմարնե՛ր,- շարունակեց նա՝ ակնհայտորեն ցանկանալով պարծենալ:- Ճաֆիրովը Ռիգայից է ինժեներ բերել տվել, գլուխգովան ու հիմարի մեկն է: Բարձրացա տանիք, ցույց տվի՝ ոնց են փայտամած կապում: Ինժեներիկը ծվծվում է. «Դաս իստ ունմեգլիխ, հե՛ր գոթ»: Ես էլ կեղծամի տակ հուպ տվի դրա քունքերը, ասում եմ՝ մեգլիխ, սա՞ է մեգլի՞խը...»:

Քմծիծաղ տալով՝ Պյոտրը հանեց կարճափող, կրծմրծած ծխամորճը, մատներով ածխակտոր քաշեց օջախից, վեր-վեր արեց ափին ու խցկեց ծխամորճի մեջ: Տոլստոյն ասաց.

- Ձերդ մեծություն, տիրացու Գուլտյաեւի գործը, որ անցած ամիս Երրորդության զանգակատան վրա վիուկ էր տեսել ու ասել էր. «Պիտերբուրխն ավերակ կդառնա», քննված է, բոլոր վկաները հարցաքննվել են, մնում է ձերդ մեծության ստորագրությունը:

- Գիտեմ, հիշում եմ,- ծխի քուլա արձակելով՝ ասաց Պյոտրը:- Գուլտյաեւին, որ էլ հիմար խոսքեր չխոսի, մտրակածեծ անել ու մի տարով տաժանակրության:

- Լսո՛ւմ եմ,- թղթերի վրա կռանալով՝ ասաց Տոլստոյը:- Իսկ վկանե՞րը:

- Վկանե՞րը,- կրակի մոտ տաքացող Պյոտրը լայնաբերան հորանջեց:- Դրանց անձնագրեր տուր, երաշխավորությամբ ուղարկիր ըստ բնակության վայրերի:

Այդ պահին դուռը թակեցին: Տոլստոյը խիստ նայեց ակնոցի ապակիների միջով ու շրթունքները սեղմելով՝ կարգադրեց.

- Մտի՛ր:

Հայտնվեց նույն բութ դեմքով սպան՝ կուրծքը ցցած. ձեռքը սուսերի երախակալին, մյուսը՝ թաց եռանկյունի գլխարկին տարած, զեկուցեց, որ տերունական ծառայությամբ իր կողմից ձերբակալվել է ինսուլնութ մարդ՝ արական ու իգական սեռի, արդեն բակում են, հետագա կարգադրություն է խնդրում:

Տոլստոյը, աչքերը կկոցելով, շրթունքներն էր ծամծմում. արտակարգ սեւ ու փռչոտ հոնքերով լայն ճակատը կնճռոտվեց:

- Ո՞ւմ ես թագավորական մեղադրանք ներկայացնում: Հատկապես ո՞ւմ,- հարցրեց նա:- Բոլոր ինսուլնութ մարդկա՞նց ես ներկայացնում, ճի՞շտ եմ հասկանում:

Եռանկյունի գլխարկին սեղմված սպայի ձեռքը դողաց. լուռ էր, արձանացած: Ցարը, ոտքերը պարզած, կլոր աչքերով նայում էր կրակին ու ժամանակ առ ժամանակ թքում վրան: Ոտքերի ծայրերին մտավ ատենադպիրը, խոնարհվեց ցարի բազկաթոռին, արագ նստեց իր սեղանիկի մոտ ու քիթը թղթի վրա տարուբերելով՝ սկսեց գրել: Տոլստոյը դուրս գալով սենյակի մեջտեղը՝ հաճույքով հոտոտեց ոսկե քթախոտատուփը, ուսին հակեց խորամանկ, ծույլ դեմքը ու շփոթահար սպային զննելով՝ ռնգախոս ասաց.

- Մե՛ծ գործ ես բռնել. ինչսունութ մարդու ես մեղադրում, վկաներով՝ մի հազար կդառնա: Մի լրիվ գունդ: Քանի՛ մտրակ է մաշվելու: Ինչքա՛ն թուղթ պիտի մրենք: Տե՛ր Աստված,գործ բացեցիր, հա՛: Ինչու չես խոսում, բարեկա՛մս, թե՞ վախեցար:

Եվ ժպտալով՝ աչքը շլեց ցարին ու մանրիկ քրքջաց՝ բարակ մատներով կաֆտանից թափ տալով թութունը: Սպան ընդհատուն ու հուզված ձայնով քրթմնջաց.

- Ձերդ գերազանցությո՛ւն, երկրորդ՝ Վասիլեյան բարաքում հայհոյական խոսքեր են ասվել թագավորի հասցեին, եւ ասողը գող ու շրջմոլիկ Վառլաամը՝ ընկերների հետ...

Խոսքի կեսին սպան ցնցվեց ու հետ-հետ գնաց՝ այնպիսի ուժով շպրտեց Պյոտրը ծանր բազկաթոռը կրակի մոտից ու հասակով մեկ ծգվելով, ֆսսալով՝ ցրիվ տվեց ծխամորճի վառվող թութունը. դեմքը կարմիր ու ծռմծռված էր.

- Դրան բեր այստեղ...

Տոլստոյի դեմքն էլ այլակերպվեց, ինքն էլ ասես կծկվեց-չորացավ եւ արագ ասաց.

- Բեր դրան, մենակ դրան առայժմ, ու էստեղ չէ, ուղիղ զնդան: Ընկերներին տարեք կազեմատ, խի՛ստ հսկեք... Գլխով ես պատասխանատու,- սուր ճչաց նա՝ մոտ թռչելով սպային, որը լրիվ շրջադարձ արեց եւ արագ դուրս եկավ:

Պյոտրն արձակեց կիսամուշտակի օձիքի պղնձե կեռիկն ու ծուռ քմծիծաղելով՝ ասաց.

- Ասո՛ւմ էի ձեզ, Ձերդ գերազանցությո՛ւն՝ Վառլաամը Պիտեբուրխում է: Չէիք հավատում:

- Ձերդ մեծությո՛ւն...

- Ձե՛նդ: Ապո՛ւշ: Տես, հա՛, Տոլստո՛յ, հանկարծ քո գլուխն էլ չթռնի:

Պյոտրն ուժգին հրեց երկաթե դուռը ու կռանալով՝ նեղ միջանցքով գնաց զնդան: Իսկ Տոլստոյը մի պահ անշարժ կանգնած էր, հետո սառը,

չոր ափը տարավ ճակատին, տրորեց եւ թղթերն արագ թեւի տակ՝ մանրաքայլ հետեւեց թագավորին:

Այդպես սկսվեց աստվածահարգ քարոզչի մեծ ու սարսափելի գործի քննությունը, որ տեւելու էր երկար ամիսներ: Ու շատ մարդիկ էին գլուխները դնելու, ու խոսակցություններն այդ գործի մասին տարածվելու էին Ռուսաստանով մեկ:

Վառլաամն արդեն քառասուն րոպե կախված էր գելարանից: Մեջքին ոլորած, գլխավերեւում կապած ձեռքերը փոկերով կապել էին լայնադիր գերանին, գլուխը կախվել էր, խճճված մազերը ծածկել էին դեմքը, խառնվել երկար մորուքին, մերկ, ցցված կողոսկրերով, ձգված ու կեղտոտ մարմնին մրի հետքեր կային, ու կողից թանձրացած արյուն էր ծորում. Վառլաամին հենց նոր մտրակի երեսունհինգ հարված էին հասցրել, փորն էլ ավելի ճիպոտներով դաղել: Ցղածիգ կծկված մատներով կեղտոտ ոտքերը անուրով պրկել՝ կապել էին գերանին, որի վրա, նրա ողջ մարմինը ձգելով, կանգնած էր կարճափեշ քուրքով մի ամրակազմ մարդ՝ դահիճը:

Դիմացը, սեղանի մոտ, աղյուսակապ կամարներին լույս գցող երկու մոմերի տակ նստած էին. Պյոտրը՝ փռված ու գլուխը հետ գցած, վզի երակները փքած, մեջտեղում՝ Տոլստոյը, ու նրա աջից՝ մի հսկա, կարմադեմ առյուծի նման մռայլ մարդ՝ Ուշակովը. նա առանց կեղծամի էր, աղվեսենու գդակ էր գլխին, հագին՝ թավշյա օձիքով մուշտակ:

- Չիջեցնե՞նք, հանկարծ շունչը չփչի,- Ուշակովի հենց նոր արձանագրած ցուցմունքները կարդալով՝ ասաց Տոլստոյը: Ուշակովը նայեց անշարժ կախվածին եւ ծխախոտից ու մրսելուց խզզացող ձայնով ասաց.

- Օղի տանք, ուշքի կգա:

Տոլստոյը նայեց ցարին: Պյոտրը գլխով արեց: Դահիճը շշուկով դիմեց սյուների ետեւի մթությանը:

- Վա՛սյա, ա՛յ Վասյա, շիշը անկյունում է:

Մթան միջից դուրս եկավ կլորադեմ, կանացի բերանով, գանգրահեր մի տղա, որը խնամքով բերում էր օղու քառանիստ շիշը: Երկուսով հետ գցեցին կախվածի գլուխը, մի քիչ էլ բնբնացին ու հեռացան: Վառլաամը կամացուկ տնքաց, չփչփացրեց շրթունքները, պտտեց գլուխը... Ու նորից Պյոտրի վրա, ինչպես վերջերս, սեւեռվեցին մազափնջերի տակից շողացող սեւ աչքերը: Տոլստոյը սկսեց բարձրաձայն կարդալ հետաքննության արձանագրությունը: Հանկարծ Վառլաամը խոսեց թույլ, բայց հստակ ձայնով.

- Ծեծեք ու տանջեք, վասն մեր տեր Հիսուս Քրիստոսի պատրաստ եմ դիմադարձ կանգնելու չարչարողներիս...

- Ձե՛նդ, ձե՛նդ,- ուզում էր սաստել Ուշակովը, բայց Պյոտրը բռնեց նրա ձեռքն ու ականջը սրելով՝ կռացավ սեղանի վրա:

- Ողջ ուղղափառ ժողովրդի անունից եմ ասում: Ցա՛ր, քեզանից արնախում ցարեր են եղել, չեմ վախենում քո կատաղությունից,- երբեմնակի դադարներով, ասես դժվարընթեռնելի գիրք կարդալիս, շարունակեց Վառլաամը:- Մարմինս կսպանես, բայց ինձ չես պահի, ցա՛ր: Կստիպես չորեքթաթ քայլեմ, սանձ կդնես բերանիս ու լեզուս կկտրես, ու հողն իմ ինձանից կխլես, բայց ինձ չես պահի: Բարձր ես բազմած, ու քո թագն է հանց արեւ, ու չես գայթակղեցնի: Ես քեզ գիտեմ: Կարճ է կյանքդ: Թագդ կխլեմ, ու գայթակղությունդ ողջ կցնդի գարշահոտ ծխի պես:

Պյոտրը, շրթունքներն իրարից պոկելով, խոսեց.

- Ընկերների՛դ, ընկերների՛դ անունը տուր:

- Ոչ ընկեր ունեմ, ոչ հանցակից, ողջ Ռուսիան է ինձ ընկեր:

Պյոտրի բերանն ահավոր ծռմռվեց, այտը թրթռաց, խոնարհեց գլուխը, կռացրեց, աղմկոտ շնչելով, ատամները սեղմած՝ դիմանում ու զսպում էր ջղաձգությունը: Ուշակովն ու Տոլստոյը քարացել էին բազկաթոռների մեջ: Դահիճն ամբողջ ուժով ընկավ գերանի վրա, ու Վառլաամը հետ գցեց գլուխը: Միայն մոմերի ճրթճրթոցն էր լսվում: Պյոտրը վերջապես վեր կացավ, մոտեցավ կախվածին եւ, ասես մտորելով, երկար կանգնած էր նրա առաջ:

- Վառլա՛ամ,- խոսեց նա, ու բոլորը ցնցվեցին: Կանացի բերանով տղան, վիզը ծգած, սյան ետեւից քնքուշ կապույտ աչքերով նայում էր ցարին:

- Վառլա՛ամ,- կրկնեց Պյոտրը:

Կախվածը չէր շարժվում: Ցարը ափը դրեց նրա կրծքին՝ սրտի տակ:

- Իջեցնե՛լ,- կարգադրեց նա,- բացել ձեռքերը: Վաղվա համար ճաղերը պատրաստեք:

Պայծառափայլի՝ դեռ մերկ պատերով, չտեսնված բարձր լուսամուտներով նոփ-նոր հյուրասրահում, երկու հարյուր մոմերի լույսի տակգրոս-ֆատեր էին պարում: Չորս երաժիշտ՝ ջութակը, ֆլեյտան, շեփորն ու կոնտրաբասը, քրտինքի մեջ կորած, անընդհատ փչում ու ճզվզում էին:

Բոյարներն ու բոյարուհիները, չնայած եւ գերմանական, բայց ռուսավարի ծանր՝ համարյա փթանոց զգեստներով, առանց զարդերի,- թանկարժեք զարդեղենն այն ժամանակ արգելված էր,- բայց խնձորի պես դիմաներկված ու մի գծով հոնքերը թանձր սուրմայած, անճարակ կառչած պարընկերներին, թռչկոտում ու բարձր ցատկոտում էին մոմած հատակին՝ պարողների շրջանակում:

Շրջանի կենտրոնում կանգնած էր նորածեւության ու խրախճանքների հերոսը՝ Ֆրանց Լեֆորտը, ֆրանսիացի աղմկարարը: Հարբած աչքերով, մաքուր սափրած, պսակված էր հսկա շիկակարմիր կեղծամով, որի խոպոպերը համարյա մինչեւ գոտկատեղն էին հասնում: Ոսկե կաֆտանը փքվել էր ազդրերի վրա: Թեւքածալից թափվող ժանյակներից ձեռքը թափ տալով՝ նա ձայնակցում էր երաժշտությանն ու կարմիր կոշիկով ոտքը համաչափ խփում հատակին:

Նրա կողքով վախվորած ու ցատկոտելով սուրում էին եւ մահուդե սերթուկի մեջ պրկած ազնվականական մսերը ցնցող քրտնմխած գվարդիայի վառատարը,եւ ձկնաչք, փոս ընկած կրծքով ու հսկա բոտֆորտներով լողլող, մեծամիտ օստզեենացին, եւ առավոտից հարբած, լկտի թագավորական սպասյակը, եւ հինավուրց տոհմի բոյարը, որը լավ չէր հասկանում որտեղ է՝ հարբած շուրջպարո՞ւմ, դժոխքո՞ւմ, թե այս ամենը պարզապես գեշ երազ է...

Ծխի քուլաներ էին սողում սրահ ցածրանիստ սենյակից, որտեղ երկար սեղանների շուրջը շախմատ խաղում, ծխամորճ ծխում, խմում ու մեկմեկու պինդ մեջքերին էին թփթփացնում Պյոտրի ճտերը:

Եվ պարողների ու հարբածների արանքով անվերջ անցուդարձ էր անում այծամորուք, չորչորուկ մի մարդ՝ սարկավագի դիպակե ժամաշապիկով ու գլխին խավաթղթե ոսկե խույր. իշխան Ճախովսկոյն էր՝ «մեծ մտքի տեր մարդ ու գրքասեր, բայց չարությանց անոթ եւ արբող», հարբեցողաց մեծ ժողովի երկրորդ երեց սարկավագն ու ցարական ծաղրածուն:

Մե՛ծ զվարճություն էր: Երաժշտություն ու ծիծաղի թնդյուններ, ու ոտքերի դոփդոփում մոմած հատակին: Սրահ մտավ Պյոտրը: Նա մի գլուխ բարձր էր բոլորից: Գլխի կարճ շարժումով պատասխանելով խոր խոնարհումներին՝ ուղիղ մոտեցավ սեղաններին, նստեց եզրին ու դիպակե սփռոցին դրեց բռնցքած ձեռքերը: Դեմքը գունատ էր ու քամահրոտ, սեւ մազերը կպել էին ճակատին:

Աչքը ցարին գցելով՝ հյուրերը շարունակում էին զվարճանալ, որ հանկարծ փորձանքի չգան: Միայն Ճախովսկոյը համարձակ մոտեցավ թիկունքից ու շրթունքը ցցելով՝ խոնթխոնթաց.

- Հը՞, Պախոմ-Պիխայ ախպե՛ր, ի՞նչ ենք խմելու:

Պյոտրը ցնցվեց, ատամները բացելով՝ շրջվեց ու ծուռտիկ քմծիծաղով ասաց.

- Եռակի պղպեղօղի, ձերդ սրբազնությո՛ւն:

Կատակ բան չէ. դժոխային խմիչք էր եռակի պղպեղօղին: Մարդուն

տասնհինգ րոպեում տապալում էր, թեկուզ քարից լիներ, ու նորին սրբազնությունն անմիջապես հասկացավ, որ կատակով չուզեց Պյոտրը թույնը, այլ զայրույթից: Ու, հասկանալով, անհապաղ իր պահվածքն էլ ճշտեց. քշտեց ժամաշապիկը, ծոծրակին հրեց խույրը ու սկսեց պտտվել հյուրերի շուրջը՝ երեսներին գոռալով.

- Փսլինքդ կաթո՛ւմ է, հունգարակա՛ն ես խմում: Դու քո սատանա-թշնամին, վախենո՞ւմ ես: Ունքերդ հավաքել, նստել ես, ի՞նչ ես մտածում՝ չգիտեմ: Խմելնիցկո՞ւց ես զզվում գուցե, չես գալիս մեր ժողովին, փախչում ես խմելուց: Կամ էլ մտքե՛րդ են զզվելի:

Ու, հետ թռչելով, ուռած հոդերով, ծերունական մատը տնկում էր այդպիսի ակնարկներից գունատված պալատականների երեսին, ու ծղրտան ծիծաղում, ու վազում մյուսների մոտ՝ պպզուկի տալով, ծամածռվելով ու ժամանակ առ ժամանակ աչքը սրելով թագավոր կողմը:

Փայտե ջրամանը դրեցին ցարի առաջ: Բերանն ուռած, բայց անուշ ժպտացող պայծառափայլը՝ օծանված, ժանյակազարդ, վրան ոսկի փայլեր շաղած մետաքսե կեղծամով, եռակի պղպեղօղի էր լցնում տարողունակ գավաթներն ու ուղարկում հյուրերին, որոնք շտապում էին, թեկուզ ձեւական ու արագ, բայց հարբել խոզի պես՝ հուրախություն տիրակալի:

Պյոտրը, ծխախոտի ծխի միջով աչքերը կկոցած նայում ու ափսեից ձեռքով վերցնում էր՝ ինչ դնում էին, աղմուկով ծամում էր՝ բերանը խցկելով հացի խոշոր կտորները, ու մերթընդմերթ օղի էր կուլ տալիս՝ դժվար կշտանալով ու էլ ավելի դժվարությամբ հարբելով: Կարող էր շատ ուտել, անընդհատ, միայն թե ուտելու բան լիներ ձեռքի տակ:

Հյուրերը սպասում էին, թե ցարը, կշտանալով, երբ կսկսի կատակել, ինչը երբեմն պղպեղօղուց թունդ էր լինում: Բայց նրա կարմիր, հաստ ու կլոր թշերով դեմքը չէր պայծառանում: Նա արդեն հետ էր մղել ափսեն եւ արմունկներով սեղանին հենված՝ կրծում էր սաթե ծխափողը. ցարի դուրս պրծած աչքերն ասես ապակուց լինեին, չտեսնող: Ու վախը սկսեց պատել հյուրերին. սուրհանդակ չի՞ եկել, արդյոք Վարշավայից՝ վատ լուրերով: Կամ գուցե անհանգի՞ստ է Մոսկվայում: Կամ այստեղ նստածներից որեւէ մե՞կն է մեղանչել:

Ծխափողը բերանից հանելով՝ Պյոտրը թքեց սեղանի տակ ու նեղող զկռտոցից կնճռոտվելով՝ ասաց.

- Հապա, սարկավա՛գ, արի էստեղ:

Իշխան Ճախովսկոյը, հնդկահավի պես փքված, գավազանը մի կողմ դնելով, մոտեցավ:

- Հանուն հոր իմ՝ Բաքոսի, ու Վեներկայի՝ ման եկողի, հունական լրբի, որ ինձանից բավարարվել է ուզում եւ ինձ կոչում է արբելու,- խոնթխոնթաց նա՝ փակելով անմիտ, դեղնավուն աչքերը:

- Ես քեզ հետ կատակ չեմ անում,- ընդհատեց Պյոտրը, ու հանկարծ ճակատի երկայնակի երակն ուռավ, ապակիացած աչքերով նայեց հյուրերին, ու հայացքը կարճ կանգ առավ սեղանի վրա, որի շուրջը նստած էին պրուսական սպաները:- Ես քեզ ծաղրածու չեմ կարգել, դու խնդրեցիր:

Նա փնչաց ու մատը խոթեց ծխամորճի մեջ:

- Մի տեսակ շատ ես ջանում: Չափն անցնում ես, անցնո՛ւմ: Վախենամ, որ սկսեն ավելորդ բաներ խոսել իմ ու քո մասին: Ասեն՝ ցարի ծաղրածուն է...

Նա չավարտեց, ինչպես հաճախ էր լինում, միտքը ու սեղմեց, կրճտացրեց ատամները՝ դեմքի ծամածռությունը զսպելով:

- Վախենամ, որ քո ջանքերով, այո՛, այո՛... չափն անց ջանքերով հանկարծիմ գլխին չքաշեն քո թասակը... Կոտոշներով... Պատրաստվո՛ւմ են... Գիտե՛մ... Ախր խոսում են, խոսում են, վայ թե լսել ես... Վայ թե կոտոշավոր թասակն ինձ թագից ավելի սազի...

Եվ կրկին գլուխը դարձրեց աջ, ձախ, ծակող նայեց: Նրա անկապ, հարբած բառերը, դրանց մթին իմաստը բազմապատկեցին հյուրերի վախը: Երեւում էր, որ ցարն էլի ինչ-որ դավադրության հետք է գտել, ու յուրաքանչյուրը վախեցած շուրջը նայում, հետ էր քաշվում ընկերոջից: Սյուսներից պակաս շփոթվեց պայծառափայլը, որ սովոր էր ամեն ինչի, մեկ էլ Ճախովսկոյը: Նրա կեղծ հարբած, հիմա արդեն խելացի, նեղ ճեղքերի պես աչքերը լարված հետեւում էին ցարի պոռթկուն շարժումներին: Հասկանում էր, թե ինչ թաքուն մտքեր են այրում թագավորին ու, անսպասելի մոտ գալով, ծորուն, գեղջկավարի ասաց.

- Վազն արի, Պախո՛մ, ի՞նչ դատարկ բաներից ես հերսոտում: Առ, չեմ ափսոսում,- եւ բարձր հառաչելով՝ հանեց խույրն ու պարզեց ցարին:

Պյոտրը քմծիծաղեց ու հանկարծ կարճ, հազի նման ծիծաղով գլխին քաշեց խավաթղթե թասակը:

- Սարկավա՛գ,- գոռաց նա,- խոնարհվիր աշխարհի իշխանին, խոնարհվի՛ր, ամե՛ն:

Հենց կզակի տակից բռնեց Ճախովսկոյի մորուքը, երեք անգամ կռացրեց իր կողմը, սեղանի վրայից ճանկեց օղու ամանն ու սկսեց լցնել նրա ճողված բերանը:

Ճախովսկոյը բլթացնելով խմում էր: Պոկվեց, շան տառապած աչքերով

նայեց թագավորին ու նորից կպավ ջրամանին: Վերջապես ծնկները սկսեցին դողալ, մանրիկ, լայն թեւքերով ձեռքերը վեր պարզվեցին՝ անզոր շարժելով մատները, եռակի պղպեղօղին բերանի կողքով հոսում էր ժամաշապիկին:

- Հերիք է,- շշնջաց նա ու օրորվեց: Երեւում էր, որ խմիչքը ցարին էլ հաղթեց: Ծախովսկոյին թողնելով՝ դուրս եկավ սրահի կենտրոն ու գոռաց երաժիշտներին.

- Արա՛գ, արա՛գ,- բռնեց ինչ-որ բոյարուհու, գրկեց մեջքը, լիքը, մերկ կուրծքը սեղմեց մոխրաթաթախ կապիտանին ու ծանր բոտֆորտները մանրահար հատակին զարկելով՝սկսեց պտտվել սրահով մեկ, պտույտի տանելով հազիվ ետեւից հասնող, քրտնմխած բոյարուհուն՝ իշխանուհի Տրեոկուրովային:

Պայծառափայլն այդ ընթացքում արագ միտք արեց ու խորհրդի համար երկու անգամ իշխանուհուն մոտ վազելով՝ պատրաստեց ամենը, որ հաճո է Կուպիդոնին: Եվ միայն հարմար պահին էր սպասում: Երբ Պյոտրը հանդարտվեց ու սյանը հենված՝ թեւքով երեսն էր սրբում, Մենշիկովը ոտնածայրերին մոտ վազեց ու ինչ-որ բան շշնջաց նրան: Լսվեց՝ Պյոտրն ինչպես գոչեց հարբած ուրախությամբ.

- Ուրեմն, գնա՛նք, գնա՛նք- եւ մեծաքայլ ու ձեռքերը թափահարելով հետեւեց պայծառափայլին դեպի ներքին սենյակները:

Պայծառափայլը, միտակ կամզոլով, ձեռքը կոկորդին ու խոնարհումներով, սանդղամուտին կանգնած՝ ճանապարհում եւ հյուրընկալվելու շնորհիհամար երախտագիտություն էր հայտնում թագավորին:

- Վերադարձի՛ր, վերադարձիր հյուրերի մոտ, առանց քեզ էլ կգնամ,- քամուց հազալով՝ քրթմնջաց Պյոտրն ու կաշվե գոտին ձգեց կիսամուշտակի վրա: Խավար գիշեր էր, շեղակի ձնակարկուտ էր խփում: Սանդղամուտի տակ, ցեխի սառած աղուրների վրա, ձիապանների ձեռքին ճոճվում էին լապտերները: Հեռվում, նույնպիսի լապտերով ու քուրքեր հագած, յոթ հոգի էին անցնում. գիշերային պարեկախումբն էր, այս ու այն կողմ ցցված ալեբարդների բերանները պսպղում էին:

Պայծառափայլին ստիպված էին ուժով տուն տանել, որ շողոքորթությամբ չափը չանցնի, պատուհաններից դեռ դուրս էր պրծնում երաժշտությունը, քամին սուլում էր տան մոտի կրծմրծած սոճու ճյուղերում, քրթմնջալով հիմնասյուներին էր խփվում սառցեղեն, այդ պահին չերեւացող Նեւան, գետի վրա դեղնին տալիս ու ճոճվում էին նավերի լապտերնե-

ը, մոտակայքում փռշտում էին գորշավուն քարշածիերն ու հեծկան ձիերը, իսկ Պյոտրը, գդակը հոնքերին քաշած, դեռ կանգնել էր սանդղամուտին:

Կուշտ ու հարբած, հագեցած մարդկային ամեն ինչից՝ ցարն ասես ականջ էր դնում, թե այդ կշտությունից ինչպես է կրկին բարձրանում,-անժամանակ, երբ պարզապես պետք է քնել,- ագահ, հանդուգն, չհանդարտվող ու անհագ հոգին:

Ոչ խմիչքով չես խլացնի, ոչ ուտելիքով, ոչ զվարճանքով, ոչ կնոջ մարմնով: Ոչ անդորր, ոչ հանգիստ: Եվ այդ անքուն տագնապից չի՞ Պյոտրը, ձմեռ թե ամառ, սլանում սայլով ու դիլիժանսով, ձիու թամբին ու խսիրով ծածկած կիբիտկաներում, Ազովից Արխանգելսկ, Դեմիդովների թուջագործարաններից՝ Վիբորգ, Բեռլին, Օլոնեցկի բուժիչ ջրեր: Եվ կառուցում է, հրամայում, դատ տեսնում, մահապարտում, գնդեր առաջնորդում ու տեսնում է՝ կարճ են օրերը, մի կյանքը քիչ է...

- Չի՛ս,- ասաց Պյոտրը:

Լապտերներով ձիապանները իրար անցան: Մոտեցավ նույն երկանիվ կառքը, ծաղկատար, ցրտից կռկված զինվորը՝ նստիքին... Պյոտրը ծանր տեղավորվեց: Կանգնելուց ծանծրացած հովատակը, որ փոխարինել էր նախկին պառավ շագանակագույնին, սմբակին տալով՝ փորձեց նստել ետեւի ոտներին ու ծառս լինել:

- Հանգի՛ստ,- գոռաց Պյոտրը, քաշեց սանձն ու մտրակեց հովատակին, որը երեք անգամ թափ առավ առեղների արանքում, հետո ճռճվող երկանիվը թեթեւ վարգով տարավ դեպի խավարը: Ճանապարհին վախեցած հետ քաշվեց գիշերային դետքը, եւ արդեն հեռվում կառքի ետեւից հասավ հրամանը. «Զգա՛ստ»: Իսկ հետո զինվորները պանդոկում շշուկով պատմում էին. «Ա՛յ թե սարսափ էր գիշերը: Գնում ենք, ուրեմն, յոթ հոգով, իսկ նա սեւ, փայլուն ձիով, ոնց որ փոթորիկ, հո չանցա՛վ մեր մոտով, ձին՝ վիթխարի, ինքը նստած է՝ ոնց որ դեզ: Բա էդ տեսակ բան կլինի՞. ախր շա՛տ մեծ է, մո՛ւթ»:

Գաղտնի գրասենյակի մոտ Պյոտրը թողեց սանձը, սայթաքելով մոտեցավ դարպասին, գոռաց ժամապահների վրա. «Աչքերդ բաց, չե՞ս տեսնում՝ ով է...», վազքով կտրեց փոքրիկ բակը եւ ուժեղ շխկացրեց դրսի դուռը:

Վառլաամի բերեցին ու երես առ երես թողեցին թագավորի հետ: Սեղանի անկյունում ձեթի ճրագների մեջ լույս էր լողում: Օջախում, դժվար վառվելով, թշշում էին փայտերը: Պյոտրը, մուշտակը հագը, գդակը գլխին,

ասես հանկարծակի ու մահացու հոգնած՝ խոր թաղվել էր բազկաթոռի մեջ: Վառլաամը, մորուքը ցցած, նայում էր ցարին:

- Ո՞վ է հրամայել, որ խոսես իմ մասին,- ցածրաձայն, համարյա հանգիստ հարցրեց Պյոտրը:

Վառլաամը հառաչեց, շարժեց բոբիկ ոտքերը: Ցարը նրան պարզեց բաց ափը.

- Ա՛ռ, բռնի՛ր ձեռքս, շոշափի՛ր, մա՞րդ եմ, թե՞ սատանա:

Վառլաամը առաջ եկավ, բայց ձեռքին չդիպավ:

- Ձեռքերս չեն բարձրանում, ոլորած են,- ասաց նա:

- Ճա՞տ եք, Վառլա՛ամ: Ասա՛, չեմ չարչարի, էնպես ասա:

- Ճա՛տ:

Պյոտրը նորից լռեց:

- Հին գրքեր եք կարդում, ուզում եք հնավանդ խաչանշանո՞վ փրկվեք: Իսկ ի՞նչ է գրած ձեր գրքերում: Ասա՛:

Վառլաամը մի քիչ էլ մոտեցավ: Բեղերի տակ, ձկան նման, նորից բացուխուփ արեց չորացած բերանը: Բայց չխոսեց: Պյոտրը կրկնեց.

- Խոսի՛ր, ի՞նչ ես պապանձվել:

Ու Վառլաամը, կոկորդը մաքրելով, ինչպես կարդալուց առաջ, ու բորբոքված կոպերով ծածկելով աչքերը, սկսեց խոսել այն մասին, ինչ ասված է Կիրիլի գրքում, որ «Սիմոն Պետրոսի անվանի է այս աշխարհի գոռոզ իշխանը՝ նեռը», ու որ Փրկչի պատկերում օրհնող աջը նկարած չի, ու սուրբ Տիրամոր պատկերում մանուկը նկարած չի, ու որ տերտերներն այլեւս հինգ նշխարքով չեն սպասավորում, ու որ նոր նոտրգիր մաշտոցները, ուր բաց է թողած «եւ սուրբ հոգուն», էդ տերտերները պատռում ու ոտքի տակ են տալիս, ու որ մեծ խառնակություն ու գայթակղություն կա աշխարհայինների մեջ, ու որ կոմս Գոլովկինի որդու թշին՝ կարմիր նշան, ու խալ կա Ֆյոդոր Չեմոդանովի որդու թշին, ու մազեր են աճում էդ խալի վրա, ու ասված է, որ էդ տեսակ մարդիկ նեռի ժամանակ են լինելու:

Պյոտրը, կզակը բռունցքներին հենած, կարծես չէր լսում: Երբ Վառլաամը վերջացրեց ու լռեց, մի քանի անգամ մտահոգ կրկնեց.

- Չե՛մ հասկանում, չե՛մ հասկանում: Իսկապես մեծ փորձանք է: Ա՛յ թե մոգոնել են... Ի՜նչ խավար մարդիկ են...

Ու երկար նայում էր բոցկլտացող փայտերին: Հետո վեր կացավ, հսկա ու բարի կանգնեց Վառլաամի առաջ, որը հանկարծ, ասես ողջ կնճռոտ, պրկված դեմքով. ծիծաղելով, ասաց

- Է՛, տեր իմ:

Այդ ժամանակ ցարն արագ կռացավ նրա վրա, բռնեց ականջներից եւ, ասես ցանկանալով համբուրել, պատեց ծխահոտ ու գինեհոտ շնչով, խոր նայեց աչքերի մեջ, ինչ-որ բան քրթմնջաց, շրջվեց, աչքերին քաշեց գդակը, հազաց.

- Դե ինչ, Վառլաա՛մ, երեւում է լավով չպայմանավորվեցինք: Վաղը կգամ չարչարելու: Մնաս բարով:

- Բարո՛վ գնաս, տե՛ր:

Վառլաամը ծգվեց նրա կողմը, ինչպես հարազատին, ինչպես գտած հորը, ինչպես առավել տառապանքների դատապարտված եղբորը, բայց Պյոտրը, արդեն չշրջվելով, քայլեց դեպի շեմը՝ դուռը համարյա ծածկելով լայն թիկունքով:

Դարպասից այն կողմ, ձեռքն արդեն երկանիվի բռնակին ու մի պահ հապաղելով, մտածեց, որ օրն անցավ՝ աշխատած, դժվար, հարբած: Եվ այդ, եւ բոլոր անցած ու գալիք օրերը արճճե ծանրությամբ ընկան ուսերին, որ անմարդկային բեռի տակ էին մտել. միայնակ՝ բոլորի համար:

Մաքսիմ ԳՈՐԿԻ

ՁԱՐԴԸ

Տասնհինգ տարի առաջ Պովոլժիեի քաղաքներից մեկում է պատահել: Հունիսի շոգ օր էր, առավոտից աշխատում էի գետի ափին՝ նավակ էի ծթում, եւ արդեն ճաշի ժամը մոտենում էր, երբ թիկունքից՝ արվարձանի ավանից, խուլ, ջղային աղմուկ լսվեց, ասես սովից կատաղած ցլեր բառաչեին: Ես էլ էի սոված, ուզում էի շուտ վերջացնեմ գործս եւ ուշադրություն չդարձրի այդ հեռու գվվոցին, իսկ այն ամեն վայրկյան ուժգնանում էր, ինչպես ծուխն է տարածվում հրդեհի սկզբում:

Ճիկացած օդում ավանի գլխին փոշու պղտոր ամպ էր կանգնած. նայում էի ավանի կողմը, ու թվում էր տեսնում եմ՝ փոշու հետ գետնից բարձրանալով՝ անհերդաշնակ հնչյուններն ինչպես են հագեցնում օդը: Փոշին ավելի ու ավելի էր խտանում, ձայները հնչում էին բարձր ու այլազան, օդը ցնցվում էր, ու դրա հետ սիրտս դողում էր մի չար կանխազգացումից...

Գործս թողնելով՝ բարձրացա ավազուտ ափն ու տեսա, որ տների դարպասներից մարդիկ են դուրս պրծնում, փողոցի երկարությամբ վազում ավանի խորքը, նրանց ետեւից վազում էին շներն ու երեխաները, վախեցած աղավնիները պտտվում էին գլխավերեւում, իսկ ոտքերի տակ դեսուդեն էին նետվում հավերը: Ընդհանուր խուճապով բռնված՝ ես էլ վազեցի այդ կողմը:

- Ելիզավետյանում կռի՛վ է,- գոռաց ինչ-որ մեկը:

Չսալարկած փողոցով վազողներին ընդառաջ էր սլանում բեռնասայլը, ու սայլորդը, ձիուն կատաղի մտրակելով, կոկորդով մեկ գոռում էր.

- Մերո՛նց են ծեծում... Բեռնակիրնե՛րը...

Ծրջվեցի դեպի նեղլիկ նրբանցքն ու կանգ առա: Ամբոխն իր մարմիններով այնպես էր խցել նրբանցքը, որ ասես ցորենով լի պարկ լիներ: Առջեւում, ահագին հեռու, լսվում էր մարդկանց ոռնոցն ու ծղրտոցը, ապակիներ էին զնգում, թնդում էին ծանր հարվածները, ինչ-որ բան էր ճրթճրթում ու թափվում էր, ձայները կլանում էին իրար աշնան ամպերի նման եւ արդեն օդում լողում որպես միասնական ծանր ամպ:

- Ցիուղներին են ջարդում,- գոհունակ ձայնով ասաց ինչ-որ բարետես ու մաքրազգեստ ծերուկ:

- Տե՛ղն է դրանց:

Ես առաջ էի խցկվում՝ ենթարկվելով աղմուկին, նրա գրգռիչ, ծգող ուժին: Այդ սարսափելի աղմուկը միայն ինձ չէ, բոլորին էր ծգում, ճահճի պես քաշում էր իր մեջ: Իմ առջեւ առկայծող բոլոր դեմքերը, առանց բացառության, բռնված էին հանկարծահաս ու բութ չարությամբ, բոլոր աչքերը ագահ կայծկլտում էին, ամբոխը սերտ, ծանր զանգվածով շարժվում էր առաջ՝ պատրաստ տապալելու իրեն նեղող ցանկապատները, յուրաքանչյուրը պատրաստ էր ոտքի տակ տալ դիմացինին, անցնել նրա վրայով, ճզմել նրան:

Ես նետվեցի նրբանցքի տներից մեկի բակը, ցանկապատի վրայով թռա կողքի բակ, մի հատ էլ, մի հատ էլ, եւ ահա նորից մարդկանց սեղմ ամբոխի մեջ եմ: Նրանք իրենցով լցրել էին քարաշեն մեծ տան՝ շինություններով խիտ պատված, կցակառույցներով ծեփված բակը եւ ասես եռում էին խրկված բակում, հողն ասես դողում էր ոտքերի տակ: Դիվահարի պես ինչ-որ բան էին գոռում՝ նայելով վեր, դեմքերը կարմիր էին, բաց բերաններում փայլում էին ատամները, ձեռքերն էին թափահարում ու հրում իրար, մագլցում էին շինությունների կտուրներին, պոկվում-ընկնում ու նորից էին մագլցում: Եվ չնայած շարժումները տարբեր էին, բոլորի մեջ մի ընդհանուր բան կար, մարդը դարձել էր մի հսկա մարմնի անդամը՝ հոգի առած մեկ ու նույն զորավոր ուժից:

Չարությամբ միածուլված մարդկանց այդ սերտ զանգվածի վերեւում, տան կտուրին, ծխնելույզի կողքին կանգնած էր մի նիհար ու լողլող հրեա: Մատները քերծելով՝ պոկոտում էր ծխնելույզի աղյուսներն ու ներքեւ նետելով՝ ինչ-որ բան էր բղավում ծղրտան, ճայի ճիչ հիշեցնող ձայնով: Երկար ու ճերմակ մորուքը թպրտում էր կրծքին, իսկ սպիտակ շալվարը պատված էր կարմիր բծերով...

Վերեւ, նրա կողմը ճուռակի կռինչներ էին նետվում.

- Հրացանո՛վ, հրացանո՛վ դրան:

- Հրացա՛ն բերեք: Քարերո՛վ խփի:

- Բարձրացի վերեւ:

Տան պատուհաններում մարդկանց մթին կերպարանքներ էին հայտնվում. պատուհանները ջարդելով՝ ինչ-որ իրեր էին նետում դուրս: Խզխզում ու զնգում էին ապակիները: Ահա մի լայնաթիկունք, գանգրահեր տղա պատուհանի մոտ քաշեց հայելին, դուրս պարզեց ու գոռաց.

- Հե՛յ, հեռո՛ւ քաշվեք:

Եվ արեւի շողերն անդրադարձնելով՝ հայելին թռավ գետնին: Տղան

դուրս ցցվեց նրա ետեւից: Լայն դեմքը զուտ մտահոգ ու լուրջ էր, բայց ոչ չարացած: Այուս պատուհանի մեջ հայտնվեց մի սեւամորուք տղամարդ՝ բարձը ձեռքին: Ճղոտում էր բարձը, եւ բմբուլների թանձր, սպիտակ ամպը տարածվեց բակում:

- Ձյուն է գալիս, քթերդ չսառացնեք, տղե՛րք,- գոռաց տղամարդը՝ նայելով, թե սպիտակ փաթիլներն ինչպես են իջնում մարդկանց գլուխներին: Իսկ բակում գոռում էին.

- Էստե՛ղ եկեք: Տակառում ջհուդի ճտեր եմ գտել:

- Ջարդի՛ դրանց:

- Գլուխը՝ պատի՛ն:

- Հե՛յ, քավթա՛ռ ջհուդ: Իջի՛, թոռներիդ ենք գտել...

- Իջի կտուրից, թե չէ ցեղդ կվերացնենք...

Երեխայի սուր ճիչը խոցեց օդը. սարսափելի ձայն էր, կուրացնող շողաց ամբոխի պղտոր ոռնոցի մեջ, ինչպես կայծակն ամպերում: Ու դրանից հետո աղմուկը կարծես մի քիչ հանդարտվեց:

- Ձեռ չտա՛ս,- մռնչաց մեկը:

- Ձեռ չտա՛ս երեխեքին:

- Մեծերի՛ն ջարդեք:

Բայց այստեղ նորից լսվեց երեխայի ճիչը. բարակ ու սուր՝ սիրտ էր ծակում ու խլացրեց մնացած ձայները:

- Ա՛խ, սատանա,- կատաղի գոռաց մեկը:

- Գլխիդ կպա՞վ:

- Ո՛տս, ո՛տս...

- Ճարպի՛կ է քավթառ չարքը:

- Անտի՛պ, բարձրանանք ջհուդին ցած գցենք:

Երկու աժդահա բեռնակիր, ամբոխին բոթբթելով, մոտեցան կցաշենքին ու մագլցեցին կտուր:

Իսկ տան պատուհաններից մեկում նորից հայտնվեց լուրջ, կարմրամորուք տղան: Լարվելով՝ ինչ-որ պահարան թե արկղ էր խցկում պատուհանի մեջ ու գոռում ներքեւ.

- Տղեր՛ք, ման-չմանը եկա՛վ...

Արկղը պատուհանի միջով չէր անցնում, տղան հետ քաշեց, մի պահ անհետացավ, նորից հայտնվեց ու երկար ոռնաց գայլի պես.

- Հեռո՛ւռ՛ւռ՛ւ...

Ափսեների կույտը թափվեց պատուհանից, դրանց հետեւից արեւի պես թռավ ինքնաեռը: Մարդիկ, գլուխները ձեռքերով պահած, ներքեւում դե-

սուդեն փախան ու քրքջում էին կոկորդով մեկ: Կարմրաշեկ ու չաղ մի տղա վերցրեց ինքնաեռը, բարձր պահեց գլխավերեւում, նորից շպրտեց գետին ու սկսեց տրորել:

Կտուրից անմարդկային աղաղակ լսվեց... Բոլորը բարձրացրին գլուխները: Թիթեղը դղրդում էր... Հանկարծ կտուրի եզրին մի խոշոր բան հայտնվեց, կախվեց-մնաց մի քանի վայրկյան՝ օդում ցնցվելով, հետո ծղրտաց, ոռնաց, պոկվեց ու թռավ ներքեւ: Փափուկ, զզվելի շմփոց լսվեց... Ես դուրս թռա բակից, իսկ իմ ետեւից թռչում էր հաղթական, վայրի ոռնոցը.

- Ա-ա՛-ա՛...

- Ահա՛-ա՛...

- Գցեցի՛ի՛ի՛նք:

Մարդիկ փողոցում աթոռներ էին ջարդում, սեղաններ, սնդուկներ, ծիծաղելով ինչ-որ շորեր էին պատառոտում: Օդում բմբուլներ էին լողում, երկու տների պատուհաններից մարդկանց ոտքերի տակ էին թռչում բարձեր, զամբյուղներ, կահկարասի, փալասներ, իսկ ամբոխը, ավերումի ձգտումից խելագարված, պատառոտում, ջարդում, փշրում էր այդ ամենը: Երկու կին,- զզզզված, քրտնած, կարմիր մռութներով,-կառչել էին ինչ-որ արկղից ու իրենց էին քաշում: Գոռում էին իրար վրա, փետուրներն ու բմբուլները պտտվում էին գլուխների շուրջը, երկուսն էլ լայն բացել էին բերանները, բայց փայտի ճռնչոցը, ամբոխի ոռնոցն ու վայնասունը, տան պատուհաններից լսվող ծղրտան, սարսափած աղաղակները խլացնում էին նրանց ձայնը:

Իմ կողքով մի հսկա գեղջուկ անցավ՝ ճղճղված շապիկով, առանց գլխարկի: Մազերը զզզզված էին, կեղտոտ դեմքի վրայով թանձր, համարյա սեւ արյուն էր հոսում: Նա թափահարում էր ձեռքն ու ժպտում կուշտ գազանի բութ, գոհունակ ժպիտով: Ահա մոտացավ լապտերասյանը, գրկեց ու լայն կրծքով հենված՝ սկսեց ճոճել: Լապտերասյունը դողաց ու տապալվեց գետնին:

- Ջարդի՛,- գոռաց մի ուրիշ գեղջուկ՝ մոտ վազելով սյանը: Գրկեց ու տնքալով ճոճեց:

Չգիտես որտեղից ամբոխի մեջ, ինչպես աղավնին՝ ծխաքուլաների մեջ, պատառոտված շորով, արձակ մազերով մի աղջիկ նետվեց: Վազում էր՝ գլուխը հետ գցած, եւ աչքերը գունատ դեմքին անասելի խոշոր էին:

- Խփի՛ ջհուդին,- մռնչաց մեկը: Եվ աղջիկն անհետացավ մարդկանց խիտ զանգվածում, ինչպես շաքարի կտորը՝ ճանճերի պարսի տակ: Նրա

վրա մարդկային մարմինների ինչ-որ սեւ շփոթ էր եռում, օդում բռունցքներ էին ճոճվում, տռփալի կռնչոցներ էին լսվում, փափուկ շմփոցներ: Լկտի կատակներ, հայհոյանքներ, օձի ֆշշոց՝ ամեն ինչ խառնվել էր մի չար ու չարախնդացող հնչումի մեջ:

- Հետ քաշվեք, ժողովո՛ւրդ, Զելմանն է գալիս:

Ինչ-որ մեկին սալահատակի վրայով քարշ տվող ամբոխն էր գոռում: Մի մարդու, թե մարդու դիակ էին քարշ տալիս՝ կիսամերկ, չորչորուկ մարմին, ճզմված, պատառոտված, ամբողջովին պատված արյունով ու ցեխով: Զելմանի ոտքերը պարանով կապած՝ մարդիկ քաշում էին սալահատակի վրայով, ու նրա հետեւից արյան լայն շերտ էր մնում գետնին: Չոր, երկար ձեռքերը լող էին տալիս արյան մեջ, իսկ ձեռքերի արանքում, այնտեղ, ուր կցվում էին ուսերին, մի այլանդակ, արյունոտ, քրքրված գունդ էր խփվում քարերին...

Մի դեռահաս մոտ վազեց մարմնին, թռավ վրան, ոտքերը թաղվեցին փորի մեջ, ինչպես խմորի մեջ, իսկ դեռահասը թափահարեց ձեռքերն ու ընկավ՝ ծիծաղ պայթեցնելով: Զելմանը հարուստ կապալառու էր: Նրան հաճախ էի կենդանի տեսել, բայց այն, ինչ հիմա էի տեսնում, նման չէր ոչ միայն կապալառուի, այլեւ ընդհանրապես մարդու:

Ծուրջս կատարվողից բթացած, փոշուց խեղդվելով՝ պտտվում էի ամբոխի մեջ, ինչպես տաշեղը առվակում, եւ այդ ամենը սարսափելի երազ էր թվում: Ահա ջրհորդանի խողովակից մի սպիտակ փեշ է կախվել, գետնից ահագին բարձր, եւ ինչ-որ պառավ ոտքերի ծայրերին ծգվելով՝ ուզում է դրան հասցնել վեր պարզած ոսկրոտ, սեւ ձեռքը: Կողքին մորուքավոր բեռնակիրը փռչոտ գլխին է քաշում թավշյա կարտուզը: Տղեկները վտվտում են մեծերի ոտքերի արանքում՝ հայելու բեկորներ հավաքելով, իսկ նրանցից մեկը ցատկոտում է՝ փորձելով որսալ օդում լողացող փետուրը:

Պատյանից չհանած թուրը թափահարելով՝ վազում է ոստիկանը, նրա վրա ծիծաղում են, հետեւից գոռում.

- Բռնի՛ դրան:

- Բռնի՛ փարավոնին:

Մեկը վազողի ոտքերի տակ է նետում ջարդված արկղը, ու ոստիկանը գնդիգլոր փռվում է գետնին: Բարձր քրքիջը դղրդում է օդում:

Ոտքերիս տակ նայելով՝ մաշկի արյունոտ պատառ տեսա՝ վրան մազերի փունջ...

- Ժողովո՛ւրդ: Էստեղ էկեք:

Նորից բակից է լսվում, եւ ամբոխի խիտ ալիքը հորդում է դարպասից ներս: Սարդիկ մի տեսակ խռնչում են, մնչում, մռնչում:

- Խփի՛: Խփի՛,- տարածվում է օդում:

Տանը, երկրորդ հարկում, մեկը լինգ է բանեցնում՝ ջարդելով երկու պատուհանների արանքի միջնապատը: Աղյուսներ են թռչում, կիր, սպիտակ փոշի է օդում: Պատուհանից մի սկուտեղ թռավ, անվճռական պտտվեց օդում ու ընկավ մի հաստաբեստ կնկա գլխին: Կնիկը ծղրտալով պպզեց:

Աղյուսների կույտը թափվում է մայթին: Միջնապատը ջարդված է, եւ պատի այլանդակ անցքից անմիջապես ծանր ու դանդաղ դուրս է ցցվում հսկա պահարանը, ցնցվում, մի տեսակ չուզելով սահում է տան պատով, կառչում քիվից, ու գլխիվայր շրջվելով՝ դղրդոցով փշրվում փողոցի քարերին: Օդում անընդմեջ գվվոց է կանգնած, ասես փոթորկուն գետ է հոսում՝ հուն բացելով իր ճանապարհին, ամեն ինչ ցասման փրփուրի մեջ է, ամեն ինչ՝ վայրագ կատաղությամբ բռնված...

Այդ օրվա երեկոյան, ավանի հրապարակով, կազակների պահակետի մոտով անցնելիս լսեցի՝ ինչպես էր նրանցից մեկը մյուսին ասում.

- Բա՛, տասնչորս ջհուդ են բզիկ-բզիկ արել...

Իսկ մյուսը ծխամորճ էր ծխում ու ոչ մի բառ չասաց ընկերոջը:

Ալեքսեյ ՌԵՄԻԶՈՎ

ԷՄԱԼԻՈԼ

I

Խլեբնիկովը քաղաքական գործիչ չէ: Քաղաքականության մեջ Խլեբնիկովը այբը բենից չի տարբերում: Ու եթե նրա լուսանկարը հայտնվել է քաղաքական հանցագործների ալբոմում եւ պահվում է Ռուսաստանի քաղաքների ժանդարմական ու ոստիկանական վարչություններում, տարօրինակ ոչինչ չկա, եւ այդ ամենը սովորական բան է:

Մինչեւ դատավճիռն արձակվելը Խլեբնիկովը մի տարի ազատության մեջ էր: Իսկ երբ վրա հասավ դատավճիռը, որով աքսորվում էր հյուսիսային նահանգներից մեկը, նրան նորից բանտարկեցին:

Կալաներթով գնալը գայթակղիչ էր. այդ ընթացքում ամեն ինչ կհասկանա ու կորոշի, թե հետո ինչպես է ապրելու: Ու ոչ մեկին ոչինչ չխնդրեց, խնդրագրեր չտվեց, ինչպես ասացին, այնպես էլ արեց՝ քիչումիչ անհրաժեշտից իրեր հավաքեց ու քաղաքապահ ոստիկանի հետ գնաց բանտ:

Բանտապետը կարգադրեց Խլեբնիկովին թողնել գրասենյակում, ոչ թե փակել խցում. եղած-չեղածը հինգ-վեց ժամ էր մնացել կալաներթի մեկնելուն: Պետը շատ ուշադիր էր, անձամբ ստուգեց Խլեբնիկովի կապոցը. ատամի խոզանակը թույլատրեց, իսկ ատամի փոշին՝ ոչ:

- Հիմա էնպիսի բաներ են անում, որ արագ դատի տակ կընկնես,- ասաց պետը,- մեկը հաջողացրել ու մի վագոն զենք էր անցկացրել:

Խլեբնիկովը պատուհանից դուրս նայեց: Պատուհանի տակ հետուառաջ էր անում ժամապահը, ու, կռթկռթալով, հավերն էին շրջում: Ժամապահը հին ծանոթ էր, ու հեքիաթի այծի պես աչքերով բարեւեց Խլեբնիկովին:

Իսկ երբ պետը, թղթերը խշշացնելով, դուրս եկավ, կամացուկ ձայն տվեց ու Խլեբնիկովին չնայելով, ասես զեկուցեր, ասաց, որ ուղեկիցների մեջ քաղաքականներ չկան, բոլորին նախորդ կալաներթով են քշել, իսկ քրեականների հետ մի իշխան է գնում:

- Ի՞նչ իշխան:

- Իշխա՛ն,- ժամապահը աչք ածեց շուրջը, ձայնը դողաց,- ոչ մեկին չասեք, իսկական իշխան է:

Ավագ վերակացու Իլյա Իվանովիչը վախեցրեց ժամապահին:

- Անսպասելի այցելեցիք մեզ,- ավագը կնավարի-անկենդան սեղմեց Խլեբնիկովի ձեռքն ու թմփաց կաշեպատ բազմոցին:

- Դժվար է հասարակ մարդու համար մարդամեջ մտնելը. բոլորն ուզում են ոտ գցել: Աստվածտեսնումէ: Հա՛,- Իլյա Իվանովիչը հիշողությունների գիրկն ընկավ,- տոնավաճառ էի գնացել, Վերափոխման տոնին մեր մոտ տոնավաճառ է լինում, ինձուինձ մտածում եմ՝ կարուսել կնստեմ, զինվորի համար էդ էլ ուրախություն է: Սան եմ գալիս, ուրեմն, տաղավարների արանքով ու լսեմ՝ կասկածելի խոսակցություն է գնում քաղաքականության մասին: Ականջ դրեցի. էդպես էլ կա, քաղաքականությունից են խոսում: Վերջը, ներս նայեցի, իսկ տաղավարում մերոնք են, հենց մեր գնդի սպաներն են նստած ու տալիս-առնում են, վատ է: Ես՝ ուղիղ զորամաս, էսպես ու էսպես, ասում եմ, գնացինք: Ու աղավնյակներին հենց տեղում էլ բռնեցինք: Իսկ հետո արդեն բոլորին՝ գնդակահարություն: Հետին շնից էլ վատ է էդտեսակ մարդը, ու բոլորն էլ՝ ամուսնացա՛ծ, մանր երեխե՛ք, երեխեքը ոնց են հիշելու էդտեսակ հորը. ախր դռնեդուռ գցեցին, մուրացկան դարձրին երեխեքին:

Իլյա Իվանովիչը նույնիսկ թքեց՝ ոչ այն է հաճույքից, ոչ այն է սրտմտությունից, իսկ ճերմակ, կլոր խուզած մորուքի տակից շողշողում, աչքի էր զարնում մեծ ոսկե մեդալը՝ *ջանադրության համար:*

- Սրիկա ժողովուրդ են,- շարունակեց Իլյա Իվանովիչը,- զուտ պաշտոնի հարգանքից գնդակահարեցին, կախել է պետք դրանց նմաններին: Թող իրենց համար ճոճվեին: Բա՛: Կախվածին նայելն էլ անպատշաճ բան է. մարդը, թող թույլ տրվի ասել, արդեն մեռած է, բայց էդ տեսքով, ամենավերջին շան պես կախ արած, անպատշաճ բան է:

Ու երեւի ենթադրելով, որ լսողը չընկալեց կախաղանի ողջ խայտառակությունը, Խլեբնիկովի համար պարզ չէ կախաղան բարձրացվելու եւ գնդակահարության տարբերությունը՝ ավագ վերակացուն անվայել, թունդ խոսքով պատմեց կախաղան հանվածների ողջ ամոթն ու անպատշաճությունը, ու, թեթեւանալով, սկսեց անհեթեթություններ դուրս տալ ինչ-որ կանոնների, օգուտների ու տարբերությունների մասին: Ու նույնիսկ երգեց, թե թվաց՝ երգում է, ինչպես ժամանակին, երբ ջահել զինվոր էր ու երգում էր զորանոցներում հորինված երգը.

Արաղի հոտ է ու սիրո հոտ է...

Խլեբնիկովը ննջում էր: Ու քնեց, ինչպես միշտ ծանր պահերին, երբ

որեւէ բան ծանր նստում էր հոգուն, ու նա մոլորվում էր՝ չկարողանալով պատասխան խոսք կամ գործողություն գտնել:

Երազ տեսավ՝ իբր նստած է ներքնահարկում, եւ իր հետ սադրիչ Մազուրովն է, ու երկուսն էլ սոված, վրաները խիտ կարմիր պղպեղ ցանած տապակած նրբերշիկներ են խփշտում, խշրտում է ատամների տակ: Սհա դուրս նայեց պատուհանից. ամպերը սեւացել են, ամրոպ է լինելու: Ու գնացին կայարան: Գնում են կառքով, ցնցվում տակառների պես: Ու երբ շքամուտքի մոտ հանեց քսակը, որ վճարի, կառապանը նախշեց իջնող Մազուրովին. իբր Մազուրովը ճանապարհին նրա նստիքի տակից կարկանդակ է գողացել: Իսկ իրականում կառապանի կարկանդակը Խլեբնիկովն էր գողացել, ու Խլեբնիկովը դրանից պայթեց, խլեց մտրակը, դիտմամբ կառապանի աչքի առաջ կծեց կառապանից գողացած կարկանդակը, ու մտրակով էնպե՛ս հասցրեց կառապանին, որ աչքերից կայծեր էին թռչում: Վա՛յ, վ՛այ, էս ի՞նչ է անում: Ախր, կառապան չի, տղա երեխա է՝ գնդակահարված սպայի որդին: Բայց մտրակը չէր համաձայնում, մտրակի համար մեկ էր՝ որդի է, թե դուստր, հայր, թե մայր, ու խփո՛ւմ է, խփո՛ւմ է:

- Համեցեք ընդհանուր սենյակ,- Խլեբնիկովին արթնացրեց ասես յոթ ծով այն կողմից հասնող ծանոթ խիստ ձայնը:

Խլեբնիկովը բացեց աչքերը. Իլյա Իվանովիչը անգթորեն ցնցում էր նրան. կալաներթի մեկնելու ժամն է:

Միջանցքներում լամպերը վառել էին, ու բանտը տան հարմարավետություն էր առնում՝ պատերի ու ճաղավանդակների խստությունը կոծկելով: Ինչ-որ ընտանեկան, պարզ ու խաղաղ բան էր թափանցում ամուր կողպված դռներից, եւ անհավատալի էր, որ երկաթե դռներից այն կողմ իրենց տաղտկալի օրն էին ավարտում շղթայված ձեռքերով ու ոտքերով մարդասպանները:

Ընդհանուր սենյակում, ուր երկու վերակացուների ուղեկցությամբ հասավ Խլեբնիկովը, արդեն հաշվում ու ստուգում էին առաքվողներին. կալանավորները հերթով մոտենում էին պետին, իսկ ուղեկցորդողը մոտեցողի գլխից քաշում էր թասակն ու հարցնում անուն-ազգանունը:

Խլեբնիկովն իրարանցման մեջ անմիջապես ճանաչեց իշխանին, որի մասին խորհրդավոր տեղեկացրել էր ժամապահը. երկար սեւ սերթուկով ու բարձր օձիքով իշխանը բոլորից ջոկ ու ընդգծված մենակ կանգնել էր հեռվում: Նա Խլեբնիկովին արտակարգ գեղեցիկ թվաց եւ՛ դեմքով, եւ՛ կազմվածքով. քսան տարեկան կլիներ, ոչ ավելի:

Իշխանի շուրջը աղմուկ-աղաղակ էր, բայց նա ուշադրություն չէր դարձ-

նում: Ու միայն երբ ուղեկցորդողը բռնեց ձեռքը, որ շղթաները հագցնի, անհանգիստ թարթեց աչքերը, եւ տագնապ ու անհամբերություն երեւաց աչքերում:

Օրապահիկ հացի ու ճանապարհածախսի վեճը, որ սկսվել էր ստուգումից հետո, կատաղի քաշքշոցի, կռվի ու հայհոյանքի վերածվեց: Պահակախմբի բղավոցն ընդհատեց վեճը: Կալանավորներին զույգերով շարեցին եւ, ինչպես զինվորներին՝ բաղնիք, բանտից քշեցին կայարան:

Առջեւից ոտնաշղթաները զնգացնելով՝ սափրագլուխ տաժանապարտներն էին գնում, տաժանապարտներից հետո՝ պարզապես քրեականները՝ ձեռնաշղթաներով, հետո՝ առաքվող բանտարկյալները՝ ամեն կարգի քրջոտներ: Խլեբնիկովը, կանանց ու երեխաների հետ, ընկավ ամենավերջը:

Երթը դանդաղ էր ու ոչ սարսափազդու,- ցանկացած սաղավարտակիր հրշեջ ավելի ահարկու տեսք ունի,- եւ բոլորը խղճուկ ու չնչին էին թվում, դժբախտ, ու մարդու մտքով չէր կարող անցնել, որ այդ խոնարհների ու հնազանդների մեջ կային եւ այնպիսիք, որոնց ձեռքերն արյունոտ էին, հոգին՝ մեղքի տակ, որոնք մորթել էին, խեղդել, բռնաբարել:

- Անունդ ի՞նչ է,- հարցրեց Խլեբնիկովը իր հետ քայլող դեռահաս աղջնակին:

- Վոլգա,- պատասխանեց աղջնակը, եւ արցունքի կաթիլը, գիշեր դարձող երեկոյի աստղի պես, առկայծեց նրա վախվորած-մարող աչքերում:

II

Հուլիսի կարմիր առավոտ:

Խլեբնիկովը կանգնել էր բաց, վանդակավոր պատուհանի մոտ: Քամոտ էր, ու հասկերը թեքվում էին արտերում, ասես խոնարհվելիս լինեին: Բայց ո՞ւմ էր խոնարհվում: Ոչ իրեն, իհարկե, որ ոզնու պես քաշվել էր փշոտ զրահի մեջ, ու ոչ լեփ-լեցուն կալանավորական վագոնին, որ սրտխառնոցի աստիճան հեղձուկ գիշերվանից հետո ճռճռոցով ցնցվում էր գծերի վրա:

Գզգզված մազերով,- աղջնակը հենց նոր էր լվացվել,- Վոլգան ճաղավանդակից կառչած՝ հետաքրքրված ուշադրությամբ նայում էր դաշտին:

- Դու բժի՞շկ ես,- հարցրեց Խլեբնիկովին:

- Չէ՛,- պատասխանեց Խլեբնիկովը:

- Իսկ կարծում էի՝ բժիշկ ես. բանտում անընդհատ գիրքը ձեռիդ էր, մայրիկն ասում էր՝ մեր հետ բժիշկ է գնալու:

- Ես գործիք լարող եմ, երաժշտություն եմ կարգավորում:

- Լարո՞ղ,- նորից հարցրեց զարմացած Վոլգան ու հանկարծ այնպես քրքջաց, ասես դրանից զարմանալի բան երբեք չէր լսել, եւ արդեն նախորդ օրվա պես չխոսկան չէր ու անընդհատ բլբլացնում էր մեկ աչքին, մեկ գազանիկի պես սուր ու զգայուն վարդագույն ականջին ընկածից:

Աղջնակը մոր հետ տաժանակրության էր գնում: Մորը դատապարտել էին սպանության համար. հարազատ եղբորն էր սպանել:

- Մայրիկը որ պսակվում էր,- պատմում էր Վոլգան,- քեռին դեմ էր, չէր ուզում: Հենց սեղան նստեցին, մայրիկը լրիվ սեւացավ ու քար կտրեց: Սկսեցին ման գալ ու ավելի տակ իրեք վառած մոմ գտան, իրեքն էլ՝ ծերերից վառած: Քեռին մոմերը թափեց ջրին, ու մայրիկը կենդանացավ: Մայրիկն ինքն է ինձ պատմել, թե քեռին ոնց էր ուզում իրան փչացնի: Հետո, մի լավ ձի ունեինք, ու տեսնենք՝ արցունքներով լաց է լինում, հիվանդացել էր, ինչով ասես չբուժեցին, չօգնեց՝ սատկեց: Կովը ու հորթերը ու բոլոր խոզերն էլ սատկեցին: Սկսեցին ման գալ ու ախոռի սյանը փալասով փաթաթած ու կնկա մազով թաթերը կապած՝ երեք առնետ ու երեք սկյուռ գտան: Իսկ քեռին մի գլուխ համոզում է մայրիկին: Մայրիկն էլ համաձայնեց: Հետը գնաց ամբարի հետեւն ու խեղդեց նրան: Տեղն է դրան:

- Տե՛ղն է դրան,- կրկնվում էին Վոլգայի բառերը վագոնի տակ: Բայց վագոնի տակ ո՞վ պիտի լիներ:

- Լա՛-ա՛-ա՛-ա՛-ռոդ: Բա դու... դո՞ւ ում ես սպանել: Լարո՛ղ:

Վոլգան ծիծաղում էր: Խլեբնիկովն էլ ծիծաղեց: Ինչ տարօրինակ է. երբեք մտքով չի անցել սպանել: Եվ ինչո՞ւ են իրեն հարցնում:

Քամին ալեկոծում էր արտերը, հասկերը կռանում էին, ասես խոնարհվելիս լինեին: Ահա Վոլգան թռչնավարի ինչ-որ բան ծղրտաց ու անհետացավ: Ո՞ւր է Վոլգան: Նստարանի տա՞կ: Չէ՛: Բայց հո պատուհանից չթռա՞վ: Չէ՛:

- Վո՛լգա:

Խլեբնիկովը մի բացիկ ու մատիտի կտոր ուներ: Հարմարեցրեց՝ սկսեց գրել. տառերի փոխարեն ագռավի չանչեր ու ոջիլի տոտիկներ էին հայտնվում: Բայց կարեւոր չէր, միայն թե գրվեր: Եվ ուզում էր գրի, թե առաջվա պես, եւ երեկվա, եւ նախորդ օրվա պես ինչ խղճուկ է կյանքը ազատության մեջ, բայց, համենայդեպս, այնքան նախանձելի, այնքան թանկ, ամեն ինչից թանկ:

Խլեբնիկովը նամակը տվեց ուղեկցորդողին: Ուղեկցորդողը սկսեց գիրկապ անելով կարդալ. շատ ծիծաղելի էր ստացվում: Ուղեկցորդողն էլ ծիծաղեց: Մյուս զինվորներն էլ էին քրքջում. ախր շատ ծիծաղելի էր:

Խլեբնիկը լուռ հեռացավ զինվորներից, գունատ էր, շրթունքները դո-

ղում էին: Մի կերպ խցկվեց պատուհանի մոտ: Կալանավորները կպել էին պատուհանին. բոլորն ուզում էին տեսնել քաղաքը, որին մոտենում էր գնացքը: Վոլգան էլ էր մագլցում: Մի գջլոտ, անքիթ շրջմոլիկ թեւատակերից բռնեց- բարձրացրեց. աղջնակը ծղրտում էր:

- Կալանավորնե՛ր, հե՛յ, կալանավորներ՛,- գլխարկները վեր նետելով՝ կանչում էին բլրալանջին հավաքված ցմփորիկ երեխաները, ինչպես թագավորի տոներին ուռա են գոռում:

Գնացքը կանգ առավ:

Ու վագոնում հրմշտոց սկսվեց: Մի բան էր բոլորի մտքին՝ եռջուր ստանալ ու հնարավորինս շատ: Ցնցացնում էին աման-չամանը, գոռում էին, այնքան ձեռք էր պարզվել եռջրին, որ խաշվեցին: Բանը հասավ կռվի:

Դուռը սրամերկ հսկող ժամապահները զսպում ու համոզում էին ինչով հնարավոր էր՝ բռունցքներով ու թրերով:

- Գլուխս կջարդես, այլանդա՛կ, էս մի գլուխ ունեմ,- պաշտպանվում էր բուրդը տված մեկը:

Մի կալանավոր պառավ առաջ էր մշտում գավաթը. տակը մի կաթիլ ջուր էր մնացել, ամբողջը թափվել էր:

- Ոնց որ ծիտը ծրտի,- տրտնջում էր գայրույթից կարմիր կտրած պառավը:

- Բոլորիդ կիերիքի,- թեյամանը փոխանցելով՝ հանգստացնում էր ժամապահը,- ախր խմելուց կճաքես, փչացա՛ծ:

- Բուկս չորացել է,- թնկթնկում էր պառավը՝ վերջին կաթիլն էլ թափելով:

Գնացքը նորից շարժվեց: Գնացին: Վագոնը, ասես ինքնաեռի ետեւից, այնպես հանդարտ ու անաղմուկ էր գնում: Ինչը ոնց, բայց թեյի ու հացի հարցում վագոնը համերաշխ էր: Արդեն չէին կռվում ու չէին հայհոյում:

Շիկավուն կնգուղով, լղար, մեծ, կապտապակի ակնոցով ու այծամորուքուխտավորը տեղավորվել էր կանանց անկյունում: Հոգեփրկիչ զրույցներ էր վարում կնանոց հետ, ու խոսքը ճարպիկ էր:

Հ. Միխայիլը ուխտագնացության ժամանակ շրջել էր բոլոր սուրբ վայրերում. եւ՛ Սոլովեց սուրբ կղզում էր եղել, եւ՛ Երուսաղեմում, եւ Աֆոնում: Աֆոնում հ. Միխայիլը ութոտնուկներով էր կերակրվում:

- Ոնց որ ծխեցրած երշիկ, սուտ բան են էդ ութոտնուկները,- հ. Միխայիլը չոր հազում էր,- ու Ցարգրադում էլ եմ եղել, ռուսներ են ապրում էնտեղ, լիտվացիներ, լյախեր, հույներ, ջհուդներ. ռուսներն աջ կողմը, մնացած ժողովուրդները՝ ձախ:

- Բա թուրքե՞րը, տեր հայր:

- Ծատ թուրք չկա էդ կողմերում, մեկումեջ պատահում են, էն էլ հեչ բանացու՝ սարացիններ: Եվ անհաշիվ տեսանելի ու անտեսանելի բար ու բարիք կա էդ հողերում, ամեն ծառ իր ծաղիկն ունի, վարդեր են բացվում եղեւնու ու սոճու վրա, իսկ մավրական կաղնու վրա՝ կակաչներ:

Մոսկվա գետն էլ էնտեղ Վոլգայից լայն է...

Ախ էին անում կանանիք: Ա՛յ թե մարդ էդտեղ ընկներ, գոնե մի օրով:

Իսկ վագոնի մյուս ծայրին ուրիշ խոսակցություն էր գնում: Թեյն էր տրամադրում, էդպիսի խոսացնող խմիչք է:

- Էմալիոլ: Ի՞նչ է էդ էմալիոլը:

- Ախր կարգին պատմի, բան հասկանանք:

- Էմալիոլը,- միջամտեց ուղեկցորդողը,- թշնամին է, ճապոնացու նման, դեղին ծովերում է կենում:

- Չէ, թշնամին չի,- զզգզված կալանավորը դադարեց ժպտալ, պատրաստ էր նորից պատմել՝ գուցե գտնվի մեկը, որ կասի՝ բարի՞ էր երազը, թե՞ չար,- էմալիոլ, հա՛, այ երազիս գալիս է էմալիոլը, իբր կողս քոր է գալիս, սկսում եմ քորել ու պոկում եմ գորտնուկը: Նայեմ՝ գորտնուկի վրա միջատ է, շան ոջիլի պես, սպիտակ, վիզը երկար, մեջքը՝ օղակ-օղակ, գլխին էլ՝ յոթ ատամ. ուտում է գորտնուկը: Ես էլ ասում եմ. «գորտնուկը մեռած է»: Իսկ ոջիլը իբր բարձրացնում է գլուխը ու ասում. «Հիմա էլ, ասում է, ես կմեռնեմ»: Ու սկսում է մեռնել: Ու մի ձեն ինձ ասում է. «Միջատի անունը Էմալիոլ է»: Էստեղ զարթնեցի:

Լսողները կում էին անում թեյից, փչում պնակներին: Ոչ մեկը ասելիք չուներ:

- Եկեք իշխանին հարցնենք, իշխանն ամեն ինչ գիտի,- վերջապես գտնվեց ելքը:

- Հա՛, իշխանը կիմանա,- միացավ ողջ վագոնը:

Իշխանն էլ էր թեյ խմում: Ծուրջը ահագին ժողովուրդ էր հավաքվել: Ոնց մոտենաս: Ամեն մեկն իր հարցն ունի: Բողոքում էին, օգնություն էին խնդրում:

Մի դարավոր պառավ,- ուրախացած, որ իրեն երեք գավաթ թեյ է հասել, այն էլ՝ պռնկեպռունկ,- թնկթնկալով կպել էր իշխանին.

- Պաշտպան կանգնի անբախտիս, ծերդ պայծառափայլություն... փրկի՛, հարազա՛տս, ախր գեղացու արյունն են խմում, Աստվածածնի տոնից դեսը տանուտեր Ճարիգինը ուզվոր արեց մեզ...

Խլեբնիկովը մի կերպ մոտեցավ:

- Ի՞նչ կարող եմ անել նրանց համար, ես էլ նրանց պես մեկն եմ,- իշխանը նեղ արեց, որ տեղ տա Խլեբնիկովին:

Բայց Խլեբնիկովն էլ, չգիտես ինչու, զգաց, որ իշխանը բոլորի նման չէ, ու եթե ցանկանա, ամեն ինչ կանի:

- Երեկույթի էի, հենց այնտեղ էլ ձերբակալեցին, չթողեցին հագուստս փոխեմ,- իշխանը վրա բերեց սերթուկն ու ժպտաց:

Եվ հենց այդ ժպիտով էլ ամեն ինչ ասվում էր. թե ինչու են բոլորը մղվում նրան ու հրաշք սպասում նրանից: Ո՞վ է, ինչո՞ւ է բանտարկվել՝ ոչ ոք չէր համարձակվում հարցնել, ու վագոնում բերնեբերան աներեւակայելի պատմություններ էին փոխանցում իրար, ու տարատեսակ հարցեր էին տրվում վագոնում:

Այդ ընթացքում կանանց անկյունում հոգեփրկիչ զրույցն ավելի ու ավելի էր աշխուժանում: Հ. Միխայիլի խոսքը սրտառուչ էր, ձայնը՝ խանդաղատալի:

- Ելավ Մակարիոսն առավոտ վաղ եւ անապատը կտրելիս մի չարք տեսավ իր ճանապարհին՝ քարին նստած... եւ ասես ցորեն էր աղում: Եվ գայթակղում էր չարքը երանելուն, եւ հարցեր էր տալիս... Եվ հրամայեց նրան երանելին, որ չքվի անհետ... եւ դարձավ սատանան տեղն իր՝ խայտառակված ու ապշած եղելությունից:

- Տեղն է դրան:

- Եվ տապալվեցին դժոխքի դարպասները:

- Էմալիո՛լ: Ի՞նչ բան է էմալիոլը:

- Է-մա-լիոլ, ձերդ պայծառափայլությո՛ւն, էմալիոլ,- կալանավորները մղվեցին իշխանի կողմը:

- Այ որ երազ գա՝ ոտավոր օձ տեսնես, մեռնելու նշան է,- անատամ բերանը չմփչմփացրեց պառավը:

- Էմալիոլ, տեղյակ չեմ,- նորից ժպտաց իշխանը:

- Ձերդ պայծառափայլությո՛ւն, ծխախոտ չե՞ք տա,- ատամները բացած՝ խնդրեց թարշամած մեկը, քստքստացնելով, ինչպես գինետան սպասավորը քեֆ անող սեղանի մոտ:

Իշխանը տնտղեց գրպանները, բայց ծխախոտատուփը չկար. ծխախոտատուփը գողացել էին:

- Խարդախ ժողովուրդ է,- նկատեց կանաչած մորուքով ծերուկը,- ամերիկական կողպեքի հախից էլ են գալիս:

- Առանց թութուն վատ էի,- խնդմնդաց թարշամածը:

- Մի պետ ունեինք, գազան, վատ վերջացրեց՝ գլուխը կոխեցին պա-

բաշան,- ծերունին նստեց իշխանի կողքին,- քեզ սպանես էլ՝ թութունն արգելում էր: Իսկ առանց թութունի, առանց ծխելու, պարզ բան է, մեռնելի՛ք: Ի՞նչ անես: Ես ել սովորեցի ավելի կոթ ծխելուն, մի ավել ունեինք, ամեն օր դրանով պարաշան էինք մաքրում: Մի տարի ավել ծխեցի:

Ազատության մեջ կեսօր է: Ճոգից թուլացան: Մեկը դանթում է, մյուսը թրեւ գալիս: Ծուլանում են բերան բացեն:

Ուխտավորն ինչ-որ բան խառնեց կանանց անկյունում, կնանիք նրան խրկեցին: Ու նա, նեղացած, քաշվեց դեպի պատուհանը:

- Ամեն շունչ-արարած Տիրոջն է փառաբանում,- մրմնջաց հ. Միխայիլն ու այնպիսի վշտահար մռութ սարքեց, որ ոչ մի կնիկ չի դիմանա, ծնկի կգա ու կսկսի թողություն խնդրել տեր հորից:

Բայց չէ, կնանիք էլ էին հոգնել, չեն նայում վշտահար մռութին: Ամեն ինչ ծանծրացրել է: Ոչինչ չի հետաքրքրում: Իշխանին հանգիստ թողեցին: Իշխանը մենակ հետուառաջ էր անում վագոնում: Այդ ժամին իշխանին էլ է թույլատրելի:

- Իսկ դու պառկի, անդադար, ես քեզ հեքիաթ կպատմեմ,- անքիթ շրջմոլիկը չանչում էր Վոլգային:

Վոլգան կամակորություն էր անում:

- Դու հեքիաթ պատմել չգիտես:

- Փորձի՛: Չգիտե՞ս:

- Դե պատմի՛:

Եվ անքիթը ֆշշացնում էր, հեքիաթ էր պատմում: Բայց աղջնակի համար ծանծրալի է: Անհետաքրքիր հեքիաթ է:

- Չէ՛, չգիտես, չեմ լսի:

- Իսկ կույր հարսնացուի մասին կուզե՞ս:

- Կույր հարսնացուի՞, լա՛վ, պատմի՛:

Իսկ անքիթը վարպետ է, ինքն էլ գիտի, որ վարպետ է: Նրան սովորեցնել պետք չի, ազատություն տուր՝ ինքը ում ասես կսովորեցնի: Ֆշշացնում է անքիթը:

- Կային-չկային, մայր ու աղջիկ կային, ու աղջիկը կույր էր: Էս կողմ է խփվում, էն կողմ, ձեռը բան չի բռնում: Խլուրդն էլ է կույր, բայց խլուրդի համար հողի տակ ցերեկ է: Խլուրդի բանը հեշտ է: Ի՞նչ անես, ո՞նց անես: Ու մի օր փեսացու է գալիս էս կույրին ուզելու, հարեւաններն էլ արանք չեն տալիս, փսփսում են փեսացուի ականջին. «Բա չգիտե՞ս, կույր է, ախր, աչքերով նայում է, բայց բան չի տեսնում»: Գալիս է, ուրեմն, փեսացուն, սեղան են նստում, հյուրասիրվում են, ու հարսնացուն ասում է. «Մերի՛կ, ա՛յ

մերիկ, շեմատակից ասեղը վերցրու»: Ասեղն էլ մերը գլխանց է շեմի տակ դրել, էդպիսի պայման են արել, որ խաբեն: «Ըհը՛,- մտածում է փեսացուն,- ասում էին կույր է, բայց շեմատակի ասեղը տեսավ»: Ու հենց մենակ են մնում, փեսացուն, որ ստուգի՝ իսկապե՞ս լավ է տեսնում հարսնացուն, հագի շորերը լրիվ հանում ու ասում է. «Դե արի, արի համբուրվենք, սիրելի՛ս»: «Արի»,- ծգվում է կույրը ու՝ չը՛փ, փեսացուն էլ արագ վեր է կենում,- չե՛ս խաբի,- ու արագ հրաժեշտ տալիս: Իսկ հարսնացուն՝ ուղիղ մոր մոտ. «Մերի՛կ, ա՛յ մերիկ, հենց բոլորը խրճիթից դուրս եկան, ես փեսացուի հետ համբուրվեցի, ո՛նց էի համբուրվում, մենակ թե նրա քիթը երկար է ու տաք, պռոշներն էլ հաստ են...»:

III

Իրիկնանում էր: Քամին ալեկոծեց արտերն ու խաղաղվեց: Հովացավ: Ինչ լա՛վ էր ազատության մեջ: Ու ծույլ խոնարհվում էր երեկոն, ու հացերը հասունանում էին: Այդպիսի երեկոները չեն մոռացվում: Ինչ լա՛վ էր ազատության մեջ:

Վագոնի լույսերը վառեցին: Ու նորից ամեն ինչ՝ առաջվանը: Սկսեցին վիճել՝ որտեղ է կյանքն ավելի լավ՝ Ռուսաստանո՞ւմ, թե՞ Սիբիրում: Ու պարզվեց՝ ոչ մի տեղ, միայն այնտեղ, ուր չկանք:

- Ամենից լավ անգլիացիների մոտ է,- հորանջելով ասաց մեկը, երբ վեճն արդեն մարել էր:

Սկսեցին տեղավորվել քնելու: Երկար էին տեղավորվում: Իրար էին բերում փալաս-փուլուսը: Կռվում էին տեղի համար: Հայհոյում իրար: Հիշում հին վիրավորանքները:

Մահացու խեղդուկ էր:

Իշխանի հետ նույն նստարանը զբաղեցրած Խլեբնիկովին մի փախստական միացավ:

Փախստականը, սովորության համաձայն, միշտ լարված է, ու քունն էլ քնի նման չի. Սախալինից էր փախել, ու նրան, ուրիշի անվան տակ, հիմա քշում են Տուլա: Փախստականը մի երկար պատմություն բացեց իր արկածների ու ավազակների մասին, թե ինչ ավազակների է տեսել Սախալինում, եւ ընդհանրապես ամեն տեսակ կարգերի մասին: Պատմողը միշտ էլ կեսը կփչի, բայց առանց դրա ի՞նչ պատմություն:

- Սախալին որ գնում էինք, մեզ հնդկական օվկիանոսով տարան, շո՛գ,- պատմում էր փախստականը,- տկլոր էին տանում: Գնում ենք, ճամփան՝ երկա՛ր, հնդկացիներեն ենք խոսում ու մտքներումս զուտ մի բան է՝ ոնց փախ-

չենք: Բոլորը մենակ դրա մասին են մտածում: Բայց թե ուր ենք փախչելու՝ հայտնի չի. մենակ Չինաստանն է ու ծովը: Մոտեցանք Սախալինին, ցրտեց: Ծոգին շատացրին, չի օգնում, մրսում ենք: Տեղավորվեցի, ուրեմն, Սախալինում, թեթեւ գործ է, զուտ անունով է գործ, տիրոջ գործն ավելի ծանր է: Իրեք տարի էդպես ապրեցի, ինչ ասես չտեսա, դաշտային դատարան տեսա: Տանում էին: Նստած է, ուրեմն մարդը, դատապարտվածը, մենակ երեսն ու վիզն է երեւում, ու գիտի՝ մեռնելու է: Ու բոլորն էլ գիտեն, բոլորի լացը գալիս է: Սիրտը փորն է ընկել: Վեր է կենում պաշտպանը, խնդրում է: Բայց հենց էնպես... էմալիո՛լ:

- Էմալիո՛լ,- խոխռում, տնքում, ատամներն են կրճտացնում:

Ու թվում է՝ նույն հուսահատ երազն են տեսնում բոլորը՝ էմալիոլն ուտում է վագոնը:

Վոլգան հանդարտվեց. կծիկ դառած՝ քնել է շրջմոլիկի ծնկներին. անքիթ շրջմոլիկը ծեր դայակի պես է:

- Տեղն է դրան,- քնի մեջ խոսում է Վոլգան:

Ժամապահը կիսաբաց արեց դուռը: Թե չէ՝ արդեն շնչելու օդ չկար: Թող ազատության օդը հովացնի...

Տաժանակիրների վագոնից, իսկ գուցե եւ դաշտից, գիշերով չես տարբերի, երգ լսվեց.

Իսկ դահիճը կարմիր շապիկով
Բարձրացրեց կարմիր կացինը...

- Տե՛ղն է դրան:

- Էմալիո՛լ:

Ու թպրտում էին փռված մարմինները, անազատությանը չէին դիմանում: Անվերջանալի ձգվում էր գիշերը:

Լուսումութին կալանավորներին ոտքի հանեցին: Անվանականչ էր, հաշվառք: Վաղ պատարագի զանգահարություն լսվեց, գնացքը տեղ էր հասել:

Կալանավորներին երկար իջեցնում էին վագոններից, քուրջուփալասը բարձեցին սայլերը, ձգեցին ձեռնաշղթաները: Հետո շարեցին ու կայարանից քշեցին բանտ:

Մարդաշատ փողոցներից մեկում կալանավորներին ընդառաջ թաղման թափոր էր գալիս: Անշուք թաղում էր: Հանգուցյալի գլուխը դեսուդեն էր ընկնում եւ ամեն փոսի խփվում անպաստառ, մեծ ծակերով դագաղի մեկ այս, մեկ մյուս եզրին:

Ոտնաշղթաներով մեկը, մինչ այդ՝ անբարբառ ու աննկատ, հանկարծ պոկվեց շարքից ու շղթաները պոկելով՝ կատաղի գոռաց.

- Հարությո՛ւն կառնի: Նա հարությո՛ւն կառնի: Երրորդ օրը՝ ըստ սուրբ գրոց,- ու սարսափելի ջղածգվելով՝ ընկավ ճանապարհին:

Իրարանցում սկսվեց: Քիչ մնաց դագաղը շուռ տային: Իրարանցման մեջ կալանավորներից մեկը փախավ: Սուլոցներ, աղմուկ, հետապնդում: Ամեն ինչ իրար խառնվեց:

Ու շարունակում էր խառնվել: Դեռ երկար չէր խաղաղվում: Դանդաղում էին. չէին շտապում, շտապելու կարիք չկա. հանգուցյալին կհասցնեն թաղել, հողը կընդունի, իսկ բանտ ուզածդ ժամի կթողեն՝ բանտի դուռը կրնկաբաց է:

Խելագարին կապկպեցին պարանով, նստեցրին սայլին, ու սափրած գլուխների գորշ պատը, շղթաները զնգացնելով, ճանապարհ ընկավ:

Գնալը դժվար էր: Արեւը վառում էր: Գոնե մի թեթեւ անձրեւ լիներ: Ոչ մի ամպի կտոր:

- Էմալիո՛լ,- իր կեղտոտված օձիքներն ու սերթուկին հայտնված փոշոտ բծերը ցույց տալով՝ Խլեբնիկովին ասաց իշխանը:

IV

Իշխանին ու Խլեբնիկովին տեղավորեցին նույն խցում:

Անընդհատ իրարանցում էր, շարունակ՝ մարդաշատ: Միայն երեկոներն էր ազատ լինում: Եվ ինչքան էլ ժամապահները քշում էին, նրանց խցում միշտ լիքը ժողովուրդ էր: Բոլորը՝ իշխանի մոտ. մեկը՝ խորհուրդի, մեկը՝ բողոքով, մեկն էլ՝ հենց այնպես՝ սիրտ թեթեւացնելու:

Ահա մթնշաղին անծայն մոտեցավ ինչ-որ աղանդավոր: Արդեն երկրորդ տարին է նստած ու հիմա գնում է Սիբիր:

- Ճշմարտության համար եմ չարչարանք կրում,- ասում էր աղանդավորը,- բոլոր եղբայրներս դատապարտվել են, սպասում եմ, թե ինձ երբ են ուղարկելու,- իսկ աչքերը վառվում են. սրա նմանի համար ոչինչ սարսափելի չէ, մորթեն էլ, ծայն չի հանի, ամեն ինչ կկրի, ամեն ինչի կդիմանա, զարմանալի է այս աղանդավորը:

Ահա մի կեղտակուր կալանավոր՝ հսկասեւ, յուղոտ աչքերով, որ խցերն է սպասարկում, մի անգամ չէ, որ ներս է նայել դռան անցքից, հիմա էլ բերել է լամպը ու չի գնում:

- Ամենաողորմած պարոնն՝ե՛ր,- երգեցիկ ասում է կեղտակուրն ու առանց դեսուդենի նստում,- հոգեւոր դասից եմ ես, Սանկտ Պետերբուր-

գից, քահանայական աստիճան եմ ունեցել: Օդեսա քաղաքում բռնեցին, ամենաողորմած պարոնևե՛ր, արտասահմանյան շոգենավի վրա, ու ժանդարմների ուղեկցությամբ բերեցին այստեղ: Հինգ տարի է՝ այս վիճակի մեջ եմ: Զրկվեցի քահանայական կոչումից, ամենաողորմած պարոնևե՛ր: Սարկավագ էի Յարոսլավլյան տաճարում ու բարձրաստիճան անձանց հետ էի առնչվում, զրուցում էի, ինչպես ձեզ հետ: Եվ որպես պատվավոր քաղաքացի՝ նրանց ջանքերով թողնված եմ այստեղ, տուգանային վաշտեր չքշեցին: Իսկ հայրիկն ավագ երեց է: Վեպեր էի կարդում ու քարոզչություն անում...

Բայց կեղտակուր կալանավորի բախտը չէր բերում. վերակացուները չէին սիրում նրան, անընդհատ քշում էին խցից: Թեթեւակի ծունկը ծալելով, ոչ առանց սեթեւեթանքի, քարոզիչը ենթարկվում էր:

- Լրտես է,- մի անգամ ասաց վերակացուն,- վզին տալով՝ վռնդեք, թէ չէ խոսք կքաշի, անիծված լրտե՛սը:

Ահա եւ դարբին Տիմոֆեյը, բարձրահասակ հաղթանդամ կալանավորը, ճակատը հատող կնճիռը նրան այնպես ահարկու էր դարձնում, որ բոլորը վախենում էին՝ եւ՛ կալանավորները, եւ՛ վերակացուները: Լրջախոհ է, շարունակ մտքերի մեջ, բառ չի ասի: Եղիայի տոնի նախօրեին, երեկոյան, ըստ երեւույթին սիրտը շատ էր ծանրացել, դարբինը չդիմացավ:

- Տե՛ր Աստված,- տնքաց Տիմոֆեյը,- Դեռ մեկուկես տարի:

Եվ անխնդրել սկսեց իր պատմությունը:

Դարբին է, Տուլայի մոտ լավ տնտեսություն ուներ, աշխատողներ էր պահում: Նիկոլայ որդին կապվում է մի աղջկա հետ, ու երեխա են ունենում: Դրա մասին տեղեկանում է ինչ-որ կոմս ու աղջկան իր մոտ առնում որպես ստնտու: Հետո կոմսը կանչում է Տիմոֆեյին:

- Գալիս եմ: Դուրս է գալիս կոմսը կոմսուհու հետ, ու սկսում են ինձ համոզել, որ տղայիս պսակեմ էդ աղջկա հետ: Ես հրաժարվում եմ: Ավելի թունդ են համոզում, խոստանում են, որ դարբնոց կտան օժիտին, հող էլ կտան: «Ախր, ասում եմ, էդ մի տղան ունեմ, ոնց կարելի է, որ հեռանա ինձանից, էդ ման էկող աղջկան էլ տուն չեմ թողի, ու կարծում եմ, որ ոչ մի օրինավոր մարդ էլ չէր թողի»: Կոմսուհին ուղղակի վեր թռավ. կոմսը, ախր, իրան ուրիշի ձեռից էր առել, էդպիսին է եղել մինչեւ պսակվելը, ման էկող է եղել, աշխատողների հետ էլ էր խառնակվում, ինչ ասես անում էր. ասածս, ուրեմն, իր վրա էր վերցրել: Էդ օրվանից էլ ամեն ինչ սկսվեց: Մի անգամ տուն եմ գալիս, կինս գարեջուր է եփել: «Գնա, ասում է, ալյուրի հետեւից»: Դուրս եմ գալիս, մոտենում ջրհորին, ջրհորն ընդհանուր էր, բոլորն էնտեղից են ջուր քաշում, տեսնեմ՝ մեկը կանգնած է, գյուղից: «Դարբ-

նոցդ, ասում է, էդ ինչի՞ է բաց»: Ծերեփը գցեցի, վազ տվի, նայեմ՝ իսկապես, դուռը բաց է: Սկզբում Նիկոլային կասկածեցի. երեւի, մտածում եմ, գնացել է հարմոնը վերցնի, ու դուռը բաց է թողել, բայց հետո տեսնեմ՝ կողպեքը կոտրած է: Հա՛, մտածում եմ, հյուրեր եմ ունեցել: Հետ եկա տուն, կնոջս ասեցի, ու որոշեցինք գնանք տանուտերի մոտ, որ խուզարկություն անի: Տղաս էլ, ասեմ ձեզ, էլի մի աղջկա հետ էր խառնակվել, ու սա էլ էր երեխա բերել: Կոմսը իմացել էր դրա մասին, կանչեցին ինձ դատարան ու ստիպեցին, որ ամիսը իրեք ռուբլի տամ: Ու մտածեցի էդ ժամանակ. վայ թե էդ աղջկա Իվան ախպերն է կողպեքը ջարդել: Տնտղեցին Իվանին՝ բան չգտան, էն է ուզում էինք վերջացնենք, բայց ուրյադնիկը բարձրացավ կտուրը ու էնտեղից ինչ-որ գործիքներ է հանում: Քննություն սկսվեց: Ու մի իրիկուն գալիս է էդ Իվանը ու ներողություն խնդրում: Տեղը դրի նրան ու ասում եմ. «Գողությունը կարողացել ես, պատասխան տալն էլ կարողացի»: Էդ ժամանակ գեղացիքից մեկը դարբնոցում նստած էր, լսում է, ուրեմն, խոսակցությունը ու դատից մի օր առաջ էլ եկավ ու խնդրեց իրան որպես վկա տանեմ ատենակալի մոտ: Գնացինք, վկայություն տվինք: Բայց հենց որ դատը սկսվեց, վեր կացավ, թե՝ ես իրան կաշառել եմ: Իվանին արդարացրին, իսկ ինձ՝ բանտ: Հետո արդեն եկավ էդ գեղացին, մեղա է գալիս, ասում է՝ համոզեցին. հինգ ռուբլի էին տվել ու երշիկ, ինքն էլ զրպարտել էր: Տե՛ր Աստված, երբ եմ դուրս գալու էստեղից:

Էլի ահագին ժողովուրդ ամենատարբեր պատմություններ ու զրույցներ արեց, եւ այդ ամբողջ պատմածից պարզ էր մեկ բան՝ որ ոչ ոք իրեն մեղավոր չէր համարում, այլ մեղադրում էր ուրիշին, մեղադրում էր որեւէ Իվանի, իսկ այդ Իվանը՝ որեւէ Յակովի, Յակովն էլ՝ ինչ-որ Պյոտրի, եւ այդպես մեկը մյուսին, մինչեւ որ շրջանը փակվում էր. ոչ ոք մեղավոր չի, ու յուրաքանչյուրը մեղավոր է մյուսի առաջ:

Բոլորը կյանքը տանում էին որպես պատիժ, բայց թե ինչու պիտի տանեն եւ ինչի համար է պատիժը՝ պատասխան չկար, բացի մեկից՝ ճակատագիր է, Աստծո կամքը՝ մարդու գիտությանն անհասանելի: Ու համբերելով՝ յուրաքանչյուրը հավատում էր, որ իր վիճակը թեթեւացնելու մի միջոց կա՝ վերափոխել կյանքը, եւ ազատությունն էր այդպիսի միջոց թվում, իսկ ազատության հետ արդեն ինքնին պիտի հայտնվեին բոլոր բարիքներն ու երջանկությունը: Բայց իսկապե՞ս ազատությունը կփոխի կյանքը: Անազատության մեջ այդպիսի հարց չկար ու չէր կարող լինել:

Խլեբնիկովը երեկոները դատողություններ էր անում իշխանի հետ: Իշխանը մի տեսակ անտարբեր էր լսում, ասես նրա համար ամեն ինչ արդեն

որոշ էր ու չկար ոչ մի առեղծված, իսկ եթե որեւէ բան կար էլ, չարժեր մտածել դրա մասին: Այդպես էր երեւում իշխանի պատասխաններից:

Խլեբիկովը իշխանին իր պատմությունն արեց: Խլեբնիկովի պատմությունը բարդ չէր: Կյանքին, օրեցօր ծգվող կենսակարգին գիտակցաբար վերաբերվելու առաջին ժամանակից ի վեր նրան տանջում էր այդ կարգի թերատությունը, կյանքի ինչ-որ անճշմարտություն եւ անճշտություն: Փորձում էր վանել այդ մտքերը, ու երբեմն դա հաջողվում էր, բայց հետո ինչ-որ ձայն նորից անհանգիստ ու տառապագին հիշեցնում էր, որ չի կարելի այդպես ապրել, չի կարելի ապրել՝ աջակցելով նրան, ինչ *անճշմարիտ* եւ *անճիշտ* է: Պետք է շտկել, փոխել կյանքը: Բայց ինչպես փոխես կյանքը: Հենց այստեղ էլ պարզ միջոցներ հայտնվեցին, շատ պարզ ու շատ մատչելի: Եվ նա թողեց ամեն ինչ ու սկսեց զբաղվել *քաղաքականությամբ:* Եվ այնպես սլացավ կյանքը, այնպես եռաց, որ ոչինչ չես հասցնի ու մտածելու ժամանակ էլ չկա: Ավելի լավ ժամանակ չի հիշում: Իհարկե,- գործով ընկած՝ չես էլ հասկանա,- ընկերներ հայտնվեցին, ծախեցին: Ու գործը պատրաստ է:

- Իսկ հիմա՞ ինչպես եք մտածում,- հարցրեց իշխանը:

- Մտածում եմ՝ ամեն ինչ այնքան հեշտ չէ, որքան այն ժամանակ թվում էր:

- Իսկ ինչպե՞ս եք ապրելու:

- Հենց բանն էլ այդ է: Բարդ է ամեն ինչ:

Եվ իրոք. ինչպես է ապրելու: Ոմանք կարող են առանց հարցերի էլ ապրել, ոմանք էլ անպայման պատասխան են պահանջում, հակառակ դեպքում կյանքը կյանք չի: Մարդիկ կան նաեւ, որ պատասխանել են իրենց հարցերին ու հանգիստ ապրում են: Որտե՞ղ են գտել պատասխանը:

- Իրեր սիրո՞ւմ եք:

- Սիրում եմ: Իսկ դուք գիտե՞ք, իշխա՛ն, ինչպես ապրել:

Բայց իշխանը միայն ժպտաց. ասես գիտեր ու չգիտեր:

Խլեբնիկովը մի քանի անգամ մոտեցավ այդ հարցին, բայց միշտ պատասխանի փոխարեն ժպիտ էր գտնում, որի մեջ մանկան մաքրությո՞ւն էր, թե՞ վերջին անեծք:

- Իսկ ծե՞զ, իշխա՛ն, ինչի համար են բռնել:

Իշխանն առաջվա պես ժպտում էր:

V

Բանտից բանտ, կալաներթից կալաներթ. կյանք չի, այլ էմալիոլ:

Կեղտոտ ու պատառոտված, ոտքերը մի կերպ քարշ էին տալիս կալանավորները՝ այդ *դժբախտները,* այդ դժոխք ընկած մեղսավորները: Պա-

տահում էր՝ մեռնում էին, եւ ինչ խաղաղ էին մեռյալների դեմքերը. մահը նրանց որպես թշնամի չէր հայտնվում, այլ բարի ազատարար, ու բնավ սարսափելի գերանդիով կմախք չէր, ինչպես կյանքի եռուն պահին հայտնվում է այնտեղ, որտեղ ուրախություն ու ծիծաղ է եւ ուզում ես ապրել: Մի նշան է մնում՝ նախկին անմար կրակի հիշողությունը. այնտեղ, ուր շղթայված էին ձեռքերը, գեհենական այտուցի պես մանուշակագույն ապարանջաններ են օղակվում:

Խլեբնիկովի հետ կալաներթի ելածներից քչերն էին մնացել: Ինչ-որ տեղ կորան Վոլգան ու անքիթ հեքիաթասացը, ու կանաչած մորուքով ծեր ծխամոլն անհետացավ, եւ Էմալիոլն ինքը, եւ բազմաչարչար ուխտավոր հ. Միխայիլը:

Մոսկվայում խիստ է: Մոսկվայում միանգամից բոլորին տեսակավորեցին. իշխանը քրեական է, դրեցին իշխանին քրեականների մոտ, Խլեբնիկովը քաղաքական է՝ նստացրին աշտարակում:

Խլեբնիկովը դեռ չէր հասցրել ծանոթանալ միջավայրին, երբ իր պես մի նորեկի բերեցին: Դեռ ոչ ծեր, պճնամոլ պարոն էր, որին, չգիտես ինչու, գրասենյակում վերակացուներից մեկը *Սամարղանդցի խարդախ* էր անվանել: Պարզվեց՝ Սամարղանդցի խարդախը մինիստրություններից մեկի կարեւոր պաշտոնյա, պետական խորհրդական Վասիլի Վասիլեւիչ Պետրովն է, Պետերբուգից: Մեղադրվում էր պետական խորհրդականը ինչ-որ մեկին գաղտնի փաստաթուղթ տալու համար: Իսկ իրականում, ինչպես պարզվեց, մտքով էլ չէր անցել, պարզապես ծանոթներից մեկը, հետաքրքրությունից դրդված, նրանից վերցրել էր այդ գաղտնի փաստաթուղթը ու արտագրել, իսկ հետո արդեն այն լրիվ անսպասելի հայտնվել էր այնտեղ, ուր չպիտի հայտնվեր, ինչ-որ արտասահմանյան թերթոնում: Այդպես, չեղած տեղը, զվարճասեր պետական խորհրդականը,- բնավ՝ սամարղանդցի խարդախ,- հայտնվել է քաղաքականների ցուցակներում:

Պետրովի հետ կյանքը թեթեւացավ: Ձրույցը ժամանց է:

Պետրովն Աստվածաշունչ էր կարդում, բայց ընթերցանությունը չէր գրավում նրան, ու գրքից կտրվելով՝ անդադար զվարճալի պատմություններ էր պատմում, պատմությունները փոխվում էին հուշերի, իսկ հիշելով՝ գժվում էր. մեկ բալետ էր ներկայացնում, մեկ օպերետ, մեկ գնչուական դերերգեր, կրկեսի ձիեր էլ էր ներկայացնում:

Ցերեկը տանում էին զբոսանքի: Աշտարակի տակ փոքրիկ բակ կար, այնտեղ էլ զբոսնում էին: Բակից երեւում էր քրեականների աղյուսաշեն մասնաշենքը: Շենքի վերին պատուհանում հայտնվում էին երկու նեգր: Ու

ներկայացում էր սկսվում նեգրերի մասնակցությամբ:

- Արա՛պ Իվանիչ,- նեգրերին էր դիմում Պետրովը,- մեզ համար մի բան երգիր, Արա՛պ Իվանիչ:

Ու նեգրերը, ոտնաշղթաները զնգացնելով ու ծյունաճերմակ ատամները շիկացնելով, ոռնում էին: Ինչ-որ տխուր ու սարսափելի, անապատային բան էր լսվում նրանց երգի մեջ, ու ծիծաղելի ոչինչ չկար, բայց Պետրովն ու վերակացուները փորները բռնած հռհռում էին:

- Հերիք է, Արա՛պ Իվանիչ, հրես ավագը կգա, հերիք է, Արապ Իվանիչ,- բանալիներն էր թափահարում ծիծաղելուց արցունքոտված վերակացուն:

Երեկոները՝ փակի տակ, աշտարակում: Աշտարակում լռություն էր, միայն մկներն էին ճանկռտում ու մանում էին իրենց մկնային երգը:

Երեկոները Պետրովը դարանակալում էր մկներին:

Մի անգամ անպատեհ ժամի աշտարակ մտավ ավագը, որ ալեհեր մորուքով, յուղափայլ դեմքով ծերունի էր: Նախօրեին Պետրովիփալասն էր կորել, Պետրովը տեղեկացրել էր ավագին, ավագը խոստացել էր, որ կգտնի, եւ ահա եկել էր:

- Պարո՛ն, փալասի հաշվով, որ հարցնում էիք, չքացել է, ոչ մի տեղ չենք գտնում:

- Բայց հո մո՞ւկը չի տարել,- պենսնեն քթին վեր քաշելով՝ աչքով արեց Պետրովը:

- Մուկն է, թե մուկը չի, բայց էստեղ նստած մեկը պատմում էր, որ գիշերները սատանան է ման գալի, ասում էր՝ աչքովս եմ տեսել՝ լրիվ սպիտակ, մորուքը՝ սեւ, իսկը սատանա:

- Ի՞նչ սատանա:

- Չգիտեմ՝ ճի՞շտ էր ասում, բայց վախենալու է. ոչ մի դեպքում էստեղ մենակ չէի մնա: Էգուց էլի ման կգամ ձեր փալասը:

Ավագը գնաց, ու սարսափելի դառավ: Սկսեց թվալ, որ գիշերներն ինչ-որ մեկը շրջում է, ինչ-որ էմալիոլ, լրիվ սպիտակ ու՝ սեւ մորուքով, իսկը սատանա: Ու կյանքի ողջ թեթեւությունը կորավ: Պետրովը կատակներ չէր անում: Ու երբ վերակացուն՝ Հապա մականունով զվարճասերը Պետրովյան այգում զբոսանքի գնալիս, մեղուշ աչքերը կկոցելով, շրթներկ խնդրեց, որ բեղերն օծի, Պետրովը անմեղ տեսքով ու առանց մի խոսքի տվեց քոլդ-կրեմի տուփը: Եվ Արապ Իվանիչի նեգրական երգեցողության վրա էլ արդեն չէր ծիծաղում, այլ մռայլ հառաչում էր:

- Քաղաքականությո՞ւն եք մշակում,- խոսք էր բացում մյուս վերակացուն՝ *Մանրածածանը:*

Պետրովը, որ լեզվին տալու սիրահար էր, հիմա Սանրածածանին էլ չէր արձագանքում:

Այդպես վրդովեց աշտարակային անդորրը անկոչ էմալիոլ աշտարակաբնակ սատանան, որը գիշերը շրջում էր աշտարակում ու գողանում Պետրովի փալասները: Ու անկանոն կյանք սկսվեց:

Վերափոխման տոնի նախօրեին, իրիկնաթեյից հետո, երբ Խլեբնիկովն ու Պետրովը լուռումունջ անկյունից անկյուն էին քայլում, իսկ պատուհանից ներս էր թափանցում Կրեմլի զանգակատների հեռավոր գվվոցը, աշտարակ բերեցին մի նորեկի:

Փոքրամարմին, տանջահար կալանավոր Կոտովն էր, որին սխալմամբ քրեականների ընդհանուր բանտախուց էին նստացրել, որտեղ մնացել էր ընդամենը մի քանի օր, բայց այդ օրերը նրա մեջ գլխիվայր շրջել էին ամեն ինչ ու փոխել՝ ցմահ ու ամբողջովին:

Կոտովն ամբողջ երեկո պատմում էր ընդհանուր խցի կարգերի եւ ամեն կարգի բռնությունների մասին, որ անդադար են կալանավորական փակ կյանքում:

- Մի ջահել կալանավոր էր ընկել մեր մոտ, սիրունիկ տղա էր: Ցերեկը բերեցին, ու ամբողջ օրը կալանավորները հետեւում էին նրան, խնայում էին, խնամում էին, իսկ հենց եկավ գիշերն, ու խուցը փակեցին, սկսվե՛ց. ասես ազդանշանով հարձակվեցին վրան ու ինչ ասես չարեցին, իսկ ինչ-որ երկու նեգր... հիշելն էլ սարսափելի է: Էնպես որ, առավոտը մեռելանոց տարան: Ասում են՝ ինչ-որ իշխան է՝ խարդախներից:

- Իշխա՞ն,- Խլեբնիկովը նկարագրեց իր ուղեկցի արտաքինը:

- Ինքն է,- հաստատեց Կոտովը,- իշխանը՝ խարդախներից:

Եվ էլի տարբեր աներեւակայելի պատմություններ արեց Կոտովը ու ոչ միայն բանտային դեգերումներից, այլեւ բուն սովորական գորշ կյանքից, որ անցնում է աննկատ եւ արտաքուստ համեստ ու նույնիսկ օրինակելի: Եվ ամբողջ պատմածից ակնհայտ էր մի բան, որ մարդու բնույթը արշինով չես չափի ու վանդակներում չես տեղավորի, ու չես դատի նույն դատարանով:

- Չգիտեմ էլ հիմա ինչ եմ անելու...,- այդպիսին էր պատմողի կրկներգը՝ փորձառու եւ աշխարհ տեսած մարդու, ում համար, իր ասելով, դեռ երեկ ամեն ինչ պարզ ու հասկանալի էր, ու բոլորից առավել՝ ամեն գործ ձեռքից գալիս էր:

VI

Մոսկվայից ճանապարհն արագացավ: Բանտերում երկար չէին պահում, քաշքշուկով չէին չարչարում: Կարեւոր հանցագործներ չկային. բոլորին թողել էին Մոսկվայում, որ քշեն Սիբիր:

Տարատեսակ խաժամուժ էր գնում:

Պոռնիկ *Ամուրչիկը,* Պետրոս կայսեր հասակի, գլխարկի վրայից գլխաշոր կապած, արտակարգ ուրախ ու ընկած մի աղջիկ, իր կամքով էր անառակության գնացել ու քանի ուժ ունի, ասում էր, ման է գալու:

Ինչ-որ թանկ անառականոցում էր եղել, անունը՝ *Ոսկե առյուծներ,* ապրում էր, զվարճանում:

- Օրը հարյուր բաժակ կոֆե էի խմում, անծամբ գող Կոզիրեւը, էքսպրոպրիատորն էր ինձ նամակներ գրում, ա՛խ, խարդախնե՛ր, ծեր խելքի բանը չի:

Նրա զրույցներից բոլորն աշխուժանում էին, այդպես կենսուրախ էին նրա հասարակաց կյանքի պատմությունները:

Ամուրչիկից բացի Խլեբնիկովի ուղեկիցներն էին երկու մատնիչ: Մեկը՝ սուսուփուս ու ճնշված, մյուսը՝ կռվազան ու չար, բայց եւ՛ առաջինը, եւ՛ երկրորդը շատ էին տանջվում: Մատնության համար ոչ մի պարգեւ չէին ստացել, ոչ մի զիջում, իսկ մատնել էին, որովհետեւ վախեցել էին. կան այդպիսի երկչոտ ու հոխորտացող մարդիկ:

- Բայց ինչի էիք գործի մեջ խցկվում: Գիտեիք, չէ՞, ինչով է վերջանալու,- հարցնում էին մատնիչներին:

- Մենք էլ չգիտենք, չդիմացանք: Մենք չենք մատնել: Մենակ հաստատել ենք: Մեզ խաբեցին: Պոլետաեւն է մատնել բոլորին,- արդարանում էին մատնիչները, եւ՛ սուսուփուսը, եւ՛ կռվազանը, մեղքը բարդելով ինչ-որ Պոլետաեւի վրա:

- Սատանան է փորձանքի քաշել,- միջամտեց մի ծերունի՝ մանր գող:

- Ամեն ոք իրեն կբացահայտի,- նկատում էր փիլիսոփան, որը մի անգամ չէր ողջ Ռուսաստանով մեկ կալաներթի ճամփան կտրել հյուսիսից հարավ ու հարավից հյուսիս:- Այ, սուսուփուս ապրում ես ու չես էլ հասկանում՝ կա՞ս լույս աշխարհում, թե՞ չկաս, բայց հենց գողացար, կամ բռնեցին, կամ ուրիշ մի բան, արդեն կաս ու գոյություն ունես աշխարհում:

- Հիմարությունից ու անհասկացողությունից էլ է լինում,- փիլիսոփային ուղղեց իմաստունը, որ բոլորովին նման չէր իմաստունի, այլ ավելի շուտ ինչ-որ արմավի էր նման:

- Պոլետաեւն է բոլորին մատնել: Մենք չենք մատնել,- իրենցն էին ձգում մատնիչները:

- Խարդախնե՛ր, խելքներիդ զոռ մի տվեք, բոլորդ էլ կորած մարդիկ եք,- տեղում պար էր գալիս Ամուրչիկը:

Վերջին բանտում, ուր գնացքը քարշ տվեց-բերեց Խլեբնիկովին, ամեն ինչ հիմար կերպով սկսվեց: Բանտապետը, որ պատկառելի ու խելացի մարդ էր, կարգադրեց Խլեբնիկովից վերցնել գիրքն ու ակնոցը՝ հրամանը բացատրելով հնարավոր փախուստը կանխելու հանգամանքով:

- Ձեզ համար ի՞նչ է երեք-չորս օր այդպես մնալը:

- Ախր կարճատես եմ, բան չեմ տեսնում:

- Բանտում տեսնելու բան չկա էլ:

Առաջին չարաբաստիկ օրը Խլեբնիկովն անցկացրեց ընդհանուր բանտախցում՝ մյուս քաղաքականների հետ: Այդ առաջին օրը նրանց, չգիտես ինչու, կիսաքաղց թողեցին: Ու խոսքն ուտելիքի շուրջն էր պտտվում:

- Ա՛յ թե հիմա մի ման տաք շչի լիներ:

- Ես ձկան ապուր կուտեի, ձկնապուր սիրում եմ:

- Հորթի տոտիկներն ավելի համով են:

- Չէ՛ մի, տոտիկներ... Ամենահամովը ժախուկով խոճկորն է:

- Գոնե տաք թեյ լիներ՝ բուլկիով:

- Ու խաշած ստերլետ՝ սոուսով:

- Իսկ ես խաշած միս կուտեի:

Երեկոյան բոլորին, առանց իրիկնաթեյի, տեղավորեցին մենախցերում: Ե՛վ ցուրտ էր, եւ՛ ուտել էին ուզում, եւ՛ խմել: Ու միայն առավոտյան վերակացուն եռջուր բերեց:

- Իսկ *Ցոգի-Լուկ* թեյ, որ ձեր թղթերում է գրած, չկա, մենակ Վիսոցկի է: Էգուցվա պատվերը տվեք:

Բայց աստված թեյի եւ ուտելիքի հետ: Ողջ կալաներթի ընթացքում առաջին անգամ Խլեբնիկովը մենակ էր մնացել: Ու մենակ այնպես լավ էր մտածվում:

Բանտի ետեւից երաժշտություն էր լսվում՝ շեփոր էր, խռպոտ, ինչպես հինգ ռուբլով ու երշիկով ծախված դարբին Տիմոֆեյի ձայնը:

Խլեբնիկովը զրուցում էր ինքն իր հետ:

Այո՛, իրեր սիրում է: Իսկ ո՞նց է սիրում անտառը, դաշտը, գետը: Գարնանը կենդանություն է առնում ամենավերջին բզեզի հետ: Այ ազատ կարձակեն. ահավոր սիրում է ազատությունը:

«Իսկ հետո՞: Հետո՞ ինչ»:

Աչքի առաջ ամենատարբեր իրադարձություններ էին պտտվում, իսկ ականջներում՝ տարատեսակ պատմություններ: Եվ ամեն ինչ ասես, թե

իրավունք ուներ ապրելու աշխարհում, թե իսպառ անհասանելի, ինքնակոչ, անիրավունք էր թվում:

«Իսկ ինչպե՞ս պիտի լիներ: Ուրիշ կե՞րպ պիտի լինի: Գուցե ամեն ինչ հենց այդպես էլ պիտի լինի՞, ինչպիսին կա: Իսկ ամեն ինչի մեղավորն իր աչքերն են: Ախր կարճատես է ու նստել է առանց ակնոցի, ախր բոլոր առումներով կարճատես է, դրա համար էլ չի կարող տեսնել բոլոր զսպանակները եւ անկարող է հասկանալ, որ ամեն ինչ պիտի լինի հենց այնպես, ինչպես կա»:

Իր մտքերի հետ, անողոք ինքնահարցաքննությունների մեջ մենակ անցկացրած երկու անքուն գիշերներից հետո երրորդ գիշերը Խլեբնիկովը զգաց այն ծանոթ հոգնությունը, որ նրան պատում էր շփոթմունքի ծանր րոպեներին, ու քնեց:

Ու երազ եկավ նրան՝ իբր դաշտում պառկած է հսկա Ցոգի-Լուկը, ու ոչ սպանված է, ոչ կապկպված, ողջ-առողջ պառկած է, ու հսկային շան անիծի պես մի միջատ է ուտում՝ սպիտակ, վիզը երկար, մարմինը՝ օղակ-օղակ, գլխին՝ յոթ ատամ՝ *Էմալիոլ:*

Երբ Խլեբնիկովն արթնացավ, պատարագի զանգահարություն էր քաղաքում. ջարդված զանգը ծույլ թխկում էր: Ամպամած վաղ առավոտը ներս էր նայում քրտնած պատուհանից:

- Իրե՛ր հավաքիր,- խցից խուց անցնելով՝ գոռում էր վերակացուն:

Ու նոր ճամփորդություն սկսվեց, եւ արդեն ոչ երկաթուղով, այլ ոտքով:

Հազար ու ավելի վերստ անցավ Խլեբնիկովը: Աշունն ավարտվում էր: Հողը ճերմակ ձյունով էր պատվել:

Խլեբնիկովը չէր սպասում, ինչպես ուղեկիցներն էին սպասում, այն նախանձելի օրվան, երբ կավարտվի ճանապարհը, եւ նույնիսկ տարօրինակ էր մտածել, որ վերջապես իրեն, համենայնդեպս, կասեն՝ ահա, ընտրիր ուզածդ խրճիթը եւ ապրիր: Բայց ինչպե՞ս է ապրելու: Չի կարող ապրել, ինչպես առաջ էր ապրում, չի էլ լսի նրանց: Կհեռանա, մի տեղ՝ անտառներում, մի տեղ՝ լայնարձակ գետի ափին կամ ամենամեծ քաղաքի հրմշտոցի մեջ կգտնի այդպիսի ապրելու տեղ, եթե, իհարկե, դատապարտված չէ անվերջ որոնման, որ կբացի աչքերը:

«Չէ որ չի կարող ամեն ինչ հենց այնպես լինել, ինչպես տեսնում եմ, չի կարող, որ աշխարհում զուտ *անճշմարտություն ու անճշտություն* լինի: Հակառակ դեպքում՝ ի՞նչ: Ծաղրուծանակ ու անհեթեթություն է, ուրիշ ոչինչ»:

Միխայիլի տոնին ճանապարհն ավարտվեց: Կալաներթն անդին չէր գնում, անդին չէին քշում, անդին թռչուններն էին թռչում միայն, մեկ էլ՝ լողում էին սառույցները:

Բորիս ՊԻԼՆՅԱԿ

ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԻՆ

I

Դեպի հարավ ու հյուսիս, արեւելք ու արեւմուտք, բոլոր կողմերը, հարյուրավոր վերստերի վրա մամռակալած անտառներ ու ճահիճներն էին փռվել: Հառնել էին մայրին ու սոճին: Դրանց ստվերում եղեւնու, լաստենու, թխկենու, գիհենու, կարճլիկ կեչու անանց թավուտն էր: Իսկ փոքրիկ բացատներում, թփուտների արանքում, հապալասի ու լոռամրգենու թփերով երիզված տորֆի շերտերում, մամուռների մեջ «ջրհորներն» էին՝ սարսափելի, կարմրավուն ջրով ու անհատակ:

Սեպտեմբերին սառնամանիքներ էին լինում: Ձյունը նստում էր պինդ ու կապույտ: Լույսը միայն ժամը երեքին էր բացվում. մնացած ժամանակը գիշեր էր: Լռություն էր. միայն որմզդեղնն էր, զուգավորվելիս, մնչում սեպտեմբերին, դեկտեմբերին ոռնում էին գայլերը, մնացած ժամանակ այնպիսի լռություն էր, որ կարող է լինել միայն անապատում:

Բլրալանջին գետամերձ գյուղն էր:

Մերկ, մուգ դարչնագույն գրանիտ ու թերթաքար հագած, անձրեւից ու քամուց կնճռապատ՝ դեպի գետն էր իջնում լանջը: Ափին՝ կոպտատաշ, դարչնագույն նավակներ: Գետը լայնահուն էր, մռայլ, ցուրտ, խոժոռ ալիքներով փշաքաղված: Խրճիթները գորշացել էին ժամանակից, բարձր, առաջ եկած, տախտակաշեն կտուրներին կանաչավուն մամուռ էր կապել: Պատուհանները կույր էին: Խրճիթների մոտ չորանում էին ուռկանները:

Գազանորսներ էին կենում այնտեղ: Ձմռանը ամիսներով մտնում անտառ ու որս էին անում:

II

Գարնանը գետերը դուրս էին գալիս հունից՝ լայնարձակ, ազատ ու հզոր:

Գլորվում էին ծանր ալիքները՝ կնճռոտելով գետի մարմինը, ու նրանցից խոնավ, խեղդուկ աղմուկ էր տարածվում, տագնապալի ու անհանգիստ: Ձյունները հալվում էին: Սոճիների վրա խեժի մոմեր էին աճում ու թունդ բուրում էին: Երկինքն ավելի էր բարձրանում ու կապտանում, իսկ

մթնշաղին այն անորսալի կանաչ էր ու թախծալի կանչող: Տայգայում, ձմեռամահից հետո, գազանների անդրանիկ գործն էր արարվում՝ ծնունդը: Եվ անտառի բոլոր բնակիչները՝ արջերը, գայլերը, որմզդեղները, աղվեսները, կզաքիսները, բվերը, բվեճները, բոլորը սուզվում էին ծննդի գարնանային ցնծության մեջ: Գետի վրա աղմուկով կռնչում էին սուզահավերը, կարապները, բադերը: Մթնշաղին, երբ երկինքը կանաչ ու երերուն էր դառնում, որ գիշերը կերպասե կապույտի ու աստղաշատի փոխվի, երբ քուն մտնելով՝ լռում էին սուզահավերն ու կարապները, եւ միայն իշախառանչներն ու մարգահավերն էին խուտուտ տալիս փափուկ ու տաք օդը, աղջիկները հավաքվում էին բլրալանջին՝ Լադայի մասին երգելու ու շուրջպարի: Տայգայի ձմեռոցներից վերադառնում էին ջահելներն ու նույնպես հավաքվում այնտեղ:

Լանջը զառիթափ էր իջնում: Ներքեւում շրշում էր գետը: Իսկ վերեւում երկինքն էր փռվում: Լռում էր ամեն ինչ, բայց միաժամանակ զգացվում էր՝ ինչպես է զեռում ու շտապում կյանքը: Զառիթափի գլխին, որտեղ գրանիտի ու թերթաքարի վրա վտիտ մամուռն ու ջղախոտն էր աճում, սերտ խմբով նստել էին աղջիկները: Վառվռուն շորերով էին, բոլորը՝ ամրակազմ ու պինդ, տխուր ու լայնահունչ հնավանդ երգեր էին երգում, նայում էին մթնող, կանաչավուն մեգի հեռուն: Տղաների համար էին երգում իրենց անհատնում լայնահունչ երգը: Իսկ տղաների մթին ուրվապատկերները շրջապատել էին աղջիկներին՝ խուլ խնդալով ու հրմշտվելով, ինչպես գազանի որձերը անտառային կտղանքատեղում:

Քեֆերն իրենց օրենքն ունեին:

Գալիս էին տղաներն ու կին ընտրում՝ նրանց համար կռվշտելով, թշնամանում էին իրար հետ, իսկ աղջիկներն անտարբեր էին եւ ամեն ինչում ենթարկվում էին տղամարդկանց: Վիճում, կռնչում, զարկում ու զարկվում էին տղաները, աղմուկ անում, եւ հաղթողն առաջինն էր կին ընտրում:

Եվ այդ ժամանակ նրանք, տղա եւ աղջիկ, հեռանում էին քեֆից:

III

Մարինան քսան տարեկան էր ու դարափ գնաց:

Զարմանալի կառուցիկ էր նրա բարձրահասակ, մի քիչ ծանրավուն մարմինը՝ պինդ մկաններով ու կաթնաճերմակ մաշկով: Կուրծքը, փորը, մեջքը, ազդրերը կտրուկ ընդգծված էին, ամուր, ճկուն, ուռուցիկ: Բարձր ու կլոր էին խոշոր կրծքերը: Ծանր հյուսքերը, հոնքերն ու թարթիչները՝ գիշերվա սեւ: Խոնավ աչքերի բիբերը սեւ էին ու խորունկ: Այտերը վարդա-

գունում էին: Իսկ շրթունքները թվում էին փափուկ, գազանային, շատ կարմիր էին ու խոշոր: Միշտ դանդաղ էր քայլում՝ հանդարտ դնելով երկար, ուժեղ ոտքերն ու թեթեւ ճոճելով պիրկ ազդրերը:

Գնաց դարափ, աղջիկների մոտ:

Աղջիկներն իրենց երգերն էին երգում՝ երազկոտ, կանչող ու անհատնում:

Մարինան տեղավորվում էր աղջիկների խմբում, հետ ընկնում, փակում էր մշուշված աչքերն ու միանում նրանց երգին: Երգն օղակ-օղակ տարածվում էր լայնարձակ ու պայծառ, եւ ամեն ինչ տրվում էր երգին: Նվաղուն փակվում էին աչքերը: Չծեծված մարմինն անուշ տնքում էր: Սեղմվում էր սիրտը, ասես թմրում, եւ թմրությունն արյունով անցնում էր ձեռքերին, թուլացնում ոտքերն ու մշուշում գլուխը: Ու Մարինան կրքոտ ձգվում էր, ամբողջովին սուզվում երգի մեջ՝ ժամանակ առ ժամանակ դողալով տղաների բորբոքված, բարձր կանչերից:

Իսկ հետո տանը, խեղդուկ սենյակում պառկում էր Մարինան իր անկողնու վրա, ձեռքերը ծալում գլխի տակ, ինչից կուրծքը բարձր բարձրանում էր, պարզում էր ոտքերը, լայն բացում խոշոր, մուգ, մշուշված աչքերը, սեղմում շրթունքներն ու կրկին կարկամելով գարնանային նվաղման մեջ՝ այդպես պառկում էր երկար:

Քսան տարեկան էր Մարինան, ու ծնողյան օրից աճել էր, ինչպես տատասկափուշը զառիվերին՝ ազատ ու մենակ՝ գազանորսների, տայգայի, լեռնալանջի ու գետի հետ:

IV

Դեմիդն առանձնացած էր կենում:

Բնատեղն էլ, գյուղի պես, գետի գլխին էր: Վերեւում միայն բլուրն ու դարափն էին: Տայգան կողքին էր. իրենց անտառային թաթերով տանն էին դիպչում մուգ կանաչ, դարչնաբուն մայրին ու սոճիները: Հեռուն էր երեւում այդտեղից՝ անհանգիստ, մթնդած գետը, ջրերով ողողված հողերը՝ գետից այն կողմ, տայգան՝ հորիզոնին ատամնավոր ու մուգ կապույտ, եւ երկինքը՝ ցածր ու ծանր:

Սոճու հսկա գերաններով կապած, սպիտակ ներկած առաստաղով ու հատակով տունը լեփ-լեցուն էր արջի, որմզդեղնի, գայլի, բեւեռաղվեսի, կնգումի մորթիներով: Մորթիները կախված էին պատերին ու փռած հատակին: Սեղաններին վառող էր թափած, մանրագնդակներ, կոտորակ: Անկյուններում ցանցեր էին, օղակներ, թակարդներ: Հրացաններ էին

կախված: Թունդ ու սուր հոտ էր կանգնած տանը, ասես հավաքվել էին տայգայի բոլոր հոտերը: Երկու սենյակ էր ու խոհանոց:

Սենյակներից մեկի կենտրոնում սեղանն էր՝ ինքնաշեն ու մեծ, ու կողքին՝ ցածրիկ իշոտնուկ, վրան՝ արջի մորթի: Այդ սենյակում Դեմիդն էր կենում, մյուս սենյակում՝ Մակար արջը:

Տանը Դեմիդը երկար ու անշարժ պառկում էր արջենի անկողնուն եւ ականջ դնում իր մեծ մարմնին, թե ինչպես է ապրում, ինչպես է հոսում նրա մեջ ուժեղ արյունը: Մակար արջը մոտենում էր, կրծքին դնում ծանր թաթերը ու եղբայրաբար հոտոտում նրա մարմինը: Դեմիդը քորում էր արջի ականջի ետեւը, ու զգացվում էր, որ նրանք՝ մարդն ու գազանը, հասկանում են իրար: Պատուհաններից ներս էր նայում տայգան:

Պնդակազմ ու լայնաթիկունք էր Դեմիդը: Խոշոր, խաղաղ, բարի սեւ աչքեր ուներ: Նրանից տայգայի առողջ ու սուր հոտ էր գալիս: Բոլոր գազանորսների պես մորթի ու տնագործ, կոպտակար մանվածք էր հագնում՝ կարմիր երակաթելերով խամ կտավ: Ոտքերին եղջերակաշվի բարձրաճիտ, ծանր սապոգներ էին, իսկ կարմիր ու լայն թաթերը կոշտուկների պինդ կեղեւն էր պատել:

Մակարը ջահել էր եւ բոլոր ջահել գազանների պես՝ անհեթեթ ու խելառ: Կողեկող էր քայլում ու հաճախ չարություն անում՝ ցանցերն ու կաշիներն էր կրծում, ջարդում թակարդները, լպստում վառոդը: Այդ ժամանակ Դեմիդը պատժում էր Մակարին. թակում էր: Իսկ Մակարն ընկնում էր մեջքին, միամիտ նայում ու խղճալի ծմրում էր:

V

Դեմիդը դարափ գնաց, աղջիկների մոտ, ու Մարինային դարափից տարավ իր բնատեղը, ու Դեմիդի կինը դարձավ Մարինան:

VI

Ամռանը, հապճեպ ու հյութեղ, մուգ կանաչ բարձրանում էր փարթամ խոտը: Ցերեկը արեւը նայում էր կապույտ ու ասես խոնավ երկնքից: Գիշերները սպիտակ էին, եւ այդ ժամանակ թվում էր, թե ընդհանրապես երկինք չկա՝ լուծվել է գունատ մշուշի մեջ: Գիշերները կարճ ու սպիտակ էին, անվերջ ու միածույլ շառագունում էին մայրամուտներն ու արշալույսները, ու սորուն ամպեր էին սահում երկրի վրայով: Կյանքն անցնում էր հաստատուն ու շտապ, ասես զգալով, որ իր օրերը կարճ են:

Մարինան տեղավորվեց Մակարի սենյակում:

Մակարին տեղափոխեցին Դեմիդի մոտ:

Մակարը թշնամաբար ընդունեց Մարինային: Երբ առաջին անգամ տեսավ նրան, երախաբաց մռնչաց ու թաթով խփեց աղջկան: Դեմիդը դրա համար նրան թակեց, ու արջը սսկվեց: Հետո Մարինան ընկերացավ նրա հետ:

Ցերեկը Դեմիդը գնում էր տայգա: Մարինան մենակ էր մնում:

Նա իր սենյակը յուրովի հարդարեց, կոպիտ նրբագեղությամբ: Պատերին, համաչափ, մորթիներ ու վառ կարմիրով ու կապույտով, աքաղաղներով ու եղջերուներով զարդակարած սրբիչներ կախեց, անկյունում դրեց Աստվածամոր պատկերը, լվաց հատակը, եւ խայտաբղետ ու առաջվա պես տայգա բուրող սենյակը նմանվեց անտառային աղոթարանի, որտեղ անտառի մարդիկ աղոթում են իրենց աստվածներին: Բաց կանաչավուն իրիկնաժամին, երբ գալիս էր աներկինք գիշերը, ու միայն բվեճն էր ճչում տայգայում, իսկ գետի ափին ճռռում էին իշախառանչները, Դեմիդը գնում էր Մարինայի մոտ: Մարինան մտածել չգիտեր. մտքերը գլորվում էին հսկա, ծանր գլաքարերի պես՝ դանդաղ ու անճարակ: Բայց կարողանում էր զգալ, ամբողջովին տրվում էր Դեմիդին, եւ գունատ, աներկինք գիշերներին, շոգ, հոտավետ մարմինն արջի մորթու վրա տարածած՝ ընդունում էր նրան, տրվում, ենթարկվում անմնացորդ՝ ձգտելով լուծվել նրա մեջ, նրա ուժով ու կրքով հագեցնել իր կրքի հորդումը:

Սպիտակ, աղոտ, միգապատ էին գիշերները: Տայգայի գիշերային լռություն էր: Սահում էին մշուշները: Անտառապայն ու բվեճն էին ճչում: Իսկ առավոտյան կարմիր հրդեհի պես վառվում էր արեւելքը, ու մեծ արեւը բարձրանում էր թաց-կապույտ երկինք: Հապճեպ ու հյութեղ բարձրանում էին խոտերը:

Ամառն անցնում էր, անցնում էին օրերը:

VII

Սեպտեմբերին ձյուն եկավ:

Դեռ օգոստոսից օրերը զգալի կարճացան ու գորշացան, եւ մեծ, սեւ գիշերներ էին ձգվում: Տայգան լռեց, կարկամած ու թափուր էր: Եկավ ցուրտն ու սառույցով կաշկանդեց գետը: Մթնշաղները երկարում էին, եւ մթնշաղին ձյունն ու սառույցը գետի վրա կապույտ էին թվում: Գիշերները, զուգավորվելիս, բղավում էին որմզդեղնները: Այնքան բարձր եւ այնքան անսովոր, որ սարսափելի էր դառնում, ու պատերը դողում էին:

Աշնանը Մարինան հղիացավ:

Մի գիշեր լուսաբացից առաջ արթնացավ: Սենյակում թեժ վառարանի

խեղդուկ էր, ու արջի հոտ էր գալիս: Լույսը նոր էր բացվում, ու մթին պատերի վրա աննշմարելի կապույտ բծերով երեւում էին պատուհանների շրջանակները: Ինչ-որ տեղ՝ բնատեղի մոտակայքում, բղավում էր ծեր որմզդեղնը. տարածքում ռեվել ծեր լօսը. շչացող հնչյուններով կոպիտ ձայնից երեւում էր, որ ծեր է:

Մարինան նստեց մահճակալին: Գլուխը պտտվում էր, սիրտը խառնում: Կողքին պառկած էր արջը: Նա արդեն արթնացել ու նայում էր Մարինային: Արջի աչքերում խաղաղ, կանաչավուն պեծեր կային, ասես ճեղքերից երեւում էր գարնանային մթնշաղերի երկինքը՝ հանդարտ ու անբարբառ:

Սրտխառնոցը նորից մոտեցավ կոկորդին, գլուխը պտտվեց, եւ Մակարի աչքերի այդ պեծերը Մարինայի հոգում բնազդով վերածվեցին ահռելի, անտանելի ցնծության, որից ցավոտ թրթռաց մարմինը. հղի՛ է: Սիրտը թպրտում էր թակարդն ընկած լորի պես, ու վրա էր հասնում գլխապտույտը, ամռան միգապատ առավոտի նման:

Մարինան վեր կացավ անկողնուց՝ արջի մորթու վրայից, եւ արագ, անվստահ քայլերով, մերկ, գնաց Դեմիդի մոտ: Դեմիդը քնած էր. գրկեց գլուխն իր տաք ձեռքերով, սեղմեց լայն կրծքին:

Գիշերը կամաց-կամաց գորշանում էր, ու կապույտ լույսը ներս էր մտնում պատուհաններից: Որմզդեղնն այլեւս չէր բղավում: Սենյակում շարժվում էին գորշ ստվերները: Մոտեցավ Մակարը, հառաչեց ու թաթերը դրեց անկողնուն: Դեմիդն ազատ ձեռքով թփթփացրեց նրա վզին ու ասաց.

- Էդպես, Մակա՛ր Իվանիչ, գլխի ե՞ս:

Հետո, Մարինային դիմելով, ավելացրեց.

- Ի՞նչ ես կարծում՝ հասկանո՞ւմ է: Մարի՛նկա... Մարի՛նկա: Մարի՛նկա:

Մակարը լիզեց Դեմիդի ձեռքը եւ, խելացի, ըմբռնումով, գլուխը դրեց թաթերին: Գիշերը գորշանում էր, շուտով բաց մանուշակագույն ստվերներ սահեցին ձյան վրայով, մտան տուն: Կարմիր, կլոր, հեռավոր՝ բարձրացավ արեւը: Ձառիթափի տակ գետի կապույտ սառույցներն էին, անդին ատամնավոր բարձրանում էր տայգան:

Դեմիդն այդ օրը տայգա չգնաց, ինչպեսեւ շատ օրեր դրանից հետո:

VIII

Եկավ, սկսվեց, անցնում էր ձմեռը:

Ձյունը նստել էր հաստ շերտերով, ցերեկը՝ կապույտ ու գիշերը՝ մանուշակագույն, մայրամուտների ու արշալույսների ներքո: Արեւը, գունատ ու

անզոր, մի կերպ հորիզոնից ծերպ անելով, բարձրանում էր երեք ժամով, թվում էր հեռավոր ու օտար: Մնացած ժամանակը գիշեր էր: Գիշերները երերուն սլաքներով ճառագում էր հյուսիսափայլը: Սառնամանիքի կաթնաճերմակ մեգը ամենուր եղյամ էր նկարում: Անապատի լռություն էր, որը խոսում է մահվան մասին:

Մարինայի աչքերը փոխվեցին: Առաջ մշուշված-մուգ էին ու հարբած, հիմա դարձել էին զարմանալի պայծառ, խաղաղ ու խնդուն, շիտակ ու հանդարտ, եւ անարատ ամաչկոտություն էր հայտնվել աչքերում: Կոնքերը լայնացել էին ու շատ մեծացել էր փորը, եւ դա նրան մի նոր նրբագեղություն էր տալիս՝ ծանրաշարժ-փափուկ ու կրկին՝ անարատ:

Մարինան քիչ էր շարժվում, իր սենյակում նստած՝ նման էր անտառային աղոթարանի, որտեղ աղոթում են աստվածներին: Ցերեկներն իր պարզ տնտեսությունն էր վարում. վառարանն էր վառում, միս ու ձուկ եփում, մաշկում Դեմիդի սպանած գազաններին, մաքրում բնատեղը: Երեկոները,- երեկոները երկար էին,- իլիկ մանում ու կտավ էր գործում. իր երեխայի համար: Եվ կարելիս մտածում էր երեխայի մասին, երգում ու ժպտում էր խաղաղ:

Մարինան մտածում էր երեխայի մասին՝ անծայրածիր, զնգուն, ամենամուտ ուրախությունը լցնում էր նրա մարմինը: Սիրտը զարկում էր ու առավել էր թնդանում ուրախությունը: Իսկ, որ ծնունդը տառապանք է՝ ոչ մի միտք:

Դեմիդը մանուշակագույն լուսաբացներին, երբ հարավ-արեւմուտքում հաստատվում էր կլոր լուսինը, դահուկներով, հրացանն ուսին ու ֆիննական դանակով զինված՝ մտնում էր տայգա: Կանգնած էին մայրին ու սոճիները՝ ձյան կոշտ ու ծանր նախշերով եզրագծված, դրանց տակ խմբվել էին փշոտ եղեւնիները, գիհին, լաստենին: Ձյուներով ճզմված լռություն էր: Մեռյալ, անարձագանք ձյան միջով Դեմիդը թակարդից թակարդ, ցանցից ցանց էր անցնում, լռեցնում էր գազանին:Կրակում էր, ու լռության մեջ երկար ալիքվում էր արձագանքը: Հետեւում էր որմզդեղների ու գայլերի ոհմակներին: Իջնում էր գետի ափ, հսկում կուղբերին, սառցի հալատեղերում դեսուդեն խփվող ձուկ էր որսում, թարփեր դնում: Ծուրջբոլորն իր ճանաչ աշխարհն էր: Դանդաղ մարմրում էր կարմիր արեւը, ու բեւեռափայլի բեկվող սլաքներն էին սկսում առկայծել:

Երեկոյան բնատեղում կտրտում էր ձուկն ու միսը, կախում, որ ցուրտ առնեն, կտորներ էր գցում արջին, ինքն էր ուտում, լվացվում էր սառցաջրով ու նստում Մարինայի կողքին՝ խոշոր, պնդակազմ, ոտքերը չռած ու

ձեռքերը ծանր կախելով ծնկներին. նրա ներկայությունից նեղվածք էր դառնում սենյակում: Ժպտում էր հանգիստ ու բարեհոգի:

Վառվում էր լամպը: Պատերից այն կողմ ձյուներ էին, լռություն ու սառնամանիք: Մոտենում էր Մակարն ու թավալ գալիս հատակին: Հարմարավետ ու խաղաղ-խնդուն էր աղոթատան պես սենյակում: Պատերը ճրթճրթում էին սառնամանիքից, սառցակալած պատուհաններից խավարն էր նայում: Պատերին սրբիչներ էին կախված՝ զարդակարված կարմիրով ու կապույտով, եղջերուներով ու աքաղաղներով: Հետո Դեմիդը վեր էր կենում, Մարինային զգույշ ու վստահ առնում ձեռքերին ու անկողին էր տանում: Լամպը մարում էր, ու խավարում պեծին էին տալիս Մակարի աչքերը:

Մակարը ձմեռվա ընթացքում մեծացել ու այնպիսին էր, ինչպիսին լինում են հասուն արջերը՝ խոժոռ-լրջատես ու անճարակ-ճարպիկ: Շատ խոշոր, լայնաճակատ մռութ ուներ՝ մռայլ-բարեհոգի աչքերով:

IX

Դեկտեմբերի վերջին օրերից, Ձյան տոներից, երբ ոռնում էին գայլերը, Մարինան զգաց՝ ինչպես է կրծքի տակ խաղում երեխան: Շարժվում էր ներսում, մեղմ ու այնպես փափուկ, ասես մարմնին այդերուկի աղվամազ հպվեր: Մարինան լեցվում էր ուրախությամբ. միայն ներսի ու ներսից իրեն պինդ բռնած փոքրիկին զգում եւ անամոթ, անկապ բառեր էր ասում Դեմիդին:

Լուսաբացներին ներսում շարժվում էր երեխան: Մարինան ձեռքերը,- ապշեցուցիչ քնքուշ,- սեղմում էր փորին, հոգատար շոյում նրան եւ օրորոցայիններ էր երգում այն մասին, որ իր որդին մեծացել-որսորդ է դարձել, երեք հարյուր ու հազար եղջերու, երեք հարյուր հազար արջ, երեք հարյուր ու էլի երեք հարյուր կզաքիս կսպանի ու կին կառնի գյուղի առաջին գեղեցկուհուն: Ու նրա ներսում, աննշմար, շատ մեղմ, շարժվում էր երեխան:

Տան ետեւը՝ բնատեղից այն կողմ, այդ ժամանակ մառախլապատ սառնամանիք էր լինում, մահվան մասին խոսող գիշեր ու լռություն, ու միայն երբեմն սկսում էին ոռնալ գայլերը, մոտենում էին բնատեղին, նստում ետեւի թաթերին եւ երկար ու ծանծրալի ոռնում դեպի երկինք:

X

Գարնանը Մարինան ծննդաբերեց:

Գարնանն արթնացան ու հունից դուրս եկան գետերը, փշաքաղվեցին կապարե ալիքներով, ափերը ճերմակ երամներով ծեփեցին կարապները, բադերը, սուզահավերը: Տայգան սկսեց ապրել: Գազանային ծնունդն էր

արարվում այնտեղ, անտառը գվվում էր արջերի, որմզդեղների, գայլերի, կզաքիսների, բվեճների լարված ձայներից: Բացվեցին ու հուռթի բարձրացան մուգ կանաչ խոտերը: Գիշերները կծկվեցին ու ցերեկները տեւում էին: Մանուշակագույն ու լայնարձակ էին արշալույսները: Աղջամուղջները բաց կանաչ ու երերուն էին, եւ աղջամուղջների մեջ դարափին աղջիկները երգում էին Լադայի մասին: Լուսաբացին մեծ արեւը բարձրանում էր խոնավ-կապույտ երկինք, որ գարնանային երկար ժամերին կտրի իր երկնային ճամփան: Եկավ գարնան տոնը, երբ, ըստ լեգենդի, արեւը ժպտում է, ու մարդիկ կարմիր հավկիթներ են փոխանակում՝ արեւի խորհրդանշանը:

Մարինան այդ օրը ծնունդաբերեց:

Երկունքը սկսվեց ցերեկը: Գարնանային, մեծ ու ցնծուն արեւը պատուհանից մտել եւ առատ խրձերով փռվել էր մորթիներով պատած պատերին ու հատակին:

Մարինան հիշում էր միայն, որ գազանային ցավ էր, ջղածգվող ու պատռտվող մարմին: Պառկել էր արջի մորթով պատած իր անկողնուն, ու լուսամուտից նայում էր արեւը. դա հիշում էր, հիշում էր, որ նրա ճառագայթները պատին ու հատակին ընկել էին այնպես, որ կեսօր էին ցույց տալիս, հետո ձախ քաշվեցին, կես ժամի չափ, ժամի: Իսկ հետո ամեն ինչ զուտ ցավ էր, փորի ջղածիգ ցնցումներ:

Երբ Մարինան ուշքի եկավ, արդեն մթնշաղ էր՝ կանաչ ու խաղաղ: Ոտքերի տակ, ամբողջովին արյան մեջ կորած, պառկել էր կարմիր երեխան ու լաց էր լինում: Կողքին կանգնած էր արջը անսովոր, ըմբռնումով ու խիստ նայում էր իր բարեհոգի-մռայլ աչքերով:

Այդ ժամանակ եկավ Դեմիդը. կտրեց պորտալարը, լվաց երեխային ու, ինչպես հարկն է, դրեց Մարինայի կողքին: Մորը տվեց մոր երեխային. զարմանալի էին մոր աչքերը: Մարինայի գրկում փոքրիկ, կարմիր մարդուկ էր, որ անտեղի լաց էր լինում: Ցավն արդեն չկար:

XI

Այդ գիշեր արջը հեռացավ Դեմիդից, գնաց տայգա, որ զույգ գտնի իրեն:

Արջը գնաց ուշ գիշերին. դուռը ջարդեց ու գնաց: Գիշեր էր: Հորիզոնին փռվել էր լուսաբացի աննկատելի շերտը: Աղջիկները հեռվում երգում էին Լադայի մասին: Գորշ գրանիտի ու սպիտակ թերթաքարի դարափին խիտ խմբով նստել էին աղջիկները, երգում էին, ու նրանց կողքին մթին, գռուզ ուրվապատկերներով կանգնել էին ծմեռոցից վերադարձած տղաները:

Եվգենի ԶԱՄՅԱՏԻՆ

ՍԱՄԱՅԸ

Երեկոյան ու գիշերները Պետերբուրգում այլեւս տներ չկան. կան վեցհարկանի քարե նավեր: Միայնակ վեցհարկանի աշխարհ որպես սուրում է նավը քարե ալիքների վրայով՝ մյուս վեցհարկանի միայնակ աշխարհների հետ. անհամար նավախցերի լույսերն է շողացնում նավը փողոցների ապստամբած օվկիանոսում: Եվ, իհարկե, նավախցերում բնակիչներ չեն. ուղեւորներ են այնտեղ: Բոլորը ծանոթ-անծանոթ են իրար, բոլորը՝ գիշերային օվկիանոսի պաշարած վեցհարկանի հանրապետության քաղաքացիներ:

Ն 40 քարե նավի ուղեւորները երեկոները սուրում էին պետերբուրգյան օվկիանոսի այն մասով, որը քարտեզի վրա նշված է Լախտինի փողոց անունով: Օսիպը, նախկին շվեյցար, իսկ այժմ՝ քաղաքացի Մալաֆեեւ, կանգնած էր առջեւի նավասանդուղքի մոտ եւ ակնոցի ապակիների միջով առաջ էր նայում՝ դեպի խավարը. ալիքները երբեմնակի մերթ մի ուղեւորի, մերթ մյուսին էին մոտ քշում: Թաց, ծնակոլոլ մարդկանց խավարից դուրս էր քաշում քաղաքացի Մալաֆեեւը եւ ակնոցը քթին շարժելով՝ յուրաքանչյուրի համար հարգանաց առանձնակի աստիճան կարգավորում. ավազանը, որտեղից հորդում էր մեծարանքը, բարդ մեխանիզմով կապված էր ակնոցի հետ:

Ահա ակնոցը քթի ծայրին է, ծեր մանկավարժի հանգույն. սա՝ Պյոտր Պետրովիչ Սամային:

- Ձեզ, Պյո՛տր Պետրովիչ, ձեր տիկինն է ճաշի սպասում: Եկել էր այստեղ, շատ սրտնեղած էր: Ո՞նց եք էդքան ուշացել:

Հետո ակնոցը կիպ, պաշտպանողական նստում է թամբին. այն մեծաքիթն է՝ քսանհինգերորդից, ավտոմոբիլով: Մեծքթանու հետ շատ դժվար է. «պարոն» ասել չի կարելի, «ընկեր»՝ կարծես անհարմար է: Ոնց ասես, որ...

- Հա՛, պարոն-ընկեր Սի՛լնիկ: Եղանակը ոնց որ, պարոն-ընկեր Սի՛լնիկ... դժվար է...

Ու վերջապես՝ ակնոցը վեր, ճակատին. նավ է բարձրանում Ելիսեյ Ելիսեյիչը:

- Դե, փառք Աստծու: Բարեհաջո՞ղ է: Սուշտակը չե՞ք վախենում հանեն: Թույլ տվեք՝ թափ տամ...

Ելիսեյ Ելիսեյիչը նավապետն է. տնային կառավարիչը: Ու Ելիսեյ Ելիսեյիչը մեկն է այն խոժոռ Ատլասներից, որ կորացած, տառապագին կնճռոտվելով, յոթանասուն տարի Միլիոննայա փողոցով տանում են Էրմիտաժի քիվը:

Այսօր քիվն ակնհայտորեն սովորականից ծանր է: Ելիսեյ Ելիսեյիչի շունչը կտրվում էր.

- Բոլոր բնակարանները... Արագ... Ժողովի... Ակումբում...

- Աստվա՛ծ իմ: Ելիսե՛յ Ելիսեյիչ, էլի բա՞ն է պատահել... դժվար է:

Բայց պատասխանի հարկ չկա. բավական է միայն նայել տառապագին կնճռոտված ճակատին, ծանրության տակ կքած ուսերին: Ու քաղաքացի Մալաֆեեւը, վարպետորեն կառավարելով ակնոցը, վազեց բնակարաններով: Ահազանգի պես դռան թակոցն ասես հրեշտակապետի փողհարություն լիներ. գրկախառնությունները պաղում էին, թնդանոթածգության ծխաքուլաների պես անշարժանում էին վեճերը, բերանի ճանապարհին կարկամում էր ապուրով գդալը:

Ապուրը Պյոտր Պետրովիչ Սամայն էր ուտում: Ավելի ճիշտ, կինն էր խստավար կերակրում նրան: Վեհապանծ, ողորմած, բազմակուրծք, բուդդայակերպ՝ նա երկրային մարդուկին կերակրում էր իր արարած ապուրով.

- Դե՛, արագ, Պե՛տենկա, ապուրը կսառչի: Քանի անգամ ասեմ՝ չեմ սիրում, որ ճաշելիս գիրք են կարդում...

- Լա՛վ, Այո՛նկա, հիմա, հիմա... Ախր վեցերորդ հրատարակությունն է: Հասկանո՞ւմ ես.Բոգդանովիչի «Հոգյակը», վեցերորդ հրատարակություն: Տասներկու թվին, ֆրանսիացիների օրոք, ամբողջովին վառվել էր, ու բոլորը մտածում էին՝ միայն երեք օրինակ է պահպանվել... Բայց ահա չորրորդը, հասկանո՞ւմ ես: Երեկ Մերձքաղաքայինում գտա...

1917 թվի Սամայը գրքեր էր նվաճում: Տասնամյա մազախռիվ տղա էր եւ Աստծո կանոն էր ուսանում, ուրախանում գրչակոթերով, ու նրան կերակրում էր մայրը. քառասնամյա ճաղատ տղան ծառայում էր ապահովագրական ընկերությունում, ուրախանում էր գրքերով, ու նրան կերակրում էր կինը:

Մի գդալ ապուր՝ զոհաբերություն Բուդդային, եւ երկրային մարդուկն արագ մոռանում էր նախախնամությունն ու նշանի մատանին ու քնքուշ տնտղում, շոյում յուրաքանչյուր տառը: «Ճշգրիտ առաջին հրատարակությունից... Գրաքննության կոմիտեի հավանությամբ...»: Որքա՞ն ընկալելի,

որքա՜ն սրտառուչ է հաստլիկ տոտիկներով այս «տ»-ն...

- Լա՛վ, էլի՛, Պե՛տենկա, սա ի՞նչ բան է: Կանչում եմ, կանչում, գրքիցդ չես պոկվում... Խլացե՞լ ես, ինչ է, դուռն են թակում:

Պյոտր Պետրովիչը՝ թափով վազում է նախասենյակ: Դռան մեջ՝ ակնոցը քթի ծայրին.

- Ելիսեյ Ելիսեյիչն են կարգադրել՝ ժողովի՞: Արա՛գ:

- Խնդրե՛մ, հերիք է գիրքը ձեռքդ առնես... Էլի՞ ինչ է պատահել,- եւ արցունքներ կան ճաղատ տղայի ձայնի մեջ:

- Չեմ կարող իմանալ: Բայց՝ արագ...

Նավախցի դուռը շխկաց, ակնոցն առաջ անցավ...

Նավի վրա ինչ-որ բան այն չէր. գուցե ընթացքից են շեղվել, գուցե անտեսանելի անցք կա նավամբարում, ու փողոցների զարհուրելի օվկիանոսն արդեն սպառնում է ներս խուժել: Ինչ-որ տեղ վերեւում, եւ՛ աջից, եւ՛ ձախից, տագնապալի է, մանրահատիկ դռներն են թմբկահարում, կիսախավար հարթակներին՝ խուլ, կիսաձայն խոսակցություններ, եւ աստիճաններով արագ վազող ներբանների թփթփոց՝ ներքեւ, ընդհանուր նավասենյակ, տնային ակումբ:

Սվաղած երկինքն այնտեղ ամբողջովին ծածկված է ծխախոտի ծխի ամպրոպաբեր ամպերով: Ցեռուցված խեղդուկ լռություն, հազիվհազ՝ ինչ-որ մեկի շշուկը: Ելիսեյ Ելիսեյիչը զնգացրեց զանգակը, կռացավ, կնճռոտվեց,- լռության մեջ լսվեց՝ ինչպես ճռթճռթացին ուսերը,- բարձրացրեց անտեսանելի Էրմիտաժի քիվը ու փուլ ածեց գլուխների վրա, ներքեւ.

- Պարոնա՛յք: Հավաստի տեղեկություններով՝ այս գիշեր խուզարկություններ են լինելու:

Գվվոց, աթոռների դղրդոց. ինչ-որ գնդակահարված գլուխներ, մատանիներով մատներ, գորտնուկներ, ժապավենակապեր, այտամորուսներ: Ու դեպի կորացած Ատլասը՝ ծխախոտիծխի ամպերի հեղեղը:

- Ո՛չ, սպասե՛ք: Մենք պարտավոր ենք...

- Ինչպե՛ս: Իսկ թղթի փողե՞րը:

- Ելիսե՛յ Ելիսեյիչ, առաջարկում եմ, որ դարպասը...

- Գրքերի մեջ, ամենաճիշտը՝ գրքերի մեջ...

Ելիսեյ Ելիսեյիչը, կորացած, քարեղեն դիմակայեց հեղեղին: Եվ՝ Օսիպին, առանց գլուխը շրջելու (գուցե եւ շրջել չէր կարող).

- Օսի՛պ, բակում ո՞վ է գիշերային հերթափոխի:

Օսիպի մատը դանդաղ, լռության մեջ, ճանապարհ էր հարթում պատին կախած կարգացուցակի վրայով. մատը ոչ թե տառերն էր շարժում, այլ

Սամայի ծանր գրապահարանները:

- Ս-ն է, քաղաքացի Սամայը, քաղաքացի Սալաֆեեւը:

- Լա՛վ: Վերցրեք ռեւոլվերները, ու եթե առանց թույլտվության գան...

N 40 քարե նավը մրրիկի միջով սլանում էր Լախտինի փողոցով: Ճոճք էր, քամին սուլոցով խփում էր նավախցերի շողացող պատուհաններին, եւ ինչ-որ տեղ անտեսանելի անցք կա, եւ անհայտ է՝ նավը գիշերվա միջով կհասնի՞ առավոտի նավահանգիստ, թե ջրի տակ կանցնի: Արագ դատարկվող ընդհանուր նավասենյակում ուղեւորները կառչում էին քարեղեն-անշարժ նավապետից.

- Ելիսե՛յ Ելիսեյիչ, իսկ եթե գրպանները դնենք: Հո չե՞ն...

- Ելիսե՛յ Ելիսեյիչ, իսկ եթե զուգարանում կախեմ, թղթի տեղ, հը՞:

Ուղեւորները նավախցից նավախուց էին ծլկում եւ իրենց արտասովոր էին պահում նավախցերում. հատակին պառկած՝ ձեռքով տնտղում էին պահարանի տակ, սրբապիղծ նայում Լեւ Տոլստոյի գիպսե գլխի մեջ, շրջանակից հանում հիսուն տարի պատին անվրդով ժպտացող տատիկին:

Երկրային մարդուկ Սամայը դեմառդեմ կանգնել Բուդդային եւ աչքերն էր թաքցնում ամենատես, դողերոցք բերող հայացքից: Ձեռքերը կատարելապես օտար էին, անպիտան՝ պինգվինի կճատ թեւիկներ: Ձեռքերը նրան խանգարում էին արդեն քառասուն տարի, ու եթե հիմա էլ չխանգարեին, գուցե հեշտ լիներ ասել այն, ինչ պետք էր ասել. եւ այնպես սարսափելի էր, այնքան աներեւակայելի...

- Չեմ հասկանում. դո՞ւ ինչից ես վախենում: Նույնիսկ քիթդ է սպիտակել: Մե՞զ ինչ: Մե՞նք ինչ հազարներ ունենք:

Աստված գիտի, եթե Սամայն էլ ինչ-որ 1300 թվի այսպիսի օտար ձեռքեր ունենար, եւ այսպիսի գաղտնիք, եւ այսպիսի կին, գուցե այնպես վարվեր, ինչպես 1917 թվի Սամայը. ահեղ լռության մի անկյունում խզխզացրեց մուկը, 1917 թվի Սամայը ոտով-գլխով նետվեց այնտեղ ու, մկան ծակը մտած, դողաց.

- Ես... այսինքն մենք... Չոր... չորս հազար երկու հարյուր...

- Ի՞նչ: Դո՞ւ: Որտեղի՞ց:

- Ես... ես քիչ-քիչ ամեն օր... Վախենում էի քեզնից ամեն անգամ...

- Ի՞նչ: Ուրեմն, գողացե՞լ ես: Ուրեմն, խաբե՞լ ես ինձ: Իսկ ես, դժբախտս, մտածում էի. իմ Պետենկան որ հաստատ... Դժբա՛խտս:

- Բայց ես՝ գրքերի համար...

- Գիտե՛մ էդ ինչ փեշավոր գրքեր են: Լռի՛ր:

Տասը տարեկան Սամային մայրը միայն մի անգամ էր ծեծել, երբ

պտտեց հենց նոր առած ինքնաեռի ծորակը. ջուրը լրիվ թափվեց, ծորակը պոկվեց ու տխուր կախեց քիթը: Ու հիմա, կյանքում երկրորդ անգամ, Սամայը զգաց, որ գլուխը սեղմված է մոր թեւատակին, շալվարն իջեցրած, ու...

Ու հանկարծ տղեկային խորամանկ հոտառությամբ զգաց, թե ինչպես կարելի է մոռանալ տխուր կախված ծորակը՝ չորս հազար երկու հարյուր: Խղճալի ձայնով.

- Բակում պիտի հերթապահեմ մինչեւ առավոտվա չորսը: Ռեվոլվերով: Ելիսեյ Ելիսեյիչն ասաց, եթե առանց թույլտվության գան...

Ճանթարձակ Բուդդայի փոխարեն ակնթարթորեն՝ բազմակուրծք, սրտացավ մայր:

- Տե՛ր Աստված: Ի՞նչ է, դրանք բոլորը խելքները թռցրե՞լ են: Էդ լրիվ Ելիսեյ Ելիսեյիչն է անում: Տես, հա՛, հանկարծ մտքովդ չանցնի...

- Չէ՛, զուտ գրպանս կդնեմ: Մի՞թե կարող եմ: Ես ճանճ էլ...

Եվ իսկապես. եթե Սամայի բաժակի մեջ ճանճ էր ընկնում, զգույշ բռնում էր, փչում վրան ու բաց թողնում. թռի՛: Չէ՛, դա սարսափելի չի: Այ չորս հազար երկու հարյո՛ւրը...

Ու կրկինԲուդդան.

- Էս ի՞նչ պատիժ ես իմ գլխին: Լա՛վ, հիմա ուր ես պահելու քո էդ գողացած,- չէ՛, լռի՛ր, խնդրում եմ,- այո՛, գողացած...

Գրքերը, կրկնակոշիկները՝ նախասենյակում, զուգարանի թուղթը, ինքնաեռի խողովակը, Սամայի գդակի բամբակյա աստառը, երկնագույն ասպետով գորգը՝ ննջարանի պատին, կիսաբաց ու ձյունից դեռ թաց անձրեւանոցը, սեղանին անփույթ գցած ծրարը՝ սոսնձած նամականիշով ու երեւակայական ընկեր Գոլդեբաեւի հստակ հասցեով... Չէ՛, վտանգավոր է... Ու, վերջապես, կեսգիշերին մոտ որոշվեց ամեն ինչ կառուցել նրբագույն հոգեբանական հաշվարկի վրա. որտեղ ասես կփնտրեն, միայն թե ոչ շեմին, իսկ շեմին մանրահատակի այ այն խորանարդիկը շարժվում է: Գրքահատ փոքրիկ դաշույնով հմտորեն բարձրացնել խորանարդիկը: Գողացած չորս հազարը («Չէ՛, լռի՛ր, խնդրում եմ, լռի՛ր»)՝ բիսկվիթի յուղաթղթի մեջ (շեմատակին կարող է խոնավ լինել), ու չորս հազարը թաղված է խորանարդիկի տակ:

Ն 40 նավը՝ ամբողջովին լարի պես պրկված, ոտքերի ծայրերին, շշուկով: Պատուհանները տենդագին շողում են դեպի փողոցների խավար օվկիանոսը, եւ հինգերորդ, երկրորդ, երրորդ հարկերում հետ են քաշվում վարագույրները, շողացող պատուհանի մեջ՝ մթին ուրվապատկեր: Ակնա-

կույր խավար: Ասենք, երկու հոգի այնտեղ, բակում են, ու երբ սկսվի, լուր կտան...

Ժամը երեքն է: Բակում՝ լռություն: Հանկարծ՝ դարպասի գլխի լապտերների շուրջը սպիտակ ճանճեր, անվերջ, անհամար, ընկնում են, պտտվում պարսով, ընկնում են, վառվում, թափվում են ցած:

Ներքեւում, ակնոցը քթի ծայրին, փիլիսոփայում էր քաղաքացի Սալաֆեեւը.

- Ես խաղաղ մարդ եմ, բնական, իմ համար դժվար է էսպիսի չարության մեջ ապրելը: Ստածեցի, արի տուն գնամ՝ Օստաշկով: Տեղ եմ հասնում, միջազգային վիճակը ուղղակի անտանելի է. մաքուր գայլ են: Իսկ ես էդպես չեմ կարող. ես խաղաղ մարդ եմ...

Խաղաղ մարդու ձեռքին ռեւոլվեր է՝ վեց փամփուշտի մեջ խտացած վեց մահով:

- Իսկ ճապոնականին, Օսի՛պ, մարդ սպանե՞լ եք:

- Դե, պատերազմո՛ւմ: Պատերազմի ժամանակ՝ պարզ բան է:

- Իսկ սվինո՞վ ոնց:

- Ոնց-ոնց... Ձմերուկի նման. սկզբում դժվար է գնում՝ կեղեւ է, հետո՝ ոչինչ, շատ հանգիստ:

Ձմերուկից ցուրտ է անցնում Սամայի մեջքով:

- Իսկ ե... Թեկուզ հիմա ինձ... ոչ մի դեպքում:

- Սպասե՛ք: Որ զոռ անեն, դուք էլ...

Լուռ է: Սպիտակ ճանճեր՝ լապտերի շուրջը: Հանկարծ հեռվից՝ երկար մտրակի պես՝ հրացանի կրակոց, ու նորից լռություն, ու ճանճերը: Փառք Աստծու. ժամը չորսն է, հիմա արդեն չեն գա: Հիմա՝ հերթափոխ, ու՝ նավախուց, քնելու...

Սամայի ննջարանում պատին երկնագույն վանդականախշ ասպետը բարձրացրել է երկնագույն սուրն ու քարացել. ասպետի աչքի առաջ մարդկային զոհաբերություն է կատարվում:

Սպիտակ կտավե ամպերի վրա հանգչում է տիկին Սամայը՝ համընդգրկուն, բազմակուրծք, բուդդայակերպ: Նրա տեսքն ասում էր՝ այսօր ավարտեց աշխարհի արարումն ու խոստովանեց, որ ամեն ինչ շատ բարի է, եւ նույնիսկ այդ փոքրիկ մարդուկը, չնայած չորս հազար երկու հարյուրին: Փոքրիկ մարդուկը դատապարտված կանգնել էր մահճակալի կողքին. սառած, քթիկը կարմիր, ձեռքերը՝ կճատ, օտար, պինգվինի թեւիկներ:

- Դե՛, արի՛, մո՛տ արի:

Երկնագոյն ասպետը փակեց աչքերը. պարզից էլ պարզ է, անտանելի

պարզ՝ այ հիմա մարդուկը կխաչակնքի, առաջ կպարզի ձեռքերը,- եւ ինչպես գլխիվայր՝ ջուրը,- բը՛լթ...

N 40 նավը բարեհաջող անցավ փոթորկի միջով ու հասավ առավոտի նավահանգիստ: Ուղեւորները հապճեպ հանում էին գործնական պորտֆելները, մթերազամբյուղները եւ Օսիպի ակնոցի տակով շտապում ափ. նավը միայն մինչեւ երեկո է նավահանգստում, հետո՝ կրկին օվկիանոս:

Կորված Ելիսեյ Ելիսեյիչը Օսիպի մոտով տարավ անտեսանելի Էրմիտաժի քիվը ու վերից փլեց Օսիպի վրա.

- Այս գիշեր հաստատ խուզարկություն կլինի: Բոլորը տեղյակ լինեն:

Մինչեւ գիշեր դեռ մի ամբողջ օր պիտի ապրեն: Եվ տարօրինակ, անծանոթ քաղաքում՝ *Պետրոգրադում,* մոլորված շրջում են ուղեւորները: Ինչ-որ բանով նման եւ այնքան տարբեր *Պետերբուրգից,* որտեղից լողում են արդեն համարյա մեկ տարի եւ ուր հազիվ թե երբեւէ վերադառնան: Տարօրինակ, գիշերվա ընթացքում կարկամած սառցաքարե ալիքներ՝ լեռներ ու փոսեր: Ինչ-որ անհայտ ցեղի ռազմիկներ՝ տարօրինակ քրջերով, զենքը լարաններով կախած թիկունքին: Օտար սովորույթ՝ հյուր գնալ գիշերակացի. գիշերը փողոցներում՝ վալտերսքոթյան ռոբ-ռոյ: Իսկ այստեղ՝ Մերձքաղաքում՝ ձյան մեջ խարկված արյան կաթիլներ... Չէ՛, Պետերբուրգը չի:

Անծանոթ Մերձքաղաքով մոլորված դեգերում էր Մամայը: Պինգվինի թեւիկները խանգարում էին, գլուխը կախվել էր ինքնաեռի պոկված ծորակի պես, ձախ մաշված կրունկին՝ ձյունե թզանշան, տառապանք է ամեն քայլը:

Ու հանկարծ գլուխը ցնցվեց, բարձրացավ, ոտքերը քսանհինգամյա վարգեցին, այտերին՝ կակաչներ. պատուհանից Մամային ժպտում էր...

- Հեյ, բացբերա՛ն, ճամփա տուր,- դիմացից, ուղիղ վրան էին գալիս, կարմրամռութ, հսկա պարկերով:

Մամայը հետ թռավ՝ աչքը պատուհանից չկտրելով, ու հենց անցան, նորից՝ դեպի պատուհանը. այնտեղից նրան ժպտում էր...

«Հա՛, հանուն սրա եւ՛ կգողանաս, եւ՛ կխաբես, եւ՛ ամեն ինչ»:

Պատուհանից, գայթակղիչ պառկած, հեշտագին ժպտում էր եկատերինյան ժամանակների «Սանկտ Պետերբուրգի դիտարժանությունների նկարագրական պատկերում» գիրքը: Եվ անփույթ շարժումով, կանացի խորամանկությամբ թույլ տվեց ներսը նայել՝ երկու ծիգ կորված, երկնագույն-մարմարյա էջերի տաք բլրամեջը:

Մամայը քսանհինգամյա սիրահար էր: Ամեն օր գնում էր Մերձքաղաք

եւ աչքերով սերենադներ երգում պատուհանի տակ: Գիշերները չէր քնում ու խաբում էր իրեն. իբր չի քնում, որովհետեւ հատակի տակ ինչ-որ տեղ բանում է մուկը: Առավոտները դուրս էր գալիս տնից, եւ ամեն առավոտ շեմատակի խորանարդիկը անուշ ծակում էր մեխի նման. խորանարդիկի տակ Սամայի երջանկությունն էր, այնքան մոտ, այնպես հեռու: Բայց հիմա, երբ չորս հազար երկուհարյուրի գործը բացվել էր, հիմա՞ ինչպես:

Չորրորդ օրը, թպրտացող ճնճղուկ սիրտը բուռն առած, Սամայը մտավ Մերձքաղաքի այդ դռնից ներս: Վաճառասեղանի ետեւը ճերմակամորուս, թավահոն Չեռնոմորն էր, ու գիրքը՝ նրա գերին: Սամայի մեջ արթնացավ ռազմատենչ նախնին. Սամայը համարձակ գնաց Չեռնոմորի վրա:

- Հա՛, պարոն Սամայ, վաղո՛ւց... Ձեզ համար մի բան եմ պահել:

Ճնճղուկն ավելի ամուր սեղմած՝ Սամայը թերթում, սուտ սիրով շոյում էր գրքերը, բայց մեջքով էր ապրում. թիկունքում, ցուցափեղկին ժպտում էր նա: Դեղնած, 1835 թվականի «Աստղադիտակն» ընտրելով՝ երկար սակարկեց Սամայն ու անհույս թափ տվեց ձեռքը: Հետո, աղվեսի պտույտներ տալով դարակների շուրջը, հասավ պատուհանի մոտ եւ իմիջիայլոց ասաց.

- Իսկ սա՞ ինչ արժի:

Ճնճղուկը դուրս պրծավ. բռնի՛, բռնի՛: Չեռնոմորը մատներով քրքրեց մորուքը.

- Ինչ ասեմ, սկզբի համար... ձեզանից՝ հարյուր հիսուն:

- Հը՛մ... Թերեւս... (Ուռա՛: Զանգե՛ր: Թնդանոթնե՛ր): Ինչ կա որ, թերեւս... Վաղը կբերեմ փողն ու կվերցնեմ:

Հիմա՝ ամենասարսափելին. շեմատակի խորանարդիկը: Գիշերը Սամայը տապակվում էր ածուխների վրա. պետք է, չի կարելի, կարելի է, անհրեւակայելի է, կարելի է, չի կարելի, պետք է...

Ամենատես, ողորմած, ահեղ՝ նշանի մատանիով նախախնամությունը թեյ էր խմում:

- Թեյ խմի՛, Պե՛տենկա: Ինչի՞ ես մի տեսակ... Էլի չե՞ս քնել:

- Հա՛: Մը...մկները... չգիտեմ...

- Հանգիստ թող թաշկինակդ, մի ոլորի: Ի՞նչ է կատարվում, իսկապես:

- Չէ՛... Չեմ ոլորում...

Եվ ահա, վերջապես, բաժակը խմված է. բաժակ չէր, անտակ, քառասուն դույլանոց տակառ էր: Բուդդան խոհանոցում զոհաբերություն է ընդունում խոհարարուհուց: Սամայը առանձնասենյակում մենակ է:

Սամայը ծնգաց, ինչպես ժամացույցը տասներկուսը խփելուց առաջ:

Օդ կուլ տվեց, ականջ դրեց, ոտնաձայրերին՝ դեպի գրասեղանը. այնտեղ գրքահատ դաշույնիկն է:

Հետո տենդահար թզուկի պես կծկվեց շեմին, ճաղատին՝ սառցե ցող, դաշույնիկը խրեց խորանարդի տակ, քչփորեց, ու... հուսահատ ոռնոց:

Ոռնոցի վրա Բուդդան դղրդոցով վրա վազեց խոհանոցից ու ոտքերի տակ տեսավ՝ դդմագլուխ ճաղատ, տակը՝ կծկված թզուկ՝ դաշույնը ձեռքին, իսկ ավելի ներքեւ՝ մանրած թղթե փշրունք:

- Չորս հազարը՝ մկները... Ահա՛, ահա՛... Ահա՛ մուկը...

Դաժան, անողոք, ինչպես 1300 եսիմ որ թվի Մամայ, 1917թվի Մամայը ելավ տեղից ու սուրը ձեռքին նետվեց դեպի դռան անկյունը, ուր խրկվել էր խորանարդի տակից դուրս պրծած մուկը: Եվ արնախում Մամայը սրով մեխեց թշնամուն: Ձմերուկ. մի պահ ձիգ է գնում՝ կեղեւը, հետո թեթեւ՝ պտղամիս, ու՝ կա՛նգ առ. մանրահատակի խորանարդիկը, վե՛րջ:

Իսահակ ԲԱԲԵԼ

ՎԱԾՏԱՊԵՏ ՏՐՈՒՆՈՎԸ

Կեսօրին Սոկալ բերեցինք Տրունովի՝ մեր հեծելավաշտի հրամանատարի գնդակներից ծակծկված դին: Սպանվել էր առավոտյան, թշնամական աերոպլանների հետ մարտում: Բոլոր գնդակները Տրունովի դեմքին էին դիպել, այտերը պատված էին վերքերով, լեզուն՝ պոկված: Մեր կարեցածին չափ լվացինք մահացածի դեմքը, որ տեսքն այդքան սարսափելի չլինի, դագաղում, գլխավերեւը դրեցինք կովկասյան թամբն ու Տրունովի համար գերեզման փորեցինք հանդիսավոր տեղում՝ հանրային այգում, քաղաքի կենտրոնում, հենց տաճարի կողքին: Եկավ մեր ողջ հեծելավաշտը, ժամանեցին գնդի շտաբն ու դիվիզիայի զինկոմը: Եվ տաճարի ժամացույցով ժամը երկուսին մեր զառամյալ թնդանոթն առաջին կրակոցն արձակեց: Պատվո տուրք էր զոհված հրամանատարին՝ իր երեք դյույմանոց զարկով, ու մենք դագաղը մոտեցրինք բաց շիրմափոսին: Դագաղը բաց էր, կեսօրի մաքուր արեւն ընկել էր երկարահասակ դիակի վրա՝ լուսավորելով եւ՛ փշրված ատամներով լի բերանը, եւ՛ պսպղալու աստիճան մաքրած սապոգները, որ դրված էին ոտքերի տակ, ինչպես վարժանքների ժամանակ:

- Սարտիկնե՛ր,- հանգուցյալին նայելով՝ ասաց Պուգաչովը՝ գնդի հրամանատարը, ու կանգնեց փոսի եզրին:- Սարտիկնե՛ր,- ասաց նա՝ դողալով ու լարի պես ձգված:- Թաղում ենք Պաշա Տրունովին, համաշխարհային հերոսին, վերջին պատիվն ենք տալիս Պաշային...

Ու երկինք հառելով անքնությունից վառվող աչքերը՝ Պուգաչովը բոցաշունչ ճառ ասաց Առաջին հեծյալ բանակի զոհված մարտիկների, այդ վեհ փաղանգի մասին, որ պատմության կռանով զարկում է գալիք դարերի սալին: Պուգաչովը բարձր էր խոսում, պինդ սեղմել էր իր չեչենական կոր թրի կոթն ու արծաթե խթաններով քրքրված սապոգներով վարում էր հողը: Նվագախումբը ելույթից հետո «Ինտերնացիոնալ» նվագեց, ու կազակները հրաժեշտ տվեցին Պաշկային: Տրունովին: Ողջ հեծելավաշտը թռավ թամբին ու համազարկ տվեց օդում, մեր երեք դյույմանոցը երկրորդ անգամ սվսվաց, ու մենք երեք կազակի ուղարկեցինք ծաղկեպսակների ետեւից: Նրանք սլացան՝ սրարշավ ընթացքից կրակելով, նետվելով թամ-

բից ու ծիախաղ անելով, եւ հայրենական ծաղիկների ամբողջ խրձեր բերեցին: Պուգաչովն այդ ծաղիկները շաղ տվեց գերեզմանի մոտ, ու մենք սկսեցինք հերթով մոտենալ Տրունովին՝ վերջին համբույրի: Ես շրթունքներով դիպա թամբով պսակված պայծառացած ճակատին, ու գնացի քաղաք՝ կապույտ փոշու ու գալիցիական տաղտկության մեջ թաղված գոթական Սոկալ:

Մեծ հրապարակը՝ հինավուրց սինագոգերով, փռվել էր այգուց ձախ: Հրապարակում կռվշտում ու իրար քաշքշում էին Ճղճղված լապսերդակներով[1] հրեաները: Մի քանիսը՝ օրթոդոքսները, փառաբանում էին Բելզայի ռաբբի Ադասիի ուսմունքը. դրա համար օրթոդոքսների վրա էին հարձակվում չափավոր ուսմունքի քասիդները՝ գուսսյտինցի ռաբբի Հուդայի աշակերտները: Հրեաները վիճում էին Կաբալայի շուրջ եւ իրենց վեճերում հիշատակում Եղիայի՝ վիլենյան գաոնի[2], քասիդներին հալածողի անունը...

Մոռանալով պատերազմն ու կրակոցները՝ քասիդներն անվանական անարգում էին Եղիային՝ Վիլնոյի քահանայապետին, եւ ես, Տրունովի համար մորմոքելով, նունպես հրմշտվում էի նրանց արանքում ու թեթեւանալու համար գոռգոռում էի նրանց հետ միասին, մինչեւ որ իմ դիմաց տեսա Դոն Կիխոտի պես մեռյալ ու երկարահասակ մի գալիցիացու:

Գալիցիացին մինչեւ կրունկները հասնող սպիտակ կտավե շապիկով էր: Հագել էր ասես հուղարկավորման թե հաղորդության համար ու պարանով մի քրքրված կով էր քաշում ետեւից: Հսկա իրանին նստած շարժուն, պստիկ, գեղջկական ծղոտե գլխարկով ծածկած օձի գլխիկը ճոճվում էր: Խղճուկ կովը, պարանը վզին, գնում էր գալիցիացու ետեւից հնազանդ, իսկ նա քաշում էր վեհակերպ եւ իր երկար ոսկորների կախաղանների թափահարումով հատում երկնքի շոգ փայլը:

Հանդիսավոր երթով կտրեց հրապարակն ու մտավ սրտխառնոց հարուցող թանր ծխով խեղդված ծուռումուռ նրբանցքը: Խանձված տնակներում, չքավոր խոհանոցներում բնբնում էին հրեուհիները, որոնք նման էին պառավ նեգրուհիների՝ անծայրածիր կրծքերով: Գալիցիացին անցավ նրանց մոտով ու կանգ առավ նրբանցքի վերջում՝ կիսավեր շինության առաջ:

Այնտեղ, սպիտակ, ծռված սյան տակ նստել էր գնչու դարբինն ու ձի էր

1. Լեհական ու գալիցիական հրեաների վերնազգեստ:
2. Սաադի Գաոն (882-982 թթ.)-գաոնների դարաշրջանի խոշորագույն հեղինակություն, ռաբբիական գրականության ու հրեական ռացիոնալիստական փիլիսոփայության հիմնադիր:

պայտում: Գնչուն մուրճով խփում էր սմբակներին եւ յուղոտ մազերը ցնցելով՝ սուլում ու ժպտում էր: Մի քանի կազակ, ձիերի սանձերը բռնած, կանգնել էին շուրջը: Իմ գալիցիացին մոտեցավ դարբնին, լուռումունջ մի դյուժին խորոված կարտոֆիլ տվեց նրան եւ, առանց որեւէ մեկին նայելու, հետ դառավ: Ես այն է գնալու էի հետեւից, բայց ինձ կանգնեցրեց կազակներից մեկը, որ պատրաստ պահել էր չպայտած ձին: Այդ կազակի ազգանունը Սելիվերստով էր: Ժամանակին հեռացել էր Սախնոյից ու 33-րդ հեծգնդում էր ծառայում:

- Լյո՛ւտով,- ասաց նա՝ ձեռքս սեղմելով,- դու բոլորին կատաղացնում ես, Լյո՛ւտով, քո մեջ չարք է նստած, Լյո՛ւտով, էսօր առավոտ ինչի՞ ես այլանդակել Տրունովին:

Եվ ուրիշից լսածով Սելիվերստովը մի կատարյալ անհեթեթություն գոռգոռաց, թե իբր այդ առավոտ ծեծել եմ Տրունովին՝ իմ վաշտապետին: Սելիվերստովը դրա համար ամենավերջին բառերով նախատում էր ինձ կազակների ներկայությամբ, բայց նրա պատմության մեջ ոչ մի ճիշտ բառ չկար: Ճիշտ է, այդ առավոտ ես ու Տրունովը մի թեթեւ կռվել էինք, որովհետեւ Տրունովը միշտ անվերջանալի քաշքշուկ էր սարքում գերիների հետ, կպանք իրար, բայց նա մահացել է, Պաշկան, նա այլեւս դատավորներ չունի այս աշխարհում, ու ես նրա վերջին դատավորն էի: Ահա թե ինչի համար սկսվեց վեճը:

Այդ օրվա գերիներին լուսաբացին էինք վերցրել, կայարանի մոտ: Տասը հոգի էին: Ներքնաշորերով էին, երբ բռնեցինք: Հագուստի կույտը թափված էր լեհերի մոտ. խորամանկություն էին անում, որ համազգեստով չտարբերենք շարքայիններին ու սպաներին: Հանում-գցում էին հագուստը, բայց այս անգամ Տրունովը որոշեց պարզել ճշմարտությունը:

- Սպաները դուրս գան,- հրամայեց նա՝ մոտենալով գերիներին, ու հանեց ռեւոլվերը:

Տրունովն արդեն գլխից վիրավորվել էր այդ առավոտ, գլուխը փաթաթված էր փալասով, արյունը հոսում էր, ինչպես անձրեւաջուրը դեզից:

- Սպանե՛ր, խոստովանե՛ք,- կրկնեց նա ու սկսեց ռեւոլվերի կոթով մշտել լեհերին:

Այդ ժամանակ խմբից դուրս եկավ մի նիհար ու ծեր մարդ՝ թիակները մերկ ու խոշոր, այտամկանները՝ դեղին, բեղերը՝ կախ:

- ...Վե՛րջ էս կռվին,- անհասկանալի ոգեւորությամբ ասաց ծերունին,- բոլոր սպաները փախել, վերջ էս կռվին...

Ու լեհը վաշտապետին պարզեց կապտած ձեռքերը:

- Հինգ մատ,- ասաց նա՝ հեկեկալով ու պտտելով թորշոմած հսկա ձեռքը,- էս հինգ մատով եմ ընտանիքս թաղել...

Ծերունու շունչը կտրվեց, օրորվեց, խանդավառ արցունքներ հորդեցին, եւ նա ծնկի եկավ Տրունովի առաջ, բայց Տրունովը թրով հետ մղեց:

- Սրիկա են ձեր կեղտ սպաները,- ասաց վաշտապետը,- ձեր սպաները շորերը թափել են էստեղ... Ում հագով եղավ, վերջը եկել է, հիմա կփորձեմ...

Եվ վաշտապետը փալասների կույտից եզրաքուղով մի գլխարկ ընտրեց ու քաշեց ծերունու գլխին:

- Իսկն է,- մոտ գալով՝ կամացուկ քրթմնջաց Տրունովը,- ի՛սկը...,- ու թուրը խրեց նրա կոկորդը: Ծերունին ընկավ, տարածեց ոտքերը, կոկորդից հորդեց մարջանե փրփրուն առվակը: Այդ պահին, ականջօղն ու գեղջկական վիզը փայլեցնելով, նրան մոտեցավ Անդրյուշկա Վոսմիլետովը: Անդրյուշկան արձակեց լեհի կոճակները, թեթեւ թափ տվեց նրան ու քաշեց-հանեց մահացածի շալվարը: Գցեց իր թամբին, կույտից երկու համազգեստ էլ վերցրեց, հետո հեռացավ մեզնից ու սկսեց խաղացնել մտրակը: Արեւն այդ պահին դուրս եկավ ամպերի տակից եւ անմիջապես լույսով պսակեց Անդրյուշկայի ծիուն, նրա թեթեւոտն վարգը, խուզած պոչի անհոգ թափահարումը: Անդրյուշկան կածանով գնում էր դեպի անտառ, անտառում մեր գումակն էր կանգնած, գումակի սայլապանները դիվոտել էին, շվացնում ու նշաններ էին անում Վոսմիլետովին, ինչպես համրի հետ կխոսեն:

Կազակն արդեն հասել էր ճամփի կեսին, բայց այստեղ Տրունովը հանկարծ չոքեց ու խռխռաց նրա հետեւից.

- Անդրե՛յ,- գետնին նայելով՝ ասաց վաշտապետը,- Անդրե՛յ,- կրկնեց նա՝ առանց հայացքը գետնից կտրելու,- մեր սովետական հանրապետությունը ողջ է դեռ, շուտ ես բաժան-բաժան անում, թափի էդ փալասները, Անդրե՛յ:

Բայց Վոսմիլետովը նույնիսկ հետ չնայեց: Գնում էր կազակական զարմանալի վարգով, նրա փոքրամարմին ձին, ասես մեզ քշելով, աշխույժ թափ էր տալիս պոչը:

- Դավաճանությո՛ւն,- քրթմնջաց Տրունովն ու զարմացավ:- Դավաճանությո՛ւն,- ասաց նա, արագ բարձրացրեց հրացանը, կրակեց ու շտապելուց վրիպեց: Բայց այս անգամ Անդրեյը կանգ առավ: Մեր կողմը դարձրեց ձին, կնկավարի վեր-վեր թռավ թամբին, դեմքը շառագունեց ու ջղային դառավ, ցնցեց ոտքերը:

- Լսի՛, երկրացի՛,- մոտենալով՝ գոռաց նա եւ անմիջապես էլ խաղաղվեց իր խոր եւ ուժեղ ձայնից,- բա որ թխկացնեմ քեզ, երկրացի՛, ու թռնեմ գրո-

ղի մոր ծոցը... Մի տասը շլյախտ ես բռնել, տես ի՞նչ շուխուր ես անում, մենք հարյուրով ենք վերցնում ու քեզ էլ ձեն չենք տալիս... Թե որ բանվոր ես, քու գործն արա...

Շալվարն ու երկու համազգեստները թամբից գցելով՝ Անդրյուշկան ֆսֆսացրեց ու վաշտապետին թիկունք անելով՝ սկսեց օգնել ինձ կազմելու մնացած գերիների ցուցակը: Կողքիցս չէր հեռանում ու անասելի աղմուկով ֆսսացնում էր: Գերիները ոռնում ու փախչում էին Անդրյուշկայից, նա հետեւներից էր ընկնում, բռնոտում, ինչպես որսորդն է գիրկը քաշում ղամիշները, որ լուսաբացին դեպի գետը ձգվող երամը տեսնի:

Գերիների գլխին իմացած բոլոր անեծքներս թափելով՝ մի կերպ գրանցեցի ութ հոգու, նրանց զորամասերի համարները, զենքի տեսակները եւ անցա իններորդին: Իններորդը պատանի էր, ասես ճանաչված կրկեսի գերմանացի մարմնամարզիկ լիներ, ճերմակ կրծքով ու փոքրիկ այտամորուսներով պատանի, տրիկոյի ֆուֆայկայով ու եգերական ոտաշորով: Նա իմ կողմը դարձրեց բարձր կրծքի պտուկները, հետ գցեց քրտնած սպիտակ մազերն ու ասաց զորամասի համարը: Այդ ժամանակ Անդրյուշկան բռնեց նրա ոտաշորից ու խիստ հարցրեց.

- Փոխանը որտեղի՞ց ես ճարել:

- Մերիկս է գործել,- պատասխանեց գերին ու օրորվեց տեղում:

- Գործարանի մերիկ ունես,- ասաց Անդրյուշկան՝ շարունակելով զննել, ու մատնաթմբիկներով դիպավ լեհի խնամված եղունգներին,- գործարանի մերիկ ունես, օրումս սրանից հագած չկամ...

Նա նորից տնտղեց եգերական ոտաշորը ու բռնեց իններորդի ձեռքը, որ տանի արդեն գրանցած գերիների մոտ: Բայց այդ պահին ես տեսա բլրակի ետեւից դուրս եկող Տրունովին: Արյունը վաշտապետի գլխից հորդում էր, ինչպես անձրեւաջուրը դեզից, կեղտոտ փալասն արձակվել ու կախ էր ընկել, կարաբինը ձեռքին՝ սողեսող մոտենում էր: Ճապոնական կարաբին էր, լաքած եւ ուժեղ հետհարվածով: Քսան քայլից Պաշկան ցրիվ տվեց պատանու գանգն, ու լեհի ուղեղը թափվեց ձեռքերիս: Տրունովը պարկուճները թափեց հրացանից ու մոտեցավ ինձ:

- Մեկին ջնջի,- ցուցակը ցույց տալով՝ ասաց նա:

- Չեմ ջնջի,- պատասխանեցի ես,- երեւում է՝ Տրոցկին քո համար չի հրամաններ գրում, Պա՛վել...

- Մեկին ջնջի,- կրկնեց Տրունովն ու սեւ մատը տնկեց ցուցակին:

- Չե՛մ ջնջի,- ողջ ուժով գոռացի ես:- Տասն էին, դառան ութ, շտաբում չեն նայի, որ դու ես, Պա՛շկա...

- Շտաբում մեր անբախտ կյանքին կնայեն,- պատասխանեց Տրունովն ու սկսեց մոտենալ՝ ամբողջովին բզկտված, խոպոտած ու կռվի պատրաստ, բայց հետո կանգ առավ, բարձրացրեց արյունոտ գլուխն ու դառը հանդիմանությամբ ասաց:- Գոռա՛, գոռա՛,- ասաց նա,- հրեն՝ էլի գոռացող կա...

Ու վաշտապետը չորս կետ ցույց տվեց երկնքում, չորս ռմբակիր, որ դուրս լողացին արեւով ողողված կարապափետուր ամպերի տակից: Մայոր Ֆաունտ-Լե-Ռոյի օդային էսկադրիլիայի մեքենաներն էին, խոշոր զրահապատ մեքենաներ:

- Հեծնե՛լ,- ինքնաթիռները տեսնելով՝ գոչեցին դասակապետերը, ու հեծելավաշտը վարգով տարան դեպի անտառ, բայց Տրունովն իր վաշտի հետ չգնաց: Մնաց կայարանի շենքի մոտ, սեղմվեց պատին ու անշարժացավ: Անդրյուշկա Վոսմիլետովն ու երկու գնդացրորդ՝մորեգույն հեծելաշալվարներով երկու ոտաբոբիկ տղա, անհանգիստ կանգնել էին նրա կողքին:

- Պտուտակներին խփեք, տղե՛րք,- նրանց ասաց Տրունովն, ու արյունը փախավ դեմքից,- ահա, ինձնից զեկուցագիր Պուգաչովին...

Ու հսկա գեղջկական տառերով Տրունովը գրեց ծուռտիկ ճղած թղթի կտորին.

«Սույն ամսաթվին զոհվելուց առաջ,- գրեց նա,- պարտքս եմ համարում երկու համար կցել թշնամու հնարավոր ոչնչացման համար ու միաժամանակ հրամանատարությունը հանձնում եմ Սեմյոնը Գոլովին, դասակապետին...»:

Նա կնիքեց նամակը, նստեց գետնին եւ, ուժ տալով, ոտքերից քաշեց սապոգները:

- Օգտագործի՛,- զեկուցագիրն ու սապոգները գնդացրորդներին տալով՝ ասաց նա,- օգտագործի՛, նոր են...

- Հաջողություն ձեզ, հրամանատա՛ր,- ի պատասխան քրթմնջացին գնդացրորդները, ոտնեոտ արեցին ու չէին շտապում հեռանալ:

- Ձեզ էլ հաջողություն,- ասաց Տրունովը,- մի կերպ, տղե՛րք...,- ու գնաց դեպի կայարանի տնակի մոտ, հողաթմբին դրած գնդացիրը, որի մոտ նրան էր սպասում Անդրյուշկա Վոսմիլետովը՝ հնոտիավաճառը:

- Մի կերպ,- ասաց նրան Տրունովն ու սկսեց նշանառության բերել գնդացիրը:- Ի՞նչ է, իմ հե՞տ ես մնալու, Անդրե՛յ...

- Տե՛ր Հիսուս,- վախեցածպատասխանեց Անդրյուշկան, հեծկլտաց, գունատվեց ու ծիծաղեց,- տե՛ր Հիսուս խաչվառամերը...

Ու սկսեց գնդացիրով նշան բռնել երկրորդ աերոպլանին:

Ինքնթիռներն ավելի ու ավելի կտրուկ իջնում էին կայարանի վրա, վերեւից եռանդուն կտկտոց լսվեց, իջնում էին, շրջաններ գծում, եւ արեւի վարդագույն ճառագայթն ընկնում էր նրանց թեւերի շողքին:

Այդ ժամանակ մենք՝ չորրորդ էսկադրոնը, նստած էինք անտառում: Այնտեղ, անտառում սպասեցինք Պաշկա Տրունովի եւ ամերիկյան ծառայության մայոր Ռեջինալդ Ֆաուլտ-Լե-Ռոյի անհավասար մարտին: Մայորն ու նրա երեք ռմբակիրները հմտություն ցուցաբերեցին այդ մարտում: Իջան երեք հարյուր մետրի ու գնդացիրներից գնդակահարեցին նախ Անդրյուշկային, ապա Տրունովին: Մերոնց դատարկած ժապավենները վնաս չպատճառեցին ամերիկացիներին. աերոպլանները թռան հեռու՝ չնկատելով անտառում թաքնված հեծելավաշտը: Դրա համար էլ, կես ժամ սպասելով, կարողացանք գնալ դիակների ետեւից: Անդրյուշկա Վոսմիլետովի դիակը վերցրին մեր հեծելավաշտում ծառայող նրա երկու ազգականները, իսկ Տրունովին՝ մեր հանգուցյալ հրամանատարին, տեղափոխեցինք գոթական Սոկալ ու թաղեցինք հանդիսավոր տեղում՝ հանրային այգում, ծաղկանոցի մեջ, քաղաքի կենտրոնում:

Արտյոմ ՎԵՍՅՈԼԻ

ՀՐՈ ԳԵՏԵՐ

1

Վանկա-Գրամաֆոնն ու Միշկա-Կոկորդիլոսը ուրի՛շ ընկերներ են. մահակով չես քշի: Արժանահիշատակ տասնյոթ թվից հածանավից դուրս ընկած են: Ամբողջ քաղաքացիական պատերազմի ընթացքում կես աչքով էլ ծով չեն տեսել. չոր ճամփեքով էին լող տալիս, թափառում աշխարհով մեկ, կտրիճություն խաղացնում, մեծ փողերի ետեւից էին ընկնում:

Կրա՛կ տղերք են:

Մայիսյան արեւից շիկացած վագոնը տենդահար դողում էր: Միշկան ու Վանկան, ճիշտ դժոխքի դռան մեղավորների պես, ցնցվում էին վերջին ուղեհատվածում, ագահ ձգվում դիտանցքին:

- Գոնե նայենք:

- Հեռու է, աչքդ չի հասնի:

Ողջ ռազմածովային համազգեստից ընկերների հագին միայն ընդարձակ շալվարներն են մնացել, ծփծփան փողքերով՝ տերտերի թեւքի լայնքին: Բայց՝ ոչինչ: Վանկային ու Միշկային կուզես փարաջա հագցրու, լայնաթափ շարժումներից ու ծանրակշիռ հյութեղ հայհոյանքից ծովայինն անմիջապես է ճանաչվում: Երեւացող տղերք են, հանդուգն, ճարտար, ձեռնահաս ու համերաշխ: Ինչ վերաբերում է էքսերին[1], ուտելիքին կամ ուզածդ սպեկուլյացիայի, Միշկան ու Վանկան միշտ առաջինն են, ձեռներդ էլ հետը, բայց իրանցը կպոկեն: Քեֆները որ տեղը եղավ, ուրիշի ունեցածը հանաքով էլ են տանում: Հեռու դրանցից. փոր-փսորդ կթափեն ու կաշիդ՝ շուկա: Ցվինք-առանք, փողերը՝ ջեբը ու՝ թռա՛նք:

Սարալանջից անդին ծովը լայն թափահարեց շողշողուն արեւային թեւը:

Վանկան մինչեւ պորտը կախվեց դիտանցքից ու ցնծագին խրխնջաց.

-Հո՛-հո՛-հո՛-հո՛-հո՛... Ճան տղա՛ ըլնեմ... Ծո՛վը...

Միշկան ծուռ նայեց ընկերոջը:

---

1. Կողոպուտ՝ քաղաքական նպատակների համար:

- Բայց հո կոկորդ չի՛, ախպե՛ր: Մաքուր գիրմաֆոն, էն խաչը, խրխնջում ես, ոնց որ որոտ փոշտաս, հիմա շուրջը մի հարյուր վերստի վրա գեղացիք խաչ արեցին...

Կրծքի տակ տաք ալիք տվեց ուրախությունը...

Հինգ տարի ծովում չեն լողացել, անտանելի կարոտել էին:

Հողմահալած անհաշիվ ճամփեքով սուրացին խելառ ջահելությունն ու հարբելուց սոթ տվող ուրախությունները...

Վանկան կպել է դիտանցքին,- երկու ձեռքով էլ չես պոկի,- աչքը ծովին է սոսնձվել, մտքի մեջ անցյալն է մխում...

Չարքերի պես մռայլ տոպրակավորները փռվել էին թարեքներին: Երկար ճանապարհին ինչ պատմություն ասես չէին լսել: Նախանձում էին ծովային կյանքին.

- Տենց էլ իմացի... Ով է ապրում, ով քեֆ քաշում:

- Բախտը ոջիլ չի, գոտիկիդ տակ չես պահի...

- Ում՝ բախտ, ում՝ բախտի ծերը...

Վագոնը ճոճվեց ուղեսլաքի վրա:

Ընկերները հապճեպ մեջքներին գցեցին իրենց պարկերը, ուրախացած գվվացին.

- Զգում ե՞ս քանի վերստ կրճեցինք...

- Չորս ակով մեքենան հանաք չի:

Հասա՛ն:

2

Կայարանից անշտապ քայլեցին ծանոթ փողոցներով: Տներն ու հազվագյուտ պահպանված ցանկապատերն էին զննում: Հապաղում էին խժռելու խանութների հայելապատ ցուցափեղկերի առաջ,- փսլինքը գնո՛ւմ է,- կոկորդով մեկ երազկոտ հայհոյում էին.

- Է՛ն չի...

- Ինչ խոսք, կապիտալը կրած է:

- Մեր հին ազատությունը իրանց նոր քաղաքականությունից լավն էր:

- Ազատությո՛ւն էր, զուտ դառը գերություն մնաց:

- Վա՛խ, մերի՛կ, սիրտս ցավում է...

Տխրեցին տասնյոթ-տասնութ թվերի մասին, որ միանգամայն հարմար էին էդտեսակ գործերին՝ մեկ թալանեցիր ու՝ պը՛րծ, առանց գրպանդ նայելու մի ամիս ապրի:

- Դրանց բոլորին հերթով ճզմես...

- Թարգի՛, Վա՜նկա... Ասեցինք-խոսեցինք, պրծանք: Պիտի խփեինք, երբ որ զենքը ձեռներիս էր, իսկ հիմա՝ արմունկներդ կրծի...

- Քիչ խփեցինք դրանց...

- Քի՛չ:

Գնացին նավահանգիստ:

- Հիմա՝ ուշադիր... Նավ բարձրանալուն պես՝ խոհարարի կոկորդը բռնում, կաթսան մեր ձեռն ենք առնում:

- Լա՛վ...

- Էրկու կաթսա հուպ տանք՝ փորներս զարմանա:

- Թե չէ սպասելուց թուք ենք հուպ տալիս:

Գվվոցը բռնել էր ծովախորշը:

Փռշտալով ու ֆսսալով սողում էին քարշանավերը: Դեսուդեն էին լողում ճարպիկ նավակները: Նավամատույցներում ու փոքրիկ կրպակների շուրջը մարդաշատ էր, ասես ծփանք լիներ ծանծաղուտում: Ծովային զորանոցների շենքերը, որ կրիաներ էին հիշեցնում, սարի գլխին տաքանում էին արեւի տակ: Միջօրեի կիզիչ լռությունը գնդակահարում էին նավերի շչակները:

Վանկան խորխեց առջեւից լողացող տիկնոջ ժանեկազարդ հովանոցին, կարճ խրխնջաց հաչոցի պես ու կճպած մռութը դարձրեց ընկերոջ կողմը:

- Փող կա՞ մոտդ:

- Հե՛չ,- ու Միշկան, մախորկայի փշուրը թափելով,շուռ տվեց գրպանները. որտեղի՞ց փող, եթե դեռ երեկ...

- Հա՛:

- Հի՛:

- Այ քեզ բան, էս տեսակ կյա՜նքը, կսատկես ու դագաղի փող էլ չես ունենա:

- Ես ու դու մի ալթին վաստակել ենք հաստատ, բայց...

- Սրա մերը ու սրա մոր մե՛րը...

Ոտները կախ գցեցին կրպակի մոտ: Մեկը կանգնեց, մյուսը՝ ետեւից: Մի գծի տղերք են:

- Գնացի՞նք:

- Գնացի՜նք:

- Մայնա բրա՞շպիլ[2]:

2. Խարսխաբարձ ճախարակը վե՛ր:

- Հա՛:
- Հո՛:
Սկեցին ներս:
Նստել էին մարմարե սեղանիկի մոտ, ագահ խփշտում էին քարացած երշիկը, վրայից՝ սառցասառը գարեջուր ու միտք էին անում:
- Սան էկանք, ման էկանք, ոչ մի բան հետ չգցեցինք: Էլի որեւէ ընկերոջ երեսին պիտի նայենք:
- Կամ էլ սուր դանակ:
- Ախպերությունը լրիվ ցրվել է:
- Վե՛րջն է:
- Էս ծիուկը եղած ծակուծուկը փակեց, ծիերն էլ պահանջկոտ ժողովուրդ չեն, ինչ ատամդ կտրեց, շնորհակալ ենք:
- Վա՛նյա, թշերս պայթում են:
- Հ-հի՛..., - երշիկով լի բերանով խրխնջաց Վանկան ու աչքերը չռեց: Հետո ոստոտ բռունցքը դդրդոցով իջեցրեց սեղանին ու մնչաց.
- Չե՛նք կորչի... Դարդ չանես, ախպե՛րս, չենք կորչի...
- Գլխավորը՝ որ նավ ընկնենք:
- Առաջին հերթին:
- Որ պետք էղավ, գողականներին էլ կգտնենք:
- Տներով անցնե՞նք:
- Ինչի չէ՞ որ: Տներով էլ կարելի է, տեղ-տեղ սեյֆերն էլ թափ կտանք:
- Դատարկ բա՛ն,- ասում է Վանկան,- լուրջ գործ է... ես ու դու գրպանները թափ տալում էլ առաջինն ենք:
- Դժվար գործ չի, բայց՝ եկամուտով:
- Մաքուր է, ճանճերն էլ չեն կծում:
Նավահանգստում՝ ծընգ-ծընգ: Չորս անգամ:
Տղերքը իրար անցան:
Գլխարկները, տոպրակները, կրպակի տերը հաշվիչը՝ շըխկ-թըխկ:
- Հինգ ֆունտ երշիկ...
Միշկան ծիծաղեց, Վանկան ծիծաղեց:
- Մի՛ հաշվի, բիծա՛, մեկ է՝ չենք տալու...
Չկերած պանրի կտորները գրպանները խցկելով,- երշիկից կաշին էլ չի մնացել,- Վանկան հաշտ ավարտեց.
- Մեր հետ տակ չես մնա, հայտարարում եմ պաշտոնապես...
Կրպակատիրոջ ականջները թառամեցին:
- Ընկե՛ր նավաստիներ, ես, ես...

Թռավ, հատակին շխկրտաց հաշվիչը...

Միշկան մոտեցավ տիրոջն ու թավշե կարտուզը քաշեց քթին:

- Բիձա, պարտքով փող չե՞ս տա... Հը՞...

Տիրոջ սեւ բերանը խեղդվում էր հեծկլտոցի, քրթմնջոցի մեջ...

Վանկան ակնթարթորեն հասկացավ գործի շահավետությունը: Բռնեց հատակին երեւացող օղակը, ուժ արեց, բացեց նկուղի ծանր դռնակը:

- Արա՛գ:

- Տո՛ւր:

- Քրի-քրի-քրիստո՛ս...

Ծերունուն՝ քացով փորին՝ նկուղ:

Դռնակը փակվեց:

- Լսում եմ՝ ձա՛խ:

- Սիրո՛ւն է:

Գործնական քրքրեցին դարակները, վաճառասեղանը: Գզրոցից փողի տրցակներ հանեցին: Կրպակում ավելի հմուտ էին գործում, քան տախտակամածին՝ տագնապի ժամանակ:

- Աթանդա՛, Վա՛նչո:

- Խուզարկի՛:

Միշկան նետվեց կանթեղի ձեթ ու դելֆինի ճրագու հոտող սենյակը:

Վանկան դուրս թռավ կրպակից: Դռան մոտ նստեց ուղեսյունիկին ու անտարբեր շուրջը նայելով՝ փստացրեց ծխամորճը:

Մի գնորդ մոտեցավ կրպակին, փոմփոլավոր պառավ:

Վանկան ճամփան կտրեց:

- Առեւտուր չկա, էգուց կգաս:

- Տղա՛, ախր...

- Առեւտուր չկա, հաշվառում է...

- Մի շիշ նավթ...

- Գնա էստեղից,- բարկացավ նավաստին ու սիրուն նախշեց:

Պառավը հավաքեց փեշերն ու, խաչակնքելով, թքելով, հեռացավ:

Միշկան՝ վաճառասեղանի ետեւից, Միշկայի դեմքին մինչեւ ականջները ժպիտ է բացվել արշալույսի պես, մի տուփ կոնֆետ է Միշկայի փեշի տակ:

- Ամոթ չի՞:

- Ո՛չ:

- Գնացի՞նք:

- Գնացինք, հո էստեղ չե՞նք քնելու:

- Գործը կպա՛վ:

Ոչ հեռու, անկյունում, կուզը ցանկապատին հենած՝ հորանջում էր հաստամռութ «շունը». բեղավոր, կարտուզը գլխին ու թնդանոթը՝ մինչեւ ծնկները:

Մոտեցան:

Չարաճճի քաղաքավարությամբ խոսք բացեցին:

- Հայրենակի՛ց, բարի եղիր, ասա՝ ո՞ր թաղում է կենում մեր հածանավը: Շա՛տ է պետք...

- Սան ենք գալիս, սան ենք գալիս, ոտից ընկանք...

«Շունը» աչքերը կկոցեց՝ արեւին նայելով... Հաչոցի ձայնով կրկնակեց հորանջը ու թեւքով փակեց երախը:

- Չգիտեմ, ախպերտի՛նք...

Հոպարին կոնֆետ հյուրասիրեցին, ձեռք տվին կրծքի վահանակին:

- Քյալամ ե՞ս աճացնում:

- Ոնց որ էստեղացի չես:

Այդպիսի ուշադրությունից շոյված՝ միլիցիոները առաջ ընկավ ցանկապատից, փոշտաց, խնչեց վանդակավոր թաշկինակի մեջ ու վերջնականապես արթնացավ... Նույնիսկ սկսեց բեղերը սղալել:

- Հեռվից ենք, յարոսլավցի... Անունս էլ Ֆոմա է... Ֆոմա Դենիսիչ Լուկոյանով... Շա՛տ եմ հարգում նավաստիներին... Իմ քեռի Կիրսանն էլ, կարող է լսած լինեք, Վարյագի վրա էր լողում:

Վանկան բարեկամաբար թփթփացրեց նրա լայն, ձիու մեջքին:

- Ճաշ էփող էլ ունե՞ս:

- Մի քիչ,- մեղավոր քմծիծաղեց Ֆոման, բայց անմիջապես էլ ձգեց յուղոտած պատյանն ու խստաձայն հազաց:

Իսկ նավաստիները՝ չարքի, չարքի պես:

- Ինչի՞ մի քիչ, դմբո՛: Մեկը ճարի, սպիտակ, փափուկ, խորիզով:

- Հարսանիքին կգանք, քեֆ կանենք:

- Բարո՛վ մնաս:

Ափով՝ թափով:

- Ո՛նց ծախեց իրան:

- Հա՛-հա՛:

- Հո՛-հո՛:

Կոնֆետները՝ գրպանը, տուփը՝ ուղեսյունիկին:

3

Առավոտից մոլեգնում էր փոթորիկը: Երեկոյան մարեց:

Ծխապատ հեռվից, կատարների մկանները խաղացնելով, ծույլ գլորվում էին ուշացած ալիքներն ու հոգնած թեւերով խփվում ծովապատնեշին: Քամոտ անեզրություններով դյութված՝ սարի գլխին, կղմինդրի ու այգիների կարկատաններով պատված, Աշխարհ-անցիր շրջմոլիկի նման ննջում էր քաղաքը...

Վանկայի սիրտը խփեց:

Միշկայի սիրտը խփեց:

Սրտերը միանգամից խփեցին:

- Հրե՛ն... Հարազա՛տս...

- Վի՛րա բրաշպիլ:

Գյուտ արածի պես ուրախացել էին իրենց նավի համար:

Կոփածո, կառուցիկ, նավասարքերով պրկված. ո՛ւժ է: Նավ չի, խաղալիք է, կուզես՝ ականջիդ կախիր...

Թփթփացնելով բարձրացան երերուն կամրջակով... Բարձրանում՝ պայմանավորվում էին.

- Խմում ես, բայց քեզ չես կորցնում:

- Չվախե՛ս, ծովը չենք վառի:

- Հարցուփորձ կանեն... ինչը ոնց: Կուսակցական կոմունի՞ստ եք: Խոսքդ մեկ արա, թե՝ էսպես ու էսպես, ճիշտ է, հարմոն չենք ածում, բայց մենք էլ մերն ունենք: Նավթ ու ածուխ ու ոսկու սարեր ենք գրավել, համակրում ենք տնտեսական ռազրուխային եւ այլն, եւ այլն:

- Տակ չենք մնա, դուրս կպրծնենք:

- Ճխկացրու. «Ծառայում ենք համազգեստին»:

- Վերջին շալվարն էլ չեն խնայի...

Կեղտոտ ծովախորշը քարածխի այրուք, ժանգոտ երկաթ ու նավթի սերուցք էր շնչում:

Կապույտ երեկո:

Արյուն էր կաթում գոցվող աչքից: Ծովը մուգ մորեգույն առագաստներ էր ճոճում:

Կամրջակի գլխին՝ մի կանաչ նորելուկ:

Նավաստու գլխարկ, գլխարկի տակ՝ կրճոն, անբեղ խաղալիք, հարիֆ, պզուկ, կանաչ սոխ:

- Ո՞ւր, ընկերնե՛ր:

- Ոնց թե՝ ուր, - թեւերը կողերին կանթեց Միշկան:- Ինչ տվյալ ունես, որ քննում ես մեզ:

- Այսինքն ուզում էի...

- Էդ ի՞նչ ոտի ոսկոր ես:

- .....,- ու Վանկան փորձեց հանաքով տղայից խլել հրացանը:

Տղան ֆշշացրեց, ինչպես սագը շների առաջ, բարձրացրեց հրացանը՝ կրակի պատրաստ, ու՝ մի քիչ վախեցած.

- Ի՞նչ եք ուզում:

Ախպերությունը ոռնաց.

- Ա՛խ դու, ճիճո՛ւ:

- Ցցված ոսկո՛ր:

- Նավաստո՛ւս նայի, ձթած փո՛րը տես... Վաղուց ե՞ս տրեխներդ հանել:

- Ա՛ռ: Ծակի՛: Խփի՛:

Ու գնա՛ց: Ուր որ է կայմերը կջարդվեն, ծխափողերը կպայթեն հայհոյանքից:

Նորելուկը գոռաց.

- Հերթապա՛հ: Ընկեր հերթա...

Մոտ վազեց հերթափոխի պետը:

- Լսո՛ւմ եմ:

Նույնպիսի կանաչ է հերթափոխի պետը. գլխարկի տակ հագիվ է երեւում, շալվարը ձգես՝ վզին կհասնի, վզին էլ՝ սուլիչ, պղնձե շղթայիկ, դաշույնը կրունկներին է խփվում:

- Ո՞վ է շուխուր անում: Ձեր փաստաթղթե՛րը:

- Ինչի՞ էդպես, դրա մերը...

- Սվինը՝ կոկորդը, ի՞նչ տվյալ ունես:

***

Այդ նույն ժամանակ բոցմանի նավախցում ծերուկ Ֆեդոտիչը խաղաղ զրուցում էր մեքենաների ուսումնարանի սաներ Զակրոեւի ու Իգնատեւի հետ: Գործնական հարցով մի րոպեով մտել ու լռվել էին նրա մոտ. սիրում էին ծերուկին, փիսիկից փափուկ սիրտ ուներ:

Աշխույժ աչքերով՝ պատերին, գունավոր նկարներին:

- Ընկե՛ր բոցման, իսկ էս ինչ երգ է:

Ֆեդոտիչը ասեղ էր բանեցնում՝ կարկատում էր սպիտակեղենը. ձեռնոցները քոր են գալիս, մի րոպե անգործ չի կարողանում նստի, բանեցնում էր

բոցմանն ասեղը ու երերում հիշողության ալիքներին:

- Սա, տղանե՛ր, հրեշտակաց քաղաք Կուլկութան է, սքանչելագույն Հնդկաստանում է գտնվում... Վատ քաղաք չի, կասեի՝ հրաշալի, մենակ թե ափսոս գեղավարի են սարքել. մեծ տները քիչ են:

Երկուսը՝ միանգամից.

- Ի՞նչ ենք էստեղ ցցվել: Ծուտ լողայինք հեռավոր...

- Լո՛ւկա Ֆեդոտիչ, մի բան պատմեք ձեր տպավորություններից:

Անցյալով պարուրված՝ սուր է ծերունու աչքը.

- Տպավորություններով զբաղվելու ժամանակ չունեինք... Մեկ-երկու շաբաթ, պատահում էր, թափ էր տալիս, ո՛նց էր թափ տալիս ծովում, գերեզ-մա՛ն... Խփում ու ճոճում է ծովը, ոնց որ քամին թռչունին... Մի խոսքով, ցամաք որ հասար, հոպ արա, ոտե՛ր, թափ արա, ձեռնե՛ր, քե՛ֆ քաշի... Թաթախի՛, թաթախի՛ սիրտդ ուրախության մեջ... Իրարանցո՛ւմ, կնանի՛ք...

Տղաները մտքերի մեջ են, ինչպես տաք փոշու մեջ.

- Հա՛...

- Իսկ էնտեղ բա՞րձր ալիքներ են լինում:

Բոցմանը թողեց գործը, շտկեց ուսերը, կայծքարե աչքը պեծ արեց նավթոտ ու յուղոտ մրով պատած ջահել դեմքերի վրայով:

- Դմբոնե՛ր...

Լռեց, ծամծմեց շրթունքները, խիստ ու հանդիսավոր բարձրացրեց ձեռքը.

- Օվկիանո՛ս...

Կակղեց ձեր բոցմանը.

- Տեղեր կան էնտեղ հարյուր վերստ խորությամբ... Կարող է եւ ավելի, հաստատ չեմ ասի, անձամբ չեմ չափել, իմացող մարդիկ էին ասում... Մի խոսքով, օվկիանո՛ս...

Ջահել լեզուները՝ ծիծաղի ցրոնք, ջահել լեզուները կայտառ են.

- Պահո՛:

- Ըհը՛:

- Երկրնե՛ր, ժողովուրդնե՛ր... Հետաքրքիր է, կոմսոմոլներ ունե՞ն:

- Պարզ բան է,- հուշեց Զակրոեւը:- Քամին մեր կողմից է փչում, ու էնտեղ էլ է ալիք տալիս...

Ծերունին չկամացավ ու իրենն է ասում.

- Էդ չգիտեմ ու սուտ ասել էլ չեմ ուզում... Բայց այ կնանիք ունե՞ն... Ճիշտ է, ուղիղը որ ասեմ, դժվար կնանիք են. մի ուրիշ վերաբերմունք

կտան, էնպես կտան՝ ոտերդ կթուլանան: Մեր անկուլտուրական կողմերում հազար կոշիկ մաշես, էդտեսակ կնիկ չես ճարի... Մի տարի կանցնի, երկուսը կանցնի, ու հինգն էլ կանցնի, մեկ է, լիրբը երեսիդ քաղցր բլիթ է բխկացնում...

Բարի նախանձից քոր բռնեց Զակրոեւին, ասես լվերն էին կծոտում. կաթնակեր, մազը խիտ, կարմրաշեկ փայլով՝ հասուն կորեկի հասկ, քամահար դեմքին՝ թխակապույտ փառ, կապտին տվող աչքերում՝ կապտաթեր օշինդր: Արեւայրուք ու պետական կերակուր էր բուրում Զակրոեւը:

Տաքացավ տղան, նվաց կրծքի տակ.

- Անպետք ծառայություն է մեր ծառայությունը... Շղթայվածի նման նստի էստեղ...

- Տաժանակրությունից վատ...

Ծերունին չռած չանչերում հարթում էր կարկատանները, քաղցից կապտած շրթունքները ծամծմեց.

- Մի՛ կախի գլուխդ, նավաստի՛...

- Բան չենք ասում...

- Ինչ է, չե՞նք հասկանում. քայքայում է: Համառուսական չափերի քայքայում:

- Ափ իջնելը մոռացե՛ք... Աղջկերքի, քավոր-սանիկի, ախպեր, մայրիկի... Մոռացե՛ք... Նավի՛ն կպի, գուրգուրի՛, փայփայի՛... Էդպես, տղե՛րք, կմեծանաք, դուք էլ ամեն ինչ կտեսնեք, ամեն ինչ կտնտղեք... Իսկ հիմա՝ ուշք արա ու համբերի: Ծառայությունը, ջահելնե՛ր, լուրջ արհեստ է: Որտեղ էլ էն չի՝ սո՛ւս... Թե որ զինվորի դառը արցունքն էլ պլթաց՝ բուռդ հավաքի, քսի շալվարիդ, էդքան մի բան: Կարգապահությունից լավ եք, ճիշտ է, բայց էն էլ ասեմ, որ ձեր օգտին է՝ յուղերդ կքամի, ուժ կտա:

Իգնատեւն այնպես ասաց, կարծես մեխ էր խփում.

- Կարգապահությունից չենք նեղվում, պուճուրուց սովոր ենք:

- Ձեր սովետական պետերը հարգում են քաղաքավարի վերաբերմունքը: Ձեր հետ ձեռ են բռնում, հաճելի զրույցներ են վարում, դուք են ասում... Նավաստու հետ ու՝ ձեռով, թանկ բան է... Է՛, կոմունիստ ջահելնե՛ր, թե իմանայիք մենք՝ պառավներս, ինչքա՛ն ինչքան ծեծ ենք կերել...

- Իսկ մենք, Լուկա՛ Ֆեդոտիչ, թույլերից չենք... Մենք էլ ենք տրորվել, տանջվել, մաշվել ենք բոլոր ճակատներում:

- Հա՛, մենք է՛ա, մենք է՛ն, վեր ընկած կովի պոչ եք կոխ տվել. հերոսնե՛ր՝ տեսեք: Ասում են՝ լսեք, ծամած է՝ կուլ տվեք:

- Բերան է՝ խոսում է:

- Հետաքրքիր է լսելը:

- Հա՛, մի բան էլ, աստված հիշողություն տա, վիճակվեց, որ Կուլկութա, էդ հնդկական հողը նավապետ Կրեչետովի հետ լողամ: Էդ ի՞նչ գազան էր, շունը, Աստված հեռու տանի... Էդ ժամանակները դեռ կայմահարթակի վրա էի: Աչքաբաց էի նավաստու գործում, բայց, արի ու տես, մի դեպք եղավ. չհասցրի միանգամից մարս-ֆալը տամ... Կանչեց Կրեչետովն ու մի խփելով, սրիկան, չորս ատամս թափեց... Խիստ նավապետ էր, խաղաղություն հոգուն... Մեկ էլ, հիշում եմ...

Դուռը թակեցին: Հերթափոխի պետը՝ ներս:

- Լուկա՛ Ֆեդոտիչ, տախտակամածին այլանդակություն է կատարվում:

- Զեկուցի՛:

Հերթափոխի պետը զեկուցեց:

- Եթե հարբած են, քշեք, թող կորչեն,- հրամայեց բոցմանը:

- Ոչ մի կերպ չեն գնում, ձեզ են պահանջում:

- Ի՞նձ:

- Ճիշտ այդպես:

- Ո՞վ կլինեն... Գնանք նայենք...

Տախտակամածին ասես ճայակի հարսանիք է:

Միշկան՝ նեղացած:

Վանկան՝ նեղացած:

- Սվինը կոկո՛րդը...

- Ծա՛ն բերած... Տասնչ՛չ՛չ՛որս անգամ վիրավոր եմ:

Եվ այլն, եւ այլն:

Բոցմանը՝ անշտապ, կուրծքն առաջ...

- Ի՞նչ իմաստով եք գոռգոռում:

Վանկան ցնծաց, Միշկան ցնծաց.

- Ֆեդոչ՛չ՛չ՛...

- Հարազա՛տ...

Ու ծերունին ճանաչեց նրանց: Ժպտաց, ինչպես իր որդիներին: Ռուսական սովորույթով համբուրվեցին՝ մեկ, երկու, երեք:

- Վա՛... Վանտյա՛յ... Բուրի՛լին...

- Ո՞ղջ ես, Ֆեդոչ՛չ՛չ՛... Մենք էլ մտածում էինք՝ վաղուց հոգիդ տվել ես...

- Ո՞ր քամին է ձեզ բերել... Սպասում եմ, սպասո՛ւմ, աչքերս ջուր կտրեց:

Կանաչ նորելուկը դժգոհ հետ քաշվեց՝ նավ թողնելով աղմկոտ հյուրերին:

4

Նավախցում՝ ուրախացած Ֆեդոտիչը՝ հյուրերի հետ:

Ոտքերը ջահելացել են, ու լեզուն էլ է ջահելացել, խաղացկուն է լեզուն ծովի քամու պես: Հին նավաստու թեթեւ պարային քայլվածքով բոցմանը վազեվազ է անում խցում ու հոգեպահուստը բերում սեղանին: Չխնայեց նաեւ ճապոնական կոնյակի նվիրական շիշը, որ վաղուց պահված էր երթային կոփածո արկղիկում:

- Հանվե՛ք, թանկագին հյուրե՛ր, հանվե՛ք, համեցե՛ք...

Ընկերները հանեցին քրջերը:

- Ասում ես՝ կաս, էլի՛:

- Ուրախության առթիվ՝ մի դույլ քեզանից:

Ծերունին ուտելիքով ու շշերով բեռնում էր սեղանը:

- Կամաց-կամաց յոլա եմ գնում... Առաջ՝ ցարին, հիմա՝ կոմունային ծառայել վիճակվեց: Ինչ անես... Ապրում ես, գետինը տրորում, ուրեմն ծառայի... Վաղուց չեք երեւում, արծիվներ, վաղո՛ւց...

- Միանգամից չի լինի:

- Ճղեցինք-անցանք:

- Նստեք, ախպերնե՛ր, կում արեք... Նավերը չոր ճամփով չեն լողում...

Վանկային ու Միշկային ոնց որ քամին ճոճի:

- Բա ո՛նց, բա ո՛նց, կթրջենք հանդիպումը:

- Հինգ տարի, կարելի է ասել...

Կայծկլտում էին զեհավոր բաժակները, չորացած լեզուները դուրս էին պրծնում. դե, գնացի՛նք...

- Հո՛ւ-հո՛ւ,- խրխնջաց Վանկան ու պտտեց գլուխը,- միշտ էլ, Լուկա՛ Ֆեդոտիչ, աչքածակ ես եղել խմիչքի հարցում, ու էդպես էլ կաս: Ճշի տակը բան չի մնացել, բայց թափ ես տալիս, քամում ես, մի կաթիլ էլ չի՞ գա...

- Բա կաթիլն ինչի՞ կորչի... Դե, ջահելնե՛ր, վերցրե՛ք... Ողջ լինեք... Աստված երկար կյանք տա ձեզ, կարող է էլի միասին ենք ծառայում...

Չխկացրին բաժակները, կուլ տվին, հո արին:

- Քիչ է... Էստեղ ուրախությունից շերեփով պիտի խմես:

- Սկզբի համար հերիք է: Հիմա սուրճ կեփեմ: Ո՞ր կողմերում եք եղել, արծիվնե՛ր:

- Հարցրու՝ որ կողմերում չենք եղել:

- Քեֆ էինք անում, թալան բաժանում:

Սուրճը՝ գավաթները, ծերունին՝ շշուկով.

- Հոգեգալստին Կոլկա Գալչոնոկն էր հայտնվել, Կրոնշտադտից մի

կերպ էր դուրս պրծել... Հարբած՝ լեզվից թոցրեց, թե դուք Սախնոյի հե՞տ եք:

- Աստված հեռու տանի:

- Ծունը հաչի, քամին փչի:

Վերեւում երկու անգամ ծլնգաց զանգը: Ոչ հեռվում մի նավ զվարթ արձագանքեց՝ դի՛ն-ն-դո՛ն... դի՛ն-ն-դո՛ն... Ու կարկտահատիկ թափվեց ծովախորշում՝ դի՛ն-դո՛ն: Տախտակամածով՝ թը՛փ, թը՛փ, թը՛փ. անձնակազմը հանում են ստուգման, զինվորավարի ասած՝ անվանականչի:

- Բեսսո՞նով:

- Ե՛ս եմ:

- Լիմա՞նով:

- Ե՛ս եմ:

- Կուդրյաշո՞վ:

- Ե՛ս եմ:

- Ցաբլոչկի՞ն:

- Ե՛ս եմ:

- Ե՛ս եմ:

- Ե՛ս եմ:

- Ե՛ս եմ:

Դղրդաց հրամանը.

- Դնե՛լ գլխարկները: Ձեր տեղե՛րը, վազքո՛վ:

Վազքը հորդեց տախտակամածով,

պարուսինե կախովի ճոճքերում

ողջ նավը պառկում է քնելու:

Միշկայի սիրտը խփեց:

Վանկայի սիրտը խփեց,

միասին խփեցին սառած ու մարած սրտերը:

- Նա՛վս...

- Պատմի՛, ծերո՛ւկ, ո՞նց եք ապրում, ի՞նչ եք շնչում:

Կոնյակահար բոցմանը կնճռոտեց ճակատն ու բացեց նորությունների բերանը.

- Ուրախ ենք ապրում, ծանծրանալու ժամանակ չկա: Ցուտ մի ուրախություն ու հաճույք ունենք՝ աշխատանքը, իսկ էնպես... Ձանձրույթ է, կյանք չի... Հին ծովայիններից համարյա չեն մնացել, ոնց որ փոթորիկը քշի... Պոկ չեն գալիս... Ամեն ինչ իրանց բուռն է հավաքում կոմունիստի խուշուրը...

Ղռվռացի՛ն.

- Պատմի, պատմի... Էդ ո՞նց առանց մեզ:

- Մենք մեխի գլուխ ենք:

- Էդ է, գլուխը հիմա հարգանք չունի:

Ախ արին, վախ արին, տխրվեցին.

- Տուգեր, վեցնոցներ, ագռավի կոգիրներ...

- Հի՛ն ծովային... Մենք իններորդ ալիքն ենք:

Յուղոտ, արեւից թխացած թաթի թափահարում:

- Իններո՞րդ... բայց էս տասներորդն է գալիս... Տագնա՛պ: Ամեն ինչ կծածկի, ամեն ինչ, կուսակցական կծան ուժը:

- Ինչ ասես՝ կխոսես...

- Ուժերը՝ մի վագոն, դեռ կռիվ կտանք:

- Պրծավ, արծիվնե՛ր, հին ժամանակի մասին մտածելն էլ մոռացեք: Հիմա որ կողմը շրջվես, կամ բջիջ կընկնես, կամ խմբակ... Ինձ էլ, պառավ հիմարիս, օղակը՝ պռոշիս ու՝ դըմբ-դըմբ ստուդիա: Մի ազատվեցի: Դու, ասում են, ընկե՛ր բոցման, վաճառականի պես բան ես լինելու: Թո՛ւ, օր ծերության էդտեսակ գործերի՞...

- Հա-հա-հա, տեսա՛ր Ֆեդոտիչին:

- Էդտեսակ բանե՛ր...

- Ժամանակին ամեն փսլնքոտի արտահերթ վերակարգ կտայի՝ արտաքնոց լվալու, բայց հիմա՝ կներե՛ս: Ի՞նչ, ո՞նց, ի՞նչ հիմքով... Հերթափոխի պետը կանչում է նորակոչիկին, ու սա՝ «Ինչի՞ ինձ, ոչ թե ուրիշին: Սա էսպես չի, նա էնպես չի...»: Էդտեսակ խոսակցությունների համար գլուխը պոկելն էլ քիչ է:

- Ճար արա, ծերո՛ւկ, մի էրկու շիշ էլ, ծարավից մեռանք... Փող ունենք, փողից չենք նեղվի:

- Հուպ տա՞նք:

- Համի ընկա՞ք... Վայ թե՝ ֆելդշերից:

- Հո՛ւպ տուր:

- Փող կա, ասում եմ, ա՛ռ, վերցրո՛ւ:

Միշկան սեղանին գցեց յուղաբծերով թղթադրամների խուրձը:

Սրտները վառվում էր, ծուխ անում. մի շշով չես մարի ու ծովում չես թաղի... Ինչ արած... Մեծ են ծովային սրտերը, բեռնանավի պես:

Ծերունին վազեց:

- Հա՛:

- Հի՛:

- Էսպես են պոկվում մերոնք:

- Էդ է որ կա:

Ֆեդոտիչը՝ շշերով: Բաժակները ռուսավարի լցրեց, պռնկեպռունկ, թափվում է:

Բոցմանը պատմում էր.

- Սպիտակներից հետո մեզ մի ծակ նավ մնաց ու անտակ նավակ... Մեկ էլ մեր արկղը՝ մինչեւ ականջները ջրի մեջ: Կաթսաները՝ պայթած, երկաթեղենը՝ հանած, մի թիզ ժանգ, մամուռ է աճել: Թըխկ՝ հրաման. «Ընկերնե՛ր, վերականգնե՛լ»: - «Լսում եմ»: Ի՞նչ խոսքուզրույց... Լսում եմ, ու քերի: Գործի անցանք: Շո՛ւտ, շո՛ւտ: Ինչի՞ց սկսենք: Գործիք չկա, նյութ չկա, փող չկա, օրը կես ֆունտ սիմինդրի հաց... նավամբարներում ջուր է, ղեկախցում՝ ջուր, հնոցներում՝ ջուր, կափույրները՝ պոկած, միջնամասերը՝ բաց, հազար տոկոս քայքայում... Ջուրը պիտի քաշվի: Բայց ոնց քաշես, եթե տուրբինները ջրի տակ են: Կտրիճները երկար չեն մտածում, եկեք ձեռով... շոգու տեղը: Քաշեցինք-քաշեցինք, քաշեցինք-քաշեցինք: Կա՛նգ առ, պահակախո՛ւմբ: Խմբովի գալիս ենք կոմիսար պետի մոտ: «Օրապահի՞կ եք ուզում»՝ հարցնում է: «Օրապահիկ...»: «Օրապահիկ չկա, ընկերնե՛ր: Քայքայում է, սով, կարմիր նորոգում, պետք է գիտակից լինել եւ այլն: Այ,- ասում է,- ձեզ մարդա մի պտղունց թութուն, ու էլ ուրիշ ոչինչ անել չեմ կարող: Ծուտով,- ասում է,- կենտրոնից կոմսոմոլներին օգնության կուղարկեն, ավելին օգնել չեմ կարող»: Ծխեցինք էդ մախորկան, ձեներս կտրած գնացինք:

Միշկան ու Վանկան ծանր լսում էին, ծանր բխկում՝ աչքերը գետին գցած:

Ֆեդոտիչը վազում էր անկյունից անկյուն, հանգույց էր անում բառերը.

- Բայց թեկուզ մի գործ նավաստու ձեռից պրծած կա՞: Կյանքո՛ւմ: Տաշեղ-տաշեղ կպցրինք, պտուտակ-պտուտակ ծգեցինք, տեղը բերինք նավը: Գործարանն էլ օգնեց, շա՛տ օգնեց: Կոմսոմոլն էլ՝ իրա հերթին: Երեխեք են, բայց՝ աշխատող, գործ սիրող, անիծվածի պես...

- Դու, ինչ է, ուսաթել ե՞ն ուզում,- հարցրեց Վանկան:

- Ուսաթելն ինձ ի՞նչ, մի ոտս գերեզման է... Ու խոսքն էլ ուսաթելի մասին չի:

Թրջվել, կակղել էին, հայհոյանքն էլ դժվար էր գնում:

- Բադիկնե՛ր:

- Խուշո՞ւր՝ ասում ես:

- Ուղիղը որ ասեմ՝ պիստոն են: Մեծին՝ ոչ մի հարգանք: Իրանց տեր են

զգում, ամբողջ նավի տերը, գուցե եւ՝ ամբողջ Ռուսիայի: Մենք, ասում է, սկզբունքորեն ու կտրական: Սոտ չգաս... Հենց նոր տախտակամածը տեսա, լիքը լցվել են: Գոռգոռում են, ոնց որ հրդեհ լինի: Ամբողջ օրը՝ գործի մեջ ու ոտի վրա, գիշերը պիտի որ հանգստանան, բայց էդ շան որդիքը ժողով ժողովի հետեւից են անում, կատաղե՛լ են:

Ծերունին լռեց, կնճռոտվեց ու ավելացրեց.

- Քաղաքականությո՛ւն է...Ու ինչքան հիմար ժողովուրդ է փչացրել, փորձանք է: Խմեք, տղե՛րք, խմե՛ք...

Ու Միշկան ծերունուն մեխեց ծանր հայացքը.

- Ախ դու, Ֆեդոտիչ, շեկ գլո՛ւխ...

Ու Վանկան ցլի պես նայեց ծերունուն.

- Հին կազմից մարդ մնացե՞լ է:

- Կա՛ն, կա՛ն... Սրիկա Եֆիմկան, ազդանշանորդ Լավրուշկան, շկիպեր Լեքսեյ Ֆոնասիչը, խոհարարն էլի Ալյոշկա Կոստիլյովն է, բայց լսել եմ՝ դուրս են գրում ափ՝ լա՛վ գործերի համար:

- Ի՞նչ են շնչում:

- Եֆիմկան մտել է բջիջ, դրանք էլ եզան պես են, գործեր են անում, գործից չեն փախնում:

Բոցմանը, հին սովորույթով, մի բուռ ճանճ որսաց, քամեց բաժակի մեջ, վրան՝ օղի, ու կուլ տվեց մի շնչում:

- Բախտներս չբերեց՝ սաղ խմբով՝ Ուման, քեֆ կանենք:

- Ջուտ ազատություն ու լայն հորիզոններ:

Ծերունին նվաց.

- Չէ՛, տղե՛րք, ես իմ քեֆն արել եմ: Փախավ իմ ժամանակը, ծիով էլ հետեւից չես հասնի... Բախտս է, որ էստեղ հոգիս տամ...

Միշկան, հարբած զկռտոցից խեղդվելով, հիշողության մեջ բացում էր խնդության հանգույցները.

- Կյանքը թանկից էլ թանկ է... Ձիու պես էինք խմում: Փողը՝ սար կապած: Թռնում ես խուտոր՝ խմիչքի ծո՛վ. կրակոց, գոռոց, բոռոց, արյուն, կռիվ... Խրճիթները վառվում են: Խուտորը վառվում է: Սիրտդ վառվում է: Ուզածդ կնկան հափ արա ու հիացի ամբողջ գիշեր:

- Համ շաքար, համ հա՞ց:

- Բա՛, Աստված հեռու տանի:

- Եկեղեցի ես տեսնում, ու արկով բամփեցիր գլխին:

- Հա՛, եկեղեցիք շշի պես էինք ջարդում:

- Կյանքից առաջ էինք վազում, էնպես էինք վազում՝ կոշիկները ոտնե-

ոիցս թափվում էր:

Վա՛յ, իմ խնծորի՛կ,
Ու տերեւիկով,
Սախնոն է գալիս՝
Իրա տղերքով:

Վանկան պար բռնեց՝ կրունկներով հատակը կտկտացնելով: Թեւերը թափահարեց ծերունին, ֆշշաց.

- Կամա՛ց... Հանկարծ ավագ օգնականը չլսի՛, կուտի բոլորիս:

- Դրած ունենք դրան: Ինտելիգենտ կըլնի՝ գեղական կյանքից:

Ֆեդոտիչը առարկեց.

- Չէ՛: Ճիշտ է, խոսկան չի, բայց ծառայության մեջ խստությունը պաշտում է: Դրանց կարգուկանոնը զիլ է: Կամսալիստները, պարզ է, խուշուր են ու գործից էլ հլա լավ գլուխ չեն հանում, բայց բիձա կա, որ կտան-կանցնեն: Հա՛փ... դրանց դեկրետով ուշունց-մուշունց չկա, բայց իզուր: Առանց ուշունց ի՞նչ նավաստի: Ջուտ ջրիկություն, հորթեր են...

- Էդպես էլ տակ ենք մնալո՞ւ:

- Տակ թողեց մերը ձերին:

Նստել են Միշկան ու Վանկան սեղանին եւ նրանց մեջ ու վրա ամեն ինչ խաղում է, պարում է: Պարում, պսպղում էին աչքերը: Պտտվելով՝ ցնցվում էին գլուխները: Թռչկոտում էին ուսերը: Կատաղի վարգով թռչում էին մատները: Թպրտում էին ուսերը դուրս ընկածի պես: Վազում ու սոթ էին տալիս սմբակները: Ցղածիգ ծիծաղում, ցնծում, կծու զայրանում էին տաք շրթունքները, արագ ցցվում էին ճարպիկ ականջները: Քոս ընկած ճարպկություն, կառչուն կոպտություն, մինչեւ վերջ մաշված կոշիկներ, զզգզված մազեր, շոգ պտտվող լեզու...

Նրանց մեջ ու վրա ամեն ինչ գոռում էր.

Արա՛գ, արա՛գ, արա՛գ:

Ծերունին իրենն էր առաջ տանում.

- Մի գարուն ծով ելանք՝ կաթսաները փորձելու: Գիշերը վրա տվեց, փոթորիկ բարձրացավ: Ի՛նչ ճոճք էր, գզեց մեզ: Ցահելությունն իրա բանին էր: Ձեռները՝ երեխու, բայց զարմանալի՛ք էր: Չանչե՛ր: Մի հրամանով վազում էին, հավասար, ոնց որ մանեկներն ակոսով... Մի երկու տարի էլ, ու նրանցից առաջին կարգի նավաստիներ կստացվեն:

Անհանգիստ իրար անցան ընկերները.

- Ձե՛նդ, ուսաթել ես ուզում:
- Քեզ ինչքան էլ կոտորես, կոմիսար չես դառնա:
Կատաղեց բոցմանը.
- Ձեր սենցն ու նենցը, ի՞նչ եք աքլորանում:
- Ի՞նչ է,ժլատ ե՞ս գտել:
- Հիմա՛ր է գտել:
Վանկան սուրճի մրուրը ցփնեց ծերունու ճաղատին:
Միշկան խրխնջաց՝ սուզվելով քնի մեջ, ինչպես տաք, նեխած լիճը:

5

Բոցմանը մահճակից շուտ բաժանվեց ու գնաց սովորական առավոտյան շրջայցին: Թեթեւաքայլ անցավ նավախցիկը, բնակելի տախտակամածը: Ամեն ինչի տիրոջ սուր աչքով էր նայում: Ստուգեց հերթափոխը, հորանջեց, մանրիկ խաչակնքումով սանձեց փռչոտ բերանն ու գնաց դերձակ Եֆիմկայի մոտ՝ արդուկի ետեւից:

Ֆեդոտիչը լվացվում էր բուրավետ օճառով, խնամքով արդուկում մահուդե շալվարը. պատրաստվում էր գնալ նավապետի, սովետական լեզվով՝ հրամանատարի մոտ:

Վանկան փռվել էր հատակին, բարձրացրեց Վանկան խռպոտած գլուխը:

- Թարգի՛, Ֆեդո՛տիչ, վրեդ ծակ կանես... Քխա՛-քխա՛... Ավելի լավ է խումարաթափի համար մի բան ճարի:

Ու Միշկան էլ ձայն տվեց սեղանի տակից.

- Թթու կաղամբ լիներ կամ թթվի ջուր... Էն Աստված, քյարփինջը կոկորդս չի մտնի...

Ժամը տասներկուսին, վերջին շշից հետո՝ երեքով՝ նավապետի խցիկը. բոցմանը՝ փայտացած ու խիստ, Միշկան ու Վանկան՝ մեղավոր, փչված, ճմռթված, ասես ինչ-որ հրեշ նրանց ծամել-ծամել ու դուրս էր թքել:

Նավապետը՝ վրձինով:

Նավապետի դիմաց ներկոտած կտավի պատառ է. ծով, ժայռեր, ամպեր... Ուսին է խոնարհում գլուխը նավապետը, նայում, թեթեւ վրձնահարված: Մյուս ուսին է հակում գլուխը, աչքը կկոցում, նորից վրձինով... Վիզը՝ ծխնելույզ, ոտները՝ սյուներ, թաթերը՝ խարսխի թեւեր, մատները՝ հանգույցներ, մեջքը՝ քոթուկ. լավ նավապետ է, հին ձուլվածքի:

Սովորականի պես խուլ մռնչաց բոցմանի վրա.

- Հը՛:

Ֆեդոտիչը մի քայլ առաջ եկավ.

- Մենք, Վի՛խտոր Դմիտրեւիչ...

- Սպասի, տեսնում ես՝ զբաղված եմ:

Միշկան ու Վանկան աչքով չափեցին նավապետին ու կես խոսք էլ չասած՝ մտածեցին նույնը՝ ջրատակ անելու համար մեծ քար է պետք... Հիշեցին տասնութ թիվը, երբ Սեւաստոպոլում խեղդում էին սպաներին...

Նավախցի պատերին առաջնորդներ են, նավի մակետ, կիթառ՝ սեւ թավշե ժապավենով: Ծոծրակով պատին է կպել նավամբարի մեխանիկ Չերեմիսովը. բարակ ոտքերը իրար են գալիս, անձամբից հյուրասիրված սիգար է քաշում, ձկան աչքը շլում նկարին:

- Վատ չի, գիտե՞ք... Աստված վկա, վատ չի... Երանգների խաղն ու գույների ներդաշնակությունը, գիտե՞ք, էսպես, հաջող են բռնվել:

Նավապետը շարժվեց խցիկի կենտրոն, հետ գցեց հզոր իրանն ու կկոցեց աչքերը:

- Թանկագինս, իսկ ձեզ չի՞ թվում, որ այս քարերը ճչան են:

- Քարե՞րը... Հա, կարծես, իսկապես մի տեսակ...

- Ձայ չկա,- ասաց Վանկան,- իսկ առանց ճայի ծովը ծով չի... Լիճը, որ լիճ է, օրինակ, էլի բաղեր կան...

Նավապետն ահեղ խոժոռվեց, պայծառացավ, դղրդոցով ծիծաղեց ու շմփացրեց Վանկայի նիհար փորին:

- Ճի՛շտ է: Սիրում եմ առողջ քննադատությունը: Շատ ճիշտ դիտողություն է... Ո՞վ ես:

Ֆեդոտիչը.

- Մենք, Վի՛խտոր Դմիտրիչ...

Ասեցին, խոսեցին, լավով սարքեցին գործերը:

Նավապետի խցիկից դուրս թափվեցին բարձր պաշտոններով.

Վանկան՝ ավագ, Միշկան՝ խոհարար:

Տախտակամածին՝ կոմիսարը:

Ընկերներով՝ ուղիղ վրան.

- Համազգե՛ստ, ընկե՛ր կոմիսար:

- Քրքրված-քամված ենք, ընկե՛ր կոմիսար:

Վանկան տնկեց ճղճղված կոշիկով ոտքը: Միշկան կոմիսարի քթի տակ թափահարեց պատառոտված ֆուֆայկան:

- Խնդրե՛մ, ընկեր կոմիսար...

- Թիկունքայիննե՛րը, դրանց տիրու մե՛րը...

Կոմիսարը՝ կողքանց-կողքանց ու՝ նրանց կողքով:

- Ձեկուցագրով դիմեք անձնական քարտուղարիս, նա ինձ կզեկուցի:
- Ի՞նչ զեկուցագիր, թղթի ծախս է...
- Մաքուր գործ է, ընկե՛ր կոմիսար, համազգեստի ծակը կկործանի, չես կարկատի, կընկնես ծակի մեջ...

Ախպերները փակեցին ճամփան, կոմիսարը՝ ոչ առաջ, ոչ հետ: Կնճռոտեց ճակատը կոմիսարը՝ գրպանում պենսնեն փնտրելով: Նա ոչ աղմուկ էր սիրում, ոչ ծով, նավատորմ էր ուղարկվել կուսբաշխումով: Բարակոտն կոմիսար էր, սագի վզով, բաշն էլ խիտ՝ երկու կռվի կիերիքի:

- Կներեք, ընկերնե՛ր, վկայականներ ունե՞ք:
- Հրես վկայական,- Միշկան քշտեց շալվարի փողքն ու ցույց տվեց սպիացած վերքը,- սպիտակգվարդիական աշխատանք է...

Իսկ Վանկան խորունկ գրպաններից դուրս քաշեց բազմագույն մանդատների, վկայականների, տեղեկանքների խուրձը... Ընկերների հասկացողությամբ՝ քաղաքացիական լեզվով բացատրվելը գերհիմարություն էր, ու փորձելով համապատասխանել կոմիսարի հարգալից տոնին՝ Վանկան սովծառայողի լեզվով խոսեց.

- Խնդրեմ, կարդացեք, ընկե՛ր կոմիսար, փաստացի եղեք... Աստծու սիրուն, էդպիսի սիրալիր շնորհ արեք, ի վերջո... Կներեք, բարի եղեք...

Պոկեցին համազգեստները:

***

Հինգշաբթի առավոտից անցան լայնափողք շալվարներին: Էլ գոլորշի տալ, էլ ծգել ու արդուկել, էլ սոսնձել ու սեղմել. ի՞նչ ասես չարեցին... Բայց կիրակի շալվարները հաստատ պատրաստ էին: Գերազանց էին հագնված ընկերները: Սանրվածքը՝ ա-լյա-շալյա: Բեղիկները գրավիչ ոլորեցին:

Մի-մի հատ գցեցին:

- Արի զվարճանք փնտրենք:
- Արի՛:

Զբոսնում էին գանգրահեր այգում, կպչում աղջիկներին.

- Հե՛յ, Մա՛շկա, կրունկներդ հետեւից են...
- Մորքո՛ւր, բեռնանավից չե՞ս, առ խարիսխս բռնի:

Աղջիկները շփոթվում էին:

- Թու, ործ շնե՛ր:
- Այլանդա՛կ սատանեք:
- Ծուն են, շո՛ւն...

Վանկան, հոլի պես, մի խայտաբղետ կնկա տակ. հետեւից վեր քաշեց փեշը, թքեց:

Կնիկը ճղճղաց.

- Իրավունք ունե՞ս:

Ու էնպես նախշեց, որ Վանկան ճոճվեց տեղում:

Միշկան ու Վանկան նստարանին՝ մեռնում էին ծիծաղից.

- Հա՛-հա՛-հա՛...

- Հա՛-հա՛-հա՛- հա՛-հա՛-հա՛...

Ուրախ է ծառուղում, էլի՝ գանգրահեր:

Քամու տակ ճոճվում էին էլեկտրական լամպերը... Բեմահարթակին երգեր էին երգում... Երաժշտություն...

Աղջիկները՝ վտառներով... Ժանյակներ ու ծիծաղ է փրփրում ծառուղում:

Խցկվում էր երեկոն:

Թրեւ էին գալիս ընկերները դեսուդեն, ծխախոտ վառում, ծանոթ լուսնին նայում...

- Ագա՛շենկա...

- Ճուտի՛կս...

Չի լսում Ագաշենկա-Գոլա-Գոլյաշկան, կողքներով է անցնում...

Նորածեւ լայնեզր գլխարկով, փեշը՝ լայն, լաքած գոտիկով ձգած: Վազում է, կրունկները կտկտացնում, տուտուզը խաղացնում... Ա՛խ, լրբի՛ մեկը...

Հասան Ագաշկայի հետեւից, թեւանցուկ արին, թմփլիկ երեսին նայեցին:

- Գոռոզացել ես, հա՞:

- Թե՞ լիքը փող ես հետ գցել, երես ես շուռ տալիս:

- Էդպիսի բան չկա, զուտ ձեր երեւակայությունն է...

Ծաղիկներ առան նրա համար, կարմիր ու կապույտ, ու ամեն տեսակ: Գինը՝ հարյուր հազար: Վանկան տասը լիմոն շպրտեց ծաղկավաճառի մռութին ու մանր չպահանջեց. օգտվի, շո՛ւն, աղ արած կաղին կրծի:

Ագաշկան շոյում էր ծաղկեփունջը ոնց որ փիսիկին:

- Ինչի՞ համար են էս հիմարությունները, Իվա՛ն Ստեպանիչ: Ավելի լավ կլիներ թխվածք առնեիք:

- Հոտ քաշի, հիմա՛ր, դեմքիդ գույնը կլավանա:

Ու Միշկան էլ վրա եկավ.

- Սիրո ծառի ծաղիկներ են:

Ագաշկան գեղեցկությունից շողում, բայց տխուր էր: Դիմափոշուց սպի-տակ քթիկը՝ ծաղկեփնջի մեջ, ու ուսը թոթվեց.

- Երաժշտությո՞ւնն ինչի կտրվեց:

Ման եկան, ման եկան, ման գալուց ծանծրացան... Ինչպես գայլերը՝ գառանը, Ագաշկային քաշում են թփերի տակ, համոզում են.

- Հերիք կոտրատվես, չես կոտրվի, կավից չեն սարքել...

- Համ էլ սիրում ենք քեզ...

- Ա՛խ, Մ՛իշա, ինչո՞ւ եք անփույթ բառեր ասում:

- Ճի՛շտ, սիրում ենք: Իսկ դու մեզ սիրում ե՞ս:

- Սիրո՛ւմ եմ, սիրո՛ւմ, բայց վախում եմ. երկուսով եք: Քարշ տվին:

- Երկուսը տասը չի... Ագա՛շկա, մի՛ ձգի...

- Սիրո՛ւմ-սիրո՛ւմ եմ, բայց օգուտ չտեսանք քու սիրելուց...

Ու Միշկան հուշեց.

- Սեր չի սա, զուտ շարժառիթ:

***

Ուշ վերադարձան նավ:

Հարբած գիշերը կպչում էր ոտքերից: Լուսինը, ամպերի տոպրակում, ծանրացել էր ուսերին:

Ընկերներն օրորվում էին, դեսուդեն ընկնում, գայթում:

Ոտքերը, ասես դուրս ընկած, թըփ-թըփ, մեկ՝ մայթին, մեկ՝ կողքով: Հա-լածում էին շներին: Դռների զանգերը խփում: Տապալեցին տախտակե ցանկապատը: Փորձեցին տրամվայը գծերից գցել. ուժները չպատեց:

Ներխուժեցին դեղատուն.

- Բարի եղեք, աստծու սիրուն, ոջիլի քսուք:

Դեղատունը չռեց քնատ աչքերը.

- Ձեզ ինչքա՞ն:

- Մի՛շկա, մեզ ինչքա՞ն:

- Էրկու հարյուր հոգու:

Հա՛-հա՛-հա՛- հա՛-հա՛- հա՛-հա՛- հա՛-հա՛- հա՛-հա՛- հա՛-հա՛-...

Ոռնոցով թափվեցին փողոց:

Միշկան Վանկային, Վանկան Միշկային՝ զրույց են հյուսում: Վանկան Միշկային, Միշկան Վանկային՝ բառերի կրծոնքով.

- Կպսակվեմ Ագաշկայի հետ... Մենակ շատ նիհար է լիրբը, զուտ ոսկոր:

- Պսակվի, հո չենք քսում հացին, էնքան որ ոտերը բացի:

- Ինքը առեւտուր կանի, ես փողը կհաշվեմ:

- Տեղն էկավ, կարաս թխկացնես էլ, մեկ-երկու, գլուխը թեւի տակ:
- Հացն՝ ում, նշխարն՝ ում:
- Կորչի ծառայությունը, գլխարկդ՝ ականջիդ, ձեռնափետն՝ ատամներիդ արանքը ու ջա՛-ջա՛-ջիվա՛լա... Աշխարհը քո՞նն է...
- Քե՛ֆ արա, ախպե՛ր...

Փողկապ՝ շնական ուրախություն: Ագաշկա՛ն, ու Ագաշկան արդուզարդի կրպակ ունի նավահանգստում:

6

Երկաթե գույներում, գորշ դղրդոցի մեջ է նավը: Կողերը թանձր շողում են:

Ածուխ են շնչում հնոցների ագահ բերանները:

Ամենուր մանր կարված է գամերով:

Լույսը բացվելուն պես՝ խելահեղ վազք տախտակամածերով, աղմուկ, աղաղակ: Օրնիբուն խուլ գվվում է նավը: Արձակ քամու տակ պողպատե ջլեր են կայմապարանները. հ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւ...

Առագաստակալները լրիվ երկաթ են հագել:

Տուրբինների հապճեպ շատախոսությունը՝ բըլ-բըլ-բըլ, հեղուկ երկաթի ալեկոծություն: Կաղնեփայտի խաշուկով, ծյութով բռնված կայմասարքերը կայտառ հողմի պես՝ դեպի վեր, կողեկող՝ ջրվեժի նման, կայմերի թեւերով՝ շը՛խկ, շը՛խկ, շը՛խկ:

Առավոտի տաք կուրծը:

Խցիկում՝ շոգ խռմփոց: Քնած կաթնոտ բերանը լխկել է՝ ճը՛պ, ճը՛պ... Ծրթունքների անկյունում՝ տաք փսլինք, գունատ այտերով՝ շողինք է ծորում. անուշ ու մեռյալ հարբած է ջահել քունը: Ամեն կրծքի տակ սիրտ է դունդունում աղավնու նման:

Իսկ նավի երկաթե սիրտը խփում է երկաթե զարկով:

Ազդանշանորդը գեղգեղում է.

Զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-ո՛ւո՛ւո՛ւ... Զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-ո՛ւո՛ւո՛ւ...

Վերկաց է:

Խցից խուց էր վազում Ֆեդոտիչը, ետեւից՝ հերթափոխի պետը, ավագները: Վազում էին սուլիչները ծլվլացնելով, գոռոցով, ծովային թունդ աղոթախոսքով, ասես խաչերթ լիներ.

- Վե՛ր կենալ, փաթաթե՛լ ճոճքերը:
- Հե՛յ, կտրիճնե՛ր, ոտքի՛:

- Վե՛ր կաց, փաթաթիր ճոճքերը:

Ջահել համբույրից անուշ է առավոտվա քունը, չես պոկվի: Սահուդե գորշ ծածկոցների տակից հորդում է ջահել մարմինների թունդ հոտը: Դժգոհ աչքերը զայրացած՝ ղեկավարությանը:

- Հիմա՛, հիմա՛...

- Բացե՛լ են բերանները...

- Ծո՛ւտ է, ի՞նչ եք շուխուր անում...

Ու նորից՝ հորանջի, ծածկոցի, խռմփոցի մեջ:

Հենց այն խոսակցություններն են, որ այնքան չի սիրում ծեր բոցմանը:

Երկրորդ շրջանն էր անում Ֆեդոտիչը՝ գոռոցով, հայհոյանքով ու կատաղի աղաղակներով: Կատա՞ղ բան է, քսաներկու տարի բոցմանություն է արել ծերուկը, սովորել է գոռոցին, ինչպես տերտերը օրհներգությանն է սովորում: Ամենավերջին նորելուկից մինչեւ բոցման ողջ ծառայության նրբություններն անձամբ անցել է: Ամեն նավաստու գինը մի նայելով գիտի: Գոռոցը ալիք է տալիս նրանից, բայց ասելու էլ չի ի՛նչ հասարակ ու բարի ծերուկ էր: Երկրորդ շրջանն էր անում, մտրակից ցավոտ խփում հայհոյանքով.

- Վե՛ր կենալ:

Ժամանակ չկա:

Վեր էին թռչում ջահել նավաստիները, քորվում... Կապկպում էին ճոճքերը, գցում կողային խորշերի մեջ:

Կրունկները՝ դղրդոցով:

Լվացարանում՝ ֆը՛շ, խը՛խ:

Պերճախոսները չտեսնված երազներ էին պատմում:

- Եռջուրը պատրա՞ստ է:

- Կա՛:

Կաթսայիկներ, թասեր, գավաթներ, տարեկանի չորահացեր, մի բուռ շաքար՝ ամբողջ արտելին Հենց բերանդ գավաթին՝ անվանականչի՛: Ծամելու ժամանակ չկա, ամեն ինչ թող, նետի պես թռի վեր: Ճիշտ էր Ֆեդոտիչը. շուտ պիտի վեր կենային:

Կրունկները՝ դղրդոցով:

Կես րոպեից թելի պես շարքերը շարվեցին տախտակամածին: Անվանականչը դղրդում էր գիշերվա ընթացքում թանձրացած ջահել ձայներով:

Նավապետը շարքից կանչեց Ֆեդոտիչին ու կնճռոտվեց. հայհոյանք է լսել նավապետը:

- Ձեռնպահ մնա, ծերո՛ւկ, միայն հրաման, խիստ...

- Լսում եմ,- կարճ պատասխանեց բոցմանը կարգապահության կապակցությամբ, բայց սիրտը խառնում էր: Ի նշան անհամաձայնության դեռ երկար թառանչում էր, ծխամորճը փստացնում:

- Հը՞,- վրան սեւեռվեց նավապետը:

Տաք ծխամորճը՝ գրպանը, ձեռքերը՝ ըստ կարգի, բառերն՝ ատամների արանքից.

- Դեկրետը՝ դեկրետ, Վի՛խտոր Դմիտրիչ, բայց մեր վիճակում առանց թունդ խոսքի ոչ մի կերպ չի լինի... Համ էլ խոսքը տողաշար չի, վերք չես անի: Դատարկ բան է, կոկորդի խուտուտ...

Նավապետն առաջ էլ հայհոյանք չէր սիրում:

Մռայլված շրջվեց. հոնքերը ծռմռվել էին, ծռմռվում էին չար քմծիծաղով սեղմված շրթունքները: Կծելու պես էր խոսում նավապետը, ալեկոծություն էր սրտում: Ֆեդոտիչը մանրամասն էր ճանաչում տիրոջը, ամենավերջին աստիճանի... Պատժի էր սպասում...

- Ծառայությունը մոռացել ես, ու դեռ հին բոցման ես կոչվում... Դռնապան պիտի լինեիր, ոչ թե ռազմական նավի բոցման: Անձնակազմը ձեռից գնացել է: Այլանդակությո՛ւն: Քո մարդկանց համար պատասխան կտաս:

- Լսում եմ,- Ֆեդոտիչը մանր ճպճպացնում էր աչքերը:

Իսկ նավապետը՝ Վիկտոր Դմիտրիչը, ծանր հառաչեց, ասես ծովն էր կտրել-անցել ու արագ վրա տվեց:

- Շարք պահել չգիտեն: Ձգե՛լ դրանց: Ձախ նավակողի առաջին շարքը երկու օր ափ չթողնել: Վերեւի տախտակամածին երեկոյան երգում էին «Մարդամոտ չի մեր ծովը». արգելե՛լ: Ղեկակալներ Մարկովն ու Ռեպինը ինքնակամ լքել են նավը: Մի շաբաթ ափ չթողնել ու հնգական վերակարգ: Ինչո՞ւ է աչքաթող արել հերթափոխի պետը: Քնե՛լ ու պատժե՛լ: Մանրամասները զեկուցել կես ժամից, անձամբ... Երեկ, տախտակամածի երեկոյան լվացումից հետո վատ են մաքրել օդափոխիչների կափարիչները, անհրաժեշտ փայլ չկա: Թո՛ւյլ-չե՛նք-տա՛... Մեղավորին պատժիր քո հայեցողությամբ:

- Լսո՛ւմ եմ,- շրջվեց բոցմանը՝ հրամանը հընթացս կատարելու:

Նավապետը հետ կանչեց.

- Սպասի՛ր... Սպասի՛ր:

Ընկնող ալիքի պես ծանր խփեց բոցմանի ուսին, սեւեռուն նայեց կոպիտ, աղած դեմքին:

- Ինչ վերաբերում է հայհոյանքին, անկասկած ճիշտ ես, բոցման: Իմ լեզուն էլ է քոր գալիս, բայց դու ձեռնպահ մնա... Հա՛:

Նավապետը հառաչեց, Ֆեդոտիչը հառաչեց:

- Եղածը էս է, Վի՛խտոր Դմիտրիչ, մե՛ծ փոթորիկ է գալիս, պիտի դիմանանք:

- Հա՛, նոր քամիներ են փչում: Եղածը էս է, ծերո՛ւկ, դիմանալ է պետք:

Մեծ ալիքներով փչում, պոռթկում էին նոր ուրախ քամիները:

***

Նավով մեկ հորդում, դղրդում էր հրամանը.

- Երրորդ ու յոթերորդ համարնե՛ր, շարվել ձախ շքատախտակամածին:

- Ծո՛ւտ արա:

- Երրորդ, յոթերորդ համարնե՛ր, ձախ շքատախտակամածին...

- Ոտերդ թափ տու...

- Երրորդ, յոթերորդ համարնե՛ր...

Վազում էին բոցմաններն ու ավագները, սկսվում էր աշխատակարգումը:

Արեւը ոտքի վրա է, անձնակազմը ոտքի վրա է, անձնակազմը հեծել է նավը:

Իրար առաջկտրուկ. խոզանակներ, ցախավելներ, ավելներ:

Ծփում է ավազը, տաշեղները:

Ուրախ ծովը շուռ է գալիս տախտակամածին, լցվում խցիկը:

Կաթսաների կոկորդները նստվածքի կեղեր են խորխում:

Հնոցներն այրուք են փռշտում, հատիկածխափոշի:

Հեծեծում են տուրբինները:

Պտտվում են ճախարակները՝ խարամի տակառներ շրջելով կողային անցքերում:

Գոռոցը՝ անձրեւ, հայհոյանքը՝ կարկուտ, գործը հեղեղ է:

Արեւը տաք թեւերով խփվում էր թաց տախտակամածին, խուտուտ անում կեղտոտ կրունկները, ծիծաղելով գլուխկոնձի էր տալիս արեւը փայլեցնելուց պսպղացող մետաղածողերի ու բռնատեղերի վրա:

Տղայի ձեռքեր են, բայց՝ ամուր, համայնական աչքերը՝ քամուց ուռած առագաստներ:

Ֆեդոտիչի կոկորդը՝ հո՛-հո՛-հո՛.

- Արա՛գ, արա՛գ, արա՛գ, շո՛ւտ արեք, տղե՛րք... վազքո՛վ... Բրի՛կին, վազքո՛վ:

Զզվելի է տեսնել, թե ամենաթեժ պահին որեւէ անբան ինչպես է դանդաղաքայլ ու անհոգ անցնում, ասես զբոսանքի լինի: Պետք է պոկել էդ

շան որդու գլուխը, ծառայությունը չի սիրում:

- Վա՛զ-քո՛-ո՛վ...

Այդպիսին է Ֆեդոտիչի գործը՝ անձնակազմից ոչ մեկին ոչ մի ոոպե հանգիստ չտալ, բոլորի համար աշխատանք գտնել: Քշում ու քշում է առավոտից գիշեր, որ մարդկային կիսելից իսկական նավաստիներ սարքի, հենց դրա համար էլ ավագ բոցման է:

Ազդանշանորդների ճարպիկ ձեռքերում ծփում էին գույնզգույն դրոշակները: Նավի ընդերքում ջահել ծովայինները, հրահանգիչների հսկողությամբ, շարժիչներ էին քանդում-հավաքում, ծանոթանում մեքենաների մասերին:

Նավապետի կամրջակով վազում էր ավագ օգնականը՝ փոքրամարմին, ծղրտան, կառչուն: Գցիր հազարանոց ամբոխի մեջ, անմիջապես կտեսնես՝ զինվորական է: Կեցվածքը, գլխի պահվածքը, իրանը. արծի՛վ է: Բղավելու սովորույթը մանկուց է մնացել, ասենք՝ դիրքն էլ էր պարտավորեցնում. ի՞նչ, գրողը տանի, օգնական, եթե գոռալ չգիտի:

Ավագ օգնականը բարկացած է. երեկ դրոշի իջեցումը սովորական վեցի փոխարեն տասներեք վայրկյան տեւեց: Խայտառակությո՛ւն, սատանան գիտի՝ ինչ է, անասունն՝ե՛ր: Ավագ օգնականը ճնշված է, ավագ օգնականը մտահոգ է. ճշգրտություն է սիրում եւ իր նավը: Վատ էր քնել, ձեռք չէր տվել նախաճաշին. զգացմունքների խանգարմունք:

Կամրջակից կախվելով՝ գոռում է վերին տախտակամածին. ծղրտոցի մեջ չարություն է վառվում.

- Չթքե՛լ... Նավակողից չկախվե՛լ... Աշխո՛ւյժ շարժվի... Նազա՛րենկո, երկու վերակա՛րգ...

Վերին տախտակամածին, բրեզենտի վրա, որ չկեղտոտեն, փռվել են հերթափոխից ազատ հնոցապանները: Արեւը լիզում է ածխափոշով պատած մարմինները, քամին թոքերն է լցվում: Հնոցապանները մռայլ ուրախությամբ նայում էին կամրջակին ու կիսածայն խոսում.

- Հաչա՛, հաչա՛, վաստակի սովետական հացը:

- Էս ի՞նչ չար է էսօր...

- Ե՞րբ է բարի եղել որ...

- Դիմացեք, տղե՛րք, մահվան դուռը կհասցնի:

- Ազնվական է, հետն էլ՝ յունկեր, անկետան չես տեսե՞լ:

- Հա՛-ա՛...

- Երեւում է...

Մակույկները խարսխակայանում՝ կապույտ ծփանքի մեջ. թիավարու-

թյան վարժանք է: Հրամանին համահունչ համաչափ իջնում են թիերը, թիավարները՝ հետ ընկնում:

- Թիե՛րը:
- Բաժանքներո՛ւմ, չշտապե՛լ:
- Ի-ջեց-նե՛լ: Մե՛կ, երկո՛ւ...
- Մե՛կ, երկո՛ւ...
- Հո՛ւպ տուր...
- Հետ թիավարո՛ւմ...
- Չորացրո՛ւ թիերը...
- Վե՛րջ...
- Երգե՛լ...

Թիավարները սկսում են.

Գետը հոսո՛ւմ է, վա-զո՛ւ-ո՛ւմ,
Ու հեռու հոսանքով գետի
ջահել նավազն է վռա-զ-ո՛ւ-ո՛ւ-ո՛ւմ,
որ հասնի աղջկա հետից...

Դղրդում է կոկորդների հարյուրյակը.

Մի տարի հետո էլ աղջիկն է
Հետ գալիս տխրված սաստի՛ի՛ի՛կ,
Մոր առաջ կանգնում է գլխիկոր,
Գրկին՝ մի պստիկ նավաստի՛ի՛...

Ծովը ճոճվում էր,
երգը ճոճվում էր,
ճոճվում էին շողուն ճիչերը ճայերի:

***

Զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ... Զո՝ւ-զո՛ւ-զո՛ւ-զո՛ւ...
Լողալու ազադանշան:
Հրաման՝ նավի վրա:
Ֆեդոտիչը սիրտ է տալիս ձախ թեւայիններին.
- Չվախենաք, տղե՛րք... Ջրից չեն վախենա, կրակ չի... Ուշադիր եղեք... Գլխով աշխատի, ձեռքերով՝ առաջ:

- Լսո՛ւմ եմ:

Բոցմանը՝ ձեռքը պարզած.

- Զգա՛-ա՛-ա՛-ստ:

Ծարքը քարացավ:

- Մե՛կ:

Ծապիկները՝ տախտակամածին:

- Երկո՛ւ:

Ծալվարները՝ տախտակամածին:

- Երե՛ք:

Ոտնաթաթերը՝ նավակողից դուրս:

Փրփուրի, ցայտքերի մեջ՝ արեւայրուքով թխացած մարմինները: Աչքերի շոգ ցայտքեր: Փրփուր, ցալքուն, ճիչ:

Ֆեդոտիչը նավակողին ձեռքերն էր թափահարում, գոռում էր, ոչ ոք նրան չէր լսում:

- Հո՛-հո՛-հո՛-հո՛-հո՛-հո՛...

***

Ճաշին ապուրի մեջ ծավարի հազվագյուտ փշրունք ու տառեխի կողեր: Երկրորդին՝ մեկական գդալ կորեկածավար: Տարեկանի չորահացերն էին փրկում:

- .....,- հակիրճ արտահայտվեց զորանոցային կյանքից շշմած կոմերիտական Իվանյուկը:

- Գործ են անում՝ ձեն չեն հանում,- արձագանքեց ավելի համարձակ մեկը:

Երբեք չկշտացող Զակրոեւը մռայլ հայհոյում էր:

- Զակրո՛եւ, բայց դու հայհոյանքի դեմ պայքարի հանձնաժողովում ես:

- Թող կորչի, Է՛...

Խոսեցին այսպես ու անցավ:

Հետճաշյա հանգստի ժամին կամ երեկոները լցվում էին կարմիր անկյուն, քրքրում թերթերը, գրադարանավարին ու ողջ աշխարհի բուրժուազիան:

Նավախելի վերին տախտակամածին՝ օղակներ, մարզագնդեր, ռուս-ֆրանսիականը: Գեղեգեղում էին բալալայկաները: Մռնչում էր խմբերգի խմբակը:

Դին-դո՛մ... Դին-դո՛մ...

Նավերի վրա շողշողուն լույսեր էին ծաղկում: Քնել յոթ ժամ ու ոչ մի րո-

պե ավելի: Գիշերը նավախցերում ու տախտակամածին դեսուդեն էին անում քնահար նավաստիները, թմրած քրթմնջում.

- Արտարկիչներ... Փողրակներ... Կափույրներ...Մագնիսական դաշտ... Կոնտրմանեկ... Ընկեր աստիճաններ...

7

Մարդամիջի, գործնական Միշկան ու Վանկան մանր-մունր բան չեն: Մեծ պլանների տղերք են: Ոյազանյան կտրիճներ, հաստա՛տ: Ու խիզախությունը պաշտում են, էդ է՛լ հաստատ:

Նավաստի՛... Հենց բառն ինչ արժի: Քեզ պիտի ցույց տաս: Բայց պատահում էր, որ հենց խիզախության համար դեմ էին տալիս: Փրկում էր նագանն ու հացի բոքոնի պես պարզ խոսքը: Էդ մեր անպետք ժամանակներում է հարգված հորթի հեզությունը: Արշինն է հարգված, ռուբլին ու արշինանոց լեզուն: Երբեք, երբեք չեն հասկանա Միշկան ու Վանկան, էն մերանով չեն մերված:

Ինչե՛ր են եղել... Ա՛խ, բայց ասեցինք-խոսեցինք, հերիք է:

Կար ժամանակ, որ Միշկայի ու Վանկայի մեջ էլ հողմեր էին ոռնում: Քշում էին վազքից փրփրակալած օրերը: Կյանք չէր, հեքիաթ էր:

Անտառներ էին տապալում:

Հրո գետեր անցնում:

Լեռներ էին հարթում:

Ամպեր տրորում:

Կայծակներ կոտրում:

Այ թե ինչն են, վատ չմտածեք:

Հիմա չէ, վաղուց, Միշկայի սրտում, Վանկայի սրտում, բակում շղթայած շան պես, դեսուդեն էր ընկնում մի մե՛ծ, հսկա՛ ժանիքավոր աստված, նավաստո՛ւ աստված: Նրա հետ գործ անելն էլ հաճույք է: Ոչ մի սարսափ սարսափելի չի: Առա՛ջ ու - մխեցինք:

Հայդամակին՝ սվինին քաշենք:

Բուրժույ... Կառնեմ հոգիդ:

Պետլյուրին՝ օղակը վիզը:

Օրենբուրգի վրա հողմի նման:

Դեպի Զակազանյե՝ ամպրոպի պես:

Վոլգայի ափով՝ ոհմակի քայլքով:

Ուրալը՝ ուռայով առնենք:

Մորիկի պես փրթենք մկներին:

Պալատներին՝ փոթորիկ:

Հռնդում, ալիք էին տալիս հրո գետերը... Ուժը փոթորկվում էր... Սխում էին բրդոտ սրտերը... Ալիք-ալիք հողն էր ծաղկում:

Լեզուն բռնում էր:

Ժամանակնե՞ր էին, ու եթե սանձերը լրիվ թողեին... թափանց կծակեին-կանցնեին երկրագունդը: Հրդեհների թաբուններով ծովերը կայրեին, լեռները կհարթեին...

Իսկ այստեղ, մաքուր փորձանք է, կա՛նգ առ, տեղապտույտ արեց մեքենան: Բռնոցի-կանգնոցի, ջեբդ՝ ծակ, բուռդ՝ ծակ:

Հալից ընկել է աստված, տեսքից ընկել է աստված: Ջուտ պաշտոն,- աստված են ասում,- նայելու բան չկա: Ինչ խոսք, տղերքն էլ էին նեղն ընկել: Ծոգից մազերը ճթճթում էին, աչքերը՝ պայթում, վրաները կենդանի տեղ չկար՝ կապտուկներ ու քերծվածքներ:

Սեւացել, ածուխ էին դարձել, քրքվել, քայքայվել...

Բայց դեռ ոտի էին: Ձեռքերը բանում էին, ոտքերը՝ վազում, միածայն էին կոկորդները գոռում.

- Հո՛ւպ տուր: Սրբի էլ, լրբի էլ մե՛րը...

Չդիմացավ աստված ծովային կտրիճությանը, շունչը փչեց. գարշահոտ, ժանտահոտ, ճենճահոտ: Ոչ սանձ, ոչ էլ ձի: Ստրակը՝ ձեռիդ, բայց ում ես քշում:

Ձանձրույթ, մահու ժամ, սրտխառնոց:

Էսօր մի վագոն, էգուց՝ մյուսը: Մի կայարանում մի շաբաթ թրեւ կգան, կանցնեն մյուսը, այնտեղ մի շաբաթ կուկու կկանչեն: Հրացանները ժանգոտել էին, գնդացիրները՝ կանաչ կապել:

Սկսեցին աղջիկ տանել-բերել:

Աղջիկներն էլ՝ մեկը մեկից գերազանց: Ու էնպես չի, որ զոռով, ահ տալով: Չէ՛: Աստված չանի ու մեզանից հեռու: Նավաստին էդպիսի գործի չի գնա: Բայց որ աչքը կպավ, մոտեմոտ կանի, գլխարկը կհանի, կսկսի ամերիկական բառեր շաղ տալ՝ կատարելապես, հավանաբար եւ այլն... Իսկ աղջկան էլ, պարզ է, ինչ է պետք, կկոտրատվի մի քիչ ու.

- Ա՛խ, սիրտս խաշվեց սիրուց...

Հենց էստեղ էլ հափ արա նրան:

Տաքացվող վագոններում թուջե վառարաններ են, թարեքներ, իրապարկեր, քրջերի կապոցներ, սպիտակեղեն՝ ձգած պարաններին: Ցերեկը շուկայի սեղաններին էին երջանկություն գտնում, տապակած երշիկ էին խժռում, կռիվներ սարքում, ջարդում կնանոց ու շշերը: Գիշերը թեթեւ նա-

վակներով զբոսանք էին անում: Կայարաններ ու կիսակայարաններ, պարետներ ու լվեր...

Չգիտես որտեղից՝ քաղաքացիական քարոզիչներ հայտնվեցին ու սկսեցին թեւերը թափ տալ:

- Ընկերնե՛ր, աշխճակա՛տ.. փոխարինի՛ հրացանը բահով ու մուրճով... Վե՛րջ քայքայմանը...

Ախպերները ծանծրույթից մեռան:

- Հա՛:

- Հիի:

- Էդ ինչի՞ որ:

- Ի՞նչ է, ձեր հարիֆն ե՞նք:

- Ծա՛ն վաստակ:

- Կացինը տանք գլխին:

Ձայները՝ խառնիխուռ:

Բոլորի աչքերը մթնած են, իսկը ածխափոսեր:

Ախպերությունը՝ դես ու դեն: Միշկան ու Վանկան՝ թռան...

.....

Ճապուկ են գարնան գետերը, հոսում են, հորդում, փրփրում: Ուժեղ, այրող են գարնան ջրերը, կմռնչան՝ չես հաղթահարի: Ազատ քեֆ արա, պարտիզանական սի՛րտ: Արյան պես հորդիր ծովեծով, հոսիր փոշոտ ճամփեքով: Ծփծփա ասիական սանձարձակ քամու տակ: Լիաբերան խժռի խնդությունը: Լափի թնդացող եռուն արձակությունը: Ազատ օրերի մեղրահատիկները կտցի:

.....

Դաշտերն արձակ են:

Խելառ են խելագար քամիները:

Արյունն անուշ է:

Գինին՝ ծփուն:

Հուր է մոլեգնումը, եռաեփ կրակ:

Ճաղերը՝ բեկուն:

Ջրերը՝ կարկաչ:

Աղջիկներն՝ ալ կարմիր, փափուկ աղունիկներ, հյուսք արա, թե կուզես:

Նստել եմ տակառին,
Ոտերս կախ արել,
Նավաստին հյուր կգա,
Իրար հետ խաղ կանենք...

- Տղե՛րք:
- Սխե՛նք:
- Կտոր-կտոր արա, պատառ-պատառ եղի:
- Ծրջանը բա՛ց:
- Դե հա՛, դե հա՛:
Ծիկանալուց կարմրած վառարանը՝ քացով դռնից դուրս:
- Խմենք ինչ կա-չկա, հարմոնը հար ածենք, բոզերին պար ածենք...
Ոտքերը պարում են, վագոնները պարում են, տափաստանները պարում են...
Խաղաղ կանաչի ճահճուտներում՝ կիսակայարաններ՝ պարտեզներով ընդելուզված: Պատուհաններին՝ ծաղիկներ, թանզիֆե վարագույրներ,- մոծակները չկծեն,- պատուհաններում՝ հոտած, կուշտ մռութներ:
- Է՛ս ինչ բան է:
- Արյան մեջ լող կտան, կթաղենք բոլորին, կքանդենք հիմնիվեր:
- Խփի՛:
Բո՛ւխ, բո՛ւխ... Ծը՛նգ... Ծը՛նգ... Բո՛ւխ, բո՛ւխ:
Ծոգեքարշը.- Դո՛ւ-դո՛ւ՛ւ՛ւ՛ւ- դ-ո՛ւ:
Գնացինք՝ փոշի անելով:
Բրաունինգը՝ մեքենավարի փորին.
- Քշի՛, ոչ մի տեղ չկանգնես:
- Ո՞ւր:
- Ուր աչքդ կտրի... Քշի՛, քշի՛, մենակ փակուղի չմտնես:
- Լսո՛ւմ եմ:
- Լրի՛վ ընթացք:
- Կաթսաները կպայթեն:
- Հուպ տու ինչքան հերիք կանի:
- Առանցքակալները կտաքանան:
- Լրի՛վ ընթացք, հոգիդ դուրս գա, ոտերդ՝ վեր:
- Լսո՛ւմ եմ:
- Հո՛ւպ տու:
Տա՛-տա՛-տա՛... Տա՛-տա՛-տա՛... Տա՛-տա՛-տա՛...
Տա՛-տա՛-տա՛... Տա՛-տա՛-տա՛... Տա՛-տա՛-տա՛... Տա՛... տա՛... տա՛...
Ծ՛-պշ՛... Ծ՛-պշ՛... Ծ՛շ՝-շ՛-շ՛...
Տա՛-տա՛-տա՛... Դա՛-դա՛-դա՛...
Ծոգեքարշը խռպում է, փրփրակալած, փոշեպատ...
Թանձր ծփում, հուրհրում էին ծանր քամիները... Հուրհրում, տապի

ալիք էին անում խոտերը... Գնացքները վազում էին, թաղվում լեռների մեջ, թափընթաց՝ թունելներ բացում: Հրդեհների երամակներ էին շրջում շուրջ-բոլորը... Վազում էին օշինդրի կապույտ տափաստանները... Վարարած գետի պես հոնդում էին ճամփեքը:

Քաղաքներն ու գյուղերը տրորելով վազում էին կարմիրները, սպիտակները, գորշերը, ու սեւ բանդան էր վազում: Վազում էին կոփածո լեռները, ծառս լինում, պարզում չանչերը: Գազանների պես վազում էին խտաբուրդ ամպերը, գետերն ագիներով ջուր էին պղտորում:

Պարտիզանները վազում էին, ընկնում, վազում, կրակահերթ թքում, որոտ, թնդյուն, խորխ, հայհոյանք... Գնդակահարում էին համազարկերով, բուռ-բուռ ցփնում ավազակ օրերի ծույլ հատիկները:

Ինչ ասես լինում էր, եւ լավը, եւ վատը, ամեն ինչից՝ մի բուռ:

Կյա՛նք էր, ոչ հատակ, ոչ ափեր:

Հոգին տալիս էր աստված ու բոլորի ճակատին երկու խարան դրեց.

Հ ա ն դ գ ն ու թ յ ու ն ու Ա չ ք ի ց չ թ ո ղ ն ե ս:

Ողջ անցյալն անցել էր, չքացել, ասես չէր էլ եղել ոչինչ: Միշկան ու Վանկան, պպզուկի տալով՝ վազում էին իրենց ճամփան, նույն խաչով խաչ անում նույն աղոթքը ասում՝ Աչքից չթողնե՛ս, ու դրանից բացի, ուրիշ ոչինչ չկար, չկա՛ր, չկա՛ր, չկա՛ր...

.....

Նավի վրա ո՞նց է:

Ամեն ինչ՝ մի կերպ: Ձեռնթափ, ոտնեոտ: Կյանք է, կամաց-կամաց, մի կերպ ապրենք՝ անցնի:

Կաթսան ու ավազը՝ կրա՛կ: Ու պատվիրանն էլ հարմար է՝ փողը բահով խրձի: Պոկեցիր մի պատառ՝ թռա՛ր: Բայց էն էլ ասենք, որ, ինչ էլ անես, ոնց էլ անես, այնուր կրելիս չալրոտվել չի լինում: Դեսուդեն չկա, պիտի խոստովանես:

Գործը գնում է, ամեն մեկն՝ իր բանին, Վանկա-Միշկան փող են խրձում:

Փողը՝ անհատնում, շորերը՝ կոպիտ, բայց տես որ ախպերների սրտով չի նավի կյանքը: Անպիտան կյանք է. կերան-վեր դրին զանազան բջիջները, դպրոցները, կուլտհանձնաժողովները, խմբակները տարբեր:

Օր չկա, որ, ոնց որ անկշտում փորից, չթափվեն՝ ժողովներ, նիստեր, դասախոսություններ, զեկուցումներ. ու բոլորը նույնի մասին.

- Մենք, ընկերնե՛ր... ու դուք, ընկերնե՛ր...

Բան չես հասկանում արդեն, ոչ մի ձեւ:

Միշկան ու Վանկան՝ կոմիսարի մոտ:

- Էսպես ու էսպես, ընկե՛ր կոմիսար... Քանի որ մենք գիտակից տարր ենք, ընկե՛ր կոմիսար, խնդրում ենք ազատել քաղաքականությունից...

Կոմիսարը երես է դարձնում:

- ...Շա՛ն ծնունդ, օր ու արեւ չենք տա, հաստա՛տ...

Ու ձավարի համար, էլի մանր-մունր բաների, ձեռի հետ՝ կռվշտոց: Առաջին շուխուրը դատարկ բանից եղավ: Ինչ-որ հանձնաժողովի անդամ լվացարանում ատամներն էր մաքրում: Միշկան կտտացրեց, կոնքի մեջ թափեց ատամի փոշին:

- Կնկա զբաղմունք է...,- ու թողեց-գնաց: Իսկ նեղացած տղան՝ հետեւից.

- Թափում ես՝ չես վախո՞ւմ, ականջմտո՛ւկ:

- Ի՞նչ ես անելու,- ուսի վրայից նետեց Միշկան,- մեղքի տակ մի գցի, լակո՛տ:

- Ինչի՞, գիտես մռութիդ հարմար դմբուզ չի ճարվի՞:

Միշկան նեղացավ, շրջվեց ու հասցրեց տղայի այտին:

- Ոչի՛լ, հիմա քեզանից մենակ պատճենը կթողեմ:

Տղան ոտները փռեց, ծիծաղից մեռավ: Հետո վեր թռավ:

Ուժը կպատի, չի պատի՝ Միշկայի վրա: Սա մի հատ էլ հասցրեց: Կպան իրար, պոկել չի լինի: Ու որտեղից որտեղ՝ աժդահա հնոցապան Չեչոտ Կոսկան: Գրկեց ինչ-որ հանձնաժողովի անդամին ու՝ նավակողից դուրս, զուտ էդպես բաժանվեցին:

Նույն օրը ընդհանուր ժողով հավաքեցին, որ Միշկային դատեն:

- Ինչի՞ եք դատ անում: Էս ի՞նչ խոսքուզրուց է:- Միշկայի սեւ հոնքերը զարմանքից թռան ճակատին:- Ի՞նչ գործ... Հա՛, խփել եմ... Հա՛, կռվել ենք... Խփելուց վախենաս, ապրելդ իզուր է:

Ու Վանկան էլ ձայն տվեց.

- Ի՞նչ ծեծ, եղածը՝ մի անգամ խփել եմ, էդքան բան...

- Երկու մաքրած ատամ ես թափել:

Միշկան մեղավոր օրորեց փոչոտ գլուխը.

- Ձեռս ծանր է:

Միշկային խիստ նկատողություն կպցրին, բայց հեչ վեջը չի:

Ճաշի մասին էլ խոսք չկա:

Թանձր է լցնում *մերոնքականներին* Միշկան, գդալը թասի մեջ կցցվի-կմնա, իսկ ջահելներին՝ զուտ ջրիկ ցալքուն: Նստում են տղաները կաթսայիկի շուրջը, ֆոթացնում, ֆոթացնում, չի երեւում ափը... Գովում են Միշկային.

- Ախ, սրիկա, մթան մեջ պարկը քաշես գլխին կամ եռման շչիով կաթսան գլխին հագցնես...

Ձավարը մահ է...Սովածությունից շարքում թափվում են, աչքերը ճակատն է թռնում:

Իսկ Միշկան, կաթսային հեծած՝ ծիծաղում էր Միշկան.

- Առավոտից գիշեր ժողովի եք ու շատ էլ խոսում եք, իսկ ուտելիք չկա: Ճիշտ է, ջուրը ծով է: Ծովում շատ ջուր կա: Էլի լցվել են ընդհանուր նավասենյակ, պետեր են, լրիվ կազմով: Լավ՞ծ բան է, որ նավաստին սոված մնա: Ձեր տիրու մերը... Ստի ուզածդ տուն, բուրժույին շալվարից դուրս քաշի, պատռի պետերի ու կոմիսարների կոկորդը... Ա՛խ, հեչ նավաստի եք դուք, կկորչեք անիծի նման...

8

Որոտը պայթեց, հարմար կյանքը՝ ցաքուցրիվ:

Թափ տվին Միշկա-Վանկային:

- Բռնվեցի՞ք:

- Ի՞նչ տվյալ ունեք:

- Էսպես ու էսպես:

- Ըհը՛:

- Ուհո՛ւ:

Մեջ ընկավ տարրերի մաքրման հանձնաժողովը: Ու միանգամից, առանց խոսքի՝ Միշկայի ականջից:

- Ձեր մասնագիտությո՞ւնը:

- Հոկտեմբերյան Մեծ հեղափոխության Դրագոմիլովյան շրջանի կոմիսար:

- Այսի՞նքն:

- Ոչ թե այսինքն, այլ ժողովրդական իրավունքի ճշմարիտ մարտիկ՝ առանց այլեւայլության, ինչի համար կարող եմ եւ վկաներ ներկայացնել:

- Ձեր գործը նավի վրա:

- Ի՞նչ գործ կարող ենք ունենալ: Ներկա պահիս խոհարար եմ, իսկ տասնյոթին հեղափոխություն էի անում, սպաներին խեղդում, նաեւ նավային կոմիտեի անդամ էի:

- Այդպե՞ս...

Իրար նայեց զզվանք հանձնաժողովը:

- Բուրի՛լին, ստիպված ենք ձեզ դուրս գրել նավից... Հոգնած տարր եք՝ մեկ, մասնագիտությունը մի բան չի՝ երկու:

- Հասկանո՛ւմ ենք, անպետքացել ենք, հասկանո՛ւմ ենք,- ու նեղացած Միշկան հեռացավ սեղանից:

Վանկայի խռիկներից էլ բռնեցին:

- Ձեր մասնագիտությո՞ւնը:

Վանկան՝ աչք չթարթելով.

- Էլեկտրիկ ու նավամբարի մեքենավար:

- Ի՞նչ գիտեք ջրահեռացման համակարգի մասին:

- Ոչ մի բան չգիտեմ:

- Ի՞նչ դեր ունեն կինգստոնները[3]:

- Հաստատ չեմ հիշում:

Աչքով արեց իրար զզվանք հանձնաժողովն ու նորից, ասես վատ սրած սղոցով.

- Պատկերացրեք, որ գլխավոր շղթայում վառվել է բաժանարար տուփը, ինչպե՞ս եք նորոգում:

- Ինչի՞ համար է էս կռիվ-դավին, ընկերնե՛ր,- ճչաց Վանկան:- Էլ չեմ դիմանում, ընկերնե՛ր... Իմ էությունը մղվում է տեխնիկական ու քաղաքական շրջապտույտի լեցուն... Ա՛խ, սրա տիրու մերը...

Կաթվածը բռնեց Վանյային, փուլ եկավ տղան...

Գլուխը գետին էր խփում Վանկան, բերանից փրփուր էր թափվում... Ֆեդոտիչն ու Միշկան բռնել էին.

- Խելա՛ռ է:

- Լրի՛վ:

- Ինչի՞ եք չարչարում մարդուն, տեսնում եք՝ առողջությունը հիվանդ է...

9

Հաջորդ առավոտ, տկլոր ու բոբիկ, վտիտ պարկերը մեջքին, հեռանում էին Միշկան ու Վանկան: Կամրջակի վրա շրջվեցին, վերջին անգամ սիրաբար նայեցին նավին, տախտակամածին աչքի փշի պես շարված ջահել անձնակազմին նայեցին.

- Ո՛ւռ՛ւռ՛ւ, խուշո՛ւր...

Վանկա-Գրամաֆոնին ու Միշկա-Կոկորդիլոսին ճանապարհում էին այրվող աչքերը: Աչքերում նոր քամիներ էին սուրում ու ցոլցլում էր ջահել արեւը:

3. Նավի ստորջրյա մասի փական՝ շոգեկաթսաները լցնելու ու դատարկելու համար:

Վլադիմիր ՆԱԲՈԿՈՎ

ԿԱՐՏՈՖԻԼԱՅԻՆ ԷԼՖԸ

1

Իսկ իրականում անունը Ֆրեդերիկ Դոբսոն էր: Աճպարար ընկերոջն այսպես էր պատմում իր մասին.

«Բրիստոլում ո՞վ չգիտեր մանկական դերձակ Դոբսոնին: Ես նրա որդին եմ: Թեկուզ զուտ համառությունից՝ հպարտ եմ դրանով: Ձեզ պետք է ասեմ, որ հայրս խմում էր, ծեր կետի նման: Մի անգամ, իմ ծնվելուց ոչ շատ առաջ, նա, ջինից տենդահար, մի էսպիսի, գիտե՞ք, մոմե տիկնիկ էր խցկել մորս անկողինը, մի պստիկ նավաստու՝ հրեշտակի դեմքով ու առաջին լայնափողք շալվարով: Խեղճ կինը հրաշքով չէր վիժել... Հասկանալի է, որ այդ ամենը լսելով գիտեմ, բայց եթե բարի մարդիկ չէին խաբում, ուրեմն թաքուն պատճառն այն բանի, որ...»:

Եվ Ֆրեդ Դոբսոնը տխուր ու բարեհոգի տարածում էր ձեռքերը:

Աճպարարը սովորականի պես երազկոտ ժպտալով կռանում էր, գրկում Ֆրեդին ու հառաչելով դնում պահարանի գլխին, որտեղ Կարտոֆիլային Էլֆը, հեզ կծիկ դառնալով՝ սկսում էր կամացուկ փռշտալ ու վնգվնգալ:

Քսան տարեկան էր, մոտ տասը կիլոգրամ էր կշռում, իսկ հասակն ընդամենը մի քանի սանտիմետրով էր գերազանցում շվեյցարական հանրահայտ գաճաճ, Արքայազն Բալթազար մականունով Ցիմերմանին: Իր գործընկեր Ցիմերմանի պես Ֆրեդն էլ հրաշալի կազմվածք ուներ, եւ եթե չլինեին կլոր ճակատն ու կկոցված աչքերը շրջանակող կնճիռները, նաեւ ընդհանուր փոքր-ինչ վախեցնող լարվածությունը,- ասես դիմադրում էր ինչ-որ բանի,-թզուկը նման կլիներ ութամյա տղայի: Թաց ծղոտի գույնի մազերը լպստած ու կիսված էին մազաբաժանի կոկիկ գծով, որն անցնում էր ուղիղ գլխի մեջտեղով, որ բարդ համաձայնության մեջ մտներ գագաթի հետ: Ֆրեդը թեթեւոտն էր ու վատ չէր պարում, բայց առաջին իսկ անտրեպենյորը[1], որ զբաղվում էր նրանով, հարկ համարեց ծիծաղելի մակդիրով ծանրաբեռնել «էլֆ» հասկացությունը, երբ նայեց նրա թմբլիկ քթին, որ գաճաճին էր կտակել չարաճճի հայրը:

1. Թատերական մասնավոր ձեռնարկու

Կարտոֆիլային էլֆը զուտ իր տեսքով ծափ ու ծիծաղի փոթորիկ բարձրացրեց ողջ Անգլիայում, իսկ հետո նաեւ մայրցամաքի գլխավոր քաղաքներում: Ի տարբերություն այլ թզուկների, հեզ, բարեհամբույր բնավորություն ուներ, շատ կապված էր պստիկ պոնիի՝ Ձյունիկի հետ, որի վրա ջանասիրաբար սնգսնգում էր հոլանդական կրկեսի ասպարեզում, իսկ Վիեննայում գերեց Օմսկում ծնված հիմար ու տրտում հսկայի սիրտը, նրանով, որ առաջին իսկ հանդիպմանը ծգվեց նրա կողմն ու երեխավարի խնդրեց. «Ուզում եմ գրկես»:

Սովորաբար մենակ չէր հանդես գալիս: Օրինակ, Վիեննայում թզուկը հայտնվեց հսկայի հետ, մանրաքայլ շորորում էր շուրջը՝ մանրակրկիտ հագնված, շերտավոր շալվարով, վարժ նստած պիջակով, նոտաների հաստ տրցակը թեւի տակ: Կիթառ էր մատուցում հսկային, որը, հսկա տիկնիկի պես, մեքենայական շարժումով վերցնում էր գործիքը: Ասես սեւ փայտից հատված սերթուկը, բարձր կրունկները, ուղղահայաց ցոլքերով բռնված ցիլինդրը ավելի էին բարձրացնում բարեկազմ, ինը փթանոց սիբիրցու հասակը: Ջորեղ ծնոտը ցցելով՝ նա մատը խփում էր լարերին: Ընդմիջումներին կնոջ պես բողոքում էր գլխապտույտից: Ֆրեդը շատ էր սիրում նրան ու նույնիսկ բաժանվելիս լաց եղավ, քանի որ արագ էր սովորում մարդկանց: Նրա կյանքը շրջանով էր գնում, համաչափ ու միապաղաղ, կրկեսի ձիու պես: Մի անգամ հետնաբեմի խավարում ոտքն առավ ներկով լի դույլին, ու փափուկ թմփաց դույլի մեջ: Հետո երկար հիշում էր այդ դեպքը, որպես արտակարգ իրադարձություն:

Թզուկն այդպես շրջեց Եվրոպայի մեծ մասն ու փող հետ գցեց, երգում էր ներքինու արծաթյա դիսկանտով, ու գերմանական թատրոններում հասարակությունը բուտերբրոդներ եւ ընկույզ էր ուտում՝ ծղոտներին նստած, իսկ իսպանականներում՝ շաքարած մանուշակներ ու էլի ընկույզ՝ ծղոտներին նստած: Հիշողության մեջ մնացել էր միայն անդեմ անդունդը, որ ծիծաղում էր իր վրա, իսկ ներկայացումից հետո՝ հանդարտ, երազկոտ գվվոցը պաղ գիշերվա, որ այնպես կապույտ է թվում, երբ դուրս ես գալիս թատրոնից:

Վերադառնալով Լոնդոն՝ նա նոր զուգընկեր գտավ. աճպարար էր, Ծոկ անունով: Ծոկը երգեցիկ ձայն ուներ, բարակ, գունատ,ասես աննյութեղեն ձեռքեր ու շագանակագույն մազեր, որ թափվում էին հոնքերին: Նա ավելի շատ բանաստեղծի էր նման, քան աճպարարի, իսկ աճպարարությունները իր ցուցադրում էր ինչ-որ նրբին ու սահուն տխրությամբ, առանց հապճեպ շատախոսության, որ հատուկ է նրա մասնագիտությանը: Կար-

տոֆիլային Էլֆը ծիծաղելի սպասավորում էր նրան, իսկ վերջում ցնծագին ղունղունացող ծղրտոցով հայտնվում պատկերարկղի մեջ, չնայած դրանից մի որոպե առաջ բոլորը տեսել էին՝ աճպարարն ինչպես նրան փակեց բեմի կենտրոնում դրված սեւ արկղում:

Այդ ամենը կատարվում էր Լոնդոնի այն թատրոններից մեկում, որտեղ հայտնվում են եւ՛ ճոճածողերի զնգուն թրթռոցի մեջ ճախրող մարմնամարզիկները, եւ՛ օտարերկրացի տենորը (հայրենիքում՝ անհաջողակ)՝ իր ժողովրդական երգերով, եւ՛ նավաստու հագուստով որովայնախոսը, եւ՛ հեծանվորդները, եւ մշտական, քստքստացնելով բեմում շրջող էքսցենտրիկ-ծաղրածուն՝ գլխին պստլիկ կաթսայիկ-գլխարկ, հագին՝ հատակին հասնող անթեւնոց:

2

Վերջին շրջանում Ֆրեդը մի տեսակ մռայլվել ու անընդհատ փռշտում էր, անծայն ու տխուր, ճապոնական շնիկի պես: Ամիսներ շարունակ կնոջ կարոտ չունենալով՝ կույս թզուկը երբեմն միայնակ սիրո տենչանքի սուր նոպաներ էր ունենում, որոնք անցնում էին նույնքան անսպասելի, որքան հայտնվում էին, ու նա նորից առժամանակ չէր նկատում ո՛չ թավշյա արգելապատից այն կողմ ճերմակին տվող մերկ ուսերը, ո՛չ փոքրիկ մարգուհիներին, ո՛չ իսպանականի պարուհիներին, որոնց ազդրերը մերկանում էին մի պահ, երբ արագ պարապտույտի մեջ փրփրում էր վարտիքների խուճուճ բոլորածալերի նարնջագույն աղվափետուրը:

- Քեզ թզուկուհի է հարկավոր,- մտահոգ ասաց Ծոկը՝ սովոր շարժումով արծաթադրամը հանելով թզուկի ականջից, որը թափ տվեց ծալած ձեռքը, ասես ճանճ էր քշում:

Եվ այդ գիշեր, երբ իր համարից հետո Ֆրեդը, կարճլիկ վերարկուն ու կաթսայիկ-գլխարկը հագած, փռշտալով ու գռմռալով, մանրաքայլ անցնում էր հետնաբեմի խավար միջանցքով, մատնաչափ բացված դռնից հանկարծ մի ուրախ լույս ցայտեց, ու երկու ձայն կանչեցին նրան: Զիտան ու Արաբելան էին, մարգուհի քույրերը, երկուսն էլ կիսամերկ, թուխ, սեւահեր, երկարուկ կապույտ աչքերով: Սենյակում թափթփվածություն էր, թատերական թրթռուն խայտաբղետություն, օծանելիքի բույր: Հայելատակի սեղանին աղվափնջիկներ էին թափված, սանրեր, նիստավոր սրվակ՝ ռետինե տանձով, հերակալներ՝ շոկոլադի տուփի մեջ, դիմաներկի ծիրանաճարպային ծողիկներ:

Քույրերն ակնթարթորեն խլացրին թզուկին իրենց շաղակրատանքով:

Մշտում ու խուտուտ էին տալիս Ֆրեդին, որը, մթին արյունից ամբողջովին փքված, խոժոռ նայում ու գնդակի պես գլորվում էր իրեն գրգռող արագաշարժ մերկ ձեռքերի արանքում: Եվ երբ Արաբելան, խաղ անելով, նրան քաշեց իր վրա ու ընկավ թախտին, Ֆրեդը զգաց, որ խելագարվում է,ու նրա վզից կախված, սկսեց թպրտալ ու ֆսֆսացնել: Նրան հետ մղելով՝ Արաբելան բարձրացրեց մերկ ձեռքը, Ֆրեդն առաջ մղվեց, շրթունքներով կպավ սափրած թեւատակի տաք, մի քիչ ծակծկող փոսորակին: Սյուսը՝ Զիտան, ծիծաղից թուլացած, փորձում էր ոտքից բռնած հետ քաշել թզուկին. այդ պահին դուռը շխկոցով բացվեց, ու մարմարի պես ճերմակ տրիկոն հագին ներս մտավ մարգուհիների ֆրանսիացի զուգընկերը: Լուռ ու առանց չարության բռնեց թզուկի վզից,- միայն ճարմանդից թռած օսլայած թեզանիքը ճթթաց,- օդ հանեց փոքրիկ կապիկի նման ու դուրս շպրտեց սենյակից: Դուռը շխկոցով փակվեց: Միջանցքով անցնող աճպարարը հասցրեց նկատել ուժեղ ձեռքի փայլատակումն ու թռիչքի մեջ թաթիկները կծկած փոքրիկ, սեւ կերպարանքը:

Ֆրեդը ցավոտ շմփաց հատակին ու անշարժ պառկած էր: Գիտակցությունը չէր կորցրել, միայն ամբողջովին մի տեսակ կակղել էր, նայում էր մի կետի ու մանրիկ կափկափում ատամները:

- Վատ է, ախպե՛րս,- հառաչեց աճպարարը՝ նրան գետնից բարձրացնելով ու թափանցիկ մատներով դիպչելով թզուկի կլոր ճակատին:- Ասում էի՝ մի խցկվի: Ահա եւ ստացար: Քեզ թզուկուհի է հարկավոր...

Ֆրեդն աչքերը չռած լռում էր:

- Ինձ մոտ կգիշերես,- որոշեց Ծոկը ու Կարտոֆիլային Էլֆին տարավ դեպի ելքը:

3

Տիկին Ծոկ էլ կար:

Թխաչյա, դեղնավուն սպիտակուցներով, անորոշ տարիքի տիկին էր: Նրա նիհարությունը, մաշկի մագաղաթյա երանգը, սեւ չոր մազերը, ծխախոտի ծուխը քթանցքներով հանելու սովորությունը, հագուստի ու սանրվածքի միտումնավոր թափթփվածությունը չէր գրավում տղամարդկանց, բայց հավանաբար դուր էին գալիս աճպարարին, չնայած իրականում նա կարծես չէր էլ նկատում կնոջը՝ միշտ տարված իր նվիրական մտքերով, երերուն, անիսկական, միշտ իր մտքերի հետ, երբ խոսում էր դատարկ բաներից, եւ սրատես, երբ աստղագուշակային երազանքների մեջ սուզված էր թվում: Նորան միշտ զգաստ էր, քանի որ Ծոկը երբեք խաբեության

առիթը բաց չէր թողնում՝ մանր, անիմաստ, բայց նրբորեն խորամանկ: Պատահում էր, որ ճաշելիս կնոջն ապշեցնում էր արտակարգ շատակերությամբ, հաճույքով չփչփացնում էր, ոսկորները ծծում, նորից ու նորից լիքը լցնում ափսեն, հետո վեր կենում՝ տխուր նայելով կնոջը, իսկ ավելի հետո սպասուհին, քթի տակ ծիծաղելով, զեկուցում էր, որ պարոն Ծոկը չի էլ դիպել ճաշին, որ ամբողջ ճաշը մնացել է սեղանի տակ դրած երեք նոփ-նոր կաթսաներում:

Նորան մի պատվարժան նկարչի դուստր էր, որը միայն ձիեր, բծավոր շներ ու կարմիր ֆրակներով որսորդներ էր նկարում, մինչեւ ամուսնանալն ապրել էր Չելսիում, հիացել Թեմզայի ծխապատ մայրամուտներով, նկարել էր, հաճախել անհեթեթ հավաքույթների, ուր Լոնդոնի բոհեմն էր հավաքվում, ու հենց այնտեղ էլ նրան նկատել էին խաղաղ, նրբազգաց մարդու թափանցիկ աչքերը, որը քիչ էր խոսում ու դեռ ոչ մեկին հայտնի չէր: Կասկածում էին, որ քնարական պոետ է: Նորան միանգամից հրապուրվեց նրանով: Բանաստեղծը մտացրիվ ամուսնացավ նրա հետ, իսկ հարսանիքի հաջորդ իսկ օրը տխուր ժպիտով հայտարարեց, որ բանաստեղծություն գրել չգիտի, եւ անմիջապես էլ, զրույցի ընթացքում, հին ժամացույցը վերածեց նիկելած ժամանակաչափի, ժամանակաչափը՝ փոքրիկ ոսկե ժամացույցի, որը Նորան այդ ժամանակից ի վեր կրում էր թեւին: Նա հասկանում էր, որ աճպարար Ծոկը համենայնդեպս յուրատեսակ բանաստեղծ է, բայց երբեք չկարողացավ վարժվել նրան, որ ամեն պահ, կյանքի բոլոր հանգամանքներում ցուցադրում է իր արվեստը: Դժվար է երջանիկ լինել, երբ ամուսինդ միրաժ է, քայլող աճպարարություն, բոլոր հինգ զգայությունների խաբկանք:

4

Նորան մտացրիվ եղունգով կտկտացնում էր բանկային, որտեղ մի քանի ոսկե ձկնիկ, ասես նարնջի կեղեւից հատած, շնչում ու պսպղացնում էին լողաթեւերը, երբ դուռն անաղմուկ բացվեց, ու շեմին հայտնվեց Ծոկը՝ ցիլինդրը թեք դրած, շագանակագույն մազափունջը՝ հոնքին, գրկին մի փոքրիկ, կծկված մարմին:

- Բերեցի,- հառաչելով ասաց աճպարարը:

Նորան արագ մտածեց, որ երեխա է... ընկեցիկ... գտել է...

Մուգ աչքերն արցունքոտվեցին:

- Ստիպված ենք որդեգրել,- կամացուկ ասաց շեմին սպասողական կանգնած Ծոկը:

Մարմինը հանկարծ կենդանություն առավ, ինչ-որ բան թոթովեց, սկսեց ամաչկոտ քերծել աճպարարի օսլայած կուրծքը: Նորան նայեց փոքրիկ կոշիկներին ու թավակաշվե զանկապանևերին, կաթսայիկ-գլխարկին...

- Ինձ խաբելն այնքան էլ հեշտ չէ,- քթի տակ խնդմնդալով՝ ասաց նա:

Աճպարարը հանդիմանությամբ նայեց նրան, Ֆրեդին իջեցրեց թավշապատ բազմոցին, վրան գցեց ծածկոցը:

- Մարմնամարզիկն է խփել,- բացատրեց Շոկը ու չկարողացավ չավելացնել:- Մարզագնդով: Ուղիղ փորին:

Եվ Նորան, գթասիրտ, ինչպես բոլոր անզավակ կանայք, այնպիսի՛ կարեկցանք զգաց, որ քիչ էր մնում լաց լինի: Սկսեց խնամել թզուկին, կերակրեց, պորտվեյն տվեց, անուշահոտ սպիրտով տրորեց ճակատը, քունքերը, ականջների ետեւի մանկական փոսիկները:

Հաջորդ օրը Ֆրեդը վաղ արթնացավ, հետուառաջ արեց անծանոթ սենյակում, խոսեց ոսկե ձկնիկների հետ, հետո կամացուկ փռշտալով՝ երեխայի պես տեղավորվեց լայն պատուհանագոգին:

Հալվող,հրաշալի մշուշը ողողել էր գորշ տանիքները: Հեռվում բացվեց ձեղնահարկի պատուհանը, եւ ապակին որսաց արեւի շողը: Թարմ ու քնքուշ երգեց ավտոմեքենայի շչակը:

Ֆրեդը մտածում էր նախորդ օրվա մասին: Մարզուհիների ծիծաղկոտ ձայներն ու տիկին Շոկի բուրավետ սառը ձեռքերի հպումները զարմանալիորեն խառնվում էին իրար: Նրան սկզբում նեղացրել, ապա գուրգուրել էին, իսկ նա շատ դյուրընտել, շատ կրակոտ թզուկ էր: Երազեց, որ երբեւէ կփրկի Նորային ուժեղ ու կոպիտ մի մարդուց, սպիտակ տրիկոյով այն ֆրանսիացու կարգի: Անպատեհ հիշվեց տասնհինգամյա թզուկուհին, ում հետ ինչ-որ տեղ ելույթ էր ունենում: Թզուկուհին սուրքիթ էր, հիվանդոտ, չար: Հասարակությանը նրան ներկայացրին որպես Ֆրեդի հարսնացու, ու Ֆրեդը, նողկանքից դողալով, կիպ գրկած պիտի տանգո պարեր նրա հետ:

Նորից միայնակ երգեց ու անցավ շչակը: Լոնդոնի քնքուշ անապատի վրա մշուշը արեւով էր լցվում:

Ժամը ութի մոտ բնակարանը կենդանացավ. աճպարարը ցրված ժպտալով դուրս եկավ տնից, թե ուր՝ անհայտ էր. համեղ բուրում էր ձվածեղի տաք պղպջակների տակ թափանցիկ շերտերով փռված տապակած խոզաճարպը: Անփույթ սանրված, դիպակե արեւածաղիկներով ասեղնագործած խալաթը հագին՝ հայտնվեց տիկին Շոկը:

Նախաճաշից հետո նա Ֆրեդին բուրավետ ծխախոտ հյուրասիրեց,

որի ծայրը պատած էր ալ ծաղկաթերթով, եւ աչքերը փակելով՝ նրան ստիպեց պատմել՝ ինչպես է ապրում: Այդպիսի դեպքերում Ֆրեդի ձայնը մի քիչ թավանում էր, դանդաղ էր խոսում՝ խնամքով ընտրելով բառերը, եւ խոսքի այդ անսպասելի մեծալրջությունը զարմանալիորեն սազում էր նրան: Գլուխը խոնարհած, կենտրոնացած ու ճապուկ՝ նա կողքանց նստել էր Նորայի ոտքերի տակ, որը կիսապառկել էր թավշապատ բազմոցին՝ մերկացնելով ծալած ձեռքերի սուր արմունկները: Թզուկը, իր պատմությունն ավարտելով՝ լռեց, բայց դեռ տարուբերում էր թաթիկը, ասես շարունակում էր կամացուկ խոսել: Նրա սեւ, կարճլիկ պիջակը, խոնարհված դեմքը, մսոտ քիթը, դեղին մազերն ու գագաթի մազաբաժանը աղոտ խանդաղատանքով էին լցնում Նորայի սիրտը: Թարթիչների միջից նայելով՝ կինը փորձում էր պատկերացնել, որ ոչ թե թզուկ է նստած իր առաջ, այլ իր անգո որդին, ու պատմում է՝ ինչպես են իրեն նեղացնում դպրոցում: Ձեռքը պարզելով՝ Նորան թեթեւ շոյեց նրա գլուխն ու նույն պահին, մտքերի անհասկանալի զուգորդությամբ, այլ բան երեւակայեց՝ վրեժխնդիր ու հետաքրքրական:

Մազերին զգալով կնոջ շարժվող մատները՝ թզուկը քարացավ եւ հանկարծ սկսեց լուռ ու արագ շրթունքները լիզել: Աչքերը շլած՝ չէր կարողանում կտրվել տիկին Ծոկի կոշիկի զմրուխտե փուփուլից:

Եվ հանկարծ ինչ-որ անհեթեթ ու արբեցուցիչ շարժում սկսվեց:

5

Այդ թխակապույտ, արեւոտ օգոստոսյան օրը Լոնդոնն առանձնակի գեղեցիկ էր: Թեթեւ, տոնական երկինքը արտացոլվում էր ասֆալտի ողորկ ժապավեններին, անկյուններում բոցկլտում էր փոստային սյունիկների վարդագույն լաքը, զբոսայգու գոբելենային կանաչի մեջ արտացոլվում էին ավտոմոբիլների փայլն ու շրշյունը. ողջ քաղաքը կայծկլտում էր, շնչում թալկացող ջերմությամբ, ու պաղ էր միայն ներքեւում, ստորգետնյա ուղիների կառամատույցներին:

Տարվա յուրաքանչյուր առանձին օր ընծայվում է միայն մեկ մարդու՝ ամենաերջանիկին, մնացած բոլոր մարդիկ օգտվում են նրա օրվանից՝ վայելելով արեւը կամ բարկանալով անձրեւի վրա, բայց երբեք չիմանալով՝ ում է պատկանում օրը, եւ նրանց այդ չիմացությունը հաճելի ու ծիծաղելի է բախտավորին: Մարդը չի կարող կանխատեսել, թե հատկապես որ օրը բաժին կընկնի իրեն, ինչ մանրուք է հիշելու ընդմիշտ՝ լույսի ծփանքը գետի երկայնքով ձգված պատին, թե՞ օդում պտտվող թխկենու տերը. ասենք, հաճախ այնպես է լինում, որ նա իր օրը ճանաչում է միայն անցած

օրերի մեջ, երբ վաղուց արդեն պոկած, ճմռթած ու սեղանի տակ նետած է լինում օրացույցի թերթիկը՝ մոռացված թվով:

Ֆրեդ Դոբսոնին՝ մկնագույն զանկապաններով թզուկին Աստված պարգեւեց քնքշագույն շչակով ու արեւից բռնկված պատուհանափեղկի դարձով սկսված օգոստոսյան այդ օրը: Երեխաները զբոսանքից վերադառնալով՝ ծնողներին շնչակտուր ու ապշահար պատմում էին, որ կաթսայիկ-գլխարկով, շերտավոր շալվարով, ձեռնափայտն ու մի զույգ դեղին ձեռնոց ձեռքին թզուկ են տեսել:

Կրքոտ հրաժեշտ տալով հյուրերի սպասող Նորային՝ Կարտոֆիլային Էլֆը դուրս եկավ լայն, ողորկ, արեւով ողողված փողոցն ու միանգամից հասկացավ, որ ամբողջ քաղաքը միայն իր համար է ստեղծվել: Ուրախ վարորդը զնգուն հարվածով իջեցրեց տաքաչափի երկաթե փոքրիկ դրոշակը, փողոցը հոսեց կողքով, ու Ֆրեդը ժամանակ առ ժամանակ ցած էր սահում կաշվե նստիքից եւ անընդհատ ծիծաղում, ղունղունում էր ինքն իրեն:

Հայդ փարքի մուտքի մոտ դուրս եկավ մեքենայից եւ հետաքրքրասեր հայացքներին ուշադրություն չդարձնելով՝ մանրաքայլ գնաց ծալովի կանաչ աթոռակների մոտով, ջրավազանի մոտով, մրտավարդի հսկա թփերի երկայնքով, որ սեւին էին տալիս թեղիների ու լորենիների ստվերում, վառ կանաչ դալարախոտի վրայով, որ հարթ էր, ինչպես բիլիարդի մահուդը: Կողքով հեծյալներ էին անցնում՝ թեթեւ սնգսնգալով, ճռռացնելով սռնապանների դեղին կաշին, թափահարվում էին ձիերի նուրբ մռութները, սանձերը զնգում, ու սեւ թանկարժեք մեքենաները անվաճաղերը շլացուցիչ շողացնելով, զուսպ գլորվում էին շառագույն ստվերների լայն ժանյակներով:

Թզուկը շնչում էր բենզինի տաք հոտը, կանաչ հյութի առատությունից կարծես արդեն նեխող տերեւների բույրը ու պտտում էր ձեռնափայտը, փքում շրթունքները, ասես պատրաստվում էր սուլել. ազատության ու թեթեւության այնպիսի զգացողություն էր ներսում: Նորան այնպիսի փութկոտ քնքշությամբ ճանապարհեց նրան, այնպես հուզված էր ծիծաղում. երեւում էր, որ սարսափում էր, թե միշտ երկրորդ նախաճաշին հայտնվող ծեր հայրը կսկսի ինչ-որ բան կասկածել՝ նրան անծանոթ պարոնի հետ տեսնելով:

Այդ օրը նրան տեսնում էին ամենուր՝ եւ՛ զբոսայգում, որտեղ օսլայած գոգնոցով կարմրաթուշ դայակը քշում էր մանկասայլակը ու, չգիտես ինչու, խնդրեց օգնել, եւ՛ Բրիտանական թանգարանի սրահներում, եւ՛ շարժական սանդուղքին, որ դանդաղ դուրս էր սողում ստորգետնյա խորխորատ-

ներից՝ ծանրացած էլեկտրական սյուքով, շքեղ գովազդներով, գվվոցով, եւ՛ նրբաճաշակ խանութում, որտեղ տղամարդկանց թաշկինակներ են վաճառում, եւ՛ ավտոբուսի կռնակին, ուր նրան դրել էին ինչ-որ մեկի բարի ձեռքերը:

Իսկ հետո հոգնեց, շշմեց շարժումից ու փայլից, սկսեց տագնապել ծիծաղկոտ աչքերից: Եվ պետք էր իմաստավորել ազատության, հպարտության, երջանկության այն լայնարձակ զգացումը, որ չէր լքում նրան:

Երբ, սովածանալով, Ֆրեդը մտավ ծանոթ փոքրիկ ռեստորանը, որտեղ տարբեր արտիստներ էին հավաքվում, ու նրա ներկայությունը չէր զարմացնում ոչ մեկին, այցելուներին, ծեր, ծանծրալի, արդեն հարբած ծաղրածուին, իրեն բարեկամաբար գլխով անող իր թշնամի ֆրանսիացուն նայելով՝ միանգամայն հստակ հասկացավ, որ այլեւս երբեք բեմ չի բարձրանա:

Ռեստորանում դեռ կիսախավար էր, ինչպես ցերեկներն է լինում: Ձանծրալի ծաղրածուն, որ սնանկացած բանկիրի էր նման, ու տարօրինակ, անճոռնի պիջակով մարմնամարզիկը դոմինո էին խաղում: Իսպանականի պարուհին, գլխին հսկա լայնեզր գլխարկ, որ կապույտ ստվեր էր գցում աչքերին, մենակ, ոտքը ոտքին՝ նստած էր անկյունի սեղանի մոտ: Էլի յոթ-ութ մարդ կար, որոնց Ֆրեդը չէր ճանաչում. զննում էր նրանց՝ գրիմից խունացած դեմքերը, մինչ սպասավորը բարձիկ էր դնում տակը, սփռոցը բացում, ճարպկորեն դասավորում սպասքը:

Ու հանկարծ հեռվում, ռեստորանի աղջամուղջում Ֆրեդը ճանաչեց աճպարարի նուրբ կիսադեմը. նա շշուկով զրուցում էր ամերիկյան ոճի մի տարեց, չաղ պարոնի հետ: Ֆրեդը չէր սպասում, որ կիանդիպի աճպարարին, որը երբեք պանդոկ չէր գալիս, եւ ընդհանրապես մոռացել էր նրա գոյության մասին: Հիմա այնպես խղճաց դժբախտ Ծոկին, որ նախ որոշեց ամեն ինչ թաքցնել նրանից, բայց հետո մտածեց, որ, մեկ է, Նորան խաբել չգիտի ու երեւի նույն օրն իսկ կհայտնի ամուսնուն (ես սիրահարվել եմ Ֆրեդ Դոբսոնին, հեռանում եմ քեզնից...),- բայց չէ՞ որ դա տհաճ, ծանր զրույց է, ուստի պետք է հեշտացնել կնոջ գործը. ինքը նրա ասպետն է, ինքը հպարտանում է նրա սիրով, ու որքան էլ խղճար Ծոկին, ստիպված է դառնացնել:

Այդ ընթացքում սպասավորը մի բաժին երիկամով կարկանդակ ու մի քարե շիշ կոճղապղպեղի գարեջուր բերեց: Հետո վառեց լույսը: Այսուայնտեղ փոշոտ թավշի պես բռնկվեցին ապակյա ծաղիկները, ու թզուկը հեռվից տեսավ, թե շագանակագույն մազափունջն ինչպես ոսկեփայլ շողաց

աճպարարի ճակատին, ինչպես են լույսից ստվեր անցնում նրա նուրբ ու թափանցիկ մատները: Աճպարարի զրուցակիցը վեր կացավ, պիջակի տակ շտկեց կաշվե գոտին ու շողոքորթ ժպտում էր Ծոկին, որը նրան ուղեկցեց մինչեւ հանդերձարան: Հաստլիկը գլխին քաշեց լայնեզր գլխարկը, սեղմեց աճպարարի թեթեւ ձեռքն ու շալվարը քշտելով՝ դուրս եկավ ռեստորանից: Մի ակնթարթ լույս ընկավ բացված դռան ճեղքից, ու ռեստորանի լամպերն ավելի դեղնեցին: Դուռը շխկաց:

- Ծո՛կ,- կանչեց Կարտոֆիլային Էլֆը՝ ոտքերը սեղանի տակ ճոճելով:

Ծոկը մոտեցավ: Քայլելիս կողագրպանից մտախոհ հանեց վառվող սիգարը, կում արեց, ծխի քուլա արձակեց ու նորից դրեց ծոցը: Հայտնի չէ, թե ինչպես էր անում:

- Ծո՛կ,- ասաց թզուկը, որի քիթը կոճապղպեղի գարեջրից կարմրել էր,- ձեզ հետ խոսելու բան ունեմ: Շատ կարեւոր:

Աճպարարը նստեց նրա կողքին, հենվեց արմունկին:

- Գլուխդ չի՞ ցավում,- անտարբեր հարցրեց նա:

Ֆրեդն անձեռոցիկով սրբեց շրթունքները. ոչ մի կերպ չէր կորմնորոշվում՝ ինչպես սկսի, որ շատ ցավ չպատճառի ընկերոջը:

- Այս երեկո վերջին անգամ եմ ելույթ ունենում քեզ հետ,- ասաց աճպարարը:- Ամերիկացին տանում է: Կարծես վատ չի ստացվում:

- Լսե՛ք, Ծո՛կ,- եւ թզուկը, հացը փշրելով, դժվարությամբ սկսեց ընտրել անհրաժեշտ բառերը:- Ահա... Ամուր եղեք, Ծո՛կ: Ես սիրում եմ ձեր կնոջը: Այսօր, ձեր գնալուց հետո ես եւ նա...

- Միայն թե ես վատ եմ տանում ծովային ճոճքը,- մտահոգ ասաց աճպարարը,- իսկ մինչեւ Բոստոն մի շաբաթվա ճանապարհ է... Մի անգամ Հնդկաստան լողացի: Հետո ինձ այս թմրած ոտքի պես էի զգում:

Շառագունած Ֆրեդը փոքրիկ բռունցքով տրորում էր սփռոցը: Աճպարարը կամացուկ ծիծաղեց իր մտքերի վրա, հետո հարցրեց.

- Ինչ-որ բա՞ն էիր ուզում ասել, բարեկա՛մս:

Թզուկը նայեց նրա վճիտ աչքերի մեջ, շփոթված օրորեց գլուխը:

- Չէ՛, չէ՛... Ոչի՛նչ... Ձեզ հետ անհնար է խոսել:

Ծոկը պարզեց ձեռքը, ըստ երեւույթին ուզում էր թզուկի ականջի ետեւից մետաղադրամ դուրս քաշել,բայց չնայած հրաշագործման երկար տարիներին մատները թույլ բռնեցին: Աճպարարը որսաց դրամը, վեր կացավ:

- Այստեղ չեմ ճաշի,- ասաց նա՝ հետաքրքրությամբ նայելով թզուկի գագաթին,- ինձ այստեղ դուր չի գալիս:

Ֆրեդը, լուռ ու փքված, խորոված խնձոր էր ուտում: Աճպարարն անկատ հեռացավ: Ռեստորանը դատարկ էր: Հսկա լայնեզր գլխարկով քնքշագորով պարուհուն տարավ մի անճարպիկ, հրաշալի հանգնված, կապույտ աչքերով երիտասարդ:

- Չի ուզում լսել, թող չլսի,- մտածեց Ֆրեդը՝ թեթեւացած շունչ քաշելով ու որոշելով, որ ի վերջո Նորան ավելի լավ կբացատրի: Հետո թուղթ խնդրեց ու սկսեց նամակ գրել նրան: Նամակն այսպես էր ավարտվում. «Հիմա հասկանում եք, որ նախկինի պես ապրել չեմ կարող: Ինչ կզգայիք՝ իմանալով, որ ամեն երեկո մարդկային նախիրը քրքջում է Ձեր ընտրյալի վրա: Ես վաղն իսկ մեկնում եմ՝ խզելով պայմանագիրը: Ձեզ նորից կգտնեմ, հենց որ գտնեմ այն խաղաղ անկյունը, որտեղ, Ձեր ապահարզանից հետո, կսիրենք իրար, իմ Նո՛րա»:

Այդպես ավարտվեց արագ օրը, որ ընծայվել էր մկնագույն զանկապաններով թզուկին:

6

Լոնդոնը զգույշ իրիկնանում էր: Փողոցի ծայները ծուլվում, դառնում էին երգեցիկ գվվոց, ասես մեկը, նվագն ընդհատելով՝ դեռ սեղմում էր ոտնակը: Զբոսայգիների լորենիների սեւ տերեւներն ընդգծվում էին վճիտ երկնքի ֆոնին, ինչպես ագռավի հաղթաթղթի նախշազարդ: Փողոցի անկյունադարձին, երկու սգավոր աշտարակների արանքում երբեմն տեսիլքի պես հայտնվում էր մայրամուտի հրդեհը: Պատուհաններին շրշում էին վարագույրները, թափվում փափուկ փաթիլների պես:

Աճպարարը միշտ տուն էր գնում ճաշելու եւ հագնելու պրոֆեսիոնալ ֆրակը, որ հետո անմիջապես գնա թատրոն: Նորան այդ երեկո առանձնակի անհամբերությամբ էր սպասում նրան ու դողում անհանգիստ ուրախությունից: Ուրախ էր, որ ինքն էլ իր գաղտնիքն ունի: Իսկ թզուկին հիշել չէր ուզում: Թզուկը տհաճ ճիճվիկ էր:

Նուրբ շխկաց մուտքի դռան կողպեքը: Ինչպես հաճախ է լինում՝ երբ գիտես, որ խաբել ես մարդուն, աճպարարի դեմքը նրան նոր թվաց, համարյա օտար: Կնոջը գլխով անելով՝ նա մի տեսակ ամոթխած ու տխուր խոնարհեց թարթիչները, լուռումունջ նստեց դիմացը, սեղանի մոտ: Նորան նայեց նրա թեթեւ մոխրագույն պիջակին, որի մեջ ավելի նիհար էր թվում, ավելի անորսալի, ու կնոջ աչքերը վառվեցին տաք հաղթությամբ, մի չար երակ խաղաց շրթունքների անկյունում:

Նորան, խոսքի անփութությունը վայելելով, հարցրեց.

- Ո՞նց է թզուկդ: Կարծում էի՝ կբերես նրան:

- Այսօր չեմ տեսել,- պատասխանեց Ծոկը ու սկսեց ուտել: Հանկարծ հիշեց. հանեց սրվակն ու զգույշ ճռռոցով խցանը քաշելով՝ թեքեց գինով ըմպանակի վրա:

Նորան զայրացած մտածեց, որ հիմա աճպարարություն կլինի, գինին կդառնա վառ կապույտ կամ ջրի պես թափանցիկ, բայց գինու գույնը չփոխվեց: Ծոկը նրա հայացքը որսալով՝ մշուշոտ ժպտաց:

- Սարսողության համար է... կաթիլներ,- բացատրեց նա: Ստախոհության ալիք անցավ դեմքի վրայով:

- Ինչպես միշտ՝ խաբում ես,- ասաց Նորան:- Ստամոքսդ հրաշալի է:

Աճպարարը կամացուկ ծիծաղեց: Հետո գործնական հազաց ու մի շնչում դատարկեց ըմպանակը:

- Կե՛ր,- ասաց Նորան:- Կսառի:

Չարախնդությամբ մտածեց. «Ա՜խ, եթե իմանայիր: Երբեք չես իմանա: Հիմա դրա մեջ է իմ ուժը»:

Աճպարարը լուռ ուտում էր: Հանկարծ դեմքը կնճռոտեց, հետ մղեց ափսեն ու սկսեց խոսել: Սովորականի պես ոչ թե ուղիղ կնոջը, այլ նրա գլխի վրայով նայելով, եւ ձայնը երգեցիկ ու մեղմ էր: Պատմում էր, թե ինչպես է այդ օրը եղել թագավորի մոտ, Վինձորում, ուր հրավիրել էին զվարճացնելու թավշյա բաճկոններով ու ժանեկավոր օձիքներով փոքրիկ հերցոգներին: Պատկերավոր ու թեթեւ էր պատմում՝ ձեռ առնելով տեսած անձանց, ծիծաղում էր՝ գլուխը մի քիչ կողքի թեքելով:

- Ցիլինդրից աղավնիների մի երամ արձակեցի,- պատմում էր նա:

«Իսկ թզուկի ձեռքերը քրտնքոտ էին, ու դու անընդհատ ստում ես»,- մտովի միջամտեց Նորան:

- ...Ու գիտե՞ս, այդ աղավնիները սկսեցին պտտվել թագուհու շուրջը: Քշում էր նրանց ու քաղաքավարությունից ժպտում:

Աճպարարաը վեր կացավ, օրորվեց, երկու մատով թեթեւակի հենվեց սեղանի եզրին ու խոսեց՝ ասես ավարտելով պատմությունը.

- Վատ եմ զգում, Նո՛րա: Թույն եմ խմել: Դու ինձ չպիտի դավաճանեիր:

Նրա կոկորդը փքվեց, եւ թաշկինակը շրթունքներին սեղմելով՝ դուրս եկավ սենյակից:

Նորան արագ վեր կացավ՝ սեղանից ճանկելով սաթե երկար շարոցով արծաթե դանակը:

«Դիտմամբ է անում,- չար մտածեց նա:- Ուզում է վախեցնել, տանջել ինձ: Չէ, եղբա՛յր, չի ստացվի: Կտեսնե՛ս»:

Վիրավորական էր, որ Ծոկն այդքան հեշտ բացեց իր գաղտնիքը, բայց հիմա համենայնդեպս պատճառ ուներ նրան ամեն ինչ ասելու, գոռալու, կրկնում, որ ատում է, խորապես արհամարհում, որ նա մարդ չի, այլ ռետինե ուրվական, որ այլեւս ուժ չունի նրա հետ ապրելու, որ...

Աճպարարը նստել էր մահճակալին, կորացած ու տառապագին ատամները սեղմած, բայց փորձեց ժպտալ, երբ Նորան խուժեց ննջարան:

- Այդպես էլ հավատացի՛, այդպես էլ հավատացի՛,- շնչահեղձ էր լինում կինը:- Վե՛րջ, վերջացա՛ծ է: Ես էլ խաբել գիտեմ: Դու զզվելի ես, ախ, ծիծաղելի ես քո անհաջող աճպարարություններով:

Ծոկը, որ շարունակում էր շփոթված ժպտալ, փորձեց վեր կենալ, ներբանը քստքստացրեց գորգին: Նորան լռեց՝ մտմտալով, թե էլ ինչ վիրավորական բան բղավի:

- Պետք չի... Եթե... ներիր ինձ...,- դժվար հոգոց հանեց Ծոկը:

Ճակատին երակն ուռավ: Ավելի կծկվեց, խռխռացրեց՝ ցնցելով խոնավ մազափունջը, ու թաշկինակին, որ ջղաձիգ սեղմել էր բերանին, արյուն հայտնվեց:

- Հերիք խեղկատակություն անես,- ոտքը գետնին խփեց Նորան:

Աճպարարը շտկվեց, մոմի պես գունատ, թաշկինակը շպրտեց սենյակի անկյունը:

- Սպասի՛ր, Նո՛րա... Դու չես հասկանում... Սա իմ վերջին աճպարարությունն է ... էլ չեմ անի...

Նրա սարսափելի, փայլող դեմքը նորից աղճատվեց: Օրորվեց, ընկավ անկողնուն, հետ գցեց գլուխը:

Նորան մոտեցավ, նայեց՝ հոնքերը խոժոռելով: Ծոկը աչքերը փակ պառկել ու կրճտացնում էր սեղմած ատամները: Երբ կինը խոնարհվեց նրա վրա, թարթիչները թրթռացին, նա նայեց մշուշված հայացքով՝ ասես չճանաչելով կնոջը, ու հանկարծ ճանաչեց, եւ աչքերում քնքշության ու տառապանքի մի խոնավ շող առկայծեց:

Ու Նորան վայրկենապես հասկացավ, որ սիրում է նրան աշխարհում ամեն ինչից ավելի, եւ սարսափն ու քնքշությունը հողմի պես պարուրեցին նրան: Կինը պտտվեց սենյակում, չգիտես ինչու՝ մի բաժակ ջուր լցրեց, թողեց լվացարանի վրա, նորից մոտ վազեց ամուսնուն, որը առաջ ընկել ու սավանի ծայրը շրթունքներին սեղմած՝ ցնցվում էր, խռխռում՝ չռելով անմիտ, արդեն մեռելությամբ մշուշված աչքերը: Այդ ժամանակ Նորան նետվեց հարեւան սենյակ, որտեղ հեռախոսն էր, երկար քաշքշում էր խրոցը, շփոթում համարը, նորից ու նորից զանգում՝ տնքալով ու բռունցքը խփե-

լով սեղանիկին, ու երբ վերջապես լսվեց բժշկի ձայնը, գոռաց, որ ամուսինը թունավորվել է, մահանում է, խուլ հեկեկաց խոսափողի մեջ եւ այն ծուռ կախելով՝ նորից նետվեց ննջարան:

Աճպարարը, պայծառ ու կոկիկ, սպիտակ անթեւնոցն ու սեւ, բծախնդիր տաբատը հագին՝ կանգնած էր հայելու առաջ ու խնամքով կապում էր փողկապը: Հայելու մեջ տեսնելով Նորային, չշրջվելով՝ ցրված ժպտաց ու կամացուկ սուլելով, շարունակեց շտկել սեւ թավշյա անկյունները:

7

Հյուսիսային Անգլիայի Դրաուզիտոն փոքրիկ քաղաքի տեսքն այնքան քնկոտ էր, որ թվում էր՝ ինչ-որ մեկը նրան մոռացել է մշուշոտ ու կոկիկ դաշտերում, որտեղ էլ քաղաքն ընդմիշտ քնել է: Քաղաքում փոստատուն կար, հեծանիվների խանութ, երկու-երեք ծխախոտի կրպակ՝ կարմիր-կապույտ ցուցանակներով, հինավուրց գորշաքար եկեղեցի՝ շրջապատված տապանաքարերով, որոնց վրա պառկում էր հսկա շագանակենու ստվերը, ու քաղաքի միակ փողոցի երկարությամբ կանաչ ցանկապատեր էին ձգվում, փոքրիկ պարտեզներ, ցածրիկ աղյուսաշեն տներ՝ շեղակի պատված կանաչ թավիշով: Այդ փոքրիկ տներից մեկը վարձով տրված էր ոմն Ֆ. Դոբսոնի, ում ոչ ոք դեմքով չէր ճանաչում, բացի բժշկից, իսկ բժիշկը շատախոսել չէր սիրում: Պարոն Դոբսոնն, ըստ երեւույթին, երբեք տնից դուրս չէր գալիս, ու նրա տնտեսուհին, որ մի խստավար, հաստլիկ կին էր ու նախկինում ծառայել էր հոգեկան հիվանդների օթեւանում, հարեւանների պատահական հարցերին պատասխանում էր, որ պարոն Դոբսոնը կաթվածահար ծերունի է՝ դատապարտված ապրելու կիսախավարի ու լռության մեջ: Հենց Դրաուզիտոն գալու տարում էլ մոռացան նրան. աննկատ մի բան դարձավ, բայց բոլորն էլ հավատում էին, ինչպես անանուն եպիսկոպոսին, որի քարե կերպարը վաղուց կանգնած էր եկեղեցու դարպասագլխի խորշում: Ըստ երեւույթին խորհրդավոր ծերունին թոռ ուներ՝ հանդարտ, շիկամազ մի տղա, որը երբեմն մթնշաղին մանրիկ ու երկչոտ քայլերով դուրս էր գալիս պարոն Դոբսոնի տնից: Ասենք, դա հազվագյուտ բան էր, այնքան, որ ոչ ոք հաստատ չէր կարող ասել՝ նույն տղա՞ն է, թե՞ ուրիշը, եւ մթնշաղերն էլ միգապատ էին, կապույտ, բոլոր ուրվագծերն աղոտացնող: Այդպես փոքրիկ քաղաքի քնկոտ, անհետաքրքրասեր բնակիչներն ընդհանրապես չնկատեցին, որ կարծեցյալ կաթվածահարի կարծեցյալ թոռը տարիների հետ չի մեծանում, ու նրա հասկագույն մազերը ոչ այլ ինչ են, եթե ոչ հրաշալի պատրաստված կեղծամ: Քանի որ Կար-

տոֆիլային Էլֆը սկսել էր ճաղատանալ իր նոր կյանքի առաջին իսկ տարում, ու շուտով գլուխն այն աստիճան լերկ ու փայլուն դարձավ, որ խստավար Աննան՝ նրա տնտեսուհին, երբեմն այդ ծիծաղելի կլորությունը ափի մեջ առնելու ցանկություն էր ունենում: Մնացած բաներում քիչ էր փոխվել. միայն, թերեւս, փորն էր մի քիչ ծանրացել, ու շառագույն թելիկներ էին երեւում մգացած, թմբլիկ քթին, որին դիմափոշի էր քսում տղայի դերը ստանձնելուց առաջ: Բացի այդ, եւ՛ Աննան, եւ՛ բժիշկը գիտեին, որ սրտի նոպաները, որով թզուկը տառապում էր, բարի վախճան չեն ունենա:

Նա խաղաղ ու աննկատ ապրում էր իր երեք սենյակներում, գրադարանից շաբաթական երեք-չորս գիրք էր դուրս գրում, առավելապես՝ վեպեր. սկսեց մի սեւ, դեղնաչյա կատու պահել, քանի որ մահու չափ վախենում էր մկներից, որ երեկոյան սկսում էին մանրիկ խշխշացնել անկյունում, պահարանի ետեւը, ասես փայտակոճեր էին գլորում. շատ ու ախորժակով ուտում էր, երբեմն նույնիսկ գիշերն էր վեր թռչում ու սառը հատակին ոտքերը քստքստացնելով, փոքրամարմին ու սարսափելի՝ իր երկար գիշերանոցի մեջ, տղեկի պես խցկվում էր պահարանը՝ շոկոլադե թխվածքաբլիթ վերցնելու: Եվ ավելի ու ավելի հազվադեպ էր հիշում իր սերն ու Դրաուզիտոնում անցկացրած առաջին սարսափելի օրերը:

Ասենք, սեղանի դարակում, կոկիկ դարսված, նուրբ թղթի վրա տպված ազդագրերի արանքում, դեռ պահպանվում էր մարմնագույն փոստաթղթի թերթիկը՝ վիշապակերպ ջրանիշերով, գրոտած սրանկյուն, անընթեռնելի ձեռագրով. «Թանկագին պարոն Դոբսոն: Ստացել եմ Ձեր նաեւ երկրորդ նամակը, որով ինձ կանչում եք Ձեզ մոտ՝ Դ: Վախենամ, որ սարսափելի թյուրիմացություն է կատարվել: Փորձեք ներել ու մոռանալ ինձ: Վաղը ես եւ ամուսինս մեկնում ենք Ամերիկա ու հավանաբար շուտ չենք վերադառնա: Չգիտեմ էլ ինչ գրեմ Ձեզ, իմ խեղճ Ֆրեդ»:

Հենց այդ ժամանակ էլ սրտի առաջին նոպան եղավ: Այդ ժամանակից զարմանքի մի հեզ շող մնաց նրա աչքերում: Եվ դրանից հետո օրեր շարունակ նա հետուառաջ էր անում տանը՝ արցունքները կուլ տալով ու թափահարելով դողացող փոքրիկ ձեռքը:

Իսկ հետո Ֆրեդը սկսեց մոռանալ, սիրեց հարմարավետությունը, որ մինչ այդ անծանոթ էր եղել նրան, սիրեց բոցի երկնագույն շղարշները բուխարու ածուխների վրա, փոշոտ փոքրիկ սկիհները՝ կիսակլոր դարակներին, փորագրանկարը՝ պատուհանների միջեւ՝ սենբեռնարը՝ տափաշիշը վզափոկից կախ ու թուլացած ճամփորդը՝ սեւ ժայռակողին: Հազվադեպ էր հիշում իր նախկին կյանքը: Միայն երազում երբեմն տեսնում էր, որ աստ-

դաշատ երկինքը լցվում է ճոճածողերի թրթռոցով, ապա նրան փակում էին սեւ արկղում, որի պատերի միջով լսում էր Ծոկի երգեցիկ, անտարբեր ձայնը ու չէր կարողանում գտնել հատակի դռնակը, խեղդվում էր կպչուն կիսախավարում, իսկ աճպարարի ձայնը, ավելի ու ավելի տխրածայն, հեռանում էր, հալվում, ու Ֆրեդը տնքոցով արթնանում էր իր ընդարձակ մահճակալի վրա՝ խաղաղ ու մթին ննջարանում, որտեղ նարդոսի թույլ բույր էր կանգնած, շնչակտուր ու փոքրիկ բռունցքը սայթաքող սրտին սեղմած, երկար նայում էր վարագույրի գունատ բծին:

Տարիների հետ ավելի ու ավելի թույլ էր հառաչում նրա մեջ կնոջ կարոտը, ասես Նորան մի ակնթարթում քաշել էր ողջ տապը, որ ժամանակին տանջել էր նրան: Ձիշտ է, կային եւ օրեր, գարնանային որոշ աղոտ երեկոներ, երբ թզուկը, ամաչկոտ հագնելով կարճ շալվարն ու ճաղատը ծածկելով շեկ կեղծամով, դուրս էր գալիս տնից եւ աղջամուղջի կիսամութում, դաշտերը եզերող արահետով մանրաքայլ անցնելիս, ծաղկած մոշի թփի տակ պահված՝ հանկարծ քարանում ու տառապանքով նայում էր սիրահարների մշուշոտ ուրվապատկերին: Իսկ հետո դա էլ անցավ, եւ ընդհանրապես դադարեց տեսնել նրանց: Միայն երբեմն ճերմակահեր, սրաթափանց աչքերով բժիշկն էր այցելում եւ շախմատի տախտակի առաջ, Ֆրեդի դիմաց նստած՝ հետաքրքրությամբ ու հաճույքով զննում էր նրա փափուկ, փոքրիկ ձեռքերը, քայլը մտմտալիս կնճռոտվող ուռուցիկ ճակատով թզուկի բուլդոգային դեմքը:

Անցավ ութ տարի: Կիրակնօրյա առավոտ էր: Սեղանին Ֆրեդին էր սպասում թութակի գլխի տեսքով կափարիչով ծածկված կակաոյի գավաթը: Պատուհանից ներս էր հորդում խնձորենիների արեւոտ կանաչը: Հաստլիկ Աննան փոշին էր վերցնում փոքրիկ պիանոլայի կափարիչից, որի վրա թզուկը երբեմն օրորուն վալսեր էր նվագում, նարնջի մուրաբայի ամանի վրա նստում էին ճանճերն ու իրար քսում առջեւի թաթերը:

Ներս մտավ Ֆրեդը. դեռ լրիվ չէր արթնացել, բոբիկ ոտքերին վանդականախշ թեթեւ կոշիկներ էին, հագին՝ դեղին կրկնակապերով սեւ, կարճլիկ խալաթ: Արեւից աչքերը կկոցելով ու ճաղատը շոյելով՝ նստեց սեղանի մոտ: Աննան գնացել էր եկեղեցի: Ֆրեդը մոտ քաշեց պատկերազարդ կիրակնօրյա թերթն ու, մերթ սեղմելով շրթունքները, մերթ փքելով, երկար նայում էր մրցանակակիր շնածագերին, կարապային տառապանքով խոնարհված ռուս բալետային պարուհուն, բոլորին խաբած ֆինանսիստի ցիլինդրին ու հաստ մռութին: Սեղանի տակ կատուն, մեջքը կորացնելով, քսվում էր նրա բաց կոճերին: Ֆրեդը խմեց կակաոն, հորանջելով վեր կա-

ցավ. գիշերը զզվելի էր, դեռ երբեք սիրտն այդպես չէր չարչարել, հիմա ծուլանում էր հագնվել, ոտքերը տհաճ սառչում էին: Տեղափոխվեց պատուհանի տակի բազկաթոռին, կծիկ դարձավ եւ այդպես նստեց-մնաց՝ ոչնչի մասին չմտածելով, իսկ կողքին ծգմզվում էր կատուն՝ բացելով փոքրիկ վարդագույն երախը:

Նախամուտքում ծնգաց զանգը:

«Բժիշկն է»՝ անտարբեր մտածեց Ֆրեդն ու հիշելով, որ Աննան եկեղեցում է, գնաց դուռը բացելու:

Դռնից ներս հորդեց արեւը: Ճեմին կանգնած էր մի բարձրահասակ, ամբողջովին սեւազգեստ տիկին: Ֆրեդը հետ թռավ, ինչ-որ բան քրթմնջաց ու խալաթի փեշերն իրար բերելով՝ նետվեց ներսի սենյակները: Վազելիս կոշիկը թռավ ոտքից, չհասցրեց վերցնել՝ պետք էր արագ թաքնվել, միայն թե չհասցնեն նկատել, որ թզուկ է: Ընդհատ շնչելով՝ կանգ առավ հյուրասենյակի մեջտեղում: Ա՛խ, պետք էր պարզապես փակել մուտքի դուռը: Եվ ո՞վ կարող էր այցելել նրան: Երեւի սխալմունք է:

Ու հանկարծ պարզորոշ լսեց մոտեցող քայլերի ձայնը: Հյուրասենյակից նետվեց ննջարան, ուզում էր կողպել դուռը, բայց բանալի չուներ: Երկրորդ կոշիկը մնացել էր հյուրասենյակի գորգին:

- Սարսափելի՛ է,- հառաչեց Ֆրեդն ու ականջ դրեց:

Քայլերը մտան հյուրասենյակ: Այդ ժամանակ թզուկը տնքոցով վազեց զգեստապահարանի մոտ. թաքնվե՛լ...

Ծանոթ ձայնն անկասկած նրա անունը տվեց, ու դուռը բացվեց:

- Ֆրե՛դ, ինչո՞ւ եք այդպես վախենում ինձնից:

Բոբիկ, քրտնած ճաղատով, սեւ խալաթը հագին թզուկը, դեռ կողպեքի օղակը բռնած, քարացավ պահարանի մոտ: Միանգամից հիշեց նարնջագույն ձկնիկները ապակուց անդին:

Կինն այդ տարիներին հիվանդագին ծերացել էր: Աչքերի տակ ծիթապտղի գույնի ստվերներ էին, վերին շրթունքի մազիկներն ավելի էին սեւացել: Ու սեւ լայնեզր գլխարկից, սեւ զգեստի խստաբարո ծալքերից փոշեպատ ու վշտալի ինչ-որ շունչ էր սփռվում:

- Երբեք չէի մտածի...,- դանդաղ սկսեց Ֆրեդը՝ հոնքատակից նայելով կնոջը:

Նորան բռնեց նրա ուսերը, դարձրեց լույսի կողմը, անհագ ու տխուր աչքերով սկսեց զննել դիմագծերը: Թզուկը շփոթված աչքերն էր թարթում՝ տառապագին ափսոսալով, որ առանց կեղծամի է ու զարմանալով Նորայի հուզմունքի վրա: Այնքան վաղուց էր դադարել մտածել նրա մասին, որ

հիմա տխրությունից ու զարմանքից բացի ոչինչ չէր զգում: Նորան փակեց աչքերն ու նրա ուսերը չթողնելով՝ թեթեւ հրեց թզուկին ու շրջվեց դեպի լուսամուտը:

Ֆրեդը հազաց.

- Ձեզ լրիվ կորցրել էի տեսադաշտից: Ասացեք, ինչպե՞ս է Ծոկը:

- Աճպարարություն է անում,- ցրված պատասխանեց Նորան:- Բոլորովին վերջերս ենք վերադարձել Լոնդոն:

Նա, առանց գլխարկը հանելու, նստեց պատուհանի մոտ դրած բազկաթոռին ու շարունակեց տարօրինակ սեւեռումով նայել Ֆրեդին:

- Այսպես ուրեմն, Ծոկը...,- արագ խոսեց թզուկը՝ անհարմարություն զգալով նրա հայացքից:

- Նույնն է,- ասաց Նորան եւ շողացող աչքերը նրանից չկտրելով՝ սկսեց արագ հանել ու ճմռթել սնդուսե սեւ, սպիտակ աստառով ձեռնոցները:

«Մի՞թե նորից»,- կցկտուր մտածեց թզուկը: Ստքով անցան ձկնիկներով բանկան, օծանելիքի բույրը, կոշիկների զմրուխտե փուփուլը:

Նորան վեր կացավ. ձեռնոցները սեւ գնդիկների պես գլորվեցին հատակին:

- Այգին փոքր է, բայց խնձորենիներ կան,- ասաց Ֆրեդը՝ շարունակելով տարակուսել. մի՞թե երբեւէ կարող էի... Լրիվ դեղնել է: Եվ ինչո՞ւ է անընդհատ լռում:

- Բայց ես հազվադեպ եմ դուրս գալիս,- ասաց նա՝ կամաց ճոճվելով աթոռի վրա ու տրորելով ծնկները:

- Ֆրե՛դ,- ասաց Նորան,- գիտե՞ք ինչու եմ եկել ձեզ մոտ:

Նա կիպ մոտեցավ, Ֆրեդը մեղավոր ժպիտով ցած սահեց աթոռից ու փորձեց խույս տալ:

Այդ ժամանակ կինը կամացուկ ասաց.

- Ախր ես որդի ունեի ձեզնից...

Թզուկը քարացավ. հայացքը սառել էր գավաթի վրա վառվող փոքրիկ արեւաբծին: Երկչոտ, ապշահար ժպիտ խաղաց շրթունքների անկյուններում, վարդագույնը տարածվեց այտերի վրա:

- Իմ... որդին...

Ու վայրկենապես հասկացավ ամեն ինչ, ողջ իմաստն իր կյանքի, իր տեւական տխրության, գավաթին ընկած արեւաբծի:

Նա դանդաղ բարձրացրեց հայացքը: Նորան կողքանց նստել էր աթոռին ու աղեկտուր լալիս էր: Արտասուքի պես շողում էր նրա գլխարկի քորոցի ապակե գլխիկը: Կատուն քնքուշ մռռոցով քսվում էր ոտքերին:

Թզուկը մոտ վազեց, հիշեց վերջերս կարդացած վեպը:

- Մի վախեցեք, ես նրան ձեզնից չեմ խլի: Ես այնքա՛ն երջանիկ եմ:

Կինը արցունքների մշուշի միջով նայեց նրան: Ուզում էր ինչ-որ բան բացատրել, բայց կուլ տվեց, տեսավ, թե ինչ քնքուշ ու ծնծագին լույսով է ամբողջովին բռնված թզուկն ու ոչինչ չասաց:

Վեր կացավ, հատակից շտապ վերցրեց ձեռնոցների սեւ գնդիկները:

- Ահա, հիմա արդեն գիտեք... Ուրիշ ոչինչ հարկավոր չէ... Ես գնամ:

Անսպասելի միտքը խայթեց Ֆրեդին: Երջանկության դողին խառնվեց անտանելի ամոթը: Խալաթի կրկնազարդերը քաշքշելով՝ հարցրեց.

- Իսկ նա ինչպիսի՞ն է: Նման չի՞...

- Ո՛չ, ո՛չ. մեծ է, բոլոր տղաների պես,- արագ ասաց Նորան ու նորից հեծկլտաց:

Ֆրեդը խոնարհեց թարթիչները:

- Ես կուզեի տեսնել նրան:

Հետո գլխի ընկավ.

- Ա՛խ, հասկանում եմ՝ նա չպիտի իմանա, որ ես այսպիսին եմ: Բայց գուցե կազմակերպեք...

- Այո՛, անպայմա՛ն, անպայմա՛ն, - հապճեպ, համարյա չոր կրկնում էր Նորան՝ դեպի դուռը դիմելով:- Երբեւէ կկազմակերպենք... Պիտի գնամ... Գնացքը... Քսան րոպեի ճանապարհ է մինչեւ կայարան:

Դռան մեջ շրջվելով՝ նա վերջին անգամ ծանր ու ագահ հայացքով կառչեց Ֆրեդի դեմքից: Արեւը դողում էր թզուկի ճաղատին, ականջները թափանցիկ վարդագունել էին: Նա ոչինչ չէր հասկանում ապշանքից ու երջանկությունից: Ու երբ կինը հեռացավ, դեռ երկար կանգնել էր սենյակի մեջտեղում՝ վախենալով, որ անզգույշ շարժումով կթափվի պռնկեպռունկ լցված սիրտը: Փորձում էր պատկերացնել որդուն ու միայն իրեն էր պատկերացնում՝ դպրոցականի պես հագնված, բացգույն կեղծամով: Իր կերպարն ինչ-որ կերպ փոխանցեց որդուն ու դադարեց իրեն թզուկ զգալ:

Ֆրեդը տեսնում էր ինչպես է մտնում տուն, հանդիպում որդուն, հպարտության սուր զգացումով շոյում նրա բացգույն մազերը... Հետո նրա ու Նորայի հետ,- հիմա՛ր, ինչպես վախեցավ, որ ինքը կխլի որդուն,- դուրս է գալիս փողոց ու փողոցում...

Ֆրեդը ափերը խփեց ազդրերին: Սոռացավ նույնիսկ Նորայից հասցեն հարցնել:

Եվ այդ ժամանակ մի խելագար, անհեթեթ խուճապ սկսվեց: Նա նետվեց ննջարան, սկսեց շնչակտուր հագնվել. հագավ ամենալավը՝ օսլայած

վերնաշապիկ, շերտավոր շալվար, ժամանակին Փարիզում կարված պիջակ, եւ անընդհատ շարունակ ժպտում էր, եղունգները ջարդում ծիգ դարակների փականներին ու երկու անգամ ստիպված նստեց՝ այնպես ուռչում ու տրոփում էր սիրտը, հետո նորից ցատկոտելով կտրեց սենյակը՝ գտավ կաթսայիկ-գլխարկը, որ այնքան վաղուց չէր դրել, ու վերջապես, հպանցիկ նայելով հայելուն, որի մեջ ինչ-որ բարետես, խիստ ու նրբագեղ հագնված պարոն երեւաց, Ֆրեդը ներքեւ վազեց սանդուղքի աստիճաններով՝ արդեն բռնված նոր ու շլացուցիչ մտքով. Նորայի հետ մեկնել Լոնդոն,- կհասնի նրա ետեւից,- ու հենց այս երեկո տեսնել որդուն:

Լայն, փոշոտ ճանապարհը ուղիղ կայարան էր տանում: Ճանապարհը դատարկ էր, ինչպես սովորաբար լինում է կիրակի օրերին, բայց հանկարծ անկյունից կրիկետի թաթմանը ձեռքին մի տղեկ դուրս պրծավ: Հենց նա էլ առաջինը նկատեց թզուկին: Զարմանքից իր գունավոր կեպիին շպպացրեց՝ նայելով Ֆրեդի հեռացող մեջքին ու մկնագույն զանկապանների առկայծմանը:

Եվ անմիջապես Աստված գիտի որտեղից ուրիշ տղաներ էլ հայտնվեցին ու բերանները բաց սկսեցին զգույշ հետապնդել թզուկին: Նա ավելի ու ավելի արագ էր քայլում՝ նայելով ոսկե ժամացույցին, ծիծաղելով ու հուզվելով: Արեւից սիրտը մի քիչ խառնում էր: Իսկ տղեկները շատանում ու շատանում էին, եւ սակավաթիվ անցորդներն ապշած կանգ էին առնում, ինչ-որ տեղ զնգուն գեղգեղացին ժամացույցի զարկերը, քնկոտ քաղաքը կենդանություն էր առնում, ու հանկարծ բռնվեց անզուսպ, վաղուց թաքցրած ծիծաղով:

Անհամբերությունն այլեւս զսպել չկարողանալով՝ Կարտոֆիլային Էլֆը սկսեց վազել: Տղեկներից մեկը առաջկտրուկ արեց, նայեց նրա դեմքին, մյուսն ինչ-որ բան գոռաց կոպիտ, կոկորդային ձայնով: Ֆրեդը, փոշուց կնճռոտվելով, վազում էր, ու հանկարծ թվաց, որ խմբով իրեն հետեւող տղաները, բոլորը, իր որդիներն են՝ ուրախ, վարդագույն այտերով, բարեկազմ, եւ նա մոլորված ժպտաց՝ ջանալով մոռանալ սիրտը, որ շիկացած սեպի պես խրվում էր կուրծքը:

Հեծանվորդը, շողշողուն անիվների վրա, գնում էր կողքով, խոսափողը բերանին սեղմած՝ ոգեւորում նրան, ինչպես մրցումների ժամանակ: Կանայք դուրս էին գալիս տնից, կանգնում շեմին, արեւից կկոցում աչքերը, բարձր ծիծաղում էին՝ մատնացույց անելով վազող թզուկին: Արթնացան փոքրիկ քաղաքի բոլոր շները, խեղդուկ եկեղեցում ծխականներն ակամա ականջ էին դնում հաչոցին, աշխույժ հարայհրոցին: Եվ ամբոխն անընդ-

հատ խտանում էր վազող թզուկի շուրջը: Ստածում էին, թե այդ ամենը մի հրաշալի կատակ է, կրկեսային գովազդ, նկարահանում...

Ֆրեդը սկսեց սայթաքել, ականջները խշշում էին, ճարմանդը խրվում էր կոկորդը, շնչելու օդ չկար: Ծիծաղի պոռթկումը, աղաղակները, ոտքերի թփթփոցը խլացնում էին նրան: Բայց ահա քրտինքի մշուշի միջով իր առաջ տեսավ սեւ զգեստը: Նորան, արեւի շողերի մեջ, դանդաղ քայլում էր աղյուսե պատի երկայնքով: Եվ ահա շրջվեց, կանգ առավ: Թզուկը վազքով հասավ նրան, կառչեց փեշերի ծալքերից...

Երջանիկ ժպիտով ներքեւից նայեց նրան, փորձեց ինչ-որ բան ասել եւ անմիջապես էլ զարմացած վեր քաշելով հոնքերը՝ նստեց մայթին: Շուրջը աղմկոտ շնչում էր ամբոխը: Ինչ-որ մեկը հասկանալով, որ այդ ամենը կատակ չէ, կռացավ թզուկի վրա ու կամացուկ սուլեց, հանեց գլխարկը: Նորան անտարբեր նայում էր Ֆրեդի պստիկ մարմնին, որ նման էր ձեռնոցի սեւ գնդիկի: Նրան հրեցին: Ինչ-որ մեկը բռնեց արմունկը:

- Թողեք ինձ,- թույլ-թույլ ասաց Նորան,- ես ոչինչ չգիտեմ... Մի քանի օր առաջ որդիս մահացավ...

Միխայիլ ԲՈՒԼԳԱԿՈՎ

ԲԺՇԿԻ ԱՆԵՐԵՎԱԿԱՅԵԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ

Բժիշկ Ն-ը՝ ընկերս, անհետացավ: Մի վարկածով՝ սպանել էին, մյուսով՝ խեղդվել էր Նովոռոսիյսկում նավ նստելիս, երրորդ վարկածով՝ ողջ-առողջ է ու Բուենոս-Այրեսում է:

Ինչեւէ, ճամպրուկը, որ պարունակում էր 3 գիշերաշապիկ, բժիշկ Ռաբովի գրպանի դեղագիրը (1916 թ. հրատ.), երկու զույգ գուլպա, պրոֆեսոր Մեչնիկովի լուսանկարը, մի քարացած ֆրանսիական բուլկի, «Մարյա Լուսեւան արտասահմանում» վեպը, փոշի պիրոմիդոնի 6 ծրար՝ 0,3 գրամով, ու բժշկի նոթատետրը, ընկավ նրա քրոջ ձեռքը:

Քույրը նոթատետրը փոստով ուղարկեց ինձ, նամակի հետ միասին, որը սկսվում էր հետեւյալ բառերով. «Դուք գրող եք ու նրա ընկերը, տպագրեք, քանզի հետաքրքիր է» (Հետո «Ընթերցանության օգուտի մասին» թեմայով կանացի դատողություններ են՝ վրան շաղ եկած արցունքի բծերով):

Չեմ կարծում, որ գրառումներն առանձնապես հետաքրքիր են. որոշ հատվածներ բացարձակ անընթեռնելի են (բժիշկ Ն-ի ձեռագիրը նողկալի է), բայցեւայնպես հրապարակում եմ բժշկի նոթատետրի անկապ գրառումներն առանց որեւէ փոփոխության՝ միայն գլուխների բաժանելով ու վերնագրելով:

Ինքնին հասկանալի է, որ հոնորարն ուղարկելու եմ բժիշկ Ն-ին, Բուենոս-Այրես, հենց որ ստույգ տեղեկություններ ստանամ, որ իրոք այնտեղ է:

Ի. Անվերնագիր՝ պարզապես աղաղակ

Ինչո՞ւ ես հալածում ինձ, ճակատագի՛ր: Ինչո՞ւ հարյուր տարի առաջ չծնվեցի: Կամ ավելի լավ է՝ հարյուր տարի հետո: Իսկ ամենալավը՝ որ ընդհանրապես ծնված չլինեի: Այսօր մի տիպ ասաց. «Բայց հո՛ ձեր թոռներին պատմելու բան կունենաք»: Ապուշի մե՛կը: Կարծես միակ երազանքս օր ծերության թոռներիս ամեն կարգի ցնդաբանություն պատմելն է այն մասին, թե ինչպես էի կախվել ցանկապատից...

Ընդ որում՝ ոչ միայն թոռներ, նույնիսկ երեխաներ չեմ ունենա, քանի որ այսպես շարունակվելու դեպքում ինձ անկասկած կսպանեն մոտակա ժամանակներս...

Գրողի ծոցը թոռները: Իմ մասնագիտությունը մանրէաբանությունն է: Իմ սերը՝ կանաչ լուսամփոփն ու գրքերն իմ աշխատասենյակում: Ես մանկուց ատել եմ Ֆենիմոր Կուպերին, Շեռլոկ Հոլմսին, վագրերին ու հրացանի կրակոցները, Նապոլեոնին, պատերազմներն ու նավաստի Կոշկայի տարատեսակ կտրիճական սխրանքները:

Ես այդ ամենի հակում չունեմ: Ես մանրէաբանության հակում ունեմ:

Ընդսմին...

Կանաչ լամպը մարեց: «Պարուրամանրէական հիվանդությունների քիմիաթերապիան» ընկած է հատակին: Նրբանցքում կրակում են: Ինձ զորակոչել է թվով հինգերորդ իշխանությունը:

.....

II. Ցողը փրկում է կյանքը

Երեկո ...դեկտեմբերի

Հինգերորդ իշխանությանը դուրս շպրտեցին, իսկ ես քիչ էր մնում կյանքից զրկվեի... Ցերեկվա ժամը հինգի կողմերը ամեն ինչ իրար խառնվեց: Սառնամանիք: Արեւելյան արվարձանում կտկտում են գնդացիրները: «Նրանցն» են: Արեւմտյան արվարձանում «մերոնք» են: Հրացանավոր ինչ-որ կերպարանքներ են վազվզում: Ընդհանրապես ցնդաբանություն է: Կառքեր են անցնում: Լսում եմ, ասում են. «Նոր իշխանություն է...»:

«Ձեր զորամասը (ի՞նչ իմը, գրողը տանի) Վլադիմիրսկիում է»: Վազում եմ Վլադիմիրսկիով ու բան չեմ հասկանում: Ինչ-որ խառնաշփոթ է: Բոլորին հարցնում եմ՝ որտեղ է «իմ» զորամասը... Բայց բոլորը թռչում են իմ կողքով, ու ոչ ոք չի պատասխանում: Ու հանկարծ տեսնեմ՝ կարմրապոչ գդակավորներ են կտրում փողոցն ու գոռում են.

- Բռնի՛ դրան: Բռնի՛:

Ծուրջս նայեցի՝ ո՞ւմ:

Պարզվեց՝ ինձ:

Նոր միայն հասկացա, թե ինչ պիտի անեմ. պարզապես փախչել տուն: Ու փախա՛: Ինչ երջանկություն է, որ գլխի ընկա ծլկել նրբանցք: Իսկ այնտեղ այգի է: Ցանկապատ: Ես՝ ցանկապատի վրայով: Դրանք գոռում են.

- Կանգնի՛:

Բայց ինչքան էլ անփորձ եմ այդ բոլոր պատերազմներում, բնազդով հասկացա, որ կանգնել չի կարելի: Ու անցա ցանկապատը: Հետեւիցս՝ թը՛խկ, թը՛խկ: Ու չգիտես որտեղից մի չար, բուրդը բիզ-բիզ կանգնած սպիտակ շուն հարձակվեց վրաս: Բռնեց շինելս, ծվեն-ծվեն է անում: Կախվե-

ցի ցանկապատից: Մի ձեռքով ինձ եմ պահում, մյուսով՝ յոդի բանկան (200 գր.): Հրաշալի գերմանական յոդ է: Ստածելու ժամանակ չկա: Թիկունքից՝ ոտքերի թփթփոց: Ծունն ինձ կկործանի: Թափ առա ու բանկայով հասցրի գլխին: Ծունը ակնթարթորեն շիկակարմիր ներկվեց, վնգստաց ու փախավ: Ես՝ այգու միջով: Դռնակ: Նրբանցք: Լռություն: Դեպի տուն...

...Մինչեւ հիմա շունչս տեղը չի գալիս:

Գիշերը հարավում կրակում էին թնդանոթներից, բայց ումն են՝ արդեն չգիտեմ: Ճա՛տ ափսոս էր յոդը:

III. Լույս 3-իգիշերը

Ինչ-որ աննկարագրելի բան է կատարվում... Նոր իշխանությանն էլ քշեցին: Աշխարհում նրանից վատ բան լինել չէր կարող: Փառք Աստծո: Փառք Աստծո: Փա՛ռք...

Ինձ զորակոչեցին երեկ: Չէ՛, նախորդ օրը: Մի լրիվ օր անցկացրի սառած կամրջի վրա: Գիշերը՝ 150 զրոյից ցածր (ըստ Ռեոմյուրի), քամու տակ: Ամբողջ գիշեր սուլում էր կամրջի աչքերում: Քաղաքի լույսերը վառվում էին մյուս ափին: Ավանը այս ափին է: Մենք մեջտեղն էինք: Հետո բոլորը փախան քաղաք: Երբեք այդպիսի հրմշտոց չեմ տեսել: Հեծելակներ: Հետեւակներ: Թնդանոթներ էլ էին անցնում, դաշտային խոհանոցներ: Խոհանոցի վրա՝ գթության քույր: Ասացին՝ ինձ Գալիցիա են տանում: Միայն այդ ժամանակ գլխի ընկա, որ պետք է փախչել: Բոլոր փեղկերը փակ էին, բոլոր շքամուտքերը՝ մեխած: Վազում էի թմբլիկ սպիտակ սյուներով եկեղեցու մոտով: Հետեւիցս կրակեցին: Բայց չկպան: Թաքնվեցի բակում, ծածկի տակ ու երկու ժամ նստեցի այնտեղ: Երբ լուսինը ամպի տակ անցավ, դուրս եկա: Մեռյալ փողոցներով վազում էի տուն: Ոչ մեկը չհանդիպեց: Վազելիս մտածում էի իմ ճակատագրի մասին: Նա ծիծաղում է վրաս: Ես բժիշկ եմ, ատենախոսություն եմ գրում, բայց գիշերով, առնետի պես նստել եմ օտար բակում: Ժամանակ առ ժամանակ ափսոսում եմ, որ գրող չեմ: Բայց ո՞վ կհավատա: Համոզված եմ՝ եթե գրառումներս որեւէ մեկի ձեռքն ընկնեն, կմտածի, որ այդ ամենը հորինել եմ:

Առավոտվա կողմ կրակում էին թնդանոթներից:

IV. Իտալական հարմոնիկը

15-ը փետրվարի

Այսօր հեծյալ գունդ ժամանեց, զբաղեցրին ամբողջ թաղամասը: Երեկոյան 2-րդ էսկադրոնից մեկը ընդունելության եկավ (էմֆիզեմա): Հերթին

սպասելիս ընդունարանում իտալական մեծ հարմոնիկ էր նվագում: Հրաշալի է նվագում այդ էմֆիզեմայով տառապողը («Մանջուրիայի բլուրներին»), բայց այցելուներն ահավոր անհանգիստ են, ու կատարելապես անհնար է լսել: Նրան արտահերթ ընդունեցի: Բնակարանս նրան շատ դուր եկավ: Ուզում է դասակապետի հետ տեղափոխվել ինձ մոտ: Հարցնում է՝ գրամոֆոն ունե՞մ...

Էմֆիզեմայով տառապողի համար դեղատանը դեղը պատրաստեցին քսան րոպեում ու ձրի: Հրաշալի է, ազնիվ խոսք:

17-ը փետրվարի

Այս գիշեր քնեցի. գրամոֆոնը ներքեւում փչացել էր:

Թղթեր ճարեցի՝ 18 կնիքներով, առ այն, որ բնակտարածությունս չի կարելի խտացնել, եւ փակցրի շքամուտքի, աշխատասենյակի ու ճաշասենյակի դռներին:

21-ը փետրվ.

Բնակտարածությունս խտացրին...

22-ը փետրվ.

...Ու զորակոչեցին:

... մարտի

Հեծյալ գունդը գնաց կռվելու ինչ-որ ատամանի դեմ: Գնդի ետեւից սայլի վրա գրամոֆոնն էր գնում ու նվագում էր «Դուք երգեր եք խնդրում»: Ի՜նչ հաճելի գյուտ է, համենայնդեպս:

Առավոտվա կողմ թնդանոթներից կրակում էին:

V

.....

VI. Հրետանային նախապատրաստություն ու սապոգներ

.....

VII

Իհարկե: Ինձ տանում են:

.....

...Թնդանոթներից.....
...եւ.....

VIII. Խանկալիի կիրճը

Սեպտեմբեր

Ժամանակ առ ժամանակ ինձ թվում է, որ այս ամենը երազ է: Ահեղն Աստված կիտել է լեռները: Կիրճերում մշուշ է լողում: Լեռների բացվածքներում ամրոպաբեր ամպեր են: Ու խելառ խփվում է քարերին

...ալիքը պղտոր ու մռայլ.
Չար չեչենն է զգույշ սողում ափ
Ու սրում դաշույնը:

Ուզուն-Հաջին՝ Չեչեն աուլում: Աուլը հարթ ծգվում է լեռների կապտավուն ծխամշուշի ֆոնին: Հարթահատակ Խանկալիի կիրճում ճամփաներին փոշու ամպ են բարձրացնում արաբաները, երկանիվ սայլերը: Կիզլյարոգրեբենսկի կազակները կանգնել են ձախ թեւում, հուսարները՝ աջ: Տրորված եգիպտացորենի արտերում մարտկոցներն են: Կոտորակառումբերով խփում են Ուզունին: Չեչենները չարքերի պես են կռվում «սպիտակ չարքերի» դեմ: Գետակի ափին, ուր ընկած է ծիու փքված դին, երկանիվ սայլակի վրա փողփողում է կարմրախաչ դրոշը: Այդտեղ, ինձ մոտ են հասցնում արնաթաթախ կազակներին, ու նրանք մեռնում են իմ ձեռքերի վրա:

Ամպրոպաբեր ամպը լեռների հետեւն անցավ: Արեւը կրակ է թափում, ու ես ագահորեն կլլում եմ տափաշշի գարշահոտ ջուրը:Գթության քույրերը դեսուդեն են նետվում, բարձացնում սայլակների ծղոտին անզոր հակված, սպիտակ վիրակապերով պատած գլուխները, ջուր են տալիս:

Գնդացիրները համերաշխ ճարճատում են երամի պես:

Չեչենները խփում են աուլից: Կատաղի են կռվում: Բայց ոչինչ չի ստացվի: Երկու քոսոտ երեք դյույմանոցով ի՞նչ պիտի անեն կուբանյան հետեւակի երեք մարտկոցների դեմ...

Կոկորդային աղաղակներով սլացավ նրանց կտրիճ հեծելագունդը տրորված, վառված եգիպտացորենային տարածություններով: Թեւից հարվածեց թերեքյան կազակներին: Նրանք քիչ էր մնում փախչեին: Բայց վրա հասան կուբանցիները, նորից կտկտացին գնդացիրներն ու հեծյալ-

ներին քշեցին եգիպտացորենի դաշտերից այն կողմ, սարահարթը, որտեղ հեռադիտակով երեւում են դատապարտված հյուղերը:

Գիշեր

Ավելի ու ավելի խուլ է հրածգությունը: Աղջամուղջը՝ խիտ, ստվերները՝ խորհրդավոր: Հետո՝ թավշյա վարագույր եւ անծայրածիր աստղային օվկիանոս: Առվակը բարկացած ծփում է: Փոշտում են ձիերը, իսկ աջ կողմում՝ կուբանյան գումարտակներում թարթելով վառվում են խարույկները: Որքան մութ, այնքան սարսափելի ու տխուր է: Մեր խարույկը չթչթում է: Ծուխը մեկ իմ վրա է գալիս, մեկ հեռանում: Թրթռացող լույսի մեջ կազակների դեմքերը փոփոխվող են, տարօրինակ: Խավարից պոկվում, նորից սուզվում են մթին անդունդը: Իսկ գիշերը ծավալվում է՝ անծայր, սեւ, սողացող: Չարություն է անում, վախեցնում է: Կիրճը երկար է: Եվ անհայտություն է գիշերային թավիշներում: Թիկունք չունենք: Ու սկսում է թվալ, որ ետեւում կաղնու թավուտը կենդանանում է: Գուցե այնտեղ արդեն սողո՞ւմ են ցողաթաց խոտին սեղմված, չերքեզկայով ստվերները: Սողո՛ւմ են, սողո՛ւմ են... Ու չես հասցնի աչք թարթել՝ դուրս կթռչեն կատաղի ստվերները, ատելությունից վառվելով, ոռնոցով, սուլոցով եւ... ամե՛ն:

Թո՛ւ, գրողը տանի:

- Դժվար է երաշխավորել,- գիշերվա անկայունության ու նենգության մասին իմ դիլետանտական դատողություններին պատասխանում է կրակի մոտ նստած Թերեքյան 3-րդ հեծգնդի կազակը,- թեւքից վրա կտան: Պատահել է:

Ա՜խ, լեզուդ չորանա: «Թեւքի՛ց»: Տե՛ր Աստված: Սա ի՞նչ բան է: Ձիերը թրիք են ծամում, հրացանների փողերին՝ կրակի ցոլքեր: «Դժվար է երաշխավորե՛լ»: Աշուշները՝ խավարի մեջ: Ուզուն-Հաջին՝ ճակատագրական առլում:

Ես, ի՞նչ է, Լերմոնտո՞վն եմ: Սա, կարծես, նրա գծով է: Ե՞ս ինչ կապ ունեմ:

Փլվում եմ բրեզենտի վրա, կծկվում շինելի մեջ ու նայումադամանդե ցայտքերով թավշյա գմբեթին: Եվ իմ գլխավերեւում անմիջապես թեւածում է թախծի աղոտ-ճերմակ թռչունը: Հայտնվում է կանաչ լամպը, լույսի շրջանակը՝ սնդուսած էջերին, աշխատասենյակի պատերը... Ամեն ինչ գլխիվայր թռչում է ներքեւ ու գրողի ծոցը: Հազարավոր վերստեր հեռու, ահարկու գիշերվա մեջ: Խանկալիի կիրճում...

Համենայնդեպս քունը հաղթում է: Բայց ինչպիսի՞: Մեկ լամպը՝ լուսամ-

փոփի տակ, մեկ գիշերվա ահռելի մթին լուսամփոփն ու նրա մեջ պար բռնած խարույկի բոցը: Մեկ գրիչի կամացուկ ճռռոցը, մեկ հրկեզ եգիպտացորենի ցողունների ճթճթոցը: Հանկարծ սուզվում ես պղտոր, քնկոտ մեգի մեջ, բայց ցնցվում ու վեր ես թռչում: Զնգացին թրերը, կոկորդային ձայներ տարածվեցին, շողացին դաշույնները, արծաթե գլխիկներով փամփշտակալները... Ա՛խ... Հարձակվեցի՛ն:

Բայց՝ չէ՛: Թվացել է... խաղաղ է շուրջը: Ձիերը փռշտում են, շարվեշար պառկած են սեւ յափնջիները. քնած են հոգնատանջ կազակները: Ու մոխիր է նստում ածուխների վրա, ու ցուրտ է փչում վերեւից: Բացվում է գունատ հեռավոր լուսաբացը:

Անմարդկային հոգնածություն է: Արդեն չեչեների վրա էլ թքած: Կոպերդ չես բարձրացնի. արճիճ է: Աչքից կորչում է մեռնող խարույկը... Վրա կտան «թեւքից»: Հավի պես կմորթեն: Մորթում են, թող մորթեն: Ի՞նչ տարբերություն...

Զզվելի է այդ Լերմոնտովը: Միշտ տանել չեմ կարողացել: Հաջի: Ուզուն: Նույն կարմրաշապիկ հատորում: Ճապիկին՝ չտեսնող աչքերով ոսկե սպա ու թեւիկներով ուսադիր: Քե՞զ եմ, եթերի ազատ որդի... Եթերի սրվակը պայթեց արեւի տակ... Մեղմ, ավելի մեղմ, խուլ, մթին: Քուն:

IX. Ծուխ ու փետուր

Առավոտ

Գործն արված է: Սարահարթից սեւ ծխի քուլաներ բարձրացան: Թերեքցիները սուրացին եգիպտացորենի տարածություններից այն կողմ: Նորից կտկտաց գնդացիրը, բայց շատ շուտով դադարեց:

Վերցրին Չեչեն-աուլը...

Եվ ահա սարահարթում ենք: Կրակի սյուներ են բարձրանում երկինք: Բոցկլտում են սպիտակ տնակները, ցանկապատները, ճռթճռթում են ծառերը: Ծուռումուռ զուկակներով վնգում է հրե հողմը, առանձին ծխաքուլաները ոլորվում՝ ամպ են կապում, եւ ամպը հանդարտ անցնում է հետին պլան՝ դեպի «Դեւը» օպերայի բեմանկարները:

Հող ու երկինք պատված է փետուրով: Գրեբենյան կտրիճները մրրիկի պես սուրում են առլ, ապա՝ հետ: Թամբերից կախ, կապկպած խրձերով, սարսափած ծղրտում են հավերն ու սագերը:

Մեր կայանատեղում առավոտից լուկուլոսյան խրախճանք է: Տասնհինգ հավ լցրին կաթսան: Ոսկեգույն, յուղոտ արգանակ. մատներդ հետը կուտես: Հավերը Ծուգաեւն է մորթոտում, ինչպես Հերովդեսը՝ մանկանց:

Իսկ այնտեղ՝ ժայռազանգվածների խորհրդավոր խորխորատներում, որոնց լանջերով սողում ու հալվում է մշուշը, վրեժխնդրությամբ վառված՝ հեռանում է առեղծվածային Ուզունը՝ իր հեծյալների հետ:

Գլխովս եմ երդվում, որ այս ամենը վատ կվերջանա: Ու տեղն է. մի՛ վառիր աուլները:

Ինձ համար էլ վատ կվերջանա: Բայց արդեն հաշտվել եմ այդ մտքի հետ: Փորձում եմ ինձ ներշնչել, որ երազ եմ տեսնում: Երկար ու գարշելի:

Միշտ ասել եմ, որ բուժակ Գոլենդրյուկը խելացի մարդ է: Այս գիշեր նա անհետ կորավ: Բայց չնայած ոչինչ չէր ասել, կարծում եմ՝ իր նվիրական նպատակի ճանապարհին է, այն է՝ երկաթուղու ճանապարհին, որի ծայրին փոքրիկ քաղաք է: Այդ քաղաքում՝ ընտանիքը: Ղեկավարությունն ինձ հրամայեց «հետաքննություն անել»: Հաճույքո՛վ: Նստել եմ դեղորայքի արկղին ու անում եմ: Հետաքննության արդյունքը. բուժակ Գոլենդրյուկը անհետ կորել է: Լույս այսինչ գիշերը: Վերջակետ:

X. Չեչեներին էլ հասա

Սեպտեմբերի շոգ օր:

...Սկանդա՛լ: Ես կորցրի ջոկատս: Ինչպե՞ս կարող էր պատահել: Հիմար հարց է. այստեղ ամեն ինչ կարող է պատահել: Ինչ ասես: Կարճ ասած՝ ջոկատը չկա:

Գլխավերեւս շիկացած արեւն է, շուրջը՝ խարկված խոտ: Մաշված անվահետքի կողքին՝ երկանիվ սայլակ, սայլակում՝ ես, սանիտար Ծուգաեւն ու հեռադիտակը: Ու գլխավորը՝ ոչ մի շունչ: Ոչ մի շունչ՝ սարահարթում: Ինչքան էլ պտտեցինք Ցեյսի ապակիները՝ ոչինչ: Գետնի տակ են անցել բոլորը: Ե՛վ տասհազարանոց ջոկատը՝ թնդանոթներով, եւ՛ չեչենները: Եթե հինգ վերստի վրա ծխացող Չեչենը չլիներ, կմտածեի, որ այստեղ ընդհանրապես երբեք մարդ չի եղել:

Ծուգաեւը հասակով մեկ կանգնեց սայլակի մեջ, նայեց ձախ, վերադարձավ 1800, նայեց աջ, եւ հետ, եւ առաջ, եւ վեր ու իջավ՝ ասելով.

- Վե՞րջն է:

Ավելի լավ չես ասի: Ինչ կլինի, եթե հանդիպենք չեչեներին, որոնց հինգ աուլը վառել ենք, դժվար չի գուշակել: Դրա համար մարգարե լինելու կարիք չկա...

Ինչ կա որ, նոթատետրս կլրացնեմ մինչեւ վերջ: Հետաքրքիր է:

Գնացինք՝ բախտին ապավինելով:

...Մի ագռավ վեր թռավ: Մյուսը՝ ներքեւ: Ահա եւ երրորդը: Ի՞նչ են

պտտվում: Մոտենում ենք: Լքված, խոտածածկ ճանապարհի եզրին չեչեն է պառկած: Ձեռքերը խաչակերպ տարածել է: Գլուխը՝ հետ գցած: Սեւ չերքեզկայի ցնցոտիներ: Ոտքերը բոբիկ են: Դաշույն չկա: Փամփշտակալները դատարկ են: Կազակները պաշար տեսնող ժողովուրդ են, Գոգոլի Օսիպի պես.

- Պարանն էլ պետք կգա:

Ձախ այտոսկրի տակ՝ սեւ անցք, անցքից կրծքին, շքանշանի ժապավենի պես, ծգվում է արեւից խամրած արյան հետքը: Հավաքվել են զմրուխտե ճանճերը՝ անցքը փակելով: Լարից ընկած ագռավները ցածր պտտվում ու կռռում են...

Գնացինք առաջ:

...Ցեյսը ցնորվել է: Բլուր, իսկ բլրի վրա, ամենագագաթին՝ վիեննական աթոռ: Ծուրջը ամայություն է: Ո՞վ է բլրի գագաթը հանել աթոռը: Ինչի՞ համար...

... Զգույշ շրջանցեցինք բլուրը: Ոչ ոք: Հեռացանք, իսկ աթոռը դեռ այնտեղ է:

Ծոգ է: Լավ է, որ լիքը տափաշիշ վերցրի:

Իրիկնադեմ

Ահա՛: Վրա տվին: Ահա լեռները՝ երկու քայլի վրա: Ահա կիրճը: Իսկ կիրճից սլանում են: Բա ձիե՛րը, ձիե՛րը: Թրերն՝ արծաթապատ... Հետաքրքիր է՝ ում բաժին կընկնի իմ նոթատետրը: Այդպես էլ ոչ ոք չի կարդա: Ծուգաեւի դեմքը կանաչել է: Երեւի իմն էլ: Գրպանումս ակամա շարժեցի բրաունինգը: Հիմարությո՛ւն: Ինչո՞վ է օգնելու: Ծուգաեւը ցնցվեց: Ուզում էր մտրակել ձիերին ու քարացավ:

Հիմարությո՛ւն: Նրանց ձիերը տեսնելի՞ք են: Երկու գումակային ձիով ո՞ւր ես փախչելու: Մի քայլ էլ չես հասցնի: Ուզածդ կբարձրացնի հրացանը, նշան կբռնի, ու պարն ավարտվեց:

- Ա՛խ-խ-խ,- զուտ այսքան կարողացավ Ծուգաեւը:

Նկատեցին: Փոշի բարձրացավ: Մեր կողմն են սլանում: Հասան: Ծողում են ճերմակ ատամները, շողում է արծաթը: Նայեցի արեւին: Ցտեսություն, արեւ՛...

...Ու՝ չտեսնված հրա՛շք... Ձիերը պարում են մեր շուրջը: Մեզ չեն բռնում... ղռվռում են.

- Տա-լա-գա-գա:

Սատանան գիտի՝ ինչ են ուզում: Գրպանիս մեջ սեղմեցի բրաունինգի

կոթը, ապահովիչն իջեցրի: Բռնեն՝ կխոթեմ բերանս: Այդպես ավելի լավ է: Այդպես են սովորեցրել:

Իսկ դրանք ղռվռում են, խփում կրծքներին, բացել են ատամները, հեռուն են ցույց տալիս:

- Ա-լյա-մա-մյա... Բոլգատո՞է-է՞:

- Ծալի-աուլ: Գա-գռ-գըռ-գըռ:

Շուգաեւն աշխարհ տեսած մարդ է: Փորձառու: Հանկարծ կանաչած այտերը վարդագույն ներկվեցին, թափահարեց թեւերը, ինչ-որ ապշեցուցիչ լեզվով խոսեց.

- Ասում ես՝ Ծալի՞: Այդպե՛ս, այդպե՛ս: Ձերը Ծալի-աո՞լ գնաց: Այդպե՛ս, այդպես: Բոլգատո՞ե: Բա մերո՞նք ուր են: Էնտե՞ղ:

Ժպիտներ ծաղկեցին դեմքերին, ատամները հրաշալի են: Ձեռքներն են թափ տալիս, գլուխներն են օրորում:

Շուգաեւը վերջնականապես բնական գույնի եկավ:

- Խաղաղներից են, խաղաղներից, պարո՛ն բժիշկ: Խաղաղացրել են սրանց: Ասում են՝ մերոնք Բոլգատոեով Ծալի-աուլ են գնացել: Ուղեկցել են ուզում: Ահա եւ մերոնք: Մեռնեմ, թե մերոնք չեն:

Նայեցի՝ փոշի է, լեռան ստորոտին: Ծարասյան պոչն է հեռանում: Շուգաեւը Ցեյսից լավ է տեսնում:

Չեչենները սիրով են նայում: Աչքները չեն կտրում Ցեյսից:

- Դուր է եկել հեռադիտակը,- խնդմնդաց Շուգաեւը:

- Ա՛խ, ես էլ եմ տեսնում, որ դուր է եկել: Ո՞նց է դուր եկել: Շուտ հասնեինք շարասյան հետեւից:

Շուգաեւը ցնցվում է նստիքին, կարդում է մտքերս, սփոփում է:

- Մի անհանգստացեք: Էստեղ ձեռ չեն տա: Մերոնք հրեն: Իրանք՝ հրես: Բայց որ մի երկու վերստ հեռու լինեինք...,- նա միայն ձեռքը թափ տվեց:

Իսկ շուրջը.

- Գըռ... գըռ:

Գոնե մի բառ հասկանայի: Իսկ Շուգաեւը հասկանում եւ ինքն էլ է խոսում: Ե՛վ ձեռքերով, եւ՛ լեզվով: Սլանում են մեր կողքով, թրերը զնգացնում: Կյանքում այսպիսի պահակախումբ չեմ ունեցել...

XI. Խարույկի մոտ

Աուլը վառվում է: Ուզունին քշում են: Գիշերը սառն է: Սեղմվում ենք խարույկին: Կրակը խաղում է թրերի երախակալների վրա: Նրանք ծալապատիկ նստել ու խորհրդավոր նայում են թեւքիս կարմիր խաչին: Սրանք

խաղաղված հնազանդներն են: Մեր դաշնակիցները: Ծուգաեւը մատներով ու լեզվով պատմում է, որ ես ամենագլխավոր ու կարեւոր բժիշկն եմ: Նրանք գլխով են անում, դեմքերին՝ հարգանք, աչքերում՝ փայլ: Բայց եթե մի երկու վերստ հեռո՛ւ լինեինք...

XII

.....

XIII

Դեկտեմբեր

Էշելոնը պատրաստ է: Բոլորը հարբած են: Հրամանատարը, կազակները, վագոնավարների բրիգադը եւ, որ ամենավատն է, մեքենավարը: 180 սառնամանիք: Ցաքացվող վագոններում՝ սառույց: Ոչ մի վառարան: Մեկնեցինք խոր գիշերով: Պինդ փակեցինք վագոնների դռները: Ինչով պատահի փաթաթվեցինք: Անձամբ սպիրտ խմացրի բոլոր սանիտարներին: Հո մարդիկ չե՞ն կոտորվելու: Վագոնը ցնցվեց, զնգզնգաց, ներքեւից թխկթխկոց լսվեց:

Չեմ հիշում ինչպես քնեցի ու ինչպես վեր թռա: Փոխարենը հստակ հիշում եմ, թե ծնածածկ լանջով գլորվելիս ինչպես էի տեսնում, որ վագոնները ճռնչոցով ճզմվում են լուցկու տուփերի պես: Իրար վրա էին բարձրանում: Պղտոր լուսաբացի մեջ վագոններից դուրս էին թափվում մարդիկ: Ցնքոց ու ոռնոց: Մեքենավարը, լուսակրի նշանին չնայելով, էշելոնը քշել էր հանդիպակաց գնացքի վրա...

Ծուգաեւը մեղք է: Ոտքն է կոտրել: Մինչեւ առավոտ կայարանի սենյակում վիրակապում էի վիրավորներին ու զննում մահացածներին...

Երբ վերջինին վիրակապեցի, դուրս եկա բեկորներով ծածկված երկաթուղու պաստառ: Նայեցի գունատ երկնքին: Նայեցի շուրջս...

Բուժակ Գոլենդրյուկի ստվերը հառնեց իմ առաջ: Բայց ո՛ւր, գրողը տանի: Ես ինտելիգենտ եմ:

XIV. Մեծ մթագնում

Փետրվար

Քաոս: Կայարանը վառվում էր: Հետո սլանում էի գնացքով: Վերջին վագոնը դեսուդեն էր ընկնում... Խելագարություն է:

Եվ այստեղ ալիքը ծածկեց...

.....

Այսօր վերջապես հասկացա: Օ՜, անմահ Գոլենդրյուկ: Վե՜րջ հիմարություններին, խելագարությանը: Մի տարվա մեջ այնքան բան տեսա, որ Մայն Ռիդին կհերիքեր 10 հատորի համար: Բայց ես ոչ Մայն Ռիդ եմ, ոչ էլ Բուսենար: Մինչեւ կոկորդս կուշտ եմ ու լրիվ լվերից կծոտված: Ինտելիգենտ լինելը բոլորովին չի նշանակում ապուշ լինել...

Բավակա՛ն է:

Ծովն ավելի ու ավելի մոտ է: Ծո՛վը: Ծո՛վը:

.....

Անեծք բոլոր պատերազմներին՝ հավիտյանս հավիտենից:

Դանիիլ ԽԱՐՍՍ

ՊԱՌԱՎԸ

...Եվ նրանց միջեւ այսպիսի զրույց է լինում:
Համսուն

Բակում մի պառավ է կանգնած, ձեռքին՝ պատի ժամացույց: Անցնելիս կանգ եմ առնում պառավի մոտ ու հարցնում. «Ժամը քանի՞սն է»:

- Նայե՛ք,- ասում է պառավը:

Նայում ու տեսնում եմ, որ ժամացույցը սլաքներ չունի:

- Սլաք չկա,- ասում եմ:

Պառավը նայում է թվատախտակին ու ասում.

- Երեքից տասնհինգ է պակաս:

- Ախ, այդպե՛ս: Շատ շնորհակալ եմ,- ասում եմ ու հեռանում:

Պառավը ինչ-որ բան է գոռում իմ ետեւից, բայց չեմ շրջվում: Դուրս եմ գալիս փողոց ու քայլում արեւակողմով: Գարնան արեւը շատ հաճելի է: Աչքերս կկոցած քայլում ու ծխամորճ եմ ծխում: Սադովայա փողոցի անկյունում ընդառաջ է գալիս Սակերդոն Միխայլովիչը: Բարեւում ենք իրար, կանգ առնում ու երկար զրուցում ենք: Վերջապես ինձ ծանձրացնում փողոցում կանգնելն ու Սակերդոն Միխայլովիչին հրավիրում եմ գինետուն: Օղի ենք խմում, վրայից՝ պնդախաշ ձու ու մանրաձուկ, հետո հրաժեշտ ենք տալիս իրար, ու ես շարունակում եմ ճանապարհս:

Հանկարծ հիշում եմ, որ էլեկտրասալիկը միացրած եմ թողել: Սրտնեղում եմ: Շրջվում ու գնում եմ տուն: Օրն ինչ լա՛վ էր սկսվել, եւ ահա առաջին անհաջողությունը: Տնից դուրս չպիտի գայի:

Վերադառնում եմ տուն, հանում բաճկոնս, անթեւնոցի գրպանից հանում եմ ժամացույցը ու կախում մեխից, հետո կողպում եմ դուռն ու պառկում թախտին: Այսպես կպառկեմ ու կփորձեմ քնել:

Փողոցից լսվում է տղեկների զզվելի բղավոցը: Պառկել ու պատիժ եմ մտմտում նրանց համար: Ամենից շատ նրանց վրա շներին քսի տալն է դուր գալիս, որ տեղում քարանան: Ծնողները նրանց մի կերպ տանում են տուն: Նրանք պառկած են իրենց փոքրիկ մահճակալներին ու նույնիսկ ու-

տել չեն կարողանում, որովհետեւ բերանները չեն բացվում: Նրանց արհեստական են կերակրում: Մի շաբաթից կարկամախտն անցնում է, բայց երեխաներն այնքան թույլ են, որ մի ամիս էլ դեռ պիտի տեղաշորում մնան: Հետո կամաց-կամաց լավանում են, բայց ես երկրորդ կարկամախտն եմ արձակում վրաները, ու բոլորը սատկում են:

Աքերս բաց պառկել եմ թախտին ու քնել չեմ կարողանում: Միտս է գալիս առավոտյան բակում տեսած ժամացույցով պառավը, ու հաճելի է, որ ժամացույցը սլաքներ չուներ: Օրինակ, մի քանի օր առաջ կոմիսիոն խանութում մի նողկալի խոհանոցի ժամացույց տեսա, ու սլաքները դանակ-պատառաքաղի տեսքով էին:

Աստվա՜ծ իմ: Ախր էլէկտրասալիկը չանջատեցի: Վեր եմ թռչում ու անջատում, հետո նորից պառկում եմ թախտին ու փորձում եմ քնել: Փակում եմ աչքերս: Քնել չեմ ուզում: պատուհանից ներս է ընկնում գարնան արեւը, խփում ուղիղ աչքերիս: Ծոգում եմ, վեր եմ կենում ու նստում պատուհանի տակ դրած բազկաթոռին:

Հիմա ուզում եմ քնեմ, բայց չեմ քնի: Թուղթ ու գրիչ կվերցնեմ ու կգրեմ: Իմ մեջ ահռելի ուժ եմ զգում: Դեռ երեկ եմ ամեն ինչ մտածել: Պատմվածք է լինելու հրաշագործի մասին, որն ապրում է մեր ժամանակներում ու հրաշք չի գործում: Գիտի, որ ինքը հրաշագործ է ու կարող է ուզածդ հրաշք գործել, բայց չի գործում: Նրան վտարում են բնակարանից, գիտի, որ հերիք է մատը շարժի, ու բնակարանն իրենը կլինի, բայց չի շարժում, հեզ ու խոնարհ դուրս է գալիս բնակարանից ու հաստատվում քաղաքամերձ մարագում: Այդ մարագը կարող է հրաշալի աղյուսաշար տուն դարձնել, բայց չի անում, շարունակում է ապրել մարագում եւ ի վերջո մեռնում է՝ այդպես էլ կյանքում ոչ մի հրաշք չգործելով:

Նստել՝ ուրախությունից ձեռքերս եմ շփում: Սակերդոն Միխայլովիչը նախանձից կպայթի: Կարծում էր՝ հանճարեղ ոչնչի արդեն ընդունակ չեմ: Արագ՝ ի գործ: Կորչի՛ ցանկացած քուն ու ծուլություն: Տասնութ ժամ անընդմեջ գրելու եմ:

Անհամբերությունից դողում եմ: Չեմ կարողանում պատկերացնել՝ ինչ անեմ: Թուղթ ու գրիչ պիտի վերցնեի, բայց ձեռքս տարբեր բաների էի գցում, որ ինձ բոլորովին պետք չէին: Դեսուդեն էի վազում սենյակում: Պատուհանից սեղանի մոտ, սեղանից՝ վառարանի, հետո՝ դեպի բազմոցն ու նորից՝ պատուհանի մոտ: Ներսիս կրակից շունչս կտրվում էր: Ընդամենը ժամը հինգն է: Առջեւում ողջ օրն է, ու երեկոն, ու ողջ գիշերը:

Կանգնած եմ սենյակի մեջտեղը: Ի՞նչ եմ մտածում: Ախր արդեն հինգն

անց է տասներկու րոպե: Պետք է գրել: Պատուհանի մոտ եմ քաշում սեղանիկն ու նստում: Իմ առաջ վանդակավոր թուղթ է, ձեռքիս՝ գրիչ:

Սիրտս դեռ չափազանց արագ է խփում, ու ձեռքս դողում է: Սպասում եմ: Սպասում եմ մի քիչ հանգստանա: Ցած եմ դնում գրիչն ու լցնում ծխամորճս: Արեւը խփում է ուղիղ աչքերիս, կկոցում եմ աչքերս ու վառում ծխամորճը:

Ահա պատուհանի մոտով թռավ ագռավը: Նայում եմ պատուհանից ու տեսնում՝ ինչպես է արհեստական ոտքով մի մարդ անցնում մայթով: Ոտքն ու ձեռնափայտը ուժեղ թխկում են:

- Թը՛խկ,- ասում եմ ինքս ինձ ու շարունակում դուրս նայել պատուհանից:

Արեւը պահ է մտնում դիմացի տան ծխնելույզի ետեւը: Ծխնելույզի ստվերը վազում է տանիքով, թռչում-անցնում փողոցն ու փռվում դեմքիս: Պետք է օգտվել այդ ստվերից ու մի քանի բառ գրել հրաշագործի մասին: Արագ վերցնում եմ գրիչն ու գրում.

«Հրաշագործը բարձրահասակ էր»:

Ավելին չեմ կարող: Նստում եմ մինչեւ սովածություն զգալը: Այդ ժամանակ վեր եմ կենում, մոտենում փոքրիկ պահարանին, ուր մթերքն է պահվում, պրպտում եմ, բայց ոչինչ չեմ գտնում: Մի կտոր շաքար եւ ուրիշ ոչինչ:

Ինչ-որ մեկը թակում է դուռը:

- Ո՞վ է:

Ոչ ոք չի պատասխանում: Բացում եմ դուռն ու տեսնում առավոտյան բակում կանգնած ժամացույցով պառավին: Խիստ զարմացած եմ ու ոչինչ ասել չեմ կարողանում:

- Ահա եւ եկա,- ասում է պառավն ու մտնում սենյակ:

Կանգնել եմ դռան մոտ ու չգիտեմ ինչ անեմ: Դո՞ւրս անեմ պառավին, թե՞, հակառակը, առաջարկեմ նստել: Բայց պառավն ինքն է մոտենում պատուհանի տակ դրած բազկաթոռին ու նստում:

- Դուռը վրա բեր ու կողպի,- ասում է պառավը:

Ես փակում ու կողպում եմ դուռը:

- Չոքի,- ասում է պառավը:

Ես ծնկի եմ գալիս:

Բայց այստեղ սկսում եմ հասկանալ իմ վիճակի ողջ անհեթեթությունը: Ինչո՞ւ եմ չոքել ինչ-որ պառավի առաջ: Եվ ինչո՞ւ է այդ պառավը իմ սենյակում ու նստել է իմ սիրած բազկաթոռին: Ինչո՞ւ չվռնդեցի այդ պառավին:

- Լսե՛ք,- ասում եմ,- ի՞նչ իրավունքով եք տնօրինում իմ սենյակում, այն

էլ՝ ինձ հրամայելով: Ես ընդհանրապես չեմ ուզում ծնկի գալ:

- Պետք էլ չի,- ասում է պառավը,- հիմա պիտի պառկես փորիդ ու դեմքդ կպցնես հատակին:

Ես անմիջապես կատարում եմ հրամանը:

Աչքիս առաջ ճշգրիտ գծած քառակուսիներ են: Ուսիս ու աջ ազդրիս ցավը ստիպում են փոխել դիրքս: Բերանքսիվար էի, հիմա մեծ դժվարությամբ հենվում եմ ծնկներիս: Բոլոր անդամներս թմրել ու վատ են ծալվում: Նայում եմ շուրջս եւ ինձ տեսնում եմ սենյակի կենտրոնում, հատակին ծնկաչոք: Գիտակցությունս ու հիշողությունս դանդաղ վերադառնում են: Դեռ զննում եմ սենյակս ու տեսնում, որ մեկը կարծես նստած է պատուհանի մոտի բազկաթոռին: Սենյակն այնքան էլ լուսավոր չի, որովհետեւ հիմա պիտի որ սպիտակ գիշեր լինի: Ուշադիր նայում եմ: Տե՛ր Աստված: Մի՞թե այդ պառավը դեռ նստած է բազկաթոռիս: Ձգում եմ վիզս ու նայում: Իհարկե, պառավն է, նստել ու գլուխը կախել է կրծքին: Երեւի քնած է:

Վեր եմ կենում ու կաղալով մոտենում նրան: Պառավի գլուխը կրծքին է, ձեռքերը կախվել են բազկաթոռի կողերից: Ուզում եմ բռնեմ պառավին ու դուրս հրեմ սենյակից:

- Լսե՛ք,- ասում եմ,- դուք իմ սենյակում եք: Ես պետք է աշխատեմ: Խնդրում եմ հեռանալ:

Պառավը չի շարժվում: Ես կռանում ու նայում եմ պառավի դեմքին: Բերանը կիսաբաց է, բերանից ցցվել է տեղից թռած դնովի ծնոտը: Ու հանկարծ ամեն ինչ հասկանում եմ. պառավը մեռել է:

Ահավոր սրտնեղում եմ: Ինչո՞ւ իմ սենյակում մեռավ: Տանել չեմ կարող մեռելներին: Հիմա ստիպված գլխացավանքի մեջ եմ ընկնելու էդ լեշի հետ: Գնա խոսա դռնապանի հետ, տնային կառավարչի հետ, բացատրի, թե պառավն ինչու է հայտնվել իմ մոտ: Ատելությամբ նայում եմ պառավին: Գուցե չի՞ մեռել: Ձեռք եմ տալիս ճակատին: Ճակատը սառն է: Ի՞նչ անեմ:

Վառում եմ ծխամորճս ու նստում թախտին: Խելագար չարությունը բարձրանում է իմ ներսում:

- Ա՛յ քեզ սրիկա, ասում եմ բարձրաձայն:

Մեռած պառավը պարկի պես ընկած է բազկաթոռիս: Ատամները ցցվել են բերանից: Նման է մեռած ձիու:

- Նողկալի պատկեր է,- ասում եմ, բայց պառավին թերթով ծածկել չեմ կարող, որովհետեւ թերթի տակ ինչ ասես կարող է կատարվել:

Պատից այն կողմ շարժում է լսվում. հարեւանս է արթնանում, շոգեքարշի մեքենավարը: Միայն այդ էր պակաս, որ գլխի ընկներ, որ իմ սեն-

յակում մեռած պառավ է նստել: Ականջ եմ դնում հարեւանիս քայլերին: Ինչո՞ւ է դանդաղում: Արդեն վեցի կեսն է: Վաղուց գնացած պիտի լիներ: Աստվա՛ծ իմ: Պատրաստվում է թեյ խմել: Լսում եմ ինչպես է պատից այն կողմ աղմկում պրիմուսը: Ա՛խ, շուտ գնար էդ անիծված մեքենավարը:

Պառկում եմ թախտին, ոտքերս ծալում տակս: Անցնում է ութ րոպե, բայց հարեւանիս թեյը դեռ պատրաստ չէ ու պրիմուսն աղմկում է: Աչքերս փակում ու ննջում եմ:

Երազ եմ տեսնում, որ հարեւանս գնացել է, հետեւից դուրս եմ գալիս սանդղագլուխ ու ֆրանսիական կողպեքով փակումդուռը: Բանալի չունեմ, ու չեմ կարող նորից բնակարան մտնել: Պիտի զանգը տամ ու արթնացնեմ մյուս բնակիչներին, իսկ դա արդեն ընդհանրապես վատ է: Սանդղահարթակում կանգնել, մտածում եմ, ու հանկարծ տեսնում եմ, որ ձեռքեր չունեմ: Կախում եմ գլուխս, որ ավելի լավ տեսնեմ՝ ձեռքեր ունե՞մ, ու տեսնում եմ, որ մի կողմից ձեռքիս փոխարեն սեղանի դանակ է ցցվել, մյուս կողմից՝ պատառաքաղ:

- Ահա՛,- ասում եմ Սակերդոն Միխայլովիչին, որը չգիտես ինչու նստած է այդտեղ, ծալովի աթոռակին:- Տեսնո՞ւմ եք,- ասում եմ նրան,- ինչ ձեռքեր ունեմ:

Իսկ Սակերդոն Միխայլովիչը լուռ նստել է, ու տեսնում եմ, որ ոչ թե իսկական, այլ կավե Սակերդոն Միխայլովիչ է:

Այստեղ արթնանում ու անմիջապես հասկանում եմ, որ պառկած եմ իմ սենյակում, թախտին, իսկ պատուհանի տակ, բազկաթոռի մեջ նստած է մեռած պառավը:

Արագ նրա կողմն եմ դարձնում գլուխս: Պառավը բազկաթոռի մեջ չի: Նայում եմ դատարկ բազկաթոռին, ու ներսս լցվում է կատաղի ցնծությամբ: Ուրեմն այդ ամենը երազ է եղել: Բայց ե՞րբ ու ինչի՞ց սկսվեց: Երեկ երեկոյան պառավը մտե՞լ է սենյակս: Գուցե դա է՞լ երազ էր: Երեկ վերադարձա տուն, որովհետեւ մոռացել էի անջատել էլեկտրավառարանը: Բայց գուցե դա է՞լ էր երազ: Ամեն դեպքում, ինչ լավ է, որ սենյակումս մեռած պառավ չկա, ուրեմն եւ պետք չի գնալ տնային կառավարիչի մոտ ու գլուխ դնել հանգուցյալի հետ:

Բայց ինչքա՞ն եմ քնել: Նայեցի ժամացույցին. տասի կեսն է, պետք է որ՝ առավոտվա:

Տե՛ր Աստված, երազում ինչե՛ր չես տեսնի:

Ոտքերս կախեցի թախտից, որ վեր կենամ, ու հանկարծ տեսա մեռած պառավին. պառկած էր հատակին՝ սեղանի ետեւը, բազկաթոռի մոտ: Բե-

ռանքսիվեր էր պառկած, ու դնովի ատամնաշարը, բերանից դուրս թռչելով՝ մի ատամով խրվել էր պառավի պինչը: Ձեռքերը ոլորվել էին մարմնի տակ ու չէին երեւում, իսկ քշտված փեշի տակից ցցվել էին կեղտոտ բրդե գուլպաներով ոսկրոտ ոտքերը:

- Սրիկա,- ճչացի ես ու մոտ վազելով պառավին՝ սապոգով հասցրի ծնոտին:

Դնովի ատամնաշարը թռավ սենյակի անկյունը: Ուզում էի նորից խփել, բայց վախեցա, որ մարմնի վրա հետքեր կմնան, հիմա էլ կորոշեն, որ ես եմ սպանել նրան:

Հետ քաշվեցի պառավից, նստեցի թախտին ու վառեցի ծխամորճս: Այդպես անցավ քսան րոպե: Հիմա պարզ էր, որ, մեկ է, գործը հանձնելու են քրեական հետախուզություն, ու քննչական անհասկացողներն ինձ են մեղադրելու սպանության մեջ: Ստացվում էր, որ վիճակը լուրջ է, հետն էլ՝ սապոգի այս հարվածը:

Նորից մոտեցա պառավին, կռացա ու սկսեցի զննել դեմքը: Ծնոտին փոքրիկ մուգ բիծ կար: Չէ՛, կպնելու տեղ չունեն: Քի՞չ բան կարող է լինել: Գուցե պառավը դեռ կենդանության օրո՞ք է որեւէ բանի խփվել: Մի քիչ հանդարտվում եմ ու սկսում հետուառաջ անել սենյակում՝ ծխամորճս ծխելով ու մտմտալով վիճակս:

Հետուառաջ եմ անում սենյակում ու սկսում եմ քաղց զգալ, ավելի ու ավելի ուժգին: Սովածությունից նույնիսկ սկսում եմ դողալ: Մի անգամ էլ եմ պրպտում պահարանիկը, որտեղ ուտելիքն է պահվում, բայց ոչինչ չեմ գտնում, մի կտոր շաքարից բացի:

Հանում եմ դրամապանակն ու հաշվում փողերս: Տասնմեկ ռուբլի: Ուրեմն կարող եմ խոզապուխտ ու հաց առնել, դեռ թութունի համար էլ կմնա:

Ծտկում եմ գիշերվա ընթացքում ճմռթված փողկապս, վերցնում եմ ժամացույցը, հագնում բաճկոնս, խնամքով փակում եմ սենյակիս դուռը, բանալին դնում գրպանս ու դուրս եմ գալիս փողոց: Նախ պետք է մի բան ուտել, այդ ժամանակ միտքս կհստակվի ու կմտածեմ, թե ինչ եմ անելու էդ լեշը:

Խանութի ճանապարհին մտքովս անցնում է նաեւ՝ չմտնե՞մ Սակերդոն Միխայլովիչի մոտ ու ամեն ինչ պատմեմ, գուցե միասին ավելի արագ մտածենք, թե ինչ ենք անելու: Բայց անմիջապես էլ մերժում եմ այդ միտքը, որովհետեւ բաներ կան, որ մենակ պիտի անես, առանց վկաների:

Խանութում խոզապուխտի երշիկ չկար, կես կիլո սարդելկա առա: Թութուն էլ չկար: Գնացի հացի խանութ:

Հացի խանութը մարդաշատ էր, ու դրամարկղի առաջ երկար հերթ էր կանգնած: Անմիջապես մռայլվեցի, բայց համենայնդեպս հերթ կանգնեցի: Հերթը շատ դանդաղ էր շարժվում, իսկ հետո ընդհանրապես կանգ առավ, որովհետեւ դրամարկղի մոտ ինչ-որ կռվշտոց սկսվեց:

Զեւացնում էի, թե ոչինչ չեմ նկատում ու նայում էի հերթում ինձնից առաջ կանգնած ջահել տիկնոջ մեջքին: Տիկինն ըստ երեւույթին շատ հետաքրքրասերն էր. վիզը մեկ աջ էր պարզում, մեկ ձախ եւ անընդհատ ձգվում էր ոտքերի ծայրերին, որ տեսնի՝ ինչ է կատարվում դրամարկղի մոտ: Վերջապես շրջվեց իմ կողմն ու հարցրեց.

- Չգիտե՞ք ինչ է կատարվում այնտեղ:

- Կներեք, չգիտեմ,- հնարավորինս չոր ասացի ես:

Տիկինը շուռումուռ եկավ այս ու այն կողմ ու վերջապես նորից դիմեց ինձ.

- Իսկ չե՞ք կարող գնալ ու պարզել, թե ինչ է կատարվում:

- Կներեք, դա ինձ բոլորովին չի հետաքրքրում,- ավելի չոր ասացի ես:

- Ինչպես թե՝ չի հետաքրքրում,- գոչեց տիկինը:- Չէ որ դուք էլ եք ուշանում այս հերթի պատճառով:

Ես ոչինչ չպատասխանեցի ու միայն գլխով արի: Տիկինը ուշադիր նայեց ինձ:

- Իհարկե, հացի հերթ կանգնելը տղամարդու գործ չի,- ասաց նա:- Ափսոս, որ ստիպված եք հերթ կանգնել: Դուք պետք է որ ամուսնացած չլինեք:

- Այո՛, ամուրի եմ,- ասացի ես մի քիչ շփոթված, բայց ներցիայով շարունակելով պատասխանել բավական չոր ու դրա հետ մեկտեղ թեթեւ խոնարհում անելով:

Տիկինը նորից ոտից գլուխ չափեց ինձ ու հանկարծ, մատներով թեւքիս դիպչելով, ասաց.

- Եկեք ձեզ համար գնեմ ինչ պետք է, իսկ դուք դրսում սպասեք:

Ես լրիվ մոլորվեցի:

- Ծնորհակալ եմ,- ասացի:- Դուք շատ բարի եք, բայց, անկեղծ ասած, ինքս էլ կկարողանայի:

- Ո՛չ, ո՛չ,- ասաց տիկինը,- դուրս եկեք: Ի՞նչ էիք գնելու:

- Գիտե՞ք,- ասացի,- ուզում էի կես կիլո սեւ հաց գնել, կաղապահարահաց, որ ավելի էժան է: Ամենից շատ դա եմ սիրում:

- Շատ լավ,- ասաց տիկինը:- Իսկ հիմա գնացեք: Ես կառնեմ, հետո փողը կտաք:

Ու նույնիսկ թեթեւ հրեց արմունկս:

Ես դուրս եկա խանութից ու կանգնեցի հենց դռան մոտ: Գարնանարեւը խփում է ուղիղ դեմքիս: Ծխամորճ եմ ծխում: Ինչ հաճելի տիկին է: Հիմա այդպիսիք քիչ են պատահում: Կանգնել եմ, աչքերս կկոցում եմ արեւից, ծխամորճ եմ ծխում ու մտածում հաճելի տիկնոջ մասին: Ինչ պայծառ դարչնագույն աչքեր ունի: Ուղղակի հրաշք, ինչ լավիկն է:

- Դուք ծխամո՞րճ եք ծխում,- լսում եմ կողքիս: Հաճելի տիկինն ինձ է պարզում հացը:

- Օ՛, անչափ շնորհակալ եմ,- ասում եմ ես՝ վերցնելով հացը:

- Դուք ծխամորճ եք ծխում: Դա ինձ ահավոր դուր է գալիս,- ասում է հաճելի տիկինը:

Ու մեր միջեւ հետեւյալ խոսակցությունն է լինում:

ՆԱ. Դուք, ուրեմն, անձա՞մբ եք գնում հացի:

ԵՍ. Ոչ միայն հացի, ամեն ինչն եմ ինքս առնում:

ՆԱ. Իսկ որտե՞ղ եք ճաշում:

ԵՍ. Սովորաբար ինքս եմ ճաշ եփում: Իսկ երբեմն՝ նաեւ գարեջրատանը:

ՆԱ. Գարեջո՞ւր եք սիրում:

ԵՍ. Չէ՛, ավելի շատ՝ օղի:

ՆԱ. Ես էլ եմ օղի սիրում:

ԵՍ. Դուք օղի՞ եք սիրում: Ինչ լա՛վ է: Կուզեի երբեւէ խմել ձեզ հետ:

ՆԱ. Ես էլ կուզեի ձեզ հետ օղի խմել:

ԵՍ.Կներեք, կարո՞ղ եմ մի բան հարցնել:

ՆԱ (թունդ կարմրելով). Իհարկե, հարցրեք:

ԵՍ. Լա՛վ, կհարցնեմ: Դուք Աստծուն հավատո՞ւմ եք:

ՆԱ. (զարմացած). Ես՝ Աստծո՞ւն: Այո, իհարկե:

ԵՍ. Իսկ ինչ կասեք, եթե հենց հիմա օղի առնենք ու գնանք ինձ մոտ: Մոտիկ եմ ապրում:

ՆԱ (չարաճճի). Ինչ կա որ, համաձայն եմ:

ԵՍ. Ուրեմն գնացինք:

Մենք մտնում ենք խանութ, ու ես կես լիտր օղի եմ առնում: Էլ փող չունեմ, ինչ-որ մանրուք է: Անընդհատ խոսում ենք տարբեր բաներից, ու հանկարծ հիշում եմ, որ իմ սենյակում, հատակին, պառկած է մեռած պառավը:

Նայում եմ նոր ծանոթուհուս. նա կանգնել է վաճառասեղանի մոտ ու զննում է մուրաբայի բանկաները: Զգույշ գնում եմ դեպի դուռն ու դուրս եմ գալիս խանութից: Հենց խանութի դիմաց կանգ է առնում տրամվայը: Ներս

եմ թռչում՝ նույնիսկ համարին չնայելով: Միխայլովսկի փողոցում իջնում եմ ու գնում Սակերդոն Միխայլովիչի մոտ: Ձեռքիս օղու շիշն է, սարդելկաներն ու հացը:

Սակերդոն Միխայլովիչն անձամբ բացեց դուռը: Մերկ մարմնին գցած խալաթով էր, կտրած ճտքերով ռուսական սապոգներով ու մորթե ականջակալներով գդակով, բայց ականջակալները բարձրացրած էին ու գագաթին հանգույց արած:

- Շատ ուրախ եմ,- ինձ տեսնելով՝ ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Ձեզ գործից չկտրեցի՞,- հարցրի ես:

- Ո՛չ, ո՛չ,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Ոչ մի բան չէի անում, ուղղակի նստել էի հատակին:

- Գիտե՞ք ինչ,- ասացի Սակերդոն Միխայլովիչին:- Ուտելիք ու օղի եմ բերել: Եթե դեմ չեք, եկեք խմենք:

- Շատ լավ,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Ներս եկեք:

Մենք մտանք նրա սենյակը: Ես բացեցի օղու շիշը, իսկ Սակերդոն Միխայլովիչը սեղանին դրեց երկու ըմպանակ ու խաշած մսով ափսեն:

- Սարդելկա ունեմ,- ասացի ես:- Ո՞նց ենք ուտելու՝ հո՞ւմ, թե՞ եփենք:

- Կդնենք՝ եփվեն,- ասաց Սակերդոն Միխայլովիչը,- իսկ օղին կխմենք խաշած մսով: Ապուրից եմ հանել, հրաշալի խաշած միս է:

Սակերդոն Միխայլովիչը կաթսան դրեց նավթավառին, ու նստեցինք օղի խմելու:

- Օղի խմելն օգտակար է,- ըմպանակները լցնելով՝ ասում էր Սակերդոն Միխայլովիչը:- Մեչնիկովը գրում էր, որ օղին հացից օգտակար է, իսկ հացն ընդամենը ծղոտ է, որը փտում է մեր ստամոքսներում:

- Ձեր կենացը,- ասացի ես՝ բաժակ զարկելով Սակերդոն Միխայլովիչի հետ:

Խմեցինք ու վրայից սառը միս կերանք:

- Համով է,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

Բայց այդ պահին սենյակում ինչ-որ բան շխկաց:

- Ի՞նչ էր,- հարցրի ես:

Մենք լուռ նստել ու ականջ էինք դնում: Հանկարծ նորից շխկաց: Սակերդոն Միխայլովիչը վեր թռավ ու պատուհանի մոտ վազելով՝ պոկեց վարագույրը:

- Ի՞նչ եք անում,- բղավեցի ես:

Բայց Սակերդոն Միխայլովիչը չպատասխանեց, նետվեց դեպի նավթավառը, վարագույրով բռնեց կաթսան ու դրեց հատակին:

- Գրո՛ղը տանի,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Մոռացել էի ջուր լցնեմ կաթսայիկը, իսկ կաթսայիկն էմալապատ է, ու էմալը փշրվեց:

- Հասկանալի է,- գլխով անելով՝ ասացի ես:

Նորից նստեցինք սեղանի մոտ:

- Սատանան դրա հետ,- ասաց Սակերդոն Միխայլովիչը,- սարդելկանեը հում կուտենք:

- Ահավոր սոված եմ,- ասացի ես:

- Կերեք,- ասաց Սակերդոն Միխայլովիչը՝ իմ առաջ դնելով սարդելկաները:

- Ախր, վերջին անգամ երեկ եմ կերել, ձեզ հետ, գինետանը, եւ այդ պահից ոչինչ չեմ կերել,- ասացի ես:

- Այո՛, այո՛, այո՛,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Անընդհատ գրում էի,- ասացի ես:

- Սատանա՛ն տանի,- չափազանցված վեր թռավ Սակերդոն Միխայլովիչը: -Հաճելի է դիմացդ հանճար տեսնելը:

- Բա ո՞նց,- ասացի ես:

- Երեւի ահագին գրել եք, հա՞,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Այո՛,- ասացի ես:- Ծո՛վ թուղթ եմ օգտագործել:

- Մեր օրերի հանճարի կենացը,- ըմպանակը բարձրացնելով՝ ասաց Սակերդոն Միխայլովիչը:

Խմեցինք: Սակերդոն Միխայլովիչը խաշած միս էր ուտում, իսկ ես՝ սարդելկա: Չորս սարդելկա ուտելով՝ վառեցի ծխամորճս ու ասացի.

- Գիտե՞ք, չէ որ ձեզ մոտ եմ եկել հետապնդումից խույս տալով:

- Ո՞վ էր ձեզ հետապնդում,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Մի տիկին,- ասացի ես:

Բայց քանի որ Սակերդոն Միխայլովիչը էլ ոչինչ չհարցրեց, այլ միայն լուռումունջ օղի լցրեց ըմպանակները, շարունակեցի.

- Նրա հետ հացի խանութում ծանոթացա ու միանգամից սիրահարվեցի:

- Լավի՞կն է,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Այո՛,- ասացի ես,- իմ ճաշակով:

Խմեցինք, ու ես շարունակեցի.

- Նա համաձայնեց գալ ինձ մոտ ու օղի խմել: Ստանք խանութ, բայց ստիպված էի խանութից թաքուն փախչել:

- Փողը չէր հերիքո՞ւմ,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Ոչ, փող շատ կար,- ասացի ես,- բայց հիշեցի, որ չեմ կարող նրան իմ սենյակ թողնել:

- Ի՞նչ է, ձեր սենյակում ուրի՞շ կին կար,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Այո՛, եթե կուզեք, իմ սենյակում ուրիշ կին կա,- ժպտալով՝ ասացի ես:- Հիմա ոչ մեկին չեմ կարող իմ սենյակ թողել:

- Ամուսնացեք: Ինձ ճաշի կհրավիրեք,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Ո՛չ,- փոթկալով ասացի ես:- Ես այդ տիկնոջ հետ չեմ ամուսնանա:

- Այդ դեպքում մյուսի հետ ամուսնացեք, հացի խանութի,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Ի՞նչ եք ինձ անընդհատ ամուսնացնում,- ասացի ես:

- Իսկ ինչու՝ ոչ,- ասաց Սակերդոն Միխայլովիչը՝ ըմպանակները լցնելով:- Ձեր հաջողության համար:

Խմեցինք: Ըստ երեւույթին օղին արդեն սկսել էր ազդել: Սակերդոն Միխայլովիչը հանեց իր մորթե, ականջակալներով գդակն ու շպրտեց մահճակալին: Ես վեր կացա ու սկսեցի հետուառաջ անել սենյակում՝ արդեն թեթեւ գլխապտույտ զգալով:

- Ինչպե՞ս եք վերաբերվում հանգուցյալներին,- հարցրի Սակերդոն Միխայլովիչին:

- Միանգամայն բացասական,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Ես վախենում եմ նրանցից:

- Հա՛, ես էլ տանել չեմ կարողանում հանգուցյալներին,- ասացի ես:- Որ հանգուցյալ պատահի, ու եթե ազգական չլինի, երեւի քացի հասցնեմ:

- Պետք չի քացի տալ մեռյալներին,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Ես սապոգով կհասցնեի ուղիղ մռութին,- ասացի:- Տանել չեմ կարողանում մեռելներին ու երեխաներին:

- Հա՛, երեխաները զզվանք են,- համաձայնեց Սակերդոն Միխայլովիչը:

- Իսկ, ձեր կարծիքով, հանգուցյալնե՞րն են ավելի վատ, թե՞ երեխանները,- հարցրի ես:

- Երեխաները, վայ թե, ավելի վատ են, նրանք հաճախ են խանգարում մեզ: Իսկ հանգուցյալները համենայնդեպս չեն խուժում մեր կյանք,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Խուժո՛ւմ են,- գոռացի ես ու անմիջապես սսկվեցի:

Սակերդոն Միխայլովիչը ուշադիր նայեց ինձ:

- Էլի օղի կուզե՞ք,- հարցրեց նա:

- Ո՛չ,- կտրեցի ես, բայց ինձ հավաքելով՝ ավելացրի:- Չէ՛, շնորհակալ եմ, էլ չեմ ուզում:

Հետ եկա ու նորից նստեցի սեղանի մոտ: Որոշ ժամանակ լուռ էինք:

- Ուզում եմ հարցնել ձեզ,- վերջապես ասացի ես:- Աստծուն հավատո՞ւմ եք:

Սակերդոն Միխայլովիչի ճակատին հորիզոնական կնճիռ հայտնվեց, ու ասում է.

- Անպարկեշտ արարքներ կան: Անպարկեշտ է մարդուց հիսուն ռուբլի խնդրել, եթե տեսել եք, թե ինչպես հենց նոր երկու հարյուր դրեց գրպանը: Իր գործն է՝ ձեզ փող կտա՞, թե՞ կմերժի, իսկ մերժելու ամենահարմար ու հաճելի եղանակը ստելն է, թե փող չկա: Իսկ դուք տեսել եք, որ այդ մարդը փող ունի եւ դրանով իսկ նրան զրկել հեշտ ու հաճելի մերժելու հնարավորությունից: Դուք նրան զրկել եք ընտրության իրավունքից, իսկ դա խոզություն է: Եվ մարդուն հարցնել «Դուք Աստծուն հավատո՞ւմ եք» նույնպես անքաղաքավարի ու անպարկեշտ արարք է:

- Չէ՛,- ասացի ես,- այստեղ ոչ մի ընդհանրություն չկա:

- Իսկ ես չեմ էլ համեմատում,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:

- Լա՛վ,- ասացի ես,- թողնենք: Միայն թե կներեք, որ ձեզ այդպիսի անպարկեշտ ու անքաղաքավարի հարց տվեցի:

- Խնդրե՛մ,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Ես, չէ՞ որ, պարզապես հրաժարվեցի պատասխանել:

- Ես էլ չէի պատասխանի,- ասացի,- բայց ուրիշ պատճառով:

- Ի՞նչ պատճառով,- ծույլ-ծույլ հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Գիտե՞ք ինչ,- ասացի ես,- իմ կարծիքով չկան հավատացյալ ու ոչ հավատացյալ մարդիկ: Կան միայն հավատալ ցանկացողներ ու չհավատալ ցանկացողներ:

- Ուրեմն նրանք, ովքեր չեն ցանկանում հավատալ, արդեն ինչ-որ բանի հավատո՞ւմ են,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Իսկ նրանք, ովքեր ցանկանում են հավատալ, արդեն նախապես ոչնչի չե՞ն հավատում:

- Գուցե եւ այդպես է,- ասացի ես:- Չգիտեմ:

- Իսկ հավատում կամ չեն հավատում ինչի՞ն: Աստծո՞ւն,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Ո՛չ,- ասացի ես,- անմահությա՛նը:

- Այդ դեպքում ինչու էիք հարցնում՝ հավատո՞ւմ եմ Աստծուն:

- Պարզապես «Հավատո՞ւմ եք արդյոք անմահությանը» հարցը մի տեսակ հիմար է հնչում,- ասացի Սակերդոն Միխայլովիչին ու վեր կացա:

- Ի՞նչ է, գնո՞ւմ եք,- հարցրեց Սակերդոն Միխայլովիչը:

- Այո՛,- ասացի ես,- գնալուս ժամանակն է:

- Իսկ օղի՞ն,- ասաց Սակերդոն Միխայլովիչը:- Մի-մի բաժակ է մնացել:

- Ուրեմն եկեք խմենք-վերջացնենք,- ասացի ես:

Խմեցինք օղին ու վրան կերանք մնացած խաշած միսը:

- Իսկ հիմա պետք է գնամ,- ասացի ես:

- Ցտեսությո՛ւն,- ասաց Սակերդոն Միխայլովիչը՝ ինձ խոհանոցով ուղեկցելով սանդղահարթակ:- Շնորհակալ եմ հյուրասիրության համար:

- Ձեզ եմ շնորհակալ,- ասացի ես:- Ցտեսություն:

Ու գնացի:

Մենակ մնալով՝ Սակերդոն Միխայլովիչը հավաքեց սեղանը, օղու շիշը նետեց պահարանի գլխին, նորից գլխին քաշեց մորթե, ականջակալներով գդակը ու պատուհանի տակ նստեց հատակին: Սակերդոն Միխայլովիչը ձեռքերը ծալեց մեջքին, ու դրանք չէին երեւում: Իսկ քշտված խալաթի տակից ցցվել էին կտրած ճտքերով ռուսական սապոգներ հագած մերկ ոսկրոտ ոտքերը:

Ստասույզ քայլում էի Նեւսկիով: Ճիշտն այն է, որ հենց հիմա մտնեմ տնային կառավարիչի մոտ ու ամեն ինչ պատմեմ: Իսկ պառավի հարցը լուծելուց հետո ամեն օր կկանգնեմ հացի խանութի մոտ, մինչեւ չտեսնեմ այն հաճելի տիկնոջը: Չէ՞ որ հացի համար 48 կոպեկ պարտք եմ մնացել: Նրան փնտրելու հրաշալի առիթ ունեմ: Խմածս օղին դեռ ազդում էր, ու թվում էր՝ ամեն ինչ շատ լավ է ու հեշտ:

Ֆոնտանկայում մոտեցա կրպակին ու մնացած մանրով մի մեծ գավաթ հացի կվաս խմեցի: Կվասը վատն էր ու թթու, ու մնացած ճանապարհին բերանիս մեջ նողկալի համ էր:

Լիտեյնիի անկյունում մի հարբած մարդ, օրորվելով, հրեց ինձ: Լավ է, որ ատրճանակ չունեմ, թե չէ հենց տեղում կսպանեի:

Մինչեւ տունը հասնելը, ողջ ճանապարհին դեմքս չարությունից ծամածռված էր: Համենայնդեպս համարյա բոլոր հանդիպողները շրջվում ու նայում էին:

Մտա տնային կառավարչություն: Սեղանին մի կարճահասակ, կեղտոտ, կճատ, ծռամեջք ու շիկամազ աղջիկ էր նստել ու ձեռքի հայելուն նայելով՝ շրթներկ էր քսում:

- Իսկ ո՞ւր է տնային կառավարիչը,- հարցրի ես:

Աղջիկը չպատասխանեց՝ շարունակելով ներկել շրթունքները:

- Ո՞ւր է կառավարիչը,- կոպիտ կրկնեցի ես:

- Վաղը կլինի,- պատասխանեց կեղտոտ, կճատ, ծռամեջք ու շիկամազ աղջիկը:

Դուրս եկա փողոց: Հակառակ կողմով արհեստական ոտքով մի հաշ-մանդամ էր գնում՝ ոտքն ու ձեռնափայտը բարձր թխկացնելով: Վեց տղեկ-ներ վազում էին հաշմանդամի ետեւից՝ ծաղրելով նրա քայլվածքը:

Մտա իմ շքամուտքն ու բարձրացա սանդուղքով: Երկրորդ հարկում կանգ առա. մի նողկալի միտք անցավ գլխովս. չէ՞ որ պառավը սկսելու է քայքայվել: Պատուհանը չեմ փակել, իսկ երբ պատուհանը բաց է, ասում են, մեռյալներն ավելի արագ են քայքայվում: Ա՛յ քեզ հիմար բան: Էդ գրո-ղի տարած կառավարիչն էլ միայն վաղն է գալու: Անվճռական կանգնեցի մի քանի րոպե ու շարունակեցի բարձրանալ:

Բնակարանիս դռան մոտ նորից կանգ առա: Գուցե գնամ հացի խանու-թի մոտ ու սպասեմ այն հաճելի տիկնոջը: Կաղաչեի, որ ներս թողեր երկու կամ երեք գիշերով: Բայց անմիջապես էլ հիշեցի, որ նա այսօր արդեն հաց առել է, ուրեմն խանութ չի գա: Եվ ընդհանրապես ոչինչ չի ստացվի այդ ամենից:

Ես բացեցի դուռն ու մտա միջանցք: Միջանցքի ծայրին լույս էր վառ-վում, ու Մարյա Վասիլեւնան, ձեռքի փալասը տրորում էր մի ուրիշ փալա-սով: Ինձ տեսնելով՝ Մարյա Վասիլեւնան կանչեց.

- Ցեժ մի բիձա էր հարցնում:

- Ի՞նչ բիձա,- ասացի ես:

- Չգիճեմ,- պատասխանեց Մարյա Վասիլեւնան:

- Ե՞րբ,- հարցրի ես:

- Էդ էլ չգիճեմ,- ասաց Մարյա Վասիլեւնան:

- Դո՞ւք եք խոսել նրա հետ,- հարցրի Մարյա Վասիլեւնային:

- Եշ,- պատասխանեց Մարյա Վասիլեւնային:

- Բա ո՞նց չգիտեք՝ երբ էր,- ասացի ես:

- Էրկու զամ առաջ,- ասաց Մարյա Վասիլեւնան:

- Իսկ ծերուկն ի՞նչ տեսք ուներ,- հարցրի ես:

- Էդ էլ չգիճեմ,- ասաց Մարյա Վասիլեւնան ու գնաց խոհանոց:

Մոտեցա իմ սենյակին:

«Հանկարծ ու,- մտածեցի ես,- պառավն անհետացել է: Ստնում եմ սեն-յակ, ու պառավը չկա՛: Աստվա՛ծ իմ: Մի՞թե հրաշքներ չեն լինում»:

Կողպեքի մեջ պտտեցի բանալին ու սկսեցի կամաց բացել դուռը: Գու-ցե եւ թվաց, բայց դեմքիս փչեց սկսված քայքայումի քաղցր հոտը: Նայե-ցի կիսաբաց դռնից ու քարացա: Պառավը չորեքթաթ ընդառաջ էր գալիս:

Բղավելով փակեցի դուռը, պտտեցի բանալին ու հետ թռա դեպի դիմա-ցի պատը:

Միջանցքում հայտնվեց Մարյա Վասիլեւնան:

- Կանշել ե՞ք,- հարցրեց նա:

Այնպես էի դողում, որ ոչինչ չէի կարող պատասխանել ու միայն բացասական օրորեցի գլուխս: Մարյա Վասիլեւնան մոտեցավ:

- Ո՞ւմ հետ էիք խոշում,- ասաց նա:

Նորից օրորեցի գլուխս:

- Խելագա՛ր,- ասաց Մարյա Վասիլեւնան ու նորից անցավ խոհանոց՝ ճանապարհին մի քանի անգամ հետ նայելով:

«Այսպես կանգնել-մնալ չի կարելի: Այսպես կանգնել-մնալ չի կարելի»,- կրկնում էի մտքում: Այդ արտահայտությունը ինքն իրեն էր կազմվել իմ ներսում: Այնքան կրկնեցի, մինչեւ հասավ գիտակցությանս:

- Այո՛, այսպես կանգնել-մնալ չի կարելի,- ասացի ինձ, բայց շարունակում էի կանգնած մնալ կաթվածահարի պես: Սարսափելի բան էր կատարվել, բայց պետք էր գուցե նույնիսկ ավելի սարսափելին անել, քան տեղի ունեցածը: Հողմը պտտում էր մտքերս, ու ես տեսնում էի միայն դանդաղ իմ կողմը սողացող մեռած պառավի չար աչքերը:

Խուժել սենյակ ու փշրել այդ պառավի գանգը: Ահա թե ինչ է պետք անել: Նույնիսկ հայացքով փնտրեցի ու գոհ մնացի՝ տեսնելով կրոկետի մուրճը, որը, չգիտես ինչու, տարիներ շարունակ դրված էր միջանցքի անկյունում: Վերցնել մուրճը, խուժել սենյակ ու շրը՛խկ...

Դողս դեռ չէր անցել: Կանգնել էի՝ ներսիս ցրտից ուսերս վեր քաշած: Մտքերս սուրում էին, խճճվում, վերադառնում ելման կետ ու նորից սլանում՝ նորանոր տարածքներ գրավելով, եւ ես կանգնել ու ականջ էի դնում իմ մտքերին՝ կարծես մի տեսակ նրանցից կտրված ու նրանց հրամանատարն էի միաժամանակ:

- Հանգուցյալները,- ինձ բացատրում էին իմ մտքերը,- անպետք ժողովուրդ են: Իզուր են նրանց հանգուցյալ ասում, ավելի շուտ՝ անհանգստացյալներ են: Նրանց անընդհատ պետք է հսկողության տակ պահել: Հարցրեք դիարանի ցանկացած պահակի: Կարծում եք՝ նա ինչի՞ համար է դրված այնտեղ: Միայն մեկ բանի համար՝ հետեւելու, որ հանգուցյալները դեսուդեն չփախչեն: Այդ առումով հետաքրքիր դեպքեր են պատահում: Մի հանգուցյալ, մինչ պահակը ղեկավարության հրամանով բաղնիքում լողանում էր, դուրս էր սողացել դիարանից, խցկվել ախտահանման խցիկն ու ահագին սպիտակեղեն կերել: Ախտահանողները մի լավ ծեծ էին տվել հանգուցյալին, բայց շարքից դուրս եկած սպիտակեղենի համար ստիպված էին վճարել սեփական գրպանից: Մի ուրիշ հանգուցյալ էլ թափանցել

էր ծնողկանների հիվանդասենյակ ու այնպես վախեցրել նրանց, որ ծնողկաններից մեկը տեղում վիժել էր, հանգուցյալն էլ նետվել էր վիժած պտղի վրա ու սկսել էր չփչփացնելով խժռել: Իսկ երբ մի խիզախ դայակ աթոռակով հասցրել էր հանգուցյալի մեջքին, սա կծել էր այդ դայակի ոտքը, ու կինը, դիաթույնից թունավորվելով, շուտով մահացել էր: Այո՛, հանգուցյալներն անպետք ժողովուրդ են, ու նրանց հետ պետք է զգոն լինել:

-Կա՛նգ առեք,- ասացի մտքերիս:- Անհեթեթություններ եք դուրս տալիս: Հանգուցյալներն անշարժ են:

- Լա՛վ, - ասացին ինձմտքերս,- այդ դեպքում մտիր սենյակ, որտեղ, ինչպես ասում ես, անշարժ հանգուցյալն է:

Անսպասելի համառությունը խոսեց իմ մեջ:

- Եվ կմտնեմ,- վճռական ասացի մտքերիս:

- Փորձի՛ր,- ասացին մտքերս:

Այդ քմծիծաղը վերջնականապես կատաղեցրեց ինձ: Վերցրի կրոկետի մուրճն ու նետվեցի դեպի դուռը:

- Սպասի՛ր,- հետեւիցս գոռացին մտքերս: Բայց արդեն բանալին պտտել էի կողպեքի մեջ ու բացել դուռը:

Պառավը բերանքսիվար պառկած էր շեմին:

Կրոկետի մուրճը բարձրացրած՝ պատրաստ կանգնել էի: Պառավը չէր շարժվում:

Դողն անցավ, եւ մտքերս հոսում էին պարզ ու հստակ: Ես նրանց հրամանատարն էի:

- Նախեւառաջ փակել դուռը,- հրամայեցի ինձ:

Դռան դրսի կողմից հանեցի բանալին ու ներսից դրեցի կողպեքի մեջ: Դա արեցի ձախ ձեռքով, իսկ աջով բռնել էի կրոկետի մուրճը ու ոչ մի վայրկյան աչքս պառավից չէի կտրում: Դուռը կողպեցի ու զգույշ ոտք անելով պառավի վրայով՝ դուրս եկա սենյակի մեջտեղը:

- Հիմա քո հախից կգանք,- ասացի ես: Մի պլան էի մտածել, որին սովորաբար դիմում են քրեական վեպերի ու պատահարների լրահոսի մարդասպանները. ուզում էի պառավին թաքցնել ճամպրուկում, տանել քաղաքից դուրս ու գցել ճահիճը: Մի այդպիսի հարմար տեղ գիտեի:

Ճամպրուկս թախտի տակ էր: Դուրս քաշեցի ու բացեցի: Ճամպրուկում որոշ իրեր կային՝ մի քանի գիրք, հին նրբաթաղիքե լայնեզր գլխարկ ու պատառոտված սպիտակեղեն: Այդ ամենը թափեցի թախտին:

Այդ ժամանակ դրսի դուռը բարձր շխկաց, ու ինձ թվաց՝ պառավը ցնցվեց:

Վայրկենապես վեր թռա ու վերցրի կրոկետի մուրճը:

Պառավը հանգիստ պառկած է: Ես կանգնել ու լսում եմ: Մեքենավարն էր վերադարձել, լսում եմ՝ ինչպես է հետուառաջ անում իր սենյակում: Ահա միջանցքով գնում է խոհանոց: Եթե Մարյա Վասիլեւնան նրան պատմի իմ խելագարության մասին, լավ չի լինի: Ի՞նչ սատանայություն է: Պիտի գնամ խոհանոց եւ իմ տեսքով հանգստացնեմ նրան:

Նորից ոտք արեցի պառավի վրայով, մուրճը դրեցի դռան մոտ, որ վերադառնալիս կարողանամ դեռ սենյակ չմտած ձեռքիս մուրճ ունենալ, ու դուրս եկա միջանցք: Խոհանոցից ձայներ էին լսվում, բայց բառերն անհասկանալի էին: Հետեւիցս փակեցի դուռը ու զգույշ գնացի խոհանոց. ուզում էի իմանամ՝ Մարյա Իվանովնան ու մեքենավարն ինչի մասին են խոսում: Միջանցքն արագ անցա, իսկ խոհանոցի մոտ դանդաղեցրի քայլս: Մեքենավարն էր խոսում. ըստ երեւույթին գործի տեղը պատահած ինչ-որ դեպք էր պատմում:

Ներս մտա: Մեքենավարը սրբիչը ձեռքին կանգնել ու պատմում էր, իսկ Մարյա Վասիլեւնան աթոռակին նստած լսում էր: Ինձ տեսնելով՝ մեքենավարը ձեռքով արեց:

- Բարեւ ձեզ, բարեւ ձեզ, Մատվե՛յ Ֆիլիպովիչ,- ասացի նրան ու անցա լողարան: Առայժմ ամեն ինչ հանգիստ էր: Մարյա Վասիլեւնան սովոր էր իմ տարօրինակություններին եւ կարող էր արդեն մոռացած լինել այդ վերջին դեպքը:

Հանկարծ հիշեցի. դուռը չե՞մ փակել: Իսկ եթե պառավը դուրս սողա սենյակի՞ց:

Վազեցի հետ, բայց ժամանակին ուշքի եկա ու, որ բնակիչներին չվախեցնեմ, հանգիստ քայլերով կտրեցի խոհանոցը:

Մարյա Վասիլեւնան մատներով կտկտացնում էր խոհանոցի սեղանին ու մեքենավարին ասում էր.

- Ժիլ է: Այ էդ ժիլ է: Ես էլ կսվացնեի:

Մարող սրտով դուրս եկա միջանցք եւ անմիջապես համարյա վազքով նետվեցի դեպի սենյակս:

Դրսից ամեն ինչ հանգիստ էր: Մոտեցա դռանը ու կիսաբաց անելով՝ ներս նայեցի: Պառավն առաջվա պես հանգիստ բերանքսիվար պառկած էր: Կրոկետի մուրճը առաջվա տեղում էր՝ դռան մոտ: Վերցրի, մտա սենյակ ու իմ հետեւից բանալիով կողպեցի դուռը: Այո՛, սենյակից հաստատապես դիահոտ էր գալիս: Ոտք արեցի պառավի վրայով, մոտեցա պատուհանին ու նստեցի բազկաթոռի մեջ: Միայն թե չվատանամ այդ առայժմ թե-

կուզեւ թույլ, բայց համենայնդեպս անտանելի հոտից: Վառեցի ծխամորճս: Սիրտս խառնում էր, ու մի քիչ էլ փորս էր ցավում:

Բայց ի՞նչ եմ նստել: Պետք է արագ գործել, քանի դեռ պառավը վերջնականապես չի նեխել: Բայց համենայնդեպս զգույշ պիտի խցկեմ ճամպրուկը, որովհետեւ հենց այդ պահին կարող է կծել մատս: Իսկ հետո՝ մեռնել դիաթույնի վարակումի՞ց. շա՛տ կներեք:

- Հե՛յ,- հանկարծ հասկացա:- Իսկ հետաքրքիր է՝ ինչո՞վ եք կծելու: Ձեր ատամները հրեն ուր են:

Բազկաթոռում նստած՝ կռացա ու նայեցի պատուհանի անկյունը, որտեղ իմ հաշվարկով պիտի պառավի դնովի ատամնաշարը լիներ: Բայց ատամնաշարը չկար:

Մտքի մեջ ընկա. գուցե մեռած պառավը սողացել է իմ սենյակով մեկ՝ ատամնաշարը փնտրելով: Գուցե նույնիսկ գտել ու նորից դրել է բերա՞նը:

Վերցրի կրոկետի մուրճը ու դրանով պրպտեցի անկյունում: Չէ՛, ատամնաշարը կորել է: Այդ ժամանակ պահարանից հանեցի հաստ բայկայե սավանն ու մոտեցա պառավին: Կրոկետի մուրճը պատրաստ պահում էի աջ ձեռքիս, իսկ ձախով բայկայե սավանն էի բռնել:

Զզվանք ու վախ էր հարուցում մեռած պառավը: Մուրճով բարձրացրի գլուխը. բերանը բաց էր, աչքերը ճակատն էին թռել, իսկ ծնոտին, ուր սապոգով խփել էի, մի խոշոր, մուգ բիծ էր տարածվել: Նայեցի պառավի բերանի մեջ: Չէ՛, ատամնաշարը չէր գտել: Իջեցրի գլուխը: Գլուխն ընկավ ու դխկաց գետնին:

Այդ ժամանակ հատակին փռեցի բայկայե սավանն ու կիպ մոտեցրի պառավին: Հետո ոտքով ու կրոկետի մուրճով պառավին շուռ տվի մեջքի վրա: Հիմա նա պառկած էր սավանին: Պառավի ծնկները ծալված էին, իսկ բռունցքները սեղմվել էին ուսերին: Թվում էր, կատվի նման մեջքին պառկած, պառավը պատրաստվում է պաշտպանվել իր վրա հարձակվող արծվից: Պետք է էստեղից արագ կորցնել էս լեշը:

Պառավին փաթաթեցի հաստ սավանի մեջ ու ձեռքերիս վրա առա: Պարզվեց՝ ավելի թեթեւ է, քան կարծում էի: Իջեցրի ճամպրուկի մեջ ու փորձեցի փակել կափարիչը: Այստեղ ցանկացած դժվարության սպասում էի, բայց կափարիչը համեմատաբար հեշտ փակվեց: Ծխկացրի ճամպրուկի կողպեքներն ու վեր կացա:

Ճամպրուկը կազմ ու պատրաստ է, արտաքուստ՝ միանգամայն բարեվայելուչ, ասես մեջը սպիտակեղեն ու գրքեր են: Բռնեցի բռնակն ու փորձեցի բարձրացնել: Այո, իհարկե ծանր էր, բայց ոչ անտանելի, միանգա-

մայն կարող էի հասցնել տրամվայի կանգառ:

Նայեցի ժամացույցին. հինգն անց էր քսան րոպե: Լա՛վ է: Նստեցի բազկաթոռի մեջ, որ մի քիչ շունչ առնեմ ու ծխամորճ ծխեմ:

Երեւում է այդ օրը կերած սարդելկաներն այնքան էլ լավը չէին, դրա համար էլ փորս ավելի ու ավելի ուժեղ էր ցավում: Իսկ գուցե նրանից էր, որ հո՞ւմ էի կերել: Կամ գուցե փորիս ցավը զուտ նյարդերի՞ց էր:

Նստել ու ծխում եմ: Ու րոպեները վազում են իրար հետեւից:

Գարնան արեւը հորդում է պատուհանից, ու ես նրա շողերից կկոցում եմ աչքերս: Ահա նա թաքնվում է դիմացի տան ծխնելույզի հետեւում, ու ծխնելույզի ստվերը վազում է տանիքով, թռչում փողոց եւ ընկնում դեմքիս: Հիշում եմ, թե ինչպես էի նախորդ օրը նստել ու վիպակ էի գրում: Ահա վանդակավոր թուղթն ու վրան մանրատառ տողը. «Հրաշագործը բարձրահասակ էր»:

Նայեցի պատուհանից դուրս: Փողոցով անցնում էր արհեստական ոտքով հաշմանդամն ու բարձր թխկացնում ոտքն ու ձեռնափայտը: Երկու բանվոր ու մի պառավ, ձեռները կողերին կանթած, քրքջում են հաշմանդամի ծիծաղելի քայլվածքի վրա:

Վեր կացա: Ժամանակն է: Ճանապարհ ընկնելու ժամանակն է: Ժամանակն է, որ պառավին հասցնեմ ճահճուտը: Դեռ պիտի փող պարտք անեմ մեքենավարից:

Դուրս եկա միջանցք ու մոտեցա նրա դռանը:

- Մատվե՛յ Ֆիլիպովիչ, տա՞նն եք,- հարցրի ես:

- Տանն եմ,- պատասխանեց մեքենավարը:

- Այդ դեպքում, կներեք, Մատվե՛յ Ֆիլիպովիչ, փողից ո՞նց եք: Չէի՞ք կարող պարտքով երեսուն ռուբլի տալ:

- Կարող էի,- ասաց մեքենավարը: Ու լսեցի ինչպես է զնգացնում բանալիները՝ ինչ-որ արկղ բացելով: Հետո բացեց դուռը եւ ինձ պարզեց նոփնոր կարմիր երեսուն ռուբլանոցը:

- Շատ շնորհակալ եմ, Մատվե՛յ Ֆիլիպովիչ,- ասացի ես:

- Չարժի՛, չարժի՛,- ասաց մեքենավարը:

Փողը խցկեցի գրպանս ու վերադարձա սենյակ: Ճամպրուկը հանգիստ կանգնած էր նախկին տեղում:

- Այ հիմա կարելի է ճանապարհվել, անհապա՛ղ,- ասացի ինձ:

Վերցրի ճամպրուկն ու դուրս եկա սենյակից:

Մարյա Վասիլեւնան ինձ ճամպրուկով տեսնելով՝ ձայն տվեց.

- Էդ ո՞ւր:

- Սորքարոջս մոտ,- ասացի ես:

- Ծուտ կգա՞ք,- հարցրեց Սարյա Վասիլեւնան:

- Հա՛,- ասացի ես:- Սպիտակեղեն պիտի տանեմ մորաքրոջս: Գուցե հենց այսօր էլ վերադառնամ:

Դուրս եկա փողոց: Ճամպրուկը մեկ աջ, մեկ ձախ ձեռքով բռնած՝ բարեհաջող հասա տրամվայի կանգառ:

Տրամվայ խցկվեցի կցավագոնի առաջին հարթակից ու ձեռքով արեցի տոմսավաճառ կնոջը, որ գա ուղեբեռի ու տոմսի փողը ստանալու: Չէի ուզում միակ երեսուն ռուբլանոցը փոխանցել վագոնով մեկ ու չէի համարձակվում թողնել ճամպրուկն ու մոտենալ նրան: Տոմսավաճառը հասավ հարթակ ու հայտարարեց, որ մանր չունի: Ստիպված առաջին իսկ կանգառում իջա:

Չարացած կանգնել ու սպասում էի հաջորդ տրամվային: Փորս ցավում էր ու ոտքերս մի քիչ դողում էին:

Ու հանկարծ տեսա իմ հաճելի տիկնոջը. փողոցը կտրելիս իմ կողմն էր նայում:

Ձանկեցի ճամպրուկն ու նետվեցի նրա ետեւից: Չգիտեի՝ անունն ինչ է, ու չէի կարող կանչել: Ճամպրուկն ահավոր խանգարում էր. երկու ձեռքով պահել էի իմ առաջ եւ հրում էի ծնկներով ու փորով: Հաճելի տիկինը բավական արագ էր քայլում, ու զգացի, որ հետեւից չեմ հասնի: Քրտինքից լրիվ թրջվել ու հալից ընկել էի: Հաճելի տիկինը մտավ նրբանցք: Երբ հասա անկյունը, արդեն չկար:

- Անիծվա՜ծ պառավ,- ֆշշացրի ես՝ ճամպրուկը շպրտելով գետնին:

Բաճկոնիս թեւքերը քրտինքից ամբողջովին թրջվել ու կպել էին թեւերիս: Երկու տղեկ կանգնեցին իմ առաջ ու սկսեցին ուսումնասիրել: Դեմքիս հանգիստ արտահայտություն տվի ու, ասես ինչ-որ մեկին սպասելով, սկսեցի ակնդետ նայել մոտակա դարպասատակին: Տղաները շշնջում ու մատով ինձ էին ցույց տալիս: Կատաղի չարությունը խեղդում էր: Ա՜խ, կարկամախտ քսի տայի վրաները:

Եվ ահա այդ քոսոտ լակոտների պատճառով վեր եմ կենում, վերցնում ճամպրուկը, մոտենում դարպասատակին ու ներս եմ նայում: Դեմքս զարմանք է արտահայտում, հանում եմ ժամացույցս եւ ուսերս թոթվում: Տղաները հեռվից հետեւում են: Նորից եմ ուսերս թոթվում ու նայում դարպասատակին:

- Տարօրինակ է,- ասում եմ բարձրաձայն, վերցնում ճամպրուկն ու քարշ տալիս դեպի տրամվայի կանգառը:

Կայարան հասա յոթին հինգ պակաս: Վերադարձի տոմս եմ առնում մինչեւ Լիսյի Նոս ու գնացք նստում:

Վագոնում, ինձնից բացի, երկու հոգի էլ կա. մեկն, ըստ երեւույթին, բանվոր է, հոգնել է, կեպին աչքերին քաշած, քնած է: Մյուսը, մի դեռ ջահել տղա է, գյուղական պճնամոլի հագուկապով. պիջակի տակ վարդագույն շեղօձիք վերնաշապիկ է, կեպիի տակից դուրս է պրծել գանգուր մազափունջը: Վառ կանաչ պլաստմասե ծխափողի մեջ խցկած գլանակ է ծխում:

Ճամպրուկը դնում եմ նստարանների արանքում ու նստում: Փորս այնպես կտրտում, որ ցավից չտնքալու համար սեղմում եմ բռունցքներս:

Երկու միլիցիոներ կառամատույցով ինչ-որ քաղաքացու տանում են հենակետ: Նա քայլում է ձեռքերը մեջքին, գլուխը կախ:

Գնացքը շարժվում է: Նայում եմ ժամացույցին. յոթն անց է տասը րոպե:

Ա՛խ, ինչ հաճույքով պառավին կգցեմ ճահիճը: Միայն ափսոս, որ մահակ չվերցրի, երեւի պառավին ափից հրելու կարիք լինի:

Վարդագույն շեղօձիքով պճնամոլը լկտի զննում է ինձ: Թիկունք եմ անում նրան ու նայում պատուհանից դուրս:

Փորիս մեջ սարսափելի կծկումներ են. սեղմում եմ ատամներս, կծկում բռունցքներս ու լարում ոտքերս:

Անցնում ենք Լենսկայան ու Նոր Գյուղը: Ահա առկայծեց Բուդդայական տաճարի ոսկյա գագաթը, ահա եւ ծովը երեւաց:

Բայց այստեղ վեր եմ թռչում ու ամեն ինչ մոռացած, մանրաքայլ վազում եմ զուգարան: Խելագար ալիքը ճոճում ու պտտում է գիտակցությունս...

Գնացքը դանդաղեցնում է ընթացքը: Մոտենում ենք Լախտիին: Նստել ու վախենում եմ շարժվեմ, որ կանգառում չվռնդեն զուգարանից:

- Ծո՛ւտ շարժվեր: Ծո՛ւտ շարժվեր:

Գնացքը շարժվում է, ու ես հաճույքից փակում եմ աչքերս: Ա՛խ, այդ պահերը սիրո պահերի պես անուշ են լինում:

Բոլոր ուժերս լարված են, բայց գիտեմ, որ դրան հետեւելու է սարսափելի անկումը:

Գնացքը նորից կանգնում է: Օլգինոն է: Ուրեմն՝ նորից այդ տառապանքը:

Բայց հիմա դրանք կեղծ ցավեր են: Սառը քրտինք է հայտնվում ճակատիս, ու թեթեւ սառնություն է ճախրում սրտիս շուրջը: Վեր եմ կենում ու որոշ ժամանակ գլուխս պատին հենած՝ կանգնում եմ: Գնացքը գնում է, եւ ճոճքը շատ հաճելի է:

Հավաքում եմ բոլոր ուժերս եւ օրորվելով դուրս գալիս զուգարանից:

Վագոնում ոչ ոք չկա: Բանվորն ու վարդագույն շեղօձիքով պճնամոլը հավանաբար իջել են Լախտիում կամ Օլգինոյում: Դանդաղ գնում եմ դեպի իմ պատուհանը:

Եվ հանկարծ կանգնում ու բութ նայում եմ իմ դիմաց: Ճամպրուկը չկա: Ըստ երեւույթին պատուհանն եմ շփոթել: Թռչում եմ դեպի մյուս պատուհանը: Ճամպրուկը չկա: Հետ եմ թռչում, առաջ, վագքով կտրում եմ վագոնը, վերադառնում, նայում եմ նստարանների տակ. ճամպրուկը չկա ու չկա:

Անկասկած, մինչ զուգարանում էի, ճամպրուկը գողացել են: Դա կարելի է կանխատեսել:

Աչքերս չռած նստել եմ նստարանին ու չգիտես ինչու հիշվում է, թե ինչպես էր շխկոցով պոկվում Սակերդոն Միխայլովիչի շիկացած կաթսայիկի էմալը:

- Ի՞նչ դուրս եկավ,- հարցնում եմ ինձ:- Հիմա ո՞վ կհավատա, որ ես չեմ սպանել պառավին: Ինձ այսօր իսկ կբռնեն, հենց այստեղ կամ քաղաքի կայարանում, ինչպես այն գլխահակ քայլող քաղաքացուն:

Դուրս եմ գալիս վագոնի հարթակ: Գնացքը մոտենում է Լիսյի Նոսին: Առկայծում են ճանապարհը եզերող սպիտակ ուղեյուղիկները: Իմ վագոնի աստիճանները գետնին չեն հասնում: Ցատկում քայլում եմ դեպի կայարանի տաղավարը: Քաղաք մեկնող գնացքին դեռ կես ժամ կա:

Քայլերս ուղղում եմ դեպի մոտակա անտառակը: Ահա գիհու թփերը: Դրանց ետեւում ինձ ոչ ոք չի տեսնի: Գնում եմ այդ կողմը:

Մի մեծ, կանաչ թրթուր է սողում գետնի վրայով: Չոքում ու մատով դիպչում եմ նրան: Թրթուրն օղակ-օղակ մի քանի անգամ ուժեղ այս ու այն կողմ է կծկվում:

Նայում եմ շուրջս: Ինձ ոչ ոք չի տեսնում: Թեթեւ դող է անցնում մեջքովս:

Գլուխս կախում ու կամացուկ ասում եմ.

- Հանուն Հոր եւ Որդու եւ Սուրբ Հոգու, հավիտյանս հավիտենից: Ամեն:

.....

Սրանով առ ժամանակ ամփոփում եմ ծեռագիրս՝ համարելով, որ առանց այն էլ շատ երկարեց:

Միխայիլ ԾՈԼՈԽՈՎ

ԽԱԼԸ

I

Սեղանին փամփուշտի վառոդահոտ պարկուճներ են, ոչխարի ոսկոր, դաշտային քարտեզ, ամփոփագիր, ծիու քրտնահոտով թիթեղազարդ երասան, բոքոնի կող: Այս ամենը՝ սեղանին, իսկ խոնավ պատից բորբոսնած հղկատաշ նստարանին, մեջքը կիպ պատուհանի գոգին հենած՝ Նիկոլկա Կոշեւոյը՝ հեծելավաշտի հրամանատարն է նստել: Սառած, անշարժ մատների արանքում մատիտ է: Սեղանին փռած հնացած պլակատների կողքին՝ կիսով չափ լրացրած անձնական թերթիկ: Խորդուբորդ թերթիկը ժլատ պատմում է. Կոշեւոյ Նիկոլայ: Հեծելավաշտի հրամանատար: Հողագործ: ՌԿԵՄ[1] անդամ:

«Տարիքը» սյունակի դիմաց մատիտը դանդաղ գրում է՝ 18 տարեկան:

Թիկնեղ է Նիկոլկան, տարիքից մեծ տեսք ունի: Կնճիռների ցանցով պատած աչքերն ու ծերունաբար կորացած մեջքը ծերացնում են նրան. ջահել է, ախր, տղեկ, կանաչ ճլախոտ՝ կատակով ասում են վաշտում, բայց գտիր ուրիշ մեկին, որ կկարողանար համարյա առանց կորուստների երկու բանդա ոչնչացնել ու ցանկացած խիստ հրամանատարից ոչ վատ հեծելավաշտը կես տարի տանել կռիվ ու մարտի:

Ամաչում է Նիկոլկան իր տասնութ տարիներից: Ատելի «տարիքը» սյունակի դիմաց մատիտը, վազքը դանդաղեցնելով, միշտ սկսում է սողալ, իսկ Նիկոլկայի այտերը վառվում են վարդագույնով: Կազակ է Նիկոլկայի հայրը, հոր գծով՝ ինքն էլ է կազակ: Ասես կիսանիրհի մեջ հիշում է՝ երբ հինգվեց տարեկան էր, հայրը նստացնում էր իր ծառայողական ձիու վրա:

- Բաշը բռնի, տղա՛ս,- գոչում էր նա, իսկ դալկադեմ մայրը ժպտում էր խոհանոցի դռնից եւ լայն բացած աչքերով նայում ձիու սրոսկր մեջքը գրկած բարակ տոտիկներին ու սանձը բռնած հորը:

Վաղուց էր այդ ամենը: Նիկոլկայի հայրն անհետ կորավ գերմանական կռվին, ասես ջրի տակն անցավ: Ոչ մի լուր, ոչ մի տեղեկություն: Մայրը մահացավ: Հորից Նիկոլկան ժառանգել էր ձիերի հանդեպ սերը, անսահման

1. Ռուսաստանի կոմունիստական երիտասարդական միություն:

խիզախությունն ու խալը՝ ինչպիսին հայրն ուներ, աղավնու ձվի չափ, ձախ ոտքին, կոճից մի քիչ բարձր: Մինչեւ տասնհինգ տարեկանը մշակություն էր անում, հետո երկար շինել խնդրեց ու ստանիցայով անցնող կարմիր գնդի հետ գնաց Վրանգելի դեմ: Այս ամառ Նիկոլկան զինկոմի հետ լողանում էր Դոնում: Զինկոմը, կակազելով, կոնտուզահար գլուխը պտտելով եւ Նիկոլկայի կոր ու արեւից սեւացած մեջքին թփթփացնելով՝ ասաց.

- Դու, ընիքը... Դու երջա... երջանիկ ես: Հա՛, երջանիկ ես: Էդ խալը, ասում են, երջանկություն է բերում:

Նիկոլկան բացեց ճերմակափրփուր ատամները, սուզվեց ու փռթացնելով կանչեց ջրի միջից.

- Փչում ես, խելո՛ք: Ես երեխա ժամանակից որբ եմ, ամբողջ կյանքս մեջք եմ ծռել մշակություն անելով, իսկ դու՝ երջանի՛կ...

Ու լողաց դեպի Դոնը գրկող դեղին ցամաքալեզվակը:

II

Խրճիթը, ուր Նիկոլկան է կենում, դեպի Դոն իջնող դարափին է: Պատուհանից կանաչ ծփացող ափն ու ջրի արջնած պողպատն է երեւում: Փոթորկոտ գիշերներին ալիքները խփվում են դարափին, փեղկերը շնչակտուր տնքում են, ու թվում է Նիկոլկային, որ ջուրը մեղմ սողում է հատակի անցքերի մեջ ու շատանալով՝ ցնցում խրճիթը:

Ուզում էր ուրիշ կացարան տեղափոխվել, բայց այդպես էլ չգնաց, մնաց մինչեւ աշուն: Սառնաշունչ մի առավոտ, պայտած սապոգների զնգոցով փխրուն լռությունը փշրելով, Նիկոլկան ելավ սանդղամուտ: Իջավ փոքրիկ բալենու այգին ու պառկեց ալեհեր շաղից արցունքոտված խոտերին: Լսվում էր՝ տանտիրուհին ինչպես է մարագում համոզում կովին, որ հանգիստ կանգնի, հորթուկը պահանջկոտ ու թավածայն մնչում էր, ու կաթի շիթերը ծնգում էին դույլի պատերին:

Բակում ճռնչաց դռնակը, շունը հաչեց: Դասակապետի ձայնը.

- Հրամանատարը տաՆն է:

Նիկոլկան հենվեց արմունկներին, վեր կացավ:

- Էստեղ եմ: Ի՞նչ է պատահել:

- Սուրհանդակ է եկել ստանիցայից: Ասում է՝ բանդան ճեղքել է Սալսկի շրջանից, գրավել Գրուշինսկի սովխոզը...

- Սուրհանդակին բեր էստեղ:

Սուրհանդակը գոմն էր քաշում տաք, քրտնմխած ձիուն: Բակի մեջտեղը ձին ընկավ առջեւի ոտքերին, հետո՝ կողքի, կարճ ու ընդհատուն

խռռաց ու շունչը փչեց՝ ապակիացած աչքերով նայելով չար հաչոցից խեղդվող շղթայակապ շանը: Ծունչը փչեց, որովհետեւ սուրհանդակի բերած ծրարին երեք խաչ էր արած, ու այդ ծրարով քառասուն վերստ, առանց շունչ առնելու սլացել էր սուրհանդակը:

Նիկոլկան կարդաց, որ նախագահը խնդրում է հեծելավաշտով օգնության հասնել, մտավ վերնասենյակ ու թուրը կախելով՝ հոգնած մտածում էր. «Գնայի՛ որեւէ տեղ սովորելու, իսկ էստեղ՝ բանդա՛... Ցինկոմը ամոթանք է տալիս, թե մի բառ ճիշտ գրել չգիտես ու դեռ վաշտապետ ես կոչվում... Ես ե՞մ մեղավոր, որ չհասցրի ծխական դպրոցն ավարտել: Զարմանալի մարդ է... Էս բանդան էլ... Էլի արյուն, իսկ ես արդեն սովորել էի էսպես ապրելուն... Զզվել եմ ամեն ինչից...»:

Դուրս եկավ սանդղամուտ՝ ընթացքում լիցքավորելով կարաբինը, իսկ մտքերը ձիերի պես սլանում էին տրորված ճանապարհով. «Գնայի քաղա՛ք... Սովորեի՛...»:

Սատկած ձիու կողքով անցնելիս նայեց փոշոտ ռունգերից հոսած արյան սեւ ժապավենին ու շրջեց գլուխը:

III

Դարուփոս ամառային ճանապարհով, քամիների լիզած աղուրներով գանգրահեր փռվում է մոխրագույն ջղախոտը, թելուկն է խիտ ու խավոտ լոշտակներով տարածվում: Ժամանակին այդ ճանապարհով խոտ են կրել տափաստանում սաթե ցայտքերի պես ցրված կալատեղերը, իսկ բանուկ մեծուղին փռված էր բլրից այն կողմ, հեռագրասյուների տակ: Վազում են սյուները աշնան ճերմակավուն մեգի միջով, ոտք անում-անցնում արոտ ու ձորակ, իսկ սյուների կողքով, պսպղացող ճանապարհով ատամանը տանում է իր բանդան՝ Սովետական իշխանությունից դժգոհ Դոնի ու Կուբանի կես հարյուրակ կազակներ: Երեք օր է, որ ոչխարի հոտից պոկված ընկած գայլի պես գնում են ճամփեքով ու անկաձան խոպանով, իսկ հետեւից կրնկակոխ՝ Նիկոլայ Կոշեւոյի ջոկատը:

Ընտրովի ժողովուրդ է բանդայում, ծառայած, փորձառու, բայց ատամանը, համենայնդեպս,զգոնությունը չի թուլացնում. ձգվում է ասպանդակների վրա, աչքերով տափաստանն ուտում, վերստերն է հաշվում մինչեւ Դոնից այն կողմ ձգվող անտառների երկնագույն երիզը:

Այդպես էլ փախչում են գայլի պես, իսկ նրանց հետեւից Նիկոլայ Կոշեւոյի հեծելավաշտն է հետքերը տրորում:

Ամռան օրերին լավ եղանակ է Դոնի տափաստաններում, երկնքի տակ

թանձր ու թափանցիկ արծաթե զանգահարությամբ ալիք են տալիս ցորենի հասկերը: Հնձից առաջ է այդպես, երբ տռուզ հատիկի բեղը սեւանում է հասկին, տասնյոթամյա տղայի բեղատեղի նման, ու հասկերը բարձրանում, մարդաբոյն էլ են ուզում անցնեն:

Մորուքավոր գյուղացիք ավազակավին, ավազաբլուրների վրա, այգիների շուրջը կարկատան արտեր են անում: Բերք չի տալու հաստատ, միշտ էլ դեսյատինը[2] երեսուն մերից ավել հաց չի տվել, ցանում են, որ արաղ քաշեն, աղջկա արցունքից վճիտ, որովհետեւ հնուց սովորույթ է,պապերն ու նախապապերն են խմել, ու Դոնի Զորաց Ծրջանի զինանշանին իզուր չի, որ հարբած կազակ է պատկերված՝ անշապիկ՝ խմիչքի տակառին: Թունդ հարբած ու կատաղի են աշնանը խուտորներն ու ստանիցաները, ճոճվում են գինովցած կարմրագագաթ փափախները ուռահյուս ցանկապատների գլխին:

Դրա համար է, որ ատամանն ինքն էլ ոչ մի օր սթափ չի լինում, դրա համար է, որ բոլոր սայլավարներն ու գնդացրորդները հարբած-ընկած են զսպակավոր տաչանկաների վրա:

Յոթ տարի չի տեսել ատամանը հայրենի խրճիթները: Գերմանական գերություն, հետո՝ Վրանգելը, արեւի տակ հալվող Կոստանդնուպոլիսը, փշալարով պատված ճամբարը, թուրքական առագաստանավը՝ աղը կերած ու ծթած թեւով, կուբանյան, ցցունքներով եղեգներն ու բանդան:

Սա է ատամանի կյանքը, թե հետ նայես: Քար է կտրել հոգին, ինչպես ամռան շոգին ցլի երկված կճղակի հետքերն են քարանում տափաստանային ճահճուտի ափին: Տարօրինակ ու անհասկանալի՝ մաշում է ներսից, հյուծում մկանները, ու զգում է ատամանը՝ մոռանալ չկա՛, ու տենդը չես խեղդի արաղով: Իսկ խմում է, ոչ մի անխմել օր չունի, որովհետեւ բուրավետ ու անուշ են ծաղկում հացերը Դոնի տափաստաններում, որ արեւի տակ պառկած՝ բացել են անկշտում սեւահող արգանդը, ու թխաթուշ կնանիք այնպիսի արաղ են քաշում խուտորներում ու ստանիցաներում, որ աղբրի ջրից չես տարբերի:

IV

Արշալույսին վրա տվին առաջին ցրտերը: Արծաթե ալեհերք ցայտեց նունուֆարների փռված տերեւներին, իսկ ջրաղացի անիվի վրա Լուկիչն առավոտյան փայլարի պես նուրբ, գույնզգույն սառցակտորներ տեսավ:

Առավոտից լավ չէր Լուկիչը. մեջքը ջարդվում էր, խուլ ցավից ոտքերը

2. Հողատարածքի չափ՝ 1,09 հեկտար:

փթանոց էին դառել, գետնից չէին կտրվում: Քստքստացնելով հետուառաջ էր անում ջրաղացում՝ դժվար շարժելով անհեթեթ, ոսկորներից անջատվող մարմինը: Կորեկի դինգից դուրս պրծավ մկան ճտանոցը. Լուկիչն արցունքակալած-խոնավ աչքերով նայեց վեր՝ տանիքի տակ՝ ձեղնափայտից աղավնին շուտասելուկով մանրահատ ու գործնական քրթմնջոց էր ցանում: Ասես ավազակավից ծեփած ռունգերով պապը ներս քաշեց ջրիկ բորբոսի կպչուն հոտն ու աղացած ցորեն բույրը, ականջ դրեց, թե ջուրն ինչպես է բկին տալով ծծում ու լպստում հիմնասյուները, ու մտախոհ տրորեց ճիլոպի նման մորուքը:

Մեղվանոցում հանգստանալու պառկեց Լուկիչը: Ծեղակի քնել էր քուրքի տակ, բերանը՝ բաց, բերանի անկյուններում մորուքը. մորուքը կպչուն ու տաք թքոտվել էր: Սթնշաղը թանձր քսմսվել էր պապի խրճիթին, ջրաղացը թաղվել էր մշուշի կաթնաձվենների մեջ...

Իսկ երբ արթնացավ, անտառից երկու հեծյալ էին դուրս եկել: Մեկը ձայն տվեց մեղվանոցով անցնող պապին.

- Էստեղ արի, պա՛պ:

Անհանգիստ նայեց Լուկիչը, կանգ առավ: Խառնակ տարիներին այդպիսի զինված մարդկանց շատ էր տեսել, որ ձիու կեր ու ալյուր էին խլում, եւ բոլորին էլ չէր սիրում՝ սրտանց ու առանց տարբերության:

- Արագ շարժվի, քավթառ անտե՛ր:

Լուկիչն անցավ փեթակների արանքով ու չորացած շրթունքները չմփչմփացնելով՝ կանգնեց հյուրերից հեռու:

- Կարմիրներ ենք, պապի՛... Սեզանից մի վախենա,- հաշտ խոպաց ատամանը:- Բանդայի հետեւից ենք գնում, մերոնցից հետ ենք մնացել... Կարող է՞ տեսած լինես, երեկ էստեղով ջոկատ չի՞ անցել:

- Ոնց որ կային:

- Ո՞ւր գնացին, պապի՛:

- Խոլերը գիտի դրանց:

- Քո ջրաղացում մարդ չի մնացե՞լ:

- Չկան,- կարճ կապեց Լուկիչն ու թիկունքը դարձրեց նրանց:

- Սպասի, բի՛ձա:- Ատամանը ցած թռավ թամբից, հարբած ճոճվեց աղեղնածեւ ոտքերի վրա ու տնաքաշ օղու թունդ շունչ արձակելով՝ ասաց:- Մենք, պա՛պ, կոմունիստներին ենք վերացնում... Էդպե՛ս... Իսկ թե ով ենք, քու խելքի բանը չի:- Սոթ տվեց՝ սանձը ձեռքից թողնելով:- Քու գործը յոթանասուն ձիու կեր պատրաստելն ու սուս անելն է... Ու որ աչք ճպելում... Հասկացա՞ր: Ո՞ւր է ցորենդ:

- Չկա,- հայացքը փախցնելով՝ ասաց Լուկիչը:
- Իսկ էս ամբարո՞ւմ ինչ է:
- Անպետք բաներ են... Ցորեն չկա:
- Հապա գնանք:
Բռնեց Ծերունու շլնքից ու ծնկով տալով քաշեց ծռակող, հողի մեջ թաղված ամբարի մոտ: Կրնկի վրա բացեց դռները: Ամբարում ցորեն ու գնդաճաղկի գարի էր:
- Բա էս ցորեն չի՞, քավթա՛ռ սրիկա:
- Ցորեն է, որդի՛... Աղալու է... Կլոր տարին հատիկ-հատիկ հավաքել եմ, դու ուզում ես ձիերիդ տաս...
- Քո կարծիքով մեր ձիերը սովից պիտի կոտորվե՞ն: Ի՞նչ է, կարմիրների կողմն ե՞ս, մահդ ե՞ս ուզում:
- Խնայի, որդի՛: Ո՞ր մեղքիս համար:- Լուկիչը հանեց գլխարկը, ընկավ ծնկներին, ատամանի մազմզոտ ձեռքերն էր համբուրում...
- Քո սրտո՞վ են կարմիրները, հա՞:
- Կներես... Հիմար խոսք էր, ների՛: Ների, մի սպանի,- աղաղակեց Ծերունին՝ ատամանի ոտքերը գրկելով:
- Երդվի, որ կարմիրների կողմից չես... Խաչ մի արա, է՛, հող կեր...
Անատամ բերանով ավազ է ծամում պապը ու բռան ավազը թրջում արցունքներով:
- Այ հիմա հավատում եմ: Վեր կաց, բի՛ձա:
Ու ծիծաղում է ատամանը՝ նայելով թե ինչպես է թմրած ոտքերին կանգնում Ծերունին: Իսկ վրա հասած հեծելակները ամբարից քաշում են գարին ու ցորենը, լցնում ձիերի ոտքերի տակ, ու բակը ծածկվում է ոսկեգույն հատիկով:

V

Արշալույսը փաթաթվել է մշուշով, մեգոտ խոնավությամբ:
Լուկիչը շրջանցեց Ժամապահին ու ոչ թե ճամփով, անտառի՝ միայն իրեն հայտնի կածանով, ձորակներով, վաղորդյան զգոն քնի մեջ ականջը սրած անտառով մանրաքայլ հասավ խուտոր:
Հասավ քամաղացին, ուզում էր նախրի կածանով մտնել տների արանքը, բայց աչքի առաջ հեծյալների անհստակ ուրվապատկերներ հայտնվեցին:
- Ո՞վ է,- լռության մեջ լսվեց տագնապած բղավոցը:
- Ես եմ...,- չմփչմփացրեց Լուկիչն ու լրիվ թուլացավ, դողաց:

- Ո՞վ ես: Անցաթո՛ւղթ: Ի՞նչ ես թրեւ գալիս:

- Ջաղացպան եմ... Էստեղի ջրաղացից: Գործով եմ խուտոր գնում:

- Ի՞նչ գործ: Հապա, գնանք հրամանատարի մոտ: Առաջ անցի...,- գոռաց մեկը՝ ձին վրա քշելով:

Լուկիչն ուսին զգաց ձիու խոնավ շրթունքները ու կաղալով շտապեց խուտոր:

Կղմինդրով ծածկած խրճիթի առաջ կանգ առան: Ուղեկցորդը տնքալով իջավ ձիուց, ձին կապեց ցանկապատից ու թուրը շխկացնելով՝ բարձրացավ առմուտք:

- Հետեւիցս արի...

Պատուհաններում լույս կար: Ստան:

Լուկիչը փոշտաց ծխախոտի ծխից, հանեց գլխարկն ու արագ խաչակնքեց:

- Ահա, բռնել ենք: Խուտոր էր գնում:

Նիկոլկան սեղանից կտրեց գզգզված, բմբլոտած գլուխը, քնահարամ, ոչ խիստ հարցրեց.

- Ո՞ւր էիր գնում:

Լուկիչն առաջ եկավ. ուրախությունից շունչը կտրվում էր.

- Հարազա՛տս, մերո՛նք են, ես էլ մտածում էի՝ էլի էդ արնախումները եկան... Էնպես էի վախեցել, չիարցրի էլ... Ջաղացպան եմ ես: Հիշում ե՞ք, Միտրոխինի անտառով էիք անց կենում ու իմ մոտ մտաք, հլա քեզ էլ, անո՛ւշ, կաթ խմացրի... Թե՞ մտահան ես արել...

- Լա՛վ, ասա՛:

- Էն կասեմ, հարազա՛տ, որ էրեկ իրիկուն, մթնժոռած, ներս պրծավ էդ բանդան ու ցորենը մաքուր սրբեցին իրանց ձիերին տվին...Խնդացին վրաս... Դրանց մեծը ասում է՝ երդվի, ասում է, ու ստիպեց հող ուտեմ:

- Իսկ հիմա ո՞ւր են:

- Էլի էնտեղ: Արաղ են բերել, լակում են իմ վերնատանը, իսկ ես էստեղ վազեցի, որ ձերդ ողորմությանը զեկուցեմ, գոնե դուք դրանց հախից գաք:

- Ասա ձիերը թամբեն...,- Նիկոլկան, պապին ժպտալով վեր կացավ ու հոգնած քաշեց շինելի թեւքը:

VI

Լուսանում էր:

Նիկոլկան, անքուն գիշերներից կանաչած, հասավ գնդացրային երկանիվին:

- Հենց գնանք հարձակման, խփի աջ թեւին: Դրանց թեւը պիտի կտրենք:

Ու սլացավ դեպի շարված հեծելավաշտը:

Վտիտ կաղնիների ետեւից ճանապարհին հեծյալներ երեւացին՝ շարքում չորս հոգի, տաչանկաները՝ կենտրոնում:

- Քառատրո՛փ,- գոչեց Նիկոլկան ու թիկունքում զգալով սմբակների աճող դղրդոցը՝ մտրակեց իր նժույգին:

Անտառի փեշից կտրուկ խփեց գնդացիրը, իսկ ճամփին հայտնվածները, ինչպես վարժանքի ժամանակ, արագ տարածվեցին դաշտում:

***

Հողմատապալ ծառերի մեջ բլրի գագաթը վազեց կոծոծների մեջ կորած վազեց գայլը: Գլուխն առաջ ձգած՝ ականջ դրեց: Ոչ հեռվում թնդում էին կրակոցները, ու բազմաձայն ոռնոցն էր ծանր ալիք տալիս:

Թը՛խկ՝ անտառակում ընկնում էր կրակոցը, իսկ բլրի ետեւը, հերկերից այն կողմ արձագանքը շուտասելուկով քրթմնջում էր՝ թա՛խկ:

Ու նորից հաճախազարկ՝ թը՛խկ, թը՛խկ, թը՛խկ... Իսկ բլրից այն կողմ պատասխանում էր՝ թա՛խկ, թա՛խկ, թա՛խկ...

Մի քիչ կանգնեց գայլը եւ անշտապ, կաղեկաղ քաշվեց որջը՝ անքաղել ճլախոտի թավուտը...

- Դիմացե՛ք... Չթողնել տաչանկաները... Դեպի անտառ... Դեպի անտառ, դրա մերը,- գոռում էր ատամանը՝ ասպանդակների վրա ձգվելով:

Իսկ տաչանկաների մոտ, լծափոկերը կտրելով, արդեն իրար էին անցել սայլորդներն ու գնդացրորդները, ու գնդացիրների անդադար կրակից կոտրտված զորաշղթան արդեն նետվում էր անկասելի փախուստի:

Ատամանը շրջեց ձիու գլուխը. մեկը թեւաբաց թռչում էր նրա վրա ու թուրը թափահարում: Կրծքին թռչկոտող հեռադիտակից, յափնջուց ատամանը կռահեց, որ շարքային կարմիրբանակային չի սուրացողը, ու ձգեց սանձը: Հեռվից տեսավ չարությունից ծամածռված ջահել անբեղ դեմքն ու քամուց կկոցած աչքերը: Ձին պարեց ատամանի տակ՝ հետեւի ոտքերին նստելով: Գոտու տակից քաշեց մաուզերը, գոռաց.

- Կաթնակե՛ր թուլա... Թափ տու, թափ տու, հիմա թափ կտամ քեզ...

Ատամանը կրակեց աչքի առաջ մեծացող սեւ յափնջու վրա: Ձին, ութ սաժեն վազելով, ընկավ, իսկ Նիկոլկան, յափնջին գցած, կրակելով՝ ավելի ու ավելի էր մոտենում ատամանին...

Անտառակից այն կողմ մեկը ոռնաց գազանի պես ու լռեց: Արեւը մտավ

ամպի տակ, եւ տափաստանի, ճամփի լողացող ստվերներ ընկան քամիներից ու աշունից ծեծկված անտառի վրա:

«Անփորձ է, կաթնակեր, տաքգլուխ, հենց դրանով էլ հափ կանի նրան մահը»,- կցկտուր մտածում էր ատամանը ու, սպասելով, որ դիմացինի փամփուշտները վերջանան, թողեց սանձն ու հարձակվեց անգղի պես:

Թամբից կախվելով՝ թափահարեց, մի պահ զգաց՝ հարվածից մարմինն ինչպես կակղեց ու անձայն սահեց գետնին: Ատամանը ցած թռավ թամբից, քաշեց սպանվածի հեռադիտակը, նայեց մանր դողով բռնված ոտքերին ու պպզեց, որ հանի մեռածի քրոմե սապոգները: Ոտքը ճռթացող ծնկին հենած արագ ու հմուտ հանեց մի սապոգը: Մյուսի տակ գուլպան երեւի ծալվել էր, չէր հանվում: Քաշեց, չար հայհոյելով, գուլպայի հետ հանեց սապոգն ու ոտքին, կոճից մի քիչ բարձր տեսավ աղավնու ձվի մեծության խալը: Դանդաղ, ասես վախենալով, որ կարթնացնի, շրջեց սառչող գլուխը, ձեռքերը ներկվեցին բերանից լայն շերտով հորդող արյունով, նայեց ուշադիր ու հետո միայն անզոր գրկելով սուր ուսերն ու գլուխը՝ կանչեց.

- Տղա՛ս... Նիկո՛լուշկա... հարազա՛տս... Իմ արյո՛ւն...

Սեւակնեց, գոռաց.

- Մի բառ ասա գոնե: Ախր էս ո՞նց...

Ընկավ՝ նայելով մարող աչքերին, արյունով ծեփված կոպերին, փորձեց բարձրացնել անկամ, կակուղ մարմինը... Բայց Նիկոլկան պինդ կծել էր լեզվի կապտած ծայրը, ասես վախենում էր, որ խոսք կթռցնի մի անչափելի մեծ կարեւոր բանի մասին:

Կրծքին սեղմած՝ համբուրեց ատամանը որդու սառչող ձեռքերը եւ մաուզերի քրտնած պողպատն ատամներով բռնած՝ կրակեց իր բերանի մեջ:

***

Իսկ երեկոյան, երբ անտառակից այն կողմ հեծյալներ երեւացին, եւ քամին ձայներ բերեց, ձիու փռշտոց ու ասպանդակների զնգոց, գիշակեր անգղը դժկամ պոկվեց ատամանի գզգզված գլխից: Պոկվեց, բարձրացավ ու հալվեց գորշ, աշնանային անգույն երկնքում:

Անդրեյ ՊԼԱՏՈՆՈՎ

ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԳՈՏ ԱՐԾԱԼՈՒՅՍԻՆ

1

Ծնողները տիֆից էին մահացել քաղաքացիական պատերազմի ժամանակ, մի գիշերվա մեջ: Օլգան այն ժամանակ տասնչորս տարեկան էր, ու մնաց մենակ, առանց հարազատների եւ անօգնական, երկաթուղային կայարանին կից փոքրիկ ավանում, որտեղ հայրը գնացք կազմող էր աշխատում: Հարեւաններն ու ծանոթներն օգնեցին, որ հորն ու մորը թաղի, ու դրանից հետո աղջիկը դեռ մի քանի օր ապրում էր դատարկ, մեռյալ բնակարանում, որ բաղկացած էր խոհանոցից ու սենյակից: Օլգան լվաց խոհանոցի ու սենյակի հատակը, կարգի բերեց ու նստեց աթոռակին, ու չգիտեր՝ հետո ինչ է անելու եւ ինչպես է ապրելու հիմա: Հարեւան տատիկը աղջկան մի գավաթ շորվա բերեց, որ նիհարիկ ու տարիքին անհամապատասխան փոքրամարմին որբուկը գոնե մի բան ուտի, եւ Օլգան, տակը բան չթողելով, ամբողջը կերավ: Իսկ երբ տատիկը գնաց, Օլգան սկսեց լվանալ մոր շապիկն ու հոր ոտաշորը, ամենը, որ մնացել էր նրանց սպիտակեղենից ու հագուստից: Երեկոյան Օլգան պառկեց մահճակալին, որի վրա միշտ քնում էին հայրն ու մայրը, երբ ողջ էին ու հիվանդ: Առավոտյան վեր կացավ, լվացվեց, հավաքեց անկողինը, ավլեց սենյակն ու ասաց.«Նորից պետք է ապրել». մայրն էր հաճախ այդպես ասում նրան: Հետո Օլգան գնաց խոհանոց ու սկսեց այնտեղ բնբնալ, ասես մահացած մոր պես ճաշ էր եփում. եփելու բան չկար, ոչ մի մթերք, բայց Օլգան, մեկ է, դատարկ պուտուկը դրեց վառարանին, վերցրեց ունելին, հենվեց վրան ու հառաչելով տրտում կանգնեց վառարանի առաջ, ինչպես մայրն էր անում: Հետո սրբեց ու սեղանի արկղում տեղավորեց ողջ ամանեղենը, նայեց ժամացույցին, ծանրաքարը վեր քաշեց դեպի թվատախտակը ու մտածեց. «Մեր մարդը կամ ժամանակին կգա հերթապահությունից, կամ կուշանա: Եթե երթուղի կազմելիս լինեն, կուշանա». սովորաբար այդպես էր մտածում Օլգայի մայրը՝ ամուսնուն մեր մարդը ասելով: Հիմա էլ որբ աղջնակն էր մոր պես մտածում ու վարվում եւ նրա համար այդպես ավելի հեշտ էր մենակ ապրել: Գիտեր, որ ինքը տասնչորս տարեկան է եւ անունը Օլգա է, բայց երբ մոր փոխարեն անում էր տան գործերը, երբ նրա բառերն էր կրկնում,

հոգսից հառաչում ու անմռունչ չարչարվում էր խոհանոցում, թվում էր՝ մայրը դեռ մի քիչ ողջ է իր մեջ, նրան իր հետ էր զգում:

Երեկոյան Օլգան վառեց լամպը, տակը ժամանակին հոր լցրածից մի քիչ նավթ էր մնացել, ու դրեց պատուհանի գոգին: Մայրն էլ էր այդպես անում մութն ընկնելուց հետո հորը սպասելիս: Հայրը, տանը մոտենալիս, դեռ հեռվից փողոցում հազում ու քիթը մաքրում էր, որ կինն ու դուստրը գալն իմանան: Բայց փողոցը հիմա միշտ էր ամայի. ժողովուրդը ցրվել էր գյուղական կուշտ տեղերը, կամ թույլ ու հիվանդկախ պառկած էին կացարաններում, իսկ որոշ բակերում ընդհանրապես մեռել էին: Օլգան, համենայնդեպս, մինչեւ մութն ընկնելը սպասում էր հորը կամ մեկնումեկին, որ կգար իր մոտ, բայց ոչ ոք որբուկին չէր հիշում՝ ո՛չ հարեւան տատիկը, ո՛չ ուրիշ մարդիկ, որովհետեւ իրենց ցավն ու հոգսն ունեին: Այդ ժամանակ նա պառկում էր ծնողների մահճակալին ու մեն-մենակ քնում:

Աղջիկը դեռ երկու օր էլ մնաց տանը, գիշերեց այնտեղ, հետո գնաց կայարան: Վոլգայի ափի հեռավոր նահանգային քաղաքում նրա մորաքույրն էր ապրում. երկու տարի առաջ հյուր էր եկել մորը, եւ Օլգայի երեւակայության մեջ հարուստ ու բարի էր: Մորաքույրը մոր քույրն էր, նույնիսկ նման էր նրան, եւ աղջիկը հիմա ուզում էր շուտ հասնել նրա մոտ, որ ապրի մորաքրոջ հետ ու չկարոտի մորը: Սահվանից առաջ հիվանդ մայրն ասում էր, որ եթե Օլգային վիճակված է ապրել, թող գնա մորաքրոջ մոտ, որ մենակ չմնա այս աշխարհում. մոր քույրը եւ՛ կկերակրի որբուկին, եւ՛ կհագցնի, եւ ուսման կտա: Հիմա դուստրը հիշեց մորն ու ենթարկվեց նրան:

Կայարանը դատարկ էր. բուրժույների դեմ պատերազմը հարավային կողմերն էր քաշվել: Երկաթգծի վրա, կառամատույցի դիմաց մի ոչ մեծ, հին շոգեքարշ ու երկու ապրանքատար վագոն էր կանգնած: Շոգեքարշի խցիկից դուրս էր նայում մեքենավարի օգնականը. նա հիշում էր աղջկա հորն ու մորը, ու գիտեր որ նրանք մահացել են, դրա համար էլ որբուկին կանչեց իր մոտ: Աղջիկը սանդուղքով շոգեքարշ բարձրացավ. մեխանիկը արձակեց ուտելիքի կարմիր թաշկինակն ու չորս խորոված կարտոֆիլ հանեց, տաքացրեց շոգեկաթսայի վրա, աղ արեց ու երկուսը տվեց Օլգային, իսկ երկուսն ինքը կերավ: Օլգան կուզեր, որ մեխանիկն իրեն իր տուն տանի, կապրեր նրա մոտ ու կվարժվեր նրան: Բայց շոգեքարշի մեխանիկը ոչ մի բարի բան չասաց աղջկան, միայն կերակրեց ու նորից գրպանը դրեց դատարկ կարմիր թաշկինակը: Ինքն էլ բազմազավակ մարդ էր, ու դժվար էր ասել՝ մի ավել բերան կերակրել կկարողանա՞:

Օլգան շոգեքարշի խցիկում մնաց մինչեւ երեկո, մինչեւ կայարանին մի

երկար գնացք մոտեցավ՝ տաքացվող վագոններում, ուր կարմիրբանակայիններ էին:

- Գնամ, մորքուրիս մոտ պիտի հասնեմ,- մեխանիկին ասաց Օլգան:- Մայրս է պատվիրել, երբ դեռ ողջ էր:

- Եթե պետք է, ուրեմն գնա,- ասաց մեխանիկը:

Օլգան իջավ շոգեքարշից եւ ուղղվեց կարմիրբանակային գնացքի կողմը: Բոլոր վագոնները կրնկի վրա բաց էին, ու համարյա բոլոր կարմիրբանակայինները դուրս էին եկել. ոմանք ման էին գալիս կառամատույցում ու նայում, թե ինչ կա շուրջը՝ ջրհան կայան, կայարանամերձ տներ եւ ավելի հեռվում ցորենի փոքրիկ արտեր: Չորս կարմիրբանակային ցինկե դույլերով ապուր էին տանում կայարանի խոհանոցից. Օլգան կիպ մոտեցավ ապուրով դույլերին ու նայեց դրանց մեջ. դույլերը համով միս ու սամիթ էին բուրում, բայց դա կարմիրբանակայինների համար էր, քանի որ նրանք կռիվ էին գնում ու պիտի ուժեղ լինեին, իսկ Օլգային ապուր չէր հասնում:

Վագոններից մեկի մոտ կանգնած էր մտքի մեջ ընկած մի կարմիրբանակային. նա չէր շտապում ճաշի եւ հանգստանում էր ճանապարհից ու պատերազմից:

- Քեռի՛, կարելի՞ է ես էլ ձեր հետ գամ,- խնդրեց Օլգան:- Ինձ հարազատ մորաքույրս է սպասում...

- Իսկ որտե՞ղ է ապրում,- հարցրեց կարմիրբանակայինը:- Հեռո՞ւ:

Օլգան տվեց քաղաքի անունը, ու կարմիրբանակայինը համաձայնեց, որ հեռու է, ոտքով չես հասնի, իսկ գնացքով վաղը առավոտ, խնդրեմ, տեղում ես:

Այդ ժամանակ վագոնին մոտեցան երկու կարմիրբանակային՝ ապուրի դույլով, ու նրանց հետեւից էլի մի քանի կարմիրբանակային հաց, մախորկա, կաթսայով շիլա, օճառ, լուցկի ու այլեւայլ օրապահիկ էին բերում:

- Էս աղջիկը խնդրում է՝ մորաքրոջ մոտ հասցնենք,- մոտեցած ընկերներին ասաց կարմիրբանակայինը,- երեւի վերցնենք, հա՞...

- Ինչի չտանենք որ, թող գա,- ասաց թեւատակերին երկու բոքոն առած կարմիրբանակայինը:- Հարսնացու՝ դժվա՛ր, պստիկ է, բայց որպես քույրիկ՝ իսկն է...

Օլգային բարձրացրին վագոն, գդալ ու մի մեծ կտոր հաց տվին, ու նա նստեց կարմիրբանակայինների արանքում, որ ապուր ուտի ընդհանուր մաքուր դույլից: Ծուտով կարմիրբանակայիններից մեկը նկատեց, որ հատակին նստած ուտելը հարմար չի նրան, ու ասաց, որ չոքի, այդ դեպքում գդալը կհասներ տակի թանձրին, կտեսներ՝ ուր է յուղը եւ ուր՝ միսը:

Ընթրիքից հետո գնացքը շարժվեց: Կարմիրբանակայիններն Օլգային տեղավորեցին վերեւի թարեքին, որովհետեւ այնտեղ տաք ու հանգիստ էր, ու վրան երկու շինել գցեցին, որ չսառչի գիշերային կամ առավոտվա ցրտից:

2

Լույսը վաղուց բացվել էր, երբ կարմիրբանակայիններն արթնացրին Օլգային: Գնացքը կանգնած էր մի մեծ կայարանում, անծանոթ շոգեքարշները օտար ձայներով շչում էին հեռվում, եւ արեւն այն կողմից չէր լուսավորում, որ կողմից Օլգայի ապրած ավանն էր: Կարմիրբանակայիններն Օլգային կես հաց ու մի շերտ խոզաճարպ նվիրեցին ու թեւատակերից բռնած իջեցրին վագոնից:

- Մորաքույրդ էստեղ է ապրում,- ասացին:- Գնա նրա մոտ, լավ սովորի ու ճիշտ մեծացի, քո ժամանակ լավ կյանք է լինելու:

- Բայց չգիտեմ որտեղ է ապրում մորաքույրս,- ներքեւից ասաց Օլգան. կանգնել էր մենակ, խեղճուկրակ շորով, բոբիկ ու հացը թեւատակին:

- Կգտնե՛ս,- պատասխանեց մտախոհ կարմիրբանակայինը:- Մարդիկ ցույց կտան:

Բայց Օլգան չէր հեռանում. ուզում էր կարմիրբանակայինների հետ մնալ վագոնում ու գնալ՝ ուր նրանք են գնում: Արդեն մի քիչ սովորել էր նրանց եւ ուզում էր ամեն օր մսով ապուր ուտել:

- Լա՛վ, կամաց-կամաց գնա,- շտապեցրին վագոնից:

- Բա ասեցիք լավ կյանք կունենամ, ե՞րբ է լինելու,- միանգամից մորաքրոջ մոտ՝ անհայտ մի տեղ գնալուց վախենալով՝ հարցրեց աղջիկը:

- Համբերի՛,- պատասխանեց նույն մտախոհ կարմիրբանակայինը:- Հիմա հոգս շատ ունենք՝ սպիտակների վերջը պիտի տանք:

- Կհամբերեմ,- համաձայնեց Օլգան:- Իսկ հիմա՝ ցտեսություն, գնացի մորաքրոջս մոտ:

Միայն երեկոյան գտավ մորաքրոջը: Հարցնում էր բոլոր հանդիպողներին, ում դեմքը բարի էր, բայց ոչ ոք չգիտեր՝ որտեղ է ապրում Տատյանա Վասիլեւնա Բլագիխը: Օլգայից հացը խլեց մի անցորդ մարդ, որը նախ խնդրեց, որ մի հատ կծի, բայց հետո վերցրեց ամբողջ հացն ու թողեց-գնաց՝ աղջկան ասելով, որ հացի առեւտուրն արգելված է: Օլգան արագ-արագ կերավ կարմիրբանակայինների տված ամբողջ ճարպը, որ ոչ մեկը չխլի, ու մտավ ինչ-որ բակ՝ ջուր խնդրելու: Մի տարեց կին մի բաժակ ջուր բերեց ու ասաց, որ էլ մուրացկանին տալու բան չունի:

- Իսկ ես մուրացկան չեմ, ես մորաքրոջս մոտ եմ եկել,- ասաց Օլգան:

- Իսկ մորաքույրդ ո՞վ է,- կասկածկոտ հարցրեց կինը:

Օլգան մանրամասն պատմեց մորաքրոջ մասին: Կինը, չգիտես ինչու, հառաչեց եւ աղջկան ցույց տվեց, թե ուր պիտի գնա՝ աջ, անկյունը անցար, ձախ թեւի երրորդ տունն է, ներկած փեղկերով, հենց էնտեղ էլ ապրում են Բլագիխները, այր ու կին, իսկ երեխաներ չունեն:

- Չունե՞ն,- հարցրեց Օլգան:

- Չունեն,- հաստատեց կինը,- էդ տեսակ մարդկանց երեխեքը ծնվել չեն սիրում:

Օլգան գտավ ներկած փեղկերով ոչ մեծ տունը, մտավ վայրի խոտով պատած, անխնամ բակը ու թակեց նախասենյակի կողպած դուռը: Ներսից դժգոհ, խուլ ձայն լսվեց, հետո՝ քայլեր, ու դուռը բացվեց. նիգ ու սողնակ էր գցած, ինչպես գիշերն են փակում: Բոբիկ, գլխաբաց Տատյանա Վասիլեւնա մորաքույրը կանգնեց Օլգայի դիմաց ու ոտից գլուխ զննում էր աղջկան: Օլգան իր առաջ տեսավ մորաքրոջը. մտածում էր, որ մորաքույրը ուրախ ու բարի է լինելու, ինչպես իր երեխա ժամանակ, երբ Տատյանա Վասիլեւնան հյուր էր եկել հորն ու մորը, բայց հիմա մորաքույրն աղջկան նայում էր անտարբեր աչքերով եւ չուրախացավ, որ որբուկն իր մոտ է եկել:

- Ինչի՞ ես հայտնվել,- հարցրեց մորաքույրը:

- Մերս ասեց,- կմկմաց Օլգան:- Մեռել է, ու հերս էլ մեռավ, ու հիմա մենակ եմ ապրում... Մորաքո՛յր, չկան նրանք:

Տատյանա Վասիլեւնան բարձրացրեց գոգնոցի տուտն ու սրբեց աչքերը:

- Մեր ցեղն էդպես է, կարճ են ապրում,- ասաց նա:- Ախր ես էլ զուտ առողջ եմ երեւում, բայց երկար չեմ ապրի... Ա՛խ, չէ՛, չեմ ապրի:

Օլգան զարմացած նայում էր մորաքրոջը. հիմա նա բարի էր թվում, որովհետեւ վշտանում էր մեռած քրոջ եւ իր համար:

- Ապրում ես, ապրում, ու մի բերան բան խոսելու ժամանակ չկա,- հառաչեց Տատյանա Վասիլեւնան:- Դու հլա որ դրսում սպասի,- ու ցույց տվեց զարմուհուն,- հատակը նոր եմ լվացել, սենյակները հավաքել, քեզ ո՞ւր թողեմ...

- Բակում կնստեմ, լավ էլ խոտեր են էստեղ,- ասաց Օլգան:

Բայց Տատյանա Վասիլեւնան բարկացավ.

- Ի՞նչ գործ ունես բակում: Բակում մեր հավերն են, առանց էն էլ ծու չեն ածում, հիմա էլ դու վախացնես: Խոտն էլ ճագարների համար ենք հնձում, տրորելու չի... Կածանով գնա, դարպասից դուրս արի:

Օլգան ելավ փողոց. փողոցի մեջտեղը հին, ժանգոտ ռելսեր էին դարսած, դրանց արանքում արդեն բազում անգամներ ծլել, մեռնելու հիմա նորից ծլում էր խոտը: Աղջիկը նստեց ռելսերի վրա. դրանք ուղիղ մորաքրոջ տան պատուհանների դիմաց էին, ու սպասեց, թե երբ կչորանա մորաքրոջ սենյակների հատակը, եւ այդ ժամանակ կկանչեն իրեն ու կկերակրեն:

Բայց արդեն անցել էին բոլոր անցորդները, իրենց սայլերով իրենց գյուղերը շտապող գյուղացիք, կայարանից պարկերով ցորեն կրող բեռնասայլերն էլ չէին երեւում, վրա հասավ երեկոն, ու մթնեց: Օլգայի բոբիկ ոտքերը մրսում էին, ոտքերը քաշեց տակն ու ննջեց՝ սառչող ռելսին նստած: Հետո աչքերը բացելով՝ տեսավ, որ մորաքրոջ պատուհաններում արդեն լույս է վառվում, իսկ ողջ փողոցում մանկության սարսափելի խաղաղ գիշերն է՝ բնակեցված հազիվ նշմարելի անհայտ արարածներով, որոնցից մարդիկ պահ են մտնում տներում ու երկաթե սողնակներով կողպում դռները: Օլգան արագ վազեց մորաքրոջ մոտ. դռնակը փակ էր, եւ աղջիկը թակեց լուսավորված պատուհանը: Սենյակի ներսից հետ քաշեցին վարագույրը, եւ այնտեղից Օլգային նայեց տարեց տղամարդու խոշոր, թանձր մորուքով պատած դեմքը. նա արագ ինչ-որ բան կուլ տվեց, ասես վախենալով, որ եկել են իր կերը գողանալու, ու սեւեռուն նայեց խավարին իր փոքրիկ աչքերով, այնքան փոքրիկ, որ հեզ էին թվում, ինչպես անասունների-նը: Այդ մարդու թիկունքում երեւում էր ընթրիքի սեղանը, եւ Տատյանա Վասիլեւնան սեղանից հապճեպ հավաքում էր հացն ու ամանները:

Օլգան հետ քաշվեց պատուհանից: Ծուտով դռնակը բացվեց, ու դուրս նայեց մորաքույրը:

- Ի՞նչ ես թակում,- հարցրեց նա:- Մտածում էինք՝ վաղուց գնացել ես...

- Հալից ընկա սպասելով, թե երբ կկանչեք,- ասաց Օլգան:- Փողոցում մենակ վախում եմ...

- Լա՛վ, արի՛,- կանչեց մորաքույրը:

Մորաքրոջ խոհանոցն ու վերնատունը մաքուր էին, հավաք ու հանգիստ, ու լավ հոտ էր գալիս, ինչպես հարուստների տներում: «Ես էստեղ չեմ ապրի,- մտածեց Օլգան:- Էստեղ չի կարելի. կասեն՝ ամեն ինչ կկեղտոտես»: Տատյանա Վասիլեւնայի ամուսինը, որ նայել էր պատուհանից, սեղանի մոտ նստած՝ էլի իր ընթրիքն էր ուտում:

- Աստված մեր երեխեքից մեզ ազատեց, բայց հարազատներն իրանցն են գլխներիս թափում,- հառաչեց Տատյանա Վասիլեւնան:- Ըհը՛, Արկա՛շա, քրոջս աղջիկն է, լրիվ որբ է հիմա. դե, արի, հացուջուր արա, կերցրու, հագցրու...

- Մե՛ծ ուրախություն է,- անտարբեր, ասես ինքն իրեն, ասաց Տատյանա Վասիլեւնայի ամուսինը:- Ինչ ասեմ, ուտելու բան տուր ու թող էս գիշեր մնա... Մի բան եղավ, մենք ենք պատասխան տալու:

- Ոնց եմ տեղաշոր գցելու,- գոչեց մորաքույրը:- Ախր ավել բան չունենք. ոչ սպիտակեղեն, ոչ վերմակ, ոչ մաքուր բարձի երես:

- Էնպես կքնեմ, չոր գետնին, ու շորովս կծածկվեմ,- համաձայնեց Օլգան:

- Թող գիշերը մնա,- կնոջը պատվիրեց ամուսինը՝ Արկադի Միխայլովիչը:- Գազան մի կտրի, թե չէ Սովետական իշխանություն ցույց կտա, հա՛:

Տատյանա Վասիլեւնան սկզբում մտքի մեջ ընկավ, ապա չարացավ.

- Ի՞նչ ցույց կտա... Ի՞նչ է, Սովետական իշխանությունը մտածում է, թե մարդիկ ընկեր հրեշտակներ ե՞ն, բռնում՝ երեխա են բերում, հետո էլ մեռնում են. դե, թող ինքն էլ կերակրի, Սովետական իշխանություն է, չէ՞...

- Կկերակրի,- յուղով շիլան ծամելով՝ վստահ ասաց մորաքրոջ ամուսինը:

- «Կկերակրի՛»,- ամուսնու տնազն արեց Տատյանա Վասիլեւնան:- Ո՞վ կկերակրի դրանց, թե որ ծնողներն անկանգնել աշխարհ են բերում: Ես հո գիտեմ՝ ինչ դժվար է Սովետական իշխանության համար, ես հո նրա կողմն եմ...

- Ինձ կերակրել պետք չի, ուզում եմ քնեմ,- ասաց Օլգան. նստեց սնդուկին ու գլուխը շրջեց տանտիրոջ առաջ սեղանին դրած շիլայի թասից:

Մորաքրոջ ամուսինը սրբեց գդալը, դրեց թասի կողքն ու որբին ասաց.

- Նստի կեր, էստեղ դեռ մնացել է:

Օլգան նստեց սեղանի մոտ ու, թասի տակը քերելով, սկսեց կամացկամաց ուտել կորեկի շիլան:

- Տեսնո՞ւմ ես, բա ասում էիր քեզ կերակրել պետք չի, քնել ես ուզում,- փնթփնթաց մորաքույրն ու արագ սնդուկին գցեց բարձը, որ աղջիկը պառկի քնելու:

- Ես՝ մի քիչ,- պատասխանեց Օլգան. կես գդալ շիլա էլ կերավ, հետո մաքուր լպստեց գդալն ու խնամքով դրեց սեղանին:- Էլ չեմ ուտի,- հայտնեց նա:

- Արդեն կշտացա՞ր,- բարի ձայնով հարցրեց Տատյանա Վասիլեւնան:

- Չէ՛, ախորժակս փախավ,- ասաց Օլգան:

- Ուրեմն պառկի քնի, հանգստացի,- մորաքույրը ցույց տվեց սնդուկը:- Հիմա լույսը կհանգցնենք. ինչի՞ իզուր նավթ վառվի:

Օլգան պառկեց սնդուկի վրա, կամացուկ կծկվեց ողջ մարմնով, որ տաք լինի, ու քնեց չոր փայտի վրա, ինչպես փափուկ անկողնում, որովհետեւ հիմա էլ ուրիշ տեղ չուներ աշխարհում:

3

Առավոտյան մորաքույրն ու ամուսինը վաղ արթնացան. ամուսինը երկաթուղային մեքենավար էր ու ապրանքատար գնացքով մեկնելու էր հերթական ուղերթին: Տատյանա Վասիլեւնան առատ ճամփի հաց կապեց ամուսնու համար՝ մի կտոր խոզաճարպ, բոքոն, մի բաժակ կորեկ՝ տաք ապուրի համար, չորս խաշած ձու, եւ մեքենավարը հագավ տաք պիջակն ու դրեց գլխարկը, որ գլուխը քամուց չպաղի:

- Ախր չասեցիր՝ հիմա ոնց ենք ապրելու,- շշուկով ամուսնուն հարցրեց Տատյանա Վասիլեւնան:

- Ի՞նչ կա որ,- ասաց Արկադի Միխայլովիչը:

- Չես տեսնո՞ւմ,- մորաքույրը ցույց տվեց Օլգային,- հրեն պառկած է մեր նոր գանձը:

- Քո հարազատն է,- պատասխանեց ամուսինը,- ինչ ուզում ես արա, իմ ուզածն է, որ տանը հանգստություն լինի:

Ամուսնու գնալուց հետո մորաքույրը նստեց քնած զարմուհու դիմաց, թառանչեց ու շշնջաց.

- Եկել-փռվել է. մորքուրն ու մարդը լենուբոլ են ապրում. կկերակրեն, կհագցնեն, օժիտով մարդու կտան... Նվեր եմ եկել, ընդունե՛ք. միտակ շորով, բոբիկ, սոված, անվա, անբախտ որբ եմ... Կարող է Աստված տա, դուք էլ շուտով սատկեք, ու ես էստեղ տիրուհի կմնամ, ու շան չարչարանքով ինչ վաստակել եք, վռազ էլ ինձանով կանեմ... Չէ՛, անո՛ւշ, թող սեւ սատանեքը քեզ տանեն, իսկ իմ բարիքի թոզն էլ չեմ թողի առնես, ու թող իմ պատառն էլ կոկորդիդ մնա... Սարդս ամբողջ օրը գործի մեջ է, քամու տակ, ցրտին, ես առավոտից գիշեր՝ ոտի վրա, ու, խնդրե՛մ, եկել է պատրաստի վրա, սիրե՛ք, փայփայե՛ ք ինձ... Օ՛լգա, հլա քնած ես, հա՞,- հանկարծ կանչեց Տատյանա Վասիլեւնան:- Տես, է՛, խեղճ ըլնես դու, վաղուց վեր կենալու ժամանակն է: Քո երեսից ձեռս ոչ մի գործ չի բռնում...

Օլգան անշարժ պառկած էր, դեմքով դեպի պատը. կծկվել-փոքրացել էր՝ ծնկները համարյա կզակին սեղմած, ձեռքերը ծալած փորին ու գլուխը կախ, որ շնչի կրծքին ու տաքացնի իրեն. ծածկվել էր մաշված մոխրագույն շորով, բայց շորն արդեն վրայով փոքր էր, մեծացել էր այդ շորից, որը հերիքում էր միայն կծկված պառկելուն. ցերեկը դեռահասի նիհար ոտքերը համարյա մինչեւ ծնկները բաց էին իսկ թեզանիքները միայն արմունկներին էին հասնում:

- Տես, է՛, ինչ անուշ քնել է,- կողքին բորբոքվում էր մորաքույրը:

- Քնած չեմ,- ասաց Օլգան:

- Բա ինչի՞ ես պառկել, ախր վերնատունն ավլելու ժամանակն է:
- Ձեզ էի լսում,- պատասխանեց աղջիկը:
Մորաքույրը բարկացավ.
- Մի կարգին չես մեծացել, բայց ոնց որ տեսնում եմ՝ կծան ես:
Օլգան վեր կացավ ու շտկեց շորը: Մի քիչ լռելով՝ Տատյանա Վասիլեւնան ասաց.
- Գնա լվացվի, հետո ինքնաեռը կդնեմ: Վայ թե ուտել ես ուզում:
Օլգան չպատասխանեց. չգիտեր՝ ինչ մտածի հիմա եւ ինչպես վարվի:
Թեյ խմելիս մորաքույրն Օլգային մի քանի սեւ չորահաց ու խաշած կես ձու տվեց, իսկ մյուս կեսն ինքը կերավ: Իրեն տրվածն ուտելուց հետո Օլգան սեղանից հավաքեց չորահացի փշրանքն ու լցրեց բերանը:
- Չկշտացա՞ր,- հարցրեց մորաքույրը:- Քեզ չես էլ կշտացնի՛... Տնից դուրս գամ, ընկնելու ես պահարաններից փշրանք հավաքես, կճուճներն ես նայելու... Բա հիմա բազար պիտի գնամ, քեզ ոնց եմ տանը մենակ թողում:
- Ես հիմա կգնամ, ես ձեր մոտ չեմ մնա,- պատասխանեց Օլգան:
Մորաքույրը գոհ ժպտաց:
- Ինչ կա որ, գնա. ուրեմն գնալու տեղ ունես... Որ կարոտես, մեզ հյուր կգաս: Էդպես ավելի լավ կլինի:
- Որ կարոտեմ՝ կգամ,- խոստացավ Օլգան ու գնաց:
Դրսում առավոտ էր, երկնքից պայծառ նայում էր ջերմ արեւը. շուտով աշուն կլինի, բայց դեռ չի եկել, միայն տերեւներն են ծերացել ծառերին: Օլգան անցնում էր տների մոտով, օտար, մեծ քաղաքում, բայց չուզելով էր նայում անծանոթ տեղերին ու իրերին, որովհետեւ նեղացած էր հարազատ մորաքրոջից, եւ այդ ցավը նրա մեջ ոչ թե վիրավորանք կամ չարություն էր դարձել, այլ անտարբերություն. հիմա նրան հետաքրքիր չէր որեւէ նոր բան տեսնելը, ասես ողջ կյանքն աչքի առաջ հանկարծ մեռել էր: Քայլում էր անցորդ մարդկանց մոտով եւ անմիջապես մոռանում շուրջը տեսածը: Մի դեղին շենքի վրա հայտարարություններ ու պլակատներ էին կախված, մարդիկ կանգնում ու կարդում էին: Գրված էր, թե որտեղ են աշխատողներ պահանջվում եւ ինչ ռոճիկ էր նախատեսված յոթնակարգ սակացուցակով, հետո ասվում էր, որ ունկնդիրներ են ընդունվում համալսարան՝ թոշակ ու հանրակացարան ապահովելով: Օլգան գնաց համալսարան. ուզում էր ապրել հանրակացարանում ու սովորել. արդեն չորս ձմեռ դպրոց էր գնացել, երբ ծնողների հետ էր ապրում:
Համալսարանի գրասենյակում մարդ չկար, բոլորը գնացել էին ճաշա-

ման, միայն ծեր պահակն էր նստած աթոռին ու հացաբրդոշ էր ուտում՝ մատներով հացի թրջած կտորները թիթեղյա գավաթից քաշելով: Պահակը Օլգային ասաց, որ տարիքի փոքրության ու անգետ լինելու պատճառով նրան հիմա համալսարան չեն ընդունի, թող սկզբում ցածր դպրոցում սովորի:

- Ուզում եմ հանրակացարանում ապրեմ,- մրմնջաց Օլգան:

- Ի՞նչ լավ բան կա հանրակացարանում,- պատասխանեց ծերունին:- Հարազատներիդ հետ մնա, էնտեղ ավելի լավ կլինես:

- Պապի՛, թող բրդոշդ ուտեմ-վերջացնեմ,- խնդրեց Օլգան:- Տակը մի քիչ մնացել է, մեկ է, չես ուտելու, հացն էլ լրիվ քաշել ես...

Ծերունին գավաթը տվեց որբին.

- Կե՛ր, հլա պուճուր ես, կարող է հերիքի, կշտանաս... Ումոնցի՞ց կլինես:

Օլգան սկսեց ուտել բրդոշն ու պատասխանեց.

- Ոչ մեկոնցից էլ չեմ: Ես եմ իմ գլխի տերը:

- Տես, է՛, ինքն իրա գլխի տերն է,- ասաց ծերունին:- Բա ինչի՞ ես իմ բրդոշն ուտում: Քո ունեցածն էլ կուտեիր ու կապրեիր ազատ դաշտում...

Օլգան գավաթը վերադարձրեց ծերունուն.

- Ա՛ռ, կե՛ր, էստեղ դեռ մնացել է... Ինձ մարդամեջ չեն թողում:

4

Ճաշարանից վերադարձած գրասենյակի աշխատողները կարեկցեցին Օլգային: Վարիչը նամակ գրեց երկաթուղային կրտսեր գործակալների դասընթացներին՝ խնդրելով ընդունել բանվորի որբացած դստերն ու ապահովել ապրելու համար անհրաժեշտ ամեն ինչով: Ծերունի պահակը երեկոյան Օլգային ուղեկցեց նշված հասցեն, ու դասընթացների պարետը Օլգային ժամանակավոր տեղ հատկացրեց հանրակացարանում՝ մահճակալ ու պահարան՝ նույնպիսի մահճակալի ու պահարանի կողքին, փոքրիկ, սպիտակեցրած պատերով սենյակում, որին միջանցքով էլի սենյակներ էին հաջորդում, որտեղ ապրում էին սովորողները: Հաջորդ օրը, դասընթացների վարիչի գալուց առաջ, պարետը Օլգային հանձնարարեց, որ ընդունվելը ձեւակերպի անձնական թերթիկ լրացնելով:

Օլգան մի քանի օր վարժվում էր հանրակացարանի ընկերուհիներին եւ իր նոր կյանքին, հետո զգաց, որ լավ է այդտեղ: Առավոտյան ու երեկոյան սովորում էր դասընթացներին կից նախապատրաստական դասարանում, իսկ միջօրեին ճաշի ու հանգստի ընդմիջում էր: Տեղեկանալով, որ Օլգան կարիքի մեջ է ու ճաշարանում վճարել չի կարող, վարիչը կարգադրեց նոր սովորողին կես ամիս առաջ տալ թոշակը, ու նաեւ հատկացնել՝

կոշիկներ, սպիտակեղեն, թել, երկու զույգ գուլպա, բաճկոն եւ այլն, ինչ չափաբաժնով նախատեսված էր:

Տագնապն ու տխրությունը կյանքի հանդեպ, որ հարուցել էին ծնողների մահը, մորաքրոջ տանը գիշերելն ու գիտակցությունը, որ մարդիկ առանց իրեն էլ ապրում են, եւ ինքը ոչ մեկին պետք չէ, դադարեցին: Օլգան հասկանում էր, որ հիմա թանկ ու սիրված է, որովհետեւ հագուստ, փող ու կերակուր էին տալիս, ասես ծնողները հարություն էին առել, եւ ինքը նորից ապրում էր ծնողների տանը: Ուրեմն այդ բոլոր մարդիկ, ողջ Սովետական իշխանությունը իրեն անհրաժեշտ են համարում եւ առանց իրեն նրանց համար վատ կլինի:

Եվ Օլգան սովորում էր օրինակելի ջանասիրությամբ, անտագնապ, երջանիկ սրտով, միայն երբեմն մխում էր անսփոփ հիշողությունը հոր ու մոր մասին, եւ աղջիկն ուզում էր՝ մեկնումեկն իրեն նորից սիրի, մի առանձին մարդ, հոր կամ մոր պես, ոչ թե բոլոր մարդիկ, որ հիմա կերակրում եւ ուսուցանում են իրեն, բայց որոնց ինքը լավ չի ճանաչում:

Գիշերներն արթնանալով՝ Օլգան մոռանում է, որ հանրակացարանում է, թվում էր՝ կողքին, աղջամուղջի մեջ, հին մահճակալին քնած են մայրն ու հայրը, որ կայարանից լսվում է մանեւրային շոգեքարշի սուլոցը, ու շներն են հաչում հեռվում՝ պահպանելով բակի պահոցներում դարսած տերերի ունեցվածքը... Բայց աչքերը քիչ-քիչ վարժվում էին աղջամուղջին, եւ աղջիկը տեսնում էր հարեւանությամբ քնած ընկերուհուն՝ տասնհինգամյա Լիզային: Ընկերուհին միշտ զգոն էր քնում, կամացուկ էր շնչում խաղաղ մարմինը, նրան գուցե իր աղջկական նախազգացումն էր երազ գալիս՝ ապագա երջանիկ կյանքը. մեծ շենքի հաստ պատերից անդին լսվում էր երկարուձիգ քաղաքային գվվոցը, միշտ կարծես հեռացող, բայց ծնվելով նորից՝ մարդկանց գիշերային շարժումից ու աշխատանքից:

Դասարանում Օլգան նստում էր Լիզայի կողքին, որը նույնպես կիսով որբ էր. հորը սպանել էին իմպերիալիստական պատերազմում, իսկ մայրը, որ ջահել կին էր, ամուսնացել էր ճաշարանի վարիչի հետ եւ այլեւս չմտահոգվելով դստեր մասին՝ տրվել աղմկոտ, կուշտ կյանքի ու ինչ-որ հասարակական գործունեության: Բայց Լիզայի կյանքում ուրիշ հարազատ մարդիկ էին հայտնվել. մորը կորցնելով՝ ընկերուհիներ էր գտել հանրակացարանում, իմացել, թե ով է Լենինը, ինչ է հեղափոխությունը, եւ կարիքի ու որբության տխրությունը լքել էր նրա սիրտը, որը մինչ այդ խեղճ ու դժբախտ էր, որովհետեւ կյանքը զգում էր որպես քաղցին ու տխրությանը մոր հետ դիմանալու անհրաժեշտություն՝ իրենց սենյակի միայնության

մեջ, վառարանի թարեքի կողքին, որտեղ քնում ու մեկ-մեկ, երբ կորեկ ու տաշեղ էր ճարվում, ճաշ էին եփում: Հետո մայրը գնաց ամուսնու մոտ ու մոռանում էր հաց բերի աղջկան...

Ընկերուհիները, հանրակացարանը, գիտություն սովորելը, ինքնագործունեության խմբակները, պատրաստի ուտելիքը ճաշարանում նման չէին տնական տաղտուկին ու հացի անդադար հոգսին, որ ճնշում էր մանկական հոգին:

Օլգան սկզբում չէր հասկանում՝ ինչու են իրեն այստեղ կերակրում ու թողնում են՝ ապրի մաքրության ու ջերմության մեջ, ինչու այստեղ ի լրումն սովորելու պետք չէ աշխատել, այլ պետք է միայն մտածել, սովորել, երաժշտություն լսել, երբ երեկոները ակումբում հարմոն են նվագում, ու ողջ կյանքը պատկերող գրքեր կարդալ: Եվ Օլգան վախենում էր, որ կվռնդեն դպրոցից ու հանրակացարանից, որովհետեւ՝ ինչի՞ համար պիտի սիրեն իրեն, կերակրեն ու իր վրա ծախսեն չունեւոր ժողովրդի բարիքը: Եվ չնայած կարիքից ու անհյուրընկալ տեղերում գիշերելուց չէր վախենում, բայց չէր էլ ուզում զրկվել հանրակացարանի այդ երջանիկ եւ ուրախ կյանքից, ազատության զգացումից ու իր կարեւորության գիտակցումից, որ ստացել էր գրքերից ու դասընթացների ուսուցիչներից. նա արդեն չէր ուզում առաջվա պես թաքուն, մարող սրտով ապրել, ուզում էր սրտով զգալ այն ամենը, որ առաջ անծանոթ էր իրեն:

Հոկտեմբերյան հեղափոխության տարեդարձին նվիրված երեկոյին Օլգան կյանքում առաջին անգամ երկար-երկար լսում էր Աշխատանքի պալատից բերված դաշնամուրի նվագն ու լաց եղավ, որովհետեւ լավ էր, որովհետեւ կյանքը չի կարող ծանծրալի ու սովորական լինել, այլ պետք է լինի կախարդական, իսկական նախազգացման պես, որ կա մանկան կամ պատանու սրտում:

Օլգան կողքին նստած Լիզային հարցրեց.

- Լի՛զա, մեզ էստեղից տուն չե՞ն վռնդի: Ախր ես արդեն տուն էլ չունեմ: Ո՞վ է էս ամենը անում մեր համար:

- Լենինը,- ասաց Լիզան:- Նա մեզ երբեք ձեռք չի տա:

- Ինչի՞,- հարցրեց Օլգան:

Լիզան զարմացավ.

- Ինչի՞... Որովհետեւ մեզ էլ է սիրում, մենք ապագա մարդիկ ենք, մենք ենք կոմունիզմ լինելու... Առանց մեզ բոլորի համար վատ կլինի:

Օլգան մտքի մեջ ընկավ. չհասկացավ Լիզային.

- Իսկ ո՞նցն է լինելու կոմունիզմը: Ախր շատ պիտի չարչարվենք:

- Լենինը գիտի՝ ամեն ինչ ոնց է լինելու,- հեշտ պատասխանեց Լիզան:

Օլգան նայեց Լենինի նկարին. «Արդեն ծեր է,- մտածեց նա,- հորս պես. մենք շատ հաց ենք ուտում ու շորերն էլ արագ ենք մաշում, իսկ երեկ դասընթացների համար երեք սայլ փայտ բերեցին. պիտի արագ սովորենք ու մեծանանք, որ ինքներս աշխատենք»: Նա կարճահասակ էր ու ոչ այնքան ուժեղ, եւ ինքն էլ գիտեր, որ այդպես է: «Մենակ թե չմեռնեմ,- մտահոգվում էր:- Վերջերս տիֆ ու գրիպ էր տարածվել, թե չէ Լենինը վերջին ունեցածը տալիս է մեզ, ու մենք հանկարծ մեռնենք հիվանդությունից, ու ոչինչ չանենք, ու նույնիսկ երբեք չտեսնենք նրան»:

Գիշերը, ծածկոցը գլխին քաշելով, Օլգան սկսեց մտածել իր ու համընդհանուր կյանքի մասին. կենդանի պատկերացնում էր Լենինին՝ իր ու բոլոր աղքատ, լավ մարդկանց գլխավոր հորը, եւ այդ մտքից հստակ, վստահ երջանկություն զգաց սրտում, ասես ողջ անստույգ աշխարհը լուսավոր ու մաքուր հառնեց նրա առաջ, եւ հաց ու կացարան կորցնելու խղճուկ վախն անցավ. մի՞թե Լենինը կարող է նեղացնել իրեն կամ նորից մենակ՝ անհույս ու անհարազատ թողնել աշխարհում... Օլգան սիրում էր աշխարհի ճիշտ կառուցվածքը, որ այնտեղ ամեն ինչ տեղին ու հասկանալի լինի. այդպես ավելի լավ էր մտածվում եւ ապրելն ավելի երջանիկ էր:

5

Թուլացած ու նիհարած սովորողներին, եթե խնդրում էին, ճաշին սովորաբար լրացուցիչ՝ ապուր կամ շիլա էին տալիս: Սովորելու առաջին շրջանում Օլգան էլ էր հաճախ լրացուցիչ ուզում, որ կշտանա, բայց հետո դադարեց ու դժգոհությամբ էր նայում Լիզային, որը միշտ կրկնակի երկրորդ էր ուտում: Օլգան ուզում էր խնայել հանրապետության ընդհանուր ուտելիքը, որ ավելի շատ հաց մնա կարմիրբանակայինների ու բանվորների, բոլոր նրանց համար, որ հիմա շատ ավելի պետք են, քան ինքը:

Բայց մի քանի ամիս անց, գարնանը, ընդհանրապես դադարեցին մթերք տրամադրել նրանց ճաշարանին, եւ ուշացրին սովորողների թոշակը: Հետո պարզվեց, որ մեղավորը նահանգմթերկոմում ու ֆինբաժնում ծառայող սպիտակ սպաներն ու նրանց սովետական ծառայություն վստահածներն էին:

Լիզան, որ չէր կերել ընդամենը երկու օր, երրորդ օրը լաց եղավ, իսկ Օլգան՝ ոչ: Օլգան առավոտից գնաց այն շենքի երրորդ հարկ, որտեղ տարբեր ազատվարձու բնակիչներ էին կենում, ու տանտիրուհիներից աշխատանք խնդրեց. այդ օրը դասի չգնաց: Բայց տանտիրուհիները, խնայե-

լու համար, տնային գործերն անձամբ էին անում, ու միայն մի բնակարանում մի լիքը-լիքը կին՝ Պոլինա Էդուարդովնան, Օլգային պատվիրեց լվանալ հատակը, քանի որ չաղության պատճառով դժվար էր կռանում: Այդ աշխատանքի համար Օլգան մի ֆունտ հաց, երկու կտոր շաքար ու մի քիչ էլ փող ստացավ:

Վերադառնալով հանրակացարան՝ Օլգան սպասեց՝ Լիզան գա ցերեկային դասերից, եւ նրա հետ կիսեց հացն ու շաքարը: Լիզան կերավ իր բաժինը, բայց չկշտացավ ու նորից տրտմեց սովածությունից:

- Էսօր ի՞նչ դաս է եղել,- հարցրեց Օլգան:

- Անհետաքրքիր դասեր էին:

Օլգան խոժոռվեց.

- Հիմա համ քո տեղը պիտի սովորես, համ իմ, մինչեւ որ թոշակ կտան,- ասաց նա:- Իսկ ես կկերակրեմ քեզ ու քեզանից դասերս կարտագրեմ, իրիկունն էլ կսովորեմ:

Լիզան հարցրեց.

- Բա ո՞նց ես անելու:

Օլգան մռայլվեց.

- Մարդկանց հատակները կլվանամ, երեխեքին կնայեմ, ամեն տեղ գործ կա,- տխուր ասաց Օլգան:- Իսկ դու սովորի, ես քեզ մենակս կկերակրեմ:

- Ուտել եմ ուզում,- քրթմնջաց Լիզան:- Քո հաց ու շաքարից չկշտացա:

- Հիմա քեզ էլի հաց կբերեմ,- խոստացավ Օլգան ու դուրս եկավ սենյակից:

Գնաց մորաքրոջ մոտ, բայց վախեցավ միանգամից տուն մտնել, նստեց փողոցում, մորաքրոջ պատուհանների դիմաց դարսած ռելսերին: Հին ռելսերը, չգիտես ինչու, նախկին տեղում էին, եւ Օլգան հին ծանոթի ու հանդիպման ժպիտով շոյեց դրանք: Երկար նստեց ու տեսավ, որ մորաքույրը երկու անգամ իր վրա նայեց պատուհանից, բայց առավել եւս դժվար էր հարազատների տուն մտնելը, չնայած Օլգան վաղուց արդեն սառել էր ծմեռվա ցրտին:

Երեկոյան Տատյանա Վասիլեւնան դուրս եկավ ցանկապատի դռնակից ու ձայն տվեց զարմուհուն.

- Արի՛, ի՞նչ ես նստել... Արի՛, շորվա եմ եփել...

Օլգան մտավ տուն ու շորվա կերավ մորաքրոջ տված թիթեղյա գավաթից. Արկադի Միխայլովիչը տանը չէր, բայց Տատյանա Վասիլեւնան շտապեցնում էր, որ Օլգան արագ ուտի, որովհետեւ պիտի դուրս գար, ու շտա-

պելուց նույնիսկ մոռացավ որբին հաց տալ, ինչի համար Օլգան եկել էր մորաքրոջ մոտ՝ որ հաց տանի Լիզային:

Զարմուհուն անհաց շորվայով կերակրելով՝ Տատյանա Վասիլեւնան անսպասելի ասաց.

- Մի քիչ էլ նստի, դեռ շուտ է,- ու հանկարծ գոգնոցով սրբեց աչքերը, որոնք բոլորովին արցունքոտ չէին կամ, համենայնդեպս, քիչ արցունք կար:

Հետո մորաքույրը Օլգային ասաց, որ պիտի գնա երկաթուղային կայարանի ճաշարան. ամուսինը՝ Արկադի Միխայլովիչը, վերջերս, հերթափոխը հանձնելուն պես, հենց շոգեքարշի ջրով էլ լվացվում ու գնում է ճաշարան, որտեղ օր ծերության կապվել է մի մատուցողուհու՝ Մարուսկա Վիխրեւայի հետ, եւ ահա ինքը պիտի գնա այնտեղ, վերջնական պարզի էդ դավաճանությունը...

- Մորաքո՛ւր,- նրան դիմեց Օլգան,- մի կտոր հաց տվեք:

Մորաքույրը լուռ նայեց որբին եւ առժամանակ միտք էր անում:

- Ինչ կա որ, վերցրո՛ւ,- քրթմնջաց իր ողջ կյանքի կործանումից զայրացած մորաքույրը:- Մեկ է, իմ կյանքը վերջացավ... Իմ խե՛ղճ գլուխ:

Տատյանա Վասիլեւնան լաց եղավ ու ողբաց իր վրա, հետո՝ ամուսնու ու իր ամայացած տան վրա, իսկ Օլգան ինքնուրույն բացեց պահարանը, որտեղ մթերքն էր պահվում, ու մի բոքոն լավ թխած հաց վերցրեց: Մորաքույրը նայում էր նրան, բայց ոչինչ չասաց, միայն երբ Օլգան կիսեց բոքոնն ու կեսը թեւի տակ դրեց, Տատյան Վասիլեւնան ճչաց ու ավելի բարձր լաց եղավ:

- Էսպես էլ կյանքս վերջացավ,- մրմնջաց նա:- Հիմա ո՛ւմ ուտացնեմ, ո՛ւմ խմացնեմ, ո՛ւմ սպասեմ տանը...

Օլգան խոստացավ, որ շուտով նորից կայցելի հարազատ մորաքրոջն ու հրաժեշտ տվեց. շտապում էր:

- Գոնե դու արի,- խնդրեց Տատյան Վասիլեւնան:- Տեսնում ես՝ ինչ եմ դառել. հեչ մարդու նման չեմ...

Լիզան հանրակացարանում էր. վերջին դասին չնստելով՝ եկել էր երեկոյան պարապմունքներից: Օլգան հացը տվեց նրան, պատվիրեց, որ ուտի, իսկ ինքը անցավ այդ օրվա առարկաներին, որ հետ չմնա: Լիզան ծամում էր հացն ու ընկերուհուն պատմում, թե օրվա ընթացքում ինչ է եղել դասարանում, բայց ինքն էլ վատ էր յուրացրել դասերն ու չկարողացավ բացատրել, թե ինչ է պարբերական թիվը:

- Պետք է ջանալ,- ասաց Օլգան:- Ինչի՞ մինչեւ վերջ դասերի չես

նստում: Երբ էլ որ նստում ես, ինչի՞ մասին ես մտածում: Վայ տամ անբախտ գլխիդ:

- Քու ի՞նչ գործն է,- նեղացավ Լիզան:- Վաղը ի՞նչ ենք ուտելու,- հառաչեց նա:

- Ինչ էսօր, էն էլ վաղը,- պատասխանեց Օլգան:- Կճարեմ: Պետք չէր ասել, թե մենք ապագայի մարդիկ ենք, երբ վախենում ես մեռնելուց, պարբերական թիվը մոռացել ես... Էդ անցածն է, բուրժուական մարդիկ են էդպես եղել. հառաչում ու վախենում էին, ու քառասուն ու հիսուն տարի էին ապրում... Մենք պիտի ապրենք, մեզ Լենինն է սիրում:

Լիզան դադարեց ծամել ու ասաց.

- Էլ չեմ անի, արի միասին սովորենք դասերը. փորս կտրտում էր, ուտել էի ուզում...

- Ի՞նչ է, փորից բացի ուրիշ բան չունե՞ս,- բարկացավ Օլգան:- Մի տեղ գիտակցություն էլ պիտի ունենաս, չէ՞:

Ընկերուհիները նստեցին ընդհանուր սեղանիկի մոտ՝ դաս սովորելու, ու լամպը դեռ երկար լուսավորում էր երկու մտածկոտ, խոնարհված գլուխները, որոնց մեջ հիմա գործում էր սրտի արյունով սնվող նրանց մարդկային բանականությունը: Բայց շուտով ակամա ննջեցին ու, մի պահ ցնցվելով, ժպտացին իրար ու պառկեցին իրենց մահճակալներին՝ մանկական խաղաղ քնի մեջ սուզվելով:

Առավոտյան Օլգան նորից գնաց աշխատանք գտնելու, որ կերակրի իրեն ու Լիզային, իսկ Լիզան առայժմ պիտի մենակ սովորեր երկուսի փոխարեն:

Հանրակացարանից երկու շենք այն կողմ Օլգան ստիպված դայակ վարձվեց կնոջը վաղ կորցրած մի մարդու մոտ. ուրիշ ոչ մի տեղ տնային աշխատանք չկար: Երեխան ընդամենը մեկուկես տարեկան էր, նրան Յուշկա էին ասում, եւ Օլգան նրա հետ սենյակում պիտի մնար օրը ինն ու տասը ժամ, մինչեւ Յուշկայի հայրը երեկոյան գար գործարանից. այդ աշխատանքի համար Օլգան տանտիրոջից ճաշ ու Ժողսնդի աշխատողների սակացուցակով աշխատավարձ էր ստանալու:

Օլգան սիրեց Յուշկային. մեծագլուխ, թխահեր, սենյակի բոլոր երեւույթներին ու իրադարձությունների բարեհոգի նայող մոխրագույն մաքուր աչքերով տղա էր. սովորաբար լաց չէր լինում եւ առանց ջղայնության ու նեղանալու տանում էր իր մանկական բոլոր փորձությունները: Օլգային ձգում էր նրա մի առանձնահատկությունը. օրորոցում, թե հատակին խաղալիս կամ չոչ անելիս երեխան սկզբում վերցնում, ապա վերադարձ-

նում էր ամեն ինչ, որ Օլգան նվիրում էր ու դրան ավելացնում ձեռքի տակ ունեցածը: Եթե Օլգան որեւէ հին չխկչխկան էր տալիս, տղան նրան էր նվիրում փայտե տակառիկը, որով մինչ այդ խաղում էր, ու ստիպում, որ ծծակով շիշը կամ առտնին որեւէ բան էլ վերցնի: Երբ Օլգան շիլայով կերակրում էր Յուշկային, հաճույքով էր ուտում, եթե դայակն էլ ուտեր իր հետ՝ մի գդալ իր բերանը, մյուսը՝ երեխայի, եւ այդպես հերթով, հակառակ դեպքում ուտել չէր ուզում:

Ուղիղ մի ամիս Օլգան դայակություն արեց՝ ամեն երեկո Լիզային ուտելիք տանելով իր բաժնից, իսկ հետո աշխատելու անհրաժեշտությունը վերացավ. սովորողներին լրիվ վճարեցին թոշակի պարտքը, ու ճաշարանը սկսեց մթերք ստանալ: Բայց Օլգան արդեն չէր կարող Յուշկային մենակ ու անօգնական թողնել. համարյա ամեն օր երեխայի հետ էր ճաշի դասամիջոցին կամ երեկոյան՝ դասերից հետո:

Յուշկան արդեն ուրիշ, պառավ դայակ ուներ, բայց Օլգային պառավից սիրելի ու վեր էր դասում ու միշտ ծգտում էր նրան:

Յուշկայի հայրը, որ երեսնամյա մեխանիկ-դիզելավար էր, լուռ նայում էր Օլգային, երբ նա սիրում ու գուրգուրում էր երեխային իր ներկայությամբ, ու կամացուկ մրմնջում էր.«Ափսո՛ս, շա՛տ ափսոս»: Ափսոսում էր, որ Օլգան երբեք չի կարողանա մայր լինել Յուշկայի համար, եւ որդուց ու Օլգայից շրջվելով՝ պատուհանից դուրս էր նայում ու տեսնում, որ օրը պղտորվում է, քանի որ անզուսպ արցունքները սքողում էին աչքերը:

Օլգային դուր չէր գալիս նոր դայակը՝ պառավը. հիմի միայն մեծ պահանջկոտությամբ կարող էր որեւէ մեկին վստահել Յուշկային, դրա համար էլ մի մանկամսուր գտավ ու հորը համոզեց, որ երեխային այնտեղ տեղավորի: Հայրը սկզբում տատանվում էր. չէր հավատում, որ պետական դայակները, որ արհմիության անդամներ էին, սակացուցակով էին աշխատավարձ ստանում, կարող են փոխարինել մայրերին, բայց Օլգան առարկում էր, որ ինքն էլ է պետական, սովետական դայակ ու նույնպես նրանից սակացուցակով էր աշխատավարձ ստանում: Հայրն այդ ժամանակ միտք արեց ու համաձայնեց Յուշկային տանել մանկամսուր:

6

Երեք տարի անց, դասընթացներն ավարտելուց հետո, Օլգային ու Լիզային ուղարկեցին երկաթուղային գիծ՝ գործնական աշխատանքի: Մեկնելուց առաջ Օլգան հրաժեշտ տվեց Յուշկային ու լաց եղավ: Մեծացած տղան վաղուց սովորել էր Օլգային մայրիկ կոչել. գրկեց նրան ու երկար

բաց չէր թողնում, մինչեւ եկավ բաժանման պահը...

Այդ ժամանակ արդեն Օլգայի տասնյոթն էր լրացել, Լիզայի՝ տասնութը: Նրանց, որպես ընկերուհիների, միասին ուղարկեցին, որ չծանծրանան ու ավելի լավ աշխատեն:

Աշխատելու էին Սերգա փոքրիկ կայարանում, ոչ հեռու այն քաղաքից, որտեղ սովորում էին: Պիտի գործավար, կշռավար աշխատեին, փոխարինեին կայարանի հերթապահին ու նույնիսկ մանեւրային շոգեքարշ վարել սովորեին:

Ամառ էր, կայարանին կից բնակելի ավան չկար, դրա համար էլ կայարանի պետը նրանց տեղավորեց զորքերի տեղափոխման համար սարքավորած ապրանքատար վագոնում, որը կանգնած էր հեռավոր փակուղում:

Ընկերուհիները ցանկություն հայտնեցին նախ յուրացնել կայարանային շոգեքարշը, ինչին կայարանապետը համաձայնեց, ու նրանք օրեր շարունակ հերթապահում էին «Օ-Վ» սերիայի հին շոգեքարշի վրա: Մեքենավարը, մի տարեց մարդ, արձակուրդ գնաց, նրան փոխարինում էր օգնական Իվան Պոդմետկոն, մի լռակյաց, երեսունն անց տղա, իսկ Օլգան ու Լիզան նրան որպես օգնականներ էին ծառայում: Պոդմետկոն սկսեց աղջիկներին իր եղանակով վարժեցնել մեքենային՝ թե ինչպես չի կարելի աշխատել:

- Տեսնո՞ւմ ես, շոգեքարշը հիմա տեղից չի շարժվի, բայց շոգին թողնում եմ,- ասում էր Պոդմետկոն: Բացում էր կարգավորիչը, բայց մեքենան չէր գնում:

Օլգան ու Լիզան պիտի կռահեին՝ ինչն է պատճառը:

- Ընդհատում կա, պտտիր հետադարձը,- գլխի էր ընկնում Օլգան:

- Ճիշտ է,- քմծիծաղում էր Պոդմետկոն:- Իսկ այ եթե հիմա մեքենան թափով առաջ վարեմ, հետո միանգամից միացնեմ հետադարձը, իսկ կարգավորիչը բաց թողնեմ,- առաջարկում էր Պոդմետկոն,- այդ դեպքո՞ւմ ինչ կստացվի:

- Եթե մղիչ ծորակները չբացես, գլանի կափարիչները կպայթեցնես կամ էլ մխոցի ծողը կծռես, կամ էլ առեղները կվնասես,- նրան տեղեկացնում էր Օլգան:

- Ամեն հիմարիկի հասկանալի է,- համաձայնում էր Պոդմետկոն:- Իսկ կաթսան վառել գիտե՞ք: Կսովորեցնեմ... բայց էդ հետո, իսկ հիմա գնացեք, լրիվ մաքրեք մեքենան, էնպես, որ պսպղա, հետո ինքներդ լվացվեք, ինչ եք մրոտ նստել շոգեքարշում. կեղտն ախր ավելորդ շփում ու մահ է: Նայեք ինձ ու լա՛վ մտածեք:

Երեք ամիս շոգեքարշի վրա աշխատելուց հետո Լիզան տեղափոխվեց գրասենյակ, կայարանապետի մոտ՝ գրաֆիկով գնացքների շարժման արվեստն էր ուսումնասիրում, իսկ Օլգան գործուղվեց պահեստ՝ կշռավարի օգնական. ուզում էր ճշգրիտ սովորել բեռնափոխադրման գործը, երկաթուղագծերի գլխավոր աշխատանքը:

Ուշ աշնանը գործնական պարապմունքներն ավարտվեցին. պիտի վերադառնային դասընթացներին, քննություն հանձնեին ու մշտական ծառայության նշանակում ստանային: Դժվար թե նրանց նույն տեղում նշանակեին, եւ ընկերուհիներին բաժանում էր սպասում: Հաճախ երեկոները նստում էին իրենց բնակելի վագոնում՝ ոտքերը դռնից կախած, ու խոսում մեծ կյանքի մասին, որ առջեւում սպասում է իրենց: Նրանց դիմաց գիշերվա մեջ սառչող աղոտ տափաստանն էր՝ մեծ ու տխուր, սակայն բարի ու կախարդական, ինչպես ապագա ժամանակը՝ սպասվող երիտասարդությունը: Ընկերուհիների սրտերը տրոփում էին կանխազգացումից ու սպասումից, եւ նրանք հավատով գրկում էին իրար:

Սերգա կայարանից ընդմիշտ մեկնելուց ոչ շատ առաջ Օլգան մի անգամ արթնացավ վաղ արշալույսին: Լիզան խոր քնած էր կողքին՝ գլուխը մարդատար վագոնից վերցրած գորշ երկաթուղային ծածկոցի մեջ թաղած: Ձիավորական վագոնում սովորականի պես տաք ու խաղաղ էր. ընկերուհիները երկար ամառվա ընթացքում հարմարավետ էին դարձրել վագոնը: Եվ նրանց այդ կիսամութ, խաղաղ կացարանը լցվեց հեռավոր, տագնապալի, սլացքի հողմից ու քամուց պատառոտվող շչակը: Օլգան հասկացավ, թե ինչից է արթնացել. շոգեքարշն ըստ երեւույթին ավելի վաղ էր սկսել ճչալ, երբ ինքը դեռ քնած էր: Օլգան վեր թռավ ու արթնացրեց Լիզային.

- Վեր կաց... Արգելակները չեն պահում:

Օլգան աթոռակից թռցրեց շորերն ու հագնվեց: Շոգեքարշը նորից կանչեց հեռվից: Օլգան ականջ դրեց մեքենայի ասածին.

«Չէ՛,- մտածեց նա:- Ասում է, որ շարժակազմը պոկվել է...»:

Ծխկոցով քաշեց-բացեց վագոնի դուռը, ցած թռավ ու վազեց կառամատույցով. արդեն Լիզային սպասելու ժամանակ չկար, թող մենակ քնի արշալույսին ու չբացի ծածկոցը:

Կայարանի շենքի դիմաց, երրորդ ուղեգծին մի միայնակ շոգեքարշ էր կանգնած. միակն էր կայարանում, ու շուրջը ուրիշ ոչինչ չկար, բացի կայարանի շենքից, ու տափաստանն էլ հիմա լուսավոր ու ամայի էր: Մոտեցող գնացքի ուղղությամբ երկու մարդ էին նայում շոգեքարշից՝ տարեց մե-

քենավարն ու նրա օգնական Իվան Պոդմետկոն. սպասում էին, թե ինչ է կատարվելու. կանոնների համաձայն՝ բոլոր երթուղիները, առանց կանգառի հընթացս անցնում էին Սերգա կայարանը, նաեւ՝ բոլոր մարդատար գնացքները, փոստատարներից բացի:

Նախորդ գիշեր կայարանում անձամբ կայարանապետն էր հերթապահել: Հիմա նա կանգնած էր կառամատույցին ու գլխարկը հանած՝ ականջ էր դնում երկար վայրէջքով մոտեցող գնացքի ազդանշաններին:

Օլգան վազեց նրա մոտ:

- Լսո՞ւմ եք. շարժակազմը կտրվել է:

- Լսում եմ,- դժգոհ պատասխանեց կայարանապետը ու հանկարծ տարեց, հոգնած մարդու հանգի նեղվեց, զայրացավ:- Ախր ինչի՞ են էս բոլոր դեպքերը հենց իմ հերթապահությանը պատահում: Ի՞նչ է, ինձ հանգիստ չի հասնո՞ւմ...

Օլգան չպատասխանեց. նայում էր վրահաս աղետի կողմը. վախեցած կայարանապետն էլ նույն կողմը նայեց:

Հեռվում երեւում էր երկաթուղու՝ կայարանից ուղիղ ու երկար բարձրացող գիծը, իսկ վերեւից, տեւական վայրէջքով, կուրծքն առաջ, շոգի արձակելով վազում էր շոգեքարշը:

Շոգեքարշը ժամանակ առ ժամանակ տագնապած կանչում էր՝ մերթ ազդանշանելով կտրվածքի մասին, մերթ միջանցիկ ճանապարհ խնդրելով:

Կայարանապետն ուշադիր նայեց Օլգային.

- Ախր զինվորական շարժակազմ է կտրվել... պիտի արագ որոշում ընդունենք:

Օլգան խնդրեց.

- Հրամայե՛ք:

- Հիմա՛,- տագնապահար ու հապճեպ ասաց պետը,- հիմա կմտածեմ:

- Երկար կտեւի,- առարկեց Օլգան:- Պետք չի, ես գիտեմ...

Նա իջավ կառամատույցից, գծերով վազելով՝ հասավ մանեւրային շոգեքարշին ու կառչեց մեքենայի խցիկը տանող սանդուղքի բռնակներից: Հետո դարձավ կայարանի պետին.

- Զգուշացրեք հարեւան կայարանին, միջանցիկ ճանապարհ տվեք,- ու վազելով բարձրացավ խաղաղ ֆսսացող շոգեքարշի խցիկը:

Կայարանի ելքի լուսազդանշանիչը փակ էր: Կայարանի պետը նայեց այդ կողմ ու անհետացավ կառամատույցից:

- Սիֆոնը,- խցիկ մտնելուն պես կանչեց Օլգան:- Ի՞նչ եք նստել-նայում:

Իվան Պոդմետկոն լուռումունջ պտտեց սիֆոնի ծորակը, բացեց հնոցի դռնակն ու սկսեց ածուխ լցնել: Կրակը չէր հասցնում ներծծվել խողովակով ու բաց դռնակից երկար, կարմրասեւ լեզուներով խփվում էր շոգեքարշի խցիկի ներսը:

- Ինձ հետ կգա՞ս,- հարցրեց Օլգան տարեց, խաղաղաբարո մեքենավարին՝ շոգեքարշի տիրոջը:

Մեքենավարը միանգամից չպատասխանեց. միտք արեց, ձեռքը տարավ ծնոտի թավ մազերին ու ասաց.

- Թեքությունը մեծ է. կջարդվենք... Ախր Սերգայից էն կողմ էլ վայրէջքը շարունակվում է դեպի Վոլգա, էստեղ, կայարանում մենակ մի պուճուր հրապարակ կա: Մեծ էլ ընտանիք ունեմ...

Կայարանի պետը բացեց ելքի լուսազդանշանիչը: Ջինվորական գնացքի շոգեքարշը շատ մոտ կանչեց: Օլգան մեքենավարին ասաց.

- Լա՛վ, պիտի գնանք, դու իջի, լավ նայի երեխեքիդ:

Պոդմետկոն առաջվա պես արագ լցնում էր հնոցը:

- Իսկ դո՞ւ,- հարցրեց Օլգան:

- Ինձ կարելի է,- պատասխանեց Պոդմետկոն:- Գնացինք: Ես երեխա չունեմ:

Կայարանի պետը ելավ կառամատույց. պարզված ձեռքին բաց դեղին դրոշակ էր՝ զգույշ ընթացք ըստ հայեցողության: Իսկ ծանր գնացքն արդեն շատ մոտ էր դղրդում պողպատե անիվներով, ու շոգեքարշը նորից ճչաց աղետի մասին:

Կայարանի շոգեքարշի մեքենավարը լուռումունջ իջավ ցած ու իբր մեքենայի սպասարկմանը վերաբերող ընթացիկ գործերով դանդաղ քայլեց գծի երկարությամբ:

Վրա հասած գնացքը Օլգայի տեսադաշտից ծածկեց կայարանի պետին: Նախ սուրաց-անցավ շոգեքարշը, հետեւից՝ ոռնոցով ու ճռնչոցով, զսպանակները կտրուկ խաղացնելով՝ մի քանի վագոն անցան, որոնց դռները կրնկի վրա բաց էին: «Իսկ ո՞ւր է Լիզան,- մտածեց Օլգան,- դեռ քնած է ու չի՞ լսում»: Վագոնների բաց դռներից մի ակնթարթ երեւացին կարմիրբանակայինները. ջահել ձեռքերի ողջ ուժով զսպում էին արագությունից ու վագոնների ճոճքից խելագարված ձիերին: Ձիերը սմբակներով այնպես էին փշրել վագոնների պատերի տախտակները, որ թարմ կոտրվածքները հեռվից երեւում էին:

Շոգեքարշն ու վագոններն անցան, ու կառամատույցին ընկած մնաց շոգեքարշից շպրտած մականը: Կայարանապետը վերցրեց մականը, հա-

նեց միջի գրությունն ու կարդաց. «Կտրվել է քսան-երեսուն վագոն: Պոչից հեռանում եմ: Անցում տվեք ու զգուշացրեք մյուս կայարաններին: Մեխանիկ Ա. Բլագիխ»:

Կայարանապետը գրությունը ձեռքին ցած թռավ կառամատույցից, վազքով կտրեց երկաթգիծն ու թուղթը տվեց Օլգային:

Օլգան վերցրեց գրությունը, կարդաց ու նայեց այն կողմ, որտեղից եկել էր շոգեքարշը՝ գնացքի մի մասով:

Այնտեղից, հորիզոնից, առանց շոգեքարշի, թափով մոտենում ու խոշորանում էր գնացքի սլացող պոչը: Հիմա միայն վագոնի դիմային, ճակատի մասն էր երեւում՝ բութ, կույր պատ, որ աչքի առաջ մեծանում էր արագությունից:

Օլգան կայարանապետի գրությունը պահելու տեղ չգտնելով՝ դրեց բերանը, մի քանի անգամ լրիվ առաջ մղեց հետդարձի ղեկն ու բացեց շոգու կարգավորիչը. շոգեքարշը շարժվեց:

Օլգան կարգավորիչի բռնակը քաշեց իրեն, ապա հետ մղեց, ճոճեց ու դրեց ողջ աղեղի վրա: Ծոգեքարշը նետվեց առաջ, շոգին արագ, շնչակտուր սկսեց խփվել խողովակի մեջ:

Մանեւրային շոգեքարշն արդեն հեռացել էր կայարանից, բայց պետը, համենայնդեպս, բարձրացրեց կանգառի նշանը՝ կարմիր սկավառակ, եւ ազատ ձեռքը պարզեց՝ ափը դեպի գնացքը: Ազատ արագության հողմով ու երաժշտությամբ նրա առաջ հայտնվեց գնացքի պոչը՝ քսան-երեսուն վագոն. վագոնների մեծ մասը բաց հարթակներով էր: Այդ հարթակներին թեթեւ հրանոթներ էին, խոհանոցներ ու բրեզենտով ծածկած տարատեսակ զինվորական գույք: Կարմիրբանակայինները հանգիստ նստել էին հարթակներին եւ իրենց երգերն էին երգում: Միայն նրանց հրամանատարը, արգելակման վագոնի սյունը բռնած, լուռ նայում էր առաջ, եւ այդ վագոնի տակ արգելակները, ինչպես ակամա նկատեց կայարանապետը, մինչեւ վերջ սեղմված էին, բայց միայն մի վագոնով անհնար էր պահել վայրէջքով սլացող շարժակազմը:

Կայարանի պետն անմիջապես գնաց հերթապահ սենյակ՝ շահագործման ծառայության բաժանմունք հայտնելու հասունացող պատահարի մասին:

Օլգայի վարած շոգեքարշը ուժգին ճոճվեց արագությունից, բայց նա չկոտրեց շոգու թափը: Ժամանակ առ ժամանակ նայում էր ջրաչափի ապակուն, ճնշաչափին ու հետ, որտեղից, վայրէջքին թափ հավաքելով, վրա էր հասնում շարժակազմը: Իվան Պոդմետկոն անընդհատ ածուխ էր

լցնում հնոցը, որ կաթսայում բարձր ճնշում պահվի ու առաջ անցնեն:

Սակայն հետ նայելով՝ արդեն սկսում էր կասկածել. գնացքի կտրված պոչը արագ հասնում էր նրանց:

- Որ վագոնները չպահեցինք, կջնջխվենք,- ասաց նա:- Մեռնելու ենք:

- Թռի՛,- առաջարկեց Օլգան:

- Բա դո՞ւ,- հարցրեց Պոդմետկոն:

- Ես մենակ կմնամ,- պատասխանեց Օլգան:

Պոդմետկոն բացեց հնոցի դռնակը ու նորից սկսեց ածուխ լցնել:

- Ես կմնամ քեզ հետ,- ասաց նա:- Գլուխ կհանենք:

Օլգայի շոգեքարշն արդեն առավելագույն արագությամբ էր գնում. անիվների առեղները արագությունից միատարր սկավառակ էին թվում: Միայն Օլգան էր տեսնում իր մեքենայի վիճակը: Կույր շարժակազմը շոգեքարշից արագ էր ու համարյա դիմահար հասնում էր փախչող մեքենային:

- Իվա՛ն,- գոռաց նա,- խառնի ածուխը: Կրակը ածուխով ծածկել ես, էդ ի՞նչ ես անում:

Պոդմետկոն վերցրեց կրակխառնիչն ու խրեց մոլեգնող կրակի մեջ: Բայց շոգեքարշի ու կույր շարժակազմի միջեւ տարածությունն ավելի կրճատվեց: «Մի՞թե,- մտածեց Օլգան:- Մի՞թե հիմա մեռնելու եմ: Չեմ ուզում»:

Հանկարծ լսեց կարմիրբանակային երգը, որ երգում էին վրա հասնող կատաղի գնացքի բաց հարթակներին: «Չեմ մեռնելու»,- վճռեց նա: Գլուխը հանեց շոգեքարշի խցիկից ու տեսավ, որ դժվար է լինելու. վագոնները թափընթացքով գծերից կշպրտեն իր թեթեւ շոգեքարշը: Դարձավ Իվան Պոդմետկոյին.

- Թռի՛: Հիմա կջարդի մեզ:

Իվանը մի քիչ էլ միտք արեց.

- Ջուրը պիտի թողնենք, ավելի արագ կգնանք:- Ու քաշեց գլանների թողիչ ծորակի լծակը, հետո կառչեց սանդուղքի բռնակներից ու անհետացավ ներքեւում. ըստ երեւույթին թռավ բալաստի ավազին, որ փրկի կյանքը:

Օլգան նկատեց, որ Պոդմետկոն չկա ու շշնջաց. «Աստվա՛ծ իմ», ինչպես մի ժամանակ հանգուցյալ մայրն էր ասում: Հետո ոչինչ մտածել չհասցրեց: Ջգաց հարվածն, ու նրա շոգեքարշը ցատկեց առաջ, ողջ ու բանական կենդանու պես: Օլգան հետ նայեց պատուհանից. «Ի՞նչ եղավ», եւ անմիջապես զգաց երկրորդ, ավերիչ բութ հարվածը: «Իմ խե՛ղճ,- վախե-

ցած բարձր ասաց իրեն:- Թող առանց քեզ երգեր երգեն»,- եւ Օլգան փակեց կարգավորիչը, ավազ թողեց անիվների տակ, սեղմեց հետադարձի լծակը, կարգավորիչով ողջ թափով թողեց գոլորշին ու մինչեւ վերջ բացեց շոգեքարշի արգելակի լծակը: Նրա մեքենան ակնթարթորեն քարացավ-կանգնեց, անշարժացավ տեղում: Օլգան անմիջապես բաց թողեց օդային արգելակը, ապա ողջ մեքենայով հետընթաց սեղմեց իրեն հարվածող շարժակազմը, բայց ետեւից հրող վագոնների իներցիան չէր մարում, եւ թափի մեռյալ ուժով դրանք շոգեքարշի տենդերը[1] մղեցին խցիկը, որտեղ միայնակ մեքենավարն էր: Օլգան հասկացավ՝ ինչ է կատարվում, ու կծիկ դառավ մեքենավարի իր տեղում. «Մորաքրոջս ամուսինն է, սրիկա Բլագինը, Արկադի Միխայլովիչը, նա է կտրել շարժակազմը: Գրությունը բերանումս էր, ո՞ւր կորավ: Ո՞ւր է Լիզան, մի՞թե դեռ քնած է»:

Օլգան ճզմվեց խցիկում: Զգաց, որ խեղդվում է, օտար ուժը իրեն ամբողջովին, հագուստի հետ, ճզմում է շոգ կաթսայի երկաթե մարմնի մեջ:

Սանեւրային շոգեքարշը դուրս չթռավ ռելսերից, միայն տենդերը հասավ շոգեկաթսային, բայց փոխարենը կտրված շարժակազմն անվնաս էր, չհաշված առջեւի վագոնի կցասարքերը, որ խփվել էին շոգեքարշին: Հիմա ողջ գնացքը խաղաղ կանգնած էր բարձր հողաթմբին, առավոտվա արեւով լուսավորված բաց ու անհողմ դաշտում: Կարմիրբանակայիններն ու հրամանատարը ցած թռան խոտերին ու մոտեցան շոգեքարշին: Խցիկում քնած թե մեռած մի անծանոթ, մենակ կին էր պառկած: Եվ այդ ժամանակ հրամանատարն ու օգնականը, խցիկի տանիքը քանդելով, կնոջն ազատեցին մեքենայից ու իջեցրին կարմիրբանակայինների ձեռքերին:

Դրանից հետո հրամանատարը հետ քաշվեց ու բարձր հրամայեց.

- Չորս հոգի մնում են այստեղ: Մյուսները՝ վագքով հետ՝ կայարան: Առաջին չորսը տանում են վիրավորին, հետո ձեռքից ձեռք հանձնում են նոր չորսին, իսկ նրանք՝ հաջորդներին: Վե՛րջ:

Կես ժամից կարմիրբանակայիններն Օլգային ձեռքերի վրա կրկին հասցրին Սերգա կայարան: Նրա հետ եկավ նաեւ գնացքի հրամանատարը, որն իր զինվորներին չէր լքել մինչեւ վերջ: Նա երկաթուղային հեռագրով կապվեց զինվորական շրջանի հրամանատարության հետ ու զեկուցեց պատահարի մասին. վիրավոր են մեքենավարի կուրծքն ու գլուխը, բոլոր կարմիրբանակայիններն անվնաս են, գույքը՝ նույնպես, եթե արագությունը շարունակեր ազատ աճել, կտրված շարժակազմն անխուսափե-

1. Ջրի ու վառելիքի պահեստավագոն:

լիորեն կթռչեր ռելսերից Վոլգայի կամրջին նախորդող շրջադարձի վրա կամ հենց կամրջին, կամ էլ կջախջախվեր կայարանում՝ գետի մյուս ափին, կամրջից այն կողմ, ուր գնացքը խուժելու էր:

Ջինվորական շրջանից հայտնեցին, որ մի որպեից շտապ օգնության սանիտարական ավտոմոբիլ են ուղարկում՝ երկու բժիշկներով ու բուժման համար անհրաժեշտ բոլոր պիտույքներով, ավտոմոբիլը կգա ուղիղ խճուղով եւ ավելի արագ կհասնի կայարան, քան արտակարգ գնացքը:

Հրամանատարը խոնարհվեց հեռագրատան սենյակի բազմոցին պառկած Օլգայի վրա.

- Ո՞ւմ կուզեիք տեսնել: Հիմա կկանչենք: Գուցե ազգականների կամ ընկերների՞:

- Յուշկային,- ասաց Օլգան:- Ուրիշ ոչ մեկին. թող բոլոր մարդիկ իմ փոխարեն ապրեն աշխարհում:

- Լա՛վ,- պատասխանեց հրամանատարը ու նշան արեց հեռագրավարին, որ պատրաստվի հաղորդելու:- Իսկ ո՞վ է Յուշկան:

- Երեխա՛,- շշնջաց Օլգան:

Հրամանատարը զարմացավ մոր ջահելությունից ու ոչինչ չասաց: Օլգան երկար ու համբերատար բուժվում էր ու մեռնել չէր կարող. առողջացավ, սկսեց ապրել եւ ապրում է մինչ օրս:

Միխայիլ ԶՈՇՉԵՆԿՈ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԹԱԽԻԾ

Վաղուց էի ուզում պատմեմ, եղբայրնե՛ր, կոմսոմոլ Գրիշա Ստեպանչիկովի մասին, բայց ոնց որ մի տեսակ մտահան էի անում: Իսկ ժամանակն, իհարկե, անցնում էր:

Վայ թե կես տարի թռած լինի էն օրից, երբ Գրիշային պատահեց էդ այլանդակ տհաճությունը:

Ճիշտ է, տղան վնասակար հանգամանքներում էր մերկացվել՝ քաղքենիական տրամադրություններ եւ ընդհանրապես սոցիալիզմի խարխլում, բայց թույլ տվեք համակողմանի լուսաբանեմ այդ հարգարժան պատմությունը:

Կարծես թե Մոսկվայում է պատահել: Գուցե եւ ոչ Մոսկվայում: Բայց մեզ թվում է՝ Մոսկվայում: Թափից ենք տեսնում: Բայց հաստատապես չենք պնդում: «Կարմիր թերթը» մանրամասների մեջ չի խորացել: Միայն մանր պետիտով նշեց, թե՝ Սեմյոնովյան բջիջում:

Իսկ բանն այսպես է եղել: Սեմյոնովյանի, այսինքն՝ բջջի կազմում էր էդ բազմաչարչար Գրիշա Ստեպանչիկովը: Ու մի անգամ տվել՝ էդ Գրիշայի երեք ատամը թափել էին: Թե ինչ գործով էին թափել, էլի մեզ անհայտ է: Գուցե՝ ֆիզկուլտուրայի ավելցուկից: Գուցե եւ գլուխը ծառին է տվել: Կամ էլ երեխա ժամանակ քաղցր շատ է կերել: Մենակ էն գիտենք, որ հարբած ժամանակ չեն քաշել ատամները: Էդպիսի բան լինել չի կարող:

Էսպես, ուրեմն, ապրում է էդ Գրիշան առանց երեք ատամի: Մնացածը տեղերը կանգնած են: Իսկ դրանք, հակառակի պես, չկան:

Տղան էլ ջահել է: Համակողմանի: Անհետաքրքիր է, գիտե՞ք. առանց երեք ատամի: Էդ տեսակ բացակայությամբ ի՞նչ կյանք: Չես կարա շվացնես: Ուտելը՝ վատ: Ծխախոտն էլ բռնելիք չունի: Թեյն էլ ծակից չոռում է:

Տղան է՛լ մոմ լցրեց, է՛լ ծակը փակեց:

Փող հետ գցեց Գրիշկան: Գնաց բժշկի մոտ:

- Թե որ էսպես գնաց,- ասում է,- երեք արհեստական ատամ գցեք:

Բժիշկն էլ՝ ջահե՛լ, անզգո՛ւյշ: Չմերվեց Սեմյոնովյան բջջի հոգեբանությանը: Բռնեց էդ բժիշկն ու երեք ոսկի ատամ դրեց Գրիշայի բերանը:

Խոսք չկա, հարուստ տեսարան էր: Բերանը բացում է՝ պատկե՛րք: Նայելի՛ք: Նոկտյո՛ւրն:

Բջիջում սկսեցին ծուռ նայել Գրիշային: Այսինքս, մարդը բերանը բացում է թե չէ,- խոսում է կամ ծամում,- բոլորը նայում են: Իբր՝ Է՛ս ինչ է: Էս ի՞նչ է աճեցնում տղան:

Սանր խոսակցություններ գնացին իրադարձության շուրջը: Որտեղի՞ց էս նէպմանական վարքուբարքը: Որտեղի՞ց էս տեսակ քաղքենիական տրամադրություններ: Ինչի՞ չի կարող շարքային կոմսոմոլը ծակով ծամի ու ուտի:

Եվ հերթական ժողովի ժամանակ հարց բարձրացրին՝ նման բան թույլատելի՞ է արդյոք: Եվ ընդհանրապես որոշեցին.

Ոսկի ատամներ ունենալը համարել սոցիալիզմից ու նրա գաղափարից հրաժարվելուն տանող երեւույթ, ու մենք՝ ՀԱՄԼԿԵՄ Սեմյոնովյան բջջի անդամներս, պայքար ենք հայտարարում դրանց կրողների դեմ՝ որպես կոմերիտական գաղափարը քայքայող երեւույթի: Ատամները հանձնել գործազուրկների ֆոնդ: Հակառակ դեպքում հարց կդրվի միության շարքերից հեռացնելու մասին:

Էստեղ նախագահն էլ իրա կողմից կրակին յուղ արեց: Բան չունեմ, տաքարյուն տղամարդ է: Ծատ դառը խոսքեր ասեց:

- Ես,- ասում է,- նախագահ մարդ եմ,- ասում է,- բայց աչքս ոսկի զանգուլակներին չի: Բերանումս էլ,- ասում է,- հետեւի ատամների տեղը վաղուց արմատներն են ցցված: Ու ոչինչ՝ ծամում եմ: Ու թե ոնց եմ ծամում, մենակ աստված գիտի: Կարող է մատներով եմ օգնում, որ ծամվի: Բայց աչք չեմ գցում:

Լաց եղավ, իհարկե, Գրիշա Ստեպանչիկովը: Ցխուր էր էդ տեսակ ատամները՝ գործազուրկների ֆոնդին: Սկսեց բացատրել, թե՝ զոդած են, պոկելը դժվար է:

Էդպես էլ չտվեց:

Իսկ նրան միությունից դուրս արին, թե չէ՝ չգիտենք: Էդ գործով էլ տեղեկություն չկա: Բայց վայ թե՝ դուրս են արել:

Վառլամ ՇԱԼԱՄՈՎ

ՇՈԿԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ

Դեռ այն լիառատ ժամանակներում, երբ Մերզլյակովը ծիապան էր, ու ինքնաշեն ձավարամանում՝ մաղի պես ծակծկած տակով մեծ պահածոյի տուփի մեջ կարելի էր ծիերի համար ստացած վարսակից, մարդկանց համար ստացած ձավարից շիլա եփել եւ այդ դառնատաք շփոթով խլացնել, մարել քաղցը, դեռ այդ ժամանակ մի պարզ հարցի վրա էր մտածում: Մայրցամաքի խոշոր գումակային ծիերը օրական պետական վարսակի երկու անգամ ավելի բաժին էին ստանում, քան կարճահասակ ու անճոռնի յակուտական ծիուկները, չնայած երկուսն էլ միատեսակ քիչ էին կրում: Ճիվաղ-պերշերոն Գրոմի մսուրը այնքան վարսակ էր լցվում, որ կեերիքեր հինգ «յակուտի»: Դա ճիշտ էր, այդպես էր ամեն տեղ, ու դա չէր տանջում Մերզլյակովին: Նա չէր հասկանում, թե մարդկանց ճամբարային օրապահիկը՝ սպիտակուցների, ճարպերի, վիտամինների ու կալորիաների այդ խորհրդավոր ցանկը, որ նախատեսված էր կալանավորների կլլման համար ու կաթսայի թերթիկ էր կոչվում, ինչո՞ւ է կազմվում առանց մարդկանց կենդանի քաշը հաշվի առնելու: Եթե նրանց վերաբերվում ենք որպես բանող անասունի, ուրեմն օրաբաժնի հարցում էլ պիտի հետեւողական լինենք, ոչ թե հետեւենք ինչ-որ թվաբանական միջինի՝ գրասենյակային հորինվածքի: Այդ ահավոր միջինը լավագույն դեպքում միայն փոքրամարմիններին էր ձեռնտու, եւ իսկապես, փոքրամարմինները մյուսներից ուշ էին մեռելացու դառնում: Մերզլյակովը կազմվածքով պերշերոն Գրոմի պես էր, ու նախաճաշի երեք խղճուկ գդալ շիլան միայն ուժեղացնում էր ստամոքսի բութ ցավը: Բայց չէ՞ որ բրիգադի բանվորը օրապահիկից բացի համարյա ոչինչ ստանալ չէր կարող: Մնացած ամենաարժեքավորը՝ եւ՛ յուղը, եւ՛ շաքարը, եւ՛ միսը, կաթսայի թերթիկում արձանագրվածի չափով չէր հայտնվում ընդհանուր կաթսայում:

Մերզլյակովն ուրիշ բան էլ էր տեսնում: Առաջինը մեռնում էին հաղթանդամ մարդիկ: Ծանր աշխատանքին սովոր լինելը բացարձակապես նշանակություն չուներ: Մանրամարմին ինտելիգենտը, համենայնդեպս, ավելի երկար էր դիմանում, քան աժդահա կալուգացին՝ տոհմիկ հողագործը, եթե

նրանց միատեսակ էին կերակրում՝ ըստ ճամբարային օրապահիկի: Արտադրողական տոկոսների հաշվին օրաբաժին ավելացնելուց էլ օգուտը քիչ էր, որովհետեւ հիմնական ցանկն առաջվանն էր մնում ու ոչ մի կերպ հաշվարկված չէր հաղթանդամ մարդկանց համար: Ավելի լավ ուտելու համար պետք էր ավելի լավ աշխատել, իսկ լավ աշխատելու համար պետք էր լավ ուտել: Էստոնացիները, լատվիացիները, լիտվացիները համատարած առաջինն էին մեռնում: Առաջինն էին մեռելացու դառնում, ինչը միշտ հարուցում էր բժիշկների դժգոհությունը, թե այդ ամբողջ Մերձբալթիկան ռուս ժողովրդից թույլ է: Ճիշտ է, լատվիացիներին ու էստոնացիներին հարազատ կենցաղը ճամբարային կենցաղից շատ ավելի հեռու էր, քան ռուս գյուղացունը, ու նրանց համար դժվար էր: Բայց գլխավորը համենայնդեպս ուրիշ բան էր. նրանք պակաս դիմացկուն չէին, պարզապես ավելի խոշոր էին:

Տարիուկես առաջ, նորեկին արագ տապալած ցինգայից հետո Մերզլյակովին վիճակվեց արտահաստիքային սանիտար աշխատել տեղական հիվանդանոցում: Այնտեղ տեսավ, որ դեղորայքի բաժնեչափը քաշով են սահմանում: Նոր դեղերը փորձարկվում էին ճագարների, մկների, ծովախոզուկների վրա, իսկ մարդկային չափը մարմնի քաշի հաշվարկով էր: Երեխաների դեղաչափերն ավելի փոքր էին, քան մեծերինը:

Բայց ճամբարային օրաբաժինը մարդու մարմնի քաշով չէր հաշվարկվում: Հենց դա էլ այն խնդիրն էր, որի սխալ լուծումը զարմացնում ու հուզում էր Մերզլյակովին: Մինչեւ վերջնականապես կթուլանար, հրաշքով հաջողվեց ծիապան ձեւակերպվել. կարելի էր ծիերից գողանալ ու դրանով լցնել սեփական ստամոքսը: Մերզլյակովն արդեն մտածում էր, որ ձմեռը կհանի, իսկ հետո Աստված մեծ է: Բայց չստացվեց: Ձիաբազայի վարիչին հարբեցողության համար գործից հանեցին, ու նրա տեղը նշանակվեց ավագ ծիապանը, մեկը նրանցից, որ ժամանակին Մերզլյակովին սովորեցրել էին թիթեղյա ձավարամանն օգտագործելու ձեւը: Ավագ ծիապանն ինքը քիչ չէր վարսակ գողացել ու հրաշալի գիտեր՝ դա ինչպես է արվում: Ղեկավարությանը դուր գալու համար, արդեն վարսակի կարիք չունենալով՝ նա գտավ ու անձամբ ջարդեց բոլոր ձավարամանները: Վարսակը սկսեցին խարկել, խաշել եւ ուտել բնական վիճակում՝ ստամոքսները լրիվ համապատասխանեցնելով ձիու ստամոքսին: Նոր վարիչը զեկուցագիր ուղարկեց ղեկավարությանը: Մի քանի ծիապանի, այդ թվում եւ Մերզլյակովին, կարցեր դրեցին վարսակ գողանալու համար ու ծիաբազայից ուղարկեցին այնտեղ, որտեղից եկել էին՝ ընդհանուր աշխատանքների:

Ընդհանուր աշխատանքներում Մերզլյակովը շուտով հասկացավ, որ մահը մոտ է: Օրորվում էր գերանների ծանրության տակ, որ ստիպված էր քաշել: Տասնապետը, որն այդպես էլ չսիրեց անբան բոյլուխին («բոյլուխը» «հաղթանդամն» էր՝ տեղի լեզվով), Մերզլյակովին միշտ «ծերքաշի» էր դնում՝ ստիպելով կրել գերանի հաստ ծայրը: Մի անգամ Մերզլյակովն ընկավ, միանգամից չկարողացավ վեր կենա ծյան վրայից ու, հանկարծ որոշում ընդունելով, հրաժարվեց այդ անիծված գերանը քաշելուց: Արդեն ուշ էր, մութ, ուղեկցորդողները շտապում էին քաղպարապմունքի, աշխատողներն ուզում էին շուտ հասնել բարաք՝ ուտելիքին, տասնապետն այդ երեկո ուշանում էր թղթախաղի ճակատամարտից. ուշանալու մեղավորը Մերզլյակովն էր: Ու պատժվեց: Նախ հենց ընկերները ծեծեցին, հետո՝ տասնապետը, ուղեկցորդողները: Գերանն այդպես էլ ընկած մնաց ծյան մեջ. գերանի փոխարեն ճամբար բերեցին Մերզլյակովին: Նա ազատվեց աշխատանքից ու ընկած էր թարեքի վրա: Գոտկատեղը ցավում էր: Բուժակը Մերզլյակովի մեջքին սոլիդոլ քսեց. բուժկետում վաղուց շփելու ոչ մի միջոց չկար: Մերզլյակովը վեր չէր կենում, կիսակորված՝ համառորեն բողոքում էր գոտկատեղի ցավերից: Ցավը վաղուց չկար, ջարդած կողը շատ արագ կպել էր, բայց Մերզլյակովը ձգտում էր ցանկացած ստի գնով ձգել դուրս գրվելն ու աշխատանքի գնալը: Նրան այդպես էլ դուրս չգրեցին: Մի օր հագցրին, դրեցին պատգարակին, բարձեցին ավտոմեքենայի թափքն ու մի ուրիշ հիվանդի հետ տարան շրջանային հիվանդանոց: Այնտեղ ռենտգենկաբինետ չկար: Հիմա ամեն ինչ պիտի լուրջ մտածվեր, ու Մերզլյակովը մտածեց: Մի քանի ամիս, առանց մեջքն ուղղելու, պառկեց այնտեղ, տեղափոխվեց կենտրոնական հիվանդանոց, որտեղ, իհարկե, ռենտգենկաբինետ կար, ու Մերզլյակովին տեղավորեցին վիրաբուժական բաժանմունքում, վնասվածքաբանական հիվանդությունների սենյակում. հիվանդները «տրավմատիկին» «դրամատիկ հիվանդություններ» էին ասում՝ չմտածելով այդ բառախաղի ողջ դառնության մասին:

- Այ մեկ էլ սրան,- Մերզլյակովի հիվանդության պատմությունը ցույց տալով՝ ասաց վիրաբույժը,- կտեղափոխենք ձեզ մոտ, Պյո՛տր Իվանովիչ, վիրաբուժական խնդիր չունի:

- Բայց չէ՞ որ ախտորոշման մեջ գրում եք՝ անկիլոզ՝ ողնաշարի վնասվածքի հետեւանքով: Իմ ինչի՞ն է պետք,- ասաց նյարդաբանը:

- Իհարկե, անկիլոզ է: Ուրիշ ի՞նչ կարող եմ գրել: Ծեծից այդպիսի՞ բաներ են լինում: Մի դեպք եմ հիշում. «Գորշ» հանքավայրում տասնապետը ծեծել էր աշխատողին...

- Ձեր դեպքերը լսելու ժամանակ չունեմ, Սերյո՛ժա: Հարց եմ տալիս՝ ինչո՞ւ եք տեղափոխում...

- Ախր գրել եմ. «Դուրսգրման հետազոտություն կատարելու համար»: Ծակծկեք, ասեղներով ծակծկեք, դուրս կգրենք ու շոգենավ կնստեցնենք: Թող ազատ մարդ լինի:

- Բայց չէ՞ որ նկարել եք: Խախտումներն առանց ասեղների էլ պիտի երեւան:

- Արել եմ: Խնդրեմ, նայե՛ք:- Վիրաբույժը թանգիֆե վարագույրի վրա բերեց նեգատիվի մուգ ժապավենը:- Սատանան էլ գլուխ չի հանի այսպիսի նկարից: Մինչեւ որ լավ լույս չլինի, լավ հոսանք չլինի, մեր ռենտգենատեխնիկներն այսպիսի պղտորություն են արտադրելու:

- Իսկապես որ պղտորություն,- ասաց Պյոտր Իվանովիչը:- Լա՛վ, այդպես էլ կանենք:- Ու նա հիվանդության պատմության վրա գրեց իր ազգանունը՝ համաձայնություն, որ Մերզլյակովը տեղափոխվի իր մոտ:

Աղմկոտ, խառնաշփոթ, ցրտահարությամբ, ջլախախտումներով, կոտրվածքներով, այրվածքներով լեցուն,-հյուսիսային հանքահորերը կատակել չէին սիրում,- բաժանմունքում, որտեղ հիվանդների մի մասը պառկած էր հիվանդասենյակների ու միջանցքների հատակին, որտեղ մի հոգնատանջ վիրաբույժ էր աշխատում չորս բուժակների հետ, ու բոլորն օրը երեք-չորս ժամ էին քնում, չէին էլ կարող լրջորեն զբաղվել Մերզլյակովով: Մերզլյակովը հասկացավ, որ հենց նյարդաբանական բաժանմունքում էլ, ուր իրեն անսպասելի տեղափոխեցին, սկսվելու է իսկական հետաքննությունը:

Նրա ողջ կալանավորական, հանդուգն կամքը վաղուց կենտրոնացած էր մեկ բանի՝ չուղղվե՛լ: Ու չէր ուղղվում: Սարմինն ինչպե՞ս էր ուզում ծգվել գոնե մեկ վայրկյանով: Բայց նա հիշում էր հանքահորը, շնչառությունը խեղդող ցուրտը, ոսկի հանքախորշի սառած, սլկուն, սառնամանիքից փայլփլող քարերը, ապուրի թասը, որից ճաշին ուղղակի խմում էր՝ անիմաստ գդալը չօգտագործելով, ուղեկցորդողների խզակոթերն ու տասնապետերի սապոգները, եւ իր մեջ ուժ էր գտնում, որ չուղղվի: Ասենք, հիմա արդեն ավելի հեշտ էր, քան առաջին օրերին: Նա քիչ էր քնում, վախենալով, որ քնի մեջ կուղղվի: Գիտեր, որ հերթապահ սանիտարներին հրամայված է հետեւել իրեն, որ սուտը բռնեն: Իսկ մերկացմանը,- Մերզլյակովը դա էլ գիտեր,- հետեւելու էր տուգանային հանք ուղարկելը, եւ ինչպիսին կլինի տուգանային հանքը, եթե սովորականն է Մերզլյակովի մեջ այդպիսի ահավոր հիշողություններ թողել:

Տեղափոխվելու հաջորդ օրը Մերզլյակովին տարան բժշկի մոտ: Բա-

ժանմունքի վարիչը կարճ հարցուփորձ արեց, թե ինչպես է սկսվել հիվանդությունը, կարեկցանով օրորեց գլուխը: Իբր իմիջիայլոց ասաց, որ նույնիսկ առողջ մկանները բազմամսյա անբնական վիճակի դեպքում հարմարվում են դրան, ու մարդն ինքն իրեն կարող է հաշմանդամ դարձնել: Հետո Պյոտր Պետրովիչն անցավ զննության: Ասեղով ծակելիս, ռետինե մուրճիկով թխկթխկացնելիս, սեղմելիս տրված հարցերին Մերզլյակովը բախտաբերի էր պատասխանում:

Աշխատաժամանակի կեսից ավելին Պյոտր Իվանովիչը ծախսում էր ձեւացողներին բացահայտելու վրա: Հիշում էր, իհարկե, կալանավորներին կեղծիքի մղող պատճառները: Պյոտր Իվանովիչն ինքն էլ վերջերս կալանավոր էր, ու նրան ո՛չ ձեւացողների մանկական համառությունն էր զարմացնում, ո՛չ կեղծարարության թեթեւամիտ պարզունակությունը: Պյոտր Իվանովիչը՝ սիբիրյան ինստիտուտներից մեկի նախկին դոցենտը, ինքն էլ գիտական կարիերան թաղել էր նույն ծյուների մեջ, որտեղ հիվանդներն իրենց կյանքն էին փրկում՝ խաբելով նրան: Չի կարելի ասել, թե նա չէր խղճում մարդկանց: Բայց ավելի շատ բժիշկ էր, քան մարդ, նախ եւ առաջ մասնագետ էր: Հպարտանում էր նրանով, որ ընդհանուր աշխատանքների մեկ տարին իր մեջ չի սպանել բժիշկ-մասնագետին: Ու խաբեբաներին մերկացնելու խնդիրն էլ ինչ-որ բարձր, համապետական տեսակետից ու բարոյականության տեսանկյունից չէր ընկալում: Այդ խնդիրն արժանի կիրառություն էր դիտում իր գիտելիքների, ծուղակներ դնելու իր հոգեբանական ունակության համար, որոնց մեջ, ի փառս գիտության, ընկնելու էին քաղցած, կիսախելագար, դժբախտ մարդիկ: Բժշկի ու կեղծարարի այդ ճակատամարտում ամեն ինչ բժշկի կողմն էր՝ եւ՛ հազարավոր խորամանկ դեղերը, եւ՛ հարյուրավոր դասագրքերը, եւ՛ խելացի սարքերը, եւ՛ պահակախմբի աջակցությունը, եւ՛ մասնագետի ահռելի փորձը, իսկ հիվանդի կողմից միայն սարսափն էր այն աշխարհի հանդեպ, որտեղից եկել էր հիվանդանոց եւ ուր վախենում էր վերադառնալ: Հենց այդ սարսափն էլ կալանավորին պայքարի ուժ էր տալիս: Հերթական խաբեբային մերկացնելով՝ Պյոտր Իվանովիչը խոր գոհունակություն էր ապրում. կրկին կենսական վկայություն էր ստանում, որ ինքը լավ բժիշկ է, որ չի կորցրել որակավորումը, հակառակը՝ հղկել է, կատարելագործել, մի խոսքով, որ դեռ կարող է...

«Հիմար են այդ վիրաբույժները,- Մերզլյակովի գնալուց հետո ծխախոտ վառելով՝ մտածում էր նա:- Տեղագրական կազմախոսություն չգիտեն կամ մոռացել են, իսկ ռեֆլեքսների մասին երբեք չեն իմացել: Ջուտ ռենտգե-

նով են գլուխներն ազատում: Իսկ եթե նկար չկա, նույնիսկ սովորական կոտրվածքի մասին վստահ խոսել չեն կարող: Բայց ձեւ անե՛լը...:- Որ Մերզլյակովը կեղծարար է, Պյոտր Իվանովիչին, իհարկե, պարզ էր:- Լա՛վ, թող մի շաբաթ պառկի: Այդ ընթացքում բոլոր անալիզները կհավաքենք, որ ամեն ինչ կարգով լինի: Բոլոր թղթերը կկցենք հիվանդության պատմությանը»:

Պյոտր Իվանովիչը ժպտաց՝ կանխավ վայելելով նոր մերկացումների թատերական էֆեկտը:

Մի շաբաթ անց հիվանդանոցում շոգենավի համար կալաներթ էին հավաքում՝ հիվանդների փոխադրում Մեծ երկիր: Արձանագրությունները հենց հիվանդասենյակում էին կազմում, եւ վարչությունից ժամանած բժշկական հանձնաժողովի նախագահն անձամբ էր զննում հիվանդներին, որոնց հիվանդանոցը պատրաստել էր առաքման: Նրա դերը հանգում էր փաստաթղթերը նայելուն ու անհրաժեշտ ձեւակերպումների ստուգմանը. հիվանդի անձնական զննությունը կես րոպե էր խլում:

- Իմ ցուցակներում,- ասաց վիրաբույժը,- կա ոմն Մերզլյակով: Մի տարի առաջ ուղեկցորդողները ջարդել են ողնաշարը: Կուզեի ուղարկել նրան: Վերջերս տեղափոխվել է նյարդաբանական բաժանմունք: Ահա, առաքման փաստաթղթերը պատրաստ են:

Հանձնաժողովի նախագահը շրջվեց նյարդաբանի կողմը:

- Բերեք Մերզլյակովին,- ասաց Պյոտր Իվանովիչը: Կիսակորված Մերզլյակովին բերեցին: Նախագահը հպանցիկ նայեց նրան:

- Ի՜նչ գորիլա է,- ասաց նա:- Հա՛, իհարկե, այսպիսիներին պահելն իմաստ չունի:- Ու վերցնելով գրիչը՝ ձգվեց ցուցակների կողմը:

- Ես իմ ստորագրությունը չեմ դնում,- բարձր ու պարզորոշ ասաց Պյոտր Իվանովիչը:- Սա կեղծարար է, եւ վաղը պատիվ կունենամ դա ներկայացնելու եւ՛ ձեզ, եւ՛ վիրաբույժին:

- Այդ դեպքում թողնենք,- անտարբեր ասաց նախագահն ու ցած դրեց գրիչը:- Եվ ընդհանրապես, եկեք ավարտենք, արդեն ուշ է:

- Նա կեղծարար է, Սերյո՛ժա,- հիվանդասենյակից դուրս գալիս վիրաբույժին թեւանցուկ անելով՝ ասաց Պյոտր Իվանովիչը:

Վիրաբույժը քաշեց ձեռքը:

- Հնարավոր է,- զզվանքով կնճռոտվելով՝ ասաց նա:- Աստված ձեզ հաջողություն տա մերկացման գործում: Ահագին հաճույք կստանաք:

Հաջորդ օրը Պյոտր Իվանովիչը հիվանդանոցի պետի հրավիրած խորհրդակցության ժամանակ մանրամասն զեկուցեց Մերզլյակովի մասին:

- Կարծում եմ,- ամփոփելով՝ ասաց նա,- որ Մերզլյակովի մերկացումը կիրականացնենք երկու փուլով: Առաջինը կլինի ռաուշ-անզգայացումը, որի մասին դուք մոռացել եք, Սերգե՛յ Ֆյոդորովիչ,- հաղթական ասաց նա՝ նայելով վիրաբույժի կողմը:- Դա պետք էր միանգամից անել: Իսկ եթե ռաուշն էլ ոչինչ չտա, այդ դեպքում...,- Պյոտր Իվանովիչը տարածեց ձեռքերը,- այդ դեպքում՝ շոկային թերապիա: Հավատացնում եմ՝ հետաքրքիր միջոց է:

- Ծատ չե՞նք ծանրացնում,- ասաց Ալեքսանդրա Սերգեեւնան՝ հիվանդանոցի ամենամեծ տուբերկուլյոզային բաժանմունքի վարիչը՝ լիքը-լիքը, մարմնեղ մի կին, որ վերջերս էր ժամանել մայր ցամաքից:

- Դե՛,- ասաց հիվանդանոցի պետը,- այսպիսի սրիկայի՛ն...,- նա այնքան էլ չէր քաշվում տիկնանց ներկայությունից:

- Կնայենք ռաուշի արդյունքներով,- հաշտ ասաց Պյոտր Իվանովիչը:

Ռաուշ-անզգայացումը կարճատեւ ազդեցության շշմեցնող եթերային թմրեցում է: Հիվանդը տասնհինգ-քսան րոպե քնում է, եւ այդ ընթացքում վիրաբույժը պիտի հասցնի ուղղել ջլախախտումը, կտրել մատը կամ բացել որեւէ ցավոտ թարախապալար:

Սպիտակ խալաթներով զուգված ղեկավարությունը շրջապատեց վիրակապարանի վիրահատական սեղանը, որի վրա պառկեցրել էին հնազանդ կիսակորված Մերզլյակովին: Սանիտարները վերցրին կտավե ժապավենները, որոնցով սովորաբար հիվանդին կապում են վիրահատական սեղանին:

- Պետք չի՛, պետք չի՛,- գոչեց Պյոտր Իվանովիչը:- Այ հենց ժապավենը պետք չի:

Մերզլյակովի դեմքը դարձրին վեր: Վիրաբույժը դրեց անզգայացման դիմակն ու վերցրեց եթերի շիշը:

- Սկսե՛ք, Սերյո՛ժա:

Եթերը կաթաց:

- Խո՛ր շնչիր, խո՛ր, Մերզլյակո՛վ: Բարձրածայն հաշվիր:

- Քսանվեց, քսանյոթ,- ծույլ-ծույլ հաշվում էր Մերզլյակովը, ու հանկարծ հաշվարկն ընդհատելով՝ հանկարծ անհոդաբաշխ, կցկտուր, հայհոյախառն ինչ-որ բան ասաց:

Պյոտր Իվանովիչը բռնել էր Մերզլյակովի ձախ ձեռքը: Մի քանի րոպեից ձեռքը թուլացավ: Պյոտր Իվանովիչը բաց թողեց: Ձեռքը փափուկ ու մեռյալ ընկավ սեղանի եզրին: Պյոտր Իվանովիչը դանդաղ ու հանդիսավոր ուղղեց Մերզլյակովի մարմինը: Բոլորը ախ արեցին:

- Այ հիմա կապեք,- սանիտարներին ասաց Պյոտր Իվանովիչը:

Մերզլյակովը բացեց աչքերն ու տեսավ հիվանդանոցի պետի մազոտ բռունցքը:

- Հը՞, սողո՛ւն,- խռխռաց պետը:- Այ հիմա դատի տակ կգնաս:

- Կեցցե՛ս, Պյո՛տր Իվանովիչ, կեցցե՛ս,- նյարդաբանի ուսին թփթփացնելով՝ կրկնում էր հանձնաժողովի նախագահը:- Ախր երեկ քիչ էր մնացել ազատական տայի էս գորիլային:

- Արձակե՛ք,- կարգադրեց Պյոտր Իվանովիչը:- Իջիր սեղանից:

Մերզլյակովը դեռ լրիվ չէր արթնացել: Քունքերը տրոփում էին, բերանում եթերի սրտխառնուք բերող քաղցր համն էր: Մերզլյակովը դեռ հիմա էլ չէր հասկանում՝ երա՞զ է, թե՞ իրականություն, եւ գուցե այդպիսի երազներ առաջ էլ ու բազմիցս տեսել էր:

- Գրողի ծո՛ցը բոլորդ էլ,- հանկարծ գոռաց նա ու առաջվա պես կծկվեց:

Լայնաթիկունք, ոսկրոտ,երկար, հաստ մատները համարյա հատակին քսելով, պղտոր հայացքով ու խռիվ մազերով իսկապես գորիլայի նման՝ Մերզլյակովը դուրս եկավ վիրակապարանից: Պյոտր Իվանովիչին զեկուցեցին, ու Մերզլյակովը իր սովորական դիրքով պառկած է մահճակալին: Բժիշկը կարգադրեց, որ նրան բերեն իր աշխատասենյակ:

- Դու մերկացված ես, Մերզլյակո՛վ,- ասաց նյարդաբանը:- Բայց խնդրել եմ պետին. քեզ դատի չեն տա, չեն ուղարկի տուգանային հանք, պարզապես դուրս կգրեն հիվանդանոցից, ու կվերադառնաս քո հանքախորշը, հին աշխատանքին: Դու, եղբա՛յր, հերոս ես: Մի ամբողջ տարի գլուխներս յուղում էիր:

- Ոչինչ չգիտեմ,- հայացքը չբարձրացնելով՝ ասաց գորիլան:

- Ո՞նց չգիտես: Ախր քեզ հենց նոր ուղղեցինք:

- Ոչ մեկն էլ ինձ չի ուղղել:

- Լա՛վ, սիրելի՛ս,- ասաց նյարդաբանը:- Ավելորդ բաներ ես անում: Ուզում էի օգնել քեզ: Իսկ էսպես՝ մի շաբաթից դու ես դուրս գրում խնդրելու:

- Մի շաբաթից կնայենք,- կամացուկ ասաց Մերզլյակովը: Ինչպես բացատրեր բժշկին, որ նույնիսկ հանքախորշից դուրս ապրած մի ավել շաբաթը, ավել օրը, ավել ժամը հենց Մերզլյակովի երջանկությունն է: Եթե բժիշկն ինքը չի հասկանում՝ ինչպե՞ս բացատրի: Մերզլյակովը լռում ու նայում էր գետնին:

Մերզլյակովին տարան, իսկ Պյոտր Իվանովիչը գնաց հիվանդանոցի պետի մոտ:

- Իսկ գուցե վա՞ղը, ոչ թե մի շաբաթից,- Պյոտր Իվանովիչի առաջարկը լսելով՝ ասաց պետը:

- Ես նրան մի շաբաթ եմ խոստացել,- ասաց Պյոտր Իվանովիչը,- հիվանդանոցը չի աղքատանա:

- Լա՛վ,- ասաց պետը:- Թող մի շաբաթից լինի: Բայց ինձ անպայման կկանչեք: Կապելո՞ւ եք:

- Կապել չի կարելի,- ասաց նյարդաբանը:- Ձեռքը կամ ոտքը դուրս կընկնի: Բռնած կպահեն,- ու վերցնելով Մերզլյակովի հիվանդության պատմությունը՝ նյարդաբանը նշանակումների սյունակում գրեց «շոկային թերապիա» ու դրեց ամսաթիվը:

Շոկային թերապիայի ժամանակ հիվանդի արյան մեջ կամֆորայի յուղի բաժնեչափ է ներարկվում, որը մի քանի անգամ գերազանցում է նույն դեղորայքի բաժնեչափը, երբ ենթամաշկային ներարկում են անում ծանր հիվանդներին՝ սրտի աշխատանքը խթանելու համար: Դեղի ազդեցությունը հանգեցնում է անսպասելի նոպայի, որ կատաղի խելագարություն կամ ընկնավորություն է հիշեցնում: Կամֆորայի հարվածից կտրուկ ակտիվանում են ողջ մկանային գործունեությունը, մարդու բոլոր շարժողական ուժերը: Մկանները անասելի լարվում են, ու գիտակցությունը կորցրած հիվանդի ուժը տասնապատկվում է: Նոպան տեւում է մի քանի րոպե:

Անցավ մի քանի օր, իսկ Մերզլյակովը չէր էլ մտածում կամովին ուղղվելու մասին: Եկավ հիվանդության պատմության մեջ նշված օրվա առավոտը, ու Մերզլյակովին բերեցին Պյոտր Իվանովիչի մոտ: Հյուսիսում թանկ է ցանկացած զվարճություն. բժշկի աշխատասենյակը լեփ-լեցուն էր: Ութ քաջառողջ սանիտարներ շարվել էին պատի տակ: Սենյակի մեջտեղը թախտ էր դրված:

- Հենց այստեղ էլ կանենք,- սեղանի մոտից վեր կենալով՝ ասաց Պյոտր Իվանովիչը:- Վիրաբույժների մոտ չենք գնա: Ի դեպ, որտե՞ղ է Սերգեյ Ֆյոդորովիչը:

- Չի գա,- ասաց հերթապահ քույրը՝ Աննա Իվանովնան:- Ասաց՝ «զբաղված եմ»:

- Զբաղվա՛ծ է, զբաղվա՛ծ է,- կրկնեց Պյոտր Իվանովիչը:- Նրա համար հետաքրքիր կլիներ նայել, թե ինչպես եմ իր փոխարեն անում իր աշխատանքը:

Մերզլյակովի թեւքերը քշտեցին, ու բուժակը յոդ քսեց ձեռքին: Աջ ձեռքով ներարկիչը բռնած՝ բուժակը արմնկածալքի մոտ ասեղով ծակեց երակը: Մուգ արյունն ասեղով հորդեց ներարկիչի մեջ: Բուժակը բութ մատի

սահուն շարժումով սեղմեց մխոցը, ու դեղին լուծույթը սկսեց երակը լցվեց:

- Արագ ներարկեք,- ասաց Պյոտր Իվանովիչը:- Ու շուտ մի կողմ քաշվեք: Իսկ դուք,- ասաց սանիտարներին,- պահեք նրան:

Մերզլյակովի հսկա մարմինը վեր թռավ ու թպրտաց սանիտարների ձեռքերի մեջ: Ութ մարդ էին պահում: Նա խռխռում էր, թափահարվում, քացի տալիս, բայց սանիտարներն ամուր էին պահել, ու նա սկսեց հանդարտվել:

- Ձեռքերով այսպես կարելի է վա՛գր բռնել,- ցնծագին գոչում էր Պյոտր Իվանովիչը:- Անդրբայկալում այդպես ձեռքով վագր են որսում: Այ ուշադրություն դարձրեք,- ասում էր նա հիվանդանոցի պետին,- Գոգոլն ինչպե՞ս է չափազանցում: Հիշո՞ւմ եք «Տարաս Բուլբայի» վերջը. «Համարյա երեսուն մարդ էր կախվել նրա ձեռքերից ու ոտքերից»: Իսկ էս գորիլան Բուլբայից խոշոր կլինի: Եվ ընդամենը՝ ութ հոգի:

- Այո՛ այո՛,- ասաց պետը: Գոգոլին չէր հիշում, բայց շոկային թերապիան նրան շատ էր դուր եկել:

Հաջորդ առավոտ Պյոտր Պետրովիչը հիվանդների շրջայցի ժամանակ կանգ առավ Մերզլյակովի մահճակալի մոտ:

- Հը՞,- հարցրեց նա,- ի՞նչ որոշեցիր:

- Դուրս գրեք,- ասաց Մերզլյակովը:

Ալեքսանդր ՍՈԼԺԵՆԻՑԻՆ

ԱՋ ԹԱՌԸ

Այդ ծմեռ համարյա մեռած հասա Տաշքենդ: Հենց մեռնելու էլ եկել էի:

Իսկ ինձ հետ բերեցին, որ դեռ ապրեմ:

Մի ամիս, մեկն էլ ու էլի մի ամիս: Տաշքենդյան վախ չտեսած գարունն անցավ պատուհանների տակով, մտավ ամառ, ամենուր թանձր կանաչեց ու լավ տաք էր, երբ ես էլ ոտքի կանգնեցի ու սկսեցի զբոսանքի դուրս գալ անվստահ քայլքով:

Դեռ չէի համարձակվում ինձ խոստովանել, որ լավանում եմ, ամենախիզախ երազանքներում կյանքիս հավելված ժամանակը դեռ ոչ տարիներով, այլ ամիսներով չափելով՝ դանդաղ քայլում էի բժշկական ինստիտուտի մասնաշենքերի արանքում փարթամացած այգու խճապատ կամ ասֆալտած ուղյակներով: Հաճախ ստիպված էի լինում նստել, ռենտգենյան կտրտող սրտխառնոցից՝ երբեմն նաեւ պառկել, գլուխս ցած կախելով:

Ես նման էի ու այնքան էլ նման չէի ինձ շրջապատող հիվանդներին. շատ ավելի անհիրավված էի, հարկադրյալ մունջ նրանցից: Նրանց այցելության էին գալիս, նրանց համար լաց էին լինում հարազատները, եւ նրանց միակ հոգսը, միակ նպատակը առողջանալն էր: Իսկ ինձ առողջանալ համարյա պետք էլ չէր. ես՝ երեսնհինգամյաս, աշխարհում ոչ մի հարազատ չունեի այդ գարուն: Բացի այդ՝ անձնագիր չունեի, եւ եթե հիմա լավանայի, ստիպված էի լինելու լքել այս կանաչությունը, այս պտղաբեր եզերքն ու վերադառնալ իմ անապատը, ուր աքսորվել էի ընդմիշտ՝ բացահայտ հսկողության տակ, երկու շաբաթը մեկ արվող ներկայության նշումներով, եւ որտեղից պարետատունը երկար ժամանակ չէր հաճում մեռնողիս բաց թողնել բուժման:

Այդ ամենի մասին չէի կարող պատմել ինձ շրջապատող ազատ հիվանդներին:

Եթե պատմեի էլ, չէին հասկանա...

Բայց փոխարենը, թիկունքում՝ դանդաղահոս մտորումների տասը տարի, արդեն գիտեի այն ճշմարտությունը, որ կյանքի իսկական համը ոչ թե շատի, այլ քչի մեջ է: Դեռ թույլ ոտքերի այս անվստահ քայլափոխի: Ձգույշ, որ կրծքավանդակում ծակոց չլինի, շնչառման: Ապուրից որսած ցուրտը չտարած միևուճար կարտոֆիլի:

Ահա այդպես ամենատառապալին ու ամենահիրաշքն էր այդ գարունն իմ կյանքում:

Ամեն ինչ մոռացված կամ չտեսնված էր, ամեն ինչ՝ հետաքրքիր. նույնիսկ պաղպաղակի սայլակը. նույնիսկ ջրցանով հավաքարարը. նույնիսկ երկարուկ ամսաբողկի փնջեր ծախող կանայք. առավել եւ՝ պատի փլվածքով խոտի եկած մտրուկը:

Օրըստօրե խիզախում էի ավելի հեռանալ իմ հիվանդանոցից՝ զբոսայգով, որ պետք է հիմնած լինեին դեռ անցյալ դարի վերջին, երբ նաեւ բաց լցակարով այս ամուր աղյուսակապ շինություններն էին շարվում: Արեւի հանդիսավոր ելքից սկսած՝ ողջ հարավային օրվա ընթացքում ու դեռ էլեկտրադեղին խոր երեկոյան այգին լի էր աշխույժ շարժումով: Արագ դեսուդեն էին անում առողջները, անշտապ շրջում էին հիվանդները:

Այնտեղ, ուր մի քանի ծառուղիներ թափվում էին մեկի՝ դեպի գլխավոր դարպասը հոսողի մեջ, ճերմակին էր տալիս մեծ ալաբաստրե Ստալինը՝ քարե քմծիծաղը բեղերում: Հետո՝ դեպի դարպասը, համաչափ աստիճանակարգով շարված էին նաեւ այլ առաջնորդներ, ավելի փոքր:

Հետո գրենական պիտույքների կրպակն էր: Այնտեղ պլաստմասե փոքրիկ մատիտներ ու գայթակղիչ նոթատետրեր էին վաճառում: Բայց միայն փողերս չէ, որ խստորոշ հաշվված էին. իմ կյանքում արդեն եղել էին նոթատետրեր, հետո ընկել էին ոչ այնտեղ, ուր պետք է, ու մտածում էի՝ ավելի լավ է երբեք չունենամ:

Հենց դարպասի մոտ մրգի կրպակն ու չայխանան էին: Մեզ՝ հիվանդներիս, մեր շերտավոր պիժամաներով, չայխանա չէին թողնում, բայց ցանկապատը բաց էր, ու կարելի էր նայել: Կյանքում իսկական չայխանա չէի տեսել. ամեն մեկի համար առանձին այդ թեյամանները՝ կանաչ կամ սեւ թեյով: Չայխանան եվրոպական բաժին ուներ՝ սեղանիկներով, եւ ուզբեկական՝ փայտամած հատակով: Սեղանիկների շուրջն արագ էին ուտում-խմում, պարպված փիալայի[1] մեջ թողնում վճարի մանրը ու դուրս գալիս: Իսկ փայտամածին, խսիրների վրա, շոգ օրերին քաշած եղեգնյա ծածկի տակ նստում ու թիկն էին տալիս ժամերով, ոմանք՝ նաեւ օրերով, խմում էին թեյման թեյամանի ետեւից, զառ էին խաղում, ու կարծես ոչ մի պարտականության չէր կանչում նրանց երկար օրվա ընթացքում:

Մրգի կրպակը հիվանդներին էլ էր սպասարկում. բայց իմ աքսորական կոպեկները գներից փշաքաղվում էին: Ես ուշադիր զննում էի ծիրանաչրի,

1. Գավաթ:

չամիչի, թարմ կեռասի բլրակներն ու հեռանում:

Հետո արդեն բարձր պատ էր. հիվանդներին դարպասից դուրս չէին թողնում: Այդ պատի վրայով օրը երկու կամ երեք անգամ բժշկական ավան էին թափանցում նվագախմբային սգո քայլերգեր (որովհետեւ քաղաքը միլիոնանոց էր, իսկ գերեզմանատունը՝ հենց այստեղ, հարեւանությամբ): Տասը րոպեի չափ հնչում էին մեզ մոտ, մինչեւ դանդաղընթաց թափորը հետեւում էր թողնում բժշկական ավանը: Թմբուկը զարկում էր ներամփոփ հաճախանքով: Ամբոխի վրա այդ զարկը չէր ազդում, նրա ցնցումներն ավելի արագ էին: Առողջները միայն հպանցիկ նայում ու նորից շտապում էին՝ ուր իրենց պետք է (բոլորն էլ լավ գիտեին՝ ինչ է պետք): Իսկ հիվանդներն այդ քայլերգերը լսելով՝ կանգ էին առնում, երկար-երկար ականջ դնում, դուրս էին նայում մասնաշենքերի պատուհաններից:

Որքան ակնհայտ էի ազատվում հիվանդությունից, որքան ստույգ էր դառնում, որ ողջ կմնամ, այնքան տխուր էի նայում շուրջս. արդեն ափսոսում էի թողնել այս ամենը:

Բուժաշխատողների մարզադաշտում սպիտակ կերպարանքները թենիսի սպիտակ գնդակներ էին նետում իրար: Ամբողջ կյանքում ուզել էի թենիս խաղալ, ու երբեք չէր վիճակվել: Ջառիվար լանջի տակ քլթքլթում էր դեղնապղտոր կատաղի Սալարը: Այգում հովանի թխկիներ էին ապրում, լայնասաղարթ կաղնիներ, նրբին ճապոնական ակացիաներ: Ութանիստ շատրվանը բարալիկ թարմացնող արծաթաշիթեր էր նետում ծառերի սաղարթներին: Իսկ ի՜նչ խոտ էր սիզամարգերում. հյութեղ, վաղուց մոռացված (ճամբարներում հրամայում էին վառել որպես թշնամու, իսկ աքսորավայրում ընդհանրապես ոչ մի տեսակ չէր աճում): Պարզապես բերանքսիվայր հանդարտ վրան պառկելն ու խոտի բույրն ու արեւից տաքացած գոլորշին շնչելն արդեն երանություն էր:

Այստեղ, խոտերի մեջ մենակ չէի պառկած: Այսուայնտեղ իրենց չաղլիկ դասագրքերն էին սերտում բժշկական ինստիտուտի ուսանողուհիները: Կամ էլ շնչակտուր պատմություններ անելով՝ գալիս էին ստուգարքից: Կամ էլ, ճկուն, մարզական փոքրիկ ճամպրուկները թափահարելով՝ մարզադաշտի ցնցուղարանից: Երեկոները, անհշմարելի, ուստի երիցս ծգող, մատնահարված ու անմատույց շորիկներով՝ աղջիկները պտտվում էին շատրվանի շուրջն ու խշշացնում ծառուղիների խիճը:

Անտանելի խղճում էի ինչ-որ մեկին. Դեմյանսկի մոտ ցրտահարված, Օսվենցիմում հրկիզված, Ջեզկազգանում թունավորված, տայգայում մեռնող հասակակիցների՞ն՝ որ մերը չեն լինի այս աղջիկները: Թե՞ այս աղջիկներին՝

նրա համար, ինչ նրանց երբեք չես պատմի, եւ նրանք չեն իմանա երբեք:

Եվ ամբողջ օրը խճապատ ու ասֆալտե ուղյակներով հորդում էին կանա՛յք, կանա՛յք, կանա՛յք. ջահել բժիշկներ, բուժքույրեր, լաբորանտուհիներ, մատենավարուհիներ, հանդերձապահներ, ճաշ բաժանողներ ու հիվանդներին այցելող ազգականուհիներ: Անցնում էին իմ մոտով՝ ծյունախստավար խալաթներով ու հարավային վառվռուն զգեստներով, հաճախ կիսաթափանցիկ, ով ունեւոր է՝ գլխավերեւում բամբուկե ծողիկների վրա պտտելով նորաձեւ չինական հովանոցները՝ արեւային, երկնագույն, վարդագույն: Նրանցից յուրաքանչյուրը, մի ակնթարթ առկայծելով, մի ամբողջ սյուժե էր՝ մինչեւ ինձ ապրած կյանքի, ինձ հետ հնարավոր (անհնարին) ծանոթության:

Ես խղճուկ էի: Նիհարած դեմքս ապրածն էր կրում՝ ճամբարային պարտադրված մռայլության կնճիռներ, փայտացած մաշկի մոխրագույն մեռելություն, ոչ վաղուցվա թունավորում՝ հիվանդության թույներով ու դեղերի թույներով, ինչից այտերիս գույներին կանաչն էլ էր գումարվել: Ենթարկվելու եւ թաքնվելու պաշտպանական սովորույթից մեջքս կորվել էր: Խեղկատակային շերտավոր բաճկոնակը հազիվ հասնում էր փորիս, շերտավոր շալվարս ավարտվում էր կոճերիս չհասած, ճամբարային բթաքիթ կիրզայե կիսաճիտ կոշիկներից կախկխվել էին ժամանակից դարչնագունած փաթաթանների ծայրերը:

Այս կանանցից ամենահետինն էլ չէր համարձակվի քայլել իմ կողքով... Բայց ինքս ինձ չէի տեսնում: Իսկ աչքերս, ոչ պակաս հստակ, քան նրանցը, իմ ներսն էին թողնում աշխարհը:

Այդպես մի անգամ իրիկնադեմին կանգնել գլխավոր դարպասի մոտ ու նայում էի: Իմ կողքով սրընթաց հորդում էր սովորական հեղեղը, օրորվում էին հովանոցները, առկայծում մետաքսե զգեստները, սպիտակ գոտիներով քաթանե տաբատները, զարդանախշ վերնաշապիկներն ու թասակները: Միածուլվում էին ձայները, միրգ էին վաճառում, ցանկապատից այն կողմ՝ թեյ խմում, զառ գցում, իսկ ցանկապատին հենված՝ մի փոքրիկ անճոռնի մարդուկ էր կանգնել, մուրացկանի նման, ու ստեպ-ստեպ դիմում էր շնչահատ ձայնով.

- Ընկերնե՛ր... Ընկերնե՛ր...

Խայտաբղետ, զբաղված ամբոխը չէր լսում: Մոտեցա.

- Ի՞նչ ես ուզում, ախպե՛ր:

Մարդը հսկա փոր ուներ, հղի կնոջ փորից մեծ, պարկի նման կախված՝ դուրս էր պրծնում կեղտոտ-պաշտպանագույն գիմնաստյորկայից ու կեղ-

տոտ-պաշտպանագույն շալվարից: Մաշված կրունկներով սապոգները ծանր ու փոշոտ էին: Ուսերը եղանակին անհարիր ծանրացրել էր կեղտակուր օձիքով ու մաշված թեւքածալերով հաստ մգդակած վերարկուն: Գլխին ծեփվել էր հնադարյան քրքրված կեպին, որ բանջարանոցի խրտվիլակին կվայելեր:

Ուռուցվորած աչքերը պղտոր էին:

Նա դժվարությամբ բարձրացրեց բռունցք արած թաթը, ու ես դուրս քաշեցի քրտնած, ճմռթված թուղթը: Թուղթը չանչող գրչածայրով ծուռումուռ գրված դիմում էր քաղաքացի Բոբրովից՝ իրեն հիվանդանոց ընդունելու խնդրանքով, ու դիմումի վրա՝ շեղակի՝ երկու նշագրում՝ կարմիր ու կապույտ թանաքով: Կապույտ թանաքը քաղառբաժնինն էր եւ խելամիտ-հիմնավորված մերժում էր արտահայտում: Իսկ կարմիր թանաքը բժշկական ինստիտուտի կլինիկային կարգադրում էր հիվանդին ընդունել բուժման: Կապույտ թանաքը երեկվա էր, կարմիրը՝ այսօրվա:

- Դե ինչ, - բարձրաձայն, ինչպես խուլին, բացատրեցի նրան:- Ընդունարան պիտի գնաք, առաջին մասնաշենք: Կգնաք, ուրեմն, ուղիղ... այդ արձանների մոտով...

Բայց այստեղ նկատեցի, որ հենց նպատակակետի մոտ ուժերը լքեցին նրան, որ ոչ միայն հետագա հարցուփորձի ու հարթ ասֆալտի վրա ոտքերը շարժելու, այլեւ կիլոյուկեսանոց մաշված պարկը ձեռքին պահելու ուժ չունի: Ու վճռեցի.

- Լա՛վ, հայրի՛կ, կուղեկցեմ, գնացի՛նք: Տուր պարկդ:

Նա լավ էր լսում: Թեթեւացած ինձ տվեց փոքրիկ պարկը, հենվեց պարզած ձեռքիս ու համարյա ոտքերը գետնից չկտրելով, սապոգներն ասֆալտին սղղացնելով՝ անցավ առաջ: Փոշուց շեկացած վերարկուի միջով թեւանցուկ՝ տարա նրան: Փքված փորն ասես ցած էր քաշում ծերունուն: Ծնչում էր արագ ու ծանր:

Այդպես քայլեցինք՝ երկու ցնցոտի, այն նույն ծառուղով, որտեղ մտքում թեւանցուկ էի անում Տաշքենդի ամենագեղեցիկ աղջիկներին: Երկար, դանդաղ քարշ էինք գալիս բութ ալաբաստրե կիսանդրիների մոտով:

Վերջապես անկյունադարձն անցանք: Մեր ճանապարհին թիկնակներով նստարաններ կային: Ուղեկիցս խնդրեց՝ մի քիչ հանգստանա: Իմ սիրտն էլ էր խառնում, շատ էի ոտքի վրա մնացել: Նստեցինք: Այդտեղից այն նույն շատրվանն էլ էր երեւում:

Դեռ ճանապարհին ծերունին ինձ մի քանի բառ էր ասել ու հիմա, շունչ առնելով՝ հավելեց: Ուրալ պիտի հասներ, եւ անձնագրի գրանցումն էլ ուրալ-

յան էր, դժբախտությունն էլ հենց այդ էր: Իսկ հիվանդությունը նրան բռնել էր ինչ-որ տեղ՝ Թահյա-Թաշի մոտերքում (որտեղ, հիշում էի, ինչ-որ մեծ ջրանցք էին սկսել կառուցել, հետո թողեցին): Ուրգենչում նրան մի ամիս պահել էին հիվանդանոցում, ջուր էին քաշել փորից ու ոտքերից, ավելի էին վնասել ու դուրս գրել: Չարջոուում իջել էր գնացքից, Ուրսատեւսկում էլ,- բայց ոչ մի տեղ բուժման չէին ընդունում, Ուրալն էին ցույց տալիս՝ ըստ գրանցման վայրի: Իսկ գնացքով գնալու ուժ արդեն չկար, ու տոմսի փող էլ չէր մնացել: Եվ ահա Տաշքենդում երկու օրում հասել էր նրան, որ պառկեցնեն:

Ինչ էր անում հարավում, ինչու էր այստեղ հայտնվել՝ արդեն չհարցրի: Նրա հիվանդությունն, ըստ բժշկական տեղեկանքների, անընդհատ ոլորք էր տալիս, իսկ որ իրեն նայեիր՝ վերջին հիվանդությունն էր: Շատ հիվանդների էի տեսել, ու պարզ հասկանում էի, որ նրա մեջ արդեն կենսական ուժեր չեն մնացել: Շրթունքները թուլացել էին, խոսքը դժվար էր հասկացվում, եւ ինչ-որ մլար էր իջնում աչքերին:

Նույնիսկ կեպին էր նեղություն տալիս: Ձեռքը դժվարությամբ բարձրացնելով՝ հանեց-գցեց ծնկներին: Նորից դժվարությամբ ձեռքը բարձրացնելով՝ անմաքուր թեւքով սրբեց քրտնած երեսը: Գլխի փոքրիկ գմբեթը ճաղատացել էր, իսկ շուրջը, գագաթին, անսանրել, փոշեկուլ մազեր էին պահպանվել, դեռ խարտյաշ: Ծերությունը չէր նրան սպանում, այլ՝ հիվանդությունը:

Խղճալու աստիճան նիհարած պարանոցին, ճտի բարակ վզից ահագին ավելորդ մաշկ էր կախկխվել, եւ առջեւից ինքնուրույն ճոճվում էր եռանիստ կատիկը:

Էլ գլուխն ինչի՞ վրա էր մնալու: Նստեցինք թե չէ՝ ընկավ կրծքին ու հենվեց կզակով:

Այդպես էլ քարացավ, կեպին՝ ծնկներին, աչքերը՝ փակ: Կարծես մոռացել էր, որ մի րոպեով ենք նստել հանգստանալու, ու պիտի ընդունարան հասնի:

Մեր դիմաց արծաթե թելի պես վեր էր ոլորվում շատրվանի համարյա անաղմուկ շիթը: Մյուս կողմով կողք կողքի երկու աղջիկ անցան: Հայացքով ուղեկցեցի մեջքերը: Մեկը նարնջագույն կիսաշրջազգեստով էր, մյուսը՝ մուգ կարմիր: Երկուսն էլ ինձ շատ դուր եկան:

Հարեւանս լսելի հառաչեց, գլուխը գլորեց կրծքի վրայով, ու դեղնամոխրագույն կոպերը վեր քաշելով՝ ներքեւինց կողքանց նայեց ինձ.

- Իսկ ծխելիք կճարվի՞, ընկե՛ր:

- Մտքի՛ցդ հանիր, հերի՛կ,- բարկացա ես:- Ես ու դու անծխել դեռ որ մի քիչ էլ սապոգներս քաշ տանք գետնի երեսին... Հայելու մեջ քեզ նայի: Ծխելի՛ք:

(Ինքս էլ ծխելը մի ամիս առաջ էի թողել, մի կերպ պոկվեցի):

Ֆսֆսաց: Ու դեղին կոպերի տակից կրկին ներքեւից վերեւ ինձ նայեց, մի տեսակ շնավարի:

- Համենայնդեպս, երեք ռուբլի տուր, ընկե՛ր:

Մտքի մեջ ընկա՝ տա՞մ, թե՞ չտամ: Ինչ էլ լինի, ես դեռ զեկ էի մնում, իսկ նա, այսպես թե այնպես, ազատ մարդ էր: Քանի տարի այնտեղ աշխատել էի, ինձ ոչինչ չէին վճարել: Իսկ երբ սկսեցին վճարել, պահումներ էին անում՝ պահակախմբի համար, զոնայի լուսավորման համար, լրտուների համար, ղեկավարության համար, վռիկի համար:

Խեղկատակային բաճկոնակիս կրծքի փոքրիկ գրպանից հանեցի մոմլաթե քսակը, նայեցի միջի թղթադրամները: Հառաչեցի ու երեքանոցը պարզեցի ծերունուն:

- Շնորհակալ եմ,- տնքաց նա: Ձեռքը դժվարությամբ վեր պահած՝ վերցրեց երեքանոցը, դրեց գրպանը, եւ ազատված ձեռքն անմիջապես շմփաց ծնկին: Ու գլուխը դարձյալ կզակով կրծքին հենվեց:

Լռեցինք:

Մեր դիմացով այդ ընթացքում մի կին անցավ, հետո՝ երկու ուսանողուհի: Երեքն էլ ինձ շատ դուր եկան:

Տարիներ շարունակ այնպես էր, որ նրանց ոչ ձայնն էինք լսում, ոչ կրունկների կտկտոցը:

- Դեռ լավ է, որ ձեզ եզրակացություն են տվել: Թե չէ մի շաբաթ էլ էստեղ թափառելու էիք: Սովորական բան է: Շատերն են էդպես:

Նա ծնոտը կտրեց կրծքից ու շրջվեց իմ կողմը: Աչքերում միտք էր առկայծում, ձայնը դողաց, ու խոսքն ընկալելի դարձավ.

- Տղա՛ս: Ինձ պառկեցնում են, որովհետեւ վաստակավոր մարդ եմ: Հեղափոխության վետերան: Սերգեյ Միրոնովիչ Կիրովը Ցարիցինի մոտ անձամբ է ձեռքս սեղմել: Ինձ անհատական թոշակ պիտի տան:

Այտերի ու շրթունքների թույլ թրթռոց,- հպարտ ժպիտի ստվերը,- հայտնվեց չսափրած այտերին:

Ես զննեցի նրա քրջերն ու մի անգամ էլ՝ իրեն:

- Իսկ ինչո՞ւ չեն տալիս:

- Կյանքն այդպես դասավորվեց,- հառաչեց նա:- Հիմա ինձ չեն ընդունում: Որոշ արխիվներ վառվել են, մյուսները՝ կորել: Վկաներ էլ չես գտնի: Ու Սերգեյ Միրոնովիչին էլ սպանեցին... Ես եմ մեղավոր, տեղեկանքներ չհավաքեցի... Մենակ սա է մնացել...

Աջ թաթը,- հոդերը կլոր-փքված էին, ու մատները խանգարում էին

իրար,- հասցրեց գրպանին, սկսեց ներս խցկել, բայց այդ կարճ աշխուժությունն ընդհատվեց, նորից կախ գցեց ձեռքը, գլուխը եւ անշարժացավ:

Արեւն արդեն ընկնում էր մասնաշենքերի վրա, ու պետք էր շտապել՝ հասնելու ընդունարան (մի հարյուր քայլ էր մնացել). հիվանդանոցներում երբեք հեշտ չի տեղի հարց լուծել:

Գրկեցի ծերունու ուսը.

- Հայրի՛կ: Ուշքի արի: Տեսնո՞ւմ ես դուռը: Տեսնո՞ւմ ես: Ես գնամ՝ բացեմ: Թե կարողանաս՝ քո ոտով արի, թե չէ՝ սպասիր ինձ: Պարկդ վերցնում եմ:

Նա գլխով արեց, կարծես հասկացավ:

Ընդունարանում, որ ընդարձակ, խարխուլ, կոպիտ միջնորմներով մասնատված (դրանց ետեւում ինչ-որ տեղ բաղնիքն էր, հագուստ փոխելու սենյակը, վարսավիրանոցը) սրահի մի անկյունն էր, ցերեկը միշտ խրկված էին հիվանդները ու երկար ժամեր էին հաշվում, մինչեւ իրենց կընդունեին: Ես թակեցի նրբատախտակի կտորով փակված պատուհանիկը: Բացեց շատ ջահել բուժքույրը՝ կոշկանման քթով, ոչ թե կարմիր, այլ թանձր-մանուշակագույն ներկած շրթունքներով:

- Ի՞նչ եք ուզում,- նա նստել էր սեղանի մոտ ու կարդում էր. ըստ երեւույթին կոմիքս էր լրտեսների մասին:

Աչքերը մանր էին ու վազվզող:

Նրան տվեցի երկու եզրակացություններով թուղթն ու ասացի.

- Հազիվ է քայլում: Հիմա տեղ կհասցնեմ:

- Չհամարձակվե՛ք ոչ մեկին բերել,- կտրուկ ճչաց բուժքույրը՝ նույնիսկ թղթին չնայելով:- Կարգը չգիտե՞ք: Հիվանդներին միայն առավոտվա ինից ենք ընդունում:

Այդ ինքը չգիտեր «կարգը»: Ես պատուհանիկից ներս խցկեցի գլուխս ու, որքան հնարավոր էր, ձեռքս, որ փեղկը վրաս չփակեր: Եվ ստորին շրթունքս ծուռ կախելով ու դեմքիս գորիլայի ծամածռություն սարքելով՝ գողական ձայնով, ատամներս սեղմած ասացի.

- Լսի, օրիո՛րդ: Մեր մեջ ասած, ես քու վեցնոցը չեմ:

Վախեցավ, աթոռը հետ քաշեց իր խցիկի խորքն ու ձայնն իջեցրեց.

- Ընդունելություն չկա, քաղաքացի՛: Ժամը իննին:

- Դու թուղթը կարդա,- արդեն խորհուրդ տվեցի խուլ, անբարյացակամ ձայնով:

Նա կարդաց:

- Հետո՞ ինչ: Կարգը բոլորի համար է: Ու վաղն էլ կարող է տեղ չլինել: Այսօր առավոտյան՝ չկար:

Նույնիսկ կարծես հաճույքով արտաբերեց, որ առավոտյան տեղ չի եղել, կարծես դրանով խայթում էր ինձ:

- Բայց մարդը օտար քաղաքում է: Մնալու տեղ չունի:

Որքան հետ էի քաշվում պատուհանիկից ու փոխում ճամբարային պահվածքս, նրա դեմքը նախկին դաժան-ուրախ արտահայտությունն էր ստանում:

- Մեզ մոտ բոլորն էլ եկվոր են: Ո՞ւր տեղավորենք: Սպասում են: Թող սենյակ վարձի:

- Բայց դուրս եկեք, տեսեք՝ ինչ վիճակում է:

- Էդ էր պակաս: Մնում է՝ գնամ՝ հիվանդ հավաքեմ: Ես սանիտարուհի չեմ:

Ու հպարտ-հպարտ թափ տվեց կոշիկ-քիթը: Այնպես առույգ-արագ էր պատասխանում, ասես պատասխանի լարված զսպանակ լիներ:

- Ուրեմն ինչի՞ եք էստեղ նստած,- ափս խփեցի նրբատախտակե պատին, ու կրի մանր փոշի թափվեց:- Ուրեմն փակեք դուռը:

- Ձե՛զ չէի հարցնելու: Անպատկա՛ռ,- պայթեց նա, վեր թռավ, դուրս վազեց ու հայտնվեց փոքրիկ միջանցքում:- Դուք ո՞վ եք: Ինձ մի՛ սովորեցրեք: Մեզ մոտ շտապ օգնությունն է բերում:

Եթե չլինեին այդ կոպիտ-մանուշակագույն շրթունքներն ու եղունգների նույնպիսի մանուշակագույնը, այնքան էլ վատը չէր: Քթիկը զարդարում էր նրան: Ու հոնքերն էլ ազդեցիկ էր շարժում: Խալաթը կրծքին լայն բացված էր շոգի պատճառով, ու երեւում էին վարդագույն գեղեցիկ գլխաշորն ու կոմերիտական նշանը:

- Ինչպե՞ս: Եթե իր ոտքով չգար, ու նրան փողոցում շտապօգնությունը վերցներ, կընդունեի՞ք: Այդպիսի կանո՞ն կա:

Նա մեծամտորեն զննեց իմ անհեթեթ կերպարանքը, ես նայեցի նրան: Լրիվ մոռացել էի, որ փաթաթաններս դուրս են պրծել կոշիկներիցս: Նա փռթկաց, բայց խիստ տեսք ընդունեց ու եզրափակեց.

- Այո՛, հիվա՛նդ: Կա՛ այդպիսի կանոն:

Եվ անցավ միջնորմի հետեւը:

Թիկունքիցս խշշոց լսվեց: Հետ նայեցի: Ուղեկիցս արդեն տեղ էր հասել: Ամեն ինչ լսել ու հասկացել էր: Պատից կառչած՝ դեպի այգու ընդարձակ նստարանը ձգվելով, որ ընդունարանում էր դրվել այցելուների համար, թույլ թափ էր տալիս դրամապանակը բռնած աջ թաթը:

- Ահա՛...,- տառապագին մրմնջաց ծերունին,- ...ահա՛, ցույց տվեք... թող նա... թող...

Հասցրի պահել նրան. իջեցրի նստարանին: Անօգնական մատներով

փորձում էր դրամապանակից դուրս քաշել իր միակ տեղեկանքն ու ոչ մի կերպ չէր կարողանում:

Վերցրի ցիրուցան լինելուց փրկելու համար ծալվածքներով սոսնձած այդ հինավուրց թղթի կտորն ու բացեցի: Գրամեքենայով տպված մանուշակագույն տողեր՝ շարքից վեր ու վար թռչող տառերով.

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

Տեղեկանք

Սույնը տրվում է ընկեր Ն. Կ. Բոբրովին առ այն, որ նա 1921 թվականին իսկապես եղել է Համաշխարհային հեղափոխության անվան Հատուկ նշանակության նահանգային -յան փառապանծ ջոկատի կազմում ու սեփական ձեռքով կոտորել ողջ մնացած սողուններին:

Կոմիսար .....

Ստորագրություն:

Եվ խունացած մանուշակագույն կնիքը:

Ձեռքով կուրծքս տրորելով՝ կամացուկ հարցրի.

- Սա ի՞նչ է՝ Հատուկ նշանակությա՞ն: Ինչպիսի՞:

- Ըհը,- պատասխանեց նա՝ մի կերպ պահելով կոպերը, որ չփակվեն:- Ցույց տվեք դրան:

Ես տեսնում էի նրա ձեռքը, աջ թաթը՝ այնքան փոքրիկ, ուռած գորշավուն երակներով, կլոր-փքված հոդերով, որ համարյա անկարող էր դուրս քաշել տեղեկանքը դրամապանակից: Ու հիշեցի այդ նորածեւ սովորությունը՝ ինչպես էին փախչողին շեղակի սրատում թամբի վրայից:

Տարօրինակ է... Այս թաթն ամբողջ թափով պտտել է թուրն ու թռցրել գլուխը, վիզը, հատել ուսը: Իսկ հիմա դրամապանակը չէր կարողանում պահել...

Մոտենալով նրբատախտակե պատուհանիկին՝ նորից հրեցի: Մատենավարուհին գլուխը չբարձրացնելով՝ իր կոմիքսն էր կարդում: Էջին ոտքերը վեր վեհանձն չեկիստը ատրճանակը ձեռքին թռել էր պատուհանի գոգին:

Պատռտված տեղեկանքը կամացուկ դրեցի գրքի վրա ու շրջվելով, սրտխառնոցը մեղմելու համար դեռ կուրծքս տրորելով, գնացի դեպի ելքը: Ճտապ պիտի պառկեի՝ գլուխս կախ:

- Էս ի՞նչ թղթեր եք խցկում: Վերցրեք, հիվա՛նդ,- պատուհանիկի միջով կրակեց օրիորդն իմ հետեւից:

Վետերանը խոր թաղվել էր նստարանի մեջ: Գլուխը եւ նույնիսկ ուսերը ասես իրանի մեջ էին խրվել: Անջատ-անջատ կախվել էին անզոր մատները: Կախվել էր կոճակներն արձակ վերարկուն: Կլոր փքված փորն անհավատալիորեն ծալծլվել էր ազդրերին:

Յուլի ԴԱՆԻԷԼ

ՁԵՌՔԵՐԸ

Այ դու, Սերգե՛յ, ինտելիգենտ ես, քաղաքավարի: Դրա համար էլ լռում ես ու ոչ մի բան չես հարցնում: Իսկ մերոնք՝ գործարանի տղերքը, ուղիղ հարց են տալիս. «Հը՞,- ասում են,- Վա՛սկա, ոնց որ թե խմել-ծեռից գնացել ես, հա՞»: Ձեռներիս պահով են ասում: Գիտես չնկատեցի՞ ոնց նայեցիր ձեռներիս ու շրջվեցիր: Ու հիմա էլ հա ցույց ես տալիս, թե չես տեսնում: Ամեն ինչ հասկանում եմ, ախպե՛րս, քաղաքավարությունից ես անում, որ վատ չզգամ: Բայց նայի՛, նայի՛, բան չկա: Ձեմ նեղանա: Երեւի ամեն օր չի, որ էդտեսակ բան կտեսնես: Բայց ասեմ, որ հարբեցողությունից չի: Ճիշտն ասած՝ շատ էլ չեմ խմում, զուտ ընկերովի, կամ դեպքից դեպք, ոնց որ քեզ հետ: Ես ու դու հանդիպման առիթով չենք կարա չխմենք: Ես, ախպե՛րս, ամեն ինչ հիշում եմ: Ոնց էինք հսկում գաղտնի կետում, ոնց էիր Ֆրանսերեն խոսում սպիտակների հետ, ոնց Յարոսլավլը վերցրինք: Հիշում ե՞ս միտինգի ելույթդ: Ձեռս բռնեցիր,- կողքիդ էի հայտնվել,- ասեցիր. «Այ էս ձեռներով, ասեցիր...»: Հա՛: Լցրո՛ւ, Սերյո՛գա, լցրո՛ւ: Թե չէ իսկականից լաց կլինեմ: Մոռացա՝ բժշկական լեզվով ինչ էին ասում էս դողին: Լավ, մի տեղ գրել եմ, հետո ցույց կտամ... Հա, ուրեմն, ինչից սկսվեց էս ամենը: Մի դեպքից սկսվեց: Հերթով որ պատմեմ, էսպես է. երբ որ զորացրվեցինք հաղթած 21 թվին, ես միանգամից հարազատ գործարան գնացի: Պարզ է, ինձ էնտեղ հարգանք, պատիվ որպես հեղափոխական հերոսի, համ էլ կուսակցության անդամ եմ, գիտակից բանվոր: Ճիշտը որ ասեմ, մարդկանց տեղը դնելու կարիք էլ էր լինում: Տարբեր խոսակցություններ սկսվեցին էդ ժամանակ. «Բա թե՝ հաղթողների՞ս տես, տնտեսություն ղեկավարողների՞ս տես, ոչ հաց կա, ոչ բան...»: Ես, ուրեմն, էդ տեսակ խոսակցությունները սսկացնում էի: Ես դրանց էդ մենշեւիկական կուտը ուտողը չե՞մ: Հա՛: Դու լցրու, ինձ մի նայի: Բայց մի տարի բան էի աշխատել, մեկ էլ՝ հո՛պ. կանչում են շրջկոմ. «Այ քեզ, ասում են, Սալի՛նին, էս գործուղումը: Կուսակցությունն, ասում են, զորակոչում է քեզ, Սալի՛նին Վասիլի Սեմյոնովիչ, մեր փառապանծ Արտակարգ հանձնաժողովի շարքերը՝ հակահեղափոխության դեմ պայքարի համար: Մաղթում ենք, ասում են, հաջողություններ համաշխարհային բուրժուազիայի դեմ պայքարում ու ջերմ բարեւներ ըն-

կեր Ձերժինսկուն, թե հանդիպես»: Դե, ես ի՞նչ: Ես կուսակցական մարդ եմ: «Ճիշտ այդպես, ասում եմ, կուսակցության հրամանը կկատարեմ»: Վերցրի գործուղումը, մտա գործարան, հրաժեշտ տվի տղերքին ու գնացի: Գնում ու երազելով պատկերացնում եմ, թե ոնց եմ որսալու էդ բոլոր հականերին, որ մեր երիտասարդ Սովետական իշխանությունը չպղծեն: Եկա, ուրեմն: Իսկականից տեսա Ֆելիքս Էդմունդովիչ Ձերժինսկուն, շրջկոմականներից փոխանցեցի՝ ինչ ասել էին: Սեղմեց ձեռս, շնորհակալություն հայտնեց, հետո բոլորիս,- մի երեսուն հոգի կայինք կուսակցական զորակոչով,- շարեց ու ասեց, որ, ուրեմն, ճահիճի վրա տուն չես շինի, սկզբում ճահիճը պիտի չորացվի, ու դրա համար ամեն տեսակի իժ ու դոդոշ պիտի վերացնենք, քանի որ, ասում է, կա դրա երկաթյա անհրաժեշտությունը: Ու մեր ձեռները պիտի չթուլանան... Առակի թե զրուցի նման էր ասում, բայց ամեն ինչ, իհարկե, պարզ էր: Ինքն էլ՝ խի՛ստ, չի ժպտում: Հետո սկսեցին բաշխում անել: Հարցնում էին՝ ով ես, ինչ ես, որտեղից: «Ի՞նչ կրթություն ունես, ասում են»: Իմ կրթությունը, գիտես, գերմանացու կռիվն ու քաղաքացիականն է, մեկ էլ հաստոցի մոտ չարչարվելս: Էս է իմ ամբողջ կրթությունը: Մեկ էլ՝ ծխականի երկու դասարան եմ վերջացրել... Ուրեմն, հատուկ ծառայության խմբում նշանակեցին ինձ, պարզ ասած՝ դատավճիռներն ի կատար ածելու: Չասեմ, թե ծանր գործ է, բայց թեթեւ էլ չի: Սրտի վրա է ազդում: Մի բան էր ճակատում, հիշում ե՞ս. կամ դու իրան, կամ ինքը քեզ: Իսկ էստեղ... Բայց, դե, սովորեցի: Բակով հետեւից գնում ու քեզուքեզ մտածում, ասում ես. «Պե՛տք է, Վասի՛լի, ՊԵՏՔ Է: Հիմա սրա վերջը չտաս, ամբողջ Սովետական Հանրապետությունը կկործանի»: Սովորեցի: Խմում էի, իհարկե, առանց դրա չէր: Մեզ սպիրտ էին տալիս: Ինչ վերաբերվում է հատուկ օրապահիկին, թե չեկիստներին շոկոլադով ու սպիտակ բուլկիներով են կերակրում, բուրժուական հեքիաթներ են. սովորական օրապահիկ էր, զինվորական՝ հաց, ձավար, վոբլա: Իսկ սպիրտ իսկապես տալիս էին: Առանց դրա չի լինի, հասկանում ես: Մի խոսքով: Էդպես յոթ ամիս աշխատեցի, ու հենց էդ ժամանակ էլ էդ դեպքը եղավ: Հրաման էինք ստացել, որ տերտերների մի խումբ թխկացնենք: Հակահեղափոխական ագիտացիայի համար: Չարամտությա՛ն: Ծխականների մեջ խառնակչություն էին զգում: Տիխոնի պատճառով է՞ր: Թե՞ ընդհանրապես սոցիալիզմի դեմ, չգիտեմ: Մի խոսքով՝ թշնամի էին: Տասներկու հոգի: Մեր պետը կարգադրեց. «Քեզ, ասում է, Մալի՛նին, երեք հոգի, քե՛զ, Վլա՛սենկո, քե՛զ, Գոլովչի՛ներ, ու քե՛զ...»: Չորրորդին մոռացել եմ: Լատվիացի էր, մի տեսակ ազգանուն ուներ, մերական չէր: Նա ու Գոլովչիներն առաջինը

գնացին: Մեր մոտ կարգը, ուրեմն, էսպես էր: Պահակատունն, ուրեմն, հենց մեջտեղն էր: Մի կողմից, ուրեմն, սենյակը, որտեղ կալանավորներին էին պահում, մյուս կողմից՝ բակ տանող դուռը: Նրանց մեկ-մեկ էինք տանում: Մեկի հետ բակում գործդ պրծար, տղերքի հետ դեն ես քաշում ու գալիս մյուսի հետեւից: Դեն քաշելը պարտադիր է, թե չէ, պատահում էր, բերում ես մյուսին, օղորմածիկին տեսնում, սկսում է պատեպատ խփվել, պոկվում է՝ փախչի: Հոգս է դառնում, պարզ է: Ավելի լավ է, երբ որ լուռ են: Էսպես, ուրեմն, Գոլովչիներն ու էդ լատվիացին իրանցներին վերջացրին, եկավ իմ հերթը: Իսկ ես մինչեւ էդ սպիրտ եմ խմել: Չասեմ, թե վախենալու էր կամ հավատի կողմնակից էի: Չէ՛. կուսակցական մարդ եմ, կայո՛ւն, էդ ցնդաբանությանն էլ՝ աստվածնե՛ր, հրեշտակնե՛ր, հրեշտակապետնե՛ր, չեմ հավատում, բայց մի տեսակ տեղս էլ չեմ գտնում: Գոլովչիների համար հեշտ է, հրեա է, դրանք, ասում են, սրբապատկեր էլ չունեն, չգիտեմ՝ ճիշտ է, թե սուտ, նստել եմ, ուրեմն, խմում եմ, ինչ ախմախություն ասես գլուխս չի խցկվում. օղորմածիկ մերս գյուղում ինձ ոնց էր տանում եկեղեցի, ոնց էի մեր տերտերի՝ հայր Վասիլի ձեռը պաչում, նա էլ,- բիձա մարդ էր,- ոնց էր ինձ անվանակից ասում... Հա՛, գնացի, ուրեմն առաջինի հետեւից, դուրս բերեցի: Հետ եկա, մի հատ ծխեցի, երկրորդին տարա: Հետ եկա, խմեցի ու, չգիտես ինչի, սիրտս խառնեց: «Սպասեք, ասում եմ, տղե՛րք, հիմա կգամ»: Մաուզերը դրի սեղանին, դուրս եկա: Երեւի շատ խմեցի, մտածում եմ: Հիմա մատ տամ, հետ տամ, կթեթեւանամ, կլվացվեմ, ու ամեն ինչ կարգի կընկնի: Գնացի, ուրեմն, ինչ պետք է, արեցի, բայց, չէ՛, չեմ թեթեւանում: Լավ, մտածում եմ, թող կորչի, հրես գործը վերջացնեմ ու՝ քնելու: Վերցրի մաուզերն ու գնացի երրորդի հետեւից: Երրորդը ջահել էր, տեսքով, ջանով տերտեր, գեղեցիկ: Միջանցքով տանում եմ, տեսնեմ՝ շեմին բարձրացրեց փարաջայի երկար փեշը, ու սիրտս էնպես խառնեց, չեմ հասկանում՝ ինչ է: Դուրս եկանք բակ: Իսկ նա մորուքը տնկել, երկինք է նայում: «Գնա, ասում եմ, տե՛ր հայր, դեսուդեն մի նայի: Դու ես քեզ համար, ասում եմ, դրախտ որոշել»: Էդպես, ուրեմն, հանաք եմ անում, ինձ սիրտ եմ տալիս: Թե ինչի՝ չգիտեմ: Կյանքում էդտեսակ բան չէր եղել, որ դատապարտյալի հետ խոսամ: Երեք քայլ առաջ թողեցի, ուրեմն, ոնց որ կարգն է, մաուզերը սեղմեցի թիակների արանքն ու կրակեցի: Մաուզերն էլ գիտես ոնց է խփում, թնդանոթի նման: Ու էնպես էլ հետ է գալիս, որ քիչ է մնում թեւդ ուսից պոկի: Մենակ թե տեսնեմ՝ իմ գնդակահարված տերտերը շրջվել, գալիս է վրաս: Պարզ է՝ ամեն անգամ տարբեր է լինում. մեկը բոյով մեկ փռվում է, մյուսը պտույտ է տալիս տեղում, լինում է, որ քայլում են,

օրորվում հարբածի պես: Բայց սա մանր քայլերով գալիս է վրաս, ասես լող տալիս լինի իր փարաջայով, ասես չեմ էլ կրակել: «Էդ ի՞նչ բան ես, ասում եմ, տե՛ր հայր, կանգնի՛»: Ու նորից մաուզերը սեղմեցի, էս անգամ՝ կրծքին: Իսկ նա պատռեց-բացեց փարաջան. կուրծքը մազոտ է, գանգուր, գալիս է վրաս ու գոռում. «Խփի, գոռում է, նե՛ռ: Սպանիր ինձ, քո Քրիստոսին»: Ծփոթվեցի, ուրեմն, նորից եմ կրակում ու՝ էլի: Իսկ նա գալիս է: Ո՛չ վերք, ո՛չ արյուն, գալիս ու աղոթում է. «Տե՛ր, կանգնեցրիր սեւ ձեռքի գնդակը: Հանուն քո եմ չարչարանք ընդունում... Կենդանի հոգին չես սպանի»: Ու էլի ինչ-որ բան... Չեմ հիշում՝ ոնց կրակեցի ողջ պահունակը, մենակ հաստատ գիտեմ՝ վրիպել չէի կարող. դիմահար էի խփում: Կանգնած է իմ առաջ, աչքերը վառվում են գայլի աչքերի պես, կուրծքը՝ մերկ, գլուխն ասես լույս է տալիս. հետո հասկացա, որ արեւի առաջն է փակել, արեւը արդեն մայր էր մտնում: «Ձեռքե՛րդ, գոռում է, ձեռքերդ արյան մեջ են: Ձեռքերի՛դ նայիր»: Մաուզերս ցած գցեցի ու փախա պահակատուն, ինչ-որ մեկին շեմին գետին փռեցի, ընկա ներս, տղերքը վրաս են նայում, ոնց որ գժին կնայեն, խրխնջում են: Ջինաբուրգից վերցրի հրացանը ու գոռում եմ. «Հենց հիմա՛, գոռում եմ, ինձ տարեք Ձերժինսկու մոտ, թե չէ բոլորիդ կծակեմ»: Հրացանը ձեռիցս խլեցին, ուրեմն, արագ տարան: Մտա կաբինետ, պոկվեցի ընկերներիցս ու ասում եմ, հետն էլ դողում եմ, լեզուս կապ է ընկնում. «Գնդակահարի ինձ,- ասում եմ,- Ֆե՛լիքս Էդմունդովիչ, չեմ կարող տերտեր սպանեմ»: Ասեցի ու ընկա, էլ բան չեմ հիշում: Ուշքի եկա հիվանդանոցում: Բժիշկներն ասում են. «Նյարդային ցնցում է»:

Ճիշտն ասած, լավ էին բուժում, հոգատար: Համ խնամքը, համ մաքրությունը, համ սնունդը էն ժամանակվա համար տեղը տեղին: Լրիվ բուժեցին, բայց ձեռներս, տեսնում ես, ոնց են դողում: Երեւի էդ ցնցումը ձեռներիս է անցել: Իհարկե, Չեկայից ազատեցին: Էնտեղ էսպիսի ձեռներ չեն հարկավոր: Հաստոցի մոտ էլ, պարզ է, չես վերադառնա: Գործարանի պահեստում նշանակեցին: Ինչ կա որ, էնտեղ էլ եմ գործ անում: Ճիշտ է, թուղթ-մուղթ, բեռնագիր-բան ինքս չեմ գրում ձեռներիս պատճառով: Մի լավ օգնական ունեմ, խելքը գլխին աղջիկ է: Այ էդպես էլ ապրում եմ, ախպե՛րս: Իսկ էդ տերտերի բանն էլ հետո իմացա ոնց էր եղել: Ոչ մի աստվածային բան էլ չկար: Ուղղակի մեր տղերքը, երբ որ արտաքնոց էի գնացել, հանել էին մաուզերի պահունակն ու ուրիշը դրել՝ փուչ փամփուշտներով: Հանաք էին արել, մի խոսքով: Բան չկա, վրաները չեմ ջղայնանում, ջահել են, նրանց համար էլ հեշտ չէր, զբաղմունք էին գտել: Չէ՛, չեմ նեղանում: Մենակ թե, այ, ձեռներս... հիմա արդեն հեչ գործի պիտանի չեն...

Անդրեյ ՍԻՆՅԱՎՍԿԻ

ՓԽԵՆՑ

1

Այսօր լվացքատանը նորից տեսա նրան: Ձեւացրեց, թե ինձ չի նկատում՝ ողջ ուշադրությունն իր կեղտոտ սպիտակեղենով:

Նախ սավաններն էին, որոնք այստեղ օգտագործվում են հիգիենայի նկատառումներով: Այդպիսի սավանի մի երեսին մանր տառերով ասեղնագործում են «ոտքեր» բառը: Նախազգուշացման համար է. մարդը շրթունքներով չպիտի դիպչի վարակված տեղին, որին դեռ երեկ ոտքերն էին քսվում:

Ոտքի հարվածն էլ ավելի վիրավորական է համարվում, քան ձեռքի հարվածը, ու ոչ միայն այն պատճառով, որ ոտքինն ավելի ցավոտ է: Հավանաբար այդ անհավասարության մեջ իրեն զգալ է տալիս չհաղթահարված քրիստոնեությունը: Ոտքը երեւի ավելի մեղսական է մնացած մարմնից այն պարզ պատճառով, որ ավելի հեռու է երկնքից: Ավելի վատ վերաբերմունք դիտվում է միայն սեռական անդամների նկատմամբ, եւ այստեղ ինչ-որ գաղտնիք կա:

Հետո բարձի երեսներն էին գալիս՝ կենտրոնում մուգ պառկելախոցերով: Հետո՝ սրբիչները, որոնց եզրերը, ի տարբերություն բարձի երեսների, ավելի արագ են կեղտոտվում, ու վերջապես՝ տակաշոր սպիտակեղենի գույնզգույն գուղձերը:

Այդ պահին նա սկսեց նետել իր իրերն այնպիսի արագությամբ, որ չհասցրի ինչպես հարկն է տեսնել: Գուցե ուզում էր ինչ-որ գաղտնիք պահել, կամ գուցե, բոլոր մարդկանց պես, ամաչում էր ցուցադրել անմիջաբար ոտքերին հպվող հագուստը:

Բայց ինձ կասկածելի թվաց այն հանգամանքը, որ լվացքատուն է հանձնում մաշված սպիտակեղենը: Սապատավորները սովորաբար մաքրակենցաղ են: Վախենում են, որ հագուստով հավելյալ զզվանք կհարուցեն իրենց հանդեպ: Իսկ սա, հակառակ սպասածի, փնթի էր, ասես կուզիկ չլիներ:

Նույնիսկ սպիտակեղեն ընդունողը, որ ամեն ինչ տեսած կին էր, ում

համար նորություն չէին ամեն կարգի հյութերի հետքերը, չդիմացավ ու համենայնդեպս բարձր ասաց նրան.

- Էդ ինչ եք դեմ անում մռութիս, քաղաքացի՛: Կոկիկ քնել չեք կարողանում՝ ինքներդ լվացեք:

Նա լուռումունջ վճարեց ու փախավ: Ես չհետեւեցի նրան, որ օտար ուշադրություն չգրավեմ:

Տանը սովորականի պես էր: Հենց ներս մտա, հայտնվեց Վերոնիկան: Հայացքը խոնարհելով՝ առաջարկեց միասին ընթրել: Ինձ ձեռնտու չէր մերժել աղջկան: Միակն է ողջ բնակարանում, որ տանելի է վերաբերվում ինձ: Ափսոս, որ նրա կարեկցանքը սեքսուալ հիմքի վրա է: Այսօր վերջնականապես համոզվեցի դրանում:

- Ինչպե՞ս է Կոստրիցկայան,- հարցրի Վերոնիկային՝ փորձելով խոսակցությունն ուղղել ընդհանուր թշնամիների կողմը:

- Ա՛խ, Անդրեյ Կազիմիրովիչ, նա նորից սպառնում էր:

- Ի՞նչ է պատահել:

- Նորից նույնը: Լոգասենյակում լույսը վառվում է ու հատակին ջուր է թափվել: Կոստրիցկայան հայտարարեց, որ կբողոքի կառավարչին:

Այդ լուրն ինձ հունից հանեց: Ես մյուսներից քիչ եմ օգտվում կոյուղուց: Խոհանոց համարյա չեմ մտնում: Կարո՞ղ եմ խոհանոցը փոխհատուցել լոգարանով:

- Ինչ կա որ,- չոր պատասխանեցի ես:- Ինքն է կիլովատերով լույս վառում: Իսկ նրա երեխաները ջարդել են իմ շիշը: Թող կառավարիչը գա:

Բայց հասկանում էի, որ դա իմ կողմից մաքուր արկածախնդրություն է: Ի՞նչ իմաստ ունի ավելորդ ուշադրություն սեւեռել ինձ վրա:

- Հանգստացեք, Անդրե՛յ Կազիմիրովիչ,- ասաց Վերոնիկան:- Հարեւանների հետ բոլոր տարաձայնությունները վերցնում եմ ինձ վրա: Հանգստացեք, խնդրում եմ:

Նա պարզեց ձեռքը, որ ափը դնի ճակատիս: Հասցրի հետ քաշվել:

- Չէ՛, չէ՛, առողջ եմ ու ոչ մի ջերմություն: Եկեք ընթրենք:

Սեղանին գոլորշի ու նողկալի հոտ էր արձակում կերակուրը: Խոհարարական սադիզմը միշտ ապշեցրել է ինձ: Գալիք ճտերին ուտում են հեղուկ վիճակում: Խոզի փորը լցոնվում է սեփական մսով: Ինքն իրեն կուլ տված ու հավի վիժվածքով ցփնված աղիք. ահա թե ինչ է իրականում երշիկով ծվածեղը:

Ավելի անողոք են վարվում ցորենի հետ. մորթում են, ծեծում, փոշի դարձնում:

- Կերե՛ք, կերե՛ք, Անդրե՛յ Կազիմիրովիչ,- համոզում է Վերոնիկան:- Մի նեղվեք, խնդրում եմ: Ողջ մեղքը վերցնում եմ իմ վրա:

Իսկ եթե մարդո՞ւն՝ նույն կերպ: Վերցնես որեւէ ինժեների կամ գրողի, լցոնես իր իսկ ուղեղով, իսկ տապակած քթանցքը մանուշակ խցկես ու ճաշին մատուցես ծառայակիցներիդ: Չէ՛, Քրիստոսի, Յան Հուսի ու Ստենկա Ռազինի չարչարանքները դատարկ բան են կեռիկով ջրից դուրս քաշած ձկան տանջանքի համեմատ. նրանք առնվազն գիտեին՝ ինչի համար:

- Ասե՛ք, Անդրե՛յ Կազիմիրովիչ, դուք շա՞տ մենակ եք,- թեյնիկը ներս բերելով՝ հարցրեց Վերոնիկան:

Քանի դեռ թեյնիկի հետեւից էր գնացել, ափսես դատարկեցի թերթի մեջ:

- Դուք ընկերնե՞ր եք ունեցել,-

նա շաքարավազ լցրեց,

- երեխանե՞ր,-

մի գդալ էլ,-

- սիրած կի՞ն...,-

ու սկսեց խառնե՛լ, խառնե՛լ:

Ամեն ինչից երեւում էր, որ Վերոնիկան հուզվում է:

- Ընկերներիս փոխարինում եք դուք,- զգույշ սկսեցի ես:- Ինչ վերաբերում է կանանց, տեսնում եք՝ ես ծեր եմ ու սապատավոր: Ծեր ու սապատավոր,- անխնա համառությամբ կրկնեցի ես:

Ազնվորեն ուզում էի կանխել խոստովանությունը. ինչի՞ս է պետք, երբ առանց այդ էլ դժվար է: Արժե՞ փչացնել չար հարեւանների դեմ մեր ռազմական դաշինքը, արժե՞ գրգռել կիրառում չգտած աղջկա հետաքրքրությունն իմ հանդեպ:

Փորձանքից խույս տալու համար պատրաստ էի հարբեցող ձեւանալ: Կամ հանցագործ: Իսկ գուցե ավելի լավ է՝ խելագա՞ր, պեդեռաստ, վերջապես: Բայց վախենում էի. այդ որակներից ցանկացածը կարող է առանձնապես վտանգավոր, խարդավանքի փայլ տալ անձիս:

Մնում էր շեշտը դնել սապատիս, տարիքիս ու չնչին աշխատավարձիս, հաշվետարի աննշմար աշխատանքիս վրա, որ ահռելի ժամանակ է խլում, ու նրա վրա, որ իմ պես կուզիկին համապատասխան կուզիկուհին է սազական, իսկ նորմալ գեղեցիկ կնոջը սիմետրիկ տղամարդ է պետք:

- Ո՛չ, դուք չափից դուրս վեհանձն եք,- որոշեց Վերոնիկան:- Ձեզ հաշմանդամ եք համարում ու վախենում եք բեռ դառնալ: Մի մտածեք, որ սա խղճահարություն է իմ կողմից: Պարզապես ինձ դուր են գալիս կակտուս-

ները, իսկ դուք նման եք կակտուսի: Տեսեք՝ ինչ շատացել են ձեր պատուհանի գոգին:

Նրա տաք մատները դիպան մատներիս: Ես ցնցվեցի, ինչպես այրվածքից:

- Սառե՞լ եք, հիվա՞նդ եք,- կարեկցանքով հարցնում էր Վերոնիկան՝ մարմնիս ջերմությունից մտահոգված:

Դա արդեն չափազանց էր: Ես համածայնեցի միգրենին ու խնդրեցի մենակ թողնել ինձ:

- Մինչեւ վաղը,- ասաց Վերոնիկան ու ձեռքով արեց փոքրիկ երեխայի պես:- Իսկ վաղը դուք ինձ կակտուս կնվիրեք: Անպայմա՛ն:

Այդ հեզ աղջիկն ինձ հետ խոսում էր գլխավոր հաշվապահի տոնով: Նա սեր էր խոստովանում ու հատուցում պահանջում:

Որտե՞ղ եմ կարդացել, որ սիրահարվածները նման են հնազանդ ստրուկների: Ոչ մի դեպքո՛ւմ: Բավական է մարդ սիրահարվի, եւ արդեն իրեն տեր է զգում, որն իրավունք ունի տնօրինելու նրանց, ով իրեն բավականաչափ չի սիրում: Ինչպե՞ս կուզեի՝ ինձ ոչ ոք չսիրեր:

Մնալով մենակ՝ սկսեցի ջրել կակտուսները: Էմալապատ գավաթից քիչ-քիչ կերակրում էի նրանց՝ իմ սապատավոր մանկիկներին, ու հանգստանում:

Գիշերվա ժամը երկուսն էր, երբ քաղցին չդիմանալով, ոտքերիս ծայրերին խավար միջանցքով աննկատ գնացի լոգարան: Եվ ի՞նչ փառահեղ ընթրեցի այնտեղ:

Ճատ դժվար է օրը մի անգամ ուտել:

2

Երկու շաբաթ անցավ այդ երեկոյից: Վերոնիկան հայտարարեց, որ իրեն սիրահետում են. մի լեյտենանտ ու Ստանիսլավսկու թատրոնի մի դերասան: Դա նրան չէր խանգարել, որ նախապատվությունն ինձ տա: Նա սպառնում էր լրիվ խուզել գլուխը, որես այլեւս չհամարձակվեմ խոսել իր գեղեցկության մասին, որը հանուն ծերունու եւ այլանդակի զոհաբերելը հիմարություն է: Վերջապես, խելքին փչեց լրտեսել ինձ՝ սպասում էր լոգարանի ճանապարհին:

- Մաքրասիրությունը զարդարում է կուզիկներին,- այսպիսին էր իմ մշտական պատասխանը նրա հարցումներին, թե ինչու եմ հաճախ լողանում:

Համենայնդեպս սկսեցի նրբատախտակով փակել լոգարանի ու զուգա-

ռանի արանքի փայլատ ապակին: Հանվելուց առաջ միշտ ստուգում էի սողնակը: Խելագարվում էի մտքից, որ ինձ հետեւում են:

Երեկ առավոտյան թակեցի նրա սենյակի դուռը, որ ինքնահոսի թանաք վերցնեմ ու շարունակեմ իմ անկանոն օրագիրը: Վերոնիկան դեռ վեր չէր կացել եւ, անկողնում պառկած, «Չորս հրացանակիրներն» էր կարդում:

- Դասախոսությունից կուշանաք,- քաղաքավարի բարեւելով՝ ասացի ես:

Նա փակեց գիրքն ու ասաց.

- Իսկ գիտե՞ք, որ ամբողջ բնակարանն ինձ ծեր սիրուհին է համարում:

Ես ոչինչ չասացի, եւ այդ ժամանակ տեղի ունեցավ սարսափելին: Վերոնիկան շողացրեց աչքերն ու, դեն նետելով ծածկոցը, իր ողջ մերկ մարմինը զայրացած հառեց վրաս:

- Տեսե՛ք, Անդրե՛յ Կազիմիրովիչ, ինչից եք հրաժարվել:

Տասնհինգ տարի առաջ ինձ վիճակվել էր ծանոթանալ անատոմիայի դասագրքի հետ: Ցանկանալով գործից տեղյակ լինել՝ ուշադիր ուսումնասիրեցի բոլոր նկարներն ու դիագրամները: Հետո Գորկու անվան կուլտուրայի ու հանգստի այգում հնարավորություն ունեցա հետեւելու գետում լողացող տղաներին: Բայց կենդանի մերկ կին տեսնել, այն էլ մոտ տարածությունից, նախկինում չէր վիճակվել:

Կրկնում եմ. դա սարսափելի է: Նա ամբողջովին նույնպիսի բնականսպիտակ գույնի էր, ինչպես վիզը, դեմքն ու ձեռքերը: Դիմացից օրորվում էր սպիտակ կրծքերի զույգը: Դրանք սկզբում արմունկից վեր անդամատված երկրորդային ձեռքերի տեղ դրեցի: Բայց յուրաքանչյուրն ավարտվում էր կլոր ծծակով, որը զանգի կոճակ էր հիշեցնում:

Իսկ հետո, մինչեւ ոտքերը, ողջ ազատ տարածությունը գրավում էր գնդաձեւ փորը: Այստեղ է հավաքվում օրվա ընթացքում կլլված ողջ ուտելիքը: Ներքեւի մասը, գլխի նման, խիտ ծածկված էր գանգուր մազերով:

Ինձ վաղուց էին հուզում սեռի խնդիրները, որոնք առաջնահերթ դեր էին խաղում նրանց մտավոր ու բարոյական կյանքում: Դեռեւս հնագույն ժամանակներից այն ծածկված է անթափանց գաղտնիքի վարագույրով: Նույնիսկ անատոմիայի դասագրքում այդ առարկայի մասին չի ասվում ոչինչ կամ մշուշոտ ու հպանցիկ է ասվում, այնպես, որ չհասկանան:

Եվ հիմա, շփոթմունքս հաղթահարելով, որոշեցի օգտվել պահից ու նայեցի այնտեղ, ուր,- ինչպես գրված է դասագրքում, - զետեղված է մանկածին օրգանը, որը, կատապուլտի պես, արդեն պատրաստի նորածիններ է արձակում:

Այնտեղ,հպանցիկ, մարդու դեմքին նման ինչ-որ բան տեսա: Բայց, ինչպես ինձ թվաց, ոչ թե կնոջ, այլ տղամարդու դեմք էր՝ ծեր, անթրաշ, դուրս պրծած ատամներով:

Քաղցած, չար տղամարդ էր ապրում նրա ոտքերի արանքում: Երեւի գիշերները խռմփացնում ու զազրախոսում էր ծանծրույթից: Պետք է որ այստեղից բխելիս լինի կնոջ բնույթի երկդիմությունը, որի մասին դիպուկ է ասել բանաստեղծ Լերմոնտովը. «սքանչելի՝ երկնային հրեշտակի նման ու չարքի պես նենգ ու չարկամ»:

Չհասցրի գլուխ հանել այդ ամենից, որովհետեւ Վերոնիկան հանկարծ ցնցվեց ու ասաց.

- Դե՛:

Նա փակում էր աչքերն ու բացուխուփ անում բերանը՝ ջրից հանած ձկան պես: Թպրտում էր անկողնու վրա՝ խոշոր, սպիտակ ձուկ, անօգնական ու ապարդյուն, իսկ մարմինն այդ ընթացքում պատվում էր երկնագույն բշտիկներով:

- Կներեք, Վերոնի՛կա Գրիգորեւնա,- վախվորած ասացի ես:- Կներեք,- ասացի ես:- Բայց ծառայության գնալուս ժամանակն է:

Եվ ջանալով չթփթփացնել ու հետ չնայել՝ հեռացա:

Դրսում անձրեւ էր, իսկ ես չէի շտապում. մեր հաստատությունում սանիտարական օր էր: Ու ես, Վերոնիկայից ազատագրված, պետական ծառայության պատրվակով (նախահաշիվ, նիկոտին, գլխավոր հաշվապահ Ջիկով, խենթացած մեքենագրուհիներ՝ ամսական 650 ռուբլու դիմաց) կարող էի ինձ այնպիսի շռայլություն թույլ տալ, ինչպիսին խոնավ եղանակին թարմ օդում զբոսնելն է:

Մի ծակ ջրհորդան ընտրեցի ու մտա շիթի տակ: Ջուրն ուղիղ օձիքիցս ներս էր հոսում,-սառը ու համով,- եւ ընդամենը երեք րոպեից բավականաչափ թաց էի:

Բայց իմ կողքով շտապող անցորդները, համատարած անձրեւանոցներով ու ծակոտկեն կոշկատակերով, ծուռ էին նայում ինձ՝ հետաքրքրված այդպիսի արարքով: Ստիպված էի դիրքորոշումս փոխել ու զբոսնել ջրափոսերով: Կոշիկներս լա՛վ թրջվեցին: Գոնե ներքեւից հաճույք ստանայի:

- Ա՛խ, Վերոնի՛կա, Վերոնի՛կա,- սրտնեղած կրկնում էի ես:- Ինչո՞ւ այդպես դաժան եղաք, ինչո՞ւ սիրեցիք ինձ: Ինչո՞ւ մի քիչ չամաչեցիք ձեր տեսքից եւ ինչո՞ւ էիք ձեզ այդպես բացահայտ, այդպես անկիրթ պահում:

Չէ՞ որ ամոթը մարդու հիմնական արժանիքն է, աղոտ կասկած սեփական անուղղելի արտաքինի մասին, բնազդային վախ մահուդի տակ պահ-

վածի համար: Միայն ամոթը ու կրկին ամոթը կարող է նրանց գոնե մի քիչ ազնվացնել ու եթե ոչ սքանչելի, գոնե համեստ դարձնել:

Իհարկե, այստեղ ընկնելով, հետեւում է ընդհանուր մոդային: Պահի՛ր այն երկրի օրենքները, որտեղ ստիպված ես ապրել: Բացի այդ, բռնվելու ու մերկացվելու մշտական վտանգը ստիպում էր վրաս քաշել այդ բոլոր դիմակահանդեսային փալասները:

Բայց եթե նրանց տեղը լինեի, ոչ միայն կոստյումի, մուշտակի միջից դուրս չէի գա գիշեր ու ցերեկ: Պլաստիկ վիրահատություն կանեի, որ ոտքերս կարճանային ու գոնե մեջքիս սապատ հայտնվեր: Սապատավորներն այստեղ, համենայնդեպս,օրինավոր են մնացածից, չնայած նույնպես այլանդակներ են:

Տխուր-տրտում հասա Գերցենի փողոց: Կոնսերվատորիայի դիմաց, կիսանկուղային հարկում էր սենյակ վարձել այն սապատավորը: Արդեն ամիսուկես աչքի տակ էի առել՝նրբագեղ, կորված, մարդու չնմանվող, եւ ինչ-որ բանով հիշեցնում էր իմ անդառնալի պատանությունը:

Իրար ետեւից երեք անգամ տեսել էի լվացքատանը ու մի անգամ էլ՝ ծաղկի խանութում, երբ կակտուս էի առնում: Լվացքի անդորրագրով, որը նա ներկայացնում էր, երջանկություն ունեցա իմանալու տան հասցեն:

Եկել էր հանգուցալուծման ժամանակը:

Ես ինձ ասում էի՝ չի կարող, որ բոլորը զոհված լինեն, ու միայն ես եմ փրկվել Ռոբինզոն Կրուզոյի նման: Չէ՞ որ ինքս, իմ ձեռքերով եմ ոչնչացրել այն ամենը, որ մնացել էր վթարից հետո, եւ ինձնից բացի այստեղ ոչ ոք չկա:

Իսկ եթե նրան իմ հետեւի՞ց են ուղարկել: Սապատավոր տեսքով քողարկած... Հոգածություն են ցուցաբերել: Սթափվել են, սկսել են փնտրել:

Որտեղի՞ց պիտի իմանային: Երեսուներկու տարի անց: Այն էլ՝ տեղական ժամանակով: Ողջ ու առողջ: Հեշտ բան չի:

Բայց ինչո՞ւ այստեղ: Հենց այդ է: Ոչ ոք չէր պատրաստվում: Լրիվ ուրիշ կողմից: Այդպես չի լինում: Ծեղվել են ճանապարհից: Աշխարհի ծա՛յրը: Յոթ ու կես: Այսպես էլ խրվեցինք:

Իսկ եթե՝ պատահմա՞մբ: Ճիշտ այսպիսի վրիպակ: Ուղեգծից ու երկրային չվացուցակից շեղվելով: Առաջին պատահածը: Լինում են, չէ՞, զուգադիպություններ: Մեկը մեկին: Ոտք չի դիպել: Քի՞չ է պատահում: Կուզիկի տեսքով: Միանման: Գոնե մեկը՝ նման:

Դուռը բացեց մի տիկին, Կոստրիցկայայի նման: Բայց նրա Կոստրիցկայան ավելի մարմնեղ ու տարեց էր: Նրանից եղրեւանու տասնապատկ-

ված հոտ էր բուրում: Օծանելիք էր:

- Լեոպոլդը շուտով կվերադառնա: Անցեք, խնդրեմ:

Միջանցքի խորքից չերեւացող մի շուն էր հաչում: Բայց չէր համարձակվում նետվել ինձ վրա: Ես արդեն տհաճություններ ունեցել էի կենդանիների այդ տեսակի հետ:

- Ի՞նչ եք ասում: Նա չի կծում: Նի՛քսա, հանգի՛ստ, լռե՛լ:

Քանի դեռ քաղաքավարի վիճում էինք, իսկ կենդանին շարունակում էր կատաղել, կողային դռներից երեք գլուխ ցցվեցին: Հետաքրքրությամբ զննում էին ինձ ու բարկանում շան վրա: Ահավոր աղմուկ ստացվեց:

Սենյակում, ուր,մեծ վտանգի ենթարկվելով, թափանցել էի, մի մանկահասակ երեխա կար՝ սրով զինված: Մեզ տեսնելով՝ նա շաքարած լոռամրգի պահանջեց ու բարձր լաց եղավ՝ ծամածռելով դեմքն ու գոտկատեղը պտտելով:

- Քաղցրասե՛ր է: Լրիվ ինձ է քաշել,- ասաց Կոստրիցկայան:- Շարունակես խնդրել՝ քեռին քեզ կուտի:

Տանտիրուհուն հաճույք պատճառելու համար կատակով ասացի, որ ապուրի փոխարեն մանկական տաքացրած կաթ եմ խմում: Երեխան ակնթարթորեն լռեց, գցեց սուրն ու կծկվեց հեռավոր անկյունում՝ ինձնից չկտրելով գազանային վախով լեցուն աչքերը:

- Նմա՞ն է Լեոպոլդին,- իբր հպանցիկ, բայց խռպոտ քնքշությամբ հարցրեց Կոստրիցկայան:

Զեւացրի, թե հավատում եմ նրա ակնարկներին:

Եղեւնու հոտերով հագեցած խեղդուկ օդից սիրտս խառնում էր: Հոտից գրգռված մաշկս մի քանի տեղ բորբոքվեց: Վտանգ կար, որ դեմքիս կանաչ բծեր կհայտնվեն:

Իսկ միջանցքում չար Նիքսան չանչերով խզխզացնում էր մանրահատակի վրա ու քիթը ֆսսացնելով՝ հոտոտում իմ հետքերը: Բորբոքված կենվորուհիները կիսաշշուկով խոսում էին իրար հետ՝ չկասկածելով իմ զարգացած ակուստիկ ընկալունակության մասին:

- Երեւի Լեոպոլդ Սերգեյիչի եղբայրն է...

- Չէ, ի՞նչ եք ասում, մեր կուզիկը սրա համեմատությամբ իսկը Պուշկին է:

- Աստված չանի՝ սրան երազում տեսնես...

- Նույնիսկ նայելն է անհարմար...

Այդ ամենն ընդհատվեց Լեոպոլդի հայտնվելով: Հիշում եմ՝ ինձ դուր եկավ, թե ինչպես միանգամից անցավ իր դերին, կողմնակի անձանց ներկայությամբ իր պես հրեշի հանդիպած սապատավորի դասական դերին:

- Հա՛: Դժբախտության ընկե՛ր: Ո՞ւմ հետ պատիվ ունեմ: Ինչո՞վ եմ պարտական...

Դա նրբագույն հոգեբանական ոստայնի նմանակում էր՝ ծաղրանքով պաշտպանված հպարտության եւ բալագանով ծածկված ամոթի խառնուրդ: Նա հեծյալի պես էր նստել աթոռին՝ նստիքը ոտքերով գրկած, վեր էր թռչում, նորից հակառակ նստում ու գլուխն աթոռի թիկնակին՝ այլանդակ ծամածռություններ անում եւ անդադար շարժում էր ուսերը, ասես շոշափեր ուսապարկի պես ցցված կուզը:

- Այդպե՛ս, այդպե՛ս, ուրեմն, Անդրեյ Կազիմիրովիչ: Իսկ ինձ, որքան էլ ծիծաղելի հնչի, Լեոպոլդ Սերգեեւիչ են կոչում: Եվ, ինչպես տեսնում եք, մի քիչ կուզիկ եմ:

Ինձ հիացնում էր նրա՝ միջինացված մարդ խաղալը, դա արվեստ էր, մանավանդ՝ որքան անհեթեթ, այնքան ճշմարիտ էր թվում, ու ես խաղաղ տխրությամբ գիտակցում էի նրա կենսական գերազանցությունը եւ իմ՝ նրա պես երկրի վրա մեզ համար հնարավոր միակ՝ կուզիկ այլանդակների ու խեղված ինքնասերների ձեւի մեջ մտնելու անկարողությունը:

Բայց գործը գործ է մնում, ու հասկանալ տվեցի, որ ուզում եմ զրուցել:

Կոն-ֆի-դեն-ցի-ալ:

- Ինձ համար դժվար չի, կգնամ,- նեղացած ասաց Կոստրիցկայան ու դուրս եկավ՝ ինձ պարուրելով իր այրող բույրերով:

Իսկ ես վրեժխնդիր մտածեցի, որ նա այդ հոտով ներծծված է մինչեւ ողնաշարը: Նույնիսկ արտաթորանքն է օծանելիք բուրում, ոչ թե խաշած կարտոֆիլ ու տնական հարմարավետություն, ինչպես սովորաբար լինում է: Ու նաեւ մաքրամաքուր օդեկոլոն է միզում, եւ այդ իրավիճակում խեղճ Լեոպոլդը շուտով կթոշնի:

- Վաղո՞ւց եք եկել այնտեղից,- ուղիղ հարցրի ես, երբ մենակ մնացինք, ու միայն կարկամած, սարսափ արտահայտող բութ ու խորհրդավոր երեխան էր նստել հեռավոր անկյունում:

- Որտեղի՞ց՝ այնտեղից,- հարցից խույս տվեց նա: Ցանտիրուհու հեռանալու հետ շինծու ուրախությունն անհետացել էր: Չքացել էր խեղկատակային հավակնոտությունը, որ հատուկ է կուզիկների մեծ մասին, որոնք բավականաչափ խելացի են, որպեսզի թաքցնի իր թիկունքը, ու բավականաչափ հպարտ, որ դրանից չտառապեն: Բայց ինձ թվում էր՝ նա դեռ ուշքի չի եկել եւ իներցիայով, հոգնած տեսքով շարունակում է ձեւանալ ոչ այն, ինչ է իրականում:

- Վերջ տվեք,- կամացուկ ասացի ես:- Առաջին հայացքից ճանաչեցի

ձեզ: Չէ որ ես եւ դուք նույն վայրերից ենք: Այսպես ասած՝ ազգականներ: ՓԽԵՆՑ: ՓԽԵՆՑ,- շշուկով հիշեցրի երկուսիս համար սրբազան անունը:

- Ինչ ասացի՞ք... Գիտե՞ք, դուք էլ ինձ մի քիչ ծանոթ թվացիք: Որտե՞ղ կարող էի ձեզ տեսնել:

Նա տրորում էր ճակատը, կնճռոտվում, ծռմռում շրթունքները: Դեմքը համարյա մարդկային շարժունակություն ուներ, ու ես նորից նախանձեցի այդ ապշեցուցիչ մարզումային տեխնիկային, չնայած նրա զգուշավորությունը սկսում էր զայրացնել:

- Հա՛,- գոչեց նա՝ շարունակելով խեղկատակություն անել,- Գլխթղթառի համակարգում չե՞ք ծառայել: Այնտեղ տնօրենը քառասունչորսին Յակով Սոլոմոնովիչ Զակն էր: Համակրելի, այսպիսի, հրեա էր...

- Ոչ մի Զակի չեմ ճանաչում,- չոր պատասխանեցի ես:- Բայց լավ գիտեմ, Լեոպո՛լդ Սերգեեւիչ, որ բոլորովին Լեոպոլդ Սերգեեւիչ չեք, ու կուզիկ էլ չեք, չնայած բոլորի աչքն եք խոթում ձեր կուզը: Եվ ընդհանրապես, վերջ տվեք ծամածռվելուն: Ի վերջո, ձեզանից պակաս չեմ վտանգի ենթարկվում:

Նա տառացիորեն սատանա կտրեց.

- Ինչպե՞ս եք համարձակվում,- ասում է,- ասել, թե ով եմ: Փչացնե՛լ իմ հարաբերությունները տանտիրուհու հետ, հետն էլ կոպտե՛լ: Դուք նախ,- ասում է,- այդպիսի շքեղ կին գտեք, հետո դատողություններ արեք իմ մարմնական արատի մասին: Դուք ինձնից կուզիկ եք: Լսո՞ւմ եք: Դուք ավելի նողկալի եք: Այլանդա՛կ: Կուզի՛կ: Թշվա՛ռ հաշմանդամ:

Հանկարծ նա ծիծաղեց ու շպպացրեց գլխին.

- Հիշեցի՛: Ձեզ լվացքատանն եմ տեսել: Մենք ընդամենը նրանով ենք նման, որ սպիտակեղենը նույն լվացքատուն ենք հանձնում:

Այս անգամ հավատացի նրա անկեղծությանը: Չէ՛, իսկապես իրեն Լեոպոլդ Սերգեեւիչ էր երեւակայում: Չափազանց էր մտել դերի մեջ, վայրենացել էր, մարդացել, չափից դուրս էր նույնացել շրջակա իրավիճակի հետ ու տրվել օտար ազդեցության: Նա մոռացել էր իր նախկին անունը, դավաճանել հեռավոր հայրենիքին, ու եթե չօգնեմ, կկործանվի:

Ես բռնեցի նրա ուսերը ու զգույշ ցնցեցի: Ցնցում էի ու բարեկամաբար, մեղմ համոզում, որ հիշի, ջանք անի ու հիշի, վերադառնա ինքն իրեն: Ինչի՞ն է պետք թունավոր հոտ արձակող այդ Կոստրիցկայան: Նույնիսկ մարդկանց շրջանում անասնապղծությունը համարում չունի: Առավել եւս՝ հայրենիքին դավաճանելը, թեկուզ ոչ չարամտորեն, այլ սովորական մոռացկոտությամբ:

- ՓԽԵՆՑ: ՓԽԵՆՑ,- պնդում էի ես ու կրկնում այլ բառեր, որ դեռ հիշում էի:

Հանկարծ նրա բոստոնի պիջակի միջով ինձ հասավ չգիտես որտեղից հայտնված ջերմությունը: Նրա ուսերն ավելի ու ավելի էին տաքանում, նույնքան, որքան Վերոնիկայի ձեռքերը, որքան հազարավոր այլ տաք ձեռքեր, որ նախընտրում էի չսեղմել:

- Կներեք,- ասացի ու թուլացրի մատներս:- Ինձ թվում է՝ սխալմունք է եղել: Ցավալի թյուրիմացություն: Գիտե՞ք, ինչպես ասեմ, ես նյարդային նոպաներ եմ ունենում...

Այստեղ սարսափելի դղրդոց լսեցի ու շրջվեցի: Իմ թիկունքում, զգալի հեռավորության վրա, սրով սպառնալով՝ արշավում էր երեխան:

- Բաց թող Լեոպոլդին,- ճչում էր նա:- Հե՛յ: Բաց թող Լեոպոլդին: Սայրիկս սիրում է նրան: Նա իմ հայրիկն է, ի՛մ Լեոպոլդն է, ոչ թե քոնը:

Կասկած լինել չէր կարող: Ես սխալվել էի: Դա մարդ էր, ամենասովորական մարդ, թեկուզեւ կուզիկ:

3

Վիճակս օրեցօր վատանում էր: Եկավ ձմեռը՝ տարվա ամենացուրտ ժամանակը աշխարհի այս մասում: Տնից դուրս չեմ գալիս:

Համենայնդեպս, դժգոհելը մեղք է: Նոյեմբերյան տոներից հետո թոշակի անցա: Քիչ եմ ստանում, բայց մի տեսակ հանգիստ է: Թե չէ ինչ էի անելու վերջին հիվանդության ժամանակ: Ծառայության գնալու համար ուժս չէր հերիքի, իսկ անաշխատունակության թերթիկ ճարելը հոգսաշատ ու վտանգավոր գործ է: Հո օր ծերության բուժզննության չէի՞ ենթարկվելու: Դա կկործաներ ինձ:

Երբեմն ինձ մի նենգ հարց եմ տալիս. ինչո՞ւ, ի վերջո չօրինականացնեմ իմ կացությունը: Ինչո՞ւ էի տասներեք տարի շարունակ հանցագործի պես թաքնվում ուրիշի անվան տակ: Անդրեյ Կազիմիրովիչ Սուշինսկի: Կիսալեհ, կիսառուս: 61 տարեկան: Հաշմանդամ: Անկուսակցական: Ամուրի: Հարազատներ ու երեխաներ չունի: Երբեք արտասահմանում չի եղել: Ծնվել է Իրկուտսկում: Հայրը՝ ցածրաստիճան ծառայող: Մայրը՝ տնային տնտեսուհի: Մահացել են խոլերայից, 1901 թվականին: Վե՛րջ:

Իսկ եթե գնամ միլիցիա՞, ներողություն խնդրեմ, պարզապես ամեն ինչ հերթով բացատրե՞մ:

Էսպես ու էսպես: Ինքներդ եք տեսնում՝ ուրիշ աշխարհի արարած եմ: Ո՛չ Աֆրիկայից, ո՛չ Հնդկաստանից, նույնիսկ ո՛չ Մարսից կամ ձեր որեւէ

Վեներայից, այլ ավելի հեռու, ավելի անհասանելի աշխարհի: Դուք նույնիսկ այդպիսի անուններ չգիտեք, ասենք, ես էլ չգիտեմ. բացեք իմ առաջ ձեր ունեցած աստղային քարտեզներն ու պլանները՝ չեմ գտնի, ազնիվ խոսք, չեմ գտնի, ախր ուր կորավ այն սքանչելի կետը, որտեղ ծնվել եմ:

Նախ, մասնագետ չեմ այդ աստղագիտական գործերում: Թռչում էի, քանի թռցնում էին: Երկրորդ, լրիվ ուրիշ քարտեզ է, եւ ձեր թուղթ ու գրքով ինձ հարազատ երկինքը չեմ ճանաչի: Հիմա էլ՝ գիշերը դուրս եմ գալիս, նայում վեր ու տեսնում եմ՝ նորից էն չի: Եվ ի՞նչ ուղղությամբ տխրեմ՝ նույնպես անհայտ է: Գուցե այստեղից ոչ միայն երկիրս՝ իմ արեւն է՞լ չի երեւում: Գուցե Գալակտիկայի մյուս կողմո՞ւմ է հաշվառված: Գլուխ չես հանի:

Մի մտածեք, խնդրում եմ, թե ինչ-որ հետին մտքով եմ ժամանել այստեղ: Ժողովուրդների վերաբնակում, աշխարհների պայքար, էսպե՛ս, էնպե՛ս: Ես, ընդհանրապես, ոչ զինվորական եմ, ոչ գիտնական, ոչ ճանապարհորդ, իսկ հաշվետարի մասնագիտությունս այստեղի է, նախկինը ավելի լավ է չհիշատակեմ, մեկ է, բան չենք հասկանա:

Ու չէինք էլ պատրաստվում ինչ-որ տարածություններ թռչել, ուղղակի, պարզ ասած, առողջարան էինք գնում: Իսկ ճանապարհին՝ աղետ, ասենք, որ մատչելի լինի, հանդիպում ենք երկնաքարի ու յոթուկես ամիս,բայց ոչ թե ձեր, այլ մեր ժամանակով, ընկնո՛ւմ ու զուտ պատահականության բերումով հայտնվում ենք այստեղ:

Ուշքի եկա, նայեմ՝ բոլոր ուղեկիցներս զոհվել են: Թաղեցի նրանց ինչպես հարկն է ու սկսեցի հարմարվել:

Իսկ շուրջն ամեն ինչ տարաշխարհիկ է ու անհասկանալի: Երկնքում լուսինն է շողում՝ մեծ, դեղին, բայց փոխարենը՝ եզակի թվով: Օդն այն չի, լույսն այն չի, ինչ-որ ձգողականություն, ճնշումն էլ այնքան չի համապատասխանում: Ինչ ասեմ: Իմ ոչ այստեղային ընկալմամբ ուզածդ տարրական եղեւնի ձեզ համար նույնն է, ինչ փշախոզուկը:

Ի՞նչ անես: Ուտել-խմել պե՞տք է: Իհարկե, ոչ մարդ եմ, ոչ գազան, ու ձեր ունեցածից, իհարկե, առավել հակված եմ բուսական աշխարհին, բայց իմ առաջնային պահանջմունքներն էլ ունեմ: Ինձ առաջին հերթին ջուր է հարկավոր, ավելի լավ՝ խոնավության բացակայության պարագայում, ու ցանկալի է՝ որոշակի ջերմաստիճանի, ու որ ժամանակ առ ժամանակ չհերիքող աղ արվի ջրին: Բացի այդ, շրջակա մթնոլորտում աճող ցրտություն եմ զգում: Ինքներդ գիտեք Սիբիրի սառնամանիքները:

Ճար չկար, ստիպված էի դուրս գալ անտառից: Արդեն մի քանի օր թփերի ետեւից նայում էի մարդկանց: Միանգամից հասկացա, որ բանա-

կան արարածներ են, բայց սկզբում վախենում էի, որ կուտեն: Փաթաթվեցի ինչ-որ փալասներով (հենց այդ ժամանակ էլ արեցի առաջին գողությունը, որ ներելի է այդ վիճակում) ու բարեհամբույր տեսքով դուրս եմ գալիս թփերից:

Յակուտները հյուրընկալ ժողովուրդ են, դյուրահավատ: Նրանցից եմ սովորել պարզագույն մարդկային ունակությունները, հետո տեղափոխվեցի ավելի քաղաքակիրթ կողմեր: Ուսումնասիրեցի լեզուն, գիտելիքներ յուրացրի, թվաբանություն էի դասավանդում Իրկուտսկ քաղաքի միջնակարգ դպրոցում: Մի շրջան Ղրիմում էի բնակվում, բայց շուտով մեկնեցի եղանակային պատճառներով. ամռանը չափանց շոգ է, ձմռանը՝ անբավարար, ու մեկ է՝ շոգեջեռուցումով բնակարան է պետք: Իսկ այդ հարմարությունները 20-րդ դարում այնտեղ հազվագյուտ էին ու մեծ փողեր արժեին. իմ գրպանի բանը չէր: Ահա եւ տեղավորվեցի Մոսկվայում... Եվ ապրում եմ...

Ում կուզես պատմիր այս տխուր պատմությունը, նույնիսկ ամենամատչելի ձեւով՝ ախր չեն հավատա, ոչ մի դեպքում չեն հավատա: Եթե գոնե պատմելիս լացել կարողանայի... Թե չէ, ծիծաղել ինչ-որ չափով սովորել եմ, բայց լաց լինել չգիտեմ: Խելագար կհամարեն, հորինող, գուցե դատական պատասխանատվության էլ կանչեն. կեղծ անձնագիր, ստորագրությունների ու կնիքների կեղծում եւ այլեւայլ անօրինական գործողություններ:

Ու եթե նույնիսկ, հակառակ բանականության, հավատան էլ, ավելի վատ կլինի:

Կհավաքվեն բոլոր կողմերից բոլոր ակադեմիաների ակադեմիկոսները՝ աստղագետներ, գյուղատնտեսներ, ֆիզիկոսներ, տնտեսագետներ, երկրաբաններ, բանասերներ, հոգեբաններ, կենսաբաններ, միկրոկենսաբաններ, քիմիկոսներ ու կենսաքիմիկոսներ, որ մինչեւ վերջին կետը ուսումնասիրեն, ոչինչ բաց չեն թողնի: Ու բոլորը հարցուփորձ են անում, քննում, զննում, արտածում:

Իմ մասին միլիոնավոր տպաքանակներով ատենախոսություններ, կինոնկարներ ու պոեմներ կհրապարակվեն: Տիկնայք կսկսեն կանաչ շրթներկ օգտագործել ու կակտուսի կամ առնվազն ֆիկուսի տեսքով գլխարկներ պատվիրել: Ու բոլոր կուզիկները,- մի քանի տարի,- ահռելի հաջողություն կունենան կանանց շրջանում:

Հայրենիքիս անունով ավտոմեքենաների մակնիշներ կկոչեն, իսկ իմ անունով՝ հարյուրավոր նորածին մանուկների, չխոսելով արդեն փողոցների ու շների մասին: Ես հանրահայտ կդառնամ, ինչպես Լեւ Տոլստոյը, ինչպես Գուլիվերն ու Հերակլեսը: Եվ Գալիլեո Գալիլեյը:

Բայց համեստ անձիս հանդեպ համաժողովրդական ուշադրությամբ հանդերձ՝ ոչ ոք ոչինչ չի հասկանա: Ինպես հասկանան, եթե ինքս նրանց լեզվով ոչ մի կերպ չեմ կարողանում արտահայտել իմ անմարդկային էությունը: Անընդհատ պտտվում եմ շուրջը ու բավարարվում փոխաբերություններով, իսկ հենց բանը հասնում է գլխավորին, սսկվում եմ: Ու միայն տեսնում եմ խիտ, ցածրիկ ԳՈԳՐԻՆ, լսում արագ ՎՋԼՅԱԳՈՒՆ, ու անասելի չքնաղ ՊԽԵՆՑՆ է շուք անում իմ բնին: Ավելի ու ավելի քիչ բառեր են մնում թարշամող հիշողությանս մեջ: Մարդկային լեզվի հնչյուններով միայն խիստ մոտավոր կարելի է փոխանցել դրանց կառուցվածքը: Ու եթե շրջապատեն ինձ լեզվաբաններն ու հարցնեն՝ դա ինչ է, միայն կասեմ. ԳՈԳՐԻ ՏՈՒԺԵՐՈՍԿԻՊ ու կտարածեմ ձեռքերս:

Չէ, ավելի լավ է քարշ տամ միայնակ ինկոգնիտոս: Թե որ այդպիսի բացառիկն ես, ուրեմն ապրիր աննկատ: Եվ աննկատ էլ մեռիր:

Թե չէ, երբ մեռնեմ,- իսկ ես շուտով կմեռնեմ,- կտեղավորեն սպիրտով լցված մեծ բանկայի մեջ ու կցուցադրեն կենդանաբանական թանգարանում: Եվ շարան-շարան անցնողները կցնցվեն վախից ու իրենց սիրտ տալու համար կսկսեն լկտի ծիծաղել՝ զզվանքով շուրթերը սեղմելով. «Ա՛խ, ինչ աննորմալ, ինչ տգեղ վիժվածք է»:

Իսկ ես վիժվածք չե՛մ: Եթե պարզապես ուրիշ եմ, պիտի սկսեք հայհոյե՞լ: Ձեր այլանդակությամբ մի՛ չափեք իմ գեղեցկությունը: Ես ձեզնից գեղեցիկ ու նորմալ եմ: Եվ ամեն անգամ, երբ նայում եմ ինձ, նորից ու նորից եմ համոզվում:

Հիվանդանալուցս առաջ լոգարանը շարքից դուրս եկավ: Այդ դժբախտության մասին իմացա ուշ երեկոյան ու հասկացա՝ Կոստրիցկայան է արել, որ ինձ ցավեցնի: Խեղճ Վերոնիկայից օգնություն չէի սպասում: Վերոնիկան նեղացել էր ինձնից այն միջադեպից հետո, երբ առաջարկեց մարդկային տեսանկյունից ամենալավագույնը, որ ուներ, իսկ դրա փոխարեն գնացի զբոսնելու:

Հիմա պատի այն կողմից երբեմն ինձ էին հասնում նրա օդեղեն համբույրները Ստանիսլավսկու թատրոնի դերասանին, որի հետ ամուսնացել է: Ես սրտանց ուրախ էի նրա համար ու նույնիսկ հարսանիքին, անանուն,16 ռուբլանոց տորթ ուղարկեցի՝ անուն-ազգանվան շոկոլադե սկզբնատառերով ու ծաղկագրերով:

Ահավոր ուտել էի ուզում, իսկ Կոստրիցկայան վնասել էր լոգարանը, որ ինձ կործանի, ու ջրի անցքը մինչեւ նորոգելը փակել էին խցանով, ու ջուրը չէր հոսում: Դրա համար էլ, երբ բոլորը պառկեցին քնելու, եւ իմ վերեւի

հարկից ու ներքեւի հարկից, ինչպես եւ կողքերից համաչափ խռմփոց լսվեց, վերցրի Վերոնիկայի տաշտակը, որ մեր զուգարանում, հարեւանների տաշտակների հետ կախված է մեխից: Տաշտակը դդրդում էր ամպրոպի պես, երբ քարշ էի տալիս միջանցքով, ու ներքեւի հարկում, հատակի տակ ինչ-որ մեկի խռմփոցն ընդհատվեց: Բայց գործս ավարտին հասցրի, խոհանոցում եռացրի թեյամանը, մի դույլ սառը ջուր լցրի, այդ ամենը տարա իմ սենյակ ու դուռը սողնակով փակեցի: Բանալին էլ դրեցի կողպեքի անցքի մեջ:

Ինչ հաճելի՛ է ազատվել հագուստից, հանել կեղծամը, պոկել իսկական գուտապերչից ականջախեցիները եւ արձակել մեջքս ու կուրծքս պրկող գոտիները: Մարմինս բացվեց փաթաթած վիճակում խանութից բերված արմավենու պես: Օրվա ընթացքում թմրած անդամներս կենդանացան ու խաղացին:

Տեղավորվեցի տաշտակի մեջ, մի ձեռքով վերցրի սպունգը, որ ջուրը հասցնեմ բոլոր չոր տեղերին, մյուսով՝ թեյամանը: Իսկ երրորդ ձեռքով վերցրի սառը ջրով գավաթն ու եռջուր ավելացնելով, վերջին՝ չորրորդ ձեռքով ստուգեցի՝ շատ տաք չի՞: Ի՜նչ հարմար է:

Մաշկս լավ էր ներծծում էմալպատ գավաթից ծորացող անգին հեղուկը, ու քաղցս մի փոքր հագեցնելով՝ որոշեցի ուշադիր զննել ինձ, որ մաքրեմ ծակոտիներից դուրս տված ու տեղ-տեղ շառագույն չոր մակարդ կապած անառողջ լորձունքը: Ճիշտ է ձեռքերիս ու ոտքերիս, գագաթիս ու ծոծրակիս աչքերը, որ ցերեկվա ժամերին կոշտ հագուստի ու դնովի մազածածկի տակ էին, սկսել էին նկատելիորեն թուլանալ: Մի աչքս դեռ 34 թվին էր կուրացել. աջ կոշիկս հարել էր: Դժվար էր անհրաժեշտ զննել անհրաժեշտ մանրամասնությամբ:

Բայց պտտում էի գլուխս՝ չբավարարվելով կիսաշրջանով, խղճուկ հարյուր ութսուն աստիճանի չափով, որ տրված է մարդկային պարանոցին, թարթում էի պահպանված բոլոր աչքերս՝ ցրելով հոգնածությունն ու խավարը, եւ ինձ հաջողվեց բոլոր կողմերից տեսնել ինձ՝ միանգամից մի քանի դիտակետից: Ի՜նչ գրավիչ տեսարան է, հիմա ինձ, ցավոք, հասանելի միայն գիշերային ժամերին: Բավական է վեր պարզես ձեռքերդ, ու քեզ տեսնում ես առաստաղից, այսպես ասած՝ բարձրանալով վեր ու կախվելով քեզ վրա: Ու, միեւնույն ժամանակ, մնացած աչքերից բաց չես թողնում ներքեւը, թիկունքն ու առջեւը՝ ամբողջ ճյուղառատ ու սաղարթախիտ մարմինդ:

Գուցե եթե երեսուներկու տարի չապրեի օտարության մեջ, մտքովս էլ

չանցներ հիանալ իմ արտաքինով: Բայց այստեղ միակ նմուշն էի այն կորուսյալ ներդաշնակ գեղեցկության, որ իմ հայրենիքն է: Ուրիշ ինչ անեմ երկրի վրա, ինձանով հիանալուց բացի:

Թող որ հետեւի ձեռքս կծկվել է մարդկային կուզ պատկերելու մշտական կարիքից: Թող որ փոկերով հաշմված առջեւի ձեռքիս երկու մատն արդեն չորացել են, իսկ ծեր մարմինս կորցրել է նախկին ճկունությունը: Մեկ է, գեղեցիկ եմ, համաչափ, նրբագեղ՝ հակառակ բոլոր նախանձողների ու քննադատողների պնդումներին:

Այդպես էի մտածում՝ գավաթից վրաս ջուր լցնելով, այն գիշեր, երբ Կոստրիցկայան մտադրվել էր սպանել ինձ լոգարանը փչացնելու միջոցով: Իսկ առավոտյան հիվանդացա, երեւի մրսել էի տաշտակում, ու սկսվեց իմ կյանքի ամենադժվար ժամանակը:

Մեկուկես շաբաթ պառկած էի իմ կոշտ բազմոցին ու զգում էի՝ ոնց եմ չորանում: Ցրի համար խոհանոց գնալու ուժ չունեի: Մարմինս, որ կիպ բարուրված մարդանման պարկ էր դարձել, թմրել ու թուլացել էր: Չորացած մաշկս ճաքճքել էր: Իսկ ես անկարող էի վեր կենալ ու թուլացնել սուր, ասես մետաղալարի կապերը:

Այդպես մեկուկես շաբաթ անցավ, ու ոչ ոք չմտավ ինձ մոտ:

Պատկերացնում էի, թե իմ մահվանից հետո ուրախացած հարեւաններն ինչպես կզանգեն պոլիկլինիկա: Ինչպես կգա տեղամասային բժիշկը՝ հավաստելու մահացու ելքը, ինչպես կկռանա բազմոցի վրա, վիրաբուժական մկրատով կկտրի հագուստը, վիրակապերն ու փոկերը ու սարսափած՝ հետ կքաշվի բազմոցից, ու կկարգադրի դիակս արագ հասցնել լավագույն, ամենամեծ դիարանը:

Ահա եւ սպիրտով բանկան՝ այրող, ինչպես Կոստրիցկայայի օծանելիքը: Թունավոր վաննայի մեջ, ապակե դամբարանում, պատմության մեջ՝ ի խրատ սերունդների,- հավերժորեն թաղում են ինձ՝ այլանդակիս, ամենալկտի այլանդակին աշխարհում:

Ու սկսեցի տնքալ այդ ժամանակ, նախ՝ կամացուկ, հետո ավելի բարձր, ատելի ու անխուսափելի մարդկային լեզվով: «Մայրի՛կ, մայրի՛կ, մայրի՛կ»,- տնքում էի՝ լացող երեխայի նմանակելով, հուսալով, որ կարեկցանք կգտնեմ լսողների մեջ: Ու երկու ժամ օգնության կանչելով՝ երդվեցի, որ եթե ողջ մնամ, մինչեւ վերջ կպահեմ գաղտնիքս ու թշնամիներին՝ բզկտման ու ծաղրի չեմ հանձնի վերջին պատառն իմ հայրենիքի՝ իմ սքանչելի մարմինը:

Մտավ Վերոնիկան: Զգալիորեն նիհարել էր, եւ սիրուց ու վիրավորան-

քից սրբված հայացքը վճիտ ու անտարբեր էր:

- Ջո՛ւր,- խռխռացի ես:

- Եթե հիվանդ եք,- ասաց Վերոնիկան,- պետք է հանվեք ու չափեք ջերմությունը: Ես բժիշկ կկանչեմ: Բանկա կգցի:

Բժի՛շկ: Բանկա՞: Հանվե՛լ: Միայն դա էր պակաս, որ ձեռք տա սենյակի աստիճանի սառը ճակատիս, ու շիկացած մատներով շոշափի գոյություն չունեցող երակազարկս: Սակայն, բարձս շտկելիս Վերոնիկան զգվանքով հետ քաշեց կեղծամիս դիպած ձեռքը: Ըստ երեւույթին, մարմինս նրա, ինչպես եւ այլ մարդկանց մեջ միայն զզվանք էր արթնացնում:

- Ջո՛ւր: Աստծու սիրուն, ջո՛ւր...

- Ծորակի՞ց, թե՞ եռացրած:

Վերջապես նա գնաց ու ջրամանով վերադարձավ: Եվ սրբելով փոշոտ բաժակն այն նույն մտախոհ դանդաղկոտությամբ, որը նրա կողմից վրեժխնդրություն կհամարեի, եթե չիմանայի, որ ոչինչ չգիտի, Վերոնիկան ասաց.

- Ես ախր իսկապես սիրում էի ձեզ, Անդրե՛յ Կազիմիրովիչ: Հիմա հասկանում եմ. դա սեր էր, ինչպես ձեզ բացատրեմ, կարեկցանքից... Կարեկցանք միայնակ, խեղված մարդու հանդեպ, կներեք անկեղծության համար: Բայց ձեզ այնքան էի խղճում... չնկատելով... մարմնական արատները... Դուք ինձ, Անդրե՛յ Կազիմիրովիչ, ամենագեղեցիկ մարդն էիք թվում աշխարհում... ամենա... մարդը: Ու երբ այդպես դաժան ծաղրեցիք... Ինքնասպան լինեի... Սիրում էի... անկեղծ ասեմ... արժանավոր մարդու... Նորից սիրեցի... Ու հիմա նույնիսկ երախտապարտ եմ... Սիրեցի... Մարդու... Մարդկային... Մարդկայնություն... ինչպես մարդը մարդուն...

Վերոնիկան լցրեց բաժակն ու հանկարծ դեմ արեց բերանիս: Դնովի ատամներս խփվում էին ապակուն, բայց չէի համարձակվում ներս ընդունել հեղուկը. ինձ պետք է ջրել, ծաղկի կամ խնձորենու պես, վերեւից, ոչ թե բերանով:

- Խմեք, խմեք,- պնդում էր Վերոնիկան:- Չէ որ ջուր էիք խնդրում...

Հետ մղեցի, առաջ ընկա ու զգալով, որ կործանվում եմ, վրա նստեցի: Ջուրը բերանիցս հոսում էր բազմոցին: Կարողացա մի քանի կաթիլ որսալ տակը պահած չոր ափիս մեջ:

- Տվեք ջրամանն ու հեռացեք,- հրամայեցի ամենայն հաստատակամությամբ, որին ընդունակ էի:- Հանգիստ թողեք ինձ: Ինքս կխմեմ:

Վերոնիկայի աչքերից երկար արցունքաշիթեր ցայտեցին:

- Ինչո՞ւ եք ինձ ատում,- հարցրեց նա:- Ես ձեզ ի՞նչ եմ արել: Ինքներդ

չընդունեցիք իմ սերը, հրաժարվեցիք կարեկցանքից... Դուք պարզապես չար եք, վատը, դուք շատ վատ մարդ եք, Անդրե՛յ Կազիմիրովիչ:

- Վերոնի՛կա: Եթե ձեր մեջ թեկուզ մի կաթիլ կարեկցանք է մնացել, հեռացե՛ք, խնդրում եմ, աղաչում եմ, հեռացեք, մենակ թողեք ինձ:

Նա կորացած դուրս եկավ: Այդ ժամանակ արձակեցի շապիկս ու ջրամանը տարա ծոցս՝ բերանը ցած:

4

Վազք ու իրարանցում է բնության մեջ: Բոլորը նյարդային են: Հապճեպ աճում են տերեւները: Կցկտուր երգում են ճնճղուկները: Երեխաները շտապում են քննության դպրոցներում ու տեխնիկումներում: Դայակների ձայները բակում ծղրտան են, հիստերիկ: Եվ օդը՝ հոտավետ: Ամենուր, մի քիչ, տարրալուծվել է Կոստրիցկայայի հոտը: Նույնիսկ պատուհանագոգի կակտուսներն առավոտյան լիմոն են բուրում: Չմոռանամ մեկնելուց առաջ կակտուսները նվիրեմ Վերոնիկային:

Վախենամ, որ վերջին հիվանդությունն ինձ տապալեց: Ոչ միայն մարմինս է կոտրել, այլեւ խեղել հոգիս: Երբեմն տարօրինակ ցանկություններ եմ ունենում: Մեկ սիրտս կինո է ուզում: Մեկ՝ շաշկի՝ Վերոնիկա Գրիգորեւնայի ամուսնու հետ: Ասում են՝ հրաշալի շաշկի ու շախմատ է խաղում:

Վերընթերցեցի գրառումներս ու դժգոհ մնացի: Ամեն դարձվածքում՝ օտար միջավայրի ազդեցություն: Ում է հարկավոր այս դատարկաբանությունը՝ տեղական բարբառով: Չմոռանամ վառել մեկնելուց առաջ: Չէ՞ որ չեմ պատրաստվում ցույց տալ մարդկանց: Իսկ մերոնք, մեկ է, չեն կարդա եւ իմ մասին ոչինչ չեն իմանա: Մերոնք այսպիսի հեռու, վայրի եզերքներ չեն էլ թռչում:

Ավելի ու ավելի դժվար եմ հիշում անցյալը: Սայրենի լեզվից միայն մի քանի բառ է պահպանվել: Նույնիսկ իմ պես մտածելուց եմ հետ վարժվել, ոչ միայն գրելուց ու կարդալուց: Ինչ-որ հրաշալի բան եմ հիշում, բայց՝ ինչ, ինքս էլ չգիտեմ:

Երբեմն թվում է, որ հայրենիքում երեխաներ ունեմ: Թմբլիկ կակտուսիկներ: Չմոռանամ տալ Վերոնիկային: Հիմա նրանք պետք է որ արդեն մեծ լինեն: Վասյան դպրոց է գնում: Ինչո՞ւ դպրոց: Արդեն մեծ է, պատկառելի: Ինժեներ է դառել: Իսկ Սաշան ամուսնացել է:

Տե՛ր Աստված: Տե՛ր Աստված: Ես կարծես մարդ եմ դառնում:

Ո՛չ: Դրա համար չեմ տառապել երեսուներկու տարի, դրա համար չեմ տանջվել ձմռանն առանց ջրի՝ կոշտ բազմոցի վրա: Ինչի՞ համար էր առող-

ջանալը, եթե ոչ մեկ նպատակի. հենց տաքերն ընկնեն, թաքնվել որեւէ մեկուսի վայրում եւ անաղմուկ մեռնել: Միայն այդպես կարելի է պահպանել ինչ դեռ մնացել է:

Ամեն ինչ պատրաստ է մեկնելուն. պլացկարտ տոմս մինչեւ Իրկուտսկ, ջրի բիդոն, բավական լուրջ գումար: Ձմեռվա համարյա ողջ թոշակը խնայգրքույկում է: Ոչ մուշտակի վրա եմ ծախսել, ոչ տրամվայ-տրոլեյբուսի: Այդ ամբողջ ընթացքում ոչ մի անգամ կինո չեմ գնացել:

Ու բնակարանի համար էլ արդեն երեք ամիս է՝ չեմ վճարում: Ընդամենը՝ 1657 ռուբլի:

Վաղը չէ մյուս օրը, երբ բոլորը քնեն, աննկատ դուրս կգամ տնից. տաքսի ու՝ կայարան: Իսկ այնտեղ՝ տո՛ւ-տո՛ւ, ու գտնող չի լինի: Անտառները, մոր մարմնի պես կանաչ անտառները կընդունեն ու կթաքցնեն ինձ:

Մի կերպ կհասնեմ: Նավակ կվարձեմ մի մասի համար: Մոտավորապես 350 կիլոմետր: Ու լրիվ՝ գետով: Ջուրը կողքիս է: Թեկուզ օրը երեք անգամ ցայվիր:

Փոս կար էնտեղ: Կգտնեմ: Ընկնելիս փոս ենք բացել: Փայտերով կպատեմ: Գիհին վառոդի պես է: Կնստեմ փոսում, կարձակեմ կապերս, փոկերս կարձակեմ ու կսպասեմ: Ու՝ ոչ մի մարդկային միտք, ոչ մի բառ օտար լեզվով:

Իսկ հենց սկսվեն սառնամանիքներն, ու հասկանամ, որ ժամանակը եկել է՝ մի լուցկու հատիկը բավական է: Ոչինչ չի մնա:

Բայց դրան դեռ երկար ժամանակ կա: Դեռ շատ տաք, շատ բարի գիշերներ կլինեն: Եվ ամառային երկնքում՝ շատ աստղեր: Նրանից ո՞րը՝ անհայտ է: Բոլորին կնայեմ, միասին ու հերթով, սեւեռված կնայեմ: Մեկը հաստատ իմն է:

- Օ՜Հայրենիք: ՓԽԵՆՑ: ԳՈԳՐԻ ՏՈՒԺԵՌՈՍԿԻՊ: Ես քեզ մոտ եմ գալիս: ԳՈԳՐԻ: ԳՈԳՐԻ: ԳՈԳՐԻ: ՏՈՒԺԵՌՈՍԿԻՊ: ՏՈՒԺԵՌՈՍԿԻՊ: ԲՈՆԺՈՒՐ: ԳՈՒՏԵՆԱԲԵՆԴ: ՏՈՒԺԵՌՈՍԿԻՊ:

ԲՈՒ-ԲՈՒ-ԲՈՒ:

ՄՅԱՈՒ-ՄՅԱՈՒ:

ՓԽԵՆՑ:

Վասիլի ԾՈՒԿԾԻՆ

ՊԱՐՈՂ ԾԻՎԱՆ

Թեյարանում կռիվ էր եղել:

Բանն այսպես էր պատահել. ատաղձագործները, յոթ հոգի, ավանս էին ստացել (գյուղի խանութը շինելու համար) ու գործից հետո գնացել էին թեյարան, ինչպես իրենք են ասում՝ նստելու: Յոթ շիշ պորտվեյն էին վերցրել (թեյարանում օղի չկար), վեց կոտլետ, երկու սեղան իրար էին բերել, նստել՝ կամաց-կամաց խմում ու կոտլետ էին ուտում: Երեք բաժակ քցել էին, խոսել, թե վաճառասեղանի հարցով իրանց համենայնդեպս ուզում են խաբեն: Բանն այն է, որ գին խոսալիս վերջնական չէին որոշել՝ վաճառասեղանը իրե՞նք են սարքելու, թե հյուսնի գործ է: Ճիշտը որ ասենք՝ պատվիրատուներն էին աչքաթող արել, ու ատաղձագործներն էլ բան չէին ասել (նրանց բրիգադիրն էդ հարցում ճարտար էր): Բայց հիմա պարզվել էր, որ խանութչիներն ուզում են, որ ատաղձագործները վաճառասեղանն էլ սարքեն, նրանք, պարզվում է, էդ նկատի են ունեցել ու ինքնին էլ հասկանալի էր եւ այլն: Բայց պայմանագրում էդպիսի կետ չկա, ու ատաղձագործները «սանձը կտրեցին», վաճառասեղանը մեր շինելիքը չի: Այսինքն,էդ էլ կարող են, իհարկե, բայց դրա փողը՝ առանձին:

- Ես դրանց տեղեկատուն ցույց կտամ,- ակնհայտ սպառնալիքով ասում էր բրիգադիրը, որ մի չորչորուկ, արեւից լրիվ սեւացած մարդ էր:- Ես դրանց աչքը կկոխեմ՝ սեւով սպիտակին գրած է՝ որ գործերն են ատաղձագործներինը, որը՝ հյուսնինը: Ախր լրիվ բոբիկ են էդ հարցերում:

Բոլորը համաձայն էին բրիգադիրի հետ: Ավելին, բոլորը զայրացած էին, իսկ ոմանք, օրինակ, Կոլկա Զաբալուեւը, նույնիսկ վիրավորվում ու տխուր, դառը թառանչում էին: Սոռացել էին իրենց մի ուրախ խոսակցություն, երբ էլի յոթով այս թեյատանը նստած էին...

Բայց դրա մասին՝ հետո: Հիմա ասում էին.

- Բա որ, ուրեմս, մտքներով անցներ, թե մի ձեւավոր սեղան պիտի սարքվի:

- Ուզածդ սեղան: Ախր էդ հատուկ աշխատանք է...

- Ինչ էլ ճարպիկ ժողովո՛ւրդ են: Էսպես որ գնա, կստիպեն պատուհան էլ կապենք:

- Հիմա մեր գործը էն է, որ հատակ գցենք, պնդացնենք, դռները կախենք ու վերջ, վերջակե՛տ:

- Ես քեզ էսպես կասեմ... Ինձ լսի: Լսի, ասում եմ:

- Հը, մի-մի հատ է՞լ:

- Վատ չի լինի:

Փող դրեցին, էլի յոթ շիշ վերցրին:

- Ես քեզ էսպես կասեմ... Ինձ լսի, լսի, ասում եմ:

- Հը՞: Հը՞: Հը՞:

- «Հը» չի, է՛, լսի՛: Դարյա Կուզովնիկովայի բաղնիքը ես եմ կապել:

- Ի՞նչ կապ ունի Դարյան: Դարյան մասնավոր անձ է, իսկ էստեղ՝ կազմակերպություն. համեմատեցի՛ր...

- Օրինակի համար եմ ասում: Դու ինձ լսի...

- Գլուխ տարար...

- Ցղե՛րք, հերիք լեզվին տաք,- գոռաց բուֆետապանուհին:- Թե չէ հիմա բոլորիդ դուրս կանեմ: Բա՛ց են ընկել:

- Դու ինձ լսի:

- Հը՛:

- Հը ու... Կնիկ չըլներ էստեղ, քեզ կասեի...

Մի խոսքով, զրույցը աշխույժ բնույթ առավ. խանութչիներին լա՛վ նախշեցին լկտիության ու ուխտադրժության համար:

Այստեղ թեյարան մտավ Արկաշա Կեբինը՝ Պարող Շիվա մականունով:

Վաղուց էին նրան այդպես կոչել, դեռ դպրոցում: Նա էլ պորտվեյն ու կոտլետ վերցրեց (կռվել էր կնոջ հետ եւ ի նշան բողոքի որոշել էր տանը չընթրել), նստեց ատաղձագործների հարեւան սեղանի մոտ, ականջ դրեց նրանց խոսակցությանը... Ու բարձր ասաց.

- Դատարկնե՛ր:

Ատաղձագործները լռեցին: Նայեցին Արկաշկային:

- Ափեղցփեղներ,- ավելացրեց Արկաշկան: Հենց դրա համար էլ Շիվա էր, որ ամեն տեղ խոթում էր քիթը:- Խարդախներ:

Ատաղձագործները սկզբում չհասկացան, որ դա իրենց է վերաբերում: Աներեւակայելի՛ է: Նույնիսկ Արկաշկայի լեզվով, բայց յոթ խմածի դեմ խոսե՞ս... Խելքը թռցրե՞լ է, ինչ է:

- Ձեզ եմ ասում, ձե՛զ- ասաց Արկաշկան:- Խեղճ ըլնեք դուք, խաբե՛լ են: Կխաբեն ձեզ, բա չէ՛: Ձեզ խաբողը հլա չի ծնվել: Ժուլիկնե՛ր:

Ատաղձագործներից մեկի՝ հաղթանդամ Վանկա Սելեզնյովի նույնիսկ բերանը բաց մնաց:

- Ստածում եք՝ ինչի եմ ժուլիկ ասո՞ւմ: Բացատրում եմ. ամիսուկես առաջ յոթ խարդախով էլի էստեղ նստած՝ ուրախանում էիք, որ պայմանագրի հարցում խանութչիների խելքը կերել եք. սեղանի մասին կետ չեք մտցրել: Հիմա նստել ու կոկորդիլոսի արցունք եք թափում, թե ձեզ խաբել են: Չէ՛, դուք եք խաբել:

- Հա՞,- հարցրեց բրիգադիրը: Եվ այդ «հա»-ն շփոթվածություն էր, ոչ թե սպառնալիք: Անօգությո՛ւն:

- Հա՛, հա՛,- Արկաշկան պատառաքաղի կողով մի կտոր կոտլետ ճզմեց, բռնեց, թաթախեց սոուսի մեջ ու գցեց բերանը. ամեն ինչ շատ կոկիկ, քաղաքավարի, նույնիսկ ճկույթն էր կողքի ցցել: Հետո (այդպես կինոներում պարոն ու մեծամիտ չինովնիկ պատկերող դերասաններն են անում) - չծամելով՝ շարունակեց խոսել:- Սեփական ականջներով եմ լսել, դրա համար էլ էրեխի զարմանք մի նկարեք երեսներիդ, դառը ճշմարտությունը լսելու տղամարդկություն ունեցեք: Ենթադրենք իմ համար մեկ է, բայց որտեղ է ճշմարտությունը, ընկերնե՛ր,- Արկաշկան վայելում էր, ըմբոշխնում, ասես հուլիսի շոգին մինչեւ կոկորդը թաղված լիներ սառը ջրի մեջ ու նվաղում էր՝ ոտքերի մատները թույլ շարժելով: Մեծ ուժ է ճշմարտությունը. եթե գիտես, կարելի է հանգիստ լինել: Արկաշկան հանգիստ էր: Նա դատում էր խարդախներին:- Ամոթ է, ընկերնե՛ր: Ու գլխավորը՝ հենց իրանք էլ նստել, բարկանո՛ւմ են: Լա՛վ, որոշել եք խանութչիներին խաբեք, բա էսպես նստել ու փսլինք շաղ տա՞լը ինչիս է, թե՝ ձեզ ուզում են խաբե՛ն,- Արկաշկան անկեղծորեն հետարքրված էր, ուզում էր հասկանալ:- Ախր հենց էստեղ հռհռում էիք...,- բայց այստեղ Արկաշկան տեսավ, որ Վանկա Սելեզնյովը դեմքին բոլորովին էլ մանկական զարմանք չի ցուցադրում, այլ ձեռքը տանում է շշին: Արկաշկան վեր թռավ, որովհետեւ լավ գիտեր էդ դանդալոշին. հաստատ կխփի:

- Վա՛նկա... Տեղը դիր շիշը, դի՛ր, Վանյո՛ւշա: Ախր ձեռ էի առնում: Ասեք՝ շիշը ցած դնի:

Ատաղձագործները վերգտան խոսելու ունակությունը:

- Էդ ինչի՞ իրար անցար, Ճի՛վա: Վա՛նկա, ցած դիր շիշը: Արի մեր մոտ, Արկա՛շկա:

- Իսկապես, ինչի՞ ես էդտեղ մենակ նստել: Արի մեր մոտ:

- Թող շիշը դնի:

- Դրել է: Դի՛ր, Իվա՛ն: Արի՛, Արկա՛շկա:

Արկաշկան իր կիսատ շիշը վերցնելով՝ տեղափոխվեց ատաղձագործների մոտ եւ այն է ուզում էր բաժակը լցնել, եւ արդեն ցցել էր ճկույթը, երբ

Վանկան սեղանի վրայով մեկնեց իր հզոր չանչոտ թաթն ու բռնեց Արկաշկայի օձիքը:

- Հա՛, Շի՛վա... Վախ ես չափում, հա՞: Հիմա պար կածեմ քեզ: Պարի՛:

Արկաշկան մի քիչ կռիվ տվեց ձեռքի հետ, բայց ձեռքը... դա ձեռք չէր, կեչու ոստ էր՝ մատներով:

- Թո՛ղ...,- դժվարությամբ ասաց Արկաշկան:

- Պարի՛:

- Բաց թող, խելա՛ռ...

- Կպարե՞ս:

Այստեղ ատաղձագործները դրսեկ բրիգադիրին սկսեցին պատմել, թե ո՛նց է պարում Արկաշկան: Ինչե՛ր է անում ոտերով... Ձեռներո՛վ: Մեկ էլ տեսար՝ ինքը անշարժ, իսկ գլուխը պարում է...

- Գլո՞ւխը:

- Գլուխը: Ինքը անշարժ է, իսկ գլուխը ո՛նց է գնում-գալիս:

Իսկ Վանկան դեռ պինդ պահում էր Արկաշկայի օձիքը, գոհ, որ գլխի է գցել ընկերներին:

- Պարելու ե՞ս:

Հրեշավոր մատներն ավելի ամուր սեղմվեցին:

- Հա՛... Բա՛ց թող:

Վանկան բաց թողեց:

- Սողո՛ւն: Մենակ ուժիդ ես տալիս,- Արկաշկան տրորեց վիզը:- Ազատություն ես տվել ձեռներիդ... մարդավարի խնդրի՝ կպարեմ, անպայման պիտի ձեռների՛դ անես:

- Մի նեղանա, Արկա՛շկա: Այ էս մարդու համար պարի. չի տեսել: Վանկան էլ չի՛ անի:

- Պարի, ախպոր պես:

Արկաշկային լցրին իրենց շշերից:

- Վանկան էլ չի՛ անի: Չես անի, չէ՞, Իվա՛ն:

- Թող պարի:

Արկաշկան քամեց բաժակը:

- Տավարի ցա՛վ,- դողացող ձայնով ասաց նա:- Հլա ձեռներին էլ ազատություն է տալիս... Բոլորիդ համար կպարեմ, իսկ դու շրջվի:

Վանկան այն է նորից վրա էր գալու Արկաշկային, բայց չթողեցին:

- Պարի, Արկա՛շկա: Վա՛նկա, շրջվի՛,- աչքով արեցին Վանկային:- Շրջվի, ո՞ւմ ենք ասում: Իսկականից, ի՞նչ ես ձեռներիդ անում:

- Սրա՛ն տեսեք...,- Արկաշկան շիտակ ու չար նայեց Վանկային:- Դան-

դալոշ: Ուղեղում՝ իրեք գալար, ու իրար էլ չեն հանդիպում:

- Լա՛վ, Արկա՛շկա, պարի՛:

- Ծրջվի՛,- Վանկայի վրա գոռաց Արկաշկան:

Վանկան ձեւացրեց, թե շրջվել է:

Արկաշկան ուշադիր, համարյա հանդիսավոր նայեց բոլորին, վեր կացավ...

Տեսնելու բան է, թե ինչպես է պարում Ծիվան:

Դա պար չէ, որտեղ բութ ու անհոգ հների ցատկռտուքից ու սեռական պարծենկոտությունից ժառանգած զուտ մարմնական հաճույքն է կենում. Արկաշկայի պարը մեր գործնական դարում ազատ գոյության ազատ ձեւ է: Միայն այդպես, թույլ Արկաշկան այլ կերպ չէր կարող:

- Ոնց է Վանկա Սելեզնյովը քամակով մեխ քաշում,- հայտարարեց Արկաշկան:

Դա պարի անունն էր. Արկաշկան թույլ տվեց.

- Վա՛նկա, նայի՛: Կարելի է նայել,- ու սկսեց:

Նշան արեց երեւակայական երաժիշտներին, թեթեւ հպանցիկ շարժումով ծիսական ցատկ արեց... ու դոփեց-փորձեց հատակը. հուսալի՛ է: Գեղեցիկ, կեռումեռ պարաշարժում արեց, էլի՛, էլի՛. ցույց էր տալիս, որ բոլորի նման պարել ինքն էլ գիտի: Բայց ուրիշ կերպ էլ գիտեր: Նայեց Վանկային... Ծամածռություն արեց՝ ի ցույց հետաքրքրված դանդալոշի... Հետո ձգվեց, քնատ չմփացրեց շրթունքները. Վանյան արթնացավ առավոտյան:

Ատաղձագործները ծիծաղեցին:

Արկաշկան կաղին տվեց դեպի պատը, խոնթխոնթաց, խոնթխոնթաց, ափով շտկեց փռչերը. Վանկան լվացվում էր: Հետո Վանկան սկսեց ուտել՝ ագահ, շատ, այլանդակ... Կտրվեց սեղանից, սկսեց զկռտալ...

Ատաղձագործները նորից ծիծաղեցին:

- Սրիկա՛,- շշնջաց լրջացած Վանկան:

Հետո Արկաշկան ցատկռտեց այծի պես ու բարդ պարաշարժում արեց. առավոտն ավարտվեց: Եվ ահա Վանկան գործի է: Մեկ խփեց մեխին, նայեց վեր, քորվեց... Նույնիսկ ոջիլ գտավ շապիկի տակ, սպանեց:

- Տակա՛նք,- ասաց Վանկան:- Իրա օրում ոջիլ չեմ ունեցել: Նույնիսկ պատերազմի ժամանակ...

- Կամա՛ց,- խնդրեցին նրան:

- Բա ի՞նչ է հնարում:

- Կամա՛ց:

Հետո Վանկան մեխը ծուռ խփեց, երկար ժամանակ աքցան էր փնտ-

րում, էդպիսի աշխատողն, իհարկե, աքցան չի ունենա: Ու չգտնելով՝ նստեց մեխի վրա, այնպես լարվեց, որ դեմքը ծամածռվեց...

Ատաղձագործները քրքջում էին:

Վանկան ուզում էր վեր կենալ, չթողեցին:

Արկաշկան տառապում էր հատակին...

Ահա Վանկան շարժեց մեխը, թափով վեր կացավ... Վերցրեց մեխն ու ուղիղ խփեց:

Ատաղձագործները փռվել էին սեղանին, մնչում էին, սրբում արցունքները: Եվ ինչքան մարդ կար թեյարանում, հռհռում էին, նունիսկ խիստ վաճառողուհին: Միայն երկու հոգի չէին ծիծաղում՝ Արկաշկան ու Վանկան: Վանկան կատաղի նայում էր արտիստին. գիտեր՝ հիմա կես տարի հիշելու են, թե Վանկան ոնց էր «մեխ քաշում»:Գիտեր նաեւ, որ չեն թողի ծեծի Արկաշկային:

Ավարտին Արկաշկան նորից գեղեցիկ շրջան արեց, մանրապար դոփեց հատակն ու նստեց ատաղձագործների մոտ: Թփթփացնում էին մեջքին, մի բաժակ գինի լցրեցին... Արկաշկան գոհ էր, նայում էր Վանկային: Աչքով արեց: Ու չգիտես ինչու հենց այդ՝ որ Արկաշկան աչքով արեց, պայթեցրեց Վանկային: Նորից բռնեց նրա օձիքը ձախ ձեռքով, իսկ աջով ուզում էր բամփել, թափ առավ, բայց ձեռքը բռնեցին: Վանկան հարձակվեց ընկերների վրա:

- Էդ շունը տեսել է՞ ոնց եմ աշխատում: Քննադատո՛ւմ է... Տեսել է՞:

- Ինչ է, կատակ չե՞ս հասկանում: Հանգստացի՛:

-Ձեր համար հանաք է, իսկ իմ աչքն են կոխելու: Թո՛ղ...

Վանկան սանձը կտրել էր: Ծպրտեց մեկին, մյուսին... Բոլորը վեր թռան:

Արկաշկան, համենայնդեպս, փախավ դռան մոտ:

- Ծիծաղատե՛ղ է անում,- գոռում էր Վանկան ու էլի մեկին էնպես հասցրեց, որ ատաղձագործը թռավ դեպի պատը:

Արկաշկան պսպղացող աչերով նայում էր այդ ամենին:

- Տո՛ւր դրանց, Վա՛նկա: Տո՛ւր...,- ճչում էր նա: Նրան չէին լսում:

Վանկան մռնչում ու շուռումուռ էր գալիս, նրան հաղթահարել չէին կարողանում: Թափվում էին աթոռները, սեղանները, ափսեները, շշերը...

- Միլիցիա՛ կանչեք,- գոռում էր բուֆետպանուհին:- Ախր էստեղ ամեն ինչ ջարդուխուրդ կանեն...

- Պետք չի՛,- բղավեց Արկաշկան:- Միլիցիա պետք չի՛:

- Հա՛,- հանկարծ ասաց եկվոր բրիգադիրը:- Հանգիստ, տղե՛րք... ես կչոքացնեմ էդ ցլիկին:

Բրիգադիրին լսեցին:

- Ո՞վ, դո՞ւ,- զարմացավ Վանկան:- Դո՞ւ:

- Հետ քաշվեք, տղե՛րք, հետ քաշվեք... Հիմա դրան կդնեմ,- բրիգադիրը մոտենում էր Վանկային: Վանկան պատրաստվեց:

- Արի՛, լե՛շ... Արի՛:

- Գալիս եմ, Վա՛նյա, գալիս եմ:

- Արի՛, արի՛:

- Գալիս եմ,- բրիգադիրը դանդաղ, հանգիստ գնում էր Վանկայի վրա: Ոչ ոք չէր հասկանում՝ հիմա ինչ է լինելու:

- Բաքսյոր ես, հա՞: Ես քեզ ռուսավարի կտրորեմ...

- Ես քեզ ինչ բաքսյոր,- բրիգադիրը կանգ առավ Վանկայի առաջ:- Ի՞նչ ես ասում...

- Հը՞,- հարցրեց Վանկան:

- Էս մեկ,- բրիգադիրը հանկարծ բռունցքով կտրուկ խփեց Վանկայի փորին:

Վանկան ախ արեց ու բռնեց փորը, կռացավ: Իսկ երբ կռացավ, բրիգադիրը ծալած ծնկով ներքեւից արագ, ուժեղ հասցրեց ծնոտին:- Երկո՛ւ:

Վանկան ցավից փակեց աչքերը... Ընկավ, կծկվեց: Բերանից ներքեւի շրթունքի վրայով բարակ ծորաց արյունը... Ծնոտից կաթում էր Վանկայի մաքուր լվացած վերնաշապիկին: Բրիգադիրի նողկալի արվեստն ապշեցրեց բոլորին. գյուղում այդպես չէին կռվում: Ավելի վատ էին կռվում, սարսափելի, բայց այդպես ստոր՝ ո՛չ:

Արկաշկան վերցրեց վիեննական աթոռը, մոտեցավ բիգադիրին ու գոռաց.

- Հիմա նենց կտամ գլխիդ: Սողո՛ւն:

- Կորե՛ք գրողի ծոցը: Բոլո՛րդ: Կորե՛ք,- բուֆետապանուհին, դադարից օգտվելով, դուրս վազեց վաճառասեղանի ետեւից ու դուրս հրեց ատաղձագործներին:- Դուրս կորեք, գրողի ծոցը: Դո՛ւրս, էնտեղ էլ կռվեք:

Ատաղձագործներից մեկը Արկաշկայից վերցրեց աթոռը, դրեց տեղը, իսկ բրիգադիրին ասաց.

- Գնացինք, էստեղ աղմուկ է:

Արկաշկան կռացավ Իվանի վրա, սրբեց ծնոտի արյունը:

- Ըմ՛մ՛,- տնքաց Վանկան:

- Բան չկա, Իվա՛ն... հիմա ցույց կտան դրան: Ցավում է՞:

Վանկան մատը տարավ ծնոտին, շարժեց, թքեց կպչուն արնաջուրը: Նստեց:

- Ամամներս...
- Հը՞:
- Ամամներս...
- Ատամներդ է թափե՞լ: Ա՛յ քեզ սողուն: Հիմա էնտեղ ջարդը կտան: Տղերքը հետը գնացին... Կարա՞ս վեր կենաս:
Վանկան դժվարությամբ վեր կացավ, նստեց աթոռին:
- Գինի բերե՞մ:
- Ըմմ՛,- գլխով արեց Վանկան,- բեր:
Արկաշկան մոտեցավ վաճառասեղանին:
- Շատ է՞ վնասել,- գինի լցնելով՝ հարցրեց բուֆետապանուհին:
- Բան չկա, հիմա իրան էլ կվնասեն:
- Բայց լրիվ դու արեցիր... Սատանի՛ Շիվա: Քո պատճառով կռիվ է ընկնում:
- Սո՛ւս,- խորհուրդ տվեց Արկաշկան:- Հրեն շոկոլադը, ծամի ու սո՛ւս:
- Հենց Շիվա ես որ կաս: Դուրս կորեք էստեղից: Որ էլ երեսներդ չտեսնեմ...
Արկաշկան վերցրեց գինին ու գնաց Իվանի մոտ:
- Ա՛ռ, խմի՛:
- Ի՞նչ է ուզում,- հարցրեց Իվանը:
- Կռիվ է անում: Ուշադրություն մի դարձրու: Խմի՝ կթեթեւանաս:

Յուրի ՄԱՍԼԵԵՎ

ՈՏՔԸ

Սավելին վազում էր խավար նրբանցքով: Շենքերի վիթխարի կույտերը կենդանի-մեռյալ ու սպառնալի էին թվում: Ասես երբեք գոյություն չէին էլ ունեցել: «Ինչո՞ւ, ինչո՞ւ եմ այսպես սիրում ոտքս,- անձայն ոռնում էր նա:- Այ վազո՛ւմ եմ... վազո՛ւմ եմ... Իսկ հետո՞ ինչ... Օ՛, ո՛տքս, ո՛տքս: Ավելի լավ է կանգնեմ, մտնեմ այս անկյունն ու համբուրեմ նրան... Այն տեղը, որ երազիս էր եկել... Նուրբ, դողդոջուն...»:

Բայց շարունակում էր վազել: Եվ աչքերն անշարժ էին, ասես երկնքից էին թափվել: «Բռնեմ ու խմեմ արյունս,- առկայծեց մտքում:- Արդեն չեմ դիմանում իմ գոյությանը... Բայց ի՞նչ է սա: Իսկ ո՞տքս, ո՞տքս»:

Նա կանգ առավ: Վերջապես ընդառաջ ելավ մի անցորդ: «Օ՛, ինչպես եմ ուզում ամեն ինչ գետնի տակն անցնի, ամեն ինչ, ամեն ինչ: Ե՛վ այս անիծված շենքերը, եւ՛ այս մարդիկ: Ու ես ոտքիս հետ մնալով՝ անցնեմ մի ուրիշ... Ուրի՛շ... Ուրի՛շ... Օ՛, ինչպես եմ ուզում տեսնեմ նրան: Բայց ո՞ւր է ոտքս: Ո՞ւր է»:

Նա ջղաձիգ դիպավ ոտքին. կարծես տեղում է: Շուրջը նայեց: Կռտած խոզի նման, բայց ակնոցով հաստաբեստ մի մարդ ուշադիր սեւեռվել էր նրա մազերին: Մի կատու հայտնվեց-անցավ, տարօրինակ կերպով նման էր հարեւանուհուն՝ Աննա Նիկոլաեւնային:

«Չէ, սա դեռ վերջը չի,- գոչեց Սավելին:- Մենք դեռ կպայքարե՛նք: Մենք դեռ կհամբուրե՛նք»: Ու քաշվեց անկյունը, որ արդեն երեք ամիս տեսնում էր երազում: Այնտեղ, հրաշալի, ուղղահայաց երկինք հառնող կենդանի խավարում Սավելին մերկացրեց աջ ոտքը, որ սիրում էր: Սիրում էր Աստծուց ավելի, իրենից ավելի: Ու հպվե՛ց...

...Կամացուկ տնքոց տարածվեց մի քանի րոպե անց: Արյունը դանդաղ, թեթեւ շիթով հոսեց ոտքից. բայց դա մեղրից քաղցր էր, ծնունդից ու մայրական փաղաքշանքից նուրբ: Սավելիի աչքերը մթնեցին: Շրթունքները լպստում էին արյունը, ճերմակ ատլասե մաշկը... Ողջ մարմինն ասես պատրաստ էր սեղմվել ոտքին, հոսել նրա մեջ... Իսկ գիտակցության մեջ չտեսնված անուրջներ էին լողում... Օ՛, մի՞թե խնդիրը միայն հաճույքն է: Խնդիրը դրան հաջորդող եզերքներն են, խնդիրն այն է, որ սիրում է իր ոտքը...

Թիկունքից հիստերիկ քրքիջ լսվեց: Մի անգամ չէ, որ այդպես էր եղել, երբ շրթունքները հպել էր ոտքին. հանկարծ ամենավերջում մի կերպարանք էր հայտնվում: Այս անգամ ալեւոր ծերուկ էր՝ հարբեցողի քթով, ոտից գլուխ փաթաթված ծածկոցի մեջ, չնայած դրսում դեռ տաք էր: Աչքերն ապակիացել էին, բայց Սավելիին նախանձելուց չէր քրքջում. կողքին մի մկնիկ էր նստած, ու ծերունին խելքամաղ էր լինում նրան նայելով: Ասես վազվզում էր տեղում՝ անդենական մեզով լցված: «Շուտով պիտի հայտնվի լուսինը»,- մտածեց Սավելին: Զգույշ, համարյա չորեքթաթ դուրս սողաց դարպասատակից: Որ ոտքը չվնասի՝ սիրաբար քարշ տալիս ու շոյում էր՝ ինչ-որ բան մրմնջալով:

Սերն առ ոտքը զբաղեցնում էր Սավելիի համարյա ողջ ժամանակը: Ոտքին մետաքս էր հագցնում, խնամում քսուքներով, օծանելիքով, չնայած մարմնի մնացած մասը անասելի կեղտոտ էր: Փոխարենը՝ ոտքը երանության մեջ էր կնոջ պես: Դժվար թե Մարիա Անտուանետան, երբ գլուխը կտրում էին, այդպիսի գուրգուրված ոտք ունենար: Սավելին ամենաշատը վախենում էր նրան չասենք թե ցավ (ցավի մասին մտքից սարսափած քարանում էր), այլ թեկուզ փոքրագույն տհաճություն պատճառելուց: Շատ դժվար էր առավոտները վեր կենալը... Սավելին երկար ու ինքնամոռաց շոյում ու սիրում էր ոտքը՝ նայելով նրան ինչպես հայելու մեջ, որ մեղմի առաջին կոպիտ հպումը գետնին:

Այդպիսի ամեն հպում սրտում տառապագին, համարյա միստիկական ցավով էր արձագանքում, բայց, համենայնդեպս, ժամանակի ընթացքում սովորեց ցավը հաճույք դարձնել: Ոտքի համար խելահեղ վախը նրան ստիպում էր կանգ առնել փողոցում, մարդկանց ու մեքենաների արանքում, բոլորից մի անկյուն փախչել, կարեկցանքով բռնված՝ համբուրել ու շոյել նրան: Նույնիսկ նստել չէր կարողանում առանց սիրելիի համար դող ու արցունքի: Ծովափնյա հովիկը, եթե չափազանց արագ էր, նրան ստիպում էր կնճռոտվել ու ոտքը թաքցնել մի խաղաղ անկյունում: Միայն թե տառապանք չկրի նա, ում սիրում ես:

...Վերջապես Սավելին դուրս սողաց դարպասատակից: Չտեսնված չինական մետաքսի լայն, գեղեցիկ եւ օծանելիք բուրող կտորը քարշ էր գալիս ցեխի միջով, ու մի կերպ էր մնում ոտքի վրա: Լուսինն արդեն լողում էր բարձունքում, ամպերի միջեւ: Սավելին երկինք հառեց մեռյալ կապույտ աչքերը: Դրանք արդեն խաղաղ էին, ինչպես հռոմեացիների աչքերը մահից հետո: Հանկարծ շուրջը սկսեցին մարդիկ հայտնվել: Տարատեսակ մարդիկ, ու նրանց մազերը նման էին գլխանոցների: Պարզապես անցորդ-

ներ էին: Ու Սավելին շտապեց հեռու: «Միաչքանիներն ինչո՞ւ են այսքան շատ»,- մտածեց նա: Բայց մի առավել արտասովոր պառավ կպավ պոչից: Բարձրահասակ, բայց կորացած, համարյա չերեւացող մանր աչքերով՝ նա, կարծես, հրապուրվել էր քղանցքի պես Սավելիի ոտքի ետեւից քարշ եկող մետաքսով: Սավելին ուշացումով նկատեց նրան. պառավն արդեն մի քանի քայլի վրա էր ու ճանկի պես մետաքսին էր պարզել երկար, կռկված ձեռքը: Սավելին պոկվեց ու փախավ: Արա՛գ, արա՛գ, կինճի պես, միայն մետաքսն էր հեշտասեր օձի նման հետեւում ոտքին՝ ասես ատամները ծրած նրա մեջ: Սավելին երբեմն կանգ էր առնում ու քրքջում: Պառավը, մի տեսակ մեքենայաբար ու անհույս, շտապում էր ետեւից՝ առանձնապես հետ չմնալով: Սավելին ծանր էր շնչում: Քրտինքը հոսում էր կապույտ աչքերին, փափկասուն ոտքին հենված տարօրինակ ռազմիկի նրա կերպարանքը խամրում էր կենդանի մարդկանց մսեղիքի ու խրտվիլակների մեջ: Պառավը նրա հետեւից թափահարում էր թաշկինակը, ինչ-որ բառեր էր շմշմացնում՝ ըստ երեւույթին առաջարկ անելով: Անտարբեր տրոլեյբուսները լողում էին կողքով:

Վերջապես Սավելին իրեն գցեց երկու շենքերի արանքն ու ասես անտեսանելի դարձավ շրջապատողների համար: Մի անգամ չէ, որ դիմել էր այդ միջոցին ու գիտեր՝ որոշ ժամանակ իրեն ոչ ոք չի տեսնի: Նույնիսկ եթե համառորեն յուրաքանչյուրին պարզի ձեռքը: Ցանկացած առաջարկի աղաղակով էին պատասխանում:

«Այստեղից գնալու ժամանակն է,- մտածում էր կիսատեսանելի Սավելին:- Բայց ո՛տքս... Նորից դնեմ մայթի՞ն...Ինչո՛ւ»:

Վերջին ժամանակները նրա սիրավեպը սկսել էր մոտենալ ինչ-որ զարհուրելի հանգուցալուծման: Բայց դրա տակ ինչ էր թաքնված՝ չգիտեր: Մոտեցավ կրպակին՝ գարեջուր խմելու, եւ ասես կենաց ջուր հոսեց ոտքի մեջ: Ճանապարհին մի թղթի պատառ տեսավ. արագ կարդաց. «Մարդկային բարին մեռել է. բարին անճանաչելի է մարդուն, ուստի՝ անհասանելի: Սատանան հիմա ավելի հասկանալի է մարդուն, քան Աստված՝ Իր բոլոր խորքերում»:

Սավելին ավելի արագ վազեց. այդպես վազելիս ասես թռչում էր՝ գետինը չզգալով, միայն ոտքն էր զգում՝ իր թագուհուն: «Բայց ո՞ւր է թագը, ո՞ւր է թագը»,- երբեմն տենդագին մտածում էր նա: Մերթընդմերթ հողն էր թագ թվում: Բայց հիմա պարտավոր էր, հիմա պիտի լուծեր իր հանելուկը: Ահա եւ տունը, որտեղ ապրում է: Ինչ հաճա՛խ էր պատկերացնում ոտքը: Գիտակցության մեջ ոտքը լողում էր հրե գնդի պես, բայց գնդի ներսում բույն

էր դրել կյանքը, որին նա իր հոսքն էր ուղղում: Բայց իրե՞նն է կյանքը: Ամեն ինչ այնպես սարսափելի էր, առեղծվածային. գուցե ոտքը եւ՛ իրենն է, եւ՛ իրենը չէ.կանչում էր գուրգուրված, հավերժական խավարից ելած հեշտանքի պես, ու ներսում առեղծվածն էր, որ անհնար է լուծել:

- Որդի՛ս: Որդի՛ս,- գոչում էր նա իր խրախճանքների ժամանակ:- Իմ ոտքն իմ եսն է եւ իմ որդին,- իր կյանքը ոտքի մեջ տեղափոխելուց կարկամում էր Սավելին: Մերկ ոտքը, պատատված նուրբ վարդերով, թալկանում էր նրա գիտակցության մեջ:Երբեմն էլ փշե պսակով էր: Հետո ամեն ինչ անհետանում էր, ու նորից սկսվում էր հավերժական խավարից ելած հեշտանքի ծղրտոցը: Ոտքը անուշ գալարվում էր ճերմակ արարածի պես, որ անմարդկային մարմնով մեկ լեցված ոգի է կրում... Սավելին սարսափած վեր էր թռչում անկողնուց ու վազում դուրս, ձեղնահարկ, աղբանոց, գոռում էր. «Մոլորակն Արեւ է դարձել»: Ողջ մարմինը թափուր էր, ասես լուսինն էր այնտեղ գետեղվել: Առնետները,նրա տեսքից սարսափած, կոտորվում էին:

Բայց հիմա այդ ամենն անցյալում էր, անցյալո՛ւմ: Նա գնում էր դեպի հանգուցալուծումը: Սավելին վազեց-մտավ իր շքամուտքը: «Պետք չէ՛, պետք չէ՛ սպանել նրան»,- ճչում էր մեկը անկյունում՝ աղոտ, ինքնամփոփ աչքերը հառած Սավելիի ստվերին: Քիչ այն կողմ սրտաճմլիկ երգում էր ջարդված գանգով մի նիհարիկ աղջնակ: Արյունը թափվում էր կիսաբաց բերանը...

Սավելին մի քանի ցատկ արեց սանդուղքով վեր: Ներքուստ ակնթարթորեն սառչում էր, երբ սիրելի ոտքի թաթը դիպչում էր մեռյալ գետնին: Հանկարծ բացվեց բնակարաններից մեկի դուռը, ու չնայած ոչ ոք չէր երեւում՝ ծիծաղը ներկայություն էր մատնում: Սավելին բռունցքով սպառնաց այդ բաց դռանը:

Ստիպված էր վազքով կտրել երկար, դեւերի լքած միջանցքները: Քղանցքը մնաց հատակին: «Ինչո՞ւ միայն մեռյալներ ու խելագարներ են շուրջս»,- մտածեց նա ու սխալվեց: Միջանցքի ողջ ճանապարհին միայն մի մարդ տեսավ՝ Պանտելեյին, մռայլ-ճղճղան մի տղամարդու, որ սեռական կապի մեջ էր կենտրոնական ջեռուցման հետ: Թվում էր՝ նրա սեռական անդամը գոլորշի է արձակում, իսկ ատամները պողպատից են, գայլի ատամների պես:

Պանտելեյին սիրտ տալով՝ Սավելին նետվեց առաջ ու շուտով իր սենյակի քրքրված դռան մոտ էր: Մտավ: Հետո մի կես ժամի չափ ներսում վազվզելով՝ ուժասպառ նստեց մահճակալին: Լուսինը կույր, դեղին աչքի պես ներս էր նայում պատուհանից: Ձայներ էին լսվում. «Ոնց է աճում

գլուխս... Պետք չէ՛... Պետք չէ՛... Փախչենք, հա՛յր իմ... Բայց ո՞ւր: Ո՞ւր... Տվեք իմ դիմակը, տվեք իմ դիմակը, գազանե՛ր... Շատ ցուրտ է, երբ գուշակում ես... Հմայություն մի արա քարերով ու քարը մի ընտրիր քեզ խոստովանահայր, թշվառակա՛ն... Ինչ սարսափելի՛ է, սարսափելի՛ է»:

Բայց Սավելին արդեն վարժվել էր այդ ձայներին, նույնիսկ կապույտ աչքերը չէին մթնում: Ամեն, ամեն ինչ անցյալում էր: Եվ ամեն ինչ փոխվել էր: Ինչ հաճախ էր նա քնքշորեն նայում իր ոտքին: Ինչ քնքուշ էր նա արեւի տակ, հայելիների փայլի մեջ: Օ՛ պատանություն, օ՛ անցյալ: Բայց ժամանակն է, հրաժեշտ տալու ժամանակն է:

- Ես նրան տեսնելու ուժ չունեմ այլեւս,- հանկարծ ծնկի գալով՝ ոռնաց Սավելին:

Ու լողացող հայացքն անկասելի ընկավ մի կողմ պարզված աջ ոտքին: Քրքջալով ձեռք տվեց: Հպումներ էին, հետո՝ հեռավոր ու ցուրտ թռիչքը հոգում: «Ինձ հե՞տ է, արդյոք, իմ Լիլիթը»,- մտածեց նա: Ու հանկարծ աչքերից արցունքներ հոսեցին, սառը, խոշոր, ասես ոչ թե արցունքներ էին, այլ շրջոնքված հոգու թանձրուկ: Թիկունքում արդեն քրքջում ու ցնցվում էր ինչ-որ արարած: Սակայն ոտքի մաշկի ճերմակությունն առաջվա պես խելքամաղ էր անում: «Ինչի՞ համար են այսքան զուգահեռները,- առկայծեց մտքում:- Բայց պետք է մարե՞լ, մարե՞լ»: Խելագար, անդենական ցնծությունը բաբախում էր կրծքի տակ. աչքերը դուրս էին պրծնում ուղեծրերից՝ ասես նոր հաղթահարված խելահեղությանն ընդառաջ: «Ահա աշխարհը: Նոր աշխարհը՝ խելագարության պատիճում: Արի՛: Արի՛»,- գոչեց նա՝ սենյակի կենտրոնում կիսապառկած, վեր պարզելով ձեռքերը:

- Այո՛, այո՛, ուզում եմ տեսնել Նրան ուրիշ ձեւի մեջ,-մրմնջաց նա:- Ի վերջո, ուզում եմ փոխել իրավիճակը... Տեղից շարժել մեր հարաբերությունների կետերը:

Վեր կացավ: Անկյունում, հավերժական իրերի քաոսի մեջ փոշեպատ հեռախոսն էր: Մոտեցավ. ոտքը,թմրածի պես, չէր զգացվում:

- Վասի՛լի, Վասի՛լի,- ճչաց խոսափողի մեջ:- Լսո՞ւմ ես:

Մի մռայլ, ըստ երեւույթին մոռացված արարած անընդհատ հաստատում ու հաստատում էր.

- Այո՛, այո՛... ամեն ինչ կլինի... կլինի՛:

Սավելին նայեց ժամացույցին. սլաքները սողում էին դեպի գիշերվա մեկը:

- Ժամանակն է, ժամանակն է,- սթափվեց նա ու թեթեւաքայլ դուրս վազեց: «Այլեւս ոչ ոք չի դիպչի իմ ոտքին»,- ճանապահին մտածում էր Սավե-

լին:- Չի լինի, չի լինի այդ միատեղումը... այդ գաղտնիքը՝ իմ մեջ... Այնտեղ կլինի, այնտեղ... երկնքում:

Սեւ ու մադկանցից լքված հրապարակ: Մեքենաների հազվագյուտ լույսեր: Տեսանելիներից՝ ոչ ոք: Միայն չարքերն են խղճալի վայում: Հանկարծ հայտնվում է ծեր, զնգզնգացող տրամվայը: Երկու վագոն՝ ամայացած աշխարհում... Ու Սավելին նետվում է առաջ՝ աջ ոտքը պարզելով... Գիշերվա ժամը մեկն է... «Շտապ օգնության» շչակներ... Վասիլիի՝ բժշկի սեւակնած մռութը... Չարքերի տաղտկալի վայոցը:

Ամեն ինչ կատարվեց, ինչպես պայմանավորվել էին: Հիվանդանոցից դուրս գրվելիս ընդարձակ, սպիտակ սավանով փաթաթած՝ Սավելիին հանձնվեց նրա սիրելի, հիմա արդեն չորացված ոտքը: Ինքը, բնականաբար, հենակներով էր: Գիրկն առավ նրան, ինչպես սեփական, բայց եւ ճակատագրի պարգեւ երեխային, Նինա Նիկոլաեւնայի՝ հարեւանուհու օգնությամբ իջավ ներքեւ: Վասիլին խորամանկ աչքով էր անում նրան ու թփթփացնում ուսին... Եվ օրերը գլորվեցին առանձնակի կատաղությամբ: Սավելին արագ վարժվեց հենակներով ցատկոտելուն: Փշփշոտ ու փռչոտ գերմարդ էր ասես՝ մարդկանց ու ավտոբուսների կողքով ցատկոտում էր հացի խանութ: Չորացրած ոտքը իր ողջ հմայքով կախված էր սենյակում, բայց Սավելին չէր համարձակվում խոնարհվել նրան: Պետք էր հարաբերությունների իրական եզրեր գտնել: Նրա գլխում հիմա մերկություն էր, ասես մտքերը վերջնականապես անջատվել էին ենթագիտակցությունից, ու մնացած ամեն ինչն էլ դեսուդեն էր ցրվել, իսկ կենտրոնում դատարկություն էր: Ճիշտ է, բավական անսովոր ու տագնապալի: Դրա համար էլ հաճախ ճչում էր գիշերվա կեսին՝ հենակներին ծանրացած դուրս վազելով ու սպառնալով այդպիսի Արձակությանը:

Իրադարձություններն այնպես չէին դասավորվում, ինչպես ենթադրում էր: Փորձեց քնել ոտքի տակ, հատակին՝ շնիկի պես: Բայց Արձակը հանգիստ չէր տալիս: «Տեղ չունե՞մ, տեղ չունե՞մ»,- գոռում էր Սավելին չարքերից լքված միջանցքով մեկ:

Բայց տեղ, ընդսմին, կար, եւ այն իր ներսում էր զգում: Պետք էր զգալ, զգալ տեղփոխ Անդունդի ոգին ու հարաբերվել նոր իրականության հետ, որ ժամանակին իր մեջ էր, բայց հեռացել էր ոտքը կորցնելու հետ՝ անտեսանելիի պես թաքնվելով ինչ-որ տեղ ու, հավանաբար, նոր ենթահիմք առնելով:

Ու Սավելին հռհռում էր՝ վազելով ստվերների ետեւից, որոնք գուցե արտացոլում էին, ինչը չպիտի իմանար: Հենակները ճռնչում էին այդ վազվզո-

ցից: Տարօրինակ, արյունոտ արցունքներ էին հայտնվում աչքերում... Լարվածությունն աճում էր... Արդեն նույնիսկ կատուներին չէր ճանաչում, որ նման էին Աննա Նիկոլաեւնային՝ հարեւանուհուն: Մի անգամ գիշերվա դեմ անմարդկային ճարպկությամբ դուրս պրծավ փողոց: Շենքերի պատուհաններն այն աստիճան մեռյալ էին, ասես նրանց Անդունդն էր վարագուրել: Ոչ մի տեղ ոչ ոք չկար: Սավելին, լուսնի մասին հիշելով,կապույտ հայացքը վեր՝ երկինք հառեց: Ու քարացավ: Լուսինը չկար: Լուսնի փոխարեն ճղճղված թափառիկ ամպերի պսակում կախված էր ոտքը՝ իր ոտքը, պոկված, մերկ, ինչպիսին կենդանության օրոք էր՝ ողջ հեշտանքով, գաղտնիքով ու փայլով... Որպես նշան, որ կա... Աննկարագրելի...

- Օ՛,- գոռաց Սավելին ու նետվեց... Այնտեղ... Առաջինը հենակը թռավ... Հետո՝ գլուխը... Ինչ-որ անբացատրելի ուժով նետվելով վեր՝ իրանից պոկված, մեղմ, սահուն, բարձր թռիչք արեց շենքերի վրայով՝ փոքր-ինչ հապաղելով աշխարհի գլխին՝ ոտքի լուսնալույսի մեջ: Սավելիին նույնիսկ թվաց՝ գլուխը կարճ ժպտաց ոտքին, երբ հեզասահ իջնում էր շենքերից այն կողմ... Վերջապես, մի ընդհանրապես աներեւակայելի բան կատարվեց...

Սավելիի ցիրուցան անդամներն այդպես էլ ընկած մնացին մինչեւ առավոտ, մինչեւ ավլեցին դռնապանները: Հենակից գնդացիր սարքեցին երեխաները: Իսկ գլուխը սեւ տղերքը գտան պարապուտում: Հաճույքով տշում էին գնդակի տեղ՝ ֆուտբոլ խաղալով նույնքան տարօրինակ ամբոխի հարբած գոռում-գոչյունի տակ: Ինչ-որ մեկը գլխին նետեց լայնեզր գլխարկը:

Բայց դա չի նշանակում, որ Սավելին պարտված էր: Ավելի շուտ՝ ոչ մի նշանակություն չուներ: Ի վերջո, գլուխն ընդամենը գլուխ է:

Փոխարենը՝ Սավելիի սենյակում անմիջապես նոր կենվոր հաստատվեց, որը ոչ միայն պատից չիջեցրեց չորացրած ոտքը, այլեւ սկսեց պահպանել: Անողոք, խստավար ու՝ մարդկանցից: Ու ոտքի վրայով հաճախ մի չտեսնված գույնի ջահել բզեզ էր սողում ու ոչ բզեզային հեշտանքով բզբզում չորացրած ոտքը՝ ըստ երեւույթին դրանից անթաքույց կենսական ուժ առնելով, թե չէ՝ ինչու էր հետո անհետանում...

Անդրեյ ԲԻՏՈՎ

ԲԺԻՇԿԸ

Ե. Ռալբեի հիշատակին

Արեւոտ օրը հիշեցնում է թաղումը: Ոչ բոլոր օրերն, իհարկե, այլ հատկապես այն, որին արեւոտ ենք ասում՝ առաջինը, հանկարծակին: Նաեւ վճիտ է: Գուցե եւ արեւն էլ կապ չունի, այլ՝ թափանցիկությունը: Թաղմանը նախեւառաջ եղանակ է լինում:

... Մահանում էր խորթ մորաքույրս՝ հարազատ քեռուս կինը:

Նա «այնքան կ ե ն դ ա ն ի մարդ» էր (մայրիկիս խոսքն է), որ դրան դժվար էր հավատալ: Նա իսկապես կենդանի մարդ էր, եւ իրոք դժվար էր հավատալ, թեեւ վաղուց էր սպասում դրան, թեկուզ՝ իրենից թաքուն:

Սկզբում ոտքը փորձեց: Ոտքը հանկարծ սկսել էր ցավել, ուռավ ու կոշիկի մեջ չէր մտնում: Բայց մորաքույրս չէր հանձնվում, այդ «փղին» (իր խոսքն է) կապեց նախապատերազմական հողաթափերին եւ այդպես մտնում էր մեզ մոտ՝ խոհանոց, ամանները լվանալու, իսկ հետո գալիս էր Ալեքսանդր Նիկոլաեւիչը՝ վարորդը, ու նա գնում էր իր ինստիտուտը (աշխատունակության փորձաքննություններ), հետո ընկերության (թերապեւտիկ) նիստերի, հետո շրջանավարտների ինչ-որ նախաձեռնող խումբ (նա բեստուժեւական էր), հետո ինչ-որ տիտղոսակիր բանդիտի ինչ-որ կոնսիլիումի, հետո մտնում էր իր հրեա ազգականների մոտ, որոնք լուռ, արդեն քառասնամյա պայմանավորվածությամբ՝ մեր տուն չէին գալիս, հետո մի վայրկյանով տուն էր մտնում, կերակրում ամուսնուն ու սկսում դժվար որոշում կայացնել՝ գնա՞ բանկետի՝ ինստիտուտի Թբիլիսիի մասնաճյուղի ասիստենտ Նեկտոր Բերիթաշվիլու ատենախոսության պաշտպանության կապակցությամբ. շատ է հոգնել (եւ դա ավելի քան այդպես է) ու չի ուզում գնալ (իսկ դա այնքան էլ այդպես չէր): Իրենից թաքուն՝ ուզում էր գնալ (կրկնելով այդ «իրենից թաքուն»-ը՝ ես սկսում եմ հասկանալ, որ մինչեւ ծերություն այդպիսի հուզական կարողունակություն կարող են պահպանել միայն շատ... կենդանի՞, մաքո՞ւր, բարի՞, լա՞վ մարդիկ. ես մրմնջում եմ այդ անհասկանալի, արդեն գոյություն չունեցող արտահայտությունը՝ ինքն իրենից թաքուն...): Ու գնում էր, որովհետեւ անկեղծորեն հավատում ու սիրում էր բոլոր մարդկային հավաքույթները, խանդով էր վերաբերվում

ուշադրության բոլոր նշաններին, հարգանքի ու պատվո այդ ողջ ոսկեկար դիպակին եւ նույնիսկ, հեգնանքը կանխելով, մեր սնապարծ գերդաստանին սովորեցրել էր հրեական «կովոդ» բառը, որ հարգանք էր նշանակում, ոչ թե հոգուց ու սրտից բխող, այլ ձեւով, դասակարգմամբ, հարգանք՝ որպես դրսեւորում, որպես այդպիսին: (Ռուսներն այդպիսի հասկացություն ու խոսք չունեն, եւ այստեղ ինքս քեզնից թաքուն, հակասեմիտի փաղաքուշ ժպիտով կարող ես ասել, որ հրեաները ուրիշ ժողովուրդ են: Չկա մեր լեզվում այդ կեղծավոր բառը, բայց կյանքում տարածում ունի, ու, բացի այդ, ինչո՞ւ են բոլորն այդպես վստահ բռիության անկեղծությանը...): «Հասկանո՞ւմ ես, Դի՛մա,- ասում էր նա ամուսնուն,- չէ՞ որ նա Վախթանգի որդին է, հիշո՞ւմ ես Վախթանգին»: Ու տխուր հառաչելով՝ գնում էր: Նրա ցանկությունները դեռ ուժեղ էին հոգնածությունից: Մենք հիմա դա չենք հասկանա. առաջ ուրիշ մարդիկ էին:

Վերջապես նա վերադառնում էր, երկար չէր մնում այնտեղ, բացառապես՝ հանդիսավոր մասին, որը բոլոր առումներով շատ հուզիչ սիրում էր՝ ցանկացած զարդարանքի ու կեղծիքի իմաստ ու հավատ ընծայելով: (Հետաքրքիր է, որ իրենց անկեղծորեն նյութապաշտներ էին համարում, այդ մարդիկ, որոնց պես երբեք չենք լինի. պետք է օժտված լինել բացառիկ... դարձյալ անհասկանալի բառ,- այդ պարադոքսը լուծելու համար): Եվ այսպես, արագ հետ էր գալիս, որովհետեւ ոտքից բացի տառապում էր նաեւ շաքարախտով ու բանկետին ոչինչ չէր կարող ուտել, բայց գինովցած էր վերադառնում. հանդիսավոր մասի ճառերը շամպայնի պես էին ազդում նրա վրա, ջահելացած, վարդագունած, առույգ ու երջանիկ՝ ամուսնուն պատմում էր, թե ամեն ինչ որքան լավ էր, ջերմ... Աստիճանաբար պարզվում էր, որ ամենից լավ ինքն է խոսել... Ու եթե այդ ժամանակ նայեիր նրան, դժվար կլիներ հավատալ, որ ուր որ է ութսուն տարեկան կդառնա, որ ոտքի խնդիր ունի, բայց խնդիրը կար. բավական է նայեիր ցած՝ ոտքը կապած էր հողաթափին: Ու ծլվլալով, ամուսնուն թեյ տալով, երբ նա պառկում էր քնելու, տաք ջուր էր լցնում տաշտակը ու երկար նստում էր՝ ոտքը տաշտակի մեջ, հանկարծ խամրած ու փքված, «կույտի պես» (իր իսկ արտահայտությամբ): Այդպես երկար նստում էր կույտի պես ու նայում իր արդեն մեռած ոտքին:

Նա մեծ բժիշկ էր:

Հիմա այդպիսի բժիշկներ ՉԵՆ ԼԻՆՈՒՄ: Ես ինձ հեշտությամբ բռնում եմ նրա վրա, որ պատրաստի, մանկուց ծիծաղելի թվացող բանաձեւ եմ օգտագործում. իբր («սթափ» քմծիծաղով), միշտ ամեն ինչ նույնն է եղել, այս-

պիսի, սրանից ոչ լավ... Ինձ հեշտությամբ բռնում ու հեշտ էլ բաց եմ թողնում. այսօրվա փորձի բարձունքից «հիմա չի լինում» բանաձեւն ինձ եւ՛ արդար է թվում, եւ՛ ճիշտ արտահայտող: Ուրեմն՝ չի լինում... Այն չի, որ մորաքույրս բոլորին բուժում էր... Հենց բժշկության հարցում նա ամենից քիչ մոլորություններ ուներ: Ոչ այնքան կարծում էր, որ բոլորին կարելի է բուժել, որքան, որ բոլորին հ ա ր կ ա վ ո ր է: Նա լավ գիտեր՝ ոչ խոսքով, ոչ գիտությամբ, այլ հենց նրանով... որ երբ օգնելն ա ն հ ն ա ր է, հենց այդ ժամանակ, երբ կա թեկուզ չնչին հնար, կարող էիք վստահ լինել, որ նա ա մ ե ն ի ն չ կանի: Այ հենց թեկուզ ու մի քիչ ՈՉ ԱՄԲՈՂՋՆ անելու անընդունակությունն ու ԱՄԵՆ ԻՆՉ անելու պահանջն էլ իմպերատիվն ու էությունն էր «հին բժիշկների, ինչպիսիք հիմա չեն լինում», ու նա վերջինն էր: Եվ դա հանդգնորեն պարզունակ էր: Օրինակ, եթե մրսել ես, կհարցնի՝ լա՞վ ես քնում, դու կզարմանաս՝ քո՞ւնն ինչ կապ ունի, նա կպատասխանի՝ վատ ես քնում՝ մրսում ես, մրսում ես՝ կհիվանդանաս: Նա քեզ քնաբեր մրսածության դեմ (ալերգիան դեռ կապիտալիստական աշխարհի հորինվածք էր), ու հանկարծ այնպես անուշ ու երջանիկ կզգաս ռուսաց լեզվի ու ռուսերեն բառերի այդ մոռացված տեմպից՝ մր-սում-ես... Որ ամեն ինչ ճիշտ է, ամեն ինչ կարգին է, ամեն ինչ առջեւում է... աչքիդ կերեւա մի չտեսնված առավոտ՝ գորշ երկնքով ու ճերմակ ձյունով, ջերմաստիճանի երջանկություն, մեկը ձի հեծած անցավ պատուհանի տակով, ծխնելույզից՝ գանգուր ծուխ... Կասես՝ նյարդերս են խաղում, մորաքո՛ւյր, մի բան տայիր նյարդերի դեմ... Սառը կնայի ու կասի՝ հավաքիր քեզ, նյարդերին ոչինչ չի օգնում: Իսկ մի ուրիշ անգամ, ոչինչ էլ չես խնդրի, ձեռքդ կտա ազատման տեղեկանքը. տեսել է՝ երեկ ինչպես էիր ծխում խոհանոցում՝ հանգստանալ է պետք:

Ու եթե ոմն սրատես գիտունիկ ձեւակերպի ու իր մասին իրեն պատմի այսպես, չի հասկանա՝ ինչի մասին է խոսում, ուսերը կթոթվի: Նա չպիտի փորձի մեխանիզմները: Ինչպե՞ս է մտնում հիվանդի մոտ... ոչ մի ինքնատիրապետմամբ քեզ այդպիսի փոփոխության չես ենթարկի. նա պարզապես փոխվում է ու վերջ: Ոչինչ՝ թեթեւությունից ու հանգստությունից բացի,- ո՛չ ութսուն տարի, ո՛չ ջահել գեղեցիկ ամուսին, ո՛չ հազարավոր թնկթնկան, կապտած, քրտնած, խղճուկ, երեսին շնչող հիվանդներ, ո՛չ մի փորձ՝ ոչ մասնագիտական, ոչ անձնական, եւ ոչ էլ ինքն անգամ՝ հաճույքով ապրվող իր կյանքով: Ինչպե՞ս է թողնում, որ հիվանդը տրտնջա. հետո հաստատական կհարցնի՝ շա՞տ է ցավում: Հենց ՇԱՏ: Ոչ մի «ոչինչ» կամ «կանցնի»չի ասի: Այդ պահին աշխարհում միայն երկու հոգի գիտեն՝ ո՞նց

է ցավում, հիվանդն ու ինքը: Նրանք ցավի ընտրյալներն են: Նրա գնալուց հետո հիվանդը համարյա հպարտ է իր հաղորդակցությամբ: Կյանքում այլեւս երբեք չեմ տեսնի կարեկցանքի այդպիսի ունակություն: Բժշկական ինստիտուտում կարեկցանքի ստուգարք չեն հանձնում: Մորաքույրն ակնթարթորեն էր կարեկցում, նույն իսկ վայրկյանին ընդմիշտ թոթափվելով իր ծերությունից ու ցավից. բավական է շրջվի ու տեսնի դեմքդ, եթե իսկապես հիվանդ ես՝ լույսի արագությամբ վրադ էր հորդում նրա կարեկցանքը, այսինքն՝ կատարյալ բացակայությունը կարեկցողի ու կատարյալ զգացումը կարեկցության: Իրենից բացի ամեն ինչից զերծ, զտարյուն կարեկցանքի այդ ապշեցուցիչ ունակությունը ինձ համար բժշկի Էությունը դարձավ: Բժշկի անունը: Ու ոչ մի կեղծիք, ոչ մի խաղ, ոչ մի թատերական «սիրելիս» ու «աղավնյակս» (չնայած սրբորեն հավատում էր ՄԽԱՏ-ին, ու երբ «տալիս էին» հեռուստացույցով, նստում էր բազկաթոռի մեջ՝ պատրաստ հաճույքի, որը, այդպես չէ՞, Դի՛մոչկա, ժամանակակից ոչինչ այլեւս չի կարող բերել... ա՛խ, Կաչալով-Մաչալով, Տարասովա՝ գեղեցկության կատարելություն... «Անն» բառի վրա դողացող ձեռքով շտկվում է սանրվածքը...):

Սանրվածքից սկսում եմ տեսնել նրան: Մինչեւ կյանքի վերջը նույն սանրվածքով էր, որ ժամանակին ամենաշատն էր նրան սազել: Այդպես էլ մնացել էր աղջկա մեջ ինչ-որ մեկի հաճոյախոսությունը, թե՝ հիանալի մազեր ունես, ու համոզմունքն այդպես էլ տեւել էր մի ողջ կյանք, այդպես էլ ամեն առավոտ ուռչում էր ճերմակավուն, ստրեպտոցիդային ալիքը,- թաղվում ու շարժվում էր,- ձեռքերն ուժեղ դողում էին,- երեք անգամ՝ աջ-ձախ, վերեւ-ներքեւ ու, վեջապես, ճիշտ կենտրոնով, միշտ նույն տեղը՝ կրիայի պատյանից սարքած սանրը: Շատ ճարպիկ էին նրա վարանոտ ձեռքերը, եւ այդ հրետանային հարվածը՝ չհասավ-անցավ (նեղ հատված), կպա՛վ՝ նույնպես աչքիս առաջ է: Այսինքն աչքիս առաջ են նրա ձեռքերը՝ դողացող, բայց միշտ՝ թիրախին, միշտ բանող... (Հիմա էլ, ոչ թե գրամեքենաս է զնգզնգում, մորաքույրն է լվանում ամանները, ծորակին խփվող գավաթի բնորոշ զնգոցն է, երբ նա գավաթ է ջարդում, իսկ նրա գավաթները թանկարժեք էին, հիարկե, շատ էր ափսոսում, բայց մի անբացատրելի, նույնպես սանրվածքների ժամանակներում կանգ առած կանացիությամբ խոհանոցային վկաներին անմիջապես հայտարարում էր տեղի ունեցածի մասին՝ որպես իր հավերժական վրիպման. իբր՝ նորից... նույնիսկ տեսքն էր փոխվում բեկորներն աղբաման թափելիս, նույնիսկ մեջքի կորը ու գլխի խոնարհումը կրկին աղջկական էին... որովհետեւ վկաների ամենաարգելված վարքն այդ պահին կարող էր կարեկցանքը լինել. տարիքը նկատել

չէր կարելի): Ես հիմա էլ ուզում եմ համբուրել մորաքրոջը (ինչը երբեք չեմ արել, չնայած ավելի էի սիրում նրանցից, ում համաբուրում էի) ծորակին խփվող գավաթի այս զնգոցը լսելիս:

Նա 50 կամ 100 ռուբլին աղբարկղն էր գցում հարուստ մարդու շարժումով՝ կանխելով մեր կեղծ խորին ափսոսանքը... իսկ հետո նրա համար ամենադժվարն էր, բայց նա վճռական մարդ էր, չէր հապաղում, չէր հետածգում. մի ակնթարթ քարանում էր իր դռան առաջ՝ տարածեւ գավաթները ձեռքին, ավելի սլացիկ դառնում, նույնիսկ կոր մեջքն էր շտկվում, դժվար էր չհավատալ այդ տեսողական խաբկանքին... եւ անմիջապես բացում էր դուռն ու իր այդ տասական թվականների պատմության համարյա Սերովի լուսաբացի ճռվողյունով ճախրում ներս. լվացված-մաքուր արեւաշողը լվացված-մաքուր սաղարթի արանքից ցողվում էր մանրահատակի նատյուրմորտին, լուսաբացի եղրեւանու փունջը շաղոտ կարկամում էր, համարյա պենյուար ու Սկրյաբինի էտյուդ... ասես պատի արտանկարն էլ նկար չէր արդեն, այլ հայելի. «Դիմա, ի՞նչ ափսոս, իմ սիրած չինական գավաթը ջարդեցի...»:

Ա՛խ ոչ, մենք ողջ կյանքում հիշում ենք՝ մեզ ինչպես էին սիրում...

Իսկ Դիման, իմ հարազատ, ամենասիրելի քեռին իմ այդ հուշերում մնում է դռան ետեւը, ստվերում, ծաղկեփնջի կողքին, ծաղկեփնջի տեսակ. վիրաբույժի երգեցիկ մատներով թմբկահարում է սփռոցը, սպասում է թեյի, ժպտում է ուշադիր ու մեղմ, որպես լավ մարդ, որ ասելիք չունի:

Ուրեմն, նախ տեսնում եմ նրա սանրվածքը (ավելի ճիշտ՝ սանրը), հետո՝ ձեռքերը (հիմա նա մուրաբա է խառնում), պղնձե, փայլեցրած հնաոճ (մինչ աղետի) տաշտակը, արեւի պես, նրա մեջ՝ ալ, ընտրովի, ամենաթանկ շուկայական ելակը, իսկ վրան կապտին տալով շողում են նախկիո (գլուխ) շաքարի խոշոր, կոպիտ ու հղկակող բեկորները, այդ ամենայն թանկը՝ թագ, գայիսոն, տերություն,- եւ այդ ամենի վրա (մեր ընտանիքում սիրում են ասել, որ մորաքույրը վեհաշուք է, ինչպես Եկատերինան),- այդ ողջ կայսրության վրա իշխում է ոսկե գդալով ձեռքը. որսում է սեփական դողն ու ձեւացնում, թե հենց այդպիսի շարժում էլ ուզում էր անել, ինչպիսին ստացվեց (այդ ամենը խիստ արտահայտիչ է. պատահականության կառավարումը որպես գեղարվեստական մեթոդ...):

Ես տեսնում եմ սանրը, սանրվածքը, ձեռքը... ու հանկարծ՝ հստակ, միանգամից, ամբողջովին՝ մորաքրոջս. ասես ջանադրաբար դաջել-դաջել եմ արտանկարն ու վերջապես, շունչս պահած, ձեռքս սահուն դանդաղությամբ չարչարելով, պոկել, ու հանկարծ՝ ստացվե՛լ է. թաղանթը ոչ մի տեղ

չի պատռվել. արտածվել են նրա չինական կոֆտայի (մետաքսյա, մգդակած) վառ, խոշոր ծաղիկները, կլոր մեջքը՝ թիակների արանքի ծաղկեփնջով ու՝ վիրակապված հողաթափով: Թիկունքի ծաղիկները՝ փարթամ, գանգուր քրիզանթեմների չինական տեսակ. նա այդպիսիք սիրում էր ստանալ իր տեւող հոբելյանին (ամեն օր զամբյուղ են բերում երախտապարտներից, ու մորաքրոջս սենյակը միշտ դերասանուհու հարդասենյակի պես է՝ բենեֆիսից հետո. ամեն օր աստիճանահարթակ է հանվում նորով փոխարինված թոշնած ծաղիկներով զամբյուղը...): Թիկունքի ծաղիկները՝ այդպիսիք դագաղում:

Մեր մեծ, միասին ապրող ընտանիքում մորաքույրով հիանալու մի քանի օրինականացված բանաձեւ կար, միայն չգիտեմ՝ ինչ գործակցի տեսքով էին մուտք արվում անձնական տվյալները՝ տարիքը, սեռը, ընտանեկան դրությունն ու ազգությունը: Իհարկե, մեր ընտանիքը չափազանց ինտելիգենտ էր կադրերի բաժնի մակարդակին իջնելու համար: Նման բաների մասին երբեք չէր խոսվում, բայց հարյուր տոկոսանոց լռությունը միշտ ավելի խոսուն է. լռությունն ասում էր, որ նման բաների մասին չի խոսվում, այլ իմացվում է: Նա տասնհինգ տարով մեծ էր քեռուց, ու նրանք երեխաներ չունեին, ու նա հրեուհի էր: Ինձ համար՝ երեխայի, դեռահասի, պատանու, նա ոչ սեռ ուներ, ոչ տարիք, ոչ ազգություն, այն դեպքում, երբ մյուս ազգականներն այդ ամենն ունեին: Ինչ-որ կերպով այստեղ հակասություն չէր դիտարկվում:

Մենք բոլորս խաղում էինք այդ խաղը՝ անվերապահ ընդունել նրա հռչակած բոլոր պայմանականությունները. մեր ներողամտությունը չափազանց շռայլ էր խրախուսվում, իսկ մեր անճարակ ներկայացումը երախտապարտ հանդիսատես ուներ: Հայտնի չէ՝ երախտագիտությամբ ով ում էր գերազանցում, բայց խաղի մեջ չափն անցնում էին բոլորը: Կարծում եմ՝ նա համենայնդեպս ինչ-որ բան կարող էր տեսնել վերեւից, ո՛չ մենք: Նրա ընդգծված պայմանականությունները մեր անվերապահության ուժգին արձագանքը չէի՞ն... Դրա համար չէր, որ միակ մարդը, ումից նա վախենում ու չափից դուրս սիրաշահում էր, Պավլովնան էր՝ մեր խոհարարուհին. նա կարող էր եւ չխաղալ մեր խաղը ու հաստատ գիտեր, որ մորաքույրը հրեա է, պառավ է, որ ամուսինը... եւ այլն, որ երեխաներ... Որ մահը մոտ է: Պավլովնան իր այդ պարզունակ, բայց անողոք-ճշգրիտ իմացությունը կարող էր արտահայտել առանց ընդգծված կեղծավորության, առանց խոսքի, եւ այդ լռության համար հապճեպ երախտագիտությամբ ստանալ ինչ սիրտն ուզեր, թեկուզ՝ այդ նույն գավաթները:

Մենք իսկապես սիրում էինք մորաքրոջը, բայց այդ սերը նաեւ հայտարարվում էր: Մորաքույրը Մա՛րդ էր: Դա դառն է հնչում. ինչ հաճախ ենք մեծատառով արտաբերում, որպեսզի սքողենք անձնական տվյալները, մարդկային ցեղին պատկանել ու մեր սեփական ինքնաբերությունը հանգեցնում է խտրականության: Որեւէ մեկի արժանիքներով չափանզանց հիանալուց միշտ վատ հոտ է գալիս: Կամ շողոքորթության, կամ ապարտեիդի: Նա մ ա ր դ էր. մեծ, մեծահոգի, կրքոտ, աշխույժ, շռայլ ու վ ա ս տ ա կ ա շ ա տ (ԳՎԳ՝ գիտության վաստակավո գործիչ. նա այդ կոչումն էլ ուներ): Մի խոսքով, ես հիմա մտածում եմ, որ իր ընտանեկան բոլոր քառասուն տարիներին նա մեզ մոտ մորաքույր էր ա շ խ ա տ ու մ իր բոլոր հրաշալի հատկություններով ու հ ա ր ա զ ա տ ի պես էր դարձել: (Ու նաեւ այդ պատճառով կարող էր հատուկ փոխըմբռնում ծագել նրա ու Պավլովնայի միջեւ. չէ որ նա նույնպես Մարդ էր...):

Մենք բոլոր հիմքերն ունեինք մեծարելու եւ աստվածացնելու նրան, այնքան, որ նա էր արել բոլորի համար, մեզնից ոչ ոք նույնիսկ ինքն իր համար չի անի, նա մահից փրկել է ինձ, եղբորս եւ երեք անգամ՝ քեռուս (իր ամուսնուն): Իսկ թե որքան է օգնել հենց այնպես (առանց կյանքին սպառնացող վտանգի), անհնար է թվել: Այդ ցուցակը տարիների հետաճում ու սրբադասվում էր ըստ կետերի: Դրա մասին, սակայն, ընդունված էր հիշեցնել, ոչ թե հիշել, այնպես որ, ճիշտ հիշեցի հիմա՝ հարազա՛տ... Ու նաեւ, ինչը շատ ավելի ուշ իմացա, նրա մահից հետո, որ կ ն ո ջ պես էր դարձել: Պարզվում է՝ այդ բոլոր քառասուն տարիներին նրանք գրանցված չէին: Այդ հին նորությունը միանգամից իսկապես օրինավոր մարդկանց՝ պաշտոնական ու բովանդակազուրկ ծեւերից անկախության լեգենդար փայլ ստացավ... Մյուսները, սակայն, գրանցված էին: Ժամանակն անցավ՝ տղմոտ հատակ: Ժանգոտ ցցվել են դրամայի շինվածքները: Պարզվում է՝ ոչ թե կյանք էր, այլ՝ սյուժե: Դա անկենդան է դառնում վերապատմելուց. տարիներ անց մեր ընտանիքում տեղեկությունը կհառնի շիրմաքարի տեսքով:

Իսկ ես նրա հիմքն եմ դնում...

Նա մեծ բժիշկ էր, ու ես ոչ մի կերպ չեմ կարողանում թոթափվել տարակուսանքից. ինքն ի՞նչ գիտեր իր հիվանդության մասին: Մեկ թվում է՝ չէ՞ որ չէր կարող չիմանալ... մեկ՝ ոչինչ չգիտեր:

Ոտքի փորձությունն ունեցավ, իսկ հետո փորձեց սրտի կաթվածը:

Ինֆարկտից քիչ էր մնում ոտքը լավանար: Այսպես թե այնպես, բայց ինֆարկտից հրեն դուրս քաշեց: Եվ այն մտքից, որ այս անգամ դուրս

պրծավ (սա տվյալ դեպքում վստահաբար կարող էր ասել իրեն), այնպես ոգեւորվեց ու ջահելացավ, ու նույնիսկ ոտքը կրկին տեղավորեց կոշիկի մեջ, ինչից չէինք դադարում ուրախանալ: Նորից սկսվեցին ժողովները, վարչությունները, պաշտպանությունները, կոնսիլիումները (բուժի՛ր մարդասպանին. անկասկած Բժշկի սուրբ սկզբունքն է... բայց չի կարելի, չէ՞ նրանց ավելի ջանադիր ու պատասխանատու բուժել, քան նրանց հավանական զոհերին... բայց պարզվում է՝ կարելի է. օրենքը կենդանի է այնտեղ, ուր կենդանի են նրա պարադոքսները, ինչպես Անգլիայում...)... եւ ահա նորից նրան տեսնում եմ խոհանոցում՝ շողշողուն արեւ-տաշտակին թագավորելիս:

Բայց այդ տաշտակը կարճ արեւեց:

Մորաքույրը մահանում էր: Դա արդեն՝ ոչ մեկի համար... բացի իրենից: Բայց նա էլ այնպես էր ուժասպառ եղել, որ հոգնելով, թուլանալով՝ ամեն օր ակամա քայլ էր անում դեպի մահը: Հետո սթափվում ու նորից չէր մահանում: Ոտքը լրիվ սեւացել էր, ու նա անառարկելի պնդում էր, որ պիտի անդամատվի, չնայած բոլորին, բացի նրանից... որ վիրահատությունն արդեն նրա ուժից վեր է: Ոտք, ինֆարկտ, ոտք, ինսուլտ... Եվ այստեղ նա նոր ուժով կառչեց կյանքից, ուժով, որ միայն ինքն ուներ:

Մահճակա՛լը: Նա ուրիշ մահճակալ պահանջեց: Չգիտես ինչու, հատկապես իմ օգնությունն էր ակնկալում: Ինձ կանչում էր հրահանգավորելու, ես վատ էի հասկանում մնչոցը, բայց ամեն ինչին համաձայնում էի՝ մեծ բարդություն չտեսնելով առաջադրանքի մեջ: «Կրկնի՛ր»,- հանկարծ հստակ ասաց նա: Եվ,- ա՛խ,- ի՞նչ դառնացած երես դարձրեց իմ անկաթվածահար մրթմրթոցից:

Ներս բերեցինք մահճակալը: Հատուկ մահճակալ էր, հիվանդանոցից: Այնպես անճարակ բարդացրած, ինչպես կարող են բարդացնել միայն տեխնիկայից հեռու մարդիկ: Բանտային յուղաներկով բազմիցս վերաներկված՝ մահճակալը կորցրել էր ոչ միայն ձեւը, այլեւ ուրվապատկերը՝ տառացիորեն չճալվող էր դարձել: Մենք այդ հրեշին մտցրինք մորաքրոջ-հայելա-բյուրեղյա-գորգային-հղկված հարմարավետության մեջ, ու սենյակն անճանաչելիորեն փոխվեց: Ասես բոլոր իրերը, մահճակալից մազապուրծ, խցկվել էին անկյունները, կծկվել սոցիալական փոփոխության կանխազգացումից. իրականում պարզապես մահճակալի համար հապճեպ տեղ էր պատրաստվել: Հիշում եմ մկանների եւ ուժի այդ անհեթեթ-պատանեկան զգացողությունը, չափազանցված, բեռնակրի խնդրին չհամապատասխանող. մկաններն ընդգծված, ցուցադրական ապրում էին

ծեր, կաթվածահար, մահացող մարդու համար, ու դրանից ինձ հետապնդում էր անհարմարության սուր զգացումը. խփվում էի անկյուններին, սայթաքում էի, ցավեցնում մատներս, եւ ասես մահճակալն ինձ նույնացնում էր իրեն:

Մորաքույրս նստել էր սենյակի կենտրոնում ու ղեկավարում էր ներսբերումը: Այսպես եմ հիշում. նա չէր կարող նայել կենտրոնից, նա չէր կարող նստել, ու կենտրոնը հենց ազատվել էր մահճակալի համար... Նրա հայացքը քարածխի պես էր վառվում, աչքերը երբեք այդքան խոր չէին եղել: Նա ողջ կրքով ուզում է տեղափոխվել իր քառասնամյա մահճից, նա ա ր դ են այն մահճակալին էր, որ նոր-նոր ներս էինք բերում. այդպես եմ հիշում նրան սենյակի կենտրոնում: Մենք չպիտի վնասեինք «ապարատը», որովհետեւ դրանից ոչինչ չէինք հասկանում, մենք «նրան» պետք է մի քիչ տեղաշարժ անեինք, մի քիչ մոտեցնեինք ու բարձրացնելով՝ հաստատեինք հարթության վրա, բայց ամեն ինչ սխալ էր ստացվում, չի կարելի այդքան անճարակ լինել, ըստ երեւույթին, ստիպված անձամբ պիտի... Եվ այդ տպավորությունն էլ է մնացել, որ մորաքույրս, վերջապես, վեր կացավ, կարգավորեց ամեն ինչ, ինչպես հարկն է, տեսնում եք, դժվար բան չի, պետք է միայն խելացի անել. ու կարգավորելով՝ նորից պառկեց իր կաթվածի մեջ՝ մեզ թողնելով բարձերն ու ներքնակները տեղափոխելը՝ ինչն առավել հասու էր մեր զարգացման աստիճանին, չնայած այստեղ էլ աղաղակող վրիպումներ էինք թույլ տալիս: Տե՛ր Աստված, երեսուն տարում նա մի կաթիլ անգամ չէր փոխվել:Երբ մենք, բլոկադայի ձմռանը, նույն խոհանոցում երկուսով փայտ էինք սղոցում, նա՝ հիսնամյա, ճիշտ այսպես ջղայնանում էր հինգ տարեկանիս վրա: Լաց լինելու աստիճան նեղանում էր՝ վիճելով, թե ով որ կողմ պիտի քաշի, մեր սղոցը ծալվում ու տնքում էր, մինչ մենք փրկում էինք մեկմեկու մատները: «Օլգա՛,- վերջապես կանչում էր մորս:- Ջսպիր քո խուլիգանին: Ինձ դիտմամբ հունից հանում է: Դիտմամբ սխալ կողմ է սղոցում...»: Ես էլ իրենից էի թունդ նեղանում, նույնիսկ ոչ բղավոցից, այլ նրանից, որ կասկածում են «դիտմամբի» մեջ, երբ որեւէ հետին միտք չունեի, երբեք ոչինչ չէի անի ջգրու կամ միտումնավոր ոչինչ չէի անի... Ես այն ժամանակ՝ ոչինչ, ինչպես հիմա է թվում՝ վատ տղա չէի: Հեծկլտալով՝ սղոցը թողնում էին կիսասղոցած գերանի մեջ: Տասը րոպեից նա ուրախ-ուրախ գալիս էր ինձ հետ հաշտվելու՝ բերելով «վերջին ունեցածը», մկնային ինչ-որ բան. կճեպ, թե փշրանք: Այսպես, ուրեմն, ստացվում է, որ միայն ես էի փոխվել, իսկ նա դեռ չէր կարողանում հաշտվել իր կյանքում սպասվող միակ փոփոխության հետ. նա Այն աշխարհին, իհար-

կե, չէր հավատում (ո՛չ. ես այդպես էլ նրանց սերնդին չեմ հասկանա. համոզված, որ Աստված չկա, նրանք ինձնից բարձր էին պահում քրիստոնեական պատվիրանները...):

Մենք տեղափոխեցինք նրան. երկար ու ակնհայտ հաճույքով տեղավորվում էր ու այլեւս երբեք չնայեց ամուսնական մահճին: Հիմա ասես լսում եմ թեթեւության մեծ հոգոցը, երբ նրան կտրում էինք մահճից. այն ամենից, որ, չնայած իր բժշկական փորձին, շարունակում էր չհասկանալ, այդ մեկն, ըստ երեւույթին, անդառնալիորեն հասկանում էր՝ այլեւս երբեք այդ մահիճ չի վերադառնա... Մենք չէինք հասկանում, մենք ապուշի պես ոչինչ չէինք հասկանում այն ամենից, որ նա հրաշալի, բոլորից լավ գիտեր՝ ինչ է հիվանդը, ինչ է զգում եւ իրականում ինչի կարիք ունի,- հիմա ինքը կարիք ուներ, բայց ոչ ոք չէր կարող վերադարձնել այդ պարտքը: Եվ այդ ժամանակ, տեղավորվելով, նա խորունկ, նյարդային, թաքուն իմաստով մեզ ասաց «Ծնորհակալություն», ասես իրոք ինչ-որ բան էինք արել իր համար, ասես հասկանում էինք... «Ծա՞տ ծանր էր»,- կարեկցանքով հարցրեց ինձ: «Չէ՛, ինչ ես ասում, մորաքո՛ւյր... Թեթեւ է»: Այդպես չպիտի պատասխանեի:

Բայց, ամեն դեպքում, այդ մահճակալն էլ հարմար չէր նրան. իրականում անհարմարավետ էր: Եվ այդ ժամանակ ներս բերեցինք վերջինը՝ տատիկինը, որի վրա մենք բոլորս մահանում էինք... Եվ ահա արդեն դրա վրա, վերջին անգամ ուղղելով բարձը, դողացող ձեռքով ծածկոցի վրա սավանի ծալքերը, աչքերը փակ՝ թեթեւացած շունչ քաշեց. «Վերջապես հարմար է»: Մահճակալը դագաղի պես դրված էր սենյակի կենտրոնում, ու նրա դեմքը խաղաղ էր:

Հենց այդ օրը անսպասելի մահացավ այն մյուս կինը. հայտնի սյուժեն է...

Մորաքույրը երկար ապրեց նրանից: «Վերջապես հարմար է...»:

Մահճակալը տարօրինակ կերպով ամայացած սենյակի կենտրոնում էր, որտեղ իրերը տիրոջը մի քիչ ավելի արագ են լքում, տիրոջից լքվելուց մի վայրկյան առաջ: Նրանք դեմքի էժանագին արտահայտություն ունեն. պարզապես հին իրեր են հայտնվել մանկուց թանկ այդ սահմանին ու մակերեւույթին: Նրանք խորշում են սենյակի կենտրոնի այդ երկաթեղենից, նրանք կարմիր են, նրանք կարելյան են...Մորաքույրին հարմար է:

Նրանց իր հետ չի տանելու:

Բայց տարավ:

Դամբանաբլրի կենտրոնում մահճակալն է, վրան, աչքերը փակ ու ծնո-

տը կապած, հարմար կիսանստել է մորաքույրս՝ իր սիրած չինական կոֆ-տան հագին, ծնկներին՝ ելակի մուրաբայով լիքը արեւաթասը, մի ձեռքին լսափողակն է, մյուս ձեռքին՝ ամերիկյան ջերմաչափ, որ ռումբի ժամացույ-ցի մեխանիզմ է հիշեցնում, ոտքերին՝ Ռիվա-Ռոչչիի սարքը... չեն մոռաց-վել նաեւ չջարդված գավաթները, կարծիքի տրված ատենախոսությունը, դեղին Միլոսյան Վեներան, որի հետ (ըստ պատումների) մտել է մեր տուն... քեռին ու թիկունքում՝ վարորդը, համեստ կանգնած են կողքին՝ վերեւից թափվող հողով արդեն կիսաճաճկ... անաղմուկ մոտենում է մեքենան՝ կա-փարիչին պսպղան եղջերու (նրան կանոնավոր մի մակնիշից մյուսին է տե-ղափոխում՝ անտեսելով, որ արդեն նորաձեւ չէ...), ուրեմն եղջերուն էլ է այստեղ... ու մեր ողջ բնակարանն էլ այստեղ է՝ վերեւից հոսող փխրուն ժա-մանակի տակ՝ իր մեջ առնելով նաեւ իմ ողջ անցյալը՝ բլոկադայի սառցա-բեկորներով, այն ամենը, ինչով պարտական եմ, թաղվում է դամբանաբլրի մեջ. ժամանակը սորում է իր կենդանի մարդկայնությամբ, այն ամենով, ինչը չեն կրել կրողները, ամենով, որ ինձնից այն խղճուկ արարածն են սարքել, որին, նմանության ընդհանուր հայտանիշերով, մարդ են կոչում, այսինքն՝ ինձ հետ... բայց ինքս հասցնում եմ, վերջին բահ հողը գցելով, հասցնում եմ ազնիվ անասնության սեւ ու առկայծող ջերմություն հագ-նել...

Քանզի այն ժամանակից, երբ նրանք հեռացան, նախ՝ տատիկս, որն իմ մորաքույրից ավելի լավը, ավելի մաքուր էր, հետո տատիկիս տեղը էստա-ֆետով զբաղեցրած մորաքույրս, իսկ հիմա այդ տեղը թափուր է ո՞ւմ հա-մար... ես դա նրանց չեմ ների: Քանզի այն ժամանակից, երբ հեռացան այդ վերջին մարդիկ, աշխարհն ավելի լավը չի դարձել, ես եմ դարձել վատը:

Տե՛ր Աստված, մահվանից հետո Քո մասին հիշողություն չի լինի: Ես արդեն տեսել եմ Քո դեմքը... Եթե մարդը նստած է խոր ջրհորում, ինչո՞ւ նրան չթվա, որ նայում է ԱՇԽԱՐՀԻՑ, ոչ թե ԱՇԽԱՐՀԻՆ: Իսկ եթե այն-տեղ, եթե համենայնդեպս դուրս գա ջրհորից, ոչինչ չկա՞: Բացի ջրհորի անցքից, որից դուրս ես սողացել: Հուսամ, որ Քո տարածքն այնքան էլ կտրտված չէ...

Ինչու են թեկուզ ոչ այնքան ընդունակ, բայց ջանասեր աշակերտին գցել այդ անտակ պատժախուցն ու մոռացել նրա մասին: Որ ես ողջ կյան-քում նայեմ այդ միակ աստղի՞, թեկուզ եւ ավելի հեռավոր, քան երեւում է ջրհորով չզինված աչքի՞ն: Ես նրան արդեն յուրացրել եմ:

Տե՛ր Աստված, քեռի՛, մորաքո՛ւյր, մա՛մ, լալիս եմ...

Արեւը: Այն նույն արեւը, որից սկսեցի:

Այնպիսի անկյուններ են լինում հայրենի քաղաքում, որտեղ երբեք չես եղել: Հատկապես՝ իրենով շրջակայքը ճնշող տեսարժանության կողքին: Սմոլնին, ծախից՝ Սմոլնու վանքի զանգակատունը. միշտ գիտես, որ այնտեղ են, որ եկվորին հենց այստեղ կբերեն, ու նրանց հանդեպ վերաբերմունքն արդեն ավելին չէ, քան բացիկի հանդեպ: Բայց ահա օրերից մի օր ստիպված ես լինում փնտրել հասցեն (պարզվում է՝ այնտեղ նաեւ շենքեր կան ու փողոցներ, այնտեղ ապրում են...), ու զանգակատնից ծախ,կոմերիտմիության մարզկոմից ծախ, վանախցերի մեղրահացից ծախ...- ծռակող փողոց (հազվագյուտ՝ Լենինգրադում), հարյուրամյա ծառեր, մորաքրոջս ինստիտուտը (նախկին Հաշմանդամների տունը, հենց դրանից էլ՝ այդքան գեղեցիկ. այնքան էլ շատ չեն բժշկական հաստատություններ կառուցել, միշտ հին շինություն կգտնես...), ու՝ այնքան անսպասելի լավը, որ նույնիսկ խուլ ցանկապատը գեղեցկություն կթվա: Այստեղ ամեն ինչ պահպանվել է՝ տեսարժանության ստվերում... Իհարկե, անցակետ՝ պահակատան փոխարեն, ցանկապատ՝ վերացված ճաղավանդակի փոխարեն... փոխարենը՝ դարպասները դեռ կան, ու ծեր հաշմանդամ-պահակը տեղում է Հաշմանդամների տան դարպասի մոտ (երեւի՝ յուրայիններից): Բարոկկո ոճի գանգուր դռները հյուրընկալ բաց են, ու ես վերջապես ցուցանակին կարդում եմ մորաքրոջս հաստատության ճշգրիտ անվանումը (Առողջապահության մինիստրություն, մարզգործկոմ... բազմաթիվ բառերին փոխարինել էին երկուսը Հաշմանդամների տուն), ստիպված եմ մի կողմ քաշվել ու ճանապարհ տալ սեւ «Վոլգային», որի խորքում պսպղաց ուսադիրը. հաշմանդամը կանգնում կճատ ոտքին, պատվի է առնում, կուշտ շրշյունով աղյուսաշեն ուղյակով հեռանում է «Վոլգայի» պես սեւ մուշտակով գեներալը, ես նրա հետեւից մտնում եմ «տարածք»: «Հուղարկավորությա՞ն»՝ հարցնում է հաշմանդամը. խստությունից չի, իրազեկությունն է դրսեւորում: «Այո՛»:

Ուղյակի կարմիր աղյուսը ներդաշնակ է թխկենու տերեւներին, որ ավլում, մի կողմ է կիտում ջանադիր դաունը. աղքատիկ զինվորական ձեւանմուշի ինքնաշեն փափուկ խաղալիքի է նման, մյուսը, որ մի քիչ ավելի խելացի ու հպարտ է իրեն վստահված հրացանով, խստորեն քնթուկներ ու թղթի պատառներ է որսում, աղյուսամռութ հաշմանդամը, պինդ կանգնած ծայրին ռետինե ծծակով փայտե ոտքին, իր փայտե ոտքը հիշեցնող ծանր գործիքով աղյուս է մանրում նույն ուղյակի համար, այգում այսուայնտեղ գորշ, մաքուր լվացած տատիկներ են շրջում, ինչպես աշնանային սարդոստիկներ՝ մահից մազապուրծ Օֆելիաներ՝ շքեղ տերեւների փնջերով... Աշ-

խատաթերապիա՝ մաքուր օդին, արեւոտ օր: Օդը պարպվել է, արեւի լույսը համաչափ ու անարգել սփռվել՝ ասես հենց ինքն օդը լինի. ստվեր չկա, այն ներսից լուսավորված է վառվող տերեւների ճառագումով, եւ վաղաժամ ծուխը (երեխաներին թույլ մի տվեք լուցկով խաղան) շուրջն է հավաքել կենտրոնացած-ապուշ մի խմբի... Կենդանացած-վառվող նամշած տերեւների հինավուրց հոտ, աշնանային մաքրագործում. ամեն ինչ թափթփված է, բայց քաոսի մեջ արդեն կարգուկանոն է նկատվում. տարածությունը հարդարված է, օդն օդափոխված է, ահա եւ ուղյակը նորովի կարմրեց. վաղորդյան, դեռ չարթնացած ապուշներ, վաղորդյան (առավոտի, վերքեր...) հաշմանդամներ, աշնանային պառավներ. բոլորը համահունչ աշնան հետ: «Ձեզ՝ այնտեղ»,- հարգանք ասաց վերջին օլիգոֆրենը: Ո՞ւր եմ գնում... Հիվանդանոցի բակին հենված՝ կանգնել էի ծառուղու ծայրին: Ստիպված նահանջեցի ճամփեզր, ոտքերիս տակ հաճելի ճվլվող տերեւների կույտի մեջ. օլիգոֆրենը քաղաքավարի քաշվեց մյուս կողմը. մեր արանքով «Վոլգա»-ներ անցան, միանգամից երկուսը: Ահա՛ թե ուր: Ահա՛ թե ուր եմ գնում: Մորաքույրն արդեն այստեղ է:

Դիարանում շփոթմունք եղավ. նրան չճանաչեցինք: Սանրվածքը չկար: Մեր ձեռքը չէր գնացել սովորական խոպոպը փոփոլացնելուն: Իրենը՝ նույնպես... Նեկտոր Բարիթաշվիլին. ահա թե ով էր հարազատը: Վարսավիր էր բերել, համարյա շղթայակապ: «Ոչ մեկը փող չի՛ ուզում...»,- բորբոքվում էր նա: «Ինչքա՞ն»,- հետաքրքրվեցինք մենք: «Է՛,- ձեռքը թափ տվեց նա:- Հարյուր»: Այդ կարճ բառը թղթադրամի պես էր հնչում. մորաքույրը ժլատություն չէր արել:

Հիմա մորաքույրը լավ տեսք ուներ: Դեմքը բավականաչափ ազդեցիկ էր, խաղաղ ու գեղեցիկ, բայց կարծես՝ մի քիչ լարված: Նա ակնհայտորեն ականջ էր դնում, թե ինչ է ասվում, եւ այնքան էլ գոհ չէր: Ծույլ- ծույլ թվարկվում էին ծառայությունները, մակդիրների դիակներ էին դիզվում. ոչ մի կենդանի խոսք: «Պայծառ կերպարը... երբեք... հավերժ սրտերում»: Առաջին գեներալն՝ առաջինը ասելով (լավ գեներալ էր, հաստլիկ, երեք աստղ, մտահոգ-մեռյալ...), մեկնեց. դահլիճի՝ աշնան մեջ բացված դռան միջով լսվեցին նրա «Վոլգայի» անհարգալից-արագ հեռացող ճայթյունները: «Ննջիր խաղաղությամբ...» ասելիս, դագաղին խոնարհված՝ արդեն ուժգին շխկացրեց մեքենայի դռնակը. «Սմոլնի՛». հասնում էր խորհրդակցությանը: Հասցրեց հիշատակել հանգուցյալի գերազանցապես զինվորական ծառայություններ. երբեք չենք մոռանա... արդեն մոռացան: Ե՛վ պատերազմը, եւ՛ բլոկադան, եւ՛ ողջերին, եւ՛ մեռածներին: Մորաքույրին հիշե-

լու ժամանակ արդեն չկար. ես հասկացա, որ նրան դուրս էին գրել մահվանից շատ առաջ. փոփոխված պատմական հանգամանքները նրանց թույլ էին տվել ներկայանալ հոգեհանգստին՝ էլի լավ է. ուրիշ ժամանակներ են, ու ծերերը պիտի հասցնեն... ու եթե գեներալը շնչահատ դեռ ձգվում-հասնում էր հաջորդ աստղին, ապա զուտ մի պայմանով՝ ոչ մի վայրկյան չբացակայել վազքի գորգուղյակից... Գեներալից հետո քաշվում էին, ասես քշել-գնացել էր՝ թողնելով իր ճերմակահեր ականջը՝ ուսադիրի ոսկե շողքի հետ... Եվ հաջորդ հռետորն էլ ճիշտ նույն կերպ էր քրթմնջում, ու հետո... ոչ մի կերպ չէին տաքանում: Հանգուցյալի մերձավորները, երկատված դագաղով, ինչպես նավաքթով՝ ալիքները, հռետորների աղքատ ազգականներ էին թվում: Ձախ կողմում մենք էինք խմբվել, աջից՝ հրեական ազգականները. չգիտեի, որ այդքան շատ են: Ոչ մի ծանոթ դեմք. մեկին կարծես հպանցիկ տեսել եմ նախասրահում... Նա բռնեց հայացքս ու գլխով արեց: Գորշ, ուշադիր-շփոթված, կարճատեսի աչքեր: Ինչո՞ւ նրանցից ոչ մեկին... երբեք... Դեռ չէի հասկանում, բայց անհարմար, վատ զգացի, մի խոսքով, ամոթ էր: Բայց կարծում էի, թե ինձ հռետորները դուր չեն եկել, ոչ թե մենք, ոչ թե ես: «Գնահատվել են ըստ արժանվույն...մեդալով»: Մորաքույրը մարդ էր... նրան անհնար էր՝ ըստ արժանվույն... Մահը մահ է, ես ինչ-որ բան համենայնդեպս սկսում էի հասկանալ, պաշտամունքային վարդագույնն անցնում էր այտերից... Ստալինը երկրորդ անգամ էր մեռնում, տասնհինգ տարի անց: Որովհետեւ այդ ամբողջ ժամանակից արդեն ոչինչ չունեմ հիշելու, մորաքրոջիցս բացի, որ, պարզվում է, համենայնդեպս, ստալինյան դարաշրջանի բյուրեղյա մաքուր ներկայացուցիչն էր...

Մորաքույրին ավելի ու ավելի էր տհաճություն պատճառում հռետորների հոգեհանգստյան քրթմնջոցը: Սկզբում դեռ այնքան վատ չէր վերաբերվում, համենայնդեպս եւ ակադեմիկոսներ էին եկել, եւ պրոֆեսորներ, եւ գեներալներ... բայց հետո վերջնականապես մեռավ ծանծրույթից: Մի պահ ինձ հստակ թվաց, որ պատրաստ է վեր կենալ եւ անձամբ խոսք ասել: Նա որ հաստատ բառեր կգտներ: Նա կարողանում էր սրտանց արտահայտվել... Մարդուն ուրախացնելու գայթակղությունը նրա համար միշտ ուժեղ էր, ու կարողանում էր սրտանց գովել մարդկանց, որոնք նրա ջերմության մի աստիճանն էլ չարժեին: Սա ոչ մի չափազանցություն էլ չի, պատկեր չի. մորաքույրը բոլորից ողջն էր սեփական հոգեհանգստին: Բայց այստեղ էլ՝ ճիշտ այնպես, ինչպես չէր կարող իրեն օգնության հասնել մեռնելիս, իսկ ուրիշ ոչ մեկն այդպես էլ չեկավ, չնայած բոլորն այդ ժամանակ խմբված էին մահճակալի մոտ, ինչպես հիմա դագաղի կողքին... եւ

այստեղ էլ նրան այլ բան չէր մնում, քան դառնացած շրջվել: Մորաքույրը նորից պառկեց դագաղում, ու մենք նրան՝ հոգեհանգստից վերջնականապես հիասթափվածին, մահճակալով հանեցինք հիվանդանոցի բակի աշնանային արեւի տակ: Եվ հիարկե ես նորից դեմ արեցի իմ ջլուտ ուսը... ինձ կրկին գլխով արած այն ուշադիր-գորշաչյայի հետ կողք կողքի: «Ի՞նչ ես ասում, մորաքո՛ւյր: Թեթեւ է...»:

Բակն անճանաչելի էր դառել: Բակը խիտ բնակեցված էր: Դռների մոտ հեկեկում էին բուժքույրերն ու հիվանդապահ կանայք, հեկեկում էին արտակարգ հարգանքով առ հանգուցյալի ծառայությունները, որ իրենց արտահայտությունն էին գտել ներկաների մեջ... Խոժոռ, խումարաթափ չեղած սանիտարները, հաշմանդամների հետ մեջընդմեջ, իրենց շարքի միասնական կապույտ ուսով ասես հետ էին մղում ապուշների բազմությունը, որոնք, իրենց հերթին, համեստորեն շարված պառավներին էին մղում անտեսանելի գծից այն կողմ: Երկչոտ հիացմունքի համաչափ լույսով էր պայծառացած նրանց դեմքերը: Այդ լույսը մեզ վրա էլ էր ընկնում: Մենք ծգվեցինք: Ազգականները թաղմանը նույնպես ղեկավարություն են: Դագաղի ծոպերը, ժապավենաթելերը, կափարիչը, մեդալով բարձիկը, հեկեկացող ղեկավար քույրերը... գեներալը (մեկն էլ կար, որ այնքան էլ չէր շտապում)... ավտոմեքենաները՝ դռները բացած վարորդներով... փողային նվագախմբի աշնանային ոսկին, բասի ու ծնծղաների հեւացող արեւը... հիարկե՛: Նրանք կանգնել էին համեստ-հանդիսավոր, ոչ մի կերպ կարգապահությունը չխախտելով, գլխաշորերով, բայց՝ մաքուր, հենված փոցխերին ու բահերին,- այդ հակոտնյա ամբոխը: Գեներալը նստեց մեքենան ու շողշողաց ներսից, ասես բաս գալարափող էին տեղափոխում... ուղեկցում էին նրան հայացքով, անթարթ: Դագաղը լողում էր նավի պես, քթով հատելով մարդկային ալիքը՝ երկու մարդկության. անլիարժեքները հոսում էին աջից, ավելի քան նորմալները, հաջողակներն ու վաստակաշատները՝ ձախից: Դագաղի ետեւում ջուրը փակվում էր՝ բաժանված սահմանապահ սանիտարների ծովապատնեշով: Մենք նրանցից ենք. ահա թե ինչ հպարտություն կարդացի չծեւավորված ապուշի միասնական դեմքին: Ոգեշունչ նայում էին նրան, թե ինչ կդառնային, եթե համարձակվեին մեր պես մարդամեջ մտնել: Նրանք այն էին, որտեղից ելել էինք մենք բոլորս, որ հիմա, աշխատանքային ուղու վերջին, շողացնենք ազնվազարմ ալեհերքն ու մեդալները զնգացնենք: Նրանք մեզնից էին, մենք՝ նրանցից: Նրանք չէին համարձակվել՝ սանիտարից վախենալով. մենք նրան կաշառել էինք, ապա ենթարկել մեզ: Դժվարին ու փառապանծ էր դոկտորի ու պրոֆեսորի,

ակադեմիկոսի ու գեներալի մեր ուղին: Մեզնից շատերն օժտված էին անզուգական տաղանդով ու կենսական ուժերով, եւ այդ բոլոր ուժերն ու տաղանդը տրվել էին առաջխաղացմանը, որ ծլնգա մեդալն ու հաճկատար բացվի անիվավոր դագաղի դուռը...

Բայց եթե նրանք կիսամարդ են, ապա մենք՝ նույնպես... Նրանք չեն վերցրել, մենք՝ կորցրել ենք: Բայց կորցրել ենք հենց նրանց պահպանած կեսը: Զույգ-զույգ կանգնենք, ինչպես մանկապարտեզում, իրար ձեռք բռնենք, ամբողջանանք... միայն այդպես սարսափելի չէ կանգնել Նրա առաջ... Երբեք, երբեք չմոռանանք՝ ինչպիսին կլինեինք, եթե չգնայինք այս ամենին... ահա կանգնած ենք գորշ, հարգալից շարքով, խոշոր ու ծաղիկների պես պստլիկ գլուխներով, մեծ ու մանրագլուխներ, սահմանային սանիտարների ու վերջին կենդանի մարդու դագաղի միջեւ... իսկ մենք դեգերում ենք՝ մինչեւ վերջին կաթիլն ամեն ինչ տված, որպեսզի դառնանք այն, ինչով ըստ արժանվույն հիանում ենք. մեռյալներս թաղում ենք ողջին, մեր փայլով կուրացնում ողջերին... Չէ՞ որ նրանք ողջ են, ապուշնե՛ր... ահա թե աշնանային պաղության պես ինչ անցավ թիակներիս, ջահելպրկված մկաններիս արանքով: Ողջ են ու անմեղք: Քանզի նրանց միակ մեղքը՝ բռան մեջ, գրպանում... այն էլ գրպանները կանխատես կարում են... Եվ եթե այ այսպես նախ նայեք ապուշի հոգու մեջ, տեսնես աչքերի մոտիկ երկնագույն հատակը, հետո նույն գեներալի հոգու մեջ նայեք, կամ մեզնից ցանկացածի, տե՛ր Աստված, ավելի լավ է չնայենք, թե ինչ արժենք: Իսկ մենք թանկ արժենք, այնքան, որքան դրա համար վճարել ենք: Իսկ մենք վճարել ենք ամեն ինչ: Ու ես չեմ ուզում, ինչպե՛ս չեմ ուզում տեսնել մեր կյանքի ճանապարհի նեխահոտ դավաճանական փակուղիները, կարիերայի անխուսափելի աղեկծկումը: Ես մեր ողջ թափորը կանխապես բյուրեղյա մաքուր, աշխատասեր, տաղանդավոր, լիովին գործին տրված (կուզեք՝ մեծատառով...) մարդիկ եմ համարում: Ու մեր այդպիսի կասկածից վեր հոգիների մեջ էլ առաջարկում եմ նայել... ու վախեցած շրջվում եմ: Ահա թե ինչու չեն վազում-միանան մեզ, ոչ միայն հիացմունքից, այլեւ սարսափից քարացած: Ոչ միայն կիսագլուխները, այլեւ մենք, ախր, դժվար կտարբերենք սարսափը հիացմունքից, հիացմունքը՝ սարսափից, ու չենք էլ բաժանի՝ ոչնչից գլուխ չհանելով: Ո՛ւր մնաց ապուշը... նա հենց ամենասկզբից է վախեցել, իմաստո՛ւն, դեռ օրորոցում, կամ ավելի շուտ՝ փորի մեջ, ու չի եկել այստեղ, մեզ մոտ... այնտեղ էլ կա, օրորոցում, խաղալիք փոցխն ու բահը ձեռքին ու լաց չի լինում իր բժշկի համար. բժիշկը ողջ է, դուք եք մեռյալ: Մեզնից ոչ ոք չի կարող նայել Մահվան աչքերին, ոչ

թե նրա համար, որ սարսափելի է, այլ որովհետեւ ա ր դ ե ն: Հոգիներ՝ չծնված Դրախտում, հոգիներ՝ մեռած Դժոխքում. մորաքույրը հոսում է նրանց արանքով՝ որպես Ստիքս:

Մենք անկենդան շարքով անցանք այգու արյունոտ ուղյակով. այն արդեն վերջնականապես հարդարված էր (ե՞րբ հասցրին...). սանիտարների մոտ չթողած ապուշները մնացին ուղյակի ծայրին՝ գորշ պատի պես, ապա խառնվեցին ցանկապատին, չքացան: Իմ վերջին հայացքն ընդունեց միայն ամայացած աշխարհը. կարկամած, նկարած այգուց այն կողմ հառնում էր դամբանաբլուրը, ուր մեկիկ-մեկիկ գնում էին հիվանդներն իրենց բժշկի մոտ:

Մեր երկուսից ո՞րն է կենդանի: Ե՞ս, թե իմ պատկերացումն իմ մասին:

Նա մեծ բժիշկ էր, բայց ես հիմա էլ այս բոլոր էջերով չազատվեցի ճղճիմ տարակուսանքից. որպես բժիշկ ի՞նչ գիտեր իր հիվանդության ու մահվան մասին: Այսինքն, գրված էջերից դատելով՝ գիտեր... բայց ինչպե՞ս էր վերաբերվում այդ գիտելիքին... Ես այդպես էլ չպատասխանեցի հարցին, ինձ առաջվա պես շարունակում է հետաքրքրել՝ ինչպես է վարվում պրոֆեսիոնալն իր գիտելիքի հետ, երբ այն կարող է իր դեմ շրջվել: Գրողն ինչպե՞ս է նամակներ գրում սիրելիին: Մանկաբարձն ինչպե՞ս է անկողին մտնում կնոջ հետ: Դատախազն ինչպե՞ս է կաշառք վերցնում: Ի՞նչ կողպեքով է դուռը փակում գողը: Խոհարարն ինչպե՞ս է ուտելիք ճաշակում: Ծինարարն ինչպե՞ս է ապրում իր կառուցած տանը: Հեշտասերն ինչպե՞ս է ապրում մենակ... Աստված ինչպե՞ս է տեսնում իր Արարչության պսակը: Երբ մտածում եմ այս ամենի մասին, գալիս եմ եզրակացության, որ մեծ մասնագետներն էլ մարդ են: Քանզի նեղ ու թաքուն են գետնուղիները, որոնցով պայծառ շողերի տակ շարժվում է նրանց գիտակցությունը՝ շրջանցելով սեփական վարպետությունը, բանականությունն ու փորձը, կա մարդկայինի այդպիսի հաղթանակ մարդու հանդեպ, միշտ ու բոլոր դեպքերում... որ կարող ես միայն ծգված դեմքդ կրկին դարձնել Նրան՝ կապույտից, աստղերից ու ամպերից հյուսված մեր թողության համար, ու կանչել՝ Տե՛ր: Ինչ մե՛ծ է հավատը Քո, որ նույնիսկ այդ ես նախատեսել:

Էդուարդ ԼԻՄՈՆՈՎ

ԵՐԲ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՋԱՀԵԼ ԷԻՆ

1969 թվին բանաստեղծն ահավոր ջահել էր ու սենյակ էր վարձել Բաց խճուղու երեքհարկանի տան առաջին հարկում: Բաց խճուղի կարելի էր հասնել Պրեոբրաժենսկի հրապարակում ծերուկ տրամվայը նստելով: Մի քանի հոսպիտալների ու պարապուտների մոտով անցնելուց հետո տրամվայը հասնում էր հենց այդ խճուղին: Իսկ թե ինչ էր լինում հետո, ուր էր անհետանում տրամվայը, որ եզերքների ուղին էր բռնում, բանաստեղծն այդպես էլ չէր պարզել, քանի որ երբեք չէր խորացել այդ հանելուկային ուղղության մեջ: Ճիշտ չէր լինի ասել՝ «չէր համարձակվել խորանալ», քանի որ վտանգը չէր հետ պահում բանաստեղծին, այլ արվարձանների տեղագրության հանդեպ կատարյալ անտարբերությունը: Գավառական Խարկովի արվարձանում մեծացած բանաստեղծն ընդմիշտ գավառացու բարդույթ էր վաստակել: Նրա երեւակայության մեջ նախատեսվող ապագա կյանքի բոլոր դրամաները միշտ խաղարկվում էին քաղաքի կենտրոնի անհարմարավետ, բայց գեղատեսիլ հին տներում ու խոնավ դարավոր բակերում: Նույնիսկ Պրեոբարաժենսկի հրապարակը բանաստեղծի ընկալմամբ բարվարձան էր, Բաց խճուղին՝ գերարվարձան, իսկ հետո տրամվայն արդեն Սիբիր էր գնում:

Այդ ժամանակներում բանաստեղծին «Էդ» ու «Լիմոն» էին ասում: Բանաստեղծի կինը՝ Աննա Մոիսեեւնա Ռուբինշտեյնը, խոշոր տրամաչափի գեղեցիկ մի կին՝ պատկառելի հետույքով, որն արժանի էր բանաստեղծի կարծիքով գովասանական, բայց խիստ անլեգալ «Ցար-Ք...» մականվանը, բանաստեղծին «Լիմոնով» էր ասում: Չնայած երիտասարդ տարիքին, համառ ու նպատակասլաց բանաստեղծն ակնհայտորեն որոշ հարգանք էր վայելում շրջապատողների կողմից, դրա համար էլ նրան ազգանունով էին դիմում: Բանաստեղծի հիմնական զբաղմունքն այդ ժամանակներում իր մեջ բանաստեղծական իրավիճակներ ստեղծելն էր, այդ իրավիճակները հասունացման հասցնելը, սպասելն այն պահին, երբ յուրաքանչյուր բանաստեղծական թարախակույտ կպայթի պզուկի նման, եւ արտավիժածն արագ քսմսել թղթին: Նաեւ բանաստեղծի այդ ժամանակվա գործունեությունը կարելի էր համեմատել թշնամու թիկունք նետված ռադիստի ակտիվության հետ: (Ընդունիչը ներդրված է ռադիստի մեջ, ու նա շրջում է աշ-

խարհով մեկ՝ թրթռուն, կայտառ, միշտ պատրաստ՝ հաղորդագրություն ընդունելու):

Հաղորդագրություններ հաճախ էին գալիս, բայց՝ անկանոն: Դադարներին բանաստեղծը խմում էր, զրուցում ու կռվում ընկերների հետ: Բանաստեղծների բնակարաններ ու նկարիչների արվեստանոցներ էր այցելում: Գրքեր ու ձեռագրեր էր կարդում: Ամենից շատ գիտակցությունը կորցնելու աստիճան խմում էր բանաստեղծ Վլադիմիր Ալեյնիկովի եւ այն տարիների նրա կնոջ՝ Նատաշա Կուտուզովայի հետ: Նկարիչ Իգոր Վորոշիլովի հետ: Իր ընկեր Անդրյուշկա Լոգինի հետ: Եվ էլի հարյուրավոր կերպարների՝ այն ժամանակվա շքեղ ու արտակարգ բազմազան մոսկովյան ֆաունայի ներկայացուցիչների հետ: Սենյակի պատուհանից մտախոհ հայում էր Բաց խճուղում, ուղիղ դիմացը,- հոպիտալի պարսպից այն կողմ գտվող,- դիարանի դուռը: Բնականաբար, դիարանի դուռն ու դռան մոտ լացող հարազատները բանաստեղծին ստիպում էին մտածել հավերժության, կյանքի եւ այլ վատ, բայց անխուսափելի բաների մասին: Առաջ անցնելով՝ հարկ է ասել, որ բանաստեղծը մեկ անգամ չէ, որ ճակատագրի կամոք բնակություն էր հաստատել մեր հայրենիքի մայրաքաղաքի դիարանների մերձակայքում: Հաջորդ անգամ, ընդամենը մի քանի տարուց, ճակատագիրը նրան կբնակեցնի Պոգոդյան փողոցում ու նորից աչքի առաջ կդնի ցուրտ ներքնահարկ տանող դուռը:

Բանաստեղծը հենց նոր պոեմ էր գրել՝ «Երեք երկար երգ», ու շատ տխուր էր: Բանաստեղծը, ցանկացած բանաստեղծ, ոչ միայն մերը, պարպվելով (ուժ հավաքելով նոր թարախակույտի համար), հաճախ իրեն տխուր է զգում այնտեղից ստացած ծավալուն հաղորդագրությունը գրառելուց հետո: Բանաստեղծի տխրությունը խորանում էր նաեւ նրանով, որ նրա ընկերուհի Անանա այդ ամառ Խարկովում էր: Ծեր ռաբբի Զիգմունդ Ֆրոյդը ցինիկ կարծանագրեր, որ «պատանուն տանջում էր սեռական անբավարարվածությունը», որ կնոջ կարոտն էր բանաստեղծի տխրության ու մելամաղձի պատճառը: Բայց ծեր ռաբբիի հանաքներն ավելի ու ավելի են դուրս գալիս շրջանառությունից ու ավելի քիչ վստահություն են ներշնչում, սահմանափակվենք նրանով, սահմանափակվենք, ուրեմն, բանաստեղծի տխրության նաեւ այդպիսի բացատրությամբ, որպես հնարավորներից մեկը: Օգոստոսի 21-ին բանաստեղծը զգաց, որ շատ հիվանդ է: Արթնանալով Բորիս անունով կաղ մարդուն պատկանող, կոպիտ կահավորանքով սենյակում, նույնիսկ թունդ խումարի միջով բանաստեղծը կարողացավ հասկանալ, որ անհայտ պատճառով արդեն մի քանի շաբաթ ուռած լնդերն

ավելի են ուռել: Ուռել են այն աստիճանի, որ երբ բանաստեղծը վեր կացավ եւ ականջ դնելով ու համոզվելով, որ Իվանովների առաջադեմ սովետական ընտանիքի անդամներից ոչ մեկը տանը չի,տկլոր մտավ խոհանոց ու փորձեց մի բաժակ ջուր խմել. պարզվեց, որ կուլ տալիս կոկորդը ցավում է: Ուռուցքն ակնհայտորեն խոր թափանցել էր կոկորդը: Բանաստեղծը դուրս թքեց ջուրը: Խոհանոցի լվացարանն ակնթարթորեն լցվեց կարմրագորշ խյուսով՝ անհայտ բորբոսով վարակված նեխած ճահճի պես: «Քու մերը»,- գոչեց բանաստեղծը: Միայն հայհոյանքը կարող էր արտահայտել նրա մտահոգության աստիճանը: Վաղուց արդեն ուտելիս ցավում էր, բայց առաջին անգամ զգաց, որ խմելիս էլ է ցավում: Մտնելով լողասենյակ, որտեղ էմալապատ շաղափահաստող, բայց ավելի շատ դիակի մասնատման ավտոմատ մեքենա հիշեցնող այրիչի վրա կապույտ ժապավենի ծվենի պես անվախճան ֆշշում էր գազի բոցը, բանաստեղծը նայեց հայելուն: Իվանովների երեխաների կեղտոտած հայելին (Նինա մայրիկն ու Դիմա հայրիկը խիստ կոկիկ էին) անդրադարձնում էր ուռած մռութը. այդպիսի բազում կերպարանքներ կարելի է տեսնել գարեջրի կրպակների մոտ: Որպես մոսկովյան ֆաունայի տիպական ներկայացուցիչ՝ բանաստեղծը դեռ այնքան չէր կտրվել ժողովրդից, որ չդավաներ ժողովրդական նախապաշարմունքներին ու չընկներ ժողովրդական ծայրահեղությունների մեջ: Բերանը, ապա եւ շրթունքները չորս մատով հնարավորինս լայն բացելով՝ բանաստեղծը նայեց լնդերին:

Սովորաբար բաց վարդագույն՝ լնդերը հիմա դեղնականաչավուն էին: Փափուկ ծալքերով խոր իջնում էին ատամների վրա, այնպես, որ վերին ծնոտի առջեւի երկու ատամը ընդամենը մի քանի միլիմետրով էին նայում աշխարհին: «Քո՛ւ մերը,- նորից հայհոյեց բանաստեղծը:- Սղնավա՛նջ է»: Բոլոր չհիվանդացող կամ քիչ հիվանդացող մարդկանց պես, բանաստեղծն էլ չգիտեր՝ ինչպես վարվի: Դրանից երկու շաբաթ առաջ, երբ ուռած լնդերն առաջին անգամ գրավեցին ուշադրությունը, որոշեց բնազանցորեն վերաբերվել խնդրին՝ մոռանալ: Հիվանդության հանդեպ վերաբերմունքի այդ մեթոդը կոչվում էր «Ռուս Մեծ Նկարիչ Նեդբայլոյի անվան մեթոդ»: Մի անգամ ականատես լինելով, թե Ռուս Մեծ սյուրռեալիստ նկարիչ Նեդբայլոն ինչպես անզգուշորեն ձեռքին թափեց եռացող վռիկը՝ «սուրճ» կոչվող հեղուկը, ու չձեռնարկեց ոչինչ, ինչ ենթադրվում է այրվածքների դեպքում, այն է՝ ձեռքին ձեթ չքսեց, թարմ կտրած կարտոֆիլի շերտիկ չդրեց, նույնիսկ սառը ջրի տակ չպահեց ձեռքը, չմիզեց ձեռքին, բանաստեղծն ապշեց, նույնիսկ կարկամեց այդ անսպասելիությունից: «Կո՛ւյա,-

նկատեց բանաստեղծը,- ձեռից կգրկվես: Մի բան արա»: «Մինչեւ բուն մեռնելս ձեռիս ոչ մի բան էլ չի լինի»,- ընկերոջը հավաստիացրեց սյուրռեալիստը: «Ես կամքի ուժով ինձ ստիպում եմ մոռանալ այրվածքի մասին: Յոգի պես: Նույնիսկ բշտիկ չի լինի»: Բանաստեղծն այն ժամանակ կասկածոտ քմծիծաղեց, ի նշան անվստահության օրորեց գլուխն ու հարցական նայեց Ռուս Մեծի ընկերուհուն՝ «Բաբաշկին» մականունով հաստաբեստ, կարմրաշեկ մազերով աղջկան: Բաբաշկինը հայտնի սովետական ֆուտբոլիստի ազգանունն էր: Սյուրռեալիստն ընկերուհուն Սիբիրից էր բերել: Բաբաշկինը ցուցամատը տարավ քունքին ու պտտեց: Սույն շարժումը խորհրդանշում էր նրա վերաբերմունքը Ռուս Մեծի մի շարք խենթուխելառ գաղափարների հանդեպ: Նա իր Կոլկային հանճարեղ, բայց խփնված մարդ էր համարում: Բայց երբ մի շաբաթից բանաստեղծը նորից այցելեց Կոլկայի մոր՝ Մասլովկայում, Դինամո ստադիոնի մոտ գտնվող արվեստանոցը (Կոլկայի մայրը վաստակավոր սովետական նկարչուհի էր, ծաղիկներ էր նկարում, ոչ թե աղիներ ու մուտացված մարմիններ, ինչպես իր արվեստանոցը բռնազավթած որդի Կոլկան), ու տեսավ Կոլկայի ձեռքը, պարզեց, որ միայն մի քիչ մգացած մաշկաբիծն է մատնում այն տեղը, ուր բնական դեպքում հակայրվածքային քսուքով ու վիրակապով պատած վերք էր լինելու:

Բանաստեղծը նախ փորձեց իր լնդերի վերաբերմամբ կիրառել հենց Կոլկայի մեթոդը: Ինքն իրեն կրկնելով, որ ուռած լնդերը չեն ցավում՝ Աննային ճանապարհեց Խարկով: Կուրսկի կայարանից, որտեղից գնացքը նրան մի գիշերում սրընթաց կհասցնի Խարկով՝ Ցիլա Յակովլեւնա մայրիկի եւ անցյալ դարի բեկոր Բրեվդո տատիկի մոտ: Աննան որոշել էր շունչ քաշել խելագար ու կիսաքաղց կյանքից, որ նրանք Մոսկվայում վարում էին արդեն երկու տարի: «Գնա բժշկի, Էդ,- գնացք նստելիս ասաց Աննան:- Ապուշություն մի արա: Լնդերի վարակում է: Դրա հետ կատակ չեն անում: Գնա՛»:

Բանաստեղծը բժշկի չգնաց: Մոսկվայում առանց գրանցման էր ապրում, հետեւաբար չէր կարող օգտվել ըստ բնակության վայրի անվճար բժշկական ծառայությունից, ինչպես Մոսկվայի բոլոր նորմալ բնակիչները, նրա վեց միլիոն օրինական զավակները: Նա գուցե մեկ միլիոն... ապօրինի զավակներից էր: Ճիշտ է, կարող էր մասնավոր բժշկի այցելել, բայց այցը փող կարժենար, որը բանաստեղծը չուներ: Առանց այն էլ հալից ընկնում էր կաղ Բորիսին տալիք ամսական երեսուն ռուբլին ճարելու համար: Ուտելիքն ու խմիչքը փոքրիշատե հեշտ խնդիր էին, քան բնակարանի վարձը: Հանուն արդարության պետք է ասենք, որ բանաստեղծի ծնողնե-

ը, որոնք հավանություն չէին տալիս նրա մասնագիտությանն ու կենսակերպին, այդ ժամանակ սկսել էին նրան ամսական 25 ռուբլի ուղարկել: Ծնողական զոհողությունը միշտ ճիշտ պահին էր. գլխավոր փոստատանը փողը ցպահանջ ստանալով՝ բանաստեղծն իրեն երջանիկ էր զգում: Հետո ապերախտը կմոռանա իր բանաստեղծական ճակատագրին ծնողների այդ համեստ, բայց մշտական մասնակցությունն ու կպնդի, որ նրանց կամքին հակառակ է բանաստեղծ ու գրող դարձել: Ավա՛ղ, դրական ներդրումների հետ մեկտեղ,- արդեն հիշատակված 25 ռուբլին ու հորից ժառանգած՝ ձեռքերով բանելու ունակությունը՝ ռանդել, սղոցել, գործ ունենալ մետաղների հետ, ունակություն, որ յուրօրինակ դրսեւորում ստացավ,-բանաստեղծն ընդհատակյա դերձակ դարձավ ոչ թե մորից, այլ հորից ժառանգածի շնորհիվ,- բանաստեղծին էին փոխանցվել նաեւ ծնողների ինչ-ինչ նախապաշարմունքները: Բժիշկներին չսիրելն ու նրանց հանդեպ անվստահությունն այդ նախապաշարմունքներից էին: «Խաբեբաներ են,- պնդում էր հայրը:- Սանավանդ դեղ գրողները: Երբեք չխմես զզվելի հաբերը, տղա՛ս: Միայն ծայրահեղ դեպքում: Ճան որդիք մեկ էլ պարզում են, թե հաբերը, որ մարդիկ արդեն քառորդ դար օգտագործում են, սխալ են եղել»: Հայրը բացառություն էր անում միայն վիրաբույժների համար: Վիրաբույժների հանդեպ համակրանքը պարզ բացատրություն ուներ. բանաստեղծի հոր հայրը՝ Իվան Իվանովիչ պապը դպրոցում սովորել էր ապագա նշանավոր սովետական վիրաբույժ Բուրդենկոյի հետ:

Բայց վերադառնանք բանաստեղծի լնդերին: Լնդերն ուռած, անընդհատ լեզվի ծայրով շոշափելով՝ նա երեք գիշերում, օգոստոսի 14-ին, 17-ին ու 19-ին գրեց «Երեք երկար երգ» պոեմը: Պոեմը գրելուց հետո ողջ ազատված ուշադրությունն ուղղեց իր վրա եւ արձանագրեց, որ Մեծ Ռուս նկարչի մեթոդը անկիրառելի էր իր լնդերի նկատմամբ: Սակարոն ծամելը՝ մեկ-երկու օղակ երշիկի հետ, որ բանաստեղծի սովորական սնունդն էր, ավելի ցավոտ ու տառապագին էր դարձել: Գարեջրատան պատահական բաժակակիցների խորհուրդով բանաստեղծը սկսեց օրը մի քանի անգամ մարգանալուծույթով ողողել բերանը: Ամեն ողողումից հետո բանաստեղծի բերանի պեյզաժը կարելի էր համեմատել գուցե թե կովի փորոտիքի թարմ կտրվածքի բարդ զարդագրի հետ, երբ կապույտ երակները սերտ հյուսվում են մկանների ալ հատվածքին: «Մեծն Նեդբայլո-սյուրռեալիստի խելքի բանը չի այսպիսի պատկերը»,- մարգանալուծույթի ողողումից հետո բերանն ուսումնասիրելով՝ հառաչեց բանաստեղծը:

Բանաստեղծի լնդերը շարունակում էին ուռչել եւ ավելի ու ավելի չարա-

գուշակ տեսք էին ստանում: Լնդերից անընդհատ կեղտոտ կարմրագորշ արյուն էր ծորում, ու բանաստեղծի թուքը միշտ կանաչավուն-ալ էր: «Էսպես կստկեմ էլ»,- տագնապած մտածեց բանաստեղծն ու խորհրդի համար դիմեց ընկերներին: Բանաստեղծ Ալեյնիկովն առաջարկեց մարգանցալուծույթին մի քանի ճաշի գդալ աղ ավելացնել: «Աղը, Էդկա, չումակական հնագույն միջոց է: Թող ամբողջ վարակը դաղի... Ու ողողումն էլ՝ ավելի եռանդով...»,- եռանդուն Վոլոդկան բլթոցի ձայն հանեց: Նա անփոփոխ եռանդուն էր այդ տարիներին: Եռանդը մշտապես ամրապնդվում էր օրվա ընթացքում ընդունած ալկոհոլի բաժիններով:

Վորոշիլովը «Լիմոնիչին» հրամայեց բացել բերանը: Նրանք նստած էին Ալեյնիկովի խոհանոցում: Բանը Բաց խճուղուց ահագին հետ ընկած շրջանում էր «Խաղաղության պողոտա» մետրոյից ոչ հեռու, երկու հարյուր մետրի վրա Մուխինայի նշանավոր «Բանվորն ու կոլտնտեսուհին» քանդակից, որին ժողովուրդը «Խրտվիլակներ» է ասում:

«Լնդախտ է սկսվել, Լիմո՛նիչ»,- զննությունը վստահ ամփոփեց Վորոշիլովը:- Լատիներեն կոչվում է սկորբուտ: Վիտամինների անբավարարության հետեւանք: Միրգ ուտո՞ւմ ես: Սոխ պիտի ուտես, Լիմո՛նիչ: Ու սխտոր: «Սի» վիտամին առ: Թթու դրած կաղամաբն էլ վատ չի»:

Բանաստեղծը չհավատաց, որ լնդախտ է: Այդ սարսափելի միջնադարյան հիվանդությունը զուգորդվում էր արկտիկական անծայրածիր սառույցների հետ ու ոչ մի կերպ չէր տեղավորվում մեր հայրենքի գեղեցիկ ու պերճականաչ մայրաքաղաքի օգոստոսյան մթնոլորտում: «Ի՞նչ տանձիս լնդախտ, Ի՛գոր: Երեւի վարակում է, վիրուս...»: «Լիմոնովն արգելված հաճույքներ է պարգեւել տիկնոջը,- կծեց բանաստեղծուհի Այոնա Բասիլովան:- Անունն ի՞նչ է»:

Բանաստեղծն ամաչեց: Չնայած հենց նոր գրած էրոտիկ պոեմին, նա ընդհանուր առմամբ այնքան էլ փչացած տղա չէր: Նատաշա Ալեյնիկովան նուռ տվեց, ու բանաստեղծը, ցավից ծամածռվելով, լրիվ կերավ: Կսկծացնող հյութը լցվում էր վերքերի մեջ, ու լնդերը ցավոտ քոր էին գալիս: Ուզում էր եղունգներով պատռոտել... Վոլոդկայի ծնողները Կրիվոյ Ռոգում էին ապրում, քաղաքը Խարկովից էլ հինգ հարյուր կիլոմետր հարավ էր: Վոլոդկայի ծնողներն այգի ու բանջարանոց ունեին: Հենց օգոստոսին Վոլոդկան, Նատաշան, Բորոշիլովը, մեր բանատեղծն ու էլի մեկը Վոլոդկայի բազմաթիվ ընկերներից՝ գնացին Կուրսկի կայարան՝ կրիվոռոգյան ծանրոցը դիմավորելու: Ալեյնիկովի ծնողները ուղեկցորդի հետ հինգ-տասը արկղ կրիվոռոգյան հարավային հողի տարատեսակ պտուղներ էին ու-

ղարկել: Ժամանած պտուղները տարատեսք էին՝ մուրաբաներ, թթուներ, թարմ մրգեր, խոզաճարպ, ուկրաինական յուղոտ երշիկ, սմբուկի տնական խավիար՝ մեծ ապակե բանկաներով: Բանկաները խավիարից թանկ էին. պարունակությունն ուտելուց հետո դրանք պետք էր պահել եւ ուղեկցորդի հետ վերադարձնել Կրիվոյ Ռոգ: Նուռը կրիվոռոգյան պտուղ չէր, բայց Կրիվոյ Ռոգից մինչեւ Կովկաս, որի պտուղն էր նուռը, ընդամենը մի քայլ էր: Նուռը Կրիվոյ Ռոգում տասն անգամ էժան էր, քան Մոսկվայի կենտրոնական շուկայում:

Հաջորդ օրը բանաստեղծը հետեւեց ընկերների միանգամից բոլոր խորհուրդներին: Աղ արեց մարգանցալուծույթին, եւ «չումակական անվրեպ միջոցը» նրան ստիպեց տնքալ ու լացել ցավից: Սակայն ձգտելով վերջ տալ սեփական մարմնի դանդաղ նեխմանը՝ բանաստեղծը դիմացավ բերանի կրակին: Գնաց բանջարեղենի խանութ, սոխ, սխտոր ու թթու դրած կաղամբ առավ, հետո՝ դեղատուն, բերանը ողողելու լուծույթ ու «Սի» վիտամինի հաբեր ձեռք բերեց: Արշավանքից վերադառնալով՝ զբաղվեց բերանի ողողումով՝ երկու հեղուկով՝ դեղատնային ու չումակական մարգանցալուծույթով, հետո սոխ, սխտոր, կաղամբի թթու կերավ: Օրվա վերջին շատ հոգնած էր այդ ակտիվությունից:

Անվրեպ միջոցները չազդեցին, օգոստոսի 21-ին վիճակը կտրուկ վատացավ: Ըստ երեւույթին արդեն ուշ էր ժողովրդական բալասաններ ու վիտամիններ ընդունելու համար: Գուցե վիրաբո՞ւյժ էր հակավոր: Կամ գուցե մեռնում է: Մղձավա՞նջ: Բանաստեղծը փակեց բերանը, որ մղձավանջը չտեսնի: -Գուցե սիֆիլի՞ս է,- մտածեց բանաստեղծը:- Բերանի սիֆիլի՞ս: Բայց որտե՞ղ կարող էի վարակվել: Միակ պատահական կապի ժամանակ, որ իրեն թույլ էր տվել ընկերուհի Աննայի բացակայությամբ, բանը բերանին չէր հասել, սահմանափակվել էր ավանդական ու նույնիսկ փոքր- ինչ հնաոճ մերձեցումով: Բերանի սիֆիլիս գոյություն ունի՞, ու եթե ունի, ի՞նչ ճանապարհով է փոխանցվում: Լնդա՞խտ: Բանաստեղծը բացեց բերանը: Կարմրագորշ արյունը, լնդերից ծորալով, անընդհատ բերանն էր լցվում: -Գուցե պգուկի նման վերջնականապես ուռել են, հիմա կարելի է պայթեցնել, մաքրել, օդեկոլոն լցնել վրաներն, ու վաղը կչորանան ու կլավանա՞ն: Բանաստեղծը մաքուր սրբիչ վերցրեց, զգույշ դրեց լնդերի վրա ու սեղմեց: Դեմքը ցավից ծամածռվեց, աչքերից արցունք էր հոսում, ճակատն ու այտերը ու նույնիսկ ծոծրակը թրջվեցին կպչուն քրտինքից: Հետ քաշեց սրբիչը: Լնդերի արյունոտ դաջվածքներ: Նայեց հայելու մեջ ու տեսավ, որ սրբիչի կտորի նախշը տպվել է լնդերին, ինչպես ջրիկ ցեխն է անցած մար-

դու ոտնահետքերը պահպանում: Աչքի առաջ, իրար ագուցվելով, ճերմակապղտոր, ծխախոտի ծխի պես օղակներ էին լողում: Բանաստեղծն օրորվեց ու ծունկը խփեց լոգարանակոնքի եզրին: Հենց այդ պահին հասկացավ, որ ջերմությունը բարձր է: Խոհանոցում, հարեւանների բուֆետի դարակներից մեկում, սովորականի պես, վիրակապ, բամբակ, յոդ, տարատեսակ հաբեր ու ջերմաչափ պիտի լիներ: Ճակատագրի տարօրինակ հեգնանքով հարեւանուհի Նինան՝ մաքրակենցաղ բոզավուն, բանաստեղծին անհայտ սովետական հայտնի դերասանուհուն նման մի կին (Աննան էր այդպես, բանաստեղծն ինքը հազվադեպ էր կինո գնում), բուժքույր էր: Ավաղ, բանաստեղծը հարեւանուհու օգնությանը չէր կարող դիմել. նկարագրվող շրջանում վեճը ժամանակավորապես բաժանել էր հարեւաններին: Կանայք էին վիճել՝ Նինան ու Աննան: Ոչ բանաստեղծը, ոչ էլ Նինայի պես բայացակամ ու գեղեցիկ, ժամանակից շուտ ճերմակած ինժեներ Դիման կռվել չգիտեին:

Բանաստեղծը հարեւանների բուֆետի դարակում գտավ ջերմաչափն ու տասը րոպեով անկողին մտավ՝ սպասելով սնդիկի սյան դատավճռին: Տասը րոպե որոշում էր, թե ինչ է անելու, եթե ջերմաչափը 38 աստիճանից բարձր ցույց տա: Տաք վաննա կընդունի ու արագ քայլքով կկտրի տասնհինգ կիլոմետր: Ուրալյան փոքրիկ Ալապաեւսկ քաղաքում մեծացած Իգոր Վորոշիլովը սովորաբար այդ արմատական ժողովրդական միջոցին էր դիմում ուժեղ մրսածության դեմ: Գուցե լնդախտի կամ բերանում բույն հյուսած այլ վարակի դեպքում է՞լ օգնի:

- Քո՛ւ մերը՝ գոչեց տառապյալը,- նայելով ջերմաչափին: - 39,2: Ինչի՞ արթնանալուն պես չեմ զգացել այսքան բարձր ջերմությունը:- Որովհետեւ զբաղված ես քո բերանով, որ ցավում է բաց վերքի պես ու կլանում ողջ ուշադրությունդ,- պատասխանեց իրեն: Երեկ միայն կես շիշ օղի խմելուց հետո կարողացար քնել... Բանաստեղծը վեր կացավ: Ու դժվարությամբ հասավ լոգարան: Բացեց ծորակները...

Խմեց շշի մեջ մնացած երկու հարյուր գրամ օղին, ու զգալով, որ հենց հիմա գիտակցությունը կկորցնի, մտավ տաք լոգարանակոնքի վրա կանգնած գոլորշու մեջ, դողալով մտավ եռման ջրի մեջ ու հիշեց ինչ-որ հռոմեական կայսրի, կարծես Տիբերիոսին, որը մարմինը պատած խոցերից բուժվում էր ծծմբային լոգանքով: - Գուցե ես է՞լ պիտի խոցերս ծծմբաջրով ողողեմ: Բայց որտեղի՞ց ճարեմ...

Պառկեց այդ եռման զարհուրանքի մեջ, ինքը՝ զարմանալիորեն սառը, մինչեւ այն պահը, երբ սկսեց թվալ, որ հիմա գիտակցությունը կկորցնի: Մի

ոտքը վաննայից հանեց ու չկարողացավ բավականաչափ բարձրացնել՝ ընկավ: Սպիտակ օղակները ծխի անթափանց օղակներ դարձան: Եվ իրարից կառչելով՝ թռչող ափսեների երամի պես ճախրում էին բաց կանաչ պատի տեղում:

Բայց համենայնդեպս ոտքի կանգնեց եւ, օ՛ երկաթյա պոետ, անցավ բարբարոս-սկյութական բուժման հաջորդ փուլին: Մերկ մարմնին հագավ բրդե սվիտերը: Հետո՝ վերնաշապիկը: Վրայից՝ կապույտ վերնաշապիկը: Հագավ ամենահաստ մուգ կապույտ շալվարը, աշնանային ծանր կոշիկները, գաբարդինե սեւ պիջակը, որ բանաստեղծին էին մնացել այն բարեկեցիկ ժամանակներից, երբ պողպատագործ էր Խարկովում: Վիզը փաթաթեց շարֆով ու դուրս եկավ՝ սուզվեց մոսկովյան օգոստոսի հուրհրացող հնոցի մեջ: Բաց խճուղու բնակիչները, մեծամասամբ կարճաթեւ վերնաշապիկներով, հետաքրքրությամբ էին նայում սեւ պիջակով գունատ արարածին, որն անհաստատուն քայլով շտապում էր Պրեոբրաժենյան հրապարակ տանող տրամվայի ռելսերի երկայնքով: «Երեւի հիվանդ տղա է,- մի պառավ կարեկցանքով ասաց մյուսին:- Հիմա բոլորը քաղցկեղ ունեն: Նույնիսկ ջահելները»:

Սպա հայրը մի անգամ բանաստեղծին ասել էր, որ լրիվ հանդերձավորմամբ զինվորը զորավարժություններին քայլում է ժամում վեց կիլոմետր արագությամբ: Հետեւաբար երկուսուկես ժամը համապատասխանում է վորոշիլովյան-ալապաեւյան կիլոմետրերին: Տասնհինգ րոպեում հասնելով Պրեոբրաժենյան հրապարակ՝ բանաստեղծը հիվանդ քրտինքով հաջորդաբար թրջեց սվիտերն ու առաջին վերնաշապիկը: Վաղուց չլվացած սվիտերի հետ փոխազդեցության մեջ մտնելով՝ քրտինքը բանաստեղծի շուրջը տհաճ թթվահոտ էր տարածում: Բանաստեղծն ասես պարուրված լիներ նեխահոտ ամպով: Բայց քանի որ ժամանակակից բանաստեղծ էր, «պոետ-մոդի», այսինքն՝ անիծված պոետ, թթվահոտը չշփոթեցրեց նրան ու նույնիսկ ուրախացրեց իր իսկականությամբ: Հարկ է նշել, որ մեր բանաստեղծը հնաոճ վարդ-մանուշակ պաշտող հեղինակ չէր, իր գործերում հաճույքով հիշատակում էր պրոլետարական եռակի օդեկոլոնը, արտաթորանքը, փոշին ու ցեխը: Գեղեցկություններին բանաստեղծը գերադասում էր իսկությունները:

Պրեոբրաժենյան հրապարակում գազանի պես ոռնում էին ավտոմեքենաների ու տրոլեյբուսների շչակները, եւ Պրեոբրաժենկայից Իզմայլովո տանող գծերի ողջ երկայնքով, միջնադարյան նկարիչներից մինչեւ Ջոտտո տարօրինակ հեռապատկերի վրա, տարածության մեջ չփոքրանալով՝

կանգնած էին երկվագոն տրամվայները: Ու զանգ էին տալիս: Առաջին տրամվայի մոտ մի մարդկային արարած էր պառկած ու գոռում էր: Կին էր: Կնոջ մի ոտքը, դանակով ճեղքված ձկան դիակի պես, երկու կես էր եղել, ու կեսերը զարմանալիորեն սպիտակ, համարյա անարյուն էին: Բանաստեղծը մի քանի րոպե ծանր նայում էր իր ոտքերի տակ տառապագին թպրտացող ինչ-որ մեկի կյանքին եւ կարեկցանքի ու մարդասիրության թրթիռ անգամ չզգաց: Միայն կատարվողը ներսն առնելու ցանկություն, որ հետո օգտագործի բանաստեղծական ստեղծագործություններից որեւէ մեկում:

Աղաղակներից հեռանալիս ասես բամբակի միջով քայլեր: Օդը, դիմադրելով, խփվում էր ճակատին ու կրծքին, ու հիվանդ մարդը դիմադրությունը չէր զգում:

Ուղեւորության նպատակակետ էր ընտրել ընկերոջ՝ Անդրյուշկա Լոգինի բնակարանը: Այնտեղ, Խաղաղության պողոտայից այն կողմ, ուր նեխած Յաուզա գետակի վրա հառնում է ճարտարապետական մի եզակի հուշարձան՝ Եկատերինայի ժամանակների ջրանցույցը, կարելի է հասնել մեկուկես ժամում: Սակայն, որոշելով խստորեն հետեւել վորոշիլովյան դեղատոմսին ու պահել տասնհինգ կիլոմետրը, բանաստեղծը դեռ մի ժամ էլ պիտի քայլեր: Դրա համար էլ Պրեոբրաժենկայից կես ժամով խորացավ քաղաքում ու, նայելով ժամացույցին, կես ժամ վերադառնում էր Պրեոբրաժենկա: Ու դրանից հետո միայն բանաստեղծը, մի քանի կեղտոտ բեռնատարների հետ, ուղղվեց դեպի կանաչ արվարձանները: Մասնավոր խղճուկ բանջարանոցների մոտով, ոչ մեծ գեղատեսիլ հին գործարանների մոտով դուրս եկավ եզրափակիչ ուղյակ: Քաղաքակրթությունը վաղուց էր եղել Մոսկվայի այս մասում, երկար չէր մնացել, դրա համար էլ խղճուկ փոքրիկ գործարանները թաղված էին թավուտներում ու այգիներում, ցածրիկ կացարանների բնակիչները փոքրիկ բանջարանոցներ էին սարքել պատուհանների տակ, հավանոցներ կառուցել: Նա անցնում էր գյուղերով՝ չմոռանալով արագության մասին ու լարելով բոլոր ուժերը: Այուս վերնաշապիկն էլ թրջվեց ու սկսեց թրջվել պիջակը... ԵՒդերն աստիճանաբար մտքից դուրս էին գալիս, քանի որ մարմնով մեկ տարածվող ցավն ու մարմինը շարժելու հոգսը գրավել էին թրջված հետիոտնի ողջ գիտակցությունը:

Հենց Անդրյուշկայի տան մոտի մթերայինից մի շիշ օղի առավ: Ծիշը նրան տալով՝ վաճառող կինն ասաց. «Ա՛յ տղա, էսօր քեզ հայելու մեջ նայել ե՞ս»: Տղան գլխով արեց:

Դուռը բացեց Վորոշիլովը: Պոչին տնկված տափակածուկ հիշեցնող Իգորը բանաստեղծին փոխարինել էր Անդրյուշկայի մտերմագույն ընկե-

րոջ ու կենվորի պատվավոր պաշտոնում: «Լիմո՛նիչ, բո՛զը, ոնց որ մահը լինես: Անդրյ՛ուխա, նայի՝ ում է նման: Երեսին գույն չկա»:

Մորուքավոր Անդրեյը, վրձինը ձեռքին, դուրս եկավ միջանցք: «Ի՞նչ է պատահել, Լիմո՛նիչ: Ինչի՞ ես էդ վիճակում փողոցներն ընկել... Ուզում ես ոտերդ տնկե՞ս»:

«Լնդախտ ունի»,- ասաց Վորոշիլովը:

«Բա՛ց բերանդ»,- խնդրեց Անդրեյը:

«Երեք ժամ է՝ ձեր մոտ եմ գալիս, ամբողջ Մոսկվան կտրելով»,- բացատրեց բանաստեղծը: Ու բացեց բերանը:

Բուժակ Լոգինը հաստատեց, որ Վորոշիլովը ճիշտ է. բանաստեղծի բերանում լնդախտ է: Ու որ, այսօր արդեն ուշ է, բայց վաղը բանաստեղծին կտանի ծանոթ բժշկի մոտ: Բուժակ Անդրյուխան բազմաթիվ ծանոթ բժիշկներ ուներ, որովհետեւ բուժակի մայրիկը բժիշկ էր ու ներկայումս գտնվում էր Բուխարեստում՝ սովետական դեսպանատան բժշկի պաշտոնում: Մինչ այդ մայրիկը բժիշկ էր աշխատել Պեկինում սովետական դեսպանատանը: Անդրյուխան, ում մայրիկը դեռ քնքուշ տարիքում խցկել էր բուժակների դպրոց, բժշկությունը չէր սիրում, ուզում էր նկարիչ դառնալ: Նկարագրվող ժամանակներում նա շաբաթը մի քանի գիշեր գնում էր իր սակավամարդ փոքրիկ գործարանն ու քնում այնտեղ՝ ապարդյուն սպասելով, որ բանվորներից մեկնումեկը վրան եռման յուղ կածի կամ մեքենան կկտրի մատը: Վնասվածքներ հազվագյուտ էին լինում, ու խնայած սպիրտը Անդրյուխան բերում էր տուն: Հաճույքով կլլում էին անձամբ Անդրյուխան եւ նրա ընկերներն ու կենվորները:

«Ճատ պիտի չարչարվես, որ Մոսկվայում, այն էլ ամռանը, լնդախտով հիվանդանաս,- բնավ ուրախ տոնով փաստեց Անդրյուխան:- Վախենամ, որ ստիպված պիտի հիվանդանոց տանենք: Ամեն ինչ շատ է խորացել: Ինչի՞ չէիր զանգում, Է՛դ»:

«Հույս ունեի, որ կանցնի,- ասաց բանաստեղծը:- Ստածում էի՝ դատարկ բան է, սարսափելի ոչինչ չկա»:

«Բայց չի կարելի, չէ՞, էդքան խավար լինել,- Անդրյուշկայի ջահել մորուքը զայրացած տեսք ուներ. բուժակն ընդամենը քսան տարեկան էր:- Մի գեղեցիկ օր, Է՛դ, ոտերդ կտնկես ախր...»:

Բանաստեղծը թոթվեց ուսերը: Նա մի քանի տարով մեծ էր Անդրյուշկայից ու տեսականորեն հասկանալի ոտերը տնկելու հավանականությունը գործնականում երեւակայությունը չէր հուզում: Քամահրանքն առողջության հանդեպ այդ առասպելական տարիներին տարածված էր Մոսկվայի

նկուղա-անլեգալ-ոչ պաշտոնական ֆաունայի շրջանում: Մի քանի տարի անց նրանց ընդհանուր ընկեր Վիտալի Ստեսինը (հենց նա էլ բանաստեղծին ծանոթացրել էր Անդրյուշկայի հետ) պոկեց պզուկն ու մենակ, իր համար պառկած էր Լուկովոյ նրբանցքում, 41 աստիճան ջերմությամբ՝ չկասկածելով, որ արյան վարակում է ստացել: Պատահական նրա մոտ մտած ընդհանուր ընկեր բժիշկ Չիկովանին տեսավ մեռնող տխմարին ու շտապ օգնություն կանչելով՝ նկարչին ուղարկեց հիվանդանոց: Ու դրանով փրկեց նրա կյանքը:

Բանաստեղծը օղու շիշը անձնական շիշ հռչակեց: Ու մեն-մենակ խմեց ամբողջը՝ անգթորեն վառելով խեղճ բերանը: Վորոշիլովն ու բուժակը ջրով բացած մի շիշ սպիրտ խմեցին: Եկավ բանաստեղծ Ալեյնիկովն ու էլի մի տիպ՝ Վոլոդկա Վորոնցովը, ու ողջ ընկերախումբը որոշեց գնալ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդես՝ գարեջուր խմելու: Հսկայական, հարյուրավոր այցելուների համար նախատեսված բացօթյա գարեջրատունը (կառափնարան հիշեցնող երկնագույն վրան-փայտամած) երիտասարդությանը գրավում էր բաց օդով ու նաեւ նրանով, որ այնտեղ հաճախ էին խոշոր, ոսկրոտ կտորներով կտրատած տառեխ ուտելու: «Դու մնա, Էդ, քնի»,-Անդրյուշկան խղճահարությամբ նայեց խոհանոցի սեղանին ընկած բանաստեղծին:

«Չէ՛, ես էլ եմ գալիս»,- բանաստեղծն օրորվելով վեր կացավ: Բանաստեղծի երկար ու ոչ այնքան մաքուր մազերը քրտնած էին, վերնաշապիկներն ու քրտնոտ պիջակը կպել էին իրար, հիմար շարֆիկը ծռվել էր՝ կոկորդին սեղմվելով: Գզգզված հիվանդ բանաստեղծը թերեւս մի ուրիշ բանաստեղծի էր հիշեցնում, բայց ֆրանսիական՝ մսյո Իսիդոր Դյուկասին՝ նրա առեղծվածային մահվան գիշերը: Տղաները մի քանի շիշ սպիրտ վերցրին: Վորոշիլովն ու Ալեյնիկովը թեւանցուկ արեցին բանաստեղծին, ու ողջ ընկերախումբը դուրս թափվեց՝ ուղիղ կիզիչ արեւադարձային օրվա մեջ:

«Խրտվիլակների» քանդակի մոտ իջան տրամվայից: Ամռան ընթացքում շիկացած ու կակղած անձայրածիր ասֆալտե դաշտերով հասան «հարբած հրուշակագործի երազանքի» մուտքի մոտ, սովետական Դիսնեյլենդը՝ Գյուղատնտեսական ցուցահանդեսի տարածք: Սովետական յուրաքանչյուր հանրապետություն այնտեղ իր պագոդան[1] ունի, եւ հանրապետություններն արդեն տասնամյակներ հնարամտությամբ ու ինքնատիպությամբ մրցում են պագոդաների արտաքին ու ներքին հարդարման հար-

1. Բուդդայական մեհյան:

ցում: Հանրապետական տասնհինգ պագոդաներից բացի՝ անասնապահության, հացահատիկային կուլտուրաների տաճարներ, այգեգործական ու բանջարանոցային կուլտուրաների տաճարներ են հառնում տարածքում: Ացտեկների հանգույն՝ սովետական քաղաքացիները գալիս են ԺՏՆՑ՝ ցորենի հասկին ու եգիպտացորենի կողրին երկրպագելու: Ցլերի, եղջերուների ու ձիերի քանդակներ են զարդարում տարածքը: Բայց ԺՏՆՑ-ի պագոդաների ու սաղարթախիտ ծառերի արանքով անցնող փոքրիկ ջոկատի համար ամենագեղեցիկն ու սիրելին վրանն էր՝ գարեջրի երկնագույն տաճարը:

Նրանք սովետական Դիսնեյլենդի տարածքում մնացին մի քանի ժամ՝ ընդհուպ մինչեւ փակվելը: Սկզբում տեղ բռնեցին երկար ու լայնարձակ մրջնահերթում՝ հարյուրավոր իրենց պես խանդավառների հետ, ամեն մեկը ութ (՛) գավաթ գարեջուր ստացավ ու երկուական բաժին ոսկրոտ տառեխ՝ ցուցահանդեսային ափսեներով: Այդպիսով, ուզած պահի, երբ ցանկություն ունենային, կարող էին ցած թռչել կառափնարանից ու հայտնվել մոտակա փշոտ թփուտներում: Մեր տղաները գյուղատնտեսական բաց օդին միզելու հաճույքը գերադասեցին գարեջրատան զուգարանում միզելու տհաճությանը: Բանաստեղծ Ալեյնիկովը պնդում էր, որ զուգարանից նեխած ծովախեցգետնի գարշահոտ է փչում:

Բանաստեղծը պնդեց, որ իր գարեջրին էլ սպիրտ ավելացնեն: Պատրաստվում էր կամ մեռնել, կամ իր միջից վռնդել հիվանդությունը: Ըստ այդմ՝ առատորեն ոսկրոտ ապխտած ձուկ էր ծամում՝ ալկոհոլով ցավազրկված, առանց ցավի, բայց եւ իմանալով, որ մանր ու խոշոր քիստերը խրվում են իր տառապյալ բերանը:

Ընկերներն անկարեկցանք էին նայում նրան, քանզի կարեկցանքի զգացումն անծանոթ էր այդ երիտասարդությանը: Ամենամեծը՝ Վորոշիլովը, 28 տարեկան էր, Ալեյնիկովը՝ 23, Վորոնցովն ու Անդրյուշկան՝ քսանական: Պատանիներն այդ տարիքում դաժան են լինում, հանգիստ մեռնում են ցանկության դեպքում: Մարդիկ կյանքը սկսում են գնահատել միջին տարիքից, քանզի գնահատելու համար կյանքին պիտի սովորես: Ընկերախումբը աղմուկով քննարկում էր Վոլոդկա Յակովլեւի ինքնաբեր, պոստէքսպրեսիոնիստական գեղանկարչության արժանիքները: Ընդհանուր հայտարարի եկան, որ չնայած Յակովլեւի աշխատանքի դպրոցը կամ ուղղությունը կամ ոճը չի վերաբերում բուն ավանգարդիստականին (Մոսկվայում միայն ապուշը չգիտեր, որ ավանգարդիստական են պոպ-արտն ու հիպերռեալիզմը), Վոլոդկա Յակովլեւն անկասկած հանճար է: «Վոլոդկայի

սրտից մինչեւ կտավ տարածությունն այ էսքան է»,- Վորոշիլովը ցած դրեց գավաթն ու պատկերեց, թե որքան փոքր տարածություն է Վոլոդկայի սիրտը բաժանում սեղանից, որի վրա թափված էին խրախճանքի մնացորդները՝ ձկան կաշվի փերթեր, ծխախոտի քնթուկներ, թերթի ճմռթած պատառներ: Վորոշիլովի երկու կապտած ափերն ու դրանց միջնատարածքը, որտեղ գարեջրի գավաթն ու վորոշիլովյան շապկի անորոշ գույնի հատվածն էին տեղավորվել, հենց այն միկրոպեյզաժն էր, որ բանաստեղծը տեսավ անգիտակցության մեջ գլորվելուց առաջ:

Ուշքի եկավ թրթռոցից: Սարմինը ցնցվում էր անհայտ ծագումով հրումներից: Աչքերը բացելով՝ մի քանի ոտք տեսավ, մի զույգը՝ բոբիկ, մյուս զույգը՝ կոշիկներով: Բոբիկ թաթերը խոշոր ու այլանդակ էին: Վորոշիլովինն են՝ կռահեց նա: Անդրյուշկայի ձեռքերն ու ոտքերը մեծ չէին: Հասկացավ, որ պառկած է հատակին: Անդրյուշկայի ձայնը կարեկից հարցրեց. «Ողջ ե՞ս, Լիմո՛ն»:

«Ողջ եմ»:

«Բերա՞նդ ոնց է»:

Նա սարսափով հիշեց խոցոտ ու արնահոսող բերանը ու լեզուն զգույշ տարավ ներսով: Ոչինչ չզգաց: Ապշահար՝ լռում էր: Լեզուն նորից տարավ՝ արդեն ավելի ուժեղ սեղմելով: Ոչի՛նչ: «Ոչ մի բան չեմ զգում»,- վախեցած մրմնջաց նա:

«Էրեկ լրիվ ջնջվել էիր: Ոնց որ մեռել»,- ասաց վորոշիլովյան ձայնը, եւ այլանդակ թաթերից մեկը քորեց մյուսին:

«Հաստատ ոչ մի բան չի հիշում»,- ասաց Անդրյուշկան:

«Ուտել եմ ուզում»,- ասաց բանաստեղծը: Իր համար էլ անսպասելի:

«Արի քեզ համար ձավարի շիլա եփեմ: Շիլան կուլ տալը հեշտ է, ծամելու կարիք չկա»,- Անդրյուշկան շիլաների ու կաթնամերքի կողմնակից էր:

«Լիմոնիչը էրեկ վոբլա էր խեղդում»,- ասաց Վորոշիլովը:

«Էդ էրեկ էր: Էրեկ փշալարի սալաթ էլ կխեղդեր»:

«Շիլան լավ է,- համաձայնեց բանաստեղծը:- Կարագով»: Ու վեր կենալով՝ գնաց զուգարան: Բայց վախեցավ հայելու մեջ նայել ու վերադարձավ այն անկյունը, որտեղ, պարզվեց, պառկած էր Անդրյուշկայի կարճլիկ մատրասին: Անդրյուշկան մահճակալին քնել չէր սիրում ու նախընտրում էր կարճլիկ մատրասը, որը ցանկության դեպքում սենյակից սենյակ էր տանում ու երբեմն քնում նույնիսկ խոհանոցում: Մատրասի կողքին դրված էին նախաներկած կտավները: Բանաստեղծի սեւ պիջակն ընկած էր ներկի պարկուճների կույտին: Մոր բացակայությամբ Անդրյուշկան մեծ սեն-

յակն արվեստանոց էր սարքել: Բանաստեղծն ուզում էր վերցնի պիջակն ու կախի աթոռի թիկնակին կամ Անդրյուշկայի նկարակալին, բայց պարզեց, որ զուգարան գնալը խլել է բոլոր ուժերը: Ուստի փռվեց մատրասին ու վայրկենապես քնեց:

Անդրյուշկան արթնացրեց նրան, քթի տակ դրեց շիլայի ափսեն: «Ոնց որ շանը»,- ասաց բանաստեղծը: Բայց մեծ ախորժակով երկու ափսե կերավ ու փորը տաքացնելով՝ նորից քնեց: Ծիլան կուլ տալիս ոչ մի ցավ չզգաց:

Արթնացավ հաջորդ օրը: Վաղ առավոտ էր: Անդրյուշկան չկար, հարեւան սենյակում, Անդրյուշկայի մայրիկի մահճակալին, սավանի տակից երկար, միջնադարյան քիթը ցցած՝ խռմփացնում էր Վորոշիլովը: Մահճակալի շուրջը, հատակին, տասնյակի չափ բաց գրքեր էին թափված: Վորոշիլովը միանգամից մի քանի գիրք կարդալու տարօրինակ սովորություն ուներ: Իգորի բոբիկ ու շատ կեղտոտ ոտնաթաթերին, քամուց փքված վարագույրի միջով անցնելով, թռչկոտում էր արեւը:

Բանաստեղծը գնաց լոգարան ու հայելու առաջ կանգնելով՝ բացեց բերանը: Ինչ էլ տեսներ, չէր վախենալու, քանի որ ցավն անհետացել էր: Արթնանալուց հետո արդեն այտի վրայից սեղմել էր լնդերը, ու չէր ցավացել: Մատներով ձգեց բերանի անկյունները...

Հովվերգական պատկեր բացվեց հայելու մեջ: Դեռ օգոստոսի 21-ին չարագուշակ դեղնասկեգույն՝ լնդերը վարդագույն ճերմակ էին դարձել օգոստոսի 23-ի առավոտյան: Ատամնե՛րն էին հայտնվել: Փոքրիկ ժայռագագաթներից դուրս էին պրծել լնդերից: Նախկինում բորբոքված մակերեւույթները նստել էին, եւ նույնիսկ փոքրիկ լեզվակը կոկորդի խորքում կարմիր-աշխույժ ու հանգիստ էր: Ամենամեծ ուռուցքը, դիմացից, որ 21-ին ատամներից միայն մի քանի միլիմետր էր թողել, բնականաբար չէր հասցրել լրիվ անհետանալ, բայց վերեւ էր քաշվել: Բանաստեղծը հաճույքով փակեց բերանը, կանգնեց ցնցուղի տակ, տհաճությամբ, բայց գիտակցված անհրաժեշտության զգացումով հագավ վերնաշապիկներից մեկը, քրտնոտ փալաս-փուլուսն ու ներկոտված պիջակը գցեց Անդրյուշկայի աերոֆլոտային պայուսակի մեջ եւ, գեղգեղուն քթային դայլայլներ արձակող Վորոշիլովին չարթնացնելով, դուրս եկավ ու սուզվեց զարմանալիորեն թարմ առավոտի մեջ: Գուցե արդեն աշուն էր:

Եվս երեք օր անց բերանի ուռուցքը լրիվ անհետացավ, ու տխմար հիվանդությունը, որ ըստ երեւույթին սխալմամբ էր հայտնվել Մոսկվայում, հեռացավ իր արկտիկական լայնարձակություններն ու հարձակվեց սովորական զոհերի՝ երեւի եղջերվապահների վրա:

Վիկտոր ԵՐՈՖԵԵՎ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՂՐԵՎԱՆԻ

Բելլա Իսահակովնա Կոխը, թափանցիկ մակինտոշը հագին, դեմքը տավարի մսի պես կարմիր, ուրախ-ուրախ անցնում էր ամառանոցային ավանով:

Հրեուհիները խիստ տարբերվում են ռուս կանանցից: Դա, ըստ էության, քչերը գիտեն: Բայց նույնիսկ հրեուհիների մեջ Բելլա Իսահակովնան անկասկած եզակի է: Դա իմ ու Բելլա Իսահակովնայի գաղտնիքն է: Մենք երդվել ենք, որ այն կպահպանենք, բայց կան բաներ, որ մեզնից ուժեղ են: Խոսքս մետաֆիզիկայի մասին է: Գուցե հենց այդ պատճառով են հրեաները աստվածընտիր ժողովուրդ դարձել: Այսպիսի հրեուհիների շնորհիվ, ինչպիսին Բելլա Իսահակովնան է: Այդ ջահել, մի անգամ ծնած կինը: Նա քսանվեց տարեկան է: Նրա մազերը գանգուր ոլորվում են:

Խոտի ցողունը ծամելով՝ կանգնել էի նրա ճանապարհին:

Երկու ազգությունների ինտելիգենտները կուզեին հարթել տարբերությունները կամ նույնիսկ ժխտում են դրանք: Իզուր են ջանում: Ես խուլ կխոսեմ, ակնարկներով, որ չբարկացնեմ ոչ մեկին, չնեղացնեմ:

Աստծո գոյության տարբեր ապացույցներ կան: Դրանց մեծ մասը հերքված է:

Չնայած ես ու Բելլա Իսահակովնան ծանոթ չէինք ու չէինք բարեւում, բայց իրար մասին ինչ-որ բաներ լսել էինք:

Ես Բելլա Իսահակովնայի մասին լսել էի, որ փնթի է ու նրա տունը՝ աղբանոց, որ վատ տնտեսուհի է ու բնույթով հիստերիկ, որ Բելլա Իսահակովնայի ամուսինը՝ կրթությամբ ֆիզիկոս ու նույնպես հրեա, ծեծում է նրան: Լսել էի նաեւ, որ ու Բելլա Իսահակովնան լարված հարաբերությունների մեջ է մոր հետ: Ասում են, դեռ տասնինը տարեկան աղջիկ՝ Բելլա Իսահակովնան հիվանդություն է տարել, որը մայրն արդեն յոթ տարի նրան ներել չի կարողանում: Բացի այդ, գիտեի, որ այն ժամանակ, երբ կանգնած էի՝ խոտի ցողունը ծամելով, Բելլա Իսահակովնան ֆիննական բաղնիքից էր վերադառնում: Նա գեղեցկուհի չէր, բայց այնպիսի նուրբ մաշկ ուներ, որը շփում էր գետնամորիով, որպիսին ռուս կանայք չեն ունենում:

Բայց ես մաշկի տարբերության մասին չեմ խոսում: Խոսքը ուրիշ տար-

բերության մասին է: Դրա մասին միայն ընտրյալները գիտեն: Հիմա կբացատրեմ:

Բելլա Իսահակովնան էլ իմ մասին տարբեր բաներ էր լսելու, համոզված էր, որ կիսով չափ կամ առնվազն մեկ քառորդով հրեա եմ:

- Ինչի՞ց որոշեցիք,- հարցրի ես:

- Ինքներդ գիտեք,- պատասխանեց Բելլա Իսահակովնան:- Ի՞նչ է, այդպես չի՞: Ես ճիշտ չե՞մ:

- Նախապապս ռումինացի է եղել,- խոստովանեցի ես: Նա հիասթափված էր: Նա ահավոր վախենում էր, որ հիմա վրա կհասնի ամուսինը ու կսպանի մեզ: Դողում էր ամբողջ մարմնով: Ինձ էլ դուր չէր գալիս այդ համատեղ զոհաբերության հեռանկարը:

Սրմնջում էր.

- Նա գաղտնի աշխատանքի է: Բացակայելու իրավունք չունի:

Բայց դա նրան չէր հանգստացնում: Տեղը չէր գտնում: Հարձակվեց վրաս ու խնդրում էր, որ համբուրեմ ներքեւի շրթունքը: Ես համբուրում էի՝ շրշյուններին ականջ դնելով: Նա ուղղակի գալարվում էր: Մտքովս չէր անցնի, որ ներքեւի շրթունքը համբուրելուց կարելի է այդպես գալարվել: Խնդրում էր մի քնքուշ բան ասել: Ես մոլորվում էի: Նրան շատ վատ գիտեի: Հենց նոր էինք ծանոթացել: Ասացի.

- Դու ինձ դուր ես գալիս:

Հիասթափված փռթկացրեց: Փորձեցի մաշկի մասին ասել: Դա անսպասելիորեն աշխուժացրեց նրան:

- Ուրեմն ասում ես ռումինացի՞ ես,- հարցրեց նա ու մինչեւ վերջ չլսելով առարկություններս՝ ճչաց:- Ամուսինս եկա՛վ: Կորա՛ծ ենք:

Ես նետվեցի դեպի շորերս: Ոչ ոք չէր եկել:

- Դե, մի քնքուշ բան ասա ինձ,- խնդրում էր Բելլա Իսահակովնա:- Դե, արի այստեղ, փոքրի՛կս:

Քաշվում էի, բայց մոտեցա: Հիմա բառեր կգտնեմ, ու կասեմ՝ ինչ ուզում եմ: Այսպես ուրեմն. հրեուհիները, ի տարբերություն, համենայնդեպս, ռուս կանանց, մի էական առանձնահատկություն ունեն: Խոսող հեշտոց: Այսինքն ինքնին չի խոսում, բայց կարելի է ստիպել, որ խոսի, ինչպես կատվին՝ մատներդ բերանը խոթելով: Այսպես ուրեմն: Նույնիսկ կարող է երգել, իհարկե,ոչ բարդ բան, ասենք՝ մի հատված «Մերձմոսկովյան երեկոներից»: Բայց, մեկ է, զարմանալի է: Ռուս աղջիկները շատ ավելի գործնական ու լռակյաց են: Հնչյուն չեն արձակի: Նրանք միայն բերանով են բացատրվում: Իսկ այստեղ՝ այսպիսի յուրահատկություն: Շատ քչերը գիտեն

դրա մասին, որովհետեւ պարզապես զգացումները զարգացած չեն: Կոպիտ հարաբերություններ: Հետաքրքրասիրության բացակայություն: Չգիտեմ: Ես գիտնական չեմ, պատճառները չեմ ուսումնասիրել: Ես միայն արձանագրում եմ: Սակայն Բելլա Իսահակովնան կատարյալ բացառություն էր: Կյանքում նյութապաշտ էր ու գուցե նույնիսկ բութ: Անգիր գիտեր հայրենական ավտոմեքենաների բոլոր մակնիշներն ու վերափոխակները ու սիրում էր դատողություններ անել հեղինակավոր ամառանոցային վայրերի մասին. Նիկոլինյան սարը շատ ավելի բարձր էր դասում Կարմիր պախրայից: Կարդում էր անգլերեն եւ անկողնում խնդրում էր ամեն ինչ իրենց անուններով կոչել: Այդպես էլ անում էինք: Նա կյանքում ոչ մի անգամ էլեկտրագնացք չէր նստել: Բայց հեշտոցը հրաշք էր: Ոչ միայն խոսում էր: Պատասխանում էր հարցերին: Սկզբում չհասկացա, երբ ասաց.

- Կուզե՞ս՝ որեւէ բան հարցրու: Կպատասխանի:

Ես նորից չհասկացա, ու Բելլա Իսահակովնան ծիծաղեց.

- Հարցրեք - պատասխանում ենք:

Սկզբի համար շատ հեշտ հարց տվեցի.

- Հիմա ամա՞ռ է, թե՞ ձմեռ:

Անսխալ պատասխանեց: Խոնավ, որդնառատ ամառ էր:

Հարցրի.

- Անունդ ի՞նչ է:

Դա մի քիչ ոգեհարցում էր հիշեցնում: Պատասխանեց անթաքույց անամոթությամբ: Հեռվից լսվեց Բելլա Իսահակովնայի մանր ծիծաղը:

Եվ այդ ժամանակ խիզախեցի ու հարցրի այն, ինչ վաղուց էի ուզում հարցնել: Երկար տարիներ: Հարցրի.

- Աստված կա՞:

Պատասխանեց.

- Կա՛:

- Ճի՞շտ,- այտս հպելով՝ դողդոջուն ձայնով հարցրի ես:

- Ճիշտ,- հնչեց անկիրք պատասխանը:

Չեմ ասում, թե Կանտը պարտվեց: Թքած ունեմ:Դա բնության ու հավերժ կանացիության ձայնն էր: Կատարելապես ինքնավար ձայն: Արցունքներս չէի թաքցնում: Արմունկին հենվելով՝ Բելլա Իսահակովնան զարմանքով նայում էր ինձ:

- Ա՛յ թե հարցեր են,- փոթկաց Բելլա Իսահակովնան:- Ա՛յ թե հարցեր են:

Հիասթափված էր երեւում: Խոտի ցողունը ծամելով՝ ես կանգնել էի նրա ճանապարհին: Շուրջը պարսկական եղրեւանին էր ծաղկել:

Եվգենի ՊՈՊՈՎ

ԹԵ ՈՆՑ ԿԵՐԱՆ ԱՔԼՈՐԸ

Նիկոլայ Եֆիմիչը երկար ժամանակ կնոջ հետ ապրում էր իմ մորաքույր Իրայի փայտե տնակում, Զասուխինի փողոցում: Որպես կենվոր, որ բնակտարածության համար ամիսը մեկ կանխիկ փող է վճարում:

Տխուր, տագնապալի, երերուն ու անորոշ է սեփական կամ կոմունալ բնակտարածության քառակուսի մետրեր չունեցող մարդկանց կյանքը: Նրանց չարչարում են աղոտ ծգտումներն ու կասկածները, նրանք ցանկանում են մի տեղից մյուսը՝ փոխելով գործերի ու գործունեության բնույթը: Նրանք երջանկություն են ուզում, բայց գնում են կինո, ու նորից երջանկություն են ուզում:

Այ, օրինակ, Նիկոլայ Եֆիմիչը: Իր գործի հրաշալի վարպետ: Մետաղի մասնագետ: Ողջ կյանքում ինչ-որ բան է սոսնձել, եռակցել ու զոդել: Տաշել է:

Բայց տաշելը՝ ոչ ամբողջ կյանքում: Նախ Սիբիր էր ընկել՝ հետպատերազմական չնչին հանցանքների համար, իսկ 1954 թվականին համաներման տակ ընկավ:

Այդ տարիներին մեր քաղաքի փողոցներում համաներվածները հազարներով էին շրջում: Ծրջում էին, ուտում, քնում ծեղնահարկերում ու նկուղներում: Եվ այդ նախկին զեկերի պատճառով քաղաքացիների կյանքը բավական բարդացել էր: Հազվագյուտ խիզախը ծմեռային ուշ իրիկունով դուրս կգար տնից, քանի որ բոլորը գիտեին. մի անգամ մի տիկին երեկոյան ինչին հինգ րոպեով դուրս էր եկել, իսկ ընդառաջ՝ բամբակաբաճկոններով մարդիկ, հանել էին վերնազգեստն ու ժամացույցը: Բանը Տարականովկայում էր եղել, միսկոմբինատի մոտ: Վազել էր դեպի Սուրիկովի կամուրջը, որտեղ լապտերներ էին վառվում ու ինչ-որ մարդիկ կային: Մոտեցել էր:

- Քաղաքացինե՛ր,- ճչում է:- Լրիվ տկլորացրի՛ն: Վա՛յ: Հրե՛ն: Հրեն փախան: Դեմքերը հիշում եմ:

- Հիշում ե՞ս,- հարցնում են:

- Տեսե՛լ եմ: Տեսե՛լ եմ: Ձմեռային վերարկուս ու կարակուլի գլխարկս հանեցին:

- Որ տեսնես, կճանաչե՞ս:

- Կճանաչեմ, կճանաչեմ: Ոնց չեմ ճանաչի,- պատասխանեց կինը՝ փորձանքը չզգալով:

Եվ այստեղ քաշեցին ձեռնոցով աչքերի վրայով, ու դեմքը արյան գույն առավ, որովհետեւ ձեռնոցի մեջ ածելու շեղբեր էին: Արնաթաթախ կինը խարխափելով հասավ Ստալինի պողոտա, ընկավ, ու ասում էին՝ այնտեղ էլ գտել էին: Կինը կուրացավ, իսկ բանդան թաքնվեց: «Սեւ կատու» բանդան: Սիբիր-54:

Ու էլի էին պատմում. երեխաների էին բռնել, կախել անտառում, կտրտել ու արյունը հավաքել կոլբաների մեջ: -Ինչի՞ համար:

- Նրա համար, որ փոխներարկման կայան հանձնեն ու մեծ փողեր ստանան:

- Ցնդաբանությո՛ւն:

- Ի՞նչ ցնդաբանություն: Ասում են քեզ՝ բռնել են երեխեքին, անտառում կախել, կտրտել դանակներով ու արյունը հավաքել կոլբաների մեջ:

Բայց Նիկոլայ Եֆիմիչը նման բաներով չէր զբաղվում, չէր հետաքրքրվում ու չէր մասնակցում: Աստվա՛ծ իմ: Նույնիսկ հակառակը. եթե նման բան տեսներ կամ լսեր, անմիջապես աղմուկ էր բարձրացնում ու անձամբ միլիցիա կանչում:

Նա ընդհանրապես ոչնչով չէր հետաքրքրվում: Նիկոլայ Եֆիմիչի կարծիքով՝ ճամբար էլ լրիվ պատահական էր ընկել, քանի որ անմեղ էր: Չգիտեմ: Մեղք ասածն այնպիսի լպրծուն ու ինձ անհասկանալի բան է, որ Նիկոլայ Եֆիմիչի մեղավորության ու անմեղության հարցով ոչինչ ասել չեմ կարող, քանի որ չեմ հասկանում ու մտադիր էլ չեմ: Չգիտե՛մ: Ու վերջապես կարեւոր էլ չի մեղավորության ու անմեղության հարցը նկարագրվող դեպքում: Կարեւորն այն է, որ համաներումից հետո նա շատ հանգիստ մարդ էր դարձել, երջանկություն էր ցանկանում եւ արտադրություն ընդունվեց՝ ի նպաստ բերելով իր ոսկի ձեռքերը:

Կին էլ ուներ, որ առեւտուր էր անում կոլխոզշուկայի տնտապրանքների տաղավարում: Ելենա Դեմյանովնան: Դեմյան մականունով:

Խուլ էր, այսինքն մի քիչ էր լսում ու՝ բարձր, ուղիղ ականջին ասածը: Խլությունը երբեմն թաքցնում էր՝ ձեւացնելով, թե ամեն ինչ լսում է՝ եւ բարձրածայնը, եւ կամաց ասածը:

Այդ պարտակումը մի տեսակ ուրախացնում էր Նիկոլայ Եֆիմիչին: Կնոջը հանաքով մայր էր հայհոյում: Հանաքո՛վ: Ու քանի որ նա ոչինչ չէր լսում, ամեն ինչ հալած յուղի պես էր գնում. Նիկոլայ Եֆիմիչը հայհոյում է,

իսկ Դեմյանը չի լսում, խոսում է դեսից-դենից, Եֆիմիչն էլ է խոսում, ու հենց Դեմյանը շրջվում է՝ նորից է հայհոյում:

Իսկ ամուսինների տեսքը նկարագրելու համար ոչ վարպետություն է պետք, ոչ էլ ոգեշնչում: Ու մեծ արվեստ էլ չի պահանջվում: Պետք է ասեմ, որ տեսքով ու բովանդակությամբ բավական նողկալի զույգ էր:

Եվ նույնիսկ այսքան տարի անց էլ ամենայն հստակությամբ տեսնում եմ:

Ամուսինը՝ միջին հասակի: Իսկը գեղցի: Հագուստն էլ աչքի չընկնող է, գորշ: Ինչ բոլորն էին հագնում, այն էլ՝ Նիկոլայ Եֆիմիչը: Ինչ բոլորն էին հագնում՝ կիրզայե սապոգներ, բամբակաբաճկոն, փողքերը ճտքերը խրած շալվար, այն էլ Նիկոլայ Եֆիմիչը: Իսկ երբ սկսեցին նեղփողք շալվարներ հագնել ու շատերն առան, Նիկոլայ Եֆիմիչն էլ առավ:

Սովորական հագուստ էր. աչքի չընկնող, գորշ: Սովորական մարդ՝ գորշ, աչքի չընկնող:

Դեմյանի մասին էլ կարելի է շատ պարզ ու հասարակ ասել. քանի որ խուլ էր, առանձնապես մեջ չէր ընկնում: Հագնում էր լավագույնը, որ վաճառվում էր նրա տնտապրանքների տաղավարում, ու չէր հավատում լասարքի գոյությանը: Սարքը խաբեբայություն էր համարում, թերթերի ու ամսագրերի հորինվածք:

Նրանք եկամուտ էին բերում իմ մորաքույր Իրային: Նախ՝ որպես բնակտարածության համար վճարող կենվորներ, եւ երկրորդ՝ որպես դեֆիցիտի հետ կապ ունեցող մարդիկ: Իմ համար, օրինակ, Ելենան իր կրպակում երեսունհինգ համարի կիրզայե սապոգներ գտավ: Ես այդ ժամանակ երեսունհինգ համարի սապոգ էի հագնում ու Սուրիկովի անվան տարրական դպրոցի երկրորդ դասարանի աշակերտ էի:

Անհաշտ էին ապրում, բայց միշտ միասին էին քնում: Վարժվել էին, ասենք, ուրիշ ճար էլ չունեին. նրանց բնակտարածությունը նրբատախտակով միջնապատած տարածություն էր՝ երկուսը երեքին, որ հավասար է վեց քառակուսի մետրի: Ճիշտ է, նրբատախտակը առաստաղին էր հասնում: Այստեղ բան չես ասի:

Բայց անհաշտ էին: Ըստ երեւույթին, երկուսի էլ նողկալի սովորությունները փոխադարձաբար վիրավորում էին իրար:

Նիկոլայ Իվանովիչը շատ էր սիրում պպզել՝ մեջքը պատին հենած ու մախորկա ծխելով: Ու նաեւ հարբեցողությամբ էր զբաղվում ցանկացածի հետ, որ համաձայնում էր երկուսով հարբեցողությամբ զբաղվել: Ինչի վրա էլ սովորաբար ծախսում էր վաստակած բոլոր փողերը:

Դեմյանն էլ դրա համար նրան չէր կերակրում, իսկ եթե կերակրում էլ էր, ապա ալյուրից, կարտոֆիլից, ջրից ու կորեկածավարից բաղկացած վռիկով: Մեջն էլ՝ հոտած դեղին խոզաճարպ: Նիկոլայ Եֆիմիչն ինչ-որ տեղից կանոնավոր, բայց վատորակ ճարպ էր ստանում:

Քանի Դեմյանը ընտանեկան կերակուրն էր եփում ու հետո էլ սրտխառնոց առաջացնող հոտը լողում էր խոհանոցում: Պարզ է, որ դա նեղացնում էր Նիկոլայ Եֆիմիչին: Զայրացնում էր նաեւ, որ խլականջը սիրում էր օղի խմելով անամոթ պարել պատեֆոնի նվագի տակ, քշտում էր փեշերն ու ցուցադրում յասամանագույն փոխանի տուտերը: Զայրացնում էր, բայց գարշահոտ ուտելիքից պակաս: Բացի այդ, սրտնեղում էր, որ կինը կրպակից ձախ փողեր ունի եւ պահում է իրեն անհայտ խնայգրքույկի հաշվին ու ցույց չի տալիս:

- Էս տեսակ օձին քառասունյոթ թվի մի ռեֆորմ էլ է հասնում,- քրթմնջում էր Նիկոլայ Եֆիմիչը: Չհասկանալով, որ խնայգրքույկը ապահովագրում է բոլոր ռեֆորմներից: Ու Ելենայի փողերը, եթե ունի, երբեք չեն կորչի:

Այդպես էլ ապրում էին: Եվ ժամանակ առ ժամանակ ամուսինների միջեւ անհանդուրժողականության ահավոր պայթյուններ էին դիտվում:

Նոր, 1956 թվականին Նիկոլայ Եֆիմիչն ասաց.

- Դեմյա՛ն, աքլոր չուտե՞նք:

Իսկ կինը չի լսում:

- Խաշե՞նք աքլորը,- գոռում է Նիկոլայ Եֆիմիչը:

Չի լսում:

- Աքլորը եփի, սատկա՛ծ: Գոնե նոր տարուն ուտենք,- գոռում է ականջին:

Իսկ Դեմյանի վեջն էլ չի: Լռեց, լռեց, հետո հայտարարում է.

- Չեմ տա: Նոր տարի կլինի, էն ժամանակ էլ կուտենք:

Սրանից Նիկոլայ Եֆիմիչի մռութը լրիվ կարմիր բծերով պատվեց, ու աթոռակը բարձրացրեց Ելենայի վրա:

Խոսակցությունը խոհանոցում էր գնում: Ծարժուն ու մանրոսկոր Դեմյանը ճարպիկ թռավ դեպիսալ օջախը, վերցրեց եռջրով թեյամանն ու հո՛ չշխկացրեց Նիկոլայ Եֆիմիչի գլխին:

Խաշվածը, հայհոյելով, դեսուդեն ընկավ սենյակում: Փշրում էր խոհանոցի եղած-չեղածը ու գոռում: Անկյուններն էր ընկնում ու պատեպատ խփվում:

- Ա՛խ, կսպանեմ,- մռնչում էր Նիկոլայ Եֆիմիչը:

Բայց Դեմյանը կամացուկ դուրս պրծավ, ու մորաքույրս նրան թաքցրեց նկուղում: Պահարանը քաշեցին դռնակի վրա: Նոր, 1956 թվականը Դեմյանը կարտոֆիլի ու թթվի տակառների հետ դիմավորեց:

Իսկ Նիկոլայ Եֆիմիչը հա՛ դեգերում էր բնակարանում՝ կրկնելով, որ հենց գտնի նրան, տեղում էլ սպանելու է:

Քիթումռութին բամբակ դրեցին ու կապկպեցին թանզիֆով: Դեսուդեն ընկնում ու աչքերի նեղլիկ ճեղքերից փնտրում էր Ելենային: Նրան կարելի էր ծաղրածուի տեղ դնել:

Դեմյանն այդպես էլ նստած էր նկուղում: Բայց, հարց է ծագում, ինչքա՞ն կարելի է նստել: Դիմացավ մինչեւ 1956 թվականի հունվարի 2-ը, երբ Նիկոլայ Եֆիմիչը գնաց աշխատանքի: Ու որոշեց, սատանան դրա հետ, արի եփեմ աքլորը: Կրպակ չգնաց:

Նրանք մի աքլոր ունեին: Ավելի ճիշտ, սկզբում հավ ու աքլոր էր: Դեմյանը մտածում էր՝ հավը աքլորից իր համար ճուտիկներ կբերի: Ճուտիկները կմեծանան, կսկսեն ձու ածել: Դեմյանը ձվերի լիարժեք տիրուհին կլինի: Կուզի՝ կուտի: Կուզի՝ կծախի կոլխոզշուկայում:

Լավ էր հաշվել: Բայց, ցավոք, բան դուրս չեկավ: Որովհետեւ, նախ, աքլորը մի տեսակ անուժ էր: Հավ չէր թեթկում, ամբողջ օրը զուտ փքված նստած էր թառին:

Ու հավը հանկարծ բռնեց ու նոյեմբեր ամսին չգիտես ինչից մեռավ: Իր համար ման էր գալիս հավանոցում, հետո՝ ոտերը տնկեց: Ցնցվեց, կծկվեց ու սկսեց կապտել: Ուղղակի զարմանալի էր, թե ինչ արագ մեռավ հավը:

Դեմյանն, իհարկե, ինչ-ինչ կասկածներ ուներ: Մասնավորապես, մորաքրոջս կամ ինձ էր կասկածում: Բայց չէր արտահայտվում: Ու չէր արտահայտվում, որովհետեւ ինքն էլ կարգին չէր հասկանում՝ ում եւ ինչի էր պետք թունավորել հավին:

Ու մնաց աքլորը: Նիկոլայ Եֆիմիչը բազմիցս նրան ուտելու ցանկություն էր հայտնել, բայց Ելենան չէր տալիս:

Այսպիսով, 1956 թվականի հունվարի 2-ին նա համենայնդեպս մորթեց աքլորն ու անցավ եփելուն: Իսկ Նիկոլայ Եֆիմիչն այդ ընթացքում գնաց գործի, այն արտադրությունը, որտեղ մետաղ էր մշակում:

Այնտեղ վերցրեց գնդառանցքակալի օղակը, ջարդեց, ուղղեց, մուրճով ծեծեց, ջրմխեց, հղկեց: Հետո ամբողջ օրը խարտոցով խզխզացնում էր նախկին օղակին:

- Նիկոլա՛յ Եֆիմիչ, հո դանակ չե՞ս սարքում աշխատանքի ժամին: Ավե-

լի լավ է, արի խումարաթող լինենք տոներից հետո,- ասում էին բանվոր ընկերները:

Բայց խոժոռված Նիկոլայ Եֆիմիչը ոչինչ չէր պատասխանում ու ջանադիր խզխզացնում էր:

- Թարգի՛, Նիկոլայ Եֆիմիչ: Մի՛ սրի: Քո վրա ես սրում էդ դանակը, Նիկոլա՛յ Եֆիմիչ,- համոզում էր նրան մի խելացի մարդ, որը ամեն ինչ գլխանց գիտեր ու անընդհատ սպասում էր, որ հիմա մեկնումեկը կհասցնի մռութին:

Բայց Նիկոլայ Եֆիմիչն, ավաղ, ոչ մեկին չէր լսում: Վերջնական որոշել էր, որ գնալու է իրեն կնոջից ազատագրելու ծայրահեղ քայլին:

Նիկոլայ Եֆիմիչը, առեղծվածային ժպիտը դեմքին,գնաց տուն: Ձյան տակ թաղված ցանկապատի դռնակի մոտ մի պահ կանգնեց, նայեց շուրջը:

- Իմ օրում ազատություն չտեսնեմ,- քրթմնջաց Նիկոլայ Եֆիմիչն ու մտավ տուն:

Ու տեսավ, որ տանը, նրբատախտակի միջնորմից այն կողմ դեղին խոզաճարպը չի գարշահոտում, որ այնտեղ, նրբատախտակի միջնորմից այն կողմ նույնիսկ շատ մաքուր է: Լուսավոր է նրբատախտակի միջնորմից այն կողմ: Նրբատախտակի միջնորմից այն կողմ օղու շիշ է սեղանին, տառեխի պոչ, երշիկ ու վարունգներ: Ու կաթսա, իսկ կաթսայից աքլորի գոլորշին է բարձրանում:

Ու գոլորշուց հասկացավ Նիկոլայ Եֆիմիչը, որ կատարյալ ու վերջնական հաղթանակ է տարել կնոջ հանդեպ: Որ, գուցե, խնայգրքույկն էլ իրենը լինի, եթե, իհարկե, կա այդ խնայգրքույկը: Իսկ խաշված մռութը հեչ բան ու մանրուք է: Մռայլ նստեց սեղանի մոտ ու գոռաց.

- Դեմյա՛ն:

Նույն իսկ պահին հայտնվեց՝ ասես գետնի տակից.

- Էստեղ եմ, էստեղ:

Հեզ ու հնազանդ Ելենա:

- Նստի՛: Արի խմենք:

Եվ իսկապես՝ նստեցին, եւ իսկապես՝ խմեցին: Նստեցին, խմեցին, կերան: Կես լիտր խմեցին ու երկրորդ կես լիտրը սկսեցին: Եվ արդեն բանը հասավ աքլորին: Որ արդեն հանվել կաթսայից ու սքանչելի էր:

Այդ ժամանակ Նիկոլայ Եֆիմիչը գրպանից հանեց դանակը, ցույց տվեց կնոջն ու բացատրեց՝ նրան ինչ էր սպառնում: Կինը չարագուշակ առարկային այն աստիճան անկեղծ ու հարգանքով վերաբերվեց, որ հա-

ճելի էր Նիկոլայ Եֆիմիչին: Եվ նա դանակը տվեց կնոջը, ու Ելենան սկսեց կտրել՝ տոտիկ-տոտիկ, թեւիկ-թեւիկ, վզիկ ու տուտուզիկ:

Ու կերան աքլորը մինչեւ կեսգիշեր, իսկ երբ խփեց տասներկուսը, ամուսինները վերջնականապես հարբած էին եւ առանց շորերը հանելու ընկան ու քնեցին:

Հիմա նրանք արդեն ծեր են ու մի կերպ են քայլում: Այլեւս մորաքրոջս մոտ չեն ապրում: Մորաքրոջս տունը քանդել են, ու նրանց բոլորին տեղավորել տարբեր բնակարաններում: Դեմյանն ու Նիկոլայ Եֆիմիչը միսենյականոց ստացան հինգերորդ միկրոշրջանում:

Երբեմն տեսնում եմ նրանց: Մի կերպ են քայլում, մեկմեկու հենված:

Բայց հիմա, իհարկե, կյանքն էլ ուրիշ է. հին տները քանդել են, շուրջբոլորը՝ բազմահարկություն, շուրջբոլորը՝ գազ, լույս, գույն, վերելակներ, սալիկապատ լոգասենյակներ, բաց պատշգամբներ ու տաք ջուր: Նկուղներն ու ներքնահարկերը չքացել են, ոչ ոք հավ ու աքլոր չի պահում քաղաքում, խանութներում ամեն ինչ կա, ուր աչքդ կտրի՝ ասֆալտ է: Երեկոյան ազատ ման ես գալիս փողոցում, հանդիպում ընկերների ու ծանոթների:

Ու ես էլ, ահա, մեկ-մեկ հանդիպում եմ նրանց: Մի կերպ են քայլում, մեկմեկու հենված: Այ էդպես էլ կերան աքլորը...

Լյուդմիլա ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԱՅԱ

ԷՐՈՍ ԱՍՏԾՈ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Փոքրիկ, թմփլիկ, ոչ երիտասարդ կինը՝ հոգսերով ծանրացած, պահ մտած իր խեցում, այո՛, հենց պահ մտած՝ վճռական, կամավոր ու շատ վաղ, հենց աղջիկներն սկսեցին մարդու գնալ,- այսպես ուրեմն, վաղ գիրացած ոչ երիտասարդ կինը մի երեկո երկար դուրս չէր գալիս աշխատասենյակից, իսկ երբ դուրս եկավ, շարժվեց ոչ թե սովորական երթուղով, այլ Էրոս աստծո ճանապարհով, նախ՝ աշխատակցուհու մոտ, որը նույնպես առանձնակի ջահել չէր, բայց կատաղի դիմադրում էր տարիքին,կամ էլ բնությունից էր այդպիսին, հավերժ պարմանի, ինչպես ինքն էր արտահայտվում՝ «վահանաձեւս հունական է» ու վերջ: Հավերժ երիտասարդ աշխատակցուհին ծննդյան օրն էր տոնում ու, չգիտես ինչու, հրավիրել էր այդ Պուլխերիային (ինչպես գործի տեղը նրան կոչում էին Գոգոլի կերպարի՝ ամուսնու հավատարիմ տարեց կնոջ անունով), բայց կարող էին նաեւ Բավկիդոս անվանել՝ ըստ հավատարիմ, անլեզու, քարի պես ամուր ու անդավաճան բնատուր տվյալների, բայց Տեր Աստված այլ կերպ էր դատել, ու Պուլխերիան շատ վաղ եզակի թվով մնաց երկու դուստրերի հետ: Ինքը հաստատ հավատարիմ էր, բայց, ինչպես պարզվեց, դա կյանքի համար քիչ է, եւ առողջարանից հետո ամուսնու կյանքում ծանոթուհի հայտնվեց, հեռախոսազանգեր էին լինում, նույնիսկ սպառնալիքներ, որ ինչ-որ մեկը «գազ կուլ կտա» եւ այլն, իսկ հետո Պուլխերիան, ինչպես ասացինք, մնաց մենակ ու վայրկենապես, հենց փոքր աղջիկն ամուսնացավ ու հղիացավ, ինքն էլ կարծես հղիացավ սպասումով, քաշվեց իր մեջ, պահ մտավ իր փոքրիկ, թմբլիկ մարմնում, այտերում, թաքցրեց ժամանակին խոշոր ու, լուսանկարներից դատելով, սքանչելի աչքերը (այդ լուսանկարներից մեկը՝ ծակծկած բիբերով, Պուլխերիան մի անգամ գտավ իր տան շեմին, պարզ էր՝ ում արածն է),- բայց ամենից առաջ Պուլխերիան թաքցրեց հոգին, պատանի հանճարի անմահ հոգին, ինչպիսին նրան պատկերում են՝ թեւերով, անմարմին, գանգուրներով եւ շոյանք ու արցունք շողարձակող աչքերով: Պուլխերիան արագ թաքցրեց այդ ամենը, արագ պատվեց մահկանացու մարմնով, գանգուրները թաղկեցին: Սակայն բարու հանճարը չէր անհետացել, ինչպես հետո կտեսնենք, ու պայծառացման պես երբեմն շողում էր

նրա մեջ: Աշխատավայրում այնպես էր հոգում ճակատագրով իրեն հանձնարարված փոքրիկ գործի համար, որ տառացիորեն հիվանդանում էր, երբ, օրինակ, գործից անտեղյակ պետ էին նշանակում, չար ու ոչմիբանացու, որը չարքի չարախնդությամբ ոչնչացնում էր ողջ նախկինն ու ամբարվածը, վերածեւում արդեն ուղարկելու պատրաստ ցուցահանդեսը, ստիպում նոր տեքստեր գրել, եւ այստեղ ահա Պուլխերիան ու նրա դեռ ջահել հասակակից Օլյան ընդհանուր լեզու գտան ու ընկերացան: Մարդիկ արագ են միավորվում ընդհանուր վրդովմունքի հողի վրա՝ մոռանալով բոլոր փոխադարձ զգացումները, ու դրանից, որպես կանոն, ոչ մի լավ բան չի ստացվում: Այդպես եղավ նաեւ այս դեպքում: Չոր ու ինքնասեր Օլյան ահավոր ատում էր պետին: Օլյայի ողջ կյանքը աշխատանքի մեջ էր, քանի որ տանը ինչ-որ գժտություններ էին. ծանր հիվանդ ամուսին, ուրեմն՝ հիվանդանոց այցեր ու անվերջ տնական չարչարանք, բացի դրանից, որդի էլ կար, որն արագ ամուսնացավ եւ ուզում էր իրենից տարիքով ինչ-որ ճարպիկ կնկա բերել տուն՝ մայրիկի մոտ, եւ Օլյան ծառայակիցների աչքի առաջ սեւացավ, բայց հետո, համենայնդեպս, զույգին տեղավորեց նորահայտ կնոջ նեղվածք սենյակում, ի լրումն՝ երեխա ծնվեց, իսկ Օլյան ու ամուսինը պալատներ ունեին: Եվ ահա Պուլխերիայի լաստը կենցաղի ծովով դեպի հենց այդ պալատներն էր լողում՝ նախապես երեկոյի բոլոր գործերը դստերը հանձնարարած, բայց սիրտը ցավում էր, թե ոնց է տակից դուրս գալու՝ երեխան գրկին, խիստ, բայց անձեռահաս պատանի ամուսնու հետ մենակ:

Պուլխերիան, այսպիսով, հեռացավ կենցաղական ափից ու թափահարեց թիերը, որ այլեւս երբեք չվերադառնա նախկին կյանք: Ամեն ինչ այնպես ակնթարթորեն կատարվեց ու ամեն ինչ այնպես միանգամից փոխվեց, որ արդեն հաջորդ օրը Պուլխերիան ոչ իրեն էր հիշում, ոչ, սարսափելի է ասել, ընտանիքը, ասես սուզվել էր նիրհի մեջ, իսկ ոմանք, ինչպես նույն Օլյան, նույնիսկ կարծում էին, որ մի քիչ խախտվել է:

Եվ այսպես, տեղ հասնելով՝ Պուլխերիան անմիջապես կորցրեց իրեն՝ թմբլիկ մարմինն ինչ-որ անկյուն խցկեց ու սկսվեց՝ հոգնաբեկ, ուռած աչքերով հետեւելով Օլյայի իրարանցմանն ու նախապատրաստություններին: Օլյան այնպես վշտոտ-ազդեցիկ չէր, ինչպես աշխատավայրում էր լինում, այլ՝ պարզ ու տնական, ժանեկավոր հին գոգնոցով: Լավն էր Օլյան, նրան հարդարած մազերով ինչ-որ ընկերուհիներ էին օգնում, իսկ մեծ սենյակում (թե ընդհանուր քանի սենյակ կար՝ Պուլխերիան չնայեց) հեռուստացույցի առաջ ծխում էին տղամարդիկ. Պուլխերիայի համար այդ

բարձրաշխարհիկ կյանքը, ժամանակից ազատ մարդկանց այդ շքեղ կյանքը գոյություն չուներ, ու մտքով անգամ չանցավ առաջարկել իր օգնությունը, պարզապես նստել ու, հազիվ առիթ գտած, հանգստանում էր: Պուլխերիան անհարմար զգալով, բայց միշտ ու լավ հասկանում էր մարդկանց իրական մղումները, ու հիմա էլ հասկանում էր, որ Օլյան ուզում է վերջնականապես ճզմի իրեն՝ Պուլխերիային, իր փառահեղությամբ, որ հետո ճզմվածի հետ բաժնում հանդես գան միասնական ճակատով, երեքով հարձակման անցնեն պետի դեմ, տապալեն, եւ ինքը գրավի նրա տեղը: Պուլխերիան դառնությամբ մտածում էր իր հավերժական թուլակամության ու զիջողամտության մասին, որ, ահա, հյուր է եկել, ուր ամեն ինչ օտար է ու անհետաքրքիր, բայց փոքրիկ Պուլխերիան էլ էր վաղուց եռում պետի դեմ, որը թքած ուներ ֆոնդերի մշակման բազմամյա ահռելի աշխատանքի վրա եւ ուզում էր ամեն ինչ այլ ուղու վրա դնել, ինքնաձախսաձածկման ուղու, այդ թվում՝ զգայացունց բացահայտումների՝ ով ում հետ է ապրել եւ ինչ նամակներ ու մատնագրեր կան: Պետին արագ Շահխանում անվանեցին ու հասկացան, որ ուզում է ուրիշների հաշվին դոկտորական սարքել, ինչպես ամուսնու՝ հարակից ԳՀԻ-ի փոխտնօրենի շնորհքով հայտնվել էր այստեղ, նա էլ աշխատանքի էր տեղավորել իրենց տնօրենի երեխաներից մեկին, եւ այս տնօրենն էլ խարդախի մեկն էր, հովվապետ խաղացող արտիստի տեսքով: Բոլորն ամեն ինչ հասկանում ու տխուր էին, բայց ինչ անես:

Այսպիսով, Պուլխերիան նստել էր հանգիստ ու անտարբեր, լրիվ անջատված, հանգստանալով իր անվերջանալի հոգսերից, քաշված հաստլիկ, հանդարտ ու համարյա թե հինավուրց տատիկի կերպարի մեջ, չնայած Պուլխերիան Օլյայից մեծ էր ընդամենը երկու ամսով: Բայց նկատենք, դա կարեւոր է հետոյի համար. Պուլխերիան իր արտաքինը անէական էր համարում ու գիտեր, որ կգա ժամանակը, ու բոժոժից կթռչի՝ նորից թիթեռնիկ դառնալով: Մի տեսակ ինքն իր հետ ծերություն էր խաղում այն տարիքում, երբ ուրիշները լավ էլ վերածնվում ու պահպանում են կյանքն իրենց մեջ, եւ ինքն էլ չգիտեր, որ այնտեղից իր համար ելք չկա: Օլյան ելք ուներ, իսկ ինքը՝ ոչ: Բայցեւայնպես, Պուլխերիան հեգնոտ հետեւում էր Օլյայի հավերժական ջահելությանն ու նրա բոլոր մարմնամարզությունները, սննդակարգերը, խաղահրապարակներն ու դահուկները գնահատում որպես թեթեւ խելագարություն: Պուլխերիան թեթեւամիտ էր վերաբերվում իրեն, իսկ Օլյան նույնիսկ ականջների ետեւը թեթեւ կոսմետիկ վիրահատեց ու դրանից ավելի ջահելացավ, իսկ բերանում բոցկլտում էր կապույտ

հախճապակին, բայց Պուլխերիան քաշվում էր նայել Օլյայի՝ բերանից վերեւ ծգված դեմքին: Օլյայի, ինչպես ասում են, բերանին էր նայում, ինչը Օլյան ընկալում էր որպես ստորաքարշություն: Օլյան ամբողջովին ափի վրա էր, իսկ Պուլխերիան հոգու մեջ փոքրիկ, բայց պինդ ու հեգնոտ հրեշտակ ուներ, որն ամեն ինչ բոլորի մասին հասկանում էր, ու Պուլխերիան ի պատասխան Կամիլլայի՝ երրորդ աշխատակցուհու, որ բոհեմական տիպի ջահել կին էր՝ ստեղծագործական միջավայրից, միշտ սվիտերով, ջինսով, մատանիներով ու ապարանջաններով,- ի պատասխան երիտասարդ խաղացող Օլյայի հասցեին նրա հեգնական դիտողությունների, Պուլխերիան միայն մտահոգ հառաչում էր: Իսկ Օլյան որոշել էր ամբողջովին հենվել նվաստացված Պուլխերիայի վրա ու նրան էր տուն հրավիրել իր ծննդյան օրը, իսկ Կամիլլային բնազդով անտեսել էր, քանի որ Կամիլլան տանջվում էր գործի տեղը, կոպտում պետին ու հենց այնպես կաջակցեր ցանկացած ապակառուցողական, այսինքն՝ առկա վիճակի դեմ ուղղված ավերիչ ձեռնարկի: Ի դեպ, Կամիլլան կարող էր եւ մերժել պառավ կնկա հրավերը, ասենք Օլյան էլ կարող էր զգուշանալ նրա իսկական, չհորինված ջահելությունից: Այնպես որ, մնում էր անվնաս Պուլխերիան, իսկ Կամիլլան ուրիշ երազանքներ եւ ուրիշ գործեր ուներ, ու նրան թողնենք իր գործերի հետ: Կամիլլային էլ չէին փողոցում բռնել- բերել աշխատանքի, նա էլ լուրջ ազգականներ ուներ:

Պուլխերիան նստեց-նստեց, հետո բոլորի հետ հրավիրվելով սեղանի մոտ, տեղավորվեց ու նորից հալվեց-անհետացավ, ասես գոյություն էլ չուներ, համեստ ու տխուր, ինչպես սովորաբար ապրում էր, ինչ-որ բան էր խմում, աղցան ուտում, մինչեւ հասկացավ, որ մեկն իր անունն է հարցնում: Աջից նստած տղամարդն էր: Պուլխերիան պատասխանեց, զրույց բացվեց, խոսքը գիտնականի մասին էր, ում արխիվով երկար տարիներ զբաղվում էր Պուլխերիան: Գիտնականը վաղուց մերկացված, վնասազերծված, մոռացված էր եւ հիշատակվում էր զուտ հեգնանքի ու պսակազերծման տեսանկյունից, իսկ Պուլխերիան գիտեր նրա ողջ կյանքն ու բոլոր փոխհարաբերությունները աշխարհի մեծերի հետ, սիրում էր նրան, ինչպես միջատաբանն է որեւէ տեսակ սիրում, ասենք՝ մանր բզեզի, որը վնասատու է ճանաչվել, բայց իր գտածն է: Դրա համար էլ առարկում էր հարեւանի հարցերի, ինչպես իրեն էր թվում՝ քաղքենական տոնին եւ կամացուկ ու սակավախոս մերժում ընդունված տեսակետը: Վնասատու ծերուկը հուսալի պաշպան ուներ հանձին հեզ Պուլխերիայի: Հարեւանն ընդունված ու մաշված, վաղուց հրապարակված փաստեր էր բերում, իսկ Պուլխերիան

շատ ավելի եւ ուրիշ բաներ գիտեր, բայց որպես մասնագետ՝ չէր իջնում անգետի հետ վեճի մակարդակին, այլ միայն հառաչում էր: Մի անգամ ճշտեց նրա ասածը, ու հարեւանն ապշած նայեց Պուլխերիային. առարկությունը շատ նուրբ ու ճշգրիտ էր: Պուլխերիան էլ առաջին անգամ նայեց հարեւանին եւ ասես մշուշի մեջ տեսավ կարմրավուն նիհար դեմքը, ալեհեր գզգզված մազերը, առջեւի մի ատամի բացակայությունն ու բորբոքված, հաճախակի թարթող խիստ բաց գույնի աչքերը: Բայց Պուլխերիան բնավ այդ չտեսավ, այլ պատանու, բարձր աշխարհներ անցած արարածի, որ թաքնվում է ճերմակ բաշի ու կարմիր մաշկի տակ:

Հարեւանը նայում էր Պուլխերիային ու մեղմ ժպտում: Նա, ըստ երեւույթին, ընդհանրապես միշտ էր ժպտում, կան այդպիսի դիմախաղով մարդիկ, որ միշտ ժպտում են, ու դրա մեջ է նրանց հմայքը, բայց այդ ժպիտը բացարձակապես ոչինչ չէր նշանակում, ու շատերը խաբվում էին՝ իրենց ուղղված համարելով: Բայց հարեւանը որպես նրա խոսքով հիացած, նվաճված զրուցակից էր ժպտում, եւ Պուլխերիան սիրեց նրան կարեկցական, մղկտացող սիրով. այդպես եղավ: Այսինքն, դեռ ինքն էլ դա չգիտեր, պարզապես կարծես ազատագրվել էր, ծաղկել, ու հրեշտակը հարեւանին ուղղված շող էր ուղարկել նրան ու՝ վերջ: Պուլխերիան կամացուկ ու հոգոց հանելով, բայց աներեր պատմեց իր հետազոտությունների առարկայի մասին, ինչը ոչ մեկին չէր պատմի, բայց կարեւորը ոչ թե առարկան, այլ խոսակցության էությունն էր: Իսկ էությունն այն էր, որ այդ երկուսը գտել էին իրար խնջույքի սեղանին, որ գետի պես հորդում էր գինին ու ամպի նման կանգնած էր ծուխը, իսկ տանտիրուհին, կարմրատակած նոր դեմքով, ապշեցուցիչ գեղեցկացած ու բարի, խոհանոցից սենյակ ու հակառակն էր վազում, բայց մի վազքուղում կանգ առավ, կռացավ ու բարձր ինչ-որ բան ասաց Պուլխերիայի հարեւանի ականջին: Բարձրաձայն սովորաբար վիրավորական, կծու բաներ են ասում, այնպես, որ օտար ականջն էլ լսի հասցեատիրոջն ուղղված վիրավորանքը, բայց Պուլխերիան ոչինչ չհասկացավ, եւ Օլյան հեռացավ, իսկ զրույցը շարունակվեց: Հարեւանը հետո դուրս եկող Պուլխերիային ուղեկցեց մինչեւ դուռը ու հանկարծ արագ հագավ ծմեռային կոշիկները (չգիտես ինչու՝ տնային հողաթափերով էր), վերարկուն ու դուրս եկավ՝ Պուլխերիային ուղեկցելու: Սառնամանիքի միջով քայլեցին դեպի մետրոյի կայարան, եւ Պուլխերիան ոչ տեղ-տեղ կախ ընկած իր հին վերարկուից էր ամաչում, ոչ գլխարկից, որ առաջ, ջահել ժամանակ դեռ մորթուց էր: Պուլխերիայի գանգուրները պսակում էին անուշիկ թմբլիկ դեմքը, աչքերը լայն բացվել էին, վարդագունել էին գունատ այ-

տերը, կարճ ասած՝ նրա պահապան հրեշտակը պատռել-ելել էր արդեն ծերության պատրաստ մարմնակեղեւից: Պուլխերիան ուղեկցվեց մինչեւ մետրո, հետո՝ վագոնի մոտ, հետո ուղեկցողի հետ գնացք նստեց, ու էլի, էլի, ընդհուպ մինչեւ տուն, մինչեւ շքամուտք, որտեղ հրաժեշտը հանդիսավոր ու նրբակիրթ էր, քանզի համբուրեց Պուլխերիայի փոքրիկ, ի դեպ՝ շատ գեղեցիկ ձեռքը: Հեռախոսի համարի մասին որեւէ խոսք չեղավ: Պուլխերիան նույնիսկ չիմացավ սիրած մարդու անունը եւ այդպես կորամեջք ու աննշմար էլ անհետացավ միջանցքի խավարում՝ ոչնչի մասին չմտածելով:

Բայց հուսահատության որդը սկսեց մաշել գիշերը: Պուլխերիան իրեն լավ գիտեր ու գիտեր, որ ոչ մի Օլյայի չի հարցնի, թե ով էր իր աջ հարեւանը: Աշխատավայրում Օլյան իրեն սովորականի պես էր պահում, նրա բոլորը ուժերը խլում էր վարիչուհու հետ նոր առճակատումը, որը Օլյայի հետ նույն սենյակում նստած լինելով՝ Օլյային խնդրել էր պահարանից բերել իրեն անհրաժեշտ թղթապանակը: Օլյան պայթել ու վարիչուհուն առաջարկել էր անձամբ զբոսնել մինչեւ պահարանը, ու թունոտ սուլոցով խոսակցություն էր բացվել ծառայողական պարտականությունների ցանկի շուրջ: Պուլխերիան հարեւան միջանցիկ փոքր սենյակից, որտեղ արխիվային փոշու մեջ նստած՝ անշտապ մշակում էր նամակների հերթական թղթապանակը, լսում էր ախոյանների խոսակցությունը, բայց,- հետաքրքիր է,- այնքան տարված էր Անհայտի մասին երազանքներով ու մտքերով, որ այդ ամենը կողքով էր անցնում: Եվ ճաշի ընդմիջմանը, հերթում կանգնած էլ լսում էր, թե ամբողջովին եռացող Օլյան ինչպես է սուտ հումորով ինչ-որ մեկին պատմում միջադեպը՝ բավական կոպիտ այն իր օգտին վերածելով, բայց Պուլխերիան էլի այդ ամենն անտարբեր ականջի ետեւ գցեց: Օլյան էլ մի տեսակ խուսափում էր Պուլխերիայից. սովորականի պես չհրավիրեց միասին ճաշարան գնալ, առանց շուրջը նայելու, կողքով թռավ-անցավ չարքի նման:

Կամ նախորդ օրվա անցուդարձը չէր հավանել, կամ էլ Պուլխերիայի անտարբերությունն էր ազդում. երբեմն, Պուլխերիան դա վաղուց էր նկատել, մտածում ես, թե սկսել են վատ վերաբերվել քեզ, բայց իրականում դու ես վատ մտածում մարդու մասին: Բոլոր մարդիկ ներուստ անասուն են մնացել եւ առանց խոսքի զգում են այն ամենը, ինչ կատարվում է, հոգու ոչ մի շարժում անարձագանք չի մնում, առավել եւս՝ անտարբերությունը:

Անտարբեր Պուլխերիան, սակայն, դրամարկղի մոտ հերթ կանգնելուց հետո, ի զարմանս իրեն մատուցարանը ձեռքին մոտեցավ այն սեղանին,

որի մոտ մեն-մենակ նստած էր կատաղած Օլյան: Պուլխերիան հաստատ որոշել էր՝ ինչ է հարցնելու ու հարցրեց.

- Երեկ ի՞նչ արեցիք:

- Ի՞նչը ինչ արեցինք,- չոր պատասխանեց Օլյան:

- Ես շուտ դուրս եկա...

- Հա՛, ասաս լվալը ում ինչ ցավն է,- խայթեց Օլյան:- Չէ՛, տեսա՞ք էդ անտաշին, խնդրում է, որ բացատրություն գրեմ: Ո՛վ է նա: Էսինչի կինը ու՝ վերջ: Էդ ապուշի կինն է, չէ՞, մեր ապուշի ընկերոջ: Ու գիտե՞ս դիսերտացիան ինչ էր: Աչկ-յաչկ ու ուշկ-յուշկ վերջածանցների ծեւաբանության առանձնահատկությունները: Ուշկ-յո՛ւշկ... Ու դրանից հետո առանց ամոթի աշխատանքի է անցնում մեզ մոտ:

Օլյան դեռ երկար պատմում էր, որ ինքն էլ կապեր ունի, ամուսնու կապերը, դեռ ինստիտուտի ժամանակներից, այնպիսի կապեր, որ կյանքում չեն տեսել: Նախագահությունո՛ւմ՝ ասաց Օլյան իր ֆշշան ձայնով, որ հաստատ լսեցին հարեւան սեղանների մոտ: Ու որ հերիք է միայն զանգի: Որ իր ամուսնուն էլ գնահատում ու հարգում են որպես մաթեմատիկոսի, ու կարեւոր չի՝ ում ամուսինը որտեղ է աշխատում, ու որ մեկը հիվանդ է, իսկ մյուսը՝ ցլի պես առողջ, բայց կատարյալ ոչինչ է որպես գիտնական: Կարեւոր է, թե ում ինչպես են հարգում: Ու երբ ամուսինը հիվանդ է, լսե՛ն միայն՝ ինչ մարդիկ են զանգում ու հարցնում՝ ինչպես է:

- Ի՞նչ հիվանդ է,- իր համար անսպասելի հարցրեց Պուլխերիան, զուտ խոսակցությունը իր թեմային՝ Օլյայի տան դեպքերին, իր Անհայտին մոտեցնելու համար:

- Էլ մի՛ ասա,- պատասխանեց Օլյան:- Ծիզոֆրենիա: Էդպիսի բաներ:

Պուլխերիան պետք է որ ահավոր կարեկցեր խեղճ Օլյային, ողջ հոգով, ողջ ցնցված սրտով, բայց, չգիտես ինչու, միանգամայն հանգիստ մնաց:

- Ես այդ ախտորոշումներին չեմ վստահում,- ասաց Պուլխերիան:

- Ինձնից էլ մի տասը տարով մեծ է, չգիտեի ու չիմանալով էլ ամուսնացա (ի դեպ, քսան տարի առաջ էր, մի բան էլ ավելի):

- Իսկ դու մի հավատա:

- Ու վերջերս էլ պարզվեց՝ վաղուց է սկսվել: Մի գլուխ՝ ստամո՛քսը, ստամո՛քսը, նիհարում էր, գործի տեղը անընդհատ վիճում: Իբր չեն թողում իր գործով զբաղվի: Դոկտորականը տապալեցին:

- Էդտեղ ի՞նչն է անսորմալ,- հանգիստ ասաց Պուլխերիան:- Սովորական բան է:

- Հիվանդանոցում բռունցքն այնպես էր խփում պատին, բոլորը մտա-

ծում էին՝ ցավից, բայց հետո սկսեցին հարցնել ինձ, ամեն ինչ պատմեցի: Ասում են՝ ինչ լավ է, նա անընդհատ ձեզ էր ուզում, թող Անյան գա: Անյան, պատկերացնո՞ւմ ես:

- Անյա՞,- հարցրեց զարմացած Պուլխերիան: Դեռ չէր հասկանում, որ իր ողջ հետագա կյանքն է պատկերում Օլյան այդ խոսակցության մեջ: Պուլխերիան ոչինչ չէր հասկանում, բայց լսում էր ուշադիր, ու սիրտը խփում էր: Օլյան ակնհայտորեն ինչ-որ բան էր ուզում հայտնել նրան, ինչ-որ բան ներշնչել:

- Ասացին՝ անընդհատ ձեզ էր ուզում, կանչեք Անյայի՛ն, կանչեք Անյայի՛ն:

- Անյայի՞ն...

- Իսկ ինքը ոչ մեկին պետք չի, բացի ինձնից: Լավ է, որ մեր բաժնի հեռախոսը չտվի, թե չէ էն մի գործի տեղը օրը տաս անգամ զանգում էր: Խանդում է: Խելագա՛ր:

- Իսկ դո՞ւ,- միանգամայն անիմաստ հարցրեց Պուլխերիան:

- Ես էլ այ էսպես: Լավ է, որ անկողնում դեռ ոչինչ, թե չէ ընդհանրապես կկախվեի: Տեսա՞ր՝ հյուրերիս մեջ ինչ տղամարդիկ կային:

Պուլխերիան չպատասխանեց, միայն նայեց Օլյային՝ ոչինչ չհասկանալով:

Օլյան ասաց.

- Ի՛նչ տղամարդիկ, ու բոլորը իմ սիրեկաններն էն, բոլորին հավաքել էի կանանց հետ, ու կանայք էլ բոլորն իմ ընկերուհիներն են: Վարիչուհու հետ մի բան պիտի՞ արվի:

Ապշահար Պուլխերիան սսկվեց, էլ հարց չէր տալիս, Օլյան նոր պատմության անցավ, իսկ Պուլխերիան կոմպոտ էր խմում՝ անսպասելի զգալով, որ այտերը վառվում են:

Օլյայի հետ խոսակցության մասին մտքերը Պուլխերիային բավականացրին աշխատանքային օրվա ողջ երկրորդ կեսի համար: Պուլխերիան պիտի ազնվորեն խոստովաներ, որ կյանքի մի ասպարեզ էլ կա, միանգամայն անհասկանալի, բայց հենց այնտեղ կարող են շեմին թափվել ծակծկած բիբերով լուսանկարները: Այդ մտքերն ընդմիջվում էին անտանելի տխրության ալիքներով: Իսկ արտաքուստ թվում էր՝ Պուլխերիան սուզվել է նույն հին ու փոշոտ նամակի ընթերցանության մեջ:

Նույն երեկոյան, ծանր պայուսակներով բարձված՝ աշխատանքից վերադառնալիս Պուլխերիան շքամուտքի մոտ մթնշաղի մեջ ճերմակահեր մի կերպարանք տեսավ: Իբրեւ ինքնին հասկանալի հայտնություն՝ նրա առաջ այն էր, ինչին կարոտել էր ամբողջ վերջին օրը, ու հիմա Պուլխերի-

այի հոգին խաղաղվեց: Հյուրին առաջնորդեց տուն, որտեղ խոհանոցում չորանում էին երեխայի տակաշորերը, մեծ սենյակում՝ ջահելների մոտ լռություն էր, կամ երեխային զբոսանքի էին հանել, կամ երեքն էլ քնած էին անքուն գիշերվանից հետո. երեխան հաճախ էր լաց լինում առավոտվա երեքի ու հինգի արանքում: Պուլխերիան հյուրին տարավ իր փոքրիկ սենյակը, որտեղ մաքուր ու հասարակ էր. փոքրիկ բազմոց (Պուլխերիան ամեն ինչին նայում էր նոր աչքերով ու մի տեսակ կողքից), դեռեւս տատիկից մնացած կլոր սեղանիկ, բազկաթոռ, ամբողջը հնամաշ ու ջարդոն, բայց՝ հնամենի ջարդոն, այդ թվում՝ երկու փոքրիկ գրապահարանն ու դրանց մեջ եղած գրքերը: Հյուրն անմիջապես նետվեց գրքերի մոտ, Պուլխերիան թեյ ու տապակած կարտոֆիլ բերեց խոհանոցից, լուռ կերան, որովհետեւ հյուրը գլխովին թաղվել էր գրքի մեջ, հետո ասաց, որ գնալու ժամանակն է, ու հեռացավ: Պուլխերիան, որ նեղլիկ տարածության մեջ չէր դիպել նրան, գնալուց հետո վերցրեց գիրքը, որ թերթում էր, եւ աչքերը փակ՝ սեղմեց կրծքին: Այդպես, լրիվ բացակա նստել էր, մինչեւ աղմուկ լսվեց սանդղահարթակում. մանկասայլակը բարձրացնող ջահելներն էին, բնակարան խուժեցին աղմուկով, բարձր խոսելով, դեսուդեն վազեցին, թփթփացրին, լսվեց՝ ջուրն ինչպես է լցվում լոգարանակոնքը, ճչաց երեխան, իսկ Պուլխերիան անուժ նստել էր սենյակում ու մտածում էր, որ լավ է, որ նրանք տանը չէին, մտածում էր՝ այս ինչ է կատարվում իր հետ:

Հիմա նա ամեն երեկո շտապում էր տուն. աշխատանքի տեղում ասես երազի մեջ լիներ ու տանն էլ, երազի մեջ, անում էր այն, ինչ միշտ արել էր, այսինքն՝ լվացք էր անում, հավաքում, եփում, վազում էր խանութներով, բայց այդ ամենը՝ լրիվ բացակա, որովհետեւ ամեն երեկո գալիս էր Նա, երբեմն մի ժամով, երբեմն՝ տասնհինգ րոպեով, նստում էր, ինչ-որ բան խոսում, միշտ բերում էր նույն կարտոֆիլով կարկանդակները, ուտում էին, թեյ խմում, երբեմն բարձրաձայն կարդում էր կնոջ համար, երբեմն տետրակում թվեր էր գրում՝ բանաձեւի կարգի, հետո անհետանում էր: Պուլխերիան շատ էր նիհարել, բոլոր շորերն ընկնում էին վրայից, համարյա ոչինչ չէր ուտում, փորձում էր գործի տեղից հնարավորինս արագ ու աննկատ հեռանալ: Ավելի մեծ դեր էր խաղում այն, որ Պուլխերիան աշխատավայրին բավական մոտ էր ապրում. հսկայական նշանակություն էր տալիս նրան, որ հենց նշանակված ժամին պիտի հայտնվի, ճիշտ րոպեին, եւ այդ պահը բաց թողնել չի կարելի: Ջահելները շատ արագ վարժվեցին հյուրին, նրանից չէին քաշվում, չնայած եւ որեւէ զրույց չէր լինում, միայն բարեւում էին ու հրաժեշտ տալիս, եթե հայտնվում էին նրա նպատակասլաց ճանա-

պարիին, իսկ նրա տեսքը հենց նպատակասլաց էր, ինչպես Պուլխերիայինը, երբ շտապում էր տուն:

Գործի տեղը Պուլխերիան չափազանց շատ էր աշխատում, համարյա գլուխը սեղանից չկտրելով,եւ Օլյան արագ սառավ նրա հանդեպ, մանավանդ, որ անսպասելի ուժ էր առել (ինչ-որ անդրկուլիսյան բանակցությունների արդյունքում), անսպասելի միացել վարիչուհուն, ու նրանք երկուսով, համատեղ սկսեցին դուրս մղել երիտասարդ Կամիլլային, որն իսկապես եւ՛ ուշանում էր աշխատանքից, եւ՛ հաճախ անաշխատունակության թերթիկ էր վերցնում, եւ՛ կոպտում, չնայած գործն առաջ էր գնում, հոդված գրեց ու խիստ օգտակար: Բայց ամեն ինչ հանգուցալուծվեց նրանով, որ Կամիլլան, ինչպես պարզվեց, աշխատանքից ազատվելու իրավունք չուներ, երեխայի էր սպասում, ամուսինը նրան մեքենայով բերում ու ժամանակից շուտ տանում էր: Արդյունքն այն էր, որ վարիչուհին ու Օլյան, դեռ Կամիլլայի առկայությամբ, սկսեցին ակտիվորեն փոխարինող փնտրել հենց իր ներկայությամբ, ու Կամիլլան առավել մեծ ոգեւորությամբ էր կոպտում նրանց, բայց փքվում ու խոշորանում էր առաջ եւ արդեն դժվարությամբ էր քարշ տալիս ոտքերը: Նրանց միշտ մեկը պետք էր որպես պայքարի առարկա, ու լավ է, որ դա Կամիլլան էր, բայց Պուլխերիան զգում էր, որ իր ժամն էլ հեռու չի: Ինստիտուտում լուրեր տարածվեցին, որ Պուլխերիայի գլուխը լավ չի. Պուլխերիան ակնհայտորեն ուշացնում էր տարեկան էջաքանակը ժամանակին հանձնելը, ճաշելու չէր գնում, վազում էր խանութներով: Ոչ ոք չգիտեր, որ Պուլխերիայի ողջ ժամանակը զբաղեցնում է Նա, ամեն երեկո նրա մոտ էր գալիս նրա Քարե հյուրը եւ անձայն նստում քարի պես, հո չէ՞ր կարող նրա ներկայությամբ գրել իր երկերը: Գիշերներն էր գրում ու ոչինչ չհասցնելով՝ առավոտյան մի կերպ գնում գործի, այնտեղ էլ նստում ու խզմզում էր իր քարտերի վրա՝ զբաղմունքի մեջ որեւէ իմաստ չտեսնելով:

Բանն ավարտվեց նրանով, որ այդպիսի կյանքի երկրորդ ամսին նրա հյուրը կորավ: Երեք սարսափելի օր ապրելով՝ Պուլխերիան նորից գնաց ճաշելու ինստիտուտի ճաշարանում ու նստեց այն սեղանի մոտ, ուր բազմած էին վարիչուհին ու Օլյան: Նրան սրտառուչ դիմավորեցին, խորհուրդ տվեցին լավ բժշկի դիմել (Օլյան նույնիսկ ասաց, որ կոնսուլտացիա կդասավորի), վարիչուհին գովեց Պուլխերիայի՝ վերջապես հանձնած հոդվածը, Օլյան գովեց Պուլխերիայի կազմվածքը («ի՞նչ է, դիե՞տա ես պահում»), հետո նրանք շարունակեցին իրենց խոսակցությունը, որից Պուլխերիան քարացավ:

- Ուրեմն վաղը մինչեւ ընդմիջում չեմ լինի,- նշանակալի ասաց Օլյան:

- Ինչպես ձերդ ողորմածությունը կամենա,- կատակով ասաց վարչուհին:- Կարող ես վստահ լինել:

- Անհանգիստ բաժանմունքն են դրել,- ասաց Օլյան:- Կատաղիների բաժանմունքն է: Այնտեղ նրան ուղղակի կարող են սպանել: Հենց նույն սանիտարները: Պետք է երկրորդ տեղափոխել, սովորականի պես: Այնտեղ նրան ճանաչում են, այնտեղ նրան սիրում են: Թե չէ էդ անհանգիստում էնպես կծակծկեն, լրիվ հիվանդ կվերադառնա՝ դեբիլ կամ իմպոտենտ:

Վարչուհին այդ ընթացքում համբուրելու պես կցեց շրթունքներն ու կարեկցանքով չպչպացրեց:

- Կատաղի բաժնում, հա՛, կանեն:

- Ու շատ հանգիստ,- ասաց Օլյան:- Երբ որ հոգեբուժական օգնություն կանչեցի, աղմուկ բարձրացրեց, չէր գնում, իսկ ամեն ինչ դրանից է կախված: Փողոցում գոռում էր «օգնեցե՛ք» ու դուրս էր պրծնում: Սանիտարներն ուղիղ կատաղի բաժանմունք տարան:

- Ո՞ւմ,- հարցրեց Պուլխերիան:

- Ամուսնուս,- պատասխանեց Օլյան: Այտերը կապտակարմիր էին:- Ու ի՞նչ էր գոռում: Որ ես իր թշնամին եմ, տեսեք ի՞նչ է որոշել: Տիպիկ զառանցանք: Նետվեց դեպի պատուհանը, գլխով ջարդեց ապակին, լրիվ կտրտվեց, շուրջը՝ արյուն, էդ զզվելի կատուն էլ... ես դրան գրկել եմ՝ ոնց որ Իվան Ահեղը, իսկ նա արյուն է լիզում գետնից... Ավելով քշեցի, մարդու արյուն էր լափում մարդակերի պես:

- Իսկ ինչի՞ց սկսվեց,- խղճահարված հարցրեց Պուլխերիան: Սիրտը կատաղի խփում էր:

- Նորից սկսել էր տնից անհետանալ, մի օրով, երկու, վերադառնում էր զզգզված... Սոված, կեղտոտ...

«Ստում է»,- տենդագին մտածեց Պուլխերիան:

- Դրանից բացի, դե, ոնց են լինում դրանք, չէր քնում, ոչ մեկի հետ չէր խոսում, վայրենացել էր... Գործի, փառք Աստծո, ընդհանրապես շաբաթը մեկ էր գնում... Տարին մի հոդված է գրում, նրանք էլ ուրախ էին... Մի հոդված, ու նրանք էդ հոդվածից հետո դիսերտացիաներ են պաշտպանում... Իսկ ինքը մինչեւ հիմա թեկնածու է... Իհարկե, նա հանճար է: Տնաբույս: Գնում եմ գործատեղ՝ ուշադրություն դարձրեք նրա վարքի տարօրինակություններին, պատասխանում են, տնօրենը, շնորհակալ եմ, նրան հանգիստ է հարկավոր, ուղեգիր կտանք... Իսկ նա պատուհանից դուրս է նետվում... Ե՛ս, մենակ ե՛ս գիտեմ... Էլի ինչ-որ տզրուկներ են կպել նրան:

- Տես, Է՛,- խոսք գցեց վարչուհին:

- Չէր աշխատում, ոչ մի բանածեւ, տեսել եմ, սովորաբար տրցակներով թուղթ է գրոտում...

Պուլխերիան հիշեց, որ Նա երբեմն ինչ-որ բան էր գրում տետրակի մեջ: «Էլի սուտ է ասում»,- մտածեց:

Օլյան այտերից սրբում էր առատ արցունքները՝ ոչ մեկին ուշադրություն չդարձնելով:

Պուլխերիան հիմա ամեն ինչ գիտեր: Մնում էր պարզել, թե նա որ հիվանդանոցում է: Ամեն ինչ մի տեսակ միանգամից միահյուսվեց, իր տեղն ընկավ: Պուլխերիայի ներսում, ստամոքսից մի քիչ բարձր, կրակ էր վառվում, կարծես լամպ էին վառել ու հենց այնտեղ, ուր սովորաբար թնդում է, երբ մարդ ընկնում կամ տեսնում է ուրիշի վերքը:

- Ոչինչ, կանցնի,- ասաց նա:- Եղբայրս էր Կաշչենկոյում պառկած, ոչի՛նչ, բաց թողեցին:

- Մենք Կաշչենկոյում չենք պառկել,- մտախոհ պատասխանեց Օլյան:- Մեր հիվանդանոցում են պառկել, այնտեղ նրան ճանաչում են առաջին անգամից, էդ Անյայից սկսած: Քիչ էր մնում աղյուսը թափվեր՝ այնպես էր բռունցքով խփում պատին:

- Ոչինչ, դուրս կգա ու էլի ամեն ինչ կարգին կլինի,- ասաց վարչուհին:

- Բայց ինչքա՞ն կարելի է թափել մի մարդու գլխին,- գոչեց Օլյան:- Ինչքա՞ն կարելի է: Նրա այդ աղջիկը, նկատի ունեմ որդուն, էլի բնակարանը փոխանակելու կռիվ է տալիս: Լարել է տղային, որ դատարան դիմի: Մարդկային լեզվով դրան ասում են՝ կինդ կտիրանա քեզ տված բնակարանին ու կվռնդի քեզ, մենք էլ անբուն կմնանք հոգեկան հիվանդ հորդ հետ: Դե, տուր, բնակարանդ տուր տղայիս, ոչ տուն կունենաս, ոչ տղա:

Ու հոսում էր հսկա բնակարանում մենակ մնացած, բոլորին ցրիվ տված, անզուսպ, կրքոտ ու անպարտելի մարդու խոսքը:

Պուլխերիան քարացած նստել էր դատարկ ու կեղտոտ ամաններով սեղանի մոտ:

- Գլխավորը,- շարունակեց Օլյան,- անընդհատ դրա կուտը ուտող կնանիք են հայտնվում: Այցելում են նրան հիվանդանոցում, տնական կաղամբով կարկանդակներ են տանում, արգանակներ, եսիմ էլ ինչ գրող ու ցավ են փոխանցում: Դայակին ասում եմ՝ ոչ մի ուտելիք, իմից բացի, ինչ իմանաս՝ ինչեր կխառնեն էդ արգանակին: Ու որ չխանգարեն, չանհանգստացնեն նրան: Փառք Աստծու, հիմա հիվանդանոցներում կարանտին է, ընդհանրապես ոչ մեկին չեն թողնում գրիպի պատճառով: Մենակ ուտելիք են

ընդունում կամ էլ նամակ: Էդպես էլ էնտեղ է ու բան չի ուտում:

- Եղբորս պես,- մտախոհ ասաց Պուլխերիան:- Բայց նրան որպես դիսիդենտի էին տարել, հացադուլ էր հայտարարել: Ջոնդով էին կերակրում:

- Չգիտեմ,- գրգռված ասաց Օլյան,- ինչով են կերակրում: Բժիշկն ասում է՝ շիզոֆրենիկների ինքնաբուժման ձեւ են այդ բոլոր հացադուլները: Ու պետք չի միջամտել օրգանիզմին: Բայց հացադուլը հատկապես կատաղիների բաժանմունքում՝ սարսափելի՛ է: Հետները գլուխ չեն դնում, միանգամից անցնում են էլեկտրաշոկի: Կամ էլ էլեկտրական աթոռի են նստացնում, բայց էլեկտրական աթոռը մի անգամ ու ընդմիշտ է, իսկ էստեղ կրկնում են:

Պուլխերիան մի կերպ դիմանում էր՝ հասկանալով, որ Օլյան իրեն մղում է արձագանքի, որ Օլյան զննում է իրեն, ինչպես ենթափորձային կենդանու:

Սրանով ճաշն ավարտվեց: Պուլխերիան վերադարձավ իր միջանցիկ սենյակը, իր սեղանի մոտ, որքան էլ տարօրինակ է՝ այդ երեք, բացարձակ անքուն օրերի տառապանքները վերջացել էին, սկսվել էր զուտ նրա տառապանքը, նրա կյանքն այնտեղ՝ բանտում, նրա միայնությունը՝ կատաղի գազանների մեջ: Լքված կնոջ տառապանքը վերածվել էր բռնությամբ բաժանված կնոջ տառապանքի, իսկ դրանք տարբեր բաներ են, ինչպես տարբեր են այրու վիշտն ու լքվածի վիշտը՝ մտածեց Պուլխերիան՝ հետեւելով իրեն: Տենդը, որ ծանոթ զգացում էր դեռ ծակծկված բիբերով լուսանկարների ժամանակից, թողեց նրան: Պուլխերիան նույնիսկ հաղթողի պես էր մտածում լքված Օլյայի մասին, հաղթողի, որը ոչ մեկին պետք չէր:

- Ու եթե սիրեկաններս չլինեին, ընդհանրապես կկախվեի,- վերջինը բաժին մտնելով՝ ասաց Օլյան:

- Էլ մի ասա,- սենյակից արձագանքեց վարչուհի Ծահխանումը:- Մեկ-մեկ ամեն պատահածն էլ լավ է:

- Չէ՛, դրանից զզվում եմ, իմոնք նվիրված մարդիկ են, ընտանիքավոր, բոլորին հավաքում եմ ծնունդիս ու նայում:

Այդպես ասաց Օլյան՝ ոտքը կախ գցելով Պուլխերիայի սեղանի մոտ:

Այդպես փորձում էր խեղճացնել Պուլխերիայի հաղթանակը, եւ Պուլխերիան ամեն ինչ հասկացավ ու հանգիստ էր:

Մտածում էր: Կարոտը դեռ չէր խեղդել նրան, բայց ամբողջովին իր մեջ էր առել, Պուլխերիան հանգստանում էր մահացու սարսափից հետո, եւ սիրո ու հավատարմության ալիքները նրան օրորում էին այդ կեղտոտ հատակից, աթոռից, սեղանից վեր, գլուխը պտտվում էր, Պուլխերիան, փո-

շոտ նամակների վրա կռացած,ասես ինչ-որ բան էր շշնջում իր սիրո մասին, ողջ ուժով ջանում իր աջակցությունը հասցնել Նրան:

Նրա տառապանքները երբեւէ պիտի վերջ ունենան, հարկ կլինի օգնել Նրան, գործել ծայրահեղ զգուշությամբ, լուր ուղարկել, ապրել՝ ամեն ինչ հաշվարկելով, մինչեւ լիակատար հաղթանակ, մինչեւ ազատագրում, մինչեւ ազատություն, չնայած այլախոհ եղբոր հետ կապված՝ Պուլխերիայի փորձը հուշում էր, որ ամեն ինչ այնքան էլ հեշտ չէ ու կատաղի ջանքով մարդուն ազատելը դեռ ամբողջը չէ: Խնդիրը միայն պաշտոնական կողմը չի, կոպտորեն խախտված, ուստի եւ հեշտությամբ վերականգնվող մարդու իրավունքները չեն: Մարդուն իր տեղից շարժելը, նույնիսկ այդպիսի տեղից, մեծ ռիսկ է՝ առայժմ հանգիստ, ինչպես շախմատիստը խաղի սկզբում, մտածում էր Պուլխերիան: Չի կարելի ձեռք տալ մարդուն, մտածում էր Պուլխերիան, չի՛ կարելի, չի՛ կարելի, ամեն ինչ ինքը պիտի անի: Բոլորը, որ մինչ այդ ազատել էին Նրան, այդ բոլոր կարկանդակ ու արգանակ բերողները, ստվերում էին մնացել, անհետացել էին, իսկ Պուլխերիան գիտեր, որ պետք է մնա նրա կյանքում՝ հավատարիմ, նվիրված, հնազանդ, խղճալի ու թույլ ոչ երիտասարդ կին, Բավկիդոս:

Պուլխերիան մի ակնթարթում վերածվեց զորավարի, որը գիտեր նահանջի, ստվերում պահվելու ուժը, լռության ուժը: Պետք է սպասել: Նա կվերադառնա՝ մտածում էր Պուլխերիան: Ինքը կպատռի այդ շղթաները: Նա ուժեղ է: Ու չափազանց մեծ է անօրինությունը, նրան կօգնեն: Նրան կօգնի որդին: Հաղթանակը կգա, բայց առանց ինձ: Սարսափելի՛ է, սարսափելի՛ է՝ մտածեց Պուլխերիան, չտեսնել նրան, ոչինչ չիմանալ:

- Չե՞ս ուզում ինձ հետ գալ հիվանդանոց,- մոտեցավ Օլյան:- Սեղանի մոտ, հիշո՞ւմ ես, նրա կողքին էիր նստած, այնքան լավ էիք խոսում՝ բոլորին մոռացած:

- Քո ամուսի՞նն էր,- անկիրք ձայնով հարցրեց Պուլխերիան:

- Ի՞նչ ես ասում: Ախր դուրս եկավ քեզ տուն ճանապարհելու, ես էի խնդրել, հիշո՞ւմ ես: Թեյից առաջ:

- Հա՛, ուղեկցեց, մինչեւ ավտոբուսի կանգառ,- ասաց Պուլխերիան,- որտեղի՞ց իմանայի, որ հիվանդ է: Եղբորիցս հետո վախենում եմ նրանցից, եղբորս էլ Ամերիկա հազվադեպ եմ գրում:

- Հետաքրքիր է,- ասաց Օլյան ու մի տեսակ ամբողջովին մշուշվեց, շտկվեց, հայացքը սեւեռվեց հեռվին ու դեմ առավ Պուլխերիայի թիկունքի կեղտոտ պաստառներին:- Հետաքրքիր է, ի՞նչ քածեր կան, գայթակղում են հիվանդ մարդուն:

- Ես չեմ գայթակղել,- սառը պատասխանեց Պուլխերիան,- ինքը եկավ ուղեկցելու: Հինգ րոպեի ճամփա է, ավտոբուսը շուտ եկավ, ես չէի էլ կասկածում, որ հիվանդ է:

- Հը՞, գնացի՞նք: Լիդոչկան բաց կթողի մեզ: Մենակ՝ վախենում եմ:

- Կներես, բայց թոռնիկս...

- Գործի ժամին ենք գնալու:

- Կներես, մի տեսակ անհարմար է, ո՞վ եմ ես:

- Օտար մարդու մոտ ավելի քիչ կգոռա վրաս,- ասաց Օլյան:

- Վա՛յ, վախենում եմ,- պատասխանեց Պուլխերիան ու դարակից հանեց նամակների հերթական ծրարը:

- Լսի՛ր,- մի տեսակ դանդաղ խոսեց Օլյան:- Չտեսա՞ր՝ հետո որ կողմ գնաց:

- Ո՞նց տեսնեի, չէի նայում: Ու հետո, ավտոբուսի ապակիները սառած էին: Համ էլ ինչ ստուգեի, ինչի՞ն է պետք:

- Համենայնդեպս, ինչ-որ մեկի հետ ապրում էր: Իմ հետ որ չէր քնում,- մտախոհ ասաց Օլյան:

- Ինչ ասեմ,- բավական սառը պատասխանեց Պուլխերիան,- դա ինձնից չի կախված: Ինձ էնպիսի՛ բաներ ասեց պապի մասին,- Պուլխերիան ցույց տվեց իր ուսումնասիրությունների առարկայի դիմանկարը՝ ապակու տակ, Վորոշիլովի թե Հիտլերի պես՝ քթատակի փնջիկով, Բերիայի նման՝ պենսնեով. այդպիսին էր այդ դարաշրջանի ղեկավարների ոճը:- Ասաց, որ ընդհանրապես իզուր եմ աշխատում, մեջք ծռում:

- Էդ մեկը կարողանում է՝ վիրավորել, նվաստացնել, նեղացնել,- ասաց Օլյան:- Դա գլխավորն է նրա անհատականության մեջ: Ինքը զուտ հանճար է, մնացածը՝ մանրուք: Բնակարանն էլ, ուր հանճարն է կենում, ու մնացած ամեն ինչն էլ իրենն է, չէ՞: Հեչ էլ: Բնակարանը փոխանակելը նրա նախաձեռնությունն է, բայց բոլորի՛ն էին տվել: Ցղան լեզվից թռցրեց, թե ուզել է իրեն երկու սենյականոց տա, իրեն էլ՝ բնակարան, իսկ ինձ, ո՛վ եմ ես, ինչ տակը մնաց: Չստացվե՛ց: Նա հոգեկան հիվանդ է եւ ընդհանրապես անգործունակ: Բա տղա՞ն ոնց էր կատաղել, ոնց էր գոռում: Ժառանգականությո՛ւն: Նրան էլ է պետք հոգեբույժի տանել: Հայրը, տեսեք-տեսեք, ամեն ինչ իրեն է թողել, ստորագրել է բնակարանի փոխանակման բոլոր թղթերը: Իսկ ես հոր վրա խնամակալություն կձեւակերպեմ, աննորմալ է եւ անգործունակ: Ու վերջ: Դրան տեսեք, բնակարա՞ն: Իր համար չի ուզում, է՛, էդ լրբի համար է ուզում: (Ու էլի բառեր ավելացրեց):

Պուլխերիան հանկարծ կարմրեց, բայց շարունակեց կարդալ, իսկ

նույնքան կարմրատակած Օլյան կանգնել ու չէր տեսնում նրա դեմքը, չէր նայում, թեւաբաց թռչում էր ասես, անիծում, սպառնում, գրողի ծոցն ուղարկում, ու ողջը՝ անիմաստ:

- Լիդային տար հետդ, Ծահխանումին,- ասաց Պուլխերիան:

- Լա՛վ, լա՛վ, ոչ մեկն էլ ինձ պետք չի, առաջին անգա՞մն է, ինչ է,- սպառված ասաց Օլյան ու գնաց իր սենյակը:

Պուլխերիան, պատվով բռնելով Օլյայի քննությունը, շարունակում էր տքնել իր փոշոտ թղթերի վրա, անպատուհան նեղվածք միջանցիկ սենյակում, մոտենում էր մարտը, ու Պուլխերիան շատ տխուր էր: Գիտեր, որ հույսը միայն բախտի վրա պիտի դնի, քաջություն գտնի ու սպասի՝ համբերատար, թաքնվելով...

Նախ՝ Օլյային խրտնեցնելը րոպեական բան էր: Ճշմարտությունն իմանալով՝ նա ընդունակ կլիներ վառելու Պուլխերիայի բնակարանը, հեշտությամբ սպանել ամուսնուն.կատաղի բաժանմունքի սանիտարներն էլ մարդ էին, եւ ինչքան էլ հուսաս, այնտեղ կարող են հանցագործներ ու կաշառակերներ լինել:

Իսկ երկրորդն այն էր, որ Նա՝ Քարե հյուրը, կարող էր արդեն մոռացած լինել իր Պուլխերիային, քանզի սերը խաղ է ու ոչինչ ավելի, սերը վախենում է փոխադարձությունից, կապվելուց, հավատարմությունից,վախենում է վերադարձնել պարտքերը եւ առեղծվածն ու կեղծ ուղիներն է սիրում:

Հյուրը գնահատում էր թերասությունը, անսպասելիությունը, ազատությունը ու միայն անկյունից էր հարձակվում:

Գուցե եւ ներկա հանգամանքներում նրան պետք էլ չի ու խաղի սիրտ էլ չունի: Գուցե մեղադրում է Պուլխերիային, անիծում այդ անհեթեթ թմբլիկ պառավին:

Եվ Պուլխերիան իջավ հատակը, ու միակ բանը, որ նրա հետ կատարվեց՝ չթպրտաց, սուսուփուս տեղափոխվեց ուրիշ բաժին եւ այդ ճանապարհին նիհարեց, սմքեց եւ ամեն օր, տուն վերադառնալով՝ համարյա կորցնում էր գիտակցությունը:

Ու միայն հունիսի վերջին, ուշ երեկոյան գրադարանից տուն գալիս, շքամուտքի մոտ, նստարանին տեսավ ծանոթ կերպարանքը՝ ազատ նստած, ոտքը ոտքին, գորշազգեստ կերպարանքը՝ ճերմակած մազերով:

Հյուրը դանդաղ վեր կացավ, նրա առաջ բացեց դուռը, Պուլխերիան մտավ՝ խայտառակ կերպով սայթաքելով, հյուրը բռնեց նրա արմունկը եւ ինչպես տիկնոջը թեւանցուկ, տարավ դեպի վերելակը:

Արկադի ԲԱՐՏՈՎ

ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը ծանոթանում է Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի հետ

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը՝ նոսր մազերով ու պաղ ոտքերով մի մարդ, հանդիպեց Անտոնինա Իվանովնա Տուպոուխինային: Իր հոգնած աչքերով միանգամից չէր տեսել: Իսկ նրան հանդիպած Անտոնինան Իվանովնան շիկահեր էր, գանգրամազ, փոքրիկ բութ ականջներով ու սկսել էր գիրանալ: Իվան Վասիլեւիչը ուշադրություն դարձնելով Անտոնինա Իվանովնային ու ծանոթանալու համար ասաց.

- Կյանքը ծանր է, ոնց որ կովի թրքաբլիթ:

- Ճիշտ եք ասում,- պատասխանեց Անտոնինա Իվանովնան,- կյանքն առանց սիրո, ոնց որ խնձորն առանց կտի, թքելու բան չկա:

- Ճիշտ է,- հաստատեց Իվան Վասիլեւիչը,- սերը ոստի պես է, պատի միջով է նայում:

Այդպես, երբեմնակի դիտողություններ փոխանակելով, հասան Անտոնինա Իվանովնայի տան մոտ: Ստան ու լուռումունջ շտկելով վերնաշապիկները՝ նայեցին պատուհանից դուրս: Արեւը հեռանում էր, ու բարձրանում էր քրտնքոտ գիշերը: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա, բարձր երկնքում կանգնած էր երկնագույն-ճերմակ Ալֆերաց աստղը՝ Անդրոմեդայի համաստեղությունից: Իվան Վասիլեւիչի աչքերը փայլեցին, գրկեց Անտոնինա Իվանովնային ու, ամեն հարվածից հետո արմունկները ցնցելով, սկսեց խփել նրան: Անտոնինա Իվանովնան պտույտ էր գալիս մահճակալի վրա ու ծղրտում էր: Իվան Վասիլեւիչը հոգնեց ու քրտնմխած՝ ասաց.

- Մարդը շան պես է, ծղրտում ու պտույտ է գալիս, չգիտես ինչի,- ու նստեց սեղանի մոտ:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ընթրում է Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի հետ

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը նստեց սեղանի մոտ, եւ Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան օդի լցրեց: Նրանց դեմքերը պատվեցին յուղոտ փայլով, աչքերը խոնավացան, շրթունքների անկյուններում չորացավ թուքը: Ճանճերը մկան պես, համառորեն ճանկռում էին պատուհանը: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա, բարձր երկնքում կանգնած էր ճերմակ-նարնջագույն Պոլլուքս աստղը՝ Երկվորյակների համաստեղությունից: Իվան Վասիլեւիչն ամեն բաժակից հետո երկար եղունգներով քչփորում էր Անտոնինա Իվանովնայի ծանրածույլ ուսերը, իսկ Անտոնինա Իվանովնան կարկանդակ էր ծամում: Օդին խմելով՝ Իվան Վասիլեւիչը սեղմվեց Անտոնինա Իվանովնայի փորին, կռնչաց հաճույքից ու թքեց նրա պորտին:

Անտոնինա Իվանովնան էլ, հոգնաբեկ, ուրախ ժպտալով ու տնքալով, գլուխը թաքցրեց Իվան Վասիլեւիչի թեւատակին: Իվան Վասիլեւիչը, գանգրացրած մազերից բռնած, դուրս քաշեց Անտոնինա Իվանովնայի գլուխը:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան երգեր են երգում

Թալկացած Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը մազերից բռնած՝ իրեն քաշեց Անտոնինա Իվանովնա Տուպոուխինային, ասաց.

- Կնանիք, կատվի նման են, մի գլուխ քնեն կամ պառկեն տղամարդկանց հետ, իսկ երգել չգիտեն: Մեկ էլ տեսար՝ բացեց բերանը, ու մենակ ծվծվոց է գալիս, ոնց որ խեղդվելիս: Երգի՛:

Անտոնինա Իվանովնան բացեց թմբլիկ բերանը, երգեց, կռկռաց.

- Կլը՛, կլը՛, կլը՛, կլը՛, կլը՛:

Իվան Վասիլեւիչը միացավ, կանչեց.

- Պո՛լլ, պո՛լլ, պո՛լլ, պո՛լլ, պո՛լլ, պո՛լլ:

Անտոնինա Իվանովնան.- Պլե՛ն, պլե՛ն, պլե՛ն, պլե՛ն, պլե՛ն:

Իվան Վասիլեւիչը.- Տը՛ռռ, տը՛ռռ, տը՛ռռ, տը՛ռռ, տը՛ռռ:

Անտոնինա Իվանովնան.- Ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛, ղա՛:

Իվան Վասիլեւիչը. Ղո՛, ղո՛, ղո՛, ղո՛, ղո՛, տո՛ւ:

Անտոնինա Իվանովնան՝ իսկը սոխակ.- Ֆյուի՛, ֆյուի՛, ֆյուի՛, ֆյուի՛, ֆյուի,տի-վի՛տ, տի-վի՛տ, տի-վի՛տ, տո՛ւկ:

Բաց պատուհանից խնձորենու ծաղկունք էր բուրում: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա երկնքում բարձր կանգնած էր Բենետնաշ նարնջա-կանաչավուն աստղը Մեծ արջի համաստեղությունից: Իվան Վասիլեւիչը երախտապարտ մոտ քաշեց Անտոնինա Իվանովնային, քորեց ոտքերի արանքը, հատ-հատ ասաց.

- Անուշ երգելը ոտ քորելու պես է, չես կշտանա,- ու ելավ բակ:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան զբոսնում են բակում

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը ելավ բակ՝ Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի հետ զբոսնելու:

- Կնիկը մարդուց չի պոկվում, ոնց որ ձին՝ քեղուց,- բռունցքով Անտոնինա Իվանովնային առաջ մշտելով՝ ասում էր Իվան Վասիլեւիչը:

Բաց պատուհանից ներս էր լցվում կացարանի հոտը: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր կանաչավուն-դեղին Արկտուր աստղը՝ Վոլոպասի համաստեղությունից: Զբոսնելիս Անտոնինա Իվանովնան անընդհատ շրջվում ու ժպտալով հոդակոշտեր ու քարեր էր շպրտում Իվան Վասիլեւիչի վրա: Դա սկզբում դուր էր գալիս Իվան Վասիլեւիչին, բայց մի քանի քար գլխին կպան ու պատռեցին քիթն ու ականջները: Իվան Վասիլեւիչը բարկացած մոտ վազեց Անտոնինա Իվանովնային, մի ձեռքով քաշեց ականջի բութ բլթակը, մյուսով բռնեց կոկորդը ու սկսեց խեղդել: Երբ Անտոնինա Իվանովնան, շնչահատ, ընկավ, Իվան Վասիլեւիչը ճմռթեց նրա հաստ կուրծքը, թփթփացրեց այտերին: Անտոնինա Իվանովնան բացեց աչքերն ու շխկացրեց Իվան Վասիլեւիչի արդեն ճղված քթին: Իվան Վ ասիլեւիչ Մերզլյակովը արյուն խնչեց, գրկեց Անտոնինա Իվանովնային, ասաց.

- Սերը, տարականի պես է, իր ժամանակն է ուզում,- ու նրան տարավ տուն:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան սիրում են իրար

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը Անտոնինա Իվանովնա Տուպոուխինային տարավ տուն, խնամքով դրեց մահճակալին եւ, ատամները սեղմած, սկսեց ճմթելով ոլորել կրծքի քրտինքից պաղած նուրբ մաշկը: Անտոնինա

Իվանովնան գալարվում էր փափուկ անկողնու վրա, ծանր շնչում: Իվան Վասիլեւիչը տնտղում էր նրա դեմքը, փնտրում էր կպչուն շրթունքները: Իվան Վասիլեւիչի մատների տակ Անտոնինա Իվանովնան սեղմում ու բացում էր ծնոտները: Իվան Վասիլեւիչը հոգնեց, ասաց.

- Կնիկը նկուղի պես է, դրսից՝ տաք, ներսում՝ սառը,- ու հետ ընկավ Անտոնինա Իվանովնայից:

Բաց պատուհանից փչում էր: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր դեղնակամիր Կորնեթոս աստղը՝ Հերակլեսի համաստեղությունից: Անտոնինա Իվանովնան, արմունկին հենված ու չաղլիկ հոդերով մատները շարժելով, նայեց Իվան Վասիլեւիչի նիհարած մարմնին, ասաց.

- Տղամարդը կպնում է կնկան, ոնց որ տերեւը՝ ապակուն,- եւ անմիջապես քնեց:

Իվան Վասիլեւիչը, փորձելով տաքանալ, սառը ոտքերով սեղմվեց Անտոնինա Իվանովնայի լայն սրունքներին:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովի երազը

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը սառը ոտքերով սեղմվեց Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի լայն սրունքներին: Անտոնինա Իվանովնան խռմփացնում էր կողքին, ու նրա ահռելի կուրծքը, սեւ պտուկով, շապիկից դուրս էր պրծել: Խռմփոցը Իվան Վասիլեւիչին չէր թողնում քնի: Ձեռքին փաթաթեց Անտոնինա Իվանովնայի մազերը, իսկ մյուս ձեռքով փակեց բերանը: Անտոնինա Իվանովնայի ճիչը խեղդվեց կոկորդում: Այդ ժամանակ Իվան Վասիլեւիչը մի փոքր բացեց նրա բերանը: Անտոնինա Իվանովնան խոր շունչ քաշեց, կշտամբանքով նայեց Իվան Վասիլեւիչին ու նորից քնեց: Իվան Վասիլեւիչը ատամների արանքից քրթմնջաց.

- Սերը հողի պես է, ավելի պարարտ բան չկա,- գլուխը դրեց Անտոնինա Իվանովնայի կրծքին եւ ինքն էլ քնեց: Ու երազ տեսավ Իվան Վասիլեւիչը:

Պառկած է Իվան Վասիլեւիչը մահճակալին ու աչքերն է ճպճպացնում: Պատուհանի մեջ թանձրանում է մթնշաղը, մշուշ է փռվում, անձրեւ է գալիս: Ծուրջը սեւին տալիս ու ճապաղվում են բազում ստվերներ: Ստվերներից մեկը՝ խոշոր ու քրտնոտ, փետում է նրա մազերը: Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը վախից արթնացավ: Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան

գրկել էր նրա գլուխը, շոյում էր վախից թրջված մազերը ու մեկիկ-մեկիկ պոկում: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում բարձր կանգնած էր կարմրա-մանուշակագույն Տուրբան աստղը՝ Վիշապի համաստեղությունից: Իվան Վասիլեւիչը բռունցքով հասցրեց Անտոնինա Իվանովնայի կորված մեջքին, ոտքը ոտքին քսեց, ասես ցեխ էր մաքրում, բազմանշանակ ասաց.

- Երկար մազերը մտքին վնաս են,- ու հանեց մեծ մկրատը:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը խուզում է Անտոնինա Իվանովնա Տուպոուխինային

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը հանեց մեծ մկրատն ու չռած մատներով ձախ ձեռքը դնելով Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի կրծքին՝ աջով սկսեց խուզել նրա խոնարհ գլուխը:

- Կնկա համար մազը, ոնց որ փետուրը՝ թռչունի, գլուխը չես տեսնում,- ծոր տվեց Իվան Վասիլեւիչն ու ժպտաց:

Անտոնինա Իվանովնան նստել մահճակալին ու գլուխը կախ, մտքերի մեջ՝ ճմթում էր Իվան Վասիլեւիչի լղար սրունքը: Անտոնինա Իվանովնայի բացգույն խիտ գանգուր մազերը, սեւաբմբուլ թեթեւ խոպոպները՝ ատամների հովհարի գլխին, փոքրիկ մաքուր ճակատը շահավետ տպավորություն էին թողնում: Արտահայտիչ դուրս պրծած աչքերը Իվան Վասիլեւիչի կողքով նայում էին պատուհանից դուրս: Պատուհանից ցուրտ էր փչում: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր մանուշակա-մանուշակագույն Սպիկա աստղը՝ Կույսի համաստեղությունից: Ծեկ կոշտ մազի փռչերը սահում էին Անտոնինա Իվանովնայի մերկ ուսերի վրայով, պարուրվում ազդրերի շուրջը, թափվում հատակին: Մազերը ճռռում էին մկրատի տակ, իսկ Իվան Վասիլեւիչը խուզում ու խուզում էր: Վերջապես Անտոնինա Իվանովնան թափտվեց գլուխը, վեր թռավ մահճակալից, վճռական ասաց.

- Կյանքը հեռանում է մարմնից, ինչպես ծխնելույզից՝ ծուխը,- ու սկսեց վառարանը վառել: Իվան Վասիլեւիչն օգնում էր նրան՝ չոր, երկարուկ փայտեր էր գցում:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան վառարան են վառում

Իվան Վասիլեւիչ Սերգլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան վառարան էին վառում՝ չոր, երկարուկ փայտեր գցելով: Իվան Վասիլեւիչը երկար նայեց պատուհանից դուրս, հետո ասաց.

- Անփետ կրակը, ոնց որ որձն՝ առանց էգի, մաշվում ու խորշոմում է:

Սենյակը շոգեց: Պատուհանը փակ էր: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնել էր մանուշակաոսկեգույն Ազդրա աստղը՝ Մեծ շան համաստեղությունից: Առատ քրտինք էր դուրս տվել Անտոնինա Իվանովնայի կրծքին ու Իվան Վասիլեւիչի վզին: Երբ վառարանն արդեն լեփ-լեցուն էր փայտերով, Իվան Վասիլեւիչը, քրտինքը սրբելով, փայտակոճղով խփեց Անտոնինա Իվանովնայի ոտքերին: Անտոնինա Իվանովնան էլ մի ճղոն առավ եւ, ուսերը դողացնելով, հասցրեց Իվան Վասիլեւիչի փորին: Իվան Վասիլեւիչն ախ արեց, ասաց.

- Փորը տաք առած կատվի պես է, մռռում է ու ճչում,- ու ճղոնով խփեց Անտոնինա Իվանովնայի գլխին: Անտոնինա Իվանովնան ընկավ, հետո վեր կացավ, հորանջեց ու գնաց բաղնիք: Իվան Վասիլեւիչը գնաց նրա ետեւից:

Իվան Վասիլեւիչ Սերգլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան լողանում են բաղնիքում

Իվան Վասիլեւիչ Սերգլյակովը Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի հետեւից գնաց բաղնիք: Նստեց թարեքին եւ օճառեց իր ոսկրոտ, դեղնավուն մարմինը: Առաստաղի մեջտեղը կախած լամպի տակ Իվան Վասիլեւիչի համարյա լերկ, սակավամազ գանգը շողում էր: Անտոնինա Իվանովնան, շոգից շռայլացած փաղաքշանով, կրծքով սեղմվեց Իվան Վասիլեւիչի փորին:

- Բաղնիք անես՝ նորից ծնվես,- մտածեց Իվան Վասիլեւիչը, կծիկ դառավ Անտոնինա Իվանովնայի կողքին ու քնեց նույն թարեքին:

Իվան Վասիլեւիչն արթնացավ նրանից, որ Անտոնինա Իվանովնան ճաղատ գլուխը խփում էր տախտակներին: Անտոնինա Իվանովնան ծանր էր շնչում, փրփուր թափվեց բերանից: Գրկեց Իվան Վասիլեւիչին, նայեց աչքերի մեջ, կամացուկ, շնչահատ ասաց.

- Սիրտս մարում է: Սերը, ոնց որ արեւ, սնդուկում չես պահի:

Լողացած ու գրկված՝ Իվան Վասիլեւիչն ու Անտոնինա Իվանովնան

ելան նախաբաղնիք: Իվան Վասիլեւիչը սրբիչով խնամքով սրբեց Անտոնինա Իվանովնայի պերճ մարմինը, ծխախոտ հանեց, ագահ ներս քաշեց ծուխը, թփթփացրեց իր լղար սրունքներին, ասաց.

- Ծղնոտը՝ բարակ, բայց ձեր մարմնի կերն է:

Լռեցին: Նայեցին պատուհանից դուրս, որտեղից թափանցում էին արեւի առաջին, դեռ թույլ շողերը ու բռնկվում Անտոնինա Իվանովնայի գանգուր մազերի մեջ: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը:Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնել էր ոսկեւուն-ծիրանի Շեդար աստղը՝ Կասիոպեայի համաստեղությունից: Իվան Վասիլեւիչը Անտոնինա Իվանովնային բերանքսիվար շուռ տվեց թարեքին ու ծխախոտը հանգցրեց հետույքին: Անտոնինա Իվանովնան մանր քրքջաց, ինչպես խուտուտից, հետո դանդաղ վեր կացավ ու Իվան Վասիլեւիչին քաշեց տուն:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան նորից են սիրում իրար

Թալկացած Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան Իվան Վասիլեւիչ Մերզլյակովին քաշեց տուն: Իվան Վասիլեւիչը կորցրեց հավասարակշռությունն ու ընկավ: Անտոնինա Իվանովնան, գրկելով Իվան Վասիլեւիչի վիզը, թեթեւ սեղմեց թմբլիկ մատներով: Իվան Վասիլեւիչը կռնչաց ու կորցրեց գիտակցությունը: Անտոնինա Իվանովնան սկսեց ճմթել Իվան Վասիլեւիչի սմքած այտերը, ասաց.

- Տղամարդը՝ ոնց որ մոծակ, ծվվում է, մինչեւ չտրորես,- հետո պառկեց նրա կողքին՝ Իվան Վասիլեւիչի գլուխը պերճ կրծքին սեղմելով: Ու գրկելով նրան՝ քնեց:

Քամին կիսաբաց արեց պատուհանը՝ գիշերային հոտեր բերելով: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր ծիրանի-նարնջե Դենեբ աստղը՝ Կարապի համաստեղությունից:

Երբ Իվան Վասիլեւիչն ուշքի եկավ, զգաց, որ սեւ հաստ պտուկով ահռելի կուրծքը լցվել է բերանը, չի թողնում շնչի: Իվան Վասիլեւիչը դուրս եկավ Անտոնինա Իվանովնայի տակից, տնքաց.

- Կնկանից, ոնց որ բարձից, գլուխդ չես կտրի,- ու մի քանի անգամ քաշեց Անտոնինա Իվանովնայի ականջի բութ բլթակը: Բայց Անտոնինա Իվանովնան չարթնացավ, չնայած քունը անհանգիստ ու հուզախռով էր:

Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի երազը

Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան քնած էր անհանգիստ ու հուզախռով: Նրա ահռելի կուրծքը դեսուդեն էր ընկնում բարձին ու խփվում Իվան Վասիլեւիչ Մերզլյակովի թշերին: Իվան Վասիլեւիչը, տաքից հոգնած, խռխռաց: Անտոնինա Իվանովնան արթնացավ, ձեռքին փաթաթեց Իվան Վասիլեւիչի նոսր մազերն ու փակեց բերանը: Իվան Վասիլեւիչի ճիչը խեղդվեց կոկորդում: Այդ ժամանակ Անտոնինա Իվանովնան մի քիչ բացեց Իվան Վասիլեւիչի բերանը: Իվան Վասիլեւիչը խոր շունչ քաշեց եւ շնչեց հանգիստ ու համաչափ: Անտոնինա Իվանովնան շշնջաց.

- Սերը՝ ոնց որ արեւ, ոչ կողքից կանցնես, ոչ կշրջանցես,- ու նորից քնեց: Ու երազ տեսավ Անտոնինա Իվանովնան:

Պառկած է Անտոնինա Իվանովնան մահճակալին ու աչքերն է ճպճպացնում: Պատուհանի մեջ թանձր խավար է, մշուշ փռվում, անձրեւ է գալիս: Ծուրջը սեւին տալիս ու ճապաղվում են բազում ստվերներ: Ստվերներից մեկը՝ լողլող ու լղար, կռացել Անտոնինա Իվանովնայի վրա ու ականջներն է կծում: Անտոնինա Իվանովնան արթնացավ սրտխառնոցից: Քրտնած ձեռքերով սեղմել էր Իվան Վասիլեւիչի գլուխը, բերանն էր խցկվել նրա մեծ, մազմզոտ ականջը: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր նարնջա-դեղին Դեսեբոլա աստղը՝ Առյուծի համաստեղությունից: Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան բերանից հանեց Իվան Վասիլեւիչի ականջը, առատ թքեց, ասաց.

- Սազերով, ոնց խոտով, չես կշտանա,- նստեց սեղանի մոտ ու օղի լցրեց Իվան Վասիլեւիչի համար:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը նախաճաշում է Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայի հետ

Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան օղի լցրեց Իվան Վասիլեւիչ Մերզլյակովի համար: Իվան Վասիլեւիչը ճմթում էր Անտոնինա Իվանովնայի փարթամ մարմինն ու ամեն բաժակից հետո կտկտացնում նրա մասերին՝ չափուձեւ անում, ասում էր.

- Մի ոտը, լյարդը, կուրծքը, մյուս ոտը:

Անտոնինա Իվանովնան կարկանդակ կարկանդակի ետեւից էր ուտում: Պոկոտում էր ատամներով ու ծամելիս բաց պատուհանից նայում էր բակ՝ ասես մտածելով ինչ-որ բանի մասին: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնել էր դեղին-ոսկեւուն Շելիակ աստղը՝ Քնարի համաստեղությունից: Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան, վերջին կարկանդակը ծամելով, տրորեց կուրծքն ու ծանր հառաչեց.

- Փորը, խոզի պես, չի ցավում, տնքում է,- ու բերեց խաղաթղթերը:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան թուղթ են խաղում

Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան բերեց խաղաթղթերն ու նստեց խաղալու Իվան Վասիլեւիչ Մերզլյակովի հետ: Անտոնինա Իվանովնան տաքանում, դրա համար էլ տարվում էր: Ամեն տարվելիս Իվան Վասիլեւիչը նրա գլուխը խփում էր հատակին՝ իր պաղ ոտքերի տակ, ու երբ Անտոնինա Իվանովնան կորցնում էր գիտակցությունը, ասում էր.

- Հիմարը քնած է, իսկ բախտը գլխավերեւն է կանգնել:

Անտոնինա Իվանովնան շուտով ձանձրացավ խաղալուց: Ագահ հոտոտում էր: Գլուխը պտտվում ու սիրտը մի քիչ խառնում էր պատուհանից եկող խնձորենու ծաղկունքի հոտից: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր ոսկեւուն-երկնագույն Ալտաիր աստղը՝ Արծվի համաստեղությունից: Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը խաղաթղթերով մի քանի անգամ շխկացրեց Անտոնինա Իվանովնայի քթին, հետո ասաց.

- Քթիդ խփեմ՝ հոտից ընկնես,-եւ անթարթ նայեց նրան:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովը բաժանվում է Անտոնինա Իվանովնա Տուպոուխինայից

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն անթարթ նայեց Անտոնինա Իվանովնա Տուպոուխինային: Վերջապես փախցրեց հայացքը, ցնցվեց, ասես ուշքի գալով՝ ասաց.

- Գեղեցկությունը ձիու նման է՝ ձիասարք չի ուզում,- ու խփեց Անտոնինա Իվանովնայի մեջքից քիչ ներքեւ:

Արկադի ԲԱՐՏՈՎ

Երկուսն էլ վեր կացան, վերնաշապիկները շտկելով՝ մոտեցան պատուհանին: Արեւը բարձրացել էր, եւ տաք ու քրտնոտ՝ հեռանում էր գիշերը: Բակում կատաղի ու ծղրտան հաչում էր շունը: Իսկ բակի վրա բարձր երկնքում կանգնած էր երկնագույն-ճերմակ Բելարիքս աստղը՝ Օրիոնի համաստեղությունից:

Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան դուրս եկան տնից: Իվան Վասիլեւիչը վերջին անգամ բռունցքով հասցրեց Անտոնինա Իվանովնայի գլխին: Դեմքին տխրություն ու խոնջանք էր: Ասաց.

- Մարդը՝ ոնց որ արեւ, գալիս ու գնում է,- ու հեռացավ: Անտոնինա Իվանովնան երկար ու անթարթ նայում էր նրա ետեւից:

Երկնքի անծայր հեռաստաններում շողում ու ծիածանի բոլոր գույներով փողփողում են անհամար աստղեր:

Իսկ հեռու ցածում՝ երկրի վրա վերեւից աննշմար երկու կերպարանք ավելի ու ավելի են հեռանում իրարից՝ Իվան Վասիլեւիչ Մերզլյակովն ու Անտոնինա Իվանովնա Տուպոուխինան:

Տատյանա ՏՈԼՍՏԱՅԱ

ՍԱՄՈՆՏԻ ՈՐՍ

Գեղեցիկ անուն է, չէ՞. Զոյա: Ասես մեղուներ բզզացին: Ինքն էլ է գեղեցիկ՝ բարձր հասակ եւ այլն: Մանրամասնե՞ր: Խնդրեմ մանրամասները. ոտքերը լավն են, կազմվածքը լավն է, մաշկը լավն է, քիթը, աչքերը՝ ամեն ինչ լավն է: Ճագանակահեր: Ինչու ոչ շիկահե՞ր: Որովհետեւ կյանքում բոլորի բախտը չի բերում:

Երբ Զոյան ծանոթացավ Վլադիմիրի հետ, նա պարզապես ցնցված էր: Կամ, համենայնդեպս, հաճելիորեն զարմացած:

- Օ՛,- ասաց Վլադիմիրը:

Այսպես ասաց: Ու Զոյային հաճախ, շատ հաճախ տեսնելու ցանկություն հայտնեց: Բայց՝ ոչ միշտ: Ու դա վշտացրեց Զոյային: Նրա մեկսենյականոց փոքրիկ բնակարանում Վլադիմիրը միայն ատամի խոզանակն էր թողնում. անկասկած ինտիմ իր է, բայց ոչ այնքան, որ տղամարդուն պինդ կապի ընտանեկան օջախին: Զոյան ուզում էր, որ Վլադիմիրի շապիկները, վարտիքները, գուլպաները մնան իր տանը, հարազատանան սպիտակեղենի պահարանին, գուցե աթոռին թափված լինեն, որ, այ այսպես, վերցնի որեւէ սվիտեր ու թրջոց դնի՝ «Լոտոսի» մեջ: Հետո շիտակ կախի չորանալու:

Բայց՝ չէ՛, հետքեր չէր թողնում. ամեն ինչ պահում էր իր կոմունալ բնակարանում: Նույնիսկ ածելին այնտեղ էր: Չնայած՝ ի՞նչ էր այնտեղ մորուքավորը: Նա երկու մորուք ուներ. մեկը՝ թավ, մուգ, իսկ մյուսը՝ կարծես ուրիշ, ավելի փոքր, շիկավուն, նեղ փնջիկով բուսնել էր կզակին: Տեսնելի՛ք էր: Երբ ուտում կամ ծիծաղում էր, այդ երկրորդ մորուքն ուղղակի թռչկոտում էր: Վլադիմիրը բարձրահասակ չէր, կես գլուխ ցած էր Զոյայից, մի քիչ վայրենատես, մազոտ: Ու շատ արագ էր շարժվում: Վլադիմիրը ինժեներ էր:

- Դուք ինժենե՞ր եք,- քնքուշ ու ցրված հարցրեց Զոյան առաջին հանդիպմանը, երբ նստած էին ռեստորանում, ու նա, բերանը մի միլիմետր բացած՝ շոկոլադի սոուսով խմորագնդիկներ էր համտեսում՝ ձեւացնելով, թե ինչ-ինչ ինտելեկտուալ պատճառներով այն իրեն դուր չի գալիս:

- Էդպե՛ս,- ասաց նա՝ նայելով Զոյայի կզակին:

- ԳՀԻ-ո՞ւմ...
- Էդպե՛ս:
-...թե՞ արտադրությունում:
- Էդպե՛ս:

Դե արի ու հասկացիր նրան, երբ այդպես նայում է: Ու մի քիչ էլ խմած է:

Ինժեներն էլ վատ չի: Ճիշտ է, ավելի լավ է վիրաբույժ լիներ: Զոյան հիվանդանոցում էր աշխատում, տեղեկատվականում, սպիտակ խալաթ էր հագնում ու դրանով մի քիչ պատկանում էր այդ զարմանալի բժշկական՝ ճերմակ, օսլայած աշխարհին, որտեղ ներարկիչներ ու մածկիչներ են, սայլակներ ու եռուցիչներ, ու սեւ կնիքներով կոպիտ, մաքուր սպիտակեղենի տրցակներ, ու վարդեր, ու արցունքներ, ու շոկոլադի կոնֆետներ, ու անվերջանալի միջանցքներով սրընթաց տարվող կապտած դիակ, որի ետեւից, հագիվ հասնելով, թռչում է փոքրիկ վշտացած հրեշտակը՝ թռչնային կրծքին ամուր սեղմած տառապյալ, ազատագրված, տիկնիկի պես բարուրած հոգին:

Իսկ այդ աշխարհի արքան վիրաբույժն էր, եւ անհնար էր անդող նայել նրան, երբ սենեկապետերի օգնությամբ լայնարձակ պատմուճան հագած ու կապաթելերով կանաչ թաց դրած՝ կանգնում է՝ վեհակերպ բարձրացրած իր անգին ձեռքերը, պատրաստ արքայական սրբազան առաքելության՝ ճակատագիր վճռելու, գրոհելու եւ հատելու, պատժելու եւ փրկելու ու կյանք պարգեւելու շողշողացող սրով... Ինչո՞վ արքա չի: Ու Զոյան շատ, շա՛տ էր ուզում ընկնել վիրաբույժի արյունոտ գիրկը: Բայց ինժեներն էլ լավ է:

Այդ անգամ լավ ժամանակ անցկացրին ռեստորանում, ու Վլադիմիրը, դեռ չիմանալով, որ կարող է հույսեր կապել Զոյայի հետ, առատաձեռն էր: Հետո նա սկսեց խնայել, գործնական ուսումնասիրում էր ճաշացանկը, իր համար միայն մսային ուտելիք վերցնում, ոչ թանկ, ու երկար չէր մնում ռեստորանում: Իզուր էր Զոյան թախծագորով նստում՝ անտարբեր տեսք ընդունում, մի քիչ հեգնոտ, մասամբ՝ մտախոհ. ենթադրվում էր, որ դեմքին դրոշմվում են նրա բարդ հոգեւոր կյանքի հպանցիկ երանգները՝ նրբագեղ թախծի կամ նրբին հիշողության կարգի, նստում էր՝ իբր հեռուն նայելով, արմունկները նրբորեն սեղանին հենած ու ներքեւի շրթունքը ցցելով՝ ծխի գեղեցիկ օղակներ էր արձակում դեպի պատկերազարդ կամարները: Դիցանուշի խաղ էր: Բայց Վլադիմիրը վատ էր մասնակցում. ուտում էր հաճույքով, առանց որեւէ տխրության, մի շնչով խմում, ծխում անթախծագո-

րով. արագ, ագահ տարածում էր գարշ ծխահոտը ահա դեղին մատը պտտելով՝ ճզմում է քնթուկը մոխրամանի մեջ: Հաշիվը կիպ մոտեցնում էր աչքերին, ահավոր զարմանում եւ անմիջապես սխալ գտնում: Իսկ ծկնկիթ երբեք չէր պատվիրում. իբր՝ ծկնկիթ միայն արքայադուստրերն ու գողերն են ուտում: Զոյան նեղանում էր. մի՞թե ինքը արքայադուստր չէ, թեկուզ եւ չճանաչված: Իսկ հետո ընդհանրապես դադարեցին ռեստորան գնալ, նստում էին տանը: Կամ էլ մենակ էր նստում: Ձանձրալի էր:

Կուզեր՝ ամռանը գնային Կովկաս: Այնտեղ աղմուկ է ու գինի ու գիշերային, ծղրտան ծովափ,ու լիքը հետաքրքիր տղամարդիկ, ու նայելով Զոյային՝ կասեին՝ «Օ՛», ու կշողացնեին ատամները:

Դրա փոխարեն Վլադիմիրը ինչ-որ բայդարկա քարշ տվեց տուն, բերեց երկու ընկերներին, իր պես՝ հոտավետ, վանդականախշ կովբոյկաներով, ու նրանք չորեքթաթ սողում էին հատակին՝ ծալելով ու բացելով, ինչ-որ կարկատաններ դնելով, բայդարկայի զզվելի ողորկ մարմինը մաս-մաս խոթում էին ջրով թասի մեջ ու անընդհատ գոռում՝ «Հոսո՛ւմ է: Չի՛ հոսում»: Իսկ Զոյան նստել էր թախտին՝ խանդելով, նեղվածքից դժգոհ, ու անընդհատ վեր էր քաշում ոտքերը, որ Վլադիմիրը կարողանա տեղից տեղ սողալ:

Հետո ստիպված նրա ու ընկերների հետ գնաց այդ զարհուրելի արշավին՝ հյուսիս, ինչ-որ լճեր, ինչ-որ ապշեցուցիչ կղզիներ փնտրելու, եւ սառչում ու թրջվում էր այնտեղ, իսկ Վլադիմիրից շան հոտ էր գալիս: Արագ թիավարելով, ալիքների վրա վեր-վեր թռչելով՝ սլանում էին մռայլ, հյուսիսային, արճճե մթությամբ փքված լճի վրայով: Զոյան նստել էր ուղիղ ատելի բայդարկայի հատակին՝ մարզական տաբատի մեջ այնպե՛ս խղճալի ու նիհար,առանց կրունկների խիստ կարճացած ոտքերը ծգած, ու զգում էր, որ քիթը կարմիր է, մազերը կպել են իրար, ու ջրի թշնամական ցայտերը լղոզում են թարթիչների ներկը, իսկ առջեւում դեռ տառապանքի երկու շաբաթ կար՝ խոնավացած վրանում, սոճուտով ու հապալասենու թփերով ծածկված անմարդաբնակ ժայռի գլխին, օտար, վիրավորելու չափ կայտառ մարդկանց, խաշած ոլոռի խտածոյով ճաշի շուրջ բարձրացրած նրանց աղմուկ-աղաղակի մեջ:

Ու Զոյայի հերթն էր՝ խոր սառցասառը լճում լվանալու յուղոտ ալյումինե թասերը, որ, մեկ է, կեղտոտ էին մնում: Ու գլուխն էլ կեղտոտ էր ու քոր էր գալիս գլխաշորի տակ:

Բոլոր հնժեներներն իրենց կանանց հետ էին, ոչ մեկը հատուկ չէր նայում Զոյային, չէր ասում «Օ՛», եւ նա իրեն անսեռ շալվարավոր ընկեր էր

զգում, ու զզվելի էր նրանց ծիծաղը խարույկի շուրջ, կիթառի ծնգծնգոցը, ցնծագին աղաղակները բռնված գայլածկան առթիվ: Կատարելապես դժբախտ՝ պառկում էր վրանում, ատում էր երկմորուք Վլադիմիրին եւ ուզում էր շուտ ամուսնանալ նրա հետ: Այդ ժամանակ օրինական կնոջ լիարժեք իրավունքով հնարավոր կլիներ չայլանդակվել, այսպես կոչված՝ բնության գրկում, այլ մնալով տանը՝ թեթեւ ու նուրբ խալաթով (լիքը ժանյակներ, ԳԴՀ արտադրանք) ոտքը ոտքին գցած նստել բազմոցին, ու որ «պատ» կահույք ու գունավոր հեռուստացույց լինի (թող Վլադիմիրն առնի), վարդագույն լույս՝ հարավսլավական լուսամփոփից, ու որեւէ թեթեւ բան խմել, ու որեւէ լավ բան ծխել (թող հիվանդների ազգականները նվիրեն), սպասել նավակային արշավից Վլադիմիրի վերադարձին ու դիմավորել նրան մի քիչ դժգոհ ու կասկածանքով՝ հետաքրքիր է, ի՞նչ էիր անում այնտեղ առանց ինձ, ո՞ւմ հետ էիր գնացել, ծուկ բերե՞լ ես, իսկ հետո, թող որ այդպես, ներել նրա երկշաբաթյա բացակայությունը: Իսկ այդ բացակայության ընթացքում գուցե եւ զանգի ծանոթ վիրաբույժը՝ սիրախոսություններով, ու Զոյան հեռախոսը ծույլ գրկած ու բազմանշանակ դեմքով, ծոր կտա. «Ի՞նչ ասեմ... չգիտե՛մ... Կնայե՛մ... Իրո՞ք այդպես եք մտածում...»: Կամ կզանգի ընկերուհուն. «Հա՛, բա դո՞ւ... Բա ի՞նքը... Հա՛... Բա դո՞ւ...»: Ա՛խ, քաղա՛ք: Ծքեղություն է եւ երեկոն, եւ թաց ասֆալտը, եւ նեոնային կարմիր լույսերը ջրփոսերում՝ կրունկների տակ:

Իսկ այստեղ ալիքները ծանր խփվում են ժայռին, քամին խուլ աղմկում է ծառերի սաղարթներում, խարույկն իր հավերժական պարն է պարում, ու գիշերը նայում է թիկունքից, ու ծվծվում են վրաններում ինժեներների տգեղ կանայք: Զանձրո՛ւյթ:

Վլադիմիրն ինքնամոռացման մեջ էր, շուտ էր արթնանում, քանի լիճը խաղաղ ու լուսավոր էր, սոճիներից կառչելով ու ձեռքերը խեժոտելով՝ իջնում զառիվար լանջով, ոտքերը չռած կանգնում թափանցիկ ջրի խորքը գնացող գրանիտե սալի վրա, ֆոթացնելով ու կռնչալով լվացվում ու երջանիկ աչքերով նայում էր սափորը ձեռքին կանգնած քնատ, անշպար, խոժոռ Զոյային: Հը՞: Երբեւէ այսպիսի լռություն լսած կա՞ս: Լսիր՝ ինչ խաղաղ է: Բա օ՞դը: Երանությո՛ւն»: Ա՛խ, ինչ զզվելին էր: Ամուսնանալ, արագ ամուսնանալ նրա հետ:

Աշնանը Զոյան Վլադիմիրի համար հողաթափեր առավ: Վանդակավոր, հարմարվետ, միջանցքում բերանբաց սպասում էին նրան՝ մտցրո՛ւ ոտքդ, Վո՛վա: Էստեղ դու տանն ես, էստեղ խաղաղ հանգրվանում ես: Մնա մեզ հետ: Ո՛ւր ես փախչում, հիմարի՛կ:

Իր լուսանկարը՝ շագանակագույն մազեր, աղեղնաձեւ հոնքեր, խիստ հայացք, Զոյան խցկեց Վլադիմիրի դրամապանակը. ձեռքը կտանի մշտական տոմսը կամ փող հանելու, կտեսնի իրեն, այսքա՛ն գեղեցիկ, ու կճչա՝ ա՛խ, ինչու չեմ ամուսնանում: Բա որ ուրիշը փախցնի՞: Երեկոները, սպասելիս, պատուհանի գոգին էր դնում վարդագույն կլորոտն լամպը՝ ընտանեկան փարոս խավարի մեջ: Որ կապերն ամրանան, որ սիրտը տաքանա. մթին է պալատը, գիշերը՝ խավար, բայց լույս է վառվում, վառվում քեզ համար. իր հոգու աստղն է, որ չի քնում, բանկա է փակում գուցե կամ լվացք է անում:

Փափուկ էին բարձիկները, մսագնդիկները՝ փափուկ, երկու անգամ մսաղացով անցկացրած, ամեն ինչ կանչո՛ւմ է պարզապես, ու Զոյան բզզում էր մեղվի պես. շտապիր, հոգի՛ս: Ծուտ արա, անպետքի մեկը:

Ամուսնանալ էր ուզում, քանի դեռ քսանհինգ չկա. հետո արդեն՝ վերջ, կվերջանա ջահելությունը, քեզ կհանեն սրահից, տեղդ ուրիշները կգրավեն՝ աշխույժ, գանգրահեր:

Առավոտյան սուրճ էին խմում: Վլադիմիրը «Ծարժիչանավակներ ու առագաստանավեր» ամսագիրն էր կարդում, ծամում էր, փշրանքները կպել էին երկու մորուքներին, Զոյան թշնամական լռում էր, նայում էր նրա ճակատին՝ հեռազգա հոգեհոսքեր ուղարկելով. ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր, ամուսնացի՛ր: Երեկոյան էլի ինչ-որ բան էր կարդում, իսկ Զոյան պատուհանից դուրս էր նայում ու սպասում՝ երբ են քնելու: Վլադիմիրն անհանգիստ էր կարդում, լարվում էր, քորում գլուխը, ցնցում ոտքը, քրքջում ու գոչում. «Չէ՛, հապա լսիր» ու ծիծաղից խեղդվելով՝ Զոյայի համար կարդում իրեն այդպես դուր եկածը: Զոյան թթված ժպտում կամ նայում սառն ու անթարթ, ոչ մի կերպ չէր արձագանքում, ու նա շփոթված օրորում էր գլուխը, խեղճանում ու քրթմնջում էր. «Բայց ուժե՛ղ է տղան»՝ հպարտությունից շարունակելով անվստահ ժպտալ:

Զոյան ուրախություն փչացնել գիտե՛ր:

Չէ՛, իսկապես. ապրում է իր քեֆին: Ամեն ինչ՝ մաս-մաքուր, հավաքած, սառնարանը ժամանակին հալեցվում: Նրա ատամի խոզանակն է այստեղ: Տնային ոտնամանները: Ուտացնում-խմացնում են: Մաքրման տանելիք կա՞. խնդրեմ: Աստծո՛ւ սիրուն: Ի՞նչ ես մտածում էսքանից հետո, որ չես ամուսնանում, զուտ մարդկանց տրամադրությո՞ւնն ես փչացնում: Ախր, որ հաստատ իմանանք՝ չես պատրաստվում, այդ դեպքում՝ ցտեսություն: Կուկո՛ւ: Բարեւներ մորքուրին: Բայց ո՞նց իմանաս նրա մտադրությունները: Զոյան ամեն դեպքում չէր համարձակվում ուղիղ հարցնել: Բազմադարյա

փորձը հետ էր պահում: Մեկ վրիպած կրակոց ու՝ վերջ, ամեն ինչ կորած է. որսը փախչում է, միայն փոշին ու կայծկլտացող կրունկները կտեսնես: Չէ, ծուղակը պիտի գցես:

Իսկ սրիկան լավ էլ հարմարվե՛լ է: Իրեն զգում է ինչպես տանը: Լրիվ ձեռնասուն է դառել: Կոմունալ բնակարանից բերեց վերնաշապիկները, պիջակները: Հիմա նրա գուլպաները թափված են ամենուր: Տուն մտնելուն պես՝ ոտքերը հողափերի մեջ: Ձեռքերն է շփում. «Իսկ ի՞նչ ունենք էսօր ընթրիքին»: «Ունենք»՝ նկատի ունեցեք: Այդպես էլ ասում էր:

- Մի՛ս,- ատամների արանքից նետում էր Զոյան:

- Մի՞ս: Հրա-շա-լի՛ է: Հրա-շա-լի՛: Իսկ ինչից ենք էդպես դժգոհ:

Կամ երազանքի գիրկը կընկնի.

- Կուզե՞ս մեքենա առնենք: Սան կգանք՝ ուր սրտներս ուզի:

Ծաղրուծանակ է պարզապես: Կարծես չէր էլ պատրաստվում հեռանալ Զոյայից: Բայց եթե չես պատրաստվում, ամուսնացի՛ր: Զոյան առանց երաշխիքի սիրել չէր ուզում: Զոյան ծուղակներ էր լարում. փոս էր փորում, ծածկում ճյուղերով, քաշո՛ւմ էր, քաշո՛ւմ էր... Մեկ էլ տեսար, արդեն հագնված ու քսված, հրաժարվում էր հյուր գնալ, պառկում էր բազմոցին ու վշտոտ նայում առաստաղին: Ի՞նչ է պատահել: Չի՛ կարող... Ինչո՞ւ: Որովհետեւ... Չէ, իսկապես, ի՞նչ է եղել: Հիվա՞նդ ես: Ի՞նչ է պատահել: Կամ էլ՝ չի կարող, չի գնա, ամաչում է ծիծաղատեղ դառնա, բոլորը մատով ցույց կտան՝ իբր որպես ի՞նչ ես վեր կացել-եկել: Բոլորը կանանց հետ են, չէ՞... Հիմարությո՛ւն, ասում էր Վլադիմիրը, այնտեղ կանայք լավագույն դեպքում մեկ երրորդն են, ու դրանք էլ՝ ուրիշի: Եվ մինչեւ հիմա Զոյան գնում էր ու՝ ոչինչ: Մինչեւ հիմա գնում էր, իսկ հիմա չի կարող, նուրբ հոգի ունի, վարդի պես, թոշնում է վատ վերաբերմունքից:

- Հետաքրքիր է, էդ ե՞րբ եմ քեզ վատ վերաբերվել:

Եվ այլն, եւ այլն, եւ այլն, ու ողջը՝ հեռո՛ւ, հեռո՛ւ քողարկված փոսից:

Վլադիմիրը Զոյային տարավ ինչ-որ նկարչի մոտ, ասում էին՝ շատ հետաքրքիր: Զոյան պատկերացրեց բոմոնդը, արվեստաբանների խմբերը. կանայք՝ փնթփնթան պառավներ, բոլորը՝ փիրուզագույն հագած, իսկ վզերը՝ հնդուհավի վզեր. տղամարդիկ՝ նրբաճաշակ, կրծքագրպաններում՝ գունավոր թաշկինակներ, հաճելի բուրում են: Ինչ-որ քթակնոցով ազնվատես ծերուկ է խցկվում: Նկարիչը՝ թավշյա բլուզով, գունատ, ձեռքին ներկապնակ: Այստեղ մտնում է Զոյան: Բոլորը՝ «Օ՜»: Նկարիչը սփրթնում է: «Դուք պետք է բնորդեք ինձ»: Ազնվազարմ ծերուկը նայում է թախծոտ ազնվականական հայացքով. նրան ինչ-որ տեղ ճամփեցին,Զոյայի բուր-

մունքն արդեն նրա համար չէ: Զոյայի դիմանկարը,- նյու,- տանում են Մոսկվա: Ցուցահանդես՝ Սանեժում: Միլիցիան զսպում է ամբոխին: Վերնիսաժ՝ արտասահմանում: Դիմանկարը պաշտպանված է զրահապատ ապակիով: Երկուական են ներս թողում: Ոռնում են շչակները: Բոլորը սեղմվեն ձախ կողմ: Մտնում է պրեզիդենտը: Նա ցնցված է: Ո՞ւր է բնօրինակը: Ո՞վ է այս աղջիկը...

- Էստեղ ոտդ չկոտրես,- ասաց Վլադիմիրը: Իջնում էին նկուղ: Տաք խոզովակներից կախկիվել էր խծուծը: Արվեստանոցում տաք է: Նկարիչը,- ճղճղված քրջերով ինչ-որ ճլեզ,- ծանր քարշ տվեց-բերեց նկարները: Տարօրինակ է նկարված. օրինակ, մեծ ձու, իսկ ձվից դուրս են գալիս բազմաթիվ փոքրիկ մարդուկներ, ամպերի մեջ թեւածում է Մաո Ցզե Դունը՝ կիրզայե սապոգներով ու նախշանկար խալաթով, ձեռքին թեյաման է: Այս ամենը կոչվում է «Կոնկորդանս»: Կամ այս մեկը. խնձոր, իսկ խնձորից դուրս է սողում ակնոցավոր ու պորտֆելակիր որդը: Կամ. վայրի ժայռոտ տեղանք, ձիածետեր, ձիածետերից դուրս է գալիս հողաթափերով մամոնտը: Պստիկ մեկը նշան է բռնել նետ-աղեղով: Իսկ կողքից փոքրիկ քարանձավ է երեւում. ներսում էլեկտրալամպ է՝ լարից կախ. հեռուստացույցը միացած է, վառվում է գազօջախի կրակը: Նույնիսկ թավան է մանրամասն նկարած, իսկ սեղանիկին՝ ձիածետերի փունջ: Կոչվում է «Մամոնտի որս»: Հետաքրքիր է: «Համարձակ է, չէ՞,- ասում էր Վլադիմիրը,- համարձակ է, համարձա՛կ... Բա գաղափա՛րը»: «Գաղափա՞րը,- ուրախ զարմանում էր նկարիչը:- Նեղացնո՛ւմ եք: Ես պերեդվի՞ժնիկ եմ, ի՞նչ է: Գաղափա՛ր: Գաղափարներից, ախպե՛րս, պիտի փախչես գլխապատառ ու հետ չնայես»: «Չէ, բայց համենայնդեպս...»: Սկսեցին վիճել, ձեռքերն էին թափահարում, նկարիչը երերուն կավե փոքրիկ գավաթներ էր դնում ցածրիկ սեղանին, թեւքով սրբում անմաքուր տարածքը: Անհամ մի բան խմեցին, վրան երեկ չէ առաջին օրվա քարապինդ պատառներ կերան: Տանտիրոջ պայծառ, ասես պրոֆեսիոնալի չտեսնող աչքերը սահում էին Զոյայի մակերեւույթներով: Զոյայի հոգին հայացքը չէր բռնում, ասես չկար: Վլադիմիրը կարմրատակել էր, մորուքները զզզզվել էին, երկուսն էլ գոռում էին, «աբսուրդ» ու նման բառեր բղավում. մեկը Ֆոտոյին էր հղում անում, մյուսը՝ Մոիսեենկոյին. Զոյային մոռացել էին: Գլուխը ցավում էր, ականջները թնդում՝ դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ: Պատուհանից այն կողմ, խավարում կուտակվում էր անձրեւը, փոշոտ լամպը առաստաղի տակ լողում էր շերտավոր կապտավուն ծխի մեջ, կոպտատաշ սպիտակ դարակներին ջարդրտված, սարդոստայնով պատած սափորներ էին խմբվել՝ դրիմյան տատասկներով: Զո-

յան չկար այդտեղ ու ոչ մի տեղ չկար: Մնացած աշխարհն էլ չկար: Միայն ծուխ ու աղմուկ. դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ:

Տուն գնալիս Վլադիմիրը գրկեց Զոյայի ուսերը:

- Շատ հետաքրքիր մարդ է, չնայած ցնդած է: Լսեցի՞ր դատողությունները: Հրաշք է, չէ՞:

Զոյան չարացած լռում էր: Անձրեւ էր գալիս:

- Դու կեցցե՛ս,- գոռում էր Վլադիմիրը:- Իսկ հիմա՝ տուն, ու թունդ թեյ, հա՞:

Սրիկա Վլադիմիր: Անազնիվ, ստոր հնարքներ: Ախր որսի կանոններ կան. մամոնտը որոշ տարածություն հեռանում է, ես նշան եմ բռնում, արձակում նետը, վըզ-զ-զ-զ-զ-զ,- պատրաստ է: Ու մարմինը քարշ եմ տալիս տուն. ահա եւ միս՝ երկար ձմեռվա համար: Իսկ սա ինքն է գալիս, մոտենում, խոտ է որոճում, կողը քորում՝ պատին քսելով, ննջում արեւի տակ, ձեռնասուն ձեւանում: Թույլ է տալիս իրեն կթեն: Իսկ փարախը չորս կողմից բաց: Աստվա՛ծ իմ, փարախ չկա էլ: Ախր, կփախնի, կփախնի՛, պարոնա՛յք: Ցանկապատ է պետք, պարաններ, ճոպաններ:

Դո՛ւմ, դո՛ւմ, դո՛ւմ: Արեւը իջավ: Արեւը ելավ: Պատուհանին նստեց աղավնին՝ օղակած տոտիկով, խիստ նայեց Զոյայի աչքերին: Ահա՛, ահա, խնդրե՛մ: Նույնիսկ աղավնուն, նույնիսկ քոսոտ թռչունին օղակում են: Սպիտակ խալաթներով գիտնականները, ազնիվ, ուսյալ դեմքերով, գիտությունների թեկնածուներ, բռնում են աղավնյակին,- թույլ տվեք անհանգստացնել, հոգյա՛կս,-եւ աղավնին հասկանում է, աղավնին չի առարկում, առանց որեւէ կո-կո-կո-ի նրանց է պարզում իր կարմիր կաշվե ոտքը,- խնդրեմ, ընկերնե՛ր: Ձեր գործն արդար է: Ը՛խկ: Եվ արդեն հենց այնպես չի թռչում, ոռքի տակ չի ընկնում անտաշ ճիչերով, փախս չի տալիս կախ ծնոտներով բեռնատարներից, ո՛չ, գիտական պտտվում է քիվի ու պատշգամբների շուրջը, գրագետ կտցում նախատեսված հատիկն ու հստակ հիշում, որ իր ծերտի գորշ բծերն անգամ այսուհետ պայծառացած են գիտության անկաշառ շողերով. Ակադեմիան գիտի, տեղյակ է, ու հարկ եղած դեպքում պատասխան կպահանջի:

Զոյան այլեւս չէր խոսում Վլադիմիրի հետ, նստում ու նայում էր պատուհանին՝ ժամերով մտածելով գիտական աղավնու մասին: Որսալով հնժենների տխուր հայացքը՝ լարվեց. հը՛: Ո՞ւր են նվիրական բառերը: Ասա՛: Հանձնվո՞ւմ ես:

- Զո՛յինկա, ի՞նչ ես անում: Ես քո հանդեպ սիրով, իսկ դու ինձ...,- ծամծմում էր երկմորուքը:

Զոյայի դիմագծերը քարացել ու սրվել էին, եւ վաղուց արդեն ոչ ոք չէր ասում «Օ՛» նրան տեսնելիս, ու պետք էլ չէր. նրա հոգում վառվող անմար վշտի կապույտ կրակը ծածկել էր աշխարհի բոլոր կրակները: Ոչինչ չէր ուզում անել, ու Վլադիմիրն ինքն էր փոշին առնում, ինքն էր թափ տալիս կարպետը, ինքն էր ձմեռվա համար բադրջանի խավիար փակում:

Դո՛ւմ, դո՛ւմ՝ տրոփում էր Զոյայի գլխում, եւ աղավնին կրակե նշանի մատանիով հառնում էր խավարից՝ հանդիմանությամբ խոժոռելով հայացքը: Զոյան ուղիղ ու ձիգ պառկում էր թախտին, գլուխը ծածկում պլեդով ու ձեռքերը ձգում կողերին: Անսահման վիշտ. այդպես կանվանեին նրա քանդակը դարակին դրած ալբոմի միջնադարյան վարպետները: Անսահման վիշտ. այ այդպես: Օ, միայն նրանք ճշմարիտ կքանդակեին նրա հոգին, նրա ցավը, նրա պլեդի բոլոր ծալքերը, կքանդակեին ու կդնեին գլխապտույտ հարուցող ժանեկավոր տաճարի գմբեթին, ամենագագաթին ու խոշոր պլանով լուսանկար կանեին. «Զոյա: Դետալ: Վաղ գոթիկա»: Կապույտ կրակը տաքացնում էր բրդե քարանձավը, շնչելու օդ չկար: Ինժեները ոտքերի ծայրերին դուրս էր գալիս սենյակից: «Ո՛ւ-ո՛ւ-ո՛ւր» կռունկաձայն կանչում էր Զոյան, եւ ամուսնացած աղավնին քմծիծաղում էր: «Ես այնպես... ձեռներս լվանամ... դու հանգստացիր»,- վախեցած շշնջում էր չարագործը:

«Սկզբում իբր ձեռքերը լվանալու, հետո՝ իբր խոհանոց, իսկ էնտեղ մուտքի դուռը կողքին է,- ականջին հուշում էր աղավնին:- Ու մեկ էլ՝ դուրս եկավ...»:

Իսկապե՞ս որ: Նա օղակը գցեց երկմորուքանու վզին, պառկեց թախտին, քաշեց ու ականջ դրեց: Այուս ծայրին՝ շրշյուն, հառաչանք, թփթփոց: Երբեք այդ մարդը նրան առանձնապես դուր չէր եկել: Չէ՛, ի՞նչ դուր գալ. զզվում էր նրանից: Փոքրիկ, հզոր, ծանրաքաշ, արագ, մազմզոտ, անզգա անասուն:

Դեռ որոշ ժամանակ քաշկռտվում էր, ծմրկտում, շարժվում, մինչեւ վերջապես հանդարտվեց՝ մեծ սառցաշրջանի երանելի, թանձր լռությամբ:

Վիկտոր ՊԵԼԵՎԻՆ

ՎԵՐՎՈԼԿԻ ԽՆԴԻՐԸ ՄԻՋԻՆ ԳՈՏՈՒՄ

Մի պահ Սաշային թվաց՝ այդ ճմռթված հաստատ որ «ԶԻԼ»-ը կկանգնի. այնպիսի հնամաշ, դռդռացող, ավտոգերեզմանոցի համար հասունացած մեքենա էր, որ նույն օրենքով, որով նախկինում կոպիտ ու անբարեհամբույր ծերունիների ու պառավների մեջ մահվանից առաջ հոգատարությունն ու պատրաստակամությունն են արթնանում, նույն այդ, բայց ավտոմոբիլների աշխարհին վերաբերող օրենքով, պիտի կանգ առներ: Բայց՝ ոչ մի նման բան. ծերունական հարբած լկտիությամբ զնգացնելով բենզաբաքի կողին կախած դույլը՝ «ԶԻԼ»-ը թխկթխկալով անցավ կողքով, լարված մագլցեց բլուրը, գագաթին՝ կապույտ ծխաշիթով ուղեկցվող անպարկեշտ հաղթական ձայն արձակեց եւ արդեն անաղմուկ անհետացավ ասֆալտե ժապավենից այն կողմ:

Սաշան դուրս եկավ ճանապարհից, խոտերին գցեց փոքրիկ ուսապարկն ու նստեց վրան. շարժումն ավարտելով՝ իր տակ ինչ-որ պինդ բան զգաց, հիշեց ուսապարկի վերին կափույրի տակ դրած հալած պանրիկներն ու վրեժխնդիր հաճույք զգաց, որ հատուկ է անախորժության մեջ ընկած մարդուն, երբ իմանում է, որ կողքին ինչ-որ մեկը կամ ինչ-որ բան նույնպես ծանր հանգամանքներում է հայտնվել: Սաշան հենց պատրաստվում էր վերլուծել, թե որքան ծանր են այդ օրվա հանգամանքները:

Հետագա գործողությունների միայն երկու եղանակ կար. կամ առաջվա պես սպասել համընթաց մեքենայի, կամ վերադառնալ գյուղ, որ երեք կիլոմետրի վրա թիկունքում էր մնացել: Համընթացի հարցը համարյա պարզ էր. ըստ երեւույթին, երկրում այնպիսի շրջաններ կամ առանձին ճանապարհներ կան, որտեղ անցնող բացարձակապես բոլոր վարորդները սրիկաների ինչ-որ գաղտնի եղբայրության անդամներ են, եւ այդ պատճառով ավտոստոպը գործնականում անհնար է, ընդհակառակը՝ պետք է հետեւել, որ կողնակով քայլելիս վրադ ցեխաջուր չցփնեն ջրափոսից: Կոնկովից մինչեւ երկաթուղուն կից մոտակա օազիս ճանապարհը, ուղիղ գծով՝ եւս տասնհինգ կիլոմետր, հենց այդպիսի կախարդված երթուղիներից էր: Վերջին քառասուն րոպեում կողքով անցած հինգ մեքենաներից ոչ մեկը կանգ չառավ, ու եթե շրթներկից մանուշակագունած շրթունքներով եւ

«Istillloveyou» կարգի սանրվածքով մի ծերացող կին, ձեռքը կարմիր «Նիվայի» պատուհանից պարզելով, նրան թզանշան ցույց չտար, Սաշային կարող էր թվալ, որ անտեսանելի է դարձել: Դրանից հետո դեռ կարող էր որեւէ բեռնատարի մոտավոր վարորդի հույս ունենալ, որն ամբողջ ճանապարհին փոշոտ ապակու միջով կնայի ճանապարհին, հետո գլխի հատու շարժումով կհրաժարվի Սաշայի հնգանոցից (ու հանկարծ աչքին կընկնի ղեկի վերեւը կախած դեսանտային համազգեստով մի քանի տղաների լուսանկարը՝ հեռավոր լեռների ֆոնին), բայց երբ վերջին կես ժամվա մեջ միակ «ՋԻԼ»-ն անցավ կողքով, այդ հույսն էլ մեռավ: Ավտոստոպը բացառված էր:

Սաշան նայեց ժամացույցին. ինն անց տասներկու րոպե: Ծուտով կմթնի, մտածեց նա, տես, է՛, ի՞նչ անեմ. նայեց շուրջը. երկու կողմից մի հարյուր մետր կտրատված տարածք էր՝ աննշմար բլրակներ, հազվագյուտ թփեր եւ չափազանց բարձր ու հյութեղ խոտ, որ ստիպում էր մտածել՝ տակը ճահիճ է, հետո սկսվում էր նոսր անտառը՝ մի տեսակ անառողջ, հարբեցողի ժառանգների պես: Ընդհանրապես, շուրջը տարօրինակ բուսականություն էր. փոքրիշատե խոշոր ծաղիկներն ու խոտերը դժվար ու ջանքով էին աճում եւ չնայած ի վերջո հասնում էին նորմալ չափերի, ինչպես, օրինակ, կեչիների շղթան, որով սկսվում էր անտառը, այնպիսի տպավորություն էին թողնում, ասես այդ ամենն աճել է ինչ-որ մեկի սպառնալի բղավոցից վախենալով, ու եթե չլինեին այդ բղավոցները, այդպես էլ գետնամած քարաքոս կմնային: Մի տեսակ տհաճ վայրեր էին, ծանր ու անմարդաբնակ, ասես պատրաստված երկրի երեսից ջնջվելու, չնայած,- մտածեց Սաշան,- չի կարելի այդպես ասել, որովհետեւ եթե երկիրը երես ունի էլ, ապա ակնհայտորեն՝ ուրիշ տեղ: Իզուր չէ, որ այսօր հանդիպած երեք գյուղերից միայն մեկն էր փոքրիշատե ճշմարտանման. հենց վերջինը՝ Կոնկովոն, իսկ մնացածը լքված էին, ու միայն մի քանի տնակներում դեռ ոմանք ավարտում էին իրենց կյանքը. լքված խրճիթներն ավելի շատ ազգագրական թանգարանի ցուցադրություն էին հիշեցնում, քան նախկին մարդկային կացարաններ:

Չնայած, Կոնկովոն, որն ինչ-որ կապ ուներ ճամփեզրի «Միչուրինյան» կոլխոզ» մակագրության ու խճուղու եզրի գիպսե ժամապահի հետ, նորմալ բնակավայր էր թվում միայն հարեւան, արդեն անանուն գյուղերի խուլ ամայության համեմատությամբ: Ու թեկուզ Կոնկովոյում խանութ էր աշխատում, քամու տակ ծփծփում էր գուաշով գրած ֆրանսիական ֆիլմի վերնագրով ազդագիրը ու տների ետեւում ինչ-որ տեղ մռթմռթում էր տրակտորը, մեկ է, վատ էր զգում: Փողոցներում մարդ չկար. միայն մի սեւ-

աշոր տատիկ անցավ՝ մանրիկ խաչակնքելով Սաշայի՝ գույնզգույն ֆրեյդիստական խորհրդանշաններով պատած հավայական վերնաշապկին, մեկ էլ՝ հեծանվով մի ակնոցավոր տղեկ՝ ցանցատոպրակը ղեկից կախ. հեծանիվը մեծ էր, թամբին նստած՝ ոտքերը չէին հասնի, կանգնած էր քշում, ասես վազում էր՝ ժանգոտ շրջանակին հենված: Մնացած բնակիչները, եթե կային էլ, տներից դուրս չէին գալիս:

Ուղեւորությունը լրիվ այլ կերպ էր պատկերացրել: Ահա իջնում է հարթահատակ փոքրիկ գետանավից, հասնում է գյուղ, որտեղ հողաթարքներին,- Սաշան չգիտեր՝ հողաթարքն ինչ է, ու գերանակապ պատի տակի հարմարավետ փայտե նստարան էր պատկերացնում,- նստած են խաղաղ խելագարվող պառավները, շուրջը արեւածաղիկներ են, ու դրանց դեղին ափսեների տակ, տախտակաշեն գորշագույն սեղանների շուրջը հանդարտ շախմատ են խաղում կոկիկ սափրված ծերունիները: Մի խոսքով, ինչ-որ անվերջանալի Ցվերյան զբոսայգի էր պատկերացնում: Հա՛, կովի բառաչն էլ...

Հետո՝ դուրս է գալիս ցանկապատի դռնակից, եւ աչքի առաջ բացվում է արեւից տաքացած սոճուտը, գետը՝ լողացող նավակով, կամ ճանապարհով հատվող դաշտը, եւ ուր էլ գնաս, հրաշալի է. կարելի է խարույկ վառել, կարելի է նույնիսկ հիշել մանկությունն ու ծառ մագլցել: Երեկոյան՝ համընթաց մեքենաներով հասնել էլեկտրագնացքին:

Բայց ի՞նչ դուրս եկավ: Նախ՝ լքված գյուղերի վախեցնող ամայությունը, հետո՝ բնակելիի նույնքան վախեցնող բնակեցվածությունը: Արդյունքում՝ այդ ամենին, ինչին անհնար էր հավատալ, մի բան էլ գումարվեց՝ լուսանկարը հաստափոր քրքրված գրքի գունավոր լուսանկարը՝ մակագրությամբ, ուր հիշատակվում էր «հինավուրց ռուսական Կոնկովո գյուղը, ներկայումս՝ միլիոնատեր-կոլխոզի գլխավոր դաստակերտը»: Սաշան գտավ այն տեղը, որտեղից արվել էր դուր եկած լուսանկարը ու զարմացավ՝ լուսանկարում ու կյանքում որքա՜ն տարբեր կարող է լինել նույն տեսարանը:

Ստովի իրեն խոստանալով, որ այլեւս երբեք չի տրվի անիմաստ ուղեւորությունների պոռթկմանը, Սաշան որոշեց գոնե այդ ֆիլմը նայել ակումբում. Մոսկվայում այն արդեն չէր ցուցադրվում: Անտեսանելի տոմսավաճառից տոմս առնելով,- ստիպված էր խոսել պատուհանիկի պեպենոտ թմբլիկ ձեռքի հետ, որը կտրեց տոմսն ու հաշվեց մանրը,- նա հայտնվեց կիսադատարկ դահլիճում, ձանձրացավ այնտեղ մեկուկես ժամ, երբեմն շրջվելով փայտակոճի պես ուղղամեջք թոշակառուի կողմը, որը տեղ-տեղ

սուլում էր (նրա չափորոշիչները բոլորովին պարզ չէին, փոխարենը՝ սուլոցի մեջ ավազակային ու միեւնույն ժամանակ տխուր մի բան կար, հեռացող Ռուսիայից ինչ-որ բան), հետո, երբ ֆիլմը վերջացավ, նայեց ակումբից հեռացող սուլողի թիկունքին, թիթեղյա կոնի տակ կախված լամպին, տները պատող միանման կարճլիկ ցանկապատներին ու դուրս եկավ Կոնկովոյից՝ ծուռ նայելով ձեռքը պարզած ու ոտքը բարձրացրած կեպիավոր գիպսե մարդուն, որ դատապարտված էր հավերժ քայլել խճուղու եզրին սպասող կեցությամբ եղբոր կողմը:

Հիմա արդեն հաղթահարված էր երեք կիլոմետր, մի ճամփա էլ էր հասցրել միանա ճանապարհին, եւ այդ ողջ ընթացքում անցնող մեքենաներից ոչ մեկը նույնիսկ չէր արգելակել: Եվ ավելի ու ավելի քիչ էին պատահում. վերջին բեռնատարին, որն իր կապտավուն ժայթքումով վերջնականապես ցրեց պատրանքները, Սաշան այնքան երկար սպասեց, որ հասցրեց մոռանալ, թե ինչի է սպասում:

- Հետ դառնամ,- մարգակոշիկի վրայով սողացող փոքրիկ սարդին թե մրջյունին դիմելով՝ բարձրաձայն ասաց նա,- թե չէ էստեղ ենք գիշերելու:

Սարդիկը խելացի միջատ դուրս եկավ եւ արագ սողաց խոտերի մեջ: Սաշան վեր կացավ, մեջքին գցեց ուսապարկը ու հետ դարձավ՝ մտմտալով, թե որտեղ ու ինչպես գիշերվա տեղ ճարի: Որեւէ տատիկի դուռ թակել չէր ուզում, ու նաեւ անիմաստ էր, որովհետեւ գիշերակացի տեղ տվող տատիկները սովորաբար այնպիսի տեղերում են ապրում, ուր սոխակ-ավազակներն ու կաշչեյներն են, իսկ այստեղ «Միչուրինի» կոլխոզն էր, եթե խոր մտածես՝ ոչ պակաս կախարդական հասկացություն, բայց՝ յուրովի կախարդական, առանց օտար տան մեջ գիշերելու որեւէ հույսի: Միակ հարմար տարբերակը, որ կարողացավ մտածել Սաշան, հետեւյալն էր. ակումբի վերջին սեանսի տոմս է առնում ու սեանսից հետո, դահլիճի ծանր կանաչ վարագույրի հետեւը թաքնվելով, սպասում է: Կարելի էր միանգամայն տանելի գիշերել դահլիճի աթոռներին. դրանք բազկակալներ չունեին: Հաջողացնելու համար պետք էր վեր կենալ, քանի լույսերը չէին վառել, ու թաքնվել վարագույրի հետեւը. այդ դեպքում հանդիսատեսներին դեպի ելքը ուղեկցող, ինքնաշեն համազգեստով կինը չի նկատի: Ճիշտ է, ստիպված մի անգամ էլ պիտի նայի այդ ձանձրալի ֆիլմը, բայց ինչ անես:

Այդ ամենի մասին մտածելով՝ Սաշան հասավ ճամփաբաժանին: Երբ քսան րոպե առաջ անցնում էր այդտեղով, թվաց՝ ճանապարհին, որով քայլում էր, մեկն էլ է կպել, ավելի փոքր,- ու հիմա ճամփաբաժանին էր, ու չէր

հասկանում, թե ճանապարհներից որով էր հասել այդտեղ. երկուսն էլ կատարելապես միանման էին թվում: Փորձեց հիշել՝ որ կողմից հայտնվեց երկրորդ ճանապարհը, ու մի քանի վայրկյան փակեց աչքերը: Կարծես թե՝ աջից. այնտեղ մի մեծ ծառ էլ կար: Ահա ծառը: Ուրեմն պետք է գնալ աջ կողմի ճանապարհով: Ծառի մոտ մի գորշ սյուն էր կանգնած: Ո՞ւր է: Ահա սյունը, բայց, չգիտես ինչու, ձախից է: Իսկ կողքին՝ փոքրիկ ծառ: Անհասկանալի է:

Սաշան նայեց սյանը, որ ժամանակին հաղորդալարեր էր պահել, իսկ հիմա նման էր երկնքին սպառնացող հսկա փոցխի, մի քիչ էլ միտք արեց ու շրջվեց ձախ: Քսան քայլ անցնելով՝ կանգ առավ ու հետ նայեց. հանկարծ սյան լայնադիր գերանից, որ հստակ երեւում էր մայրամուտի կարմիր շերտերի ֆոնին, մի թռչուն թռավ, որին մինչ այդ բազմամյա կեղտով ծածկված մեկուսիչի տեղ էր դրել: Սաշան շարունակեց ճանապարհը, որ ժամանակին հասնի Կոնկովո, պետք էր շտապել եւ անտառով էր անցնելու:

Զարմանալի է, մտածում էր Սաշան, ո՞նց չեմ տեսել: Կոնկովոյից եկող ճանապարհին նույնիսկ այդ լայն կածանը չէր նկատել, որից այն կողմ երեւում էր բացատը: Երբ մարդը տարված է իր մտքերով, շուրջը աշխարհը չքանում է: Գուցե հիմա էլ չնկատեր, եթե ձայն չտային:

- Հե՛յ,- գոռաց հարբած ձայնը,- ո՞վ ես:

Ու էլի մի քանի ձայն խրխնջացին: Անտառի առաջին ծառերի արանքում, հենց բացատի կողքին, մարդիկ ու շշեր երեւացին. Սաշան իրեն թույլ չտվեց շրջվել ու տեղիս ջահելությանն աչքի ծայրով տեսավ: Արագացրեց քայլը՝ համոզված, որ ետեւից չեն հասնի, բայց, համենայնդեպս, տհաճորեն լարված էր:

- Ո՛ւ, գելի վաստակ,- գոռացին ետեւից:

«Գուցե նույն ճամփո՞վ չեմ գնում»,- մտածեց Սաշան, երբ ճանապարհը զիգզագ արեց, որը չէր հիշում: Չէ՛, կարծես նույնն է. ահա ասֆալտի երկար ճաքը, որ լատինական դուբլ-վե է հիշեցնում, էսպիսի մի բան արդեն եղել է:

Կամաց մթնում էր, բայց դեռ ահագին քայլելու տեղ կար: Իրեն ինչ-որ բանով զբաղեցնելու համար Սաշան սկսեց սեանսի սկզբին ակումբ թափանցելու միջոցներ մտմտալ՝ սկսելով նստարանին թողած կեպիի ետեւից մտահոգ վերադարձից («գիտե՞ք, էսպես, կարմիր գույնի, երկար հովարով», ի պատիվ սիրած գրքի) ու վերջացրած տանիքի լայն խողովակի միջով ներքեւ իջնելով, եթե, իհարկե, այդպիսին գոյություն ունի:

Որ այն ճանապարհը չի ընտրել, պարզվեց կես ժամ քայլելուց հետո,

երբ շուրջն ամեն ինչ արդեն կապույտ էր ու երկնքում բացվել էին առաջին աստղերը: Պարզ դարձավ, երբ ճամփեզրին հայտնվեց երեք հաստ հաղորդալար պահող պողպատե բարձր կայմը ու կամացուկ էլեկտրական ճթթոց լսվեց. Կոնկովոյից եկող ճանապարհին այդպիսի կայմ հաստատ չէր եղել: Արդեն ամեն ինչ հասկացած՝ Սաշան իներցիայով հասավ կայմին ու սեւեռվեց թիթեղյա ցուցանակին, որի վրա խնամքով գանգ էին նկարել ու սպառնալից մակագրություն: Հետո նայեց շուրջը ու ապշեց. մի՞թե հենց նոր անցել է այդ սեւ ու սարսափելի անտառի միջով: Անհրաժեշտ ուղղությունը գտնելու համար վերադառնալը կնշանակեր նորից հանդիպել ճամփեզրին նստած տղաներին. իհարկե, հետաքրքիր էր իմանալ, թե ինչ վիճակում են պորտվեյնի ու մթնշաղի տեւական ազդեցությունից, բայց ոչ այնքան, որ դրա համար վտանգեր կյանքը: Առաջ գնալն էլ կնշանակեր գնալ հայտնի չէ՝ ուր, բայց համենայնդեպս՝ եթե ճանապարհն անտառով է անցնում, ուրեմն պիտի որեւէ տեղ հասցնի: Սաշան մտքի մեջ ընկավ:

Հաղորդալարերի գվվոցը գլխավերեւում հիշեցնում էր, որ ինչ-որ տեղ աշխարհում ապրում են նորմալ մարդիկ, ցերեկը էլէկտրականություն են արտադրում, իսկ երեկոյան նրա միջոցով հեռուստացույց նայում: Եթե գիշերը խուլ անտառում պիտի մնամ, մտածում էր Սաշան, ապա լավ է՝ էլեկտրակայմի տակ. շքամուտքում գիշերելու պես կլինի, իսկ դա փորձված ու միանգամայն անվտանգ բան է:

Հանկարծ դարավոր թախիծով լի ոռնոց լսվեց. սկզբում՝ համարյա անլսելի. հետո հասավ աներեւակայելի չափերի, ու միայն այդ ժամանակ Սաշան հասկացավ, որ ինքնաթիռ է: Թեթեւացած բարձրացրեց գլուխն ու շուտով վերեւում եռանկյունի կազմած գույնզգույն կետեր հայտնվեցին. քանի դեռ ինքնաթիռը երեւում էր, մթին անտառային ճանապարհին կանգնելը նույնիսկ հաճելի էր, իսկ երբ անհետացավ, Սաշան արդեն գիտեր, որ առաջ է գնալու: (Հանկարծ հիշեց, թե ինչպես շատ վաղուց,- գուցե տաս-տասնհինգ տարի առաջ,- ճիշտ այդպես գլուխը բարձրացնում ու նայում էր ինքնաթիռի գիշերային լույսերին, իսկ ավելի մեծանալով՝ երբեմն իրեն պարաշյուտիստ էր պատկերացնում, որ հենց նոր թռել է ամառային գիշերվա միջով թռչող ինքնաթիռից, եւ այդ միտքը շատ էր օգնում): Քայլեց առաջ՝ նայելով ուղիղ դիմացը՝ ջարդրտված ասֆալտին, որ քիչ-քիչ շրջապատի ամենալուսավոր մասն էր դառնում:

Ճանապարհի վրա թույլ, անհաստատուն լույս էր ընկնում, ու կարելի էր քայլել՝ սայթաքելուց չվախենալով: Չգիտես ինչու,- երեւի քաղաքային սովորությամբ,- Սաշան համոզված էր, որ ճանապարհը լապտերներ են՝ լու-

սավորում են: Երբ փորձեց այդպիսի լապտեր գտնել, ուշքի եկավ՝ իհարկե, շուրջը ոչ մի լապտեր էլ չկար. լուսնի լույսն էր, ու Սաշան գլուխը բարձրացնելով՝ տեսավ նրա հստակ սպիտակ մանգաղը: Մի քիչ երկինք նայելուց հետո զարմանքով նկատեց, որ աստղերը գույնզգույն են. առաջ դա երբեք չէր նկատել կամ պարզապես վաղուց մոռացել էր դրա մասին:

Վերջապես լրիվ ու վերջնական մթնեց, այսինքն՝ պարզ դարձավ, որ ավելի մութ չի լինի: Պողպատե կայմը մնաց հեռվում, ու հիմա մարդկանց գոյության մասին վկայում էր միայն ասֆալտը: Երբ ցրտեց, Սաշան ուսապարկից հանեց բաճկոնը, հագավ ու ձգեց բոլոր շղթայիկները. այդպես իրեն ավելի պատրաստ էր զգում գիշերային բոլոր անակնկալներին: Հետո երկու ճմռթված «Դրուժբա» հալած պանրիկ կերավ. այդ բառով նրբաթիթեղը, որ թույլ փայլում էր լուսնալույսի տակ, չգիտես ինչու հիշեցրեց վիմպելները, որ հայրենիքի մարդկությունը անընդհատ ուղարկում է տիեզերք:

Մի քանի անգամ Սաշայի ականջին հասավ ավտոմոբիլային շարժիչների հեռավոր գվվոցը: Մոտ մի ժամ էր անցել կայմից հեռանալուց: Մեքենաները, որոնց աղմուկը լսում էր, հեռվով էին անցնում, երեւի ուրիշ ճանապարհներով: Ճանապարհը, որով քայլում էր, առայժմ ոչնչով չէր ուրախացնում. ճիշտ է, մի անգամ դուրս եկավ անտառից, մի հինգ մետր անցավ դաշտով, բայց անմիջապես էլ սուզվեց մի ուրիշ անտառի մեջ, որի ծառերն ավելի ծեր ու բարձր էին, ու նեղացավ. հիմա ավելի մութ էր, որովհետեւ երկնքի երիզը գլխավերեւում նույնպես սեղմվել էր: Սաշային սկսում էր թվալ, որ թաղվում է ավելի ու ավելի խոր ինչ-որ վիհի մեջ, եւ ճանապարհը, որով գնում է, իրեն ոչ մի տեղ չի հանի, ընդհակառակը, կհասցնի խուլ թավուտն ու կավարտվի չարի թագավորությունում, ձեռնանման ճյուղերն օրորող հսկա կենդանի կաղնիների արանքում, ինչպես մանկական սարսափ-ֆիլմերում, որտեղ ի վերջո այնպիսի բարին է հաղթում, որ սկսում ես խղճալ կախարդ պառավին ու կաշչեյին՝ կյանքում իրենց տեղը գտնելու ու նրանց ինտելիգենտությունը մատնող անճարակության համար:

Առջեւում նորից շարժիչի աղմուկ լսվեց, հիմա արդեն ավելի մոտիկից, ու Սաշան մտածեց, որ վերջապես որեւէ մեքենա ընդառաջ կգա եւ իրեն որեւէ տեղ կհասցնի, ուր գլխավերեւում էլէկտրական լամպ կլինի, շուրջը՝ պատեր, ու հնարավոր կլինի հանգիստ քնել: Գվվոցը որոշ ժամանակ մոտենում էր, հետո հանկարծ լռեց. մեքենան կանգ առավ: Սաշան համարյա վազեց առաջ՝ սպասելով, թե ծայնը երբ նորից ընդառաջ կգա, բայց երբ կրկին լսեց շարժիչի գվվոցը, հեռվից էր գալիս, կարծես մոտեցած մեքե-

նան հանկարծ անձայն մի կիլոմետր հետ էր ցատկել ու հիմա կրկնում էր արդեն անցած ճանապարհը:

Սաշան վերջապես հասկացավ, որ նույնպես իր կողմը եկող, բայց ուրիշ մեքենայի ձայն է լսում: Ճիշտ է, անհասկանալի էր՝ ուր անհետացավ առաջինը, բայց դա կարեւոր չէր, միայն թե համենայնդեպս հայտնվեր խավարից: Անտառում դժվար է ստույգ որոշել մինչեւ ձայնի աղբյուրն ընկած տարածությունը. երբ երկրորդ մեքենան էլ կանգ առավ, Սաշային թվաց՝ ընդամենը մի հարյուր մետրի վրա է. լուսարձակների լույսը չէր երեւում, բայց դա հեշտությամբ բացատրվում էր նրանով, որ առջեւում շրջադարձ է:

Սաշան հանկարծ մտքի մեջ ընկավ: Անհասկանալի էր՝ ինչ է կատարվում շրջադարձից այն կողմ: Իրար ետեւից երկու մեքենա հանկարծ կանգ էին առել գիշերային անտառում: Սաշան հիշեց, որ առաջ էլ, երբ լսում էր շարժիչների հեռավոր գվվոցը, այն որոշ ժամանակ մոտենում, ուժգնանում, հետո կտրվում էր: Բայց հիմա դա շատ տարօրինակ թվաց. երկու մեքենաներն իրար ետեւից կանգ էին առել կամ կանգնեցվել էին, ասես ճանապարհի ինչ-որ փոս էին ընկել:

Գիշերը կատարվածի այնպիսի բացատրություններ էր հուշում, որ Սաշան համենայնդեպս մոտեցավ ճամփեզրին, որ հնարավոր լինի արագ մտնել անտառ, եթե հանգամանքները պահանջեն, ու անձայն գնաց առաջ՝ ուշադիր նայելով խավարի խորքը: Հենց որ փոխեց տեղաշարժման ձեւը,- իսկ մինչ այդ քայլում էր ճանապարհի հենց մեջտեղով՝ չինական ռետինը աղմուկով շմփացնելով ասֆալտի մնացորդներին,- վախի մեծ մասն անմիջապես չքացավ, ու նա մտածեց, որ եթե հիմա մեքենա չնստի, ճանապարհի մնացած մասը հենց այդպես էլ անցնելու է:

Երբ մինչեւ շրջադարձն արդեն մի քիչ էր մնացել, Սաշան տերեւների վրա կարմրավուն թույլ շողք նկատեց, միեւնույն ժամանակ ձայներ ու ծիծաղ հասավ ականջին: Հետո մի մեքենա էլ մոտեցավ ու մոտիկ արգելակեց. այս անգամ նույնիսկ դռների շխկոցը լսեց: Դատելով նրանից, որ առջեւում ծիծաղում էին, այնտեղ առանձնապես սարսափելի ոչինչ չէր կատարվում: Կամ էլ ճիշտ հակառակը՝ հանկարծ մտածեց նա:

Այդպիսի մտքից հետո թվաց, որ անտառում ավելի անվտանգ կլինի, քան ճանապարհին: Սաշան մտավ անտառ ու ձեռքերով իր դիմաց խավարը շոշափելով, դանդաղ գնաց առաջ: Վերջապես հայտնվեց մի տեղ, որտեղից երեւում էր, թե ինչ է կատարվում շրջադարձից այն կողմ: Ծառի ետեւը պահվելով՝ սպասեց աչքերը սովորեն մթության նոր աստիճանին, զգույշ

դուրս նայեց, ու քիչ էր մնում ծիծաղեր՝ բացված պատկերի սովորականությունը այնքան չէր համապատասխանում նրա վախի լարվածությանը:

Դիմացը մի մեծ բացատ էր. մի կողմից անկանոն կանգնած էր վեց մեքենա՝ «վոլգաներ», «լադաներ» ու նույնիսկ մի արտասահմանյան, եւ այդ ամենը լուսավորում էր բացատի կենտրոնում վառվող հսկա խարույկը, որի շուրջը կանգնել էին տարբեր տարիքի ու տարատեսակ հագնված մարդիկ, մի քանիսի ձեռքին բուտերբրոդներ ու շշեր էին: Նրանք զրուցում էին, ծիծաղում ու իրենց պահում էին այնպես, ինչպես ցանկացած մեծ ընկերախումբ գիշերային խարույկի շուրջը, միայն նստած մարտկոցով ու լռության դեմ դժվարությամբ պայքարող մագնիտոֆոնն էր պակասում:

Ասես Սաշայի միտքը լսելով՝ կրակի շուրջը կանգնածներից մեկը մոտեցավ մեքենային, բացեց դուռը, ձեռքը ներս տարավ, ու բավական բարձր երաժշտություն լսվեց, որը, սակայն, հարմար չէր բացօթյա խնջույքին. ասես հեռվում ոռնում էին խոպոտ, մռայլ ծխնելույզներն ու քամին էր գվվում աշնանային տկլոր ծառաբների արանքում:

Բայց խարույկի շուրջը հավաքված խումբը տարակուսանք չհայտնեց նման ընտրության կապակցությամբ, հակառակը, երբ երաժշտություն միացրածը վերադարձավ մյուսների մոտ, հավանություն տալով՝ թփթփացրին ուսին: Ավելի ուշադիր նայելով՝ Սաշան սկսեց որոշ տարօրինակություններ նկատել, ընդ որում՝ երաժշտության անհեթեթությամբ ընդգծված տարօրինակություններ:

Խարույկի մոտ մի քանի երեխա կար, միանգամայն նորմալ երեխաներ: Սաշայի տարիքի տղաներ էլ կային: Աղջիկներ կային: Բայց ահա բարձր կոճղի մոտ չգիտես ինչու կանգնած էր մի տարեց միլիցիոներ, եւ նրա հետ պիջակով ու փողկապով մի տղամարդ էր զրուցում: Խարույկի մոտ միայնակ կանգնած էր մի զինվորական, կարծես՝ գնդապետ, նրան շրջանցում էին, իսկ նա երբեմն ձեռքերը պարզում էր լուսնին: Կոստյումներով ու փողկապավոր մի քանի մարդ էլ կար. ասես ոչ թե անտառ, այլ աշխատանքի էին եկել:

Սաշան սեղմվեց ծառին, որովհետեւ բացատի ծայրին, որտեղ կանգնած էր,մոտեցավ ընդարձակ սեւ բաճկոնով, մազերը սեւ փոկով հավաքած մի մարդ: Կրակի ցատկոտող շողքերից թեթեւակի աղճատված մի դեմք էլ դարձավ Սաշայի կողմը... Չէ՛, ոչ ոք չէր նկատել:

«Չեմ հասկանում,- մտածեց Սաշան,- ովքեր են»: Հետո մտքով անցավ, որ այդ ամենը կարող է շատ պարզ բացատրություն ունենալ. որեւէ ընդունելության են եղել, հետո պոկվել են անտառ... Միլիցիոները պահպանու-

թյան համար է... Բայց այդ դեպքում՝ որտեղի՞ց երեխաները: Եվ՝ ինչո՞ւ այսպիսի երաժշտություն:

- Հե՛յ,- հետեւից ասաց կամացուկ ձայնը:

Սաշան սառավ: Դանդաղ շրջվեց ու դիմացը տեսավ «Ադիդասի» նուրբ շուշանը կրծքին, կարծես թե կանաչ մարգահագուստով մի աղջնակի:

- Ինչ ես անում էստեղ,- էլի կամաց հարցրեց աղջիկը:

Սաշան դժվարությամբ բացեց բերանը:

- Ես... էնպես,- պատասխանեց նա:

- Ի՞նչը՝ էնպես:

- Դե, գնում էի ճանապարհով, հասա էստեղ:

- Ո՞նց թե,- համարյա սարսափած հարցրեց աղջնակը,- դու, ի՞նչ է, նրանց հետ չես եկել:

- Չէ՛:

Աղջնակն այնպիսի շարժում արեց, ասես ուզում էր հետ ցատկել, բայց, համենայնդեպս, մնաց տեղում:

- Ուրեմն ի՞նքդ ես եկել: Վերցրել ու եկե՞լ ես,- մի քիչ հանդարտվելով՝ հարցրեց նա:

- Չեմ հասկանում՝ ի՞նչ զարմանալի բան կա,- ասաց Սաշան: Սկսեց մտածել, որ աղջնակը ծաղրում է, բայց աղջնակը հանկարծ նայեց նրա մարգակոշիկներին եւ այնպիսի անկեղծ տարակուսանքով օրորեց գլուխը, որ Սաշան հրաժարվեց այդ մտքից: Ընդհակառակը, հանկարծ թվաց, որ խիստ անթույլատրելի բան է արել: Աղջնակը մի րոպեի չափ լուռ մտածում էր, հետո հարցրեց.

- Բա հիմա ո՞նց ես դուրս պրծնելու:

Սաշան մտածեց, որ նկատի ունի գիշերային միայնակ ճամփորդի իր վիճակը, ու պատասխանեց.

- Ո՞նց: Կխնդրեմ որեւէ կայարան հասցնեն: Ե՞րբ եք վերադառնալու:

Աղջնակը լուռ էր: Սաշան կրկնեց հարցը, եւ նա ափով անհասկանալի պարուրածեւ շարժում արեց:

- Կամ էլ կշարունակեմ ճանապարհս,- հանկարծ ասաց Սաշան:

Աղջնակը կասկածոտ ու ափսոսանքով նայեց նրան:

- Իսկ անունդ ինչ էր,- հարցրեց նա:

«Ինչո՞ւ՝ էր»,- զարմացավ Սաշան եւ ուզում էր ուղղել նրան, բայց դրա փոխարեն պատասխանեց, ինչպես երեխա ժամանակ միլիցիոներներին էր պատասխանում.

- Սաշա Լապին:

Աղջնակը քմծիծաղեց: Մի քիչ մտածելով՝ մատը հպեց Սաշայի կրծքին:

- Ինչ-որ համակրելի բան կա քո մեջ, Սա՛շա Լապին,- ասաց,- դրա համար էլ այ թե ինչ կասեմ քեզ. նույնիսկ չփորձես փախչել այստեղից: Ճի՛շտ: Ավելի լավ է՝ մի հինգ րոպեից դուրս գաս անտառից ու մոտենաս խարույկին: Համարձա՛կ: Քեզ, ուրեմն, կհարցնեն՝ ով ես ու ինչ ես անում էստեղ: Իսկ դու պատասխանիր, որ կանչ ես լսել: Ու գլխավորը՝ շատ վստահ: Հասկացա՞ր:

- Ի՞նչ կանչ:

- Ինչ, ինչ: Էդպիսի՛: Իմը խորհուրդ տալն էր:

Աղջնակը նորից նայեց Սաշային, հետո շրջանցեց նրան ու գնաց բացատի կողմը: Երբ մոտեցավ խարույկին, կոստյումով մի տղամարդ շոյեց գլուխն ու բուտերբրոդ տվեց նրան:

«Ծաղրո՛ւմ է»,- մտածեց Սաշան: Հետո տեսավ դեպի բացատի մթին ծայրը նայող սեւ բաճկոնով մարդուն ու որոշեց, որ չի ծաղրում. մի տեսակ տարօրինակ էր խավարի խորքը նայում այդ մարդը, բնավ այնպես, ինչպես պիտի որ նայեր: Բացատի կենտրոնում Սաշան հանկարծ հողի մեջ խրված ծող նկատեց՝ վրան նեղ ու երկարուկ, հզոր ծնոտով գանգ:

Մի քիչ տատանվելով՝ Սաշան որոշում կայացրեց, դուրս եկավ ծառի ետեւից ու գնաց դեպի խարույկի դեղնակարմիր բիծը: Չգիտես ինչու՝ քայլելիս օրորվում էր, եւ աչքերը գամվել էին կրակին:

Երբ հայտնվեց բացատում, խոսակցությունները միանգամից դադարեցին: Բոլորը շրջվեցին ու հիմա նրան էին նայում՝ անտառի փեշի ու խարույկի միջեւ դատարկ տարածությունը լուսնոտի պես կտրողին:

- Կանգնի՛ր,- խռպոտ ասաց մեկը:

Սաշան չկանգնեց. մոտ վազեցին, տղամարդու մի քանի ուժեղ ձեռքեր բռնեցին նրան:

- Ի՞նչ ես անում էստեղ,- հարցրեց կանգ առնելու հրաման տված ձայնը:

- Կանչ լսեցի,- մռայլ ու կոպիտ պատասխանեց Սաշան՝ ոտքերի տակ նայելով:

- Հա՛, կա՛նչ...,- ասացին մի քանի ձայն: Սաշային անմիջապես բաց թողեցին, շուրջը ծիծաղեցին, եւ ինչ-որ մեկն ասաց.

- Նորեկ է:

Սաշային պանրով բուտերբրոդ ու մի բաժակ «թարխուն» տվեցին, ինչից հետո նա անմիջապես մոռացության տրվեց. բոլորը վերադարձան իրենց ընդհատված խոսակցություններին: Սաշան ավելի մոտեցավ կրակին ու հանկարծ հիշեց, որ ուսապարկը ծառի մոտ է թողել: «Սատանան

դրա հետ»,- մտածեց ու անցավ բուտերբրոդին:

Մոտեցավ մարգահագուստով աղջնակը:

- Ես Լենան եմ,- ասաց նա:- Կեցցե՛ս: Ամեն ինչ արեցիր, ինչ որ պետքն է:

Սաշան շուրջը նայեց:

- Լսի՛,- ասաց նա,- էստեղ ի՞նչ է կատարվում: Պիկնի՞կ է:

Լենան կռացավ, գետնից վերցրեց հաստ ճյուղի կտորն ու գցեց կրակի մեջ:

- Սպասի՝ կիմանաս,- ասաց նա: Հետո փոքրիկ ճկույթը թափ տվեց նրա վրա,- մի տեսակ խիստ չինական շարժում ստացվեց,- ու մոտեցավ կոճղի շուրջը կանգնած փոքրիկ խմբին:

Մեկը ետեւից քաշեց Սաշայի բաճկոնի թեւքը: Նա շրջվեց ու ցնցվեց. դիմացը կանգնած էր իր ֆակուլտետի դեկանը, ինչ-որ ոլորտի խոշոր մասնագետ, որի դասընթացը հաջորդ կուրսում էր սկսվելու, բայց արդեն այս կուրսում Սաշայի մեջ որձկալու զգացում էր արթնացնում: Սաշան առաջին պահ կարկամեց, իսկ հետո իրեն ասաց, որ այդպիսի հանդիպման մեջ գերբնական ոչինչ չկա. չէ՞ որ դեկանն էլ միայն աշխատավայրում է դեկան, իսկ երեկոյան ու գիշերը մարդ է եւ կարող գնալ ուր կուզի: Միայն թե Սաշան ոչ մի կերպ չէր կարողանում հիշել նրա հայրանունը:

- Լսի՛ր, նորե՛կ,- ասաց դեկանը (ակնհայտորեն չէր ճանաչել Սաշային),- հապա լրացրու:

Սաշայի ձեռքին հայտնվեցին տողած թղթի թերթն ու գրիչը: Խարույկի լույսն ընկնում էր պրոֆեսորի ընդգծված այտոսկրերով դեմքին ու թղթի գրություններին. պարզվեց՝ սովորական անձնական թերթիկ է: Սաշան պպզեց ու թերթիկը ծնկին դնելով՝ դժվարությամբ սկսեց գրել՝ որտեղ է ծնվել, երբ, ինչու եւ այլն: Իհարկե, գիշերային անտառում անձնական թերթիկ լրացնելը տարօրինակ է, բայց այն, որ գլխավերում կանգնած է ցերեկային ղեկավարությունը, ինչ-որ կերպ հավասարակշռում էր իրավիճակը: Դեկանը սպասում էր՝ երբեմնակի հոտոտելով օդն ու նայելով Սաշայի ուսի վրայից: Երբ վերջին տողը գրված էր, դեկանը նրա ձեռքից խլեց թուղթն ու գրիչը, երախաբաց ժպտաց ու անհամբերությունից ցատկոտելով՝ վազեց դեպի իր մեքենան, որի շարժիչի կափարիչին դրված էր բաց թղթապանակը:

Վեր կենալով՝ Սաշան նկատեց, որ քանի դեռ ինքը թերթիկն էր լրացնում, խարույկի շուրջը հավաքվածների պահվածքում նկատելի փոփոխություն է կատարվել: Առաջ նրանք մանր տարօրինակությունները չհաշված, սովորական տուրիստների էին հիշեցնում: Հիմա ուրիշ էր: Խոսակցություն-

ներն առաջվա պես շարունակվում էին, բայց ձայները մի տեսակ հաչող էին դարձել, իսկ խոսողների շարժումները՝ սահուն ու ճարպիկ: Կոստյումով մի տղամարդ հեռացել խարույկից ու պրոֆեսիոնալ թեթեւությամբ գլուխկոնծի էր տալիս խոտերի վրա՝ գլխի շարժումով ազատվելով պիջակի տակից դուրս պրծած փողկապից. մյուսը արագիլի պես քարացել էր մի ոտքի վրա եւ ասես աղոթելով՝ նայում էր վեր՝ լուսնին, իսկ կրակի լեզուների միջով երեւացող միլիցիոները չորեքթաթ կանգնել էր բացատի եզրին ու շրջադիտակի նման տարուբերում էր գլուխը: Սաշան էլ ականջներում զնգոց ու բերանում չորություն զգաց: Այդ ամենը անկասկած, թեկուզեւ անհայտ կապի մեջ էր մեքենայից հնչող երաժշտության հետ, որի տեմպն արագացել էր, ու փողերն ավելի ու ավելի տագնապալի էին խռպում՝ ասես ինչ-որ նոր ու անսովոր թեմայի սկիզբն ազդարարելով: Երաժշտությունն աստիճանաբար ու անկարելի արագացավ, իսկ օդը շուրջը թանձրացավ ու տաքացավ. Սաշան մտածեց՝ էլի այսպիսի մի բոպե, ու կմեռնի: Հանկարծ փողերը կտրուկ լռեցին, ու տարածվեցին գոնգի ոռնացող հարվածները:

- Կենսաթո՛ւրմ,- լսվեց շուրջը,- արա՛գ,կենսաթո՛ւրմ: Ժամանա՛կն է:

Սաշան տեսավ ժակետով ու կարմիր ուլունքներով մի նիհար, ծեր կնոջ, որը մեքենաներից մեկից թղթով ծածկած բանկա էր բերում. այդպիսի տակառիկներով շուկայում թթվասեր են վաճառում: Հանկարծ քիչ հեռվում թեթեւ իրարանցում սկսվեց:

- Ա՛յ սա ուրիշ,- կողքից հիացմունքով ասաց մեկը,- առանց թուրմի...

Սաշան նայեց այն կողմ, որտեղից հնչում էին ձայները, ու տեսավ հետեւյալը. աղջիկներից մեկը, նա, որ զրուցում էր սեւ բաճկոնով տղամարդու հետ, չոքել էր եւ ավելի քան տարօրինակ տեսք ուներ. ոտքերը մի տեսակ փոքրացել էին, իսկ ձեռքերը, հակառակը, ձգվել, այդպես ձգվել էր նաեւ դեմքը՝ վերածվելով անհավատալի, ահարկու կիսամարդ-կիսագայլի մռութի:

- Փառահե՛ղ է,- ասաց գնդապետը ու շրջվեց մյուսների կողմը՝ ձեռքի շարժումով բոլորին հրավիրելով հիանալու զարհուրելի տեսարանով,- խոսք չկա: Փառահե՛ղ է: Ու դեռ փնովում են մեր երիտասարդությանը:

Կարմիր ուլունքներով կինը մոտեցավ գայլանման աղջկան, մատը խցկեց բանկայի մեջ ու մի քանի կաթիլ կաթեցրեց տակը պահած երախը: Աղջկա մարմինն ալիք տվեց, նորից, հետո ալիքներն արագացան ու վերածվեցին ծանր դողի: Մի բոպեից բացատում, մարդկանց մեջ կանգնած էր մի ջահել, խոշոր էգ գայլ:

- Տանյան է, օտար լեզուներից,- ասաց մեկը Սաշայի ականջին,- շա՛տ ընդունակ է:

Խոսակցությունները դադարեցին, բոլորը, մի տեսակ բնական, անհավասար շարք կազմեցին, եւ կինն ու գնդապետը անցան շարքի երկարությամբ՝ հերթով բոլորին տալով, որ փոքրիկ կում անեն բանկայից: Սաշան, տեսածից ապշահար ու ոչինչ չհասկանալով, ընկավ այդ շարքի մոտավորապես մեջտեղը, իսկ կողքին նորից հայտնվեց Լենան: Դեմքը դարձրեց Սաշային ու լայն ժպտաց:

Սաշան հանկարծ տեսավ, որուլունքներով կինը,- ի դեպ մյուսներից տարբերվում էր նրանով, որ իրեն խիստ տնավարի էր պահում, ինչպես ամառանոցում, առանց տարօրինակ շարժումների եւ աչքերի արտասովոր փայլի,- կանգնել է դիմացն ու իրեն պարզել բանկայով ձեռքը: Սաշան տարօրինակ ու կարծես ծանոթ հոտ առավ. այդպես որոշ բույսեր են բուրում, երբ տրորում ես ափիդ մեջ: Հետ քաշվեց, բայց ձեռքն արդեն հասել էր ու շրթունքներին էր սեղմում բանկան: Սաշան մի փոքրիկ կում արեց ու միաժամանակ զգաց, որ ինչ-որ մեկն իրեն պահում է ետեւից: Կինը շարժվեց առաջ:

Սաշան բացեց աչքերը: Քանի դեռ հեղուկը բերանում էր, համը նույնիսկ հաճելի էր թվում, բայց երբ կուլ տվեց, քիչ էր մնում փսխեր:

Սուր բուսահոտն ուժեղացավ ու լցրեց Սաշայի պարպված գլուխը. գլուխն ասես փուչիկ լիներ, որի մեջ ինչ-որ մեկը գազի շիթ է փչել: Փուչիկը մեծացավ, փքվեց, ավելի ու ավելի ուժգին էր ծգվում վեր, ու հանկարծ փուչիկը կտրեց երկրի հետ կապող բարակ թելը ու թռավ. հեռու ներքեւում մնացին անտառը, խարույկը, բացատը ու բացատի մարդիկ, իսկ ընդառաջ թռան նոսր ամպերը, հետո՝ աստղերը: Ծուտով ներքեւում արդեն ոչինչ չէր երեւում: Սաշան սկսեց նայել վեր ու տեսավ, որ երկինք է հասնում. ինչպես պարզվեց, երկինքը կոր քարե կամար էր՝ դուրս պրծած մետաղյա ցցունքներով, որոնք ներքեւից աստղեր էին թվացել: Այդ շողացող սայրերից մեկը սլանում էր ուղիղ Սաշայի վրա, ու նա ոչ մի կերպ չէր կարող խույս տալ հանդիպումից, հակառակը, խփվեց նրան ու պայթեց բարձր ճայթյունով: Հիմա նրանից միայն ճլորած թաղանթն էր մնացել, որ օդում ճոճվելով՝ սկսեց դանդաղ իջնել ցած:

Երկար էր ընկնում, մի ողջ հազարամյակ ու վերջապես հասավ գետին: Ոտքերի տակ ամուր հող զգալն այնքան հաճելի էր, որ Սաշան հաճույքից ու երախտագիտությունից լայն թափահարեց պոչը, բարձրացրեց մռութն ու կամացուկ ոռնաց: Հետո կանգնեց թաթերին ու նայեց շուրջը:

Կողքին մի նիհար ջահել գայլուհի էր կանգնած ու նայում էր վեր՝ երկնքին, որտեղից Սաշան հենց նոր ընկել էր: Անմիջապես ճանաչեց Լենային,

բայց ինչպես՝ պարզ չէր: Զուտ մարդկային առանձնահատկությունները, որ առաջ նկատել էր նրա մեջ, բնականաբար, անհետացել էին: Փոխարենը՝ նույնպիսի առանձնահատկություններ էր ձեռք բերել, բայց՝ գայլի: Սաշայի համար խիստ տարօրինակ էր. երբեք մտքով չէր անցնի, որ գայլի մռութի արտահայտությունը կարող է միաժամանակ հեգնական ու երազկոտ լինել, եթե չտեսներ սեփական աչքերով: Լենան նկատեց, որ նայում է իրեն, ու հարցրեց.

- Հը՞, ո՞նց է:

Այսինքն՝ չհարցրեց: Սուր ու կամացուկ կնձմնձաց թե կաղկանձեց. դա ոչ մի կերպ մարդկային լեզու չէր հիշեցնում, բայց Սաշան անմիջապես որսաց ոչ միայն հարցի իմաստը, այլեւ որոշակի միտումնավոր լկտիությունը, որ Լենան հաջողել էր տալ ոռնոցին:

- Ուժե՛ղ է,- ուզում էր պատասխանել Սաշան, բայց դրա փոխարեն կարճ հաչող ձայն արձակեց: Բայց այդ ձայնն էլ հենց այն էր, ինչ ուզում էր ասել: Լենան պառկեց խոտերին ու մռութը դրեց թաթերի արանքը:

- Հանգստացի՛ր,- կաղկանձեց նա,- հիմա երկար ենք վազելու:

Սաշան հանգստանալ չէր ուզում: Զգում էր, որ լեփ-լեցուն է ուժով, ուզում էր որեւէ բան անել, ցատկոտել կամ պատառոտել մեկնումեկին: Նայեց շուրջը. աջից, երեք մետրի վրա խոտերին թավալ էր գալիս միլիցոնները՝ աչքի առաջ հենց համազգեստի վրայից մորթով պատվելով, շալվարից արագ, ինչպես խոտի ծիլը կենսաբանության ուսումնական ֆիլմում, աճում էր հաստ ու լերկ պոչը:

Բացատում հիմա գայլերի ոհմակ էր կանգնած, եւ միայն կենսաթուրմ բաժանող ուլունքներով կինն էր մարդ մնացել: Նա, ինչպես Սաշային թվաց, անհասկանալի վախով շրջանցեց երկու հաղթանդամ գայլերի,- Սաշան ճանաչեց նրանցից մեկին՝ գնդապետն էր,- ու նստեց մեքենան:

Սաշան դարձավ Լենային.

- Ի՞նչ է,- հարցրեց նա,- նա մերոնցից չի՞:

- Չէ,- պատասխանեց Լենան,- օգնում է մեզ: Ինքը կոբրա է դառնում:

- Հիմա՞:

- Հիմա դրա համար ցուրտ է: Միջին Ասիա է գնում:

- Հա՛:

Գայլերը հետուառաջ էին անում բացատում, մոտենում էին իրար ու կամացուկ վնգվնգում: Սաշան նստեց հետեւի թաթերին ու փորձեց զգալ իր նոր հատկության բոլոր կողմերը: Նախ տարբերում էր օդում տարածված հազարավոր հոտերը: Դա նման էր երկրորդ տեսողության. օրինակ, Սա-

շան անմիջապես զգաց հեռու ծառի տակ թողած իր ուսապարկը, զգաց մեքենայի մեջ նստած կնոջը, հենց նոր վազքով բացատի եզրով անցած գետնասկյուռին, տարեց գայլերի պատկառելի որձ հոտն ու Լենայի հոտի քնքուշ ալիքը. դա երեւի ամենաթարմ ու մաքուր երանգն էր շնական հոտերի աներեւակայելի ընդարձակ շարքում:

Երկրորդ. ըստ երեւույթին ձայներն էլ էին փոփոխության ենթարկվել. հիմա շատ ավելի ընկալելի էին, ու դրանց թիվը կրկնապատկվել էր. կարելի էր առանձնացնել ճյուղի ճռնչոցը քամու տակ՝ բացատից հարյուր մետրի վրա, հետո՝ ծղրիդի ճտճտոցը լրիվ ուրիշ կողմում ու միաժամանակ, առանց երկվանալու հետեւել այդ հնչյունների տատանումներին:

Երրորդ. գլխավոր մետամորֆոզը, որ նկատեց Սաշան, վերաբերում էր ինքնագիտակցմանը: Մարդկային լեզվով դա շատ դժվար էր արտահայտել, եւ Սաշան սկսեց մտքում հաչալ, գռմռալ ու կնձմնձալ, ճիշտ այնպես, ինչպես առաջ մտածում էր բառերով: Ինքնագիտակցման փոփոխությունը վերաբերում էր կյանքի իմաստին: Սաշան նկատեց, որ մարդիկ ընդունակ են միայն խոսելու, իսկ կյանքի իմաստը զգալ, ինչպես քամին կամ ցուրտը, չեն կարողանում: Հիմա Սաշան այդպիսի հնարավորություն ուներ, եւ կյանքի իմաստը զգացվում էր անընդհատ ու հստակ, որպես աշխարհի հատկություն, որ թաքուն է մարդուց,- եւ դրանում էր Սաշայի ներկա վիճակի գլխավոր հմայքը: Հենց դա հասկացավ, հասկացավ նաեւ, որ հազիվ թե սեփական ցանկությամբ վերադառնա իր նախկին բնույթին. կյանքն առանց այդ զգացումի երկար ու հիվանդագին երազ էր թվում, անհետաքրքիր ու պղտոր, ինչպիսին տեսնում ես գրիպի ժամանակ:

- Պատրա՞ստ եք,- բացատի կենտրոնից ոռնաց գնդապետը:

- Այո՛: Պատրաստ ենք,- շուրջը կաղկանձեցին տասնյակ կոկորդներ:

- Հիմա... Մի րոպե,- հետեւից խռպաց ինչ-որ մեկը,- փոխվել չեմ կարողանում:

Սաշան փորձեց մռութն այնպես շրջել, որ հետ նայի, բայց չկարողացավ: Պարզվեց՝ վիզը դժվար է ծռվում, պետք էր շրջվել ողջ մարմնով, իսկ դա անհարմար էր: Կողքից մոտեցավ Լենան ու սառը քթով մշտեց Սաշայի կողին: Ըստ երեւույթին կռահել էր, որ դժվարանում է, որովհետեւ կամացուկ կնձմնձաց ականջին.

- Ծուռումուռ մի արի, աչքերդ շլի: Տե՛ս:

Ցույց տվեց: Սաշան փորձեց, եւ իսկապես աչքերը շլելը շատ հարմար էր: Դա էլ մարդու համար անպատկերացնելի ունակություն էր:

- Ո՞ւր ենք վազելու,- մտահոգ հարցրեց նա:

- Կոնկովո,- պատասխանեց Լենան,- էնտեղ երկու կով կա դաշտում:

- Բա հիմա գոմում չե՞ն:

- Չէ՛, ինչ ես ասում: Հատուկ են դասավորել: Իվան Սերգեեւիչը մինչեւ գալը հատուկ զանգ է կազմակերպել շրջկոմից, թե գիտափորձ է՝ գիշերն արածելու ազդեցությունը կաթնատվության վրա: Էդ կարգի մի բան:

- Ի՞նչ է, շրջկոմում էլ են մերո՞նք:

- Բա ի՞նչ էիր կարծում:

Իվան Սերգեեւիչը, սեւ բաճկոնով ու հիմա մուգ բրդի շերտիկ դարձած ձգափոկը ճակատին նախկին տղամարդը նստել էր նրանց կողքին, լսում էր Լենային ու խորիմաստ գլխով անում:

- Հրաշալի՛ է,- մռնչաց Սաշան,- հենց լափել էի ուզում:

Լենան ժպտալով բացեց ժանիքներն ու թափահարեց պոչը:

Սաշան աչքերը շլեց նրա վրա: Լենան հանկարծ նրան ապշեցուցիչ գեղեցիկ թվաց. փայլող հարթ բուրդ, մեջքի քնքուշ կորվածք, սլացիկ եւ ուժեղ հետեւի թաթեր, աղվամազոտ ջահել պոչ ու մաշկի տակ հուզիչ շարժվող թիակներ. նրա մեջ միաժամանակ եւ ուժ էր զգացվում, եւ ինչ-որ մերկություն, անպաշտպանություն,- մի խոսքով, այն ամենը, որ անզոր է նկարագրել գայլի ոռնոցը: Նրա հայացքը նկատելով՝ Լենան շփոթվեց ու պոչը գետնին սեղմած՝ մի կողմ քաշվեց: Սաշան էլ շփոթվածություն զգաց ու սկսեց ձեւացանել, թե թաթի բրդից ինչ-որ բան է պոկում:

- Նորից եմ հարցնում՝ բոլո՞րն են պատրաստ,- բացատի վրա տարածվեց առաջնորդի խուլ կաղկանձը:

- Բոլո՛ր: Բոլորը պատրաստ են,- պատասխանեց համերաշխ ոռնոցը:

- Բոլո՛ր:

- Ուրեմն՝ առա՛ջ:

Առաջնորդը վազեց դեպի բացատի ծայրը. երեւում էր, որ դիտմամբ դանդաղ ու առանց լարվելու է շարժվում, ինչպես մեկնարկային ոտնակներին մոտեցող վազորդը, որպեսզի ընդգծի այն արագությունն ու պրկվածությունը, որ ցուցադրելու է կրակոցից մի վայրկյան անց:

Մի պահ կանգ առնելով բացատի եզրին, որտեղից սկսվում էին ծառերը, առաջնորդը մռութը կախեց գետնին: Սաշան հասկացավ՝ հոտով, որ ինչ-որ բան է որոշում: Մոտ մեկ րոպե անցավ:

Հանկարծ առաջնորդը կաղկանձեց ու ցատկեց խավարի խորքը, եւ անմիջապես, ոռնոցով ու կաղկանձով, բոլորը նետվեցին նրա հետեւից: Սրածայր ոստերով ծակծկված խավարի մեջ թռչելով՝ Սաշան նույնը զգաց, որ լինում է ջրի մեջ ցատկելիս, երբ խորությունը չգիտես՝ ակնթար-

թային վախ, որ գլուխդ կջարդես հատակին: Բայց պարզվեց, որ վազքը գիշերային անտառի միջով միանգամայն անվտանգ է. Սաշան, հայտնի չէ՝ ինչպես, զգում էր բոլոր հնարավոր խոչընդոտներն ու առանց դժվարության շրջանցում: Հասկանալով, որ իրեն ոչինչ չի սպառնում, այլեւս չէր լարվում, ինչից հետ վազելը ուրախ ու հեշտ էր, թվում էր՝ ոչ մի ջանք չի անում արագությունը պահելու համար, իսկ մարմինը սլանում է ինքնին՝ արձակելով իր մեջ թաքնված ուժը:

Ոհմակը ծգվեց՝ շեղանկյուն կազմելով: Եզրերին սուրում էին փորձառու, հզոր գայլերը, իսկ կենտրոնում գայլուհիներն ու գայլածագերն էին: Գայլածագերը հաջողում էին վազելիս էլ խաղալ, մեկմեկու պոչն էին բռնում ու աներեւակայելի ցատկեր անում: Սաշայի տեղը շեղանկյան գագաթին էր, անմիջպես առաջնորդից հետո. չգիտես որտեղից՝ արդեն գիտեր, որ դա պատվավոր տեղ է եւ այսօր իրեն են գիջել որպես նորեկի:

Սաշան բոլորի հետ մեկտեղ, ճանապարհին հայտնվող չոր ճյուղերը ջարդոտելով,կտրեց-անցավ թփուտն ու թռավ առվի վրայով: Հանկարծ անտառը վերջացավ ու բացվեց ճանապարհով հատվող արձակ, ամայի դաշտը, ոհմակը, ավելի թափ առնելով ու գորշ ժապավեն դարձած, սլացավ ասֆալտի վրայով՝ խճուղու աջ կողմով: Մարդու համար շուրջը մութ ու ամայի կլիներ, բայց Սաշան ամենուր կյանք էր նկատում. ճանապարհի երկարությամբ դեսուդեն էին վազում դաշտամկներն ու գայլերի հայտնվելուն պես չքանում բներում, ասես Սաշան կամ ոհմակից որեւէ մեկն իրեն նեղություն էր տալու այդ մանրուքի համար. ոգնին փշոտ գնդիկ դառավ ճամփեզրին ու ինչ-որ մեկի թաթի թեթեւ հարվածից թռավ դեպի դաշտը, ռեակտիվ կործանիչի արագությամբ սուրացին երկու նապաստակ՝ իրենց ետեւից հոտի թանձր հետք թողնելով, ինչից պարզ էր դառնում, որ մահացու վախեցած են, իսկ նրանցից մեկն ի լրումն՝ անտանելի հիմար:

Սաշան նկատեց, որ Լենան վազում է կողքով:

- Զգո՛ւյշ,- վնգվնգաց Լենան ու մռութը վեր պարզեց: Սաշան աչքերը դարձրեց վեր՝ թողնելով, որ մարմինն ինքը որոշի երթուղին: Վերեւում, հենց գլխին կախված, մի քանի բու էր թռչում, ճիշտ նույն արագությամբ, որով գայլերը սլանում էին ասֆալտով: Բվերը մի քանի անգամ սպառնալի ճչացին, ու գայլերը ոռնացին ի պատասխան: Սաշան տարօրինակ կապ զգաց օդը հատող թռչունների ու ճանապարհով վազող ոհմակի միջեւ. չնայած ակնհայտ փոխադարձ թշնամանքին, ինչ-որ բանով նման էին իրար:

- Էս ո՞վ են,- հարցրեց Լենային:

- Փոխակերպուկ բվեր: Գիտե՞ս՝ ինչ զի՛լն են... Եթե մենակ լինե՛ս...

Լենան էլի ինչ-որ բան մոթմոթաց եւ ատելությամբ նայեց վեր: Բվերը սկսեցին հեռանալ ճանապարհից ու բարձրանալ վեր: Թռչում էին առանց թեւերը թափահարելու՝ պարզապես օդում լայն բացած: Բարձր երկնքում շրջան անելով՝ փոխեցին ուղղությունը:

- Թռան թռչնաֆաբրիկա,- բացատրեց Լենան,- ցերեկներն էնտեղ հովանավորների պես բան են:

Սաշան նկատեց, որ մոտենում են ճամփաբաժանին. առջեւում հայտնվեցին ճամփեզրի ծանոթ փայտե սյունն ու բարձր ծառը: Սաշան զգաց իր՝ դեռեւս մարդկային հետքը ու նույնիսկ ճանապարհին մի քանի ժամ առաջ մտածածի արձագանքը. արձագանքը մնացել էր հոտերի մեջ: Սյունը մնաց ետեւում, ոհմակը սահուն շրջադարձ արեց ու սլացավ դեպի Կոնկովո:

Լենան մի քիչ հետ էր մնացել, ու հիմա Սաշայի կողքով վազում էր դեկանը. նիհար շիկավուն գայլ էր՝ ասես խանձված մռութով: Ու նաեւ վազելու տարօրինակ ոճ ուներ. Սաշան նկատեց, որ շորորավազք է:

- Պա՛վել Վասիլեւիչ,- ոռնաց նա՝ վերջապես հիշելով հայրանունը:

«Խըռ՛ռ՛ռ՛-ո՛ւո՛ւո՛ւ-վի՛հի՛...»- պես բան ստացվեց, բայց դեկանը որսաց իր հայրանունն ու, որքան թույլ էր տալիս չծռվող վիզը, բարեկամաբար շրջեց մռութը:

- Ես ձեր ֆակուլտետում եմ սովորում, Պա՛վել Վասիլեւիչ,- չգիտես ինչու տեղեկացրեց Սաշան:

- Այո՞: Հետաքրքիր է,- արձագանքեց դեկանը,- ես էլ նայում եմ՝ ծանոթ մռութ է: Սեսիան ո՞նց ես հանձնել:

- Նորմալ,- պատասխանեց Սաշան,- մենակ ֆիզիկայից երեք է:

Երկուսն էլ բարձր ցատկեցին, որ անցնեն երկարուկ ջրափոսը, փափուկ վայրէջք կատարեցին մյուս կողմում ու սլացան առաջ:

- Իզո՛ւր,- նկատեց դեկանը,- ֆիզիկա պետք է իմանալ: Հիմքերի հիմքն է:

Նա քրքիջի նման խռպոտ կաղկանձի մի շարք արձակեց ու, պոչը նավախելի դրոշի պես ցցած, չքացավ առջեւում: «Դե գնա դու էլ, քո ֆիզիկայով»,- մտածեց Սաշան:

Կողքից սլացավ աշխարհում ամեն ինչ փաթթած գիպսե ժամապահը, հետո՝ «Միչուրինի կոլխոզ» գրությամբ ցուցանակը, եւ ահա հեռվում վառվեցին Կոնկովոյի հատուկենտ լույսերը:

Գյուղը լավ էր պատրաստվել ընդունելությանը: Գյուղն ինչ-որ բանով բազմաթիվ անջրաթափանց հատվածախցերից բաղկացած նավ էր հի-

շեցնում. երբ վրա էր հասնում գիշերը, եւ ընդամենը երեք փողոցից կազմված գյուղ էր խուժում խավարը, տներն անթափանց գոցվում էին ներսից եւ իրարից անկախ իրենց մեջ պահպանում բանական կյանքի դեղին էլեկտրական շողարձակումը: Այդպես էլ գայլերին դիմավորեց Կոնկովոն՝ դեղին վարագուրած պատուհաններով, լռությամբ, ամայությամբ ու յուրաքանչյուր մարդկային կացարանի ինքնավարությամբ. ոչ մի գյուղ էլ չկար արդեն, սերտ շղված լուսաբծեր էին՝ համաշխարհային խավարում:

Երկարուկ գորշ ստվերները սլացան գլխավոր փողոցով ու վազքի իներցիան մարելով՝ շրջան արեցին ակումբի առաջ: Երկու գայլեր առանձնացան ոհմակից ու անհետացան տների արանքում, մյուսները նստոտեցին հրապարակի մեջտեղը. Սաշան էլ նստեց շրջանի մեջ ու մի անորոշ զգացումով նայեց ակումբին, ուր բոլորովին վերջերս պատրաստվում էր գիշերել, որի մասին արդեն հասցրել էր մոռանալ ու որի մոտ նորից հայտնվել էր անսպասելի հանգամանքներում: «Տես կյանքում ինչե՞ր են լինում»,- գլխի մեջ ասացինչ-որ մեկի իմաստուն ձայնը:

- Լե՛նա, ո՞ւր գնացին...,- շրջվեց Լենայի կողմը:

- Հիմա կգան,- կտրեց Լենան,- սո՛ւս:

Դեռ Կոնկովոյին մոտենալիս լուսինն անցել էր երկար, պատառոտված ամպի ետեւը, ու հիմա հրապարակը միայն թիթեղյա կոնի տակ կախված ու քամուց ցնցվող լամպն էր լուսավորում: Ծուրջը նայելով՝ Սաշան պատկերը չարագուշակ ու սքանչելի գնահատեց. պողպատագույն մարմիններն անշարժ նստել էին ամայի, մրցասպարեզ հիշեցնող տարածության շուրջը. նրանց բարձրացրած փոշին իջնում էր, շողում էին աչքերն ու ժանիքները, իսկ հրապարակը բոլորած ներկած, հեռուստատեսային ալեհավաքներով ու հավաբներով ծեփված տնակները, գողացված թիթեղից սարքած ավտոտնակներն ու ակումբի ծուռտիկ պարթենոնը, որի առաջ ոչ մի տեղ էր դեգերում կարճլիկ առաջնորդը, նույնիսկ հրապարակի քառասուն կլոր մետրերին կենտրոնացած բեմանկար չէին թվում, այլ բեմանկարի ծաղրանմանակում:

Անցավ լռության ու անշարժության մի քանի րոպե: Հետո ինչ-որ բան հայտնվեց գլխավորից բաժանվող նեղլիկ փողոցի կողմից: Սաշան երեք գայլային ուրվապատկեր տեսավ, որ սնգսնգալով մոտենում էին հրապարակին: Գայլերից երկուսը ծանոթ էին՝ Իվան Սերգեեւիչն ու միլիցիոները, իսկ նրանց արանքի երրորդը՝ ոչ: Սաշան առավ նրա հոտը՝ ինչ-որ ինքնահավանությամբ ու, միեւնույն ժամանակ, վախով լեցուն, եւ մտածեց՝ ո՞վ կարող է լինել:

Գայլերը մոտենում էին: Միլիցիոները մի քիչ հետ էր մնացել, հետո թափ առավ ու կրծքով խփվեց երրորդին՝ նրան հրելով շրջանի կենտրոնը, ինչից հետո նա ու Պավել Սերգեեւիչը նստոտեցին իրենց համար պահած տեղերում: Շրջանը փակվեց, իսկ կենտրոնում արդեն անծանոթ գայլն էր:

Գայլապետը ծանր նայեց միլիցիոներին:

- Վե՛րջ տուր,- կաղկանձեց:- Էդ ի՞նչ պահվածք է: Սա քեզ համար հարյուր ութ բաժանմունքը չի:

Միլիցիոները կախեց մռութը: Սաշան այդ ընթացքում հոտոտեց անծանոթին. այնպիսի տպավորություն էր թողնում, ինչը մարդկային համարժեքով կարող էր թողնել հիսունամյա տղամարդը՝ դեպի ցած լայնացող կոնաձեւ, լկտի ու ճարպոտ դեմքով, եւ, դրա հետ միասին, թեթեւ ու մի տեսակ օդով փչված:

Անծանոթ գայլը ծուռ նայեց իրեն հրած գայլին, հետո անվստահ ուրախությամբ ասաց.

- Այսպե՛ս: Գնդապետ Լեբեդենկոյի ոհմակը՝ ողջ կազմով: Եվ ինչ են կամենո՞ւմ: Ինչի համար է այս ողջ խանդավառությունը: Գիշերը, շրջանը...

- Ուզում ենք խոսել քեզ հետ, Նիկոլա՛յ,- պատասխանեց գայլապետը:

- Հաճույքով,- պատասխանեց Նիկոլայը,- միշտ պատրաստ եմ... Այ, օրինակ, կարելի է խոսել իմ վերջին գյուտի մասին: Խաղ է՝ զարգացած գեղագիտական զգացում ունեցողների համար: Օճառի պղպջակների խաղ եմ անվանել: Գիտես, որ խաղերը միշտ էլ սիրել եմ, իսկ վերջին ժամանակներս...

Սաշան հանկարծ նկատեց, որ Նիկոլայի ասածին չի հետեւում, այլ նրան, թե ինչ արագ է խոսում, ամեն հաջորդ բառը հեծնում էր նախորդին, ու թվում էր՝ բառերն օգտագործում է իրեն բնավ դուր չեկող ինչ-որ բանից պաշտպանվելու համար. ասենք, այդ բանը սանդուղքով մագլցելիս լիներ վեր, իսկ Նիկոլայը (Սաշան, չգիտես ինչու, պատկերացրեց նրա մարդկային տարբերակը), ներքեւում կանգնած՝ նրա վրա շպրտեր ձեռքն ընկած իրերը:

- ...ստեղծեցի տեղի ունեցող կլոր ու փայլուն մոդելը:

- Իսկ ի՞նչն է այդ խաղի էությունը,- հարցրեց գայլապետը,- պատմիր: Մենք էլ ենք խաղեր սիրում:

- Պարզ բան է: Վերցնում ես որեւէ միտք, դրանից օճառի պղպջակ է փչվում: Ցույց տա՞մ:

- Ցույց տուր:

- Օրինակ...,- Նիկոլայը միտք արեց եւ ասաց:- Վերցնենք ամենամոտը՝ դուք ու ես:

- Մենք ու դու,- կրկնեց գայլապետը:

- Այո՛: Դուք նստած եք շուրջը, իսկ ես կանգնած եմ կենտրոնում: Դա այն է, ինչից փչելու եմ պղպջակը: Եվ այսպես...

Նիկոլայը պառկեց փորին ու թուլացած դիրք ընդունեց:

- ...եւ այսպես, դուք կանգնած եք, իսկ ես պառկած եմ կենտրոնում: Դա ի՞նչ է նշանակում: Նշանակում է, որ իմ կողքով լողացող իրականության որոշ կողմեր կարող են մեկնաբանվել այնպես, որ ես բավական կոպիտ դուրս եմ բերվել տնից, իբր բերվել ու իբր դրվել իբր գայլերի իբր շրջանի կենտրոնում: Հնարավոր է՝ երազ եմ տեսնում, հնարավոր է՝ ինքս ինչ-որ մեկի երազն եմ, բայց անկասկած է մեկ բան՝ ինչ-որ բան կատարվում է: Եվ այսպես, մենք հատեցինք վերին շերտը, ու պղպջակը սկսեց փչվել: Զբաղվենք տեղի ունեցողի ավելի նուրբ հատվածներով, ու կտեսնեք, թե ինչ սքանչելի գույներ են անցնում նրա նրբացող պատերով: Ինչպես տեսնում եմ ձեր մռութներից՝ բերել եք ծանծրալի կշտամբանքների սովորական հավաքածուն: Կարիք չկա, որ լսեմ ձեզ, հասկանալու համար, թե ինչ կարող եք ասել: Թե՝ ես գայլ չեմ, խոզ եմ. լափում եմ աղբանոցում, ապրում եմ անտոհմ շան հետ եւ այլն: Ձեր կարծիքով՝ դա ստորացուցիչ է: Իսկ այդ կիսախելագար վազվզոցը, որով զբաղված եք, ձեր կարծիքով՝ վեհ է: Բայց այ հիմա իմ պղպջակի պատերին արտացոլվում են կատարելապես միանման գորշ մարմիններ,- ձեզնից յուրաքանչյուրի եւ իմը,- ու նաեւ արտացոլվում է երկինքը, եւ, ազնիվ խոսք, այնտեղից նայելիս շատ նման կլինեն եւ՛ գայլը, եւ՛ անտոհմը, եւ այն ամենը, ինչով նրանք զբաղված են: Դուք գիշերով վազում եք ինչ-որ տեղ, իսկ ես հին թերթերի վրա պառկած եմ իմ աղբանոցում, ըստ էության, չնչին տարբերություն է: Ընդ որում, եթե հաշվարկի կետ ընդունենք ձեր շարժունակությունը,- ուշադրություն դարձրեք սրան,- կստացվի, որ իրականում վազում եմ ես, իսկ դուք դոփում եք տեղում:

Նա լպստեց շրթունքներն ու շարունակեց.

- Ահա եւ պղպջակը կիսով պատրաստ է: Հետո դուրս է լողում ձեր գլխավոր մեղադրանքը՝ որ խախտում եմ ձեր օրենքները: Ուշադրություն դարձրեք՝ ձե՛ր, ոչ թե իմ: Եթե ես կապված էլ եմ օրենքներով, ապա՝ սեփա-կա՛ն, ու համարում եմ, որ դա իմ իրավունքն է՝ ընտրել՝ ինչին եւ ինչպես ենթարկվեմ: Իսկ դուք ուժ չունեք ինձ թույլատրելու: Բայց որպեսզի ձեր աչքին ապուշ չերեւաք, ձեզ հավատացնում եք, թե իմ նմանների գոյությունը կարող է ինչ-որ կերպ վնասել:

- Այ հենց այստեղ նշանին խփեցիր,- նկատեց գայլապետը:

- Ինչ կա որ, չեմ ժխտում, որ,- տեսականորեն,- կարող եմ ձեզ ինչ-ինչ

տհաճություններ պատճառել: Բայց եթե նման բան լինի, ինչու դա յուրատեսակ տարերային աղետ չհամարեք: Եթե ձեզ սկսի ծեծել կարկուտը, կարծում եմ՝ նրան խրատ տալու փոխարեն, կփորձեք թաքնվել: Իսկ մի՞թե ես, վերացարկման տեսանկյունից, բնության երեւույթ չեմ: Իրոք, ստացվում է, որ ես իմ խոզությամբ, ինչպես ասում եք, ուժեղ եմ ձեզնից, որովհետեւ ե՛ս չեմ գալիս ձեզ մոտ, դուք եք գալիս ինձ մոտ: Եվ դա արդեն իրողություն է: Տեսեք՝ ինչպես է մեծանում պղպջակը: Հիմա մնացել է վերջնականապես փչենք: Ինձ ծանձրացրել են այս գիշերային այցելությունները: Դեռ ոչինչ, երբ մեկական էիք գալիս. հիմա դուք ողջ ոհմակով եք հայտնվել: Բայց քանի որ այդպես է ստացվել, եկեք մեկընդմիշտ պարզենք մեր հարաբերությունները: Իրական ինչո՞վ կարող եք ինձ խանգարել: Ոչնչո՛վ: Սպանել չեք կարող. ինքներդ գիտեք՝ ինչու: Համոզել՝ նույնպես, դրա համար, պարոդո՛ն, բավարար չափով խելացի չեք: Արդյունքում մնում են միայն ձեր եւ իմ բառերը, իսկ պղպջակի պատերին դրանք համարժեք են: Պարզապես իմոնք նրբագեղ են, բայց դա, ի վերջո, ճաշակի հարց է: Իմ կարծիքով, իմ կյանքը մի կախարդական պար է, իսկ ձերը՝ անիմաստ վազք մթան մեջ: Ուստի, ավելի լավ չի՞, որ շուտ բաժանվենք: Ահա պղպջակը պոկվեց ու թռչում է: Ինչպե՞ս էր:

Քանի դեռ Նիկոլայը, պոչն ու առջեւի թաթը թափահարելով, կաղկանձում էր, գայլապետը լուռ լսում էր նրան՝ նայելով իր դիմացի փոշուն ու երբեմն գլխով անելով: Հետո դանդաղ բարձրացրեց մռութը, միաժամանակ ամպի տակից դուրս եկավ լուսինը, ու Սաշան տեսավ՝ ինչպես է շողում նրա ժանիքների վրա:

- Քեզ, Նիկոլա՛յ, ըստ երեւույթին թվում է՝ քո աղբանոցում ելույթ ես ունենում թափառական շների առաջ: Անձամբ ես չեմ պատրաստվում կյանքի վերաբերյալ վիճել քեզ հետ: Ու չգիտեմ՝ քեզ ով է այցելել,- գայլապետը նայեց մյուս գայլերին,- դա ինձ համար նորություն է: Հիմա մենք գործով ենք եկել:

- Ի՞նչ գործով:

Գայլապետը դարձավ շրջանին:

- Ո՞ւմ մոտ է նամակը:

Շրջանից դուրս եկավ ջահել գայլուհին,- Սաշան ճանաչեց Օտար լեզուների Տանյային,-ու գալարաձեւ մի թուղթ գցեց երախից:

Գայլապետը թուղթը բացեց թաթով, որը մի պահ մարդկային ափ դարձավ, ու կարդաց.

- «Հարգելի խմբագրություն...»:

Նիկոլայը, որ մինչ այդ պոչն էր թափ տալիս, անշարժացավ:

- «Ձեզ է գրում Կոնկովո գյուղի բնակիչներից մեկը: Մեր գյուղը Մոսկվայից հեռու չի, իսկ լրիվ հասցեն նշված է ծրարի վրա: Անունս չգրելու պատճառը պարզ կդառնա շարունակությունը կարդալուց:

Վերջին ժամանակներս մեր մամուլում մի շարք հրապարակումներ եղան երեւույթների մասին, որոնք նախկինում անխտիր ժխտվում էին գիտության կողմից: Այդ առումով ցանկանում եմ ձեզ տեղեկացնել մի զարմանալի երեւույթի մասին, որը գիտական տեսանկյունից զգալիորեն հետաքրքիր է ի թիվս համընդհանուր ուշադրության արժանացած այնպիսի երեւույթների, ինչպիսիք են ռենտգենյան տեսողությունը կամ ասորական մերսումը:Հայտնածս ձեզ կարող է կատակ թվալ, ուստի միանգամից ասեմ, որ այդպես չէ:

Դուք, հավանաբար, մեկ անգամ չեք հանդիպել «վերվոլֆ» բառին, ինչը նշանակում է մարդ, որը կարողանում է վերածվել գայլի: Այսպես, ուրեմն, այդ բառի տակ իրական բնական երեւույթ է: Կարելի է ասել, որ դա հնագույն ավանդույթներից մեկն է, որ հրաշքով պահպանվել է մինչեւ մեր ժամանակները: Մեր գյուղում է ապրում Նիկոլայ Պետրովիչ Վախրոմեեւը՝ համեստագույն ու բարի մի մարդ, որն օժտված է այդ հնագույն ունակությամբ: Թե ինչ է այդ երեւույթի էությունը, գուցե միայն նա կարողանա պատմել: Ես ինքս էլ չէի հավատա նման բաների հնարավորությանը, եթե պատահմամբ ականատես չլինեի, թե Նիկոլայ Պետրովիչը, գայլի վերածվելով, ինչպես վայրի շների ոհմակից փրկեց մի փոքրիկ աղջկա...

- Սա սո՞ւտ է, թե՞ պայմանավորվել էիր ընկերներիդ հետ,- ընդհատելով՝ հարցրեց գայլապետը:

Նիկոլայը չպատասխանեց, իսկ գայլապետը շարունակեց կարդալ.

- «Ես Նիկոլայ Իվանովիչին խոսք եմ տվել, որ ոչ մեկին չեմ պատմի տեսածս, բայց խախտում եմ խոստումս, քանզի գտնում եմ, որ անհրաժեշտ է ուսումնասիրել այդ զարմանալի բնական երեւույթը: Հենց տվածս խոստման պատճառով էլ չեմ գրում անունս, բացի այդ, խնդրում եմ չխոսել նամակիս մասին: Նիկոլայ Պետրովիչն ինքը կյանքում երբեք սուտ չի խոսել, ու չգիտեմ ինչպես եմ նայելու նրա աչքերին, եթե իմանա սրա մասին:

Խոստովանում եմ, որ գիտության զարգացմանն օժանդակելու ցանկությունից բացի, մի շարժառիթ էլ ունեմ: Բանն այն է, որ Նիկոլայ Պետրովիչը հիմա աղետալի վիճակում է. ապրում է չնչին թոշակով, որը բաժանում է աջ ու ձախ: Չնայած Նիկոլայ Պետրովիչն ինքը ոչ մի նշանակություն չի տալիս կյանքի այդ կողմին, նրա իմացության արժեքը ողջ, չեմ վախենում

ասել, մարդկության համար այնպիսին է, որ անհրաժեշտ է նրա համար գոյության լրիվ այլ պայմաններ ապահովել:

Նիկոլայ Պետրովիչն այնքան բարեհամբույր ու բարի մարդ է, որ, համոզված եմ, չի հրաժարվի գիտնականների ու լրագրողների հետ համագործակցելուց: Ներկայացնում եմ որոշ մանրամասներ, որ Նիկոլայ Պետրովիչը հայտնել է մեր զրույցների ընթացքում, մասնավորապես, մի շարք պատմական փաստեր...»:

Գայլապետը շրջեց թուղթը.

- Այսպե՛ս, այստեղ ոչ մի հետաքրքիր բան... զառանցանք է... ի՞նչ կապ ունի Ստենկա Ռազինը... ո՞ւր էր... Ահա՛.

- «Ի դեպ, վիրավորական է, որ այդ բուն ռուսական հասկացությունը սահմանելու համար մինչ օրս օտար բառ է օգտագործվում: Ես կառաջարկեի «վերվոլկ» բառը. ռուսական արմատը ցույց է տալիս երեւույթի ծագումը, իսկ ռոմանալեզու նախածանցն այն դնում է համաեվրոպական մշակութային համատեքստում»:

- Ու հենց այս վերջին արտահայտությունից,- եզրակացրեց գայլապետը,- վերջնականապես պարզ է դառնում, որ բարեհամբույր ու բարի Նիկոլայ Իվանովիչն ու Կոնկովոյի անհայտ բնակիչը նույն մռութն են:

Լռեցին: Հետո գայլապետը նայեց Նիկոլային:

- Կգա՞ն ախր,- տխուր ասաց նա:- Այնքան ապուշ են, որ կարող են հավատալ: Գուցեեւ արդեն այստեղ լինեին, եթե նամակը Իվանի մոտ չհայտնվեր: Բայց ուրիշ ամսագրերի էլ ես ուղարկել, չէ՞:

Նիկոլայը թաթը խփեց փոշոտ գետնին.

- Լսեք, ինչի՞ համար է այս դատարկաբանությունը: Այս բալագանը: Ես անում եմ այն, ինչ ճիշտ եմ համարում, չարժե ինձ համոզել, իսկ ձեր հասարակությունը, խոստովանեմ, ինձ այնքան էլ դուր չի գալիս: Ու եկեք սրանով ավարտենք:

Նա վեր կենալու շարժում արեց:

- Սպասի՛ր,- ասաց գայլապետը:- Մի շտապիր: Ցավով եմ ասում, Նիկոլա՛յ, բայց կարծես քո կախարդական պարն աղբանոցում այս անգամ կընդհատվի:

- Դա ի՞նչ է նշանակում,- ականջներն ամբարտավան ցցելով՝ հարցրեց Նիկոլայը:

- Նշանակում է, որ օճառի պղպջակները պայթելու սովորություն ունեն: Երբ ասում էիր, որ մենք քեզ չենք կարող սպանել, իրավացի էիր, բայց նրան նայիր:

Գայլապետը թաթով ցույց տվեց Սաշային: Սաշան ցնցվեց:

- Նրան չեմ ճանաչում,- ասաց Նիկոլայը: Նրա աչքերն իջան Սաշայի ստվերին: Սաշան էլ ներքեւ նայեց ու տեսավ այն, ինչն առաջ չէր նկատել. մնացած բոլորի ստվերները մարդկային էին, իսկ իրենը սովորական գայլի:

- Նորեկ է,- ասաց գայլապետը:-Այսօր օգնեցինք գայլ դառնա, ու մեր կարծիքով՝ նա կարող է զբաղեցնել քո անվանական տեղը ոհմակում: Եթե հաղթի քեզ: Հը, ո՞նց է:

Գայլապետի վերջին հարցն ակնհայտորեն ծաղրում էր Նիկոլայի բնութագրական ոռնոցը:

- Պարզվում է, հին օրենքների գիտակ ես,- պատասխանեց Նիկոլայը՝ ջանալով հեգնանքով կաղկանձել:

- Ինչպես եւ դու,- ասաց գայլապետը:- Դրանք չե՞ս պատրաստվում վաճառքի հանել: Միայն թե, այնուամենայնիվ, այնքան էլ խելոք չես: Ինքդ մտածիր. օրինակ, ո՞ւմ է հետաքրքիր, թե կանչը լսածը կարող է սպանել փոխակերպուկին ու գրավել նրա տեղը ոհմակում: Քեզ ո՞վ կվճարի դրա համար: «Օդային տրանսպորտ» թե՞րթը: Մեր գիտելիքների մեծ մասը մարդկանցից ոչ մեկին պետք չի:

- Փոքր մասն էլ կա,- քրթմնջաց Նիկոլայը՝ հայացքով շրջանը տնտղելով: Բայց ելք չկար. շրջանը փակ էր:

Սաշան վերջապես հասկացավ տեղի ունեցողի իմաստ: Պիտի կռվեր այդ ճարպակալած ծեր գայլի հետ:

«Բայց չէ որ ես ոչ մի կանչ էլ չեմ լսել,- մտածեց նա,- նույնիսկ չգիտեմ դա ինչ է»: Նայեց շուրջը. բոլորն աչքերը հառել էին իրեն: «Գուցե ասեմ ողջ ճշմարտությունը,- մտածեց նա,- հանկարծ ու բաց թողեն...»:

Հիշեց՝ ինչ էր զգում փոխակերպումից հետո, հիշեց՝ հենց նոր ինչպես էին միասին սլանում գիշերային անտառով ու ճանապարհով. նրա հետ երբեք այդպիսի բան չէր կատարվել: «Բայց չէ՞ որ դու ինքնակոչ ես: Ոչ մի հնար չունես»,- գլխում ասաց ինչ-որ մեկի ծանոթ ձայնը: Իսկ մյուս ձայնը՝ գայլապետինը, եկավ դրսից.

- Ինչ վերաբերում է քեզ, Սա՛շա, սա քո հնարավորությունն է:

Սաշան արդեն պատրաստվում էր բացել երախն ու ամեն ինչ խոստովանել, բայց հանկարծ թաթերն իրենք իրենց քայլ արեցին առաջ, ու նա հուզմունքից խռպոտած կաղկանձ լսեց.

- Ես պատրաստ եմ:

Հետո հասկացավ, որ հենց նոր խոսողն ինքն էր ու միանգամից հանգս-

տացավ: Ինչ-որ գայլային մաս վերցրեց նրա գործողությունների կառավարումն, ու բոլոր խնդիրները միանգամից չքացան:

Ոիմակը հավանություն տալով ոռնաց: Նիկոլայը դանդաղ Սաշային հառեց անփայլ դեղին աչքերը:

- Միայն թե նկատի ունեցիր, բարեկա՛մս, սա շատ փոքրիկ հնարավորություն է,- ասաց նա:- Չնչի՛ն: Ըստ երեւույթին, սա քո վերջին գիշերն է:

Սաշան ձայն չհանեց: Նիկոլայն առաջվա պես պառկած էր գետնին:

- Քեզ սպասում են, Նիկոլա՛յ,- մեղմ ասաց գայլապետը:

Նիկոլայը ծույլ բացեց երախն ու հանկարծ վեր թռավ, թաթերը շտկվելով՝ զսպանակի պես օդ նետեցին նրան, ու երբ կրկին իջավ, նրա մեջ արդեն ոչինչ խոշոր ու հոգնած շուն չէր հիշեցնում. դա իսկական գայլ էր՝ կատաղությամբ լեցուն եւ անվրդով. վիզը լարված էր, իսկ աչքերը նայում էին Սաշայի միջով:

Ոիմակի միջով նորից հավանության ոռնոց անցավ: Գայլերը շշուկով ինչ-որ բան էին քննարկում. նրանցից մեկը մոտ վազեց գայլապետին ու երախը մոտեցրեց նրա ականջին:

- Այո՛,- ասաց գայլապետը,- անկասկած այդպես է:

Նա դարձավ Սաշային:

- Ընդունված է, որ մարտից առաջ լեզվակռիվ լինի,- ասաց:- Ոիմակը պնդում է:

Սաշան թուքը կուլ տվեց ու նայեց Նիկոլային: Նա շարժվեց շրջանի սահմանով՝ աչքը Սաշայի թիկունքում գտնվող ինչ-որ բանից չկտրելով, ու Սաշան էլ քայլեց կենդանի պատի երկարությամբ՝ հետեւելով հակառակորդին. նրանք մի քանի պտույտ արեցին, ապա կանգ առան:

- Նիկոլա՛յ Պետրովիչ, դուք ինձ դուր չեք գալիս,- դժվարությամբ արտաբերեց Սաշան:

- Թե քեզ ինչ է դուր գալիս, լակո՛տ,- պատրաստակամ պատասխանեց Նիկոլայը,- հորդ կպատմես:

Սաշան զգաց, որ լարվածությունը թուլացավ:

- Երեւի,- ասաց նա,- ես համենայդեպս գիտեմ՝ նա ով է:

Արտահայտությունը, կարծես, ինչ-որ ֆրանսիական վեպից էր ու տեղին կլիներ, եթե ձախից հառներ լուսնալույսով ողողված Նոտր-Դամը, բայց դրանից լավն այդ պահին մտքին չեկավ:

«Ավելի հասարակ է պետք»,- մտածեց Սաշան ու հարցրեց.

- Իսկ ձեր պոչի տակն ինչի՞ է էդպես թաց:

- Մի Սաշա կար, ուղեղն եմ ցխել,- պատասխանեց Նիկոլայը:

Նորից շրջանի կենտրոնին մոտեցող դանդաղ, պարուրաձեւ պտույտներ արեցին՝ դեմ դիմաց մնալով:

- Աղբանոցում էդպիսի՛ բաներ են պատահում,- ասաց Սաշան,- իսկ ձեզ այնտեղի հոտերը չեն գրգռո՞ւմ:

- Ինձ քո հոտն է գրգռում:

- Համբերեք,- ասաց Սաշան,- քիչ մնաց:

Խոսակցությունը սկսել էր դուր գալ նրան: Նիկոլայը կանգ առավ: Սաշան էլ կանգ առավ ու կկոցեց աչքերը. լապտերի լույսը տհաճ ծակում էր:

- Խրտվիլակդ,- ասաց Նիկոլայը,- կդրվի էստեղի միջնակարգ դպրոցում, ու տակը պիոներ կընդունվեն: Կողքին էլ գլոբուս կլինի:

- Լա՛վ, եկեք վերջում «դու»-ի անցնենք,- ասաց Սաշան:- Եսենինին սիրո՞ւմ ես, Կո՛լյա:

Նիկոլայը պատասխանեց հանգուցյալ բանաստեղծի ազգանվան անպարկեշտ վերափոխումով:

- Իզո՛ւր: Մի հրաշալի տող հիշեցի նրանից,- շարունակեց Սաշան,- «Վնգստում ես ինչպես քած շունը լուսնի տակ»: Լավն է, չէ՞, ժլատ ու տարողունակ...

Նիկոլայը ցատկեց:

Սաշան բացարձակապես չէր պատկերացնում երկու փոխակերպուկ գայլերի կռիվը: Սակայն իրադարձությունների զարգացման հետ ինչ-որ ձեւով սկսեց հասկանալ: Երբ հակառակորդի հետ շրջան էին անում ու լեզվակռիվ տալիս, հասկացավ, որ դա արվում է, նախ, ավանդույթի համաձայն, ոհմակին զվարճացնելու համար. երկրորդ՝ որ ինչպես հարկն է ուսումնասիրեն իրար ու կռիվը սկսելու հարմար պահ ընտրեն: Սաշան վրիպում թույլ տվեց. շատ էր տարվել լեզվակռվով, ու հակառակորդը կիսախավարից անսպասելի ցատկեց նրա վրա, երբ Սաշային կուրացրել էր լապտերի լույսը:

Բայց հենց դա կատարվեց, հենց Նիկոլայի առջեւի թաթերն ու բաց երախը բարձր կախվեցին գետնի վրա, ինչ-որ բան փոխվեց. Սաշան արդեն դանդաղացրած էր տեսնում ցատկի շարունակությունը, ու քանի դեռ Նիկոլայի հետեւի թաթերը գետնին էին, հասցրեց գործողությունների մի քանի տարբերակ մտածել, ընդ որում՝ մտածելն էլ մի տեսակ տարօրինակ էր՝ հանգիստ ու հստակ: Սաշան մի կողմ թռավ. նախ հրամայեց մարմնին, հետո պարզապես հետեւում էր՝ ինչպես է կատարում հրամանը. մարմինը

սկսեց դանդաղ շարժվել, աստիճանաբար կտրվեց գետնից ու ցատկ արեց խտացած, գորշ օդի մեջ՝ խույս տալով վերեւից ընկնող մոխրագույն ծանրությունից:

Սաշան հասկացավ իր առավելությունը. ինքն ավելի թեթեւ ու շարժուն է: Փոխարենը՝ հակառակորդը փորձված էր եւ ուժեղ ու հաստատ ինչ-որ գաղտնի հնարքներ գիտեր: Սաշան հենց դրանից էր վախենում:

Վայրէջք կատարելով՝ Սաշան տեսավ, որ Նիկոլայը կողքանց պպզել ու իրեն է դարձնում մռութը: Սաշային թվաց, որ Նիկոլայի կողը բաց է, ու թռավ՝ բաց երախով նշան բռնելով բրդի ավելի բացգույն շերտին. հայտնի չէ՝ որտեղից, արդեն գիտեր, որ այդպիսի տեսք է ունենում խոցելի տեղը: Նիկոլայն էլ ցատկեց, բայց մի տեսակ տարօրինակ՝ հենց կողքանց էլ թռավ ու պտտեց մարմինը: Սաշան չէր հասկանում՝ ինչ է կատարվում. Նիկոլայի թիկունքը լրիվ անպաշտպան էր, ասես ինքն էր մարմինը հակառակորդի ժանիքների տակ դնում՝ օդում դանդաղ պտտվելով: Իսկ երբ հասկացավ, արդեն ուշ էր. կոշտ, պողպատե մտրակի պես պոչը դաղեց աչքերն ու քիթը՝ կուրացնելով ու, գլխավորը, հոտառությունից զրկելով նրան: Ցավն անտանելի էր, բայց Սաշան գիտեր՝ որեւէ լուրջ վնասվածք չի ստացել: Վտանգն այն էր, որ Սաշայի վայրկենական կուրությունը կարող էր բավականացնել Նիկոլային նոր՝ վերջին թռիչքի համար:

Ձգված թաթերին ընկնելով եւ արդեն մտածելով, որ կորած է, Սաշան հանկարծ հասկացավ, որ հիմա իր առաջ պետք է լինի թշնամու կողը կամ վիզը, ու մի կողմ ցատկելու փոխարեն, ինչպես ցավն ու բնազդն էին հուշում, առաջ նետվեց՝ դեռ ոչինչ չտեսնելով ու նույնպիսի վախ զգալով, ինչպես իր առաջին գայլային ցատկի ժամանակ՝ բացատից, ծառերի խավար արանքում: Որոշ ժամանակ թռչում էր դատարկության մեջ, հետո թմրած քիթը ինչ-որ տաք ու փափուկ բանի մեջ խրվեց, եւ այդ ժամանակ Սաշան պինդ սեղմեց ծնոտները:

Հաջորդ վայրկյանին նրանք արդեն կանգնած էին դեմ դիմաց, ինչպես կռվի ամենասկզբում: Ժամանակը նորից գտավ իր սովորական արագությունը: Սաշան թափ տվեց մռութը, որ ուշքի գա պոչի սարսափելի հարվածից հետո: Սպասում էր թշնամու նոր ցատկին, բայց հանկարծ նկատեց, որ նրա առջեւի թաթերը դողում են ու լեզուն կախվում է երախից: Այդպես մի քանի վայրկյան անցավ, հետո Նիկոլայն ընկավ կողի, ու վզի տակ սկսեց լճանալ մուգ բիծը: Սաշան ուզում էր առաջ գնալ, բայց որսաց գայլապետի հայացքն ու կանգ առավ:

Նայեց իր առջեւ մեռնող փոխակերպուկ գայլին: Նա մի քանի անգամ

ջղածգվեց, խաղաղվեց, ու աչքերը փակվեցին: Հետո դող անցավ մարմնով, բայց ոչ առաջվա պես. Սաշան պարզորոշ զգում էր, որ դողում է արդեն մեռած մարմինը, եւ դա անհասկանալի ու սարսափելի էր: Հետո պառկածի ուրվագծերը սկսեցին լղոզվել, վզի տակի բիծն անհետացավ, ու թաթերի հետքերով պատված գետնին հայտնվեց մի չաղ մարդ՝ անթեւ շապիկով ու վարտիքով. փորին պառկած՝ բարձր խռռացնում էր: Հանկարծ խռռոցն ընդհատվեց, նա շրջվեց կողքի ու ձեռքով այնպիսի շարժում արեց, ասես բարձն էր շտկում: Բայց ձեռքը դատարկությունն էր բռնում եւ, ըստ երեւույթին, այդ անսպասելիությունից նա արթնացավ: Աչքերը բացելով՝ նայեց շուրջն ու նորից փակեց: Հաջորդ վայրկյանին նորից բացեց ու այնպես սուր ոռնաց, որ դրանով, ինչպես մտածեց Սաշան, կարելի էր կարգաբերել ամենահոգեցունց միլիցիոներական շչակը: Ոռնալով վեր թռավ, անհեթեթ շարժումով ցատկեց մոտակա գայլի վրայից ու շարունակելով ոռնալ՝ սլացավ մութ փողոցով: Վերջապես անհետացավ շրջադարձից այն կողմ, եւ այնտեղ էլ ոռնոցը մարեց՝ վերածվելով ինչ-որ բանական աղաղակների. սակայն բառերը չէին հասկացվում:

Ոհմակը անզուսպ քրքջում էր: Սաշան նայեց իր ստվերին ու մռութի ձգված ուրվագծի փոխարեն տեսավ ծոծրակի կիսաշրջանը՝ ցցված մազափնջերով, եւ իր՝ մարդկային ականջների երկու ցցունքները: Հայացքը բարձրացնելով՝ նկատեց, որ գայլապետն ուղիղ իրեն է նայում:

- Հասկացա՞ր՝ ինչ եղավ,- հարցրեց նա:

- Կարծես թե հասկացա,- պատասխանեց Սաշան:- Նա որեւէ բան կհիշի՞:

- Չէ՛: Կյանքի մնացած մասում կհամարի, որ մղձավանջ է տեսել,- պատասխանեց գայլապետն ու դարձավ մյուսներին.

- Գնացի՛նք,- ասաց նա:

Վերադարձի ճանապարհը Սաշան չէր հիշում: Վերադառնում էին ինչ-որ ուրիշ ճանապարհով, ուղիղ անտառի միջով, այդպես ավելի կարճ էր, բայց նույնքան տեւեց, որովհետեւ ստիպված ավելի դանդաղ էին վազում, քան խճուղով:

Բացատում ծխում էին խարույկի վերջին ածուխները: Ուլունքներով կինը ննջում էր մեքենայի հողմապակուց այն կողմ. երբ գայլերը հայտնվեցին, բացեց աչքերը, ձեռքով արեց ու ժպտաց: Ճիշտ է, մեքենայից այդպես էլ դուրս չեկավ:

Սաշան տխրություն էր զգում: Մի քիչ խղճում էր ծեր գայլին, որին սպա-

նելով մարդացրեց, ու հիշելով լեզվակռիվը, հատկապես այն փոփոխությունը, որ Նիկոլայի հետ կատարվեց մարտից մի վայրկյան առաջ, համարյա համակրանք էր զգում նրա հանդեպ: Հետո փորձեց չմտածել տեղի ունեցածի մասին ու որոշ ժամանակ անց իսկապես մոռացավ նրան: Մռութը դեռ ցավից տնքում էր: Պառկեց խոտերին:

Որոշ ժամանակ աչքերը փակ պառկած էր: Հետո զգաց թանձրացած լռությունն ու բարձրացրեց մռութը. բոլոր կողմերից լուռ նրան էին նայում գայլերը:

Թվում էր՝ սպասում են ինչ-որ բանի: «Ասե՞մ»,- մտածեց Սաշան: Ու վճռեց:

Թաթերին կանգնելով՝ շրջան արեց, ճիշտ ինչպես Կոնկովոյում, միայն թե հիմա դիմացը հակառակորդ չկար: Միակ բանը, որ երբեմն հայտնվում էր, սեփական ստվերն էր՝ մարդկային ստվեր, ինչպես ոհմակի մյուս անդամների ստվերները:

- Մի բան եմ ուզում խոստովանել,- կամացուկ կաղկանձեց նա:- Ես խաբել եմ ձեզ:

Ոհմակը լուռ էր:

- Ես ոչ մի կանչ էլ չեմ լսել: Նույնիսկ չգիտեմ՝ դա ինչ է: Լրիվ պատահական եմ հայտնվել այստեղ:

Նա փակեց աչքերն ու սպասեց պատասխանի: Ու դեռ մի պահ էլ լռություն էր, հետո նրան հասավ խռպոտ հաչացող քրքիջի ու ոռնոցի ձայնը: Սաշան բացեց աչքերը:

- Ի՞նչ է պատահել,- տարակուսած հարցրեց նա:

Քրքիջի նոր պոռթկում: Վերջապես շուրջը խաղաղվեց, ու գայլապետն ասաց.

- Լսի՛ր,- ասաց նա,- հապա հիշիր՝ ինչպես հայտնվեցիր այստեղ:

- Մոլորվել էի անտառում,- պատասխանեց Սաշան:

- Դրա մասին չեմ ասում: Հիշիր՝ ինչի համար էիր եկել Կոնկովո:

- Հենց այնպես: Սիրում եմ քաղաքից դուրս գալ:

- Բայց ինչո՞ւ հենց այստեղ:

- Ինչո՞ւ: Հիմա՛... Հա՛, մի լուսանկար էի տեսել, որն ինձ դուր եկավ. գեղեցիկ տեսարան էր: Իսկ մակագրության մեջ ասվում էր, որ մերձմոսկովյան Կոնկովո գյուղն է: Միայն թե այստեղ ամեն ինչ ուրիշ էր...

- Իսկ որտե՞ղ տեսար լուսանկարը,- հարցրեց գայլապետը:

- Մանկական հանրագիտարանում:

Այս անգամ երկար ծիծաղեցին:

- Ե՞վ,- շարունակեց գայլապետը,- ինչի՞ էիր այնտեղ խցկվում:

- Գայլի...,- Սաշան հիշեց, ու դա լույսի բռնկման պես էր,- գայլի լուսանկար էի փնտրում: Արթնացա, ու չգիտես ինչու՝ ուզում էի գայլի լուսանկար տեսնեմ: Փնտրեցի բոլոր գրքերում: Ինչ-որ բան էի մտածում...Հետո մոռացա... Ուրեմն դա...

- Ճիշտ այդպես,- պատասխանեց գայլապետը:

Սաշան նայեց Լենային, որը մռութը թաղել էր թաթերի մեջ ու ցնցվում էր ծիծաղից:

- Բայց ինչո՞ւ միանգամից չասացիք:

- Ինչի՞ համար,- պատասխանեց գայլապետը. նա միակն էր, որ պահպանել էր հանգստությունը ընդհանուր ուրախության մեջ:- Կանչը լսելը գլխավորը չի: Դա քեզ փոխակերպուկ չի դարձնի: Գիտե՞ս իրականում երբ դարձար փոխակերպուկ:

- Ե՞րբ,- հարցրեց Սաշան:

- Երբ համաձայնեցիր կռվել Նիկոլայի հետ՝ իմանալով, որ հաղթանակի ոչ մի հույս չունես: Հենց այդ ժամանակ էլ փոխվեց քո ստվերը:

- Հա՛: - Հա՛:- Էդպես էլ կա,- վրահաս լռության մեջ հաստատեցին մի քանի ձայն:

Սաշան լուռ էր: Ստքերը անկանոն դեգերում էին: Հետո բարձրացրեց մռութն ու հարցրեց.

- Իսկ այդ ի՞նչ էլի քսիր էր, որ խմեցինք:

Ծուրջը այնպես քրքջացին, որ մեքենայի մեջ նստած կինն իջեցրեց ապակին ու դուրս հանեց գլուխը: Գայլապետն էլ էր մի կերպ դիմանում. դեմքին թառել էր ծուռ քմծիծաղը:

- Դուրն է եկել,- ասաց մյուսներին,- նրան էլի էլիքսիր տվեք:

Ու նույնպես քրքջաց: Ինչ-որ սրվակ ընկավ Սաշայի թաթերի տակ, նա կախեց մռութն ու լարվելով կարդաց.

- «Անտառային ուրախություն»: Ատամի լուծույթ: Գինը՝ 92 կոպեկ:

- Պարզապես կատակ է,- ասաց գայլապետը:- Բայց եթե իմանաս ի՞նչ տեսք ունեիր, երբ կուլ էիր տալիս... Հիշի՛ր. փոխակերպուկ գայլը վերածվում է մարդու ու հակառակը իր ցանկությամբ, ուզածդ ժամանակ ու ցանկացած տեղ:

- Բա կովե՞րը,- հիշեց Սաշան՝ արդեն ուշադրություն չդարձնելով ծիծաղի նոր պայթյունին:- Կոնկովո վազելիս ասացիք, որ...

Խոսքը չավարտած՝ թափ տվեց թաթը:

Գայլերը ծիծաղելով ցրվեցին բացատում ու պառկոտեցին բարձր, թավ

խոտերի մեջ: Գայլապետն առաջվա պես կանգնած էր Սաշայի դիմաց:

- Մի բան էլ ասեմ,- ավելացրեց նա,- պետք է հիշես, որ միայն փոխակերպուկներն են իրական մարդ: Եթե նայես քո ստվերին, կտեսնես, որ այն մարդկային է: Իսկ եթե քո գայլի աչքերով նայես մարդկանց ստվերներին, կտեսնես, որ դրանք խոզերի, աքլորների ու դոդոշների ստվերներ են...

- Սարդեր, ճանճեր ու չղջիկներ էլ են լինում,- ասաց կողքին հայտնված Իվան Սերգեեւիչը:

- Ճիշտ է: Ու նաեւ՝ կապիկներ, ճագարներ ու այծեր: Ու նաեւ...

- Ի՞նչ ես վախեցնում տղային,- կտրեց Իվան Սերգեեւիչը,- ախր ոտի վրա հորինում ես: Սա՛շա, մի՛ լսիր նրան:

Երկու տարեց գայլերը ծիծաղեցին՝ նայելով իրար, եւ Իվան Սերգեեւիչը վազեց առաջ:

- Նույնիսկ եթե հորինում էլ եմ,- նկատեց գայլապետը,- Մեկ է, դա ճիշտ է:

Նա շրջվեց, որ հեռանա, բայց կանգ առավ՝ նկատելով Սաշայի հայացքը:

- Ինչ-որ բա՞ն ես ուզում հարցնել:

- Հա՛,- պատասխանեց Սաշան:- Ովքե՞ր են վերվոլկներն իրականում:

Գայլապետն ուշադիր նայեց նրա աչքերին ու մի քիչ բացեց երախը:

- Իսկ ինչո՞ւ չսկսես հարցից, թե իրականում մարդի՞կ ով են:

Մենակ մնալով՝ Սաշան պառկեց խոտերին ու մտքի մեջ ընկավ: Մոտեցավ Լենան ու տեղավորվեց կողքին:

- Հիմա լուսինը կհասնի զենիթին,- ասաց նա,- հապա վերեւ նայիր:

Սաշան բարձրացրեց հայացքը:

- Սա զենի՞թն է:

- Սա առանձնահատուկ զենիթ է,- պատասխանեց Լենան,- լուսնին ոչ-թե նայել է պետք, այլ լսել: Փորձի՛ր:

Սաշան ականջ դրեց: Սկզբում լսելի էր միայն տերեւները շարժող քամին ու միջատների ճթճթոցը, հետո ականջին հեռավոր երգեցողության թե երաժշտության նման մի բան հասավ. այդպես լինում է, երբ հեռվից ինչ-որ գործիք, թե ձայն է հնչում: Որսալով՝ Սաշան այդ ձայնն առանձնացրեց մյուսներից, ու հնչումն սկսեց ուժգնանալ, որոշ ժամանակ անց այնքան բարձրանալով, որ հնարավոր լիներ լսել առանց լարվելու: Մեղեդին ասես ուղիղ լուսնից էր բխում ու նման էր մինչեւ փոխակերպում բացատում հնչող երաժշտությանը: Միայն թե այն ժամանակ սպառնալի ու մռայլ էր թվում, իսկ հիմա, հակառակը, հանգստացնում էր:

Մեղեդին, որ լսում էր Սաշան, հրաշալի էր, բայց նրա մեջ ինչ-որ տհաճ պարապներ կային, ինչ-որ դատարկություններ: Հանկարծ հասկացավ, որ դրանք կարող է լցնել իր ձայնով ու ոռնաց. նախ՝ կամացուկ, հետո ավելի բարձր՝ երկինք հառելով երախն ու մոռանալով մնացած ամեն ինչի մասին. ու նրա ոռնոցին ձուլվելով՝ մեղեդին կատարյալ դարձավ:

Սաշան նկատեց, որ իր ձայնի կողքին ուրիշներն էլ հայտնվեցին՝ լրիվ տարբեր էին իրարից, բայց բոլորովին չէին խանգարում իրար: Կարծես մի քանի բույսեր էին պատատվում ընդհանուր առանցքի կամ թելի շուրջը, ու ոչ մեկը նման չէր մյուսին:

Ծուտով արդեն ողջ ոհմակն էր ոռնում: Սաշան հասկանում էր եւ յուրաքանչյուր ձայն լեցնող զգացումները, եւ ընդհանուր ողջ լսածի իմաստը: Ամեն մի ձայն իրենն էր ոռնում. Լենայինը՝ ինչ-որ թեթեւ բանի մասին՝ տանիքի թիթեղին խփվող անձրեւի կաթիլների պես. գայլապետի ցածր բասը՝ անչափելի մթին անդունդների մասին, որոնց վրա ցատկելով սավառնում էր. գայլածագերի դիսկանտը՝ ուրախության մասին, որ առավոտյան առավոտ է լինում, իսկ երեկոյան՝ երեկո, ու նաեւ՝ մի անհասկանալի թախծի մասին, որ ուրախության պես է. այդ երաժշտությունը լսելով՝ Սաշան հանկարծ կյանքում առաջին անգամ զգաց՝ որքան անորսալի ու սքանչելի է աշխարհը, որի կենտրոնում պառկած է փորի վրա:

Երաժշտությունը ավելի ու ավելի էր ուժգնանում, լուսինը հսկայանում էր՝ ծածկելով երկինքը,- ու մի պահի փլվեց Սաշայի վրա, կամ էլ նա կտրվեց գետնից եւ ընկավ լուսնի մոտեցող երեսին:

Ուշքի գալով՝ նա թույլ ցնցումներ ու շարժիչի գվվոց զգաց: Բացեց աչքերն ու տեսավ, որ կիսապառկած է մեքենայի ետեւի նստիքին, ոտքերի տակ ուսապարկն է, կողքին քնած է Լենան՝ գլուխն իր ուսին դրած, իսկ առջեւում ղեկի մոտ նստած է գայլապետը՝ զրահատանկային զորքերի գնդապետ Լեբեդենկոն: Սաշան ուզում էր ինչ-որ բան ասել, բայց գնդապետը ժպտաց հետահայաց հայելու մեջ ու մատը տարավ շրթունքներին. այդ ժամանակ Սաշան շրջվեց դեպի պատուհանը:

Մեքենաները, երկար շղթա կազմած, սլանում էին խճուղով: Վաղ առավոտ էր, արեւը հենց նոր էր բարձրացել, եւ ասֆալտն անվերջանալի վարդագույն ժապավեն էր թվում: Հորիզոնին հառնում էին մոտեցող քաղաքի խաղալիք-շենքերը:

Լյուդմիլա ՈՒԼԻՑԿԱՅԱ

ԳԱՋԱՆԸ

Մի տարվա մեջ Նինային լքեցին մայրն ու ամուսինը. ո՞ւմ համար եփեսթափես, ո՞ւմ համար ապրես: Հիմա նա արտաքսյալ Եվայի պես նայում էր իր անցյալին, եւ այնտեղ՝ անցյալում, ամեն ինչ սքանչելի էր թվում, իսկ բոլոր վիրավորանքներն ու ստորացումները խունացել էին անհետանալու չափ: Նույնիսկ այն մարտական խաչմերուկը մոռացավ, որտեղ կանգնած էր ամուսնության բոլոր տասնմեկ տարիներին, երկու սիրելի մարդկանց ատելության կրակի տակ:

Հիմա, ժամանակ անց, այդ ամենը հիշվում էր ավելի շուտ որպես բարդ խարակտերների դրամա, ու ոչ որպես կենցաղային խայտառակ մանրախնդրություն, անպատշաճ փոխադարձ խայթոցներ, եռման աստիճանի հասնող գրգռվածություն, ու կատաղի սկանդալներ, որ լինում էին ամեն անգամ, երբ Նինային հաջողվում էր նրանց ի մի բերել սպիտակ սփռոցի շուրջը՝ անմիանալին միավորելու խելագար հույսով: Երբեք, երբեք չէր ապրել Նինան դրախտում, գուցե թե միայն վաղ երիտասարդության օրերին, երբ դեռ սովորում էր կոնսերվատորիայում, չէր ճանաչում Սերյոժային ու նրան չէր պատահել առաջին դժբախտությունը: Բայց հիմա բոլորը մահացել են, կյանքն ասես օղակ էր դարձել, եւ անցյալը, լուսավորված երջանկության կինեմատոգրաֆիական լույսով, խժռել էր եւ՛ ամայի ներկան, եւ՛ որեւիցե իմաստից զուրկ ապագան:

Նա բոլոր մտքերով ու զգացումներով հիմա կապված էր բացառապես հանգուցյալների հետ, որոնք նրան էին նայում բոլոր պատերից: Մայրիկը՝ տավիղով, մայրիկը՝ փոքրիկ գլխարկով, մայրիկը՝ փոքրիկ կապիկը ձեռքին: Սերյոժան՝ երեխա ժամանակ, փայտե ձիուկով, Սերյոժան՝ թափանցիկ մազափնջով դպրոցական, Սերյոժան՝ քարե ուսերով առագաստանավորդ, նախավերջին Սերյոժան՝ ուսերին նստած այտերով, փորձառու, վտանգավոր, ու վերջինը՝ նիհար դեմք, ներս ընկած քունքեր, աչքերում՝ կասկած, թե կռահում: Կամ հասունացած միտք՝ այդպես էլ չարտահայտված: Եվ Մզիյա տատիկը, որ մահացել էր մինչեւ Նինայի ծնվելը, հինավուրց ու խիստ դեմքով, օրիորդական կլոր գլխարկով՝ մուգ քողի տակ, հիմա արդեն մոռացված երգերի նշանավոր կատարողը...

Համարյա երկու տարի է անցել մոր մահից, տասնմեկ ամիս՝ Սերյոժայի մահվանից հետո, ու ոչ մի կերպ չէր թեթեւանում, ավելի ու ավելի վատ էր:Չարչարում էին երազները: Ոչ թե մղձավանջներ, այլ ինչ-որ գորշ, հույլ ու խունացած պատկերներ՝ դարչնագույն ֆոնին, այնքան փուչ, որ երազ էլ չես կոչի: Նինան այդ աղոտ երազում իրեն ասում էր՝ արթնացի՛ր, արթնացի՛ր,- բայց փայլատ ոստայնը բաց չէր թողնում նրան, իսկ երբ վերջապես դուրս էր գալիս այնտեղից, իր հետ լույս աշխարհ այնպիսի՛ աննկարագրելի տխրություն էր բերում, չար, ինչպես ատամի ցավը:

Նինան կաթսայի պես իր մեջ եփում էր այդ գիշերային ապրումներն ու, վերջնականապես տանջահար, բողոքում ընկերուհիներին: Ընկերուհիները երկուսն էին՝ մեծը՝ Սուսաննա Բորիսովնան, չափազանց ուսյալ ու միստիկական օժտվածություն ունեցող մի տիկին, որ նույնիսկ ինչ-որ անտրոպոսոդիական ընկերության անդամ էր, իսկ կրտսերը՝ Տոմոչկան, հասարակ կին էր, նույնիսկ վախլուկ ու այնքան աստվածավախ, որ ընկերության տարիներին Նինան նույնիսկ անբարյացակամությամբ էր լցվել Աստծո հանդեպ, որն այդքան շատ էր պահանջում նրանից ու փոխարենը, ոչինչ, ոչինչ չէր տալիս: Եվ նույնիսկ այն քիչը, որ ի ծնե տրված էր Տոմոչկային՝ դժգույն սիրունիկությունը, նույնիսկ դա էր առնվել նրանից. մայրը երեխա ժամանակ եռման ջրով խաշել էր նրան, եւ աջ այտը խիստ տուժել էր այրվածքից: Երկու ընկերուհիներն էլ շատ էին օգնում Նինային ծանր պահերին, բայց չէին սիրում իրար, խանդում էին: Հեզ Տոմոչկան Սուսաննայի մասին խոսելիս լցվում էր անգույն չարությամբ. ավելի վառ զգացումների խառնվածքը չէր հերիքում: Վարդագունում էր ու ֆշշան ձայնով ասում՝ նա դեռ իրեն ցույց կտա, այ կհիշես ասածս, ուղղակի էությամբ եմ զգում նրա սատանայական գործերը... Սուսաննա Բորիսովնան Տոմոչկային կարծես ներողամիտ էր վերաբերվում, միայն թե ժամանակ առ ժամանակ հպանցիկ արտահայտվում էր նրա տգիտության, վայրի հեթանոսական մոլորությունների ու պարզունակության մասին: Ի դեպ ասած, Նինայի հանգուցյալ ամուսինը երկուսին էլ տանել չէր կարողանում. Տոմային ողորմելի էր համարում, իսկ Սուսաննա Բորիսովնային, նրա բացակայությամբ, բացառապես՝ «մադամ Գրիցացուեւա»:

Պարզունակ Տոմոչկան Նինայից տեղեկանալով նրա գիշերային տառապանքների մասին, հայտարարեց, որ ջերմեռանդ կաղոթի նրա համար, իսկ Նինան անպայման պիտի հաղորդություն առնի, որովհետեւ այդ բոլոր փորձությունները նրան ուղարկվում են բացառապես Աստծուն դառնալու համար...

Սուսաննա Բորիսովնան, որը ինչ-որ առումով բժիշկ էր՝ կոսմետոլոգիական կաբինետ ուներ, Նինային խթանիչ ու քնաբեր նշանակեց, իսկ ծանր երազները բացատրեց նրա թանկ հանգուցյալների աստրալ մարմինների անլիարժեք քայքայումով, նրանց հետմահու ուղիների անբարենպաստ հանգամանքներով, ու Նինային խորհուրդ տվեց կանգնել ինքնակատարելագործման ճանապարհի վրա եւ այդ նպատակով բացառիկ ծանծրալի մի գիրք տվեց հոգեկան աստիճանակարգերի ու հոգեկան առումով դրանց ազդեցության մասին:

Դեղերը օգնեցին, թե Տոմոչկայի աղոթքները, բայց առաջին շրջանում նա սկսեց ավելի լավ քնել, գորշ-դարչնագույն ստվերներն այլեւս չէին հայտվում, բայց, տարօրինակ բան, երազին զգվելի գարշահոտ էր առնում: Նինան արթնանում էր իր անդենական ուժով սարսափեցնող անտանելի գարշահոտությունից, հետո նորից քնում: Զգացողություն հայտնվեց, որ տանն ինչ-որ մեկը կա՝ ստվեր, ուրվական, չար ոգի... Եվ այդ գարշահոտը ոչ մի հոտի նման չէր: Հավանաբար՝ այն քիմիական նյութերից, որոնցից մարդիկ խելագարվում են:

Մի քանի օր անց երազ եկած գարշահոտը կարծես նյութականացավ: Մի անգամ գործից տուն գալով՝ Նինան սուր կատվահոտ առավ, նողկալի էր, բայց դուրս չէր գալիս պատշաճ ռեալիզմի շրջանակներից: Նինան իր երկար ու զգայուն քթով շուտով գտավ գարշահոտության էպիկենտրոնը. Սերյոժայի հողաթափերն էին, որոնք այդ ամբողջ ժամանակ դրված էին դռան մոտ, ոտնամանների պահարանիկում: Նինան փոշով մանրակրկիտ լվաց հողաթափերը, բայց երեւի մի քանի աներես մոլեկուլ մնացել էր, ուստի ստիպված եղավ նաեւ դեզոդորանտով փչել բնակարանում: Բայց կատվահոտը, մեկ է, թափանցում էր լավանդայի ու հասմիկի հոտերի միջով: Նա զանգեց Սուսաննա Բորիսովնային ու տրտնջաց: Նա լռեց, լռեց, ապա անսպասելի ասաց.

- Գիտե՞ք, Նի՛նոչկա, պիտի թողնեք ծխելը:

- Ինչո՞ւ,- ապշեց Նինան:

- Ձեզ վրա միստիկական գրոհ է գնում, Նի՛նա, իսկ ծխելը բթացնում է միստիկական զգացողությունը,- բացատրեց Սուսաննա Բորիսովնան:- Ձեր բնակարանն անբարենպաստ է...

Անբարենպաստը նվազագույնն էր, որ կարելի էր ասել այդ բնակարանի մասին: Անիծված տեղ, երիցս անիծված տեղ. հենց սկզբից էլ նրա սրտով չէր: Սերյոժան հապճեպ որոշեց մայրիկի մահվանից անմիջապես հետո Բեգովոյի իրենց փոքրիկ, հարմարավետ բնակարանն ու մայրիկի մի-

սենյականոցը փոխանակել այս պալատներով, ու Նինան նրան հետ պահել չկարողացավ: Նա լսել անգամ չէր ուզում ոչ վերջին հարկի, ոչ առաստաղի կաթած ջրաբծերի մասին: Այդ տարի նրա գործերն այնքան լավ էին, որ թքած ուներ այդ ծակ տանիքի վրա ու պատրաստ էր նոր տանիք կապել գլխավերեւում: Ինչ արած, այդպիսի մարդ էր:

Կես տարում նա ամեն ինչ արեց ճիշտ այնպես, ինչպես մտածել էր. քանդեց պատերը, բնակարանի մի կեսի հատակը բարձրացրեց երեսուն սանտիմետրով՝ ոչ մեծ խոհանոցն ու սենյակներից մեկը վերածելով ճաշասրահի,- եւ նրանց ողջ կացարանն իրենից երկսրահ դահլիճ էր ներկայացնում, միջանցքամիներով, ցուրտ, իսկ ներսի դուռը տանում էր դեպի մեծ համակցված սանհանգույցը՝ Նինայի միակ սիրած տեղը ողջ բնակարանում: Հիմա նա այնտեղ փոքրիկ սեղան էր դրել եւ առավոտները սուրճ էր խմում՝ լոգարանի ու զուգարանակոնքի արանքում...

Հենց այդ անիծյալ բնակարանն էլ խժռեց Սերյոժայի ուժերը, կործանեց նրան: Նինան հատկապես բուխարին էր ատում: Տեխնիկական առումով չէր հաջողվել. ծխատարը պատողը ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու էր, ոչ թե վառարանագործ. ծուխը վայրկենապես լցվում էր ողջ բնակարանը ու հետո երկար լողում էր երդկիմի փերթերով: Սերգեյն այդպես էլ չհասցրեց վերակառուցել, որովհետեւ նորոգման ավարտին արդեն սկսվեցին անալիզները, ախտորոշումները, կոնսուլտացիաներն ու հիվանդանոցները...

Նա ընդամենը կես տարի տառապեց սրընթաց քաղցկեղով ու մահացավ՝ բժիշկներին թողնելով մասնագիտական տարակուսանքի մեջ. մետաստազներն ամբողջովին կերել էին նրան, սակայն առաջնային աղբյուրն այդպես էլ չգտան: Բայց Նինայի համար դա արդեն նշանակություն չուներ: Նա լրիվ մենակ մնաց, իսկ իր բնախոսական էությամբ տանել չէր կարողանում մենությունը, խելագարված ճանճի վիճակում էր, որի թեւերը պոկել են. պտտվում, պտտվում էր տեղում, իսկ աշխարհը փլվում էր ոտքերի տակ կամ ինչ-որ տեղ թռչում... Հիմա էլ այս սատանայությունը...

Սուսաննա Բորիսովնայի կանխատեսած միստիկական գրոհն իրեն ամենաստոր կերպով դրսեւորեց հաջորդ օրերից մեկում: Աշխատանքից գալով՝ Նինան թախտի հենց մեջտեղը, դեղնագործ հյուսածո ծածկոցի վրա, խիստ նյութական բնույթի մի նողկալի կույտ տեսավ: Բնակարանում այնպիսի զզվելի գարշահոտ էր, որ թվում էր նույնիսկ օդը երազներից ծանոթ անմարդկային տխրության նույն գորշադարչնագույն երանգն էր առել: Նինան գլուխը հենեց ձեռքին, կախեց իր տխուր կովկասյան մազերն ու

լաց եղավ: Երկար չլացեց, որովհետեւ եկավ Տոմոչկան: Տոմոչկան ախ արեց, իրար անցավ, մաքրեց կույտն ու բացատրեց ամենառացիոնալ կերպով.

- Օդանցքը բաց մի թող, տանիքից որեւէ անտուն կատու է մտել:

- Ի՞նչ կատու,- առարկեց Նինան:

- Ինչ, ինչ... Մեծ կատու, շատ մեծ կատու է կեղտոտել,- վստահ բացատրեց Տոմոչկան:

Գիտեր՝ ինչ է ասում. ամբողջ կյանքում կատու էր պահել:

Նինան լվաց ծածկոցը, լվաց հատակը, շնչելը հեշտացավ, բայց հոտը լրիվ չանցավ, ու նրանք գնացին գիշերելու Տոմոչկայի մոտ: Դուրս գալուց առաջ օդանցքները պինդ փակեցին:

Հաջորդ օրը, երբ Նինան աշխատանքից տուն եկավ, կույտը նախկին տեղում էր, ուղիղ ծածկոցի վրա: Օդանցքներն առաջվա պես փակ էին:

Իսկապես միստիկա էր: Ճիշտ էր Սուսաննա Բորիսովնան: Ոչ մի կատու փակ օդանցքից ներս չի խցկվի:

Նինան նորից անցավ լվացարարության, մի ամբողջ սրվակ դեզոդորանտ դատարկեց ու նյարդային դողից ցնցվելով՝ պառկեց պղծված անկողնուն: Հոտին սովորել էր, բայց հիմա էլ աղոտ, անորոշ աղբյուրից հնչող ձայներն էին խանգարում...

Հենց այսպես էլ խելագարվում են՝ հասկացավ Նինան:

Առավոտյան, աշխատանքի գնալիս պինդ փակեց օդանցքներն ու պատշգամբի դուռը:

Բայց տուն վերադառնալ չէր համարձակվում, գնաց Տոմոչկայի ետեւից, ու ժամը ինչին երկուսով եկան: Նինան բացեց կրկնափեղկ դռան բարդ կողպեքը, մտավ: Ետեւից՝ Տոմոչկան: Կատուն սպասում էր նրանց, ասես որոշել էր, որ ներկայանալու ժամանակը եկել է: Նստել էր բազկաթոռի մեջ, հսկայական, ինքնավստահ, լայնաթուշ մռութը դռան կողմը դարձրած: Նինան կամացուկ ախ արեց: Տոմոչկան կարծես նույնիսկ հիացած էր.

- Ա՛յ քեզ կատու:

- Ի՞նչ անենք,- շշուկով հարցրեց Նինան:

- Ո՞նց թե: Կերակրենք, իհարկե:

- Խելագարվե՞լ ես: Ախր էլ երբեք էստեղից չի գնա: Տես, էլի կեղտոտել է:- Նոր կույտը միջանցքի մեջտեղն էր:

Դա, իհարկե, բնավորություն է: Ու նշանառու աչք: Նա միշտ անսխալ կենտրոնն էր ընտրում:

- Նախ ուտելու բան տանք, հետո՝ կերեւա,- որոշեց Տոմոչկան:

Կատուն փափկամազ չէր, հակառակը՝ կատարելապես հարթ ու ասես ասֆալտե մորթով: Նստել էր անշարժ, գլուխը մի քիչ կախ, նրանց էր նայում հաստատուն գազանային հայացքով եւ, ըստ ամենայնի, իրեն մեղավոր չէր զգում:

- Ի՜նչ լկտին է,- զայրանում էր Նինան, բայց սառնարանից հանեց մի քանի օրվա ապուրի կաթսան, որը, հին սովորույթին ենթարկվելով, շարունակում էր եփել, երկու կոտլետ գցեց մեջն ու գցեց օջախին:

Հետո Տոմոչկան տաքացրած ապուրով թասը դրեց դռան տակ, ուղիղ կարպետին ու կանչեց «քը՛սս-քը՛սս»: Մարդկային լեզուն կատվին ծանոթ էր: Ծանր ցատկեց բազկաթոռից ու դանդաղ մոտեցավ թասին: Տեսքն ազդեցիկ էր: Եթե մարդ լիներ, կարելի կլիներ ասել, որ փորձված ծանրամարտիկի կամ ըմբշամարտիկի պես է քայլում՝ մկանների ծանրությունից, մարզական հոգնածությունից ու փառքից կորացած: Թասի առաջ կանգ առավ, հոտ քաշեց, նստեց ու մի ականջը գլխին սեղմած,- մյուսը, ճղճղված, լոշտակի պես կախվել էր,- արագ սկսեց լափել: Իսկ Տոմոչկան աղաչանքով համոզում էր.

- Կե՛ր, փի՛սո, կեր ու գնա: Գնա՛, գործ չունես էստեղ: Կեր ու գնա քեզ համար, խնդրում եմ:

Կատուն, լայն կուրծքը նրան դարձնելով՝ խելացի նայեց Տոմոչկային, հետո նորից մռութը թաղեց թասի մեջ: Այստեղ Տոմոչկան նրա առաջ բացեց մուտքի դուռն ու վճռական ասաց.

- Իսկ հիմա գնա:

Կատուն ամեն ինչ հրաշալի հասկանում էր, խաբս արեց դռան կողմը, հետո կտրուկ շրջվեց ոտնամանների պահարանիկի մոտ ու կայծակնային կիսաշրջան անելով բնակարանում՝ ծլկեց գրապահարանի տակ:

- Չի ուզում գնա,- տրտում ասաց Նինան:- Իզուր կերակրեցինք:

- Քը՛սս-քը՛սս,- կրքոտ ֆշշացնում էր Տոման, բայց կատուն չէր արձագանքում:

Նինան լոգասենյակից բերեց երկարակոթ խոզանակը ու չարացած խոթեց պահարանի տակ: Կատուն դուրս թռավ, մեկ-երկու անգամ պտույտ արեց բնակարանում, հետո անհետացավ թիկնակով խոհանոցի բարձրահարթակին հենած բազմոցի տակ: Նինան տնտղեց բազմոցի տակ: Հետո հետ քաշեց: Կատուն չկար: Անհետացել էր: Ընկերուհիներն իրար նայեցին:

Լուռ կանգնել էին, փորձելով հասկանալ՝ ինչ կատարվեց: Հետո Տոմոչ-

կան կռացավ ու ձեռքը զգույշ տալավ սալիկների վրայով: Թեթեւ սեղմեց: Տախտակը սահեց մի կողմ: Անցքը բացվում էր դեպի խոհանոցի տակ առաջացած դատարկությունը

- Այ թե որտեղ է ապրում,- ուրախացավ միամիտ Տոմոչկան,- իսկ դու ասում ես՝ միստիկա՛...

- Սարսափելի՛ է... Հիմա նրան էդտեղից չես քշի...

- Տախտակը հենց հիմա մեխենք,- հիմար վճռականությամբ վեր թռավ Տոման:

- Ի՞նչ ես ասում,- Նինան ուշքի եկավ,- բա որ էնտեղ սատկի՞: Պատկերացնո՞ւմ ես ինչ կկատարվի: Սատկած կատուն՝ տանը...

Ա՜խ, ողջ լիներ Սերյոժան, ողջ լիներ, այս ամենը չէր պատահի... Այս բոլոր հիմարությունները...

- Պետք է կատվախոտի կաթիլներ առնել, ահա թե ինչ է պետք: Կատվախոտով դուրս կքաշենք ու անցքը կմեխենք,- գոչեց Տոման:- Միայն թե շատ պիտի լինի:

Լիքը կատվախոտի լուծույթ առան, մի թասիկ լցրեցին ու պահ մտան: Տոմոչկան, պարզվեց, կատվային հոգու իսկական գիտակ էր. հինգ րոպեից կատուն դուրս եկավ սալիկի տակից, կայտառ մոտ վազեց թասիկին ու մի շնչում լակեց: Հետո թասիկից քայլեց իր անցքի կողմ՝ օրորվելով, ինչպես նավաստին տախտակամածին: Ոտնեոտ արեց, ակնհայտորեն կորցնելով ուղղությունը, անճարակ պտտվեց ու գնաց դեպի թախտ, որի վրա պահ էին մտել ընկերուհիները: Նինայի մեջ հումորի նշույլներ արթնացան.

- Հիմա ծխելիք կուզի...

Տոմոչկան, ծիծաղից շնչակտուր, հրամայեց.

- Վե՛րջ: Բռնում ու դուրս ենք հանում: Եվ անմիջապես մեխում ենք անցքը:

Նա նորից ֆշշացրեց իր «քըսս»-ը, կատվին պարզեց ձեռքերը, բայց կատուն մի կողմ թռավ: Նինան բռնեց նրան, կատուն դուրս պրծավ ու ծանր շմփաց հատակին: Հարբածը հարբած էր, բայց չէր հանձնվում: Ըստ ամենայնի, փորձում էր հասնել անցքին: Նինան կապտած մատներով սեղմեց տեղաշարժված տախտակը:

- Տո՛մա, լոգարանից վերցրու տուփը,- բղավեց նա, բայց կատուն կարծես հասկացավ նրանց մտադրությունն ու որոշեց նահանջել պատշգամբ: Վայրկյան առ վայրկյան ավելի էր հարբում:- Դո՛ւռը, պատշգամբի դուռը փակիր: Կընկնի էնտեղից:

Տոման կանխեց կատվին, նրա քթի տակ փակեց պատշգամբի դուռը,

եւ նրանք ոչ առանց դժվարության կատվին խցկեցին հյութքամիչի խավաթղթե տուփը: Կատուն խլածայն ինչ-որ հայհոյական բան էր ոռնում, կարող է եւ մայր էր հայհոյում... Նրանք տուփը հանեցին բակ, դրեցին աղբարկղի մոտ ու բացեցին կափարիչը: Կատուն շարունակում էր գոռալ, բայց դուրս չէր գալիս: Կանայք շտապեցին տուն՝ անցքը մեխելու: Ու փոքրիկ տոն կազմակերպեցին իրենց համար այդպիսի թշնամուց ազատվելու առթիվ՝ լավ վրացական գինի խմեցին: Բայց, ինչպես հետո պարզվեց, վաղաժամ էին ցնծում:

Այդ երթեւեկ կատվի առանձնահատուկ ուժը նրանում էր, թե ինչ հեշտությամբ էր բռի անասունից, որն իրեն թույլ էր տալիս այն, ինչը ոչ մի խելապակաս կատու իրեն թույլ չի տալիս տանը, անմարմին ուրվականի, որ հետուառաջ էր անում Նինայի երազի ու նրա սովորական կյանքի միջեւ՝ եւ այնտեղ, եւ այստեղ թողնելով գարշահոտ, վախ ու այն հատուկ կատվայնությունը, որ ասես անջատվում էր նրանից, հոսում, նստում իրերի վրա եւ օդով, մաշկով թափանցելով՝ այնքան խոր էր Նինայի ներսում, որ շամպունի եւ օճառի տասնյակ սրվակներ էր պարպում այդ ամենահաս նողկանքից ազատվելու համար: Կատուն այլեւս չէր հայտնվում, փոխարենը երազ էր գալիս ամեն գիշեր՝ վարպետորեն տեսքը փոխելով, բայց Նինան սովորել էր ճանաչել նրան անկյունից սողացող մթին ամպի, նրա հետ անկասկած առնչություն ունեցող տեղանքի եւ նույնիսկ ամբոխից առանձնացող պարոնի մեջ, ինչպես առաջներում գաղտնի գործակալին էին ճանաչում:

Սուսաննա Բորիսովնան, որը տեղեկացված էր այդ բոլոր հանկարծափոխությունների մասին, Գերմանիա էր մեկնելու՝ կոլոքվիումի թե սիմպոզիումի ու Նինային խոստացել էր, որ այդ իրավիճակն անպայման կքննարկի Եվրոպայի ամենահիրազեկ մասնագետի հետ:

Մի գիշեր կատուն նորից մարմնավոր հայտնվեց: Թե ինչպես էր թափանցել բնակարան՝ անհայտ մնաց: Անցքը մեխած էր, պատշգամբն ու օդանցքները՝ փակ, բուխարին կասկածից դուրս էր, քանի որ ծխնելույզն անմիջապես տանիք էր ելնում, ու ոչ մի կատու, եթե միջատ չի, չէր կարող հաղթահարել լրիվ ուղղահայաց ծխնելույզի երեքուկես մետրը: Մանավանդ, որ բուխարու բերանը կափարիչով փակ էր: Կատվի գաղտնուղին հայտնաբերելու համար երեւի հարկ լիներ քանդել այդ ամբողջ հին շենքը: Կատուն մագլցեց բարձր կախած դարակի վրա, թեքեց ու այդպիսով ցած թափեց ամբողջ նրբին սեւ խեցեղենը՝ վրացական կիրառական արվեստի հրաշքը, որ Նինան հավաքել էր դեռ ուսանողական տարիներին: Հաղթահարելով դեռ քնի մեջ տեսած աշխարհավերջի սարսափը, զնգուն ու ան-

փայլ սեւ փլուզման ֆոնին Նինան վառեց լամպը ու տեսավ, որ հատակը ծածկված է բեկորներով, իսկ կատուն, որ չէր հասցրել միայն իրեն հայտնի եղանակով տարրալուծվել, խցկվել էր անկյունն ու բացել երախը շղթայակապ շան պես: Դա մղձավանջի այնքան մեղմ շարունակություն էր, որ միանգամից չհասկացավ՝ որտեղ է՝ նոր երազի մե՞ջ, թե՞ իր տանը...

Նինան հավաքում էր խեցեղենի փշուրներն ու, առանց կատվին նայելու, թույլ-թույլ մղկտում.

- Բայց ի՞նչ անասունն ես... որտեղի՞ց են այսպիսի ավազակներ հայտնվում... ինչի՞ ես գալիս ինձ մոտ, քեզ ի՞նչ է հարկավոր, ասա՛...

Հետո սառնարանից հանեց կիսատ հավն ու տարավ սանդղահարթակ.

- Արի կեր, ու որ քեզ այլեւս չտեսնեմ:

Ըստ էության, ուտելիք չէր պահանջվում: Բայց կատուն չհրաժարվեց: Ծույլ-ծույլ գնաց հավի ետեւից: Նինան նրա հետեւից փակեց դուռը: Հրաշալի հասկանում էր, որ իրեն հենց այնպես հանգիստ չի թողի:

Չորս օրից կատուն նորից հայտնվեց: Նստել էր բազկաթոռի մեջ, ասես ոչինչ չի պատահել, ասես դա հենց իր տեղն է, իսկ բեժ ծածկոցի կենտրոնում, լվացած, պատշգամբում քամուն տված բեժ ծածկոցի մեջտեղը կատվի, այդ բնակարանի ու հենց Նինայի վրա նրա իշխանության համոզիչ նշանն էր:

Այդ ընթացքում Սուսաննա Բորիսովնան վերադարձավ Գերմանիայից ու Նինային հյուր կանչեց: Այս անգամ Սուսաննա Բորիսովնան մի տեսակ խաղաղված էր, բարեհոգի, տունը անուշություն ու հարստություն էր բուրում, վառվում էին մոմերը: Ընթրիքն աղքատիկ էր. Նինան կամաչեր մարդ հրավիրել այդպիսի սեղանի: Փոխարենը՝ Սուսաննա Բորիսովնան ինքը ասես այրի թագուհի լիներ. պատմուճանի նման մանուշակագույն հագուստով, գլուխը փաթթոցի պես մանուշակագույն շարֆով կապած, դիմաներկը՝ մուգ ու այնքան այլանդակ, որ անհնար էր սեթեւեթանք կասկածել: Կարմիր կաղամբի կապույտ աղցան կերան, հետո մասուրի մուգ կարմիր թեյ խմեցին, ամեն ինչ՝ գույնը գույնին, ապա Սուսաննա Բորիսովնան Նինային մի այնպիսի բան բացատրեց, երբեք նրա մտքով չէր անցնի: Ընդգծեց, որ դա ոչ միայն իր անձնական կարծիքը, այլեւ իր ուսուցչի հատուկ մտարկումն է: Ստացվում էր, որ մարդու առաջ որոշակի խնդիրներ են դրվում, որոնք անհրաժեշտ է լուծել, ու վերին ուժերը, հրեշտակները եւ այլն, միեւնույն ժամանակ եւ այստեղի ուսուցիչները օգնում են այդ խնդիրները լուծելուն: Բայց եթե մարդը դիմադրում է, այդ խնդիրները վերափոխվում են որեւէ մղձավանջի, ասենք՝ հիվանդության կամ, օրինակ, կատվի:

Իսկ Նինայի կատուն ֆիզիկական առումով հոգեկան անբարեհաջողության արտահայտություն է, բայց հնարավոր է նաեւ, որ խնդիրը ոչ թե բուն Նինան է, այլ, հակառակը, հեռացած հարազատների հարաբերությունները...

- Դա շատ լուրջ է, Նի՛նա, մեծ աշխատանք է պահանջվում, ես պատրաստ եմ կարողություններիս չափով ինքս էլ օգնել ու ծանոթացնել ձեզ խորացած մարդկանց հետ,- եզրափակեց Սուսաննա Բորիսովնան:

Այդ խոսակցությունից եւ այդ ամբողջ մանուշակագույնից Նինան ավելի վատ զգաց ու նույնիսկ մտածեց՝ Տոմոչկայի հետ չգնա՞ եկեղեցի, ի վերջո ուղղափառ մարդ էր, մանուկ հասակում մկրտվել էր Թիֆլիսի սուրբ Նինայի հինավուրց տաճարում եւ նույնիսկ կնքահայր ու կնքամայր ունի...

Նինան այդ գիշեր էլ չքնեց, նույնիսկ հաբերը չօգնեցին:

Հաջորդ օրը Միրկասը՝ Նինայի պետը ու հանգուցյալ Սերյոժայի ընկերը, խնդրեց ճաշից հետո անցնել իր մոտ: Նա Նինային իր գրասենյակ էր ընդունել Սերյոժայի մահվանից հետո, լավ էր վճարում, չնայած ընդունելիս չգիտեր, թե Նինան որքան ճշտապահ է ցանկացած աշխատանքում, իսկ գործավարության մեջ՝ ընդհանրապես տեր ու թագավոր է:

Միրկասը կանչեց, ու Նինան անհանգստանում էր՝ որեւէ սխալ թույլ չի՞ տվել: Նախորդ շաբաթ բարդ պայմանագիր էին պատրաստում, եւ նա միանգամայն կարող էր որեւէ բան խառնած լինել: Բայց երբ մտավ աշխատասենյակը, Միրկասը միանգամից շշմեցրեց նրան.

- Լսի՛ր, Նի՛նա, հո հիվանդ չե՞ս: Տեսքդ մի տեսակ...

Առաջ նրանք իրար հետ «դու»-ով էին, բայց հիմա Նինան ջանում էր նախադասություններն անորոշ կառուցել, որպեսզի չընդգծվեն իրենց նոր ծառայողական հարաբերությունները: Ճա՛տ հին ծանոթներ էին «դուք»-ի անցնելու համար:

- Լուրջ բան չկա: Անքնություն է:

Միրկասն ապրանքագետի հայացքով էր նայում: Նինան նրա ճաշակով չէր, բայց, անկասկած, խիստ ոճային էր: Նիհար, վաղաժամ անթաքույց ճերմակ հերքով, միշտ սեւ հագած... Իհարկե՝ երկար կզակ, սմքած այտեր, շրջանակներ աչքերի տակ, բայց հաստատ ինչ-որ բան կա նրա մեջ...

- Սիրեկան պահի,- մռայլ խորհուրդ տվեց Միրկասը:

- Դա ծառայողական կարգադրությո՞ւն է, թե՞ ընկերական առաջարկ:- Հայացքը խոնարհել է, կզակը ցցել առաջ:

Հիմա՛ր, գոռոզ՛ կին:

- Անքնությունն էլ հիվանդություն է: Գուցե քեզ հանգի՞ստ է պետք: Թու-

նիս, Կանարյան կղզիներ. աղջիկներն է՞լ ուր են գնում հանգստանալու: Ֆիրման վճարում է... Մի շաբաթ վերցրու, տասը օր: Անհնար է վրադ նայել:- Ձայրացած, թե քամահրանքով էր խոսում, իսկ Նինան ավելի էր ցցում կզակը:

Հետո Միրկասը ծամածռեց դեմքը, կնճռոտեց ճակատն ու լավ, մարդկային ձայնով ասաց.

- Լա՛վ, ի՞նչ է պատահել... Ի՞նչ խնդիր կա:

Եվ այստեղ արցունքները ցայտեցին գոռոզ Նինայի աչքերից.

- Վա՛յ, Տո՛ւյա, չես հավատա... Կատուն տանջահար արեց...

Նինան կցկտուր խճճված պատմեց ողջ պատմությունը: Լսելու հետ Միրկասի կարեկցանքը ցնդում էր, ու պատմության ավարտին կտրեց իր սովորական ղեկավարական ձայնով.

- Ուրեմն այսպես: Հենց հայտնվի, անմիջապես զանգի փեյջերիս: Ես դրա հախից կգամ:

Միրկասի մասին լուրեր էին պտտվում, որ պարզաբանումներ անել կարողանում է:

Հնարավոր է, որ այդ լուրերը կատվին էլ էին հասել, քանի որ չերեւաց, չնայած Նինայի բնակարանը ուշադրությունից դուրս չէր թողնում: Մի անգամ, գործի գնալիս Նինան պահարանի դուռը չէր փակել, ու սրիկան, իհարկե, օգտվեց այդ անփութությունից. կեղտոտեց պահարանում: Խեղճ Նինան ոչ սակավաթիվ զգեստներն ամբողջովին մաքրման էր տարել, բայց դրանից հետո էլ անընդհատ կատվահոտ էր առնում, ու դա սարսափելի էր:

Բայց, համենայնդեպս, եկավ այն օրը, երբ կատուն, ասես ոչինչ չէր եղել, նրան դիմավորեց բազկաթոռի մեջ նստած: Նինան անմիջապես զանգեց Միրկասին: Միրկասը եկավ ուղիղ քսան րոպեից, եւ այդ ամբողջ ընթացքում խորապես ճնշված Նինան նստած էր լոգարանի աթոռակին:

Ոչ մի բառ չասելով՝ Միրկասը մոտեցավ բազկաթոռին: Բայց պարզվեց՝ իրար արժանի հակառակորդներ են: Միրկասը բռնեց կատվին վզից, կատուն չանչեց նրա ձեռքը: Խուլ բղավոց լսվեց, եւ անհասկանալի էր՝ որն էր բղավողը:

- Տե՛ր Աստված,- ծեւած ձեռքը տեսնելով՝ հառաչեց Նինան:

- Պատշգա՛մբը,- գոռաց Միրկասը, ու Նինան առաջ վազելով՝ բացեց պատշգամբի դուռը:

Ինչ օգուտ՝ հասցրեց մտածել Նինան՝ չհասկանալով Միրկասի մտադրությունը, մեկ է, հետ է գալու:

Արյունոտ Միրկասը պինդ պահում էր կատվին, իսկ կատուն ծվատում էր նրան իր բոլոր չորս թաթերով: Նինան սարսափած սեղմվեց դռանը. արյան տեսքից վատանում էր: Ցածրածայն չարագուշակ հայհոյանք խռպալով՝ Միրկասը թափ առավ ու կատվին շպրտեց պատշգամբի սյունաշարից այն կողմ: Նինան հստակ որսաց այն պահը, երբ կատուն մի քիչ վեր թռավ, օդում ծգելով առջեւի թաթերն ու գլուխը, հետո կարծես քարացավ բաց տիեզերքում գտնվող տիեզերագնացի դիրքում, ու անհետացավ: Եվ անմիջապես ներքեւից ձայն լսվեց, ասես թասով ջուր շմփացնեին: Բակի մթան մեջ ոչինչ չէր երեւում:

Մինչ ցնցված Նինան լվանում էր Միրկասի պատռած վերքերը, նա գլուխն էր օրորում.

- Տես, Է՛, գազանին... Դրանց պիտի գնդակահարես...

Միրկասն այնպիսի տեսք ուներ, ասես հենց նոր պառավ էր կացնահարել:

Նինան մեռածի պես քնեց ամբողջ գիշերը: Վաղուց այդպես քունը չէր առել: Բայց տնից դուրս գալուց անմիջապես առաջ հանկարծ սարսափեց. իսկ եթե մեռած կատուն ընկած է պատշգամբի տա՞կ, ինչպե՞ս է կողքով անցնելու... Չնայած կատուների մասին ասում են, որ կարողանում են թռչելիս պահպանել հավասարակշռությունը, պտուտակի պես պտտում են պոչը ու իջնում չորս թաթերին...

Բայց շենքի մոտ ոչ մի մեռած կատու էլ չկար, ընդհանրապես ոչ ոք չկար: Նինան դուրս եկավ իր Չիստի նրբանցքից ու գնաց Զուբովյան հրապարակի կողմը...

Կատուն առժամանակ կամ ընդմիշտ չքացավ: Իսկ Նինայի տրամադրությունն ավելի ու ավելի էր վատանում: Ըստ երեւույթին Միրկասը համենայնդեպս սպանել էր նրան, չնայած կատուն, իհարկե, շա՛տ սրիկան էր, բայց Նինան նրա մահը չէր ուզում: Ուզում էր միայն, որ անհետանա: Բայց հիմա, այդ ամբողջ մղձավանջից հետո, երբ թվում էր՝ վրա է հասել թեթեւացումը, Նինան, աշխատանքից վերադառնալով, կարծես մի քիչ սպասում էր, որ այդ կեղտոտ անասունը նստած լինի բազկաթոռի մեջ...

Այդ ընթացքում մոտենում էր Սերյոժայի մահվան տարելիցը: Պիտի մի երեսուն մարդ ընդուներ, ու ոչ թե ծեռի հետ, այլ՝ ինչպես հարկն է: Միրկասն էլ էր հիշում տարելիցի մասին: Ամբողջ շաբաթ սատանայի պես կատաղած էր, ձեռքը ուռել էր, հակաբիոտիկներ էին սրսկում, բայց Նինայի սեղանի մոտով անցնելիս մի ծրար դրեց նրա առաջ.

- Ռեստորան ես հրավիրելո՞ւ, թե՞ տանն ես կազմակերպում:

Նինայի հպարտությունը վիրավորված էր. Սերյոժան ողջ լիներ, այսպես չէին նվաստացնի... Բայց սթափվեց անհեթեթ հպարտության նոպայից, դեմքից քաշեց աննման մազերը.

- Շնորհակալություն, Տո՛ւյա:

Եվ խոճկոր, օձածկներ ու կես կիլո խավիար էլ առավ...

Վաղ առավոտյան Տոմոչկան գնաց եկեղեցի, պատարագ պատվիրեց: Նինան եկեղեցի չգնաց. Սերյոժան այդ ամենը տանել չէր կարողանում: Գերեզմանոց գնաց: Ծաղիկներ տարավ: Մահարձանն արդեն դրել էին, դեռ վաղ գարնանն էր Նինան ամեն ինչ կազմակերպել. մեծ սեւագորշ քար էր, կոպիտ ու պարզ...

Երեկոյան ամեն ինչ լավագույնս ստացվեց. սեղանները՝ ճոխ ու գեղեցիկ, ինչպես սիրում էր Սերգեյը: Եկել էին բոլորը, ում Նինան ցանկացել էր տեսնել. Սերյոժայի ընկերներն ու հորեղբոր որդին՝ ընտանիքով, ու միայնակ տալը, որը չէր սիրում Նինային, Միրկասն էլ էր եկել՝ իր ծեր կնոջ, խոնարհ Վիկայի, ոչ թե այն նորերի հետ, որ վերջին շրջանում անտանելի բազմացել էին, եւ Նինան ուրախ էր դրա համար: Նույնիսկ փաստաբան Միխայիլ Աբրամովիչն էր եկել, որը, շա՛տ վաղուց, պաշտպանել էր Սերյոժային, երբ նրան մեծ տհաճություններ էին պատահել: Փաստաբանն այդ ընթացքում շատ նշանավոր էր դարձել, անընդհատ հանդես էր գալիս հեռուստացույցով, բայց տարելիցը չէր մոռացել... Բոլորը լավ բաներ էին ասում Սերյոժայի մասին, մասամբ՝ նույնիսկ ճշմարիտ. նրա խառնվածքի, ուժի, քաջության եւ արիության, տաղանդի մասին: Ճիշտ է, նրա Վալենտինա քույրը ինչ-որ կերպ հաջողեց նկատել, որ Նինան նրա համար այդպես էլ երեխա չբերեց: Բայց Նինան աչքն էլ չթարթեց. իր կյանքի այդ տեղը վաղուց էր ողբացել: Ու ներել էր ամուսնուն, որ ստիպեց իրեն՝ հիմարին, խելահեղ սիրահարվածին... Այ մայրիկը երբեք չներեց: Բայց ի՞նչ հիշես հիմա՝ երեսունհինը տարեկանում...

Հյուրերն ուշ գնացին՝ ստամոքսներում տանելով Նինայի չտեսնված հյուրասիրությունը ու իրենցից հետո հանդիսավոր գեղեցկությունը մինչեւ վերջ չկորցրած սեղանն ու թանկարժեք ծխախոտի հոտ թողնելով: Նինան Տոմոչկային տուն ուղարկեց. նա գինովցած աշակերտուհու պես անընդհատ փորձում էր ինչ-որ առանձնահատուկ բան ասել, իր նվիրականն՝ առ Աստված, ինչից բոլորն անհարմար էին զգում: Մենակ մնալով՝ Նինան անշտապ հավաքեց ամեն ինչ՝ սովորականի պես խոսելով Սերյոժայի հետ... Բայց նա, սովորականի պես, ինչպես կենդանության օրոք, ոչինչ չէր պատասխանում:

Քնելու պառկեց չորսին մոտ, մաքուր, սառը անկողնում, կապտականաչ, վանդակավոր գիշերանոցով, որ գնել էին Բեռլինում, ուր երեք տարի առաջ մեկնել էին Սերյոժայի հետ, վերջին համատեղ ուղեւորության: Ու չնայած այս անգամ ոչ մի դեղահաբ չխմեց, անմիջապես, հենց որ տաքացավ, քնեց ու խոր քնեց՝ ակնախնձորները խաղացնելով մուգկոպերի տակ, իսկ առավոտվա դեմ, երբ սկսեցին կենդանություն առնել ու պատշգամբի բազրիքներին քսվելով՝ առաջին քամուց կամացուկ խշշալ մեծ լորենու տերեւները, երազ տեսավ, ամենազարմանալի երազը կյանքում:

Կանգնած էր ամառանոցի տիպի մեծ տան վերեւի հարկում, ու տունը կիսակառույց էր, որովհետեւ վերեւից երեւում էին ներքեւի հարկի սենյակները, ինչ-որ հեծաններ, սանդուղքներ, եւ այդ ամենը՝ մի քանի մակարդակի, աղոտ, ու հանկարծ երգեցողություն լսեց: Կանացի ձայնը հինավուրց վրացական երգ էր երգում: Տատիկն է՝ գլխի ընկավ Նինան եւ անմիջապես տեսավ նրան: Նստել էր փոքրիկ աթոռակին, որից կախվել էր վրան դրված նստաբարձի դարչնագույն ծոպափունջը: Սեւ գլխարկն իջել էր ճակատին, իսկ մուգ քողը ստվերում էրպայծառ դեմքը: Երգում էր, բայց բերանը փակ էր, շրթունքներն՝ անշարժ, ու Նինան նորից հեշտությամբ կռահեց, որ դա ուրիշ երգեցողություն է, ոչ ձայնալարերով, այլ ուրիշ, կոկորդի հետ կապ չունեցող մասով, բայց առանց որի ընդհանրապես անհնար է որեւէ երգեցողություն: Ու հենց հասկացավ, թե արեւահյուսակի որ կետից է ելնում երգեցողությունը, երգը բաժանվեց երկու ձայնի. տատիկի ցածր ալտը, ու երկրորդը՝ սոպրանո, իր կորուսյալ սոպրանոն, անդառնալի երջանկությունը, բայց նույնիսկ ավելի լավ, մաքուր ու մետաքսյա, որ ուներ, կոնսերվատորիայում սովորելիս: Եվ վերադարձած ու նորացած ձայնի հնչումը մի ուրիշ բնույթ ուներ, որովհետեւ ձգում էր, ինչպես մագնիսը երկաթն է ձգում, ու լուսավոր կիսակառույց տունը հանկարծ սկսեց լցվել մարդկանցով, որոնց մեջ անծանոթներ չկային, չնայած Նինան անվանական ոչ բոլորին էր ճանաչում: Նրանք էին՝ դարչնագորշ ստվերները, բայց այդ անիմանալի երգեցողության հնչյուններից պայծառացել ու հայտածվել էին, ինչպես լուսանկարչական թղթի վրա, եւ ահա նրանց մեջ նախ մայրիկին գտավ, իսկ հետո՝ նաեւ Սերյոժային:

Նինան սանդուղքով նրանց մոտ իջավ այն պահին, երբ նրանք բազմության մեջ ճանաչել ու գրկախառնվել էին, ասես մեկը մյուսին սպասել էր կառամատույցում, ու գնացքը վերջապես ժամանել էր: Մայրիկը, նիհար, շատ երիտասարդ, պատված Սերյոժայի լայն գրկախառնությամբ, հանկարծ տեսավ նրան, ծիծաղեց ու կանչեց՝ Նինիկո՛:

Բայց մայրիկի ձայնն ինքնակա չէր, այդ նույն վրացական երգի մասն էր, չնայած երգն արդեն դադարել էր վրացական լինել ու լրիվ հասկանալի բառերն ուրիշ լեզվով էին:

Սերյոժան գրկեց Նինայի ուսը, ու նրա մաշկի, նրա մազերի հոտը վառեցին կնոջը, ու տեսավ, որ նրա ռունգերն էլ լարվեցին, ու գլուխը թաղեց իր մազերի մեջ:

Մեկը թեթեւ դիպավ ծնկին, ու հետ նայելով՝ Նինան տեսավ հսկա կատվին, որը քսվում էր ոտքերին՝ փաղաքշանք պահանջելով: Նա էր, երիցս անիծյալ կատուն, որն այնքա՛ն արյուն էր պղտորել: Սերգեյը կռացավ ու շոյեց կատվի ասֆալտե մեջքը: Մայրիկը ուրախ ու սիրաբար շտկեց Սերյոժայի պիջակի ծալված փեշը... Բայց դա քիչ էր. կողքից, իրար թեւանցուկ արած, Նինային ընդառաջ էին գալիս ընկերուհիները՝ Տոմոչկան ու Սուսաննա Բորիսովնան: Ու դեմքերն այնպե՛ս սքանչելի էին, որ Նինան, ծիծաղելով հասկացավ՝ ահավոր հիմար էին առաջ, բայց դա զուտ ժամանակավոր էր...

Միխայիլ ԵԼԻԶԱՐՈՎ

ՎԱՆ ԳՈԳ

- Սիրո՛ւն աղջիկ, Աստծու սիրուն, մեկ հարց. կկարողանայի՞ք սիրել անականջ տղամարդու:

Չնայած անծանոթի ակնհայտ բարյացակամությանը, ծայնային ելեւէջումների պատշաճ գործնականությանը, Լիդոչկան թաքուն դավ կասկածեց ու նախընտրեց մռայլ քրթմնջալ.

- Վազն անցեք:

- Լա՛վ, այլ կերպ ծեւակերպենք. ամուսնության համար պարտադիր պայմա՞ն է ձեր ընտրյալի ականջների առկայությունը:

Լիդոչկան հպարտ բարձրացրեց հեծանվի ղեկի պես կոր ճակատով գլուխը:

- Ճանապարհս փակել եք:

- Պատասխանեք՝ այո կամ ոչ,- սուտ քմահաճությամբ պահանջեց անծանոթը:

Լիդոչկան լկտիին ողողեց ցուրտ քամահրանքով լեցուն հայացքով:

- Այո՛, իմ ընտրյալը պետք է ականջներ ունենա: Իսկ հիմա թույլ տվեք անցնել:

- Ինչպե՞ս, հենց պարզվեց, որ ես ձեր ճաշակով եմ...- անծանոթը վճռական շարժումով իջեցրեց կնգուղը: Լիդոչկան ճչաց ու շփոթված ժպտաց: Նրա առաջ բավական համակրելի, ոչ այնքան ցցված ականջներ էին հայտնվել:

Անծանոթը հարգալից վերցրեց պայուսակը Լիդոչկայի ձեռքից.

- Եթե չեք առարկում, ուղեկցեմ ձեզ...

- Չեմ առարկում,- զինվորական խստությամբ պատասխանեց Լիդոչկան:

- Ձեր անունը չասացիք...

- Լիդա, եւ կարելի է «դու»-ով,- ու սարսափեց իր սանձարձակությունից:

- Բայց ինձ հետ կձանձրանաք, այնքան հնաոճ եմ, ոչ մի տեղ չեմ գնում,- սեթեւեթանքից դողացող ձայնով խոստովանեց Լիդոչկան:

Ծանոթության առաջին իսկ քայլերից բարձրաշխարհիկ ժպիտով զրպարտեց գոյություն չունեցող ամուսնուն.

- Փախավ մի հրեուհու մոտ, ավելի լավ ապրուստի,- մեջ գցեց ինչ-որ տեղ լսած արտահայտությունը:

- Համանման իրավիճակ,- տղամարդը կարեկցանքով գլխով արեց, բայց մանրամասներ չներկայացրեց, ընդամենը կրկնեց:- Համանման իրավիճակ:

- Խե՜ղճ,- Լիդոչկան բռնվեց ուղեկցի մազերը խառնշտելու չարաճճի մտքով, բայց վրիպեց ու մատնահարեց ականջին, ինչպես լարերին են զարկում: Ականջը ծռված զուգարանակոնքի տեսք առավ:

Որոշելով, որ հալյուցինացիա է, Լիդոչկան երկու մատով բռնեց ականջը: Կպչուն թելիկները ծգվեցին, պոկվեցին՝ գնդիկ դառնալով:

«Թքած-կպցրած էր»,- մտածեց Լիդոչկան:

Անծանոթը դավադիր աչքով արեց եւ լռության հրավիրելով՝ ասաց.

- Սո՛ւս,- կտրուկ ցած գցեց պայուսակն ու փախավ:

- Օգնեցե՛ք,- ուշքի եկավ Լիդոչկան, ու փողոցը սեւեռուն քարացավ: Քաղաքացիներից մի քանիսը նետվեցին փախչողի ետեւից:

- Բռնե՛ք, բռնե՛ք դրան,- բարակ ծղրտում էր Լիդոչկան, մինչեւ հետապնդման պոչն անհետացավ մոտակա շրջադարձից այն կողմ: Այդ ժամանակ Լիդոչկան սսկվեց ու վազեց տուն:

Մուտքի դուռը բացելով՝ նկատեց, որ չարաբաստիկ ականջն առաջվա պես ձեռքին է: Զզվանքից դողալով՝ Լիդոչկան ականջը շպրտեց զուգարանակոնքը եւ անսփոփ հեկեկաց:

«Ինչի՞ եմ էսքան անբախտ»,- մահճակալին պառկած՝ դողում էր Լիդոչկան: Մտածեց, որ օրը վատն էր ճաշի ընդմիջումից սկսած, նրա դերձականոցում բոլորը «Ինչ ազգանունով տղամարդու հետ արժի ամուսնանալ» էին խաղում: Չարլեզու ձեւարարներ Լյուսկան ու Կատկան Լիդոչկային Սլադկոմյոդովին էին հարմարեցնում. առաջարկվածը փոքրիկ, հաստլիկ, ճաղատացող լովելաս էր, մատակարար...

Լիդոչկան մտքում պտտեց հիմար երեկոյի իրադարձությունները: «Ու որտեղի՞ց էր գտել ականջը, երեւի հիվանդանոցից է թռցրել»,- ենթադրեց Լիդոչկան՝ զարմանալով, որ մտքով նույնիսկ չանցավ ականջը պրոտեզ անել: «Ինչի՞ց որոշեցի, որ ականջը իսկական է»: Պատասխանը միանգամից գտնվեց. «Որովհետեւ տաք էր»: Տաք էր, երբ պոկվեց, ու քանի ձեռքին էր: Լիդոչկան հիշեց, թե ինչպես վարվեց ականջի հետ ու գնաց մի անգամ էլ նայի:

Հախճապակու վրայով ցայտող ջրի ճապավենը թույլ հոսանքի տպավորություն էր ստեղծում, եւ ականջը պտտվում էր թղթե նավակի նմանությամբ: Արցունքներից հետո Լիդոչկային թվում էր, որ ջրի մեջ թաղված ականջի եզրերը թեթեւ շարժվում են, բայց անմիջապես հասկացավ, որ բեկված լույսի խաղն է:

Ուզածի չափ նայելուց հետո՝ Լիդոչկան մռայլ քաշեց ջուրը: Բազմալիտր ջրվեժը հորդեց ականջի վրա, պտտեց, քաշեց խողովակի մեջ, բայց այն ինչ-որ աներեւակայելի կերպով նորից ջրի երես ելավ: Լիդոչկան սպասեց ջուր հավաքվի ու նորից քաշեց: Ջուրը կողի շրջեց ականջը, տարավ ցած, բայց ականջը, ջրափոսում պտույտ տվող բաղի պես, ժամանակին դուրս լողաց ջրապտույտից:

Լիդոչկան իջեցրեց զուգարանակոնքի կափարիչը, երրորդ անգամ քաշեց ջուրը: Համարձակվեց նայել՝ ականջը մնա՞ց: Այդ անխորտակելիությունը վախեցնում ու անհանգստացնում էր նրան:

Գիշերը Լիդոչկան արթնացավ: Քնի մեջ մանկիկի հեռավոր լաց էր լսել: Իրականում հնչում էր սովորական քաղաքային լռությունը, գուցե թե տանիքի կատուներն էին չափից դուրս կատաղել:

Լիդոչկան ծանրություն զգաց միգափամփուշտում ու հասկացավ արթնանալու պատճառը: Վախվխելով բացեց զուգարանի դուռը:

Վատագույն ենթադրություններն արդարացան: Ականջը ջրում չէր սուզվել: Պարզապես մի քիչ ավելի էր թաղվել ջրի մեջ, ասես ներծծել ու ծանրացել էր:

Լիդոչկան կանգնած միզել չգիտեր, իսկ նստել վախենում էր: Թվում էր՝ ականջը դուրս կթռչի ու կկծի: Մի անգամ, շատ վաղուց, դատարկ աղբի դույլը մուկ էր ընկել: Դաժան հետաքրքրասիրությունից՝ Լիդոչկան դույլը շուռ տվեց զուգարանակոնքի վրա: Գազանիկը կատաղի պայքարում էր կյանքի համար, բայց սլկան պատերը չէին թողնում՝ դուրս գա: Լիդոչկան հարթաշուրթ աքցանով որսաց ու բաց թողեց նրան...

Նա գնաց փայտե գդալի ետեւից, որով ներկ էր խառնում բնակարանը նորոգելիս, ու որսաց ականջը, ինչպես սոխի գլուխն են ապուրից հանում: Լիդոչկայի ձե՞ռքը դողաց, թե՞ գդալն էր փոքր, բայց ականջը միջանցքում շմփաց հատակին: Շմփոցով ընկավ լինոլեումին, հետո էլի, ու էլի... Ականջը կենդանի ձկան պես թպրտում էր:

Լիդոչկան վախից թուլացավ: Սեփական ականջներն այնպես էին փակվել, ասես թռչում էր ինքնաթիռով, իսկ հիշողության մեջ հայտնվեց ման-

կական բանաստեղծությունը. «Ականջիկը, ականջիկը պոկվեց, փախավ ինձնից...»:

Հմայվածի պես հետեւում էր ականջին, որ թռավ-ընկավ խոհանոցի ջեռուցիչի տակ: Լիդոչկան դողում էր: Լսելիքը կիսվել էր երկու շերտի: Սովորականը՝ արտաքինը հաստատ վնասված էր, բայց երկրորդը՝ լսողության ներքին կեսը հստակ հեծկլտոցին խառնված ծանր հառաչանքներ էր որսում:

Հանկարծ հեռախոսը զնգաց: Լիդոչկան նույնիսկ չհասկացավ, որ զանգը ներքին ականջով է լսել: Դրսից հեռախոսը լուռ էր, քանի որ այդ պահին աշխատում էր ոչ մարդկային ակուստիկ հաճախականություններով:

Բայցեւայնպես, Լիդոչկայի համար դա իսկական հոգեբանական փրկություն էր, բնականոն կյանքի արտահայտություն, թեկուզ եւ գիշերվա ժամը երեքին: Լիդոչկան վերցրեց լսափողը: Հարյուրավոր անհասկանալի երկխոսություններ, աղմուկ ու ռադիոխանգարումներ էին գրոհում նրա վրա, դրանց միջից հազիվ լսվում էր ինչ-որ մեկին դիմող միայնակ ձայնը. «Վերադարձրո՛ւ: Վերադարձրո՛ւ»:

Լիդոչկան վախեցած տեղը դրեց լսափողն ու անմիջապես անցավ հեկեկացող ականջի ազդանշաններին: Ստքով անցավ, որ պարզապես կթռչի իր անկողինը՝ տաքանալու: Ականջը շուռումուռ էր գալիս փոշոտ անկյունում, աղմուկով շնչում՝ կուլ տալով անտեսանելի արցունքները: Լիդոչկան չոքեց ու զգույշ մոտ սողաց: «Ատամներ չունի»,- հանգստացնում էր իրեն: Դեմքը մոտեցրեց ականջին ու ականջ դրեց իրեն անհայտ բառերով ծեւակերպված տրտունջին:

Լիդոչկան խղճահարության պես մի բան զգաց: Ականջը ցրտից դողում էր, մի քանի անգամ փռշտաց ու հազաց: Ակնհայտորեն ավելի տաք տեղի կարիք ուներ: Լիդոչկան վերցրեց գդալը ու փորձեց որսալ ականջը, բայց ոչինչ չստացվեց. միայն դեսուդեն արեց ականջը փոշու մեջ, պատահմամբ ճմլեց բլթակը, այնպես, որ ականջը ճչաց: Լիդոչկան չդիմացավ փոքրիկ արարածի տառապանքներին ու ձեռքով վերցրեց, մաքրեց փոշին եւ ուշադիր զննեց: Ականջի հակառակ երեսը կատարելապես հարթ էր, առանց սպիների...

Լիդոչկան բամբակով մածեց լիտրանոց բանկայի ներսն ու այնտեղ տեղավորեց ականջը, իսկ հետո նստեց ու սկսեց նայել: Սառած եւ ուժասպառ՝ ականջն արագ խաղաղվեց: Լիդոչկան հանգիստ խղճով միզեց ու պառկեց քնելու:

Առավոտյան նրան զարթուցիչը չարթնացրեց. զանգին ժամից ավելի կար: Ականջն էր լալիս ու կանչում: Գույնը փոխել էր. նախորդ օրվա թույլ վարդագույնից մորեգույն էր դարձել: Լիդոչկան ձեռք տվեց: Ականջն ուղղակի վառվում էր, տաքությունը բարձրացել էր, ականջակոնքի շուրջը առատ ծծմբային արտազատուկներ էին հայտնվել:Կես գիշեր զուգարանակոնքում մնալն անհետեւանք չէր անցել. ականջը մրսել էր:

Լիդոչկան չգիտեր ինչ անի, բանկան տաքացրեց լրացուցիչ բամբակով, բորասպիրտով շփեց ականջը: Պահարանում փնտրեց-գտավ հատուկ լամպն ու կապույտ լույսով տաքացրեց ականջը: Այնպես տարվեց, որ քիչ էր մնում գործից ուշանար:

Նախկին ականջատիրոջ հետ հանդիպումից զգուշանալով՝ Լիդոչկան մեքենա կանգնեցրեց: Հուզված մտավ դերձականոց, երեխայի պես, որը գազանիկ է բերել տուն, ու ծնողները թույլ են տվել մնա:

Խորհրդավոր ականջից բացի որեւէ այլ բանի մասին Լիդոչկան արդեն մտածել չէր կարողանում: Հիշում էր անպաշտպան փոքրիկ մարմնի ջերմությունը, երախտապարտ հույզերը Լիդոչկայի հոգատարության համար ու երջանիկ փշաքաղվում էր: Երբեմն նրա երեւակայությունը պատկերում էր սարսափելի անծանոթի դեմքը, եւ այդ ժամանակ Լիդոչկան ցնցվում էր:

Ճաշի ընդմիջմանը, ծամող մռութներին նայելիս, ծակեց տագնապալի միտքը՝ ականջին չի՛ կերակրել: Եվ ինչպե՞ս, երբ բերան չունի: Եվ ինչո՞վ կերակրի: Մի կերպ դիմացավ մինչեւ աշխատանքային օրվա ավարտն ու սլացավ տուն:

Ականջի վիճակը վատացել էր: Ականջաձծումբն ավելի առատ էր հոսում, ոչ մի կերպ չէր շփվում Լիդոչկայի հետ, այլ անկապ զառանցում էր:

Լիդոչկան համենայնդեպս ափսեի մեջ տաք կաթ լցրեց ու ականջը դրեց ափսեի եզրին: Ականջը կաթին մոտ չեկավ:

Կեսգիշերին մոտ թրթռաց անձայն հեռախոսը:

«Ես կգտնեմ քեզ, ես համարյա գտել եմ քեզ»,- էլեկտրական աղմուկների մեջ խեղդվելով՝ կանչում էր տարածության մեջ լողզված ձայնը:

Լիդոչկան երբեք այդպիսի անքուն գիշեր չէր ունեցել: Անընդհատ վեր էր թռչում անկողնուց ու վազում նայելու՝ ականջը ոնց է: Ականջը միայն խռխռում էր ու թույլ էր արձագանքում հպումներին: Լիդոչկան նրա վրա պարբերաբար բորասպիրտ կամ կաթ էր կաթացնում:

Առավոտյան Լիդոչկան, կարիերան վտանգելով, գործի չգնաց: Բնազդը

հուշում էր, որ եթե ականջին մի բան պատահի, ընդհանրապես որեւէ կարիերա չի լինելու:

Լիդոչկան թերթեց բժշկական տեղեկատուի ականջի հիվանդությունների բաժինը: Որպես վերջին միջոց պատրաստվում էր հակաբիոտիկի հաբ փշրել ու փոշին լցնել ականջը, իսկ ավելի լավ է՝ սրսկում անել: Լիդոչկան տանը հարմար բան չգտավ, իսկ դեղատուն վազել չհամարձակվեց. անձանոթը կարող էր մոտակայքում լինել:

Լիդոչկան իջավ երկու հարկ ներքեւի հարեւանուհու մոտ: Նրա հարսը բուժակ էր, բացի այդ, վերջերս թոռնիկն էր ծնվել, ու Լիդոչկան հույս ուներ, որ մանկական դեղորայք կունենան: Միայն մի սրվակ ճարվեց: Հարեւանուհին խոստացավ երեկոյան էլի հաբեր բերել, երբ հարսը գա հիվանդանոցից:

Քառորդ խորանարդ սրսկելուց հետո ականջն ուռավ: Կապտեց ու՝ կենդանության ոչ մի նշան: Մի քանի ժամից կապտությունն անցավ, եւ ականջը փայլատ երանգ առավ: Լիդոչկային թվաց՝ լավ է զգում, քանի որ տնքոցը դադարել էր: Պառկեց մի քիչ ննջելու եւ արթնացավ ուշ երեկոյան: Անմիջապես մոտ վազեց սեղանին ու ծեռք տվեց ականջին: Սառն ու քարացած էր:

«Մեռել է,- հասկացավ Լիդոչկան,- չպահպանեցի՛...», ու հոգին կարկամեց սարսափելի նախազգացումներից: Ականջի փոքրիկ դիակը բամբակի վրա, լամպի կանաչավուն լույսը, մանրամաղ ծյունը պատուհանից այն կողմ խելագարեցնում էին: Լսվեց նրա հարկում կանգ առած վերելակի ճռնչոցը: Դռան զանգը տվին, ու Լիդոչկան հառաչեց. հարեւանուհին իզուր բերեց դեղը:

Լիդոչկան բացեց դուռն ու քարացավ: Ծեմին կանգնած էր ականջի սարսափելի տերը: Գլխին քաշած սեւ կնգուղի տակից երեւում էր կապույտ դեմքը: Նա իր ետեւից շխկացրեց դուռը, ու Լիդոչկան սարսափից կծկվեց: Կնգուղավորը մտավ սենյակ, Լիդոչկան, մի կերպ՝ նրա ետեւից: Կնգուղավորը ծեռքն առավ մեռած ականջն ու նայեց Լիդոչկային: Աչքերն անասելի չարություն էին արձակում: Դիմագծերն աղճատվել էին, իսկ կոկորդում արյունոտ բլթբլթում էր: Ձգվեց դեպի Լիդոչկան:

Լիդոչկան աղաղակեց ներքին ճիչով, այնքան բարձր, որ իրականում կարթնացներ ողջ միկրոշրջանը: Ու հենց իր ճիչն էլ պայթեցրեց Լիդոչկայի սիրտը, ու նա վայրկենական մեռավ: Հետո նորից կենդանացավ: Նախկին Լիդոչկան, Մեծ Լիդոչկան անշունչ ընկած էր: Իսկ Նոր Լիդոչկան, Փոքր

Լիդոչկան ոչ ձեռքեր ուներ, ոչ ոտքեր, ոչ ստամոքս, ոչ սիրտ: Միայն կորացած, կարկանդականման մարմին՝ ծալված եզրերով, կենտրոնում՝ կոպեկի չափ անցք ու փափուկ լողանային հիմք՝ ոսկե կեռիկով: Նոր ընկալումների աշխարհ էր բացվում Լիդոչկայի համար, բայց մինչ հները կմոռացվեին, հասկանալով, թե ինչ է կատարվել իր հետ, նա վերջին մարդկային զարհուրելի անեծքները թափեց: Հետո Լիդոչկայի մտքերն այլ ընթացք առան՝ իր նոր էությանը համապատասխան:

Մարդը բարձրացրեց դիակի գլուխը ու կտրուկ շարժումով, ինչպես գազարն են հանում մարգից, ականջը պոկեց գանգից: Կնգուղը հետ գցելով՝ մարդը կիսադարձ կանգնեց հայելու առաջ: Որոշ ժամանակ ուսումնասիրում էր այն տեղը, ուր ականջ չկար, հետո խնչեց մատին, օծեց կաշվե դատարկությունն ու նշան բռնելով՝ ճարպկորեն տեղը գցեց ականջը: Մի քանի րոպե ձեռքով պահեց, մինչեւ ականջը կպավ: Այդ ժամանակ մարդը գլխին քաշեց կնգուղը, ոտք արեց Լիդոչկայի մեռած մարմնի վրայով ու գնաց անհայտ ուղղությամբ:

Յուլիա ԿԻՍԻՆԱ

ԼԻՏՎԱԿԱՆ ՁԵՌՔԸ

Գալիս եմ քրջի բազար, իսկ այնտեղ կանայք ամուսինների մումիաներն են ծախում՝ Մեծ Հայրենականի վետերանների: Ու պառկած չեն մումիաները, կանգնած են լավ հղկած տախտակների վրա: Համարյա բոլոր մումիաները զինվորական համազգեստով էին. մեկը լեյտենանտ, մյուսը՝ մայոր, փտած կիտելով, երրորդը՝ հասարակ զինվորիկ: Մեկինը հնդկացու տարազով չորացրած տաջիկ էր. մինչեւ պատերազմը դերասան էր եղել Դուշանբեում: Ու շքեղ զարդարված են մումիաները. մի քանիսի աչքերի փոխարեն նույնիսկ թանկարժեք քարեր են: Խեղճ չքավոր տատիկները քափուքրտինք մտած իրար մոտ պարծենում ու իրարից խոսք խլելով՝ գովում են իրենց ապրանքը, սակարկում գնորդի հետ:

- Իմ Վանյոկը տասնյոթ տարեկան էր, որ ճակատ գնաց: Ու ես էլ էսպես աղջիկ մնացի: Բայց չեմ ափսոսում: Ոնց որ մեխը՝ իմ սերը պահպանել, տարիների միջով բերել-հասցրել եմ էս օրվան: Իմ սենյակով մեկ նրա նկարներն են, նկարնե՛րը, նկարնե՛րը: Կոնտուզիայից հետո չարչարվում էր, չէր կարում տղամարդ դառնա, հա՛ լաց էր լինում: Բայց պատերազմի վերջում համենայնդեպս ամուսնացանք: Սպասում էի, որ լավանա, երեխի տեր դարձնի ինձ: Պատերազմը վերջացավ, բոլորն ուրախ են, իսկ նա քառասունվեցի դեկտեմբերին մեռավ հոսպիտալում: Ցուրտ էր էնտեղ: Այ ցրտից էլ մեռավ: Բարի էր եղել հաշմանդամների հանդեպ, դրա համար էլ կառավարությունը որոշեց նրան հետմահու պարգեւատրել: Օգնություն տվին, ուրեմն, որ մումիա սարքենք: Սարքողն էլ սկզբում էն տեսակ գեշն էր, աչքածակ, ռուս էլ չլիներ ոնց որ, օտար էր մի տեսակ... (հրեա էր երեւի):

- Վա՛յ, բա ես ինչքան եմ տանջվել: Մեր բնակարանը խոնավ էր. լուսամուտները՝ հյուսիս: Հիսունական թվերին էր, քրոջս հետ զգում ենք՝ մի հոտ է ընկել տունը, մի հո՛տ: Բոլոր հիսունականներին, մինչեւ հիսունվեցը էդ գեշ հոտը կար: Մեր բնակարանն էդ ժամանակ պուճուր էր: Սան եկա, սան եկա, վեց տարի տունը քրքրեցի, վերջը գտա: Սերյոգան էր բորբոսնել: Հենց պատշգամբի մոտ էր կանգնած, ու թեւը ցուրտը տարել էր: Բժիշկ կանչեցի, եկավ, աչքերը չռել է վրաս, թե, բա, մեռել ե՞մ բուժելու: Ասում եմ՝ մեռել չի,

ամուսինս է, Սերգեյ Աֆանասեւիչ Պետրենկոն, պատերազմի հերոս: Իսկ բժիշկը՝ «Ի՞նչ մումիա, ոնց որ եգիպտական փարավոնի՞նը»: «Կառավարությունն է որոշել»՝ ասում եմ: Սա էլ, վայ թե կոմունիստ էր. «Մենք մի մումիա ունենք, ասում է, Վլադիմիր Իլյիչը: Իսկ ես ծեր վրա դիմում կտամ ուր հարկն է»: -«Էդ ո՞ւր»: -«Որ հիմնարկը պետք է, էնտեղ էլ կտամ»,- ասում է:

- Հա՛, շատ չարչարանք քաշեցինք պատերազմից հետո,- թառանչում է մի ուրիշ տատիկ: Հեռվել է իր մումիային ու թառանչում է: Այստեղ նկատեցին ինձ, ու ժպիտ եկավ երեսներին:

- Արի, աղջի՛կս, արի, համ մեր ապրանքից կպատմենք, համ թանկ չենք ուզի:

- Վախենամ՝ փողս չհերիքի:

- Բան չկա, աղջի՛կս, մաս-մաս կտաս: Ես իմ հնդկացուն ոչ մի գնով չէի ծախի, կպահեի, աչք չէի կտրի մինչեւ մեռնելս, հետո թոռներիս կթողեի, բայց դու էլ գիտես՝ ինչ ժամանակներ են:

Այուս տատիկներն աղմկեցին, իրար անցան.

- Ուտելու բան չկա, թոռներին էլ պիտի կերակրենք:

- Հացի փող է պետք, թե չէ ի՞նչ է, մենք մեր ամուսինների դավաճանն ե՞նք:

- Այլ ես իրա մատը մատանի կդնեմ, իսկ դու, արտասահմանցի՛ աղջի՛կս, մատանին կծախես ու կամպուտր կառնես:

- Բայց ո՞նց եմ տանելու:

- Տաքսի կբռնես: Տուփը ունենք, երեք միլիմետրանոց ֆաներայից, պինդ, մեջը բամբակ, որ լավ պահպանվի:

- Չես փոշմանի: Կզարդարի բնակարանդ:

- Վերցրո՛ւ, վերցրո՛ւ, - նորից գվվացին տատիկները:

- Բայց փտած չի՞ ծեր էդ հնդկացին:

- Ի՞նչ ես ասում, վաթսուն թվին լավ նորոգել ենք: Այունխենի ծեր պատկերասրահի համար իսկը կլինի:

Տղաս էր օգնում հորը ամրացնելիս: Գիտուն է տղաս: Երեխա ժամանակ, պատերազմից հետո, հա՛ փորփրում-փորփրում էր հորը, հետազոտում էր, հետաքրքրվող երեխա էր, վերջն էլ բռնեց ու կենսաբան դառավ: Թաղի երեխեքն էլ զարմանք էին կտրել. բախտդ բերում է, հա՛, որտեղից էլ հայտնվեց հորդ էդ մումիան: Իսկ նա հպա՛րտ էր, կառավարությունն է կարգադրել, ասում է, ու էդպես էլ եղավ: Բոլորը նախանձում էին: Այ կառնես մումիան, կդնես մեծ սենյակում, պահարանի կողքին, ու քեզ էլ կնախանձեն:

- Ավելի լավ է իմ Անդրեյ Պետրովիչին առնես: Կախարդական է, բոլորին բուժում է:Տեր հայրն է նրան օծել, տասը ռուբլով, վաղո՛ւց: Այ նա էլ սկսեց երջանկություն բերել բոլորին: Մի անգամ հարեւանուհիներից մեկը եկավ, ասում է՝ ստամոքսի քաղցկեղ ունեմ, լաց է լինում խեղճը: Ես էլ ասում եմ՝ մեր Անդրեյ Պետրովիչի հետ մի գիշեր նույն սենյակում քնի, կտեսնես՝ հետքն էլ չի մնա: Ու պատկերացրու՝ հետք էլ չմնաց: Էծի նման վազ է տալիս, յոթանասուն տարեկան է արդեն, բայց էլի էն էծն է: Հա խնդրում-աղաչում էր՝ գոնե մի մատը տուր: «Ոնց որ եկեղեցում՝ մասունք կլինի»,- ասում է, բայց ինքը, սրիկա՛, անհավատ է: Վերջը, դժվար ժամանակներ եկան, ու մի սեւ օր մատը ծախեցի դրան, իսկ Նա ջղայնացավ վրաս, որ մատը կտրել եմ: Ու ծանր հիվանդացա: Կատյա աղջիկս ինձ ոտի հանեց: Իսկ հիմա Կատյան չկա, մահացել է, ոչ ոք չունեմ Անդրեյից բացի, ու հացի փող չկա, ու նրանից բաժանվելն էլ դժվար է,- տատիկը գրկեց մումիան ու հեկեկաց: Այուսները նետվեցին նրան հանգստացնելու, թե՝ մումիան կփչացնես, ու ֆշշացին վրաս:

- Ի՞նչ ես աչքերդ չռել-կանգնել: Կամ առ, կամ գնա, թե չէ մեր առեւտուրին աչքով կտաս:

Ես երեք անգամ թքեցի ու դանդաղ քայլեցի դեպի շուկայի ծայրը, որտեղ պակաս լկտի տատիկները միայն գլուխներ էին ծախում: Սրանք այդքան չէին պարծենում իրենց ապրանքով: Գլուխներն էլ ամուսիններինը չէին, առաջներում էժանով առած գլուխներ էին, կամ պատերազմից հետո, կամ ավելի թարմ՝ Աֆղանստանից բերած: Արտասահմանյան ապրանք էլ էր հանդիպում՝ Հարավսլավիայից:

Մոտեցա վաճառողներից մեկին: Տեղավորվել էր փայտե արկղերի վրա ու տախտակին դրած՝ կնոջ ձեռք էր ծախում, ձեռքի վրա էլ ջանասեր խնամքով սիրտ էր ասեղնագործած, սրտի վրա՝ խաչ, ուղիղ թաթին:

-Ա՛ռ,- ասում է,- լիտվական ձեռք է, լիտվական ձեռք: Անձամբ եմ չորացրել, անձամբ ասեղնագործել եմ, օծված ձեռք է: Էժան եմ տալիս, աղջի՛կս: Ընդամենը տասնհինգ դոլար:

- Տա՛ս:

- Տասներե՛ք:

Գնեցի նրանից այդ «լիտվական ձեռքը», չնայած կասկածում էի, որ փչոց է այդ ամենը, ու ձեռքը առել է մոսկովյան որեւէ դիարանից կամ հիվանդանոցից: Ձեռքը հենց այնպես արտասահման չես տանի: Մաքսատունը չի թողնի: Համ էլ ինչի՞ս է պետք այնտեղ, իսկ այստեղ՝ Մոսկվայում, կարելի է բարի գործ անել: Կտանեմ Նաստյային: Ուրբաթ ծննդյան օրն է:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾԱԿԱՆ 5
Լեւ ՏՈԼՍՏՈՅ. ՊԱՐԱՀԱՆԴԵՍԻՑ ՀԵՏՈ 9
Իվան ԲՈՒՆԻՆ. ԶԱԽԱՐ ՎՈՐՈԲՅՈՎ 18
Լիդիա ԶԻՆՈՎԵՎԱ-ՀԱՆՆԻԲԱԼ. ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔ ԱՅԼԱՆԴԱԿՆԵՐ 30
Ֆյոդոր ՍՈԼՈԳՈՒԲ. ԱՄԲՈՒԽԻ ՄԵՋ 57
Լեոնիդ ԱՆԴՐԵԵՎ. ՆԵՐՔՆԱՀԱՐԿՈՒՄ 88
Ալեքսանդր ԿՈՒՊՐԻՆ. ԾՈՎԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆ 98
Ալեքսեյ ՏՈԼՍՏՈՅ. ՊՅՈՏՐԻ ՕՐԸ 121
Մաքսիմ ԳՈՐԿԻ. ՋԱՐԴԸ 147
Ալեքսեյ ՌԵՄԻԶՈՎ. ԷՄԱԼԻՈԼ 153
Բորիս ՊԻԼՆՅԱԿ. ՆՐԱՆՑ ԿՅԱՆՔԻ ՏԱՐԻՆ 174
Եվգենի ԶԱՄՅԱՏԻՆ. ՄԱՄԱՅԸ 183
Իսահակ ԲԱԲԵԼ. ՎԱԾՏԱՊԵՏ ՏՐՈՒՆՈՎԸ 192
Արտյոմ ՎԵՍՅՈԼԻ. ՀՐՈ ԳԵՏԵՐ 199
Վլադիմիր ՆԱԲՈԿՈՎ. ԿԱՐՏՈՖԻԼԱՅԻՆ ԷԼՖԸ 236
Միխայիլ ԲՈՒԼԳԱԿՈՎ. ԲԺՇԿԻ ԱՆԵՐԵՎԱԿԱՅԵԼԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ 257
Դանիիլ ԽԱՐՄՍ. ՊԱՌԱՎԸ 269
Միխայիլ ԾՈԼՈԽՈՎ. ԽԱԼԸ 291
Անդրեյ ՊԼԱՏՈՆՈՎ. ՊԱՏԱՆՈՒԹՅԱՆ ՄԻԳՈՑ ԱՐԾԱԼՈՒՅՍԻՆ 300
Միխայիլ ԶՈՇՉԵՆԿՈ. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԹԱԽԻԾ 325
Վառլամ ՇԱԼԱՄՈՎ. ԾՈԿԱՅԻՆ ԹԵՐԱՊԻԱ 327
Ալեքսանդր ՍՈԼԺԵՆԻՑԻՆ. ԱՋ ԹԱԹԸ 337
Յուլի ԴԱՆԻԷԼ. ՁԵՌՔԵՐԸ 347
Անդրեյ ՍԻՆՅԱՎՍԿԻ. ՓԽԵՆՑ 351
Վասիլի ԾՈՒԿԾԻՆ. ՊԱՐՈՂ ԾԻՎԱՆ 370

Յուրի ՄԱՄԼԵԵՎ. ՈՏՔԸ 378
Անդրեյ ԲԻՏՈՎ. ԲԺԻՇԿԸ 385
Էդուարդ ԼԻՄՈՆՈՎ. ԵՐԲ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐԸ ՓԱՀԵԼ ԷԻՆ 402
Վիկտոր ԵՐՈՖԵԵՎ. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՂՐԵՎԱՆԻ 417
Եվգենի ՊՈՊՈՎ. ԹԵ ՈՆՑ ԿԵՐԱՆ ԱՔԼՈՐԸ 420
Լյուդմիլա ՊԵՏՐՈՒՇԵՎՍԿԱՅԱ. ԷՐՈՍ ԱՍՏԾՈ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ 427
Արկադի ԲԱՐՏՈՎ. ՀԱՄԱՌՈՏ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 443
Տատյանա ՏՈԼՍՏԱՅԱ. ՄԱՄՈՆՏԻ ՈՐՍ 453
Վիկտոր ՊԵԼԵՎԻՆ. ՎԵՐՎՈԼԿԻ ԽՆԴԻՐԸ ՄԻՓԻՆ ԳՈՏՈՒՄ 462
Լյուդմիլա ՈՒԼԻՑԿԱՅԱ. ԳԱՋԱՆԸ 496
Միխայիլ ԵԼԻԶԱՐՈՎ. ՎԱՆ ԳՈԳ 511
Յուլիա ԿԻՍԻՆԱ. ԼԻՏՎԱԿԱՆ ՁԵՌՔԸ 518

XX ԴԱՐԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՊԱՏՄՎԱԾՔ

Անթոլոգիա (Կազմող՝ Վլադիմիր Սորոկին)

Ռուսերենից թարգմանությունը՝
Ներսես ԱԹԱԲԵԿՅԱՆԻ

Ստեփանակերտ 2019

Խմբագիր՝ Հ. Ալեքսանյան
Սրբագրիչ՝ Ա. Գրիգորյան
Էջադրումը՝ Թ. Հարությունյանի
Կազմի ձեւավորումը՝ Մ. Սայիյանի

Թուղթը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16: Ծավալը՝ 33 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 500:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան 25

«ԳԵՂarm» հանդեսի մատենաշարով լույս են տեսել

«Թատերախաղեր Արեւմտյան գրականությունից» - 2010
Իոսիֆ Բրոդսկի. «Տեղատարափի շաչյունը» - 2011
Մ. Բախտին. «Դոստոեւսկու պոետիկայի խնդիրները» - 2012
«Սիրիուսի սրնգահարները»/Վ.Խլեբնիկով, Ն.Գումիլյով,
Վ.Խոդասեւիչ/ - 2012
Սերգեյ Դովլաթով. «Միայնակների երթը» - 2012
Յուրի Լոտման. «Միֆ.Անուն.Մշակույթ» - 2012
Վառլամ Շալամով. «Կոլիմյան պատմվածքներ»- 2012
Ժարկո Միլենիչ. «Լեոնը՝ հրաշագործի աշակերտը»- 2013
Պավել Ֆլորենսկի. «Իկոնոստաս» - 2014
Ռուս կոնցեպտուալ պոեզիա/ Դ.Պրիգով, Վ.Նեկրասով,
Լ.Ռուբինշտեյն/ - 2014
Հենրիխ Սապգիր. «Զուգահեռ մարդը» - 2014
Վասիլի Գրոսման. «Կյանք եւ ճակատագիր» - 2014
«Կամուրջների խոռվությունը.
մետամետաֆորիստներ» - 2015
Ալեքսանդր Սոլժենիցին. «Մատրյոնայի կալվածքը»- 2015
Անդրեյ Պլատոնով. «Չեւենգուր. Գուբը.
Պատմվածքներ» - 2015
Արդի ռուսական վերլիբռ (անթոլոգիա) - 2015
Չինաստանի մշակույթի քրեստոմատիա - 2015
Ջիդի Մաջիա. «Հրեղեն խոսքեր» - 2015
Մա Քայ. «Սրտի արձագանքներ» - 2015
Եվգենի Վոդոլազկին. «Լավր» - 2015
Քայ Տյանսին. «Խաղաղ կյանքի երգը» - 2015
Ռուս այլախոհական պոեզիա (անթոլոգիա) - 2015
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 1) - 2016

Յու Ջիան. «Անձրեւից պատսպարվող թռչունը» - 2016
Պավել Բասինսկի. «Լեւ Տոլստոյ.
Փախուստ դրախտից» - 2016
Չժան Ցզի-յան. «Երազ ծովի մասին» - 2016
Վան Ջենչկի. «Երիտասարդ վանականի սիրո
պատմությունը» - 2016
Լյուդմիլա Պետրուշեւսկայա. «Սեր. երջանկություն.
ռեքվիեմ» - 2016
Անդրեյ Բելի. «Պետերբուրգ» - 2016
«Դիկոռոսներ. Անհայտ պոետների ապաստան»
(անթոլոգիա) - 2016
Ռուս մինիմալիստներ (անթոլոգիա) - 2016
Իձյե Թան. «Կոնֆուցիականությունը, ուդդայականությունը,
դաոսիզմը, քրիստոնեությունը եւ չինական
մշակույթը» - 2016
Սյուն Շի-ի. «Երկնային կամուրջը» - 2016
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 2 եւ 3) - 2016
Դոնգ Քիանգ. «Ամուսնություն» - 2017
Դոնգ Քիանգ. «Կացարաններ» - 2017
Ինգեբորգ Բախման. «30-րդ տարին» - 2017
Ջիդի Մաջիա. «Ընձառյուծից մինչեւ Մայակովսկի» - 2017
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 4) - 2017
Անդրեյ Վոլոս. «Վերադարձ Փանջիռուդ» - 2017
Դոնգ Քիանգ. «Թաղում» - 2017
Դոնգ Քիանգ. «Փառատոներ» - 2017
Դոնգ Քիանգ. «Ուտեստներ» - 2017
Սյաո Ցյան. «Վիշապի մորուքներն ընդդեմ
նախագծերի» - 2017

Ուան Ցուոլիան. «Մերձակցության աստիճաններ» - 2017
Ֆյոդոր Սոլոգուբ. «Ընչաղեւը» - 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 5) - 2018
Ու Չուն. «Չինական մշակույթ. փիլիսոփայություն» -2018
Մարտիրոս Ոբն. «Մոմերն իզուր են այրվել
մեղքերիս համար» - 2018
Ուեյսին Սյուրն, Սյուն Ճու. «Չինաստանի յուրահատկու-
թյունները: Չինաստանի համաշխարհային
ժառանգությունը»- 2018
Չինական մտքի եւ մշակույթի հիմնական
հասկացություններ (հատոր 6) - 2018
Աղի ձայնը (20-րդ դարի հետուբսունական թվականների
սերնդի չին գրողների պատմվածքներ) -2018

Ոգի-Նաիրի
Vogi-Nairi

էլ. հասցե՝ vogi.nairi@mail.ru
հեռ.: +37497252323